Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՄՈՒՂԻ
MOUGHNI

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԷԴՈՒԱՐԴ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

«ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ - 2005

ՀՏԴ 941 (479.25)
ԳԱԴ 63.3 (2Հ)
Մ 537

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական
խորհրդի հանձնարարականով

ԷԴՈՒԱՐԴ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մ 537 Մելքոնյան էդ.
«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն»: - Եր., Մուղնի, 2005, 584 էջ:

Լուսանկարների մեծ մասը արտատպված է «Միութիւն», «Յուշարար - Միութիւն» եւ «AGBU News» ամսագրերից եւ «Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. Արծաթեայ Յոբելեան. 1906 - 1931» գրքից:

Ք.Քըրքորյան, Ջ. Թյոքմեճյան, էդ. Մարտիկյան, Հ. Հովնանյան, Ալ.Մանուկյան խմբակային լուսանկարը՝ «Alex Manoogian. The Man. The President. The Humanitarian» (New York, AGBU, published by R. Manoogian and Louise Simone) կենսագրական գրքույկից:

Ներգաղթողների դիմավորումը, Մ.Նուպար Ակնաբուժարանը՝ տրամադրել է Երեւան քաղաքի պատմության թանգարանը, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Խանջյան, Ա. Եսայան՝ ՀՀ հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվը, Հ.Գարակյոզյանը եւ Ավ. Իսահակյանը Նուպարաշենում եւ Արամայիս. Երզնկյան՝ համապատասխանաբար՝ Գ. Կարագյոզյանը եւ Ա. Երզնկյանը:

Օգտագործվել են նաեւ լուսանկարներ հեղինակի անձնական արխիվից:

ԳԱԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-33-26-8

© «Մուղնի» հրատարակչություն
© Էդուարդ Լ. Մելքոնյան

Երեւան - 2005

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԿԱՐՊԻՍ Լ. ՆԱԶԱՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԹԻՒ 7

ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ԿԱՐՊԻՍ ԵՒ ԱՐԵԳ ՆԱԶԱՐԵԱՆՆԵՐ
ՍՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ
Հ.ԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ
ԵՒ
Հ.ԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ ՆԱԽԱԳԱՀ
ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻՆ
ԵՒ ԱՆՈՐ ՅԱՋՈՐԴՈՂ ԲՈԼՈՐ ՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ
ՈՒ ԻՐԵՆՑ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐՈՒՆ,
ՈՐՈՆՔ Հ.ԲԸ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԿԵՐՏԵՑԻՆ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը սփյուռքի հնագույն եւ ճանաչված կազմակերպություններից է: Թեեւ նրա շուրջ 100-ամյա գործունեության որոշ կողմերին նվիրված են տարբեր հրապարակումներ, այս գիրքը, որքան ինձ հայտնի է, ՀԲԸ Միության ընդհանրական պատմություն գրելու առաջին փորձն է: Եվ ոչ ավելին:

ՀԲԸ Միության պատմությունը այնքան հարուստ է եւ առանձնահատուկ՝ ժամանակի եւ տարածության մեջ, որ ներկայացնել մեկ, նույնիսկ ծավալուն գրքով, ըստ իս, անկարելի է: Ավելին, որոշ երկրներում (օրինակ՝ Լիբանանում, Սիրիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում) նրա մասնաճյուղերի գործունեության պատմությունը կարիք ունի հատուկ եւ առանձին ուսումնասիրման: Կար եւ այլ բնույթի բարդություն՝ անհրաժեշտ պատմական նյութերի բացակայությունը: Այդ իսկ պատճառով որոշ հարցեր քննարկվել են առավելապես Միության այս կամ այն մասնաճյուղի օրինակով, ինչը, անշուշտ, որեւէ չափով չպետք է ընկալվի որպես մնացած մասնաճյուղերի գործունեության անտեսում կամ թերագնահատում: Ենթադրելով, որ աշխատության մեջ կարիք կզգացվի անել լրացումներ ու շտկումներ, կխնդրեի գիտակ ընթերցողներին իրենց դիտողություններն ուղարկել ԳԱԱ Պատմության ինստիտուտի անունով, հետագայում ավելի ամբողջացված տեսքով ՀԲԸ Միության պատմությունը ունենալու ակնկալությամբ:

Աշխատության համար որպես սկզբնաղբյուր ծառայել են.

ա) ՀԲԸ Միության տարեգրքերը,

բ) «Միութիւն», «Ցուշարար», «Խօսնակ» եւ «Ցուշարար - Միութիւն» ամսագրերը,

գ) 1913 եւ 1935 թթ. ՀԲԸ Միության «Ոսկեմատեաններ» -ը,

դ) Հայաստանի տարբեր արխիվների, ինչպես նաեւ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության արխիվի (այժմ՝ Նյու Յորքում) փաստաթղթերը:

Գրքի չորրորդ, հինգերրորդ եւ վեցերրորդ գլուխների ընդարձակ տարբերակները նախապես տպագրվել են առանձին գրքով՝ «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Խորհրդային Հայաստանում. 1923 - 1937 թթ.» (Երեւան, Նոյյան Տապան, 1999): Ներկա հրատարակության մեջ այդ հատվածները վերամշակվել եւ լրացվել են:

Իմ երախտագիտությունն եմ հայտնում՝

ՀԲԸ Միության հանգուցյալ ցկյանս նախագահ Ալեք Մանուկյանին, որի հրավերով /միջնորդությամբ Միության Կենտրոնական Վարչության կրթական բաժնի նախկին տնօրեն, դոկտոր Վաչե Ղազարյանի/ մեկնեցի ԱՄՆ՝ Կենտրոնական Վարչության արխիվի նյութերին ծանոթանալու համար,

նախագահ Լուիզ Մանուկյան - Սիմոնին եւ ի դեմս նրա ՀԲԸ Միությանը՝ գրքի պատրաստմանը օժանդակելու համար,

Անվանի պատմաբան, սփյուռքագետ, գիտությունների դոկտոր Կարլեն Դալլաքյանին, որը սիրահոժար համաձայնվեց կարդալ գրքի ձեռագիրը եւ որի դիտողությունները շատ արժեքավոր եղան ինձ համար,

Գիտությունների դոկտորներ Ալբերտ Խառատյանին, Ամատունի Վիրաբյանին, Արմենակ Մանուկյանին, ինչպես նաեւ Հովիկ Ցորդեկյանին՝ արած դիտողությունների համար,

Միության Կենտրոնական Վարչության արխիվի նախկին վարիչ Դիանա Աճեմյան-Մխիթարյանին՝ օժանդակության համար:

Հատուկ շնորհակալություն Լիբանանի ՀԲԸ Միության Շրջանակային Հանձնաժողովի բազմամյա ղեկավար գործիչ պարոն Կարպիս Նազարյանին, գրքի տպագրությունը հովանավորելու համար:

Էդ. Լ. Մ.
19 փետրվար 2005

Բովանդակություն

1. Հիմնադիրները եւ նպատակները 11
2. Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում 43
3. Որբախնամ եւ գաղթախնամ գործունեությունը 81
4. Խորհրդային Հայաստանում 167
5. 1920 - 1930 թթ. ներգաղթը: Գ. Կյուլպենկյանի հրաժարականը 203
6. Ներքաղաքական պայքարը եւ ՀԲԸՄ լուծարումը Հայաստանում 251
7. Երկրորդ Աշխարհամարտի տարիներ: Մեծ ներգաղթը 309
8. Հայ ինքնության պահպանումը սփյուռքում 383
Արեւելքի երկրներ 385
Արեւմուտքի երկրներ 462
Վերջաբան. ՀԲԸ Միությունը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում 525

Ծանոթագրություններ 531
Անվանացանկ 561
Summary 579
Резюме 581

«Միայն պատմությունն է ի զորու սովորեցնել մեզ ճիշտ արժեւորելու այն բարիքները, որոնց համար մենք շնորհակալության զգացում չունենք լոկ այն պատճառով, որ վարժվել ենք դրանց եւ սացել առանց պայքարի»:

Ֆրիդրիխ Շիլլեր

«Ինչումն է կայանում համաշխարհային պատմության ուսումնասիրումը եւ որն է այդ ուսումնասիրման նպատակը»

1

ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

XX դ. առաջին տարիներին՝ 1906թ. Եգիպտոսում՝ Կահիրեում տեղի հայերի կողմից հիմնվեց մի կազմակերպություն՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն (ՀԲԸՄ), որի նպատակն էր նպաստել բուն Հայաստանում ապրող հայերի մտավոր եւ տնտեսական կացության բարելավմանը: Այսօր, շուրջ մեկ դար անց, այս փաստը ինքնին կարող է առաջացնել հարցեր. որո՞նք էին այդ կազմակերպության ստեղծման շարժառիթները, ինչո՞ւ այն հիմնադրվեց ոչ թե Հայաստանում, այլ Եգիպտոսում:

Ինչու ոչ Հայաստանում

Հայաստան, որպես ինքնիշխան պետություն, գոյություն չուներ ոչ XX դարի առաջին տասնամյակում, ոչ էլ նախորդ երկար ու ձիգ դարերի ընթացքում: Հայերի բնօրրանը, ազգային տարածքը հանդիսացող Հայաստանը աշխարհագրորեն միշտ էլ գտնվել է երկու խոշոր քաղաքակրթությունների՝ Արեւելքի եւ Արեւմուտքի խաչմերուկում, իսկ հայոց պատմությունը անբաժանելիորեն կապված է եղել (եւ մնում է այդպիսին) այդ երկու քաղաքակրթությունները ներկայացնող երկրների հետ: Տարբեր ժամանակներում դրանք էին, մի կողմից՝ Ասորեստանը, Պարսկաստանը, Արաբական խալիֆայությունը, Օսմանյան կայսրությունը՝ Թուրքիան, մյուս կողմից՝ Հին Հունաստանն ու Հռոմը, Բյուզանդիան, Ռուսական կայսրությունը: Մ. թ. IV դ. Հայաստանը այլեւս անզոր եղավ դիմակայելու հարեւան երկու հզոր պետությունների՝ Պարսկաստանի եւ Հռոմեական Արեւելյան կայսրության՝ ռազմաքաղաքական ճնշմանը, եւ նրա տա-

ռածքը 387թ. բաժանվեց այդ երկու կայսրությունների միջեւ: Դրանով իսկ Հայաստանը, որպես անկախ պետություն, դադարեց գոյություն ունենալուց: VII դ. սկսած Հայաստանի տարածքը ենթարկվեց տարբեր, իրար հաջորդող քոչվոր ժողովուրդների հարձակումներին, որոնք նշանավորվեցին հայերի համատարած հալածանքներով եւ արտագաղթով: Հայ ժողովրդի հետագա ողջ պատմության համար հատկապես ճակատագրական եղավ թուրք-օսմանների ներխուժումը, որոնք, ի տարբերություն իրենց նախորդների, հաստատվեցին Հայաստանի տարածքում եւ ձեռնամուխ եղան սեփական պետության ստեղծմանը՝ ի դեմս Օսմանյան կայսրության, որի ժառանգորդն է այսօրվա Թուրքիան:

XIX դ. սկզբին այս աշխարհամասում ի հայտ եկավ նոր ուժ՝ Ռուսական կայսրությունը, որը ելնելով սեփական քաղաքական շահերից՝ ձգտում էր ընդարձակել իր հարավային սահմանները: 1804-1813թթ. եւ 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմները ավարտվեցին Ռուսական կայսրության հաղթանակով, որի արդյունքում նրան միացվեց Արեւելյան Հայաստանը: Ռուսաստանը շարունակեց իր հարձակողական քաղաքականությունը այս անգամ արդեն Օսմանյան կայսրության դեմ: 1828-1829 եւ 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմները նույնպես ավարտվեցին Ռուսաստանի հաղթանակով: Դրանով իսկ, իր վերջնական ձեւակերպումը ստացավ Հայաստանի տարածքի հերթական բաժանումը՝ Արեւելյան Հայաստանը ընդգրկվեց Ռուսական կայսրության կազմի մեջ, իսկ Արեւմտյանը, որը զբաղեցնում էր Հայաստանի տարածքի հիմնական մասը եւ ուր բնակվում էր հայերի ճնշող մեծամասնությունը, գրեթե անփոփոխ ձեւով մնաց Օսմանյան կայսրության կազմում: Այս բաժանումը պահպանվեց մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը:

Հայաստանի տարածքի այս վերջին բաժանումը կարելի է նմանեցնել յուրատեսակ մի փորձարարության, որը պատասխան պետք է տար այն հարցին, թե ինչպես կընթանա հայ ժողովրդի պատմությունը միանգամայն հակադիր սոցիալ-մշակութային աշխարհներում՝ ռուս-քրիստոնեական եւ թուրք-մահմեդական: Զմտնելով մանրամասնությունների մեջ, որոնք այստեղ անտեղի կլինեին, նշեմ միայն հետեւյալը: Ռուսաստանի մաս կազմող Արեւելյան Հայաստանում է, որ հայերի թվաքանակը մշտապես աճեց, այդ թվում՝ ի հաշիվ Արեւմտյան Հայաստանի փախստականների, այստեղ է, որ նրանք զարգացում ապրեցին ամենատարբեր ոլորտներում, վերջապես, այստեղ է, որ հետագայում, արդեն XX դ. նրանք վերականգնեցին իրենց պետականությունը:

«Չի եղել մի դեպք՝ ո՛չ Եվրոպայում, ո՛չ Ասիայում, ո՛չ Աֆրիկայում, երբ թուրքական տիրապետության հաստատումը որեւէ երկրում չբերեր իր

հետ նյութական վիճակի վատթարացում եւ մշակույթի անկում, եւ հակառակը՝ չի եղել մի դեպք, երբ թուրքական տիրապետությունից ազատվելը չբերեր իր հետ նյութական բարօրության աճ եւ մշակութային զարթոնք: Թե Եվրոպայի քրիստոնեական երկրներում եւ թե Սիրիայի, Արաբիայի եւ Աֆրիկայի մահմեդական երկրներում օթոման թուրքերը անում էին միայն մեկ բան՝ ավերում էին այն, ինչը զավթված էր իրենց կողմից, դեպքերից եւ ոչ մեկում նրանք ցույց չտվեցին, որ ընդունակ են խաղաղ զարգացնել այն, ինչը նվաճված է պատերազմով: Այդ ուղղությամբ չէ, որ զարգացել է թուրքերի տաղանդը»:[1] Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար Արթուր Բալֆուրի այս խոսքերը, որ հնչեցին 1919թ. Փարիզի հաշտության կոնֆերանսում, հակիրճ, բայց եւ ճշգրիտ բնութագրումն է Օսմանյան Թուրքիայի քաղաքականության՝ հպատակ ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի նկատմամբ:

Հայերի պարագայում այդ քաղաքականությունը էլ ավելի դաժան ձեւեր ընդունեց 1878թ. Բեռլինի վեհաժողովից հետո, երբ եվրոպական երկրների պահանջով Օսմանյան կայսրությունը պարտավորվեց «բարենորոգումներ» իրականացնել Արեւմտյան Հայաստանի տարածքում: Այդ պահից հայկական գործոնը, Հայկական հարցը սկսեց մեծապես մտահոգել թուրքական իշխանություններին, քանզի հայերի օրեցօր արթնացող ազգային-քաղաքական ինքնագիտակցությունը իրական վտանգ էր ներկայացնում կայսրության համար: Եվ երբ 1890-ականներին տեղի ունեցան հայերի քաղաքական ցույցերը Կ. Պոլսում, թուրքերը օգտագործեցին դրանք՝ որպես առիթ եւ դիմեցին ցեղասպանության քաղաքականությանը: 1894-1896թթ. թուրքական բանակը եւ հատուկ պատժիչ ջոկատները (համիդիե) մոտ 300 հազար հայ սպանեցին Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի տարբեր քաղաքներում եւ շրջաններում: Կայսրության ողջ տարածքում թուրքական իշխանությունները գրգռեցին հակահայկական տրամադրությունները, հայերին դարձրին օրենքից դուրս մի ժողովուրդ, որին կարելի էր անպատիժ սպանել, հալածել, կողոպտել: Մեծապես տուժել էին հայ ժողովրդի բոլոր սոցիալական խմբերը՝ հայ պաշտոնյաները վտարվում էին աշխատանքից, հայ առեւտրականների գործունեությունը խիստ սահմանափակվել էր, հայ հոգեւորականները մնացել էին առանց եկեղեցիների, որոնք կամ այրվել էին, կամ էլ քանդվել, կազմալուծվել էին ազգային կազմակերպությունները: Զգալիորեն խախտվել էր նաեւ արեւմտահայերի ժողովրդագրական նկարագիրը՝ նվազել էր տղամարդկանց թվաքանակը, անօթեւան որբերն ու այրի կանայք հաշվվում էին տասնյակ հազարներով: Ստեղծված աննախադեպ դժոխային պայմանների հետեւանքը եղավ անելանելիության տրամադրությունների արմատավո-

րումը հայերի մեջ, նրանցից տասնյակ հազարավորների արտագաղթը երկրից: Արտագաղթողների հիմնական մասը երիտասարդներ էին, որոնք հաստատվեցին Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, ինչպես նաեւ Կանադայում եւ ԱՄՆ-ում:

Հայերի նման վիճակը հայտնի էր բոլոր նրանց, ովքեր այս կամ այն չափով մտահոգված էին նրանց ճակատագրով: Գնալով ակնհայտ էր դառնում Թուրքիայի հայ բնակչության կենսական, ամենօրյա, ամենատարրական կարիքները հոգալու անհրաժեշտությունը: Եվրոպական պետությունները բավարարվում էին լոկ խոստումներով, որոնք, կարծես, ավելի էին գրգռում թուրքերին: Նույնպես ապարդյուն էր օժանդակություն ակնկալել անգամ հայերի հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդներից: Կ.Պոլսում տեղակայված Հայոց պատրիարքարանը եւ նրա շուրջ համախմբված Թուրքիայի պետական եւ ֆինանսատնտեսական կառուցվածքում բարձր դիրքեր գրաված հայերը ձգտում էին հարմարվել եղած պայմաններին եւ դրանով իսկ առիթ չընձեռել իշխանություններին՝ նոր հալածանքների համար: Իսկ հայ քաղաքական կազմակերպությունների ամբողջ գործունեությունը ուղղված էր մեկ գերխնդրի լուծմանը՝ հայ ժողովրդի ազգային ինքնորոշման ապահովումը, ընդհուպ մինչեւ անկախ պետության վերստեղծում:

Հայրենաբնակ հայերին օժանդակելու դեր կարող էր ստանձնել հատուկ այդ նպատակով ստեղծված մի նոր կազմակերպություն: Ակնհայտ էր, սակայն, որ այդպիսին չէր կարող ոչ ստեղծվել եւ ոչ էլ գործել Թուրքիայում: Նման օգնություն անհնար էր իրականացնել նաեւ Ռուսաստանից, ուր այդ տարիներին հաջողությամբ գործում էին խոշոր հայկական բարեսիրական կազմակերպություններ (Կովկասի Հայոց բարեգործական միությունը՝ Թիֆլիսում, Բաքվի Հայոց մարդասիրական ընկերությունը եւ այլն): Անհնար էր՝ նկատի առնելով Թուրքիայի եւ Ռուսաստանի ավանդական ռազմաքաղաքական առճակատումը:

Եվ ստացվում էր, որ իրականում նման օգնություն հնարավոր էր ակնկալել արտերկրի հայությունից միայն: Ինչպիսի՞ չափանիշների, սակայն, պետք է համապատասխանեին նման երկիրը եւ տեղի հայությունը: Նախ հարկ է նշել, որ այդ երկիրը տարածքային առումով պետք է հնարավորին չափ մոտ լիներ Թուրքիային, ինչը կդյուրացներ մշտական եւ արագ հաղորդակցությունը հայրենաբնակ հայության հետ: Կարեւոր էր նաեւ, որ երկրի իշխանությունները թույլատրեին նման կազմակերպության հիմնումը եւ չխոչընդոտեին նրա գործունեությանը: Իսկ դա, իր հերթին, կախում ուներ նույն այդ իշխանությունների եւ տեղի հայ համայնքի փոխհարաբերություններից: Եվ, վերջապես, տվյալ երկրում պետք է լինեին այնպիսի անհատներ, որոնք իրենց հեղինակությամբ, ֆինանսական կարողություններով ոչ միայն կնախաձեռնեին նոր կազմակերպության հիմնումը, այլեւ կապահովեին նրա հարատեւ գործունեությունը: Եթե այս տեսանկյունից քննելու լինենք այդ տարիների հայ գաղթաշխարհը, ապա պարզ կդառնա, որ Եգիպտոսն ու տեղի հայ համայնքն է, որ համապատասխանում էին նշված չափանիշներին եւ կարող էին դառնալ նոր կազմակերպության ծննդավայրը:

Պողոս Նուպար. Միության հիմնադիր-նախագահը

Թեեւ հայերը սկսել էին հաստատվել Եգիպտոսում վաղ ժամանակներից, հայ համայնքը իր իսկական իմաստով սկսեց ձեւավորվել մոտավորապես X դ., ինչը պայմանավորված էր Ֆաթիմյանների խալիֆայության (909-1171թթ.) օրոք քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողական քաղաքականությամբ: 1517թ., սակայն, Եգիպտոսը նվաճվեց սուլթան Սալիմ I-ի կողմից եւ դարձավ Օսմանյան կայսրության մարզերից մեկը: Ինչպես եւ այլ երկրներում, այստեղ նույնպես թուրքական տիրապետության հետեւանքները լոկ բացասական էին՝ տնտեսությունը եւ կենսագործունեության այլ ոլորտները արագորեն սկսեցին անկում ապրել, ազգային խտրականության զոհ դարձան թե բնիկ ժողովուրդը եւ թե ազգային փոքրամասնությունները: Եգիպտահայ համայնքի պատմության նոր փուլը սկսվեց XIX դ. սկզբներին, երբ Եգիպտոսի կառավարիչ հռչակվեց Մուհամեդ Ալին, որի նպատակն էր ազատագրել Եգիպտոսը Օսմանյան կայսրության տիրապետությունից: Մուհամեդ Ալին եւ նրա հաջորդները սկսեցին իրականացնել բարեփոխումների մի ամբողջ ծրագիր՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով մասնակից դառնալ դրան նաեւ տեղի քրիստոնյաներին, այդ թվում եւ հայերին: Հայերի ներդրումը եղավ շոշափելի: Մասնավորապես, նրանք լայն կապեր էին հաստատել մի շարք երկրների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի, Ռուսաստանի խոշոր առեւտրական եւ ֆինանսական հաստատությունների հետ: Իրենց հերթին, Կ. Պոլսի հայ գործարար մարդիկ այդ շրջանում նույնպես աշխույժ գործունեություն էին ծավալել Եգիպտոսում: Այդ ամենը պայմանավորեց եգիպտահայերի սոցիալական կարգավիճակի բարձրացումը. XIX դ. առաջին կեսից նրանց սկսեցին վստահել տարբեր, այդ թվում՝ ամենաբարձր պաշտոններ պետական հիմնարկություններում: Դրան զուգընթաց աշխուժանում էր տեղի հայերի համայնքային կյանքը, ստեղծվում էին տարբեր կազմակերպություններ, պարբերականներ եւ այլն: Այսպիսով,

Եգիպտոսը եւ տեղի հայ համայնքը իրենց հիմնական բնութագրերով համապատասխանում էին վերը նշված չափանիշներին, մնում էր մի բան՝ համապատասխան անհատների առկայությունը:

XIX դ. կեսերին Եգիպտոսում պետական բարձր պաշտոններ զբաղեցնող հայերից էր Պողոս Ցուսուֆյանը (1768-1843), որը իր կյանքի վերջին տարիներին երկրի Արտաքին գործերի եւ առեւտրի նախարարն էր (տեսուչը): 1830-ական թթ. նա Արտաքին գործերի նախարարության դիվանատան քարտուղարի պաշտոնով Եգիպտոս է հրավիրում իր քրոջ որդուն՝ Նուպար Նուպարյանին, որը հետագայում դարձավ այդ երկրի ամենահայտնի պետական գործիչներից մեկը եւ պատմության մեջ մտավ Նուպար փաշա անունով: Նրա գործունեությունը, որպես Եգիպտոսի կառավարության նախագահ, այնչափ նշանակալից էր եւ բեղմնավոր, որ դարձել է այդ երկրի XIX դ. պատմության անբաժանելի մասը: Ահա այս մարդու որդին էր Պողոս Նուպարը (1851-1930), Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության հիմնադիրն ու առաջին նախագահը:

Ինչպես եւ իր հայրը, Պողոս Նուպարը[2] եւս կրթություն ստացավ Ֆրանսիայի եւ Շվեյցարիայի երկրորդական վարժարաններում, ապա ուսումը շարունակեց Փարիզի հայտնի Ecole Centrale-ում՝ ճարտարագետ-մեքենագետ մասնագիտությամբ, որն ավարտելուց հետո որոշ ժամանակ աշխատեց Ֆրանսիայում: Նրա՝ որպես մասնագետի, որակավորման մասին է խոսում այն, որ 1900թ. Փարիզի, իսկ 1906թ. Միլանի միջազգային ցուցահանդեսներում իր ստեղծած «երկրագործական արոր մեքենայի (թրաքթէօր)» համար արժանացավ ոսկե մեդալների, ապա հաջորդաբար նրան շնորհվեցին ֆրանսիական Պատվո լեգեոնի ասպետական խաչ եւ սպայության աստիճան: Այդ նույն տարիներին Պողոս Նուպարը մասնակցեց նաեւ Երկրագործական միջազգային ինստիտուտի հիմնադրմանը, որը մեծապես նպաստեց այդ բնագավառի զարգացմանը տարբեր երկրներում:

Վերադառնալով Եգիպտոս՝ նա ծառայության անցավ պետական հիմնարկներում եւ շուրջ յոթ տարի (1891-98թթ.), որպես ընդհանուր տնօրեն, գլխավորեց Եգիպտոսի երկաթուղիները: Այդ տարիներին Եգիպտոսը, ըստ էության, դարձել էր Անգլիայի գաղութը, որի հետեւանքով գրեթե բոլոր բնագավառները, հատկապես երկաթուղային, գտնվում էին անգլիացիների հսկողության տակ: Պողոս Նուպարը, ընդվզելով նրանց ու ամեն կարգի միջամտության դեմ, ներկայացրեց իր հրաժարականը: Նույնիսկ Եգիպտոսի խդիվ Աբբաս փաշայի խնդրանքը՝ հետ վերցնել հրաժարականը, չազդեց նրա վրա, դեռ ավելին՝ այդ դեպքից հետո նա այլեւս չծառայեց պետական հիմնարկներում: Հետագա տարիներին Պողոս

Նուպարը դրսեւորեց ֆինանսիստի եւ կազմակերպչի իր հմտությունները, որի շնորհիվ էլ ավելի մեծ չափերի հասցրեց հորից ժառանգած հարստությունը: Այսպես, նա հիմնեց Ալեքսանդրիայի տրամվայների եւ Մենզելեյի հողերի շահագործման ընկերությունները, տարիներ շարունակ որպես ամենամեծ բաժնետեր եւ տնօրեն գլխավորեց Կահիրեի ջրային ընկերությունը, որի կարեւորությունը Եգիպտոսի նման մի երկրի համար չափազանց մեծ էր: Բելգիացի հայտնի դրամատեր Անբենի հետ միասին նա հիմնեց Հելիոպոլիս քաղաքի (այն հետագայում ընդգրկվեց Կահիրեի սահմանների մեջ) շահագործման «Օվասիս» ընկերությունը եւ այնտեղ էլ՝ մի շարք խոշոր եւ շահութաբեր ընկերություններ: Բացի այդ, նա Եգիպտոսի մի շարք ամենախոշոր բանկերի վարչությունների նախագահն էր կամ անդամը: Չնայած Պողոս Նուպարը հրաժարվել էր ծառայել պետական հիմնարկներում, նրա բերած նպաստը Եգիպտոսի առաջադիմության գործին այնչափ մեծ էր եւ ակնհայտ, որ մինչեւ իր կյանքի վերջին օրերը նա վայելեց Եգիպտոսի իշխանությունների վստահությունն ու հարգանքը: Նա պարգեւատրվել էր Եգիպտոսի «Նեղոս» եւ Թուրքիայի «Մեճիտիյե», «Օսմանիյե» ամենաբարձր պատվանշաններով: Հիշատակման է արժանի նաեւ այն, որ Եգիպտոսի սուլթան Հուսեյն Ա (1914թ., Կահիրեում) եւ թագավոր Ֆուադ Ա (1928թ., Փարիզում) հյուրընկալվել էին Պողոս Նուպարի բնակարանում, մի բան, որը բացառիկ պատիվ էր անպաշտոն անհատի համար:

Հայտնի է, սակայն, որ նման բնութագրերը (բարձր դիրք, պաշտոն, հարստություն եւ այլն) միշտ չէ, որ ենթադրում են նույն այդ մարդու գործունեությունը՝ ի նպաստ իր ազգի: Հայերի պատմությունը լեցուն է նման օրինակներով՝ սկսած հայկական ծագում ունեցող բյուզանդական կայսրերից, վերջացրած նախկին Խորհրդային Միության ղեկավարության անդամներով: Սա ընդհանրապես բարդ եւ միաժամանակ շատ հետաքրքիր երեւույթ է, որի լուսաբանումը պահանջում է տարբեր գործոնների հաշվառում:

Այդ առումով հատկանշական է հետեւյալ հատվածը ՀԲԸ Միության ամենահայտնի գործիչներից մեկի՝ Վահան Մալեզյանի հիշողություններից. «...Նուպարներու ապարանքը մտնելը աւելի դժուարին էր հայու մը համար քան Խտիվին պալատը ու վերջը նոյնպէս տեսայ որ ինչքան Կիլպէնկեան խոյս կուտար հայերու ներկայութենէն եւ պինդ կը փակէր իր ապարանքի դուռները, միշտ այն մտածումով որ հայ մը անպայման իր դրամին եւ դիրքին համար կը ցանկայ իրեն մօտենալ»:[3] Թվում է, թե ժողովրդի նման պահանջը արդարացի է, սակայն միայն այն դեպքում, երբ ուղղված է տարբեր տեսակի հիմնարկություններին, որոնք ստեղծվում են

հենց այդ նպատակով: Իսկ անհատի դեպքում դա առնվազն իրատեսական չէ, քանի որ անհատի նման պատրաստակամությունը կամ դրա բացակայությունը պայմանավորված է տարբեր, նաեւ անձնական բնույթի գործոններով: Հարկ է նշել նաեւ այն հանգամանքը, որ հարուստ եւ հայտնի հայերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, միայն Հայաստանից դուրս, տարբեր երկրներում էին, որը ավելի հավանական էր դարձնում նրանց օտարացումը հարազատ ազգային մշակույթից, եւ այլ մշակույթի եւ արժեքների որդեգրումը: Պետք է նկատի առնել նաեւ, որ նման անհատների հարուստ կամ հայտնի լինելը արդյունք էր եւ է մի գործունեության, որն ընթանում է ասպնջական ժողովրդի, հասարակության միջավայրում, այլ ոչ՝ զուտ հայկական: Իսկ դա իր հերթին նպաստում է ընդունող հասարակության նկատմամբ բարոյական պարտականության զգացումի առաջացմանը: Այդ առումով արդարացի էր ՀԲԸ Մի-ության նախագահներից մեկը՝ Գալուստ Կյուլպենկյանը, երբ «...կ'ըսէր յաճախ թէ միայն հայերուն չէ որ պարտի նպաստել, այլ եւ օտարներուն, որոնցմէ միայն շահած է եւ որոնց հետ գործի կապեր ունի»[4]:

Եթե այս ամենի լույսի տակ անդրադառնանք Պողոս Նուպարի ազգային նկարագրին, ապա զարմանալի չէր լինի, եթե այն կրեր զուտ խորհրդանշական բնույթ: Հիշենք, որ նա իր ուսումը ստացել էր Եվրոպայում, որպես գործարար մարդ՝ կապված էր օտարազգիների հետ եւ իր նկարագրով ու ապրելակերպով իսկական եվրոպացի էր: «Անիկա (Պողոս Նուպարը - Էդ.Մ.) բնաւ արեւելցի, քիչ հայ է,- անպատեհութիւն մը թերեւս ազգային տեսակէտէն, վասնզի ատով փաշան անկարող կ'ըլլայ երբեմն թափանցելու մեր մասնաւոր հոգեբանական վիճակներուն,- բայց ինչ որ իր անհատական արժանիքին համար անժխտելի առաւելութիւն մըն է՝ Պողոս փաշա, իմացականօրէն, կատարեալ եվրոպացիի, իմա՛ ֆրանսացիի տիպար մը կը ներկայանայ»:[5]

Կարեւոր է թվում նաեւ հետեւյալ փաստը, որը կապված է նրա հոր՝ Նուպար փաշայի հետ: Ինչպես հայտնի է, 1878թ. հունիսին հրավիրվեց Բեռլինի վեհաժողովը (Մեծ Բրիտանիայի, Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Թուրքիայի մասնակցությամբ)՝ Սան Ստեֆանոյում մինչ այդ կնքված ռուս-թուրքական պայմանագրի վերանայման նպատակով, քանի որ վերջինը, եվրոպական պետությունների կարծիքով, չափազանց ուժեղացրել էր Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում եւ Փոքր Ասիայում: Եվ քանի որ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերաբերում էր Արեւմտյան Հայաստանին, այդ հարցը նույնպես պետք է քննարկման առարկա դառնար Բեռլինում: Այդ իսկ պատճառով Բեռլին մեկնեց նաեւ հայկական պատ-

վիրակությունը՝ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ: Ճանապարհին պատվիրակությունը Փարիզում հանդիպում է Նուպար փաշային եւ ծանոթացնում նրան ներկայացվելիք հուշագիր-ծրագրի հետ: Նուպար փաշան իր հերթին քննարկում է այն Բիսմարկի եւ Լորիս-Մելիքովի հետ. «...երբ մեծանուն դիւանագէտներ Պիզմարք, Մելիքով եւ Նուպար փաշա տեսած էին այն ձախորդ ծրագիրը որ կը գտնուէր պատուիրակներուն ձեռքը, երեքն ալ կրկնած էին թէ այս ծրագիրը պարզապէս երեւակայական է եւ իրենք կ'ուզեն ներկայացնել ուրիշ ծրագիր մը, բայց...»:[6] Թե ինչպես էին զարգացել հետագա դեպքերը, դրա մասին տարիներ անց վերհիշում էր հենց Մ.Խրիմյանը, այդ պահին արդեն Մկրտիչ Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը, Նուպար փաշային ուղղած իր նամակում. «...յուշ առնեմ Ձեզ, Վսեմ. Տէ՛ր, որ աստի 17 տարի յառաջ ի Փարիզ գտնուեցայ մեր թարգման պ. Ձերազին հետ, եւ ես իբրեւ պատգամաւոր Հայոց՝ Ներսէս Պատրիարքի կողմէն, մի Ցիշատակագիր մատուցի Ձերդ Վսեմութեան, որ պարունակում էր Հայկական նոր մի խնդիր եւ զոր պիտի մատուցանէի Պերլինի Վեհաժողովին:... Դուք ամենայն սիրով ընդունեցիք եւ գրկեցիք այս խնդիր եւ հաճեցայք զայն ուշադրութեան առնել: Ուստի վերծանելով եւ քննելով այդ Ցիշատակագիրը, Դուք զայն անյարմար եւ չափազանց գտաք: Ուստի մի այլ նոր Ցիշատակագիր կազմեցիք, Ձեր իմաստուն հեռատեսութեամբ չափաւորելով եւ հնարաւոր դարձնելով խնդիրը: Ես այդ նոր չափաւորեալ Ցիշատակագիրը յղեցի ի Պոլիս՝ Ներսէս Պատրիարքին: Այլ աւաղ, թէ ինք եւ թէ իր մտերիմ խորհրդակիցներն՝ ամենայն յամառութեամբ պնդեցին որ Ցիշատակագիրն անփոփոխ մնայ եւ այնպէս մատուցուի Վեհաժողովին: Այս որոշման հեռագիրը ես ի Պերլին ստացայ, սաստիկ վիշտ զգացի, այնպէս որ առանձին քաշուելով լացի մի տղու նման, վասն զի քաջ նկատեցի բանին վախճանը:... Ես չեմ կարող մոռնալ այս դէպքը: Եթե Ձերդ Վսեմութիւնը Պերլին գտնուէր եւ Ձեր յօրինած Ցիշատակագիրը մատուցէր Վեհաժողովին, ես այնպէս կը հաւատամ, որ 61-րդ յօդուածը այնպէս թոյլ, անորոշ կերպով չէր արձանագրուեր, այլ աւելի զօրաւոր, վճռական ու գործնական»:[7]

Իր հերթին, Նուպար փաշան գրում է. «1878թ. Բարիզ կը գտնուէի: Ներսէս Պատրիարքին ուղարկած չորս պատուիրակները եկած էին զիս տեսնելու, խորհուրդ եւ նպաստ խնդրելու համար: Ես իրենց թելադրեցի՝ որ պատուիրակութիւնը ինծի յանձնէին եւ ես բոլոր ծախքերը ու աւելին իսկ ընելու յանձնառու կ'ըլլայի:... Թողուցէք ինձ, որ ջանամ ընդունիլ տալ եւ կիրարկել իմ վարչական համեստ ծրագիրս: Անգլիական պատուիրակներ՝ Լորտ Պիքընսֆիլտ եւ Սալիզպըրի, Պիզմարք եւ նոյն իսկ ռուսական պատուիրակները բարեկամներս են: Գործ ունեցած եմ անոնց հետ, լաւ կը

ճանչնան գիս ու կը սիրեն, եւ ես կրնամ ընդունիլ տալ իմ չափաւոր ծրագիրս՝ Հայաստանի վեց նահանգներուն մէջ Դատարանական Բարեկարգութիւն. այսինքն դատաստանական հաւասարութիւն հայերուն եւ իսլամներուն միջեւ: Ես իսկ յանձնառու կ'ըլլամ ներմուծել այդ բարեկարգութիւնները: Ասիկա բոլոր մեր պահանջներուն գոհացում կու տայ... Հայ պատուիրակները համոզուեցան, հաճեցան եւ մեկնեցան Պերլին, ուրկէ պիտի հեռագրէին անյապաղ՝ որ ես ալ ճամբայ ելլէի: Սպասեցի հինգ օր, ութ օր: Երկու շաբաթ վերջ նամակ մը ստացայ փոխանակ հեռագրի: Ստորագրողն էր Մինաս Չերազ, քարտուղար հայ պատուիրակութեան: Պարունակութիւնը լակոնական էր եւ այս.- «Ազգը չի ճանչնար Ձեզ իրեն ներկայացուցիչ եւ մենք ենք անոր պատուիրակները Պերլինի Վեհաժողովին»:[8]

Բեռլինի վեհաժողովի կազմակերպիչ պետությունները հայ պատվիրակությանը մասնակից չդարձրին վեհաժողովի նիստերին, նրա կողմից ներկայացված «երեւակայական» ծրագիրը ընդհանրապես չքննարկվեց, իսկ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը փոխարինվեց 61-րդ հոդվածով, ուր խոսվում էր այսպես կոչված «բարելավումների եւ բարենորոգումների» անհրաժեշտության մասին՝ Օսմանյան կայսրության հայաբնակ մարզերում: Միամտություն կլիներ կարծել, թե Նուպար փաշայի ծրագիրը ի վիճակի էր էական փոփոխություն մտցնել Հայկական հարցի հանդեպ մեծ տերությունների վերաբերմունքի մեջ: Խոսքն առավել իրատեսական ծրագրի մասին է, որն, ի դեպ, տարիներ անց՝ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին, դարձավ նույն այդ տերությունների հավանությանը արժանացած «բարենորոգումների» նոր ծրագրի բաղկացուցիչ մասը: Հենց նման ծրագիր չէր կարող ներկայացնել կղերական դիվանագիտությունը:

Հայ եկեղեցին, որ այդ ժամանակ պատմական ճակատագրի բերումով դարձել էր հայ ժողովրդի ազգային-քաղաքական շահերի արտահայտողն ու պաշտպանը, չուներ նման գործունեության համար անհրաժեշտ գիտելիքներ ու փորձառություն: Այդ պայմաններում Նուպար փաշայի նման հմուտ դիվանագետի, եվրոպական երկրների ամենաբարձրաստիճան ղեկավարների հարգանքը եւ բարեկամությունը վայելող մի մարդու մասնակցությունը Բեռլինի վեհաժողովին կարող էր միայն նպաստել հայկական պատվիրակության արդյունավետ գործունեությանը: Սակայն հայ եկեղեցականները հրաժարվեցին նրա ծառայությունից, թերեւս, այն պատճառով, որ մինչ այդ Նուպար փաշան հեռու էր հայ ազգային-քաղաքական կյանքից: Սակայն առնվազն ոչ իրատեսական կամ անլուրջ կլիներ ակնկալել, որ Եգիպտոսի ամենաբարձրաստիճան պետական գործիչը իր մշտական եւ անմիջական մասնակցությունը բերեր մի

գործի, որի կատարման համար չկային ոչ հստակ ծրագիր, ոչ էլ ճանաչված ղեկավարություն: Այլ բան էր միջազգային վեհաժողովը, որի մասնակիցները իսկապես օժտված էին ժողովուրդների գոյավիճակը փոփոխելու համար իրական միջոցներով, եւ ուր նա կարող էր կամ համենայն դեպս կջանար կիրարկել դիվանագետի իր ողջ փորձը, իր անձնական ծանոթությունները՝ ի նպաստ հայ ժողովրդի շահերի: Սա մի գերխնդիր էր, որի դրական լուծման դեպքում այն կդառնար Նուպար փաշայի՝ որպես հայ մարդու, աստեղային ժամը: Իսկ թե ինչպիսին էր Նուպար փաշայի վարկն այդ օրերին, վկայում է այն փաստը, որ Բեռլինի վեհաժողովի բացումից մոտ երեք ամիս անց նա գլխավորեց Եգիպտոսի կառավարությունը: Ինչեւէ, Նուպար փաշան Բեռլին չգնաց եւ մինչեւ իր կյանքի վերջին օրերը «հոգիին խորքը պահեց այդ մերժման դառնությունը»:

Այս դեպքը, որը ինքնին հետաքրքրական է եւ բնութագրում է այդ ժամանակաշրջանի հայ քաղաքական գործելակերպը, ոչ պակաս կարեւորություն է ստանում, եթե հիշենք, որ 1878թ. Նուպար փաշայի որդին՝ Պողոս Նուպարը, արդեն 27-ամյա երիտասարդ էր: Եվ դժվար չէ պատկերացնել, թե ինչ զգացում կունենար՝ տեսնելով նման անվստահություն հոր նկատմամբ: Հայտնի է, որ նման պարագաներում զավակի մեջ կարող է առաջանալ բացասական, ժխտական վերաբերմունք անվստահություն արտահայտած անձի, հաստատության, նույնիսկ ամբողջ ժողովրդի նկատմամբ: Պողոս Նուպարը, սակայն, չդրեց հավասարության նշան առանձին անհատների, կազմակերպությունների (որքան էլ նրանք հեղինակավոր լինեին) եւ ամբողջ մի ժողովրդի միջեւ: (Իսկ թե որքան դյուրին էր դա անել, վկայում է գրող Արշակ Չոպանյանի օրինակը, որն այդ նույն դեպքերի առիթով գրել է. «...որքան ցաւալի սխալ մը գործած է մեր ազգը...», «...հակառակ այն դառնութեան, զոր ազգը իրեն պատճառած էր...», ինչպես նաեւ՝ «...բայց հայ ժողովուրդին յանցանքը այդ պարագային ոչ այնչափ այդ ծրագիրը, որչափ նոյն իսկ անձնական միջամտութիւնը մերժած ըլլալն է այդ մարդուն...»[9]: Ամբողջ ազգի եւ Կ. Պոլսի Ներսես պատրիարքի ու նրա խորհրդականների նման անտեղի նույնականացումը եւս մեկ մասնավոր օրինակն է քաղաքական մշակույթի բացակայության, որի հետեւանքները ճակատագրական եղան հայ ժողովրդի համար):

Հենց այդ մտայնությամբ էլ Պողոս Նուպարը առաջնորդվեց իր հետագա ողջ կյանքում, դրանով իսկ՝ գիտակցաբար թե ոչ, լավագույնս պատասխանելով իր հոր ընդդիմախոսներին: Իսկ պատասխանների շարքում, անկասկած, ամենակարեւորը եղավ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

«Այսօր, 15 ապրիլ, 1906, Ս. Զատկի առաջին օրը, ստորագրեալքս համախմբեալ 'ի Գահիրէ, Նորին Վսեմ. Պօղոս Փաշայի ապարանքը, կազմեցինք ընկերութիւն մը «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն» անուամբ, ըստ տրամադրութեան եւ պայմանաց վերոգրեալ կանոնագրին, որը կը կրէ այսօրուան թուականն եւ մեր ստորագրութիւնը:

Ընկերութեան Վարչական առաջին ժողովը բաղկացած է Կանոնագրիս 10-րդ յօդուածին մէջ նշանակուած 10 անդամներէն եւ այսօրուընէ Ընկերութիւնս կազմակերպեալ հռչակուած է:

ի Գահիրէ, 15 Ապրիլ, 1906

Պօղոս Նուպար	Եպագուպ Արթին Փաշա
Երուանդ Գ. Աղաթօն	Առաքէլ Նուպար
Մ. Անդրանիկեան	Տօքդ. Ն. Տաղաւարեան
Մ. Մարկոսոֆ	Գրիգոր Եղիայեան
Կ. Շէրիտճեան	Ց. Ցակոբեան»[10]

ՀԲԸ Միության հիմնադիր ժողովից երեք օր առաջ, 1906թ. ապրիլի 12-ին Պողոս Նուպարը եւ Ցագուպ Արթինը խնդրագիր են ներկայացնում Եգիպտոսի Ներքին գործերի նախարարություն: Տեղեկացնելով Միության հիմնումի մասին եւ նշելով, որ այն զուտ մարդասիրական հաստատություն է եւ «... բացորոշապէս կը մերժէ ոեւէ քաղաքական հանգամանք ...»,[11] նրանք համոզմունք էին հայտնում, որ կառավարությունը կճանաչի նորաստեղծ կազմակերպությունը: Իմանալով խնդրագրի հեղինակների սերտ կապերը Եգիպտոսի վերնախավի հետ՝ դժվար չէր կռահել, որ ճանաչման հարցը նախապես արդեն լուծված էր եւ խոսքը զուտ պաշտոնական ձեւակերպման մասին էր: Արդեն մայիսի 7-ին նախարար Մուսթաֆա Ֆեհմին պատասխան նամակով հայտնում էր ՀԲԸ Միության ճանաչման մասին եւ հաջողություն մաղթում Եգիպտոսի կառավարության անունից: Դրանով իսկ օրինականացվեց ՀԲԸ Միության՝ որպես ինքնուրույն կազմակերպության հիմնումն ու հետագա գործունեությունը Եգիպտոսում: Մուսթաֆա Ֆեհմիից պատասխանը ստանալուն պես, ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության անունից Պողոս Նուպարը մայիսի 9-ին հատուկ գրությամբ, օրհնության խնդրանքով դիմում է Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա-ին «... վասն յաջողութեան ձեռնարկիս, ի խրախոյս եւ ի քաջալեր մեր եւ մեր աջակցաց»:[12] Ուշագրավ է, որ կաթողիկոսը, իր պատասխան կոնդակում օրհնելով եւ հարատեւություն ու բարգավաճում մաղթելով նորաստեղծ Միությանը, միաժամանակ հատուկ նշում էր նրա կարեւորությունը նաեւ Ռուսաստանի հայության համար: Դա, իհարկե, առաջին հերթին պայմանավորված էր մինչ այդ՝ 1905թ. Կովկասում տեղի ունեցած հայերի զանգվածային սպանություններով: Բայց կար եւ ուրիշ պատճառ: Փաստ էր, որ հայ ժողովուրդը բաժանված լինելով երկու պետությունների՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, գոյատեւում էր իրարից անջատ, մասնավորապես, մինչ այդ գոյություն ունեցող բարեգործական կազմակերպություններից յուրաքանչյուրի գործունեությունը սահմանափակված էր համապատասխան պետության տարածքով: Հայտնի էր նաեւ, որ տարբեր երկրներում ապրող հայերի բացարձակ մեծամասնությունը կազմում էին Արեւմտյան Հայաստանից եւ Կիլիկիայից գաղթած հայեր, որոնք, բնականաբար, նվիրատվություններ անելիս նախապատվությունը տալիս էին իրենց հայրենակիցներին, այլ ոչ թե Ռուսաստանի կազմում ապրող հայությանը: Այս առումով կաթողիկոսի կոնդակի հիմնական նպատակն էլ հենց այն էր, որ նորաստեղծ ՀԲԸ Միությունը դառնա իսկապես համահայկական, տարածի իր գործունեությունը թե Ռուսաստանի եւ թե Թուրքիայի տարածքում: Ըստ էության, այդպիսին էր նաեւ ՀԲԸ Միության հիմնադիրների նպատակը, եւ եթե այն չիրագործվեց, ապա պատճառները զուտ արտաքին բնույթի էին:

Այսպիսով, այս երկու գրությունների շնորհիվ ՀԲԸ Միությունը ապահովեց մի կողմից՝ իր պաշտոնական ճանաչումը, իսկ մյուս կողմից՝ ամենահեղինակավոր, ողջ հայության կողմից ճանաչված միակ ազգային հիմնարկության՝ Հայ Առաքելական եկեղեցու օժանդակությունը:

Հիմնադիր - Անդամները

«ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչութեան ամէնէն պատկառելի դէմքն է - եթե ոչ ամէնէն տիրականը - Ն. Վ. Եպագուպ Արթին Փաշան, որ՝ հիմնարկէքի առաջին օրէն՝ կաթոգին հոգածութեամբ մը քայլ առ քայլ հետեւած է Միութեան աշխատանքին, եւ օրէնքի ու գիտութեան մարդու կրկնակ գերազանց բծախնդրութեամբ մը, հսկած է անոր կանոնագրական ուղղութեան ու հիմնական սկզբունքներուն անթերի ու անխոտոր կիրարկումին»:[13] Սրանք լոկ բառեր չեն. ծանոթանալով Ցագուպ Արթինի մասին ժամանակակիցների հազվագյուտ հիշողություններին՝ համոզվում ես, որ նա իսկապես «...ազնուական հայու տիպարն էր, ...որ շուրջը պատկառանք կ'ազդէր»,[14] որ նա այդպիսին էր թե իր ծագումով, դաստիարակությամբ ու կրթությամբ եւ թե իր բարոյական, մտային ու ազգային հատկանիշներով: Ցագուպ Արթինը (Հակոբ Արթին փաշա Զրաքյան)՝ Եգիպտոսի Արտաքին գործերի նախարար Արթին բեյ Զրաքյանի որդին, ծնվել էր Կա-

հիրեում, 1842թ.: Փարիզի Մխիթարյանների Սամուել-Մուրադ վարժարանում հայեցի կրթություն եւ դաստիարակություն ստանալուց հետո նա ուսումը շարունակում է եվրոպական (Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա) համալսարաններում՝ մասնագիտանալով պատմության, գրականության եւ լեզվաբանության բնագավառներում: 1873թ. Ցագուպ Արթինը հրավիրվում է Եգիպտոս եւ Իսմայիլ փաշայի որոշմամբ դառնում է նրա զավակների՝ իշխան Իբրահիմ Հիլմիի եւ Մահմուդ Ֆուադի (տարիներ անց Եգիպտոսի սուլթանը) դաստիարակ-հսկիչը, իսկ հետագայում՝ Իսմայիլ փաշայի անձնական քարտուղարը: Սկսած 1880թ. նա բարձր պաշտոններ է զբաղեցնում Եգիպտոսի պետական հիմնարկներում: 1883թ. Ցագուպ Արթինը Կրթության նախարարության փոխնախարարն էր եւ այդ պաշտոնը վարեց մոտ 23 տարի: Այն առավել համապատասխանում էր իր գիտելիքներին ու նախասիրություններին եւ պատահական չէ, որ նրա գործունեությունը այս բնագավառում եղավ շատ արդյունավետ:

Մասնավորապես, նա «...կը կազմակերպէ Եգիպտոսի նախակրթարանները եւ երկրորդական վարժարանները, ինչպէս նաեւ բարձրագոյն դպրոցներու մակարդակը կը բարելաւէ եւ կ'ըլլայ հիմնադիր Գահիրէի Արհեստից եւ Արուեստից վարժարաններուն»:[15] Այսուհանդերձ, իր ամենակարեւոր նախասիրությունը գիտությունն էր, որին նվիրում էր իր բոլոր ազատ ժամերը: «Իր կեանքը իմաստունի մը, յարատեւ ու անխոնջ ուսումնասիրողի մը կեանքն է, որ մեծ մասամբ կ'անցնի իր հոյակապ մատենադարանէն ներս, գիրքերու եւ ձեռագիրներու մէջ խորասուզուած: ...Կ'ըսեն թէ Նորին Վսեմութիւնը գիտնականներու ընտանիք մը կազմած է, թէ իր իմաստնափայլ կինն ու դուստրն ամէն օր՝ իրեն հետ երկար ժամեր կը յամենան իր շքեղ գրատան մէջ...»:[16] Նրա հրապարակումները, միջազգային գիտաժողովներում կարդացած զեկուցումները, արեւելագիտական ընկերությունների հիմնադրումն ու ղեկավարումը եվրոպական ճանաչում բերեցին նրան, մասնավորապես, Աբերդինի եւ Սենտ-Էնդրյու (Շոտլանդիա) համալսարանները շնորհել էին նրան պատվավոր դոկտորի կոչում: Եվ կարելի էր ենթադրել, որ այս ամենից հետո ոչ ժամանակ եւ ոչ էլ ուժ պետք է մնար ազգային գործունեության համար: Բայց հենց նա էր, որ կազմակերպեց տեղի հայ կաթոլիկների համայնքը, պատրաստեց նրա սահմանադրությունը եւ ապահովեց ճանաչում՝ կառավարության կողմից: «Եագուպ Արթին Փաշա այն է Եգիպտահայ կաթոլիկ հասարակութեան համար, ինչ որ Պօղոս Փաշա Նուպար՝ մեր (հայ առաքելական համայնքի - Էդ.Մ.) մէջ, լոեալայն, հասկցուած, ընդունուած, նուիրագործուած Ազգապետ մը»:[17]

Տրամաբանական է եւ օրինաչափ, որ վառ անհատականությամբ օժտված այս մարդիկ, որոնք, ի դեպ, ապրում էին հարեւանությամբ, ոչ միայն հին բարեկամներ էին, եւ ձեռք ձեռքի տված հիմնեցին ՀԲԸ Միությունը՝ Պողոս Նուպարը, որպես նախագահ, իսկ Ցագուպ Արթինը՝ փոխատենապետ: Ցագուպ Արթինը մահացավ 1919թ., եւ նրա հուղարկավորությունը, որին մասնակցեցին Եգիպտոսի սուլթանի ներկայացուցիչը, վարչապետը, նախարարները, դեսպանները, ինչպես նաեւ բազմաթիվ հայ կազմակերպություններ, եւս մեկ ապացույց էր մեծ եւ համընդհանուր հարգանքի, որ նա վայելեց իր ողջ կյանքի ընթացքում:

ՀԲԸ Միության մյուս փոխատենապետն էր Երվանդ Աղաթոնը: Երվանդ Աղաթոնը, անկասկած, ուրույն տեղ է գրավում «հրաշալի տասնյակում». նա ոչ միայն եղավ Միության հիմնադրման նախաձեռնողներից մեկը, մասնակցեց կանոնագրի ստեղծմանը, այլեւ իր հետագա ողջ կյանքը նվիրաբերեց Միությանը: ՀԲԸ Միության ընդհանուր տնօրեն Վահան Մալեզյանը, որը ընդհանրապես շատ զուսպ է արտահայտվել իր գործընկերների մասին, այսպես է բնութագրել Աղաթոնին «Ոչ ոք, ոչ իսկ Պօղոս Նուպար, ունեցաւ Աղաթօնի չափ «օրհնեալ հուրը», որ միշտ կը բռնկէր, որ միշտ կը բոցավառէր Բարեգործականի սիրովը: Արդարեւ, աւելի քան հաւատք մը, խոր պաշտամունք ունէր Միութեան համար, եւ կարելի է առանց չափազանցութեան ըսել թէ երբեմն իր ընտանիքէն անգամ կը նախադասէր Բարեգործականը»:[18]

Երվանդ Աղաթոնի հայրը՝ Գրիգոր Աղաթոնը, որին նա կորցրեց 8 տարեկան հասակում, հասարակ հողագործի զավակ էր, որը, սակայն, դարձավ Ազգային Սահմանադրության հեղինակներից մեկը եւ Օսմանյան կայսրության առաջին քրիստոնյա նախարարը: Հետաքրքրական է, որ Ե.Աղաթոնը 1873-75թթ. հաճախել էր Նուպար-Շահնազարեան վարժարանը, որի հիմնադիրն էր Պողոս Նուպարի հայրը: Սա առաջին, առայժմ անուղղակի առնչությունն էր այդ ընտանիքի հետ, որը հետագայում Աղաթոնի համար դառնալու էր ամենամեծ սրբություններից մեկը: Հետեւելով հոր օրինակին՝ նա բարձրագույն ուսումը ստանում է Փարիզի Գրինիոնի երկրագործական վարժարանում, որն ավարտելուց հետո աշխատում է Ֆրանսիայի հարավում (Նիմ)՝ որպես երկրագործ: Վերադառնալով Թուրքիա վարում է տարբեր պաշտոններ, այդ թվում Կ. Պոլսի երկրագործական ընդհանուր քննիչ, Երկրագործական բանկի վարչական խորհրդի անդամ եւ այլն: 1896թ., երբ Կ. Պոլսում եւ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում կազմակերպվեցին հայերի զանգվածային սպանությունները, Աղաթոնը հեռանում է երկրից եւ վերադառնում Փարիզ: Այստեղ նա ծանոթանում է Պողոս Նուպարի հետ, որի հրավերով էլ

գնում է Եգիպտոս, ուր ծավալում է աշխույժ գործունեություն: Տարիներ շարունակ եւ մեծ հաջողությամբ նա վարում է Պողոս Նուպարի, եգիպտահայ այլ խոշոր հողատերերի, ինչպես նաեւ Եգիպտոսի իշխանների ագարակների կառավարչի կամ քննիչի պաշտոնները: Ինքը՝ Աղաթոնը, իր «Կենսագրական նօթերում» այսպես է արժեւորում այդ տարիները. «Եգիպտոսի բազմաթիւ օտարազգի հողագէտներու մէջ միակ հայ հողագէտն էի, որ յաջողեցայ «Եգիպտոսի հողագործներու Միութիւն» (Իւնիօն տը լ'Ակրիքիլթիւր տ'Էժիբթ) անուան ներքոյ ընկերակցութիւն մը հաստատել, որուն գործոն ատենապետութիւնը վարեցի ամբողջ 4 տարի եւ որմէ վերջն ալ մինչեւ հիմա կը մնամ անոր պատուակալ նախագահ...», «...մինչեւ իմ Եգիպտոս հաստատուիլս, քիմիական պարարտանիւթերու գործածութիւնը, նոյն իսկ անոր անունն անգամ երկրին մէջ ծանօթ չէր... Հոն կատարած զանազան փորձարկութիւններէս, երկար ու մանրազնին ուսումնասիրութիւններէս ետքն է որ, քիմիական աղբերու գործածութեան օգտակարութեանը համոզուած՝ անոր ընդհանրացման մեծապէս սատարեցի եւ այս կերպով ալ երկրին հարստութեան աճումին լայնօրէն նպաստած եղայ...»:[19]

Իր կյանքի այդ ժամանակահատվածում Աղաթոնը այնչափ է նվիրվում իր ընտրած մասնագիտությանը, որ, ըստ էության, անմասն է մնում ազգային գործունեությունից: Միայն Եգիպտոսում, այն էլ որոշ ժամանակ անց նա հետզհետե ներգրավվում է այդ ասպարեզը: Թե ինչ ազդակների ազդեցության ներքո էր տեղի ունեցել այդ շրջադարձը, ինքը՝ Աղաթոնը, լռում է: Դժվար չէ ենթադրել, սակայն, որ դրանում մեծ դեր էին խաղացել թե եգիպտահայ համայնքի աշխույժ ազգային գործունեությունը եւ թե Պողոս Նուպարը, որի հետ Աղաթոնի հանդիպումները անհրաժեշտաբար հաճախակի էին: Ինչպես նշվում էր Աղաթոնի 75-ամյակի առիթով հրատարակված կենսագրականում, «Իր ազգային կեանքը կը սկսի գլխաւորաբար Եգիպտոսի մէջ, իբրեւ ազգային երեսփոխան եւ ժողովական, Պօղոս Նուպարի կողքն ի վեր»:[20] Բայց, անկասկած, նրա ազգային գործունեության հիմնական ասպարեզը դարձավ ՀԲԸ Միությունը: Նրա ջանքերի շնորհիվ հիմնվեցին Միության մի շարք մասնաճյուղեր Եվրոպայի երկրներում, նրա քարոզչության արդյունք էին Բարեգործականի անունով ձեւակերպված մեծագումար կտակները, այդ թվում նաեւ Երեւանում կառուցված Դարուհի Ցակոբեան մայրանոցը: Այդ նույն նպատակին էին ծառայում Աղաթոնի գրած բազմաթիվ հոդվածները, որոնցում նա մատչելի ձեւով պարզաբանում էր Միության նպատակը, խնդիրները, դժվարությունները ու հաջողությունները: Նրա հավատարմությունը ՀԲԸ Միության գործին վերածվեց իսկական ֆանատիզմի, որի դրսեւորումն էր

իր հայտարարությունը, թե, «Բարեգործականը չի սիրողը ճշմարիտ հայ չէ»: Բերելով նրա այս խոսքերը Վ. Մալեզյանը շարունակում է. «Զափազանցութիւն անտարակոյս, բայց իրեն համար մոլեռանդ դաւանանք, որուն ինք հաւատարիմ մնաց մինչեւ իր վերջին շունչը, իր ազգասիրութիւնը, իր հայրենասիրութիւնը շփոթելով ՀԲԸ Միութեան հետ, ձուլուելով անոր մէջ, եւ անոր մէջէն միայն ուզելով տեսնել իր ազգը եւ իր հայրենիքը, զոր անշուշտ հոգեւին կը սիրէր, եւ որոնց օգտակար ըլլալու յարմարագոյն միջոցը, ամէնէն գործնական խողովակը կը համարէր սակայն Միութիւնը»:[21]

ՀԲԸ Միության հիմնադիրներից ամենատարեցը Գրիգոր Եղիայանն էր (1833-1911): Կրթությունը ստանալուց հետո (Կահիրեի Ս. Աստվածածին Եկեղեցու դպրատուն, Համիլթոնի անգլիական վարժարան, Ecole des Langues), նա որոշ ժամանակ աշխատեց որպես փաստաբան եւ այդ ընթացքում «...կարեւոր ծառայութիւններ մատուցած է Ազգային Առաջնորդարանին, զանազան դատերու առթիւ, շնորհիւ իր օրէնսգիտական հմտութեան եւ ամենաբարձր յարաբերութեանց՝ զոր մինչեւ վերջ մշակած է եգիպտական աւագանիին հետ»:[22] Սակայն նրա գործունեության հիմնական ասպարեզը եղավ դիվանագիտությունը: Սկսելով աշխատանքը Ռուսաստանի հյուպատոսարանում որպես թարգմանիչ՝ 1880-ին Գրիգոր Եղիայանը ստանձնում է փոխհյուպատոսի պաշտոնը: Նա հմուտ եւ ճանաչված դիվանագետ էր, դրա վկայություններից է այն, որ նա պարգեւատրվել էր Ռուսաստանի, Իտալիայի, Օսմանյան կայսրության, Պարսկաստանի, Եգիպտոսի եւ այլ երկրների պետական շքանշաններով: Իր հեղինակությամբ նա մեծապես նպաստեց ՀԲԸ Միության հաջող գործունեությանը, հատկապես տարբեր երկրների հյուպատոսարանների միջոցով Արեւմտյան Հայաստանի բնակչությանը ՀԲԸ Միության նպաստները փոխանցելու գործում: Դրսից դիտողի համար կարծես թե երջանիկ ու հաջողություններով լի կյանք, բայց ահա թե ինչ է գրել Գ. Եղիայանի վերջին տարիների մասին ժամանակակիցը. «Մեր անձնական մէկ տեսակցութեան մէջ կեանքէն ձանձրացած էր, հիւանդ էր եւ բան չէր կարող ուտել, կեանքը դառն էր իրեն համար հակառակ իր ճոխութեան, մանաւանդ իր աչքերը լեցան, երբ յիշեց իր վաղամեռիկ աղջիկը: Կը խորհէր նոր կտակ մ'ալ ընել ի նպաստ որբերու ՀԲԸ Միութեան ձեռքով եւ որպէսզի հաստատուն հիմերու վրայ դրուի, Ֆրանսայէն բերել տուած էր ժառանգական խնդիրներու վրայ խօսող գիրքեր, որոնցմով կը զբաղէր»:[23] Սակայն մահը հասավ ավելի շուտ: Նրա մեծագումար կտակի հիմնական մասը հատկացվել էր Կահիրեի Ազգային Առաջնորդարանին, Գալուստեան վարժարանի շրջանավարտներին ի նպաստ՝ եվրոպական համալսարաններում

ուսանելու եւ այլն: Հատուկ գումար էր հատկացվել նաեւ Կահիրեում հայկական եկեղեցի կառուցելու նպատակով, որը իրականացավ 1927թ., երբ տեղի ունեցավ նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու օծումը: Եվ, սակայն, թե Գ. Եղիայանի մահից անմիջապես հետո եւ թե հետագայում շատերին է հետաքրքրել մեկ հարց. ինչո՞ւ նա, լինելով ՀԲԸ Միության հիմնադիրներից մեկը, չէր կտակել Միությանը որեւէ գումար: Այդ հարցին դեռեւս 1911թ. պատասխանել է Միության հայտնի գործիչներից Վահան Քյուրքճյանը, որի շնորհիվ ի հայտ է գալիս Գ. Եղիայանի անհատականության, նրա՝ որպես եգիպտահայի ազգային ինքնագիտակցության առանձնահատկությունը: «Անոր համոզումն էր թէ Եգիպտոսի հայը պէտք չէ առատաձեռն ըլլայ օտարերկրեայ հայերուն համար, եւ թէ ամէն քաղաք՝ իր տեղւոյն աղքատն ու որբը միայն պէտք է հոգայ... Բարեգործութեան մասին իր ըմբռնումները շատ տարբեր էին մերիններէն: Անիկա Եգիպտացի մըն էր, հայ լեզուին ու հայ մամուլին գրեթէ օտար (թէեւ հաճոյքով կը ցուցնէր Վենետիկի վանքէն առած գիրքերը) եւ ուզեց որ Եգիպտոսի հայ ուսանողը միայն օգտուի իր կտակէն, անոր հայութիւնը եկեղեցիէն ժառանգ մնացած էր իրեն եւ ուզեց որ եկեղեցին «պայծառանայ» իրմով, ու եկեղեցին ժառանգէ իր կտակին մեծ մասը»:[24]

Գ.Եղիայանը միակ դիվանագետը չէր ՀԲԸ Միության հիմնադիրների կազմում: Դիվանագիտական ծառայության բազմամյա փորձ ուներ նաեւ Կարապետ Շերիտճյանը, որը զգալի դեր խաղաց Միության ինչպես ստեղծման, այնպես էլ գործունեության առաջին շրջանում: Կ.Շերիտճյանը, որպես բազմափորձ դիվանագետ, լավագույնս տիրապետելով պաշտոնական հաղորդակցման, շփումների մասին եղած գրված եւ չգրված օրենքներին, հավելյալ որակ եւ փայլ էր հաղորդում Միության գործունեությանը: Այս ունակությունը շատ ներդաշնակ էր Կ. Շերիտճյանի անհատականությանը: «Կենցաղագէտ մարդ է ան գերազանցապէս, եւ բառին ազնիւ իմաստով՝ կենցաղասէր մարդն ալ, այսինքն անոնցմէ, որոնք ապրելու արուեստը արթիսթի պէս գործ կը դնեն, որոնց ապրումին վայելչութիւնը երբեք չիջնար, չի զիջանիր եսական գոեհիկութիւններու, այլ որոնք իրենց եսին պաշտամունքը (le culte du moi) կը մշակեն բարձրորէն, գեղեցկութիւն, պայծառութիւն փնտռելով ու տարածելով իրենց շուրջ»:[25] Եվ տրամաբանական էր, որ «դպրութեանց եւ արուեստներու» սիրահար, իր շուրջը գեղեցկություն փնտրող եւ ստեղծող Կ.Շերիտճյանը հոժարակամ ստանձնեց Բարեգործականի գրադարանապետի պաշտոնը՝ գրադարանին նվիրելով իր արժեքավոր եւ ընտիր գրքերի անձնական մեծ հավաքածուն:

Որեւէ հիմնարկության գործունեությունը անհրաժեշտաբար թելադրում է համապատասխան վարչական ծառայության գոյությունը: Վառ անհատականությունների (որոնց թվին կարելի է դասել ՀԲԸ Միության վերոհիշյալ հիմնադիրներին) խառնվածքին ընդհանրապես խորթ է վարչական աշխատանքը, որը թվում է ձանձրալի, միշտ մնում է ստվերում եւ շատերին անծանոթ: Սակայն վարչական մեքենայի գործունեությունից է կախված եւ նրանով է պայմանավորված յուրաքանչյուր հիմնարկության արդյունավետ գործառումը: Պողոս Նուպարը ՀԲԸ Միությունը հիմնադրելիս ոչ միայն գիտակցում էր դրա կարեւորությունը, այլեւ, ինչպես ցույց տվեց հետագա պատմությունը, կատարեց շատ հաջող ընտրություն՝ վստահելով նորաստեղծ կազմակերպության վարչական ծառայության ղեկավարումը Մկրտիչ Անդրանիկյանին, իսկ ավելի ուշ՝ Վահան Մալեզյանին:

Մ. Անդրանիկյանի պարագայում, թերեւս, սխալվելը իսկապես որ դժվար էր: Դեռեւս 1878թ. նա Կ. Պոլսից տեղափոխվել էր Կահիրե՝ Պողոս Նուպարի հրավերով եւ որոշ ժամանակ անց ստանձնել նրա ֆինանսական եւ առեւտրական գործերի կառավարչի (վեքիլ) պաշտոնը: Այդ ընթացքում նա այնչափ բարձր մասնագիտական կարողություններ էր դրսեւորել, որ Պողոս Նուպարը անհրաժեշտ համարեց նրան ընդգրկել ոչ միայն Միության կանոնագրքի խնբագրական, այլեւ հիմնադիրների կազմի մեջ: Բայց ոչ միայն մասնագիտական կարողություններով էր թելադրված այդ ընտրությունը: Կա մի պարադոքս. բարեգործության պարտադիր պայմաններից է մերժելու ունակությունը, քանզի չկա եւ չի եղել որեւէ բարեգործական հաստատություն կամ անհատ, որն ի վիճակի լիներ բավարարել բոլոր խնդրանքները եւ կարիքները: Ահա այս հատկությամբ, որը խիստ կարեւոր էր նորաստեղծ Միության համար, նույնպես օժտված էր Մ.Անդրանիկյանը: «Ամեն մարդ՝ աւելի կամ նուազ չափով՝ պչրանք մը, *քօքէթրոի* մը կը դնէ ինքզինք հաճելի, համակրելի ընծայելու համար իրեն հետ հպումի եկողներուն: Անդրանիկեանի *քօքէթրոին* ժխտական հանգամանք մը ունի կարծես: «Չէ» ըսելու ձեւ մը կայ որ դիմացինիդ մէջ կը մեղմացնէ, տանելի, հանդուրժելի կ'ընծայէ մերժումի մը մորմոքը: «Կը ցաւիմ, սիրելիս, շատ կը ցաւիմ, որ չեմ կրնար»-ի պէս պարապ խօսքերով որքան դիւրին է մարդ մը ճամբու դնել... Բայց Անդրանիկեանի խառնուածքը կը խորշի այս պայմանադրական կեղծիքէն: Իր «ոչ կարեմք»-ը կտրուկ ու վերջնական շեշտ մը ունի, որ վարանումի, տատանումի տեղի չի ձգեր եւ յոյսին բոլոր դռներն ու հորիզոնները կը գոցէ խնդրարկուին առջեւ»:[26]

Կենտրոնական Վարչական Ժողովում, որը ՀԲԸ Միության գերագույն մարմինն էր, Անդրանիկյանի պարտականությունները շատ լայն էին: Ինչպես ասվեց, վարչական ծառայությունների աշխատանքը, որպես կանոն, անհայտ է մնում թե ժամանակակիցների եւ թե հետագա սերունդների համար, ուստի նորից դիմենք 1913թ. «Ոսկեմատեան»-ին: «ՀԲԸ Միութեան Կեդրոնին մէջ եօթը տարիէ ի վեր իր ստանձնած ու խղճի մտօք կատարած դերը - առանց չափազանցելու կրնանք ըսել - կենսական նշանակութիւն ունի այս հաստատութեան համար: Տիար Մ.Անդրանիկեան «Բարեգործական»-ին Կեդրոնական Վարչութեան այն անդամն է որ տարին 365 օր շարունակ զբաղած է Միութեան վարչական գործառնութիւններովը: Միութեան մեծագործութիւններու համբաւումին մէջ իր անունը չի գար յաճախ հնչել ականջներուն: Ժէսթերու եւ փառաւորումներու մարդ չէ ան: Բայց ինքն է որ ժողովներու, հաւաքումներու եւ հանդէսներու պանծալի մթնոլորտէն դուրս, գրասենեակին լռութեան ու մեկուսացմանը մէջ, օրը օրին, կը դարձնէ Միութեան կնճռոտ եւ բազմապահանջ մեքենան:... Եւ այս բոլորը՝ առանց յոխորտանքի, առանց ցուցամոլիկ ծեքծեքման, համեստօրէն, պարզօրէն, այնպիսի անշուք ձեւով մը, որ կը զգաս թէ մարդը ներքին անհուն գոհունակութիւն մը, գերագոյն մխիթարութիւն մը կը գտնէ կոր ցեղին դրականօրէն ծառայելու գիտակցութեանը մէջ»:[27]

Իր ժողովրդին ծառայելու գիտակցությամբ նույնչափ օժտված էր նաեւ Նազարեթ Տաղավարյանը, որը, սակայն, նախընտրեց այլ գործելակերպ: Ն. Տաղավարյանը միակն էր Միության հիմնադիր անդամներից, որի թեկնածությունը առաջարկել էր ոչ թե Պողոս Նուպարը, այլ Երվանդ Աղաթոնը: Կարելի է ասել, որ նա նաեւ միակն էր, որ քաջածանոթ էր արեւմտահայ ազգային կյանքին: Ն. Տաղավարյանը ՀԲԸՄ Կենտրոնական Վարչական Ժողովի առաջին ատենադպիրն ու ընդհանուր քարտուղարն էր եւ չնայած նրան, որ այդ պաշտոնում աշխատեց ընդամենը երկու տարի, այնուամենայնիվ, կարողացավ ամբողջովին դրսեւորել իր կազմակերպական ու գիտական ունակությունները: Երբ 1908թ. հռչակվեց Օսմանյան սահմանադրությունը եւ կայսրության ազգային փոքրամասնությունները, թվում էր, դարձան հասարակության իրավահավասար անդամներ, Ն. Տաղավարյանը հրաժարվեց իր պաշտոնից եւ մեկնեց Կ. Պոլիս, ուր իր կարեւոր մասնակցությունը բերեց ազգային եւ պետական կյանքին: Սակայն նա այնտեղ էլ շարունակեց ծառայել Միությանը՝ արդեն որպես Կ. Պոլսի մասնաճյուղի ատենադպիր: Դեպի երկրի հայաշատ շրջանները կատարած իր ուղեւորությունների ընթացքում նա հիմնեց ՀԲԸ Միության բազմաթիվ նոր մասնաճյուղեր եւ ապահովեց նրանց մշտական համագործակցությունը Կենտրոնական Վարչության հետ: 1913թ. Ն.Տաղաւարյանին նվիրված հոդվածում գրվել էր. «...Այն սերունդէն է որ եթէ պայքարի ու անձնազոհութեան հերոսներ չի տուաւ ազգին, խաղաղ-զարգացման մեկ քանի արժանավոր ոահվիրաներ արտադրեց եւ ասոնց կարգէն իր տեղն ունի, ապահովաբար, տոքթ. Ն. Տաղաւարեանը»:[28] Ինչ իմանար հեղինակը, որ ընդամենը երկու տարի անց «խաղաղ - զարգացման ոահվիրա» Ն.Տաղավարյանը դառնալու էր «անձնազոհության հերոս»՝ սպանվելով թուրք ցեղասպանների ձեռքով:

Մկրտիչ Մարկոսոֆը (1848-1919) ծնվել էր Տրիեստում (Ավստրիա), նրա հայրը՝ Դանիել Մարկոսոֆը, Նուպար փաշայի քեռայրն էր: Մկրտիչ Մարկոսոֆը Ֆրանսիայում ստանալով բարձրագույն կրթություն՝ ճարտարապետ-երկրաչափի մասնագիտությամբ, տեղափոխվում է Եգիպտոս եւ անցնում աշխատանքի Հանրային շինությունների նախարարությունում՝ որպես քննիչ-ճարտարապետ: ՀԲԸ Միության հիմնադրվելուց հետո նա Կենտրոնական Վարչական Ժողովի անդամ էր եւ իր մատուցած ծառայությունների համար առաջիններից մեկը դարձավ Միության պատվո անդամ: Նույն տարիներին՝ 1907-1912թթ. Մ.Մարկոսոֆը նաեւ Կահիրեի Աղքատախնամ ընկերության ատենապետն էր:[29]

ՀԲԸ Միության հիմնադիրներից ամենաերիտասարդը Պողոս Նուպարի որդին՝ 25-ամյա Առաքել Նուպարն էր, որը եղավ Կենտրոնական Վարչության առաջին գանձապետը: Հովհաննես Հակոբյան՝ Եգիպտոսի Ներքին գործերի նախարարության դիվանատան բարձրաստիճան պաշտոնյա, Կահիրեի հայ համայնքի Ազգային քաղաքական ժողովի անդամ: ՀԲԸ Միության հիմնադիրների ցուցակում այս մարդու անունը միշտ վերջում է նշվում: Հ.Հակոբյանը եղավ միակը հիմնադիրներից, որ կարճ ժամանակ անց հրաժարվեց Կենտրոնական Վարչության անդամի պաշտոնից եւ այլեւս չհամագործակցեց Միության հետ: Ինչո՞վ էր դա բացատրվում՝ Պողոս Նուպարի անհաջող ընտրությա՞մբ, նախարարությունում իր գրված պաշտոնի ու Միության անդամ լինելու անհամատեղելիությա՞մբ, թե՞ կար մեկ այլ, մեզ անծանոթ պատճառ...

Ահա այս անձերն էին, որ Պողոս Նուպարի գլխավորությամբ հիմնադրեցին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը: Նրանք շատ տարբեր էին, տարբեր էին տարիքով, կենսափորձով, գաղափարներով եւ այլ հատկանիշներով: Բայց եւ այնպես, կարելի է նկատել որոշ սկզբունքային բնույթի ընդհանրություններ: Նրանք բոլորը բարձրակարգ մասնագետներ էին՝ ֆինանսիստներ ու գործարար մարդիկ, դիվանագետներ ու գիտնականներ, բժիշկ ու գյուղատնտես, ճարտարապետ: Մասնագիտություններ, որոնք երաշխավորում էին ապահով կյանք՝ որե-

ւէ երկրում ու ազգային միջավայրում: Հիմնադիրների վերոհիշյալ մասնագիտությունները եվրոպական կրթական հաստատություններում (կամ նմանօրինակ տեղական հաստատություններում) ուսանելու արդյունք էին, որի շնորհիվ նրանք ոչ միայն ճանաչել էին զարգացման ավելի բարձր աստիճանի վրա կանգնած ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, այլեւ հղկել իրենց պատկերացումները հայ ժողովրդի զարգացման ցանկալի ուղիների վերաբերյալ: Այդ առումով հատկանշական է եւ ոչ պատահական, որ հիմնադիրների կազմում բացակայում էին գրողներ, որոնք թե այդ շրջանում եւ թե հետագայում այնչափ մեծ եռանդով զբաղվեցին ազգային-քաղաքական գործունեությամբ՝ չունենալով դրա համար անհրաժեշտ ունակություններ ու գիտելիքներ:

ՀԲԸ Միության ձեւավորման պահին հիմնադիրներից եւ ոչ մեկը հայ քաղաքական կազմակերպությունների անդամ չէր (որոշ ժամանակ անց միայն նրանցից ոմանք՝ Ե.Աղաթոնը, Մ.Անդրանիկյանը, Ն.Տաղավարյանը կդառնան Սահմանադրական Ռամկավար կուսակցության անդամ): Շնորհիվ դրա ապահովվեց նրանց անաչառ գործունեությունը ի շահ ողջ հայ ժողովրդի:

Հիշատակության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ հիմնադիրներից մի քանիսը, ինչպես, օրինակ, Պողոս Նուպարը, Ցագուպ Արթինը, Գեւորգ Եղիայանը, վարժ չէին տիրապետում հայերենին: Սակայն նրանց գործունեությունը ՀԲԸ Միության հիմնադրման առաջին իսկ օրից, եւս մեկ ապացույցն է այն դրության, որ ազգային փոքրամասնությունների պարագայում մայրենի լեզվին տիրապետելը եւ ազգային ինքնագիտակցությունն ու գործունեությունը փոխպայմանավորված երեւույթներ չեն:

Ծրագրի հեղինակը թե հեղինակները

Որեւէ կազմակերպության պատմությունը ուսումնասիրելիս ծառանում է, այսպես ասած, հեղինակության հարցը: Հաճախ է պատահում, որ այս հարցը քննելիս փորձում են տարբերակել գաղափարի հեղինակին եւ այն իրագործողին: Երբ իրական կյանքում ստեղծվում է որոշակի հիմնահարց, որի լուծումը պահանջում է նոր միջոցներ (ներառյալ հատուկ մի կազմակերպության ստեղծում), անհնար է, որ այն գիտակցվի միայն մեկ մարդու կողմից: Սակայն մեկ բան է գիտակցել, խնդիրների լուծումներ առաջարկել, եւ լրիվ այլ բան՝ այդ ամենի իրականացումը: Դա առանձնահատուկ շնորհ է, որը ոչ բոլորին է տրված եւ որը առաջնորդների պարտադիր բնութագրերից է:

Այս ընդհանուր երեւույթը բնորոշ եղավ նաեւ ՀԲԸ Միությանը: Թեեւ այդ կազմակերպությանը նվիրված բոլոր հրապարակումներում որպես հիմնադիր նշվել եւ նշվում է Պողոս Նուպարը, սակայն, միաժամանակ նկատելի է նաեւ հետեւյալ միտումը: Հայտնի են հանրաճանաչ հայ քաղաքական եւ հասարակական գործիչների որոշ գրություններ, որոնց հեղինակները, իսկապես որ լավագույնս գիտակցելով եւ վերլուծելով հայ իրականության առջեւ ծառացած խնդիրները, որպես լուծում, նշում էին հատուկ կազմակերպության հիմնադրման անհրաժեշտությունը: Այսպես, Արշակ Չոպանյանը, հայտնի արձակագիր Երվանդ Օտյանի վկայությամբ, «...երեք մեծ գաղափարներու կը հետապնդէր, երեքն ալ իրարմէ օգտակար, իրարմէ ազգաշէն, իրարմէ վսեմ ... Չոպանեանի երրորդ գաղափարն էր Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւն մը կազմել, որուն վարիչը պիտի ըլլար, բնականաբար ինք: Ասոր համար բաւական արիւն քրտինք թափեց. ծրագիրը շինեց, վարչական խորհուրդ կազմեց, գնաց եկաւ, մարդիկ համոզեց, բայց, ափսոս, նախախնամութիւնը այնպէս վճռած էր որ իր հղացած գաղափարը Պօղոս փաշա Նուպար պիտի իրագործէր, տարիներ ետքը, Եգիպտոսի մէջ»:[30] 1904թ. հունվարին քաղաքական գործիչ Արփիար Արփիարյանը Վահան Մալեզյանին հղած նամակում գրում էր. «Կը խորհէի թէ արդեօք աւելի օգտակար պիտի չըլլա՞ր հիմնել «Ազգային Ընկերութիւն» մը, նպատակ ունենալով «Հայոց տնտեսական եւ մտաւորական զարգացման նպաստել», առանց սակայն, քաղաքական ու յեղափոխական ձեռնարկներու»:[31] ՀԲԸ Միության գործիչներից Վ. Քյուրքճյանը 1951թ. գրած ինքնակենսագրականում վերհիշում է, որ դեռեւս 1905թ. հոկտեմբերին Կահիրեում հրավիրվել էր տասնչորս հոգիանոց մի ժողով, որի նպատակն էր հիմնել Հայկական Միություն: Սակայն դա եղավ վերջին ժողովը, քանի որ Պողոս Նուպարը, ըստ հեղինակի, «հաւանած էր գլուխ կանգնելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որ պաշտօնապէս հռչակուեցաւ 1906 ապրիլի 15-ին»:[32] «Ապագայ» թերթում տպագրված մի հոդվածում կարդում ենք. «Աղաթօն Պէյ յիշած է թէ ինք եւ Վսեմ. Պօղոս փաշան առաջին համակարծիքները եղած են հիմնելու այս կարեւոր հաստատութիւնը: Կը հաւատամ թէ ճիշդ է, բայց եթէ հանգուցեալ Տոքթ. Տաղաւարեան ողջ ըլլար, ան ալ պիտի ըսէր թէ գաղափարի առաջին յղացումը իրմէ էր, ինչ որ ինձ ըսած էր օր մը»:[33]

Նման վկայությունների շարքը կարելի է շարունակել եւ դժվար չէ նկատել, որ կամա թե ակամա, նշված գրությունները մի տեսակ պասիվ դեր են հատկացնում Պողոս Նուպարին, եւ այն տպավորությունն է ստեղծում, որ նա ապրիլի 15-ին պարզապես հավանություն է տվել այդ

նոր կազմակերպության ստեղծման գաղափարին եւ ստորագրել հիշյալ փաստաթուղթը:

Հատկանշական է, որ ՀԲԸ Միության հիմնադիրները, բացառությամբ Երվանդ Աղաթոնի, երբեւէ չանդրադարձան Բարեգործականի հիմնադրման պատմությանը: Նրանք, կարծես, վստահել էին այդ պարտականությունը Ե.Աղաթոնին, որը ընդհանրապես ՀԲԸ Միության առաջին ժողովրդականացնողն ու քարոզիչն էր: Եվ հենց նա էլ բազմիցս գրեց հիմնադրման հետ կապված հարցերի մասին, մասնավորապես, վերոհիշյալ հոդվածի կապակցությամբ նույն «Ապագայ» թերթում տպագրելով «Բարեգործականի բանախօսութեան առթիւ» հոդվածը: Եվ, ինչպես արդեն կռահեց ընթերցողը. «...Բարեգործականի առաջին գաղափարը ես յղացած եմ», գրում է Աղաթոնը... Ըստ իրեն, առաջին անգամ նման մի կազմակերպության անհրաժեշտության մասին խոսք է գնացել դեռեւս 1901-1902 թթ. Պողոս Նուպարի, Ապահ Պետրոսյանի եւ իր ներկայությամբ: Այդ զրույցից հետո Աղաթոնը եւ Ա.Պետրոսյանը պատրաստում են մի ծրագիր, որը ներկայացվում է Պողոս Նուպարին միայն 1905թ., եւ ահա թե ինչ առիթով: 1905թ. Ռուսական կայսրությունում Ուկրաինայում, տեղի ունեցավ տեղի հրեա բնակչության ջարդը («պոգրոմ»): Հաջորդ օրն իսկ եվրոպական թերթերը տեղեկացրին, որ հրեական միջազգային «Ալիանս Իսրայելիթ» կազմակերպությունը հեռագրով 200 հազար ֆրանկ է ուղարկել տուժած հրեաներին: Երբ 1905թ. հունիս ամսին Ռուսական կայսրության մեկ այլ շրջանում Կովկասում գրեթե նույնպիսի ջարդ կազմակերպվեց տեղի թուրքերի (որոնք հետագայում պետք է կոչվեին ադրբեջանցիներ) կողմից հայ բնակչության հանդեպ, նման օգնությունը հասավ շատ ավելի ուշ, քանզի գոյություն չուներ «Ալիանս»-ի նման հայկական հասարակություն եւ հարկ եղավ կազմակերպել հատուկ հանգանակություն: Այս դեպքերից հետո է, որ Ե.Աղաթոնը նորից դիմում է Պողոս Նուպարին, որը համաձայնվում է ձեռնամուխ լինել համահայկական մի կազմակերպության ստեղծման գործին: Նա նախ ցանկանում է ծանոթանալ «Ալիանս»-ի ծրագրին: Ե.Աղաթոնը, օգտվելով առիթից, ներկայացնում է նաեւ տարիներ առաջ պատրաստած ծրագիրը, որը մինչ այդ վերամշակել էր Լեւոն Մկրտիչյանը: Եվ ահա թե ինչ է գրում Աղաթոնը. «Պողոս փաշա, տեղի հետաստեղ, արգիլեցու հանար ազգային խաչագողներու Բարեգործականին մէջ մտնելը եւ ժողովուրդին տուած դրամները խլացնելը, բոլորովին տարբեր ծրագիր մը պատրաստեց (ընդգծումը իմն է-Է.Մ.) եւ առաջնոյ խմբագրական յանձնախումբ մը կազմեց որ բաղկացած էր հանգուցեալ Եղուարդ Աբրիկ Փաշայէ, Շէրիֆեանէ Սարգսեանէ ալ, Մկրտիչ Անդրանիկեանէ եւ ինձմէ».[34] Իրոք ժամանակ անց Աղաթոնի առաջարկությամբ այդ կազմի մեջ ընդգրկվում է նաեւ Ն.Տաղավարյանը: Աղաթոնի վկայությունը վստահություն է ներշնչում, թեկուզ հենց այն պատճառով, որ նրա հոդվածը տպագրվեց 1927թ., երբ դեռ ողջ էին Պողոս Նուպարը, Մ.Անդրանիկյանը եւ Լ.Մկրտիչյանը:

Այսպիսով, պատկերը հետեւյալն է: Համազգային բարեգործական կազմակերպության անհրաժեշտության գաղափարը դարձել էր համընդհանուր: Տարբեր մարդիկ, տարբեր երկրներում եւ քաղաքներում իրարից անկախ փորձում էին իրականացնել այդ գաղափարը, սակայն դա հաջողվեց միայն 1906թ., Կահիրեում: Անշուշտ, խիստ կարեւոր դեր է խաղացել Ե.Աղաթոնը: Հատկապես գնահատելի են նրա իրատեսությունն ու գիտակցումը, որ նման կազմակերպությունը հաջողություն կունենա, եթե առաջնորդվի ոչ այնքան ազգային-քաղաքական գործունեությամբ արդեն զբաղվող հայտնի մի անձի կողմից, այլ այնպիսի մեկի, որը վստահություն ներշնչի իր անձնական, բարոյական եւ գործնական նկարագրերով (ուշագրավ է, որ դրանում նրան համակարծիք էր նաեւ հայտնի քաղաքական գործիչ, հեղափոխական հայացքների տեր Ա.Արփիարյանը): Այդ տարիներին բուռն կերպով ընթացող ազգային-քաղաքական շարժումներին Պողոս Նուպարի անմասնակից լինելը գուցե եղավ պատճառներից մեկը, եթե ոչ գլխավորը, որ ժամանակակիցները փորձում էին գտնել ՀԲԸ Միության «իսկական» հեղինակին: Այս կապակցությամբ նշեմ, որ բնավ պատահական չէ, որ ՀԲԸ Միության հետագա բոլոր նախագահները նույնպես, կարծես, հետեւելով Պողոս Նուպարի օրինակին, հեռու էին կանգնած ազգային-քաղաքական ավանդական գործունեությունից:

Ե.Աղաթոնի վկայության ամենակարեւոր կետերից է այն, ուր նա նշում է, որ Պողոս Նուպարը, հավանություն չտալով ներկայացրած նախագծին, «բոլորովին նոր ծրագիր մը պատրաստեց»: Թվում է, այս վկայությունը վերջնական պատասխան է այն հարցին, թե ինչպիսին էր Պողոս Նուպարի դերը ՀԲԸ Միության հիմնադրման գործում: Հարց է ծագում, սակայն, թե որն էր իր կողմից պատրաստած ծրագրի նորությունը: Այս հարցի պատասխանը կարելի է գտնել ՀԲԸ Միությանը նվիրված հրատարակություններում, որոնք հրապարակվել էին մինչեւ 1940-ական թթ. կեսերը: «ՀԲԸ Միութիւնը կուգար Ալիանս Իզրայէլիթի նախախնամական դերն ստանձնել հայ կեանքի անհագնակարօտ իրականութեան մէջ: Իր այս կոչումը այնքան վճռորոշ եւ գերակշիռ էր Միութեան հիմնադիրներուն մտքին մէջ, որ անոնք կանխաւ խորապէս ուսումնասիրած էին Ալիանս Իզրայէլիթի կազմն ու գործունէութիւնը, եւ անոր վրայ ձեւած, մշակած՝ Հայկական «Ալիանս»-ին հիմնական կանոնագիրը»:[35] Պողոս

Նուպարը, ստանձնելով նոր կազմակերպության ստեղծումը, այդ հարցին մոտեցավ ամենայն պատասխանատվությամբ, որպես իսկական պրոֆեսիոնալ, այլ ոչ թե սիրող, դիլետանտ: Իսկ պրոֆեսիոնալ մոտեցումը պահանջում էր նախ ուսումնասիրել արդեն գոյություն ունեցող նմանօրինակ կազմակերպությունների փորձը, ընդօրինակել այն դրականն ու օգտակարը, որը կապահովեր նորաստեղծ Միության հաջող գործունեությունը: Այլ կերպ ասած, նրա նպատակը ոչ թե նորարարություն անելն էր, այլ կենսունակ եւ աշխատող կազմակերպության ստեղծումը: Եվ հենց նման մի կազմակերպության օրինակ էր հրեական «Ալիանս Իսրայելիթ Ցունիվերսել»-ը, որը հիմնվել էր դեռ 1860թ., Փարիզում եւ բազմիցս ապացուցել իր օգտակարությունը հրեա ժողովրդի համար, այդ թվում նաեւ 1905թ. վերոնշյալ դեպքերի ժամանակ:[36]

Դրա հետ մեկտեղ, Պողոս Նուպարը եւ իր գործընկերները չդիմեցին Ալիանսի ծրագրի պարզ ընդօրինակմանը: Այսպես, եթե Ալիանսի նպատակներից էին «...աշխատել ամեն տեղ հրեաներուն ձերբազատմանն...», «...օգնել արդիւնաւոր օժանդակութեամբ մը անոնց, որ կը տառապին հրեայ ըլլալուն համար...»[37], ապա ՀԲԸ Միության ծրագրում նմանատիպ կետերը բացակայում են: Դրանց փոխարեն խոսվում էր «...հայ ժողովրդեան մտաւոր եւ բարոյական զարգացման...», «...անոնց նիւթական կացութիւնը բարւոքելու» մասին: Դրանով իսկ ՀԲԸ Միության հիմնադիրները ձգտում էին մի կողմից չգրգռել թուրքերի թշնամանքը եւ ապահովել Միության գործունեությունը Օսմանյան, ինչպէս նաեւ Ռուսական կայսրությունների տարածքում, իսկ մյուս կողմից որեւէ ընդհանուր եզր չունենալ հայ քաղաքական կազմակերպությունների հետ: Հատկանշական է նաեւ հետեւյալ տարբերությունը: Եթե Ալիանսի ծրագրում խոսվում էր ընդհանրապես հրեա ժողովրդի մասին, անկախ նրանց բնակության վայրից (եւ դա բնական էր, քանզի XIX դ. կեսերին հրեաները դեռ զրկված էին իրենց հայրենիքում ապրելու իրավունքից), ապա Միության նպատակն էր օգնություն ցույց տալ բուն հայրենիքում, այլ ոչ թե տարբեր երկրներում ապրող հայությանը: Սկսած 1940-ական թթ. կեսերից, ՀԲԸ Միությանը նվիրված հրապարակումներում այլեւս չկա հիշատակություն Ալիանսի մասին: Բանն այն է, որ 1947թ. Իսրայել պետության ստեղծումից անմիջապես հետո, նրա եւ հարեւան արաբական պետությունների միջեւ սկսվեցին պատերազմական գործողություններ: Հաշվի առնելով, որ Սիրիայում, Եգիպտոսում, Հորդանանում, Լիբանանում եւ այլ արաբական երկրներում 1915թ. ցեղասպանությունից հետո բնակություն էին հաստատել հարյուր հազարավոր հայեր, որոնք վայելում էին տեղական իշխանությունների ընդհանուր առմամբ բարյացակամ վերաբերմունքը, նպատակահարմար համարվեց չհիշատակել ՀԲԸ Միության անուղղակի կապը Ալիանսի հետ: Թվում է անցած տասնամյակների ընթացքում տեղի հայ բնակչության քաղաքացիական դիրքորոշումը, ինչպես նաեւ ՀԲԸ Միության անդամների բազմիցս ապացուցված նվիրվածությունը ասպնջական երկրների շահերին, այլեւս ավելորդ է դարձնում նման զգուշությունը, որի գոհն էր դարձել պատմական ճշմարտությունը:

Միության նպատակները

ՀԲԸ Միության հիմնական նպատակների մասին հստակ ասվում էր կանոնագրի առաջին հոդվածում՝ «Բնագաւառի Հայ ժողովրդեան մտաւոր եւ բարոյական զարգացմանը նպաստել, անոնց նիւթական կացութիւնը բարւոքելու օժանդակել եւ այս արդիւնքը յառաջ բերելու ծառայող ոեւէ ձեռնարկ կամ հրատարակութիւն քաջալերել»:[38]

Հետագա տարիներին Միության հիմնական կանոնագիրը, նրա առանձին հոդվածները ենթարկվեցին որոշ փոփոխությունների, բայց ծրագրային նշանակություն ունեցող այս երեք կետերը մնացին գրեթե անփոփոխ: Միայն թե տարբեր ձեւակերպումներ ունեցավ առաջին կետի այն մասը, ուր նշվում է ՀԲԸ Միության գործունեության հասցեատերը: Դա արտացոլումն էր այն էական ու բազմաբնույթ փոփոխությունների, որոնք տեղի էին ունենում թե՛ Հայաստանում եւ թե՛ գաղթաշխարհում: Այստեղ առայժմ նշեմ միայն, որ մինչեւ 1915թ. հրատարակած կանոնագրերում, այսինքն, այն տարիներին, երբ դեռ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը բնակվում էր Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում կանոնագրի առաջին կետում օգտագործվել են «բնագաւառ», «Արեւելքի» կամ «ասիաբնակ հայ ժողովուրդ» եւ այլ ձեւակերպումները: Նման ձեւակերպումների նպատակը մեկն էր՝ դյուրացնել Միության՝ որպես կազմակերպության, ճանաչումն ու օրինականացումը իշխանությունների կողմից, չստեղծել ավելորդ խոչընդոտներ նրա ապագա գործունեության համար: Սա կարելի է նկատել որպես առաջին օրինակը ՀԲԸ Միության որդեգրած գործելակերպի, որը կարելի է բնութագրել «գործով, այլ ոչ բանիվ» հայտնի ասացվածքով:

Պարզ էր, սակայն, որ Միության բուն գործունեության համար անհրաժեշտ էր ողջ հայության մշտական եւ հարատեւ օժանդակությունը: Հենց այդ նպատակով էլ 1906թ. մայիսի 1-ին ՀԲԸ Միությունը հրապարակում է «Հրաւէր առ Համօրէն Հայս», ուր առաջին անգամ հրապարակավ հայտարարում էր նորաստեղծ կազմակերպության հիմնադրման եւ

գործունեության հիմնական նպատակների մասին: Եվ որպես այդպիսին այդ փաստաթուղթն ունեցավ պատմական նշանակություն:

«Շատ մը տարիներէ ի վեր զգալի եղած էր Հայկական Ընդհանուր Միութեան մը պէտքը: Վերջերս մեր Ռուսահայ եղբարց ենթարկուած դառն կացութիւնը մի անգամ եւս հաստատեց թէ Հայ ազգը կը կարօտի մի այնպիսի կազմակերպութեան, որ կարենայ դժբախտ պատահարներու միջոցին նիւթական եւ բարոյական օգնութիւն հասցնել մեր հայրենակցաց, ինչպէս որ ըրաւ հրէական Ալիանս Իսրայէլիթ Ընկերութիւնը, Ռուսիոյ Հրէից կոտորածներուն առթիւ դրամական մեծաքանակ նպաստներ ղրկելով անոնց:

«Ոեւէ աղէտէ արկածելոց ընծայուած օգնութիւնն այնչափ աւելի օգտակար կ'ըլլայ՝ որչափ աւելի փութով հասնի: Ամէն անգամ որ Հայաստանի մէջ ծագի նոր աղէտ մը, ինչպէս սով կամ երկրաշարժ, համաճարակ կամ հրդեհ, հեռաւոր երկիրներ գտնուող հայեր կը յուզուին, կը միանան եւ հանգանակութիւններ կատարելով քիչ կամ շատ դրամ կը ղրկեն կարօտելոց. սակայն մինչեւ որ այդ նպաստներն իրենց տեղը հասնին՝ հազարաւոր ընտանիքներ կը մնան անխնամ ու անպատսպար, եւ զոհ կ'երթան ցուրտի, անօթութեան եւ հիւանդութեանց:

«Տխուր ճշմարտութիւն մ'է նաեւ որ Հայրենիքի հողին վրայ ապրող մեր հայրենակիցները դարաւոր դժբախտութեանց հետեւանօք հասած են նիւթական եւ բարոյական չքաւորութեան այնպիսի վիճակի մը՝ որոյ հանդէպ կարելի չէ անտարբեր մնալ իբր հայ եւ իբր մարդ:

«Ուրեմն Հայ ազգը անհրաժեշտ պէտք ունի կազմակերպեալ մնայուն մարմնոյ մը որ միշտ պատրաստ գտնուի օգնելու Հայաստանի հայ ժողովրդեան՝ առանց կրօնի խտրութեան. եւ ուրախ եմք ներկայ յայտարարութեամբ ծանուցանելու թէ՝ այս տեսակ մի մարմին հիմնուած է ի Գահիրէ, «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ» անուամբ, որու նպատակն է ...մեր Հայաստանի եղբարց անմիջական օգնութեան հասնիլ, ամէն անգամ որ պէտք մը գոյանայ, եւ միանգամայն նպաստել անոնց տնտեսական եւ կրթական ընդհանուր վիճակի բարելաւման:

«Ուրեմն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն զուտ բարեգործական եւ մարդասիրական մի հաստատութիւն է, առանց քաղաքական հանգամանաց, որ ըստ կարելւոյն պիտի հետեւի Ալիանս Իսրայէլիթի գործունէութեան եղանակին:

«Այսպիսի ազնիւ ու մեծ նպատակի գործադրութիւնը կը պահանջէ դրամական առատ աղբիւրներ: Ուստի հրաւէր կը կարդամք ամէն երկրի

Հայերուն որ փութով անդամակցին Միութեանս եւ իրենց նուէրներով եւ ամսաբաժիններով նպաստեն կարեւոր դրամագլխոյ մը կազմութեան:

«Ցուսամք թէ ամէն ճշմարիտ եւ զգայուն հայ, առանց խտրութեան կրօնի եւ սեռի, խանդաւառութեամբ պիտի ողջունէ Միութեանս ծնունդը, պիտի ըմբռնէ անոր նշանակութիւնը, եւ արբազան պարտականութիւն պիտի համարի անդամակցիլ անոր եւ օժանդակել անոր զարգացմանն ու ծաւալման: Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնն մի գործնական ապացոյց թող լինի որ աշխարհիս մէջ ցրուեալ հայերն կարող են միաբանիլ ազգային բարօրութեան առաջնորդող մի նպատակի համար»:[39]

Մեկ այլ փաստաթղթում Միության ղեկավարությունը անհրաժեշտորեն պարզաբանում էր իր ծրագրերը. «ՀԲԸ Միութիւնը, յօգուտ հայրենի հողին հաւատարիմ մնացած հայ ժողովուրդին, կը հիմնէ կամ նպաստով կ'օժտէ վարժարաններ, մատենադարաններ, արհեստանոցներ, աշխատանքի տուներ, հիւանդանոցներ, որբանոցներ եւ ուրիշ նմանօրինակ ազգային հաստատութիւններ ...Կը պաշտպանէ գիւղացիները, անոնց հայթայթելով հող, սերմացու, կենդանի եւ գործիք: Կը քաջալերէ տեղական արհեստագործութեանց զարգացումը, կը տարածէ գիւղատնտեսական արդիական գիտելիքները, կը ստեղծէ աշխատութեան եւ արդիւնաբերութեան նոր միջոցներ...»:[40]

Հայտնի է, որ նույնիսկ ամենամշակված, ամենաիրատես բարեսիրական ծրագրերը հաճախ մատնված են լինում ձախողման՝ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայության պատճառով: Առավել եւս ազգային փոքրամասնությունների պարագայում, երբ պետական ֆինանսավորման բացակայության պայմաններում նրանք առանց այն էլ ստիպված են սեփական միջոցներով ապահովել իրենց ազգային զանազան հաստատությունների (դպրոցներ, եկեղեցիներ, լրատվամիջոցներ, ակումբներ եւ այլն) գործունեությունը: Բնական է, որ ՀԲԸ Միության հիմնադիրները, դիմելով ժողովրդին, կոչ էին անում օժանդակել նորաստեղծ կազմակերպությանը իրենց դրամական հատկացումներով: Հակառակ պարագայում, Միության գործունեությունը դատապարտված էր անհաջողության, որքան էլ հարուստ լինեին Պողոս Նուպարը եւ նրա գործընկերները: Դրա հետ մեկտեղ, սակայն, նրանք անհրաժեշտաբար պետք է առաջարկեին նույն այդ միջոցների օգտագործման առավել արդյունավետ ձեւեր: Կանոնագրքում այն զբաղեցնում է ընդամենը մեկ տող՝ «Ընկերութեան դրամագլուխը անձեռնմխելի է: Այս պայմանը հիմնական է»: 86 տարի անց՝ 1992թ. կանոնագրքում կարդում ենք. «...գլխավոր հիմնադրամը անձեռնմխելի է: Այս պայմանը հիմնական է եւ անփոփոխելի»: Ինչպես տեսնում ենք, տարիների փորձը ոչ միայն ապացուցել է այդ սկզ-

բունքի գործնական բնույթը, այլ նույնիսկ անհրաժեշտ է դարձրել այն դիտել որպես «անփոփոխելի»:

Դրամագլուխը եւ նրա անձեռնմխելի լինելը ինքնանպատակ չէր. «Անիկա, նախ, իր արտադրած եկամուտով, կ'ապահովէ ձեռնարկուած գործին յարատեւութիւնը. հակառակ որ երերուն հասոյթները նուազին կամ դադրին: Երկրորդ, աշխատութեանց համարժէքին ամբարումովը՝ անիկա ի գլուխ կը հանէ այնպիսի վիթխարի ձեռնարկներ որոնց անբաւական են անհատական կորովներ»: Այս տողերը քաղված են արդեն հիշատակած հայտնի հրապարակագիր Լեւոն Մկրտիչյանի մի հոդվածից, որը գրված էր ի պաշտպանություն Միության որդեգրած այդ սկզբունքի: Նման հոդվածների շարքում այն ոչ առաջինն էր եւ ոչ էլ վերջինը: Բանն այն է, որ շատ-շատերը՝ անհատներ եւ կազմակերպություններ, Միության գոյության առաջին իսկ տարիներից կոչ էին անում եւ նույնիսկ պահանջում, որ նա հրաժարվի իր այդ սկզբունքից եւ եղած «պատրաստի դրամը» հատկացնի այս կամ այն կարիքներին: Նման մոտեցումը պատահական չէր: Դրամագլխի անձեռնմխելիության սկզբունքը, որ սովորական երեւույթ էր եվրոպական երկրներում, լրիվ անծանոթ էր հայ կազմակերպություններին, եւ ՀԲԸ Միությունը առաջինն էր, որ կիրառեց այն: Այդ կապակցությամբ Լ.Մկրտիչյանը նշում էր. «...մենք ազգովին կ'անգիտանանք դրամագլխի տնտեսական նշանակութիւնը ... Արդարեւ, արեւելեան ըմբռնումով, դրամագլուխը ուրիշ բան չէ բայց եթէ որոշ քանակութեամբ դրամ որ մնալով, կեցած տեղը բան մը չարժէր, այլ ծախսուելով միայն արդիւնք կուտայ: ...Եվ այսպէս, ահա, մենք սովորութիւն ըրած ենք մեր բոլոր բարեգործական-ազգային հաստատութեանց երերուն, ուստի եւ անապահով հասոյթները ամբողջովին ծախսել եւ անոնցմէ գոնէ պզտիկ մաս մը դրամագլուխի վերածելու գաղափարը չենք ունեցած»: «Հետեւանքը սա եղած է, - շարունակում էր Լ.Մկրտիչյանը, - որ հասոյթները նուազելուն կամ դադրելուն պէս՝ գործն ալ կաղացած կամ բոլորովին դադրած է: Ահա թէ ինչու այնքան կարճ կեանք ունեցած են մեր մէջ՝ իրարու յաջորդող բազմաթիւ ընկերութիւններ»:[41]

Միության հիմնադիրները, ստեղծելով գլխավոր հիմնադրամ եւ դարձնելով այն անձեռնմխելի, ոչ միայն ձգտում էին ապահովել կազմակերպության մշտական, հարատեւ գործունեությունը, այլեւ անհրաժեշտության դեպքում անհապաղ եւ գործնական օգնության հասնել հայ աղետյալներին: Պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, թե որքան արդյունավետ էր խնդրի լուծման նման եղանակը,

ՀԲԸ Միության հայտարարած ծրագիրը ընդգրկում էր կենսագործունեության գրեթե բոլոր կարեւոր ոլորտները՝ տնտեսություն, կրթություն,

առողջապահություն եւ այլն: Բացակայում էր, սակայն, մեկ ոլորտ՝ քաղաքական գործունեությունը, եւ դա բնավ պատահական չէ. «Ընկերութիւնը էապէս մարդասիրական է, ոեւէ քաղաքական հանգամանք չունի: Այս պայմանը հիմնական է»: Այս դրույթը սկզբունքային, հիմնարար նշանակություն ուներ Միության հիմնադիրների համար եւ նույն այդ դրույթին հավատարիմ մնալը կանխորոշեց Միության եզակի դերը տարաբնույթ առճակատումներով լի հայ իրականության մեջ: Ստորեւ, տարբեր առիթներով դեռ կլինի անդրադարձ այս դրույթին, իսկ այստեղ ավելացնեմ միայն, որ դրա առկայության եւ կիրառման շնորհիվ է, որ նորաստեղծ կազմակերպությունը կարողացավ արդարացնել իր «ընդհանուր», իսկապես համազգային լինելու հավակնությունը, կարողացավ գործնականում օժանդակել հայ ժողովրդի գոյավիճակի բարելավմանը:

2

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Որեւէ բարեգործական կազմակերպության կայացման եւ գործունեության երաշխիքը, ինչպես հայտնի է, բավարար չափով ֆինանսական միջոցների առկայությունն է: Ավելին, նախնական որոշ գումարի կամ հիմնադրամի առկայությունը հաճախ նման կազմակերպությունների ստեղծման նախապայմաններից է: ՀԲԸ Միության հիմնադիրների մոտեցումը եղավ փոքր-ինչ այլ: Թե հիմնադրման փաստաթղթում եւ թե «Հրաւէր առ Համօրէն Հայս» առաջին հայտարարության մեջ չկա եւ ոչ մի ակնարկ նման հիմնադրամի գոյության մասին: Հակառակը այդ հայտարարության մեջ ժողովրդին կոչ էր արվում «ամսաբաժիններով» նպաստել նորաստեղծ կազմակերպությանը: Միության հիմնադիրները նման կոչով դիմելով հանդերձ քաջ գիտակցում էին անձնական օրինակի պարտականությունն ու անհրաժեշտությունը: Հիմնադրումից մեկ տարի անց հրապարակված Միության հաշվետվությունը այդ պարտականության գիտակցման վկայությունն է: 1907թ. մայիսին ՀԲԸ Միությունը 815 անդամ ուներ, որոնցից 418՝ Կահիրեում, 282՝ Ալեքսանդրիայում, 72՝ Եգիպտոսի այլ քաղաքներում եւ միայն 33-ը՝ այլ երկրներում՝ Ֆրանսիա, Ավստրո-Հունգարիա, Ջիբուտի (Ֆրանսիական Սոմալի), Եթովպիա եւ այլուր: Կահիրեի ցուցակում առաջին 23 անդամները Միության հիմնադիրներն էին եւ նրանց ընտանիքի անդամները՝ Պողոս Նուպարի, Ե.Աղաթոնի եւ Մ.Անդրանիկյանի ընտանիքները, նաեւ Ցագուպ Արթինը, Ն.Տաղավարյանը, Գր.Եղիայանը, Մ.Մարկոսոֆը եւ Կ.Շերիտճյանը: Այդ 23 անդամների վճարած գումարը կազմում էր ընդհանուրի ավելի քան կեսը:

Սրանք լոկ թվեր չեն. տեղի էր ունենում ՀԲԸ Միությանը հատուկ այնպիսի ավանդույթների ձեւավորում, որոնք գործառում են ցայսօր: Սկսած հիմնադրման օրվանից, Միության նախագահները եւ Կենտրոնական Վարչական Ժողովի (Վարչության) անդամները, ամենախոշոր դրամական միջոցներ հատկացնողները եղան եւ են: Ինչպես 1906թ., այնպես էլ հետագայում, նրանց ընտանիքի անդամները նույնպես, որպես կանոն, դառնում էին Միության անդամներ: Արդեն ասվեց, որ Միության հիմնադիրներից էր Պողոս Նուպարի որդին՝ Առաքելը, նրա մյուս որդին՝ Զարեհ Նուպարը, տարիներ անց ընտրվեց Միության նախագահ: Գալուստ Կյուլպենկյանի նախագահության օրոք Կենտրոնական Վարչության անդամ էր նրա որդին՝ Նուպար Կյուլպենկյանը, Արշակ Գարակյոզյանի օրոք՝ նրա եղբայրը՝ Միհրան Գարակյոզյանը եւ որդին՝ Չարլզ Գարակյոզյանը: Վերջապես, Ալեք Մանուկյանի նախագահության վերջին շրջանում Կենտրոնական Վարչության անդամ էր նրա դուստրը՝ Լուիզ Մանուկյան Սիմոնը, որը եւ փոխարինեց իր հորն այդ պաշտոնում:

Առաջին նվիրատուները: Տյորթ-Յոլի որբանոցը

Միության դրամական միջոցների արագ աճը արդյունք էր նախ եւ առաջ նվիրատվությունների, որոնք, իրենց հերթին, հետեւանք էին վերոնշյալ հիմնական, անձեռնմխելի հիմնադրամի ստեղծման: Բայց ոչ միայն այդ: Գործարար մարդկանց վստահությունը Միության հանդեպ պայմանավորված էր նաեւ 1910թ. հունվարի 1-ի Ռիխտագրով, հանդիսավոր հայտարարությամբ, որում Միության Կենտրոնական Վարչական Ժողովը երդվում էր «...կէտ առ կէտ եւ կատարեալ խղճմտութեամբ գործադրել կտակարարներուն եւ նուիրատուներուն կամքն ու բացայայտ տրամադրութիւնները. կը խոստանայ ոչ մէկ գինով թոյլ տալ որ ոեւէ կամայական շեղում մը ըլլայ եւ կանխորոշ նպատակէն տարբեր ուղղութեամբ գործածուին կտակուած եւ նուիրուած գումարները ...»:[1] Առանց չափազանցության, կարելի է ասել, որ այս հայտարարությունը աննախադեպ երեւույթ էր հայ իրականության մեջ: Առաջին անգամ էր, որ այնպիսի հայտնի եւ հեղինակավոր մարդիկ, ինչպիսին էին Պողոս Նուպարը, Ցագուպ Արթինը, Տիգրան Քելեկյանը եւ այլք, հրապարակավ երդվում էին ողջ հայությանը, ամեն մի հայի՝ անշեղորեն գործադրել նվիրատուների եւ կտակարարների ցանկությունը:

Իսկ դրանում կարելի էր համոզվել՝ ծանոթանալով Միության տարեկան տեղեկագրերին, ուր Միության գործունեությունը, այդ թվում բոլոր դրամական գործառնությունները, ներկայացված են ամենայն մանրամասնությամբ: Դա մարմնավորումն էր Պողոս Նուպարի այն դրույթի, «...որ Միութեան տունը ապակիէ տուն մըն է, ուր ոչինչ պէտք է ծածուկ մնայ – ոչ վարչական գործերուն տեսակէտով, եւ ոչ ալ գործադրուած նպատակին, որ պէտք է միշտ մնայ այնպէս՝ ինչպէս որոշակի նախագծած է մեր Կանոնագիրը, առանց անկէ հեռանալու»:[2]

Գործունեության նման եղանակը, որը մինչ այդ անծանոթ էր հայ իրականությանը, մեծապես պայմանավորեց Միության հեղինակությունը հայ ժողովրդի մեջ: Համոզվելով, որ Միությունը իրեն տրամադրած դրամական միջոցներն օգտագործում է հօգուտ ոչ թե առանձին խմբակների կամ անհատների, այլ հայ ժողովրդի կենսական կարիքները բավարարելու նպատակով, հայերը մեծ պատրաստակամությամբ սկսեցին համագործակցել Միության հետ եւ նպաստեցին նրա գործունեության ծավալմանը:

Միության գոյության առաջին տարում նվիրատուները թվով 12-ն էին, որոնցից ամենախոշոր նվիրատվությունը կատարել էր, ինչպես եւ պետք էր ենթադրել, Պողոս Նուպարը: Հաջորդ տարիներին նվիրատուների ցանկը գնալով այն աստիճան ընդլայնվեց (1910թ. տեղեկագրում նշված է 127 ազգանուն), որ ավելի նպատակահարմար էր այն տպագրել «Միութիւն» ամսագրում, իսկ տարեկան տեղեկագրերում՝ հրապարակել միայն ամենախոշոր նվիրատվություններն ու կտակները: Առաջին 2-3 տարիներին, երբ Միությունը դեռ չէր սկսել իրականացնել իր կրթական եւ այլ ծրագրերը, նվիրատվությունները կատարվում էին առանց օգտագործման եղանակը նշելու: Կարելի է ասել, որ այդ շրջանում նվիրատվությունները ավելի շատ Միության քաջալերման, խրախուսման եւ քարոզչության յուրահատուկ միջոց էին: Եվ պատահական չէ, որ Միության թե գործիչները եւ թե բարեկամները նվիրատվություններ էին կատարում ամենատարբեր առիթներով՝ «աղջկան ամուսնութեան առթիւ», «փոխան ծաղկեպսակի», «մկրտութեան առթիւ», «եղբօր յիշատակին» եւ այլն: Հետագայում, եւ հատկապես 1908թ. հետո, երբ Միությունը սկսեց իր բազմածավալ գործունեությունը հայրենիքում, սկսեցին տարբերել այսպես կոչված «անորոշ» կամ «ընդհանուր» նպատակով նվիրատվությունները, որոնք օգտագործվում էին Միության Կենտրոնական Վարչության հայեցողությամբ, եւ «կանխորոշ նպատակի» նվիրատվությունները, որոնք Միությունը պարտավորվում էր օգտագործել ըստ նվիրատուի ցանկության:

Իսկ նվիրատուների ցանկությունները օրինաչափորեն համապատասխանում էին Միության իրագործումներին՝ գյուղական դպրոցների, որբանոցների, գյուղատնտեսական ձեռնարկությունների հիմնում, օգնություն չքավոր գյուղացիներին եւ այլն: Այլ հարց է, որ նվիրատուները շատ

տարբեր կարողությունների տեր մարդիկ էին՝ ոմանք ի վիճակի էին հատկացնել ընդամենը 1 ամերիկյան դոլար, իսկ մյուսները՝ հարյուրավոր եւ նույնիսկ հազարավոր: Անշուշտ, նվիրատուների քանակը կարեւոր էր Միության գործունեությունը ապահովելու եւ ընդլայնելու առումով: Սակայն ոչ պակաս կարեւոր էր նաեւ այն, որ բազմաթիվ հայեր, ապրելով հեռավոր Արգենտինայում ու Կանադայում, ԱՄՆ-ում ու Անգլիայում, Ավստրո-Հունգարիայում եւ Ֆրանսիայում, գիտակցաբար անտեսում էին անձնական պետքերն ու կարիքները եւ Միությանն էին ուղարկում մի քանի դոլար կամ ֆրանկ, համոզված լինելով, որ ՀԲԸ Միությունը հայրենիքի զարգացմանը հավատարմորեն ծառայող ամենակարեւոր կազմակերպություններից մեկն է, եթե ոչ ամենակարեւորը: «Պարտք կը սեպենք մասնաւորապէս վեր հանելու, - նշվում էր Միության տեղեկագրում, - թէ աւելի ազգին խոնարհ դասակարգներուն մէջ է որ մեր Միութեան արմատները կը բուսնին. արդարեւ մեր գործօն անդամներուն մեծագոյն մասը համեստ ազգայիններ են, եւ բաղդատաբար կարեւոր զոհողութեան բաժինը զոր կը բերեն՝ այնքան աւելի թանկագին է..., որքան գիտենք թէ խորին համոզումով է որ Միութեան շարքերուն կ'արձանագրուին»:[3]

Ինչ վերաբերում է մեծահարուստ հայերին, ապա նրանցից քչերն էին, որ իրենց նվիրատվություններով օժանդակում էին Միության կամ որեւէ այլ բարեգործական կազմակերպության գործունեությանը: Դա կարծես յուրահատուկ «մասնագիտական» հիվանդություն է, որը վեր է ազգությունից եւ ժամանակից: Այս առումով առավել արժանի են հիշատակման այն մեծահարուստ հայերը, որոնք օժանդակեցին Միությանը նրա գործունեության առաջին տարիներին: Այդ մարդիկ շատ տարբեր էին իրենց տարիքով, կրթությամբ, հարստության չափով, նրանցից ոմանք ժառանգ էին, իսկ ոմանք էլ հարստացել էին ինքնաշխատությամբ:

1913թ. տվյալներով ամենամեծ նվիրատվությունը կատարել էր Տիգրան խան Քելեկյանը: Բնիկ կեսարացի, կրթությունը ստանալով Կ.Պոլսի Ցակոբ Գուրգէն Հայկական կրթարանում, նա եղբոր հետ սկսում է զբաղվել առեւտրով, այնուհետեւ անցնում է արտասահման, ուր շատ չանցած ձեռք է բերում հմուտ եւ հեղինակավոր հնահավաքի համբավ: Դեպի Արեւելքի տարբեր երկրներ կատարած բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում նա կազմել էր մի շարք հավաքածոներ, որոնց մասին հիացումով էին խոսում ոչ միայն գործընկերները, այլեւ գիտնականները: Հատկապես հայտնի էր Քելեկյանի պարսկական հախճապակու հավաքածոն, որը ցուցադրվում էր Լոնդոնի Սաութ Քենսինկթոն թանգարանում եւ որի մասին տեղացի արվեստագետներից մեկը գրել էր. «Արեւելեան արուեստին պատմութեան համար անգին յիշատակարան մը

կը ներկայացնէ ան»:[4] Որպես հնահավաք նա պարտադրված էր իր կյանքը անցկացնել Փարիզում, Նյու Յորքում ու Կահիրեում: Նա ստանձնել էր նաեւ Պարսկաստանի պատվավոր հյուպատոսի պաշտոնը, եւ երբ Չիկագոյում կազմակերպվեց համաշխարհային ցուցահանդես, Քելեկյանը եղավ Պարսկական բաժնի պատասխանատուն (կոմիսարը), որի համար արժանացավ խանի տիտղոսի: Իսկ Փարիզում «Շանթիյիի իր ախորները կը պարունակեն ազնուազգի ձիեր, որոնք Բարիզի մեծ արշաւներուն մէջ յաճախ մրցանակներ շահելով, իրենց տիրոջ անունը կը պանծացնեն»:[5]

Քելեկյան արվեստագետ-հնահավաքը, դիվանագետը, բարձր խավերի հետ մշտական շփման մեջ գտնվող մարդը երբեք չօտարացավ իր ազգից եւ միշտ ձգտեց հնարավորին չափ օգտակար լինել նրան: «Տիպար մը որուն մէջ *կոանսենեօրի* գիծեր ժողովուրդի զաւակի յատկանիշներուն կը խառնուին, առանց բան մը կորսնցնելու իրենց հարազատութենէն, կարծես զիրար ամբողջացնելով...»:[6]

Քելեկյանի նման բնութագրումը արդյունք էր այն բազմաթիվ բարեգործությունների, որ նա մեծ պատրաստակամությամբ կատարել էր տարիների ընթացքում, եւ որոնց շարքում ամենակարեւորը դարձավ որբանոց-վարժարանի կառուցումը Տյորթ-Ցոլ (Տէօրթ-Եօլ) հայաբնակ քաղաքում (հայտնի է նաեւ Չորք-Մարզպ/վ/ան անունով), որը գտնվում էր Կիլիկիայում՝ Ամանոսի լեռների ստորոտում, Միջերկրականից մի քանի կիլոմետր հեռու: Այդ քաղաքը հայտնի դարձավ 1909թ., երբ տեղեկանալով Ադանայի եւ այլ վայրերի հայերի զանգվածային սպանությունների մասին, նրա բնակիչները, իրենց միացած Օճագլու եւ Ցոզերլի (Էօզերլի) մերձակա գյուղերի հայության հետ, ի տարբերություն շատ ուրիշների, դիմեցին ինքնապաշտպանության: 13 օր շարունակ հետ մղելով թուրքերի, այդ թվում նաեւ կանոնավոր բանակի բոլոր հարձակումները՝ նրանք, ի վերջո, ստիպեցին թուրքերին հաշտություն կնքել իրենց հետ: Կիլիկիայի հայության համար այդ բացառիկ հաղթանակից հետո Տյորթ-Ցոլը «...մինչ այդ բոլորովին աննշան համարուած գիւղաքաղաք մը յանկարծ նշանաւոր կը դառնար, մտաւորականներու եւ հարուստ դասակարգերու այցելութիւնները կը բազմապատկուէին, բոլորն ալ տեսնելով եւ կարճ ժամանակ մը ապրելով հոն, սքանչացումով կը սկսէին արտայայտուիլ քաղաքի բնական գեղեցկութեան եւ մանաւանդ տեղւոյն հայութեան ազգային բուռն ոգիի զարթնումին մասին»:[7] Այդ մարդկանց թվում էր նաեւ Տիգրան խան Քելեկյանը, որն էլ որոշում է իր եղբոր՝ Գրիգոր Քելեկյանի հիշատակին Տյորթ-Ցոլում կառուցել որբանոց-դպրոց եւ այդ նպատակով մեծագույնար նվիրատվություն է կատարում ՀԲԸ Միությանը:

Միության պատմության մեջ սա եղավ առաջին դեպքը, երբ այն ստանձնեց որբանոց-դպրոցի կառուցման գործը՝ տեղի ընտրություն, հատակագծի պատրաստում, շինարարություն եւ բազմաթիվ այլ հարցեր: Միությունը, չնայած բոլոր դժվարություններին, ձգտեց լավագույնս գոհացում տալ Քելեկյանի փափագին: Որբանոցի կառուցման պատմության մեջ հանդիպում են այնպիսի անուններ, ինչպես, օրինակ, Միության հիմնադիր անդամներ Կ.Շերիտճյան, որը հատուկ ուղեւորվել էր Կիլիկիա՝ հարմարագույն վայրը ընտրելու համար, Մ.Մարկոսոֆ, որը նախագծի հեղինակներից էր: Որբանոց-վարժարանի կառուցումը դեռ չէր սկսվել, բայց արդեն հայտնի էր, որ ծախսերը սպասվածից ավելի շատ են լինելու: Այս հանգամանքը այն աստիճան էր մտահոգել Միության ղեկավարությանը, որ նա 1911թ. տեղեկագրում հատուկ նշում էր. «Այս փորձառութիւնը մեզի համար դաս մը եղաւ, ուրկէ ներշնչուելով՝ ապագային պիտի մերժենք ոեւէ նուիրատուութիւն որուն հետեւանքով Միութիւնը յանձնառու պիտի ըլլար շէնք մը կառուցանել այնպիսի հեռաւոր վայրեր, ուր մեծ դժուարութիւններ կան՝ լուրջ եւ կարող ճարտարապետներ եւ կապալառուներ գտնելու»:[8] Այն տպավորությունն է ստեղծվում, որ այդ տողերի հեղինակը լավ ծանոթ չէր Քելեկյանին կամ համենայն դեպս, թերագնահատում էր նրա բարեգործության չափերը: Ինչեւէ, Քելեկյանը, տեղեկանալով առաջ եկած դժվարությունների մասին, կատարեց երկու նոր մեծագումար նվիրատվություններ եւ դրանով իսկ գրեթե ամբողջությամբ ապահովեց կառուցման համար անհրաժեշտ միջոցները: Քէլեկեան որբանոց-վարժարանի բացումը կատարվեց 1912թ. հոկտեմբերին, նրա առաջին աշակերտներն էին Կիլիկիայի տարբեր վայրերից 11-14 տարեկան 95 որբ տղաներ, որոնք պետք է ուսանեին 5 տարի եւ ստանային «...գործնական կրթութիւն մը, որպէսզի դպրոցական շրջանին լրանալուն՝ կարենան իրենց ծննդավայրին մէջ դիւրաւ շահիլ իրենց ապրուստը»:[9] Ըստ ավանդույթի, այս դեպքում նույնպես կրթական վարչությունը վստահված էր Միացյալ Ընկերությանը, որը ամառվա ամիսներին կազմակերպեց նաեւ «ազատ» դասընթացներ տեղի գյուղական վարժարանի ուսուցիչների համար: Եվ այսպիսով, Քելեկյանի հնահավաքության միջոցով վաստակած դրամը սկսեց ծառայել հայերի նոր սերնդի կրթական գործին:

Նվիրատուների շարքում աննախադեպ է Երվանդ Հակոբյանի կյանքն ու հարստանալու եղանակը: Ե.Հակոբյանի կյանքի առաջին շրջանը ընթացել էր շատերի համար սովորական ուղիով: Նա ծնվել էր Կ.Պոլսում, աղքատիկ մի ընտանիքում, աշխատում էր որպես երաժշտության ուսուցիչ Արամեան վարժարանում եւ դպրապետ՝ Ս.Թագավոր

եկեղեցում: Ձգտելով բարելավել իր խիստ համեստ նյութական վիճակը՝ նա սկսում է զբաղվել դաշնամուրի առեւտրով, սակայն «պոլսեցի դաշնակի յաճախորդները գնելը շատ լաւ գիտեն, բայց վճարելը՝ ոչ»»:[10] 1890-ականների վերջին, երբ հայերի հալածանքները զանգվածային բնույթ էին ստացել, Հակոբյանը հեռանում է երկրից եւ գնում Փարիզ: Այստեղ նա ընտրում է իր համար բոլորովին անծանոթ մի ասպարեզ՝ թանկարժեք քարերի առեւտուր: Մեծ հաջողությունների չի հասնում, բայց եւ այնպես, դասվում է նրանց շարքը, որոնք Ե.Աղաթոնի խոսքերով ասած՝ «...գէշ աղէկ ապրուստ մը կը հանեն»: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ շատ շատերը կբավարարվեին այդքանով, բայց ոչ Ե.Հակոբյանի նման անհատները, որոնց համար կարծես ճակատագիրը կանխորոշում է կյանքի այլ՝ շրջապատի համար խորթ եւ անընմբռնելի ուղի:

«Ցակոբեան կը մտածէր յաճախ, թէ այդ մարգրիտները տեղէ մը կու գային, եւ որքան ալ հեռաւոր եւ վտանգաւոր ըլլար այդ տեղը՝ կ'արժէր որ մարդ խիզախէր բոլոր դժուարութիւններուն եւ իր կեանքին իսկ գնով փորձէր հասնելու իր նպատակին...»[11]: Եվ նա ճանապարհ է ընկնում դեպի Նոր Գվինեա: Եթե հիշենք, որ դարասկզբին այդ կղզիները եւ այնտեղ ապրող ժողովուրդները գրեթե անծանոթ էին եվրոպացիներին, ապա պարզ կդառնա Հակոբյանի բռնած գործի վտանգավորության աստիճանը եւ նրա՝ որպես անհատի խիզախությունը: Նոր Գվինեայի ճանապարհին նա լինում է Ճավա կղզում, Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում, Ավստրալիայում, իսկ վերադարձին նաեւ Հարավային Աֆրիկայում՝ Ցոհաննեսբուրգում: Եվ գրեթե բոլոր այդ երկրներում նա փնտրում եւ գտնում է հայերի: Եթե Հնդկաստանում հայերին հանդիպելը ինչ-որ տեղ օրինաչափ էր, նկատի առնելով տեղի հայ համայնքի գոյությունը սկսած XVI դարից, ապա շատ հետաքրքրական է Ճապոնիայի, Ճավայի եւ Հարավային Աֆրիկայի պարագան: Ճավայում հայը արարոտի (բուսական ալյուր՝ մանկական սնունդ պատրաստելու համար - Էդ.Մ.) գործարանատեր էր, որի մարմարյա պալատում «...12 սենեակներ փառաւորապէս կահաւորուած են պատահական հայ հիւրեր ընդունելու համար»: Ճապոնիայում՝ լուցկու խոշոր գործարանատեր էր («Marten's Bros.»), որը այս երկիր էր փախել Սիբիրից, ուր նրան աքսորել էր ռուսական կառավարությունը: Եվ, վերջապես, Ցոհաննեսբուրգում նրան հանդիպած հայը՝ «Մարտիրոս» վայրի կենդանիների մորթու ամենամեծ գործարանի տերն էր: «Պարոն Մարտիրոս գիւղը քաֆրերու բանակ մը ունի իր տրամադրութեան տակ, որոնք իրեն կը ծառայեն եւ իրեն համար վայրի կենդանիներ կ'որսան: Անոնցմով շրջապատուած, կատարելապէս արքայական կեանք մը կը վարէ ան իր սեփական գիւղին մէջ»:[12]

Հասնելով Ավստրալիա եւ որոշ ժամանակ այնտեղ ապրելուց հետո՝ Հակոբյանը ուղեւորվում է Նոր Գվինեա: «Ավստրալիայէն մեկնած ատեն, Ովկիանացի ընկերի մը հետ առագաստանաւ մը կը նստին, որուն մէջ հինգ մարդակերներ կային իբրեւ նաւազ: Առագաստանաւը մտած ատեննին, մարդակերներէն մին Յակոբեանի թեւը գգուելով կ'ըսէ իր ընկերներուն. «Այս մարդը պարարտ է եւ ուտելու թաւին մէջ»: «Յակոբեան, որ արդէն բաբուերէն սորված է, կը հասկնայ, եւ ամերիկեան տասընհարուածեանը միշտ ձեռքին մէջ՝ վայրենի նաւազներու կուրծքէն բռնած, կը ճամբորդէ հինգ օր, հինգ գիշեր: Երկու ընկերները, փոխն ի փոխ... պահելով այս սպառնական ու զգուշաւոր դիրքը, կարող կ'ըլլան անվտանգ կատարել այս ճամբորդութիւնը»:[13] Մարդակերների զոհ դառնալու վտանգը մշտապես ուղեկցեց Հակոբյանին, ամբողջ չորս տարի ինքը եւ ընկերը գիշերեցին նավի վրա: Եվ սա գերզգուշություն չէր, հաշվի առնելով, որ մարդու, մանավանդ սպիտակամորթ օտարականի միսը տեղացիների հարգված ճաշատեսակներից էր: (Ինչպես Հակոբյանին պատմել էր տեղի եվրոպացի փոստապետը, իր 13 նախորդները «սպաննուած եւ կերուած են եղել»): Պոլսեցի Հակոբյանը, չորս տարի ապրելով նման «էկզոտիկ» պայմաններում, անձամբ որսում է խեցիներ, հավաքում եւ Փարիզ ուղարկում մարգարիտներ, այդ ընթացքում ժամանակ գտնելով տեղացիների սովորույթներն ու բարքերը ուսումնասիրելու, նրանց երաժշտական եղանակները գրի առնելու համար: Ի վերջո, հիվանդանալով դեղին տենդով, ստիպված վերադառնում է Փարիզ, ուր նրան սպասում էր այդչափ ծանր գնով կուտակված հարստությունը: Արդեն Փարիզում նա տեղեկանում է Բարեգործականի, նրա գործունեության մասին եւ շատ չանցած՝ նախ մեծագումար նվիրատվություն է կատարում Սասունի Տալվորիկ գյուղի կրթական եւ երկրագործական կարիքները հոգալու համար, իսկ այնուհետեւ Նոր Գվինեայում ձեռք բերած իր հարստության կեսը կտակում է ՀԲԸ Միությանը:

ՀԲԸ Միությանը նվիրատվություններ էին կատարում ոչ միայն առանձին անհատներ, այլեւ արտերկրի տարբեր ազգային կազմակերպություններ եւ համայնքներ: 1907թ. հուլիսին՝ այսինքն Միության հիմնադրումից ընդամենը մեկ տարի անց, Բիթլիսի, Վանի եւ Մուշի «արկածեալներուն ու կարօտեալներուն» օգնելու նպատակով նվիրատվություններ են ստացվում Կալկաթայի Երիտասարդաց Միությունից, Բոստոնի եւ Ադիս Աբեբայի հայ համայնքներից: Այս նվիրատվությունները, որոնք գալիս էին երեք մայրցամաքներից եւ այնպիսի քաղաքներից, ուր դեռ չէին կազմավորվել Միության մասնաճյուղերը, վկայում էին Միության՝ որպես համազգային բարեգործական կազմակերպության, ստեղծման անհրաժեշտության եւ նրա հեղինակության մասին:

Սպասվածին համաձայն, Միության միջոցների հիմնական աղբյուրը՝ նրա մասնաճյուղերից ստացվող գումարներն էին: Միության այդ տարիների (մինչեւ 1915թ.) տեղեկագրերում զետեղված տվյալները վերլուծելիս, ի հայտ է գալիս հատկանշական մի երեւույթ: Այն է՝ բոլոր մասնաճյուղերից ամենամեծ գումարը (մուտքի տուրք, անդամավճար, նվիրատվություն) ապահովել էին Թուրքիայի տարածքում գործող Միության մասնաճյուղերը եւ հետո միայն համապատասխանաբար՝ Ամերիկայի, Աֆրիկայի եւ Եվրոպայի երկրների մասնաճյուղերը:[14] Այս փաստը ամենակարեւոր եւ համոզիչ ապացույցն է նրա, որ Միությունը այդչափ կարճ ժամանակահատվածում կարողացել էր վստահություն ու հավատ ներշնչել հայրենաբնակ հայ ժողովրդին, այն ժողովրդին, որին ծառայելու նպատակով էլ նա հիմնվել էր:

Առաջին նպաստները: Ընդդեմ արտագաղթի

Խոսելով Միության նպաստների հասցեատերերի մասին՝ հարկ է հատուկ նշել, որ առաջին տարվա նպաստների ընդհանուր գումարի մի մասը Միությունը տրամադրել էր Կովկասի հայերին: Այդ նպաստը, որը ՀԲԸ Միության պատմության մեջ առաջինն էր, ուներ նաեւ խորհրդանշական իմաստ: Ինչպես նշվեց, 1905թ. տեղի ունեցած կովկասահայերի սպանություններն ու հալածանքները, իրենց՝ Միության հիմնադիրների վկայությամբ, Միության հիմնադրման շարժառիթներից էին: Միեւնույն ժամանակ, այդ նպաստով ՀԲԸ Միությունը հաստատում էր իր համահայկական լինելու պարագան կամ այդպիսին լինելու ձգտումը՝ դրանով իսկ իրականացնելով Մկրտիչ Ա կաթողիկոսի վերոհիշյալ պատգամը:

Իսկ առաջին տարվա նպաստների հիմնական մասը հատկացվել էր հայրենիքի այն շրջաններին, որոնք զոհ էին դարձել բնական աղետների՝ երկրաշարժ, երաշտ (Բաղեշ, Վան, Մուշ, Ակն), ինչպես նաեւ որբանոցների (Մուշ, Վան): Գրեթե նույնն է պատկերը եւ հաջորդ տարի, միայն թե ավելանում են հասցեները եւ, ամենակարեւորը, առավել ընդարձակ է դառնում օգնությունը հայ գյուղացիությանը. հնարավոր է դառնում որոշ գումար հատկացնել՝ ջրաղացներ ու անասուններ գնելու: Անդրադառնալով այդ հարցին՝ Պողոս Նուպարը նշում էր. «... Հայաստանի գրեթէ ամէն կողմերու՝ մանաւանդ յ'Արեւելեան գաւառները տիրող սղութիւնն ու սովն

հարկադրեց զմեզ աւելի հացագին հասցնել քան օժանդակել երկրագործ դասակարգին եւ վարժարանաց որք մեր գլխաւոր նպատակներն են»:[15]

ՀԲԸ Միության հիմնական խնդիրներից էր՝ հայ գյուղացուն հաղորդակից դարձնել ժամանակի գյուղատնտեսական գործնական գիտելիքներին, բարձրացնել նրա աշխատանքի արդյունավետությունը: Այսպես, որոշվել էր Մուշի շրջան գործուղել մասնագետ-գյուղատնտես՝ այնտեղ հողագործությունը արդիական եղանակով զարգացնելու նպատակով, որով պետք է բարելավվեր հայ գյուղացու կենսամակարդակը եւ որպես հետեւանք՝ որոշ չափով վերացվեր երկրից նրա արտագաղթելու դրդապատճառներից մեկը: Սակայն այդ նպատակի իրագործումը սկզբից եւեթ հանդիպեց մեծ դժվարությունների, որոնք երկակի էին: Որքան էլ Միության հիմնադիրները գիտակցում էին արեւմտահայերի տնտեսական ծանր վիճակը, այնուամենայնիվ, իրական պատկերը սպասվածից շատ ավելի անհաւոր էր: «Առաջին վայրկեանէն՝ ինքզինքնիս գտանք այնպիսի անհաւոր թշուառութեան մը առջեւ, այնքան բազմապահանջ պէտքերու առջեւ, որ մեր բոլոր բարի կամեցողութիւնը եւ յարատեւ ջանադրութիւնը չի զօրեցին փափաքուածին չափ օգնութիւն հասցնելու մեր մշտահալած եւ բազմաչարչար հայրենակիցներուն»:[16]

Հարկ է նշել, որ Միության ղեկավարները երբեք չցանկացան սահմանափակել իրենց գործունեությունը աղքատասիրությամբ, արդարացիորեն դիտելով այն ժողովրդի առաջընթաց զարգացման առումով անարդյունավետ եւ անհեռանկար: Ուշադրության է արժանի Միության մոտեցումը հողագործ համայնքներին օժանդակելու հարցին. այն պետք է իրականացվեր ոչ թե դրամական նպաստներ տրամադրելով, քանի որ դա «...պարկէշտ մշակը յաճախ ծուլութեան կը վարժեցնէ եւ ընդհանրապէս ձրիակերութիւնը կը քաջալերէ, այլ փոխառութեան ձեւին տակ, ինչ որ աշխատութեան եռանդը արծարծելու եւ պարտաճանաչութեան զգացումը զարգացնելու պիտի ծառայէ»:[17] Որոշ ժամանակ անց, երբ կուտակած դրամական միջոցները հնարավոր դարձրին նպաստների հատկացումը գյուղատնտեսական եւ արհեստագործական տարբեր ձեռնարկներին, Միությունը անմիջապես փորձեց օգտվել առիթից: Սակայն այս դեպքում էլ ի հայտ եկան խոչընդոտներ, որոնք, ինչպես վկայում են Միության հրապարակումները, անսպասելի եղան իրենց համար:

1913թ. ապրիլ ամսին ՀԲԸ Միությունը հրապարակում է հատուկ մի հայտարարություն՝ ուղղված «Նպաստախնդիր մարմիններուն»: Վերլուծելով Միությանն ուղղված թվով 152 խնդրանքները՝ հայտարարությունում ցավով նշվում էր, որ դրանցից միայն 12-ն են վերաբերում հողագործական եւ արհեստագործական նպաստներին: Բնաւ չհամակերպվելով նման կացության հետ՝ Միության ղեկավարությունը նշում էր. «Պէտք է վերջապէս լաւ ըմբռնել թէ՝ Միութեան տրամադրելի վարկերն առայժմ պիտի հատկացուին գերընտրապէս հողագործ ու արհեստաւոր համայնքներուն անհրաժեշտ կարիքներուն, պայմանաւ որ այս մասին գործնական ծրագիրներ ներկայացուին Կեդրոնական Ժողովին...»:[18] Այնուամենայնիվ, հայտարարությունը մնաց անհետեւանք, եւ մեկ տարի անց, այդ հարցը նորից դարձավ քննարկման առարկա՝ արդեն Միության ընդհանուր ժողովում: Նշելով որպես օրինակ Դիարբեքիրը եւ Հաճնը, ուր հիշյալ նպատակով ուղարկված նպաստները կամ բնաւ չէին օգտագործվել, կամ էլ տրամադրվել էին լրիվ այլ նպատակների, Միության ղեկավարները ստիպված էին խոստովանել. «Այս երկու պարագաները յիշատակեցինք՝ ձեզի աւելի որոշ գաղափար մը տալու համար այն շուարումին զոր զգացինք մեր երկրագործական եւ ճարտարագործական նպաստներու նկատմամբ»: Ինչպե՞ս բացատրել այս երեւույթը: Ըստ Միության ղեկավարների՝ դրա պատճառը հետեւյալն էր. «Ասոր մէջ կը գտնենք սա ապացոյցը թէ՝ մեր մէջ անհատական ձեռնարկութեան ոգին շատ աւելի ակնյայտ է քան համազգային նախաձեռնութեան ոգին, մասնաւորապէս հաւաքական ձեռնարկութեանց տեսակետով, բացի սակայն կրթական ձեռնարկներէն»:[19]

Հայտնի երեւույթ է, որ այն ազգերը (կամ ազգային խմբերը), որոնք երկար ժամանակ գործառում են որպես ազգային փոքրամասնություն, այն էլ տոտալիտար պետություններում, ժամանակի ընթացքում բացասական վերաբերմունք են դրսեւորում հավաքական գործունեության հանդեպ: Այս ընդհանուր բնույթի բացատրության հետ մեկտեղ, հարկ է նշել մեկ այլ հանգամանք եւս: XIX դ. վերջին քառորդում եւ 1909թ. Ադանայում կատարված զանգվածային սպանությունների, տեղահանումների հետեւանքով ավելացել էր Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի հայերի արտագաղթը: Նման պայմաններում բացառվում էին գյուղատնտեսական եւ արհեստագործական ծրագրերի որդեգրումն ու իրականացումը, քանզի այդ վերջինների դրական արդյունքները պետք է զգացվեին միայն տարիներ անց:

Այդ տարիներին հայերի արտագաղթի աննախադեպ աճը դարձել էր հայ իրականության ամենատագնապալի երեւույթներից մեկը: Միության ակտիվ գործիչ Միք. Նաթանյանը գրում էր. «Վերջերս լոկ Քէսապի եւ Ճիսրի վիճակները ըրած այցելութեամբս կրցայ հաստատել, արդարեւ, որ միայն Քէսապէն (մոտ 800 տուն) 7-800 երիտասարդներ այժմ Ամերիկա կը գտնուին եւ այս թիւը ամէն օր կ'աւելանայ: Գացողներէն դարձող չկայ այժմ: Քէսապի շրջակայ գիւղերը, եւ անդին՝ Եագու-

պիէ, Ղընիէ, Արամօ, Արֆալու, Ղընեմիա ու Սուէտիոյ գիւղերը այլեւս կ'ամայանան արտագաղթի պատճառաւ: Գիւղերու մէջ աշխատութեան եւ գործի ընդունակ մարդ եւ երիտասարդ չի մնար այլեւս...»:[20] Երբ գաղթում էին ժողովրդի «երիտասարդ, ստեղծագործ եւ ծնող» անդամները, երբ նրանք ոչ միայն մտադիր չէին այլեւս վերադառնալ, այլեւ քաջալերում էին իրենց ազգականների արտագաղթը եւս եւ երբ «... իրենց պարապը լեցնող չէլլար», այս պայմաններում անխուսափելիորեն վտանգվում էր ողջ ժողովրդի հետագա գոյությունը. «Ամուսնութիւնքը կը պակսին, ընտանիքը կը հիւծի եւ ... ազգը կը սպառի...»:[21] Տարիներ անց՝ 1915թ. հայերի ցեղասպանությունից եւ բռնագաղթից հետո, հայերի այդ արտագաղթը հնարավոր էր գնահատել այլ կերպ: Չնայած օտարության մեջ կրած բոլոր զրկանքներին եւ դժվարություններին, նրանք, այնուամենայնիվ, ոչ միայն պահպանեցին իրենց կյանքը, այլեւ տվեցին նոր սերունդներ: Բայց այդ տարիներին ազգային կազմակերպություններն ու գործիչները ջանում էին ամեն կերպ կասեցնել հայերի արտագաղթը հայրենիքից:

1913թ. հուլիսին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը «Արտագաղթին դէմ» վերնագրով հատուկ շրջաբերական ուղղեց իր մասնաճյուղերին: Այստեղ նշեմ, որ Միության փաստաթղթերից (կոչեր, շրջաբերականներ եւ այլն) մի քանիսը, ինչպես վերոհիշյալ «Հրաւեր առ Համօրէն Հայս» կոչը, խիստ այժմեական են: Այն աստիճանի այժմեական, որ աննշան խմբագրումից հետո կարող են հրապարակվել այսօր: Այդ փաստաթղթերի շարքին է պատկանում նաեւ «Արտագաղթին դէմ» շրջաբերականը:

«...Երկրին անապահով վիճակը, մէկ կողմէն, եւ տնտեսական ահաւոր տագնապը, միւս կողմէն, ստեղծած են այնպիսի ծանրակշիռ եւ դժուարակնճիռ կացութիւն մը, որ մեր տարաբախտ հայրենակիցներէն շատեր, կորովազուրկ, բոլորովին վհատած, կուրօրէն կը խուճապին տարուշխարհ, յուսալով գտնել այլուր բարօրութիւնը զոր իրենց հայրերուն բնագաւառին մէջ այլեւս անկարելի դարձեր է իրենց գտնել»: Երեւույթի նման հաստատումից հետո Միությունը ամենայն հստակությամբ եւ վճռականությամբ պարզում է իր դիրքորոշումն ընթացող արտագաղթի հանդեպ: «Հայկական Բարեգ. Ընդհ. Միութիւնը, որուն գլխաւոր ձգտումն է հայրենի հողին հաւատարիմ պահել հայ ժողովուրդը, եւ որուն բուն նպատակն է՝ բնագաւառին մէջ իսկ սատարել Հայութեան մտաւորական ու տնտեսական բարելաւումին, իր սիրտէն վիրաւորուած՝ արտագաղթի այս նոր խուճապին առջեւ, խորապէս կ'ըմբռնէ այդ հոսանքին վտանգը,

եւ պարտաւոր կը զգայ ազգովին ուխտադրուած պայքարին մասնակցիլ ամենամեծ չափով:

«Կեդր. Վարչ. Ժողովը, գիտակից իր պաշտօնին ծանրութեանը, եւ իր ազգանուէր կոչումին մէջ իսկ անհունապէս վրդովուած, այս կնճռալից վայրկեանին՝ թախանձագին կը հրաւիրէ Միութեան բոլոր Մասնաժողովները, եւ անոնց շուրջ այնքան անձնուիրաբար բոլորուած հազարաւոր անդամները, որպէսզի գերմարդկային ճիգեր թափելով առաջքը առնեն այս մեծ աղէտին, համոզուած թէ՝ բնութեան եւ բռնութեան միւս բոլոր աղէտներէն շատ աւելի ծանրօրէն եւ գահավիժօրէն ազգային գոյութիւնը վտանգելու բնոյթը ունի արտագաղթը:

«Պէտք է մեր տառապակոծ եւ յուսակտուր հայրենակիցները համոզել թէ՝ վայրկեանը երբեք այս աստիճանի բախտորոշ չէ եղած, եւ Հայուն պարտականութիւնը երբե՛ք այնքան մեծ՝ հայրենիքի հողին կառչելու, նոյնիսկ յուսահատօրէն:

«Այս ցեղը աւելի ահաւոր շրջաններու կուրծք տուած, աւելի քանդիչ փոթորիկներու դիմագրաւած է: Այս ցեղը դարերէ ի վեր վերապրած է արիւններու եւ աւերներու մէջէն, եւ հիմա որ չարիքին զօրութիւնները անբաղդատելիօրէն նուազած են, հիմա որ առաւելապէս «քաղաքական» եւ «տնտեսական» պատճառներ միայն կը բնորոշեն անոր դասալքութիւնը հայրենիքէն, չենք հասկնար թէ ինչո՞ւ անոր կը պակսի այսպէս իր ճակատագիրը քիչ մըն ալ տանելու, կրելու կորովը, մինչեւ որ իրեն համար ալ բարօրութեան արդար իրաւունքը վերջապէս իրականութիւն դառնայ իր երկրին մէջ:

«Կեցուցէ՛ք արտագաղթի այս ազգակործան հեղեղը, հայրենակիցներ: Ձեր բոլոր կամքերովը, ձեր բոլոր լանջքերովը, ձեր բոլոր ճակատներովը ծառացէք այդ աղէտին դէմ, եւ ըրէք որ անոր թափը կոտրի, թէ՛ ներսէն դուրս արգելափակելով հոսանքը, եւ թէ՛ դուրսէն ներս անոր դէմ հանելով ետ դարձողներու շարան շարան կարաւաններ...»:[22]

ՀԲԸ Միությունը չսահմանափակվեց կոչերով, շրջաբերականներով, դիմեց որոշ գործնական քայլերի՝ դրամական նպաստներ հատկացրեց Հայաստանի եւ Կիլիկիայի գյուղացիներին (1913թ. հատկացված «հողագործական նպաստների» ընդհանուր գումարի մի մասը նշանակված է որպես «վարկ արտագաղթին դէմ»), հիմնեց նոր արհեստանոցներ եւ գյուղական ձեռնարկություններ եւ այլն: Ուշադրության է արժանի, որ Միությունը, ի հակակշիռ ընթացող արտագաղթի, փորձեց կազմակերպել այլ երկրներից՝ մասնավորապես, Ռումինիայից, Բուլղարիայից հայ գյուղացիության ներգաղթը Արեւմտյան Հայաստան,[23] դրանով իսկ սկիզբ դնելով իր հետագա գործունեությանը այդ ասպարեզում:

Միության ղեկավարությունը, անկասկած, քաջ գիտակցում էր, որ սեփական ուժերով անկարող է կասեցնել արտագաղթի հոսքը, որ այդ նպատակով հատկացված նպաստները կունենան աննշան ներգործություն: Բայց եւ այնպես, նա չէր կարող նաեւ բավարարվել դիտողի դերով, քանի որ արտագաղթը հարցականի տակ էր դնում, ամեն բանից զատ, նաեւ Միության ընթացող եւ ապագա գործունեությունը: Եվ այդ ամենը տեղի էր ունենում այն պահին, երբ Միությունը, ավարտելով ձեւավորման առաջին շրջանը, դարձել էր հայ իրականության ամենախոշոր եւ գործունյա կազմակերպություններից մեկը, որի մշտապես աճող թե՛ անդամների քանակը եւ թե՛ դրամական միջոցները (1906–1915թթ. ընթացքում ՀԲԸ Միությունն իր որդեգրած նպատակների իրագործման համար գոյացրել էր մոտ կես միլիոն ամերիկյան դոլարին համարժեք գումար[24]) առավել հնարավոր էին դարձնում նրա նպատակների հաջորդական իրագործումը հայրենիքում:

Միության գոյության առաջին երկու տարում, բացի վերը նշածներից, կար եւս մեկ հանգամանք, որը մեծապես դժվարացնում էր նրա գործունեությունը: Դա նրա մի տեսակ ընդհատակյա գործունեությունն էր հայրենիքում: Ուստի դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի ակնկալիքներով ընդունեց նա 1908թ. Թուրքիայում սահմանադրություն հռչակելու լուրը:

1908թ. սահմանադրությունը եւ հայերի արձագանքը

1908թ. Օսմանյան սահմանադրության հեղինակն էր «Երիտասարդ թուրքեր» կամ «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցությունը, որը եւ պարտադրեց նրա ընդունումն ու հռչակումը սուլթան Աբդուլ Համիդի կողմից: «Երիտասարդ թուրքեր» կազմակերպության կորիզը կազմող զինվորականները, իրականացնելով սահմանադրության ընդունումը, առաջնորդվում էին մեկ նպատակով՝ փրկել փլուզվող կայսրությունը, կանխել նրա հնարավոր կործանումը: Հաստատելով սահմանադրական միապետություն, հռչակելով «Ազատություն, արդարություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսները՝ նրանք մտադիր էին դրանով իսկ վերականգնել կայսրության վարկը եվրոպական երկրների մեջ, առաջացնել վստահություն նոր վարչակարգի հանդեպ, կանխել նրանց քաղաքական, ռազմական եւ այլ միջամտությունները կայսրության ներքին գործերին: Երկրորդ նպատակն էր՝ երկրում ստեղծել կայուն վիճակ, համախմբել տարբեր ժողովուրդներին: Եվ հենց այս վերջին նպատակին հասնելու իրենց առաջարկած միջոցը խիստ բնութագրական էր այդ շարժման հա-

մար: Ժողովուրդների համախմբման հիմնական, եթե ոչ միակ միջոցը նրանք համարեցին ոչ թե տնտեսական, սոցիալ-քաղաքական բարենորոգումների որոշակի ծրագրի մշակումն ու իրագործումը, այլ առաջ քաշեցին «օսմանցի» ժողովրդի գաղափարը («օսմանլըլըք»): Ըստ իրենց, օսմանցի ժողովուրդը Օսմանյան կայսրության տարածքում ապրող բոլոր ժողովուրդներն էին, որոնց թույլատրվում էր պաշտել իրենց կրոնը, սակայն լինելով օսմանցի, պետության քաղաքացիներ, այլեւս պետք է հրաժարվեին սեփական, ինքնիշխան պետություն հիմնելու նպատակից: Եվ քանի որ օսմանցին կամ օսմանականը նույն թուրքը կամ թուրքականն էր, նշանակում էր, որ երիտթուրքերի առաջարկած համախմբումը կրում էր խիստ ազգայնական բնույթ եւ ոչ թուրք ժողովուրդների թրքացման նոր, ավելի ճկուն միջոց էր: Եվ բնավ պատահական չէր, որ հետապնդելով այս երկու հիմնական նպատակները՝ երիտթուրքերը չառաջարկեցին ժողովրդին, այս դեպքում առաջին հերթին թուրք ժողովրդին՝ տնտեսական, սոցիալական կամ քաղաքական բարեփոխումների եւ ոչ մի ծրագիր: Երկրում ամեն ինչ մնաց իր տեղում՝ թե կառույցները եւ թե մարդիկ: Սահմանադրության շնորհիվ, սակայն, հնարավոր դարձավ ոչ թուրք ժողովուրդների եւ առաջին հերթին քրիստոնյաների, մշակութային եւ տնտեսական առավել արագ զարգացումը: Մի բան, որը երիտթուրքերը երբեք չէին ցանկանում եւ որը հարցականի տակ էր դնում թուրք ժողովրդի գերիշխող կարգավիճակը: Կարելի է ասել, որ այս դեպքում նրանք, կամա թե ակամա, հանդես եկան որպես սադրիչ, խթանեցին ազգային փոքրամասնությունների աննախադեպ աշխույժ եւ բազմապիսի գործունեությունը, որը հետագայում իրենք իսկ պետք է ճնշեին ամենահանցավոր եղանակով:

Դա, սակայն, դեռ առջեւում էր, իսկ սահմանադրության հռչակումից անմիջապես հետո երկրում, եւ հատկապես ոչ թուրք ժողովուրդների մեջ, տիրում էր անսովոր մի ոգեւորություն: «Երբ բանտերում դուռերը բացուեցան եւ վերագտան իրենց ազատութիւնը քաղաքական բանտարկեալները, երբ բոլոր քաղաքացիներում համար ազատ ճամփորդութեան իրաւունքը հաստատուեցաւ, երբ գրաքննութիւնը ջնջուեցաւ եւ թերթերը ազատօրէն սկսան արտայայտուիլ, երբ արտասահման ապաստանող փախստականներում իրաւունք տրուեցաւ երկիր վերադառնալու, երբ քաղաքական կուսակցութիւններում հրապարակային գործունէութեան ասպարէզ բացուեցաւ, երբ առեւտուրի կաշկանդումները ջնջուեցան, երբ դպրոցներում վրայ պետական հսկողութիւնը եւ ազգային լեզուի եւ պատմութեան ուսուցման արգելքները վերացան, երբ հաւաքոյթներու, հան-

դէսներու, ժողովներու գումարումը դարձաւ ազատ, նոր աշխարհ եկած զգացողութիւնը ունեցան հայերը»:[25]

«Հրապարակային գործունէութեան ասպարէզ» էր բացվել ոչ միայն քաղաքական կուսակցությունների, այլեւ բոլոր կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության համար: Եվ հենց այդ օրերին էր, որ Միության հիմնադիրներից Ն.Տաղավարյանը, հրաժարվելով Կենտրոնական Վարչական Ժողովի ատենադպրի իր պաշտոնից, մեկնեց Կ. Պոլիս՝ ազգային-քաղաքական գործունեությամբ զբաղվելու նպատակով:Ինչպես նշվել էր, նա նախ հիմնեց Կ. Պոլսի մասնաճյուղը, իսկ 1910 եւ 1911թթ. կատարած շրջագայությունների ընթացքում նախաձեռնեց բազմաթիվ այլ մասնաճյուղերի ստեղծումը տարբեր հայաբնակ վայրերում: Այսպիսով, ՀԲԸ Միությունը իր հիմնադրումից երեք տարի անց վերջապես մուտք գործեց հայրենիք, եւ արդեն 1910թ. Օսմանյան կայսրության տարածքում գործում էր Միության 28 մասնաճյուղ: Հետագա տարիների ընթացքում հիմնադրվեցին նորանոր մասնաճյուղներ, եւ Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին հաշվվում էին արդեն 59 մասնաճյուղեր, որոնք գործում էին Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Օսմանյան կայսրության այլ շրջաններում:

ՀԲԸ Միությունը դեռ չէր հասցրել կազմակերպել եւ ոչ մի մասնաճյուղ, դեռ միայն պատրաստվում էր մուտք գործել հայրենիք, երբ 1909թ. ապրիլին, այսինքն՝ Սահմանադրության հռչակումից ընդամենը ութ ամիս անց, Կիլիկիայում՝ Ադանա քաղաքում եւ նրա շրջակա գյուղերում կազմակերպվեց հայ բնակչության կոտորած: Մի քանի օրվա ընթացքում սպանվեց շուրջ 30.000 հայ, կրակի տրվեցին մի քանի տասնյակ եկեղեցիներ եւ դպրոցներ, հազարավոր տներ, վաճառատներ եւ այլ շինություններ, իսկ որբ մնացած երեխաները հաշվվում էին 10 հազարից ավելի[26]: Ջոհերը կլինեին շատ ավելի, եթե չմիջամտեին եվրոպական երկրների դեսպանները, որոնց ճնշման տակ իշխանությունները ստիպված եղան վերջ տալ զանգվածային սպանություններին: Առաջին անգամ չէր, որ թուրքական իշխանությունները կազմակերպում էին հայերի սպանություններ. 1894-1896թթ. նույնպիսի ճակատագրի արժանացան հարյուր հազարավոր հայեր, եւ այդ իմաստով չէ, որ կարեւորվում էին 1909թ. դեպքերը: Առաջին (եւ ինչպես հայտնի է՝ ոչ վերջին) անգամ էր, որ հայերի սպանությունը կազմակերպվեց եւ իրագործվեց նոր վարչակարգի կողմից, որը խոստացել, եւ թվում էր, սկսել էր հաստատել երկրում ազատություն, արդարություն եւ հավասարություն: Հայ ժողովուրդը նորից տագնապի մէջ էր: Տագնապի եւ անորոշության, քանզի նրա քաղաքական առաջնորդները՝ ի դեմս ՀՀ Դաշնակցության, Սահմանադրության

հռչակման պահից դարձել էին նոր իշխանությունների դաշնակիցը: Առայժմ չքննարկենք այն հարցը, թե արդար էր նման քաղաքականությունը, գոյություն ուներ այլընտրանք, թե ոչ: Փաստ է, սակայն, որ կուսակցությունները, հրաժարվելով թուրքական իշխանությունների դեմ պայքարից, մի կողմ դնելով անկախ պետություն ստեղծելու իրենց հիմնանպատակը եւ միեւնույն ժամանակ, ըստ էության, զրկված լինելով երկրի ղեկավարմանը մասնակցելու հնարավորությունից, մրցման մեջ մտան միմյանց հետ՝ հանուն իրենց ազդեցության ոլորտների ընդլայնման, տրամադրելով այդ նպատակին իրենց մարդկային եւ նյութական ողջ ուժերը:

Հայ եկեղեցու ամենահայտնի գործիչներից Բաբկեն Կյուլեսերյանը (1930-1936թթ. Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս) 1909թ. Արմաշի դպրեվանքից գրած իր մի նամակում այսպես էր բնութագրում այդ օրերի իրականությունը. «...իրական կեանքը հայութեան նոր դժբախտութեան մը պատկերն է: Կուսակցութիւնները զիրար գլելու համար կ'աշխատին հիմայ, յետին գիւղի մը հանգիստը վրդոված է, եւ ազգին բոլոր կենսական գործերը լքուած են: ...Տենդոտ բրոբականտ մը կայ իւրաքանչիւր կուսակցութեան կողմէ, այդ տենդը միայն եւ միայն իւրաքանչիւրին իր գաղափարն ու ծրագիրը մշակելու եւ ժողովրդականացնելու համար չէ, այդ չափով գոհ պիտի ըլլայինք, այլ նաեւ զիրար վարկաբեկելու, թէ՝ սկզբունքի եւ թէ՝ անձերու կողմէն: Այս տենդոտ, ըսեմ նաեւ կեղտոտ գործունէութեան հետեւանքով այսօր անբարոյացած է յետին գիւղացին իսկ եւ ազգին գործերը ամլութեան դատապարտուած են»:[27]

Այսպիսով, հայ ժողովուրդը մեկ անգամ եւս ենթարկվեց կենտրոնախույս ուժերի ազդեցությանը, որոնք այս դեպքում շատ ավելի հզոր էին, քանզի գործում էին անկաշկանդ, իշխանությունների արգելքներից ազատ: Եվ նորից ՀԲԸ Միությունը այս ընդհանուր մթնոլորտում ի հայտ եկավ որպես կենտրոնաձիգ ուժ, որի շուրջ համախմբվեցին ժողովրդի ամենատարբեր խավերի ներկայացուցիչները: Համախմբվում էին նրանք, ովքեր հոգնել էին ներհայկական տարբեր խմբավորումների հավակնոտ մրցակցությունից, ովքեր անհեռանկար եւ անարդյունավետ էին համարում (որպես ապացույց՝ նույն Ադանայի դեպքերը) նրանց որդեգրած գործելակերպը: Ստեղծված պայմաններում Միությունը 1909թ. կրկին վերահաստատեց իր սկզբունքային հիմնադրույթը՝ «Ընկերութիւնը Էապէս մարդասիրական է. ոեւէ քաղաքական հանգամանք չունի»: Ավելին, կուսակցությունների հարձակողական գործելակերպը անհրաժեշտ դարձրեց Միության կանոնագրում ամրագրել նաեւ հետեւյալ դրույթը. «...քաղա-

քական քօմիթէի մը պատկանող ոեւէ անձ չի կրնար անդամակցիլ՝ ոչ Կեդրոնական Վարչական Ժողովի եւ ոչ ալ տեղական Ժողովներուն»:[28]

Առաջին հայացքից այս կետը հակասում էր կանոնագրքի մեկ այլ՝ 3-րդ հոդվածին, ուր ասվում էր, որ Միությանը «...կարող է անդամակցել, առանց սեռի կամ դաւանանքի խտրութեան, ամեն հայ որ յանձն կ'առնէ յարգել ներկայ Կանոնագիրքը եւ կանոնաւորապէս հատուցանել իր անդամավճարը»: Դժվար չէ նկատել, սակայն, որ ըստ 10-րդ հոդվածի, քաղաքական կուսակցությունների անդամներին չէր թույլատրվում ոչ թե անդամակցել Միությանը, այլ միայն ընդգրկվել նրա ղեկավար մարմինների կազմում: Հակառակ պարագայում, ինչպես արդարացիորեն ենթադրում էին Միության ղեկավարները, այն կվերածվեր գաղափարական, քարոզչական եւ միջկուսակցական հակամարտության մի նոր ասպարեզի: Կարեւոր էր նաեւ, որ Միության գործունեության ծավալմանը եւ հեղինակության բարձրացմանը զուգընթաց, գնալով ակնհայտ էր դառնում ազգային կուսակցություններից յուրաքանչյուրի ձգտումը՝ իր հսկողության տակ վերցնել Միությունը: Նման պայմաններում Միությունը, ջանալով իրեն հավասար հեռավորության վրա պահել բոլոր կուսակցություններից, նորից ու նորից հայտարարում էր, որ ինքը «...ոչ միայն չի հետապնդեր քաղաքական նպատակ մը, այլ եւ երբե՛ք չի ժիտեր կամ չի նախընտրեր այս կամ այն խմբակցութիւնը», որ «...ո՛չ մէկ հայ անհատ, ոչ մէկ խմբակցութիւն պիտի սակարկէ Միութեան իր համակրութիւնը, ցորքան, հաւատարիմ իր հիմնական սկզբունքին, Միութիւնը ո՛չ մէկ վարդապետական կամ կուսակցական հաւատամի կամ ժիտումի կը ձգտի, եւ, միայն հետապնդելով իր ազգաշէն նպատակը, կը զգուշանայ ամէն տեսակ գաղտնի հնարքներէ կամ հրապարակային պայքարներէ»:[29] Վերջապես մի հանգամանք եւս. «ցեղափոխական»ներուն վարչական պաշտօններ տալով կասկածելի չդարձնել Միութիւնը, քանի որ ան հարկադրուած պիտի ըլլար գործել գլխաւորաբար այն երկիրներու մէջ ուր Սուլթանը – Ջարը կը տիրապետէին»:[30] (Առաջ անցնելով, նշեմ, որ 1921թ. կանոնագրի այս կետը չնչվեց՝ «նկատի առնելով որ ազգին քաղաքական պայմանները այժմ բոլորովին փոխուած են»:[31] Այդուհանդերձ, Միությունը վերահաստատում էր իր սկզբունքային դիրքորոշումը. «Կուսակցականը երբ կ'աշխատի Միութեան դրօշին տակ, պէտք է գործէ միայն եւ միայն իբրեւ Միութեան անդամ կամ գործիչ: ...Կուսակցութիւնները անոր սահմաններէն դուրս միայն կրնան գործել: Մէկ խօսքով, մենք իրաւունք չունինք պահանջելու Միութեան անդամներէն կամ գործիչներէն որ դադրին կուսակցական ըլլալէ, բայց միշտ պիտի պահանջենք անոնցմէ որ Միութեան դառնան ճիշտ անկուսակցական ըլլան»:[32])

Եվ պատահական չէ, որ Միության տարբեր մասնաճյուղերի ղեկավար գործիչները հիմնականում եղան իրականության հրամայականները գիտակցող մասնագետներ, գործարար մարդիկ, որոնց խորթ էր քաղաքական ամբոխավարության գործելակերպը: Իսկ որ նման կողմնորոշման տեր մարդկանց թվաքանակը գնալով աճում էր, այդ մասին էին վկայում կարճ ժամանակամիջոցում Միության մի քանի տասնյակ մասնաճյուղերի հիմնադրումն ու արդյունավետ գործունեությունը Թուրքիայի հայկական տարածքներում: Եվ դա այն պայմաններում, երբ ամենուրեք հների կողքին ստեղծվում էին բազմապիսի նոր ազգային կազմակերպություններ, որոնցից որեւէ մեկին, այդ թվում նաեւ ՀԲԸ Միությանը անդամակցելը ենթադրում էր որոշակի դրամական պարտավորություններ: Ի դեպ, հետսահմանադրական խանդավառ մթնոլորտում մտադրություն կար պաշտոնապես վավերացնել Միության գործունեությունը երկրում: Տեղեկանալով դրան՝ հայտնի գրող եւ հրապարակախոս, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ոսկեմատեանը.1906-1913» արժեքավոր գրքի հիմնական հեղինակ Սուրեն Պարթեւյանը Վահան Մալեզյանին Իզմիրից հղած նամակում գրում էր. «Լեւոն Մկրտիչեանի հետ ...այն եզրակացութեան եկանք թէ ամէնէն վտանգաւոր բանը պիտի ըլլար այդպիսի դիմում մը թուրք կառավարութեան մօտ: Թուրքերուն հոգեբանութիւնը գիտցող մը մտքէն պիտի չանցընէր այդպիսի ձախորդ քայլ մը առնել: Թուրքերը յաւիտեան կրնան անտես առնել եւ թոյլատրել Բարեգործականին գործունէութիւնը Թուրքիոյ մէջ, բայց երբ իրենց դիմում ըլլայ արտօնութեան համար՝ այն ատեն կրնան կասկածի երթալ, իրենց անտարբերութենէն սթափիլ եւ ամէն տեսակ արգելք ցուցնել Բարեգործականի առջեւ...»:[33]

Դպրոցաշինություն. Վանի Վարժապետանոց

ՀԲԸ Միությունը Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Թուրքիայի այլ հայաբնակ վայրերում գործեց ընդամենը հինգ տարի՝ մինչեւ 1915թ. կեսերը: Միության այդ հինգ տարիների գործունեությունը քննելիս, անկասկած, առաջին հերթին անհրաժեշտ է նշել նրա նվաճումները ազգային կրթության ասպարեզում:

Օսմանյան կայսրությունը, լինելով ամենախոշոր կայսրություններից մեկը, միեւնույն ժամանակ դասվում էր ամենահետամնաց երկրների շարքը: Հետամնացության առավել ցայտուն դրսեւորումն էր թուրք ժողովրդի կրթական չափազանց ցածր մակարդակը: Թուրքական իշխանու-

թյունների նման, մեղմ ասած, անուշադրությունը հարազատ թուրք ժողովրդի հանդեպ, ազգային փոքրամասնությունների պարագայում ընդունեց արգելիչ քաղաքականության ձեւ, որի նպատակն էր զրկել նրանց ազգային կրթությունից եւ դրանով իսկ արագացնել նրանց լեզվամշակութային ձուլումը: Իր հերթին, արեւմտահայության հիմնական զանգվածը, ապրելով մշտական չքավորության պայմաններում, ի վիճակի չէր անհրաժեշտ դրամական միջոցներ տրամադրել ազգային դպրոցների հիմնադրման եւ պահպանման համար:

Պետք է ընդունել, որ թուրք իշխանությունները, այս դեպքում, հիմնականում հասան իրենց նպատակին: Ճիշտ է, կայսրության մայրաքաղաքում՝ Կ. Պոլսում, XX դ. սկզբներին գործում էին մի քանի տասնյակ հայ վարժարաններ, սակայն Կ. Պոլսի հայկական համայնքը երբեք չէր եղել եւ չէր էլ կարող ծառայել որպես արեւմտահայության զարգացման աստիճանի ցուցանիշ: Ըստ որոշ տվյալների, այդ նույն ժամանակահատվածում Թուրքիայի տարածքում գործող հայկական դպրոցներում սովորում էր ընդամենը 82 հազար աշակերտ, ընդամենը, քանզի արեւմտահայության ընդհանուր թվաքանակը կազմում էր շուրջ 2,5 մլն մարդ: Ազգային վարժարանների բացակայությունը, մյուս կողմից էլ թուրքերի եւ քրդերի հարեւանությունը ժամանակի ընթացքում հանգեցրին նրան, որ գյուղական վայրերում մեծ թվով հայեր այլեւս չէին տիրապետում հայերենին եւ դարձել էին թրքախոս կամ քրդախոս:

Ազգային կրթության նման տագնապալի վիճակը հայտնի էր բոլորին, բայց հազվագյուտ կազմակերպություններ միայն ձեռնամուխ եղան գործնական քայլերի: Այդ կազմակերպություններից էր նաեւ ՀԲԸ Միությունը: Արդեն 1907թ. Միությունը առաջին նպաստը հատկացրեց հայ վարժարաններին՝ Վանի Կեդրոնական վարժարանին եւ Բալուի Արթիկան գյուղի դպրոցին: Գործող վարժարաններին օգնելով հանդերձ, այնուամենայնիվ, նրա նպատակը նոր դպրոցների հիմնումն էր, որի իրականացումը հնարավոր դարձավ 1908թ. հետո միայն:

Միության համար դպրոցաշինության ծրագրի իրականացումը կապված էր որոշակի դժվարությունների հետ՝ նկատի առնելով թե անհրաժեշտ փորձառության եւ թե մասնագետների պակասը: Ի վիճակի՞ էր արդյոք Միությունը սեփական ուժերով կյանքի կոչել այդ ծրագիրը. հարցը չունեցավ իր պատասխանը, քանզի մինչ այդ տեղի ունեցավ կարեւոր մի իրադարձություն՝ սկիզբ դրվեց ՀԲԸ Միության համագործակցությանը Միացյալ Ընկերության հետ:

Միացյալ Ընկերության կազմավորումը Կ. Պոլսում 1880թ. արդյունք էր երեք կրթասիրական՝ Արարատյան, Կիլիկյան եւ Դպրոցասիրաց-

Արեւելյան կազմակերպությունների միացման: Ահա թե ինչպես է գնահատվել Միացյալ Ընկերության գործունեությունը ՀԲԸ Միության կողմից. «Իր գոյութեան ...առաջին շրջանին Միացեալը կ'ունենայ 46 վարժարաններ: Ասոնք, բացի մէկ երկուքէն, գիւղական նախակրթարաններ էին, յաճախ միակ ուսուցիչով մը, եւ այն աստիճան փոքրիկ պիւտճէով մը որ անգլիացի թղթակիցներ,- անշուշտ, ո՛չ առանց հեգնութեան,- կը գրէին իրենց թերթերուն թէ՝ կրթութիւնը ոչ մէկ երկրի մէջ այնքան աժան է որքան այս հայ գիւղերուն մէջ: Բայց այդ կրթական յարկերուն կատարած դերը, նոյն իսկ իր համեստ համեմատութեան մէջ, բարիք ըլլալէ չէր դադրեր, մանաւանդ այն կարգի գիւղերու մէջ որոնց ժողովուրդը լոկ անունով ու կրօնքով միայն հայ էր, մեծագոյն մասամբ քրդերէն կը խօսէր: Ազգային փրկութեան գործ մըն էր Միացեալին ըրածը: Միւս կողմէ, հայախօս ոստաններու մէջ, կրթական ճշմարիտ յեղաշրջութիւն մը կը կատարէր, պապենական Սաղմոսին, ժամագիրքին ու Նարեկին տեղ՝ որ, իրենցմէ անբաժան ճպտտին հետ, ուսուցման միակ առարկաներն էին խեղճ տղոց համար, նոր գրութեամբ դասագիրքեր տարածելով, նոր ու օգտակար ծանօթութեանց ուսումը ընդհանրացնելով: Իր ուսուցիչները հեղինակութիւններ չէին, բայց շատ լայն ժողովրդականութիւն կը վայելէին, իբր բարիքի առաքեալներ, եւ նոյնիսկ կուսակալներ, գայմագամներ մեծ կարեւորութիւն կ'ընծայէին Ընկերութեան ներկայացուցիչներուն»:[34] Միացյալ Ընկերության գործունեությունը խափանվեց 1890-ականների վերջին: Նախ նրա մի շարք աշխատակիցներ աքսորվեցին թուրքական իշխանությունների կողմից, ապա այն ստիպված եղավ փակել իր վարժարանների մեծ մասը դրամական միջոցների բացակայության պատճառով: Ի դեպ, գուցե եւ Միացյալը չհայտնվեր նման կացության մեջ, եթե ժամանակին ստեղծած լիներ անձեռնմխելի հիմնադրամ, սակայն, ինչպես նշվել էր, այդ գաղափարը դեռ անծանոթ էր հայ կազմակերպություններին: 1908թ. Միացյալն ուներ ընդամենը հինգ վարժարան, սակայն, քաղաքական նոր պայմաններում նա անմիջապես նոր թափով վերսկսեց իր գործունեությունը, հասցրեց վարժարանների թիվը մինչեւ 50-ի, բայց դրամական միջոցների հայթայթումը մնում էր անլուծելի խնդիր:

1910թ. Միացյալը որոշում է համագործակցության մեջ մտնել ՀԲԸ Միության հետ, եւ այդ նպատակով Կահիրե է մեկնում նրա գործիչներից Հովհաննես Հակոբյանը, որն այդ ժամանակ ամերիկյան «New York Evening Post» թերթի թղթակիցն էր Կ. Պոլսում: «Ձեր բոլոր առաջարկներն ամբողջութեամբ ընդունեցինք: Ունի՞ք ուրիշ առաջարկներ ալ»,- Պողոս Նուպարի այս խոսքերով ավարտվում են բանակցությունները եւ սկսվում

է երկու ազգային կազմակերպությունների համագործակցությունը: Որո՞նք էին Միացյալի առաջարկները: «Նախ միջոց հայթայթել Սղերդի, Մի-ֆարղինի եւ Հայնէի քրդախոս հայ շրջաններու մէջ վարժարաններ հաստատելու, եւ ապա Վանի մէջ բանալու վարժապետանոց մը մեր ուղղութեան եւ մեր ծրագիրներուն համապատասխան ուսուցիչներ պատրաստելու համար»:[35] Կնքված համաձայնությունը նշանակալից երեւույթ եղավ հայ իրականության մեջ: Այդ օրերին, երբ ազգային կազմակերպությունները իրենց ինքնահաստատումը դիտում էին ոչ թե որպես որոշ նպատակների իրագործման միջոց, այլ լոկ որպես ինքնանպատակ, ՀԲԸ Միության եւ Միացյալի համագործակցությունը յուրատեսակ եւ շատերի համար գուցե եւ անցանկալի հիշեցումն էր այն հանրածանոթ, բայց եւ մոռացության տրված դրույթի, որ որեւէ ազգային կազմակերպության առաջին եւ վերջին նպատակը մեկն է՝ տվյալ ազգի շահերի պաշտպանությունը, նրա այս կամ այն կարիքների բավարարումը եւ որին կարելի է հասնել նույն այդ կազմակերպությունների համատեղ ջանքերով: Իսկ որ այդ դրույթի գիտակցումն այնքան էլ դյուրին չէր, վկայում է նույնիսկ ՀԲԸ Միության հիմնադիր անդամներ Մ.Անդրանիկյանի եւ Ե.Աղաթոնի օրինակը, որոնք նախապես ծանոթանալով Միացյալի ծրագրին՝ առաջ էին քաշում հետեւյալ առարկությունը. «Միութիւնը տակաւին նոր ասպարեզ կ'իջնայ գործելու հայ ժողովուրդի մէջ եւ չի կրնար իր հասոյթներուն մեծագոյն մասը կեդրոնացնել Միացեալի կրթական ձեռնարկներուն շուրջ: Միութիւնը պարտաւորուած է իր եկամուտները տնտեսել, որպէսզի կարենայ քիչ մը ամէն տեղ օգնութեան հասնիլ եւ իր անունն ու գործը ծանօթացնել ամէն անկիւնները»:[36] Ըստ հայտնի ասացվածքի, մարդկանց թերությունները հաճախ շարունակությունն են նրանց արժանիքների: Մ.Անդրանիկյանի եւ Ե.Աղաթոնի նման դիրքորոշումը նրանց՝ ՀԲԸ Միությանը խելահեղության հասնող նվիրվածության հետեւանք էր, որը տվյալ դեպքում հավասարակշռվեց Միության մյուս ղեկավարների իրապաշտությամբ: Իսկ իրապաշտությունը նշանակում էր այն բանի գիտակցում, որ հայ գյուղացու կրթական մակարդակի բարձրացումն ու նրա ազգային-մշակութային ինքնության պահպանման խնդիրն այդ երկու կազմակերպություններից եւ ոչ մեկն ի վիճակի չէր լուծել սեփական միջոցներով: Դա հնարավոր էր միայն համախմբելով մի կողմից՝ Միացյալի դպրոցաշինության փորձը (ներգրավյալ փորձառու ուսուցիչները) եւ մյուս կողմից՝ Միության դրամական միջոցները: ՀԲԸ Միության պատմության մեջ դա առաջին համագործակցությունն էր ազգային կազմակերպության հետ, որի դրական արդյունքները խթանեցին նման գործելակերպի որդեգրումը՝ դարձնելով այն Միությանը բնորոշ ավանդույթներից մեկը:

1911թ. ապրիլին կայացած Միության հերթական ընդհանուր ժողովի տեղեկագրում արդեն հատուկ բաժին էր հատկացված կրթական ասպարեզում նրա գործունեության արդյունքներին: «Հեռաւոր գիւղերու մէջ, ուր մեր հայրենակիցները կ'ապրին բացարձակ տգէտութեան մէջ»,[37] գործում էր 21 նախնական դպրոց, որոնցից 5-ը՝ Հայկական Կիլիկիայում: ՀԲԸ Միության հիմնադիր ղեկավարները, որոնք ծրագիրը եւ գործելակերպը մշակելիս հետեւել էին Ալիանս Իսրայելիթի օրինակին, հասկանալի հպարտությամբ նշում էին հետեւյալ փաստը. «1866-ին, այսինքն առաջին դպրոցին բացումէն հինգ տարի վերջ, Ալիանսը 3 վարժարան ունէր, 1868-ին՝ 7, 1872թ.՝ 17, եւ 1877-ին, այսինքն 15 տարի վերջ, իր վարժարաններուն թիւը կը հասնէր 30-ի: Ինչպէս կը տեսնենք, մեր յառաջադիմութիւնը աւելի արագ է, ինչ որ կը քաջալերէ մեզ վստահութեամբ նկատելու Միութեան ապագան»:[38]

Ըստ կնքված համաձայնության, բոլոր դպրոցների տեսչությունը՝ ներառյալ հատուկ մշակած ուսումնական ծրագրերը, ապահովում էր Միացյալ Ընկերությունը, իսկ անհրաժեշտ դրամական միջոցները տրամադրում էր Միությունը, բայց ոչ ամբողջովին: Միջոցների որոշ, ոչ հիմնական մասը պետք է ապահովեր տվյալ գյուղի բնակչությունը: Նպատակը ոչ թե դրամի տնտեսումն էր, այլ առաջին հերթին բնակչությանը մասնակից դարձնելը դպրոցաշինության գործին, առաջացնել եւ ձեւավորել նրա մեջ պատասխանատվության եւ պարտավորվածության զգացում սեփական դպրոցի հանդեպ:

Այդ հարցի կարեւորությունը հատուկ նշում էր Միքայել Նաթանյանը, որը քննել էր կրթական գործի վիճակը Հայաստանում եւ Կիլիկիայում: Խոսելով գավառի հայության մասին՝ նա գրում է. «...որքան զօրէղ է անոնց մէջ յաճախ *պահանջումի* գոռոց, անչափ, եւ երբեմն իսկ անպատկառ ոգին, նոյնքան եւ աւելի կը պակսի փոխադարձ պարտաւորութեան զգացումը: Այդպիսիններէն շատերն այն անփոփոխ հաւատքը ստեղծած են արդարեւ թէ, ազգը պարտաւոր է եղեր զիրենք թէ՛ պահպանել, թէ՛ կերակրել եւ թէ՛ կրթել ...ձրի: Բայց ինչո՞ւ: Եվ յետոյ այդպիսիններուն երբեք միտքերուն չէ եկած անգամ մըն ալ ինքնիրենցմէ հարցնել թէ.- ո՞վ է այդ ազգը կոչուածնին, ի՞նչ են իրենք ուրեմն եւ երբէ՞ն ի վեր իրենք այդ «ազգէն» ջոկուած են»: Նման «պահանջատիրութեան» հետեւանք էր նաեւ այն, «... որ այդ միեւնոյն հայը, հայրը, ծնողը յօժարակամ կը վճարէ սակայն իր տղուն դպրոցական վարձքը կամ իր հասարակական տուրքը, երբ օտար վարժարանը ղրկէ զաւակը»: Մ.Նաթանյանը տալիս է նման հոգեբանության հետեւյալ ճշգրիտ ձեւակերպումը.

«...պահանջել իրաւունք մը որ չունին, եւ մոռնալ, անտեսել ու արհամարհանք մերժել պարտքը, որ կը դիզուի...»:[39]

Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության տարածքում՝ Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում գործում էր ՀԲԸ Միության 41 հայ ազգային վարժարան, չհաշված Տյորթ-Ցոլի որբանոց-դպրոցը, որի մասին խոսվեց վերը: Վարժարանների աշակերտության թվաքանակը շատ տարբեր էր եւ կախում ուներ տվյալ գյուղի բնակչության թվաքանակից: Հայաստանի տարածքում ամենախոշորներն էին Սղերդի, Հազրոյի վարժարանները, ուր ուսանում էր համապատասխանաբար՝ 253 եւ 100 աշակերտ, իսկ Կիլիկիայում՝ Վահկայի, Ճար-Տերեի, Կապանի, Ալպիսթանի վարժարանները՝ յուրաքանչյուրն ավելի քան 90 աշակերտով: Մնացած վարժարաններում աշակերտների միջին թվաքանակը հասնում էր 40-50-ի: Իհարկե, այսօրվա չափանիշներով այդ վարժարանները թվում են շատ փոքր, սակայն հարկ է նորից շեշտել, որ դրանք գործում էին հեռավոր եւ խուլ գյուղերում, ուր տիրում էր անգրագիտությունը եւ ուր հայերը, որպես կանոն, այլեւս չտիրապետելով հայերենին, կանգնած էին ազգամշակութային վերջնական ձուլման վտանգի առջեւ: Միք.Նաթանյանն այդ տարիներին այսպես էր գնահատում Կիլիկիայում տիրող իրավիճակը. «Կիլիկիոյ մէջ, ըստ տեղին, հայերը առանց ամենափոքր խղճահարութեան եւ գիտակցութեան՝ կը խօսին թուրքերէն կամ արաբերէն: Կարգ մը գիւղական համայնքներն անգամ, ուր պահած են իրենց լեզուն, սոյն եւս այնքան այլափոխուած է որ գրեթէ բնաւ նմանութիւն չունի մայր լեզուին հետ, թուրքերէն եւ արաբերէն աղաւաղուած բառերու խճողումին պատճառաւ: ... Հոս հայ լեզուին արդէն անգէտ մերայինք՝ դիւրաւ կ'ընտելանան օտարներուն օտարոտի բարքերուն եւս: Անոնց համար հայ լեզուի տեղ թուրքերէն ըլլայ, արաբերէն ըլլայ թէ ուրիշը, այլեւս երկրորդական կարեւորութիւն մը կ'ստանայ, այնքան դիւրին ըլլալով իրենց համար, դժբախտաբար, ամեն գինով հայութեան ուրացումը եւ նոյնիսկ անոր դեմ արհամարհանքի կամ անտարբերութեան զգացումը»: Իրական վիճակի նման անաչառ գնահատումից հետո Միք.Նաթանյանը հատուկ նշում է նորաստեղծ ազգային դպրոցների կարեւորությունը. «... թերեւս նորէն դպրոցին կը մնայ մեծագոյն եւ օգտակարագոյն դերը -չի մոռնալով յիշատակել նաեւ կիրթ եւ նուիրուած հայ եկեղեցականներուն ընկած դերը - կոուելու այս վտանգին դէմ, որ աւելի մահաւոր է հոս՝ քան այլուր»:[40]

Կրթական ասպարեզում Միության ամենախոշոր իրագործումը եղավ Վանի վարժապետանոցի հիմնումը: Փորձառու, ձեռնհաս ուսուցիչների պակասն ինչպես Հայաստանում, այնպես էլ հատկապես Կիլիկիայում, զգացվում էր վաղուց, դա առավել նկատի դարձավ, երբ Միությունը եւ Միացյալ Ընկերությունը սկսեցին հիմնել գյուղական դպրոցներ: «Մենք չունինք, գրեթէ բնաւ չունինք, դաստիարակներ, ուսուցիչներ, բառին իսկական իմաստով,- ասվում էր «Միութիւն» ամսագրի համարներից մեկում: -Եվ որքան ատեն որ ասիկա իրողութիւն մը ըլլայ, աշխարհի ամէնէն հրաշալի ծրագիրը անկարող է բան մը ընելու»:[41]

Միությունը՝ ի դեմս մի շարք հեղինակավոր գործիչների, որոնց թվին էր պատկանում եւ հոդվածի հեղինակ Միքայել Կյուրճյանը, դպրոցը դիտում էր որպես հայ ժողովրդի նոր սերնդի ոչ միայն կրթական, այլեւ բարոյական մակարդակի բարձրացման ամենակարեւոր միջոցը: Սակայն, ինչպես գրում էր նույն հեղինակը, «Ուսուցչութիւնը մեր մէջ տեսակ մը ապաստարան է, ուր կեանքի մէջ չի յաջողացներ, *ոաթենէր* կուգան իրենց ոչնչութիւնը, իրենց ապիկարութիւնը բուծանելու, ապրեցնելու ազգին ծախքովը, չարաչար օգտուելով նախնական կամ երկրորդական վարժարաններու մէջ իրենց սորուած եւ յաճախ չի սորուած ... հմտութիւնը»:[42] Սակայն հարցի արմատական լուծումը նա պատկերացնում էր յուրովի. «Միութեան ծախքով առնուազն յիսուն երիտասարդներ ուսուցչութեան պատրաստուին Եվրոպայի եւ Ամերիկայի համալսարաններուն մէջ», իսկ մինչ նրանք կավարտեին իրենց ուսումը, Միությունը «... կարող է գեթ երեք չորս վարժապետանոցներ հաստատել անմիջապէս Մայր երկրին մէջ ...»:[43] Այդ առիթով «Միութիւն» ամսագիրը հարկադրված էր անել հետեւյալ դիտողությունը՝ «Գեղեցիկ թելադրանք, բայց Միութեան ներկայ միջոցները բնաւ թոյլատու չեն անոր գործադրութեան: Հարկ պիտի ըլլար Միութեան տարեկան հիմնական եկամուտը ամբողջապէս յատկացնել այդ գործին»:[44]

Որակյալ հայ ուսուցիչներ անշուշտ կային՝ օրինակ, Կ.Պոլսում կամ Իզմիրում, բայց անիրատեսական էր սպասել, որ նրանք կհամաձայնվեին աշխատելու գնալ Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի հեռավոր գյուղերը: Փորձը վկայում էր, որ ազգային վարժարանների համար ուսուցիչներ անհրաժեշտ էր պատրաստել հենց տեղում՝ բուն Հայաստանի քաղաքներից մեկում, ուր հնարավոր կլիներ մշտապես համալրել վարժապետանոցի ուսուցչական կազմը եւ ուր ապագա ուսուցիչները, հաղորդակից դառնալով քաղաքային կյանքին, հնարավորություն կստանային բարձրացնել իրենց զարգացման ընդհանուր մակարդակը: Այդ բոլոր պահանջներին համապատասխանում էր Վան քաղաքը:

Գյուղական դպրոցների համեմատ վարժապետանոցի հիմնումը պահանջում էր դրամական մեծ միջոցներ՝ հատուկ շենքի կառուցում եւ կահավորում, ուսուցիչների վարձատրություն եւ այլն: ՀԲԸ Միությունը, հաշ-

վի առնելով թե իր բազմանպատակ ծրագրերը եւ թե հնարավորությունները, ի վիճակի չէր ապահովել պահանջվող միջոցներն ամբողջությամբ: Այնուամենայնիվ, նա ստանձնեց ծախսերի հիմնական մասը՝ դրանով իսկ քաջալերելով եւ խթանելով այլ կազմակերպությունների եւ անհատ մարդկանց մասնակցությունն ազգօգուտ այդ ձեռնարկին: Վերջինների շարքում առաջինն ու գլխավորը եղան Վանի բնակիչները, որոնք մեծ ոգեւորությամբ ընդունեցին իրենց քաղաքում վարժապետանոց հիմնելու լուրը եւ քաղաքապետ, Միության տեղական մասնաժողովի ատենապետ Պետրոս Գափամաճյանի գլխավորությամբ պարտավորվեցին սեփական միջոցներով կառուցել հատուկ մի շենք, որի շինարարությունը ավարտվեց 1913թ. նոյեմբերին: Իսկ մինչ այդ Վարժապետանոցը, ժամանակավորապես տեղավորվելով մեկ այլ շենքում, իր առաջին ուսումնական տարին սկսեց 1911թ. նոյեմբերին, երեսուն աշակերտներով: Երկու տարի անց Վարժապետանոցի երեք կարգի դասարաններում սովորում էր արդեն ավելի քան 60 աշակերտ: Վանի Վարժապետանոցը շատ շուտով դասվեց Արեւմտյան Հայաստանի տարածքում գործող ամենակարեւոր ուսումնական հաստատությունների շարքը: Եվ պատահական չէր, որ ֆրանսիական Ալիանս Ֆրանսեզ կազմակերպությունը եւ Ռուսաստանի դեսպանությունը որոշեցին Վարժապետանոցին հատկացնել դրամական վարկ, առաջինը՝ ֆրանսերենի եւ երկրորդը՝ ռուսերենի ուսուցման համար:

Ընդհանրապես, Վարժապետանոցի ուսումնական ծրագրի հարցը առաջին իսկ օրից ՀԲԸ Միության ուշադրության կենտրոնում էր: 1911թ. ընդհանուր ժողովում հատուկ նշվում էր. «Ուսումնական ծրագիրը, որ Կ. Պոլսի մէջ մասնագէտներու յանձնախումբի մը կողմէ պատրաստուեցաւ, հիմնուած է լուրջ եւ գործնական դաստիարակութեան մը վրայ, եւ բարեբախտաբար զերծ կացուցուած է խել մը խրթին եւ վերացական նիւթերէ՝ որ աւելի կը խճողեն տարրական ուսուցումը, փոխանակ անիկա ընելու միանգամայն դիւրատար եւ օգտակար»:[45] Ավելի ուշ հրապարակված Վարժապետանոցի հայտագրում հստակ ձեւակերպված էր նրա նպատակը. «1. Երկրորդական կրթութիւն, նկատի ունենալով երկրին պետական կրթական օրէնքն ու պահանջները, 2. Տեսական ու գործնական մանկավարժութիւն, 3. Գիւղատնտեսական կրթութիւն, նկատի ունենալով երկրին մշակման եւ երկրագործական պահանջքները»:[46] Այլ կերպ ասած, Վանի Վարժապետանոցը, պատրաստելով երկու տարբեր մասնագետներ՝ ուսուցիչներ եւ գյուղատնտեսներ, դրանով իսկ սկսեց իրագործել Միության ամենակարեւոր նպատակը՝ օժանդակել հայ ժողովրդի մտավոր եւ տնտեսական զարգացմանը:

Հանուն ազգային նոր գոյակերպի

Նույն այդ տարիներին Միությունը հանդես եկավ մեկ այլ, ոմանց համար անսպասելի դերում: Բանն այն էր, որ նրա առաջնորդները, կարեւորելով բոլոր տեսակի, այդ թվում՝ իրենց իսկ կողմից իրագործվող ծրագրերը, միեւնույն ժամանակ եկել էին այն համոզման, որ հայրենաբնակ հայության առաջընթաց զարգացումը մեծապես պայմանավորված է ժողովրդի բարոյահոգեբանական առողջացումով, նրանով, թե կկարողանա արդյոք ժողովուրդը հաղթահարել, ազատվել իր նկարագրի այն բացասական հատկություններից, որոնք կիսաստրկական գոյավիճակի արդյունք էին վերջին մի քանի դարերի ընթացքում:

Ազգային գոյակերպի ինքնավերլուծության դժվարին, բայց եւ անհրաժեշտ օրինակներից էր Մ.Կյուրճյանի «Ինչ որ ունինք եւ ինչ որ կը պակսի մեզի» հոդվածը: «Ինչպէս կ'ըլլայ - հարց էր տալիս հեղինակը,- որ մտաւորական արտակարգ ձիրքերով օժտուած լինելով հանդերձ, մեծամասնութեամբ չյաջողածներու ժողովուրդ մըն ենք, ինչպէս որ ազգային-քաղաքական տեսակէտով գրեթէ միշտ ձախողած ազգութիւն մը եղած ենք»: Եվ ահա թե ինչպիսին է նրա պատասխանը. «Պատճառը ուրիշ բան չէ բայց եթէ մեր նկարագրի տկարութիւնը կամ չգոյութիւնը, մեր կամքին հիւանդութիւնը, անարիւնութիւնը, մեր կենսական կորովին աղքատութիւնը: ...Ի մեզ՝ մտաւորականին եւ բարոյականին միջեւ ներդաշնակութիւն, համերաշխութիւն չի կայ. առաջինը գերակշիռ է երկրորդի վրայ. աւելի ճիշտ պիտի ըլլայ ըսել թէ կ'իշխէ միահեծան: Միտքով զարգացած անհատներ շատ ունինք բայց միեւնոյն ատեն նկարագրով կամ բարոյապէս զարգացած անհատներ շատ քիչ... Ասոր համար է որ հասարակական, ընկերակցական կեանքի այնքան անյարմար ենք... Մեր խելացիութիւնը արդարեւ մեզի շատ շատ կրնայ տալ. յանձնապաստանութիւն մը, ծայրահեղ հաւատք մը մեր կարծիքներուն ճշտութեանը, մեր անսխալականութեանը վրա, ինչ որ մեզ անկարող կը դարձնէ կարգապահ համերաշխ գործունէութեան եւ կը մղէ մեզ աւելի «գործ աւրելու»: Եթե ունենայինք *նկարագրի ուժ, բարոյական զգացում*, պիտի գիտնայինք թէ ամէնէն գեղեցիկ յաղթանակները անոնք են զորս մարդ կը տանի ինքզինքին վրայ, իր անձնական գաղափարներուն, համակրութիւններուն եւ հակակրութիւններուն վրայ՝ ի սէր հասարակաց շահու մը, հանրային ձեռնարկի մը...»:[47]

Սա միակ հոդվածը չէր տվյալ հարցի շուրջ. նույն 1912թ. ՀԲԸՄ-ի նորաստեղծ «Միութիւն» ամսագրի բազմաթիվ հոդվածներում սոցիալ-հոգեբանական, քաղաքագիտական, բարոյագիտական վերլուծության էր

ենթարկվում հայ ժողովրդի ու անհատի նկարագիրը: Ահա այդօրինակ հոդվածներից մի քանիսի վերնագրերը. «Դէպի ազնուացում», «Ես-ի ըմբռնումը», «Հայուն միտքը», «Մեր նկարագիրը», «Գաւառի ցաւերէն» եւ այլն: Միության ուշադրությունը նման հարցերի հանդեպ պատահական չէր. դրա անհրաժեշտությունը գիտակցում էին շատերը՝ թե՛ անհատներ եւ թե՛ որոշ ազգային կազմակերպություններ: Սակայն չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ ՀԲԸ Միությունն այն քչերից էր, որ ոչ միայն խոսեց ու գրեց, այլեւ գործեց: Առաջին անգամ է, որ ազգային կազմակերպությունը հայտարարում էր, թե «... իր կազմին ու գործելակերպին մէջ, չընդունիր ոեւէ խտիր, ըլլա՛յ սեռի, ըլլա՛յ կրօնքի, ըլլա՛յ համոզումի: Ամէն հայ, առանց բացառութեան, կրնայ անդամ ըլլալ այն մեծ ընտանիքին, որ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութիւն կը կոչուի, ո՛ր դասակարգին կամ կուսակցութեան ալ պատկանի: Միութիւնը մէկ պայման ունի՝ հայ ըլլալ»:[48]

Ժողովրդին միաբանելու, նրա ողջ ներուժը համազգային նպատակներին ծառայեցնելու սկզբունքի իրականացման օրինակ կարող է ծառայել Միության դիրքորոշումը հայ եկեղեցիների հանդեպ: XX դ. սկզբին, երբ հիմնադրվեց Միությունը, Հայ Առաքելական եկեղեցու կողքին գործում էին նաեւ Հայ Կաթոլիկ եւ Հայ Ավետարանական (բողոքական) եկեղեցիները:

Հայոց պատմության ամենակարեւոր թվականներից է 301թ., երբ Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Եթե ընդունման պահին քրիստոնեությունը կոչված էր պաշտպանել հայերի ազգամշակութային անբողջականությունն ու յուրահատկությունը պարսկական մշակույթի կողմից սպառնացող հնարավոր ձուլումից, ապա հետագայում՝ պետականության կործանումից հետո, նա դարձավ ըստ էության ամենաազդու ազգապաշտպան միջոցը ընդհանրապես: «...Հայոց ազգային եկեղեցին եղած է այն միակ յոդակապը, որ Հայկայ սերունդին ցրուած մնացորդները կրցած է իրարմէ անքակտելի պահել, եւ իբրեւ մէկ ազգ պահպանել,... եկեղեցւոյ շնորհիւ է, որ Հայութիւնը մնացած է իբր հատուկ եւ ինքնուրոյն մարմին մը, որ դարերու այլայլութեանց եւ արկածներու բռնութեանց ներքեւ ալ, ինքն իր մէջ շարունակելով միշտ նոյն մնացած է»:[49] Մաղաքիա արք. Օրմանյանի այս խոսքերը ճշմարտացիորեն արտացոլում են Հայ Առաքելական եկեղեցու բախտորոշ դերը երկար դարերի ընթացքում, որի արդյունքում էլ հայերի ազգային ինքնագիտակցության մեջ հայ լինելը նույնացվեց Հայ Առաքելական եկեղեցուն պատկանելու հետ: Նման պայմաններում բնական է, որ դավանափոխությունը նույնիսկ քրիստոնեության համակարգում սկսեց դիտվել որպես

ազգային շահերին, ազգամշակութային ավանդությանը հակառակ մի երեւույթ:

Հայ Առաքելական եկեղեցու հակադրությունը Հայ Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիներին առավել հստակորեն դրսեւորվեց XIX դ. առաջին կեսին, երբ Օսմանյան կառավարությունը կազմավորեց կաթոլիկների եւ ավետարանականների՝ բոլորովին անջատ եւ անկախ համայնքներ (միլլեթ): «Այս երկու անջատուած մասերը՝ քաթոլիք եւ փրոթէսթան հասարակութիւնները, թէպէտ հիմնապէս հաւատոյ դաւանութեան տեսակէտէն կազմուած էին առանց ցեղի կամ ազգի տարբերութեան, բայց երկուքն ալ մեծամասնութեամբ հայերէ կազմուած եղան, անջատուած հայ հասարակութիւններ ըլլալու չափ»,- նշում է Մ. Օրմանյանը եւ այնուհետեւ այսպես է արժեւորում նրանց դերը. «Մենք չենք վարանիր յայտարարել, որ եթէ այդ անջատումները մէկ կողմէ հայութիւնը տկարացուցին, անոր մէջ ներհակ շահեր ստեղծելով եւ միութեան ոյժը կոտրելով, միւս կողմէն անուղղակի կերպով Արեւմտեան աշխարհի հետ յարաբերութիւններն ընդարձակելու առիթ ընծայեցին, երբ տակաւին այդ յարաբերութիւնները շատցնելու միջոցները նուազ էին»:[50]

XX դ. սկզբներին հայ առաքելական, կաթոլիկ եւ ավետարանական համայնքները շարունակում էին գործել որպես ինքնուրույն, իրարից անջատ միավորներ: Եվ չնայած հայ կաթոլիկ եւ ավետարանական համայնքների ընդհանուր թվաքանակը չնչին էր առաքելականի համեմատ, այնուամենայնիվ, եկեղեցական նման պառակտումն ու փոխադարձ անհանդուրժողականությունը (իր ամենածայրահեղ դրսեւորումներով) եւս մեկ լուրջ խոչընդոտ էր հավաքական ազգային գործունեության համար: Չպետք է մոռանալ, սակայն, որ արդեն XIX դ. երկրորդ քառորդին նշված անհանդուրժողականությունն ազգային կյանքում դեմ առավ բացասման մի այնպիսի լուրջ գործոնի, որպիսին էր դավանական հակասություններից վեր կանգնած համագործակցության գաղափարախոսությունը: Այն իր արտացոլումը գտավ, թեեւ ոչ տեւական ժամանակով, Կ.Պոլսի «Համազգայաց» ընկերության (1846-1852) գործունեության մեջ, երբ նշված նպատակի համար համախմբվել էին հայադավանները ու հայ կաթոլիկները (այս փաստի վրա հեղինակի ուշադրությունն է հրավիրել պատմաբան Ալբերտ Խառատյանը):

Այս տեսակետից խորհրդանշական իմաստ էր ստանում այն, որ ՀԲԸ Միության հիմնադիրներից մեկը եղավ Ցագուպ Արթինը՝ Կահիրեի հայ կաթոլիկ համայնքի առաջնորդը: Հետագա տարիների ընթացքում հայ եկեղեցական համայնքների համագործակցությունը եւ գործոն մասնակցությունը Միության գործունեությանը դարձավ իրականություն: 1912թ.

Ե. Աղաթոնը, հասկանալի հպարտությամբ ընդգծելով հայ իրականության համար այդ աննախադեպ երեւույթը, նշում էր, որ Միությունը «...իր 100-ի մոտ մեծ ու փոքր մասնաժողովներուն մէջ ունի կաթոլիկ եւ բողոքական վարիչներ: Գահիրէի Կեդր. Վարչ. Ժողովին երկրորդ ատենապետն է Վսեմ. Եագուպ Արթին փաշա, ինչպէս խորհրդականներէն մին է Տիար Տիրան Փիլիպոսեան, որ մեր գաղութին ականաւոր կաթոլիկներէն են. Հալէպի մասնաժողովին ատենապետն է Տոքթ.Ծմաւոնեան, Խարբերդի մասնաժողովին ատենապետն է Բրոֆ. Նիկ.Թէնէքէճեան, Սոֆիայի մասնաժողովին ատենապետն է Պատ.Շահվէրտեան, պատուական բողոքական հայեր: Վիեննայի մասնաժողովին ատենապետն է Գեր. Հ.Գաբրիէլ վրդ. Մէնէվիշեան, որ Մխիթարեան վանքին էն նշանաւորներէն է: Այս թուարկումը երկար պիտի ըլլար, բայց յիշենք վերջապէս Կ. Պոլսի Մասնաժողովին գանձապետ Տ. Արտաշէս Հիւրմիւզ, պատուական կաթոլիկ հայ մը եւ խորհրդականներէն Տ. Վահան Մատթէոսեան, սիրուած բողոքական հայ մը»:[51]

Այլադաւան հայերի հանդեպ խտրականությունը մերժելու, նրանց բոլորին, առաջին հերթին՝ որպես հայ ազգի զաւակներ ճանաչելու սկզբունքի դրսեւորումն եղան ՀԲԸ Միության նպաստները կաթոլիկ եւ ավետարանական հաստատություններին: Այսպես, 1912-1913թթ. ընթացքում նպաստներ էին հատկացվել Քեսաբի, Պիրեճիքի հայ ավետարանական վարժարաններին, Քիլիսի, Պեյլանի, Մերտինի, Մարաշի հայ կաթոլիկ վարժարաններին, Վիեննայի Մխիթարյան միաբանության Կարինի վարժարանին եւ այլն:[52]

Հարկ է նշել, որ նշված ժամանակաշրջանում թե հայ կաթոլիկները եւ թե հայ ավետարանականները հանուն ինքնահաստատման ձգտում էին առավելագույնս ընդօրինակել իրենց օտարազգի համադավանների հոգեւոր եւ աշխարհիկ արժեքները, ինչը, բնականաբար, խիստ բացասական էր ընկալվում հայերի բացարձակ մեծամասնության կողմից: ՀԲԸ Միության գործիչները քաջ գիտակցում էին այդ ամենը եւ իրենց մի շարք հրապարակումներով ձգտում էին «եղբայրութեան եւ համերաշխութեան զգացումներ» հաստատել երեք հարանվանությունների միջեւ: Այդ շարքի հոդվածներից ծրագրային նշանակություն եւ իմաստ ուներ Ե.Աղաթոնի վերոհիշյալ հոդվածը, ուր նա, դիմելով հայ առաքելականներին, գրում էր. «...սիրեցէք ձեր հայ կաթոլիկ եւ բողոքական եղբայրները, նոյն իսկ, եթէ անոնք ձեզմէ հեռու փախչին՝ դուք անոնց մօտեցէք. մի՛ մոռնաք որ միեւնոյն ազգին զաւակներն էք»: Եվ շարունակում էր. «Լաւ գիտեմ որ կան քաղաքներ ուր հայ կաթոլիկը հայութիւնը չընդունիր, «Ես Լատին եմ, Հայ չեմ» կ'ըսէ. ատիկա տգիտութեան հետեւանք է... այն կաթոլիկը որ իր

ազգային լեզուն կը խօսի եւ կը գրէ, միշտ հայ կաթոլիկ կը մնայ. բայց այն հայ կաթոլիկը որ հայերէն չի գիտեր, փոխանակ մինչեւ վերջը, որդւոց որդի, հայ կաթոլիկ մնալու, իր պատկանած փարախէն կը բաժնուի շուտով եւ կ'օտարանայ, կը լատինանայ: Ո՞վ չի գիտեր Սուրիոյ լատինացած հայ կաթոլիկներու ցաւալի վախճանը. անոնք ամբողջ հայութեան համար կորսուած են»: Այնուհետեւ դիմում էր ավետարանականներին. «Իսկ դուք, մեր պատուական հայ բողոքական եղբայրները, դուք ձեր պապենական լեզուն կսիրէք ... բայց ատիկա բաւ չէ, սիրեցէք նաեւ ձեր լուսաւորչական (առաքելական-Էդ.Մ.) եւ կաթոլիկ եղբայրները, մոտեցէք անոնց... Ժողովարանէն դուրս հայու խտիր պէտք չէ գոյութիւն ունենայ: Մի մոռնաք որ ամէն բանէ առաջ հայ էք»:[53]

Բնական է, որ Միության ձգտումը՝ որակապես նոր փոխհարաբերություններ հաստատել հայ եկեղեցիների միջեւ եւ դրանով իսկ ապահովել ընդհանրապես ողջ հայ ժողովրդի միասնականությունը, կապված էր մեծ եւ բազմաթիվ դժվարությունների հետ, որոնց հաղթահարումը ժամանակ էր պահանջում: Իսկ այն մի քանի տարիները (մինչեւ 1915թ.), որ հայերը շարունակեցին ապրել իրենց հայրենիքում, բնավ բավարար չէին այդ գաղափարների իրականացման համար: Ինչ վերաբերում է սփյուռքի հայությանը, ապա, ինչպես դա ցույց կտրվի հետագա էջերում, բարեկամական եւ գործնական հարաբերությունները երեք հայ հարանվանությունների միջեւ, ի վերջո, դարձան հայ համայնքների բնութագրական հատկանիշներից մեկը:

ՀԲԸ Միությունը, իր առջեւ դնելով հայ մարդու նոր նկարագրի կերտման, խտրականության մերժման, հայ ժողովրդի մտավոր եւ նյութական կարողությունների համախմբման նպատակները, հանդես էր գալիս ոչ միայն որպես զուտ բարեգործական կազմակերպություն, այլ նաեւ որպես ռահվիրա՝ հայ ժողովրդի հոգեւոր նկարագրի առողջացման, բարելավման գործում: Իսկ թե որքանով արդյունավետ կլիներ Միության նման գործունեությունը՝ դա մեծ չափով կախում ուներ նրա տեղական մասնաճյուղերից:

Մասնաճյուղերն էին, որ, առաջնորդվելով «Միութիւնը զօրութիւն է» նշանաբանով, ամեն մի տվյալ վայրի, քաղաքի կամ երկրի հայության համար պետք է ծառայեին որպես օրինակ նման համազգային վարքագծի, համազգային մտածելակերպի: «Մասնաճիւղերը այն կազմն են որով Միութիւնը կապուած է հայ զանգուածին,-նշվում էր «Ոսկեմատեան»-ում,-անոնց միջոցաւ է որ ամէն անդամ կը զօդուի ընդհանուր ընկերակցութեան եւ, իր չափով, կ'օժանդակէ անոր բարձրագոյն իտէալներուն իրականացման... Ամէն մասնաճիւղ ազգային կորիզ մը եղած է, եւ անոր

մէջ իւրաքանչիւր անդամ՝ միութիւն (unite՛) մը ընդհանուր միութեան (union) համար, օղակ մը որով զօդուած է նոյն իտէալները եւ նոյն սկզբունքները ունեցող իր հայրենակիցներուն, աշխարհի որ կողմն ալ գտնուին»:[54]

Եվ հասկանալի է, թե որքան կարեւոր էին մասնաճյուղերի առաջնորդների եւ անդամների ճիշտ ընտրությունը, նրանց՝ Միության գաղափարներին նվիրվածության աստիճանը, նրանց անձնական նկարագիրն ու գործնական կարողությունները: Գիտակցելով հարցի կարեւորությունը՝ Միության ղեկավարությունը ձգտում էր մշտական կապի մեջ լինել մասնաճյուղերի հետ, ճիշտ ուղղություն տալ նրանց աշխատանքին, հաղորդակից դարձնել Միության գաղափարներին ու նպատակներին: Դա դժվար գործ էր՝ հաշվի առնելով թե տեղական մասնաճյուղերի օրեցօր աճող քանակը եւ թե նրանց գործառումը հեռավոր վայրերում: Այդ առումով շատ կարեւոր եղավ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության որոշումը «Միութիւն» վերնագրով պաշտոնաթերթի հրատարակման մասին: «Միութիւն» ամսագրի առաջին համարը հրատարակվեց 1912թ. հունվարին, Կահիրեում: Անդրանիկ համարի առաջաբանում Պողոս Նուպարը հատուկ նշում էր. «Միութիւնը» ...պիտի ըլլայ նաեւ տեղեկութեանց միջնորդ մը, Հայկական Միութեան անդամներուն ծանօթացնելու համար մեր ընկերութեան գլխաւոր գործողութիւնները. անիկա պիտի հրատարակէ անդամագրական ցուցակները, հաշուեկշիռները եւ այլն: Մէկ խօսքով, այս թերթը պիտի ըլլայ տեսակ մը միութեան գիծ՝ Կեդր. Վարչ. Ժողովին եւ Միութեան անդամներուն միջեւ, որ այսպէսով մօտէն իրազեկ պիտի ըլլան իրենց ընկերակցութիւնը շահագրգռող բոլոր կարեւոր գործողութեանց: Հարկ է արդարեւ որ անոնք կանոնաւորապէս իմանան ինչ որ պիտի կատարուի, մանաւանդ՝ գիտնան թէ մեր տրամադրութեան ներքեւ դրուած բոլոր հասոյթները ինչպէս կը գործածուին եւ վերջապէս՝ մեզի վստահած վարչութեան մասին տեղեկութիւն ստանան օրը օրին»:[55]

Այս ձեւով է, որ նորաստեղծ ամսագիրը պետք է նպաստեր Միության ինքնահաստատմանը, խթաներ նոր մասնաճյուղերի ստեղծումը, նոր անդամների հավաքագրումը, նրանց բոլորի հավատարիմ եւ անշահախնդիր ծառայությունը Միության նպատակներին: Սակայն Միությունը, մտադիր չլինելով, ինչպես նշվեց, սահմանափակվել լոկ բարեգործական գործունեությամբ, համապատասխան ձեւով էր պատկերացնում նաեւ իր ամսագրի անելիքները: «Գրագէտը շինարար ճշմարտութիւններն ու ստեղծագործ գեղեցկութիւնները պիտի տարփողէ հոս,- ասվում էր ամսագրի առաջին համարում,- հրապարագիրը հայ կեանքի խաղաղ

(! - Էդ.Մ.) զարգացման երեւոյթները պիտի վերլուծէ եւ ընկերային-բարոյական բնաշրջանը պիտի ուսումնասիրէ, գիտնականը՝ տնտեսական, գիւղատնտեսական, առողջապահական ու այլ պիտանի գիտելիքներ պիտի սորվեցնէ ուսումնագուրկ շինականին... եւ ամենքը մէկ պիտի կազմեն հոգեցունց համերգը հայ մտքի եւ կեանքի վերածնութեան»: «Գրագէտների» համար այս ոգեւորիչ խոսքերից հետո հետեւում էր, սակայն, այժմեական հնչող զգուշացումը. «Գրական տիլեթանթիզմը մշակելու չէ որ պիտի ձգտին հոս բոլոր անոնք որ իրենց գրիչն ի սպաս պիտի դնեն «Միութիւն»-ին»:[56]

Ահա նման կարեւոր եւ միեւնույն ժամանակ տարբեր նպատակների պետք է ծառայեր «Միութիւն» պաշտոնաթերթը: Եվ սկսած առաջին իսկ համարից, ամսագիրը ապահովեց ՀԲԸ Միության կենտրոնի մշտական կապը անդամների հետ՝ տպագրելով բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր (արձանագրություններ, շրջաբերականներ եւ այլն), անդամների, նվիրատուների ու բարերարների, մասնաժողովների վարչությունների ցուցակներ, նամակներ ու նմանատիպ այլ նյութեր:

Ծատ ավելի դժվար էր երկրորդ նպատակի իրագործումը եւ պետք է ենթադրել, որ ժամանակակիցներից քչերն էին հավատում, որ ամսագիրը կկարողանա պատշաճ մակարդակով քննարկել վերոնշյալ հարցերը: Բայց, ինչպես այդ նույն առիթով գրել էր Պողոս Նուպարը, տաղանդները «...փառք Աստուծոյ, մեր ազգին մէջ չեն պակսիր»:[57] Ազգային նկարագրի տարբեր կողմերի վերլուծությանը նվիրված հոդվածների մասին արդեն խոսվեց, նշեմ միայն նրանց արդիական լինելը նույնիսկ այսօրվա ընթերցողի համար: Դրա հետ մեկտեղ, ամսագիրը, ինչպես եւ խոստացվել էր, համարից համար տպագրում էր հատուկ հոդվածներ «Առողջապահական նօթեր», «Հողատնտեսական բաժին», «Մանկավարժին սիւնակը» խորագրերով: Այս հոդվածներում, որ նույնպես գրված էին մասնագետների կողմից, գործնական տեղեկություններ եւ խորհուրդներ էին տրվում հատկապես հայ գյուղացուն՝ նրա կենցաղը առողջացնելու, աշխատանքը առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Հարկ է նշել, որ այդ հոդվածները կարեւոր են այսօրվա պատմաբանի համար եւս: Նրանց շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել XX դ. սկզբների արեւմտահայ գյուղացու առօրյա կյանքը, մասնավորապես, ամենատարածված հիվանդությունները, օգտագործվող դեղամիջոցները, հողագործության եւ անասնապահության զարգացման աստիճանը եւ նման այլ հարցեր:

«Բարենորոգումների» հեռանկարը

1914թ. ապրիլին լրացավ ՀԲԸ Միության գոյության ութերորդ տարին: Նույն թվականի մայիսի 14-ին Կահիրեում հրավիրվեց հերթական Ընդհանուր ժողովը, ուր ելույթ ունեցավ նախագահ Պողոս Նուպարը: Ժողովը ընթացավ խանդավառ մթնոլորտում՝ ՀԲԸ Միությունը դարձել էր հայկական ամենախոշոր բարեգործական կազմակերպությունը: Նա ուներ 142 մասնաճյուղ, որոնցից 59-ը գործում էին Օսմանյան կայսրության տարածքում (հիմնականում Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում), 54-ը՝ ԱՄՆ-ում եւ Արգենտինայում, 25-ը՝ Եվրոպայում (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Ռումինիա, Բուլղարիա, Գերմանիա, Շվեյցարիա եւ այլն), 4-ը՝ Աֆրիկայում (Եգիպտոս, Եթովպիա եւ այլն), իսկ Միության անդամների թիվը կազմում էր 8533 մարդ: 1914թ. սկզբներին Միությունը ուներ 41 սեփական կրթական հաստատություն. Վանի Վարժապետանոցը, Տյորթ-Ցոլի Քէլէկեան որբանոց-վարժարանը, Մյուֆարդինի Կեդրոնական բարձրագույն նախակրթարանը (հիմնվել էր 1913թ.) եւ 38 նախնական վարժարան, որոնցից 27-ը՝ Արեւմտյան Հայաստանում եւ 11-ը՝ Կիլիկիայում: Միությունը իր դրամական միջոցների մշտական հավելմանը զուգընթաց, տարեցտարի ավելի խոշոր գումարներ էր հատկացնում տարբեր՝ կրթական, հողագործական, առողջապահական եւ այլ ծրագրերի իրագործման համար: Ըստ 1914-1915թթ. տեղեկագրի, սկսած 1906թ. եւ մինչեւ 1915թ. վերջը, Միությունը «...իբրեւ նպաստ գործածած է շուրջ մէկ միլիոն եւ 140.000 ֆրանք»:[58]

ՀԲԸ Միությունը սերտորեն համագործակցում էր մի շարք ազգային կազմակերպությունների հետ՝ Միացյալ Ընկերություն, Դպրոցասեր Տիկնանց Ընկերություն, Ազգանվեր Հայուհյաց Ընկերություն, Կահիրեի Միացյալ Որբախնամ Ընկերություն, Փարիզի Ուսումնասիրաց Ընկերություն, Պրովիդենսի Տաղնիսարի Ուսումնասիրաց Ընկերություն եւ այլն: Հայ Առաքելական, Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիները ոչ միայն խրախուսում եւ օժանդակում էին Միության գործունեությունը, այլեւ հաճախ նախաձեռնում էին նոր մասնաճյուղերի կազմակերպումը, ինչպես Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի գյուղական վայրերում, այնպես էլ արտերկրում: Միության հեղինակության մասին էր վկայում նաեւ օտարերկրյա նմանատիպ միությունների եւ դեսպանությունների կողմից ցույց տրվող նյութական եւ բարոյական օժանդակությունը:

Ժողովականների խանդավառությունն ու ոգեւորությունը ուներ եւս մեկ, այդ օրերին գուցե եւ առավել կարեւոր պատճառ: Դա 1914թ. հունվարի 26-ին (փետրվարի 8-ին) Ռուսաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների կողմից ստորագրված բարենորոգումների ծրագիրն էր, որը պետք է իրականացվեր Արեւմտյան Հայաստանի 6 նահանգներում:

1912-1913թթ. Բալկանյան պատերազմներում պարտություն կրած Օսմանյան կայսրությունը ստիպված եղավ վերջնականապես եւ գրեթե ամբողջովին հետ քաշվել Եվրոպայից: Եվրոպայի մեծ պետությունների համար այլեւս ակնհայտ էր Օսմանյան կայսրության հետագա քայքայումը: Բայց թե երբ եւ ինչպես կկատարվեր այդ քայքայումը, թե ազատագրված երկրները նրանցից որի ազդեցության տակ պետք է գտնվեին, այս եւ նման այլ հարցերի լուծումը կախում ուներ նույն այդ պետությունների քաղաքական եւ տնտեսական շահերից ու նպատակներից: Ռուսական կայսրությունը նույնպես ձգտում էր առավել մեծ օգուտ քաղել ստեղծված իրավիճակից: Հայտնի էր, որ Ռուսաստանի քաղաքականության գլխավոր նպատակներից էին Կ.Պոլիսը եւ Մեծ նեղուցները: Եթե սա հիմնապատակն էր, ապա այն իրագործելու միջոցներից մեկը, գուցե եւ ամենահարմարը Հայկական հարցն էր, որը դարձել էր Ռուսական կայսրության արեւելյան քաղաքականության կարեւոր խաղաքարտը, որը եւ նորից հրապարակ հանվեց 1912-1913թթ.: Արտաքուստ նախաձեռնող կողմը հայերն էին, որոնք Գեւորգ Ե կաթողիկոսի եւ Կովկասի փոխարքա Ի.Վորոնցով-Դաշկովի միջոցով 1912թ. դեկտեմբերին դիմեցին Նիկոլայ II կայսրին, որպեսզի նա իր հովանավորության տակ առներ Թուրքիայի բազմատանջ հայ ժողովրդին: Միաժամանակ, եվրոպական երկրների աջակցությունը նույնպես ապահովելու նպատակով որոշվեց հատուկ մի պատվիրակություն ուղարկել Փարիզ, որը կաթողիկոսի առաջարկով գլխավորեց Պողոս Նուպարը:

Պողոս Նուպարի ընտրությունը, որպես Ազգային պատվիրակության նախագահի, պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Լեւոն Զորմիսյանը այդ առիթով գրում էր. «Նախ իր հօր՝ Նուպար փաշայի անուան միջազգային համբաւը եւ հեղինակութիւնը, իբրեւ Եգիպտոսի վարչապետի: Ունեցած պատկառելի հարստութիւնը, որուն մէկ մասը ի պահանջել հարկին կրնար տրամադրել իրեն վստահուած պաշտօնին յաջող իրագործման: Երկրորդ՝ իբրեւ հիմնադիր եւ նախագահ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, որուն 1906-էն ի վեր կատարած բարեսիրական ձեռնարկները եւ իբրեւ անձեռնմխելի գումար պահած դրամագլուխը, հայ իրականութեան մէջ ամէնէն արդիւնաւոր կազմակերպութիւնը դարձուցած էին: Վերջապէս Եվրոպական - մասնաւորաբար ֆրանսական եւ անգլիական - ելեւմտական, տնտեսական, քաղաքական եւ մտաւորական շրջանակներու հետ ունեցած ծանօթութիւնները եւ յարաբերութիւնները, որոնք կրնային մեծ չափով դիւրացնել իր աշխա-

տանքները: Չունէր նաեւ անյարմարութիւնը թրքահպատակ կամ ռուսահպատակ ըլլալու, հետեւաբար այդ երկու պետութիւններուն հանդէպ ալ ազատ դիրք մը ճշդելու եւ այդ կերպով Եվրոպացիներու կողմէ իր անձին վրայ կասկածանք չհրաւիրելու առաւելութիւնը կը ներկայացնէր: Պօղոս Նուպար ճարտարագէտ եղած է եւ վկայուած Բարիզի Ecole Central բարձրագոյն վարժարանէն եւ շինարարական ուշագրաւ ձեռնարկներ կատարած է Գահիրէի, Աղեքսանդրիոյ եւ ընդհանրապէս Եգիպտոսի մէջ: Միաժամանակ մտաւորական լայն եւ բազմակողմանի զարգացում ունեցած է, քաջահմուտ ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներու: Հիւրասիրած է, օրերով եւ շաբաթներով, Եգիպտոս այցելող քաղաքական դէմքեր, գրագէտներ, որոնցմէ արժէ յիշել Բիէռ Լոթին եւ Ժօրժ Քլէմանսօն: Այս վերջինին եւ Բուանքաուէի ու Վիքթոր Պէռառի, ինչպէս նաեւ այլ անձնաւորութիւններու հետ ունեցած լաւ յարաբերութիւնները դիւրացուցած են իր դիւանագիտական դիմումները»:[59]

Իսկ ինչո՞վ էր պայմանավորված Պողոս Նուպարի համաձայնությունը՝ գլխավորել Ազգային պատվիրակությունը: Այս հարցը պատահական չէ, հաշվի առնելով, որ նա արդեն երկար տարիներ գիտակցաբար եւ հետեւողականորեն հեռու էր պահում իրեն՝ մի կողմ մնալով քաղաքական գործունությունից: Անշուշտ, նա քաջ գիտակցում էր իր այն արժանիքներն ու կարողությունները, որոնք եւ պայմանավորել էին կաթողիկոսի ընտրությունը, անժխտելի էր նաեւ ազգին ծառայելու պատրաստակամությունը, որի ապացույցն էր ՀԲԸ Միության ստեղծումն ու գործունեությունը: Բայց կար եւս մեկ՝ անձնական բնույթի շարժառիթ: Ինչպես վերը նշվել էր, ժամանակին մերժվել էր իր հոր՝ Նուպար փաշայի առաջարկը՝ գլխավորել Բեռլինի վեհաժողովին մասնակցող հայկական պատվիրակությունը: Եվ ահա՝ 35 տարի անց նման մի պատվիրակություն գլխավորելու առաջարկ էր արվում արդեն իրեն: Դրանով իսկ, հաջողության դեպքում Պողոս Նուպարի առաքելությունը, ամեն բանից զատ, կունենար որոշակիորեն անձնավորված խորհրդանշական իմաստ:

Կաթողիկոսի կոնդակը Պողոս Նուպարը ստացավ Փարիզում, որը եւ դարձավ Ազգային պատվիրակության կենտրոնատեղին: Նա անմիջապես ձեռնամուխ եղավ պատվիրակության կազմակերպմանը, որին անդամակցեց իր հրավերով Միության եւս մեկ հիմնադիր անդամ՝ Ցագուպ Արթինը: Պողոս Նուպարը բազմաթիվ հանդիպումներ ունեցավ տարբեր երկրների պետական գործիչների, ինչպես նաեւ ֆրանսիական եւ անգլիական ազդեցիկ թերթերի խմբագիրների, անվանի գիտնականների եւ գրողների հետ: 1913թ. փետրվար եւ մարտ ամիսներին նա, որպես պատվիրակության նախագահ, երկու ընդարձակ շրջաբերականներ ուղղեց

տարբեր երկրների դիվանագիտական ծառայություններին, որոնցում հիմնավորում էր բարենորոգումների ծրագրի իրագործման կենսական անհրաժեշտությունը թե հայ ժողովրդի եւ թե հենց իսկ եվրոպական պետությունների համար, հիշեցնելով, որ «...Պալքանեան պատերազմը ծագեցաւ Պեռլինի դաշնագրին Մակեդոնիոյ մասին արձանագրած 23-րդ յօդուածին անգործադրելի մնալուն հետեւանքով»:[60] Միեւնույն ժամանակ, գիտակցելով, որ եվրոպական պետությունները որոշակի վերապահությամբ են մոտենում բարենորոգումների իրագործմանը, քանի որ դա կարող էր հանգեցնել հայկական շրջանների անջատմանը Թուրքիայից եւ միացմանը Ռուսաստանին, նա նույն 1913թ. հունիսին արտասանած իր մի ճառում վստահեցնում էր. «Մեր Ասիոյ հայրենակիցներուն բախտը կապուած է կայսրութեան բախտին հետ: Հայերը կ'ուզեն Օսմանցի մնալ, պայմանաւ որ յարգուի իրենց կեանքը, չբռնաբարուին իրենց կիներն ու աղջիկները, թալանի չտրուին եւ յափշտակուին իրենց ինչքը եւ կարենան ապրիլ եւ աշխատիլ խաղաղութեան մէջ...»:[61]

Պողոս Նուպարի այս խոսքերը, կարծես, ուղղված էին նաեւ թուրքական իշխանություններին, որոնք խիստ անհանգստացած էին իրենց պարտադրած բարենորոգումների ծրագրով: Ռուսական ազդեցիկ «Նովոյե վրեմյա» թերթը դեռ 1913թ. մայիսին գրում էր, թե որքան ավելի տերությունները կպնդեն բարենորոգումների կատարման վրա, այնքան ավելի իր հայրենիքի համար բարիք ցանկացող յուրաքանչյուր թուրք ավելի կճնշի եւ կկործանի հայերին:[62]

Դեպքերի հետագա ընթացքը կանխելու, Թուրքիայի մեջ վստահություն առաջացնելու նպատակ ունեին նաեւ Պողոս Նուպարի հետեւյալ արտահայտությունները. «...Բարենորոգումներու գործադրութիւնը Հայկական նահանգներուն մէջ հարկաւորապէս պիտի ստեղծէ իրաց նոր կացութիւն մը. թէ՝ խղճալի եւ խռովայոյզ վիճակին որ կը տիրէ այժմ, պիտի յաջորդէ ապահովութեան եւ ներքին հանդարտութեան թուական մը, թէ՝ զեղծումները ու անարդարութիւնները վերջ պիտի գտնեն եւ Հայերը պիտի կրնան խաղաղութեամբ աշխատիլ եւ իրենց աշխատանքին պտուղը վայելել: ...Մեր հայրենակիցները՝ բոլոր օսմանցիներուն հետ համերաշխաբար՝ պիտի աշխատին բնական հարստութեանց զարգացումին եւ երկրին բարգաւաճումին, ու ատով իսկ ընդարձակ սահմանի մը մէջ պիտի աջակցին Պետութեան (այսինքն՝ Թուրքիայի- Էդ.Մ.) զօրացումին եւ վերականգնումին»:[63]

1914թ. մայիսին կայացած ՀԲԸ Միության ընդհանուր ժողովում իր արտասանած ճառում նա ասում էր. «...Պետութեան վերականգնումին եւ ամրապնդումին համար մեր բարենորոգումներուն կարեւորութեանը գի-

տակից, Բ Դուռը լրջօրէն որոշած է լիովին գործադրել եւ անոնց յաջողութիւնը ապահովել: Անձնապէս այնքան աւելի բարեբախտ կը սեպեմ ինքզինքս այդ բանը հաստատելով, որ ատոր մէջ արդարացումը կը գտնեմ այն վստահութեան, զոր մեր վաստակալից բանակցութեանց միջոցին երբեք չի դադրեցայ տածելէ անոր վերջնական յաջողութեան մասին: Այդ վստահութիւնը, ինչպէս քանիցս հայտարարած եմ, ինծի ներշնչուած էր այն համոզումէն թէ՝ Թուրքիա առաջինն էր որ շահ ունէր Բարենորոգումներու գործադրութեան մէջ, ինչպէս եւ այն հաւատքին զոր ունէի Կայսերական Կառավարութեան յստակատեսութեան եւ հայրենասիրութեան նկատմամբ»:[64] Եվ քանի որ, հայ ժողովրդի ապագան այդչափ լուսավոր էր եւ ապահով, Պողոս Նուպարը՝ այս դեպքում արդեն որպես ՀԲԸ Միության նախագահ, խոսում է Միության հետագա գործունեության մասին: Այսպես, օրինակ, կանխատեսելով «հողագործութեան նոր թռիչքը», նպատակ էր դրվում գյուղական վայրերում կազմակերպել «սէնտիքաներ» (syndicats), համագործակցականներ (cooperatives) եւ հողագործական վարկի դրամատուներ (caisses de credit agricoles)»: Նորովի պետք է կազմակերպվեր Միության գործունեությունը նաեւ այլ ասպարեզներում:[65]

Ահա այսպիսի սպասումներ եւ այսպիսի պատկերացումներ ապագայի վերաբերյալ: Իսկ պատմությունը շարունակում էր ընթանալ նախասահմանված ուղիով: 1914թ. օգոստոսին սկսվեց Համաշխարհային պատերազմը, նոյեմբերին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, բացվեց Կովկասյան ռազմաճակատը, որի կենտրոնն էր Արեւմտյան Հայաստանի տարածքը: Օգտվելով ստեղծված պատերազմական վիճակից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ հայերի ցեղասպանության նախօրոք մշակած ծրագրի իրականացմանը, որին զոհ դարձան մոտ 1,5 մլն հայեր: Թուրքական կառավարությունը հասավ իր նպատակին՝ զանգվածային սպանությունների եւ բռնագաղթից հետո բնաջնջվեց Թուրքիայի հայ բնակչությունը: Միության մասնաճյուղերից միայն մի քանիսը կարողացան վերահաստատվել Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտից հետո, բայց դա արդեն նրանց հոգեվարքն էր, որը վերջացավ 1921թ. վերջին: Դրանով իսկ վերջ տրվեց նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությանը Արեւմտյան Հայաստանում, Կիլիկիայում եւ Թուրքիայի այլ շրջաններում:

ԱՌԱՋԻՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԲՆԱԳԻՐ ՊԱՏՃԵՆԸ.



ՀԲԸՄ հիմնադրման մատենագրությունը

Պողոս Նուպար

Երվանդ Աղաթոն

Յագուպ Արթին

Մկրտիչ Մարկոսոֆ

Նազարեթ Տաղավարյան

Կարապետ Շերիտճյան

Գրիգոր Եղիայան

Առաքել Նուպար

Վահան Մալեզյան

Մկրտիչ Անդրանիկյան

Վանի տեղական մասնաժողով, 1913թ.

Կենտրոնական Վարչական Ժողով, 1925թ.
Ա շարք. Գ.Սինապյան, Գ.Նորատունկյան, Պողոս Նուպար, Տ.Քելեկյան,
Մ.Պապաճանյան, Ա. Ճեվահիրճյան:
Բ շարք. Զարեհ Նուպար, Ս.Սվաճյան, Լ.Կյումուշկերտան, Տ.Կամսարական, (ձախից
եւ աջից՝ Մ.Հեքիմյան - հաշվակալ, Լ.Բաշալյան - ընդ. քարտուղար)
Բացակա են. Եր. Աղաթոն, Տ.Փիլիպոսյան, Պ.Էսմերյան

Եգիպտոսի Շրջանակային հանձնաժողով, Հ.Նասիպյան, Ջ.Չաքը, Ա.Մարգարյան, Պ.Սերովբյան, Հ.Ամիրայան, Ա.Հյուրմյուզ, Տ.Հաճնլյան

Կենտրոնական Հանդերձարանի տիկնանց հանձնախումբ (նստած, կենտրոնում՝ տիկին Նեւզիգ Առաքել Նուպար), 1918թ., Կահիրե

Տյորթ-Յուլի որբանոցը

Վանի վարժապետանոցը

Գալուստ Կյուլպենկյան

Զարեհ Նուպար

Արշակ Գարակյոզյան

Միության կենտրոնատեղին եւ Նուպարեան Մատենադարանը, Փարիզ

Կրթաթոշակառուներ, Բուենոս Այրես

Հալեպի տեղական մասնաժողով (կենտրոնում ատենապետ՝ Արմեն Մազլումյան)

Ազատագրված որբերը Հալեպի Աշխատավոր սաների կայանում, 1920-ական թթ.

Եթովպիայի կայսրի հայկական նվագախումբը (Արարատյան որբանոցի նախկին ֆանֆառի խումբը)

Երիտասարդաց լիգա, Ֆրեզնո, 1929թ

Դարմանատուն, Լիպազմա, 1920-ական թթ.

Զորավար Անդրանիկի պսակադրությունը Փարիզում
(կնքահայրությամբ Պողոս Նուպարի)

Որբանոց, Մերսին, 1921 (կենտրոնում ավագ տեսուչ՝ Մարգարիտ Ճիզմեճյան,
Մամբրե Ծ.վարդ.Սիրունյան, Վերժին Աճեմյան)

Ներգաղթողների դիմավորումը, Երեւան, 1946թ.

Դարուհի Յակոբեան ծննդատուն, Երեւան

Հայկազ Գարակյոզյանը եւ Ավետիք Իսահակյանը Նուպարաշենում

Աղասի Խանջյան

Արամայիս Երզնկյան

Սահակ Տեր-Գաբրիելյան



Արսեն Եսայան

Մարի Նուպար Ակնաբուժարան, Երեւան

Բարեգործականի Տուն, Երեւան

Ալեք Մանուկյան

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա., Մարի
եւ Ալեք Մանուկյաններ

Ալեք Մանուկյանը եւ որդին՝
Ռիչարդ Մանուկյանը

Ա.Մանուկյան - Ս.Տեմիրճեան վարժարան, Կանոգա Պարկ

Սեղա եւ Սարգիս Տեմիրճյաններ

Տեմիրճեան Կեդրոն, Բեյրութ

Մելգոնեան Կրթական Հաստատություն, Նիկոսիա

Գ.Յագուպեան Կեդրոն, Գամիշլի

Լեւոն Կ.Նազարեան Վարժարան, Բեյրութ

Ադամեան թատերախումբ, Հալեպ

Նուպարեան-Մանուկեան վարժարան, Մոնտեվիդեո

Կիրակնօրյա դպրոց, Մոնտեվիդեո

ՀԲԸՄ Կեդրոն, Կորդովա

Պօղոս Գ.Կարմիրեան վարժարան, Բեյրութ

Դարուհի-Յովակիմեան վարժարան, Բեյրութ

Ժիրայր Դանիելեան, Կարապիտ Նազարեան, Ռոմեն Կոզմոյան

Մ.Մանուկեան վարժարան, Բուենոս Այրես

Փարեն եւ Ռեջինա Պազարեան վարժարան, Սան Պաուլո

Արարատ պուրակը եւ 1915թ. ցեղասպանության զոհերի հուշարձանը, Բուենոս Այրես

Գրիգոր Գրիգորյան, Ալեք Մանուկյան, Էդվարդ Սարտինյան, Ջորջ Թյոքմեճյան, Հրայր Հովնանյան

«Հայաստան»-ի խմբագրի Վեր. Դանիելյանի (ձախակողմ շարք, աջից երրորդը) մեծարումը



Առաջին պարահանդես, Սան Պաուլո

Համահայկական 2-րդ Մարզական խաղեր, 2001թ., Երեւան

Արմեն Քէպէք - Ալ. Մանուկեան վարժարան, Մոնրեալ

Նուպար ամառային ճամբար, Նյու Յորքի նահանգ

ՀՅ Դեսպանատունը, Կահիրե

Թով եւ Ալբերտ Պոյաճյան

ՀԲԸՄ - ՀԵԸ սկաուտները, Հալեպ

Մ.Մանուկեան Վարժարան, Թեհրան

Նազարեան շենք՝ ՀՀ Դեսպանատուն, Բեյրութ

Լուիզ Մանուկյան Սիմոն

Պերճ Սեդրակյան

ՀԲԸՄ-ՀԵԸ նոր համալիրի բացումը, 2003թ., Հալեպ (Սիրիայի Շրջան. հանձն. ատենապետ Պետրոս Պոյաճյան, Հակոբ Տեմիրճյան, դոկտ. Զավեն Եկավյան)

ՀԲԸՄ-ՀԵԸ նոր համալիրը, Հալեպ

Երիտասարդ պրոֆեսիոնալների 2002թ. հավաքը, Սան Ֆրանցիսկո

Focus - 2003 հավաքը, Սոնրեալ (ձախից առաջինը՝ ՀԲԸՄ Կենտրոնական Վարչության ծրագրերի տնօրեն Անիթա Անսպրյան

Սայաթ-Նովա նրգչախումբ, Բաղդադ

Ռիտա Բալյանը Վենսենային դասընթացների ուսանողների հետ, Նյու Յորք

ՀԲԸՄ կրթաթոշակառու Լ.Մելքոնյանը (Հայաստան), Ռենմին համալսարան, Պեկին

Ալ.Մանուկյան շաբաթօրյա դպրոց, Փարիզ

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբը, դիրիժոր Լորիս Ճգնավորյան



Սուրբ Հակոբ, Գյումրի

Բարեգործական ճաշարան, Երեւան

3

ՈՐԲԱԽՆԱՄ ԵՎ ԳԱՂԹԱԽՆԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի կարեւորագույն իրադարձություններից էին Առաջին եւ Երկրորդ Համաշխարհային պատերազմները, որոնք տեղի ունեցան ընդամենը 21 տարի ընդմիջումով: Այդ երկու պատերազմների ընթացքում էլ տեղի ունեցան ցեղասպանություններ, որոնց զոհ դարձան պետականությունից զուրկ ժողովուրդներ: Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում զոհը Թուրքիայի տարածքում ապրող հայ ժողովուրդն էր:

Կովկասի գաղթականները, կամավորական ջոկատները

Հայերի մասին առաջին տագնապալի լուրերը եկան Կովկասից, ուր 1914թ. նոյեմբերին սկսվել էին ռազմական գործողությունները Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ: Ռուսական բանակի շարունակական հարձակումների ու նահանջների եւ թուրքական զորքերի կողմից խաղաղ հայ բնակչության սպանությունների հետեւանքով տասնյակ հազարավոր հայեր սահմանամերձ շրջաններից սկսեցին խուճապահար գաղթել դեպի Ռուսաստան՝ Արեւելյան Հայաստան: Այդ դեպքերի ականատես Իս.Տերտերյանը տարիներ անց վերհիշում էր. «Ձմեռուայ այդ ահաւոր օրերին, երբ մարդ չէր համարձակւում տնից եւ քուրսու տակից դուրս գալ, երբ լաւ հագնված զինուորներն անգամ դժուարանում էին բուքին դիմանալ, հայ ժողովուրդը խելակորոյս թողեց տուն ու տեղ, լծկան, ոչխար, եզ, տնտեսութիւն եւ իր ոտաքոբիկ ու տկլոր բալիկների ձեռքը բռնած, բնաւեր թռչունի պէս բռնեց գաղթի անիծապարտ ճամբան... Դէպի ո՞ւր, ինքը չգիտէր... Գի-

տէր միայն մի բան, որ պիտի փախչէր, թէկուզ մահուան գնով, կեանքի մի հասարակ ապահովութիւն ձեռք բերելու համար... Դժոխային տեսարան էր ներկայացնում գաղթի ճամբան... Երբ ռուս զօրքերի Սարիղամիշում շրջափակելու վտանգը կանխուեց, մեր զօրքը նորէն հրաման ստացաւ շարժուել դէպի առաջ: Ճամբին դէպի Ղարաքիլիսա մի ահաւոր տեսարան բացուեց մեր առաջ: Ամբողջ ճանապարհը ծածկուած էր մարդկանց սեւացած դիակներով, որոնք աչքները չոած դէպի երկինք, կարծես թէ անէծք եւ նզովք էին մրմնջում աշխարհին... Այդ մահասարսուռ պատկերը տեսնելուց յետոյ միայն ես հասկացայ թէ ինչո՞ւ երբ Հայաստան էինք մտնում, հայ ժողովուրդը սգաւորի պէս մեզ դիմաւորեց եւ ինչու չէր ուրախանում երբ մենք թնդացնում էինք օդը մեր հայրենահունչ երգերով եւ ուռաներով...»:[1]

Խիստ ծանր էր վիճակը եւ այն վայրերում, ուր ապաստանել էին գաղթականները: Իգդիրից ստացված հեռագրում ասվում էր. «Փախստականների եւ գաղթականների դրութիւնը անտանելի է դառնում: Ամէն օր գալիս են հազարներով, բոբիկ, մերկ ու քաղցած: Օգնութիւն չկայ, անապաստան եւ առանց հացի կտորի՝ դժբախտները մեռնում են փողոցներում: Մահը անողոք հնձում է իր մանգաղով մեծ թուով մարդկանց, մանաւանդ երեխաների: Օգնեցէք, մարդ եւ դրամ ուղարկեցէք, օգնեցէք»:[2]

Իրավիճակը այնչափ աղետալի էր, որ Թիֆլիսում գաղթականներին օգնության նպատակով հիմնված Հայկական Կենտրոնական Նպաստից հանձնաժողովը ստիպված էր դիմել ՀԲԸ Միությանը: Նրա հեռագրում ասվում էր. «Թուրքիոյ պատերազմին հետեւանքով, շուրջ հարիւր հազար հայեր փախչելով Կովկաս գաղթած են: Կացութիւնը ծայր աստիճան ողբալի է: Ցուրտէն եւ անսուաղութենէ բազմաթիւ մեռեալներ կան: Մեր ժողովուրդն ազատելու համար առատաձեռն նպաստի պէտք կայ: Ցանուն այդ մարտիրոսներուն, կը խնդրենք որ հանգանակութիւն մը կազմակերպէք...»:[3]

Այս հեռագիրը ստանալուն պես, Միությունը 1914թ. դեկտեմբերին հրապարակեց «Ստիպողական կոչ արտասահմանի հայութեան ուղղեալ», ուր տեղեկացնելով ստեղծված տագնապալի իրավիճակի մասին՝ համոզում էր հայտնում, որ «...կարելի չէ իսկ երեւակայել թէ՝ պիտի գտնուի հայ մը, որ իր արենակիցներուն դառն վիճակը ամոքելու քաղցր մխիթարութեամբ, զլանայ իր զոհողութեան բաժինը ներկայ ճգնաժամուն մէջ: Այդ վստահութեամբ է անշուշտ որ մեր Կովկասահայ անձնուէր հայրենակիցները, որ այս պատերազմին սկիզբէն ի վեր ոչ մէկ ծառայութիւն եւ օգնութիւն խնայեցին, այլ ընդհակառակը սիրայօժար նուիրուեցան ազգային դատին պաշտպանութեան, աղերսագին կոչում կ'ընեն, առաջին

անգամ ըլլալով, արտասահմանի հայութեան մարդասիրական զգացումներուն»:[4] Իր հերթին, ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը Պողոս Նուպարի եւ Յակոբ Արթինի նախագահությամբ անմիջապես կազմակերպեց «Ընդհանուր հանգանակութիւն ի նպաստ Կովկասի գաղթականներուն», միեւնույն ժամանակ հրահանգելով, որ այդ նպատակով հատուկ հանձնախմբեր կազմակերպեն նաեւ Միության բոլոր մասնաճյուղերը:

Դրա շնորհիվ մի քանի ամսվա ընթացքում հնարավոր եղավ Ամենայն Հայոց կաթողիկոսի հասցեով ուղարկել մոտ 60.000 ամեր. դոլարին համարժեք գումար: «Նկատի առնելով գաղթականներուն բաղդատաբար մեծկակ թիւը, աւելի քան 200.000 եւ անոնց ամենազգի պէտքերը, մանաւանդ ձմռան եղանակին,- նշվում էր Միության տարեգրքում,- գրեթէ կաթիլ մը ջուր էր ատիկա, բայց մենք ուզեցինք մեր պարտականութիւնը կատարել, մեր միջոցներուն ներած չափով»:[5]

Կովկասի գաղթականներին ի նպաստ հանգանակությունը, որպես այդպիսին, առաջինն էր ՀԲԸ Միության պատմության մեջ: Առաջին անգամ էր, որ Միությունը դիմում էր իր բոլոր մասնաճյուղերին եւ անհատ անդամներին Հայաստանի ժողովրդին օգնություն հասցնելու նպատակով: Հատկանշական է, որ թե այդ հանգանակության եւ թե Միության առաջին նպաստի (1906թ.) հասցեատերը երկու դեպքում էլ Կովկասի հայությունն էր: Մինչդեռ, ՀԲԸ Միությունը դեռեւս չէր հիմնել եւ որեւէ մասնաճյուղ Կովկասում, թեեւ նրա ղեկավարությունը քաջ գիտակցում էր դրա կարեւորությունն ու անհրաժեշտությունը: Այդ անշտապությունը կամ, ինչպես գրված էր 1935թ. «Ոսկեմատեան»-ում, «...գաղափարի քիչ քիչ հասունցալը...» պայմանավորված էր երկու հիմնական պատճառներով: Մեկն այն էր, որ Կովկասում տարիներ շարունակ հաջողությամբ գործում էին մի քանի բարեգործական կազմակերպություններ, որոնցից ամենակարեւորներն էին Բաքվի Մարդասիրականը եւ հատկապես 1881թ. Թիֆլիսում հիմնված Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը: Տարբեր հայաբնակ քաղաքներում եւ գյուղական վայրերում գործում էին նրա շուրջ 50 մասնաճյուղերը, որբանոցը, դպրոցները, գյուղական գրադարան-ընթերցարանները եւ դեղարանները, աշակերտական ձրի ճաշարանը, տարբեր հիմնադրամները եւ այլն: Ինչպես եւ ՀԲԸ Միության դեպքում, Կովկասի Բարեգործականի հիմնադիրներն ու ղեկավարներն էին ազգասեր մեծահարուստներ, մտավորականներ՝ Ալեքսանդր Մանթաշյանը, Ալեքսանդր Մելիք-Ազարյանը, Գաբրիել Սունդուկյանը եւ այլք: ՀԲԸ Միության իսկ գնահատականով՝ «...Ընկերու-

թեան գործունէութիւնը շատ բարերար-յաճախ նախախնամական եղած է Կովկասի մէջ, եւ որոշ չափով նաեւ թրքահայ տարրին»:[6]

Նման խոշոր բարեգործական կազմակերպությունների գոյության, իսկ մյուս կողմից՝ նորաստեղծ ՀԲԸ Միության սահմանափակ հնարավորությունների պատճառով էր, որ Կովկասում Միության մասնաճյուղեր հիմնելու առաջին քայլը արվեց միայն 1912թ. ամռանը, երբ Կովկասում ՀԲԸ Միության ներկայացուցիչ, «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը եւ Թիֆլիսում բնակվող մի քանի արեւմտահայեր դիմում են Կովկասի փոխարքա կոմս Վորոնցով-Դաշկովին՝ Միության մասնաճյուղեր հիմնելու հարցով: Ստանալով նրա սկզբունքային համաձայնությունը՝ նախաձեռնող խումբը ձեռնամուխ է լինում երկար ժամանակ պահանջող պաշտոնական ձեւակերպումներին: Վերջապես, 1914թ. Թիֆլիս է ժամանում Կովկասում լիազոր-պատվիրակ նշանակված Միության հիմնադիրներից Կ.Պոլսի մասնաճյուղի ատենադպիր Ն.Տաղավարյանը: Նա հարցի վերջնական լուծումից հետո պետք է հիմներ մասնաճյուղեր եւ հսկեր տրամադրված նպաստների բաշխմանը: Հունիսի 30-ին կոմս Վորոնցով-Դաշկովը ընդունում է Ն.Տաղավարյանին, որն էլ նրան է հանձնում Միության նախագահ Պողոս Նուպարի նամակը: Հուլիսի 18-ին Ն.Տաղավարյանին ընդունում է նաեւ Գեւորգ Ե Հայոց կաթողիկոսը, որը, շնորհակալություն հայտնելով հոգուտ Երեւանի աղետյալներին Միության կողմից տրամադրած 30 հազար ռուբլու համար, նաեւ պատրաստակամություն է հայտնում հատուկ կոնդակով դիմել Ռուսաստանի հայությանը՝ կոչ անելով նրանց սատարել ՀԲԸ Միությանը: Միության ղեկավարությունը մեծ հույսեր էր կապում Ն.Տաղավարյանի առաքելության հետ: «Թուրքիոյ հայաբնակ նահանգներուն Բարեկորոգմանց ծրագիրը ընդունուած էր, խաղաղութեան, երջանկութեան ու բարգաւաճման նոր հորիզոններ կը բացուէին մեր ժողովուրդին առջեւ, եւ Միութիւնը արդարացի կերպով կ'ակնկալէր որ Կովկասի հայութիւնը իր լայն աջակցութիւնը բերէր՝ իրագործելու համար իր շինարարական ծրագիրները հայրենի հողին վրայ: «Տարակոյս չունիմ թէ,- կ'ըսէր Միութեան Հիմնադիր-Նախագահին բաց նամակը,- Կովկասահայը՝ որ միշտ իր ուշադրութեան առարկայ ըրած է Հայաստանի տառապակոծ ժողովուրդին խղճալի վիճակը - ամէն առթիւ ազնուօրէն ցոյց տուած է իր ազգասիրութիւնը, պիտի չի զլանայ իր վեհանձն օժանդակութիւնը, որպէսզի կարենանք Միութիւնը ծառայեցնել իր ազգային բարձր նպատակին»:[7] Սակայն սկսվեց Համաշխարհային պատերազմը, եւ Կովկասի փոխարքան հայտնեց Ն.Տաղավարյանին, որ Ռուսաստանի կառավարությունը, սկզբունքորեն համաձայն

լինելով Միության առաջարկներին, այնուամենայնիվ, նպատակահարմար է գտնում այն իրագործել պատերազմի ավարտից հետո միայն:

Միության կողմից կազմակերպված՝ Կովկասի գաղթականներին ի նպաստ հանգանակությունը անսպասելիորեն փակված հայտարարվեց 1915թ. մարտ ամսին: Այս առիթով «Միութիւն» պաշտոնաթերթում հրատարակվեց Պողոս Նուպարի շրջաբերականը, ուր նա, հայտնելով Միության երախտագիտությունը արդեն հավաքված գումարի համար, գրում էր. «Բայց այս գեղեցիկ արդիւնքին առջեւ, որոշուեցաւ փակել Միութեան կողմէ բացուած սոյն հանգանակութիւնը, նկատի առնելով որ ներկայ ծանր իրադարձութիւնները... պիտի հարկադրեն, ինչպէս պետք է նախատեսել, նորանոր զոհողութիւններ եւս. մանաւանդ որ բազմաթիւ նուիրատուներ, ինձի ղրկելով իրենց նպաստները, ցաւ յայտնած էին որ բացուած հանգանակութիւնը միայն Կովկասի գաղթականներուն սահմանափակուած է, եւ այդ առթիւ՝ աւելի ընդհանրական հանգամանք ունեցող հանգանակութիւն մը բանալու գաղափարը կը թելադրէին ինձի»:[8]

Այս փաստաթուղթը ուշագրավ է մի քանի առումներով: Նախ, ո՞ւմ նկատի ուներ Պողոս Նուպարը, խոսելով «ցաւ յայտնած... բազմաթիւ նուիրատուների» մասին, որոնց կարծիքը այդչափ կարեւոր էր դիտվել իր կողմից: Այդ հարցի պատասխանը կարելի է գտնել ՀԲԸ Միության Ամերիկայի Շրջանակային մասնաժողովի 1915թ. հունվարի կոչում, որը ուղղված էր տեղական՝ ամերիկյան մասնաճյուղերին: Այդ կոչում, համաձայնություն հայտնելով Կովկասի գաղթականներին օգնության անհրաժեշտությանը, միեւնույն ժամանակ նշվում էր. «...մենք չենք անտեսէր ժամանակիս բացառիկ պայմանները, որոնք ազգային շրջանակին մէջ նոր շարժումներու ծնունդ տուած են: Եվ սակայն, միեւնոյն ատեն, չենք կրնար, իբրեւ ՀԲԸ Միութեան պաշտօնական մարմին մը, անտարբեր մնալ մեր ազգակիցներու ծայրագոյն կարօտութեան առջեւ: ՀԲԸ Միութիւնը մարդասիրական կազմակերպութիւն մըն է, քաղաքական հանգամանք չունի, հետեւաբար անոր անդամները, թէեւ կրնան *անհատապէս* համակրիլ եւ նպաստիլ այս կամ այն քաղաքական ձեռնարկի՝ *հաւաքապէս* (ընդգծումը՝ բնագրում - Էդ.Մ.) կը պարտին հաւատարիմ մնալ Միութեան բուն նպատակին...»:[9]

Ակամա հարց է ծագում, թե ինչ առիթով է հիշվում, որ Միությունը քաղաքական հանգամանք չունի եւ քաղաքական որ ձեռնարկին է վերաբերում խոսքը: Դրա պատասխանը հետագա տողերում է. «Մեր Կովկասի ազգակիցները վերջերս հիմնեցին երկու կեդրոնական մարմին. մեկը՝ կամաւոր գունդեր կազմելու, եւ միւսը՝ կարօտեալներուն օգնելու համար: Քաղաքական արդի պայմանները Ամերիկայի հայերուն վրայ ուրիշ

ինչ զոհողութիւններ ալ պարտադրեն՝ պատճառ չկայ որ մեր Թուրքիոյ եղբայրներն ու քոյրերը իրենց թշուառութեան մէջ լքուին, եւ ՀԲԸ Միութեան պէս համազգային կազմակերպութիւն մը իր բուն դէրին ու պաշտօնին մէջ թերանայ»:[10]

Ինչպես հայտնի է, դեռեւս 1914թ. կեսերին ռուսական իշխանությունների ուղղակի եւ անուղղակի ցուցումների համաձայն որոշվել էր ստեղծել հայկական կամավորական զինվորական ջոկատներ, որոնք ռուսական բանակի կազմում պետք է կռվեին թուրքական բանակի դեմ: Հայ քաղաքական եւ հասարակական բոլոր ուժերը խիստ կարեւորում էին նման ջոկատների կազմավորումը, որոնց առկայությունը պետք է որ ապահովեր Անտանտի, նախ եւ առաջ Ռուսաստանի օժանդակությունը հայերի ազգային-պետական ինքնորոշման գործում: Դրանից մեկ տարի առաջ Պողոս Նուպարը Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան Ա.Իզվոլսկուն հավաստիացնում էր. «...հայերը հույսը դնում են Ռուսաստանի հզոր օժանդակության վրա եւ հաստատապես մտադիր են ամեն ինչում հետեւել ռուսական կառավարության ցուցումներին»:[11]

Կամավորական ջոկատների ստեղծումը կապված էր բազմաթիվ դժվարությունների հետ. առաջին հերթին այն պահանջում էր դրամական մեծ միջոցներ եւ բնական է, որ Միության կողմից ձեռնարկված հանգանակության որոշ մասը հատկացվում էր նաեւ այդ նպատակին: ՀԲԸ Միության Ամերիկայի Շրջանակային մասնաժողովի կոչում հենց այս կամավորական ջոկատներին օժանդակելն էր դիտվում որպես Միության կանոնագրին հակառակ քաղաքական գործունեություն: Դժգոհության հիմքում այն մտավախությունն էր, որ օգնելով պատերազմական գոտուց Կովկաս անցած գաղթածներին եւ հատկապես ֆինանսավորելով կամավորական ջոկատները, Միությունը կամա թե ակամա անտեսում էր արեւմտահայերի հիմնական զանգվածի կարիքներն ու պետքերը: Առավել եւս, որ թե գաղթականներին եւ թե ջոկատներին օժանդակելու համար արդեն հիմնվել ու գործում էին հատուկ կազմակերպություններ: Միության Ամերիկայի մասնաժողովի նման միանշանակ դիրքորոշման համար կար եւ մեկ այլ պատճառ: Մի հայտնի չափով Սահմանադրական Ռամկավար եւ Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների անդամներից կամ համակիրներից բաղկացած Միության Ամերիկայի մասնաժողովի համար դժվար էր հաշտվել այն մտքի հետ, որ իրենց հանգանակած գումարները տնօրինելու էր կամավորական շարժման հիմնական կազմակերպիչ Դաշնակցությունը: Արդեն 1914թ. վերջին քաղաքական այդ երկու ուժերի միջեւ հակամարտության նոր առիթ դարձավ կամավորական ջոկատներին ի նպաստ հանգանակվող գումարների բաշխման

եղանակի հարցը:[12] Պատահական չէ, որ Արշակ Չոպանյանը Ամերիկայի Վերակազմյալ Հնչակյան կուսակցությանը ուղղած նամակում հատուկ շեշտում էր. «Ամենակարեւոր խնդիրը, որ մեր առջեւ կը պարզուի, հիմակուան սուրբ պատերազմն է: Սուրբ պատերազմը, մենք բոլորս անով պէտք է հետաքրքրուինք: Միւս խնդիրները կարող ենք յետոյ կարգաւորել»:[13]

Պողոս Նուպարը ստիպված էր ընդունել, որ Ամերիկայի մասնաժողովի նման դիրքորոշումը ձեւական առումով հիմնավորված էր կանոնագրի կետերից մեկով, որի համաձայն Միությունը չէր կարող զբաղվել որեւէ քաղաքական գործունեությամբ, առավել եւս, նկատի առնելով Ամերիկայի մասնաժողովի ֆինանսական ներուժի բացառիկ կարեւորությունը: Այլ հարց է, թե որքանով էր նա համաձայն «քաղաքականություն» հասկացության նման մեկնաբանությանը: Հենց նշված հանգանակության կազմակերպման փաստն իսկ վկայում էր, որ հայերի համար բախտորոշ պատերազմի պայմաններում նրա պատկերացումները քաղաքականության, Միության գործունեության բնույթի մասին լրիվ այլ էին: Նա, անկասկած, համամիտ կլիներ այդ հարցում Բաբկեն եպ. Կյուլեսերյանի հետ, որը գրում էր. «Քաղաքական՝ չի նշանակեր յեղափոխութիւն, կուսակցութիւն կամ դիւանագիտութիւն:

«Պէտք չէ բառերու հետ խաղալ: Բարեգործականը... ծնաւ մեր ազգին քաղաքական պէտքերէն եւ չի մոռնանք որ հայրենիքի հողին պաշտպանութիւնը ձեռնարկ մըն է ազգասիրական, հայրենասիրական, քաղաքական... Բարեգործականը չի կրնար քարացած մնալ իր կանոնագրութեան բառերուն եւ բանաձեւերուն մէջ:

«Բարեգործականը մեր ազգային կեանքի այսօրուան պէտքերուն ալ պիտի ծառայէ, ինչպէս ծառայեց երէկ. պէտքեր, որոնք քաղաքական են:

«Հայ ժողովուրդին պահպանութիւնը քաղաքական գործ մըն է, որուն նուիրուած են բոլոր հայեր:

«Հայուն կրթական գործը քաղաքական է, վասն զի հայ քաղաքացին պիտի պատրաստենք հայու ազգային-քաղաքական կեանքին յարմար կրթութեամբ եւ դաստիարակութեամբ մը:

«Հայուն տնտեսական կեանքը քաղաքական է, վասնզի անկէ կախուած է Հայաստանի տնտեսագիտական յաջողութիւն...:

«Պէտք չէ՛ շփոթել քաղաքական գործերը դիւանագիտական գործերու հետ, յեղափոխական կամ կուսակցական գործերու հետ...:

Բարեգործականը, նոյնիսկ իր նպատակով եւ ցարդ իր յառաջ բերած արդեամբք, ազգին մատուցած է քաղաքական ծառայութիւն մը, եւ պիտի մատուցանէ, բայց չի միջամտեր դիւանագիտական գործերու»:[14]

Բաքկեն եպ. Կյուլեսերյանի այս վերջին դիտողության մեջ՝ ցանկության դեպքում կարելի է տեսնել ակնարկ Պողոս Նուպարի՝ որպես Ազգային պատվիրակության նախագահի, հասցեին: Սակայն դեռեւս 1913թ., երբ Պողոս Նուպարը Հայոց կաթողիկոսի հրավերով նոր էր ստանձնել այդ պաշտոնը, տեսնելով տարբեր շահարկումները կամ «թիւրիմացութիւնները», հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում նշում էր, որ Ազգային պատվիրակությունը բոլորովին անկախ է ՀԲԸ Միության «կազմէն եւ նպատակէն», եւ որ թե իր եւ թե Միության ուրիշ վարիչ-անդամների «...մասնակցութիւնը այդ Պատգամաւորութեան՝ տեղի կ'ունենայ սոսկ անհատական պատասխանատուութեան տակ»:[15]

Պողոս Նուպարը 1915թ. մարտի 15-ի վերոնշյալ շրջաբերականը հրապարակելիս, պատրաստվում էր նորից մեկնել Փարիզ, ուր, որպես Ազգային պատվիրակության նախագահ, պետք է ներկայացներ եւ պաշտպաներ հայ ժողովրդի քաղաքական շահերը Անտանտի պետությունների առջեւ: Բնական է, որ նման պայմաններում նա չէր կարող ընդհանրապես հրաժարվել հանգանակության գաղափարից, որն ի դեմս իրեն, հայ ժողովրդի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման եզակի հնարավորություններից էր: Ուստի եւ նույն այդ շրջաբերականով նա հայտարարեց նոր՝ «Ազգային շահերու պաշտպանութեան» կամ «Ազգային հանգանակութեան» մասին: «Երբե՛ք մեր պատմութեան մէջ,- գրում էր Պողոս Նուպարը,- ասկէ աւելի նպաստաւոր պատեհութիւն մը ներկայացած չէ, եւ երբեք մեր ազգային ցանկութիւնները իրենց իրականացումին աւելի մօտ չեն գտնուած: Բայց անհրաժեշտ է ասոր համար որ ամէն մասնաւոր նախաձեռնութիւններ կեդրոնացուին Ազգային Շահերու Պաշտպանութեան համար, որպէսզի կարելի ըլլայ անոնք համերաշխել ու այսպէսով ապահովել գործողութեանց միութիւնը»: Եվ ամենաուշագրավը՝ այս նոր հանգանակությունը ձեռնարկվում էր «...Հայկական Ընդհանուր Միութենէն դուրս, որովհետեւ հետապնդուելիք նպատակը այս բարեգործական ընկերութեան գործունէութեան սահմաններէն դուրս կը մնայ, այնպէս, ինչպէս որ իր Հիմնական կանոնագրին մէջ նախագծուած է»:[16]

Իր այս քայլով Պողոս Նուպարը, այնուամենայնիվ, փորձում էր միաժամանակ հանդես գալ երկու՝ ՀԲԸ Միության եւ Ազգային պատվիրակության նախագահների դերերում: Նա թե բավարարեց Միության որոշ շրջանակների պահանջները եւ թե շարունակեց հանգանակությունը, ավելին՝ հույս ուներ, որ այս նոր հանգանակությանը կարող էին մասնակցել ոչ միայն Միության անդամները, թեկուզեւ որպես անհատներ, այլեւ ողջ հայությունը: Սակայն հայ իրականության համար ավանդական դարձած կազմակերպությունների փոխադարձ անվստահության ու հակադրանքի պայմաններում միասնական, համախմբված գործելու փորձերը դատապարտված էին անհաջողության:

1915թ. մարտին, նույն Կահիրեում հրատարակվող «Ցուսաբեր» թերթը ոչ միայն հրաժարվեց տպագրել Պողոս Նուպարի շրջաբերականը, այլեւ մեղադրեց նրան, որ, փակված հայտարարելով ի նպաստ Կովկասի գաղթականների հանգանակությունը, նա իբր չի ցանկանում օժանդակել կամավորական շարժմանը, իսկ իր նոր՝ Ազգային հանգանակությամբ, ձգտում է անհնարին դարձնել որեւէ այլ հանգանակության կազմակերպումը: (Ճակատագրի ծաղրով 1910թ. «Լուսաբեր» անունով այդ թերթի հիմնադիրներից էր Սահմանադրական Ռամկավար կուսակցության հայտնի գործիչ, ԱՄՆ-ում ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղի հիմնադիր Վահան Քյուրքճյանը: 1912թ. վերանվանվելուց եւ նոր հրատարակիչ ունենալուց հետո այն անցավ Դաշնակցության ձեռքը): Մեղադրանքները այնչափ ծանր էին եւ հնչեցին այնքան լարված մթնոլորտում, որ Պողոս Նուպարը՝ հակառակ նմանատիպ ելույթները անտեսելու իր սովորության, ստիպված էր հանդես գալ հատուկ շրջաբերականով: «...Ներկայիս դառնօրէն յուսախաբ եղայ տեսնելով որ Եգիպտոսի մեր հայրենակիցներուն միջեւ բաժանումներ գոյութիւն ունին, եւ թէ՛ ներկայ հանգանակութեան հակառակորդներէն ոմանք, անհասկանալի ընդդիմութեան ոգիով մը, մինչեւ իսկ արգելք հանդիսացած են որ Եգիպտոսի մէջ լոյս տեսնող հայ միակ լրագիրին մէջ հրապարակուի այն կոչը, զոր 15 մարտին ուղղեցի, մեր Ազգային Շահերուն Պաշտպանութեան յատուկ Հանգանակութեան ձեռնարկումին առթիւ: Ինծի հաւաստուեցաւ մինչեւ իսկ որ ջանք կըլլայ երկ/ընդ/դիմութիւն մը ստեղծելու, պնդելով որ հակառակ եմ օգնութեան ձեռք երկնցնելու անոնց որ կը կռուին Ռուսական բանակին կողքին ի վեր, Թուրքիոյ իրենց եղբայրներուն փրկութեան համար: Չեմ գիտեր թէ ինչ բանի վրայ կը հիմնուին ինծի այդպիսի մտածումներ վերագրելու համար, զոր ազդուապէս կը մերժեմ: Շրջաբերականիս մէջ չկայ բառ մը որ այդպիսի մեկնութեան մը թոյլատրէ իրենք: Եթէ անոր մէջ յատուկ յիշատակութիւն մը չըրի մեր կամաւորներուն նկատմամբ, պատճառը այն է որ չէի ուզեր կոչիս ոեւէ մասնաւոր բնոյթ մը տալ, եւ որովհետեւ Ազգային Հանգանակութիւն մը պէտք է որ կարենայ յատկացուիլ ազգային ամէն տեսակ շահերու պաշտպանութեան գործին, առանց ոեւէ մասնաւորումի եւ խտրութեան»:[17]

Մինչ արտասահմանում հայ քաղաքական եւ այլ կազմակերպությունները զբաղված էին նմանօրինակ գործողություններով, Թուրքիայի ողջ տարածքով մեկ մեծ թափ էին առնում հայերի ցեղասպանությունն ու բռնագաղթը: 1915թ. հուլիսից հայտնի են դառնում սպանված հայ քա-

ղաքական, մշակութային եւ եկեղեցական գործիչների անունները, որոնց մեջ զգալի թիվ էին կազմում նաեւ Միության տեղական մասնաճյուղերի ղեկավարներն ու անդամները: Առաջին նահատակների թվում էր նաեւ ՀԲԸ Միության հիմնադիր անդամ Նազարեթ Տաղավարյանը, որը, ինչպէս նշվել էր, 1908թ. Թուրքիա մեկնելուց հետո Կ.Պոլսում Միության մասնաճյուղի ատենադպիրն էր, միեւնույն ժամանակ, որպես Թուրքիայի խորհրդարանի պատգամավոր, հետեւողականորեն պաշտպանում էր արեւմտահայերի շահերը: Ն.Տաղավարյանը մեծ թվով այլ մտավորականների հետ նահատակվեց Սեւերեկի մոտակայքում՝ Դիարբեքիրի ճանապարհին, ուր նրանք իբր պետք է կանգնեին զինվորական դատարանի առջեւ: Ն.Տաղաւարյանը, «...կասկածելով որ Միութեան ի նպաստ ունեցած գործունէութեանը համար պիտի դատեն զինքը, Հալէպի մէջ, ուր պահ մը կանգ առած էին, Միութեան Կանոնագիր մը եւ Տեղեկագիրներ ձեռք բերած էր, դատավարութեան ընթացքին անոր մարդասիրական եւ օգտակար նպատակը բացատրելու դիտումով...»:[18]

Պորտ Սայիդի վրանավանը

1915թ. սեպտեմբերին հայտնի դարձան Կիլիկիայի՝ մինչ այդ շատերին գրեթե անհայտ Սուեդիայի շրջանում տեղի ունեցած որքան բաղձալի, նույնքան էլ անհավատալի դեպքերը: Տեղի վեց՝ Յողուն Օլուք, Հաճի Հապիպլի, Պիթիաս, Քեպուսիյէ, Խըտըր-Պեկ եւ Վագըֆ գյուղերի բնակիչների մեծ մասը՝ մոտ 5000 հոգի, չենթարկվելով տեղահանության մասին թուրք իշխանությունների հրամաններին, բարձրանում են Մուսա լեռ եւ դիմում ինքնապաշտպանության: Երկու շաբաթ՝ օգոստոսի 7-21-ը, թուրքական կանոնավոր բանակը մի քանի անգամ փորձեց գրավել մուսալեռցիների դիրքերը, բայց, ի վերջո, ստիպված եղավ նահանջել: Այնուամենայնիվ, գիտակցելով, որ անհնար է երկար ժամանակ դիմագրավել թուրքական զորքին, մուսալեռցիները երկու մեծ պաստառ են պարզում ծովափնյա բլուրներից մեկի վրա, նրանց վրա խաչեր գծելով ու գրելով. «Քրիստոնյաները վտանգի մեջ են»: Սեպտեմբերի 5-ին պաստառները նշմարում են ֆրանսիական մարտանավից, որի հրամանատարը, տեղեկանալով հայերի դրության մասին, խոստանում է օգնություն հասցնել նրանց: Չորս օր անց թուրքերը վերջին անգամ եւ նորից ապարդյուն փորձում են գրավել հայերի դիրքերը, իսկ արդեն սեպտեմբերի 13-15-ին տեղ հասած ֆրանսիական մարտանավերը, վերցնելով բոլոր մուսալեռցիներին, շարժվեցին դեպի Եգիպտոս՝ Պորտ Սայիդից քիչ հեռու՝ Լազարեթա կոչվող վայրը:

Այս վայրի ընտրությունը պատահական չէր. պատերազմից առաջ այն նախատեսված էր կարանտին անցնող ճամփորդների համար, ուստի այստեղ կար գործող հիվանդանոց՝ բժիշկների ու պաշտոնյաների համար իր հարակից շենքերով: Մուսալեռցիների տեղավորման գործը առաջին իսկ օրից ղեկավարեցին տեղի անգլիական զինվորական իշխանությունները, որոնց ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում այդ անապատային վայրում առաջացավ մի ամբողջ վրանավան: Ուշագրավ է, որ անգլիացիները վրանավանի կառուցվածքը համապատասխանեցրել էին գաղթականների նախկին բնակավայրերին: «Գնդապետ Բիյըրսըն (Major Pearson), իր հրամանին տակ ունեցած քանի մը անգլիացի զինուորներու օգնութեամբ, մէկ օրէն միւսը հրաշք կը գործէր, այսօր քէմբ-ը գիւղերու կը վերածէր, ու հետեւեալ օրը՝ գիւղերը զանազան բաժանումներու (section)՝ իւրաքանչիւրը 25-ական վրանով: A. եւ B. սէքսիօն-ները, օրինակի համար, Պիթիաս գիւղը կը ներկայացնէին, C. D. E. սէքսիօն-ները՝ Հաճի Հապիպլին ու այսպէս բաժանումները կը հասնէին մինչեւ S. գիրը, Վագըֆ, Եօղուն Օլուք, Խըտըր Պէկ ու Քէպուսիյէ գիւղերը իրենց որոշ տեղերը ունենալով ...Սուէտիոյ գիւղերը այժմ հոս փոխադրուած էին. պզտիկները խումբ խումբ կը խաղային իրենց գիւղերու սահմանները գծող լայն արահետներուն վրայ»:[19] Պորտ Սայիդի վրանաքաղաքի մուսալեռցի բնակիչները թվով 4058 էին, այդ թվում, 4-ից մինչեւ 11-14 տարեկան՝ 508 աղջիկ եւ 628 տղա, եւ 14 տարեկանից բարձր՝ 1441 կին ու 1054 տղամարդ:[20]

ՀԲԸ Միությունը, իմանալով մուսալեռցիների ժամանման մասին, նախ ցանկացավ կազմակերպել նրանց բժշկական խնամքի գործը, սակայն պարզվեց, որ այդ նպատակով Ալեքսանդրիայից եւ Կահիրեից արդեն Պորտ Սայիդ էին մեկնել Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչի կամավորները: Ի վերջո, Միության Կենտրոնական Վարչական Ժողովը որոշում է կազմակերպել մուսալեռցի երեխաների կրթական գործը եւ ապահովել նրանց զգեստներով: Հոկտեմբերի 20-ին Պորտ Սայիդի մոտակա անապատային դաշտում, ուր հիմնվել էր մուսալեռցիների վրանային ավանը, տեղի ունեցավ Սիսուան վարժարանի հանդիսավոր բացումը, իր 25 վրան-դասարաններով եւ 1200 աշակերտներով:

Սիսուանը եղավ առաջին վարժարանը, որ ՀԲԸ Միությունը հիմնեց Հայաստանի եւ Կիլիկիայի սահմաններից դուրս, եւ որը գործեց Պորտ Սայիդի վրանավանում չորս տարի՝ մինչեւ 1919 նոյեմբերը: Այդ տարիների ընթացքում նրա աշակերտության ընդհանուր թվաքանակը կազմեց

10–19 տարեկան ավելի քան 1300 երեխա, իսկ մանկապարտեզ հաճախողներինը՝ 5–10 տարեկան շուրջ 1100 երեխա: Վարժարանում «երկսեռ աշակերտութիւնը տեղաւորուած էր անգլիական կառավարութեան կողմէ տրամադրուած 25-ի չափ խոշոր վրաններու մէջ: Առանց նստարանի, յատակը երբեմն պարզ փսիաթներով ծածկուած, երբեմն ալ առանց փսիաթի, մէն մի վրան-վարժարանի մէջ ծալապատիկ կը նստէին 40–50-ի չափ առոյգ, մտացի փոքրիկներ»:[21] Դասավանդվող հիմնական առարկաներն էին հայերեն, ազգային պատմություն ու աշխարհագրություն, իսկ բարձր դասարաններում՝ նաեւ անգլերեն եւ ֆրանսերեն: Արդեն նշվել էր, որ Կիլիկիայի մի շարք վայրերում հայերենը մոռացության էր տրվել, այդպես էլ վրանավանի երեխաներից շատերը «...կը խօսէին անհասկնալի կորճալեզու գաւառաբարբառ մը՝ թուրքերէնի ու արաբերէնի խառնուրդով»:[22] Այդ երեխաների համար վարժարանում կազմակերպվեցին հատուկ դասարաններ, եւ շատ չանցած նրանք սկսեցին խոսել եւ գրել մաքուր հայերենով: Գաղթականյանի պաշտոնյաներից մեկը վկայում էր. «Եթէ յետադարձ ակնարկ մը նետենք ու ուշի ուշով քննենք «Սիսուան»-ի չորս տարուայ կեանքը, այն ատէն պիտի տեսնենք որ գաղթավայրի վարժարանը կրցած է իր վրայ դրուած յոյսերը – եթէ ոչ բոլորովին գէթ կիսովին – իրականացնել, սորուեցնելով մեր տարագիր փոքրիկներուն հայ լեզուն: Ամէն անոնք որոնք այցելած են այս ժողովուրդին հոս ժամանած ատեն եւ կամ անկէ յետոյ, անոնք չեն մոռցած այն պատկերը զոր կը ցուցադրէին հալածական այս բեկորները: Սուէտացի մանկտին այսօր կը վերադառնայ իր հայրենիքը, բաւական ծանօթացած ըլլալով իր մայրենի լեզուին...»:[23] Վարժարանի կարեւոր առանձնահատկություններից էր այն մեծ ուշադրությունը, որ հատկացվում էր երեխաների ֆիզիկական, մարզական դաստիարակությանը, ինչի ապացույցներից էին Արտավազդ, Շանթ, Սիսուան ֆուտբոլային թիմերը:

Նշված առարկաներից բացի, վարժարանում գործում էին բարոյագիտական դասեր, լրագիտական ընթերցումներ, փողային նվագախումբ, կազմակերպվում էին ազգային եւ դպրոցական հանդեսներ, որոնց շնորհիվ «...երբեմն կուռազան ու այլամերժ բնազդներուն տեղ անոնք որդեգրած են քաղաքենի բարեկրթութիւն մը, որ դիւրաւ յայտ կը բերէ ցեղին թաքուն ընդունակութիւնները եւ տոհմային դաստիարակութեան բարերար ազդեցութիւնը»:[24] Վարժարանի տնօրինությունը սաների համար կազմակերպեց նաեւ հատուկ արհեստանոց՝ ատաղձագործության, կոշկակարության, դերձակության ու երկրաչափության ճյուղերով, իսկ աղջիկների համար՝ ձեռագործի, կար ու ձեւի, առտնին տնտեսության դասեր: Այս ձեռնարկների դերը դժվար է թերագնահատել, քանզի ձեռք բերած

մասնագիտությունների շնորհիվ է, որ մի քանի տարի անց այդ երեխաները, հայտնվելով աշխարհի տարբեր երկրներում, կարողացան սեփական ուժերով հայթայթել օրվա ապրուստը:

1917թ. հուլիսին անգլիական սպաների օժանդակությամբ եւ գլխավորությամբ հիմնվեց վարժարանի «Հայ-արիներու Սիսուան Պոյ-Սքաուտ» կազմակերպությունը, որի շարքերում ընդգրկվել էր շուրջ 210 աշակերտ: Մուսալեռցի այս տղաները, ինչպես եւ ընդհանրապես գաղթականյանի չափահաս երիտասարդները, որոշ ժամանակ անց կազմեցին Արեւելյան (Հայկական) Լեգեոնի կորիզը: Հայկական Լեգեոնի ստեղծումը արդյունք էր այն բազմաթիվ բանակցությունների, որ տեղի ունեցան Ազգային պատվիրակության եւ Ֆրանսիայի ու Անգլիայի կառավարությունների ներկայացուցիչների միջեւ: Այստեղ արժե վերհիշել երկու կողմերի ստորագրած բանաձեւի հիմնական կետերը, որոնք հասկանալի են դարձնում թե հայ երիտասարդության գործուն մասնակցությունը եւ հավաքագրվելը Լեգեոնի շարքերը եւ թե այն դառն հիասթափությունը, որ ապրեցին նրանք եւ ողջ հայությունը, երբ 1921թ. վերջին ազատագրված Կիլիկիան հանձնվեց Թուրքիային. «Ա. Արեւելեան Լէգէոնի կազմութիւնով հայ զինուորները պիտի մասնակցին զինուրական գործողութեանց եւ Դաշնակիցներու յաղթանակին մէջ պիտի ունենան գործոն բաժին, ի փոխարէն պիտի ստանան որոշ երաշխիք Կիլիկիոյ ազատագրութեան եւ Հայոց ազգային բաղձանքներու իրականացման համար, Բ. Հայ Լէգէոնականներ միայն թուրքին դէմ պիտի կռուին Պաղէստինեան ճակատին վրայ ու եթե հարկ ըլլայ Հայկական Լէգէոնը կորիզը պիտի կազմէ ապագայ հայ բանակին Կիլիկիոյ եւ գրաւուած ուրիշ հայկական հողամասերու մէջ»:[25]

Եվ երբ սկսվեց Արեւելյան Լեգեոնի կազմավորումը, Պորտ Սայիդում հաստատված մոտ 600 հայ երիտասարդներ, այդ թվում նաեւ Սիսուան վարժարանի արիները, անմիջապես համալրեցին նրա շարքերը: «Իրենց տունն ու տեղը, լեռներն ու դաշտերը, այգիներն ու պարտէզները, դպրոցներն ու եկեղեցիները թշնամիին ձեռքը թողուցած Սուէտացիները չէին կրնար հաշտուիլ այդ անբարոյական բռնաբարումին հետ: Չէին կրնար հաւատալ որ ոճրագործը յաւիտեանս անպատիժ կրնար մնալ: Չէին ուզէր, սակայն որ այդ պատիժը ուրիշին ձեռքով մատուցուէր: Իրենք պէտք է ըլլային հայ ցեղի դահիճներուն դահիճները: Վրէժը ուրիշ կերպով բաւարար ու բնական հատուցում չէր գտներ: Սպասեր էին անոնք առաջին պատեհութեան կրկին անգամ կրկէս իջնելու իրենց թշնամիին դէմ... Պէտք էր պատրաստուէին իբր զինուոր կռուելու, ու այդ պատեհութեան առիթը չուշացաւ»:[26] 1918թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ Արարա-

յի (Պաղեստին) ճակատամարտը, որի ընթացքում դաշնակիցների բանակի մաս կազմող Արեւելյան Լեգեոնի մուսալեռցի, ինչպես նաեւ ամերիկահայ, եգիպտահայ եւ այլ մարտիկները ջախջախիչ պարտության մատնեցին թուրքական բանակին: Այս հաղթանակից հետո է, որ Արեւելյան Լեգեոնը կոչվեց նաեւ Հայկական Լեգեոն եւ այդ անվան տակ շարունակեց իր հաղթանակների շարքը արդեն Կիլիկիայի տարածքում:

Մինչ այդ, 1918թ. մայիս-հունիս ամիսներից՝ դաշնակիցների զորքերի կողմից գրավված Հորդանանի, Միջագետքի, Սիրիայի տարածքներից Պորտ Սայիդի վրանաքաղաք սկսեցին տեղափոխվել հազարավոր հայ տարագիրներ, ինչի արդյունքում այստեղ ապաստանածների քանակը հասավ շուրջ 9000-ի, այդ թվում մինչեւ 12 տարեկան մոտ 2000 երեխա: «Կիլիկեցի ու այլ գաղթականներու, մեծ մասով թրքախօս եւ արաբախօս զաւակներու յաւելումով,- նշվում էր վարժարանի տնօրեն Մ.Ժամկոչյանի տեղեկագրում,- ընդհանուր աշակերտութեան թիւը բարձրացաւ 2345, մէջը չըլլալով որբերը...»:[27] Վարժարանը, որը 1917 թվականից տեղավորված էր նորակառույց եղեգնապատ շենքերում, այնուամենայնիվ, ի վիճակի չէր ընդունել այդչափ մեծ թվով երեխաներ, ուստի եւ Կրթական հանձնախումբը ստիպված եղավ լրացուցիչ առաքել խոշոր վրաններ:

Երեխաների մեջ մեծ թիվ էին կազմում որբերը, որոնց խնամքը կազմակերպելու նպատակով ՀԲԸ Միությունը հիմնեց հատուկ որբանոց: 1919թ. սկզբներին որբանոցում կար շուրջ 400 երեխա, որոնցից 90-ը դարձան Սիսուան Պոյ-Սքաութի անդամ, իսկ նրանցից չափահասները սկսեցին հաճախել վարժարանի արհեստանոցը: Անդրադառնալով որբանոցի գործունեությանը՝ վրանավանի պաշտոնյաներից Մ.Սալբին գրում էր. «...անուրանալի էր որ Որբանոցը իր օգտակարութիւնը ունեցաւ, եւ այդքան ծախքերէ վերջ տարբեր տեսակ ալ կարելի չէր որ ըլլար: Առաջին եօթը ամիսներու անկերպարան վիճակէն, աշակերտական ըմբոստութիւններէն, տակնուվրայութիւններէն վերջ, հետզհետէ աւելի կարգի կանոնի մտաւ: Համակրելի երիտասարդ վարդապետը՝ Մամբրէ Սիրունեան... կարգուեցաւ մնայուն տեսուչ, եւ տիկին Մաքրուհի Նետուրեան իբր տեսչուհի, որ գաղթավայրէն քիչ անգամ բաժնուեցաւ: Ուսուցչական պարտաճանաչ երիտասարդներու խումբ մը զօրավիգ եղան տեսուչին եւ իրենց կարելին ըրին որբերուն օգտակար ըլլալու համար... Անոնք ոչ դրամ խնայեցին եւ ոչ ալ դժուարութիւններու առջին կեցան նպատակին հասնելու համար... Բայց երբեք չկրցան հասցնել բաղձացուած բարձրութեան: Ապերախտ գետնի մը վրայ կը գործէին, աւազի վրայ կայուն եւ բարգաւաճ բուրաստան մը չէր կրնար դալարիլ»:[28]

ՀԲԸ Միության հիմնած երկրորդ նոր հաստատությունը՝ Պորտ Սայիդի այրիանոցն էր, ուր տեղավորվեցին Բաղդադից եւ այլ վայրերից փոխադրված թվով շուրջ 90 հայ այրիներ ու աղջիկներ՝ «...շատերը իրենց թուրք դահիճներուն կամ արաբ պաշտպաններուն ձեռքէն խլուած...»:[29]

Պորտ Սայիդի գաղթականանում գործող Սիսուան վարժարանը, որբանոցը եւ այրիանոցը եղան ՀԲԸ Միության արտերկրում հիմնադրած առաջին հաստատությունները, որոնց գործունեության ապահովումը կապված էր մեծ դժվարությունների հետ: Դժվարությունները, անշուշտ, անպակաս էին նաեւ նախորդ տարիներին, երբ Միությունը տարբեր ձեռնարկներ էր իրականացնում Հայաստանում եւ Կիլիկիայում, ուր, սակայն, տեղի հայ բնակչությունը, եւ առաջին հերթին Միության մասնաճյուղերը, մեծապես օժանդակում էին հաստատությունների ստեղծմանն ու գործունեությանը: Հակառակ դրա, վերոհիշյալ երեք հաստատությունները հիմնվեցին օտար երկրում, հայ բնակչությունից զուրկ, անապատում տեղավորված գաղթականանում: Միությունը պետք է հոգար ոչ միայն դասագրքերի, գրենական պիտույքների համար, ոչ միայն պետք է գտներ որակյալ տեսուչներ ու ուսուցիչներ, այլեւ պարտավոր էր հայթայթել երեխաներին ամենաանհրաժեշտ իրեր: Անապատի պայմաններում չափազանց դժվար էր պատրաստել նույնիսկ հասարակ մի գրասեղան՝ համապատասխան որակի փայտ չլինելու պատճառով: Բայց ամենաբարդը գաղթականանում ապաստանածների հագուստի հարցն էր, ինչի մասին էր վկայում Կահիրեում հատուկ՝ Հանդերձարանի Տիկնանց Կենտրոնական Հանձնախումբի ստեղծման փաստը: Հանձնախմբի ատենապետուհի տիկ. Նեւզիգ Առաքել Նուպարը հայությանը ուղղած իր անդրանիկ կոչում գրում էր. «Ջմեռ է եւ հազարաւոր աղէտեալներ, մեր եղբայրները, մեր քոյրերը, ծերեր ու հիւանդներ, հարսեր եւ որբեր, մե՛րկ են, գրեթէ բոլորովին մերկ... Մարդկային զգացումը եւ ազգին պատիւը կը պահանջեն որ անոնք հագուեցնենք»:[30] Արձագանքելով այդ կոչին՝ եգիպտահայ կազմակերպություններն ու անհատ մարդիկ սկսեցին մեծ քանակով հագուստ եւ տարբեր տեսակի կերպասեղեն ուղարկել Հանձնախմբի հասցեով: Սակայն կերպասեղենը դեռեւս հագուստ չէր, եւ Հանձնախումբը իր հերթին հիմնեց կարի աշխատանոցներ, ուր կարվում էին տարբեր տեսակի հագուստներ երեխաների եւ մեծերի համար: Եվ չնայած մեծ թվով եգիպտահայ կանայք ձեռնամուխ եղան այդ աշխատանքին, այնուամենայնիվ, կար անող մարդկանց պակասը միշտ զգացնել էր տալիս իրեն: Այդ տարիների «Միութիւն» ամսագրի տարբեր համարներում կարելի էր հանդիպել «Գոնէ կարեցէք» վերնագրով այսպիսի հայտարարություններ. «Հանդերձարանի Տիկնանց Կեդր. Ցանձնախումբը կը ծանուցանէ թէ

ներկայիս պէտքերը ծայրաստիճան բազմապատկուած, որով եւ աշխատութիւնները տարապայման շատցած ըլլալուն, Կեդր. Հանդերձարանի աշխատանոցը այսուհետեւ ամբողջ օրը բաց պիտի ըլլայ, եւ թախանձագին կը խնդրէ որ, ի սէր նոր ազատագրուած մեր հազարաւոր սիրելի տարագրեալներուն եւ որբերուն, սրտցաւ հայուհիներ դիմեն եւ կարի գործերով զբաղին»:[31]

Պատերազմը մոտենում էր ավարտին: Անտանտի զորքերը շարունակում էին իրենց հաղթական գործողությունները Օսմանյան Թուրքիայի տարածքում: Ազատագրված շրջաններից նորանոր տեղեկություններ էին հասնում վերապրած հայ տարագիրների մասին, որոնց օգնության հասնելու համար հարկավոր էին թե մեծ միջոցներ եւ թե անձնվեր գործիչներ: Այսպես, Մեոյալ ծովի (Պաղեստին) շրջակայքում գտնվող Թաֆիլե բնակավայրը գրավելուց հետո հայտնի դարձավ այնտեղ գտնվող մի խումբ հայերի մասին. «Տասը հազարնոց կարաւանէ մը – մեծ մասամբ Կիւրինցի եւ մնացեալը Մարաշցի, Հաճընցի, Տէօրթ-Եօլցի, Կեսարացի եւ Մէրտինցի – հազիւ 2.800 հոգի ամիսներու տառապանքներէ վերջ յաջողեր են Թաֆիլէ խրիլ, 1915 Հոկտեմբերին, եւ ասոնցմէ ալ միմիայն 900 հոգի ողջ մնացեր է»: «Միութիւն» ամսագիրը մեջբերում էր «անհաւատալի եւ աներեւակայելի դրուագներ» այդ խմբի պատվիրակի պատմածից. «Հայ երիտասարդ կեանքի մը գինը հացի փշրանք մը միայն կ'արժէ, որուն սիրոյն քանի՛ քանիներ արաբ տուներու առջեւ «խուպուս», այսինքն հաց աղաղակելով, անսուաղ իրենց վերջին շունչը աւանդեցին: Եվ քանի՛ քանի կոյսեր գարիէ չոր հացի մը պետքէն մղուած գազաններու քմահաճոյքին տակ փճացան: Ու քանիներ ալ, սովամահ, իրենց սրտին պտուղները, իրենց ամենասիրելիներն անգամ հացի փոխարէն զոհեցին... Շատեր, աւա՜ղ, անոր կարօտով իրենց ինքնութիւնը իսկ ուրացան: ...Հրէշները արգիլեցին մեզ պարտէզները երթալէ իսկ, բնութեան բոյսերէն եւ անարժէք խոտերէն ալ մեզ զրկելու համար: ...Ի՞նչպէս պատմենք ձեզի, դիակները անթաղ քանի՛ օրեր փողոցներու մէջ փտտեցան եւ գանկեր, տակաւին մազի խոպոպիկները ճակտին վրայ, կենդանիներու սմբակներու տակ փշրուեցան: Անջատուած սրունգներ եւ բազուկներ գազաններուն խնջոյքը եւ շուներուն պարը եղան, ...շատեր իրենց մեռելին հետ 3-4 օր պառկեցան, զայն թաղող մը չի գտնելով ...»: Տեղեկանալով այս խմբի մասին՝ ՀԲԸ Միության «...Կեդր. Հանդերձարանի Տիկինները, աշխատակցութեամբ Գնմանց եւ Առաքմանց Ցանձնախումբի ժրաջան անդամներուն, 11 հակ բոլորովին նոր ճերմակեղէն ու կերպասներ ճամբայ հանեցին: Նոյնպէս Եգիպտահայ Նպաստամատոյց Ցանձնաժողովը 6000 քիլոյի չափ զանազան անհրաժեշտ ուտեստեղէններ ղրկեց Թաֆիլէի

տարագրեալներուն համար, ՀԲԸ Միութեան միջոցաւ»:[32] Նույն այդ օրերին է, որ ՀԲԸ Միության փոխատենապետ Ցագուպ Արթինը, լինելով ծանր հիվանդ, իր վերջին շրջաբերականում, խոսելով ազատագրված որբերի մասին, գրում էր. «Այդ բեկորներով է որ Հայաստանը պիտի վերականգնի: Եթէ անոնք կրցան ճողոպրիլ թուրքին ճիրաններէն, թոյլ չի տանք, որ մեր աչքին առջեւ, մեր դռան մօտը, մեր ձեռքին մէջ՝ անոնք զոհն ըլլան թշուառութեան, իրականին մէջ՝ ըլլան զոհերը մեր անտարբերութեան, ճիշտ այն վայրկեանին որ Հայաստանի պետութիւնը կը դարբնուի, հայրենի հողին մէջ եւ թէ Համաժողովի սեղանին վրայ»:[33]

Որբերի եւ կանանց ազատագրում

1918թ. մարտին կայացավ ՀԲԸ Միության հերթական ընդհանուր ժողովը: Միության Կենտրոնական Վարչական Ժողովի ներկայացրած հաշվետվության մեջ ասվում էր. «Որքան մեծ եղած ըլլայ մեր ազգային դժբախտութիւնը, կը պահենք միշտ սա համոզումը թէ խաղաղութիւնը ձեռք պիտի բերուի Քաղաքակրթութեան յաղթանակովը եւ թէ, այն ժողովուրդներուն մէջէն որ վերջապէս պիտի տիրանան իրենց դարաւոր իրաւունքներուն, մեր ազգը պիտի կոչուի գրաւելու իր տեղը ազատ ժողովուրդներու նոր ընկերութեան մէջ»:[34] Եվ դեպքերի ընթացքը կարծես արդարացնում էր այդ սպասումները: 1918թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիան ճանաչեց իր պարտությունը եւ Մուդրոսում ընդունեց անգլիացիների կողմից ներկայացված զինադադարի պայմանները: Արդեն հայտնի էր, որ 1919թ. հունվարին Փարիզում պետք է հրավիրվեր հաղթող երկրների համաժողովը՝ պատերազմում պարտված երկրների հետ հաշտության պայմանագրերի նախապատրաստման եւ կնքման համար: Հայերը բոլոր հիմքերը ունեին հուսալու, որ այս անգամ կիրականացվի իրենց դարավոր իղձը՝ ազգային տարածքի վրա ինքնիշխան պետականության վերականգնումը:

Իսկ մինչ այդ, հայության հիմնական խնդիրն էր վերադարձը հայրենիքի ազատագրված շրջանները: Հայրենիք էր վերադառնում նաեւ ՀԲԸ Միությունը: Վերադառնում էր որպես մի կազմակերպություն, որը նախ եւ առաջ պարտավոր էր հոգալ իր խնամքի տակ գտնվող որբ երեխաների ու գաղթականների առողջության, կրթության եւ դաստիարակության համար: Իր գործունեության սկզբնական նպատակների այդ հարկադրված փոփոխմամբ Միությունը առավել մեծ պատասխանատվություն

էր ստանձնել ողջ հայության առջեւ, քանզի նրա հաջող գործունեությունից էր մեծապես կախված ազգի հարատեւումը:

1915 եւ հետագա տարիներին, բռնագաղթի ու տեղահանության ժամանակ մեծ թվով հայ երեխաներ եւ երիտասարդ կանայք ու աղջիկներ առեւանգվել էին թուրքերի, քրդերի ու արաբների կողմից: Կանայք եւ աղջիկները դարձան վաճառքի կամ փոխանակման առարկա, համալրեցին հարեմները, ծառայեցին իրենց տերերին: Նրանց ողբերգական ճակատագրի մասին այսպես է գրել Լեւոն Զորմիսյանը. «Այդ կիներուն եթէ ոչ ամբողջութիւնը, բայց ջախջախիչ մեծամասնութիւնը իրենց ներքին ապրումներուն մէջ, մինչեւ վերջ պահած են իրենց ազգութեան, կրօնքին, ծագումին հանդէպ հաւատարմութիւնը, երբեք չեն մոռցած իրենց անցեալը, ծնողքը, ծննդավայրը, ընտանեկան եւ ազգային բարքերն ու սովորութիւնները: Անոնք ենթարկուած են սակայն ոչ միայն բռնադատեալ աշխատանքի, ծեծերու, հարուածներու, այլատեսակ բռնութիւններու ճնշումին, բայց մանաւանդ բարոյական սարսափի մը: Սպաննուելու վախին տակ ապրած են ամէն օր, մանաւանդ փախուստի փորձի մը պահուն: Անոնց բոլորին մօտ կազմուած է այն համոզումը որ աշխարհի վրայ այլեւս հայ չէ մնացած, բոլորը սպաննուած են եւ իրենք ալ պիտի սպաննուին, երբ փախուստի դիմեն»:[35]

Այլ էր հայ երեխաների պարագան: 1915թ. վերջերին ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի մի կարգադրությունը վերաբերում էր հայ որբերին. «Հավաքեցեք եւ պատսպարեցեք միայն փոքրահասակ որբերին, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողների կրած սարսափները: Մյուսներին ուղարկեք քարավանների հետ»:[36] Պետք է ընդունել, որ Թալեաթի հաշվարկը ճիշտ էր: Այդ տարիքում, երբ երեխայի մեջ դեռ չի ձեւավորվել ազգային ինքնագիտակցությունը, «մենք-նրանք» հակադրությունը իր տարբեր դրսեւորումներով, հայտնվելով այլ ազգային-մշակութային միջավայրում, նա բավական արագ եւ դյուրությամբ է ընկալում եւ որդեգրում շրջապատի հիմնական հատկանիշները: Այլ կերպ ասած, տվյալ դեպքում տեղի էր ունենում պետության կողմից կազմակերպված հայ երեխաների հարկադրական, ստիպողական թրքացում:[37] Դրանից զատ, թուրքերը, ընդհանրապես մահմեդականները, հայ երեխաներ որդեգրելիս, ըստ ամենայնի, առաջնորդվում էին շարիաթի այն հայտնի դրույթով, որ մահմեդականացնելով այլակրոն երեխաներին, իրենք կարժանանան աստծո ողորմածությանը եւ մեծագույն վարձատրությանը անդենականի մեջ: Երկու դեպքում էլ արդյունքը նույն էր. «...թրքական շովենիզմը քաջալերիչ եւ եդեմաբոյր քարոզներէն գինովցած ամէն ճիգ թափեր է ջնջելու համար Հայութիւնը ոչ միայն ֆիզիքապէս, այլ բարոյապէս. դրոշմելով անոր հոգիին վրայ մահմետականութեան կնիքը: Մեր աչքերուն առջեւ ունինք որբեր, որոնք իրենց մատաղ հասակին մէջ խլուած իրենց հայրենական բոյնէն տարամերժօրէն ինկեր են Թուրք խուժանին գիրկը, ապրեր են անոնց հետ, սներ ու քներ են, եւ այդ շրջանին անզգայաբար ստացեր են թրքութեան ոչ միայն արտաքին կեղծութիւնը, այլ եւ ներքին աղտեղութիւններն ալ, հարէմական կեանքի պոռնկացած ամբողջ խայտառակութիւնները»:[38]

Զինադադարի առաջին իսկ օրից տասնյակ հազարավոր հայ որբերի եւ կանանց ազատագրումը դարձել էր ողջ հայության ամենահիմնական եւ ամենակարեւոր նպատակներից մեկը: «...Հարիւր հազարաւոր որբերու եւ կիներու ազատագրումը, զինադադարի հռչակումին առաջին օրերուն իսկ հրամայողական բարոյական պարտադրութիւն մը ճանչուած էր բոլոր Հայերուն կողմէ: Ոչ միայն զոհեր կը նկատուէին անոնք եւ հետեւաբար անոնց ազատագրութիւնը կը դառնար մարդկային, ազգային եւ կրօնական պարտականութիւն մը, այլ անոնց միջոցաւ անարգուած, անպատուած կը տեսնէին հայութիւնը իր ամբողջութեան մէջ, հետեւաբար պարտադրանքը կը ստեղծուէր այդ անարգանքը սրբելու ազգութեան ճակատէն: Այս զգացումները կը տիրապետէին Հայերուն եւ իւրաքանչիւր Հայ, ինչ պայմաններու եւ դիրքի մէջ ալ գտնուէր, իր շրջապատին մէջ կ'աշխատէր եւ կը գործէր անոնց ազդեցութեան տակ: Թուրքի մը, արաբի մը, քիւրտի մը քովէն հայ որբ մը կամ կին մը փախցնելը պարտականութիւն կը համարուէր, իւրաքանչիւր Հայու: Պէտք չունէին հրամանի կամ հրահանգի սպասելու, այդ պարտականութիւնը կատարելու համար»:[39]

Հայ որբերի եւ կանանց ազատագրմամբ զբաղվում էին ինչպես առանձին փոքրաթիվ ջոկատներ, այնպես էլ անհատներ, որոնք միսիոներների, բեդվինների դիմակի տակ շրջում էին հեռավոր գյուղերում եւ հայտնաբերելով իրենց ազգակիցներին՝ ազատագրում եւ փոխադրում էին նրանց հայաշատ կենտրոններ: Քանի որ ազատագրման հիմնական միջոցներից էր թուրք, քուրդ կամ արաբ տերերի դրամական վարձատրությունն ու կաշառքը, տարբեր երկրներում կազմակերպվում էին հատուկ հանգանակություններ անհրաժեշտ միջոցներ՝ փրկագին ապահովելու համար: ՀԲԸ Միությունը, որի համար «միշտ սրտին գործ մը եղաւ... անապատին խորքերը բռնագրաւած կամ թափառական որբերուն ազատագրումի, եւ միաժամանակ դեռատի հայուհիներու հարէմներէ ձերբազատումի կենսական ծրագիրը», 1919թ. հիմնեց Ազատագրումի հիմնադրամը եւ քաջալերեց «...Ագապա-Քէրէքի շրջանին մէջ Տ. Յովհ.Գըլըճեանի, Հորանի շրջանին մէջ Տ. Լեւոն Եօթնեղբայրեանի խումբին, ինչ-

պէս եւ Տէր Զօրի կողմերը Տ. Ռուբէն Հէրեանի այս ուղղութեամբ կատարած ազգօգուտ աշխատանքները»:[40] Միության նախագահ Պողոս Նուպարը, իր հերթին, նույն այդ նպատակին ծառայեցրեց իր անձնական կապերը եւ հեղինակությունը: Հ.Թոփուզյանը իր մենագրությունում գրում էր. «Դժվար է ասել, թե ինչպիսին կլիներ որբահավաքի ընթացքը, եթե Հիջազի գահակալ Հուսեյն իբն Ալին եւ նրա որդի Էմիր Ֆեյսալը մարդասիրաբար չմիջամտեին գործին: 1918թ. սկզբներին Հիջազի գահակալը, ընդառաջելով Պողոս Նուպար փաշայի դիմումին, օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդի դժբախտացած զավակներին: Մաանի եւ Ակաբայի կառավարիչներին կարգադրվեց հայերին հանձնել «մեծ ու փոքր, ամուսնացած եւ ամուրի աղջիկներն ու մանչերը»: Իսկ 1919թ. հունվարին Փարիզում Պողոս Նուպարի հետ ունեցած տեսակցությունից հետո «...Էմիր Ֆեյսալը կարգադրել էր... պարզել, թե «Ո՞ր արաբներուն եւ աշիրեթներուն քով հայ կիներ կամ աղջիկներ կամ որբեր կը գտնուին», որպեսզի «շուտով այդ հայերը, առնուելով արաբներու քովէն, յանձնուին հայերու կազմած ազգային ներկայացուցչական մարմնին»:[41] Բայց եւ այնպես, չնայած բոլոր ջանքերին հնարավոր եղավ ազատագրել նրանց միայն փոքր մասին:

Հենց այդ դժբախտների համար էր նախատեսված Հալեպի Ապաստարան-Աշխատանոցը, որը նախապես հիմնել էր տեղի Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդարանը եւ որին ՀԲԸ Միությունը սատարում էր ամսական նպաստով: 1919թ. վերջին Միության Հալեպի մասնաճյուղը ստանձնեց կանանց Ապաստարան-Աշխատանոցի ողջ մատակարարումն ու պատասխանատվությունը՝ Հայ Օրիորդաց միությանը վստահելով ներքին հսկողությունն ու աշխատանքների կազմակերպումը: Այս հաստատության նպատակն էր ծառայել որպես «...հանգրուան մը հաւաքուած որբերուն եւ անտիրական կիներու եւ աղջիկներու, որ ատեն մը հոն մնալէ յետոյ, մաքրուած, առողջացած եւ կազդուրուած, աստիճանաբար պիտի ղրկուէին իրենց վայրերը, անոք անչափահասները՝ Միութեան որբանոցները, ազգական ունեցող մեծերը՝ իրենց պարագաներուն, իսկ բոլորովին անտէրները՝ Աշխատանոցի բաժնին մէջ իրենց հարմար գործով մը պիտի զբաղուէին: Այս գեղեցիկ կարգադրութիւնը դժբախտաբար իր սկզբնավորութեան շրջանին մէջ իսկ հարկ եղաւ իր նուազագոյն աստիճանին վերածել, այն պատճառաւ որ որբահաւաքութեան գործը յանկարծ կասեցաւ, Տէր Զօրի եւ այլ վայրերու քաղաքական վիճակին յոռեգոյն դրութեան հետեւանքով»:[42]

Թեեւ տարագրության զոհերի ազատագրումը դարձել էր գրեթե անհնարին, այնուամենայնիվ հաջորդ մի քանի տարիներին եւս որոշ թվով

հայ կանայք եւ աղջիկներ կարողացան դիմել փախուստի: Ոմանք արագ գտնում էին իրենց ազգականներին եւ միանում նրանց, մյուսները ստիպված ապաստանում էին հատուկ այդ նպատակով հիմնված հաստատություններում, այդ թվում նաեւ Հալեպի Ապաստարանում: 1918-1921թթ. այնտեղ ընդունվել էին 161 հոգի, որոնցից 100-ը որոշ ժամանակ անց ուղարկվեցին իրենց ազգականների մոտ: Հետագա տարիներին ապաստարանում ապրում էր մոտ 50 հոգի, իսկ նրա գործունեության վերջին՝ 1927թ. 39 հոգի: Հալեպի Ապաստարանում նրանք զբաղվում էին ձեռագործով, գորգերի, գուլպայի պատրաստությամբ՝ կատարած աշխատանքի դիմաց ստանալով որոշ օրավարձ: Հաշվի առնելով նրանց կրած ֆիզիկական եւ հոգեկան բոլոր տառապանքները՝ խիստ կարեւոր էր Հայ Օրիորդաց միության անդամների հոգատար վերաբերմունքը: «Նկատելի է, որ Ապաստարան նոր մտած աղջիկները կամ կիները ընդհանուր առմամբ վատոյժ, հիւանդոտ, երբեմն գէշ ախտերով վարակուած արգահատելի վիճակ մը կը ներկայացնեն: Սակայն կարճ ժամանակ մը վերջ անոնք բոլորովին կը բարեփոխուին, շնորհիւ իրենց ստացած մայրական խնամքին եւ բարոյաբժշկական դարմանումին»:[43] Թե ապաստարանում եղած ժամանակ եւ թե հետագայում նրանք միշտ էլ խուսափեցին խոսել եւ պատմել իրենց ապրած տառապանքների մասին եւ ձգտեցին ընդմիշտ ջնջել բոլոր տեսակի հիշողությունները այդ տարիների մասին... 1918-1921թթ. ընթացքում ապաստարանում «...3 թուրք-հայ նորածիններ մեռած են»:

Նույն նպատակին էր ծառայում նաեւ ՀԲԸ Միության՝ Ադանայի Մերմերլի թաղում 1919թ. հիմնած Այրիանոց-Արհեստանոցը, ուր աշխատեցին եւ իրենց ապրուստը ապահովեցին մոտ 350 այրիներ եւ աղջիկներ:[44] Ամերիկյան Նպաստամատույց (Near East Relief) բարեսիրական կազմակերպության օգնությամբ այստեղ կազմակերպվեց գեղակերտ գորգերի, կարպետների, ինչպես նաեւ խիստ անհրաժեշտ գուլպաների արտադրություն: Հատկանշական է, որ այստեղ մեծ վարպետությամբ պատրաստվել էին «Պողոս Նուպար», «Զորավար Անդրանիկ», «Ներգաղթ» եւ «Լլոյդ Ջորջ» անվանաձոն գորգեր: Այս անվանումները յուրահատուկ խորհրդանիշներ էին այն արժեքների, որոնք այդ օրերին, պատմական այդ ժամանակահատվածում տիրում էին ժողովրդի մտայնության մեջ: Եվ եթե Պողոս Նուպարը խորհրդանիշն էր ՀԲԸ Միության, Զորավար Անդրանիկը՝ հայ ազատագրական պայքարի, ներգաղթը՝ Հայրենիքի, ապա Անգլիայի վարչապետի անունը խորհրդանշում էր այն հավատը, որ հայերը շարունակում էին տածել Արեւմուտքի նկատմամբ եւ որը պետք է վերանար ընդամենը մի քանի ամիս անց՝ Կիլիկիան թողնելուց հետո:

Կիլիկիա, վերադարձ եւ վերջին ելքը

Զինադադարից անմիջապես հետո մեծ թվով գաղթական հայեր շտապեցին վերադառնալ հայրենիք, հատկապես Կիլիկիայի ազատագրված շրջանները: Համաձայն որոշ տվյալների, մինչեւ 1919թ. վերջերը Կիլիկիա՝ Ադանա, Ցոլոր-Ցոլ, Մերսին, Հաճըն եւ այլ վայրեր վերադարձածների թիվը հասնում էր շուրջ 150.000-ի:[45] Նկատի առնելով դրա հետեւանքով ստեղծված ծանր վիճակը, ապրուստի համար ամենատարրական պայմանների եւ առաջին հերթին սննդամթերքի, հագուստի եւ աշխատանքի բացակայությունը՝ ՀԲԸ Միությունը իր բոլոր ուժերը եւ կարողությունները ի սպաս դրեց Կիլիկիայում բնականոն կյանքի հաստատման գործին: Այդ առումով շատ կարեւոր դեր խաղաց Միության տեղի մասնաճյուղերի վերակազմավորումը:

Արդեն 1919թ. գարնանը Միությունը Ադանա առաքեց մոտ 90 հակ զանազան զգեստ, դեղորայք, երկրագործական ու արհեստագործական տարբեր սարքավորումներ ու գործիքներ, ինչպես նաեւ 2000 եգիպտական ոսկի: Կիլիկիայի ազատագրման առաջին իսկ օրերից Մերսին նավահանգստային քաղաքը դարձավ գաղթականության ամենակարեւոր կենտրոնը: Սկսած 1919թ. առաջին ամիսներից, ամեն շաբաթ շուրջ 1000 գաղթական էր գալիս Մերսին, որպեսզի այստեղից շարունակեր ճանապարհը դեպի հայրենի վայրերը: Այդ նավահանգիստը «...իրերու բերմունքով եւ Եգիպտոսի մերձաւորութեան պատճառաւ կոչուած էր շատ մեծ դեր մը խաղալու: Կեդրոնին գլխաւոր մտահոգութիւնը Կիլիկիա համախմբուող տարագիրներու օգնութեան եւ որբերու պատսպարութեան ծանր գործն էր, եւ Մերսին պիտի ըլլար այդ գործին շտեմարանը, անկէ պիտի ճիւղաւորուէին Միութեան օգնութիւնները դէպի Կիլիկեան ուրիշ կեդրոններ»:[46]

Շուրջ հինգ տարիների գաղթական կյանքը անխուսափելիորեն ծանր էր անդրադարձել հայրենիք վերադարձող հայերի առողջական վիճակի վրա: Եթե հիվանդ երեխաներին անհրաժեշտ բժշկական օգնություն էր ցույց տրվում որբանոցներում ու վարժարաններում, ապա մեծահասակները գրեթե լրիվ զրկված էին այդ հնարավորությունից: Ստեղծված իրավիճակում անհետաձգելի էր դարձել հիվանդանոցների եւ դարմանատների կազմակերպումը Կիլիկիայում, որը եւ սկսեցին իրականացնել ազգային եւ արտասահմանյան որոշ կազմակերպություններ, այդ թվում նաեւ ՀԲԸ Միությունը: Իր առաջին հիվանդանոցը Միությունը բացեց հենց Մերսինում՝ 1919թ. մայիսին: Մերսինի հիվանդանոցում՝ նրա ավելի քան երկու տարվա գոյության ընթացքում, բուժում ստացան մոտ 550 մարդ, իսկ դարմանատան ծառայություններից օգտվողների թիվը շուրջ 6400 էր,

այդ թվում, բացի հայերից նաեւ հույներ, հրեաներ: Այս հիվանդանոցում ծնվեց 29 երեխա, որոնք ազատագրված Կիլիկիայում ծնված առաջին հայ երեխաներից էին:

1919թ. նոյեմբերին Մերսին տեղափոխվեց Պորտ Սայիդի որբանոցը իր ողջ կազմով: 1921թ. սկզբին Մերսինի երկսեռ որբանոցը հաշվում էր 404 երեխա, որոնք ուսում էին ստանում բարձրագույն նախակրթարանի ծրագրով: Շարունակելով ավանդույթը՝ այստեղ նույնպես հիմնվեցին մանկապարտեզ, նախակրթարան, 120 հոգուց բաղկացած բոյ-սքաութների կազմակերպություն, ինչպես նաեւ արհեստանոց՝ կոշկակարության եւ ատաղձագործության ճյուղերով: Որբանոցի տեսուչը Միությանը ուղղած իր տեղեկագրում հասկանալի հպարտությամբ գրում էր. «Իւրաքանչիւր սան ունի երկու ձեռք զգեստ, իսկ սանուհիները երեք. ամէնն ալ ունին երկուական ձեռք ճերմակեղէն, կօշիկ, գուլպայ, թաշկինակ, անձեռոց եւ այլն, իսկ անջատաբար Պոյ-Սքաութները համազգեստ եւն»:[47]

Պորտ Սայիդից Միությունը հայրենիք տեղափոխեց նաեւ Սիսուան վարժարանը, որի սաները հիմնականում Սուեդիայի վերոհիշյալ 6 գյուղերի մուսալեռցի երեխաներն էին: Եվ քանի որ այդ բոլոր գյուղերը գտնվում էին ազատագրված շրջանում՝ Ալեքսանդրետի սանջակում, որոշվեց նախկին մեկ մեծ դպրոցի փոխարեն «Սիսուան վարժարաններ» ընդհանուր անվան տակ բացել մեկական դպրոց ամեն մի գյուղում: Շնորհիվ դրա Քեպուսիյե, Հաճի Հապիպլի, Պիթիաս, Ցողուն Օլուգ, Խըտրը Պեկ, եւ Վագըֆ հայկական գյուղերը առաջին անգամ ունեցան սեփական ազգային վարժարաններ, որոնցում 1921թ. ուսանում էր 679 աշակերտ:

Իսկ Ալեքսանդրետում, որի հայ բնակչությունը զինադադարից հետո բազմապատկվել էր հատկապես գաղթականների հաշվին, Միության «առաջին անմիջական գործերը եղան զանոնք սնուցանել, հագուեցնել, դարմանել, խնամել, ինքնաբաւ դարձնել... Բոլոր նպաստընկալները Միութեան կողմէ ղրկուած նոյն միակերպ հագուստը կը կրէին, այնպէս որ քաղաք մտնող մը միակ ակնարկով մը կրնար հասկնալ այն մեծ դերը զոր Միութիւնը կը կատարէր զարհուրանքէն ճողոպրած թշուառ ժողովուրդին վերածնութեան գործին մէջ»:[48] Առաջ անցնելով նշեմ, որ Միության նմանօրինակ գործունեությունը առավել ընդլայնվեց 1922թ., երբ այստեղ հաստատվեց Կիլիկիայի՝ թուրքերին հանձնած շրջաններից հեռացած շուրջ 15.000 հայ: ՀԲԸ Միությունը նախ՝ 1922թ. փետրվարին, հիմնեց Նուպարեան վարժարանը, որի կառուցման համար օգտագործվեցին Ցորթ-Ցոլի հաստատություններից այստեղ փոխադրված փայտեղենը եւ ուրիշ այլ նյութեր: Այդ դպրոցի աշակերտների թիվը տարեկան կազմում էր մոտ 300 հոգի: Նույն թվականին Միությունը Ալեքսանդրետում հիմնեց

նաեւ դարմանատուն, որի առաջնային խնդիրն էր մալարիայով հիվանդացած բազմաթիվ մարդկանց բուժումը:

Խորհրդանշական իմաստ ունեցավ Քէլէկեան որբանոցի վերաբացումը Տյորթ-Յոլում՝ 1919թ. հուլիսին: Այդ գյուղաքաղաքի 15.000-անոց հայ բնակչությունից վերապրել էին միայն 3000-ը, որոնք էլ իրենց միացած այլ գավառների մոտ 1000 գաղթականների հետ վերադարձան հայրենի օջախներ: Տյորթ-Յոլ վերադարձածների թվում էր նաեւ Մինաս Խապրիկը, որը շատ տարիներ անց վերհիշում էր. «Քէլէկեան որբանոցի աչքառու շէնքը, արդիական կառուցուածքով, մեր առջեւն էր: Ներսը մարդկային ոչ մէկ հետք նշմարելի էր: Մեր առած տեղեկութիւններուն համաձայն, թուրքերը զայն վերածած էին զինուորական զօրանոցի եւ հայերուն վերադարձը իմանալով, շէնքը լքած ու փախած էին»:[49] Սկզբնական շրջանում որբանոցում տեղավորվեցին տարբեր գյուղերից եւ քաղաքներից որբ մնացած ավելի քան 200 երեխաներ, որոնք մեծերի հետ միասին մասնակցեցին որբանոցի շինությունների ու պարտեզների վերականգնմանը: Տյորթ-Յոլի շրջանում պատերազմական գործողությունները չէին դադարում, եւ երեխաները ապրում էին մի տեսակ կիսազինվորական կյանքով. «Թշնամիին գնդակներու սուլոցին արդէն վարժուած են մեր ականջները: Որբանոցին մէջ ամէն ոք իր պարտականութիւնը կը կատարէ, առանց ազդուելու դուրսի անցուդարձէն՝ որոնք այնքան մօտիկ են մեզի...»:[50] Հակառակ Տյորթ-Յոլում տիրող անապահով վիճակին, այստեղ վերադարձած հայերի, այդ թվում նաեւ որբերի թվաքանակը այնքան մեծ էր, որ Միությունը նույն 1919թ. վերջերին ստիպված եղավ բացել եւս մեկ՝ Սիսուան որբանոց, որ պատսպարեց շուրջ 300 երեխաների: «Կրթական մարզին մէջ,- նշում էր Մ.Խապրիկը,- Քէլէկեան եւ Սիսուան որբանոցները կը շարունակէին իրենց սովորական ընթացքը. մասնաւորապէս այդ վերջինը, որ կառուցուած էր քաղաքին կեդրոնը ՀԲԸ Միութեան միջոցաւ, իր մէջ հաւաքուած երկու հարիւրի մօտ որբերուն կը ճամբէր լաւ դաստիարակութիւն մը»:[51]

1919թ. հուլիսին Միությունը Տյորթ-Յոլում նույնպես հիմնեց հիվանդանոց եւ դարմանատուն, որոնք միակ բժշկական հաստատություններն էին գյուղաքաղաքում: Մինչեւ 1921թ. վերջը հիվանդանոցում բուժում էր ստացել ավելի քան 700, իսկ դարմանատնում՝ մոտ 25.000 մարդ:

Այդ նույն օրերին, երբ հայությունը վերադառնում էր ազատագրված շրջանները, դժվարին պայմաններում փորձում վերաշինել իր հայրենիքը, այն հույսով, եթե ոչ համոզմամբ, որ այլեւս ուրիշ շատ ժողովուրդների նման պետք է ապրի ազատ կյանքով, այդ նույն ժամանակ Եվրոպայի մեծ պետությունները վերանայում էին իրենց ազդեցության ոլորտները, ռազմաքաղաքական նպատակներն ու շահերը, որոնք հերթական անգամ հակասեցին Կիլիկիայում ազգային-քաղաքական ինքնորոշում ձեռք բերելու հայերի ձգտմանը: Միեւնույն ժամանակ թուրքերը՝ Աթաթուրքի գլխավորությամբ, համախմբելով եւ վերադասավորելով իրենց ռազմական ուժերը եւ զինելով ողջ բնակչությանը, ոչ միայն պահանջեցին ֆրանսիական բանակի հեռացումը Կիլիկիայից, այլեւ ռազմական գործողություններ ծավալեցին թե նրանց եւ թե հայրենադարձ հայերի դեմ: Երբ 1920թ. հունվարին թուրքերը կազմակերպեցին Մարաշի հայության կոտորածը եւ այն էլ ֆրանսիական զինվորական իշխանությունների ներկայությամբ, նրանք համոզվեցին, որ հաջողությամբ կարող են ավարտին հասցնել հայերի բնաջնջման գործը:

1920թ. մարտին քեմալականների հերթական զոհը դարձան Հաճընի հայերը, որոնք իրենց ծննդավայրն էին վերադարձել 1919թ. օգոստոսին: Ինչպես եւ ամենուրեք, տեղի բնակչությունը, այդ թվում նաեւ շուրջ 1200 որբ երեխաներ, նույնպես հայտնվել էին խիստ ծանր վիճակում: ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության որոշումով տեղի վերակազմավորված մասնաճյուղը ձեռնամուխ եղավ հիվանդանոց եւ որբանոց հիմնելուն, որոնց բացումը դեկտեմբերի 14-ին կատարեց առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաճյանը: Միությունը ծրագրել էր հիմնել նաեւ նոր որբանոց եւ այրիների համար՝ աշխատանոց, սակայն, 1920թ. առաջին իսկ օրերից իրադրությունը կտրուկ փոխվեց՝ քեմալական զորքերը շրջապատեցին Հաճընը: Ի պատասխան հաճընցիների դիմումներին, Կիլիկիայի ֆրանսիական իշխանությունները պատասխանեցին, որ իրենք ի վիճակի չեն օգնելու: Հաճընցիները դիմեցին ինքնապաշտպանության եւ շուրջ ութ ամիս հերոսաբար դիմադրեցին թուրքական բանակին: Բայց ուժերը խիստ անհավասար էին, եւ հոկտեմբերի 15-ին թուրքերը գրավեցին քաղաքը:

«...1920 Հոկտեմբեր 15-ին, ութը ամսուան հերոսական ինքնապաշտպանութենէ մը ետք, որ անմոռաց պիտի մնայ մեր ազգային տարեգրութեանց մէջ, քաղաքը կ'իյնայ, եւ աւելի քան 10.000 բնիկներ ու բազմաթիւ եկուոր գաղթականներ, որոնց հետ նաեւ Միութեան որբերը իրենց պաշտօնեաներով, ինչպէս նաեւ Հիւանդանոցին պաշտօնէութիւնը կը նահատակուին զարհուրելի պայմաններու մէջ: Միութեան տարաբախտ ծերունի բարեկամը, Յակոբ աղա Քըրքեաշարեան, առաջին զոհերէն մէկը կ'ըլլայ: Որբանոցին Տեսուչ Տ. Լեւոն Փափազեան կը նախընտրէ իր կինն ու աղջիկը սպաննել քան թողուլ Թուրքերուն ձեռքը, եւ ինք իսկ, ուժասպառ, իր խնդրանքով կը սպաննուի պաշտօնակցի մը՝ Տ. Գ. Պաղտիկեանի կողմէ, որ նոյնպէս զոհ պիտի երթար սպանդին:

«Թուրքերը, նոյն ատեն քաղաքը հրկիզելով, բոցերուն մէջ կը նետեն որբերը, որոնց ածխացած դիակները կը տեսնեն փախստական կիներ: Որբերէն չափահասները, պաշարման վերջին ատենները արիաբար կը կռուէին Հաճընի այրերուն կողքին: Շատերը կը ծառայեն իբր սուրհանդակ, եւ մաս մըն ալ զանազան դիրքերու միջեւ պարէնի ու ռազմամթերքի փոխադրութեան վտանգաւոր գործը կը ստանձնեն: Միութեան Մասնաժողովը, այդ ահաւոր րոպէին, լոկ Որբանոցին վրայ կը խորհի: Բոլոր անդամներն ալ անոր շուրջ կը սպաննուին: ...Ահռելի սպանդէն կ'ազատուին միայն 350 հոգի, որ քաղքէն դուրս յարձակելով կը յաջողին խզել պաշարման գիծը եւ երկար չարչարանքներէ վերջ Ատանա կը ժամանեն իրենց միացած 9 որբերու հետ...»:[52]

Վերլուծելով Ֆրանսիայի քաղաքականությունը այդ տարածաշրջանում, 1916-1922թթ. Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեյվիդ Լլոյդ Ջորջը գրում էր. «Հայերի ոչնչացման եւ ստրկացման արդյունքում միայն Կիլիկիան վերջին տարիներին դարձավ թուրքական: Ֆրանսիացիները, անտեսելով ամեն բան, կառչում էին Կիլիկիայի նկատմամբ՝ Սայքս-Պիկոյի չարաբաստիկ համաձայնագրով տրված իրենց իրավունքներից: Սակայն նրանց բուռն սերը այդ անհանգիստ, թանկ եւ անեկամտաբեր ձեռք բերվածքի հանդեպ աստիճանաբար սառչում էր: Ի վերջո, իրենք հրաժարվեցին նրանից, համարելով այն բացարձակ անշահավետ: Որքան անախորժություններից կարելի էր խուսափել, եթե դա արվեր ավելի շուտ. Ֆրանսիացիներին պարտության մատնելը բարձրացրեց Քեմալի վարկը, խրախուսեց ազգայնականների նոր հարձակումները օկուպացված այլ տարածքների վրա, ցրեց վախը մեծ պատերազմում հաղթողների անխորտակելի հզորության հանդեպ... Ֆրանսիական եւ ոչ մի կառավարություն բավականաչափ քաջություն չունեցավ, որպեսզի կամ ընդհանրապես հրաժարվի Կիլիկիայից, կամ էլ պաշտպանի այն»:[53]

Այդ առումով հատկանշական է հետեւյալ դրվագը ՀԲԸ Միության Տյորթ-Ցոլի Սիսուան որբանոցի տեսուչ Հմայակ Գրանյանի հիշողություններից: «Տէօրթ-Եօլի ութ հազար հայերուն մէջ, դեղի համար, միայն մեկ թուրք կար, դատարանին նախագահը... «բարի» մարդ մըն էր, տէօրթեոլցիներէ սիրուած: ...Որբանոցին շինութեան սկսուելէ քանի մը ամիս ետք, օր մը ինծի այցելութեան եկաւ... Քաղաքավարական քանի մը խօսքերէ յետոյ՝ զիս մեկ կողմ քաշեց եւ ականջիս փսփսաց. «Տղաս, գիտես որ ես հայերը շատ կը սիրեմ, քեզի հանդէպ ալ համակրութիւնս հայրական է: Այդ դրամը զոր դուք այս հողին մէջ կը թաղէք եւ անոր վրայ որբանոց կը բարձրացնէք՝ որբի, եթիմի դրամ է, մի՛ ծախսէք, մեղք է: Դուք հոս պիտի չմնաք, նորէն մուհաճիր պիտի ըլլաք եւ որբանոցը թուրք մետրեսէ կամ եթիմխանէ պիտի ըլլայ: Ասկէ աւելին չեմ կրնար ըսել...»:[54]

Իհարկե, միայն այս թուրքը չէ, որ կանխագգում էր ապագա դեպքերի ընթացքը: Դեռեւս 1920թ. մայիսին, այդ տարիներին որբախնամ գործունեությամբ անձնվիրաբար զբաղվող հանրաճանաչ գրող Զապել Եսայանին ուղղված իր նամակում Վահան Մալեզյանը գրում էր. «Ամէն պարագայի մէջ ստեղծուած կացութիւնը մտահոգիչ է, ոչ միայն որբերուն ներկայ այլեւ ապագայ վիճակին տեսակէտով, քանի որ Կիլիկիա թրքական հողամաս հռչակուած ըլլալով, կարելի չէ ազգին սաները վստահիլ մեր դահիճներուն: Հետեւաբար քիչ օրէն անոնց փոխադրութեան հարցը պիտի ցցուի մեր առջեւ շատ աւելի լուրջ ձեւով մը»:[55]

Եվ ահա, շուրջ մեկ ու կես տարի անց, այդ օրը եկավ: 1921թ. հոկտեմբերին կնքված թուրք-ֆրանսիական պայմանագրով ֆրանսիական զորքերը մինչեւ տարվա վերջը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից: Պայմանագիրը մեծ խուճապ առաջացրեց քրիստոնյա բնակչության մեջ, որը հապճեպ սկսեց հեռանալ Կիլիկիայից: ՀԲԸ Միությունը, խիստ մտահոգված լինելով իր որբանոցների ճակատագրով, դիմեց Կիլիկիայի ֆրանսիական իշխանություններին, որոնք թելադրեցին չտեղափոխել հաստատությունները, քանի որ ...Թուրքիան խոստացել էր հարգել ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ի վերջո, ՀԲԸ Միության նախագահ Պողոս Նուպարի անձնական դիմումների շնորհիվ հնարավոր եղավ ապահովել ֆրանսիացիների համաձայնությունն ու օժանդակությունը: «Քանի որ հակառակ ֆրանսիական կառավարութեան կողմէ եղած ջանքերուն եւ ձեզի համար ձեռք բերուած երաշխաւորութեանց, կը պնդէք ձեր որբանոցները այլուր փոխադրելու մասին,- գրում էր Պողոս Նուպարին ֆրանսիական լիազոր Ֆ.Պոլիոն,- ձեզ կը հաւաստեմ թէ Տէօրթ-Եօլի եւ Մերսինի ֆրանսիական իշխանութեանց կողմէ այս մասին մինչեւ 31 դեկտեմբեր 1921թ. ձեզի ամէն դիւրութիւն պիտի ընծայուի: Հաճեցէք սկսել այդ իշխանութեանց հետ յարաբերութեան մէջ մտնել»:[56]

Միությունը ստիպված էր արագ կազմակերպել իր հաստատությունների տեղափոխումը Կիլիկիայից: Հմայակ Գրանյանը վերհիշում է. «Դեկտեմբերի 31-ի առաւօտ, Միքայէլ Նաթանեանի հետ, Սիսուան եւ Քէլէկեան որբանոցներու բանալիները, կահ-կարասիներու ցուցակները եւ զոյգ շէնքերու ֆիզիքական նկարագրութիւնը... տարինք ֆրանսացի կառավարիչ՝ գնդապետ Քլեմանին յանձնեցինք եւ արցունքոտ աչքերով վերադարձանք որբերուն, առաջնորդելու համար երկաթուղագծին կայարանը եւ անկէ Իսկենտերուն, վերջին անգամ ալ, մօտ հազար բերնով, երգելով.

Ցանկամ տեսնել, զիմ Կիլիկիա...

Աշխարհ ո՛ր ի՛նձ ետո՛ւր արե՛ւ»:[57]

Այս երեխաները արդեն երկրորդ անգամ էր, որ պարտադրուած հեռանում էին իրենց հայրենիքից, այս անգամ արդեն վերջնականապես:

Բայց Միության ղեկավարությունը կարծես հրաժարվում էր հաշտվել այդ մտքի հետ: «Միութիւն» ամսագրի նույն 1921թ. սեպտեմբեր-հոկտեմբերի համարում տպագրված էր «Միութիւնը կ'օգնէ երկրին մէջ միայն» վերնագրով յուրահատուկ հայտարարությունը: Հիշեցնելով, որ Միության նպատակն է օգնել հայրենի հողին հավատարիմ մնացող ժողովրդին, վրդովմունք էր հայտնվում՝ նպաստ հատկացնելու խնդրանքով Եգիպտոս գաղթածներից ստացված դիմումների առիթով: «Միանգամ ընդմիշտ կը յայտարարենք թէ երկրէն դուրս ՀԲԸ Միութիւնը աղքատախնամ կամ գաղթախնամ մարմին մը չէ...»:[58]

Բեյրութ եւ Հալեպ: Քէլէկեան-Սիսուան որբանոց

Կիլիկիայից իր հաստատությունները տեղափոխելիս, Միության ղեկավարությունը ստիպված էր հաշվի առնել մի շարք հանգամանքներ: Բնական է, որ որբանոցները պետք էր փոխադրել մերձակա երկրներից մեկը, ուր երաշխավորված կլինեին երեխաների անվտանգությունն ու որբանոցների կանոնավոր գործունեությունը: Ըստ նախնական որոշման՝ որբանոցները պետք է տեղափոխվեին Կիպրոս, սակայն համապատասխան շենքերի բացակայության պատճառով նպատակահարմար համարվեց դրանց փոխադրումը Լիբանանի Զմմար եւ Աշխուտ վայրերը: Շատ շուտով, սակայն, պարզ դարձավ, որ «...այս վայրերը, իրենց բարձր դիրքին ու քաղաքէն (Բեյրութից - Էդ.Մ.) հեռաւորութեան, ինչպէս եւ շէնքերու անբաւականութեան եւ ջուրի սակաւութեան պատճառաւ հեռի էին մեր որբանոցներուն վերջնական եւ բաղձացուած հանգրուանը ըլլալէ»:[59] Ի վերջո Միության որբանոցները փոխադրվեցին Բեյրութ:

Բեյրութում ՀԲԸ Միության մասնաճյուղը հիմնվել էր 1910թ. ու թեեւ այդ ժամանակ Բեյրութում բնակվում էր ընդամենը 50-55 հայ ընտանիք, այնուամենայնիվ, մասնաճյուղի առաջին անդամների թիվը հասավ 40-ի: Պատերազմի պատճառով կազմալուծված մասնաճյուղը վերսկսեց իր գործունեությունը 1918թ.: Հետագա երեք տարիների ընթացքում համեմատաբար համեստ դեր էր վերապահված նրան, քանզի այստեղ ապաստանած հայությունը շտապում էր վերադառնալ ազատագրված հայրենիք: Իրադրությունը կտրուկ փոխվեց 1922թ. առաջին իսկ ամիսներին, երբ Բեյրութ սկսեցին գալ մեծ թվով հայեր Կիլիկիայից: Նույն այդ օրերին՝ 1922թ. փետրվարին Միության տեղական մասնաժողովի ատենապետ է ընտրվում հայ համայնքի ամենահարգված եւ հայտնի դեմքերից մեկը՝ Օննիկ Մազլումյանը (Պարոն): «Մասնաժողովը...,- կարդում ենք «Ոսկեմատեան»-ում,- շատ մեծ օժանդակութիւն մը ընծայած է Կիլիկիոյ գաղթականներուն, ոչ միայն Պէյրութ խոնուած տարագիրներու նպաստի գործին գլուխ կանգնելով եւ ընդհանուր թշուառութիւնը ամոքելու աշխատելով, այլ նաեւ Պէյրութէ դուրս միւս տարագիրներուն համար Միութեան Կեդրոնին կողմէ առաքուած մեծաքանակ պարէնը, հագուստները, եւլն բաժնելու, եւ ժողովուրդին ուրիշ կարգի պէտքերը հոգալու ծանր գործերը կատարելով»:[60]

Բեյրութի մասնաժողովի ջանքերով քաղաքի Էշրեֆիյե թաղում վարձվեց ընդարձակ՝ հրեաների կողմից հատկապես վարժարանի համար կառուցված շենքը: Շենքի հարմարությունները հնարավոր դարձրին Մերսինի եւ Տյորթ-Յոլի երեք որբանոցների վերակազմավորումը եւ վերածումը երկուսի. Քէլէկեան որբանոց՝ տղաների նախակրթարան եւ Սիսուան որբանոց՝ աղջիկների նախակրթարան: Բացի այդ, նույն շենքում սկսեց գործել նաեւ երկսեռ մանկապարտեզ:

1922թ. վերջին Բեյրութի Քէլէկեան - Սիսուան որբանոցը ուներ 581 սան-սանուհիներ, որոնց սեռատարիքային կազմը հետեւյալն էր.[61]

	Տարիք		
	տղաներ	աղջիկներ	ընդամենը
մինչեւ 6	8	1	9
6-8	37	15	52
8-10	52	30	82
10-12	90	45	135
12-14	99	71	170
14-ից բարձր	107	26	133
Ընդամենը	393	188	581

Քէլէկեան-Սիսուան որբանոցը եղավ ՀԲԸ Միության ամենախոշոր որբախնամ հաստատությունը. 1922-1930թթ. նրա երկսեռ սանների քանակը տարեկան կազմում էր միջինը 350-400 հոգի եւ միայն նրա գոյության վերջին երկու տարիներին այս քանակը սկսեց նվազել՝ 1931թ. 234 եւ 1932թ. 90 սան: Որբանոցից երեխաների հեռանալու պատճառները տարբեր էին՝ շրջանավարտներ, ամուսնացած սանուհիներ, ազգականներին հանձնվածներ, այլ հաստատություններ, հատկապես մեծահա-

սակների պարագայում Միության աշխատանոցներ տեղափոխվողներ եւ այլն: Որբանոցներից հեռացողներին փոխարինում էին նորերը: Առաջին զանգվածային համալրումը տեղի ունեցավ 1926թ., երբ Միությունը Երուսաղեմի Արարատեան եւ Վասպուրական որբանոցները փակելուց հետո, այնտեղ մնացած 298 երեխաներին (139 տղա եւ 159 աղջիկ) տեղափոխեց Քէլէկեան-Սիսուան որբանոց: 1928թ. Լիբանանի Ճունիե քաղաքում Եգիպտոսի Որբախնամ Ընկերության հիմնած որբանոցի նյութական անձկության պատճառով նրա սանուհիները հայտնվել էին խղճալի վիճակում: ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը, հաշվի առնելով Եգիպտոսի Միության Շրջանային Վարչության առաջարկությունը, որոշում է ստանձնել այդ որբանոցի 64 որբուհիների եւ 1 որբի խնամատարությունը եւ նույն թվականի մայիսին տեղափոխում է նրանց Քէլէկեան-Սիսուան որբանոց:[62] Մինչ այդ, 1927թ. Միությունը Ազգային պատվիրակության եւ Ամերիկյան Նպաստամատույցի հանձնարարությամբ ստանձնել էր նաեւ Կեսարիայում մնացած 53 որբերի հոգատարությունը, որոնք 1928թ. նույնպես դարձան Քէլէկեան-Սիսուան որբանոցի սաներ:[63] Այդչափ կարճ ժամանակահատվածում ավելի քան հարյուր որբերի ընդունման պատճառով հաստատությունում առաջ եկավ խճողում, եւ Միությունը ստիպված եղավ վարձել եւս մեկ շենք:

Որոշ ժամանակ անց հայտնի դարձավ, որ Կեսարիայում հավաքվել է որբերի 61 հոգիանոց մի նոր խումբ, որի մասին Ամերիկյան Նպաստամատույցի ներկայացուցիչ տիկին Ա.Դուայթը հետեւյալ տեղեկություններն էր հայտնում Միությանը. «Կեսարիոյ մէջ զանազան վայրերէ հաւաքուած խնդրոյ նիւթ որբերուն թիւն է 61, որոնց 35-ը մանչ եւ 26-ը աղջիկ: Ատոնցմէ 26-ը 6-9 տարեկան են, 33-ը 10-15, եւ երկուքն ալ 17 եւ 19 տարեկան: Ութը միայն անծնող որբեր են, տարագրութենէ առաջ ծնած. մնացեալները, մասամբ ծնողք ունին կամ գոնէ մայր մը, որ սակայն լքած են իրենց զաւակները: Կեսարիոյ որբանոցը ղրկելով, այդ ծնողքներէն կամ մայրերէն շատեր կրկնամուսնացած են, ոմանք թուրքերու հետ եւ ոմանք ալ չքաւոր են եւ իրենց զաւակներով չեն կրնար զբաղուիլ»:[64]

Նրանցով պետք է զբաղվեր ՀԲԸ Միությունը, որն իր մասին որոշ դառնությամբ գրում էր. «...միակ կամ առաջին կազմակերպութիւնը ...որուն կը դառնան իսկոյն բոլոր ակնարկները նմանօրինակ տագնապներու առթիւ...», եւ շարունակում. «...բայց անգամ մը եւս հարկ կը տեսնենք աւելցնել թէ ներելի չէ սակայն անպատճառ Միութենէն սպասել ամէն օգնութիւն, երբ կան ազգային բարենպատակ բազմաթիւ ընկերութիւններ ալ որ ունին տրամադրելի հիմնադրամներ եւ կը գոյացնեն բաւարար հասոյթներ»:[65] Բայց եւ այնպես, Միությունը, ինչպես եւ սպասվում

էր, ստանձնեց նաեւ Կեսարիայի որբերի երկրորդ խմբի խնամքը: Պողոս Նուպարի, Տիգրան խան Քելեկյանի, Պատրիկ Կյուլպենկյանի նվիրատվությունների շնորհիվ այդ երեխաները 1929թ. մայիսին նույնպես տեղավորվեցին Քէլէկեան-Սիսուան որբանոց: Սակայն քիչ անց, 1930թ. կեսերին Միությունը սկսեց «թախանձագին» դիմումներ ստանալ Կեսարիայի որբերի եւս մեկ՝ արդեն երրորդ խումբը պատսպարելու խնդրանքներով: Այս երեխաների տեղավորման հետ կապված հարցերի կարգավորումը եղավ Գալուստ Կյուլպենկյանի՝ որպես Միության նորընտիր նախագահի, գործունեության առաջին քայլերից մեկը: Նրա՝ այդ ժամանակվա ամենահարուստ եւ ամենաազդեցիկ մարդկանցից մեկի առաջին իսկ դիմումը բավական եղավ, որպեսզի ֆրանսիական իշխանությունները, որոնք մինչ այդ ամիսներ շարունակ հրաժարվում էին վիզաներ տալ որբ երեխաներին, անմիջապես լուծեն այդ հարցը: Նա նաեւ հանձն առավ Կեսարիայի որբերի երրորդ խմբի ընդունման, տեղավորման, խնամքի եւ այլ նպատակների համար տարեկան հատկացնել 600 անգլ. ոսկի:[66]

Այսպիսով, 1926 եւ 1928-1931թթ. Ճունիեյից, Կեսարիայի եւ Միության Երուսաղեմի երկու որբանոցներից Միության Բեյրութի Քէլէկեան-Սիսուան որբանոց ընդունվեցին կամ տեղափոխվեցին շուրջ 500 որբ երեխա: Բացի այդ, յուրաքանչյուր տարի որոշ թվով որբեր գալիս կամ տեղափոխվում էին այլ վայրերից:

Որբանոցներում տեղավորված երեխաները այդպես էլ մեծացան ծնողական սիրո, ընտանեկան հարկի անձկալի կարոտով, որոնք այնքան անհրաժեշտ էին, հաշվի առնելով նրանց հոգեկան վիճակը: ԱՄՆ-ի Քլարկ համալսարանի պրոֆեսոր, հոգեբան Հ.Պողոսյանը այդ նույն տարիներին հրատարակած «Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ» իր գրքում գրում էր. «Զարդերու թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ մտային ազդեցութիւնները միայն ջարդի ընթացքին չեն, այլ անկէ ետքն ալ կը շարունակեն: Զարդերու իւրաքանչիւր տեսարանն ու անոնց ազդեցութիւնները ենթակային ջղային դրութեան վրայ բան մը կ'աւելցնեն եւ ժամանակ մը յետոյ կուտակուելով, իրարու վրայ բարդուելով, ահաւոր վնասի մը, հոգեկան սոսկալի երեւոյթի մը պատճառ կը դառնան: Այդ սոսկալի վտանգները, ահեղ տեսարանները, սիրելիներուն չարչարանքներն ու մահը, նեղութիւնները, խուժանային ահռելի ձայները, հրացանաձգութիւնները, հրդեհները, թալանն ու կողոպուտը, եւն, եւն, անոնք ամբողջը կը կուտակուին եւ սոսկալի կերպով կը շարունակեն իրենց յետագա ազդեցութիւնները»:[67]

Նման դաժան բախտի տեր երեխաները մեր օրերում գտնվում են հոգեբանների հատուկ խնամքի տակ, իսկ այն տարիներին նրանց դաստի-

արակներն ու ուսուցիչները հաճախ նույնպիսի ճակատագրի տեր մարդիկ էին, որոնք, այնուամենայնիվ, արեցին ամեն հնարավորը՝ իրենց առաջնային խնդիրը համարելով տարբեր սեռի ու տարիքի, գրագիտության եւ զարգացման տարբեր աստիճանի եւ ողբերգական ճակատագրի տեր հարյուրավոր որբ երեխաների բարոյահոգեբանական եւ աշխատանքային դաստիարակումն ու ուսուցումը:

Այդ գործում որբանոցներին մեծապես օժանդակում էին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության, համապատասխան մասնաճյուղերի աշխատակիցները, ինչպես նաեւ հայ եկեղեցու սպասավորները, որոնք իրենց հաճախակի այցելություններով նոր լիցք էին հաղորդում երեխաներին, մեկ անգամ եւս հաստատում նրանց՝ որպես հայ ժողովրդի ապագան կերտողների առաքելությունը: 1922թ. դեկտեմբերին Բեյրութ ժամանած Բաբկեն եպ. Կյուլեսերյանը, որը նաեւ ՀԲԸ Միության ԱՄՆ-ի շրջանակի եռանդուն գործիչներից էր, պատարագեց Քէլէկեան-Սիսուան որբանոցի մատուռում: «Սրբազանը,- գրում էր ականատեսը,- մասնաւորապէս ծանրացաւ հաւատքի կատարելութեան վրայ եւ դիտել տուաւ որբերուն որ վաղուան կեանքին նկատմամբ հաւատք ունենան եւ որբանոցը ներկայացուց իբրեւ ընտանեկան յարկ մը, որուն յուրաքանչիւր անդամը պարտի ճանչնալ իր անհատական, ընկերական եւ մանաւանդ ազգին հանդէպ ունեցած պարտականութիւնները եւ ըստ այնմ պատրաստուիլ: Այս յարկը, ըսաւ Սրբազանը, ազգին սրտին ամենամօտիկ յարկն է, ուր կը պատսպարուիք դուք, ըլլալով ազգին մասնաւոր հոգածութեան եւ գուրգուրանքին առարկան, ուստի պարտաւոր էք արժեցնել ձեր վրայ դրուած յոյսերը, որովհետեւ ազգը այլեւս գործնական եւ շինարար ձեռքերու կը կարօտի, եւ դուք պէտք է ըլլաք այդ կենսունակ ձեռքերը վերաշինելու համար մեր վաղուան հայրենական տունը»:[68]

Երեխաների բազմակողմանի զարգացման նպատակով որբանոցում, կրթական ծրագրից բացի, գործում էին նաեւ կրոնագիտության եւ բարոյագիտության դասընթացներ, սկաուտական կազմակերպությունը, փողային նվագախումբը եւ այլն: Ծվեյցարացի հայտնի հոգեւորական եւ միսիոներ Էնտրնի Կրաֆտ-Բոննարի խոսքերով, «Բարեգործականին հովանաւորութիւնը վայելող Քէլէկեան-Սիսուան որբանոցը ոչ միայն Բարեգործականի այլ բոլոր հայութեան պատուաբեր հաստատութիւն մըն է: Ես երբեք չէի խորհէր թէ այսքան բազմաձախս եւ կանոնաւոր որբանոց մը կրնար գոյութիւն ունենալ հայ ազգին ներկայ տագնապալի օրերուն»:[69]

Սփյուռքում գործող բազմապիսի կազմակերպությունների մեջ որբանոցները եղան այն հաստատությունները, որոնց գործունեության բնականոն, ոչ պարտադրված ավարտը կարող էր միայն ուրախություն պատճառել հայ ժողովրդին եւ նրա բարեկամներին: Որեւէ որբանոցի փակումը նշանակում էր, թե սաները դարձել էին չափահաս եւ այդուհետ կարող են ապրել ինքնուրույն կյանքով, կազմել մի նոր հայ ընտանիք, եւ թե՝ նոր որբեր այլեւս չկային, որ վերջապես ավարտվում էր հայ ժողովրդի որբախնամ գործունեությունը: Եվ ահա, հիմնադրումից 13 տարի անց՝ 1932թ. հոկտեմբերին, իր դռները վերջնականապես փակեց նաեւ ՀԲԸ Միության հնագույն որբախնամ հաստատությունը՝ Բեյրութի Քէլէկեան-Սիսուան երկսեռ որբանոցը:[70]

Այդ տարիներին հատկապես կարեւոր եւ նշանակալից էր ՀԲԸ Միության գործունեությունը Հալեպում, որը հայ գաղթականության հիմնական կենտրոնն էր: Դեռեւս ցեղասպանության ժամանակ Հալեպ եւ նրա շրջաններն էին բերվում աքսորված հայերը՝ անապատ քշվելուց առաջ: «1915թ. մայիսին,- նշում էր պատմաբան Հովհ. Թոփուզյանը,- այնտեղ հասան զեյթունցիների առաջին քարավանները: Այնուհետեւ, ավելի քան երկու ամիս շարունակվեց Կիլիկիայի լեռնաշխարհի հայության հոսանքը: Օգոստոսին Հալեպ մտան արեւելյան նահանգների հայության բեկորները: 1915-1916թթ. ավելի քան 350.000 հայեր հանգրվանել էին Հալեպում եւ այստեղ միաժամանակ մնալուց հետո քշվել անապատ»:[71] Անգլիական զորքերի Հալեպ մտնելուն պես այստեղ են սկսում գալ հազարավոր հայ տարագիրներ Տեր Զորից, Դամասկոսից եւ այլ շրջաններից: «...Մէկ քանի շաբթուան ընթացքին քաղաքը կը խճողուի մոտ 80.000 տարագիրներով, որոնց ստուար մեծամասնութիւնը գրգլեակներու մէջ, բոկոտն, յաճախ կիսամերկ, անօթի եւ անապաւէն, առանց հաշուելու հիւանդներն ու անկարները: Որբերու հոծ խումբեր խառնուած էին թշուառներու այս սրտակեղեք բազմութեան: Ծատերը այս վերապրողներէն, որոնց մեծամասնութիւնը երբեմն բոլորովին բարեկեցիկ վիճակ մը ունեցած էր, այլեւս մոռցած էին օճառի, սանտրի, գուլպայի, կօշիկի գործածութիւնը»:[72] Ուշագրավ է գաղթականների հոգեկան վիճակի՝ «Ոսկեմատեանի» բնութագիրը. «Թշուառութիւնը լոկ նիւթական չէր, այլ մանաւանդ բարոյական: Արհաւիրքի այդ տարիներուն զուլումը շատ բան քանդած էր եղերաբախտ վերապրողներուն մէջ, եղծած էր անոնց հոգին: Այլեւս ոչ յոյս ունէին, ոչ հաւատք, ոչ իսկ փափաք՝ այդ գրեթէ անասնական դրութենէն խուսափելու եւ վերածնելու, վերադառնալու իրենց երբեմնի կենցաղին: Հսկայ ջանքեր, առատ միջոցներ, բայց մանաւանդ անձնուէր եւ յամառ աշխատութեան պէտք կար պատմութեան մեծագոյն աղէտներէն մէկէն ճողոպրած այդ խլեակներով նոր ժողովուրդ մը դարբնելու համար»:[73]

Այս պայմաններում 1919թ. հունվարին Հալեպում՝ իր գործունեությունը սկսեց ՀԲԸ Միության վերակազմված մասնաժողովը Օննիկ եւ

Արմեն Մազլումյան եղբայրների գլխավորությամբ, որոնք «...տարագրութեան տարիներուն նախախնամական դեր մը խաղացին Հալէպի եւ Լիբանանի մէջ, անհամար տարագիրներ ստոյգ մահէ մը փրկելով, եւ մասնաւոր գուրգուրանք մը ու պաշտպանութիւն մը ցոյց տալով հոսանքէն քշուած մտաւորականներու հանդէպ»:[74] Մասնաժողովի գործունեության առաջին քայլերից էին՝ Միության կենտրոնից ստացված մեծ քանակությամբ հագուստի, կոշիկի, օճառի եւ նման այլ անհրաժեշտ իրերի հատկացումը նախկին թրքական զորանոցում ապաստանած հազարավոր վերապրողներին, արհեստավորներին գործիքներով եւ հումքով ապահովելը, իրենց ծննդավայրը վերադարձող զեյթունցիներին դրամական նպաստներ հատկացնելը եւ այլն: Այս եւ նման այլ օգնությունը, սակայն, անբավարար էր տիրող իրավիճակում, ուստի ՀԲԸ Միությունը ձեռնամուխ եղավ մնայուն հաստատություններ ստեղծելուն:

Մուդրոսի զինադադարից անմիջապես հետո ՀԲԸ Միությունը, կանխատեսելով վերապրողներին պահանջվող օգնության բնույթն ու աննախադեպ ծավալը, 1918թ. հիմնեց «Հայ աղէտեալներու հիմնադրամը, ...ուրկէ կը հոգացուին ընդհանուր նպաստները՝ բացի որբախնամ գործէն, որուն համար անջատ հիմնադրամ մը կազմուած է»:[75] Այս հիմնադրամի շնորհիվ 1921թ. Միությունը Հալեպում հիմնեց Գաղթատուն, ուր պատսպարել էին հատկապես անտերունչ կանայք եւ երեխաներ: Նախապես ենթադրվում էր, որ Գաղթատունը կլինի առժամյա մի ձեռնարկ, սակայն անօգնական գաղթականների թվաքանակի մշտական աճը ստիպեց վերանայել այդ որոշումը: Այստեղ հիմնականում բնակվում էին այն գաղթականները, որոնք, թեեւ աշխատում էին, սակայն ի վիճակի չէին վարձել առանձին սենյակ կամ բնակարան: Գաղթատանը նրանք միայն նվազագույն վարձ էին վճարում, իսկ հիվանդանալու դեպքում անվճար օգտվում էին բժշկական օգնությունից: 1922թ. Գաղթատան երկու ընդարձակ շենքերում, որոնք գտնվում էին քաղաքի Պահսիթա եւ Վեքիլիյե թաղերում, բնակվում էր շուրջ 500 հայ գաղթական: Հետագայում՝ գաղթականների ընդհանուր տնտեսական վիճակի աստիճանաբար բարելավման հետեւանքով, գաղթատան բնակիչների թիվը սկսեց նվազել եւ հնարավոր եղավ ամփոփվել միայն մեկ շենքում: Գաղթատան առկայությունը վերստին կարեւորվեց 1929թ., երբ Թուրքիայից Հալեպ հասան գաղթականների նոր խմբեր, որոնք եւ դարձան գաղթատան հիմնական բնակիչները: Հալեպի Գաղթատունը փակվեց 1931թ. ապրիլին՝ «..հոն պատսպարուած ամէնէն չքաւոր գաղթականներուն վարձագին մը վճարելով: Այդպիսիները խմբովին իրենց տրամադրուած նիւթական օժանդակութեամբ սենեակներ վարձեցին եւ տեղաւորուեցան»:[76]

Արդեն խոսվեց, թե որքան ողբերգական եղավ փախցված կամ «որդեգրված» հայ երեխաների ճակատագիրը, որոնք իրենց փոքր տարիքի պատճառով, տարիների ընթացքում հեշտությամբ ընտելացան նոր միջավայրին եւ այդպես էլ մեծացան ու ապրեցին որպես թուրք, քուրդ կամ արաբ: Բայց ոչ բոլորը: «Ժամանակէ մը ի վեր, ամեն շաբաթ,...երեք չորս հոգի կը ներկայանան որբահաւաք մարմնին, որուն կեդրոնն է այժմ Հալէպ: Վերջին չորս ամսուան ընթացքին ներկայացողներուն թիւը հասած է 40-ի: Անոնք ընդհանրապէս 18-էն 26 տարեկան երիտասարդներ են եւ տարագրութեան շրջանի պատանիներ որ մեծցած են եւ որոնցմէ ոմանք, մոռցած ըլլալով հանդերձ մայրենի լեզուն եւ մինչեւ իսկ իրենց անունը կամ ծնողքը, քիչ շատ պահած են իրենց ազգային գիտակցութիւնը եւ ռեւէ պատեհ առիթէ մը օգտուելով վերադարձած են հայութեան ծոցը»:

Այս տողերը գրվել են... 1929թ., այսինքն, սկսած 1915թ. այդ երեխաները, երբ ընդամենը 4-12 տարեկան էին, հետագա 14 տարիների ընթացքում, մոռանալով իրենց անունն իսկ, այնուամենայնիվ, պահպանել էին ամենահիմնականը՝ իրենց ազգային «եսը», ազգային ինքնագիտակցությունը: Եվ պահպանել էին ոչ թե, ինչպես գրված է հոդվածում՝ «քիչ շատ», այլ այնչափ ուժեղ, որ անտեսելով բոլոր վտանգները՝ մտադրվել էին ամեն գնով գտնել եւ միանալ իրենց հայրենակիցներին: Որբ երեխաների հավատարմությունը իրենց ազգի հանդեպ, նրանց վճռականությունը՝ իրենց ազգային ինքնությունը պահպանելու հարցում նշվել է, եւ շատ անգամ զարմանքով, օտարների կողմից:

Ամերիկյան Նպաստամատույցի նախագահ Ջեյմս Բարտոնն իր գրքում հենց նման զգացումներով է նկարագրում հետեւյալ դեպքը: Այդ տարիներին հեռավոր Ավստրալիայում նույնպես եղան մարդիկ, որոնք Մերձավոր Արեւելքի երկրներում զբաղվեցին բարեգործությամբ: Նրանցից էր տիկին Գլենվիլը, որը եկել էր Սիրիա սննդամթերքով բեռնված նավով, նաեւ՝ մի հարուստ ավստրալուհու հանձնարարականով՝ գտնել տեղում մի խելացի որբ պատանի՝ նրա ուսման (ներառյալ քոլեջը եւ հետագա մասնագիտացումը) հետ կապված ծախսերը ստանձնելու նպատակով: Միայն թե մեկ պայմանով՝ ընտրված պատանին պետք է վերցներ կնոջ մահացած ամուսնու անունը: Տիկին Գլենվիլի ընտրությունը ի վերջո ընկնում է Ամերիկյան Նպաստամատույցի որբանոցներից մեկի սան՝ Վարդան անունով մի հայ պատանու վրա: Այս տղան, սակայն, ուշադրությամբ լսելով նրան, լուռ հեռանում է, իսկ կինը հիասթափություն է ապրում՝ կարծելով, թե նա մտադիր չէ շարունակել ուսումը: Բայց հաջորդ օրը Վարդանը հանդիպում է այդ կնոջը եւ պատմում հետեւյալը. «Ես շատ հուզված էի ավստրալացի տիկնոջ նման առաջարկությունից եւ

չկարողացա բառեր գտնել զգացմունքներս արտահայտելու համար: Հիմա ես մի քիչ կպատմեմ ձեզ իմ կյանքի մասին: Հինգ-վեց տարի առաջ ես իմ ծնողների, եղբայրների ու քույրերի հետ երջանիկ ապրում էի Թուրքիայի Խարբերդ նահանգի գյուղերից մեկում: Ես ընդամենը 8 տարեկան էի: Մենք հաճախում էինք գյուղի եկեղեցին, որի քահանան մեր ընտանիքի մոտիկ բարեկամն էր: Մի անգամ ես հարցրի մորս, թե որտեղից է իմ անունը: Նա պատմեց, որ երբ ես շատ փոքր էի, ինձ տարան եկեղեցի, ուր եւ մկրտեցին՝ տալով ինձ Վարդան անունը: Մի օր էլ մեր գյուղում մեծ հուզումներ սկսվեցին: Ժողովուրդը խուճապահար այստեղ-այնտեղ էր վազում: Ճիչեր էին լսվում, թե քրդերը հարձակվել են: Նրանք շուտով գրոհեցին գյուղը: Մեր տունը այրվեց: Իմ հայրը եւ մայրը սպանվեցին: Իմ քույրը, եղբայրս եւ ես կարողացանք փախչել, բայց կորցրինք միմյանց: Ես թաքնվել էի գյուղի մոտակա սարերում: Ես տեսա, որ գյուղի բոլոր տները, եկեղեցին այրվում էին, իսկ մեր տունը արդեն քանդվել էր: Ես հեռացա եւ ամիսներ շարունակ չգիտեի, թե ինչ էի անում, ուր էի գնում: Հիմա, տարիներ անց, ես այստեղ եմ, այս որբանոցի դպրոցում: Ես կորցրել եմ ամեն ինչ՝ հորս, մորս, քույրերիս, եղբայրներիս, տունս, եկեղեցին, մեր գյուղը, այն ամենը, ինչ հիշեցնում էր ինձ իմ անցած երջանիկ կյանքը, բացի իմ Վարդան անունից: Սա իմ միակ կապն է անցյալի հետ՝ իմ մորս, իմ տանս հետ: Ես չեմ կարող հրաժարվել իմ անունից: Սա այն վերջին բանն է, որ կապում է ինձ այդ բոլոր հիշողությունների հետ»:[77]

Նահր էլ Օմար - Երուսաղեմ - Ադիս - Աբեբա

ՀԲԸ Միության որբանոցների շարքում իրենց ստեղծման հանգամանքներով առանձնահատուկ էին Երուսաղեմի որբանոցները: Դեռեւս 1921թ. կեսերին հայտնի դարձավ, որ Միջագետքի (Իրաք) բրիտանական իշխանությունները որոշում են կայացրել փակել Նահր էլ Օմարում գտնվող հայերի գաղթականը: Գաղթականում ապաստանածների մեծ մասը վասպուրականցի հայեր էին, որոնք 1918թ., խույս տալով թուրքական զորքերի հարձակումներից, փորձեցին անցնել Արեւելյան Հայաստան, սակայն ճանապարհների փակ լինելու պատճառով անցան Պարսկաստան: Մինչ այդ, թուրքական զորքերը գրավել էին նաեւ Պարսկաստանից դեպի Արեւելյան Հայաստան տանող ճանապարհները, ուստի նրանք տեղի՝ հիմնականում Ուրմիայի, Խոյի եւ Սալմաստի հայերի հետ գաղթեցին դեպի հարավ՝ ապավինելով անգլիական իշխանությունների խոստումներին, թե շուտով իրենց կտեղափոխեն Հայաստան: Իրականում

անգլիական զինվորական իշխանությունների նպատակն այլ էր՝ հայերին, ինչպես եւ քրիստոնյա այլ գաղթականներին դարձնելով մշտական բնակիչներ՝ մի կողմից աշխատեցնել տեղի հարուստ նավթահանքերում, իսկ մյուս կողմից՝ համալրելով նրանցով իրենց զորքերը, ամրապնդվել այդ տարածաշրջանում: 1920թ. աշնանը հայ գաղթականների հիմնական մասը տեղափոխվեց նավթով հարուստ Բասրայի նահանգի Նահր էլ Օմար ավանը, ուր հիմնվել էր գաղթական:[78] Հայ գաղթականները, հասկանալով, որ անգլիական իշխանությունների ծրագրի իրականացումը հարցականի տակ է դնում իրենց Հայաստան վերադառնալը եւ չի ապահովում իրենց կյանքի անվտանգությունը Միջագետքում, մերժեցին այդ ծրագիրը եւ հիշեցրեցին իրենց տրված խոստումները: Անգլիական իշխանությունները, իրենց հերթին, դիմեցին տարբեր պատժամիջոցների, իսկ 1921թ. գարնանը ներկայացրին յուրահատուկ մի վերջնագիր. հայ գաղթականներին այլեւս օգնություն չէր տրվելու, եւ Հայաստան մեկնելու համար անհրաժեշտ միջոցները նրանք պետք է հայթայթեին ինքնուրույն, այսինքն, պետք է համաձայնվեին ապրել եւ աշխատել այդ երկրում շուրջ 10 տարի: Հայտնվելով նման կացության մեջ՝ գաղթականները 1921թ. ամռանը կապ հաստատեցին Խորհրդային Հայաստանի պաշտոնական ներկայացուցիչների հետ՝ խնդրելով տեղափոխել իրենց հայրենիք: Նույն թվականի հոկտեմբերին Հայաստանի արտաքին գործերի ժողկոմիսարիատը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը հղած նոտայում նշում էր, որ անգլիական կառավարությունը կարող եւ պարտավոր է հրաժարվել հայերին Միջագետքում մշտապես բնակեցնելու քաղաքականությունից՝ վերսկսելով միաժամանակ նրանց օգնության գործը: Որպես հարցի այլընտրանքային լուծում առաջարկվում էր «...միջոցներ ձեռք առնել նրանց տեղափոխելու Պոլսի վրայով դեպի Բաթում, որպէսզի Հայաստանի կառավարությունը հնարավորություն ունենա տեղավորել նրանց իր սահմաններում»:[79]

Հարցի դրական լուծման առումով կարեւոր դեր խաղացին նաեւ արտասահմանում գործող հայկական կազմակերպությունները՝ Ազգային պատվիրակությունը, ՀԲԸ Միությունը եւ այլն, որոնք կոչ էին անում բրիտանական կառավարությանը՝ չդադարեցնել օգնությունը հայ գաղթականներին: 1921թ. հուլիսի վերջերին Լոնդոնում՝ Մեծ Բրիտանիայի գաղթային նախարարությունում, հրավիրվեց Նահր էլ Օմարի գաղթականներին նվիրված խորհրդակցություն, որին մասնակցեց նաեւ Ազգային պատվիրակությունը ի դեմս ՀԲԸ Միության Գործադիր Ժողովի ատենապետ Առաքել Նուպարի: Թեեւ խորհրդակցության ընթացքում որեւէ որոշում չկայացվեց, ի վերջո, բրիտանական իշխանությունները նախընտրե-

ցին հայ գաղթականներին նավերով տեղափոխել Բաթում: 1921թ. դեկտեմբերին շուրջ 3000 գաղթականներ հասան Բաթում, իսկ այնուհետեւ՝ Հայաստան: Այս խմբի ներգաղթը նշանավորեց հայ ժողովրդի արդի պատմության յուրահատուկ էջերից մեկի՝ հայրենադարձության սկիզբը, որը կարճ եւ երկար ընդմիջումներով, իր մութ եւ լուսավոր կողմերով շարունակվեց հետագա շուրջ վեց տասնամյակների ընթացքում:

Այն պահին, երբ հայտնի դարձավ Միջագետքի բրիտանական իշխանությունների նշված որոշման մասին, սփյուռքի հայությունը, ազգային բոլոր կազմակերպությունները առավել մտահոգված էին Նահր էլ Օմարում գտնվող որբերի ճակատագրով:

Նախապես որոշված էր, որ նրանք մեծահասակների հետ նույնպես պետք է ներգաղթեին Խորհրդային Հայաստան: Սակայն երեխաների մեջ սկսված կարմրախտի պատճառով նրանց մեկնումը հետաձգվեց: Բայց մինչ այդ որբերին Հայաստան տեղափոխելու հետ իրենց անհամաձայնությունն էին արդեն հայտնել արտասահմանի հայության մի շարք հայտնի ազգային գործիչներ: «Եգիպտահայոց Առաջնորդը՝ Թորգոմ եպիսկոպոս Գուշակեանը, Նահր էլ Օմարի որբերու Բաթում փոխադրելու լուրը առնելէ վերջ, հանգստութիւնը կորսնցուցած էր, քաջ գիտնալով որ այս մատաղ սերունդը այս եղանակին այս դրութեան մէջ Հայաստան ուղարկելը հեռու է խելօքութենէ»:[80] Նման դիրքորոշման հիմքում այն արդարացի մտավախությունն էր, որ Իրաքի շոգ անապատային կլիմայից հետո երեխաների անմիջապես փոխադրումը Հայաստան, ձմեռվա ամենացուրտ ամիսներին, անխուսափելիորեն վտանգելու էր նրանց առանց այն էլ քայքայված առողջությունը: Մյուս կողմից, որբերի փոխադրումը Հայաստան դիտվում էր անկարելի, նկատի առնելով այնտեղ տիրող համատարած ճգնաժամը, մասնավորապես, համաճարակ հիվանդությունները, սովը եւ այլն:

Եվ նորից թե հայ եւ թե օտար շահագրգիռ կազմակերպությունների եւ անձերի հայացքները ուղղվեցին դեպի ՀԲԸ Միությունը՝ որպես միակ կազմակերպություն, որ ի վիճակի էր ստանձնել այդ բարդ եւ պատասխանատու խնդրի լուծումը: Միության համար (որն այդ պահին արդեն ուներ սեփական որբախնամ հաստատություններ եւ օժանդակում էր նմանատիպ այլ հաստատություններին) Միջագետքի որբերի խնդիրը, որոնց քանակը գերազանցում էր Միության բոլոր որբանոցների սաների քանակը, դժվար լուծելի էր:

1921թ. նոյեմբերի 8-ին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը՝ ատենապետ Պողոս Նուպարի եւ ատենադպիր Գրիգոր Սինապյանի ստորագրությամբ շրջաբերականով դիմեց իր բոլոր մասնաճյուղերին ու անդամներին, որն ամբողջությամբ նվիրված էր Նահր էլ Օմարի որբերի ճակատագրին: «Առանց վճռական եւ անմիջական օգնութեան,- ասված էր շրջաբերականում,- մեր որբերը *սովահար լինելու վտանգին ենթակայ են*: Այս իսկ է ողբալի ճշմարտութիւնը իր բովանդակ մերկութեան մէջ: Նահր էլ Օմարի ութը հարիւր որբերուն, եթէ ձեռք չերկարենք, դէպի ստոյգ մահ պիտի դիմեն: Վայրկեանը իսկապէս ծանրակշիռ է եւ չենք գիտեր թե վաղը ինչ չսպասուած ու չի նախատեսուած դէպքեր մեզի մտածել պիտի տան մեր միւս որբերուն վիճակին ու ապագային համար ալ»: Եվ ահա շրջաբերականի բուն նպատակը. «Ներկայ շրջաբերականը երբ ստանաք, հաճեցէք առանց րոպէ մը կորսնցնելու ժողովի հրաւիրել Միութեան բոլոր անդամներն ու համակիրները, նոյնիսկ օտար բարեկամներ, ու կարելին, նոյնիսկ *անկարելին ըրէք* (ընդգծումները՝ բնագրից-Էդ.Մ.), ձեր մէջ որբերուն պաշտպաններ գտնելու համար: Ամէն խնայողութիւն ընելով տարեկան առնուազն քսան եւ հինգ անգլ. ոսկի մէկ որբ պիտի ապրեցնէ, այսինքն Հայաստանի ապագա քաղաքացի մը պիտի փրկէ... Դիմեցէք հայ մայրերուն եւ հայրերուն, անապատի աւազներուն մէջ անշիրիմ հանգչող մեր պաշտելի նահատակներուն անունով, անոնց սրբազան մասունքներն են որ պիտի կորսուին իսպառ, եթէ գերագոյն ճիգով մը չի փութանք իրենց օգնութեան»:[81]

Այս շրջաբերականը նմանատիպ այլ շրջաբերականներից առանձնանում էր նրանով, որ Միությունը առաջին անգամ պարտադրված էր հատուկ հանգանակության կոչ անել որոշակի թվով եւ որոշակի վայրում գտնվող հայ որբերին օգնելու նպատակով: Ինչպես նշվում էր փաստաթղթում, «Կեդր. Վարչ. Ժողովը իր կազմութեան օրէն իսկ ինքզինքը այս ահաւոր կացութեան առջեւ կը գտնէ, եւ իր առաջին կոչը կ'ուղղէ արտասահմանի մեր բոլոր մասնաճիւղերուն եւ հանուր հայրենակիցներուն»: Ավանդույթի համաձայն, առաջին արձագանքողները եղան Միության, նրա մասնաճյուղերի ղեկավարները (Պողոս Նուպար, Առաքել Նուպար, Ե.Աղաթոն, Տիգրան խան Քելեկյան, Տ.Կյումուշկերտան, Կատարինե Ա.Լիմոնճելի՝ Ցաղուպ Արթինի դուստրը, Նոյեմի Գափամաճյան՝ Պողոս Նուպարի քույրը եւ այլք)՝ օրինակ ծառայելով Միության բոլոր անդամներին: Այս նույն հանգանակության ընթացքում առաջին անգամ հայտնի է դառնում Նյու Յորքի մասնաճյուղի եռանդուն անդամներ Միհրան եւ Արշակ Գարակյոզյան եղբայրների անունը, որոնք երեք տարի ժամկետով ստանձնեցին 150 որբի հոգսը, այդ նպատակին հատկացնելով 54.000 դոլար: «Հարկ կա՞յ ստորագծել շքեղութիւնը այս վեհանձն արարքին, զոր անկեղծ հաճոյքով կը յիշատակեմ հոս»,- ասում էր Պողոս Նուպարը

1922թ. ընդհանուր ժողովում՝ բնավ չենթադրելով, որ եղբայրներից մեկը՝ Արշակը, շուրջ քսան տարի անց գլխավորելու է ՀԲԸ Միությունը:

Մինչ այդ Ազգային պատվիրակության խնդրանքով Եգիպտոսի Հայ Առաքելական թեմի առաջնորդ եւ Միության պատվո անդամ Թորգոմ Գուշակյանը Երուսաղեմի Հայոց Պատրիարքի հետ քննել էր այդ քաղաքում որբերին տեղավորելու հնարավորությունները: Պաղեստինի անգլիական իշխանությունները, ի վերջո, համաձայնվեցին այդ առաջարկին, սակայն մնում էր չլուծված երկրորդ, ոչ պակաս կարեւոր՝ անհրաժեշտ միջոցների խնդիրը: Անգլիական իշխանություններն իրենց համաձայնությունը պայմանավորեցին Ամերիկյան Նպաստամատույցի կամ ՀԲԸ Միության պարտավորությամբ՝ ստանձնել որբերի բնակարանի, սննդի, հագուստի եւ այլնի հետ կապված անխտիր բոլոր ծախսերը. «...այն բացարձակ պայմանաւ որ այդ որբերը ոեւէ կերպով բեռ չըլլան Պաղեստինի կառավարութեան վրայ»:[82] Դեռեւս Լոնդոնի վերոհիշյալ խորհրդաժողովում Առաքել Նուպարը, անդրադառնալով Նահր էլ Օմարի որբերի հարցին, հայտարարել էր, որ «...թէեւ ՀԲԸ Միութիւնը արդեն քանի մը որբանոցներու բեռ ունի, բայց ի հարկին պիտի փորձէ նոր ճիգ մը եւս ընել եւ առ առաւելն 400 որբի հոգատարութիւնը ստանձնել, եթէ, ինչպէս հաւաստիք տրուած է Նիւ Յորքէն, Նիր Իսթ Ըլլիյֆը տրամադրէ իր լայն օժանդակութիւնը եւ որբերը կարելի ըլլայ Երուսաղէմ փոխադրել պետական ծախքով»:[83]

Ամերիկյան Նպաստամատույցը իր հերթին հրաժարվեց ստանձնել բոլոր ծախսերը, ապա սկսվեցին երկար բանակցություններ նրա եւ Միության միջեւ, որոնք, ի վերջո, պսակվեցին հաջողությամբ: Ամերիկյան բարեսիրական կազմակերպությունը ստանձնում էր անհրաժեշտ ծախսերի կեսը այն պայմանով, որ ՀԲԸ Միությունը իր վրա վերցնի կազմակերպական ողջ աշխատանքը (ընդունում, տեղավորում, դաստիարակում եւ այլն), ինչպես նաեւ ծախսերի մյուս կեսը: Այն փաստը, որ Պաղեստինի անգլիական իշխանությունները ամերիկյան հանրաճանաչ եւ խոշոր Նիր Իսթ Ըլլիյֆ բարեսիրական կազմակերպության կողքին որպես երաշխավոր ցանկանում էին տեսնել ՀԲԸ Միությունը, անշուշտ, պատվաբեր էր եւ վկայում էր նրա մեծ հեղինակության մասին: Նման գնահատումը նաեւ խիստ պարտավորիչ էր, եւ Միությունը պետք է ձգտեր արդարացնել թե հայրենակիցների եւ թե օտարների հույսերը:

Վերջապես, 1921թ. դեկտեմբերին Վահան Մալեզյանը հեռագրով արդեն հայտնում էր. «Նիր Իսթ եւ Բարեգործական կը վստահեցնեն Նահր էլ Օմարի որբանոցը խնամել Երուսաղէմի վանքին մէջ, յայտնեցէք որբանոցի մեկնման թուականը»:[84]

Մեծ դժվարությունների հետ էր կապված նաեւ որբերի տեղավորումը Երուսաղեմում: Երուսաղեմի Հայոց պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի ջանքերի շնորհիվ որբերի բնակության համար հատկացվեցին Ս. Հակոբյանց վանքի Պահջէ (Պարտեզ) եւ Զամ (Սոճուտ) թաղերը: Երեխաների փոխադրության, ընդունելության եւ տեղավորման հարցերով առաջին իսկ օրերից զբաղվում էին Միության Գործադիր Ժողովը, Կրթական եւ Որբախնամ Կենտրոնական հանձնախմբերը, սակայն անհրաժեշտ նկատվեց հենց տեղում՝ Երուսաղեմում, ստեղծել հատուկ Խնամակալություն, որը կազմակերպելու եւ համակարգելու էր ողջ աշխատանքը: «...Կեդրոնի Գնման Յանձնախումբի ժրաջան անդամները եւ Կեդր. Մթերանոցի պաշտօնէութիւնը ամէն ջանք ըրին Երուսաղէմ հասցնելու մեծաքանակ իրեղէններ, հագուստ, ճերմակեղէն, անկողին, սպաս, պարէն եւն: Քանի մը շաբաթուան մէջ յաջորդաբար փոխադրուեցան 210 հակ եւ սնտուկ, ընդամէնը 2385 եգ.ոսկի արժէքով: Տեղւոյն վրայ եւս Խնամակալութիւնը, իրեն աջակից ունենալով Գնման մասնախումբը եւ Տիկնանց Հանդերձարանը, յաջողեցաւ ժամանակին լրացնել անհրաժեշտ գնումները եւ նախնական կարգադրութիւնները, այնպէս որ երբ որբերը Երուսաղէմ հասան, գրեթէ ամեն ինչ պատրաստ էր, գեթ պատսպարումի եւ պարենաւորումի տեսակէտով»:[85]

Այդ տարիներին հայերի հոգեվիճակի, որբերի ճակատագրի նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի դրսեւորումներից էր հետեւյալ դեպքը, որ տեղի ունեցավ Միջագետքից նրանց մեկնելու պահին: «...816 որբերուն հետ շոգենաւ մտած էին երկու որբուհիներ եւս, Տոպաճեան քոյրերը, օր. Մաննիկ եւ Ատրինէ: Բայց ասոնց ճակատագիրը այլապէս տնօրինուած էր: Միջագետքի Տարագրելոց Նպաստամատոյց Մարմնի անխոնջ ատենապետը տ. Մարտիրոս Գուլումճեան, որ բոլորանուէր տրամադրուած էր այդ շրջանի որբախնամ գործին, ու իր գործակիցը տ. Ստեփան Փափազեան (նոյն Մարմնոյ ատենադպիրը), որ օրերով զբաղուած էին որբերուն ուղեւորութեան յարակից բոլոր խնդիրներով եւ մինչեւ շոգենաւ առաջնորդած էին իրենք, անակնկալ որոշում մը կուտան վերջին պահուն, կնութեան առնելով երկու քոյրերը, իբրեւ կենդանի յիշատակը այդ դժբախտ էակներուն հանդէպ իրենց տածած սրտցաւ խանդաղատանքին: Որբերուն ընկերակցող քահանան, Տէր Յովհաննէս Սիմոնեան, նոյնհետայն կը կատարէ կրկին պսակի խորհուրդը, սրտառուչ արարողութեամբ մը, եւ նաւապետը, փոխարկուելով հանդիսապետի, շոգենաւը խրախճանքի գեղեցիկ ոգեւորութեամբ մը կը լեցնէ»:[86]

Երեխաները, այդ թվում նաեւ իրենց միացած ՀԲԸ Միության Մոսուլի փակման ենթակա որբանոցի 47 որբերը, Երուսաղեմ հասան 1922թ.

փետրվարին, ուր նրանց դիմավորեցին Հայոց պատրիարքը, Միության մասնաճյուղի եւ Խնամակալության պատվիրակները, ինչպես նաեւ մեծ թվով տեղացի հայեր: Նահր Էլ Օմարից ժամանած որբերի թվում էր նաեւ Նոյեմզար Վարդանյանը, որն իր հուշագրություններում այսպես է նկարագրել իրենց մուտքը Երուսաղեմ. «Բազմութիւն. այլազան տարազով մարդիկ ու կիներ: Բայց ամէնէն աւելի մեր ուշադրութիւնը գրաւեցին խումբ մը սեւազգեստ մարդիկ՝ մանաւանդ իրենց սրածայր գլխարկներով եւ մօրուքներով: Կրօնական տեսած ըլլալս չէի յիշեր ես: Անոնք Ս. Յակոբայ Միաբանութեան բարձրաստիճան կղերականներն էին՝ եկած դիմաւորելու մեզ՝ մեր ցեղին խեղճ բեկորները: Անջնջելի պիտի մնայ միտքիս մէջ՝ վանք մտնելու մեր պահը: Երկինքը ամպամած էր արդեն, եւ երբ հասանք՝ սկսաւ մեղմօրէն անձրեւելու. բակին մէջ հաւաքուած էին տեղացի հայեր. բոլորն ալ աչքերը թաց էին, եւ շատեր կու լային: Ես ալ լացի՝ որովհետեւ ամէն մարդ կու լար՝ հակառակ որ ուրախ էի հոն գտնուելուս համար ...Ահա մեզի մօտեցան ճերմակ գոգնոցներ հագած կիներ ու մարդիկ. սափրիչներն էին, եւ իրենց պարտականութիւնն էր մեզ ազատել մեր ոջիլներէն ու անիծներէն, ապա՝ լոգցնել ու մաքրել ...: Յետոյ մեզի տուին նոր-նոր հագուստներ, աղուոր ուտելիք, եւ տարին ննջարաններ: Մեր ուրախ աղմուկը լեցուցած էր մթնոլորտը. ի՜նչ զսպանակաւոր մահճակալներ էին ատոնք՝ ներքնակով, բարձով ու վերմակով...: Չէինք կրնար հաւատալ որ այդ բոլորը մեզի համար էին. ու կը ցատքէինք, կը պոռայինք, կը վազվզէինք. կարծես դժոխքէն անցած որբերը չէինք...: Առաւօտուն՝ առատ նախաճաշ, ապա՝ ճաշ ու ընթրիք, եւ այսպէս՝ ամէն օր...: Փոխուած էր աշխարհ...»:[87]

Հետաքրքրական են նաեւ ժամանակակցի առաջին տպավորությունները այդ երեխաներից. «Շատ ուրախալի է, որ որբերը կայտառ են, ճամբորդութեան տաղտուկները չեն ազդած իրենց առողջութեան. պէտք է խոստովանիլ թե որբերը, մեծ մասամբ Հայաստանցի, եւ անաղարտ պահած են իրենց բնագաւառի հայրենական չարքաշութիւնը. աչքի կը զարնէ մանաւանդ իրենց կարգապահ ոգին. խեղճ տղաքը գոհ էին որ վերջապէս հասած էին իրենց հանգրուանը, ուր ՀԲԸ Միութեան հոգատար հովանին պիտի վայելէին այսուհետեւ»:[88] «Հայաստանցի» երեխաների հիշատակումը պատահական չէր. Երուսաղեմ տեղափոխված 816 որբերից 582-ը Վանից էին, իսկ 103-ը Կարինից՝ (Էրզրումից):

Նորաստեղծ Արարատեան որբանոցի գործունեության առաջին մի քանի ամիսներից հետո պարզ դարձավ, որ եղած տարածքները հարմար չեն. «...կարելի չեղաւ ննջարաններու, դասարաններու, ճաշարաններու եւն. բաժանումները կատարել առողջապահական եւ կրթական պահանջներու համաձայն»:[89] Բացի այդ, քաղաքում վարձու բնակարանների բացակայության պատճառով որբանոցի ուսուցիչներն ու այլ աշխատողները իրենց ընտանիքներով ստիպված էին նույնպես բնակվել որբանոցում: Միության Գործադիր Ժողովը, նկատի առնելով նման կացությունը, որբանոցի խնամակալությանը հրահանգեց վարձակալել հունական Խաչավանքը, ուր եւ 1922թ. հուլիսին Արարատեան որբանոցից տեղափոխվեցին բոլոր՝ 300-ից ավելի որբուհիները եւ արդեն գործող երկսեռ մանկապարտեզը: Այս նոր, Երուսաղեմում Միության երկրորդ որբանոցը կոչվեց Վասպուրական: Նոյեմզար Վարդանյանը վերհիշում էր. «Շուտով աղջիկներու որբանոցը փոխադրեցին քաղաքէն հեռու՝ յունական պարիսպաւոր անառիկ վանք մը. անունը «Խաչավանք» էր կարծեմ, որովհետեւ կը կարծուէր որ Յիսուսի խաչափայտը առնուած էր այդ տեղէն: Այս վանքը ունէր երկու փոքր եկեղեցի, հսկայ ճաշարան մը՝ երեք շարք մարմար-քարէ սեղաններով, եւ այլ յարմարութիւններ: ...Այս վանքէն ներս՝ մեր կեանքը ստացաւ նոր ուղղութիւն: Վասպուրական որբանոցը եղաւ մեր դրախտը, եւ մենք իրապէս երջանիկ էինք: Դպրոցը իրական դպրոց էր եւ տեղի կ'ունենային կանոնաւոր դասաւանդութիւններ՝ պատրաստուած ուսուցիչներու կողմէ: Այլեւս երեխաներ չէինք. մեր դասարանին դուռին վրայ գրուած էր «Գ.Դասարան»: Ծեծը արգիլուած էր, մեզ կը տանէին տեսարժան վայրեր, եկեղեցի, պտոյտի: Որպէս դպիր երգած ենք Բեթղեհէմի մէջ»:[90] Մեկ տարի անց՝ 1923թ. Վասպուրական աղջիկների որբանոցում պատսպարված երեխաների թիվը կազմում էր 353, որոնցից 259-ը սանուհիներն էին, իսկ 94-ը՝ մանկապարտեզ հաճախող տղաներ: Որբանոցի նման կազմը անհրաժեշտ էր դարձրել նաեւ հատուկ «հիվանդարան-դարմանատան» հիմնումը, որը տնօրինում էր Ծվեյցարիայից հրավիրված փորձառու հիվանդապահուհի (եւս երկու հիվանդապահուհիներ՝ Ծվեյցարիայից, աշխատում էին Միության Բեյրութի որբանոցներում):

Նույն 1923թ. Արարատեան տղաների որբանոցի սաների թիվը կազմում էր 434, որոնցից 40-ը դարձան Ս. Հակոբյանց վանքի Ժառանգավորաց վարժարանի աշակերտներ: Այս որբանոցը թե օտար եւ թե հայկական միջավայրում հանրաճանաչ դարձավ հատկապես իր, այսպես կոչված, ֆանֆառի խմբի (փողային նվագախմբի) շնորհիվ: Նվագախումբը հայտնի էր իր կատարողական բարձր արվեստով եւ հաճախ հրավիրվում էր մասնակցելու տարբեր հանդիսությունների: Այսպես, 1923թ. օգոստոսին Երուսաղեմի որբանոցները այցելության եկած Ամերիկյան Նպաստամատույցի ընդհանուր քարտուղար Ջ.Վիքրին եւ պաշտոնական այլ անձինք խնդրեցին, որ նվագախումբը եւ սքաութները՝ «...յաջորդ օրը երկաթուղիի կայարանը գտնուին, ողջերթի համակրական

ցոյց մը ընելու համար ամերիկացի զբօսաշրջիկներուն, որպէսզի անոնք հայ որբերու մասին լաւ տպաւորութիւն մը տանին իրենց հետ, ինչ որ մեծապէս օգտակար կրնայ ըլլալ ապագային համար: ...Ըստ այնմ, յաջորդ օրը, որոշեալ ժամուն, սան եւ սանուհիները կայարան գտնուեցան: Մի քանի սաներ «Bon voyage», «Armenia thanks America» վերտառութիւններով դրօշակներ կը կրէին: Ահա այս կերպով համակրական ցոյցերու մէջ ճամբու դրուեցան ամերիկացի զբօսաշրջիկները որոնք մեծ խանդավառութեամբ եւ անվերջ կերպով կը ծափահարէին»:[91]

Արարատեան որբանոցի ֆանֆառի խմբի հետ է կապված մի պատմություն, որը որբ երեխաների համար իրականություն է դարձնում իրենց ծանոթ հեքիաթները բարի թագավորների մասին: 1923թ. Ս. Զատկի օրերին Երուսաղեմ է այցելում Եթովպիայի (Հաբեշստան) գահաժառանգ իշխանուհին: Նա այցելում է Ս.Հակոբյանց վանք՝ Հայոց Պատրիարքին շնորհավորելու նպատակով: Հանդիսավոր ընդունելության ժամանակ նկատելով զգեստավորված երեխաներին՝ նա «...շրջան մը ըրաւ աշակերտաց մէջ, արտասուաթոր աչքերով: Շատ զգացուած ըլլալ կը թուէր ան,- նշում է ականատեսը,- որովհետեւ կերեւի թէ առիթը չէր ունեցած այսքան որբերու հաւաքոյթ մը տեսնելու, մանաւանդ սեւազգեստ որբուհիներ»:[92] Այդ «սեւազգեստ որբուհիներից» էր նաեւ Նոյեմզար Վարդանյանը, որի հիշողության մեջ ընդմիշտ դրոշմվել էր այդ արտասովոր հանդիպումը. «Օր մը, պատմութեան մեր ուսուցիչը՝ պրն. Վահանը, մեզի ըսաւ. «Վաղը մանչերու բաժինը պիտի երթանք, մեզ պիտի այցելէ Հապէշներու թագուհին՝ իր հետեւորդներով. թէ թագուհին եւ թէ իր հետեւորդները սեւ են..., չըլլայ որ խնդաք»: Ես բնաւ սեւ մարդ չէի տեսած, եւ անհամբեր էի: Յաջորդ օրը գացինք Արարատեան որբանոցը: Անակնկալը միայն թագուհին չէր. այն կտորը որմէ վերարկու պիտի կարուէր մեզի համար՝ որպէս գորգ փռուած էր գետին որպէս յարգանք հիւրերուն: Ամէն բան պատրաստ էր, բայց թագուհին կ'ուշանար: Մեր ուսուցիչը նորէն յիշեցուց որ պէտք չէ խնդայինք: Եվ ահա, ճիշդ այդ պահուն ներս մտան շատ փայլուն հագուստներով գիրուկ մարդիկ՝ իրենց ձեռքի խոշոր գաւազանները գետին խփելով. անոնց ետեւին կու գար կին մը, որուն գլուխին վերեւ բռնած էին հովանոց մը՝ որուն եզերքներէն ոսկի շարոցներ կախուած էին. բոլորն ալ սեւ էին: Զարմացած, բայց առանց խնդալու՝ կը հետեւէի հիւրերուն շարժումներուն: Մենք ալ հագած էինք մեր սեւ պաշտօնական հագուստները: Մեր ծափահարութիւնը պահիկ մը միայն տեւեց, թագուհին, երբ տեսաւ մեզ, չկրցաւ իր յուզումը զսպել եւ սկսաւ բարձրաձայն լալու: Շուտով զինք հիւրանոց տարին: Ես զարմացած էի եւ յուսախաբ. զարմացած էի որ անծանօթ սեւ թագուհի մը կու լար մեզի համար,

ուրեմն՝ կը գթար մեզի եւ կը սիրէր մեզ..., իսկ յուսախաբ էի որ հանդիսութիւնը աւարտած էր՝ տակաւին չսկսած...»:[93]

Միության որբանոցների ղեկավարության հետ ունեցած զրույցի ժամանակ իշխանուհին, ծանոթանալով որբանոցների հիմնադրման հանգամանքներին, նվիրատվություն է անում արհեստավոր սաներին գործիքներ գնելու համար, ինչպես նաեւ խոստանում ի նպաստ հայ որբերի շարժում սկսել իր երկրում: Որոշ ժամանակ անց Երուսաղեմ է այցելում նրա ամուսինը՝ գահաժառանգ իշխան Ռաս Թաֆարի Մաքոննենը, որը տարիներ անց Հայլե Սելասիյե անվամբ պետք է հռչակվեր Եթովպիայի կայսր՝ դառնալով Աֆրիկայի ամենահայտնի պետական գործիչներից մեկը: Երուսաղեմում իշխանը, ինչպես եւ իր կինը, այցելում է նաեւ Հայոց պատրիարքարան, ուր նրան դիմավորողների թվում էր նաեւ Արարատեան որբանոցի ֆանֆառի խումբը: Իշխանը, լսելով խմբի նվագը, ցանկություն է հայտնում նվագող 40 տղաներին իրենց երաժշտական ուսուցչի եւ տեսչի հետ միասին տանել Եթովպիա: Եվ քանի որ նրանք պետք է դառնային իր անձնական եւ կառավարության պաշտոնական նվագախումբը, ապա իշխանը պարտավորվեց հոգալ նրանց ճանապարհածախսը, իսկ Եթովպիայում ապահովել նրանց թոշակով, բնակարանով, հագուստով եւ այլն: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի զգացմունքներ ապրեց որբանոցի ղեկավարությունը՝ ստանալով այդօրինակ անսպասելի առաջարկություն, որը երաշխավորում էր մի քանի տասնյակ որբերի ապահով կյանքը այդ դժվար տարիներին:

1924թ. սեպտեմբերին ֆանֆառի խումբը արդեն Եթովպիայի մայրաքաղաք Ադիս Աբեբայում էր, ուր նրան դիմավորեցին պաշտոնական անձինք եւ տեղի հայ համայնքի ներկայացուցիչները: Նվագախմբի անդամներից էր նաեւ Նոյեմզար Վարդանյանի եղբայրը՝ Հովհաննես Մալխասյանը, որն իր հուշերում այսպես է նկարագրում այդ օրը. «1924թ. սեպտեմբերի 6-ին կառախումբով հասանք Եթովպիայ: Եթովպական օրացոյցով Նոր Տարի է այդ օրը եւ ամէն կողմ տօնի տրամադրութիւն կար: Երգ, պար, խարոյկներով խումբ երիտասարդներ կը վազէին դուռէ դուռ, կ'երգէին եւ նուէր մը ստանալէ յետոյ կերթային յաջորդ դռան: ...Բոլոր հայութիւնը մեզի դիմաւորելու եկած էր կայարան: Ջեւակերպութիւններէ յետոյ միակ հայը որ «քամիոն» ունէր, մեզ իր «քամիոնով» պիտի տանէր մեր նոր բնակարանը, որը գահընկէց իշխան Լիճ Եասուի հիւրանոցներէն մէկն էր: Կայարանը վարի քաղաքը կը գտնուի, իսկ մեր շէնքը վերի քաղաքը: Քամիոնը դժուարութիւն ունեցաւ այդ զառիվերը մագլցելու եւ ի վերջոյ տեղ մը եկաւ որ ստիպուեցանք իջնել եւ օգնել, որ հրելով վեր ելլայ: Երեւակայեցէք զարմացած հապէշներուն նայուածքնե-

ը, որոնք այսքան մեծ թիւով սպիտակամորթ չէին տեսած միատեղ, անոնք ալ քամիոնը հրելու ծիծաղելի վիճակի մը մէջ»:[94] Ժամանման հաջորդ օրը Նվագախմբի անդամներին ընդունեց գահաժառանգ իշխանը, որը, ողջունելով նրանց, ասաց. «Դուք իմ զաւակներս էք, երբեք բանի մը վրայ մի մտածէք, ձեզ զաւակներուս պէս պիտի նայիմ»:[95]

Իշխանի կարգադրությամբ Նվագախմբի տղաները հետեւեցին նաեւ որոշ արհեստների, որի շնորհիվ էլ տարիներ անց, երբ ֆանֆառի խումբը՝ որպես այդպիսին, դադարեցրեց գոյությունը, նրանք առանց դժվարությունների ապահովեցին իրենց եւ իրենց ընտանիքների բարեկեցիկ կյանքը: Նրանք եղան ոչ միայն լավ երաժիշտներ, այլեւ իրենց նոր հայրենիքի հավատարիմ քաղաքացիներ: «Եթովպա-իտալական պատերազմի միջոցին, մեր 40 տղաքը,- վերհիշում էր Հ.Մալխասյանը,- որոնցմէ շատերը քամիոնի տէր եղած էին, եթովպական բանակի մատակարարման մէջ խոշոր գործ տարին, նոյնիսկ զոհեր տալով: Իտալացիները այս գիտէին եւ 1935-1940թթ. իրենց տիրապետութեան շրջանին մեզի լաւ աչքով չնայեցան: Շատերը ստիպուեցան Ճիպութի փախիլ, որը ֆրանսիական քօլօնի էր: Ուրիշներ աքսորի ենթարկուեցան կղզիի մը վրայ: Իսկ անոնք, որ ինձ նման ուղղակի մասնակցութիւն չէին ունեցած, աշխատանքի իրաւունք չստացան եւ դժուար կեանք մը ունեցանք»: Նման նվիրվածությունը աննկատ չմնաց. Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Եթովպիայի կայսրը «...բոլոր Եթովպիա գտնուող 40 տղոց խումբին մնացեալներուն նուիրած էր 500 ք.մ. հող իւրաքանչիւրին՝ տուն մը շինելու համար»:[96] Նրանք եղան նաեւ լավ հայրենասերներ եւ մնացին միշտ երախտապարտ ՀԲԸ Միությանը: 1925թ. Նոր տարվա առիթով ֆանֆառի խումբը Ադիս Աբեբայում կազմակերպեց երաժշտական մի երեկույթ, որի ողջ հասույթը ուղարկվեց Միության Գործադիր Ժողովին՝ «...տակաւին որբանոցներու մէջ մնացող իրենց եղբայրակիցներու օգտին գործածելու համար»:[97]

Երուսաղեմի Արարատեան եւ Վասպուրական որբանոցները գործեցին շուրջ չորս եւ կես տարի՝ մինչեւ 1926թ. մայիս: Միության Կենտրոնական Վարչական Ժողովը, հաշվի առնելով, որ որբուհիների մի մասի ամուսնության, ինչպես նաեւ Կիպրոսի Մելգոնեան վարժարան եւ այլ հաստատություններ շուրջ 100 որբերի փոխադրման պատճառով որբանոցների սաների թիվը նկատելիորեն նվազել էր, որոշում է փակել այդ երկու որբանոցները, իսկ մնացած սաներին տեղափոխել Բեյրութ՝ Քէլէկեան-Սիսուան որբանոց: Նման որոշումը հիմնավորված էր նաեւ զուտ տնտեսական առումով, քանզի Երուսաղեմը համեմատաբար թանկ քաղաք էր. «Մինչ Պէյրութի մէջ միջին հաշուով որբ գլուխ տարեկան 18-19 եգ.ոսկի կը ծախսենք, Երուսաղէմի մէջ կը ծախսէինք 22-26 եգ.ոսկի: Բաց աստի, Երուսաղէմի մէջ մեր տրամադրութեան տակ ունեցած շէնքերը որբանոցի անհարմար ըլլալով, արգելք կը հանդիսանային մեր յիշեալ երկու որբանոցներուն կանոնաւոր եւ բարուոք գործունէութեանը»:[98] Երուսաղեմի Արարատեան եւ Վասպուրական որբանոցները իրենց գործունեության վերջին տարում ունեին 372 սան-սանուհիներ:[99]

Չափահաս որբերի խնդիրը

1923թ. «Միութիւն» ամսագիրը գրում էր. «ՀԲԸ Միութեան որբերը մեծնալու վրայ են: Անոնք հետզհետէ չափահասութեան տարիքը կը թեւակոխեն եւ պէտք է հրաժեշտ տան այլեւս զիրենք պատսպարող եւ կրթող հաստատութիւններէն, իրենց տեղը տալու համար աւելի փոքրատի իրենց եղբայրներուն եւ քոյրերուն»:[100] Ընդհանրապես, հայ որբերի, ինչպես նաեւ որբանոցներում պատսպարված երեխաների թվաքանակի վերաբերյալ ստույգ, ճշգրիտ տվյալներ չկան: Որոշ տեղեկությունների համաձայն, 1923թ. տարբեր երկրներում գործող ավելի քան 20 որբանոցներում հայ սաների թիվը հասնում էր շուրջ 25-27.000-ի: 1920-ական թթ. կեսերին որբերի քանակը Խորհրդային Հայաստանում հասնում էր 60.000-ի, ներառյալ Ամերիկյան Նպաստամատույցի (Հայաստանում հայտնի էր որպես Ամերկոմ) որբանոցների շուրջ 20.000 սաները:[101]

Այն հարցը, թե ինչպիսին է լինելու որբանոցներում պատսպարված երեխաների հետագա ճակատագիրը, թե հրաժեշտ տալով որբանոցներին՝ կկարողանա՞ն արդյոք ապրել ինքնուրույն կյանքով, ապահովել իրենց գոյությունը, Միության ղեկավարության առջեւ ծառացավ որբանոցների հիմնադրման առաջին իսկ օրից: Այդ տարիներին նշված խնդրի կարեւորությունն ու նշանակությունը հայերի համար չէր կարելի համեմատել ուրիշ շատ ժողովուրդների համանման խնդիրների հետ: Հայտնի է, որ որբ երեխաների քանակը բնականոն զարգացող որեւէ երկրում լինում է չնչին եւ նրանց խնամքը, ուսուցումն ու նման այլ հարցեր ստանձնում է նախ եւ առաջ պետությունը՝ նպատակ ունենալով աճեցնել եւ դաստիարակել հասարակության լիիրավ անդամներ: Հայ որբերի պարագան սկզբունքորեն տարբեր էր: Նրանք զրկվել էին ոչ միայն ծնողներից, այլեւ հայրենիքից եւ հայտնվել տարբեր երկրներում, որոնցից եւ ոչ մեկը ի վիճակի չէր եւ ոչ էլ մտադիր էր զբաղվել հայ որբերով, առավել եւս՝ ապագայում մասնագիտություն, կրթություն, աշխատանք ապահովելու եւ նման այլ հարցերի լուծման առումով: Ավելին, նույն այդ երկրնե-

ը՝ Սիրիա-Լիբանան, Եգիպտոս, Պաղեստին, գտնվելով սոցիալ-տնտեսական զարգացման ցածր աստիճանի վրա, դժվարությամբ էին ապահովում սեփական ժողովուրդների գոյության տարրական պայմանները, իսկ Հունաստանը ստիպված էր նախ եւ առաջ զբաղվել այն բազմահազար հույն գաղթականների ճակատագրով, որոնց հաջողվել էր փախչել Օսմանյան կայսրությունից: (Որբ երեխաներին Խորհրդային Հայաստան տեղափոխելու կարելիության մասին՝ 4-րդ գլխում):

Այդ հրատապ դարձած խնդրի լուծման համար Միությունն իր բոլոր որբանոցներում ձեռնամուխ եղավ հատուկ ծրագրի իրականացմանը, որի նպատակը սաներին որոշակի արհեստ սովորեցնելն էր, «...որպէսզի... ի վիճակի ըլլան ճարել իրենց պատառիկը, որբանոցէն հրաժեշտ առնելէ վերջ»:[102]

ՀԲԸ Միությունը, նկատի առնելով թե որբանոցների չափահաս սաների թվի մշտական աճը եւ թե արդեն գործող կամ հիմնվելիք յուրաքանչյուր որբանոցին կից արհեստանոց կազմակերպելու հետ կապված դժվարություններն ու ծախսերը, նպատակահարմար գտավ հատուկ արհեստանոց-որբանոցների հիմնումը: Արդեն 1921թ. սեպտեմբերին Հալեպում հիմնվեց Կիլիկեան Արհեստանոց-Որբանոցը, որը համալրվեց Միության որբանոցների չափահաս սաներով: Սկզբնական շրջանում այստեղ հաստատվեցին կոշկակարության եւ ատաղձագործության, իսկ հետագայում՝ նաեւ դերձակության ճյուղերը: Բացի այդ մասնագիտություններից, Արհեստանոց-Որբանոցի սաները հնարավորություն ունեին Հալեպի տարբեր արհեստավորների մոտ ձեռք բերել այլ մասնագիտություններ եւս: Կիլիկեան Արհեստանոց-Որբանոցը գործեց մինչեւ 1926թ., երբ փակվեց չափահաս որբերի թվի նվազման պատճառով: Գոյության հինգ տարիների ընթացքում այդ հաստատությունում տարբեր արհեստների հետեւեցին ՀԲԸ Միության Մերսինի, Տյորթ-Ցոլի, Երուսաղեմի, Բեյրութի որբանոցների 298 չափահաս որբեր: «Ասոնք կը դասաւորուին հետեւեալ կերպով՝ ըստ իրենց հետեւած արհեստին,- կօշկակար 84, ատաղձագործ 71, դերձակ 36, շօֆէօր 25, կահագործ 12, երկաթագործ 21, թօռնոճի (փականագործ - Էդ.Մ.) 3, փորագրիչ 6, սափրիչ 2, լուսանկարիչ 4, ոսկերիչ 3, գրաշար 4, խաղախորդ (կաշեգործ - Էդ.Մ.) 1, քարակոփ 6, կազմարար 1, երկրաչափ 1, պղնձագործ 1, լամբարագործ 2 եւ առեւտրական պաշտօնեայ 1»: Միության 1925թ. տեղեկագրում հասկանալի հպարտությամբ նշվում էր. «Այս արհեստանոցը մեր որբերուն վերջին կայանն էր, ուրկէ անոնք կ'անցնէին գործի աշխարհը՝ տիրացած արհեստի մը: Անվերապահօրէն կրնանք ըսել թէ Կիլիկեան Որբանոց-Արհեստանոցը, այս տեսակէտով իր դերը լիովին կատարած է»:[103]

Այդպիսին էր նաեւ որբանոցների սաների գնահատականը, ինչի ապացույցն էր Երուսաղեմի որբանոցի շրջանավարտներից Ե.Ներսիսյանի՝ 1923թ. Միության ղեկավարությանն ուղղված նամակը, որը «Միութիւն» ամսագիրը հրապարակել էր «...այնպէս, ինչպես գրուած է, առանց փոփոխութեան». «Այս խնդրանքովս կուգամ ձեզի խնդրելու որ այս եղաւ մօտաւորապէս 7-8 տարի որ ես հայկական որբանոցի մէջն եմ. ես անօթի էի հաց տուիք, մերկ էի հագուստ տուիք, միտքս մութ էր լուսաւորեցիք, մանուկ էի պատանի ըրիք: Ուրեմն շատ եւ շատ երախտապարտ եմ համայն ազգին որ մինչեւ հիմա ինձի այս կատարելութեան հասցուցիք. այլեւս կը տեսնեմ որ բազուկներս զօրացած են եւ հասակս երկարեր է, ու ինքզինքս հոս ըլլալս տեսնելով ամօթ կը զգամ: Ուրեմն երթամ աշխատիմ, քրտինք թափեմ արդիւնք ստանամ եւ այդ արդիւնքից բաժին հանեմ անոնց որոնք կարօտեալ են օգնութեան...»:[104] Հայտնի չէ, թե վերը թվարկած արհեստներից որն էր նախընտրել այս նամակի հեղինակը, եւ դա այնքան էլ կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ նա, ինչպես եւ իր հազարավոր հասակակիցներ, դարձան ձեւավորվող հայ սփյուռքի սոցիալական կառուցվածքի ամենախոշոր՝ արհեստավորների խավի ներկայացուցիչը: Եվ այդ խավն էր, որ դարձավ սփյուռքի տնտեսական եւ ֆինանսական հենքը, նրա շնորհիվ էր, որ աշխարհի տարբեր երկրներում հիմնվեցին բազմաթիվ մշակութային, կրթական, կրոնական եւ այլ ազգային հաստատություններ: Այդ խավի ներկայացուցիչներն էին, որ անցնելով ցեղասպանության եւ բռնագաղթի արհավիրքներով, մեծանալով որբանոցներում, միշտ վառ պահեցին սերը դեպի հայրենիքը, իրենց հայրենասիրությունը փոխանցեցին իրենց՝ օտարության մեջ մեծացած զավակներին, եւ այդ ամենի շնորհիվ ապահովեցին հայ սփյուռքի գոյատեւումը ժամանակի եւ տարածության մեջ:

Այն բանից հետո, երբ 1923թ. Ամերիկյան Նպաստամատույցը հայտնեց իր հաստատություններից չափահաս որբերի արձակման մասին, սփյուռքի հայությունը, ազգային բոլոր կազմակերպությունները հայտնվեցին մի նոր, չափազանց բարդ կացության մեջ: Սալոնիկում հրատարակվող «Նոր Ալիք» թերթը բերում էր Ամերիկյան Նպաստամատույցի 1925թ. մարտին հրատարակած տեղեկագրի տվյալները, որոնց համաձայն 1924թ. վերջին Հունաստանի որբանոցներից՝ որպես տասնհինգ տարին լրացած չափահասներ, արձակվել էին 12.212 հայ որբեր:[105] Ինչպիսի՞ն էր լինելու նրանց հետագա ճակատագիրը:

Ստեղծված իրավիճակում ՀԲԸ Միության Ամերիկայի Կենտրոնական հանձնաժողովը 1924թ. հունվարին հայտարարեց «Ինքնօգնութեան հանգանակութիւն ի նպաստ լքուած հայ որբերու» բացման մասին: Հար-

ցի հրատապության մասին էր վկայում նրա անցկացման չափազանց կարճ ժամկետը՝ մինչեւ նույն թվականի մարտի 31-ը, իսկ նպատակների մասին ասված էր հետեւյալը. «...անոր արդիւնքը ամբողջութեամբ պիտի գործածուի պատսպարելու եւ դաստիարակելու այն որբերը որոնք անտէր եւ անպաշտպան կը թափառին Յունաստանի, Պաղեստինի եւ Սիւրիոյ մէջ, որոնց մէջ են նաեւ այն 12 տարեկան վեր եղող որբերը, որ օրէ օր հազարներով կ'արձակուին Նիր Իսթ Ըլլիյֆի որբանոցներէն եւ կը յանձնուին իրենց բախտին: Հանգանակութիւնը կատարելու համար շրջաբերականով հրահանգ տրուած է ՀԲԸ Միութեան Ամերիկայի բոլոր մասնաճիւղերու վարչութեանց եւ աջակցութեան համար դիմում կատարուած է եկեղեցիներու եւ քաղաքական կուսակցութեանց կեդրոնական մարմիններուն, որոնցմէ ստացուած պատասխանները եղած են խիստ քաջալերական: Այս գործը համազգային է եւ կը կատարուի ահաւոր կացութեան մը հետեւանքով օտարացման եւ կորստեան մատնուած հայու սերունդը փրկելու եւ այնպիսի վիճակի մը մէջ դնելու, որ անոնք կարենան ինքնօգնութեամբ ինքզինքնին ապրեցնել եւ հայ ազգին համար օգտակար ընտանիքներ եւ քաղաքացիներ կազմել:

«ՀԲԸ Միութիւնն իր արդեն իսկ ունեցած խիստ ծանր բեռան վրայ կ'աւելցնէ սոյն հսկայ սիրելի գործն եւս՝ այն վստահութեամբ որ՝ զայն յաջողութեամբ կատարելու իր բուռն ջանքին մէջ ինք միանակ չի թողուիր, այլ այդ գերազանցօրեն հայրենասիրական գործին շուրջ միահաղոյն կը բոլորուին Ազգին բոլոր անդամները նկատելով զայն բուն իսկ իրենց գործը»: Կոչի վերջում ասվում էր. «Զգացումէն աւելի այս անգամ հայ ժողովուրդին *բանականութիւնն* է որ պէտք է գործի, որու հանդէպ կը պարզուի սա պարզ ու ցուրտ իրականութիւնը: Կամ պէտք է փրկուի մեր սերունդը եւ կամ թէ կորսուի ընդմիշտ...»:[106]

Ինքնօգնության հանգանակությամբ հավաքված 43 հազ. դոլարով հնարավոր եղավ հիմնել երկու նոր հաստատություն՝ 1924թ. վերջին բացվեց Աշխատավոր Սաների կայանը Հալեպում, իսկ 1925թ. փետրվարին՝ Պատսպարան-Աշխատանոցը Բեյրութում: Հալեպի Աշխատավոր Սաների կայանը բաղկացած էր երկու շենքից՝ աղջիկների ու տղաների համար, որոնց ընդհանուր թիվն առաջին տարվա ընթացքում կազմեց 130 հոգի: Բեյրութի Պատսպարան-Աշխատանոցը նախատեսված էր միայն որբուհիների համար: Նրա գործունեության առաջին տարին այստեղ կար 80 որբուհի, որոնցից 12-ը հանձնվեցին իրենց ազգականներին, 9 որբուհի ամուսնացան հայ երիտասարդների հետ, եւս 14 որբուհիներ տրվեցին տեղի հայ ընտանիքներին՝ որպես տան աղջիկ: Միության այդ երկու հաստատությունների առջեւ դրված էր երկու հիմնական խնդիր. «...Նիր

Իսթէ լքեալ որբ եւ որբուհիներուն պիտի տան գիշերելու օթեւան մը եւ սնունդ, մինչեւ որ անոնք ինքնաբաւ ըլլան եւ կարենան իրենց սեփական աշխատութեամբ ինքզինքնին հոգալ...»:[107] Այդ նպատակով տղաները Հալեպի արհեստավորների մոտ սովորեցին տարբեր արհեստներ եւ ժամանակի ընթացքում ձեռք բերեցին դերձակի, կոշկակարի, երկաթագործի, ատաղձագործի, շաքարագործի եւ այլ մասնագիտություններ: Աղջիկները, իրենց հերթին, մասնագիտանում էին դերձակության, ձեռագործի, շապկագործության եւ այլ ճյուղերում: Հարկ է նշել նաեւ, որ ինքնուրույնության եւ ինքնաբավության վարժվելու նպատակով այդ չափահաս որբերը պարտավոր էին իրենց վաստակած դրամի մի մասով փոխհատուցել պատսպարանի ծախսերը, իսկ մնացածը պահ տալ Միությանը՝ մինչեւ իրենց վերջնական մեկնումը հաստատությունից:

Երկրորդ հիմնական նպատակը, որին պետք է ծառայեին այդ հաստատությունները՝ սաների համախմբումն էր «...հայկական ազգային յարկի մը տակ, հեռի կորսուելու կամ օտարանալու վտանգներէն, պատեհ առթիւ Հայաստան փոխադրուելու համար»:[108] Այս նպատակի հատուկ շեշտումը բացատրվում էր նրանով, որ Միջին Արեւելքի երկրներում գործող ամերիկյան եւ այլ որբանոցները իրենց բոլոր անժխտելի առավելություններով հանդերձ, այնուամենայնիվ, չէին նախատեսում կամ չէին նպաստում երեխաների ազգային ինքնության, ինքնագիտակցության զարգացմանը: Այդ հարցը առավել հրատապ դարձավ, երբ Հալեպի Մանչերու կայանը (այդպես կոչվեց 1926 թվականին՝ աղջիկների բաժանմունքը փակվելուց հետո) սկսեց համալրվել ազատագրված ավելի քան 100 չափահաս՝ հիմնականում 22-26 տարեկան որբերով, որոնք տարիներ շարունակ, կտրված լինելով իրենց հայրենակիցներից, ապրել էին բացառապես թուրքերի եւ արաբների շրջապատում: Այդ տղաների համար անհրաժեշտ եղավ կազմակերպել դասընթացներ, որպեսզի նրանք սովորեն հայերեն գրել-կարդալ եւ այդ ճանապարհով վերականգնեն իրենց գրեթե կորցրած ազգային ինքնությունը: Պարզվեց, սակայն, որ օտարումը այնքան խորն էր, որ «...անոնցմէ շատեր ալ, պէտք է ըսել ցաւ ի սիրտ, չի կրցան այս նոր կեանքին վարժուիլ, արաբականին հետ այլեւս բոլորովին շաղախուած ըլլալով, ու դարձեալ վերադարձան անապատները, ու անոնցմէ ոմանք ամուսնութիւններ ալ կնքած էին արաբ կիներու հետ»:[109]

1931թ., երբ Հալեպի Մանչերու կայանում մնացած վերջին որբերը պատրաստվում էին սկսել իրենց ինքնուրույն կյանքը, Միությունը որոշում կայացրեց նրա փակման մասին: Ինքնօգնության հանգանակության մյուս ձեռնարկը՝ Բեյրութի Պատսպարան-Աշխատանոցը փակվեց ավելի վաղ՝

1929թ., նրա վերջին 24 սանուհիները փոխադրվեցին Բեյրութի Սիսուան որբանոց:

1923թ. տվյալներով Երուսաղեմի Արարատեան որբանոցի 111 եւ Բեյրութի որբանոցի 45 չափահաս սաներ այդ քաղաքների հայ եւ օտար արհեստավորների մոտ մասնագիտանում էին դերձակության, երկաթագործության, ատաղձագործության, կոշկակարության, հախճապակեգործության եւ այլ արհեստներում: Միության նման նախաձեռնությունը կարեւորվում էր նաեւ այն հանգամանքով, որ չափահաս որբերի մեջ «...կայ որոշ թիւ մը որ տարագրութեան երեսէն, դժբախտութիւնն ունեցած է ուսման մէջ տկար մնալու: Այսպիսիք՝ բացահայտ է թէ, դպրոցի կապել զրկանք մը պիտի ըլլար, որովհետեւ քիչ ժամանակի մէջ ոչ միայն չի պիտի կարենային հիմնական կրթութիւն մը ստանալ, այլեւ չափահաս երիտասարդներ ըլլալով, կարելի չի պիտի ըլլար, անհրաժեշտ արհեստ մը սորվեցնել անոնց ապագային»: Որպես Միության այս «գեղեցիկ գաղափարի» օրինակ, «Արեւ» թերթը նշում էր Երուսաղեմի Արարատեան որբանոցին կից գործող կոշկագործության արհեստանոցը. «Քառասուն արհեստաւոր սաներ յանձնուած են արհեստապետ Անդրանիկ Պալայեանի, որ իր շուրջ ունի տասն եւ երեք վարպետներ (գալֆա): Հազիւ երեք ամսուան գոյութիւն ունեցող արհեստանոցը, կրցած է կարեւոր դիրք մը գրաւել քաղաքիս մէջ, ոչ միայն իր մաքուր, տոկուն եւ ճաշակաւոր գործերով, այլեւ աժանութեամբ: Սկսնակ աշակերտներ՝ քիչ ժամանակի մէջ շատ կը դիւրացնեն իրենց վարպետներուն աշխատութիւնը, այնպէս որ արհեստանոցը օրական 60-70 զոյգ կոշիկ կը հայթայթէ: Ըստ արհեստապետին հաւաստիքներուն այս թիւը կրկնապատկելու հաւանականութիւն կայ քիչ ժամանակի մէջ»:[110]

Չափահաս որբուհիների համար նույնպես անհրաժեշտ պայմաններ էին ստեղծվել որոշակի մասնագիտություններ ստանալու համար: Արհեստանոց-կարատուն էր գործում Երուսաղեմի Վասպուրական որբանոցում, ուր «...39 չափահաս սանուհիները ամբողջ օրը կը զբաղին արհեստագործութեամբ, փոխն ի փոխ աշխատելով կարատան, շապկագործարանի մէջ եւ ձեռագործի, նոյն ատեն մասնակցելով Որբանոցի ներքին առտնին աշխատութեանց»:[111] Նմանատիպ կարատուն էր հիմնվել նաեւ Բեյրութի Սիսուան աղջիկների որբանոցում, ուր «...պիտի ձեւուին ու կարուին, սանուհիներու կողմէ, որբանոցներու բոլոր հագուստեղէնը: Բաց աստի սանուհիները, մասնագետ-վարպետի մը առաջնորդութեամբ, մեքենայով գուլպա հիւսել կը սորվին, որբանոցին արդէն ունեցած երկու գուլպայի մեքենաներուն վրայ»:[112] Եվ որքան էլ կարեւոր եւ անհրաժեշտ լիներ արհեստներ սովորելը, որբանոցների սաների մեջ քիչ թիվ չէին

կազմում երեխաները, որոնք, այնուամենայնիվ, կգերադասեին ստանալ լիարժեք կրթություն: Նոյեմզար Վարդանյանը, որը Երուսաղեմի որբանոցների փակումից հետո տեղափոխվել էր Բեյրութի Սիսուան որբանոցը, վերհիշում էր. «Կը բնակէինք փայտաշէն հսկայ կայաններու մէջ, որոնք կը ծառայէին որպէս ննջարան, ճաշարան եւ ամէն ինչ: Ու մենք թէեւ նախապէս խանդավառուած էինք Պէյրութով՝ կորսնցուցինք մեր խանդավառութիւնը, երբ փոխանակ ուսումնական դասաւանդութիւններու հետեւելու՝ սկսանք ձեռագործի այլազան տեսակներ սորվելու: Ամէն պարագայի, մենք՝ նորեկներս, շուտով տիրեցինք ձեռագործի արհեստին, եւ հաւասարեցանք մեզմէ առաջ հոն գտնուողներուն: Դուրսէն ապսպրանքներ կու գային եւ մենք կ'արտադրէինք ուզուած ապրանքը»:[113]

Թե որքան հաջող էր ընթանում որբանոցներում սանուհիների դաստիարակությունն ու կրթությունը, արհեստների ձեռքբերումը, խոսում է այն փաստը, որ նրանցից շատերը ամուսնանում էին Երուսաղեմի եւ Բեյրութի հայ երիտասարդների հետ: «Եվ ամէն հայ ընտանիք կ'աշխատի իր զաւկի նշանածի ընտրութիւնը որբանոցէն ընել, այնպէս որ գրեթէ ամեն օր խնդրարկուներու թիւը անպակաս է»,- ոգեւորությամբ գրում էր Բեյրութից ԱՄՆ ուղարկած թղթակցություններից մեկի հեղինակը եւ եզրակացնում. «Ուրախ ենք, որ Բարեգործականը մէկ կողմէ գիտակից ձեռնհաս սաներ կը հասցնէ, իսկ միւս կողմէ լաւ մայրիկներ եւ տանտիկիններ»:[114] Որքան էլ ուրախալի լինեին նման ամուսնությունները Միության համար, այն մտադիր չէր բավարարվել զուտ դիտողի դերով: Նախ, երիտասարդների խնդրանքը սանուհիների հետ ամուսնանալու վերաբերյալ՝ բավարարվում էր մանրակրկիտ քննությունից հետո միայն: Դրա հետ մեկտեղ, Միության Կենտրոնական Վարչական Ժողովի որոշմամբ, որբուհիների ամուսնությունը դյուրացնելու նպատակով, յուրաքանչյուր ամուսնացող սանուհուն հատկացվում էր «դրամօժիտ»՝ 30 անգլ. ոսկի: Այդ նույն նպատակով ստեղծվեց նաեւ «Որբ ընդ որբուհի» ամուսնության հիմնադրամը, որի շնորհիվ հնարավոր դարձավ բազմաթիվ հայ ընտանիքների ստեղծումը:

Հունաստանում

Հունաստանում հայ բնակչությունը զգալիորեն աճել էր դեռ 1912-1913թթ. Բալկանյան պատերազմներից հետո, երբ Օսմանյան Թուրքիայից Հունաստանին անցան Սալոնիկը, Տրաման, Գավալան, Քսանտի եւ այլ հայաշատ քաղաքներ: 1921-1922թթ. Կիլիկիայից հեռացող ոչ մեծ

թվով հայեր ապաստանել էին այստեղ: 1922թ. սեպտեմբեր ամսին, երբ քեմալականները պատրաստվում էին գրավել Իզմիրը (Զմյուռնիա), ինչին հետեւելու էր քրիստոնյա ողջ բնակչության ոչնչացումը, սկսվեց Իզմիրի եւ շրջակա վայրերի հայության զանգվածային խուճապահար գաղթը Հունաստան: Տասնյակ հազարավոր հայ փախստականներ «...կը հասնէին յոյն տարագիրներու աւելի հոծ խումբերու հետ, անոնց նման կարօտ ամէն բանի, հիւանդներով, անկարներով, նոր այրիացած անոք կիներով, որբերով, շատերը առանց հագուստի, առանց ճերմակեղէնի, գրեթէ բոլորն ալ առանց անհրաժեշտ կարասիներու, ոմանք նոյն իսկ բոկոտն»:[115] Այն բանից հետո, երբ Արեւելյան Թրակիան վերադարձվեց Թուրքիային, հայ գաղթականների նոր ալիք՝ ավելի քան 30.000 մարդ, անցավ Սալոնիկ, Գավալա, Քսանտի եւ այլ քաղաքներ:

Այս ամենի արդյունքում Հունաստանը դարձել էր հայ գաղթականների կուտակման հիմնական կենտրոններից մեկը: Հունական պաշտոնական տվյալների համաձայն, այստեղ հաստատված հայերի թիվը 1924թ. կազմում էր շուրջ 55 հազար մարդ,[116] այլ տվյալների համաձայն՝ նրանց թիվը հասնում էր 100-120 հազարի, որոնցից մոտ 50.000-ը հաստատվել էին Հին Հունաստանում եւ կղզիներում:[117] Գաղթականների հիմնական զանգվածը ապրում էր, զրկված լինելով անհրաժեշտ ամենատարրական պայմաններից:

Ահա թե ինչպես էր նկարագրում Աթենքի արվարձաններից մեկում՝ Ֆիքս կամ Տուրղուտի վայրում ապաստանած ավելի քան 8.000 հայ գաղթականների կյանքը տեղի Ազգային վարժարանի տնօրեն Մ.Աղասյանը: «Հողաշէն խեղճուկ տնակներու եւ պատառոտուն վրաններու կոյտ մը կանգնած է հիմայ հոն՝ այդ ընդարձակ տարածութեան վրայ, զոր ատեն մը խոզերու գոմեր կը գրաւէին, որուն համար Տոմուզ-Տամը (խոզանոց) ալ կը կոչուի: Ներկայիս եւս մարդկային խոզանոց մը պիտի ըսէի, եթէ խորհէի օտարականի մը թոուցիկ տպաւորութեան մը ներքեւ եւ կամ լռեցնէի արժանապատվութեան ձայնս՝ բխած այն գիտակցութենէն զոր ունիմ ցեղիս անսպառ կենսունակութեան մասին, որը անհունօրէն կը խոշորցնէ զինքը իմ ազգիս՝ իր խեղճութեան եւ տառապանքին մրուրին մէջ իսկ... «Ի Արմենիքի սինիքիա» - հայոց թաղ - կը մրմնջեն ամէն անոնք որոնք բոպէ մը կ'անդրադառնան դէպի հոն: Ինչ հեգնանք... «հայոց թաղը»: Թաղամասի կենտրոնում «համեստ ու փայտաշէն տնակներ» են, կան եկեղեցի ու դպրոց՝ «միեւնոյն յարկին տակ, տախտակաշէն, ուր կ'ուսանին եւ կ'աղօթեն յաջորդաբար» 500 երկսեռ աշակերտներ: ...Մանուկներու ստուար մաս մը կը մնայ առանց վարժարանի, օրն ի բուն թափառելով փողոցները բոկոտն, գլխաբաց, փոշիներու եւ ցեխերու մէջ տա-

պլտկելով: Ու այս կեանքը անոնց մէջ կը մեռցնէ ամէն յատկութիւն, կը խաթարէ անոնց բարոյականը ու կը դատապարտէ զիրենք ապագայի մը՝ ցաւերով լեցուն»:

Թաղամասի բնակչության «...կարեւոր թիւ մը կը կազմեն անտէր, անտիրական մնացած ընտանիքները, որոնց մէյմէկ անկիւն նետուած կը տուայտին ամենայետին թշուառութեան մէջ»: Հոդվածի հեղինակը նկարագրում է նման ընտանիքների ամբողջ մի շարք: Խարխուլ տնակներից մեկում անհնար է լինում «...սոսկումի, ահաբեկումի ժեստ մը զսպել՝ տեսնելով անբանացած դէմք մը, որ կը ցցուի մեր առջեւ: Մարդկային ամէն ինչ մեռած է հիւծած դէմքին վրայ: Ըսին թէ կոտորածներէ յիմարացած մըն է, ութը հոգիէ բաղկացած ընտանիքի մը նեցուկ ըլլալու կոչուած այդ մարդը՝ այսօր անպէտ առարկայի չափ իսկ արժէք չունի իրեններուն: Անոր կինը ու 60-ամեայ մայրը չարաչար աշխատանքով հազիւ կը բաւարարեն իրենց բազմանդամ ընտանիքին՝ մերթ նպաստաւորուելով նաեւ Ըլլիյֆէն եւ Բարեգործականէն ... Այլապէս ցաւալի է կացութիւնը երկու Սիվրիհիսարցի քոյրերու, մին այրի է մեկ որբով, իսկ միւսը՝ ամուրի, թոքախտաւոր, միեւնոյն վրանին տակ, զուրկ ամէնէն անհրաժեշտ պիտոյքներէ: Ասոնց ալ Բարեգործականը կը նպաստէ եւ կը տեղեկանամ թէ փոքրիկ դրամագլուխ մը տրամադրեր է, որպէսզի ձեռագործով կարենան գէթ իրենց ապրուստին մեկ մասը ապահովել»:[118]

Հայ Ազգային պատվիրակության մասնավոր քննիչ Սեդրակ Քերյանը 1923-1924թթ. Հունաստան կատարած այցելությունների արդյունքում ներկայացրած զեկուցագրում հատուկ նշում էր Միության օգնությունը այդ եւ ուրիշ այլ կարոտյալներին. «ՀԲԸ Միութիւնը խնամատարական գործ կը կատարէ Հին Հունաստանի ամենաթշուառ կայաններէն Լիբազմայի եւ Նէօ Ֆալեռօի մէջ: Լիբազմայի մէջ փոքրիկներուն կաթ կը հայթայթէ եւ օրական 200 տրախմի կը բաժնէ կարօտներուն: Նէօ Ֆալէռօի մէջ, լոկ դրամ կը բաժնէ, Մակեդոնիոյ շրջանին մէջ ալ ՀԲԸ Միութիւնը Սելանիկի մէջ ամէն օր կանոնաւոր կերպով օրական 70-100 տրախմի կը բաժնէ կարօտներու»:[119]

Մ.Աղասյանի հոդվածում հատուկ կարեւորվում է ՀԲԸ Միության կողմից գաղթական կանանց աշխատանքով ապահովելը. «Թշուառութեան այս սրտամորմոք կացութեան մէջ՝ նախախնամական դեր մը կը կատարէ Հայ Բարեգործական Միութիւնը՝ իր գթօտ բազուկը տարածելով, որբեւայրիներուն եւ որբուհիներուն գործ հայթայթելով եւ մասամբ թեթեւցնելով այդ եղկելիներուն դառն վիճակը: Հոս՝ Աթէնքի հինգ արուարձաններուն՝ Ֆիքսի, Ամարուսի, Լիբազմայի, Գոգինիոյ եւ Սինկրուի մէջ կ'աշխատցնէ շուրջ 350 գործաւորուհիներ: Անոնց արտադրած

նրբահիւս ասեղնագործութիւնները Բարեգործականին օժանդակող մեղուաչաւ Տիկիններ կը սպառեն զբօսաշրջիկներու եւ մարտանաւերու սպաներու մօտ: Ամսական 25-30.000 տրախմի՝ բարեգործելու այս ամէնէն բանաւոր եւ բարոյացուցիչ ձեւին տակ՝ նպաստներ կը տրուին կարեկցութեան արժանի այդ թշուառներուն: Պատի՛ւ անոնց»:[120]

Խոսքը վերաբերում է ՀԲԸ Միության Աթենքի Աշխատանոցին: Այն հիմնվել էր 1923թ. Միության Աթենքի Տիկնանց հանձնախմբի նախաձեռնությամբ, բայց ենթարկվում էր տեղական ազգային իշխանություններին: 1924թ. սեպտեմբերից Աշխատանոցը ամբողջությամբ փոխանցվեց Միությանը եւ անընդմեջ գործեց շուրջ 15 տարի: Աշխատանոցի գործունեությունը ապահովելու նպատակով Միությունը ստեղծեց հատուկ հիմնադրամ՝ 300 անգլ. ոսկիով, որին եւս 200 ոսկի նվիրեց Միության փոխնախագահ Տիգրան խան Քելեկյանը: Ընդամենը մի քանի տարի անց Աշխատանոցը ոչ միայն դարձավ ինքնաբավ, այլեւ կարողացավ վերադարձնել նշված գումարների մեծ մասը, ինչը եզակի դեպք էր ՀԲԸ Միության հաստատությունների պատմության մէջ: Աթենքի Աշխատանոցի շնորհիվ հարյուրավոր հայ կանայք, մեծ մասամբ իզմիրցի, իրենց ձեռագործ եւ կարի աշխատանքների դիմաց համապատասխան օրավարձ ստանալով, ի վիճակի եղան «...պատուաւորապէս ապրելու եւ ապրեցնելու իրենց պարագաները»:

Ավելի վաղ՝ 1923թ. մայիս ամսին, սկսեց գործել ՀԲԸ Միության Աշխատանոցը Սալոնիկում: Այս աշխատանոցը, թեեւ զիջում էր Աթենքի աշխատանոցին իր աշխատավորուհիների թվով, գործում էր նույն սկզբունքով, եւ այստեղ նույնպես մի քանի հարյուր անոք հայուհիներ, զբաղվելով ձեռագործությամբ, ապահովեցին իրենց եւ իրենց ընտանիքների օրապահիկը: Ս.Քերյանը իր զեկուցագրում նշում էր. «ՀԲԸ Միութիւնը այստեղ (Սալոնիկում - Էդ.Մ.) բացած է ձեռագործի աշխատանոց մը ուր 50 աղջիկներ կ'աշխատին 2 ուսուցչուհիի հսկողութեան տակ: Նոյնիսկ բոլորովին անվարժ աղջիկ մը, աշխատանոց մտածին պէս կը ստանայ 12 տրախմի շաբաթական: Աշխատող աղջիկները ձեռագործի վարժուելնէն ետք, կը վարձատրուին իրենց տուած արդիւնքին համեմատութեամբ: Աղջիկ մը միջին հաշուով կրնայ շաբաթական մինչեւ 50 տրախմի շահիլ»:[121] Աշխատավորուհիների թվի խիստ նվազելու պատճառով Սալոնիկի Աշխատանոցը փակվեց 1927թ. վերջին:

1925թ. Միության Սալոնիկի մասնաժողովը ստանձնեց տեղի Ազգային խնամատարության որբանոցի ղեկավարումն ու մատակարարումը, ուր պատսպարել էին 23 որբեր եւ անվճար ուսանում էին եւս 40 գաղթական աղքատ տղաներ: 1926թ. հոգածության կարիք ունեցող որբերը տեղափոխվեցին Բեյրութի Քէլէկեան-Սիսուան որբանոց:

Դեռեւս 1922թ. Միության Կենտրոնական Վարչական Ժողովը Հունաստան գործուղեց իր հայտնի գործիչներից Մ.Նաթանյանին՝ այդ երկրում ապաստանած գաղթականների, այդ թվում նաեւ Իզմիրի աղետից փրկվածների կյանքի պայմաններն ու առաջնահերթ կարիքները պարզելու նպատակով: Մ.Նաթանյանի կազմած տեղեկագրերում, որոնք կարեւոր դեր խաղացին Միության վերոնշված ծրագրերի մշակման գործում, հատուկ շեշտվում էր գաղթականների մեջ բազմաթիվ հիվանդությունների տարածման փաստը, որոնց զոհերն էին դառնում հատկապես երեխաներն ու կանայք: Հաշվի առնելով հարցի կարեւորությունը՝ 1923թ. Աթենքում, իսկ քիչ անց նաեւ Միտիլլիում, Պիրեյում, Սալոնիկում սկսեցին գործել Միության դարմանատները: Դրանց անհրաժեշտության մասին էր վկայում այն, որ, օրինակ, Աթենքի եւ Պիրեյի դարմանատներ դիմող հիվանդների թիվը ընդամենը չորս ամսվա ընթացքում եղել էր 10.000-ից ավելի:[122] Հետագա տարիներին նույնպես դարմանատներում բուժվողների քանակը հասնում էր մի քանի հազարի: Դարմանատներից յուրաքանչյուրում աշխատում էին մեկական բժիշկ ու հիվանդապահուհի, ինչպես նաեւ շրջիկ հիվանդապահուհի, որը մշտապես այցելում էր անկողնային հիվանդներին: Թոքախտով հիվանդներին, որոնք մեծամասնություն էին կազմում, անվճար տրվում էր դեղորայք, պարեն, իսկ երեխաներին՝ նաեւ կաթ, ձմռանը՝ ձկան յուղ եւ այլն: Միտիլլիում դարմանատունը գործեց մինչեւ 1928թ., իսկ Աթենքում եւ Պիրեյում՝ մինչեւ 1931թ., երբ, մի կողմից, Հայաստան արտագաղթելու հետեւանքով զգալիորեն նվազեց չքավոր գաղթականների քանակը, իսկ մյուս կողմից, հունական կառավարությունը եւ արտասահմանյան մարդասիրական կազմակերպությունները սկսեցին անվճար բժշկական օգնություն ցույց տալ նաեւ հայ գաղթականներին:

1923թ. Ամերիկյան Նպաստամատույցը Գավալայի մոտակայքում հիմնեց որբանոց-կայաններ, որտեղ որոշ ժամանակ մնալուց հետո հայ որբերը «... որպէս հոգեզաւակ կը յանձնուին յոյն ընտանիքներուն... Այս որբերուն ապազգայնացուցիչ կացութիւնը հայ մամուլի մէջ մեծ աղմուկ կը յարուցանէ, ուստի Փարիզի մէջ Հայ Ազգային Պատվիրակութիւնը հայ ժողովուրդի մեծ բանաստեղծ Վահան Թէքէեանին կը նշանակէ իր լիազօր ներկայացուցիչը՝ զբաղելու Յունաստանի, Սուրիոյ, Եգիպտոսի եւ Զուիցերիոյ մէջ գաղթականներու եւ մասնաւորապէս որբերու կացութեան բարւոքելու աշխատանքով»:[123] Վ.Թեքեյանի պատրաստած տեղեկագրերը հաստատեցին հատկապես Հունաստանում գտնվող Ամերիկյան

Նպաստամատուցի հաստատություններում հայ երեխաների ազգային դաստիարակության եւ կրթության մտահոգիչ վիճակը: Այսպես, 1923-1924թթ. ուսումնական տարվա համար ընդունվել էր, այսպես կոչված, «Խառն դաստիարակության կրթական ծրագիր», համաձայն որի, Ամերիկյան Նպաստամատուցի որբանոցներում դասավանդությունը տարվելու էր միայն հունարեն:[124] Խնդրի լուծման նպատակով հրավիրված խորհրդակցությունների արդյունքում, որի մասնակիցներն էին նաեւ Հայ Ազգային պատվիրակությունը եւ ՀԲԸ Միությունը, ամերիկյան կազմակերպությունը իր համաձայնությունը տվեց Ազգային պատվիրակության կողմից ներկայացված հայ որբերի կրթության ծրագրին, որի հեղինակներն էին Ն.Ադոնցը, Հ.Թոփճյանը, Ա.Զոպանյանը, Տ.Բեկզադյանը, Դավիթ Բեկը:[125] Շատ շուտով պարզ դարձավ, սակայն, որ Ամերիկյան Նպաստամատուցը մտադիր չէ փոխել իր կրթական քաղաքականությունը, ինչը, բնականաբար, բողոքի նոր ալիք առաջացրեց հայկական ամենատարբեր շրջանակներում: Նյու Յորքում հրատարակվող «Հայաստանի կոչնակ» թերթը իր խմբագրականներից մեկում գրում էր. «Անշուշտ, մենք իրաւունք չունինք պահանջելու որ Սուրիոյ եւ Յունաստանի չափահաս որբերն անպատճառ մշտականօրէն պահուին Ռիլիֆի խնամքին ներքեւ: Բայց, անվիճելի եւ նուիրական իրաւունքի մը ուժով անգամ մըն ալ կը բողոքենք Ռիլիֆի կրթական ծրագրերուն հակահայ ուղղութեան դէմ»: Հիշեցնելով դեռեւս 1923թ. ձեռք բերած համաձայնությունները, թերթը նշում էր. «Եվ սակայն...ահա կը մոռցուին հանդիսաւոր խոստումները, եւ մեր որբերը կը խառնուին յոյներու եւ արաբներու հետ, եւ անոնց կը տրուի այն տեսակ կրթութիւն մը որ ազգային լեզուն ու գիտակցութիւնը պահպանելէ շա՛տ հեռու է: Աթէնքի «Նոր Օր» էն կիմանանք որ տեղւոյն Ազգ. Վարչութեան անդամներէն ներկայացուցիչ մը Սիրայի որբանոցն այցելելով՝ կը հարցնէ թէ ինչո՞ւ մանկապարտէզի հայ փոքրիկներուն տոհմային կրթութիւն չը տրուիր: Տնօրէնը, Մր. Հուայթ, ընդունելով հանդերձ «դիտողութեան իրաւացիութիւնը» կը յայտարարէ թէ «մեզի համար տոհմային կրթութիւնը այնքան ալ կարեւոր չէ», եւ կը յարէ,- «մենք որբանոցներուն ներքին քաղաքականութիւնը կը վարենք Կեդրոնի հրահանգներուն համաձայն»:[126]

Եգիպտոսում

Վերը նշված որբանոց-կայանների որբերին, նկատի առնելով Ամերիկյան Նպաստամատուցի որոշումը իր հաստատությունների մոտալուտ

լուծարման վերաբերյալ, նպատակահարմար նկատվեց տեղափոխել Եգիպտոս: Դա պայմանավորված էր մի կողմից՝ Եգիպտոսի կառավարության համաձայնությամբ՝ ընդունել թվով շուրջ 2.500 որբ երեխա, իսկ մյուս կողմից՝ Կահիրեում եւ Ալեքսանդրիայում կազմակերպված հայ համայնքների գոյությամբ:

Կահիրեում եւ Ալեքսանդրիայում տեղի հայ Ազգային իշխանության օժանդակությամբ եւ հսկողությամբ որբերը տեղավորվեցին հիմնականում հայ ընտանիքներում՝ «...իբրեւ տան աղջիկ կամ սպասուհի»: «Սկզբնական շրջանին բաւականին վայելեցին աղջիկները հայ տուներու մէջ, բայց, քանի մը տարի անցնելէ յետոյ,- նշվում էր ՀԲԸ Միության 1928թ. տեղեկագրում,- երկուստեք անհամաձայնութիւններ ծայր տալով դժուարացուցին այս որբուհիներուն հոգատարութեան ծանր գործը»: Ստեղծված իրավիճակում Ազգային իշխանությունները դիմում են ՀԲԸ Միությանը, որն էլ «...հարկ տեսաւ այդ որբուհիները եւս իր պաշտպանութեան ներքեւ առնել, անոնց համար կայան մը կազմակերպելով: Ասոնց հոգատարութիւնը յանձնուեցաւ Տիկնանց Խնամակալութեան...»: Ահա այսպիսի պարագաներում Միությունը Եգիպտոսում հիմնեց Աղջկանց կայաններ (Որբուհիներու տուն, Girl's Home), նախ Կահիրեում՝ 1928թ. մայիսին, ապա նաեւ Ալեքսանդրիայում՝ 1929թ. սեպտեմբերին եւ որոնք գործեցին համապատասխանաբար՝ մինչեւ 1935 եւ 1933թթ., երբ «...որբուհիները այլեւս չափահաս ըլլալով, ի վիճակի եղած էին հոգալու իրենց պատսպարումի ծախքերը»:[127]

Անհամաձայնության պատճառներից մեկը ֆինանսական բնույթի էր, ինչի մասին նույն տեղեկագրում գրված է հետեւյալը. «...ազգային իշխանութեան կողմէ Միութեանս յանձնուեցան 302 որբուհիներ, որ ընդհանրապէս ձրիաբար կամ 60 եգիպ. ղրուշ ամսականով տեղաւորուած էին հայ ընտանիքներու մէջ: Այս դրութիւնը շարունակելով շատ դժուար պիտի ըլլար որբուհիները փոքր դրամագլուխի տէր ընել ու ամուսնացնել: Ուստի եւ որոշուեցաւ հայ ընտանիքներէն ուզել աղջիկներուն կատարած աշխատութեան համապատասխան վարձք մը: Այս որոշումին գործադրութիւնը բնականաբար շատ մը դժուարութիւններու հանդիպեցաւ սակայն, հնարաւոր դարձուց ի վերջոյ որբուհիներուն մեծամասնութեան լաւագոյն պայմաններով տեղաւորումը օտարներու քով, որ ոչ միայն լաւ վճարում կընեն, այլ եւ ամէն հոգածութիւն ցոյց կուտան իրենց յանձնուած որբուհիներուն մասին»:[128] Հարցի լուծման նման եղանակը բավական համոզիչ էր. 1928թ. մայիսին, երբ որբուհիները հանձնվեցին Միությանը, նրանցից 185-ը աշխատում էին անվճար, 46-ը ստանում էին 50-60 ղրուշ, 19-ը անգործ էին: Իսկ արդեն 1929թ. տվյալներով 270 որբուհինե-

ից 66-ը ստանում էին 300-500, 51-ը՝ 150-250 դրուշ, 110-ը աշխատում էին անվճար եւ 16-ը անգործ էին: Հարկ է նշել նաեւ, որ աղջիկների տեղավորումը եւ վարձատրումը այդուհետ կատարվում էր համաձայն պայմանագրերի, իսկ նրանց վաստակած գումարները դրվում էին բանկ՝ 3.5 տոկոսով, ինչի շնորհիվ ստեղծվում էին որոշակի ֆինանսական նախադրյալներ նրանց ապագա կյանքի, մասնավորապես, ամուսնության համար:

Անհամաձայնության համար կային, սակայն, եւ այլ բնույթի պատճառներ: Խոսքը հայ որբ երեխաների հոգեբանական նկարագիրի մասին է, մի երեւույթ, որը մինչ օրս գրեթե չի լուսաբանված մասնագիտական գրականության մեջ: Կասկածից վեր է, որ ցեղասպանության եւ բռնագաղթի ողբերգության միջով անցած, ծնողներին ու հարազատներին կորցրած, օտարության մեջ, լավագույն դեպքում՝ որբանոցներում մեծացած երեխաները չէին կարող չտարբերվել այդ ամենին անծանոթ իրենց հասակակիցներից: Կասկածից վեր է նաեւ, որ կյանքի նման դաժան պայմանները որոշակիորեն ազդեցին այդ երեխաների հոգեբանական բնութագրի, նրանց բնավորության, խառնվածքի, ձեւավորվող համոզմունքների ու դիրքորոշումների վրա: Ընդունելով հանդերձ, որ կյանքի նման պայմանները մեծի մասամբ ունեցան բացասական հետեւանքներ՝ երեխաների մի զգալի մասին պատճառելով հոգեկան ցնցումներ, հոգեբանական այլ խախտումներ, այնուամենայնիվ, անժխտելի է նաեւ այն, որ կյանքի նման ոչ ջերմոցային պայմանները ունեցան եւ այլ բնույթի հետեւանքներ: Այդ երեխաների մեջ նկատելի էր սեփական արժանապատվության, ինքնուրույնության, սոցիալ-մշակութային հարմարվածության, պրագմատիզմի եւ նման այլ հատկանիշների առավել զարգացում: Հոգեբանական այդպիսի բնութագիրը հատկապես նկատելի էր ամերիկյան որբանոցների սաների շրջանում, ուր նրանք դաստիարակվում էին ամերիկյան ոգով, որի կարեւոր հատկանիշներից է անհատապաշտությունը: Այդ պատանիները եւ հատկապես աղջիկները որոշակիորեն տարբերվում էին Արեւելքի ավանդապահ երկրներում ապրող իրենց հասակակիցներից: Եվ այդ՝ սոցիալ-մշակութային բնույթի տարբերությունները ունենում էին յուրահատուկ դրսեւորումներ:

Ջեյմս Բարտոնը, իր գրքում խոսելով Եգիպտոս փոխադրված աղջիկների մասին, հատուկ նշում է այն փաստը, որ նրանցից 113-ը Կահիրեում ու Ալեքսանդրիայում ամուսնացան տեղացի հայ երիտասարդների հետ եւ կազմեցին ամուր եւ երջանիկ ընտանիքներ: Նա իրավացիորեն կարեւորում է այդ փաստը, քանզի Արեւելքի երկրներում անօժիտ աղջիկների, այն էլ որբուհիների ամուսնությունը դժվարին մի գործ էր, ինչպես

միշտ: Ավելին, այդ աղջիկների բարի համբավը այնքան մեծ է եղել, որ բարեկեցիկ հայ ծնողներ սկսել են բողոքել Հայ եկեղեցու առաջնորդին՝ տեղացի հայ երիտասարդների կողմից իրենց դուստրերին անուշադրության մատնելու, անտեսելու համար:[129] Որբանոցի սաներուհիների յուրահատուկ հոգեբանական կերտվածքի մասին է վկայում նաեւ հետեւյալ դեպքը, որը տեղի էր ունեցել այս անգամ Հունաստանում՝ մինչ նրանց Եգիպտոս տեղափոխվելը: Նույն հեղինակը, նախ, հատուկ նշում է որբուհիների մեջ ձեւավորված այն հստակ համոզմունքը, որ ամուսնությունը պետք է հիմնված լինի փոխադարձ մտերմության եւ զգացմունքների վրա, ինչը, սակայն, շատ հաճախ հակասում էր իրենց շրջապատող մարդկանց՝ թե հայերի եւ թե հույների պատկերացումներին: Որպես օրինակ, նա բերում է հետեւյալ վկայությունը. «Երկու քույրեր որբանոցից գնացին ապրելու իրենց ազգականի մոտ: Նրանք ապրում էին երջանիկ կյանքով, մինչեւ որ այդ մարդը որոշեց ամուսնանալ քույրերից մեկի հետ: Նրանք մերժեցին այդ առաջարկությունը՝ ասելով. «Մենք ցանկանում ենք աշխատել եւ ապրել մեր ուզած ձեւով»:[130]

Ֆրանսիայում

Սիրիայում եւ Հունաստանում որբանոցներից արձակված չափահաս հայ որբերի մի մասը Ամերիկյան Նպաստամատույցը փոխադրեց Ֆրանսիա: 1923-1924թթ. այստեղ եկան 600, իսկ 1926թ. եւս 300 նախկին սան, որոնք հիմնականում տեղավորվեցին գավառներում, ուր զբաղվեցին գյուղատնտեսությամբ, իսկ որոշ մասն էլ աշխատեց տարբեր գործարաններում: Նրանց կեցության եւ աշխատանքի հետ կապված ամենատարբեր հարցերը լուծելու նպատակով Ամերիկյան Նպաստամատույցի հովանավորությամբ եւ աջակցությամբ Փարիզում սկսեց գործել ականավոր ֆրանսիացիներից բաղկացած «Որբերի պաշտպանության կոմիտե» (Comite de Protection des Enfants Immigres): 1927թ., Ամերիկյան Նպաստամատույցը, որը պատրաստվում էր ինքնալուծարման, դիմեց ՀԲԸ Միությանը՝ խնդրելով ստանձնել նշված Կոմիտեի նյութական օժանդակությունը: Միությունը համաձայնվեց ֆինանսավորել Կոմիտեի գործունեությունը, ավելին՝ Միության «Բրոբականտի Ցանցնաժողովի» անդամ Արշակ Չոպանյանը դարձավ նույն այդ Կոմիտեի փոխնախագահ: «Որբերի պաշտպանության կոմիտեի» արդյունավետ գործունեությանը մեծապես նպաստեց նրա քարտուղար, Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի նախկին անդամ տիկին Պ. Բարսե-

ղյանը, որը հայ որբերի համար «...մայրիկի դերը կը կատարէ»:[131] Իր «Հայ որբերը Ֆրանսայի մէջ» հոդվածում մանրամասն նկարագրելով որբերի ընդհանուր վիճակը՝ նա եզրակացնում էր. «Մեր կարծիքն է որ տղաք հողագործութեան մէջ շատ աւելի լաւ են առողջական, նիւթական եւ բարոյական տեսակէտներով: Կան տղաք որ անհամբերութեամբ սպասեցին ինքնութեան թուղթերը ստանալու օրուան, որպէսզի գործարաններու մէջ աշխատէին, սակայն խնայած դրամնին վատնելէ վերջ, կրկին դիմեցին գրասենեակ՝ հողագործութեան մէջ աշխատելու համար»:[132] Պ.Բարսեղյանի բերած փաստերը գալիս էին հերքելու հայկական որոշ շրջանակներում տարածված այն կարծիքը, թե այդ որբերը, իբր, մատնված են անտերության, ցանկանում են հեռանալ Ֆրանսիայից, եւ որ նրանք դատապարտված են ապազգայնացման: Այս վերջին կետի առիթով «Ֆրանսահայ տարեգիրքը» գրում էր. «Առիթէն օգտուելով, ի վեր հանենք սա իրողութիւնը թէ մենք հայերս որքան անտարբեր ենք այս տղաքը իրենց լեզուին ու գրականութեան հաղորդ պահելու գործին մէջ: Գանգատ ու տրտունջ բերնէ չձգող «ազգասէր»ները, «որբերը Ֆրանսայի մէջ պիտի կորսուին» պօռացողները մատը մատին չդրին՝ հայերէն գիրք եւ թերթ ղրկելու համար այդ որբերուն: Բացառութիւն ըլլալով յիշենք Բարեգործական Միութիւնը որ հայերէն գրքեր գնելու համար գումար մը նուիրեց, եւ Ա.Զօպանեանը, որ իր բոլոր երկերը ղրկեց: Մնացեալը խօսք, խօսք, խօսք, բողոք ու գանգատ, ողբ ու տրտունջ: Երբեք չի՞ պիտի փոխուինք»:[133]

«Որբերի Կիրակի»

Այդ տարիների ՀԲԸ Միության գործունեության կարեւոր բնութագրերից էր համագործակցությունը արտասահմանյան տարբեր բարեսիրական կազմակերպությունների, մասնավորապես Ամերիկյան Նպաստամատույց կազմակերպության հետ, որը մեծ դեր խաղաց հայ որբերի փրկության եւ խնամատարության գործում: Այդ կազմակերպության ստեղծումը անմիջականորեն կապված է Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի անվան հետ: 1915թ. սեպտեմբերին ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտ հղած իր մի հեռագրում նա կոչ էր անում կազմել հատուկ մի հանձնախումբ՝ հայ ժողովրդի գոնե մի մասը փրկելու նպատակով դրամահավաք սկսել ԱՄՆ-ում: «Թուրքիայում հայ ցեղի (race) ոչնչացումը կը յառաջանայ արագօրէն»,[134] - գրում էր դեսպանը: Հ.Մորգենթաուի հաղորդումը փոխանցվեց Ամերիկյան միսիոներական մասնախմբի քարտուղար Ջեյմս Բարտոնին, որը իր հերթին, դիմելով մեծահարուստ բարերար Քլիվլենդ Դաջին, գրում էր. «Հայերը չունեն որեւէ մեկը, որ խոսի իրենց համար, եւ կասկածից վեր է, որ ճիշտ ժամանակն է, որ հնչի քրիստոնյաների ձայնը»:[135] Մոտ մեկ ամիս անց՝ 1915թ. հոկտեմբերին, այս երկու անձերի նախաձեռնությամբ հիմնվեց «Հայ նպաստի հանձնախումբը» (Armenian Relief Committee): Եվս մեկ ամիս անց նպատակահարմար համարվեց այդ կազմակերպության միավորումը մինչ այդ եւ նույն նպատակով ստեղծված երկու այլ՝ «Սիրիայի եւ Պաղեստինի նպաստի հանձնախումբ» եւ «Պարսկական պատերազմի նպաստի հիմնադրամ» կազմակերպությունների հետ: Նորաստեղծ ոչ քաղաքական եւ ոչ պետական բարեսիրական կազմակերպությունը նախ կոչվեց «Հայ եւ Սիրիայի նպաստի ամերիկյան հանձնախումբ», իսկ որոշ ժամանակ անց, ԱՄՆ-ի Կոնգրեսի որոշմամբ՝ «Մերձավոր Արեւելքի ամերիկյան նպաստամատույց» (American Near East Relief): Հետագա շուրջ 15 տարիների ընթացքում Ամերիկյան Նպաստամատույցը իր գործունեությունը ծավալեց ամբողջ այդ տարածաշրջանում՝ որբանոցներ, հիվանդանոցներ եւ նման այլ հաստատություններ հիմնելով Թուրքիայում, Սիրիայում եւ Լիբանանում, Հունաստանում, Եգիպտոսում, Պարսկաստանում, Պաղեստինում, ինչպես նաեւ Կովկասում եւ հատկապես Հայաստանում: Այդ տարիներին Ամերիկյան Նպաստամատույցի կողմից հատկացված ամենատարբեր տեսակի նպաստների ընդհանուր արժեքը կազմեց շուրջ 83 մլն դոլար: Այդչափ խոշոր գումարների հայթայթումը հնարավոր դարձավ շնորհիվ այն մշտական, նպատակասլաց եւ համատարած քարոզչական աշխատանքի, որն Ամերիկյան Նպաստամատույցն իրականացրեց նախ եւ առաջ ԱՄՆ-ում, այնուհետեւ, բազմաթիվ այլ երկրներում:

Նման միջոցառումների շարքում հատկապես արդյունավետ եղավ «Որբերի Կիրակի» կամ «Ոսկեղեն պատվիրանը» (Golden Rule, Golden Rule Sunday) նվիրատվություն միջոցառումը: 1923թ. սեպտեմբերին Ժնեւում կայացած Ամերիկյան Նպաստամատույցի հերթական նստաշրջանում, որին մասնակցում էին նաեւ ՀԲԸ Միության ներկայացուցիչները, Գլխավոր քարտուղար Չարլզ Վիքրիի նախաձեռնությամբ, որոշվեց այդ միջոցառումը իրականացնել յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի առաջին կիրակի օրը: «Այդ նպատակով,- տեղեկացնում էր «Միութիւն» ամսագիրը,- Ամերիկեան Նպաստամատոյց մարմինը, Նիր Իսթ Ըլլիյֆը, կ'առաջարկէ Ամերիկայի բոլոր դիւրակեցիկ ընտանիքներուն, որ այդ օրուան սովորականէն ընդհանրապէս աւելի ճոխ սեղանէն կամովին զրկեն իրենք զիրենք, որբերուն առօրեայ համեստ կերակուրը ուտեն, եւ այդ կերպով գոյացած զգալի խնայողութիւնը յատկացնեն որբերուն...

Առաջադրուած նպատակը կրկին է, նախ, բնականաբար, կարեւոր հասոյթ մը ձեռք բերել ի նպաստ որբերուն, եւ, երկրորդ, ստիպել որ բախտին շնորհները վայելող մարդիկ իրենք իրենց խղճին խորը իջնեն այդ օրը, մտածեն մարդասիրական, եղբայրական գերագոյն զգացումներուն վրայ եւ այսպէս ավելի խորապէս համոզուին իրենց պարտականութեանցը: Ամերիկացիները Ոսկեղէն Պատուիրանքի ճաշ կ'անուանեն ասիկա՝ հիմնուելով Աւետարանի աստուածային խրատին վրայ. ըրէ ուրիշներուն ինչ որ կ'ուզես քեզի ընեն: Եթե ամէն մարդ պահ մը ընդունի այս ոսկեղէն պատուիրանքը, շատ արցունքներ կը չորցուին, շատ ցաւեր կը դարմանուին, շատ կեանքեր կը փրկուին»:[136]

ՀԲԸ Միությունը անշուշտ, չէր կարող չարձագանքել Ամերիկյան Նպաստամատույցի այդ ձեռնարկին, ավելին՝ որպես հայկական խոշորագույն բարեսիրական կազմակերպություն, այն պարտավորված էր ապահովել այդ գաղափարի իրագործումը հենց հայության մեջ: Շատ շուտով ՀԲԸ Միության նախագահ Պողոս Նուպարի ստորագրությամբ հրապարակվեց «Կոչ ընդհանուր հայութեան», որը որոշ փոփոխություններով հրապարակվեց նաեւ հետագա տարիների սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին.

«Բարեգործական Ընդհանուր Միութիւնը շատ ազնիւ եւ նպատակայարմար կը գտնէ Նիր Իսթ Ռելիյֆի մէջտեղ դրած սկզբունքը, եւ այսու կը հրաւիրէ իր բոլոր մասնաճիւղերը եւ ընդհանուր Հայութիւնը ի գործ դնել զայն, իրեն պատշաճ դատած եղանակով:

«Դեկտեմբեր 2-ի կիրակին որբերու յատուկ համեստ ճաշ մը ընելը եւ ատկից գոյացած խնայողութիւնը որբերու նուիրելը կրնայ ըլլալ որ հաւանութիւն չգտնէ ամէնուն քով: Բայց դիւրին է այդ կիրակին որբերուն յատկացնելու ուրիշ զանազան եղանակներ գտնել եւ գործ դնել:

«Այդ օրը ուր որ հայ եկեղեցի մը կամ ժողովարան մը կայ, կարելի է մասնաւոր պնակ մը պտտցնել ի նպաստ որբերուն: Նոյն օրը երիտասարդներ եւ օրիորդներ կրնան փողոցներու մէջ ծախել ժապաւէններ եւ խաւաքարտներ որոնք կրեն ՀԱՅ ՈՐԲԵՐՈՒ ԿԻՐԱԿԻ վերտառութիւնը: Կրնան նմանապէս տունէ տուն պտտիլ եւ հանգանակութիւն ընել: ...Ամերիկացիները մեր որբերուն օրական հացը ապահովելու համար, կոչում կ'ընեն իրենց հայրենակիցներուն որ զոհողութիւն մ'ընեն, զրկանք մը պարտադրեն իրենք իրենց, եւ այսպիսով ստոյգ կորուստէ մը փրկեն իրենց օտար եկող ցեղի մը անբախտ զաւակները:

«Մենք ալ պէտք է ցոյց տանք թէ գիտենք մեր պարտականութիւնները կատարել մեր որբերուն նկատմամբ: Կը խնդրենք ուրեմն մեր լուսաւորչական, կաթոլիկ եւ բողոքական ազգակիցներէն, որ սոյն դեկտեմբերի 2-ի կիրակին նուիրական օր մը նկատելով ըլլայ եկեղեցիներու մէջ, ըլլայ դուրսը ամէն կերպով աշխատին հայ որբերուն ի նպաստ: Գլխաւոր գաղութներէն դուրս, ուր մէկ քանի հայեր կան, նոյնիսկ մէկ հայ, պէտք է մասնակցին այդ կիրակիին: Թող չ'ըսուի թէ փոքր շրջանակներու մէջ յուսացուած արդիւնքը այնքան աննշան պիտի ըլլայ որ չ'արժեր ատոր համար աշխատիլ: Պէտքեր այնքան մեծ են որ ամենայետին լուման անգամ՝ Կ'ԱՐԺԷ: Նոյնիսկ մէկ որբի ապրուստին օժանդակելը սրտի գոհունակութիւն մըն է, խղճի պարտք մը»:[137]

Ոսկեղեն պատվիրանքը կարճ ժամանակում ունեցավ միջազգային տարածում եւ արդեն 1927թ. նշվում էր աշխարհի ավելի քան հիսուն երկրներում, իսկ հավաքած գումարները կազմում էին տարեկան ավելի քան 4 մլն դոլար: Նման հաջողությունը մեծապես պայմանավորված էր լայնածավալ քարոզչական աշխատանքով, որի շնորհիվ ոչ միայն ԱՄՆ-ի շուրջ 900 քաղաքներ հանձն էին առել գործադրել Ոսկեղեն պատվիրանքը, այլեւ հազարավոր մարդիկ այնպիսի երկրներից, ուր մինչ այդ հազիվ թե լսած լինեին Հայաստանի մասին: Մարդասիրության եւ բարեսիրության նման օրինակներից էին Չիլին, որի «...տղաքը Որբերու Կիրակիին կամովին կը հրաժարին իրենց անուշեղէնէն, ...որպէսզի Հայաստանի ամերիկեան որբանոցներու որբերը կարենան իրենց հանապազօրեայ հացը ուտել», կամ Ճապոնիան, որի «Ազգային Ժողովի նախագահ իշխան Թօկագավա կարեւոր գումար մը նուիրեց Մերձավոր Արեւելքի որբերուն համար...»:[138] Ճապոնիայի հետ կապված եւս մեկ դեպք՝ իր 1927թ. կոչում հիշատակում էր Պողոս Նուպարը. «Պ.Վիքրի, ներկա տարուան յուլիսին Թօքիօ գտնուած միջոցին, այցելած է ճաբոնցի աղջկանց վարժարան մը, որուն սանուհիները «կնքամայրն» են եւ բոլոր ծախքերը կը հոգան հայ որբուհիի մը, Մարի Մաճարեան, որ կը գտնուի ամերիկեան որբանոցին մէջ եւ 1760 թիւը կը կրէ: Ճաբոնցի աղջիկները խնդրած են պ. Վիքրիէ որ իրենց քրոջական բարեւները հաղորդէ իրենց սանուհիին, եւ անոր տուած են ճաբոնական սիրուն հովահար մը իբր իրենց նուէրը իրենց հեռաւոր պաշտպանեալին»:[139]

Որբերու Կիրակիի վերաբերյալ Պողոս Նուպարի կոչերը լայն արձագանք ունեցան նաեւ հայ սփյուռքում, հատկապես այն երկրներում եւ քաղաքներում, ուր գործում էին Միության մասնաճյուղերը: Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում, Երուսաղեմում, Ալեքսանդրիայում, Հայֆայում, ինչպես նաեւ եվրոպական մի շարք հայաշատ քաղաքներում դեռեւս 1923թ. կազմակերպվեցին հատուկ հանդեսներ, որոնց ընթացքում հանգանակված գումարները ուղարկվեցին Միության Կենտրոնական Վարչության հասցեով: Առավել կազմակերպված բնույթ ունեցան նման հան-

գանակությունները ԱՄՆ-ում: Տեղի հայազգի բնակիչները իրենց պարտավորված էին զգում սատար կանգնել Որբերու Կիրակիին, որի նախաձեռնողը ամերիկյան կազմակերպությունն էր: 1924թ. Միությունը ԱՄՆ-ում հատուկ այդ նպատակով ստեղծեց Կենտրոնական հանձնախումբ՝ հայտնի բարերար Միհրան Գարակյոզյանի ատենապետությամբ: Հանձնախումբը, առաջին իսկ օրից գործակցելով Ամերիկյան Նպաստամատույցի հետ, ապահովեց թե Միության անդամների եւ թե ընդհանրապես ամերիկահայերի մասնակցությունը որբախնամ այդ գործին:

Հետագա տարիներին, սակայն, պարզ դարձավ, որ սփյուռքահայերի վերաբերմունքը այդ միջոցառման հանդեպ միանշանակ չէ: Միության 1928թ. ընդհանուր ժողովում հատուկ նշվում էր. «...Անցեալ տարի եւս 4 դեկտ. կատարուեցաւ Որբերու Կիրակի-ի հանգանակութիւնը, դժբախտաբար ոչ բաղձացուած փոյթեռանդութեամբ»:[140] Միության անդամների նման կեցվածքը պատահական չէր եւ պայմանավորված էր Նպաստամատույցի կողմից Որբերու Կիրակիի հանգանակության նպատակների որոշակի խմբագրմամբ, եթե չասենք փոփոխությամբ: Երվանդ Աղաթոնը 1926թ. հոկտեմբերին Վ.Քյուրքճյանին գրած նամակում իրեն հատուկ ոճով բացատրում է առաջ եկած անհամաձայնության պատճառները. «Near East Relief-ի ժողովին մէջ պ.Վիքրի իր նոր բրոկրամը պարզեց ըսելով թէ պէտք էր Ռուսիոյ, Բոլոնիոյ, Չեխոսլովաքիոյ, Աւստրիոյ որբերուն ալ օգնել: Պ. Բաշալեան եւ ես հակառակեցանք, եւ ըսինք, - «Դուք, պ.Վիքրի, դրամ չկայ ըսելով ձեր Հայ որբանոցները կը գոցէք, եւ հիմա կ'ելնէք ամբողջ Եվրոպիոյ որբերը հոգալու: Այդ որբերն իրենց կառավարութիւններն ունին, որ կրնան փոխառութիւն ընելով որբերը պահել, մինչդեռ մենք տակաւին չունինք այդ միջոցը: Դուք գործ մը սկսեցիք հայ որբերը պաշտպանելու. շարունակեցէք այդ գործը: Երբ, մի քանի տարիէն հայ որբերը ալ ձեզ պէտք չունենան, եւ հայ որբ չի գտնուի՝ այն ատեն Եվրոպիոյ որբերուն կրնաք նայիլ»: ...Պ.Բաշալեան աւելցուց թէ «դուք իրաւունք չունիք այդ բանն ընելու, զի հակառակ է ձեր կանոնագրին, եւ Արեւելքի որբերու համար է ձեր Ընկերութիւնը, ոչ թէ Արեւմուտքի որբերուն. նախ պէտք է մեծ ժողով մը ընէք եւ ձեր կանոնագիրը փոխէք»: Ժողովէն վերջը Վիքրի ըսաւ Բաշալեանին, «իրաւունք ունիք, բայց մի վախնաք, հայ որբերը երեսի վրայ չի պիտի թողունք հիմա»: Եթէ Վիքրի իր առջի գաղափարը առաջ տանիլ կ'ուզէ՝ մի քաշուիք, ձայն բարձրացուցէք: Ռիլիֆի տնօրէններուն քա՞նի անգամ աղաչեցինք մեր որբերու ազգային լեզուին եւ կրթութեան մասին: «Այո» ըսին բայց բան մը չըրին»: Ե.Աղաթոնը, եզրակացնելով, հստակ ձեւակերպում է իր՝ դիրքորոշումը, որի հետ համաձայն եղան շատերը. «Երբ Հալէպի, Պէյրութի քէմբերուն

մէջ գտնուած 37.000 հայ գաղթականներ անօթի եւ հիւանդ կը մեռնին՝ հայոց հաւաքելիք դրամէն անոր (այսինքն՝ Եվրոպայի որբերին - Էդ.Մ.) բաժին հանել սխալ է»:[141]

Ուշագրավ է նաեւ այն, որ սփյուռքում այդ հանգանակությունների հիմնական մասը բաժին էր ընկնում Արեւելքի երկրների եւ առաջին հերթին՝ Միության Եգիպտոսի մասնաճյուղի վրա, մինչդեռ ամերիկահայերը գնալով դրսեւորում էին անսովոր պասիվություն: Եվ պատահական չէր, որ 1931թ. ընդհանուր ժողովը հույս էր հայտնում, որ «... յառաջիկայ դեկտեմբերին Ամերիկային մէջ եւս մեր բարեկամները կը կազմակերպեն Որբերու Կիրակիի նուիրահաւաքութիւնը որ մեր որբախնամ գործին կարեւորագոյն հասոյթը կը կազմէ»:[142] 1932թ. այդ միջոցառումը սկսեց կոչվել Մշակույթի կիրակի, իսկ նրա արդյունքը պետք է հատկացվեր որբ եւ չքավոր երեխաների ազգային դաստիարակությանն ու կրթությանը, ինչպես նաեւ աղքատիկ վարժարաններին օժանդակելուն: Բայց ԱՄՆ-ի մասնաճյուղերի վերաբերմունքը մնաց անփոփոխ:

Ամերիկահայերի նման դիրքորոշումը անսովոր էր, քանի որ նրանք ոչ միայն հայտնի էին իրենց մեծագումար հանգանակություններով, այլ նաեւ որպես նույն այդ հանգանակությունների նախաձեռնողներ: Ավելին, Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում ամերիկահայությունը եղավ ձեւավորվող սփյուռքի ամենակարեւոր բաղկացուցիչ մասերից մեկը՝ մեծապես պայմանավորելով նրա կենսագործունեության հիմնական կերպերն ու ձեւերը: Նույնպիսի կարեւոր դեր ու նշանակություն ունեցան նաեւ ՀԲԸ Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերը: «Միութեան Ամերիկեան շրջանակը, իր ավելի քան 130 մասնաճիւղերով, որոնցմէ ոմանք իրենց կարեւորութեամբ եւ արդիւնքով կը գերազանցէին զանազան շրջաններու հաւաքական կարեւորութիւնն ու արդիւնքը,- նշվում էր «Ոսկեմատեան»-ում,- տակաւ առ տակաւ դարձաւ մեր կազմակերպութեան ողնայարը...»:[143]

Միության մասնաճյուղերը ԱՄՆ-ում

ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղը ԱՄՆ-ում հիմնվեց 1908թ. աշնանը Բոստոնում, այսինքն՝ Միության հիմնադրումից ընդամենը մեկ ու կես տարի անց, հայտնի գործիչ Վահան Քյուրքճյանի ջանքերի շնորհիվ: Այս փաստը առավել հետաքրքրական է դառնում, եթե նկատի ունենանք, որ Կահիրեին շատ ավելի մոտ գտնվող եվրոպական քաղաքներում մասնաճյուղեր ստեղծվեցին ավելի ուշ, Մարսելում՝ 1910թ., Փարիզում եւ

Լոնդոնում՝ 1911թ. եւ այլն: Առավել կարեւոր են, սակայն, ԱՄՆ-ում Միության մասնաճյուղերի հիմնադրման հետ կապված հետեւյալ հանգամանքները: Դեռեւս Առաջին Աշխարհամարտից առաջ շուրջ 60 հազարի հասնող ամերիկահայությունը համախմբված էր ազգային համայնքներում, որոնց կարեւոր եւ որոշիչ տարրերն էին Հայ Առաքելական ու Ավետարանական եկեղեցիները, ինչպես նաեւ ազգային կուսակցությունները, հայրենակցական միությունները՝ յուրաքանչյուրն իր օժանդակ մարմիններով:[144] Այդ տարիներին բավական մեծ էր ազգային կուսակցությունների հեղինակությունն ու դերը, քանզի նրանցում էին տեսնում այն ուժը, որը կարող էր եւ պետք է ազատագրեր Արեւմտյան Հայաստանն ու Կիլիկիան, ուր ապրում էին ամերիկահայերի հարազատներն ու բարեկամները եւ ուր նրանք մտադիր էին վերադառնալ:

Հատկապես ՀՀ Դաշնակցություն եւ ՍԴ Հնչակյան կուսակցությունները, ԱՄՆ-ում ժխտական վերաբերմունք ունեին ՀԲԸ Միության հանդեպ: Այսպես, Դաշնակցության Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» պաշտոնաթերթը ամերիկահայերին կոչ էր անում հեռու մնալ, չհավատալ այդ «կեղծ», «հակազգային» կազմակերպությանը:[145]

Ամերիկահայության մեջ, սակայն, կար մի զանգված՝ Հայ Ավետարանական եկեղեցու հետեւորդները, որոնք ավանդականորեն հեռու էին հայ քաղաքական կազմակերպություններից եւ որոնց համար Միության բարեսիրական համազգային ծրագրերն ու նպատակները նախընտրելի էին կուսակցությունների գաղափարներից ու գործելակերպից: «Ոսկեմատեան»-ը այսպես է գնահատել նրանց դերը ԱՄՆ-ում Միության հիմնադրման եւ տարածման գործում. «Այս պատուական հովիւները Միութեան ճշմարիտ ոգիվիրաները դարձան Ամերիկայի մէկ ծայրէն մյուսը, շատ քաղաքներու մէջ իրենք ստանձնեցին ամէն նախաձեռնութիւն՝ մասնաճիւղերու կազմութեան համար, եւ իրենք եղան մեծագոյն աշխատաւորները, խանդավառողները, քարոզիչները, մէկ խօսքով բրոբականդիստները, ամէն անգամ որ Կեդրոնը, մեծ աղէտներու կամ ազգային կարեւոր պէտքերու առթիւ, իր կազմակերպութիւններէն նոր ու աւելի մեծ զոհողութիւններ ակնկալելու հարկին տակ գտնուեցաւ: Անոնք տրամադրեցին իրենց եկեղեցիներն ու ժողովասրահները Միութեան մասնաճիւղերուն գումարմանց եւ հանդէսներուն, եւ լաւագոյն բեմասացները հանդիսացան Միութեան, որ շնորհիւ իր հմայքին, իր հիմնադիրները տոգորող անխտրական ոգիին եւ իր առաջադրութեանց էապես համազգային բնոյթին, կրցաւ յանկուցանել անոնք եւ անոնցմով կազմել իր լաւագոյն լէգէոնները»:[146]

Շատ շուտով Միության գաղափարների ամենաեռանդուն կողմնակիցն ու սատարողը դարձավ ԱՄՆ-ի Հայ Առաքելական եկեղեցին, ինչի շնորհիվ էլ մեծ թվով հայեր ներգրավվեցին նրա աշխատանքներում եւ արագորեն սկսեցին հիմնել մասնաճյուղեր երկրի տարբեր քաղաքներում: Այդ տարիներին ամերիկահայ իրականության յուրահատուկ բնութագրերից են դառնում Հայ Առաքելական եւ Ավետարանական եկեղեցիների համախմբումը Միության շուրջ, նրանց համատեղ գործունեությունը վերջինի ծրագրերի իրագործման նպատակով: Այդ իմաստով հատկանշական է հետեւյալ դեպքը, որ տեղի է ունեցել 1917թ. մայիսին, Նյու Յորքում Միության Ամերիկայի մասնաճյուղերի հինգերորդ խորհրդակցական համաժողովի ընթացքում: «Մինչդեռ պատգամավորները կը շտապէին նիստը փակելու ժամը 11-ին, որպէսզի կարենան եկեղեցի երթալ, իրենցմէ մէկը դիտել կուտայ թէ ժողովին մէջ եպիսկոպոսներ ալ կան, պատուելիներ ալ, թող այս սրահին մէջ կատարեն կիրակնօրեայ պաշտամունքը, որպէսզի ժամանակ չի կորսուի եւ կարելի ըլլայ շարունակել նիստը: Միաձայն հաւանութեամբ կ'ընդունուի այս առաջարկը, եւ Գեր. Բաբկէն Եպիսկ. Կիւլէսէրեան, ներկաներէն Գեր. Մուշեղ Եպիսկ. եւ Վեր. Հ. Խազոյեանի հետ կը պատրաստէ ժամակարգ մը, որուն համեմատ կը կատարուի կիրակնօրեայ պաշտամունքը: Ամէն մարդ գոհ կը մնայ ճշմարտապէս հոգեշէն եղբայրակցութեան այս մթնոլորտին մէջ աղօթելով, մինչդեռ պաշտամունքը փոխն ի փոխ կը կատարէին ներկայ հայ առաքելական եւ հայ բողոքական եկեղեցականները»:[147]

1909 եւ հաջորդ տարիներին Միության նոր մասնաճյուղեր հիմնվեցին նաեւ Բրիթեյնում, Ուստրում, Պրովիդենսում, Բրակթընում, Բաթաքեյթում: Առավել կարեւոր էր, սակայն, 1910թ. Նյու Յորքի մասնաճյուղի հիմնումը, որին թե այդ շրջանում եւ թե հետագայում մեծ դեր էր վերապահված Միության պատմության մեջ: Այս մասնաճյուղի հիմնադիրներից եւ առաջին ղեկավարներից էին հայտնի բարերարներ Միհրան եւ Արշակ Գարակյոզյանները, որոնցից վերջինը տարիներ անց ստանձնելու էր Միության նախագահի պաշտոնը: 1910թ. փետրվարին Միությունը մուտք գործեց նաեւ ԱՄՆ-ի արեւմտյան շրջան՝ մասնաճյուղ հիմնելով Կալիֆորնիայի հայերի այդ տարիների կենտրոն՝ Ֆրեզնոյում:[148] 1912թ. Միության մասնաճյուղերի թիվը ԱՄՆ-ում կազմում էր 39, 1916թ.՝ 60, իսկ 1930թ. տվյալներով հասել էր 130-ի, որոնցից 23 մասնաճյուղ՝ Կալիֆորնիայում: ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը, հաշվի առնելով մասնաճյուղերի այդչափ մեծ քանակը եւ նրանց գործունեությունը համակարգելու անհրաժեշտությունը, 1921թ. որոշեց ստեղծել ԱՄՆ-ի շրջանակ՝ որպես առանձին ու ինքնավար միավոր, իսկ 1923թ.

ԱՄՆ-ի մասնաճյուղերը սկսեցին անմիջապես ղեկավարվել Միության Ամերիկայի Շրջանային Հանձնաժողովի կողմից: Այդ տարիներին սկիզբ դրվեց ԱՄՆ-ում Միության հրատարակչական գործին: 1909թ. Միության անդամները իրենց անձնական միջոցներով Բոստոնում սկսեցին հրատարակել «Հայ» ամսագիրը, իսկ 1914թ. լույս տեսավ ՀԲԸ Միության «Յուշարար» պաշտոնաթերթի առաջին համարը:

Դեռեւս մինչ Առաջին Համաշխարհային պատերազմը ամերիկահայերի ազգային հոգեբանության բնորոշ հատկանիշներից էր «մեղքի» զգացումը հայրենիքում ապրող իրենց հարազատների ու բարեկամների, ընդհանրապես հայրենակիցների հանդեպ: Որքան էլ ծանր ու դժվար լիներ Ամերիկա ներգաղթած հայերին այդչափ տարբեր եւ խորթ սոցիալ-տնտեսական եւ մշակութային միջավայրը, այնուամենայնիվ, այն անհամեմատելի էր արեւմտահայության վիճակի հետ: Եվ քանի դեռ կար այդ «մեղքի» զգացումը կամ բարդույթը, պետք է լիներին նաեւ նույն այդ «մեղքը» քավելու միջոցներ: Այդ միջոցներից էր՝ վաստակած դրամի մի մասի առաքումը Հայրենիք՝ իրենց ազգականներին: Անհատական բնույթի օգնության կողքին մեծ տարածում ստացավ նաեւ հայրենակցական միությունների հիմնումը, որոնց նպատակն էր օգնել իրենց հարազատ գյուղերի, քաղաքների բնակչությանն ընդհանրապես: Եվ եթե նման հոգեբանությունը եւ գործելակերպը բնորոշ էր ամերիկահայերին Առաջին Աշխարհամարտին նախորդած համեմատաբար խաղաղ տարիներին, ապա բնական է, որ դրանք էլ ավելի արմատացան, երբ 1915թ. Ամերիկա հասան ազգային ողբերգության մասին լուրերը: Ամերիկահայերի արձագանքը եղավ համընդհանուր, բայց այդ ընդհանուրի մեջ յուրաքանչյուր անհատ, յուրաքանչյուր ազգային կազմակերպություն դրսեւորեց իրեն բնորոշ հատկությունն ու կարողությունը:

1915թ. վերջերին Բաբկեն եպ. Կյուլեսերյանի նախաձեռնությամբ «Կրկնապատիկի» կոչ ուղղվեց ԱՄՆ-ում ՀԲԸ Միության բոլոր անդամներին. կրկնապատկելով անդամավճարները՝ ստանձնել Թուրքիայում Միության նահատակված անդամների վճարումները եւ այդպիսով հավերժացնել նրանց հիշատակը: Միության բոլոր մասնաճյուղերի աշխույժ աշխատանքի արդյունքում նրանց անդամների ճնշող մասը ոչ միայն կրկնապատկեց, այլեւ եռապատկեց ու քառապատկեց իր անդամավճարները: Դրա հետ մեկտեղ, նպատակ դրվեց Միության յուրաքանչյուր նահատակված անդամի փոխարեն նոր անդամ արձանագրել ԱՄՆ-ում: Շարժման արդյունք եղան, այսպես կոչված, անդամագրական մրցումները, որոնք սկիզբ առան 1917թ.: Ժամանակակիցների վկայությամբ, անդամագրական մրցումների «...առթիւ կը դրկուին մասնաւոր շրջաբերականներ, լրագրական ծանուցումներ կ'ըլլան, Միութեան գործունէութիւնը եւ ապագայ առաջադրութիւնները պատկերացնող թռուցիկներ կը ցրուին, ամերիկահայ եկեղեցականներ կը քարոզեն ՀԲԸ Միութեան մասին որ իր մէջ կը բիւրեղացնէ բարի Սամարացիին առաքինութիւնը, ծանօթ հրապարակագիրներ իրենց գրչով կ'օժանդակեն այս շարժման, ատենախօսներ իրարու հետ կը մրցին հրապարակային գումարմանց համար...»: Այս ամենը «...անօրինակ խանդավառութիւն, ոգեւորութիւն, ազնիւ զգացումներու պոռթկում առաջ կը բերէին այդ մեծ գաղութին մէջ, շատ տեղեր կատարեալ «սփոր»-ի մը երեւոյթը ստանալով»:[149] Մրցաշարի արդյունքները տպավորիչ էին՝ կարճ ժամանակում ԱՄՆ-ում հիմնվեց 10 նոր մասնաճյուղ, արձանագրվեցին 2.500 նոր անդամ, իսկ անդամավճարները բազմապատկվեցին: Եվ եթե 1909թ. ամերիկյան մասնաճյուղերի տարեկան հասույթները կազմում էին ընդամենը 2.340 դոլար, ապա չորս տարի անց այդ գումարը տասնապատկվեց, իսկ եւս վեց տարի անց՝ 1920թ. կազմեց մոտ 220 հազ. դոլար:

Առաջին Աշխարհամարտին հաջորդող տարիներին ամերիկյան մասնաճյուղերը մեծ դեր ունեցան ՀԲԸ Միության որբախնամ ծրագրերի իրականացման գործում՝ ապահովելով անհրաժեշտ ֆինանսական միջոցների հիմնական մասը: Այդ նպատակով կազմակերպված բազմաթիվ միջոցառումների շարքում հիշատակման արժանի են հատկապես մեծագումար հանգանակությունները, որոնց մասնակիցներն էին ինչպես Միության մասնաճյուղերը, այնպես էլ նրանց հետ համագործակցող ազգային այլ կազմակերպություններ՝ եկեղեցիները, հայրենակցական միությունները եւ այլն: Նման հանգանակություններից ամենակարեւորներն էին Ռուբեն Հերյանի հանգանակությունը (1921-1923թթ., 21.500 դոլ.), Որբերի ազատագրման եւ պաշտպանության՝ Ինքնօգնության հանգանակությունը (1924թ., 21.500 դոլ.), Ամերիկյան Նպաստամատույցի լուծարված որբանոցների սաներին օգնության (1923-1930թթ., 23.400 դոլ.), Հունաստանից գաղթականներին Հայաստան տեղափոխելու (1925թ., 76.700 դոլ.), Լենինականի երկրաշարժից տուժածների (1926-1927թթ., 54. 600 դոլ.), Սիրիայում ապաստանած գաղթականների (1929թ., 15.000 դոլ.), Խորհրդային Հայաստանում Նուպարաշեն ավանի կառուցման (1928-1931թթ. 125. 000 դոլ.) նպատակներով կազմակերպված հանգանակությունները: Հարկ է նշել նաեւ, որ 1919-1920թթ. ձմռանը Միությունը մեծապես նպաստեց զորավար Անդրանիկի գլխավորած Փրկության հանգանակության հաջող անցկացմանը ամերիկահայ համայնքներում, որի արդյունքում գոյացած ավելի քան կես միլիոն դոլարից 120.000-ը

տրամադրվեց Միությանը՝ Կիլիկիայում նրա հաստատությունների եւ այլ ձեռնարկների համար:

1920-ական թվականների կեսերից սկսած, նույն այդ մասնաճյուղերի գործունեության մեջ ավելի ու ավելի նկատելի են դառնում մի տեսակ հոգնածության, անփութության, նույնիսկ անտարբերության նշաններ: Առաջին հայացքից տարօրինակ այս երեւույթը ուներ, սակայն, իր առարկայական պատճառները: Նախ, դա յուրատեսակ դրսեւորումն էր այն սուր ազգային-հոգեբանական ճգնաժամի, որում հայտնվեց ողջ սփյուռքահայությունը 1923թ. Լոզանի խորհրդաժողովից հետո: Լոզանի խորհրդաժողովը, հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ նրա խաղացած ճակատագրական դերը բազմիցս վերլուծվել են գրականության մեջ,[150] ուստի այստեղ, դիտարկվող նյութի առիթով նշեմ միայն հետեւյալը: Խորհրդաժողովի (մասնակիցներն էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ռումինիան, Ճապոնիան, Հարավսլավիան, Թուրքիան եւ որպես դիտորդ ԱՄՆ-ը) հիմնական նպատակն էր կարգավորել Մերձավոր Արեւելքում պատերազմից հետո առաջացած մի շարք տարածքային-քաղաքական բնույթի հարցեր: Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակությունը՝ Ավետիս Ահարոնյանի եւ Ազգային պատվիրակությունը՝ Գաբրիել Նորատունկյանի գլխավորությամբ, խորհրդաժողովին ներկայացրեցին համատեղ հուշագիր, որում առաջարկվում էին Հայկական հարցի երեք հնարավոր լուծում եւ որոնք, ըստ իրենց, դաշնակիցները պետք է պարտադրեին պատերազմում պարտված Թուրքիային:[151] Դրանք էին. ա) Հայկական Ազգային Տան ստեղծումը ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի գծած տարածքում, բ) Երեւանի Հանրապետության (Խորհրդային Հայաստանի - Էդ.Մ.) ընդարձակումը՝ նրան կցելով Արեւմտյան Հայաստանի մի մասը, գ) Ազգային Տան ստեղծումը Կիլիկիայում: Հայերի սպասումները խորհրդաժողովից մեծ էին, սակայն նրա ընթացքը գնալով հարցականի տակ էր դնում բոլոր հույսերը: Եվ այնուամենայնիվ, Լոզանում կնքված պայմանագիրը գերազանցեց ամենահոռետեսական սպասումները՝ նրանում հիշատակություն անգամ չկար ոչ Հայաստանի եւ ոչ էլ հայերի մասին, բռնագաղթած ժողովրդին այդպես էլ թույլ չտրվեց վերադառնալ հայրենիք: Դեյվիդ Լլոյդ Ջորջը իր հուշագրություններում, բնութագրելով Լոզանի պայմանագիրը որպես «...մի երկար եւ տխուր պատմություն... ազգերի եւ նրանց պետական գործիչների կարճատեսության, եսամոլության, փոքրոգության եւ ենթագության խառնուրդ»[152], որպես «...արեւմտյան քաղաքակրթության պատմության ամենանվաստացուցիչ իրադարձություններից մեկը»,[153] մեջբերում է անում «Դեյլի տելեգրաֆ» օրաթերթում 1923թ. հրապարակած իր իսկ

հոդվածից. «Այդ խորհրդաժողովի փաստաթղթերը՝ դա զիջումների ու կապիտուլյացիաների ապշեցուցիչ մի շարք է...Դաշնակիցները հանուն խաղաղության ոչնչի հանգեցրին իրենց իրավունքները: Նրանք դրժեցին նաեւ՝ եւ դա արդեն շատ ավելի լուրջ գործ է, որի համար, հավանաբար, ոչ հեռու ապագայում պետք է պատասխան տան, փոքրաթիվ ժողովուրդներին տված իրենց խոստումները, որոնք չեն դադարում խոստումներ մնալ այն պատճառով, որ փոքրաթիվ ժողովուրդները չեն կարող հետապնդել դրանց կատարումը: Եվրոպական պատգամավորները Լոզանում եւ կոնցեսիոներների գործակալները Անկարայում (երկու դեպքում էլ Արեւմուտքի ներկայացուցիչներ) խաղացին մի դեր, որը հավասար չափով անվայել է իրենց կողմից արվող չար գործի ինչպես ձեւի, այնպես էլ էության առումով»:[154]

Խոսելով Լոզանից հետո արտերկրի հայության (որոնք քիչ անց իրենք իրենց պետք է անվանեին «սփյուռքահայություն») մեջ տիրող տրամադրությունների մասին՝ «Ոսկեմատեան»-ը դրանք բնութագրում էր որպես «...քաղաքական հիասթափութիւններ, մասնաւորաբար թրքահայոց դատին ստացած ողբալի վախճանը՝ բիւրաւոր զոհերէ եւ անհաշուելի զոհողութիւններէ ու կորուստներէ ետք, երբեմնի հայրենի բոյներուն կործանումը, վերադարձի անկարելիութիւնը, նուիրական ու սիրական վայրերէ եւ յիշատակներէ վերջնականապէս անջատման դառն ու սպանիչ բռնադատութիւնը»:[155]

Հիասթափությունը, սակայն, Լոզանի միակ հետեւանքը չէր: Օտարության մեջ հայտնված հայությունը այդուհետ պարտադրված էր ապրել ասպնջական երկրներում: «Անոնք ի սկզբան աւելի իբր պանդուխտ, իբր հիւր կը մնային Ամերիկայի մէջ, մաս մը դրամ աւելցնելով իրենց հայրենիքը վերադառնալու, իրենց պապենական օջախները վերականգնելու, շէնցնելու մտադրութեամբ: Բայց այս բոլոր յուսախաբութիւններէն վերջ, հետզհետէ կը սկսէին արմատանալ երկրին մէջ, իրենց բոյնը վերջնականապէս հաստատել, հող եւ բնակարան կը գնէին, ամերիկեան քաղաքացիութեան կը կապուէին, տեղական կարիքներով կը հետաքրքրուէին առաւելապէս, եւ դուրս իրերը ու հեռաւոր կարօտութիւնները փոքր չափու մը միայն կը խօսէին այլեւս իրենց սիրտին»: Սակայն կար եւս մեկ պատճառ, դա 1929-1933թթ. տնտեսական ճգնաժամն էր, որի զոհը դարձան Արեւմուտքի բոլոր երկրները: Դրա ազդեցությունը հատկապես աղետալի եղավ ԱՄՆ-ում: «Մեծ դեպրեսիան» (այսպես անվանվեց ամերիկացիների կողմից) գերարտադրության ամենախոր ճգնաժամի արդյունք էր, որը ընդգրկեց ֆինանսական համակարգը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը եւ տնտեսության այլ ոլորտները: Երկրի ազգային

եկամուտը, որը 1929թ. կազմում էր 86,8 միլիարդ դոլար, 1933թ. կրճատվեց ավելի քան երկու անգամ՝ 40,3 միլիարդ դոլար: Արդյունաբերական արտադրության անկումը, տասնյակ հազարավոր գործարանների, հանքահորերի փակումը, ֆերմերների զանգվածային սնանկացումը, այս ամենը հասցրեց գործազրկության վիթխարի աճի: Պաշտոնական տվյալներով 1933թ. ԱՄՆ-ում գործազուրկների թվաքանակը կազմում էր երկրի բանվորական ուժի ընդհանուր թվի 24,9%-ը:[156] Ժողովրդի մի զգալի հատվածի աղքատացմանը մեծապես նպաստեց նաեւ բանկային համակարգի քայքայումը, որի արդյունքում միլիոնավոր մանր ավանդատուներ զրկվեցին իրենց խնայողություններից եւ համալրեցին աղքատների շարքերը: Տնտեսական հանընդհանուր այս ճգնաժամի զոհերից դարձան, բնականաբար, նաեւ տեղի հայերը: Մեծ դեպրեսիայի հետեւանքները հատկապես ծանր էին ցեղասպանություն եւ բռնագաղթ ապրած ներգաղթողների համար, որոնք նոր-նոր էին սկսել հարմարվել այդ երկրի պայմաններին: Ճգնաժամից ոչ պակաս տուժեցին նաեւ ավելի վաղ շրջանում ներգաղթած, տնտեսապես արդեն ինքնահաստատված հայերը: Դրա օրինակներից էր Կալիֆորնիայի հայությունը. «...այգեպաններու տնտեսական տագնապի տասնուհինգ տարիներու ընթացքին (1922-1937) չամիչի եւ երկրագործական արտադրութիւններու գներուն անկումը, եւ ընդհանրապէս Ամերիկայի մէջ գործերուն թոյլ վիճակը, հիմէն խախտեց Գալիֆորնիոյ հայութեան տնտեսական կեանքը եւ անոր հետ կապակցուած բոլոր բարի ծրագիրները: Ահա այս իսկ պատճառաւ շատեր իրենց կալուածները կորսնցնելով ցրուեցան ուրիշ քաղաքներու մէջ եւ նահանգի այլեւայլ վայրերը, իրենց օրուան ապրուստը ձեռք բերելու գէթ գործ մը ճարելու համար»:[157] Այս ամենը անխուսափելիորեն բացասաբար անդրադարձավ ամերիկահայ բոլոր ազգային կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության գործունեության վրա: Այդ առումով հատկանշական է նույն Կալիֆորնիայում նշված տարիներին Միության ամենամյա բարեգործական վաճառքներից (Annual Bazaars) գոյացած գումարների չափը: Եթե 1928թ. այն կազմում էր 2.542 դոլար, ապա հետագա տարիներին մշտապես նվազում է՝ 1933-ին՝ ընդամենը 914 դոլար, եւ միայն 1946 թվականից հասույթը գերազանցեց 1928թ. ցուցանիշը:[158]

Սկսած 20-ականների կեսերից, ՀԲԸ Միության մասնաճյուղերի եւ անդամների թիվը ԱՄՆ-ում «...կը նուազին հետզհետէ. տարեվճարները ժամանակին գանձելու եւ անդամակցութիւնները հաստատուն պահելու ջանքերը, որոնց համար խնամեալ ծրագիրներ ալ գծուած էին, չեն պսակուիր բաղձացուած չափով: Բնակավայրի տեղափոխութիւններ, անձնական դիմումներու դժուարութիւններ, բայց մանաւանդ դառն ու ընկճող հիասթափութիւնները, որոնց ազգը ենթարկուեցաւ, ու վերջ ի վերջոյ տնտեսական պայմաններու վատթարացումը կը դժուարացնեն գործերու կանոնաւոր եւ հետեւողական ընթացքը»:[159]

* * *

Այսպիսին էր ՀԲԸ Միության որբախնամ գործունեությունը, որը թե ժամանակակիցների եւ թե հետագա սերունդների, ինչպես հայերի, այնպես էլ օտարների կողմից գնահատվեց որպես մարդասիրության եւ հայրենասիրության գաղափարներին միաժամանակ ծառայելու համոզիչ օրինակներից մեկը: Իհարկե, հատկապես ժամանակակիցների կողմից եղան նաեւ այլ կարծիքներ եւ գնահատականներ, որոնք, սակայն, չդիմացան ժամանակի փորձությանը: Միությունն ինքը, իր քննադատների հանդեպ ի սկզբանե որդեգրել էր որոշակի, հայ իրականության համար աննախադեպ սկզբունքներ, որոնք ժամանակ առ ժամանակ ստիպված էր հիշեցնել իր իսկ անդամներին: Այսպես, նրա ղեկավարությունը, 1919թ. մասնաճյուղերին հղած իր մի գրությամբ հիշեցնելով, որ «ՀԲԸ Միութիւնը կուսակցական կռուադաշտ մը չէ, այլ ընդարձակ աշխատանոց մը, ուրկէ պայքարը իսպառ վտարուած է...», հատուկ նշում էր. «Կեդ. Ժողովս միշտ հաւատարիմ մնացած է Միութեանս այս վարիչ սկզբունքին, թոյլ չտալով ինքզինքնին ու իր բոլոր գործակիցներուն որ փոխադարձաբար հրապարակը աղմկեն արդարացումներով եւ հերքումներով: Լրագրական բանավէճերը, մանաւանդ բարեգործական ընկերակցութեան մը կողմէ, ոչ միայն ամուլ ժամավաճառութիւն մըն են, այլեւ գուցէ անխուսափելի ինքնասպանութիւն՝ որուն յամառաբար կը մղեն մեր հակառակորդները, մեզ ընդքարշ ածելու համար վէճերու մէջ որոնց մենաշնորհն ունին եւ որ արգելք են ոեւէ լուրջ գործի...Խօսքին դէմ գործ, պայքարին դէմ արդիւնք, ահա՝ ամէնէն ջախջախիչ հերքումը...Եվ ճիշտ այդ պատճառով է որ մեր հակառակորդները, որ իրենցմէ դուրս ամէն ինչ ազգավնաս կը համարին, այնքան աւելի ուժգնապէս կը զարնեն, որքան խորապէս գիտեն թէ ուժեղ կազմակերպութեան մը դէմ կ՚ուղղուի հարուածը...»:[160] Այնուամենայնիվ, Միությունը անակնկալի եկավ, երբ «ապերասան եւ ապերախտ գտնուեցան» նաեւ որբանոցների սաները: «Միութիւն» ամսագրում այդ հարցին նվիրված հատուկ հոդվածը ավարտվում էր հետեւյալ տողերով. «Ցաջորդաբար հիմնուած բազմաթիւ Որբանոցներուն եւ կայաններուն մէջէն յիշելով գլխաւորաբար Քէլէկեան, Սիսուան, Արարատեան, Վասպուրական, Կիլիկեան Որբանոցները, Մերսինի, Հաճընի եւ

Մոսուլի Որբանոցները, Կիլիկիոյ, Սուրիոյ եւ Եգիպտոսի Կայանները, ինչպէս նաեւ Միութեանս որբախուզական եւ որբախնամ այլ բազմաթիւ ձեռնարկները, ատոնց ամէնքին համար 1918-1930 ծախսած ենք 253.120 անգլ. ոսկի պատկառելի գումար մը: Այս թուանշանները այնքան պերճախօս են, որ ոեւէ բացատրութիւն աւելորդ կը դառնայ: Բայց անոնք կը թելադրեն հարցում մը: Ատոր փոխարէն, ՀԲԸ Միութեան շնորհիւ փրկուած, մեծցուած, պատսպարուած եւ դաստիարակուած, գործի տէր եղած եւ տուն տեղ կազմած, բազմահազար երկսեռ որբերը ի՞նչ տուին իրենց պաշտպան Միութեան, ի՞նչ ըրին անոր համար, ի՞նչպէս ծառայեցին եւ սատարեցին անոր բարձր նպատակներուն...: Անոնց պարտքի ժամը հնչած է, վաղուց»:[161]

Գաղթախնամ ծրագրեր

1920-1930-ականներին ՀԲԸ Միությունը, ինչպես նշվեց վերը, գործուն մասնակցություն բերեց նաեւ տարբեր երկրներում ապաստանած հայ գաղթականների տեղավորման, վերաբնակեցման գործին: 1920թ. կեսերին Հալեպի տարբեր, ինչպես ընդունված էր անվանել, քեմպերում (ճամբարներում), որոնք գտնվում էին Մեյդան, Սուլեյմանիե, Համիդիե եւ այլ թաղերում, ապրում էր շուրջ 35-36 հազ., իսկ Բեյրութի նմանատիպ քեմպերում՝ ավելի քան 20 հազ. հայ գաղթական: Կյանքն այդ քեմպերում գրեթե չէր տարբերվում արդեն հիշատակված Աթենքի նմանատիպ ճամբարներից. «...վարակիչ հիւանդութիւնները եւ ժանտախտը յաճախ կ'այցելէին իրենց, տանելով հազարաւոր կեանքեր: ...Շատեր անօթութենէ եւ ցուրտէ կը մեռնէին»: «Սիրիական մամուլ» թերթը գրում էր. «Քաղաքիս քէմպեն ցաւալի եւ կսկծալի լուրեր կը հասնին մեզի, կը խօսուի տասնեակներով, հազարաւորներով երեխաների մահուան մասին, իբրեւ հետեւանք նիւթական կարօտութեան եւ անպատսպարութեան ծնունդ եղող հիւանդութիւններու»:[162] Քեմպերի ապագա գոյության հարցը՝ թեեւ տարբեր պատճառներով, շատերի համար մտահոգության առարկա էր դարձել: Միջազգային, այդ թվում բարեսիրական կազմակերպությունները մտահոգված էին այնտեղ ստեղծված թշվառ պայմաններով, հակասանիտարական վիճակով, քեմպերով զբաղեցված տարածքների տերերը ցանկանում էին ազատվել նրանցից, վերջապես, քաղաքապետարանները ձգտում էին ճամբարները դուրս հանել քաղաքի սահմաններից: 1925թ. վերջերից ֆրանսիական իշխանությունները (1920 թ. Սան Ռեմոյի կոնֆերանսի որոշմամբ Ֆրանսիան Սիրիայի եւ Լիբանանի մանդատատերն էր)

սկսեցին մշակել հատուկ ծրագրեր՝ հայ գաղթականներին վերաբնակեցնելու վերաբերյալ: Ինչպես նշում էր այդ հարցին նվիրված իր հոդվածներից մեկում Թոմաս Գրինշիլդսը, «...իշխանութիւններուն հետաքրքրութիւնը ինչ ալ ըլլար, անոնց արարքին գլխաւոր դրդապատճառն էր գոհացում տալ հողատէրերուն գաղթականները հեռացնելու պահանջին: Նոյնն էր պարագան հետագային քաղաքապետութեան հրահանգով կատարուած բոլոր քանդումներուն»:[163]

Իշխանությունները, ձգտելով ամեն գնով արագացնել քեմպերի վերացումը, չէին զլանում դիմել նույնիսկ այնպիսի միջոցների, ինչպես, օրինակ, դրանց հրկիզումն էր: Հատկապես հիշարժան էր ժանտախտի դեմ պայքարի պատրվակով Բեյրութի քեմպի հրկիզումը 1933թ. հունվարին, որի հետեւանքով շուրջ 3.500 գաղթականներ մնացին անօթեւան, այրվեցին եկեղեցին եւ այլ շինություններ:[164] Այս դեպքում նույնպես Միությունը, ինչպես եւ ազգային այլ կազմակերպություններ, ոչ միայն զգալի դրամական միջոցներ հատկացրեցին տեղի Ազգային խնամատարությանը, այլեւ բոլորովին չքավոր կանանց, ծերերին եւ երեխաներին տրամադրեցին Քէլէկեան որբանոցի շենքը նրա ողջ գույքով, սպիտակեղենով եւ այլն: Վերաբնակեցումը, բնակելի նոր շենքերի կառուցումը նշված քաղաքներում եւ թե հայկական գյուղերի հիմնումը, պահանջում էր զգալի միջոցներ, որոնց հայթայթումը, սակայն, հենց սկզբից էլ դարձավ դժվար լուծելի խնդիր, եւ արդյունքում՝ որոշ գաղթականներ պահպանվեցին ընդհուպ մինչեւ 1970-ական թվականները:[165]

Սկզբնական շրջանում քեմպերում ապրող գաղթականներին մտադիր էին բնակեցնել գյուղական տարբեր՝ գերազանցապես արաբական եւ թրքական բնակչությամբ վայրերում: Բայց թե գաղթականները եւ թե հայկական կազմակերպությունները դեմ էին այդ ծրագրին: Եվ իշխանությունները ստիպված էին դադարեցնել այն: Համաձայն նոր ծրագրի, «...Ազգերի Լիգայի, տեղական իշխանությունների եւ հայ բարեգործական հիմնարկների տրամադրած միջոցներով» սկսվեց գաղթականների համար տների կառուցում Հալեպի եւ Բեյրութի արվարձաններում, որի արդյունքում առաջացան Նոր Սիս, Նոր Ադանա, Նոր Մարաշ եւ այլ՝ հիմնականում հայերով բնակեցված թաղեր:[166]

Բեյրութում, ձեռնամուխ լինելով քեմպերի քանդմանը, իշխանությունները միեւնույն ժամանակ արգելում էին փայտե տների կառուցումը: Այս ամենի հետեւանքով «...բազմաթիւ չքաւոր ընտանիքներ խոնուած են իրարու վրայ, շատերն ալ բացօդեայ կ'ապրին: Այս աննախանձելի վիճակը կը սաստկացնէ տիրող թշուառութիւնը եւ պատճառ կ'ըլլայ բազմատեսակ հիւանդութեանց. գլխաւորաբար մալարիան աւերներ կը գոր-

ծէ»:[167] ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը, ելնելով ստեղծված իրավիճակից, անմիջապես գումար հատկացրեց Բեյրութում առժամյա դարմանատուն եւ ապաստարան հիմնելու, ինչպես նաեւ չքավոր եւ հիվանդ գաղթականներին ձրի դեղ եւ ապուր տրամադրելու համար: Որոշվեց նաեւ «...գէթ մասնաւոր շրջանակի մը մէջ հանգանակութիւն մը կատարել, աւելի մեծ չափով օգնութիւն հասցնելու համար», որի առաջին նվիրատուն դարձավ ՀԲԸ Միության նորընտիր նախագահ Գալուստ Կյուլպենկյանը: Միությունը իր մասնակցությունը բերեց նաեւ քեմպերի գաղթականների տեղավորման վերաբերյալ Նանսենյան միջազգային օֆիսի մշակած ծրագրի իրականացմանը, տրամադրելով մոտ 7.000 անգլիական ֆունտ ստեռլինգ: Բացի այդ, գաղթական անտուն ընտանիքների համար Միությունը Բեյրութի մոտ կառուցեց Բարեշեն թաղամասը՝ ի նշանավորումն ՀԲԸ Միության 25-ամյակի: Միության 1932թ. տեղեկագրում կարդում ենք. «...Բարեշէնը արդեն կառուցուած է 95 բնակարաններով, եւ կը ներկայացնէ գեղեցիկ շրջանակ մը, քարուկիր կանոնաւոր շէնքերով: Այդ թաղամասի հրապարակը կը կանգնի նաեւ աղբիւրյիշատակարան մը, ուր արձանագրուած է Միութեանս անունը եւ Յոբելեանի թուականը»:[168] Եվս մեկ, ավելի մեծ թաղամաս՝ Կյուլլապաշենը, Միությունը կառուցեց Նոր Մարաշի հարեւանությամբ ամերիկահայ հայտնի բարերար Կիւլլապի Կիւլպենկեան հիմնարկության տրամադրած միջոցներով:

Ավելի վաղ՝ 1926թ. Միությունը սկսեց դրամական օժանդակություն ցույց տալ Մամլթեյնի (Բեյրութ) «սանաթորիում»-ին, որը հիմնել եւ ղեկավարում էր Բեյրութի երեք հարանվանությունների կողմից կազմված վարչությունը: Ինչպես նշվեց, այդ տարիներին հայ գաղթականների միջավայրում թոքախտը ամենատարածված հիվանդություններից էր, որից մահանում էին մեծ թվով երեխաներ ու ծերեր: «Մամլթէյնի Սանաթորիումին մէջ ցարդ պատսպարուած եւ խնամուած են 650 թոքախտաւորներ,- կարդում ենք Միության տեղեկագրում,- որոնց կէսը մեռած, եւ կէսն ալ մասամբ կամ ամբողջովին բուժուած է. այդ ալ մեծ արդիւնք մըն է, երբ նկատի առնենք քաղքին տաք կլիմայի եւ խոնաւութեան հակաառողջապահիկ աննպաստ պայմանները: Հիւանդները այդ Հաստատութեան մէջ պատսպարելով, գոնէ կը դադրին վարակումի վտանգ մը ըլլալէ իրենց ընտանիքի անդամներուն, որ յաճախ խրճիթի մը կամ աղտոտ խուցի մը մէջ խճողուած կապրին»:[169] Ակնհայտ էր նաեւ, որ Բեյրութի պայմաններում նման հիվանդանոցի գործունեությունը աննպատակահարմար էր եւ անարդյունավետ, որ այն անհրաժեշտ էր տեղափոխել Լիբանանի բարձրադիր շրջանները, ինչը, սակայն, պահանջում էր զգալի դրամական միջոցներ: ՀԲԸ Միությունը, գիտակցելով հարցի կարեւորությունը, թե ինքը տրամադրեց անհրաժեշտ գումարի մի զգալի մասը, թե ապահովեց մեծագումար նվիրատվություններ եւ փոխատվություններ Նանսենյան գրասենյակի կողմից, իսկ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը, 1935թ. տեսակցելով Բեյրութում երկրի Առողջապահության ընդհանուր տնօրենի (նախարարի) հետ, ձեռք բերեց նոր շենքի կառուցման իրավունքը: 1938թ. վերջապես տեղի ունեցավ հիվանդանոցի նորակառույց շենքի բացումը Ազունիե բարձունքին, «...օդասուն եւ գեղահայեաց շրջավայրի մը մէջ, ուր երիտասարդ հիւանդներ լաւագոյն խնամք կը վայելեն քան Մամլթէյն»:[170]

Միության գաղթախնամ գործունեության ուշագրավ էջերից է նրա մասնակցությունը գաղթականների համար նոր գյուղերի հիմադրման եւ կայացման գործում: Առաջին նման փորձը տեղի ունեցավ 1927-1928թթ., երբ Ազգերի Լիգան նախաձեռնեց հայկական գյուղերի հաստատումը Սիրիայի Ալեքսանդրետի սանջակի Ճեպել Մուսայի շրջանում: Այդ ծրագրի ֆինանսավորումը ստանձնեցին Ամերիկյան Նպաստամատույցը եւ Անգլիական հայանպաստ կոմիտեն: ՀԲԸ Միությունը այդ ծրագրերը խթանելու եւ հնարավորին չափ արագ իրագործելու նպատակով, իր հերթին, 1927թ. որոշում է կայացնում «...10% աւելցնել բոլոր այն գումարներուն վրայ զոր, նուիրատուութեան կամ փոխատուութեան ձեւին տակ, Անգլիոյ հայանպաստ մարմինները պիտի տրամադրէին այս նպատակով: Ըստ այնմ, անցեալ տարեշրջանին 500 անգլ. ոսկի վճարեցինք, այդ մարմիններուն կողմէ յատկացուած 5.000 ոսկիին փոխարէնը»,[171] իսկ հաջորդ տարի, այդ վճարումներից զատ, ՀԲԸ Միությունը Ազգերի Լիգայի Գաղթականների Բարձր Կոմիսարիատին նույն նպատակով հատկացրեց եւս 1.255 ոսկի: Այդ որոշումը բարձր գնահատվեց Աշխատանքի միջազգային բյուրոյի (Ժնեւ) կողմից, որը ՀԲԸ Միությանը հղած իր ուղերձում գրում էր. «Հայ կազմակերպութեանց առատաձեռնութիւնը էական տարրը կը կազմէ Սուրիոյ եւ Լիբանանի հայերուն տեղաւորման համար եղած կոչերուն արդիւնաւորման, եւ Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդր. Վարչութեան որոշումը անշուշտ խրախուսումը պիտի ըլլայ անգլիական կազմակերպութեանց փոյթեռանդ կերպով յառաջ տարած հանգանակութեան»:[172]

Նշված գյուղերից երկուսում՝ Հայաշենում եւ Նորաշենում, որոնք գտնվում էին Հալեպից դեպի արեւմուտք՝ Ռեհանիե բնակավայրի հարեւանությամբ, Հալեպի թեմի առաջնորդարանի տվյալներով, 1932թ. արդեն բնակվում էր համապատասխանաբար՝ 220 եւ 236 հայ:[173] Միությունը, ըստ ժամանակակցի, «մասնաւոր ուշադրութիւն դարձուցած էր» այդ

երկու գյուղերին, առաջին իսկ օրերից օժանդակեց այդտեղ հաստատված գաղթականներին՝ հիմնական ուշադրությունը դարձնելով նախ եւ առաջ հայկական վարժարանների հիմնադրմանը եւ բնակչության առողջական վիճակին: Այս վերջինը հատկապես կարեւոր էր, քանի որ շրջակայքում գտնվող ճահիճների պատճառով բնակչության մեջ մեծ տարածում ուներ ջերմախտը, ինչն էլ, ի վերջո, պատճառ դարձավ, որ նրանք «...մալարիայէ սաստիկ հիւծած, լքեցին վայրը ճարահատ: Այդպէս ալ պատմութեան անցաւ հայ գաղթականութիւնը զետեղելու պլանը այստեղ, չնայած ՀԲԸՄ-ի գործադրած ջանքերուն»:[174]

Ուշադրության արժանի է նաեւ 1929թ. Թուրքիայի արեւելյան շրջաններից գաղթած, հիմնականում քրդախոս հայերի մի մասի տեղավորման նպատակով թուրք-սիրիական սահմանից 50 կմ հեռավորությամբ Գամիշլի եւ Հասիչիե բնակավայրերի շրջանում Սահակաշեն եւ Մեսրոպաշեն գյուղերի հիմնումը: Հատկանշական է, որ այդ եւ մի քանի այլ հայկական գյուղերի հիմնումը սահմանամերձ գոտում լրջորեն անհանգստացրեց թուրքական իշխանություններին: Կ.Պոլսում հրատարակվող «Վաքըթ» թերթը իր խմբագրականներից մեկում գրում էր. «Ֆրանսայի ներկայացուցիչը կը մոլորեցնէ Ազգ. Լիգայի ներկայացուցիչները, Սուրիա հայերու տեղաւորումը արդարացնելով որպէս մարդասիրական արարք. մինչդեռ, դիտաւորեալ անոնց կարեւոր մասը կը հաստատէ Թուրքիոյ սահմանին երկայնքով: ...Անոնց ներկայութիւնը այստեղ, կը վտանգէ մեր սահմանը. արդե՞օք կը մտադրեն երկրորդ Հայաստան մը ստեղծել մեր հարավային սահմանի վրայ...»[175] Ֆրանսիական իշխանությունների նպատակները, իհարկե, այլ էին: Անդրադառնալով այդ հարցին՝ Հ.Թոփուզյանը նշում էր, որ նրանք, հայերին սահմանի մոտ բնակեցնելով, մի կողմից ձգտում էին զիջումներ կորզել քեմալական Թուրքիայի հետ ընթացող իրենց բանակցություններում, մյուս կողմից՝ «հնարավորություն էին ձեռք բերում ցանկացած ժամանակ ազգամիջյան ընդհարումներ հրահրելու եւ, քրիստոնյաներին պաշտպանելու պատրվակով, ճնշելու արաբ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը»:[176]

1931-1932թթ. տվյալներով Սահակաշեն եւ Մեսրոպաշեն գյուղերում բնակվում էր մոտ 130 ընտանիք: Հալեպում հատուկ այդ նպատակով ստեղծված Խնամակալության հսկողությամբ գյուղերում կառուցվել էր 130-ից ավելի տուն, սկզբնական շրջանի համար գյուղացիներին տրվել էին սնունդ, լծկան, երկրագործական գործիքներ, սերմացու, ընտանի կենդանիներ եւ այլն: Սակայն իրար հաջորդող երաշտները, ոռոգելու ջրի բացակայությունն ու այդ հարցի լուծման անհաջող փորձերը եւ, վերջապես, ոչ քրիստոնյա շրջապատն ու խուճապ առաջացնող լուրերը հարեւան

Թուրքիայից, հասցրին նրան, որ այդ գյուղերի բնակիչները իրենց ողջ ունեցվածքով սկսեցին տեղափոխվել Գամիշլի եւ այլ վայրեր: «Եփրատ» օրաթերթը 1932թ. հուլիսյան համարներից մեկում գրում էր. «Գամիշլիէն երկար նամակ մը ստացանք, ուր տխուր գոյներով կը նկարագրուի վերի եւ վարի Թել-Պրակ նորահաստատ գիւղերու վիճակը... Սահակաշէն եւ Մեսրոպաշէն գիւղերը, որոնց համար ծախսուեցաւ 8.000 օսմ. ոսկի, դարձած են Սահակաւէր ու Մեսրոպաւէր... բուերու բոյն: Ի զուր անցած է ամէն ջանք գիւղացիները տարհամոզելու, որ տեղանքը չլքեն»:[177]

Ալեքսանդրետի գաղթականները

1930-ականների վերջին ուժյուռքի ընդհանուր վիճակի աստիճանական կայունացմանը զուգընթաց, որոշակի փոփոխությունների էր ենթարկվում նաեւ Միության գործունեությունը: Ամենակարեւորը որբախնամ տարբեր հաստատությունների փակումն էր, ինչի շնորհիվ հնարավորություն էր ստեղծվում՝ գաղթականներին օգնություն ցույց տալով հանդերձ, ձեռնամուխ լինել սփյուռքահայության ազգամշակութային ինքնության պահպանման խնդրի լուծմանը: Սակայն 1939թ. տեղի ունեցած դեպքերը մեկ անգամ եւս ստիպեցին Միությանը՝ հետաձգել այդ ծրագրերը: Այդ դեպքերն էին՝ նախ Ալեքսանդրետի սանջակի հայության պարտադրված արտագաղթը եւ ապա Երկրորդ Համաշխարհային պատերազմի սկիզբը:

Միջերկրականի հյուսիսարեւելյան ծովեզերքում գտնվող Ալեքսանդրետի (այժմ՝ Իսկենդերուն) սանջակը ընդգրկում էր Սիրիայի Հալեպի նահանգի չորս կազաները (գավառները), նրա տարածքում էր գտնվում Մուսա լեռը, որի շրջակա վեց գյուղերի հայ բնակչությունը 1915թ. հերոսամարտից հետո, ինչպես արդեն նշվել է, հայտնվեց Պորտ Սայիդի վրանավանում, իսկ զինադադարից հետո վերադարձավ հայրենիք: Հետագայում Ալեքսանդրետի սանջակի բնակչությունը քանակապես աճեց ի հաշիվ 1922թ. Կիլիկիայից եւ 1929-1930թթ. Թուրքիայի ներքին գավառներից այստեղ գաղթած հայերի: 1936թ. տվյալներով Ալեքսանդրետի սանջակում հայերը՝ շուրջ 25.000 մարդ, քանակով զիջում էին միայն թուրքերին եւ ալավի արաբներին:

Ֆրանսիական զինվորական իշխանությունների վարած քաղաքականության հետեւանքով այս երկրամասը, ինչպես մինչ այդ Կիլիկիան, աստիճանաբար սկսեց անցնել թուրքական տարրի հսկողության տակ: Անտեսելով Սիրիայի ժողովրդի եւ կառավարության բողոքները 1938թ. հուլիսին Ալեքսանդրետի սանջակը դրվեց Ֆրանսիայի եւ Թուրքիայի հա-

մատեղ վերահսկողության ներքո, եւ Ֆրանսիայի համաձայնությամբ թուրքական զորքեր մտցվեցին սանջակ: Վերջապես «1939թ. հունիսի 23-ին ստորագրվեց ֆրանս-թուրքական համաձայնագիրը, որով Ալեքսանդրետի սանջակը պաշտոնապես կցվում էր Թուրքիային: Ինչպես նշել է գերագույն կոմիսար Գաբրիել Պյոնոն, դա այն «գինն» էր, որը վճարվեց, որպեսզի Թուրքիան անցնի անգլո-ֆրանսիական դաշնակիցների կողմը»:[178] Գիտակցելով իրենց սպառնացող մահացու վտանգը՝ սանջակի բնակչության հիմնական՝ ոչ թուրքական մասը սկսեց շտապ արտագաղթել հարեւան երկրներ: 1939թ. օգոստոսին Ալեքսանդրետի սանջակում հայ բնակչություն այլեւս չկար. ժողովուրդն ամբողջովին գաղթել էր Սիրիա, Լիբանան եւ այլուր: Այդ դեպքերի ականատես Քենոն Բրիջմենը գրում էր. «Մուսա դաղի ժողովուրդը իրենից հետո թողեց նախնիների գերեզմանները, բայց մինչ այդ նրանք Մուսա դաղի գագաթից տեղափոխեցին 1915թ. բռնագաղթի դեմ մղած հերոսամարտի հուշարձանը եւ զոհվածների աճյունները»:[179]

Նոր աշխարհամարտի նախաշեմին Ֆրանսիան ոչ միայն ձգտում էր (ինչպես ցույց տվեց դեպքերի հետագա ընթացքը՝ ապարդյուն) այդպիսով իրեն դաշնակից դարձնել Թուրքիային, այլեւ՝ նվազագույնի հասցնել այդ քաղաքականության՝ իր իսկ համար անցանկալի հետեւանքները: Այսպես է բացատրվում Ֆրանսիայի կառավարության անմիջական մասնակցությունը ինչպես Ալեքսանդրետի սանջակի հայ բնակչության արտագաղթի կազմակերպմանը, այնպես էլ նրանց տեղավորմանը Սիրիայում եւ Լիբանանում, մինչեւ իսկ այդ նպատակով հողատարածքներ գնելով: Թե որքան երկար կտեւեր այդ օժանդակությունը եւ ինչ չափերի կհասներ, կարելի է միայն ենթադրություններ անել, քանի որ արդեն սեպտեմբեր ամսին սկսվեց Երկրորդ Համաշխարհային պատերազմը եւ Ֆրանսիան դադարեցրեց իր օժանդակությունը հայ գաղթականներին: Այդ ժամանակից սանջակի գաղթականների տեղավորման հետ կապված բոլոր հարցերի լուծումը դարձավ հիմնականում ափյուռքահայության խնդիրը:

Սանջակի ողջ տարածքից խուճապահար գաղթած, իրենց ունեցվածքը լքած հայերի բազմահազարանոց զանգվածը անմիջապես հայտնվեց ծանր վիճակում: Արձագանքելով Անթիլիասի կաթողիկոսության եւ Հայ Կաթոլիկ եկեղեցու պատրիարքարանի օգնության կոչերին՝ ՀԲԸ Միությունը նախ նրանց հասցեով շտապ ուղարկեց իր առաջին նպաստը՝ 1.300 ֆունտ ստեռլինգ, ապա ձեռնարկեց «Համազգային հանգանակություն», որի առաջին նվիրաբերողները եղան Նուպարյան ընտանիքի անդամները՝ հանգուցյալ Պողոս Նուպարի որդիներ Առաքելն ու Վահրամը եւ քույրը՝ Նոյեմի Գափամաճյանը, ինչպես նաեւ իրենց առատաձեռնությամբ հայտնի Արշակ եւ Միհրան Գարակյոզյան եղբայրները՝ Նյու Յորքից: Իսկ արդեն 1939թ. հունիսի 9-ին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության հրահանգով տեղում ստեղծվեց Նպաստից կենտրոնական հանձնախումբը, որը պետք է զբաղվեր Լիբանանում եւ Սիրիայում ապաստանած գաղթականներով ընդհանրապես, եւ հատկապես՝ Ալեքսանդրետի սանջակի գաղթականների տնտեսական, կենցաղային, կրթական, առողջապահական եւ այլ խնդիրներով:

Սանջակի գաղթականների մի որոշ մասը ժամանակի ընթացքում հաստատվեց Սիրիայի տարբեր բնակավայրերում, իսկ հիմնական մասը համախմբված էր Լիբանանում՝ Այնճարի, Ռաս էլ Այնի եւ Բեյրութի շրջանում:

Բեյրութից մոտ 50 կմ հեռավորության վրա գտնվող Այնճարում, Դամասկոսի ճանապարհին, տեղավորվեցին շուրջ 5.200 մարդ: Ուշագրավ է, որ բնակավայրը նախագծող ֆրանսիացիները, ինչպես եւ անգլիացիները Պորտ Սայիդի վրանավանի դեպքում, այն բաժանեցին վեց հիմնական մասերի, որոնք հատկացվեցին Մուսա լեռան վեց գյուղերի նախկին բնակիչներին: Պատահական չէ, որ հայերը Այնճարը կոչում էին նաեւ «Նոր Մուսա լեռ»: Այստեղ ՀԲԸ Միության Նպաստից հանձնախումբը իրականացրեց հետեւյալ հիմնական աշխատանքները. «Լճացած ջուրերն ու ճահիճները չորցնելու համար 45 քմ երկարութեամբ ջրանցքներ բացաւ, գետին եզերքը 500 մէթր երկարութեամբ թումբեր կանգնեց, 1013 տուներ եւ 500-ի մօտ ախոռներ կանոնաւոր հականեխման ենթարկեց եւ մալարիան երեք տարուան ընթացքին գրեթէ արմատախիլ ըրաւ Այնճարէն»:[180] Բնակելի տները ջրով ապահովելու նպատակով հանձնախումբը տեղադրեց շարժիչ եւ խողովակներ, հոգաց հիվանդանոց-մայրանոցի կահավորման, բժշկական սպասարկման, բժիշկների, դեղորայքի, սննդի եւ այլ ծախսերը, ինչպես նաեւ գաղթականներին տրամադրեց հագուստ, դեղորայք, անհատական նպաստներ եւ այլն:

Ռաս էլ Այնի գաղթակայանում ՀԲԸ Միությունը հիմնեց Նուպարավան թաղը իր 50 տներով, որոնք հատկացվեցին առավել անապահով ընտանիքներին, իսկ Բեյրութի արվարձաններից մեկում՝ Անդր-Նահրի շրջանում մասնակցեց 250 տնակների կառուցմանը: Միությունը հողագործությամբ զբաղվող գաղթականներին տրամադրեց սերմացու ցորեն, գարի, ոսպ, սիսեռ եւ այլն, «անոնց հայթայթեց նաեւ երկրագործական գործիքներ եւ լծկան ու կաթնատու կենդանիներ, օրինակ՝ միայն Այնճարի համար 50 եզ, 110 կով, նոյնքան այծ եւ ոչխար, եւ այլն»:[181]

Այդ երեք գաղթակայաններում ամենամտահոգիչ հարցերից էր մալարիայի (ջերմախտի) մեծ տարածումը, որի հիմնական պատճառը, ինչպես նշվեց, ճահիճներն էին, եւ որը հաղթահարելու նպատակով ձեռ-

նարկվեց հատուկ հակաջերմախտային արշավ, որը ղեկավարում էին ՀԲԸ Միության Նպաստից հանձնախմբի անդամներ, Բեյրութի Ամերիկյան համալսարանի պրոֆեսորներ Յ.Ենիգոմշյանը եւ Տ.Պերպերյանը: Մի քանի տարիների ընթացքում ՀԲԸ Միության, Գարակյոզյան հիմնարկության, Մերձավոր Արեւելքի հիմնադրամի (Near East Foundation), ինչպես նաեւ շվեյցարացի մարդասեր, դոկտոր Կյունցլերի եւ Բեյրութի Ամերիկյան համալսարանի նախագահ, դոկտոր Բայարդ Դաջի համատեղ գործողությունների շնորհիվ (ճահիճների չորացում, հիվանդանոցների եւ դարմանատների հիմնում, մշտական բժշկական հսկողություն եւ այլն) հնարավոր դարձավ լուծել այդ խնդիրը: Եթե 1942թ. ջերմախտի պատճառով մահացել էր 90 մարդ, ապա հաջորդ՝ 1943թ. գրանցվել էր միայն 3 նման դեպք:[182]

Թեեւ Միության տրամադրության տակ եղած միջոցները անհնարին դարձրին սեփական նոր դպրոցների հիմնումը գաղթականների համար, այնուամենայնիվ, այն տարեցտարի դրամական նպաստներ հատկացրեց գործող վարժարաններին, մասնակցեց նրանց կահավորման եւ վերանորոգման աշխատանքներին, կրթաթոշակներ նշանակեց մի քանի համալսարանական ուսանողների, ինչպես նաեւ ֆինանսապես օժանդակեց ուսուցիչներին եւ եկեղեցականներին: ՀԲԸ Միության Նպաստից հանձնախումբը այդ տարիներին մեծապես օգնեց նաեւ Սիրիայի ու Լիբանանի այլ վայրերում՝ Հալեպում, Դամասկոսում, Հոմսում, Լաթաքիայում, Տրիպոլիում, Բեքաայի շրջանում հաստատված հայությանը:[183]

* * *

1922թ. նոյեմբերի 10-ին Փարիզում կայացավ ՀԲԸ Միության հերթական ընդհանուր ժողովը, որի ատենապետն էր Պողոս Նուպարը: Վերջին անգամ նա նախագահել էր ժողովին պատերազմից առաջ՝ 1914թ. մայիսին, եւ թե ինքը, թե ժողովն ու ընդհանրապես հայ ժողովուրդը, ոգեւորված եւ խանդավառ էին բարենորոգումների ծրագրի մոտալուտ իրականացման հույսով: Հետագա ութ տարիների ընթացքում շուրջ 1.5 մլն հայ զոհ դարձավ Թուրքիայի իրականացրած ցեղասպանության քաղաքականության, հարյուր հազարավոր հայեր դարձան գաղթական եւ ապաստան գտան հեռու եւ մոտիկ երկրներում, իսկ Հայաստանի տարածքի մեծագույն մասում, ինչպես նաեւ Կիլիկիայում հայ բնակչություն այլեւս գոյություն չուներ: Եվ դժվար չէ պատկերացնել թե՛ այն հուսահատ մթնոլորտը, որ տիրում էր 1922թ. ժողովում եւ թե՛ Պողոս Նուպարի հոգեվիճակը:

Պողոս Նուպարը ապրում էր իր՝ որպես ազգային-քաղաքական գործչի, անհատ մարդու ամենաողբերգական օրերը, որի անկեղծ խոստովանությունն էին նրա հետեւյալ խոսքերը. «...այժմ, որ ուժասպառ, ընկճուած՝ մեր ազգին անլուր աղէտներէն եւ դատապարտուած բացարձակ հանգիստի մը, ստիպուեցայ քաշուիլ ոչ միայն Ազգ. Պատուիրակութենէն, այլ նաեւ բոլոր այն ընկերակցութիւններէն՝ որոնց կը մասնակցէի, եւ երբ հարկադրուեցայ նոյնիսկ թողուլ բոլոր անձնական զբաղումներս, ուզեցի գէթ մնալ ձեր ժողովին մէջ, ձեզի հետ կարենալ աշխատելու եւ մասամբ ամոքելու համար ճակատագիրը հազարաւոր զոհերուն՝ պատերազմին եւ անոր հետեւանքներուն, որ մեր աչքերուն առջեւ օրէ օր տակաւին կ'աճին իրենց ամբողջ ահաւորութեան մէջ»:[184] Իսկապես որ դաժան ճակատագիր էր՝ ստանձնել ազգային շահերի պաշտպանի եւ հետապնդողի առաքելությունը, դրան նվիրել շուրջ տասը տարի, վարել բազմաթիվ բանակցություններ եվրոպական պետական գործիչների հետ, ստանալ նրանց երաշխիքները հայերի ազգային քաղաքական իրավունքների իրականացման վերաբերյալ, ստորագրել ազգօգուտ փաստաթղթեր եւ այդ ամենի շնորհիվ, իր իսկ բառերով ասած, «...իրաւունք ունէինք վստահութեամբ նայելու ապագային վրայ, եւ խորհելու թէ մեր զոհողութիւնները պարապ չէին գացած, եւ թէ մեր ճիգերը զուր տեղը չէին վատնուած», եւ ի վերջո խոստովանել. «Ասիկա երազ մը եղաւ լոկ՝ զոր եկաւ ցրուել մահաշքօրէն ամենադառն յուսախաբութիւնը: Մեզի կը մնայ անկէ ամենադաժան տառապանքներու յիշատակը միայն՝ որուն տակ ոեւէ ժողովուրդ ճնշուած ըլլայ երբեք»:[185]

Պողոս Նուպարի՝ որպես ազգային գործչի եզակիությունն ու առանձնահատկությունն այն էր, որ նրա մեջ միաժամանակ համակցվում էին քաղաքական գործիչն ու բարեգործը: Միության Ընդհանուր ժողովում նրա արտասանած ճառի առաջին մասը գրել էր Պողոս Նուպար քաղաքական գործիչը, որը ստիպված եղավ արիաբար ճանաչել իր պարտությունը: Ճառի հաջորդ մասի հեղինակը եւս Պողոս Նուպարն էր՝ ՀԲԸ Միության նախագահը: Այս դեպքում նա ուներ բոլոր հիմքերը հպարտությամբ խոսելու Միության ազգին մատուցած բացառիկ ծառայությունների մասին եւ նաեւ վստահեցնել իր գործընկերներին. «...մեր անզօրութիւնը պէտք չէ որ յուսալքում պատճառէ մեզի եւ դուք կրնաք ապահով ըլլալ որ մեր Ընկերակցութիւնը մինչեւ վերջը պիտի կատարէ իր պարտականութիւնը, գէթ մեղմելու համար կարելիութեան սահմանին մէջ, ամէնէն կարօտեալներու տառապանքները»:[186]

ՀԲԸ Միության հետագա տարիների գործունեությունը անժխտելի ապացույցն էր այդ խոսքերի ճշմարտության:

4

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Արտասահմանում եւ հատկապես Եվրոպայի երկրներում ապրող հայությունը քաջատեղյակ էր 1917թ. բոլշեւիկյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում կատարվող իրադարձություններին: Փարիզ, Բեռլին, Պրագա, եվրոպական այլ քաղաքներ գաղթած տասնյակ հազարավոր ռուս ազնվականներ, մտավորականներ, սպաներ եւ այլք ականատեսներն էին կարմիր տեռորի, այսպես կոչված, «հակահեղափոխական տարրերի» ոչնչացման քաղաքականության: Արտասահմանի հայությանը հայտնի էր նաեւ, թե ճակատագրական ինչ հետեւանքներ ունեցավ խորհրդային իշխանությունների կողմից ռուսական զորքերի շտապ դուրսբերումը Կովկասյան ռազմաճակատից, հայտնի էին այն սերտ կապերը, որ հաստատվել էին Խորհրդային Ռուսաստանի եւ քեմալական Թուրքիայի միջեւ, որ առաջինների ռազմական եւ ֆինանսական օգնությամբ էր մեծապես պայմանավորված թուրքական զորքերի հաղթանակը թուրք-հունական պատերազմում, որ հանուն իր քաղաքական նպատակների իրագործման Խորհրդային Ռուսաստանը պատրաստ էր բավարարել Թուրքիայի շատ եւ շատ պահանջներ, ինչի օրինակներն էին Կարսի հանձնումը Թուրքիային, Նախիջեւանը եւ Ղարաբաղը՝ նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանին եւ այլն: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, հայտնի էր նաեւ բոլշեւիկների իշխանությունը տապալելու տարբեր երկրների եւ ներքին ընդդիմության բոլոր փորձերի անհաջողությունը, այն, որ խորհրդային կարգերը աստիճանաբար հաստատվում էին նախկին Ռուսական կայսրության գրեթե ողջ տարածքում, այդ թվում 1920թ. նոյեմբերին նաեւ Հայաստանում: Արեւմուտքի երկրները, որոնց համար սկզբունքորեն անհամատեղելի, անընդունելի էին բոլշեւիկյան իշխանության գաղափարաբանությունն ու քաղաքականությունը, այնուամենայնիվ,

ստիպված եղան ոչ միայն հաշտվել Խորհրդային Ռուսաստանի, Խորհրդային Միության գոյության հետ, այլեւ ճանաչել եւ հարաբերություններ հաստատել նրա հետ: Սփյուռքահայ բոլոր կազմակերպություններն ու նրանց համակրող զանգվածները նույնպես կանգնել էին երկընտրանքի առջեւ՝ ճանաչե՞լ Հայաստանի նոր բոլշեւիկյան իշխանությունները, թե՞ ոչ: Այս հարցը դարձավ առանցքային եւ կանխորոշեց ու պայմանավորեց սփյուռքահայության փոխհարաբերությունները Խորհրդային Հայաստանի հետ հետագա յոթ տասնամյակների ընթացքում:[1] ՀԲԸ Միությունը նույնպես պետք է տար այդ դժվարին հարցի պատասխանը:

Որբերի տեղափոխումը: Հայաստանում ՀԲԸՄ գործելու թույլատրումը

Պողոս Նուպարի եւ նրա գործընկերների համար, անշուշտ, խորթ էին Հայաստանում հաստատված նոր կարգերը, բայց որպես իրապաշտ մարդիկ, նրանք գիտակցում էին, որ ստեղծված իրավիճակում, հատկապես 1923թ. Լոզանի կոնֆերանսից հետո, հայկական տարածքներից հայաբնակ մնացած միակ հատվածը Խորհրդային Հայաստանն է, որի ապահով գոյությունը հնարավոր է Խորհրդային Միության կազմում միայն: Սակայն այդ իրողության գիտակցումը եւ դրանից բխող Խորհրդային Հայաստանի հետ հարաբերվելու պատրաստակամությունը դեռ բավական չէին, անհրաժեշտ էր Հայաստանի իշխանությունների համաձայնությունը: Խորհրդային կարգերի հաստատման առաջին իսկ օրերից հայ կոմունիստները, հետեւելով Ռուսաստանում արդեն իրագործվող դասակարգային պայքարի սկզբունքներին, ոչ միայն արգելեցին հայ ազգային կուսակցությունների գործունեությունը երկրում, այլեւ պայքար ծավալեցին նրանց եւ նրանց հովանու տակ գործող բոլոր տեսակի կազմակերպությունների դեմ նաեւ սփյուռքում: Հայաստանի իշխանությունների տեսակետից, սակայն, ՀԲԸ Միությունը որոշ չափով առանձնանում էր արտասահմանում գործող այլ ճանաչված եւ խոշոր կազմակերպություններից: Նախ, Միությունն այն «առավելությունն» ուներ, որ, ըստ էության, այդպես էլ չհամագործակցեց Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք իշխող ՀՀ Դաշնակցության հետ: Թեեւ Միության ղեկավար մարմիններում կային Ռամկավար-Ազատական կուսակցության որոշ թվով անդամներ, այնուամենայնիվ, այն ներկայանում էր որպես անկախ, զուտ բարեգործական եւ ոչ քաղաքական կազմակերպություն: Կարեւոր հանգամանք էր նաեւ այն, որ ՀԲԸ Միությունը սփյուռքի ամենահեղինակավոր եւ ֆինանսական որոշակի կարողություններ ունեցող կազմակերպություններից էր: Ամեն դեպքում, սակայն, հարաբերություններ հաստատելու գործում որպես նախաձեռնող կողմ պետք է հանդես գար ՀԲԸ Միությունը:

1921թ. օգոստոսի 30-ին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը հրապարակեց «ՀԲԸ Միությունը Հայաստանի մէջ» հատուկ հայտարարություն: «Կեդր. Վարչ. Ժողովս, յառաջ երթալով պաշտօնական եւ այլ շրջանակներէ իրեն ուղղուած կոչերուն,- ասվում էր հայտարարության մեջ,- օգնութիւն կազմակերպելու համար Հայկ. Հանրապետութեան սահմաններուն մէջ եւս, սիրայօժար ընդունած է ՀԲԸ Միութեան գործունէութիւնը տարածել նաեւ Հայաստանի մէջ, ուր, ինչպես յայտնի է, ժողովուրդը սովի եւ թշուառութեան մատնուած է:

«Այդ առթիւ Կեդր. Ժողովը ձեռնարկած է բանակցութեանց, որոնց ելքին պիտի սպասէ գործի սկսելու եւ Միութեան վեհ նպատակները Հայաստանի մէջ գործադրելու համար:

«Բայց այժմէն իսկ Կեդր. Ժողովը պարտք կը սեպէ վեր հանել թէ՝ ինք սոյն կարեւոր որոշումը տուած է հակառակ որ Միութեան ներկայ միջոցները թոյլ չեն տար նորանոր յանձնառութեանց, քանի որ արդէն, մասնաւորապէս Կիլիկիոյ մէջ, զանազան հաստատութեանց բեռը ստանձնած է, սակայն եւ այնպէս այն հաւատքը ունի որ, ժողովուրդը այս որոշումին բացառիկ կարեւորութիւնը գնահատելով, իր կարգին պիտի փութայ իրեն զորավիգ կանգնել»:[2]

Այս որոշման իրագործումը դժվարանում էր թե երկու կողմերի միջեւ հարաբերությունների բացակայությամբ եւ թե Միության սահմանափակ ֆինանսական կարողություններով: Այդ էր պատճառը, որ Կենտրոնական Վարչական Ժողովը ստիպված էր նշել. «Դժբախտաբար հանգամանքները թոյլ չի տուին կազմակերպուած գործ տեսնել եւ հազիվ անգամ մը կարելի եղաւ Կ.Պոլսի մասնաժողովին եւ Նիր Իսթ Ըլլիֆի միջոցաւ նպաստ մը ղրկել Հայաստանի սովեալներուն, Ե.Ո. (եգիպտական ոսկի - Էդ.Մ.) 1270 արժողութեամբ..., 14 հակ գապօթ (277 ծրար), 28 հակ եւ սնտուկ զանազան նոր հանդերձեղէն (բուրդ շապիկ, գուլպայ, կօշիկ, եւն.) եւ 350 պարկ ալիւր: Աւելորդ է ըսել թէ նպաստաւոր պատեհութիւններէն պիտի գիտնանք օգտուիլ աւելի լայն չափով Հայաստանի տարաբախտ ժողովուրդին օգնելու համար»:[3] Մի քանի ամիս անց՝ 1922թ. գարնանը Միությունը իր երկրորդ նպաստն է հատկացնում Հայաստանին՝ 1000 անգլիական ոսկու չափով՝ սերմնացու եւ դեղորայք գնելու եւ Հայաստան տեղափոխելու համար:[4]

ՀԲԸ Միության համար այդ օրերին դեռեւս հայտնի չէր՝ թույլ կտրվի արդյոք իրեն գործել Խորհրդային Հայաստանում եւ եթե այո, ապա ինչ չափով եւ ինչ պայմաններով, պարզ չէր նաեւ նրա անդամների ու կողմնակիցների վերաբերմունքը այդ համագործակցության հանդեպ: Այդ տարիների քաղաքական հայտնի գործիչ Ա.Թերզիպաշյանը այսպես է նկարագրում 1923թ. Փարիզում կայացած իր մի զրույցը Պողոս Նուպարի հետ. «Փաշան անմիջապէս խօսակցութիւնը տարաւ տեղեկագրին, զոր Հայաստանէն Պոլիս վերադարձիս, 1923-ի սկիզբները, ես ղրկած էի Բարեգործականին Կեդր.Վարչութեան: Այդ տեղեկագրովը ես առաջարկած էի Հայաստան փոխադրել Սուրիա, Պաղեստին, Յունաստան գտնուող որբերը: Հայաստանի կառավարութեան՝ զանոնք ընդունելու յօժարութեանը հետ, ես իմ տեղեկագրին մէջ թուած էի կարգ մը առաւելութիւններ, մասնաւորապէս սննդեղէններու գիներուն եւ շանժի տարբերութիւններուն շուրջ, որոնք՝ գրեթէ, կէս առ կէսի կ'իջեցնէին Բարեգործականի որբախնամ գործին յատկացուցած պիւտճէն: Յետոյ երբ, բերանացի աւելցուցի թէ՝ Հայաստանի մէջ հայ որբերը աւելի տիսիբլինի ներքեւ պիտի մեծնային, Փաշան աշխուժով մը՝

-Բայց այդ տիսիբլինի տակ, հայ որբերը բոլորն ալ բոլշեւիկ կը դառնան:

-Ատիկա չեմ երաշխաւորեր - պատասխանեցի:

-Բոլշեւիկները թոյլ պիտի տա՞ն որ հայ որբերը սորվին իրենց լեզուն, պատմութիւնը, կրօնքը: Ծարունակեց հարցնել Փաշան:

- Լեզուն, պատմութիւնը, այո, բայց ոչ կրօնքը, պատմութիւնն ալ ոչ մեր հասկցած ձեւովը: Եվ ասիկա անշուշտ անյարմարութիւն մըն է:

- Ատոնք կ'ըսէք եւ կ'առաջարկէք:

- Որպէս անյարմարութեանց փոքրագոյնը:

Փաշան ծնոտը ձեռքին մէջ, ցուցամատը ճակտին, ինքզինքը պահ մը խորհրդածութեան տուաւ, յետոյ, յանկարծ՝

- Ես ալ կը կարծեմ թէ որբերու աստանդական վիճակին ներկայացուցած անյարմարութեանց քով ատիկա փոքրագոյնն է:

Յետոյ քմծիծաղով մը.

- Պայմանաւ որ դուք ալ բոլշեւիկ դարձած չըլլաք:

Ու իր այս կատակին վրայ լիաթոք խնդաց ան»:[5]

Պողոս Նուպարը արագ հաղթահարեց հայ որբերի՝ բոլշեւիկ դառնալու վերաբերյալ մտավախությունները, կամ էլ իսկապես համարեց այդ ամենը «անյարմարութեանց փոքրագոյնը», քանզի նույն 1923թ. գարնանը որբերի տեղափոխման հարցը քննարկվեց Լիոնի տոնավաճառում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Ա.Պիրալովի հետ, որը Հայաստանի Ժողկոմխորհին (Ժողովրդական կոմիսարների խորհրդին) ներկայացրած զեկույցում գրում էր. «Որբանոցների տեղափոխումը Սիրիայից Հայաստան առաջ է քաշվել Եգիպտոսի Բարեգործական Միության (խոսքը ՀԲԸ Միության մասին է, որի կենտրոնատեղին այդ տարիներին դեռ Կահիրեում էր - Էդ.Մ.) կողմից, նկատի առնելով ֆրանս-թուրքական հարաբերությունների սրվելը՝ Աղաթոն բեյը (Երվանդ Աղաթոն -Էդ.Մ.) անհրաժեշտ էր համարում որբերի տեղափոխումը կազմակերպել անմիջապես, բայց ես բացատրեցի, որ բնակարանային սուր ճգնաժամի հետեւանքով ներկա պահին դա բացարձակապես անհնար է, մինչեւ որ Միությունը իր հաշվին չկառուցի տներ 1300 որբերի տեղավորման համար եւ չփոխանցի Հայաստան անհրաժեշտ գումարներ ընթացիկ ծախսերի համար, քանի որ, ըստ իս, ներկա պայմաններում հազիվ թե հնարավոր է Հայաստանի կառավարությունը ծանրաբեռնել նման ծախսերով»:[6]

1923թ. ամռանը որբերի տեղափոխման եւ տեղավորման հետ կապված հարցերը Հայաստանի կառավարության հետ քննարկեցին Միության պատվիրակներ Լ.Բաշալյանն ու Գ.Ասատուրը, իսկ աշնանը, երբ Միությունը հրավիրված էր Երեւան՝ մասնակցելու Հայաստանի Օգնության Կոմիտեի (ՀՕԿ) 3-րդ համագումարի աշխատանքներին, նաեւ նրա ներկայացուցիչ Ե.Կարիկյանը: Ե.Կարիկյանն անձամբ այն տեսակետն ուներ, որ սփյուռքը եւ, մասնավորապես, ՀԲԸ Միությունը պետք է իր ողջ ֆինանսական ներուժը ծառայեցնի Հայաստանի բազմաթիվ կենսական խնդիրների լուծմանը եւ հենց այդ ոգով էլ վարեց բանակցությունները:

1923թ. հոկտեմբերի 30-ին Հայաստանի Լուսավորության ժողովրդական կոմիսար (ժողկոմ) Աս.Մռավյանին ուղղած նամակում Ե.Կարիկյանը կառավարությանն առաջարկում էր ՀԲԸ Միությանը հողամաս տրամադրել Եղվարդի եւ Դալմայի շրջանում՝ մշակելու եւ այնտեղ տեղափոխված որբերին հաստատելու նպատակով: Պատասխան նամակում Աս.Մռավյանը գրում էր, որ Հայաստանի կառավարությունը, «ընդառաջ գնալով Ձեր առաջարկներին, որ նպատակ ունի մեր որբության թշվառ բանակի մի հատվածը ապահովելու եւ նրա տնտեսական ապագան կայուն հիմքերու վրա դնելու, արտոնում է ՀԲԸ Միությանը ունենալու յուր գործունեությունը ՀՍԽՀ սահմաններում սույն գրության կցված 22 հոդվածներից բաղկացած հիմունքներով»:[7] Այդ «22 հոդվածներից բաղկացած հիմունքները» կրում էին Լուսավորության ժողկոմ Աս.Մռավյանի եւ Հողագործության ժողկոմ Ար.Երզնկյանի 1923թ. հոկտեմբերի ստորագրությունները եւ վերաբերում էին Միությունից ակնկալվող գործունեությանը՝ հողերի մշակում, ջրանցքների շինարարություն եւ նորոգում, որբանոցների կառուցում, որբերի կրթություն եւ աշխատանքով ապահովում

եւ այլն: Ամենակարեւորը, սակայն, առաջին հոդվածն էր. «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը արտոնում է Հայ (այդպես է բնագրում- Էդ.Մ.) Բարեգործական Ընդհանուր Միությանը Խորհրդային Հայաստանի սահմաններում յուր հանրօգուտ գործունեությունը տարածել երկրի վերաշինության եւ ժողովրդի տնտեսական, ֆիզիկական ու կուլտուրական զարգացման օժանդակելու նպատակով»:[8]

Ահա այս հոդվածի շնորհիվ էր, որ Միությունը դարձավ սփյուռքի միակ ավանդական կազմակերպությունը, որին թույլատրվեց գործել Խորհրդային Հայաստանում հետագա տասնչորս տարիների ընթացքում:

1923թ. դեկտեմբերին որբերի տեղափոխման մասին հրապարակավ խոսեց արդեն Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ս.Լուկաշինը (Սրապիոնյան): Խորհրդային Հայաստանի բանվորների, գյուղացիների ու կարմիրբանակայինների խորհուրդների 3-րդ համագումարում արտասանած ճառում նա ամենայն հստակությամբ շարադրեց այն պայմանները, որոնք պարտադիր էին Հայաստանի հետ համագործակցել ցանկացող սփյուռքահայ բոլոր կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության համար. «Այն բոլոր արտասահմանյան հայկական կազմակերպությունները, որ կամենում են գործոն մասնակցություն ունենալ երկրի շինարարության գործին՝ խնդրեմ, ճանապարհը բաց է նրանց համար, սակայն պայմանով, որ ոչ մի փորձ չլինի նրանց կողմից խառնվել քաղաքական գործի, կամ այդպիսին հարուցել, որովհետեւ նրանց համար քաղաքական հարցերում մենք ոչ մի զիջում չունենք եւ այդ մասին չենք էլ խոսի: Ոչ միայն քաղաքական հարցերի մասին չենք խոսի, այլեւ ընդհանրապես չենք խոսի որեւէ քաղաքական կազմակերպության հետ, որովհետեւ մենք նրանց չենք ճանաչում: Չենք ճանաչում ոչ մի ազգային դելեգացիա, նրա նախագահին կամ փոխնախագահին. նրանք մեզ հետ կարող են գործ ունենալ եւ պատասխանի սպասել միայն այն դեպքում, եթե կխոսեն որպես արտասահմանյան բարեգործական հաստատություններ կամ նրանց ներկայացուցիչ անհատ քաղաքացիներ»: Կառավարության նախագահը, այնուհետեւ, հստակ նշում էր ՀԲԸ Միությունը՝ որպես հնարավոր գործընկերոջ. «Մեր երկրում կա որբերի հսկա բազմություն՝ մինչեւ 30.000, որից մոտ 25.000-ը պահում են օտարերկրյա հասարակական կազմակերպությունները: Մենք թեեւ ցանկանում ենք ընդունել եւ մեր գաղափարներով դաստիարակել արտասահմանում մնացած մանուկներին, բայց ֆինանսական հնարավորություն չունենք այդ անելու համար: Մենք որոշակի հայտնել ենք, որ եթե գաղութները հանձն առնեն որոշ ժամանակ ապահովել որբերի ապրուստը երկրի ներսում, ապա մենք հանձն կառնենք

բնակարան, հող եւ այլն տրամադրելու: Այս ուղղությամբ Եգիպտոսի բարեգործական ընկերության հետ (կառավարության նախագահը նկատի ունի ՀԲԸ Միությունը - Էդ.Մ.) որոշ համաձայնության եկել ենք»:[9]

Նման զգուշացումները Միության պարագայում ավելորդ էին. Պողոս Նուպարը, որը մինչ այդ էլ միշտ խուսափում էր ներազգային քաղաքական գործունեությունից, առավել եւս մտադիր չէր զբաղվել դրանով Խորհրդային Հայաստանի պայմաններում: Ստեղծված իրավիճակում նրա համար էականն ու կարեւորը տարբեր երկրներում ապաստանած հայ գաղթականների, հատկապես երիտասարդ սերնդի ճակատագիրն էր:

1923թ. դեկտեմբերի վերջին, ելույթ ունենալով ՀԲԸ Միության հերթական ընդհանուր ժողովում, Պողոս Նուպարը հատուկ անդրադարձավ որբերի հարցին. «Կարելի չէր անշուշտ չափահաս եղող որբերը մէկ օրէն միւսը դուրս հանել մեր Որբանոցներէն: Այս տեսակ լքում մը զանոնք ենթակայ պիտի ընէր բարոյական եւ նիւթական բազմադիմի վտանգներու: Միւս կողմէ, ընդունելի չէ որ անոնք շարունակեն պատսպարուիլ որոշ տարիքէ մը անդին, ինչ որ զիրենք ծոյլ եւ անպատասխանատու կեանքի մը պիտի վարժեցնէր: Այս պարագաներուն մէջ չափազանց դժուար կը դառնար արդարեւ աստիճանաբար հաշուեյարդար ընելու գործը մեր Որբանոցներուն զորս չի պիտի կրնայինք պահել անսահմանօրէն: Այս նպատակաւ է որ մեր Որբանոցներուն մէջ ամէն բանէ առաջ տղոց կը տրուի արհեստագիտական կրթութիւն մը որպէսզի դուրս ելլելէ յետոյ կարենան իրենց աշխատութեամբը ապահովել իրենց ապրուստը: Էականը որբանոցէն մեկնող տղոց գործ գտնելն է, ինչ որ դժբախտաբար հետզհետէ դժուարանալու վրայ է, մատուցումը խնդրանքէն շատ աւելի ըլլալուն մանաւանդ այն վայրերուն մէջ ուր կը գտնուին մեր որբերը եւ ուր բնականաբար նախապատուութիւն կը տրուի տեղացի տղոց: Միւս կողմէ, Միութիւնը չէր կրնար զանոնք քաջալերել գաղթելու օտար երկիրներ, ուր մեծ դժուարութեանց պիտի հանդիպէին, եւ վրայ պիտի տային վերջ ի վերջոյ իրենց ազգութիւնն ալ»: Ստեղծված իրավիճակի նման սթափ եւ իրատեսական գնահատումից հետո Պողոս Նուպարը առաջարկում է հարցի այնպիսի մի լուծում, որը սկզբունքային նշանակություն ունեցավ ՀԲԸ Միության եւ Խորհրդային Հայաստանի միջեւ հարաբերություններ հաստատելու համար: «Կեդր. Ժողովը համախորհուրդ է որ, ազգային բաղձանքներու ամէնէն աւելի համապատասխան եղող լուծումը, ինչ որ մեզի կը թելադրէ նաեւ մեր հայրենասիրական զգացումը, կը կայանայ 17 տարեկան եղած բոլոր որբերը Հայաստան փոխադրելուն մէջ, ուրտեղ անոնք յուսալի է որ աշխատանք գտնեն,- գլխաւորաբար հողային մշակութեան եւ փոքր ճարտարարուեստի ճիւղերուն մէջ,- եւ իրենց ապրուս-

տը ճարեն, հոն հաստատելով իրենց ընտանեկան բոյնը եւ միեւնոյն ատեն օգտակար ըլլալով երկրին: Այս կերպով անոնց օտար երկիրները ցրուումին առաջքը պիտի առնուէր մասամբ եւ մեր հայրենիքին մէջ բնակող հայերու թիւն ալ նոյն համեմատութեամբ պիտի ստուարանար, ինչ որ մեր ազգային ապագային տեսակէտով մեծագոյն բարիքը պիտի ըլլար»:[10]

1924թ. հունվարին ՀՕԿ-ի Գլխավոր վարչության նախագահ Ար.Երզնկյանի եւ պատասխանատու քարտուղար Ժ.Միրզախի (Միրզախանյան) ստորագրությամբ շրջաբերական ուղարկվեց սփյուռքահայ տարբեր համայնքներ, ուր պարզաբանվում էին ՀՕԿ-ի մինչ այդ կայացած համագումարի որոշումները: Նշելով, որ «ՀՕԿ-ը պետք է լծվի միայն Հայաստանի վերաշինության աշխատանքներին», որ «առաջադրված բոլոր հարցերը ՀՕԿ-ը կատարելու է աստիճանաբար եւ անպայման արտասահմանի հայ գաղութների օժանդակությամբ», շրջաբերականի վերջում ասվում էր. «Վարչությունս խնդրում է Ձեզ լարել Ձեր բոլոր ուժերը օժանդակելու մեզ՝ առաջադրված բոլոր հարցերը արագորեն լուծելու եւ այս կերպով իր կողմից եւս օգնելու այն աշխատանքին, որը տարվում է Հայաստանի գյուղացիությունը տնտեսական նեղ պայմաններից ազատելու համար»:[11] (ՀԲԸ Միության եւ ՀՕԿ-ի փոխհարաբերությունների մասին տե՛ս ստորեւ):

Արձագանքելով այդ կոչին՝ ՀԲԸ Միությունը հրապարակեց «Շրջաբերական Վսեմ. Պողոս Նուպար Փաշայի Հայաստանի օգնութեան հանգանակութեան մասին ուղղուած ՀԲԸ Միութեան տեղական մասնաժողովներուն»: Նշելով, որ Միությունը խորապես հետաքրքրված է Հայաստանի կառավարության ծրագրած ազգային ձեռնարկներով, Միության նախագահը գնահատում էր այն որպես «վերին աստիճանի հայրենասիրական եւ մարդասիրական գործ, որուն պարտաւոր ենք ընծայել մեր անվերապահ օժանդակութիւնը»: Այս շրջաբերականը կարեւորվում է հատկապես նրանով, որ այստեղ հատակ ձեւով դրվում է բոլոր գաղթական հայերին Հայաստան տեղափոխելու հարցը: «Արդարեւ, մեր բոլոր ջանքերը պէտք է ձգտին ժողուելու եւ կեդրոնացնելու այս երկրամասին մէջ եւ որ այսօր կը կազմէ ամբողջ Հայաստանը - աշխարհի ամէն կողմը ցրուած եւ տարագրուած հայերը, կարելի եղածին չափ մեծ թիւով. բայց նոյնչափ եւս կարեւոր է, - ասվում էր շրջաբերականում,- այս երկիրը պատրաստել եւ ի վիճակի ընել զանոնք ընդունելու, կանխապէս հոգալով այն բոլոր անհրաժեշտ միջոցները, որ գիրենք պիտի պաշտպանէին համաճարակներու վտանգներու դէմ: Ասիկա յոյժ էական կէտ մըն է, որովհետեւ այն ժողովուրդը, որուն Հայաստանի մէջ հետզհետէ բազմանալուն պատճառ կ'ըլլանք, պէտք է որ հոն ապրի առողջապահական լաւ

պայմաններու մէջ, այնտեղ գտնելով իր գործունէութեան համար նպաստաւոր դաշտ մը եւ իր ապրուստը ապահովող աշխատանք մը, որով միեւնոյն ատեն պիտի կրնայ նպաստել երկրին ընդհանուր բարգաւաճումին»:[12] Հայաստանի իշխանությունների առաջարկությունը՝ օժանդակել երկրի գյուղատնտեսության զարգացմանը, համընկնում էր Պողոս Նուպարի այն գաղափարին, որ «երկրագործութեան զարգացումովն է որ մանաւանդ պիտի յաջողինք մեր որբերուն համար ստեղծել գործի ասպարէզներ, եւ միւս կողմէ, որպէսզի անոնց Հայաստան փոխադրուիլն ալ Կառավարութեան վրայ բեռ չըլլայ: Ահա թե ինչո՛ւ համար կը ջանանք Հայաստանի մէջ մշակութեան յարմար հողեր գտնել, որպէսզի անոնց մէջ հաստատուելով մեր որբերը կարենան հողագործութեամբ իրենց հացը ապահովել: Այս կերպով կը հուսանք Երեւանի Կառավարութեան օժանդակութիւնը ձեռք բերել, որ, տարակոյս չիկա թէ սիրով պիտի ուզէ ընդունել մեր որբերը»:[13] ՀԲԸ Միության նախագահը այս դեպքում նույնպես հարազատ մնաց իր սկզբունքին՝ «Ոչ թե խոսքով, այլ գործով»: 1923թ. դեկտեմբերին Ար.Երզնկյանին հասցեագրած նամակում նա գրում էր. «Անցեալ նոյեմբեր ամսոյն վերջը ուղղած հեռագիրս կը հաստատիմ, որով կը յայտնէի թէ Lloyds ... National Provincial Foreign Bank Limited-ի (London) միջոցաւ առաքած էի հազար (1000) անգլ. ոսկի, ի նպաստ գիւղատնտեսական ֆոնտին»:[14]

Հայաստանի կառավարության ծրագրերի նման բարձր գնահատումը եւ նրանց օժանդակելու պատրաստակամությունը չխանգարեց, սակայն, Միության ղեկավարներին զուսպ եւ իրապաշտ վերաբերմունք ցուցաբերել կառավարության առաջարկություններին: 1924թ. մարտի 3-ին Պողոս Նուպարը, հիշատակելով Աս.Մռավյանի վերոնշյալ նամակը, Ե.Կարիկյանին գրում է երկու նամակ:

Առաջինը վերաբերում էր Միությանը հողամաս հատկացնելու հարցին. «Այդ նամակով Դուք բարեհաճած էք մեզ տեղեկացնել, թէ Կառավարութիւնը յօժար է Հայաստանում 10.000 տեսիաթին հողամաս տրամադրիլ Բարեգործական Ընկերութեանս, որպէսզի իր որբերուն մաս մը այնտեղ հաստատուին ու ընտանիք կազմին: Կեդր. Վարչ. Ժողովս կը փութայ ընդունիլ զանոնք («հիմունքները» - Էդ.Մ.) սկզբունքով եւ իր մեծ գիծերուն մէջ: Վերջնական հիմունքները միաձայնութեամբ պիտի կայացուին, երբ տեղւոյն վրայ կատարուելիք ուսումնասիրութենէ մը վերջ, գործադրման ծրագիրը պատրաստուի: Հետեւաբար Կեդր.Վարչ. Ժողովս որոշեց տեքնիկական միսիա մը առաքել Հայաստան, տեղւոյն վրայ կատարեալ ուսումնասիրութիւն մը եւ նախահաշիւներով (devis)՝ գործադրման վերջնական ծրագիր մը պատրաստելու համար: ...Ցիրաւի, անհրա-

ժեշտ է, որ Միութիւնս, յետ քննարկման, համոզուի որ իրեն տրամադրուած հողամասին շահագործման ընդհանուր ծախսը չի պիտի խլէ անցնի իր տրամադրելի միջոցները եւ պիտի կրնայ ի գլուխ հանել իր ստանձնելիք յանձնարարութիւնները...»:[15]

Պողոս Նուպարի մարտի 3-ի երկրորդ նամակը նվիրված էր որբերի տեղափոխման հարցին. «Պր. Ե.Կարիկեան հաղորդեց մեզի Ձեր 3 նոյեմբեր 1923 թուակիր նամակին պարունակութիւնը, որով կը յայտնէիք իրեն թէ ՀՍԽՀ կառավարութիւնը տրամադիր է ընդունել 2000 հայ որբեր, 16 տարեկան կամ աւելի, պայմանաւ որ յուրաքանչիւրին համար 100 (հարիւր) տոլար վճարուի, անոնց տարուան մը սնունդը ապահովելու համար: ՀԲԸ Միութեան Կեդր. Վարչ. Ժողովը երախտագիտութեամբ կ'ընդունի Ձեր այդ առաջարկին, քանզի հայրենասիրական ոգով մը ջերմապէս կը փափագի որ այս հայերը ընդմիշտ չեն կորսուած մայր-հայրենիքին համար եւ գէթ անոնցմէ մաս մը կարենան, մտնելով ՀՍԽՀ կառավարութեան սահմաններուն մէջ, հոն հաստատուիլ, աշխատիլ, հիմնել իրենց ընտանիքը եւ պահիլ իրենց հայ քաղաքացիի հանգամանքը: Ձեռնադրուած ենք արդէն պետք եղած տրամադրութիւններուն, մօտերս ղրկելու համար 150-200 որբ, ամենաչափահասներուն, ըստ կայացուած համաձայնութեան, ձեզի պիտի վճարինք 100 տոլար ղրկուած յուրաքանչիւր որբի համար»:[16]

ՀԲԸ Միության անդամները, նրա ղեկավարությունը քաջ գիտակցում էին թե ինչ մեծ պատասխանատվություն են վերցնում իրենց վրա՝ վճռելով Հայաստան տեղափոխել իրենց որբանոցների սաներին: Խորհրդային Հայաստանում տիրող սովն ու համաճարակ հիվանդությունները, տասնյակ հազարավոր անտուն գաղթականների ու գործազուրկների առկայությունը արդեն իսկ բավական էին, որպեսզի հարցականի տակ դրվեր այդ որոշումը:

Ինչպես հայտնի է, Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին հարյուր հազարավոր հայ գաղթականներ ստիպված եղան լքել իրենց տները եւ գաղթել Արեւելյան Հայաստան: Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին երկրում ամենամոտավոր հաշվարկներով կար ավելի քան 50.000 որբ եւ անօթեւան երեխա, որոնց հետ կապված բազմաթիվ հարցերի լուծման համար կառավարությունը ստիպված էր ստեղծել Պետական որբանոցային վարչություն: Երկրում խորհրդային կարգերի հաստատումը որեւէ լուրջ ազդեցություն չունեցավ այդ երեխաների ընդհանուր վիճակի վրա: Պետական որբանոցների շենքերի մեծ մասը խարխուլ էր եւ պիտանի չէր բնակության համար, նրանց մեծ մասում մեկ մահճակալի վրա քնում էին երկու երեխա, մի ափսեից ճաշում էին

երկու-երեք սան, վառարաններ չլինելու պատճառով հիվանդանում էին հարյուրավոր երեխաներ, սովի պատճառով հաճախ տեղի էին ունենում զանգվածային փախուստներ եւ այլն:

Հայաստանի Լուսժողկոմատի 1925թ. պաշտոնական տեղեկանքներից մեկում, նշելով, որ երկրի բնակչության ընդհանուր թվաքանակի շուրջ 6%-ը կազմում են որբերը, այնուհետեւ նկարագրվում էր որբանոցներում տիրող կացությունը. «Լուսժողկոմի մանկատներում երեխաների վիճակը խիստ աննախանձելի է: Շինությունների մեծ մասը չի համապատասխանում անհրաժեշտ պայմաններին: Երեխաների միայն 50%-ն ունի մահճակալ, այն էլ երկհարկանի, իսկ մնացածը քնում են հատակին: Անկողինը բաղկացած է չոր խոտ լցրած ներքնակից ու բարձից: Անկողնու սպիտակեղեն չկա ընդհանրապես: Սենյակներում վառարանները չեն գործում, ինչի պատճառով երեխաները հաճախ հիվանդանում են, իսկ գիշերները, որպեսզի տաքանան, չորս-հինգ հոգով միասին են քնում: Հագուստի եւ սպիտակեղենի մասին խոսելն իսկ ավելորդ է ...լիովին առողջ են երեխաների 25%-ը»:[17] Լուսժողկոմատի Մանկատնային բաժնի 1924թ. զեկուցման մեջ նշվում էր, որ Երեւանի, Աշտարակի, Նոր Բայազետի եւ Էջմիածնի որբանոցների 2091 սան-սանուհիները «հունվար-փետրվար ամիսների ընթացքում զրկված են եղել իրենց առանց այդ էլ թույլ սննդի 78,9%-ից... Պարզ է, որ սաների երեսներին գույն չպետք է լինի եւ աչքերում՝ փայլ, կրթական կյանքը պետք է զգալի դանդաղեր, հիվանդությունները պետք է ծավալվեին»:[18] Խիստ մտահոգիչ էր նաեւ այդ երեխաների ապագան, քանի որ մանկատներում չստանալով որեւէ մասնագիտություն՝ նրանք պատրաստ չէին հետագայում վարել ինքնուրույն կյանք: Լուսժողկոմատի տեղեկանքում հատուկ շեշտվում էր, որ նման պայմաններում «մենք ենթարկվում ենք մեծ վտանգի՝ երկրում ստեղծել ավազակների եւ հանցագործների մի զանգված, եւ երեխաներին գցել անառակության եւ պոռնկության գիրկը»:[19]

Իր իսկ Պողոս Նուպարի խոսքերով՝ «Անշուշտ կը գիտակցինք այն բոլոր դժուարութիւններուն որ կան հարիւրաւոր որբերու Հայաստանի մէջ յարմարագոյն եղանակաւ տեղաւորումին համար եւ կը բաժնենք այն մտահոգութիւնները զոր Պատ. Կեդր. ժողովդ ունի՝ իր տարիներով խնամած եւ դաստիարակած որբերուն ապագայ բարօրութիւնը հաստատուն հիմերու վրայ դնելու նկատմամբ»:[20] Այդ իսկ պատճառով երկարատեւ բանակցություններ սկսվեցին Միության ղեկավարության եւ Խորհրդային Հայաստանի իշխանությունների միջեւ, որոնց ընթացքում երկու կողմերն էլ ձգտում էին լավագույնս լուծել որբերի տեղափոխման, Հայաստանում նրանց ապրելու եւ աշխատելու հետ կապված հարցերը: Հարկ է նշել, որ

Հայաստանի իշխանությունները, չնայած եղած բոլոր դժվարություններին, ընդհանուր առմամբ մեծ շահագրգռվածություն էին ցուցաբերում որբերին երկիր արագ տեղափոխելու գործում: 1924թ. հոկտեմբերի 20-ի նիստում Հայաստանի Կոմկուսի կենտկոմի նախագահությունը Միության որբանոցների սաների ընդունումն ու տեղավորումը կազմակերպելու համար ստեղծեց հատուկ հանձնաժողով, որը գլխավորեց Հայաստանի Կոմերիտմիության կենտկոմի քարտուղար Գ.Գումեդինը (Մելիք-Դադայան): Իշխանությունների նման վերաբերմունքը, իհարկե, կարելի է եւ պետք է բացատրել նրանց՝ ազգային շահերի առումով այդ գործի մեծ նշանակության գիտակցմամբ, բայց ոչ միայն այդ: Կարեւոր հանգամանք էր նաեւ այն, որ սփյուռքի ամենախոշոր եւ հեղինակավոր կազմակերպություններից մեկի՝ ՀԲԸ Միության հետ համագործակցությունը, այն էլ որբ երեխաներին Հայաստան տեղափոխելու հարցում, ինքնին ուներ քարոզչական մեծ իմաստ, այն կարող էր մեծապես նպաստել բոլշեւիկյան իշխանությունների վարկի բարձրացմանը: Կարելի է ասել, որ սա առաջին դրսեւորումներից էր այն յուրահատուկ երեւույթի, որ բնորոշ եղավ հայ իրականության համար, այն է՝ ազգային եւ քաղաքական-գաղափարախոսական շահերի համընկնում, ինչից Խորհրդային Հայաստանի իշխանությունները երբեմն հաջողությամբ պետք է օգտվեին հետագա տասնամյակների ընթացքում:

1924թ. հոկտեմբերի 26-ին Միության որբանոցների 250 սաներ Պաղեստինի Յաֆֆա քաղաքից սովետական «Կերչ» նավով ուղեւորվեցին դեպի Բաթում, որտեղից էլ գնացքներով տեղափոխվեցին Հայաստան: Այդ 250 որբերից 158-ը Երուսաղեմի Արարատեան որբանոցից էին, 81-ը՝ Հալեպի Կիլիկեան Արհեստանոց-Որբանոցից եւ 11-ը՝ Բեյրութի Քէլէկեան-Սիսուան որբանոցից: Որբերից 194-ը 15-17, իսկ 56-ը՝ 18-20 տարեկան էին, որբանոցներում նրանք արդեն ձեռք էին բերել տարբեր մասնագիտություններ (կոշկակարներ, ատաղձագործներ, դերձակներ, երկաթագործներ, գրաշարներ եւ այլն), ինչի շնորհիվ էլ երաշխավորվում էր նրանց ինքնուրույն կյանքը Հայաստանում: Տեղափոխության բոլոր ծախսերը իր վրա վերցնելուց զատ, Միությունը յուրաքանչյուր որբի համար Հայաստանի կառավարությանը վճարեց 100-ական դոլար «իբր փոխարինութիւն առաջին տարուան անոնց հոգացման ծախքերուն»:[21] Բացի այդ, «արհեստաւոր որբերը իրենց հետ Հայաստան կը տանին նաեւ մեյմէկ փոքր գումար եւս, զոր աւելցուցած են իրենց ստացած շաբաթականներէն եւ որ պահ կը մնար Միութեան քով»: Միությունը կարծես նախատեսել էր ամեն հնարավորը իր սաների բարեհաջող տեղափոխման եւ հաստատման համար. «երկու մասնաւոր պաշտօնեաներէ զատ, որոնք իբրեւ հսկիչ

կ'ընկերանան որբերուն, անոնց հետ կը ճամբորդէ նաեւ բժիշկ մը... առ այս դեղօրէից բաւականաչափ պաշար մը միասին տրուած է: Որբերուն հագուստեղէնի պէտքերը լիովին հոգացուած են: Անոնք իրենց հետ կը տանին անկողիններ, ծածկոցներ, ամենօրեայ եւ պահեստի ձմեռուան հագուստ, կօշիկ, ճերմակեղէն եւն, եւն: Ուտելիքը պիտի պատրաստուի նաւուն մէջ, որուն համար հարկ եղած պաշարը միասին առնուած է»:[22] Որբերը իրենց հետ տանում էին նաեւ, որպես նվեր Հայաստանին, ճարտարապետներ Գ.Ասատուրի, Լ.Ուրախյանի եւ Հ.Տաֆայի տրամադրած 69 հատոր գիտական եւ ճարտարապետական մենագրություններ:

Հասնելով Հայաստան՝ այդ տղաները պետք է որ վերհիշէին Ամերիկյան Նպաստամատույցի Ընդհանուր քարտուղար Զ.Վիքրիի խոսքերը, որով նա դիմել էր իրենց 1923թ. Երուսաղեմի Միության որբանոց այցի ժամանակ: «Չորս տարի է,- ասել էր նա,- որ յաջորդաբար կայցելեմ Հայաստան եւ ուրախ եմ յատնելու թէ ամէն տարի նախորդին վրայ աւելի լաւ կը գտնեմ: Հայաստան յառաջադիմելու ամէն յարմարութիւններ ունի, բնական հարստութիւններ շատ են, անոր հարկաւոր են աշխատանք եւ խաղաղութիւն. այս երկու պայմաններու լրացումով ան երջանիկ երկիր մը պիտի դառնայ, այնպէս որ այսուհետեւ փոխանակ Ամերիկայի մէջ գործ փնտռելու ձեր երկիրը պիտի երթաք, որպէսզի հոն գործէք եւ շէնցնէք: Թերեւս հիմայ անմիջապէս կարելի չէ Հայաստան տանիլ ձեզ, բայց դուք աշխատեցէք ձեր նկարագիրը շինել եւ առողջ նկարագրով օր մը ձեր հայրենիքը վերադառնալ»:[23]

Հայաստանի Լուսժողկոմատի մանկատնային բաժնի 1925թ. տեղեկագրի մեջ առաջին անգամ խոսվում է հայրենիք տեղափոխված որբերի մասին. «Անցյալ նոյեմբեր 15-ին Յաֆֆայից Բաթումի վրայով Երեւան հասան 250 որբ սան 15-20 տարեկան: Արտասահմանում նրանք ապրելիս են եղել Երուսաղեմում, Հալեպում, Բեյրութում: Սրանց մեծ մասը արհեստավորներ կամ արհեստավորների բանվորներ են: Սրանցից 60 հոգի գործուղված են... Կենտրոնական դպրոց-արհեստանոցում արհեստագիտություն սովորելու համար, 4-ը՝ Սարդարապատի շրջանում ստանձնել են մեքենավարի պաշտոն, 24-ը՝ ուղարկված են Վաղարշապատի Մանկոմմունան գյուղատնտեսությամբ զբաղվելու: Մնացածների դասավորումը դեռ շարունակվում է»:[24]

Միության որբանոցների սաների այս տեղափոխումը Խորհրդային Հայաստան չուներ իր նախադեպը, այն չունեցավ նաեւ շարունակություն: Միության նման դիրքորոշումը չի կարելի բացատրել Հայաստանում երեխաներին բոլշեւիկյան ոգով դաստիարակելու վտանգով, քանզի պատճառները շատ ավելի լուրջ էին: Նույնիսկ եթե Պողոս Նուպարը եւ

Միության մյուս ղեկավարները մինչ այդ ծանոթ չէին բազմաթիվ, այդ թվում նաեւ արտասահմանցի ականատեսների վկայություններին՝ Խորհրդային Հայաստանում տիրող վիճակի մասին, ապա որբերի տեղափոխումից հետո նրանք չէին կարող չտեղեկանալ դրան, ինչից հետո որբ երեխաների փոխադրումը Հայաստան դարձավ անկարելի:

Նոր Եվդոկիա

Որբերի տեղափոխումից հետո Միության եւ Հայաստանի համագործակցությունը լայն չափեր ընդունեց: Արդեն հաջորդ՝ 1925թ. հունվարին երկարատեւ բանակցություններից հետո Փարիզ ժամանած Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ար.Երզնկյանի եւ ՀԲԸ Միության նախագահ Պողոս Նուպարի, գանձապետ Լ.Կյումուշկերտանի եւ Ընդհանուր քարտուղար Գ.Սինապյանի միջեւ կնքվեցին երեք պայմանագրեր, որոնցից մեկը՝ Հայաստանում որբանոց հիմնելու մասին, տարբեր պատճառներով չիրականացավ:

«Պայմանագրութիւն Հայաստանի մէջ Մէօթէմէտեան կտակով Նոր Եվդոկիա գիւղին հաստատման մասին»՝ այսպես էր կոչվում Խորհրդային Հայաստանի եւ ՀԲԸ Միության միջեւ կնքված երկրորդ պայմանագիրը.

«Յօդուած 1. Բարեգործական Միութիւնը Հայաստանի Կառավարութեան տրամադրութեան ներքեւ է դնում 2600 եգիպտ. ոսկու մի գումար, յատկացուելու համար Հայաստանում մի գիւղի հաստատման: ...Նոր գիւղը պէտք է «Նոր Եվդոկիա» անունը կրէ, համաձայն նուիրատուի ժառանգորդների ցանկութեան:

Յօդուած 2. Գիւղը պիտի հաստատուի Էվջիլարում, ուր պետական ֆոնտի հողերից հողամասեր են տրվելու Հայաստանում գտնուող Եվդոկիացի հայ գաղթականներուն:

Յօդուած 3. Ի սկզբան յիշեալ հողամասերում պիտի հաստատուեն այնքան ընտանիք որ ներէ յիշեալ 2600 եգիպտ. ոսկու գումարը, իւրաքանչիւր ընտանիքի համար կառուցանելով մի տնակ եւ իւրաքանչիւրին տալով լծկան, հողագործական գործիք, սերմնցու, եւն.:

Յօդուած 4. Մէօթէմէտեան կտակի տարեկան հասոյթները, վարչական ծախքերին համար Միութեան հասնող 10 առ հարիւր զեղչից յետոյ, տարէց տարի պիտի յատկացուեն Նոր Եվդոկիա գիւղի ընդարձակման եւ բարգաւաճման: Առաջին առթիւ, այդ հասոյթներից Նոր Եվդոկիայում

պէտք է կառուցվի մի դպրոց որ պէտք է կրէ «Մէօթէմէտեան Դպրոց» անունը...

Յօդուած 7. Ներկայ Պայմանագրութեան գործադրութեան հոգը, այն է գիւղացիներու ընտրութիւնը եւ տեղաւորումը, հողերի բաժանումը, գիւղի յատակագծումը, տնակների կառուցման համար իւրաքանչիւր տնատէրի սահմանուելիք գումարը, իւրաքանչիւր տնատէրի յատկացուելիք գիւղական ինվէնտարի չափը, ծախսուած կամ տրուած գումարների հատուցումը եւն., Միութեան կողմէ յանձնուած է Հայաստանի Օգնութեան Կոմիտէին (ՀՕԿ), որ պէտք է յիշեալ գործերի մասին համաձայնի Հայաստանի Կառավարութեան եւ Գերագոյն Տեքնիքական Բաժնի հետ»:[25]

1925թ. վերջին Նոր Եվդոկիա գյուղում արդեն ապրում էր բնիկ Թոքատցի (Եվդոկիա) գաղթականների 20 ընտանիք: Շատ շուտով, սակայն, պարզ դարձավ, որ գյուղին հատկացված վայրը թե կլիմայի եւ թե հողի որակի առումով գրեթե անհաղթահարելի դժվարություններ եւ անհարմարություններ էր առաջացնում գյուղացիների համար, ինչի պատճառով էլ նրանք ստիպված եղան Միության միջոցով դիմել Հայաստանի իշխանություններին գյուղի տեղափոխման խնդրանքով: Ի վերջո, 1929թ. կեսերին որոշվեց Նոր Եվդոկիա գյուղը փոխադրել Էջմիածնից 4 կմ հեռավորությամբ «յարմարագոյն շրջավայր մը, Էջմիածնէն դէպի Արարատ տանող ճանապարհին վրայ, 150-160 հեկտար արդէն մշակուած բարեբեր հողի մը վրայ: Այժմէն ձեռնարկուած է նախնական աշխատութեանց եւ յատակագիծներու պատրաստութեան: Ներկա պայմաններուն մէջ, Նոր Եվդոկիոյ տնտեսական բարօրութիւնը ապահովուած կրնայ նկատուիլ, թէ որ Թոքատցի ունեւորները շահագրգռուին այս գիւղին ճակատագրով»:[26]

Նոր Եվդոկիա գյուղի տեղափոխությունը, բնականաբար, պահանջում էր հավելյալ եւ չնախատեսված ծախսեր, հատկապես հաշվի առնելով նրա բնակիչների մշտական աճը՝ ի հաշիվ նոր գաղթած թոքատցիների: Միության կողմից հատկացվող Մէոթէմէտեան հիմնադրամի հասույթները այլեւս բավարար չէին, եւ նա արդարացիորեն ակնկալում էր սփյուռքում ապրող ունեւոր թոքատցիների ֆինանսական օժանդակությունը: Օգնությունը, սակայն, ուշանում էր: «Թէեւ ցաւալի է որ մեր Թոքատցի հայրենակիցները եւ Թոքատի Հայրենակցականը խուլ կը մնան Նոր Եվդոկիոյ մասին ուղղուած սրտաշարժ կոչերուն, բայց ամէն ջանք ի գործ դնենք գոհացում տալու Միութեանս անդրանիկ աւանին բնակչութեան»:[27] Եվ այդ ջանքերը տալիս էին իրենց շոշափելի արդյունքները: Գյուղի շինարարական հանձնաժողովը 1934թ. Միությանը հասցեագրած իր տեղեկագրում նշում էր. «Սրանով պատիւ ունինք յայտնելու որ Նոր Եվդոկիան, որ շինուել է, ինչպես ծրագրուած էր, այսինքն 11 գեղեցիկ

տներ, լայն փողոցներ, բերուել է էլեկտրական լուսաւորութիւն, ոռոգման քանալներ, ձգուած են գեղեցիկ այգիներ, տների մօտ պուրակներ, բանջարանոցներ, փորուած են մաքուր եւ սառը ջուր ունենալու համար ջրհան մեքենաներով ջրհորներ, մի խօսքով, դժուարին, բայց Նոր Եվդոկիայի բնակիչների համար շինուած է գողտրիկ աւան իր կուլտուրական յարմարութիւններով, որտեղ բնակուում են այժմ ներգաղթող 130 հոգի...»:[28]

Նոր Եվդոկիայի՝ Խորհրդային Հայաստանում ՀԲԸ Միության հիմնած առաջին ավանի մասին, որը, ի դեպ, ընդհանրապես առաջին գաղութահայ ավանն էր, վերջին տեղեկությունը վերաբերում է 1937թ.: Հաշված օրեր էին մնացել մինչեւ խորհրդային իշխանությունների կողմից Միության գործունեությունը երկրում արգելելուն, իսկ նա մշակում էր նոր ծրագրեր եւ հպարտությամբ տեղեկացնում էր կատարածի մասին. «Ներկայիս Միութեանս կողմէ Հայաստանի մէջ կառուցուած Նոր Եվդոկիա աւանին մէջ կ'ապրին 135 Թոքատցիներ 35 բնակարաններուն մէջ: Նոր Եվդոկիոյ բնակչութեան տնտեսական վիճակը զգալիապէս բարելաւուած է, իրեն տրամադրուած ըլլալով 11 հեկտար այգի եւ 6 հեկտար պտղատու ծառեր. այսօր աւանը ունի 40 հեկտար վարելահող: Միութեան Մէօթէմէտեան հիմնադրամի եկամուտէն վճարուած 69 անգլ. ոսկիով եւս մեծ գոմ մը պիտի շինուի: Նոր Եվդոկիոյ համար անմիջական պահանջ կայ բնակարանի, մանաւանդ նկատի ունենալով յառաջիկայ ներգաղթը, որով արտասահմանի Թոքատցիներէ կ'ակնկալուի որ իրենց օժանդակութիւնը չի զլանան: Նիւ Եորքի Թոքատի Կրթ. Ընկերութեան տրամադրած 1000 տոլարով եւ Կառավարութեան թանկագին ընծայաբերութեան շնորհիւ (5000 ռուբլի), ապահովեցինք նաեւ մանկապարտէզի եւ մսուրի մը կառուցումը: Իսկ նոյն Ընկերութեան կողմէ վերջերս նուիրուած 600 տոլարով եւս պիտի կառուցուի համայնքային յատուկ ընդհանուր մթերանոց մը»:[29]

Դարուհի Յակոբեան մայրանոց

Խորհրդային Հայաստանի եւ ՀԲԸ Միության միջեւ 1925թ. հունվարին կնքված երրորդ պայմանագիրն էր «Պայմանագրութիւն Հայաստանի մէջ Դ.Յակոբեան կտակով մայրանոցի մը հաստատման մասին», որի հիմնական հոդվածներն էին.

«Յօդուած 1. Բարեգործական Միութիւնը, համաձայնութեամբ Դարուհի Ակոբեան ֆոնտի նուիրատու հանգուցեալ Թագուոր Փաշա Ակոբեանի եւ Տիկին Երանուհի Ակոբեանի ժառանգորդ Լեւոն Պէյ Ակոբեանի եւ այս վերջնոյն հաւատարմատար Ե.Աղաթօն Պէյի, յանձն կ'առնէ յիշեալ

ֆոնտէն 7.110 անգլ. ոսկի գումար մը յատկացնել Երեւանի մէջ Մայրութեան Տուն մը կառուցանելու եւ մանկաբարձուհիներ պատրաստելու նպատակով այդ Տան մէջ դասընթացքներ կազմակերպելու համար: Շէնքերու կառուցման համար հարկ եղած հողամասը ձրիաբար եւ ընդմիշտ պիտի շնորհուի Հայաստանի Ս.Խ.Հանրապետութեան Կառավարութեան կողմէ:

Յօդուած 2. Հայկական Կառավարութիւնը յօժար է ստանձնել այդ Մայրութեան Տան եւ Մանկաբարձական Դասընթացքներու վարժարանին կառուցման գործը

Յօդուած 3. Եթէ յիշեալ Մայրութեան Տան կառուցման ծախքը նախատեսուած 7.110 անգլ. ոսկիէն աւելի ըլլա, այդ աւելին Հայկական Կառավարութեան կողմէ պիտի հոգացուի...

Յօդուած 5. Մայրութեան Տան բոլոր ծախքերը, ինչպէս կահաւորում եւ սարուածք, դեղօրայք, սնունդ, լուացք, լուսաւորութիւն, ջեռուցում, ուսուցչական մարմին, պաշտօնէութիւն եւ ծառայողներ, Հայկական կառավարութեան վրայ են: Մանկաբարձուհիներու դասընթացքներու ծախքերը միայն որոնք տարեկան 800 անգլ. ոսկի որոշուած են, Դարուհի Ակոբեան Հիմնարկութեան կը վերաբերին...»:[30]

Դարուհի Յակոբեան մայրանոցի (ճարտարապետ Ա.Թամանյան) հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1929թ. մարտի 10-ին, մասնակցությամբ Խորհրդային Հայաստանի ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա.Մռավյանի, Առողջապահության ժողկոմ Մ.Գարդաշյանի եւ պաշտոնական այլ անձանց: ՀԲԸ Միությունը ներկայացնում էր Հայաստանում 1928 թվականից նրա ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանը: Դարուհի Յակոբեան մայրանոցը առաջին իսկ օրերից դարձավ Հայաստանի ամենախոշոր եւ ամենակարեւոր բժշկական հիմնարկներից մեկը: Այն բաղկացած էր երեք հիմնական բաժանմունքներից՝ մանկաբարձական, գինեկոլոգիական եւ հետծննդյան, որոնք տարեկան սպասարկում էին միջին հաշվով մոտ 5.000 այցելու, ավելի մեծ թիվ էին կազմում խորհրդակցության (կոնսուլտացիոն) ծառայության դիմածները: Հիվանդանոցին կից գործում էին նաեւ «մանկաբարձական տեխնիկումը» եւ «պրոֆտեխնիկական դպրոցը», որոնց շրջանավարտները (տարեկան շուրջ 40) աշխատեցին ինչպես Դ.Յակոբեան մայրանոցում, այնպես էլ Հայաստանի այլ հիվանդանոցներում: Զափազանց կարեւոր էին նաեւ հիվանդանոցում ամիսը 6 անգամ կազմակերպվող դասընթացները «...յղութեան, ծննդաբերութեան եւ յետծննդեան շրջանի առողջապահութեան... նորածիններու խնամքին եւ հիւանդութեանց, արհեստական վիժումներու հետեւանքներուն, հակաբեղմնաւորման միջոցներու...»[31] եւ այլ հարցերի մասին: Նկատի առնելով այդ

տարիներին բնակչության հիմնական զանգվածի ընդհանուր զարգացման մակարդակը՝ նման դասընթացների դերը շատ մեծ էր:

Հիվանդանոցի առաջին տնօրենն էր պրոֆեսոր Գ.Արեշյանը, որը մասնագիտական կրթությունը ստանալով Կիեւի (Ուկրաինա) համալսարանում, որպես մանկաբարձ-գինեկոլոգ աշխատել էր Կիեւի եւ Թիֆլիսի հիվանդանոցներում: 1923թ. Երեւանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետում (հետագայում՝ Բժշկական ինստիտուտ) նա հիմնեց մանկաբարձության եւ գինեկոլոգիայի ամբիոնը, որը ղեկավարեց մինչեւ 1957թ.: Դ.Յակոբեան մայրանոցում պրոֆեսոր Գ.Արեշյանը իր շուրջը հավաքեց մի շարք տաղանդավոր մասնագետներ, այդ թվում իր օգնականներ Աշոտ Ահարոնյանին (Ահարոնով) եւ Պարթեւ Մարգարյանին: Պրոֆեսոր Ա.Ահարոնովը, որը նույնպես ավարտել էր Կիեւի համալսարանը, հետագայում դարձավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլեւ Խորհրդային Միության ամենաականավոր մասնագետներից մեկը: Իսկ պրոֆեսոր Պ.Մարգարյանը 1937թ. Երեւանում կազմակերպեց եւ մինչեւ 1950թ. ղեկավարեց քաղաքային ծննդատունը, ապա 1949-1973թթ. Մանկաբարձության եւ գինեկոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտի տնօրենն էր: Այսպիսով, Հայաստանի երեք ամենահեղինակավոր եւ վաստակաշատ մանկաբարձ-գինեկոլոգների՝ որպես մասնագետների, կայացումը ուղղակիորեն կապված է Դարուհի Յակոբեան մայրանոցի հետ: 1937թ. հետո հիվանդանոցը այլեւս չէր կոչվում Դ.Յակոբեանի անունով:

Մարի Նուպար Ակնաբուժարան

Երեւանի Աբովյան փողոցում գտնվող այդ հիվանդանոցի հարեւանությամբ այսօր էլ ուշադրություն է գրավում Մարի Նուպար ակնաբուժարանի շենքը, որը կառուցվեց Պողոս Նուպարի նվիրատվությամբ ի հիշատակ իր ողբացյալ կնոջ: Ակնաբուժարանի կառուցումը ավարտվեց եւ պաշտոնապես Հայաստանի կառավարությանը հանձնվեց 1929թ. նոյեմբերի 20-ին: Այդ առիթով Պողոս Նուպարը հատուկ ուղերձով դիմեց Հայաստանի կառավարության նախագահին. «Կը խնդրեմ ներողամիտ ըլլալ որ առողջական վիճակիս եւ յառաջացած տարիքիս պատճառաւ կարող չեղայ ներկայ գտնուիլ Ակնաբուժական Գլխնիքիս բացումին, միչդեռ երջանիկ պիտի համարէի ինքզինքս անձամբ յանձնելով ան Կառավարութեան, իբրեւ համեստ օժանդակութիւն մը իմ կողմէս Հայաստանի վերաշինութեան գործին՝ որուն լծուած էք արիաբար: Մասնաւորապէս պարտք կը սեպեմ իմ խորին շնորհակալութիւնս յայտնել ձեզի՝ Կառավարութեան

կողմէ ընծայուած աջակցութեան համար, որուն շնորհիւ իմ նուիրատուութեանս տեւականութիւնը ապահովուած է»:[32] Խորհրդային Հայաստանի կառավարության պատասխան ուղերձում մասնավորապես նշվում էր. «Կառավարութիւնը գնահատում է ոչ միայն այն աջակցութիւնը որ Դուք տալիս էք Խ.Հայաստանի վերաշինութեան գործին՝ ակնաբուժական կլինիկայի կառուցումով, այլ եւ այն որ Դուք մօտիկ հետաքրքրութիւն էք ցոյց տալիս նրա ապագայ ճակատագրի վերաբերմամբ»:[33]

Մարի Նուպար ակնաբուժարանին նույնպես մեծ եւ կարեւոր դեր էր վերապահված Հայաստանի բժշկական հաստատությունների համակարգում, մի կողմից՝ հաշվի առնելով այդ տարիներին երկրում աչքի տարբեր հիվանդությունների, հատկապես տրաքոմայի խիստ տարածված լինելու հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ մասնագիտացված հիվանդանոցների բացակայությունը: Իր գործունեության առաջին՝ 1930թ. ընթացքում ակնաբուժարանում «...աչքի 11.090 դարմանումներ եղած են (որոնց 4.559 թրաքոմա), եւ կատարուած են 983 գործողութիւններ: Մնայուն հիւանդներուն թիւը եղած է 306, որուն 250-ը հայ (16-ը միայն մինչեւ 15 տարեկան երեխաներ), ինչ որ ցոյց կուտայ թէ մանուկները շատ աւելի նուազ ենթակայ են աչքի հիւանդութեանց»:[34] 1930-ականների ընթացքում Մարի Նուպար ակնաբուժարանը, զուտ բժշկական գործունեությանը զուգահեռ, հաջողությամբ ծավալեց նաեւ գիտական հետազոտություններ, ինչի շնորհիվ էլ դարձավ Խորհրդային Միության առաջատար կենտրոններից մեկը: Այդ առումով հատկապես հիշատակման է արժանի պրոֆեսոր Բ.Մելիք-Մուսյանի գործունեությունը, որը սկսած 1933թ. Ակնաբուժարանի առաջատար մասնագետներից էր, իսկ հետագայում նաեւ նրա տնօրենը: 1937թ. ակնաբուժարանը նույնպես դադարեց կոչվել Մարի Նուպարի անունով, եւ միայն ավելի քան կես դար հետո վերականգնվեց նրա սկզբնական անվանումը:

Ա.Սարգիս պաստյորյան կայան

Դեռեւս 1924թ. Փարիզում գտնվող Ար.Երզնկյանի հետ Միության ղեկավարությունը համաձայնության եկավ Վերգինե Սարգսի նվիրաբերած 1000 անգլ. ոսկիով Հայաստանում նոր գյուղ հիմնելու վերաբերյալ: Սակայն արդեն Երեւանում պարզ դարձավ, որ այդ գումարը բավական չէ, ուստի եւ սկսեց քննարկվել Նալբանդ գյուղում բուժկայան կառուցելու տարբերակը: Բայց, ի վերջո, կողմերի համաձայնությամբ որոշվեց ի հիշատակ նվիրատուի հանգուցյալ ամուսնու, Երեւանում հիմնել Ավետ

Սարգիս պաստյորյան կայանը (սփյուռքում հայտնի էր որպես «կատաղաբուժարան»), որը սկսեց գործել 1930թ.:

Չնայած Հայաստանում այդ տարիներին ճարակում էր կատաղախտը, որի տարածողները հազարավոր թափառական շներն էին, այնուամենայնիվ, երկրում չկար որեւէ մասնագիտացված բժշկական ծառայություն: Նույնիսկ Ավետ Սարգիս կայանի գործունեության առաջին շրջանում կատաղաբուժական պատվաստը ստացվում էր Թիֆլիսից: 1931թ. մարտին կայանը, պահելով Ավետ Սարգիս անվանումը, փոխադրվեց Սանիտարահիգիենիկ ինստիտուտի նոր շենքը, ուր կային գրեթե բոլոր հարմարությունները լայնածավալ գործունեության համար: Նույն թվականի նոյեմբերին Կայանը առաջին անգամ Հայաստանում սկսեց պատրաստել անհրաժեշտ քանակությամբ պատվաստ: Ավետ Սարգիս պաստյորյան կայանի մասնաճյուղերը բացվեցին նաեւ Ղարաքիլիսայում եւ Լենինականում (այժմ Վանաձոր եւ Գյումրի):

ՀԲԸ Միությունը, հիմնելով նշված առողջապահական հիմնարկությունները, մշտապես հոգում էր նրանց տարբեր կարիքները, մասնավորապես, ապահովում էր նորագույն վիրաբուժական եւ բժշկական սարքավորումներով, դեղամիջոցներով եւ այլն: 1933թ. Առողջապահության ժողկոմատը այսպես էր գնահատում նրա գործունեությունը. «Շնորհակալությամբ ստացանք Դարուհի Յակոբեանի անվան Մայրանոցին նվիրված գործիքներն ու իրերը: Սա առաջին անգամը չէ որ Փարիզի Հայկական Բարեգործական Ընկերությունը զգայուն եւ ուշադիր վերաբերմունք է ցույց տալիս Խորհրդային Հայաստանի կուլտուրական ձեռնարկներին... դուք հատուկ ուշադրություն եք դարձնում եւ չեք խնայում ձեր միջոցները նպաստելու մեր առողջապահական հիմնարկների սարքավորման եւ բարգավաճման... Մարի Նուպար Ակնաբուժարանի գիտական դրվածքն ու տեխնիկական նորագույն միջոցառումները լավագույն երաշխիքն են աչքի հիվանդությունների հաջող բուժման, որի համար դուք չեք զլանում անելու հարկավորը»:[35]

Բարեգործականի Տուն

Այդ տարիներին Երեւանի ամենագեղեցիկ եւ ամենաաշխույժ Աբովյան փողոցի վրա, բացի վերը նշած երկու հիվանդանոցներից, մի քանի տարի անց կառուցվեց նաեւ Բարեգործականի Տուն բնակելի շենքը (ճարտարապետ Ս.Սաֆարյան), որը դարձավ քաղաքի ժամանակակից ճարտարապետության լավագույն նմուշներից մեկը: Այդ կառույցի պատ-

մությունը սկիզբ է առնում 1930թ. հոկտեմբերին, երբ ՀԲԸ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանին հասցեագրած մի նամակում Հայաստանի Կարմիր Խաչի նախագահ Ս.Կամսարականը եւ Խորհրդային Միության Կարմիր Խաչերի միութենական գործադիր կոմիտեի ներկայացուցիչ Կ.Միքայելյանը, ցավ հայտնելով, որ «գաղութահայության տված տուրքը հայրենի վերաշինության այն չէ, ինչ որ կարելի էր սպասել նրանից», այնուհետեւ անում էին հետեւյալ առաջարկությունը: «Այդ հանգամանքը առիթ տվեց մեզ դիմելու արտասահմանի մի շարք հաստատությունների, որպեսզի վերջիններս Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առթիվ եւ Կարմիր Խաչի 10-ամյակի առթիվ... մի որեւէ խոշոր ձեռնարկությամբ հավերժացնեն այդ տոները եւ հայտնաբերեն իրենց մասնակցությունը երկրի վերակառուցման գործում: Ի թիվս այդ հաստատությունների, հարգելի պ. Մալեզյան, Ձեր միջոցով մենք որոշել ենք դիմել եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միությանը, որպեսզի նա եւս իր վրա վերցնի մի որեւէ շենքի կառուցման ծախքերը: Մեր կարծիքով,- ասվում էր նամակում,- նա կարող կլիներ շինել ՀՕԿ-ի օրինակով մի տուն մեր մտավորականների համար, որոնք այնքան մեծ կարիք ունեն բնակարանի»:[36]

Այս նամակը Փարիզ հասավ այն պահին, երբ Պողոս Նուպարի մահից հետո նրա որդիները ի հիշատակ իրենց հոր, որոշ գումար էին հատկացրել Միությանը որեւէ հայանպաստ ձեռնարկի համար: Միության Կենտրոնական Վարչությունը նորընտիր նախագահ Գ.Կյուլպենկյանի գլխավորությամբ որոշեցին օգտվել ստեղծված հնարավորությունից եւ Փարիզում մինչ այդ Պողոս Նուպարի նվիրատվությամբ կառուցված Ուսանողական Տան օրինակով, նույնպիսի մի տուն կառուցել նաեւ Երեւանում: Հայաստանի կառավարության հետ բավական արագ ընթացող բանակցությունների արդյունքը եղավ «Համաձայնագիր Երեւանի Բարեգործականի Տան կառուցման» վերնագրով փաստաթուղթը, որը ստորագրվեց նախ 1931թ. մարտին՝ Փարիզում Միության նախագահ Գ.Կյուլպենկյանի, Լ.Կյումուշկերտանի եւ վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանի, ապա նույն տարվա ապրիլին Երեւանում Լուսավորության ժողկոմ Ա.Եղիազարյանի կողմից: Համաձայնագրի հիմնական կետերն էին.

«Յոդուած 1. Հանգուցեալ Պօղոս Նուպար Փաշայի ժառանգորդները ՀԲԸ Միութեան նուիրած են 4000 անգլ. ոսկի, որպէսզի սոյն գումարը յատկացուի Հայոց համար հանրային օգտակարութիւն ունեցող ձեռնարկի մը: Ժառանգորդներէն մին, Զարէհ Պէյ Նուպար, այս նուիրատուութեան վրայ անձնապէս աւելցուցած է 3000 անգլ. ոսկի գումար մը...

Յոդուած 2. Միութեան Կեդրոնական Վարչական ժողովը խորհրդակցելէ վերջ այս երկու գումարներուն յարմարագոյն գործածութեան մասին

եւ համաձայնելով Պօղոս Նուպարի ժառանգորդներուն եւ անձնապէս Զարէհ Պէյ Նուպարի հետ, կ'որոշէ, ՀԲԸ Միութեան քսանըհինգամեայ յոբելեանին առթիւ եւ որպէս մեծարանք մը Հայաստանի, յատկացնել Տունի մը շինութեան որ Երեւանի Համալսարանին մաս պիտի կազմէ եւ պիտի յատկացուի Համալսարանին հայ բրոֆէսէօրներուն, եւ կարելիութեան սահմանին մէջ, ուրիշ հայ գիտնականներու...

Յօդուած 3. Կառավարութիւնը այս նուիրատուութիւնը ...կ'ընդունի եւ, Երեւանի Աբովեան պողոտային վրայ, երկուստէք համաձայնաբար ընդունուած յատակագիծի մը համաձայն, յանձն կ'առնէ կառուցանել շէնք մը վերոյիշեալ նպատակին գործածուելու համար: Սոյն շէնքը պիտի կրէ «Բարեգործականի Տուն, Հիմնարկութիւն Նուպար» անունը:...

Յօդուած 4. Ոչ Միութիւնը, ոչ ալ Նուիրատուները եւ փոխատուն, կառուցուած շէնքին մատակարարութեան եւ նորոգութեան ծախքերուն յառաջիկային մասնակցելու պարտաւոր պիտի չըլլան: Ընդհակառակը Կառավարութիւնը միայն կը ստանձնէ շէնքին վարչութիւնը:

Յօդուած 5. Կառավարութիւնը կառուցուած շէնքին մէջ Միութեան իբր պաշտօնատեղի ծառայելու համար յարկաբաժին մը եւ Միութեան ներկայացուցիչներուն համար եւս բնակատեղի մը պիտի յատկացնէ ձրիաբար»:[37]

Երեւանում Միության ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանը Վ.Մալեզյանին հասցեագրած 1936թ. հունվարի 30-ի թվակիր նամակում հայտնում էր, որ «Բարեգործականի Տունը գրեթէ վերջացած է եւ մանր մունր պակասները լրացուելու վրայ են: Շէնքը բացի ներքնայարկից, հինգ յարկանի է եւ պարունակում է ընդամենը 20 բնակարան ...եւ չորս նկարչական աշխատանոց տրամադրուած նկարիչների»:[38] Կառավարության հատուկ որոշումով այդ՝ Երեւանի ամենաարդիական բնակելի շենքերից մեկի առաջին բնակիչներն էին գրողներ Ստ.Զորյանը, Զ.Եսայանը, Վ.Թոթովենցը, նկարիչներ Փ.Թերլեմեզյանը, Ս.Առաքելյանը, ճարտարապետներ Գ.Քոչարը եւ Մ.Մազմանյանը, Հայաստանի պատկերասրահի հիմնադիր եւ տնօրեն Ռ.Դրամբյանը, կոմպոզիտոր Հ.Ստեփանյանը, պրոֆեսորներ Գ.Ղափանցյանը, Ա.Տերտերյանը, Հ.Քեչեկը եւ այլք: Բնակարան հատկացվեց նաեւ Հ.Գարակյոզյանին, բայց Միության գրասենյակի հարցը մնաց չլուծված: 1936թ. նոյեմբերին Վ.Մալեզյանը, տեղեկանալով Հ.Գարակյոզյանից, որ Միությանը գրասենյակ է հատկացվել ՀՕԿ-ի շենքում, գրում էր. «Կը փափագինք որ Համաձայնագրին 5-րդ յօդուածը յարգուի, որովհետեւ մեզի համար հաճելի չէ հարկատու ըլլալ եւ կերպով մը ենթարկուիլ ՀՕԿ-ին, որքան ալ ձեզի գրասենեակ մը տրամադրած ըլլալուն համար շնորհապարտ ըլլանք»:[39] Հետագա շուրջ երկու տարվա

ընթացքում Վ.Մալեզյանը շարունակեց իր անհամաձայնությունը հայտնել իշխանությունների այդ որոշմանը, բայց ապարդյուն: Անհետեւանք մնաց նաեւ նրա խնդրանքը՝ հարգել պայմանավորվածությունը շենքի վրա «Բարեգործականի Տուն. Նուպարեան Հիմնարկ» արձանագրությամբ հուշատախտակ տեղադրելու վերաբերյալ:

Գիտակրթական ծրագրեր

1928թ. Արշակ Չոպանյանը իր հոդվածներից մեկում, շեշտելով Հայաստանի Պետական համալսարանի բացառիկ կարեւորությունը հայ ժողովրդի մտավոր եւ հոգեւոր զարգացման համար, միաժամանակ նշում էր. «Արտասահմանի հայ ազգասէրներուն համար, ներելի չէ սակայն այդ ոգեւորիչ իրողութեան հաստատմամբ ուրախանալով ամէն պարտականութիւն կատարած նկատել, ոչ ալ մանաւանդ շատանալ ի վեր հանելով եւ քննադատելով այդ հիմնարկութեան թերութիւնները, որոնց ոմանք եթէ ռէժիմին արդիւնք են, մեծ մասը արդիւնք են աղքատութեան: Պէտք է մասնակցիլ այդ հիմնարկութեան զարգացման, զօրացման գործին, պէտք է անոր պակասները նկատել՝ զանոնք լրացնել ջանալու համար»: Ա. Չոպանյանի այս յուրատեսակ կոչը բնավ ուղղված չէր Միությանը, հակառակը՝ համալսարանին ի նպաստ Միության «արդէն իսկ ըրածը (պէտք է) մատնանիշ ընել մղելու համար մեր արտասահմանեան ազգասէրները որպէսզի անոնց օրինակին հետեւին»:[40]

ՀԲԸ Միության առաջին խոշոր ձեռնարկը գիտակրթական ոլորտում անմիջականորեն կապված էր Կարապետ եւ Գրիգոր Մելգոնյանների աննախադեպ նվիրատվության հետ, որը 1925թ. դեկտեմբերին Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից փոխանցվեց ՀԲԸ Միությանը (այս մասին տես ստորեւ՝ 8-րդ գլխում):

ՀԲԸ Միության ջանքերի շնորհիվ որոշվեց նաեւ տարեկան 3000 եգիպտ. ոսկի տրամադրել Հայաստանի համալսարանին պայմանով, որ «միմիայն եւ բացառապէս գործածուի հայկական գրականութեան եւ պատմութեան ամպիոններու հաստատման եւ պահպանումին, կամ ընդհանրապէս յատկացուի հայկական ուսումնասիրութեանց»:[41] Տեղեկանալով այդ մասին, Պետական Համալսարանի ռեկտոր Հ.Հովհաննիսյանը եւ Վարչության քարտուղար Ռ.Տոնյանը բարերար Կ.Մելգոնյանին հասցեագրած նամակում գրում էին. «Յարգելի քաղաքացի Մելգոնեան, Պարիզի Հայոց Բարեգործական Ընդհանուր Միութիւնը յայտնում է ՀՍԽՀ Պետական համալսարանի Վարչութեան, որ Դուք կարգադրել էք տրա-

մադրելու մեզ տարեկան 3000 եգիպտ. ոսկի Համալսարանի կարիքների համար: Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը յատուկ որոշումով թոյլատրել է Պետ. Համալսարանի Վարչութեան՝ ստանալու Մելգոնեան կտակից տարեկան 3000 եգիպտ. ոսկին եւ տնօրինելու համաձայն Ձեր ցանկութեան: ՀՍԽՀ Պետ. համալսարանի Վարչութիւնը յայտնում է Ձեզ, յարգելի քաղաքացի, իր խորին շնորհակալութիւնը մեր Համալսարանին մատուցած այդ շօշափելի օժանդակութեան համար եւ կարող է հաւաստիացնել, որ լայն չափերով կիրագործի մեր ժողովրդի հոգեւոր կուլտուրայի ուսումնասիրութիւնը Համալսարանիս աշխատանքներով՝ Ձեր տրամադրած միջոցներով»:[42]

Սկսած 1930թ. Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովը ձեռնամուխ եղավ հայագիտական աշխատությունների հրատարակմանը: Հ.Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը» յոթ հատորով, Հ.Մանանդյանի «Կշիռները եւ չափերը հնագույն հայ աղբյուրներում» եւ «Մանր հետազոտություններ», Մ.Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն», Եր.Շահազիզի «Հին Երեւանը» եւ «Դիվան Միքայել Նալբանդյանի», Եր.Լալայանի «Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում», Թ.Թորամանյանի «Շինանյութերն ու նրանց գործածության կերպը Հին Հայաստանում», Սպ.Մելիքյանի «Կոմիտասի ստեղծագործության անալիզը», Խ.Սամվելյանի «Հին Հայաստանի կուլտուրան», Լ.Մելիքսեթ-Բեկի «Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին» երկու հատորով, Իվ.Ջավախիշվիլու «Նյութեր Հայաստանի սոցիալական պատմության համար» եւ այլ՝ ընդհանուր թվով մոտ 30 գիտական մեծարժեք մենագրություններ հրատարակվեցին Մելգոնյան ֆոնդի միջոցներով: Այդ աշխատությունների հրապարակումը շատ մեծ դեր խաղաց Հայաստանում հայագիտական մտքի՝ պատմության, հնագիտության, լեզվաբանության, ընդհանրապես հայ գիտության զարգացման, ինչպես նաեւ երիտասարդ մասնագետների պատրաստման գործում:

Նույն այդ նպատակով ֆինանսավորվում էին Պետհամալսարանի եւ Մանկավարժական ինստիտուտի հայագիտական ամբիոնները, ինչպես նաեւ ասպիրանտների պատրաստումը: Այսպես, 1933թ. Մելգոնյան ֆոնդի ասպիրանտներն էին Մկրտիչ Մկրյանը (հայ գրականություն), Հմայակ Հարությունյանն ու Սերոբ Պողոսյանը (Հայաստանի պատմություն), որոնք տարիներ անց դառնալու էին անվանի գիտնականներ եւ դասախոսներ:

Այս ամենի հետ մեկտեղ, Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովը կառավարության մասնակցությամբ ձեռնամուխ եղավ «Մատենադարանի»՝ Հանրային գրադարանի եւ տպարանի շինարարությանը

(ճարտարապետ՝ Ա.Թամանյան): ՀԲԸ Միության միջոցով տպարանի համար արտասահմանից ստացվեցին տպագրական, կազմարարական եւ այլ մեքենաներ, ինչպես նաեւ տարբեր լեզուներով տպագրական տառեր, ինչը խիստ անհրաժեշտ էր հատկապես գիտական աշխատություններ տպագրելու համար: Տպարանի բացումը տեղի ունեցավ 1936թ. մայիսին, «սակայն փորձառու եւ ձեռնհաս պաշտօնէութեան պակասի պատճառով տպարանը չէ կրցած իր արտադրութեան լիուլի չափը տալ»:[43] Ինչ վերաբերում է գրադարանի շենքի կառուցմանը, ապա նույն 1936թ. «շինարարութեան մարզին մէջ կատարուած աշխատանքը բաղդատաբար գոհացուցիչ է: Մատենադարանի շէնքին աջ թեւին, ուր կը գտնուի տպարանը, երեք հարկերը մինչեւ կտուր աւարտեցան: Զուգընթացաբար կատարուեցան կարգ մը ուրիշ աշխատանքներ, այն է կոյուղի, ջրմուղ, ջեռուցում, երկաթ-շաղախի ծածկեր, եւն.»:[44] 1937թ. փետրվարին, երբ կառավարության որոշումով Մելգոնյան ֆոնդով ստացվող միջոցների տնօրինումը Գործադիր հանձնաժողովից փոխանցվում էր Պետհամալսարանին, այդ կապակցությամբ ներկայացված փաստաթղթերում նշվում էր, որ գրադարանի շենքը պատրաստ է 60% -ով եւ որ անցած չորս տարիների ընթացքում շինարարության համար Մելգոնյան ֆոնդը տրամադրել է 1.369.650, իսկ կառավարությունը՝ 1.219.873 ռուբլի:[45] Հայաստանի իշխանությունների 1937թ. դեկտեմբերի 8-ի որոշումով Մելգոնյան ֆոնդի գործունեությունը երկրում արգելվեց:

ՀԲԸ Միությունը Հայաստանում իր գործունեության ողջ ընթացքում մշտապես օժանդակում էր Պետհամալսարանին, հատկապես կարեւոր էին նրա ուղարկած նորագույն տարբեր սարքավորումները, նյութերը եւ այլն: Ահա բազմաթիվ օրինակներից մեկը: 1925-1928թթ. Փարիզ էր գործուղվել Պետհամալսարանի ֆիզիկայի դասախոս Հ.Անժուրը (Զեբոտարյան), ուր նա աշխատում էր Մ.Կյուրիի լաբորատորիայում: Տեղեկանալով Հ.Անժուրից նրա ղեկավարած լաբորատորիայի կարիքների մասին, Միության Կենտրոնական Վարչությունը 1927թ. 45.000 ֆրանկ հատկացրեց նորագույն գործիքներ եւ սարքավորումներ գնելու նպատակով:[46] Արդեն Երեւանից Հ.Անժուրը իր շնորհակալական նամակում գրում էր. «Պատիւ ունիմ Ձեզ միաժամանակ յայտնելու, որ Հայաստանի Պետական Համալսարանի ֆիզիկական աշխատանոցին ձեր կողմից սիրալիր կերպով նուիրուած ելեքտրականութեան եւ ռատիոյի գործիքները այսօր շատ մեծ նշանակութիւն ունեցան իրենց օգտակարութեամբ մեր աշխատանքների համար: Ձեր նուիրած ռատիո ապպարատը մեզ հնարաւորութիւն է տալիս երբեմն լսելու եւ լսեցնելու ուսանողութեան լայն խաւերին Բարիզի, Թուլուզի, Վիեննայի, Պերլինի եւ այլ եվրոպական ռատիո կայանների

հաղորդումները: Ձեր նուիրած ռատիոյի մասերից մենք փորձում ենք հաւաքել զանազան տեսակի ընդունիչներ, եւ այդպէսով հնարաւորութիւն են ստանում ուսանողները վարժութիւն ձեռք բերելու ռատիոյի ընդունիչներ սարքելու հարցում»:[47]

Նամակի բովանդակությունը ճիշտ արժեւորելու համար հարկ է նկատի առնել, որ Խորհրդային Հայաստանում «...1927թ. գործել է 65 ռադիոընդունիչ (21՝ քաղաքներում) ...Ունկնդիրների շրջանակը մեծացնելու նպատակով ռադիոկայանը միացվել է թատրոնին, կոնսերվատորիային, բանվորական ակումբներին, մշակույթի տներին, բանակի տանը, հասարակական վայրերում տեղադրվել են բարձրախոսներ: ...1929-ին շահագործման է հանձնվել Աթարբեկյանի անվ. «ՌՎ-21» ռադիոկայանը, որի շնորհիվ լսելի են դարձել Թբիլիսիից, Բաքվից տրվող հաղորդումները»:[48]

Վերը նշվեց, որ Մելգոնյան հիմնադրամի հատկացումները Երեւանի Պետհամալսարանին հնարավոր եղան Միության ջանքերի շնորհիվ: Միության եւ նրա նախագահ Պողոս Նուպարի նման մոտեցումը Հայաստանում որակյալ մասնագետների պատրաստման խնդրին պատահական չէր: Դեռեւս 1924թ. դեկտեմբերին Հայաստանի կառավարությանը հասցեագրած նամակում Պողոս Նուպարը հայտնում էր. «Ես որոշել եմ մեր Բարեգործական Միությանը նվիրաբերել 12.500 ոսկի ռուբլի, հանձնարարելով դրա տարեկան եկամուտը հատկացնել Երեւանի համալսարանին բացարձակապես որպես թոշակ առավել արժանի ուսանողներին՝ ուսման առաջադիմությունը խրախուսելու նպատակով»: Պողոս Նուպարը հայտնում էր նաեւ, որ ամեն տարի իր մրցանակակիրներից մեկը պետք է ուղարկվի Եվրոպա, ուր մեկ տարվա ընթացքում կկատարելագործի գիտելիքները որեւէ համալսարանում:[49] Նամակին կցված էր «Պողոս Նուպարի համալսարանական մրցանակների կանոնադրությունը», ուր նրան հատուկ բծախնդրությամբ պարզաբանվում էին հատկապես Եվրոպա մեկնելու հետ կապված բոլոր, այդ թվում նաեւ ֆինանսական հարցերը:

Պողոս Նուպարի այս հիմնադրամը իր առաջին եկամուտը՝ 120 անգլ. ոսկի, տվեց 1926թ., որն էլ հանձնվեց Պետհամալսարանին: Մրցանակները առաջին անգամ շնորհվեցին 1933թ., իսկ հաղթողների թվում էին համալսարանի շրջանավարտներ Էգրաս Հասրաթյանը, Աբգար Հովհաննիսյանը եւ Գագիկ Դավթյանը՝ հետագայում անվանի գիտնականներ, ակադեմիկոսներ: Եվ թվում էր, թե Միության նախագահի ձեռնարկման հաջող իրագործումը այդուհետ ապահովված է: Բայց, ահա թե ինչ է պարզվում ավելի քան տասը տարի անց՝ 1937թ. մարտին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ա.Գուլոյանին ուղղած Միության վարիչ-պատ-

վիրակ Վ.Մալեզյանի նամակից. «1924-ին մեր ողբացեալ Հիմնադիր-Նախագահը Պողոս Նուպար Փաշա մասնաւոր հիմնադրամ մը յանձնած է մեր Միութեան, տարեկան եկամուտը որպէս Նուպարեան մրցանակ յատկացուելու համար Երեւանի համալսարանի յաջողագոյն շրջանաւարտներուն, այն պայմանաւ որ այդ գումարը գործածուի ուղեւորութեան ծախքերուն եւ այն առաւելութեամբ նաեւ որ առաջին մրցանակի պսակաւորը Պրիւսէլի Նուպարեան Սաներու Հիմնարկութենէն ստանա պուրս մը, տարի մը Եվրոպայի մէջ իր մասնագիտութիւնը կատարելագործելու համար:

«Ցավալի է արդարեւ որ ցարդ հնար չեղաւ գործադրել Հիմնադրին կամքը եւ առաջին երկու տարիները ղրկուած գումարը (անգլ.ոսկի 217,16) լրիւ չի գործածուեցաւ իր բուն նպատակին, իսկ յաջորդ տարիներու եկամուտները դիզուած մնացին մեր մօտ: Այդ հանգամանքներուն մէջ, Կեդր. Վարչական Ժողովը հարկադրուած է այդ հիմնադրամին կանոնադրութեան մէջ մտցնել հետեւեալ յաւելուածը, որպէսզի կարող ըլլայ ժամանակին այդ հիմնադրամը ծառայեցնել համապատասխան նպատակին իսկ առանց հետաձգումի»: Առաջարկվող հավելվածը այսպիսին էր. «Ամէն տարուան ընթացքին, երբ Երեւանի Պետ. Համալսարանը կամ անոր կողմէ նշանակուած Հաստատութիւնը մինչեւ 31 Յուլիս չի հաղորդէ համալսարանական մրցանակներուն պսակաւորները կամ առաջարկէ Հիմնադրին կամքին անհամապատասխան յատկացում մը, տրամադրելի տարեկան զուտ եկամուտը, որ պէտք էր յատկացուէր այդ տարեշրջանին, պիտի յանձնուի Նուպարեան Սաներու Հիմնարկութեան»:[50] Երկու ամիս անց, Փարիզում ստացվում է պատասխան նամակը Հայաստանի ժողկոմխորհի գործերի կառավարչի տեղակալի ստորագրությամբ. «Ընկ. Ա.Գուլոյանի հանձնարարությամբ հայտնվում է հետեւյալը՝ կրթական գործը մեզ մոտ՝ Խորհրդային Սոց. Հանրապետությունների Միության մեջ այժմ դրված է չափազանց բարձր մակարդակի վրա, հետեւապես նպատակահարմար ենք համարում Նուպարյան մրցանակի ողջ գումարը հատկացնել Երեւանի Պետ. Համալսարանին, վերջինիս հայեցողությամբ մրցանակի արժանացած ուսանողներին պարգեւատրելու, իսկ հարկ եղած դեպքում արտասահման գործուղելու: Վերոհիշյալի հիման վրա, Վարչությանդ կողմից առաջադրված հավելվածը ընդունելի համարել չենք կարող»:[51] Թե երկու կողմերը ինչպես կլուծեին այս թնջուկը, կարելի է միայն ենթադրել, քանի որ շատ քիչ ժամանակ էր մնացել մինչեւ դեկտեմբեր ամիսը:

Այս ամենի հետ մեկտեղ, հետեւելով գյուղական վայրերում դպրոցներ հիմնելու ավանդույթին, Միությունը նման նախաձեռնությամբ

հանդես եկավ նաեւ Հայաստանում: Այսպես, Լուսավորության ժողկոմիսարիատը 1928թ. հուլիսի նամակով Երեւանում Միության ներկայացուցիչ Հայկազ Գարակյոզյանին հայտնում էր, որ Միության տրամադրած միջոցներով Էջմիածնի շրջանի Ագարակ, Բլղեր եւ Շիրազալա գյուղերում կառուցվում են դպրոցներ: Երկու տարի անց՝ 1930թ. բացվեց նաեւ «Խերեան Մեղուաբուծական Վարժարանը»:[52]

Միությանը մեղադրում են

Ինչպես նշվեց, ՀԲԸ Միությունը եղավ առաջին սփյուռքահայ կազմակերպությունը, որին 1923թ. թույլատրվեց գործունեություն ծավալել Խորհրդային Հայաստանում: Միության տասնչորսամյա գործունեությունը Հայաստանում ուներ այն յուրահատկությունը, որ այն այդպես էլ չհիմնեց եւ ոչ մի մասնաճյուղ: Դա պայմանավորված էր երկու հիմնական պատճառներով: Նախ, համաձայն Միության կանոնադրության, մասնաճյուղի գոյության դեպքում նրա անդամները պարտավոր էին վճարել անդամավճարներ, որի մի մասը պետք է դրվեր Միության Կենտրոնական Վարչության տրամադրության տակ: Հայաստանի պարագայում՝ նկատի առնելով նրա բնակչության խիստ ցածր կենսամակարդակը, նման պայմանի կիրառումը դառնում էր անիմաստ եւ անհնար: Կար եւ մեկ այլ՝ քաղաքական պատճառ: Կասկածից վեր էր, որ Հայաստանի իշխանությունները երբեք չէին հանդուրժի, որ Խորհրդային Միության քաղաքացիները անդամագրվեին արտասահմանյան, թեկուզ եւ հայկական, բայց իրենց իսկ որակմամբ՝ «բուրժուական» կազմակերպությանը: Մյուս կողմից, եթե նույնիսկ դա հնարավոր լիներ, ապա նույն այդ մասնաճյուղերը պարտադրաբար կդառնային գործիք իշխող կոմունիստական կուսակցության ձեռքին, նրա գաղափարների կրողն ու տարածողը: Մի բան, որին արդեն չէր կարող համաձայնվել Միությունը:

Սկսած 1924թ., Միությունը Հայաստանում կառուցում էր հիվանդանոցներ, դպրոցներ, ավաններ, բնակելի շենք, ձեռնամուխ էր եղել Նուպարաշենի աննախադեպ շինարարությանը, օժանդակում էր ներգաղթի աշխատանքներին, եւ այս ամենի հետ մեկտեղ, շարունակում էր իր գործունեությունը տարբեր երկրներում: Հալեպում, Բեյրութում, Աթենքում, Սալոնիկում, Երուսաղեմում, Կահիրեում եւ այլ քաղաքներում գործում էին հատկապես գաղթականների ու որբերի համար նրա հիմնած բազմաթիվ որբանոցներ, պատսպարաններ, աշխատանոցներ, դարմանատներ եւ այլ հաստատություններ: Վստահ կարելի է ասել, որ 20-30-ական թվականներին Միության գործունեությունը սփյուռքում եւ Հայաստանում անօրինակ էր թե իր ծավալով եւ թե իր կարեւորությամբ: Եվ չնայած այդ ամենին, նույն այդ տարիներին, ինչպես եւ նախորդ շրջանում, Միությունը մշտապես քննադատվում էր տարբեր շրջանակների, կազմակերպությունների ու առանձին անհատների կողմից: Երվանդ Աղաթոնը 1932թ. իր հոդվածներից մեկում գրում էր. «Փոխանակ ներողամիտ ոգիով խրախուսելու աշխատողները, փոխանակ ուժ տալու Բարեգործականին, վայե՞լ է անդադար հարուածել եւ սեւցնել, ազգային ամէնէն անմեղ եւ օգտակար ծառայութիւնը անգամ անհանդուրժելի դարձնելու աստիճան: Շատ դժուար բան չէ հաստատութիւն մը քանդելը. չքանդուած հաստատութիւններէն ի՞նչ մնաց. բայց միթէ մենք հայերս քուրդին եւ թուրքին պէս մէկ տարիէն շինուած տուն մը մէկ օրէն հիմնայատա՞կ ընելու ենք, ճիշդ ինչպէս կ'ընեն Պոլսոյ տուն փլցնող այլազգի գործավորները: ...Դիւրի՞ն է արդեօք նոր եւ աւելի զօրաւոր ու օգտակար Բարեգործական մը շինելը, եւ քանդելէ վերջ ո՞ր հայն է որ նոր Բարեգործականի մը դրամ պիտի տայ, տեսնելէ վերջ որ հայուն ձեռքովն է որ նախորդ Բարեգործականը քանդուած է: Կը հարցնեմ ձեզի, դիւրի՞ն է կրկին գտնել Նուպարներ, Եագուպ փաշաներ, Մելգոնեաններ, Գարակէօզեաններ, Կիլպէնկեաններ, Յակոբեաններ, Քէլէկեաններ, եւն. եւն... Քանդելէ առաջ, նախ կազմեցէք այսօրուան Բարեգործականէն աւելի պատկառելի եւ վստահելի Միութիւն մը, որպէսզի ձեր խօսքէն վերջ ձեր գործին մէջ տեսնենք ձեզ»:[53]

Ե.Աղաթոնի այս խոսքերը արդարացված էին հատկապես Միության Հայաստանյան գործունեության պարագայում, երբ այլընտրանք պարզապես չկար:

Միության քննադատությունը ուղղվում էր մի քանի կետերի վրա: Նախ, Միությունից պահանջում էին, որպեսզի այն իր տրամադրության տակ եղած բոլոր կտակներն ու նվիրատվությունները օգտագործի Հայաստանի կարիքների համար: «Միութիւն» պաշտոնաթերթը այդ առիթով գրում էր. «... ո՞ր վարիչն է որ, անգոսելով Միութեան յանձնառութիւնը եւ պատասխանատուութիւնը, պիտի համարձակէր անարգել կտակարարին կամ նուիրատուին անխորտակելի կամքը եւ ժխտել նպաստընկալ իրաւատէրին անբռնաբարելի իրաւունքը:

«Պետք է վերջապէս ընդունիլ թէ Միութեան նման ընկերակցութիւն մը որ, օրինապահութեան վրայ հիմնուած է եւ այդ պատճառաւ անվերապահ վստահութիւն կը ներշնչէ, ոեւիցէ ճնշումի տակ ինքզինքին թոյլ պիտի չիտայ բացայայտ օրինազանցութիւն մը գործել, անձեռնմխելիութեան պայմանով իրեն վստահուած հիմնադրամի մը ըստ կամս ծախսելով կամ կանխորոշուած եկամուտները տարբեր նպատակի մը յատկաց-

նելով. այսպիսի շեղում մը զեղծարարութիւն պիտի ըլլար, որ ամէն քաղաքակիրթ երկրի մէջ խստօրէն կը պատժուի»:[54]

Միությունը մեղադրվում էր նաեւ նրանում, թե իբր նա իր տրամադրության տակ ունի կտակներ՝ հօգուտ Հայաստանի, որոնք, սակայն, չի օգտագործում ըստ նպատակի: Մինչդեռ, իրականում տեղի էր ունենում հակառակը: Վերոհիշյալ Դարուհի Յակոբեան, Գրիգոր Մէօթէմէտեան, Երուանդ Յակոբեան հիմնադրամների նպատակակետը ի սկզբանե Խորհրդային Հայաստանը չէր, եւ միայն ՀԲԸ Միության ջանքերի շնորհիվ՝ որոշակի իրավաբանական դժվարություններ հաղթահարելուց հետո հնարավոր դարձավ դրանց տեղափոխումը Հայաստան:

Միությանը ներկայացվող մեղադրանքներից էր նաեւ այն, որ իր հիմնական դրամագլխի հաշվին չէր գնում Հայաստանում հիմնած Երկրագործական բանկի արժեթղթերը եւ շարունակում էր հավատարիմ մնալ հիմնական դրամագլխի անձեռնմխելիության սկզբունքին: Կտակների ու նվիրատվությունների օրինակով, այս վերջին դեպքում նույնպես Միության կանոնադրության ամենակարեւոր դրույթներից մեկից հրաժարումը արդարացվում էր Հայաստանին օժանդակելու անհրաժեշտությամբ: Ի տարբերություն այլոց, Ե.Կարիկյանի նման ոգով գրված հոդվածները արժանացան Պողոս Նուպարի պատասխանին: Հարկ է նշել, որ Միության նախագահը սովորաբար, որպես կանոն, անուշադրության էր մատնում բոլոր տեսակի մեղադրանքները, սակայն այս դեպքը բացառություն էր, նկատի առնելով Ե.Կարիկյանի մատուցած ծառայությունները:

Ահա մի հատված վերջինին ուղղված Պողոս Նուպարի 1925թ. մարտի 4-ի նամակից. «Գալով Միութեան հիմնական դրամագլուխի մասին ձեր գրածին, բացորոշ է որ դուք անոր ելմտական վարչութեան մասին ըմբռնումի եղանակ մը ունիք որ մերինը չէ: Ոչ միայն այն դրամագլուխը անձեռնմխելի է, այլ եւ Կեդր. Ժողովը պարտաւոր է անով գնել այն արժեթղթերը միայն որոնք դասաւորուած (գլասսէ) են, արդէն շահաբաժին վճարած են, սեղանաւորական հրապարակին վրայ ընդունուած են ու վաճառելի են դիւրաւ: Արդ, անվիճելի է որ Հայաստանի Երկրագործական Դրամատան բաժնեթուղթերը, որոնց չարձանագրուելնուս համար զմեզ կը մեղադրէք, պատուական արժեթուղթեր ըլլալով հանդերձ, ըստ մեզ, տակաւին վերոյիշեալ պայմանները չեն լրացներ:

«Եթէ Միութեան վարիչները, սկիզբէն ի վեր ու հանապազ, սրտագին հոգածութիւնը ունեցած չըլլային մատակարարելու հիմնական դրամագլուխը, ճշգրտօրէն հարգելով Կանոնագրութեան տրամադրութիւնները, համաձայն զուտ ֆինանսական սկզբանց, ինչպէս ճիշտ Ֆինանսական Ընկերութեան մը Վարչական Ժողովը, Միութիւնը բնաւ չպիտի

կրնար հասնիլ բարգաւաճման ներկայ աստիճանին եւ գուցէ գոյութիւն իսկ չպիտի ունենար: Ան չպիտի կրցած ըլլար վստահութիւն ներշնչելու մեր հայրենակիցներուն, 19 տարուան գոյութեան մը միջոցին ահագին գումարներ հաւաքելու աստիճան, գումարներ որոնք այսօր կ'անցնին 300.000 ոսկին, բաշխուած իբր ամէն տեսակ օգնութիւն ու նպաստ: Ան չպիտի կրնար, պատերազմէն ի վեր, խնամել հազարաւոր որբեր, ան այսօր չպիտի եղած ըլլար Հայկական միակ Ընկերակցութիւնը որ կը գործէ ամէն տեղ ուր Հայեր կը գտնուին եւ որ,- կրնանք յուսալ,- պիտի կրնայ տակաւին օգտակար գործ կատարել Հայ ազգին համար»:[55]

Անգոսելով բոլոր քննադատությունները ու խոչընդոտները, ՀԲԸ Միությունը շարունակում էր իր գործունեությունը Խորհրդային Հայաստանում: Դժվար չէ նկատել, որ այն հիմնականում ընթանում էր առողջապահական եւ գիտակրթական ուղղություններով: Խիստ կարեւոր էր նաեւ Միության բազմապիսի օժանդակությունը ներգաղթի կազմակերպման գործում: Ոգեւորված այդչափ հաջող համագործակցությամբ, կողմերը ձեռնամուխ եղան մի նոր, անհամեմատ ավելի մեծ ու դժվարին ծրագրի իրականացմանը՝ ներգաղթածների համար ամբողջ մի ավանի կառուցմանը:

Նուպարաշեն

1926թ. Ֆիլադելֆիայում կայացած ՀԲԸ Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերի խորհրդակցական համաժողովում որոշում է կայացվում Միության 25-ամյակի առիթով եւ ի պատիվ նախագահ Պողոս Նուպարի, հետագա հինգ տարիների ընթացքում հատուկ հանգանակության միջոցով գոյացնել 250 հազար դոլարի գումար: Տեղեկացնելով Պողոս Նուպարին այդ որոշման մասին՝ համաժողովի մասնակիցները խնդրում են նրան հայտնել իր կարծիքը նշված գումարի օգտագործման կերպի վերաբերյալ: Կարելի է ենթադրել, որ շատ-շատերի համար նախագահի պատասխանը թվում էր ակնհայտ՝ նշված գումարը հատկացնել Միության արդեն գործող հաստատություններին (որբանոցներ, գաղթակայաններ եւ այլն) կամ էլ հիմնել նորերը: Պողոս Նուպարը, սակայն, գաղթականության ապագայի հարցի իրական եւ արմատական լուծումը այդ ժամանակ արդեն համարում էր նրանց տեղափոխումը Հայաստան: Զանգվածային ներգաղթը կապված էր, սակայն, բազմաթիվ եւ բազմաբնույթ դժվարությունների, այդ թվում նաեւ բնակարանների բացակայության հետ, ինչի մասին բազմիցս նշում էին Հայաստանի իշխանությունները: Անցած տա-

րիների փորձը վկայում էր, որ սփյուռքահայությունը տարբեր՝ տնտեսական եւ քաղաքական պատճառներով կամ ի վիճակի չէր, կամ էլ պարզապես նպատակահարմար չէր համարում ֆինանսավորել բնակարանային շինարարությունը Հայաստանում, կարծելով, որ եղած միջոցները նախ եւ առաջ պետք է ծառայեցնել տարբեր երկրներում համայնքային կառույցներին, ընդհանրապես գաղթականության կարիքները հոգալուն: Մյուս կողմից, Բարեգործականի սեփական միջոցները անբավարար էին նման խոշոր ծրագիրը ինքնուրույն իրագործելու համար: Այդ պայմաններում, Պողոս Նուպարը, տեղեկանալով «հոբելյանական» հանգանակության մասին, որոշում է դրանից գոյացած գումարը ամբողջությամբ տրամադրել Հայաստանում հատուկ մի ավանի կառուցմանը, ուր պետք է բնակվեին ներգաղթած հայերը: Միեւնույն ժամանակ, ցանկանալով քաջալերել հանգանակության բոլոր հնարավոր մասնակիցներին, նա հայտարարեց, որ եթե մինչեւ 1931թ. ապրիլի 30-ը հանգանակվի 250 հազար դոլար, ապա նա իր կողմից կտրամադրի եւս 100 հազար դոլար: Միության անդամներն ու բարեկամները, մեծ խանդավառությամբ ընդունելով նախագահի առաջարկությունը եւ ցանկանալով հավերժացնել նրա անունն ու գործը, կառուցվելիք ավանը որոշեցին կոչել Նուպարաշեն:

Հանգանակության սկիզբը շատ տպավորիչ էր եւ խոստումնալի: «Միութիւն» ամսագիրը 1928թ. առաջին համարներից մեկում պատմում էր Նյու Յորքում Նուպարաշենի հանգանակության պաշտոնական բացման մասին. «...Ներկաները խանդավառութեամբ մասնակցած են հանգանակութեան եւ առաջին առթիւ գոյացած է շուրջ 102.000 տոլար: Կարեւորագոյն գումար արձանագրուողները եղած են՝ Գարակէօզեան եւ Կիլպենկեան հարազատները, 20.000-ական տոլար ...Տիգրան Խան Քէլէկեան՝ 6.250 եւ տ. Լեւոն Պապայեան՝ 2.500 տոլարով»:[56] Նույնպիսի մի հավաքի ընթացքում Չիկագոյում հանգանակվել էր 25 հազար դոլար:

Ամերիկահայերի այս նախաձեռնությունը մեծ արձագանք ունեցավ ոչ միայն սփյուռքում, այլեւ օտարների մեջ: 1929թ. ապրիլի 5-ի ուղերձում Ֆրիտյոֆ Նանսենը գրում էր. «Մեծ հաճոյքով կ'իմանամ թէ Ամերիկայի Հայերուն մէջ շարժում մը կայ գաղթականներու տեղաւորման համար Հայաստանի մէջ գիւղաքաղաք մը կառուցանելու եւ զայն Նուպարաշէն անուանելու, ի պատիւ Պօղոս Նուպարի, մեծանուն հայ հայրենասէրին եւ մարդասէրին: Հարկ չկայ ըսելու թէ ամենաջերմ կերպով կը համակրիմ այս ձեռնարկին: Չորս տարիէ ի վեր ես կ'աշխատիմ Ազգերու Ընկերութիւնը շահագրգռելու Հայաստանի հողերուն բարելաւման խնդրով, ինչ որ լաւագոյն լուծումը պիտի ըլլայ գաղթականներու հարցին: Իմ ջանքերուս արդիւնքը ինչ որ ալ ըլլայ, վստահ եմ թէ Հայերուն անձնուիրութիւնը իրենց պատմական հայրենիքին, ինչպէս նաեւ տառապեալ ազգակիցներու վիճակին բարւոքման եւ Երեւանի կորովի փոքրիկ Հանրապետութեան վերաշինութեան համար, անոնց ցոյց տուած քաջասրտութիւնը, հաստատակամութիւնը եւ զոհողութիւնը հիացում պիտի պատճառեն քաղաքակիրթ աշխարհին»:[57]

Այդչափ հաջող մեկնարկած հանգանակությունը չունեցավ, սակայն, նույնպիսի շարունակություն՝ նախատեսված գումարը հավաքվում էր չափազանց դանդաղ եւ դժվարությամբ: Դրա հիմնական պատճառը նույն այդ տարիներին ԱՄՆ-ում սկիզբ առած տնտեսական մեծ ճգնաժամն էր, որի զոհերը դարձան նաեւ մեծ թվով ամերիկահայեր: Համաձայն «Միութիւն» ամսագրի տվյալների, 1929թ. վերջերին հավաքված գումարը կազմում էր ընդամենը 153 հազար դոլար: Հանգանակության նման ընթացքը հարցականի տակ էր դնում ավանի կառուցման ծրագիրը ընդհանրապես: Հայաստանի իշխանությունները թեեւ տվել էին սկզբունքային համաձայնությունը, այնուամենայնիվ, ուղղակի կամ անուղակի ձեւով ձգձգում էին դրա իրականացումը: Այդ առիթով Վ.Համազասպյանը գրում էր. «Խորհրդային հայրենիքում շատ դժվար էր հայ խոշոր բուրժուազիայի դեմ ծավալված գաղափարական պայքարի պայմաններում հայ կապիտալիստի անունով ավան կառուցել: ...Հայաստանի կառավարությունը, չհրաժարվելով հանգանակած գումարներից, հողամասեր է առաջարկում Եղվարդի մոտակայքում, Մեծամորի շրջանում, Սարդարապատում, երկար ու բարակ վիճարկում ավանի անվանակոչության հարցի շուրջ, նույնիսկ առաջարկում, որ ավանի անունը թողնեն որոշելու նրա բնակիչներին, որին, առանց հապաղելու, համաձայնվում է Պողոս Նուպարը, միայն թե իր կենդանության օրոք կառուցված տեսնի ավանը: Նուպարաշենին հողամաս է տրամադրվում ոչ թե Սարդարապատում, որը առաջարկել էր ակադեմիկոս Ալ.Թամանյանը, այլ Երեւանին մերձ Նորագավիթ շրջանում»:[58]

Պողոս Նուպարը, կանխազգալով իր կյանքի մոտալուտ ավարտը, ձգտում էր անել հնարավոր այն ամենը, ինչը կնպաստեր Նուպարաշենի արագ կառուցմանը: Եվ դժվար չէ պատկերացնել այն հիասթափությունը, որ ապրեց նա, իմանալով հանգանակության ոչ հաջող, դանդաղ ընթացքի մասին: Ա.Թերզիպաշյանը պատմում է մի դեպքի մասին, որը տեղի էր ունեցել 1930թ. մայիսին, այսինքն, Պողոս Նուպարի մահից մոտ մեկ ամիս առաջ. «Փաշան՝ Մալէզեանի եւ Հէքիմեանի (նրա անձնական քարտուղարը - Էդ.Մ.) կը յայտնէ թէ՝ որովհետեւ գաղութահայութիւնը չկրցաւ 300.000 տոլարի (պետք է լինի 250.000 - Էդ.Մ.) հանգանակութիւնը գլուխ հանել, որոշած է ջնջել իր պայմանաւոր նուիրատուութիւնը... Մա-

լէզեան՝ լուրջ եւ յամառ, իր համոզկեր լեզուովը՝ անոր բանավարութեանը կը դիմէ, Հէքիմեան իր մտերիմկ եւ ընտանի ժպիտովը անոր զգացումներուն: Զուր կ'անցնին ե՛ւ մէկը ե՛ւ միւսը: Փաշան կը մնայ անդրդուելի եւ գրութեամբ մը նոյն օրը Բարեգործականին կը հաղորդէ իր որոշումը:

«Բայց կը թուի թէ Մալէզեանի խոսքերէն եւ Հէքիմեանի ժպիտէն մէկ մէկ բան մնացեր էին Փաշայի մէջ, վասնզի, յաջորդ օրը, ան՝ յանկարծ կը կանչէ Հէքիմեանը եւ կը հրամայէ անոր գրել երկու նամակներ – մէկը զուիցերիական Լոմպար Օտիէ պանքային՝ հաղորդելով որ քովը գտնուող իր 208.000 տոլարը փոխանցէ ՀԲ Ընդհ. Միութեան, մյուսը՝ ՀԲ Ընդհ. Միութեան, յայտնող թէ՝ Լոմպար Օտիէ պանքային կողմէն իրեն փոխանցուելիք 208.000 տոլարին 100.000 յատկացնէ Նուպարաշէնի ֆոնտին»:[59]

Նոյն 1930թ. ապրիլին եւ մայիսին՝ Երեւանում եւ Փարիզում Խորհրդային Հայաստանի կառավարության՝ ի դեմս ՀՕԿ-ի նախագահ Ս.Խանոյանի եւ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովի՝ ի դեմս Պ.Էսմերյանի (փոխատենապետ), Լ.Կյումուշկերտանի (գանձապետ) եւ Վ.Մալեզյանի (վարիչ-պատվիրակ) միջեւ վերջապես ստորագրվեց «Համաձայնագիր Նուպարաշեն տիպար ավանի կառուցման մասին»[60], որին հետեւեց Միության առաջին 50.000 դոլարի մասնավճարը: Իսկ արդեն ամռանը Երեւանի հարավային սահմանների մոտ սկսվեցին շինարարական աշխատանքները, որոնք ղեկավարում էր այդ նպատակով ստեղծված հատուկ հանձնախումբը՝ նախագծի հեղինակ, ակադեմիկոս Ա. Թամանյանի գլխավորությամբ:

Հաջորդ վեց տարիների ընթացքում Նուպարաշենին, նրա կառուցման հետ կապված բոլոր հարցերին առանձնահատուկ կարեւորություն էր տրվում Միության ղեկավարության եւ շարքայինների կողմից: Ավելին, այն բանից հետո, երբ հայրենակցական միություններին առաջարկվեց մասնակցել ավանի առանձին թաղամասերի կառուցմանը, ուր պետք է բնակվեին Արեւմտյան Հայաստանի համապատասխան բնակավայրերից բոնագաղթածները, Նուպարաշենը հայտնվեց շատ ավելի մեծ զանգվածի ուշադրության կենտրոնում: Պատահական չէ, որ սկսած 1930թ. Միության տարեկան հաշվետվություններում եւ այլ հրապարակումներում մեծ տեղ էր հատկացվում Նուպարաշենի հետ կապված տարբեր հարցերին: Ծանոթանալով այդ նյութերին՝ կարելի է տեսնել, թե ինչպես խանդավառությունը եւ ավանի արագ կառուցման հետ կապված հույսերը հետզհետե փոխարինվում էին իրավիճակի սթափ եւ զուսպ գնահատականներով:

1931թ. հուլիսին կայացած հերթական Ընդհանուր Ժողովում նշվում էր. «Նախապատրաստական աշխատութիւնները, շինուածանիւթերու

ապսպրանքներն ու մթերումները, եւ մանաւանդ յատակագիծներու պատրաստութիւնը լրացած ըլլալով, ներկայ շինարարական եղանակին շինութեանց գործին ձեռնարկուած է փութաջանօրէն, այնպէս որ այս ամառ 100-120 բնակարաններ կառուցուած կ'ըլլան, եւ հաւանօրէն Ցունաստանէն եւ ուրիշ տեղերէ ալ մաս մը աշխատաւոր գաղթականներ հոն կը փոխադրուին, անմիջապէս գործի լծուելու եւ կամաց կամաց Նուպարաշէնի մէջ տեղաւորուելու համար»:[61] Մեկ տարի անց, 1932թ. սեպտեմբերին Միության կողմից ներկայացված հաշվետվությունից պարզվում է հետեւյալ պատկերը. «Դժբախտաբար անցեալ տարուան շինարարական եղանակին ալ մեր ակնկալութիւնները չիրականացան, հակառակ մեր յաճախակի դիմումներուն... Հազիւ թէ վերակազմուած յանձնաժողովը Նուպարաշէնի շինութեանց սկսած էր նոր թափով մը, Զանգեզուրի շրջանին երկրաշարժը իր աղէտալի հետեւանքներով Կառավարութիւնը յանկարծ դրաւ նոր եւ անակնկալի ստիպողականութեանց առջեւ. անհրաժեշտ էր ամէնէն առաջ հազարաւոր աղէտեալներու համար բնակարաններ կառուցանել, որով եւ բոլոր ուշադրութիւնները այդ ուղղութեամբ կեդրոնացան»: Եվ որպես դրա հետեւանք՝ նախատեսված 100-120 բնակարանների փոխարեն «քսան բնակարաններ ամբողջովին եւ ութը կիսաշէն կառուցուեցան, նաեւ հիմերը դրուեցան բազմաթիւ շէնքերու, կարելի չեղաւ շօշափելի գործնական արդիւնք մը ձեռք բերել»:[62]

Նուպարաշենը կառուցվում էր դանդաղ եւ ոչ միայն վերը նշած պատճառներով: Մի կողմից, այդ նույն տարիներին Հայաստանում մի շարք խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների, մեծ թվով բնակելի շենքերի կառուցումը, մյուս կողմից՝ որակյալ աշխատուժի ու շինանյութերի մշտական պակասը եւ ուրիշ այլ հանգամանքներ մեծ չափով դժվարացնում էին ավանի կառուցումը: Կային եւ այլ պատճառներ, բայց այդ մասին ստորեւ՝ գրքի 6-րդ մասում:

5

1920-1930թթ. ՆԵՐԳԱՂԹԸ. Գ.ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

1924թ. ՀԲԸ Միության իրականացրած՝ 250 որբերի տեղափոխումը Խորհրդային Հայաստան մեծ ոգեւորություն առաջացրեց գաղթականության շրջանում: Սիրիայում, Պաղեստինում, Հունաստանում եւ այլ երկրներում ապաստանած հայերի մի զգալի մասը, հուսահատված իր ծայրաստիճան ծանր վիճակից, պատրաստ էր անմիջապես մեկնել Խորհրդային Հայաստան: Այդ պատրաստակամությունը, սակայն հակասում էր Հայաստանի իշխանությունների իրական հնարավորություններին եւ ամենակարեւորը՝՝ դասակարգային գաղափարախոսության վրա հիմնված ներգաղթի քաղաքականությանը:

Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը

1923թ. դեկտեմբերի 4-ին, ելույթ ունենալով Խորհրդային Հայաստանի բանվորների, գյուղացիների եւ կարմիրբանակայինների խորհուրդների 3-րդ համագումարում, Անդրկովկասյան հանրապետությունների ֆեդերացիայի (Անդրֆեդերացիա) ժողկոմի փոխնախագահ, Հայաստանի Ժողկոմխորհի նախկին նախագահ Ալ.Մյասնիկյանը ձեւակերպեց Հայաստան ներգաղթելու հիմնական նախապայմանը: Նկատի առնելով դրա կարեւորությունը՝ Ալ.Մյասնիկյանի ճառի համապատասխան հատվածը արտատպվեց սփյուռքահայ մամուլում, մասնավորապես Նյու Յորքի «Հայաստանի կոչնակ» թերթում. «Մեզ կը մեղադրեն թէ Խորհրդային Հայաստանը չի մտածում գաղթականների մասին. դա շատ հեշտ է պրո-

վոգացիայի համար: Իհարկէ մենք գաղթականութեան համար չենք մտածում այնպէս, ինչպէս մտածում էր Դաշնակցութիւնը: Մի րոպէում մենք բոլոր գաղթականութիւնը չենք կարող Հայաստան փոխադրել... Խորհրդային Հայաստանը այդ գաղթականութեան կ'ըսէ. Եթէ կ'ուզես երջանիկ ըլլալ եւ բախտդ կապել այս երկրի աշխատաւորութեան հետ, նախ պիտի փոխես քաղաքական ուղղութիւնդ, պիտի հեռանաս Դաշնակցութենէն եւ միանաս Խ. Հայաստանի աշխատավորութեան: Մենք կ'օգնենք ձեզի, կուտանք կրթութիւն, դու յառաջացիր համայնավարական գաղափարներով եւ կը յաջողիս»:[1] Մոտ մեկ տարի անց, Փարիզում տված իր մի հարցազրույցում Հայաստանի Երկրագործության ժողկոմիսար Ար.Երզնկյանը նույնպես շեշտում էր, որ ներգաղթի հիմնական նախապայմանը քաղաքական եւ գաղափարական հուսալիությունն է. «Հայաստանի դռները բաց են այն բոլոր հայերուն համար, որ կ'ուզեն Հայաստան երթալ՝ աշխատելու, եւ ոչ թէ փոլիթիք ընելու: Հայ ժողովուրդը եւ Խ.Հայաստան պէտք ունին բացարձակ խաղաղութեան, եւ ո՛չ թէ կուսակցական մարտնչումներու, քաղաքական ներքին թագուն կռիւներու: Այսպիսիներուն համար փակ են Հայաստանին դռները, եւ եթէ ներս սպրդին երկրին ներքին խաղաղութիւնը խանգարողներ, մենք... այդպիսիները կը ղրկենք ուրիշ տեղեր»:[2]

Խորհրդային իշխանությունների նման դիրքորոշումը կարելի է համարել բնական. ՀՀ Դաշնակցությունը՝ իրենց հիմնական քաղաքական հակառակորդը, շարունակում էր ժողովրդականություն վայելել Հայաստանում, ինչին մեծապես նպաստեց հենց իսկ բոլշեւիկյան իշխանությունների սանձազերծած կարմիր տեռորի քաղաքականությունը: Դրա ապացույցն էր 1921թ. փետրվարի 18-ի ժողովրդական ապստամբությունը, որից հետո բոլշեւիկները վերստին տիրացան իշխանությանը ապրիլ ամսին ռուսական բանակի օգնությամբ միայն: Ձգտելով վերջնականապես ամրապնդել իրենց իշխանությունը երկրում, արգելելով ազգային քաղաքական կուսակցությունների գործունեությունը եւ հետապնդելով նրանց անդամներին ու կողմնակիցներին, նրանք բնավ էլ մտադիր չէին Հայաստան ներգաղթելու հնարավորություն տալ բոլոր նրանց, որոնք այս կամ այն չափով առնչություն էին ունեցել նույն այդ կուսակցությունների հետ, լիներ դա Հայաստանում եւ կամ սփյուռքում: Հատկանշական է այդ առումով, որ Հայաստան ներգաղթել ցանկացողները նախապես պետք է լրացնեին հատուկ հարցաթերթիկներ, որտեղ կային եւ այսպիսի հարցեր. «Ի՞նչ կուսակցության եք պատկանում», «Որտե՞ղ եք եղել եւ ինչո՞վ էք զբաղվել 1914թ. մինչեւ 1931թ.» եւ այլն:

Քաղաքական եւ գաղափարական նման զտումից զատ Հայաստան ներգաղթելու գործում կար եւ մեկ այլ՝ տնտեսական խոչընդոտ: Ար.Երզնկյանը իր վերը հիշատակած հարցազրույցում ասում էր. «Հայ գաղթականութիւնները ներս ընդունելու համար Հայաստանին հիմնական պայմանները նպաստաւոր չեն: Երկիրը, փոքրիկ եւ աղքատիկ, չի կրնար գաղթականներու կարաւաններ ներս ընդունիլ, առանց ապահովելու այդ նորեկներուն համար, հող, բնակարան եւ ապրուստի նախնական միջոցներ: Այդ պատճառաւ, Հայաստանին ամէնէն առաջին եւ կենսական պէտքերէն մէկն է ճահիճներու չորացումը, որպէսզի տեղ բացուի նորեկներուն: Իսկ նորեկներ եթէ ունին ինքնապահ ըլլալու չափ ապահով միջոցներ, որպէսզի տնտեսական ներքին տագնապ չստեղծուի, Կառավարութիւնը կ'ընդունի զանոնք եւ կարելի եղած դիւրութիւնները կ'ընծայէ անոնց, որպէսզի տեղաւորուին»:[3] Ալ.Մյասնիկյանը, ելնելով երկրի տնտեսական ծանր վիճակից, առաջարկում էր. «Կ'ընդունինք գաղթականները, միայն թէ անոնք պէտք է գան իրենց միջոցներով: Այնքան արտասահմանեան ֆոնտեր կան, թող անոնց հատկացնեն, փոխադրութեան ծախքերը հոգալու համար»:[4]

Այն բանից հետո, երբ Միությունը սեփական միջոցներով Հայաստան տեղափոխեց իր որբանոցների 250 սաներին, Հայաստանի իշխանությունները որոշեցին, որ սփյուռքահայությունը պետք է հոգար տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը: Այսպիսով, սփյուռքահայությունը դառնում էր ներգաղթը կազմակերպող երկու կողմերից մեկը, իսկ նրա ֆինանսական աջակցությունը՝ ներգաղթի իրագործման կարեւոր նախապայման: Հնչակյան, Դաշնակցություն եւ Ռամկավար-Ազատական կուսակցությունները, որոնց ազդեցությունն ու դերը սփյուռքում այդ տարիներին շատ մեծ էր, եւ որոնք կարող էին մասնակցել ներգաղթի թե կազմակերպման եւ թե ֆինանսավորման գործին, զրկված էին այդ հնարավորությունից: Հայաստանի իշխանությունների համար սկզբունքորեն անընդունելի էր որեւէ հարաբերություն կամ համագործակցություն նրանց հետ: Հայ Առաքելական եկեղեցին, որը այդ շրջանում նոր էր սկսում կազմակերպվել սփյուռքում եւ սերտորեն համագործակցում էր հայ քաղաքական կուսակցությունների հետ, նույնպես անցանկալի գործընկեր էր խորհրդային իշխանությունների համար, հաշվի առնելով վերջինների հակակրոնական, հակաեկեղեցական քաղաքականությունը: Նման պայմաններում Հայաստանի խորհրդային իշխանությունները, ըստ էության, պարզապես դատապարտված էին համագործակցել հենց իսկ ՀԲԸ Միության հետ:

ՀԲԸՄ-ի օժանդակությունը

Հաշվի առնելով, որ այդ տարիներին առավել ծանր վիճակում էին հայտնվել Հունաստանում ապաստանած հայ գաղթականները, Միությունը որոշեց առաջին հերթին անհրաժեշտ գումարներ հատկացնել նրանց Հայաստան տեղափոխելու համար: Արդեն 1925թ. Միության հատկացրած միջոցներով (5000 անգլ. ոսկի) հնարավոր եղավ կազմակերպել Հունաստանում, ինչպես նաեւ Կ.Պոլսում եւ Միջագետքում ապաստանած գաղթականների մի մասի (համապատասխանաբար՝ 3119, 700 եւ 371) ներգաղթը Հայաստան: «Ասոնցմէ մեծամասնութիւնը, գլխաւորապէս բանւորներ եւ արհեստաւորներ, ինքնակամ ցրուեցան գաւառները ու քաղաքները եւ անցան աշխատանքի, իսկ 1086 մարդ (361 ընտանիք), որ գիւղացիներ էին, հաստատուեցան Արազդայանի շրջանին մէջ, չորս գիւղի բաժնուած - Արազդայան, Արմաշ, Արվաշ եւ Ամօ: Այս գաղթականները, որոնց մէջ 80 ծխախոտագործ եւ շերամապահ կը գտնուէին, այնքան օգտակար տարր մը հանդիսացան Հայաստանի շինարարութեան գործին, որ Կառավարութիւնը որոշում տուաւ 1926-ին ալ աւելի մեծ թիւով գաղթականներ փոխադրել Հայաստան»:[5]

Ներգաղթի համար հանգանակություններ կազմակերպելու առումով մեծ էր Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերի դերը, ավանդաբար այստեղ է որ հավաքվում էր անհրաժեշտ գումարների ճնշող մասը: 1926թ. միայն Նյու Յորքի շրջանային հանձնաժողովի կազմակերպած «Դեպի Հայաստան ներգաղթի հանգանակության» արդյունքը եղավ շուրջ 12 հազար անգլ. ոսկի, որը նույն թվականի հուլիսին հանձնվեց Փարիզ ժամանած Հայաստանի ժողկոմխորհի ներգաղթի լիազոր Դ.Շահվերդյանին եւ Փարիզում Խորհրդային Միության լիազոր ներկայացուցչության քարտուղար Ս.Փիրումյանին: Փոխադարձ համաձայնությամբ այդ գումարը հատկացվելու էր Հունաստանից, ինչպես նաեւ Սիրիայից շուրջ 300 գաղթականներին Հայաստան փոխադրելու աշխատանքին: Սակայն նույն 1926թ. Հայաստանում տեղի ունեցավ Շիրակի երկրաշարժը եւ նշված խմբի ներգաղթը դարձավ անհնար: Օրախնդիր էր ի նպաստ աղետյալների հանգանակության կազմակերպումը: «...Մեր ժողովուրդը հարուածող նոր եւ ահաւոր աղէտքին առջեւ, վստահ եմ,- ասում էր Պողոս Նուպարը Միության Ընդհանուր Ժողովում,- որ ամէն բանէ առաջ պիտի ուզէք ձայնակցիլ ինձ՝ հազիւ վերականգնած եւ տակաւին արիւնաքամ Հայաստանը աւերող երկրաշարժի զոհերուն ղրկելու համար մեր ցաւակցութիւնը իրենց սոսկալի տառապանքին առթիւ: Կ'առաջարկեմ ձեզ ուրեմն հեռագիր մը ղրկել Երեւանի Կառավարութեան, յանուն այս ժողովին: Աղէտքին լուրը

առնելուն պէս, Միութիւնը կարելին ըրաւ օգնութեան հասնելու համար աղէտեալներուն: Նախ անոնց յատկացուց իր բոլոր տրամադրելի գումարը, եւ նոյն հետայն հանգանակութեան ձեռնարկեց Ամերիկայի, Եգիպտոսի եւ Եվրոպայի մէջ, որուն արդիւնքը հետզհետէ Կառավարութեան պիտի յանձնուի»:[6] Նման հանգանակություններ կազմակերպվեցին սփյուռքի բոլոր համայնքներում, ամենատարբեր կազմակերպությունների կողմից: Եվ այնուամենայնիվ, Միության մասնակցությունը առավել շոշափելի էր, եւ 1926թ. տեղեկագրում հասկանալի հպարտությամբ նշվում էր. «Հայաստանին Խորհրդարանին ներկայացուած հաշիվներուն համաձայն, «ընդհանուր առմամբ մոտ կէս միլիոն ռուպլի է հաւաքուած արտասահմանի մէջ»: Արդ, այդ գումարին մէջ, Բարեգործականի խողովակով եղած նուիրատուութիւնները աւելի քան 200.000 ռուպլի կը հասնին, եւ եթէ հաշուի առնենք, որ արտասահմանի նուիրատուութեանց ընդհանուր գումարին մէջ ամերիկեան Նիր Իսթ Ըլիյֆը իր խոշոր բաժինը ունի, կը տեսնուի թէ արտասահմանի հայութեան օժանդակութեան մէջ ինչքան գերակշիռ դեր կատարած էր Բարեգործական Միութիւնը»:[7]

Շիրակի երկրաշարժի հետեւանքով հետաձգված ներգաղթը վերսկսեց 1927թ. վերջին, երբ Հունաստանից եւ Կ.Պոլսից մոտ 1600 գաղթականներ ներգաղթեցին Հայաստան: Ներգաղթողները՝ ծնունդով Ատաբազարի, Բուրսայի եւ Սեբաստիայի շրջաններից, լինելով արհեստավորներ, շերամաբույծներ եւ այլն, առաջին իսկ օրից աշխատեցին իրենց մասնագիտությամբ: Սակայն նախնական համաձայնությունը ամբողջովին իրականացնել չհաջողվեց. «Ցաւալի է որ, հակառակ մեր հետապնդումներուն, կարելի չէ եղած փոխադրել Սուրիայէն եւս գաղթականներ, որով յուսախաբ մնացած են Քորփեցի, Հապուսցի եւ Կիւրինցի գաղթականները: Այս մասնայատուկ ներգաղթին համար եւս Ամերիկայէն մեզի տրամադրուած էր 7.427 տոլարի գումար մը, որուն մէկ մասը հարկադրուեցանք վերադարձնել»:[8]

1931թ. օգոստոսի 10-ին Հայաստանի իշխանությունները ընդունեցին «ՀԽՍՀ սահմանները արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» որոշումը, որից հետո ներգաղթը նոր թափ ստացավ: Համաձայն այդ որոշման, Հայաստանի Ժողկոմխորհին առընթեր՝ Ար.Երզնկյանի գլխավորությամբ, ստեղծվեց ներգաղթի հատուկ հանձնաժողով, որին հանձնարարվում էր լուծել ներգաղթի հետ կապված բոլոր տեսակի հարցերը՝ ներգաղթողների թիվը, անցկացման ժամկետները, բնակության վայրը եւ այլն:[9] Այդ օրերին Հայաստանի ժողկոմխորհի նախագահ Ս.Տեր-Գաբրիելյանը իր մի հարցազրույցում հատուկ ընդգծում էր. «Անշուշտ ներգաղթի դեպքում եւս լիովին իր գործա-

դրությունն է ունենալու խորհրդային իշխանության դասակարգային քաղաքականությունը: Խորհրդային Հայաստան կարող են գալ միայն իրապես աշխատավոր տարրերը, որոնք իրենց առաջ ազնվորեն նպատակ են դնում ձուլվել մեր երկրի ամբողջ աշխատավորությանը, ընդունելով ու գործադրելով արտադրության հանրային եղանակը, որն արագորեն ամրանում ու վերջնականապես հաստատվում է մեր ամբողջ երկրում»: Եվ հակառակը՝ «...միջազգային բանվորության հայրենիքում տեղ չեն կարող ունենալ Հայաստանի աշխատավորության եւ միջազգային բանվորական բանակի թշնամիները, արյունռուշտ իմպերիալիստների վարձկան՝ դաշնակցական թափթփուկները»:[10]

Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ խոսելով սփյուռքահայ կազմակերպությունների, նրանցից ակնկալվող ֆինանսական օժանդակության մասին՝ Հայաստանի կառավարության նախագահը հիշատակում է միայն հայրենակցական միությունները եւ ՀՕԿ-ը, բայց ոչ ՀԲԸ Միությունը: Նման մոտեցումը մի կազմակերպության հանդեպ, որը սկսած 1921թ. բազմաբնույթ գործունեություն էր ծավալել երկրում, պատահական չէր: Հայաստանի իշխանությունների տեսակետից Միությունը այդպես էլ չէր արդարացնում իրենց սպասելիքները՝ կապված ազգային-քաղաքական դիրքորոշման հետ, ավելին՝ այն համառորեն ձգտում էր պահպանել իր ինքնուրույնությունը եւ մերժում էր որեւէ թելադրանք իր գործելակերպի հանդեպ: ՀԲԸ Միությունը, նրա ղեկավարությունը, անշուշտ, գիտակցում էին Հայաստանի այդպիսի, ոչ համարժեք վերաբերմունքը, բայց դա չազդեց երկրի վերաշինությանը ուղղված նրանց գործունեության վրա:

Հայաստանի իշխանությունների վերոհիշյալ որոշումից մեկ ամիս անց, տեղի ունեցավ Ս.Տեր-Գաբրիելյանի այցը Փարիզ, ինչը դրական ազդեցություն ունեցավ նոր ներգաղթի արագ կազմակերպման առումով: Թեեւ վարչապետը իր երեւանյան հարցազրույցում նույնիսկ չէր հիշատակել Բարեգործականի անունը, Փարիզ հասնելուն պես, նա առաջինը հանդիպեց Միության նախագահ Գ.Կյուլպենկյանի հետ, դրանով իսկ, կարծես, ընդունելով Միության կարեւորությունը: Բացի այդ, Հայաստանի ժողկոմխորհի նախագահը հետագա օրերին մի քանի անգամ այցելեց Միության կենտրոնատեղին, ուր մանրամասն քննարկեց նախապատրաստվող ներգաղթի հետ կապված հարցերը: Վստահեցնելով, որ կառավարությունը որոշել է ընդունել 6.000 գաղթականներ Հունաստանից եւ Բուլղարիայից, որոնց համար արդեն ապահովված էին բնակարաններն ու աշխատատեղերը, վարչապետը միեւնույն ժամանակ իր համաձայնությունը տվեց ընդունել եւս 4.000 գաղթական, եթե արտասահմանի հայությունը ֆինանսավորի նրանց համար բնակարանների կառուցումը Հայաստանում: Տունդարձի ճանապարհին Ս.Տեր-Գաբրիելյանը Բեոլինից հեռագրեց Երեւան. «Անմիջապես միջոցներ ձեռք առեք 6.000 ներգաղթողներ ընդունելու եւ տեղավորելու համար Ղուերում, Արթիկ-Տուֆում, Անի-Պեմզայում եւ Ջորագէսում: Միաժամանակ երկու հոգի ուղարկեցեք Աթենք ներգաղթի աշխատանքներն արագացնելու եւ ղեկավարելու»:[11]

Այս հանդիպումներից հետո, ներգաղթը Հայաստան համարելով օրվա կարգախոս, Միությունը ծավալեց ակտիվ գործունեություն: 1931թ. սեպտեմբերի 30-ին Միության նախագահ Գ.Կյուլպենկյանը դիմեց սփյուռքահայությանը հատուկ կոչով, ուր ասվում էր. «Այն պահուն որ համաշխարհային տնտեսական տագնապը, օրէ օր աւելի շեշտուելով, գաղութահայութեան կեանքին վրայ կը ճնշէր, Հայաստանի Կառավարութիւնը մասսայական ներգաղթի բարեդէպ որոշումովը կուգայ լայնօրեն բանալ մայր-հայրենիքին դուռները անտիրական եւ աստանդական գաղթականներուն առջեւ: 10.000 չքաւոր եւ գործազուրկ գաղթականներ քանի մը ամսուան միջոցին Հայաստան պիտի փոխադրուին. առաջին կարաւանին պիտի յաջորդեն ուրիշ խումբեր, քանի նիւթական կարելիութիւններ ստեղծուին: Ասիկա պատմական մեծ դէպք մըն է, որուն բարձր նշանակութիւնը ամէն հայ խորապէս կ'ըմբռնէ: Աւելորդ է ըսել որ թշուառութեան եւ անստուգութեան մատնուած հազարաւոր վտարանդի եւ հայրենաբաղձ հայրենակիցներու փրկութեան այս գործին ՀԲԸ Միութիւնը անվերապահօրէն կը լծուի:

«Ցայտնի է նաեւ որ վերջերս համաձայնութիւն կայացուցած էինք Ժընէվի Գաղթ. Նանսենեան Միջազգ. Պաշտօնատան հետ, որ կը գործէ Ազգերու Ընկերութեան հովանիին ներքեւ, մինչեւ 1933 բնակարաններ ապահովելու, Պէյրութի եւ Հալէպի նեխոտ քէմբերուն փլուզումին հետեւանքով բոլորովին անապաստան 15.000 գաղթականներուն համար, յանձն առնելով իբրեւ հայկական մասնակցութիւն տրամադրել 10.000 ոսկիի գումար մը:

«Այս երկու մեծ ծրագիրները, որոնց շնորհիվ 25.000 գաղթականներ վաղընդփոյթ պիտի փրկուին, կը պահանջեն սակայն մեծ զոհողութիւններ... 25.000 գաղթականներու փրկութեան գործին համար կը նախատեսենք առնուազն 75.000 տոլարի գումար մը, որուն շուրջ մէկ երրորդը միայն կրցանք ապահովել. մնացեալին համար մեր յոյսը կը դնենք ամէն հայու օժանդակութեան վրայ. թո՛ղ ամէն ոք գիտակցի իր պարտականութեան եւ ի գին ամէն զոհողութեան սոյն կենսական գործերուն բերէ իր բաժինը, որքան ալ համեստ ըլլայ:

«Միութեանս մէն մի Մասնաճիւղը, ինչպէս նաեւ Բարիզի Ընդհ. Տնօրէնութիւնը, Նիւ Եորքի եւ Գահիրէի Շրջանակային Ցանցնաժողովները, երախտագիտութեամբ պիտի ընդունին ոեւէ գումար զոր սրտցաւ հայրենակիցներ եւ ազգանուէր կազմակերպութիւններ այս նպատակին համար պիտի փութան դնել մեր տրամադրութեան ներքեւ»:[12]

Հաշվի առնելով, որ ներգաղթի գործում գլխավոր դժվարությունը տեղափոխման միջոցների՝ շոգենավերի հարցն է, Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը ընկերակցությամբ Գաղթականների կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր քարտուղար Լ.Բաշալյանի (նա միաժամանակ Միության պատվիրակն էր Ժնեւում տեղակայված միջազգային կազմակերպություններում) Ժնեւում հանդիպումներ ունեցավ Բուլղարիայի եւ Հունաստանի վարչապետներ Ա.Մալինովի եւ Է.Վենիզելոսի հետ, որոնք խոստացան իրենց կառավարությունների օժանդակությունը շոգենավերը ձրի տրամադրելու գործում: Բանակցություններ տեղի ունեցան նաեւ Նանսենյան գրասենյակի, Կարմիր Խաչի եւ բարեսիրական այլ կազմակերպությունների հետ, որոնց արդյունքում հնարավոր դարձավ հաղթահարել հազարավոր գաղթականների փոխադրման հետ կապված մի շարք դժվարություններ:

1931թ. նոյեմբեր ամսին Աթենք է ժամանում Հայաստանի կառավարության լիազոր-պատվիրակ Դ. Շահվերդյանը, որը երեք տեսակի հարցարանների հիման վրա սկսում է կազմել ներգաղթել ցանկացողների նոր ցուցակներ: Դա, ինչպես նաեւ նրա բանակցությունները Հունաստանի կառավարության եւ Խորհրդային Միության դեսպանատան հետ, պատճառ հանդիսացան, որ ներգաղթողների առաջին՝ իրենց իսկ բառերով ասած, կարավանը մեկնի Պիրեայից դեկտեմբերի 30-ին միայն: Պայմանավորվածության համաձայն Հունաստանի կողմից ձրի տրամադրված նավի վրա էին 1923 գաղթականներ, ներառյալ ՀԲԸ Միության Բեյրութի, Նիկոսիայի եւ Երուսաղեմի հաստատությունների նախկին 135 որբ-սաները, ինչպես նաեւ հապուսցի գաղթականներ, որոնց տեղափոխության հետ կապված բոլոր ծախսերը հոգաց Միությունը: «Կանխահոգ բոլոր միջոցները ձեռք առնուած էին գաղթականներուն տեղաւորումին եւ պարենաւորումին համար,- նշվում էր Միության 1932թ. տեղեկագրում,- Նանսենեան օֆիսին ներկայացուցիչ Մ.Քոթելնիքոֆի եւ մեր պատուիրակին՝ Օննիկ Թադէոսեանի գործակցութեամբ, այդ երկու կազմակերպութիւնները ստանձնած ըլլալով բոլոր ծախքերը»:[13] Խոսելով այս խմբի ներգաղթի կազմակերպման մասին՝ «Միութիւն» ամսագիրը հատուկ ընդգծում էր հունական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը. «Կարմիր Խաչերու Միջազգային Լիկան եւ մասնաւորաբար Հելլէն

Կարմիր Խաչը ցոյց տուած են գնահատելի հոգածութիւն, մանուկներու համար յանձնելով 6.239 կտոր գործածուած հանդերձեղէն, 200 նոր հագուստ, 9 սնտուկ կաթ, իսկ չքաւոր գաղթականներու՝ 100 նոր վերարկու եւ 500 անկողնի ծածկոց: Սովիէթական Դեսպան Վ.Բոթեմքին եւ կինը, ինչպէս նաեւ Հայաստանի լիազօր քաղ. Շահվերտեան եւ օգնականը քաղ. Գարտաշեան, Միութեանս պատուիրակը Տ.Թադէոսեան, հելլէն եւ օտար մամուլի ներկայացուցիչներ, կառավարական եւ ոստիկանական պաշտօնեաներ, եւ բազմաթիւ ազգայիններ շոգենաւ գացած էին ողջերթի համար»:[14]

Ներգաղթողների երկրորդ՝ 1250 գաղթականներից բաղկացած կարավանը նույն նավով մեկնեց 1932թ. փետրվարի 23-ին: «Ինչպէս առաջին անգամ, այս կարաւանին ալ Բիրէի մէջ ընծայուեցաւ ամէն օժանդակութիւն: Միջազգային Կարմիր Խաչի կողմէ անկողնի ծածկոցներ բաշխուեցան, եւ փոքրիկներուն համար եւս տուփերով խտացած կաթ: Գաղթականները ճամբայ ելան մեծ խանդավառութեամբ, շոգենաւին կամրջակին վրայէն երիցս գոռալով «Կեցցէ՛ Յունաստան, կեցցէ՛ Հայաստան»: Աւելորդ է ըսել թէ առաջին օրէն սկսեալ մեր Միութիւնը ներգաղթին համար ըրաւ ինչ որ կարելի էր, չի զլանալով իր բարոյական եւ նիւթական ամենալայն օժանդակութիւնը.- գրում էր «Միութիւնը»,- դժբախտաբար, անիկա միանակը մնաց, որպէս ազգային կազմակերպութիւն, տրամադրելու համար պէտք եղած դրամը այսքան ծանրահոգ ձեռնարկի մը յաջողութեան համար»:[15]

1932թ. ընթացքում Հայաստան մեկնեց եւս երկու կարավան՝ ապրիլի 25-ին՝ 1662 եւ հուլիսի 17-ին՝ 1550 գաղթականներով: Իսկ այս առաջին խմբի հինգերորդ եւ վերջին կարավանը մեկնեց Պիրեայից 1933թ. հունվարի 2-ին «Էլէնի Էմպէրիքու»՝ այս անգամ արդեն վարձված շոգենավով, որի համար Միությունը վճարել էր 600 անգլ. ոսկի: Այս նավով, որը ճանապարհին կանգ առավ նաեւ Սալոնիկում եւ Բուրգասում, Հայաստան ներգաղթեց 1423 մարդ, որոնցից 96-ը՝ Ֆրանսիայից, 350-ը: Հունաստանից եւ 967-ը՝ Բուլղարիայից:[16] «Միութիւն» ամսագիրը, նշելով, որ Բուլղարիայից մեկնող հայերը իրենց հետ որպես նվեր Հայաստանին տանում էին «12 վակոն ատաղձ, 150 սնտուկ գամ եւ 6 օթոմոպիլ», գրում էր. «Պուլղարիոյ համեստ գաղութը ցնցող դաս մը կուտայ աւելի բախտաւոր գաղութներուն, որ տակաւին անշարժութեան մէջ գամուած կը մնան»:[17]

Հակառակ սպասվածի, սփյուռքահայության ֆինանսական օժանդակությունը 1931-1933թթ. ներգաղթին եղավ ոչ մեծ, ինչի հիմնական պատճառը Արեւմուտքի երկրներում շարունակվող ուժեղ տնտեսական

ճգնաժամն էր: «Դժբախտաբար նիւթական տեսակէտով մեր Միութիւնը մինակը մնաց, որպէս ազգային կազմակերպութիւն, յատկացնելով պէտք եղած դրամը այս ձեռնարկին յաջողութեան համար, երբ կ'ակնկալէր որ ուրիշ մարմիններ եւս, իր միջոցաւ կամ ուղղակի բերէին իրենց նիւթական մասնակցութիւնը»:[18]

Հաջող սկիզբ առած ներգաղթը, որի արդիւնքում 1931թ. դեկտեմբերից մինչեւ 1933 հունվարը շուրջ 8.000 գաղթականներ ներգաղթեցին Հայաստան սակայն ընդհատվեց: Ի պատասխան Միության դիմումներին, Հայաստանի իշխանությունները ներգաղթի դադարեցումը պատճառաբանում էին անհրաժեշտ քանակությամբ բնակարանների բացակայությամբ եւ նորից հիշեցնում էին. «Բնակարանային շինութիւններու ի նպաստ արտասահմանեան բացառիկ օժանդակութիւն մը միայն կարող է մօտաւոր ապագայի մէջ հնարաւորել ներգաղթի շարունակութիւնը, այլապէս ներգաղթը գէթ այս տարի հաւանական չէ»:[19] Հայաստանի իշխանությունների նման դիրքորոշումը խիստ մտահոգիչ էր սփյուռքի համար: Տասնյակ հազարավոր գործազուրկ, չքավոր եւ անտուն գաղթականներ պատրաստ էին անմիջապես մեկնել Հայաստան, բայց ...Ստեղծված իրավիճակում Միությունը, հույս չդնելով ազգային այլ կազմակերպությունների, նոր հանգանակությունների վրա, 1933թ. Հայաստանի կառավարությանը ուղարկեց 5.000 անգլ. ոսկի «...բնակարաններու շինութեան համար, որպէսզի առ առաւելն մինչեւ վեց ամիս վերջը գէթ 2.500 գաղթականներու փոխադրութիւնը ապահովուի ...ՀԲԸ Միութիւնը այս քայլը առաւ այն վստահութեամբ որ Հայաստանի Կառավարութիւնը իր բարեացակամութեան նոր եւ հզօր ապացոյցը պիտի տայ՝ սոյն առթիւ ալ վերահանձնօրէն ընդունելով քանի մը հազար գաղթականներ որ փրկութեան ուրիշ միջոց չունին»:[20] Միության այս քայլին հետեւեց Հայաստանի իշխանությունների մի նոր նամակ-բացատրությունը, ապա նորից Միության դիմումը ներգաղթը արագացնելու խնդրանքով, եւ այսպես, ամիսներ շարունակ:

Այն հանգամանքը, որ Հայաստանի կառավարությունը ներգաղթի հարցով դիմում էր հատկապես ՀԲԸ Միությանը, վկայում էր, որ չնայած բոլոր վերապահումներին, խորհրդային իշխանությունները այնուամենայնիվ Միությունը դիտում էին որպես սփյուռքի միակ հեղինակավոր կազմակերպությունը, որը իր հնարավորությունների սահմաններում ամեն կերպ նպաստում էր ներգաղթի իրականացմանը: Նույն պես էր ընկալվում Միությունը եւ սփյուռքում՝ Հայաստան ներգաղթելու խնդրանքով նրան էին դիմում հազարավոր մարդիկ եւ հենց նրան էին ուղղվում բոլոր տեսակի բողոքները՝ իրենց ծայրահեղ դրսեւորումներով: Այդպիսի մի

դեպք արձանագրվել էր 1932թ. «Անգործութեան եւ թշուառութեան հետեւանքով գերագրգռուած գաղթականներ եւ մասնաւորապէս որբեր, Մակեդոնիոյ շրջաններէն Սելանիկ խուժած էին, հակառակ քանիցս հրատարակուած զանազան յայտարարութեանց թէ՝ ոչ ոք պէտք է տեղէն շարժի, անոնք իրենց անվերջ դիմումներով անտանելի դարձուցած են Ազգ. Վարչութեան եւ Միութեանս մասնաժողովի վարիչներուն դիրքը: Ատոնցմէ գլխաւորաբար 140 «չափահաս որբեր» Աթէնք երթալով հոն շարունակած են իրենց պահանջները ներկայացնել, աւելի խստօրէն, այնպէս որ Սելանիկի եւ Աթէնքի մեջ եղած յարձակումներէն սահմոկողները հրաժարած են իրենց ազգային պաշտօններէն: Փութացինք հեռագրել Աթէնքի մեր ներկայացուցիչներուն որ այդ որբերը առժամաբար պատսպարուին Միութեանս կողմէ»:[21]

Շատ ավելի մտահոգիչ էին, սակայն, դեպքերը Հայաստանում, որոնց մասին Միությանը տեղեկացնում էր Ս.Տեր-Գաբրիելյանը իր 1933թ. սեպտեմբերի 4-ի նամակով. «...32-33 թվերին ներգաղթողների մեջ եղան առանձին տարրեր, որոնք... դեռեւս չեն կարողացել կամ ցանկացել կապվել ու հարմարվել իրենց տրամադրված աշխատանքներին, գերադասում են հաճախակի փոխել աշխատանքի վայրը, մեկ ավանից մյուսն անցնել: Հիշյալ տարրերը բացառապես այն շերտերից են, որոնք վերջին տարիների ընթացքում արտասահմանում կտրված են եղել արտադրական աշխատանքից, զբաղվել են մանր առեւտրով... մարդիկ, որոնց մեջ խոր արմատներ է թողել նպաստընկալի հոգեբանությունը»: Եվ ամենակարեւորը՝ «Հայաստանից փախուստ տալու մի քանի դեպքերը ...այս շրջաններից են դուրս եկել»:[22] Մինչդեռ, նշված դեպքերի իրական պատճառներն այլ էին: Ներգաղթի պատմությանը նվիրած իր մենագրության մեջ Հ.Մելիքսեթյանը հատուկ նշում էր ներգաղթածների «նյութական եւ կենցաղային վատ պայմանները», պետական հիմնարկությունների «ոչ հոգատար, բյուրոկրատական» վերաբերմունքը նրանց կարիքների նկատմամբ եւ այլն: Նման երեւույթների համատարած բնույթի մասին է վկայում այն փաստը, որ նույն՝ 1933թ. սեպտեմբերի 21-ին (այսինքն, Ս.Տեր-Գաբրիելյանի նամակից մոտ երկու շաբաթ անց) Հայաստանի Կոմկուսի կենտկոմի քարտուղարությունը հատուկ քննարկման առարկա է դարձնում «Ներգաղթածների դրության եւ նրանց հետ տարվող աշխատանքների մասին» հարցը: Ընդունված որոշման մեջ խիստ քննադատության էին ենթարկվել մի շարք կենտրոնական եւ տեղական կառավարման մարմիններ՝ նախապես ընդունված որոշումները չիրագործելու համար: Որոշումով ստեղծվում էր ներգաղթածների շրջանում աշխատանքի հատուկ կոմիտե, իսկ կառավարությունից պահանջվում էր «արագացնել

հայրենադարձների բնակարանային շինարարությունը, բարելավել նրանց բժշկական սպասարկումը, օգնել հագուստեղենով ու կոշիկներով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկել դպրոցներում... »[23] եւ այլն:

Խորհրդային Հայաստանի իշխանությունների համար տեղի էր ունենում անսպասելի եւ որոշ իմաստով անհասկանալի մի երեւույթ: Մարդիկ, որ ինքնակամ, մեծ ոգեւորությամբ ներգաղթել էին երկիր, կարճ ժամանակ անց սկսում էին արտահայտել իրենց հստակ դժգոհությունը կյանքի պայմաններից: Սպասվում էր, որ նրանց ծանր վիճակը մինչ այդ ապաստանած երկրներում, կթելադրի նրանց առնվազն հաշտվել Հայաստանում տիրող պայմանների հետ: Ներգաղթածների մի զգալի մասը, սակայն, չէր ցանկանում հաշտվել սոցիալական անարդարության, անձնական նախաձեռնության սահմանափակումների, բազմաթիվ պարտադրանքների, արգելքների եւ նմանատիպ այլ երեւույթների հետ, որոնք խորհրդային կարգերի հաստատումից հետո անցած շուրջ 10 տարիների ընթացքում տեղի բնակչության համար արդեն դարձել էին եթե ոչ բնական, ապա անխուսափելի: Ներգաղթածների կամ «նորեկների» նման տրամադրությունները եւ դիրքորոշումները ինքնին անցանկալի էին իշխանությունների համար, բայց առավել վտանգավոր էր դրանց տարածումը հիմնական ազգաբնակչության շրջանում, ինչը հղի էր հասարակության մեջ սոցիալ-քաղաքական լարվածության սպառնալիքով: Հայաստանի խորհրդային իշխանությունները անշուշտ գիտակցում էին այդ վտանգը, ինչի վկայությունն են վերոհիշյալ եւ նման այլ որոշումները, որոնք նպատակ ունեին բավարարել ներգաղթածների միայն ամենատարրական պահանջները եւ ոչ ավելին: Բայց նույնիսկ այդ մասնակի խնդրի լուծումը դառնում էր գրեթե անլուծելի, հաշվի առնելով երկրի տնտեսական ծանր վիճակը: Նման պայմաններում Հայաստանի իշխանությունները նպատակահարմար համարեցին պարզապես հետաձգել հետագա ներգաղթը եւ սահմանափակել ներգաղթողների թիվը:

Ներգաղթը վերսկսելու վերաբերյալ Միության դիմումները Հայաստանի կառավարությանը չէին դադարում, ավելին, Միությունը այդ նույն նպատակով ուղղակի կապ հաստատեց նաեւ Ժնեւում Խորհրդային Միության պատվիրակության անդամների հետ: 1934թ. Միության ընդհանուր ժողովին ներկայացված հաշվետվության մեջ նշվում էր. «...Մեզի հաղորդուեցաւ թէ Ժընէվի Խորհրդային պատուիրակները յայտարարած են թէ Խ.Միութեան Կեդր. Կառավարութիւնը սկզբունքով համամիտ է հայերու Խ.Հայաստան ներգաղթին, բայց չի կրնար նիւթական օժանդակութիւն ընծայել»:[24] Նոյն տարվա դեկտեմբերի վերջին Ս.Տեր-Գաբրիելյանին դիմեց ՀԲԸ Միության նորընտիր նախագահ՝ հանգուցյալ Պողոս

Նուպարի որդի Զարեհ Նուպարը: «Պատիւ ունիմ,- գրում էր նա,- ներկայ գրութեամբ պարզելու տխուր վիճակը գաղութահայ աշխատաւորներուն, որ մինչեւ ցարդ կրցած էին իրենց յուսահատ աշխատանքով դիմագրաւել համաշխարհային տնտեսական տագնապին դժուարութեանց, բայց զանազան երկիրներու եւ մինչեւ իսկ Ֆրանսայի մէջ վերջերս գործադրուած հակաօտարական օրէնքներուն խստութեան տակ ծանր ճնշումներու ենթարկուած են, այնպէս որ անկանոն թուղթեր ունեցողները կը վտարուին, իսկ աշխատելու արտօնութիւն ունեցողներն իսկ մեծ մասամբ կը զրկուին աշխատելու տարրական իրաւունքէն»: Այնուհետեւ, բարձր գնահատելով Հայաստանի կառավարության բարյացակամությունը ներգաղթի հարցում եւ նշելով, որ իրավազուրկների համար միայն հայրենիքում կարող են ստեղծվել լավագույն հնարավորություններ, Զարեհ Նուպարը գրում էր. «Ուստի եւ թախանձագին կը խնդրենք, յարգելի Նախագահ, որ գարնան առաջին օրերուն իսկ քանի մը հազար աշխատաւորներու առջեւ լայն բանաք Խ. Հայաստանի դուռները, եւ այս մասին Ժողկոմխորհի բարեհաճ որոշումն ու կարգադրութիւնները այժմէն իսկ ազնուութիւնը ունենաք մեզի հաղորդելու, որպէսզի ըստ այնմ նախապատրաստական աշխատութիւնները կատարենք եւ փոխադրութեան ծախքերը տրամադրենք»: Եվ ապա. «Նկատելով որ ներգաղթի հարցը պետական եւ նոյն իսկ միջազգային հանգամանք ունի, քանի որ Ազգերու Ընկերութեան Ընդհ. Ժողովը ամէն տարի կը քուէարկէ հայերու ներգաղթի բանաձեւ մը, վերջերս մեր յանձնարարութեամբ մեր Ժընէվի պատուիրակը տեսակցութիւններ ունեցած է այդ խնդրոյն նկատմամբ Խորհրդային Միութեան պատուիրակներուն հետ, որ խոստացած են Մոսքուայի մէջ հարցը դնել պետութեան սեղանին վրայ, վճռական լուծում մը հետապնդելու համար»:[25] Նույն հարցով Զարեհ Նուպարը դիմեց նաեւ հաջորդ՝ 1935թ. սկզբին Հայաստանի Ժողկոմխորհրդի նոր նախագահ Ա.Գուլոյանին, բայց միայն աշնանը Երեւանից Փարիզ ժամանեց Դ.Շահվերդյանը՝ ֆրանսահայերի ներգաղթը իրականացնելու նպատակով:

Հայաստանի իշխանությունները պաշտոնապես հայտարարել էին, որ պատրաստ են ընդունել 1.200 գործազուրկ հայ գաղթականներ Ֆրանսիայից, մինչդեռ, ցանկացողների թիվը շուրջ 7.000 էր: Այդ պայմաններում Դ.Շահվերդյանը որոշում է անձամբ կատարել ընտրությունը, որի արդյունքում զգալի ուշացումով վերջապես կազմվեց 1.800 մեկնողների ցուցակը: Ինչպես եւ ներգաղթի նախորդ ձեռնարկների ժամանակ, Միությունը այս անգամ նույնպես օժանդակեց ներգաղթին, տրամադրելով 2.000 անգլ. ոսկի: Բացի այդ, իր՝ բարձր հեղինակության շնորհիվ նա ապահովեց պաշտոնական շրջանակների աջակցությունը: Մասնավորա-

պես, նրա խնդրանքով Ժնեւի Նանսենյան գրասենյակի նախագահ Հանսոնը երկու անգամ ժամանեց Փարիզ եւ երկրի վարչապետ Ա. Սարոյի հետ քննարկեց ներգաղթի հետ կապված հարցերը: ՀԲԸ Միության ջանքերի շնորհիվ ապրիլի 17-ին Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունում Աշխատանքի ընդհանուր տնօրեն Բիքնարի նախագահությամբ գումարված ժողովում համաձայնություն կնքվեց ֆրանսիական կառավարության, Նանսենյան գրասենյակի եւ ՀԲԸ Միության միջեւ: «Այդ օրը... մեր Վարիչ-Պատուիրակը յայտարարեց թէ ՀԲԸ Միութիւնը կը ստանձնէ աշխատաւոր չարձանագրուած ներգաղթողներուն շոգեկառքի ծախքը մինչեւ Մարսէյլ, անխտիր բոլոր գաղթականներուն գոյքերուն մինչեւ շոգենաւ փոխադրութիւնը, նաւուն վրայ բոլոր ներգաղթողներուն տասնօրեայ տաք սնունդի եւ յաւելուածական պարենաւորումի (մանուկներու եւ հիւանդներու համար) ամբողջական ծախքերը: ...Հոգացինք նաեւ ողբ. Կոմիտաս վարդապետի դագաղին փոխադրութեան ծախքերը, որոշուած ըլլալով մեծանուն երաժշտագէտին աճիւնը ներգաղթողներուն հետ ղրկել Հայաստան: ...Նկատի ունենալով նեգաղթողներէն ոմանց չքաւորութիւնը, Միութեանս կողմէ անհատական նպաստներ եւս տրամադրուեցան, գլխաւորաբար մտաւորականներուն»:[26] 1936թ. մայիսի 9-ին Մարսելի նավահանգստից դեպի Հայաստան մեկնեց «Սինայա» շոգենավը՝ իր հետ տանելով 1.801 ներգաղթողներ Ֆրանսիայից:

1936թ. ներգաղթածների ընդունումն ու տեղավորումը նախորդ տարիների նման ընթանում էին բազմապիսի դժվարություններով: Հոկտեմբեր ամսին ՀՕԿ-ի նախագահ Ա.Եսայանը Հայաստանի Կոմկուսի նոր ղեկավար Ա.Ամատունուն հասցեագրած նամակում գրում էր. «Ֆրանսիայից ներգաղթած 1.800 իմմիգրանտներին աշխատանքի տեղավորելու համար թեեւ կառավարական հատուկ հանձնաժողով էր ընտրված, բայց այդ աշխատանքի ամբողջ ծանրությունը փաստորեն ընկած է եղել ՀՕԿ-ի վրա: Համարյա բոլոր ներգաղթածները գործ ստացան այս կամ այն հիմնարկներում: Ներկայումս, նրանցից մի մասը զանազան պատճառներով զրկվել է աշխատանքից եւ նորից դիմում է ՀՕԿ-ին, խնդրելով, երբեմն նույնիսկ պահանջելով, որ իրենց համապատասխան գործ տրվի: Նկատի առնելով իմմիգրանտների շրջանում անգործության բավական լուրջ տոկոս կազմելը եւ նրանց մեծ մասի դեռեւս մեր պայմաններին անծանոթ լինելը, ցանկալի է, որ ...3-4 ամիս մի որեւիցե պետական հիմնարկ կամ պրոֆեսիոնալ կազմակերպություն օգնեն՝ նրանց համար աշխատանք ճարելու»:[27]

Կոմիտասի աճյունի փոխադրումը կազմակերպելիս, ՀԲԸ Միության ղեկավարները դժվար թե պատկերացնեին, որ այդ հարցը քննարկման

առարկա էր դարձել Խորհրդային Միության կուսակցական-պետական մարմիններում: Բանն այն էր, որ այդ տեղափոխումը իրականացնելու համար Հայաստանի իշխանությունները նախապես պետք է ստանային Անդրերկրկոմի համաձայնությունը: Հայաստանի Կոմկուսի առաջնորդ Ա.Խանջյանը, ըստ երեւույթին, ենթադրելով Լ.Բերիայի ժխտական պատասխանը, դիմում է նրան միայն մայիսի 10-ին: Տեղեկացնելով Լ.Բերիային, որ ներգաղթողները նավով արդեն դուրս են եկել Մարսելից եւ իրենց հետ բերում են Կոմիտասի դագաղը, Ա.Խանջյանը, կանխելով նրա բացասական հակազդումը, գրում էր. «...թեեւ նավի մեկնելու նախօրեին մենք Երեւանից ՀՕԿ-ի միջոցով հեռագրել էինք նրան (Դ.Շահվերդյանին-Էդ.Մ.) առայժմ հետաձգել այդ գործը: Նավը Բաթումում կլինի ս.թ. մայիսի 17-19-ին: Ստեղծված պայմաններում հարցի միակ նպատակահարմար լուծումը կլինի թույլատրել կազմակերպել Կոմիտասի թաղումը Երեւանում Հայաստանի խորհրդային կոմպոզիտորների միության գծով»:[28] Նման իրավիճակում Լ.Բերիան ստիպված էր տալ իր համաձայնությունը:

ՀԲԸ Միությունը եւ ՀՕԿ-ը

1930-ականների ներգաղթը, համազգային նշանակություն ունեցող իրադարձություն լինելուց զատ, միեւնույն ժամանակ կարեւոր դեր խաղաց նրա կազմակերպմանը մասնակից բոլոր կողմերի համար թե նրանցից յուրաքանչյուրի կարողությունների ճիշտ գնահատման եւ թե նրանց փոխհարաբերությունների հստակեցման առումով: Այդ իմաստով ուշագրավ են ՀԲԸ Միության հարաբերությունները ՀՕԿ-ի հետ: ՀՕԿ-ը հիմնվել էր Հայաստանի խորհրդային իշխանությունների կողմից դեռ 1921թ. վերջերին, եւ նրա սկզբնական նպատակն էր ապահովել եւ կազմակերպել արտասահմանի հայության օգնությունը Հայաստանի սովյալ բնակչությանը, նրա օժանդակությունը երկրի զարգացմանը: Շատ շուտով, սակայն, ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերը դարձան սփյուռքում Հայաստանի Կոմկուսի քաղաքականության իրագործման հիմնական միջոցը: Ղեկավարվելով Երեւանից ստացած ցուցումներով՝ նրանք փորձեցին տարածել կոմունիստական գաղափարները սփյուռքահայության մեջ եւ պայքար ծավալեցին սփյուռքի բոլոր կարեւոր ազգային կազմակերպությունների դեմ: Վայելելով Հայաստանի իշխանությունների վստահությունն ու աջակցությունը եւ ձգտելով պահպանել իրենց մենաշնորհը՝ ՀՕԿ-ի ղեկավարները արտասահմանում անհաշտ աչքով էին նայում

նույն այդ իշխանությունների շփումներին այլ կազմակերպությունների եւ նույնիսկ անհատների հետ: Բնական է, որ նրանք առավել անհանդուրժողական կեցվածք էին դրսեւորում ՀԲԸ Միության՝ իրենց որակումով «հայ բուրժուական» կազմակերպության հետ Հայաստանի իշխանությունների համագործակցության հանդեպ, ջանում էին վարկաբեկել այն իրենց հրապարակային ելույթներում եւ մամուլում, ինչպես նաեւ Երեւան հղած գրություններում:

ՀՕԿ-ի՝ ՀԲԸ Միության դեմ պայքարի յուրահատուկ միջոցներից էր վերջինի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերը իրեն վերագրելը կամ յուրացնելը: 1927թ. համարներից մեկում «Միութիւն» ամսագիրը գրում էր. «Նիւ Եորքի «Բանւոր»-ի, որ Ամերիկայի ՀՕԿ-ի Կեդր. Վարչութեան հրատարակութիւնն է, առաջին թիւին մէջ յօդուած մը կայ որ կ'ըսէ թէ Հայաստանի Նոր Եվդոկիա գաղութը ՀՕԿ-ի ջանքերով հիմնուած է»: Այդպիսի յայտարարութիւն մը կը զարմացնէ մեզ եւ մենք պարտականութիւն ունինք զայն ուղղելու: Արդարութեան եւ երախտագիտութեան զգացումէն մղուած, չենք կրնար չյիշել թէ հանգուցեալ Գրիգոր Մէօթէմէտեանի Բարեգործական Ընդհանուր Միութեան ըրած կտակին շնորհիւ է որ կարելի եղաւ այդ գիւղը հիմնել Հայաստանի մէջ: Միեւնոյն թիւին մէջ, «Բանւոր» կ'ըսէ թէ «ՀՕԿ-ը 25.000 տոլարէ աւելի գումար մը տրամադրած է Հայաստանի կառավարութեան, օգնելու համար այն ճահիճներու չորացման, որոնց պատճառաւ ժողովուրդը կը նեղուէր մալարիայէ», եւ թէ «ՀՕԿ-ի միջոցաւ Հայաստանի մէջ իրագործուած են կարգ մը կտակներ»: Պարտք կը համարինք ի վեր հանել թէ յիշեալ 25.000 տոլարին 15.000 տոլարը Բարեգործական Միութեան կողմէ տրուեցաւ իբր արդիւնք իր առ այդ բացած մասնաւոր հանգանակութեան, եւ թէ յիշուած կտակները Միութեան եղած կտակներն են, զորոնք Միութիւնը Հայաստան փոխադրեց»:[29] Հարկ է նշել, որ ՀՕԿ-ի նմանօրինակ յուրացումները հետագայում քաղաքացիություն ստացան խորհրդահայ պատմագրության մեջ: Այսպես, Հ.Մելիքսեթյանը իր վերը հիշատակած գրքում նույն Նոր Եվդոկիա գյուղից բացի, ՀՕԿ-ին է վերագրում նաեւ Մարի Նուպար ակնաբուժարանը, բնական է, չհիշատակելով վերջինիս անվանումը:[30]

Իր այդ գործելակերպը ՀՕԿ-ը առավել մեծ չափով կիրառեց 1930-ականների ներգաղթի ընթացքում, երբ, մի կողմից մեղադրում էր ՀԲԸ Միությանը, որ չի նպաստում, չի օժանդակում ներգաղթին, իսկ մյուս կողմից՝ Միության գործունեությունը անտեսում կամ էլ փորձում էր վերագրել իրեն: 1932թ. դեկտեմբերին Վ. Մալեզյանը Միության Մարսելի մասնաժողովին հղած նամակում գրում էր. «Մեր փափագն է որ բոլոր այն ներգաղթողները որոնց համար ՀԲԸ Միութիւնը կը վճարէ անցագրի,

վիզայի, երկաթուղիի, նաւատոմսի եւ պարենագիրքի ծախքերը, պատշաճ եղանակով մը հասկնան այս բանը, որովհետեւ ՀՕԿ-ը կը ջանայ միշտ իւրացնել Միութեան զոհողութիւնները, այնպէս որ մեկնող գաղթականները կը կարծեն որ Միութիւնս ոեւիցէ նիւթական ձեռնտուութիւն չէ ըրած իրենց համար եւ ՀՕԿ-ն է որ կը հոգայ իրենց ծախքերը, մինչդեռ բացարձակ իրողութիւն է որ ՀՕԿ-ը ոչ մէկ ծախք ըրած է եւ կ'ընէ, այլ միայն գաղթականներուն արձանագրութեամբ, քննութեամբ եւ անցագիրներու ձեւակերպութեամբ զբաղած է»:[31] Ներգաղթի տարիներին ՀՕԿ-ի նման գործելաոճը, որի նպատակն էր հնարավորին չափ բարձրացնել իր վարկանիշը սփյուռքում, այն չափերի էր հասել, որ ՀԲԸ Միության ղեկավարները ստիպված էին դիմել Երեւան: 1934թ. հունիսի 4-ին Հ.Գարակյոզյանին հասցեագրած նամակում Վ.Մալեզյանը գրում էր. «Բայց ժամանակն է որ այլեւս հարց ընենք թէ կարելի չէ՞ որ Երեւանի Գլխաւոր Վարչութիւնը լրջօրէն հակազդէ ՀՕԿ-ի տաք գլուխ վարիչներէ ոմանց շղթայազերծած ամբոխավարութեան, որուն յաճախ կ'ենթարկուի ՀԲԸ Միութիւնը, իրենց գրաւած բեմերէն եւ թերթերէն (որոնց գերատիպարն է Նիւ Եորքի «Բանւոր» լրագիրը) անոր հասցէին ուղղելով յաճախ զզուելի յարձակողականներ: Այդպիսիները կը կարծեն որ աջ ու ձախ զարնելով, զարնելով մինչեւ իսկ ուժգնապէս ՀԲԸ Միութեան, հաճելի կը դառնան Երեւանի ղեկավար շրջանակներուն մէջ:

«Այս հարցերու մասին առիթ ունեցած ենք յաճախ սրտցաւօրէն տեսակցել քաղ. Վարդանեանի (ՀՕԿ-ի Գլխավոր վարչության նախագահ-Էդ.Մ.) հետ, որ բարեացակամօրէն մեզի հաւաստիքներ տուած է թէ ատոնք վերջացած են այլեւս եւ պէտք եղած յանդիմանութիւնները ուղղուած են այդպիսի վայրահաջներու, որոնց գործածած լեզուն եւ ուղղութիւնը բնաւ չի տարբերիր իրենց եւ մեր, եւ առհասարակ Հայաստանի ոխերիմ հակառակորդներու ոճէն ու ոգիէն (խոսքը Դաշնակցության մասին է-Էդ.Մ.), այնպէս որ իրականին մէջ ասոնց միայն ծառայած կ'ըլլան եղբայրաբար, միւս կողմէն վհատութիւն յառաջ բերելով մեր կազմակերպութեան եւ առհասարակ Հայաստանի բարեկամներու մէջ»:[32] Սակայն, իրականում ՀՕԿ-ի նախագահի դիրքորոշումը Միության նկատմամբ այլ էր: Հայաստանում Միության ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանի խոսքերով Գ.Վարդանյանը «...«Բարեգործականի» գծով որեւէ աշխատանք չէր տանում եւ, որքան ինձ հայտնի է, դեմ էր այդ Միությանը եւ ձգտում էր արտասահմանում առաջնակարգ կազմակերպություն դարձնել ՀՕԿ-ը»:[33]

Բայց ահա, 1933թ. հուլիսին Միությունը ընդունեց նույն Գ.Վարդանյանի առաջարկը եւ ՀՕԿ-ի հետ հիմնեց «Ներգաղթի ֆոնտի կեդրոնական մարմին», որի նախագահ ընտրվեց ՀԲԸ Միության նախագահ Զա-

ռեհ Նուպարը, իսկ անդամներն էին Միության կողմից Լ.Կյումուշկերտանը եւ Վ.Մալեզյանը, ինչպես նաեւ Ավ.Իսահակյանը, Գ.Թահմիզյանը եւ Հ.Գալճյանը՝ ՀՕԿ-ի կողմից: Նորակազմ մարմնի նպատակն էր՝ սփյուռքում կազմակերպել ժողովրդային հանգանակություն, Խորհրդային Հայաստանում բնակարանային շինարարությանը նպաստելու եւ այդպիսով զանգվածային ներգաղթը արագացնելու համար:

ՀԲԸ Միությունը, ստանալով այդ առաջարկը, կանգնեց դժվարին երկընտրանքի առջեւ: Այդ տարիներին ՀՕԿ-ը դարձել էր պրոկոմունիստական, պրոխորհրդային քարոզչությամբ զբաղվող մի կազմակերպություն եւ որպես այդպիսին, քաղաքականապես անբարեհույս էր գրեթե բոլոր երկրների իշխանությունների համար: ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեությունը արգելվել էր Եգիպտոսում, Հունաստանում, Սիրիայում, Արգենտինայում եւ այլ երկրներում: Բուլղարիայում ՀՕԿ-ի տեղական կազմակերպության նախկին վարիչ-քարտուղար Մ.Խաչիկյանը իր նամակներից մեկում, հայտնելով մասնաճյուղի լուծարման մասին, մեջբերում էր բուլղարական կառավարության տեսակետը, ըստ որի, համահունչ շարժումը «ըլլալով համայնավարական շարժման մէկ ձեւը, անբաղձելի է Պուլկարիոյ համար»:[34] ՀՕԿ-ի մասնաճյուղերի վերջնական հեղինակազրկմանը նպաստեցին նաեւ ներսում տեղի ունեցող պառակտումներն ու մատնությունները, որոնց պատճառն էր «ինքզինքին ցոյց տալ աւելի կարմիր քան ամէնէն հաւատաւոր համայնավարները»: Եվ պատահական չէր, որ որոշ երկրներում, օրինակ, Սիրիայում, Ֆրանսիայում, որպես հետեւանք ՀՕԿ-ի հետ համագործակցության, Միությունը ակամա հայտնվեց իշխանությունների անցանկալի ուշադրության կենտրոնում: Մեկ այլ հետեւանքն էլ եղավ այն, որ, օգտվելով առիթից, որոշ ազգային կազմակերպություններ՝ նախ եւ առաջ Դաշնակցությունը, ամբաստանեց Միությանը խորհրդային իշխանությունների հետ գործակցության, քաղաքական պատվեր կատարելու մեջ: Հայտնի էր նաեւ, որ սփյուռքահայերի հիմնական զանգվածը, առավել եւս նրանց տնտեսապես քիչ թե շատ ապահով շերտերի համար, որոնք էլ ՀԲԸ Միության անդամներն ու համակիրներն էին, ՀՕԿ-ը խորթ, ապազգային մի կազմակերպություն էր: Նրանց համար հատկապես անհասկանալի եւ անընդունելի էր թվում Միության ղեկավարության համաձայնությունը Գ.Վարդանյանի առաջարկին:

Այս ամենի հետ մեկտեղ, Միությունը ստիպված էր հաշվի առնել այն իրողությունը, որ ի դեմս Գ.Վարդանյանի, գործ ուներ ոչ միայն եւ ոչ այնքան ՀՕԿ-ի Գլխավոր վարչության, որքան Խորհրդային Հայաստանի վերին իշխանության հետ: Նման պարագաներում, մերժելով վերջինի

առաջարկած համագործակցությունը, Միությունը վտանգում էր թե իր ակտիվ մասնակցությունը ներգաղթի գործում, թե Հայաստանում իր ծրագրերի իրականացման հաջող ընթացքը եւ թե ընդհանրապես ներգաղթի արագ վերսկսման հնարավորությունները: Մխիթարվելով ՀՕԿ-ի հետ համագործակցության ժամանակավոր բնույթով՝ Միությունը հույս ուներ նաեւ, որ դրանով իսկ վերջ կդրվի անտեղի մրցակցությանը հանգանակությունների կազմակերպման ընթացքում եւ որ ՀՕԿ-ը պարտադրված կլինի գոնե դադարեցնել պայքարը ՀԲԸ Միության դեմ:

Միության հույսերը, սակայն, չարդարացան: Նախ, ինչպես եւ կանխազգում էր, հայտարարված հանգանակության արդյունքները դժվար էր բավարար համարել: Փոփոխություն չկրեց նաեւ ՀՕԿ-ի գործելակերպը, ինչի մասին Վ.Մալեզյանը դառնությամբ գրում էր Երեւան հղած իր մի շարք նամակներում: Հ.Գարակյոզյանին հասցեագրած 1935թ. հունիսի 7-ի նամակում, խոսելով ՀՕԿ-ի Փարիզի կենտրոնական վարչության մասին, նա նշում էր. «...հաւաստիքներ կուտան թէ ՀՕԿ-ի անդամներուն է որ առաջնութիւն պիտի տրուի ներգաղթի պահուն: Այս առթիւ ցաւ ի սիրտ կը յայտնենք թէ Յունաստանի եւ Պուլկարիոյ ՀՕԿ-երու վկայութեան վրայ հիմնուելով քաղ.Շահվերտեան կը կատարէր իր նախընտրանքը, եւ սակայն լաւագոյն տարրերը չէ որ կը կազմեն միշտ ՀՕԿ-ի շարքերը, եւ շատեր այդ անունը օգտագործելու համար կ'անդամակցեն անոր: Ահա թէ ինչով կրնայ բացատրուիլ, գրեթէ, այն յուսախաբութիւնը զոր Կառավարութիւնը կրեց ներգաղթողներուն մէջ տեսնելով բազմաթիւ անարժաններ որ յանձնարարուած էին որպէս ՀՕԿ-ի անդամներ եւ Հայաստանի բարեկամներ»:[35] 1936թ. մայիսի 15-ին Դ.Շահվերդյանին ուղղած իր նամակում Վ.Մալեզյանը նշում էր. «Քիչ չէ, արդարեւ, թիւը արձանագրութիւններու որ կը գանգատին, փաստարկութիւններով, թէ իրենց ներգաղթի խնդրանքին հետեւանք չէ տրուած, ՀՕԿ-ի տեղական վարիչներու անբարեացակամ վկայութեանց վրայ, պարզապէս այն պատճառաւ որ ՀՕԿ-ի անդամ չեն, կամ անդամագրուած ըլլալով վերջերս բողոքած կամ հեռացած են, եւ կամ ուրիշներուն նման չեն կրցած ՀՕԿ-ի նուիրատուութիւն մը ընել, ներգաղթի համար: ...Շատերու տպաւորութիւնն է որ ընդհանրապէս ներգաղթի գործը կազմակերպուած է եւ կը կարգադրուի այնպէս որպէս թէ ըլլայ ՀՕԿ-ի ձեռնարկ: ...Ներգաղթի իրաւունք ձեռք բերելու յոյսով յաճախ ՀՕԿ-ին կ'անդամագրուին եւ կամ որպէսզի նախընտրելի նկատուին կը թելադրուին նուէրներ ընելու: Անտարակոյս,- նկատում էր Վ.Մալեզյանը,- այդպիսի դիտողութեանց բնաւ տեղի պիտի չի տրուէր եթէ ներգաղթը կազմակերպուէր որպէս պետական գործ...»:[36]

Մեկ այլ՝ ՀՕԿ-ի Գլխավոր վարչության նոր նախագահ Ա.Եսայանին հասցեագրած նամակում Վ.Մալեզյանը ավելի հստակ է արտահայտում Միության դիրքորոշումը. «...ներգաղթին որպէս ՀՕԿ-ի ձեռնարկ, եւ ոչ թե պետական ձեռնարկ կատարուելուն երբեք չենք կրնար մեր համամտութիւնը յայտնել, որովհետեւ չենք կրնար ընդունիլ որ ներգաղթը ըլլայ այս կամ այն կազմակերպութեան բրոբականտի եւ ազդեցութեան միջոց մը, այլ միայն եւ միայն մեր սիրելի հայրենիքին, անոր ժողովուրդին ու ղեկավարներուն պանծացումի պատեհութիւնը: Այս տխուր երեւոյթին մեկ նոր եւ ցաւալի արտայայտութիւնը կը նկատենք նաեւ այն տարօրինակ ցոյցը որ կատարուած է «Սինայիա» շոգենաւին մեկնումի պահուն, երբ նախապէս որոշուած եւ բանաձեւուած հեռագիրներէն դուրս, ներգաղթողներու կողմէ շնորհակալութեան հեռագիր մը կարգադրուած միմիայն ՀՕԿ-ի Ֆրանսայի Կեդր. Վարչութեան հասցէին, քաղ.Շահվերտեանի ստորագրութեամբ կարծես հրապարակային ցոյց մը որ առնուազն ներգաղթողներուն ապերախտութեան եւ վարիչներու անփափկանկատութեան ցուցադրումը կրնար ըլլալ»: Նամակի վերջում, խոսելով նոր ներգաղթի կազմակերպման անհրաժեշտության մասին, Վ.Մալեզյանը խնդրում էր, որ Միությանը այլեւս «չընծայուի լոկ արկղակալի մը դերը, որ կը կայանայ ամենայնեին ծախքն իսկ վճարելու համակերպութեան մէջ»:[37]

Ա.Եսայանը, 1935թ. սեպտեմբերին ստանձնելով ՀՕԿ-ի Գլխավոր վարչության նախագահի պաշտոնը, փորձեց որոշակի խմբագրումների ենթարկել այդ կազմակերպության հարաբերությունները ՀԲԸ Միության հետ: Ա.Եսայանի մասին խոսքը դեռ առջեւում է, իսկ այստեղ հարկ է նշել նրա նորովի մոտեցումը ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի կեցվածքին՝ ՀԲԸ Միության հանդեպ: Վ.Մալեզյանին հասցեագրած իր նամակներում Հ.Գարակյոզյանը գրում էր՝ դեկտեմբերի 5-ին. «ՀՕԿ-ի եւ Ներգաղթի կոմիտեի նախագահը վստահեցնում է, որ ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի անհարկի ելույթները եւ տարաձայնությունները միանգամ ընդմիշտ վերջ պիտի գտնեն: Այս մասին նորընտիր նախագահը հարկ եղածը խոսած է այստեղ ներկա գտնվող պատգամավորներին եւ հատուկ շրջաբերական հրահանգներով պիտի ազդարարե ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության նոր ոգիի մասին»: Դեկտեմբերի 21-ին. «Ընկեր Եսայան մի անգամ ալ շեշտում է որ հարկ եղած խիստ հրահանգներ տրված են թե Հայաստան այցելող պատգամավորներին եւ թե ՀՕԿ-ի բոլոր գլխ. մասնաճյուղերին, որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ տրվին ՀՕԿ-ի եւ Բարեգործականի միջեւ անհարկի արտահայտություններին եւ ելույթներին»:[38] ՀՕԿ-ի նախագահի նման դիրքորոշումը եւ այդ ուղղությամբ նրա վճռական գործունեությունը միանշանակ չընդունվեցին

ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի ղեկավարների կողմից: Եթե նրանցից ոմանք դրանում տեսնում էին ՀՕԿ-ի ընդհանուր առողջացման, ազգօգուտ գործունեության վերսկսման նշաններ, ապա նրանց հիմնական մասը հայտնում էր իր ակնհայտ անհամաձայնությունը, ասելով, որ «Եսաեան ծանօթ չէ արտասահմանի պայմաններուն, որով եւ կարելի չէ հետեւիլ իր ցուցմունքներուն»: Ինչպես նշվեց, հաջորդ՝ 1936թ. մայիս ամսվա ներգաղթը, ցույց տվեց, որ նման տրամադրությունները մնացին իշխող՝ ՀՕԿ-ի մասնաճյուղերում:

Ա.Խանջյանը եւ Գ.Կյուլպենկյանի հրաժարականը

1931-1933թթ. ներգաղթին զուգահեռ, Հայաստանի հետ ՀԲԸ Միության հարաբերություններում տեղի ունեցան դրամատիկ իրադարձություններ: Այն բանից հետո, երբ Ս.Տեր-Գաբրիելյանը «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի 1931թ. սեպտեմբերյան համարներից մեկում պատմել էր ներգաղթ կազմակերպելու կառավարության որոշման, ՀԲԸ Միության նախագահ Գ.Կյուլպենկյանի եւ այլ ղեկավարների հետ Փարիզում ունեցած իր հանդիպումների մասին, 1931թ. հոկտեմբերի 16-ին նույն թերթը հրապարակում է Հայկոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա.Խանջյանի ճառը, որում մասնավորապես ասվում էր. «Սիրիայում «ազգային օջախ» ստեղծելու համար դաշնակների արած գործնական քայլերը, որոնք, ի դեպ, արվում են անգլո-ֆրանսիական իմպերիալիստական խմբակներին մոտ կանգնած Կյուլպենկյանների անմիջական հովանավորությամբ եւ հակադրվում են արտասահմանի աշխատավորության Խորհրդային Հայաստան ներգաղթելու մեր ծրագրին, նպատակ ունեն «հավատարիմ ուժ» տրամադրել ֆրանսիական իմպերիալիզմին Սիրիայի գաղութային շահագործման եւ ազգային ազատագրական շարժումները ճնշելու, ինչպես նաեւ Կյուլպենկյանների նավթահանքերին կամ նավթամուղին էժան բանվորական ուժ մատակարարելու համար: «Ազգային օջախ» ստեղծելու այդ փորձի գլխավոր նպատակն է՝ թնդանոթի միս պատրաստել հակախորհրդային իմպերիալիստական ինտերվենցիայի համար...»:[39]

ՀԲԸ Միության ղեկավարությունը, այս անսպասելի մեղադրանքներից հետո անմիջապես կապվում է Հայաստանի իշխանությունների հետ: Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը նոյեմբերի 9-ին հատուկ նամակ է հղում Ս.Տեր-Գաբրիելյանին, որում մասնավորապես գրում էր. «Շատ ցաւալի կը գտնենք այն ծանր մեղադրանքը, որ վիրաւորիչ բառե-

րով եւ բոլորովին յանիրաւի կ'ուղղուի Տ.Գալուստ Կիւլպէնկեանի, իր անունը կապելով ՀՅ Դաշնակցութեան եւ իրեն վերագրելով արարքներ որ բացարձակապէս անհիմն են»: Այնուհետեւ, փաստերի հիման վրա բացատրելով Միության նախագահի հասցեին արած մեղադրանքների անհեթեթ եւ անհիմն լինելը (այդ մասին ստորեւ), Վ.Մալեզյանը եզրակացնում էր. «...եթէ իտէոլօկներու ներելի է իրենց աշխարհահայեացքներու մասին ազատօրէն արտայայտուիլ, սկզբունքի գետնին վրայ, չեմ կարծեր որ ուղիղ ըլլար որ հայ իտէոլօկներ որ Հայաստանի վերելքին համար կ'աշխատին այնքան մեծ նուիրումով, միեւնոյն չափով հարուածեն թէ իրենց գաղափարի հակառակորդները եւ թէ նոյն Հայաստանի անկեղծ եւ անձնուէր բարեկամները: Այդ անխորհուրդ ուղղութիւնը ունեցած է եւ կ'ունենայ ծանր հետեւանքներ, յառաջ բերելով ուծացումներ: Ու խորապէս ցաւալի պիտի ըլլար որ Տիար Կիւլպէնկեանի նման հայրենասէր պատուական հայ մը, այն պահուն իսկ որ Հայաստանի համար գործնական միտքով իր լաւագոյն ջանքերը սպաս կը դնէ, դառնօրէն վիրաւորուած իր բարձր զգացումներուն մէջ, անդարմանելի հակասութիւններ տեսնէ այն ազնիւ խրախոյսներուն մէջ զոր այնքան խոհականօրէն գիտցաք ներշնչել եւ անիրաւ մեղադրանքներուն մէջ զոր այլապէս պատասխանատու հեղինակաւոր անձ մը կ'ուղղէ իրեն, հրապարակաւ եւ ձեր պաշտօնաթերթին միջոցաւ»:[40]

Վ.Մալեզյանի նամակը Ս.Տեր-Գաբրիելյանին, ըստ ընդունված կարգի, պետք է հանձներ Երեւանում Միության ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանը, բայց անցնում են օրեր, շաբաթներ, նույնիսկ ամիսներ՝ եւ ոչ մի պատասխան: Վերջինիս կողմից Փարիզ ուղարկված գրություններից պարզվում է, որ նամակը հանձնվել է Ս.Տեր-Գաբրիելյանին միայն 1932թ. փետրվարին, այն էլ Թիֆլիսում: Երեւանը, սակայն, շարունակում էր լռել: Մարտի 10-ին Վ.Մալեզյանը Հ.Գարակյոզյանին հասցեագրած հերթական նամակում գրում էր. «Ամիսներէ ի վեր անհետեւանք մնացած այդ ցաւոտ խնդիրը ստեղծած է ծանրահոգ դրութիւն մը, ու անձնապէս, տեսնելով մեր պատուական նախագահին ջղագրգռեալ վիճակը, բոլորովին ճարահատ եմ այլեւս:

«Ներգաղթի առթիւ իր առաջին խանդավառութեան մէջ իսկ դառնօրէն յուսախաբուած, Տ. Կիւլպէնկեան մինչեւ անգամ որոշած է հրաժարիլ Միութեանն նախագահութենէն, որուն առաջքը առնելու համար պարտաւոր պիտի ըլլանք կանգ չառնել ոեւէ զոհողութեան առջեւ:

«Կեդր. Վարչ. Ժողովը եւ ամբողջ ՀԲԸ Միութիւնը չեն կարող առանձին թողուլ իրենց սիրելի Նախագահը, այն ծանր ամբաստանութեան մէջ որով հարկ տեսնուած է ներկայացնել ինքը, բոլորովին անհիմն եւ անօգուտ, որպէս ՀՅ Դաշնակցութեան գործիք կամ գործակից, որպէս Սուրիոյ օճախի ախոյեան եւ որպէս նաւթամուղներու մէջ հայ գործաւորները շահագործող, ամբաստանութիւններ զոր վաղը ի լուր աշխարհի պիտի հերքենք բարձրաղաղակ, եթէ ճշմարտութիւնը արձագանք չի գտնէ Երեւանէն:

«Կը խնդրենք, որքան որ ալ ձեզի համար նեղացուցիչ ըլլայ այս բանը, այս մտածումները եւս հաղորդել անձամբ եւ գրութեամբ յարգոյ վարչապետին եւ կամ իր տեղակալին»:[41]

Գ.Կյուլպենկյանը, համոզվելով, որ Հայաստանի համայնավար ղեկավարը մտադիր չէ փոխել իր դիրքորոշումը, 1932թ. ապրիլի 22-ին, ներգաղթողների երրորդ կարավանի մեկնումից երեք օր առաջ, գրում է իր հրաժարականը՝ ուղղելով այն Միության Կենտրոնական Վարչական Ժողովին.

«Ինչպէս լաւ կը յիշէք, ՀԲԸ Միութեան Նախագահութիւնը ընդունելու պատիւն ստանձնելուս, միակ պայմանս եղաւ թէ այն օրը երբ տեսնեմ որ օգտակար չեմ կրնար լինիլ, կը հրաժարիմ:

«Եվ գիտէք թէ հակառակ իմ անձնական սուղ ժամերուն՝ ինչ հոգով սրտով փարեցայ գործին, պարտականութիւնս կատարելով իմովսանն, բնականաբար զանազան դժուարութեանց, անհարկի տրտունջներու եւ պահանջներու դէմ մաքառելով, զի կան մարդիկ որ կը կարծեն թէ Բարեգործականը պետութիւն մ'է, պարտաւոր է եւ կարող ամէն դիմումներուն գոհացում տալ, մինչդեռ Բարեգործականը անհատական հաստատութիւն մըն է՝ ողբացեալ Պօղոս Նուպար փաշայի նախաձեռնութեամբ հաստատեալ եւ շատ սահմանափակ է իր ելեւմուտքի վիճակը, մանաւանդ վերջերս:

«Բարեգործականը, իր բարոյական եւ նիւթական միջոցներով, իր գոյութեան սկիզբէն ցարդ, մեծապէս օգտակար եղած է այս լքեալ Ազգին անօրինակ տառապանքի օրերուն եւ ամէնքիս երախտագիտութեան արժանի է:

«Ամէն դժուարութեանց հետ նոր անակնկալ դէպք մը կուգայ Միութեան խաղաղութիւնն վրդովել, այն է Երեւանի կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչ պ.Խանճեան՝ անհեթեթ առարկութիւնով իմ անձիս դէմ նախատինքներ ըրած է. ի զուր սպասեցինք որ Հայաստանի կառավարութիւնը հերքէր այդ բացարձակ անտեղի յարձակումը. ուստի, ես իբրեւ Նախագահ ՀԲԸ Միութեան պարտաւորուած եմ հրաժարիլ, ի նկատի ունենալով որ Բարեգործականը Երեւանի կառավարութեան հետ զանազան բարեգործական ձեռնարկներու համար անհրաժեշտ կապ ու-

նի, եւ ես իմ անուամբ եւ ստորագրութեամբ չեմ կրնար յարաբերութիւն ունենալ անոնց հետ, իբրեւ Նախագահ, ներկայ պարագաներու ներքեւ:

«Արդ, բացարձակապէս հրաժարականս մատուցանելով հանդերձ, միանգամայն կը պահեմ իմ գուրգուրանք Ազգին միակ միսիթարութիւնը եղող Հայաստանի լուրջ բարգաւաճման համար, իբրեւ հայրենի աւանդութեանց զգացման պարտականութիւն:

Մնամ յարգանօք եւ առ յաւէտ բարեացակամ Բարեգործականի
նուիրական հաստատութեան,
22 Ապրիլ 1932
հրաժարեալ նախագահ Գ. Ս. Կիւլպէնկեան»[42]

Միության Կենտրոնական Վարչական Ժողովը մայիսի 2-ի եւ 6-ի իր նիստերում քննարկելով ստեղծված իրավիճակը, դիմում է Գ.Կյուլպենկյանին՝ խնդրելով նրան հրաժարվել ընդունած որոշումից. «Կեդր. Վարչ. Ժողովը, որ միշտ համերաշխ գտնուած է ձեզի հետ, յանուն այդ համերաշխութեան՝ նախ եւ առաջ որոշեց բողոքագրով մը Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ քաղ. Սահակ Տէր-Գաբրիէլեանի յայտնել իր ցաւն ու բողոքը, այն անհիմն վերագրումներուն համար զոր քաղ. Խանճեան քանի մը ամիս առաջ ըրած էր իր մէկ ճառին մէջ, եւ որոնց դէմ մեր Վարիչ-Պատուիրակին կատարած դիմումները դժբախտաբար ցարդ անհետեւանք մնացած են...

«Կեդր. Վարչ. Ժողովը գոհունակութեամբ նկատի ունեցաւ թէ ձեր հրաժարագրին մէջ Միութեանս կամ Ժողովին վերագրելի տարակարծութեան ոեւէ պատճառ մը չի գտնուիր: Եվ յետոյ հաստատեց թէ այդ յերիւրանքները ոչ իւիք կրնան ստուեր ածել ձեր անձին եւ զգացումներուն վրայ, ոեւէ կերպով արդարացնելու համար կարեւորութիւնը զոր անոնց կ'ընծայէք ձեր հրաժարմամբը, եւ թէ որքան ալ ցաւալի ըլլան անհարկի դատափետումները եւ պահանջկոտութիւնները որ շարունակ Միութեանս կ'ուղղուին, ձեր ձեռնթափութիւնը ոչ միայն հարուած մը պիտի ըլլայ մեր Միութեան համար եւ զրկանք մը մեր բազմակարօտ ազգին համար, այլ եւ անխուսափելիօրեն տեղի պիտի տայ նաեւ թիւր եւ անախորժ մեկնաբանութեանց:

«Երբ դժբախտութիւնը ունեցանք կորսնցնելու մեր յաւէտ ողբացեալ Հիմնադիր-Նախագահը՝ Պօղոս Նուպար փաշա, դուք նկատուեցաք այն հայը որ կրնար տիրաբար ստանձնել այս համազգային մեծ կազմակերպութեան ղեկը... Երախտագիտական զգացումով մը կը յիշենք որ, հակառակ ձեր բազմազբաղ վիճակին, պատասխանեցիք մեր հրաւէրին, եւ առաջին օրէն, օգտակար ըլլալու հետամտութեամբ, գործին հանդէպ ցոյց

տուիք սրտագին խանդաղատանք մը: Անշուշտ, կը խոստովանինք, ձեր նախագահութիւնը զուգադիպեցաւ աշխարհը ցնցող տնտեսական ահաւոր տագնապի մը, որուն հետեւանքը ուժգնօրէն կրեց նաեւ մեր Միութիւնը, բայց արդարութեան պարտք մը կը կատարենք յայտարարելով նաեւ թէ՝ այդ առթիւ ալ ձեր սրտեռանդ ջանքերը եւ գործնական խորհուրդները սիրայօժար սպաս դրիք Կեդր. Ժողովին:

«Այս պայմաններուն մէջ, Կեդր. Ժողովը համոզուած էր որ պիտի բաւէ անկեղծօրէն պարզել ձեզի այն բարդ կացութիւնը զոր պիտի ստեղծէ ձեր հրաժարականը եւ այն անբաղձալի հետեւանքը որ պիտի ունենայ անիկա Միութեան մասին, որպէսզի անդրադառնալով թոյլ չի տաք որ գաղութահայութեան խղճմտանքին համաձայն կատարուած ընտրութիւն մը անակնկալօրէն բեկանուի ճառի մը կամ յօդուածի մը պատճառաւ, եւ, ատոնց ձեր վրայ գործած յոռի տպաւորութեամբը, զոհուի Միութեան եւ Ազգին գերագոյն շահը...

«Կեդր. Ժողովը համոզուած է արդարեւ որ պիտի բաւէ կոչում ընել ձեր ազգասիրութեան, լայնախոհութեան եւ խղճին ալ, որպէսզի չի լքէք ձեզի վստահուած աւանդն ու ղեկը, եւ կիսատ չի թողուք այնքան գուրգուրանքով սկսուած գեղեցիկ գործ մը... երբ թշուառութիւնը համատարած կը տիրէ եւ մեր վրայ կը դնէ ծանր պարտականութիւններ որոնցմէ չենք կրնար խուսափիլ: Այդ վստահութեամբ, սիրելի Նախագահ, ջերմապէս կը խնդրենք, յանուն մեր Միութեան բազմահազար անդամներուն եւ Հայ ժողովուրդին համերաշխ զգացումին, որ Միութեան խնայէք այս նոր հարուածը եւ ձեր հրաժարումովը թոյլ չի տաք որ մեծ պարապ մը գոյանայ եւ Միութիւնը այսպէս ծանր տագնապի մը ենթարկուի...»:[43]

Միության Կենտրոնական Վարչությունը նույն օրը մեկ անգամ եւս դիմեց Ս.Տեր-Գաբրիելյանին, նշելով, մասնավորապես, որ Գ.Կյուլպենկյանի հրաժարականը ամեն բանից զատ «զգալապէս պիտի խանգարէ մայր-հայրենիքին եւ գաղութահայութեան միջեւ Միութեան զօդի դերը զոր հպարտ եւ երջանիկ էինք կատարելով»:[44]

Բայց Միության նախագահի որոշումը վերջնական էր: Մայիսի 11-ին նա հեռագրում է Ալժիրից. «Խորապէս շնորհակալ եմ ձեր 7 մայիսի նամակին համար: Կը խնդրեմ չի պնդել, որովհետեւ հրաժարականս անդառնալի է: Անձնական ամէն նկատումէ անկախօրէն համոզում գոյացուցի որ այս որոշումը նոյն իսկ ՀԲԸ Միութեան շահուն համաձայն է: Շատ լրջօրէն մտածելէ վերջ որոշած եմ, որով անօգուտ է անդրադառնալ...»:[45] Միության ղեկավարությունը՝ Գ.Նորատունկյանը, Տիգրան Քելեկյանը, Առաքել եւ Զարեհ Նուպարները հունիսի 12-ին, այնուամենայնիվ, հանդիպում են Փարիզ վերադարձած Գ.Կյուլպենկյանի հետ: Բայց

այդ հանդիպման անհաջողությունը կանխորոշված էր. մինչ այդ՝ մայիսի 24-ին «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում հրապարակված մի նոր հոդվածում Հայաստանի իշխանությունները մեկ անգամ եւս կրկնել էին իրենց ամբաստանությունները Գ.Կյուլպենկյանի եւ ՀԲԸ Միության հասցեին: Ի վերջո, Միության Կենտրոնական Վարչությունը 1932թ. հունիսի 15-ի նիստում հարկադրված էր ընդունել նախագահի պաշտոնից Գ.Կյուլպենկյանի հրաժարականը:

Գալուստ Կյուլպենկյանը ստանձնել էր ՀԲԸ Միության նախագահի պաշտոնը 1930թ. հոկտեմբերին՝ Միության հիմնադիր եւ առաջին նախագահ Պողոս Նուպարի մահից հետո: Այդ փաստը ինքնին խորհրդանշական էր, նկատի առնելով Նուպարյան ընտանիքի դերը Գ.Կյուլպենկյանի կյանքում: Գ.Կյուլպենկյանը ծնվել էր 1869թ. Կ.Պոլսում (Սկյուտար): Կ.Պոլսի հայտնի Ռոբերտ կոլեջում նախնական ուսումը ստանալուց հետո, Գ.Կյուլպենկյանը մեկնում է Մարսել՝ իր ֆրանսերենը կատարելագործելու նպատակով, իսկ 1884թ. ընդունվում է Լոնդոնի հեղինակավոր Քինգզ կոլեջը, որն էլ փայլուն ավարտում է 1887թ.՝ Առաջին կարգ քաղաքացիական ճարտարագիտություն եւ ոսկե մեդալ գիտության եւ ճարտարագիտության բնագավառում: Նրա անունն աշխարհին հայտնի դարձավ Առաջին Աշխարհամարտի նախօրեին՝ 1914թ., երբ Գ.Կյուլպենկյանի միջնորդության շնորհիվ այդ ժամանակվա երկու ամենախոշոր «Անգլո-Պերշըն օյլ քամփընի» եւ «Ռոյալ Դաչ-Շելլ» նավթային ընկերությունները ստեղծեցին հատուկ կոնսորցիում, որը թուրքական կառավարության համաձայնությամբ պետք է շահագործեր Միջին Արեւելքի նավթային հանքավայրերը: Նորաստեղծ կոնսորցիումի եւ Գ.Կյուլպենկյանի միջեւ տեղի ունեցած երկար բանակցություններից հետո որոշվեց, որ մատուցած ծառայության համար նա դառնում էր նորաստեղծ կոնսորցիումի արժեթղթերի 5%-ի սեփականատերը (shareholder): Աշխարհի ամենաշահավետ համարվող այս գործարքից հետո է, որ Գ.Կյուլպենկյանին՝ իր ժամանակների ամենահայտնի եւ ամենահարուստ մարդկանցից մեկին, սկսեցին կոչել «Պարոն Հինգ Տոկոս»:

Գ.Կյուլպենկյանի կյանքն ու գործունեությունը մշտապես եղել է համընդհանուր եւ սեւեռուն ուշադրության կենտրոնում: Տվյալ դեպքում, սակայն, առավել հետաքրքրական է հետեւյալ դրվագը նրա կյանքից: 1896թ., երբ Օսմանյան կայսրությունում տեղի էին ունենում հայերի զանգվածային սպանությունները, 27-ամյա Կյուլպենկյանը, կնոջ եւ նորածին զավակի հետ հեռանում է Թուրքիայից եւ դեպի Եվրոպա ճանապարհին, մի քանի ամիս անց է կացնում Կահիրեում, ուր ապրում էին նրանց բարեկամներն ու ազգականները: Այդ վերջինների թվում էր նաեւ

Նուպար փաշան՝ Պողոս Նուպարի հայրը, որը Եգիպտոսի այդ ժամանակվա ամենահայտնի եւ ամենահարգված պետական գործիչն էր եւ որը երկրի վարչապետի պաշտոնից հանգստի էր հեռացել ընդամենը մեկ տարի առաջ: Հենց նա էլ հյուրընկալեց երիտասարդ ամոլին: Գ.Կյուլպենկյանի որդին՝ Նուպար Կյուլպենկյանը, իր գրքում բերում է մոր՝ Նվարդ Եսայան-Կյուլպենկյանի հիշողությունները. «Երբ իմ մայրը Նուպար Փաշայի հետ կառքով անցնում էին Կահիրեի փողոցներով, ֆելլահները ցածր խոնարհվում էին, իսկ ոմանք նույնիսկ փովում էին գետին: Ձիերին ճանապարհ էին մաքրում նրանց առջեւից վազող մարդիկ, որոնց անվանում էին sais, նրանց ձեռքին հատուկ ձողեր էին ձիու հինգ ագիներով: Ագիների քանակը՝ մեկ, երեք կամ հինգ, պայմանավորված էր Փաշայի զբաղեցրած դիրքով: Յոթ ագիների իրավունքը պատկանում էր միայն Խեդիվին»:[46] Գ.Կյուլպենկյանը շատ հպարտ էր այդ մեծանուն մարդու հետ իր բարեկամական հարաբերություններով, որի անունով էլ, ի դեպ, մկրտեց իր անդրանիկ որդուն: Գ.Կյուլպենկյանի մասին պատմող իր գրքում Ռ.Հյուինսը գրում է. «Նուպար Փաշայի հետ իր ընտանեկան կապերի շնորհիվ Կյուլպենկյանը ձեռք բերեց նոր կարգավիճակ... Նա աշխարհահռչակ գործչի ընկերն էր, պրոտեժեն եւ «քեռորդին»: Երբ նրան հարկավոր էր ծանոթանալ Ուելսի իշխանի ֆինանսական խորհրդատու, բազմամիլիոնատեր սըր Էռնստ Կասսելի հետ, Գալուստը օգտագործեց Նուպար Փաշայի ազդեցիկ անունը՝ իշխանը եւ փաշան ընկերներ էին Կահիրե կատարած թագավորական այցի ժամանակներից... Սըր Իվլին Բէրինգի միջոցով Նուպար փաշան վաղեմի կապեր ուներ Բերինգ եղբայրներ՝ հանրահայտ առեւտրական բանկիրների հետ: Նրանք կենսական դեր խաղացին Պարոն Հինգ Տոկոսի վերելքի գործում... Քանի որ փաշան կրթությունը ստացել էր Ֆրանսիայում եւ ֆրանսերենը նրա առաջին լեզուն էր, նա կարողացավ ծանոթացնել Գալուստին Փարիզի ամենաազդեցիկ մարդկանց հետ, ներառյալ Ռոտշիլդները... Երկար զրույցները փաշայի հետ, կարծես, նաեւ կատարելության հասցրին Կյուլպենկյանի՝ իր տարիքի համար արագ զարգացած դիվանագիտական տաղանդը»:[47] Նույն հեղինակը նշում է, որ Կահիրեում Գ.Կյուլպենկյանը «...հանդիպում է մեկ ուրիշ՝ հետագայում հայտնի հայի՝ Նուպար փաշայի որդի Պողոս Նուպարի հետ, ...որը զբաղված էր իր հոր եւ քեռու՝ Աբրահամ փաշայի համար Հելիոպոլիս քաղաքի կառուցմամբ»:[48] Այս հանդիպումներից 34 տարի անց, Գ.Կյուլպենկյանը Պողոս Նուպարի մահից հետո հաջորդում է նրան՝ վերջինիս կողմից հիմնած ՀԲԸ Միության նախագահի պաշտոնում, իսկ ընդամենը մեկ եւ կես տարի անց ներկայացնում է իր հրաժարականը:

Այդ հրաժարականը, ինչպես եւ պետք էր սպասել, մեծ արձագանք ունեցավ սփյուռքում (Խորհրդային Հայաստանում՝ եւ դա նույնպես սպասելի էր, որեւէ ձեւով չանդրադարձան դրան). տարբեր կազմակերպություններ, առանձին հայտնի անհատներ իրենց տեսակետներն ու գնահատականներն էին հայտնում այդ դեպքի վերաբերյալ: Թե ժամանակակիցների համար եւ թե այսօր Գ. Կյուլպենկյանի հրաժարականի պարզաբանումը հանգում է երկու հիմնական հարցի: Առաջինը՝ ինչո՞վ էր պայմանավորված եւ որքանո՞վ էր արդարացված Ա.Խանջյանի մեղադրանքը Գ.Կյուլպենկյանի հասցեին եւ երկրորդը՝ Գ.Կյուլպենկյանի համար Ա.Խանջյանի ճառը պատճա՞ռ էր, թե՞ առիթ Միության նախագահի պաշտոնից հրաժարվելու համար: Նշված հարցերից առաջինը մեր օրերում հատուկ քննարկման առարկա դարձավ Կ.Դալլաքյանի կողմից, որի «ՀԲԸ Միության նախագահ Գ.Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ» աշխատությունը ՀԲԸ Միության պատմությանը առնչվող եզակի գիտական ուսումնասիրություններից է:

Վերլուծելով Ա. Խանջյանի 1932թ. հոկտեմբերի 14-ին արտասանած ճառը այդ տարիներին Խորհրդային Միությունում եւ արտասահմանում ընթացող քաղաքական երեւույթների լայն համատեքստում, Կ.Դալլաքյանը տալիս է հետեւյալ բացատրությունը: 1920-ականներին թուրքական քարոզչությունը, ցանկանալով ամեն կերպ խոչընդոտել հայ գաղթականների կենտրոնացմանը Սիրիայում՝ իր հարավային սահմանների մերձակա շրջաններում, սկսում է հմտորեն օգտագործել այդ երկրում «Հայկական օջախի» ստեղծման առասպելը: Թուրքիայի ներկայացմամբ այդ ծրագրի հեղինակներն ու իրագործողներն էին արեւմտյան իմպերիալիստական երկրները, առաջին հերթին Ֆրանսիան, ինչպես նաեւ նրանց կամակատար հայ քաղաքական կուսակցությունները, նախ եւ առաջ Դաշնակցությունը: Նույն այդ ժամանակ Խորհրդային Միության իշխանությունները, տարված արտաքին թշնամիներ փնտրելու մոլուցքով, անընդհատ հայտարարում էին իմպերիալիստական երկրների մոտալուտ ռազմական հարձակման մասին: Այդ քարոզչության հայկական տարբերակում նույնպես կարեւոր տեղ էր հատկացվում նույն այդ «օջախին»: «Դաշնակները, ֆրանսիական կառավարության «բարձր» հովանավորությամբ,- գրում էր «Խորհրդային Հայաստան» թերթը 1931թ. հունիսյան համարներից մեկում,- ամեն կերպ աշխատում են անհրաժեշտ մարդկային մատերիալ համախմբել հյուսիսարեւելյան Սիրիայում: Այդ «օջախը», հանդիսանալով Սիրիայում աճող հեղափոխական շարժումները ճնշելու մի հենակետ ֆրանսիական իմպերիալիզմի համար, միաժամանակ հանդիսանալու է միջանկյալ մի օղակ «քրդական ռազմաբեմի» եւ Միջերկրական միջեւ, որն ըստ հարկին կօգտագործվի ֆրանսիական իմպերիալիզմի կողմից: Այդ «օջախը» լինելու է հակախորհրդային պատերազմի պատրաստության մի օջախ»:[49] Սիրիայում «Հայկական օջախի» մասին թուրքական եւ խորհրդահայ քարոզչական գործունեությունը հասավ իր գագաթնակետին, երբ 1931թ. Ազգերի Լիգան եւ Նանսենյան գրասենյակը ՀԲԸ Միության հետ համագործակցաբար ծրագրավորում էին Հունաստանի գործազուրկ եւ անօթեւան հայ գաղթականներին տեղափոխել Սիրիա: Այդ պայմաններում Հայաստանի իշխանությունները դիմում են վճռական միջոցների: Կ.Դալլաքյանը գրում է. «Հայկական օջախի» առասպելը ընդունվել է որպես վերջնական ճշմարտություն, պատճառել է վիթխարի սարսափ, թուրքական քարոզչությունը եւ թերեւս այլ ծառայությունները շարունակաբար ուժեղացրել են ճնշումը, հավանաբար հարկադրանք է գործադրվել նաեւ կենտրոնից, եւ, ի վերջո ընդունվել է հապճեպ մի վճիռ՝ կատարել հայրենադարձություն եւ հենց դա հակադրել «Հայկական օջախին», խանգարել այդ «իմպերիալիստական ծրագիրը»: Կարճ. 1931 թվականին ձեռնարկած հայրենադարձությունը հետապնդում էր հստակ քաղաքական նպատակ»:[50] Սակայն, շարունակում է Կ.Դալլաքյանը, Թուրքիային հանգստացնելու համար դա բավարար չէր. «պետք էր հարվածը հասցնել «Հայկական օջախին», որը թեպետ ծայրեծայր հորինված էր, բայց իբրեւ գաղափար արդեն գոյություն ուներ: Այդ գաղափարի իրականացումը հնարավոր էր միայն ֆինանսական միջոցներով, իսկ ֆինանսական միջոցների տերը Բարեգործականի նախագահ Գ.Կյուլպենկյանն էր: Հենց Գ.Կյուլպենկյանի անձն էլ ընտրվեց որպես հիմնական թիրախ, որի խոցումով կարող էր քանդվել ամբողջ կառույցը: Գ.Կյուլպենկյանը հարմար թիրախ էր, մանավանդ որ բոլորին հայտնի էր որպես խոշոր կապիտալիստ, իսկ խորհրդային քարոզչության աչքում նաեւ իբրեւ «իմպերիալիստական շրջանակների հետ սերտ կապեր ունեցող»:[51]

Կ.Դալլաքյանի տեսակետը՝ ներգաղթին վերաբերող իր մասով թվում է համոզիչ, հօգուտ դրա հեղինակը բերում է մի շարք փաստարկներ: Միայն թե նրա այն թեզը, որ 1931թ. սկսված ներգաղթը զուտ քաղաքական նպատակ ուներ, քանի որ Հայաստանը տարիներ շարունակ ի վիճակի չէր կազմակերպել ներգաղթ, «առավել եւս ի վիճակի չէր 1931թ. ապրիլի 27-ի երկրաշարժից հետո», որոշ ճշգրտման կարիք ունի: Բանն այն է, որ Խորհրդային Հայաստանը, հաշվի առնելով նրա սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, թե 1931թ., թե մինչ այդ՝ 1925, 1927 թթ. եւ թե հետագայում՝ 1936, 1946-1948թթ. երբեք էլ պատրաստ չէր զանգվածային ներգաղթի, ուստի եւ 1931թ. ներգաղթը այդ առումով չէր տարբերվում մյուսներից: Մյուս կողմից, արդեն նշվեց, որ 1927թ. հետո

ՀԲԸ Միությունը եւ Հայաստանի իշխանությունները մշտապես քննարկում էին հաջորդ ներգաղթի հարցը եւ վերջինները տարբեր պատճառներով, ըստ էության, միայն հետաձգում էին, ոչ թե հրաժարվում այն իրականացնելուց: Այլ բան է, որ նրա անցկացման ժամկետը որոշելիս, ըստ երեւույթին, հաշվի առնվեց նաեւ «սիրիական օջախի» գործոնը: Հարկ է նշել նաեւ, որ կապիտալիստական եւ որեւէ այլ երկրից մարդկանց կամավոր ներգաղթը Խորհրդային Միություն, ընդհանրապես միշտ էլ ուներ հստակ քաղաքական եւ գաղափարախոսական իմաստ ու նշանակություն: Կարելի է ասել, որ Խորհրդային Միության քաղաքական նպատակները ներգաղթի հարցում ակամա համընկնում էին հայ ժողովրդի գերագույն շահերի հետ, եւ որ Խորհրդային Հայաստանի իշխանություններին մնում էր լավագույնս օգտվել հնարավորությունից, ծառայեցնելով այդ նպատակին թե սփյուռքի ֆինանսական ներուժը եւ թե ստեղծելով երկրում անհրաժեշտ պայմաններ ներգաղթողներին ապրելու ու աշխատելու համար:

Ինչ վերաբերում է Գ.Կյուլպենկյանի հասցեին արած մեղադրանքների բացատրությանը, ապա այն կարիք ունի արդեն հավելյալ փաստարկման: Նախ, ո՞րն էր երաշխիքը, որ Ա.Խանջյանի ճառից հետո Գ.Կյուլպենկյանը կհրաժարվեր ֆինանսավորել գաղթականների տեղափոխումը Սիրիա: Եթե նա իսկապես ուներ այդպիսի մտադրություն, ապա նույնիսկ Հայաստանի առաջնորդի հետ հակառակվել չցանկանալու դեպքում, նա հեշտությամբ կարող էր դա անել անուղղակի ձեւով, ոչ որպես Միության նախագահ եւ առանց իր անունը տալու: Կարեւորն այն է, սակայն, որ նման խնդիր այլեւս չկար. 1931թ. սեպտեմբերի առաջին օրերին Ս.Տեր-Գաբրիելյանի հետ Գ.Կյուլպենկյանի հանդիպումից հետո արդեն որոշվել էր, որ Հունաստանի հայ գաղթականները պետք է ներգաղթեին Հայաստան: ՀԲԸ Միության ծրագրերի փոփոխման փաստը բազմիցս նշվել էր տարբեր, այդ թվում նաեւ Երեւան ուղարկված գրություններում: «Բնականաբար այլեւս Սուրիոյ ձեռնարկը կը մոռցուի, քանի որ Յունաստանի գաղթականներուն առջեւ բաց են մայր-հայրենիքին դուռները, եւ, իսկապէս, մեկ տարուան ընթացքին 27 հոգի միայն մեկնած են Սուրիա, ան ալ սխալմունքի մը հետեւանքով»:[52] Սիրիա տեղափոխելու մասին ընդհանրապես չէր խոսվում նաեւ Հայաստան ներգաղթին նվիրված վերը հիշատակված Գ.Կյուլպենկյանի սեպտեմբերի 30-ի կոչում: Ա.Խանջյանն իր ճառը կարդաց այդ կոչից երկու շաբաթ անց, այսինքն, կամ նա տեղյակ չէր դրան, ինչը քիչ հավանական է, կամ էլ ինչ-ինչ պատճառներով անտեսեց:

Այս ամբողջ պատմության մեջ խիստ կարեւոր է թվում Ս.Տեր-Գաբրիելյանի այցը Փարիզ: Կ.Դալլաքյանը, նշելով, որ մինչ այդ այցը արդեն հայտնի էին ՀԲԸ Միության նախագահի բանակցությունները Սիրիայում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի եւ Նանսենյան գրասենյակի հետ, որ «Խորհրդային Հայաստան»-ում արդեն տպագրվել էին Գ.Կյուլպենկյանի դեմ ուղղված նյութեր, արդարացիորեն տալիս է կարեւոր մի հարց. «Ինչո՞ւ, այնուամենայնիվ, Ս. Տեր-Գաբրիելյանը գնաց Փարիզ, կասկածի եւ հարվածի տակ դնելով իր վարկն ու հեղինակությունը»:[53] Հարցը, սակայն, մնում է անպատասխան: Ակնհայտ է, որ նա գնաց ոչ ներգաղթի մասին հայտարարություն անելու եւ ոչ էլ նույն այդ հարցով ֆրանսիական իշխանությունների հետ հանդիպելու համար՝ ներգաղթելու էին Հունաստանից եւ Բուլղարիայից: Վստահաբար կարելի ասել, որ գեթ Միության ղեկավարության հետ հանդիպումների նպատակները երկուսն էին. կանխապես ստանալ Միության համաձայնությունը՝ օժանդակել Հունաստանի հայերի ներգաղթին Հայաստան եւ դրանով իսկ դադարեցնել նրանց Սիրիա տեղափոխման ծրագիրը եւ, ապա, ապահովել անհրաժեշտ ֆինանսներ՝ իրականացնելու ներգաղթը Հայաստան: Առաջին խնդիրը լուծվեց հաջողությամբ. Հայաստանի ներգաղթը լիովին համապատասխանում էր Միության ազգահավաքման վաղեմի գաղափարին, այն, միաժամանակ, կապված էր շատ ավելի քիչ բարդությունների հետ, քան նախորդ, «սիրիական» ծրագիրը:

Հարկ է նշել, որ Հունաստանի հայ գաղթականների հարցի հետ միաժամանակ առաջ եկավ նաեւ Բեյրութի եւ Հալեպի «քեմպերում»՝ ճամբարներում ապրող բազմահազար հայերի հարցը: Քեմպերում տիրող հակասանիտարական վիճակի, դրանք զբաղեցրած հողատարածքների սեփականատերերի բողոքների եւ այլ պատճառներով տեղական իշխանությունները որոշել էին անհապաղ քանդել դրանք, ինչի հետեւանքով մոտ 15.000 հայ գաղթականներ մնալու էին անօթեւան: ՀԲԸ Միությունը, ի պատասխան Նանսենյան գրասենյակի դիմումների, որոշեց իր հնարավորության սահմաններում ֆինանսավորել բնակելի տների կառուցումը Բեյրութի եւ Հալեպի հայության համար: Եվ եթե Միությունը մեծ պատրաստակամությամբ հրաժարվեց «Հունաստանից դեպի Սիրիա» ծրագրից, փոխարինելով այն «Հունաստանից դեպի Հայաստան» ծրագրով, ապա այս դեպքում նա պարզապես պարտավորված էր այն շարունակել: Այդ առիթով ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը գրում էր. «քաղ. Խանճեանի կողմէ արտասանած ճառին մէջ՝ Տ.Կիւլպէնկեանի ուղղուած բոլորովին անհիմն մեղադրանքը ամենադառն տպաւորութիւն գործեց, եւ նոյնքան եւ խոր վիշտ պատճառեց Կեդր. Վարչ. Ժողովին, որ

րոպէ մը իսկ չէ խորհած հայրենիքէն դուրս «ազգային օջախ»-ի մասին, քանզի մէն մի գաղութ, մէջը ըլլալով Սուրիան, ժամանակաւոր կայան մըն է հայրենաբաղձ գաղթականներու համար. իսկ արտասահմանի մէջ գաղթականներուն ընծայուած եղբայրական օգնութիւնը, առանց որուն շատ աւելի ահաւոր եւ ընդարձակ թշուառութիւն մը պիտի վիճակուէր մեր քամբախտ ազգին այդ յուսալքուած բեկորներուն, ուրիշ կերպով արդար պիտի չըլլար բացատրել բայց եթէ մարդասիրական անժխտելի պարտականութեանց կատարումովը. հետեւաբար, ներելի պիտի չըլլար որ ՀԲԸ Միութիւնը այդ մեղադրուած նուազագոյն օժանդակութիւնը մերժէր, մինչեւ որ հայրենիքէն անջատուած եւ ոեւէ պաշտպանութենէ զրկուած մեր դժբախտ հայրենակիցները իրենց նախահայրերուն բնավայրը կարենան փոխադրուիլ, ինչ որ երկար ժամանակի հարց է»:[54] Բայց նոյնիսկ այդ պայմաններում Միությունը Նանսենյան գրասենյակի համաձայնությամբ պետք էր «Սուրիո անտուն գաղթականներու գործին համար յանձն առած 10.000 ոսկիին կէսը միայն վճարել, որպէսզի ինչ գումար որ աւելնայ բարդուի ներգաղթի հիմնադրամին վրայ»:[55] Այսպիսով, եթե «Հայկական օջախի» կարծեցյալ ծրագրի բաղկացուցիչ մասերն էին, մի կողմից, Հունաստանի գաղթականների տեղափոխումը Սիրիա, եւ մյուս կողմից՝ Բեյրութում ու Հալեպում տների կառուցումը անտուն գաղթականների համար, ապա 1931թ. սեպտեմբերին, հատկապես Ս.Տեր-Գաբրիելյանի Փարիզ այցից հետո, Միությունը որոշել էր օժանդակել նրանցից միայն երկրորդին: Եթե թուրքական քարոզչությունը դրանում նույնպես վտանգ էր տեսնում իր երկրի անվտանգության համար, ապա, նույնիսկ նկատի առնելով հնարավոր քաղաքական հաշվարկները, դժվար է պատկերացնել, որ Հայաստանի ղեկավարությունը ինքնուրույնաբար կամ էլ կենտրոնի թելադրանքով, պահանջեր ՀԲԸ Միությունից հրաժարվել Բեյրութում եւ Հալեպում մինչ այդ արդեն հաստատված հայերին օգնելուց:

Այլ ընթացք ունեցավ Ս.Տեր-Գաբրիելյանի այցի ժամանակ առաջ քաշված երկրորդ՝ Հայաստան ներգաղթի ֆինանսավորման հարցի լուծումը: Ահա թե ինչ է գրել այդ առիթով Վ. Մալեզյանը, որը, ի դեպ, Միության ղեկավարներից միակն էր, որ Գ.Կյուլպենկյանի հրաժարականից հետո էլ գործնական եւ անձնական սերտ հարաբերություններ պահպանեց նրա հետ. «Քանի մը ամիս առաջ (Վ.Մալեզյանը նկատի ունի Ա.Խանջյանի ճառը - Էդ. Մ.) Փարիզ այցելած էր Հայաստանի Վարչապետը Սահակ Տէր-Գաբրիէլեան, որ ներգաղթի պաշտօնական առաջարկը բերած էր եւ թելադրեց որ Բարեգործականի նախագահը այդ նպատակին համար ինքն իսկ հանգանակութիւն մը բանայ, հայրենադարձներուն մինչեւ Հայաստան ծախսերուն համար: Բայց Կիւլպէնկեան

գոհացաւ վայելչօրէն պատուասիրելով մեծանուն հիւրը եւ նախամեծար համարեց յայտարարել խնդրանքիս հակառակ, թէ ինք պիտի սպասէ հանգանակութեան արդիւնքին, գիտակցօրէն իր բաժինը բերելու համար: Անկասկած, շատ անախորժ տպավորութեամբ մեկնեցաւ Վարչապետը, ինչպէս հաստատեցին ինձի Թահմիզեան եւ Աւետիք Իսահակեան»:[56]

Ս.Տեր-Գաբրիելյանի «անախորժ տպավորությունը» բնական էր ու հասկանալի, սակայն դատելով հետագա դեպքերից, թվում է, թե նա, այնուամենայնիվ, շարունակեց որոշակի հույսեր կապել Գ.Կյուլպենկյանի ֆինանսական օժանդակության հետ: Հատկանշական է, որ վերադարձից հետո տված հարցազրույցում, նա հատուկ նշում է իր հանդիպումը Գ.Կյուլպենկյանի հետ եւ ընդհանրապես որեւէ բացասական կարծիք չի հայտնում նրա եւ ՀԲԸ Միության մասին: Ավելի ուշ՝ հոկտեմբերի 10-ի իր հոդվածում, քննադատելով «Հայկական օջախի» գաղափարը, նա նույնպես ոչ մի խոսք չի ասում Միության եւ նրա նախագահի մասին: Այդ կեցվածքին նա հարազատ մնաց եւ հետագայում: Եթե ընդունենք այն թեզը, որ Ա.Խանջյանի մեղադրանքները Գ.Կյուլպենկյանի հասցեին թելադրված էին կենտրոնից՝ Մոսկվայից կամ էլ Թիֆլիսից, ապա այդ դեպքում Հայաստանի վարչապետի նման վարքագիծը դառնում է խիստ զարմանալի, եթե ոչ անհավանական: Այդ իմաստով ուշագրավ է, որ 1937թ. Ժողկոմխորհի նախագահի նախկին տեղակալ Ար. Երզնկյանը հարցաքննություններից մեկի ժամանակ, խոսելով Ս.Տեր-Գաբրիելյանի արտասահմանում սփյուռքահայերի հետ ունեցած հանդիպումների մասին, ասել է. «Տեր-Գաբրիելյանի Փարիզում եղած ժամանակ «Խորհրդային Հայաստան» թերթում հոդված տպագրվեց Կյուլպենկյանի դեմ: Նա շատ վրդովված էր դրանից եւ ասում էր, որ հոդվածը խանգարել է նրա բանակցություններին, որ Կյուլպենկյանը հոդվածից հետո հրաժարվեց աշխատել Բարեգործականում, ուր նա նախագահն էր»:[57]

Ս.Տեր-Գաբրիելյանի նման վարքագիծը բացատրելի է դառնում, եթե ենթադրենք, որ Ա.Խանջյանի մեղադրանքները Միության նախագահի հասցեին նրա սեփական նախաձեռնության արդյունքն էին: Կասկածից վեր է, որ Հայաստանի վարչապետի այցը Փարիզ եւ բանակցությունները միլիոնատեր Գ.Կյուլպենկյանի հետ հնարավոր էր Հայաստանի առաջին դեմքի՝ նույն Ա.Խանջյանի թույլտվության կամ առնվազն համաձայնության դեպքում միայն: Ըստ ամենայնի ինքը՝ Ս.Տեր-Գաբրիելյանը, գրեթե վստահ էր իր հաջողության մեջ: Իսկ Ա. Խանջյա՞նը: Այդ դժվար հարցի պատասխանը միգուցե կարելի է գտնել Ա.Խանջյանի կնոջ՝ Ռոզա Վինդզբերգի վկայություններում.

«...1930 թվականից մինչեւ վերջին ժամանակներս (1936թ.) Հայաստանի Կ/բ/Կ Կենտկոմի ղեկավար կորիզում գրեթե երբեք չի եղել լիարժեք համատեղ աշխատանք եւ միություն: ...Խանջյանին Հայաստանի Կ/բ/Կ Կենտկոմի քարտուղար նշանակելուց հետո, համատարած կոլեկտիվացման հետ կապված դժվարությունների շրջանում, Խանջյանի դեմ ազգայնամոլության մեղադրանք առաջ քաշվեց Հ.Կոստանյան-Բանայանի, Մ.Զալյանի, Մանդալյանի, Աթանես Ակոպովի, Գուրգեն Քալաշյանի եւ մյուս խմբերի կողմից: Ամատունին, որն այդ ժամանակ ՀԿ/բ/Կ Կենտկոմի երկրորդ քարտուղարն էր, շատ մոտ էր այդ խմբի հետ: Մյուս կողմից նրա դեմ աշխատում էր Հայաստանի Կենտգործկոմի նախկին նախագահ Կասյանի ազգայնամոլական խումբը:

«Խանջյանի բնավորության առանձնահատուկ գծերից էր նրա չափազանց վստահությունը մարդկանց նկատմամբ եւ պետք է ասեմ, որ նա երկար ժամանակ չէր հավատում, որ իր դեմ ինչ-որ պայքար է մղվում, նույնիսկ այն ժամանակ, երբ նրան փաստեր էին ներկայացնում: Կիրովի մասնակցությամբ, Հայաստանից հանվեցին առաջին խմբի բոլոր անդամները, հանվեց նաեւ Կասյանը, իսկ Ամատունին մերկացվեց որպես Լոմինաձեի կողմնակից եւ հանվեց աշխատանքից:

«Մինչեւ 1933 թվականի սկիզբը սուր պայքար չէր նկատվում (այն ժամանակ դա կոչվում էր անսկզբունքային-խմբակային պայքար, այժմ պարզ է, որ այդ ամենը կրում էր քաղաքական բնույթ): Այդ ժամանակներում անհանգստացնում էր Տեր-Գաբրիելյանի աշխատանքը: Նա գտնում էր, որ Տեր-Գաբրիելյանի մոտ ուժեղ ազգայնամոլական տրամադրություններ կան... քանի որ նա Ժողկոմխորհի նախագահն էր, ապա բազմիցս Խանջյանն ասում էր, որ չի կարող նրան այս կամ այն զիջումներ չանել, մասնավորապես, խորհրդային ապարատի կադրերի ընտրության հարցում... 1935թ. հասան նրան, որ Հայաստանից տարան Տեր-Գաբրիելյանին, որի հետ այդ ժամանակ հարաբերությունները խիստ սրվել էին...»:[58]

Իշխանության վերնախավում ընթացող նման պայքարը, որի առանցքն էին ազգայնամոլության մեջ փոխադարձ ուղղակի եւ անուղղակի մեղադրանքները, բացատրելի է դարձնում Ա.Խանջյանի վարքագիծը: Ս.Տեր-Գաբրիելյանի եւ Գ.Կյուլպենկյանի բանակցությունների հաջող ավարտի դեպքում, նա կարող էր մատուցել այն որպես իր վարած քաղաքականության հաղթանակ: Բայց տպավորություն է ստեղծվում, որ Ա.Խանջյանը ոչ միայն չէր հավատում հաջող արդյունքին, այլեւ չէր էլ ցանկանում այն: Տեղեկանալով Ս.Տեր-Գաբրիելյանի այցի մանրամասներին՝ նա անտեսեց ձեռք բերած համաձայնությունները եւ շտապ կերպով հանդես եկավ իր հայտնի ճառով: Եվ թեեւ մեղադրանքները հնչեցին Գ.Կյուլպենկյանի հասցեին, նրանք ոչ պակաս չափով ուղղված էին նաեւ վարչապետի դեմ, որը ընդամենը մեկ ամիս դրանից առաջ սիրալիր ընդունելության էր արժանացել «իմպերիալիստական շրջանակների հետ սերտ կապեր ունեցող» նույն Գ.Կյուլպենկյանի կողմից: Ըստ էության, այդ ճառով Ա.Խանջյանը դատապարտում էր, առանց անունը տալու, Ս.Տեր-Գաբրիելյանի այցը, կասկածի տակ դնում նրա՝ Կ.Դալլաքյանի բառերով ասած, «վարկն ու հեղինակությունը» եւ դրանով իսկ ամրապնդում իր դիրքերը իշխանության վերնախավում: Իսկ թե ինչպիսին կլիներ Գ.Կյուլպենկյանի հակազդումը՝ դա, կարծես, ամենաքիչն էր հետաքրքրում Ա.Խանջյանին՝ Գ.Կյուլպենկյանի որեւէ պատասխան քայլը, սկսած ներգաղթը ֆինանսավորելուց եւ վերջացրած նրա հրաժարականով, կարելի էր ներկայացնել որպես կոմունիստ Խանջյանի հաղթանակը կապիտալիստ Կյուլպենկյանի հանդեպ:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ թե այս եւ թե մյուս այլ դեպքերում, փորձելով բացատրել Ա.Խանջյանի վարքագիծը, նրա՝ որպես Հայաստանի առաջին դեմքի գործունեությունը, ակամա մոռացության են տրվում նրա անձնային հատկանիշները, որոնք ձեւավորվել էին նրա կյանքի յուրահատուկ պայմանների ընթացքում:

Ա.Խանջյանը ծնվել էր 1901թ. Վանում, ուստի եւ նրա մանկության տարիները համընկան պատմական այնպիսի իրադարձությունների հետ, ինչպես Առաջին Աշխարհամարտը, ցեղասպանությունը, տեղահանումները, հայրենի օջախի, հարազատների անվերադարձ կորուստը եւ այլն, ինչը անխուսափելիորեն իր բացասական ազդեցությունը ունեցավ ինչպես ողջ հայ ժողովրդի, այնպես էլ այդ դեպքերի ականատես եւ մասնակից յուրաքանչյուր հայ մարդու հոգեբանական բնութագրերի ձեւավորման վրա: 1917թ. սկսած նա զբաղվում է հեղափոխական գործունեությամբ եւ այդ ընթացքում երկու անգամ ձերբակալվում: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո եւ մինչեւ 1921թ. հակաբոլշեւիկյան ապստամբությունը, Ա.Խանջյանը աշխատում է որպես Հայկոմկուսի Երեւանի կոմիտեի քարտուղար: Այսպիսով, 16 տարեկանից Ա.Խանջյանը ապրեց եւ գործեց հեղափոխական ժամանակներում, երբ Թալեյրանի խոսքերով՝ «ընդունակություն է համարվում միայն հանդգնությունը, իսկ վեհություն՝ միայն ծայրահեղությունը»:[59] Կյանքի նման ուղի էին անցնում իր հասակակիցներից շատերը՝ հեղափոխություն ապրող երկրի համար դա բնական երեւույթ է, եւ այդ առումով Ա.Խանջյանի կենսագրության այդ հատվածը նման էր իր գործընկերների ապրած տարիներին:

1921թ. Ա.Խանջյանը կուսակցության որոշումով մեկնում է Մոսկվա՝ Կոմունիստական համալսարանում ուսանելու նպատակով, իսկ մեկ տարի անց՝ Լենինգրադ, ուր վեց տարի աշխատելով կուսակցական մարմիններում՝ զբաղվում է քարոզչական աշխատանքով: «1925թ., երբ Զինովեւը Լենինգրադի տեր ու տիրականն էր,- նշում է Մերի Կիլբըրն Մատոսյանը,- Խանջյանը քաղաքի այն կոմունիստներից էր, որը ընդդիմադիր էր Զինովեւին եւ բռնել էր Ստալինի կողմը: Զինովեւ-Կամենեւ-Տրոցկի ընդդիմության ջախջախումից հետո, Խանջյանի դերը կուսակցության մեջ սկսեց արագ աճել: Նա մտերմացավ Սերգեյ Կիրովի հետ, որը Ստալինի աջ ձեռքն էր եւ որը 1926թ. ստանձնեց Լենինգրադի կուսակցական կազմակերպության ղեկավարությունը»:[60] Այդ յոթ անընդմեջ տարիների ընթացքում Ա.Խանջյանը կտրված մնաց հայ իրականությունից՝ թե իր աշխատանքի բնույթով եւ թե իր անձնական կյանքում, հատկապես Ռ.Վինդզբերգի հետ ամուսնանալուց հետո: Միաժամանակ, նույն այդ տարիներին, ապրելով եւ աշխատելով ազգային-մշակութային առումով իրեն օտար միջավայրում, նա, ինչպես եւ որեւէ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, մշտապես դատապարտված էր ինքնահաստատման՝ որպես մասնագետ, որպես անհատ, որպես հայ:

1928թ. կուսակցության որոշումով Ա.Խանջյանը վերադառնում է Հայաստան, մոտ երկու տարի աշխատում է որպես Հայաստանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ, իսկ 1930թ. մինչեւ իր կյանքի ավարտը՝ առաջին քարտուղար: Եվ նորից նրա առջեւ կանգնեց ինքնահաստատման խնդիրը: Այս անգամ Խորհրդային Միության մասշտաբով, որպես թեեւ ամենափոքր, բայց եւ այնպես մի ամբողջ հանրապետության ղեկավար: Եթե այս հարցում նրան կարող էին որոշ չափով օգտակար լինել իր կապերը Մոսկվայում եւ Լենինգրադում, ապա այլ էր իրավիճակը Հայաստանի ներսում: Այստեղ նա պետք է ապացուցեր սեփական կարողությունները իրեն անծանոթ միջավայրում, ուր կային փորձառու, հեղինակություն եւ հարգանք վայելող գործիչներ, ինչպես, օրինակ, Ս.Կասյանը, Աս.Մռավյանը, Ս.Տեր-Գաբրիելյանը, Ար.Երզնկյանը, պետք է ճիշտ կողմնորոշվեր իշխանության ներսում ընթացող թաքնված պայքարում, պետք է կարեւորագույն որոշումներ ընդուներ ոչ միայն զուտ կուսակցական հարցերի, այլեւ Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ մշակութային զարգացման վերաբերյալ: Բայց կար եւ մեկ այլ, միգուցե ամենադժվար լուծելի խնդիր՝ իր անմիջական վերադասի՝ Անդրֆեդերացիայի իշխանությունների, անձամբ Լ.Բերիայի հետ հարաբերությունները, որոնց առանցքը Հայաստանի շահերի, ինքնուրույն գործելու իր իրավունքի պաշտպանումն էր: Այս եւ մի շարք այլ կարեւորագույն հարցերի միաժամանակ, արագ

եւ ճիշտ լուծումը դժվար խնդիր էր 30-35 տարեկան, անհրաժեշտ կենսափորձ ու մասնագիտական գիտելիքներ չունեցող Ա.Խանջյանի համար: Նա, ըստ էության, միշտ գործեց մենակ՝ չվստահելով Բերիայի դրածոներին, միեւնույն ժամանակ չունեցավ մնայուն դաշնակիցներ Հայաստանի իշխանության ավանդական, «հին» վերնախավում: Կարելի է ասել, որ իր կյանքի հատկապես վերջին 5-6 տարիների ընթացքում Ա.Խանջյանը մշտապես գտնվում էր նյարդահոգեկան եւ ֆիզիկական (տարիներ շարունակ թոքախտով հիվանդ էր) գերլարվածության՝ սթրեսային վիճակում, ինչով էլ, հնարավոր է, բացատրվում է որոշ դեպքերում ոչ համարժեք եւ անհետեւողական վարքագիծը:

Ինչպես նշվեց, Գ.Կյուլպենկյանի հրաժարականի հետ կապված երկրորդ հարցը նրա այդչափ կտրուկ վճռական հակազդումն էր Ա.Խանջյանի ճառին:

Իր հրաժարականը նա պատճառաբանել էր Ա.Խանջյանի, Հայաստանի կառավարության կողմից իր անձի դեմ «անհեթեթ առարկութիւնով... նախատինքներ, բացարձակ անտեղի հարձակում» անելով, ինչը անհնար էր դարձնում իր՝ որպես ՀԲԸ Միության նախագահի համագործակցությունը Խորհրդային Հայաստանի իշխանությունների հետ: Ընդունելով հանդերձ, որ կային եւ այլ պատճառներ (այդ մասին ստորեւ), թվում է, որ իր իսկ կողմից նշվածը արդեն բավական էր հրաժարական ներկայացնելու համար: Իրենց դաստիարակությամբ ու կրթվածությամբ, մտավոր զարգացման մակարդակով, կենսափորձով ու մասնագիտական ունակություններով եւ ուրիշ այլ բնութագրերով Ա.Խանջյանն ու իր գործընկերները այն աստիճան անհամեմատելի էին Գ.Կյուլպենկյանի հետ, որ նման վիրավորական մեղադրանքներից հետո, Գ.Կյուլպենկյանը իսկապես որ կարող էր անպատվաբեր համարել նույնիսկ հեռակա՝ նամակագրական, զուտ պաշտոնական շփումները նույն այդ մարդկանց հետ: Ժամանակակիցները, փորձելով տարհամոզել Գ.Կյուլպենկյանին, հաճախ բերում էին Պողոս Նուպարի օրինակը, որն անուշադրության էր մատնում Երեւանից իր հասցեին ժամանակ առ ժամանակ արվող բոլոր տեսակի եւ նույնչափ անհիմն մեղադրանքները: Գ.Կյուլպենկյանը, սակայն, իր անձնային հատկանիշներով խիստ տարբեր էր Պողոս Նուպարից: Լինելով ընդգծված անհատապաշտության տեր մարդ՝ թե իր գործունեության մեջ եւ թե անձնական կյանքում, Գ.Կյուլպենկյանը չէր կարող եւ չէր ցանկանա զոհաբերել իր «Ես»-ը հանուն որեւէ գաղափարի կամ վեհ նպատակի:

Դրա հետ մեկտեղ, Ա.Խանջյանի մեղադրանքները Գ.Կյուլպենկյանի հրաժարականի համար թե պատճառ էին եւ թե պատրվակ: Ստանձնելով ՀԲԸ Միության նախագահի պաշտոնը Պողոս Նուպարից հետո Գ.Կյուլ-

պենկյանի մասշտաբի տեր անհատը չէր կարող բավարարվել նրա գործը պարզ շարունակողի դերով, ուստի եւ իր առջեւ նպատակ դրեց երկու գերխնդիր: Վ.Մալեզյանի վկայությամբ, «Իր առաջին գործը եղաւ Միութեան Թրքսթները միացնել եւ անոր ամբողջ հիմնադրամներէն կազմել «Ազգային Թրքսթ» մը, կամ տեսակ մը «Հոլտինկ», ուր յետին նուիրատուն իր բաժինը ունենար, ուր հիմնադրամները եւ եկամուտները ճշդուէին ու սահմանուէին բաժնետիրական դրութեամբ: Խանդավառուած էր այդ գաղափարով եւ կը յուսար թէ ամէն ոք, յետին հայն անգամ, պիտի փութար իր բաժինը ունենալ հայոց այդ մեծ Թրքսթին մէջ»: Այս ծրագիրը ձախողվեց այդ տարիներին որոշ անհրաժեշտ ֆինանսական ձեւակերպումների անիրագործելիության պատճառով: «Ասիկա իրեն ցաւ պատճառեց, կարծուածէն աւելի խոր ցաւ մը, որովհետեւ յաջողելու վարժուած մարդ մը ըլլալով չափազանց զգայուն էր ոեւէ ձախողուածքի ինչպէս նաեւ հարուածի առջեւ...»:[61]

Գ.Կյուլպենկյանի երկրորդ կարեւորագույն նպատակը, որի մասին նա հայտարարեց իր առաջին իսկ ճառում, սփյուռքի ողջ հայության եւ հատկապես Դաշնակցության համախմբումն էր Միության շուրջ: «Կը փափագէր ՀԲԸ Միութեան իտէալին շուրջ բոլորել նաեւ Դաշնակցականները, որ մինչեւ այդ օրը իրենց հակամարտ բրոբականտովը միշտ ջանացած էին վարկաբեկել ու քայքայել անիկա. ինք անձնապէս լուրջ արգելք մը չէր տեսներ: Բարեմտօրէն սկսաւ դիմումներ ընել այդ ուղղութեամբ, եթէ ոչ անձամբ անձին, գէթ ուրիշներու միջոցաւ: Բաց աստի համերաշխութեան կոչ մըն ալ հրատարակեց այդ առթիւ: Իր յոյսը դրած էր գլխաւորաբար Ահարոնեանի, Խատիսեանի եւ Ջամալեանի վրայ, որոնց ընձեռած էր նիւթական օժանդակութիւններ. որպէս բարոյական փոխարինութիւն՝ անոնցմէ կ'ակնկալէր փութկոտութիւն իր գաղափարին մօտենալու եւ իր ծրագիրը յաջողցնելու: Ոեւէ դիտողութիւն չըրինք իրեն այդ մասին,- գրում էր Վ.Մալեզյանը, որը, ի դեպ, Սահմանադրական Ռամկավար կուսակցության հիմնադիրներից էր,- ես մանաւանդ զգուշացայ կարծիք յայտնելէ, իր վրայ չի ձգելու համար այն տպաւորութիւնը թէ մենք բացարձակապէս հակառակ ենք այդ գաղափարին կամ չենք հաւատար անոր իրականացման, ինչ որ սակայն մեր ներքին խոր համոզումն էր: Եվ ստուգիւ Կիւլպէնկեան հաստատեց իր բանակցութեանց առթիւ թէ Դաշնակցականներուն հետ կարելի չէ ոեւէ համաձայնութիւն, թէ քանի մը անշան անդամակցութիւններու փոխարէն անոնք կը դնէին արտառոց պահանջներ եւ անընդունելի պայմաններ: Օրին մէկը, երբ ըստ սովորութեան գրասենեակս այցելած էր, թղթածրարը սեղանին վրայ դրաւ ու սկսաւ դառնօրէն արտայայտուիլ: Ցետոյ իր կրած յուսախաբութիւնը աւելի եւս

շեշտուեցաւ, երբ տեսաւ որ դաշնակցական մամուլը ընդհակառակը աւելի եւս շեշտակի կը շարունակէ իր յարձակումները Բարեգործականի դէմ, նոյն իսկ իր անձին ուղղելով ծանր մեղադրանքներ, թէ իրմէ սպասուած արմատական բարեփոխումները չի ներմուծեց Բարեգործականի մէջ, այսինքն թէ չի կատարեց իրենց անհրաժեշտ համարած մաքրագործումները, եւ թէ ե՞րբ արդեօք վերջապէս իրականութիւն պիտի գտնէ ազգային հսկայ բարեգործութեան ձեռնարկը որուն մասին կ'երեւայ թէ անցեալին մէջ խօսելու առիթ ունեցեր է: Կը յիշեմ թէ շատ ազդուեցաւ եւ ես զուր ջանացի հանդարտեցնել ինքը, Պողոս Նուպար օրինակը տալով: Փաշան, կ'ըսէի, գիտէր արհամարհել եւ գործով պատասխանել այդպիսի վայրահաջութեանց: Բայց ինք շատ զգայուն էր եւ չէր հանդուրժեր իր հայրենակիցներէն եկած ոեւէ հարուած»:[62]

Գ.Կյուլպենկյանի հոգեվիճակի մասին են վկայում հետեւյալ տողերը նրա 1930թ. դեկտեմբերի հայտարարությունից. «Հազիւ թէ ստանձնած եմ Հայկական Բարեգործ. Ընդհ. Միութեան Նախագահի պաշտօնս եւ ջանադիր եմ անոր բարոյական եւ նիւթական կացութիւնը ամրապնդելու, չափազանց ցաւ կը պատճառէ ինձ տեսնել որ մեր մամուլին մէկ մասը բանավէճներու անձնատուր կ'ըլլա, կասկածի տակ դնելով Միութիւնը իր ձգտումներուն վերաբերմամբ: Կը կարծէի թէ այդ դիտումնաւոր հրատարակութեանց առաջքը առնելու պիտի ծառայէր այն անկեղծ եւ վճռական յայտարարութիւնը, զոր ըրի պաշտօնի ձեռնարկելուս առթիւ, եւ որուն մէջ կը պարզէի թէ, կուսակցական չըլլալով, պիտի աշխատիմ որ, ինչպէս իր անունն իսկ կը յայտորոշէ, Միութիւնը ըլլայ Տունը բոլոր Հայերուն, առանց կուսակցական կամ կրօնական խտրանքի: Որպէսզի մեր Միութիւնը կարենայ լրիւ կատարել իր Հիմնադիրներուն կողմէ նախատեսուած աշխատանքը, պէտք է որ բոլոր կուսակցութեանց վերաբերող համօրէն Հայերը սիրով նուիրուին անոր: ...Հարկ սեպեցի այս նոր յայտարարութիւնը ընել, միանգամ ընդմիշտ, եւ եթէ անիկա բարերար արդիւնք մը չունենայ, խորապէս պիտի վշտակրիմ»:[63]

Հարկ է նշել մեկ հանգամանք եւս: Նույն այդ տարիներին համաշխարհային տնտեսական հայտնի ճգնաժամի հետեւանքով անգլիական, ամերիկյան եւ այլ տարադրամների արժեզրկման հետ մեկտեղ, սակարաններում մեծ անկում էին ապրում նաեւ արժեթղթերը, ինչը խիստ ծանր հետեւանքներ կարող էր ունենալ ՀԲԸ Միության ընդհանուր ֆինանսական վիճակի վրա: Գ.Կյուլպենկյանի համար, բնական է, խիստ անցանկալի էր նման հեռանկարը, երբ իր անվան հետ կարող էր կապվել մինչ այդ Պողոս Նուպարի նախագահությամբ քսանհինգ տարի ֆինանսապես կայուն Միության սնանկացումը:

Այս տարաբնույթ պարագաների համագումարն էլ հանգեցրեց Գ.Կյուլպենկյանի հայտնի որոշմանը: Հաջողություններին սովոր, աշխարհով մեկ հայտնի ֆինանսիստին ու գործարար մարդուն անկարելի էր գիտակցել իր անհաջողությունը առաջին հայացքից այդքան դյուրին թվացող ազգային ոլորտում: Եվ նա շտապեց օգտվել իր իսկ կողմից նախապես ստեղծված հնարավորությունից: Նրա՝ որպես ՀԲԸ Միության նախագահ արտասանած առաջին իսկ ճառի վերջին դարձվածն էր. «Ամենաերջանիկ պիտի լինիմ եթէ յաջողիմ, եւ եթէ անկարելի լինի, չպիտի վարանիմ հրաժարելու այս բարձր պաշտօնէս»:[64]

Այդ տարիներին սփյուռքի ցուցաբերած վերաբերմունքը Գ.Կյուլպենկյանի հանդեպ չմնաց անպատասխան: Երուսաղեմի Հայոց Պատրիարք Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին հղած իր նամակում նա գրում էր. «...երբ կարելի չըլլար օգնութիւնս տրամադրել կամ շարունակել, ամէնքն ալ դժգոհ կ'ըլլան եւ կարծես թէ կը խորհին թէ ոսկիի աղբիւր մը ունիմ, որ երբեք չի սպառիր եւ որմէ ամէն ոք կրնայ ուզածին պէս առնել: Այս մտայնութիւնը այն աստիճան զզուելի եղած է որ կը սկսիմ դառնօրէն ազդուիլ... Կրնամ հաւաստիացնել Ձեր Գերապատուութիւնը որ եթէ իմ Հորս յիշատակին յարգանքը չըլլար, իմ բնավայրիս համար այլեւս ոեւէ վերաբերում պիտի չունենայի: Ասիկա ըսել չէ թէ չեմ փափագիր ընել յօգուտ իմ հայրենակիցներուս ինչ որ բանաւոր կը սեպեմ, բայց վհատած եմ իմ մասիս անոնց ցոյց տուած ապերախտութենէն եւ սինիքութենէն»:[65]

Չկայացած նվիրատվություններ

Անցնում է երեք տարի, քաղաքական եւ ազգային-քաղաքական բեմում գրեթե ամեն ինչ անփոփոխ է, հատկապես արժե նշել, որ դեռ ողջ է Ա.Խանջյանը եւ կարծես չկա եւ ոչ մի նախադրյալ Գ.Կյուլպենկյանի՝ իրադարձությունների կենտրոնում վերստին հայտնվելու համար: Բայց, ահա, 1936թ. հունվարին Երեւան է հասնում Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ա.Գուլոյանին հասցեագրած Վ.Մալեզյանի նամակը, որում ասվում էր.

«...Հաճույքով տեղեկացնում եմ Ձեզ այն բարի մտադրության մասին, որը օրերս առաջացավ Միության նախկին Նախագահ տ.Գալուստ Կյուլպենկյանի մոտ, մտադրություն, որի վերաբերյալ հարգելի բարերարը երկու անգամ առիթ ունեցավ անձամբ հանդիպել Թուրքիայում դեսպան քաղ. Կարախանի հետ:

«Գալուստ Կյուլպենկյանը՝ անցյալում թրքահպատակ, հեռացել է Թուրքիայից մոտ 40 տարի առաջ եւ ձեռք է բերել անգլիական հպատակություն: Այդ պատճառով Անկարայի կառավարությունը վերջերս հրապարակավ հայտարարել է, որ նա վերջնականապես զրկվել է թրքական հպատակությունից:

«Մեր հարգելի բարերարը Կ.Պոլսում ունի արժեքավոր կալվածներ, որոնք բռնագրավման ենթակա չեն որպես լքված գույք, քանի որ նա փախստական չէ պատերազմի հետեւանքով, այլ մինչ այդ է հեռացել հայրենիքից: Իր կալվածներից ստացվող շահույթը ստացել է նրա ներկայացուցիչը Կ.Պոլսում եւ աստիճանաբար հանձնել է որպես նվիրատվություն բարեգործական հաստատություններին:

«Ըստ այդ հայտարարության, տ.Գալուստ Կյուլպենկյանը օրենքով պարտավոր է հայտարարությունից հետո մեկ տարվա ընթացքում, այսինքն մինչեւ գալող ապրիլ ամիսը, կարգավորել իր բոլոր գործերը եւ իրացնել գույքը: Նրա հիմնական կալվածներն են Սելամեթ կարավանսարայը Ստամբուլում որը ժամանակին գնվել է 20.000 ֆունտ ստերլինգով, որից ստացվող շահույթը տնտեսական ճգնաժամի հետեւանքով 2.000 ֆունտ ստերլինգից ընկել է մինչեւ 700 ֆունտ ստերլինգ, այնուհետեւ Պերայում, Փաշա թաղամասում, գերմանական դեսպանատան հարեւանությամբ առաջնակարգ հողատարածք, որը ժամանակին արժեր 8-10 հազ. ֆունտ ստերլինգ:

«Եվ ահա, տ. Գալուստ Կյուլպենկյանը իրավունք ունի եւ նրան թույլատրված է իր օգտին վաճառել այդ կալվածները, բայց նա նախընտրում է նվիրաբերել դրանք Երեւանի Պետհամալսարանին, իրեն իրավունք վերապահելով հետագայում որոշել այդ նվիրատվության մանրամասները: Բայց, ինչպես ասացի, գործը շատ շտապ է, քանզի շատ քիչ ժամանակ է մնացել՝ առավելագույնը մեկ ամսվա ընթացքում պետք է սկսել գույքի փոխանցման ձեւակերպումները, որպեսզի դեռ մինչեւ ապրիլ ամիսը այդ իրավական գործողությունները ավարտվեն:

«Ներկայացնելով այս առաջարկությունը Խ. Հայաստանի կառավարության ուշադրությանը, խնդրում ենք հնարավորին չափ արագ հայտնել Ձեր նկատառումները, որպեսզի դրա համաձայն արագ ընթացք տալ գործին: Խնդրում ենք նաեւ դրա մասին հաղորդել Մոսկվայի Կենտրոնական կառավարությանը, որի ներկայացուցիչ քաղ. Կարախանը արդեն գրել է Մոսկվա եւ խոստացել է 8-10 օրից Անկարա վերադառնալուն պես զբաղվել այդ գործով...»:[66]

Ա.Գուլոյանին ուղղած Վ.Մալեզյանի մարտի 18-ի նամակից հայտնի է դառնում, որ Թուրքիայում Խորհրդային Միության Լիազոր ներկա-

յացուցչի՝ Լ.Կարախանի (Կարախանյան) ջանքերի շնորհիվ, թուրքական կառավարության հետ կարգավորվել է օրինական ձեւակերպումների հարցը, եւ որ Գ.Կյուլպենկյանը այդ լուրը ստանալուն պես դեսպանին է ուղարկել լիազորագիր, ինչպես նաեւ իր գույքային իրավունքները հաստատող բոլոր փաստաթղթերը: Նույն օրը՝ մարտի 18-ին Լ.Կարախանին հասցեագրած իր նամակում Գ.Կյուլպենկյանը մասնավորապես գրում էր. «...Ինչպես եւ պատիվ ունեցա Փարիզում Ձեր վերջին այցելության ժամանակ անձամբ ներկայացնել Ձեզ, ես հայկական կառավարության սեփական տիրակալմանն եմ նվիրաբերում ...վերջնական եւ անկապտելի ձեւով, մեր (իր եւ իր կնոջ՝ Նվարդ Կյուլպենկյանի - Էդ.Մ.) ողջ գույքը, որը ներկայումս գտնվում է Թուրքիայում, եւ որի հիմքում են Սալամեթ Խանը՝ գտնվում է Բախչէ Կափուում..., ինչպես նաեւ Այազ փաշայում՝ Պերա վայրում գտնվող հողատարածքները, բոլորը առանց բացառության, այնտեղ գտնվող անշարժ գույքի իրավունքով: Իմ ցանկությունն է, որ անշարժ գույքից ստացված եկամուտը կամ նրա վաճառքից ստացված շահույթը տրամադրվի Հայաստանի կառավարության հոգածությանը՝ համալսարանական որեւէ շինություն կառուցելու համար, որի իրագործումը՝ Երեւանի կառավարության համաձայնությամբ, վերապահում եմ ինձ: Ընդ որում, պատիվ ունեմ կից ուղարկել լիազորագիր, որով ես Ձեզ լրիվ ազատություն եմ տալիս Ձեր գործունեության մեջ՝ ձեւակերպումներ եւ փոխանցումներ կատարելու նպատակով... Սեփականատիրությունը հաստատող փաստաթղթերը Ձեզ կուղարկվեն այստեղից մեկ-երկու օրից, քանզի նրանք գտնվում են Լոնդոնում, ուր ես հեռագրեցի, որպեսզի անհապաղ հասցվեն ինձ: Զգիտեմ, ինչպես արտահայտել իմ երախտագիտությունը Ձեր այս մեծ ծառայության համար... որով դյուրացնում եք ինձ համար թանկագին ցանկության իրականացումը՝ օգտակար լինել հայ ժողովրդին, որի վերածնունդը պատիվ է բերում Խորհրդային Միության կենտրոնական իշխանություններին եւ Երեւանի կառավարությանը»:[67]

Նամակում հիշատակած լիազորագիրը բծախնդրությամբ կազմված փաստաթուղթ է, որում Կ.Պոլսում եւ Զմյուռնիայի շրջանում Գ.Կյուլպենկյանին եւ նրա կնոջը պատկանող անշարժ գույքի նկարագրումից հետո, մանրամասն թվարկվում են այն բոլոր իրավունքներն ու լիազորությունները, որոնք նրանց կողմից վերոնշած նպատակով տրվում էին Լ.Կարախանին: Եվ թվում է, թե գործի հաջողությունը ապահովված է՝ առկա են Մոսկվայի համաձայնությունը, Լ.Կարախանի պատրաստակամությունը, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Հենց նման վստահ տրամադրությամբ է գրված Վ.Մալեզյանի ապրիլի 27-ի նամակը Հ.Գարակյոզյանին, որում նա, հույս հայտնելով, որ Լ.Կարախանը արդեն հաջողությամբ լուծել է Գ.Կյուլպենկյանի գույքի ձեւակերպման հարցը, ոգեւորությամբ ներկայացնում է վերջինի առաջարկը՝ վաճառքից ստացած դրամով կառուցել թանգարան-գրադարան, որին, ըստ Վ.Մալեզյանի, հնարավոր է, կփոխանցի իր հայտնի հավաքածուների մի մասը:

Բայց անցնում է եւս տասնչորս ամիս, եւ 1937թ. մայիսին Վ.Մալեզյանը ստիպված է նորից դիմել Ա.Գուլոյանին. «Ամիսներ անցան եւ չի կարողացանք ոեւէ տեղեկություն քաղել այս գործողության մասին, ո՛չ Անգարայի եւ ո՛չ ալ տեղույս դեսպանատուներէն: ...Մինչեւ այսօր թէ՛ Բարերարին եւ թէ՛ մեր Միութեան կողմէ կատարուած բոլոր դիմումները, տեղս, Պոլիս եւ Երեւան, ապարդիւն մնացին, ու տակաւին չենք գիտեր թէ գործը ի՞նչ վիճակի մէջ կը գտնուի: ...Մեր մեծանուն բարեկամը եւս անձնապէս գրեց քաղաքացի Գարախանին: Մեզի կը թուի որ եթէ չէ կրցած պետք եղածը ընել, փափագելի է որ իր քով գտնուած թուղթերը վերադարձնէ, որովհետեւ ուղիղ չէ տարտամութեան մէջ թողուլ այսպիսի կարեւոր գործ մը»:[68]

Վ.Մալեզյանի այս եւ հետագա նամակները մնացին անպատասխան: Խորհրդային Միության պատմության մեջ 1937 թվականը Ստալինի կազմակերպած զանգվածային բռնադատումների հայտնի շրջանն էր, որի առաջին զոհերն էին պետական եւ կուսակցական գործիչները: Հայաստանում, որպես ժողովրդի թշնամի, հակահեղափոխական, ազգայնական եւ տրոցկիստ հայտարարվածների թվում էին գրեթե բոլոր այն պաշտոնյաները, որոնք ղեկավարում եւ իրականացնում էին հայկական սփյուռքի հետ տարվող աշխատանքը՝ Ա.Խանջյան, Ա.Եսայան, Ա.Երզնկյան, Դ.Շահվերդյան, Ս.Տեր-Գաբրիելյան եւ շատ ուրիշներ (այդ մասին ավելի մանրամասն գրքի հաջորդ մասում): Նման պայմաններում, երբ որեւէ շփում արտասահմանի հետ՝ ձեւից եւ բովանդակությունից անկախ, իրապես մահացու վտանգ էր սպառնում ուզած մարդուն, Վ.Մալեզյանի հետ կապը ի պաշտոնե շարունակում էր պահպանել Հ.Գարակյոզյանը: Վ.Մալեզյանը, տագնապով մեջբերելով նրա «ենթադրությունը, որ ոեւէ դրական ձեռնարկ չէ կատարուած, հետեւաբար աւելորդ է այլեւս յոյս ունենալ այդ խնդրի յաջող կարգադրութեան մասին», Ա.Գուլոյանին հղած իր վերջին նամակներից մեկում գրում էր. «Պէտք է անկեղծօրէն խոստովանինք թէ մեր մտաւոր հասկացութեան մէջ չի սղմիր քաղ. Գարախանի պահած լռութիւնը եւ ցոյց տուած անտարբերութիւնը, որուն հետեւանքը այն կ'ըլլայ որ մեր սիրելի Համալսարանը կը զրկուի կարեւոր բարիքէ մը, եւ գուցէ բարերարին կալուածներն ալ կը գրաւուին որպէս օտարահպատակի մը:

«Ուստի եւ անգամ մը եւս թախանձագին պիտի խնդրէի որ Ձեր բարձր հեղինակութեամբը հաճիք Մոսկուայի եւ Անգարայի մէջ հետապնդել այդ կարեւոր հարցը, եւ մեզի հաղորդել վճռական տեղեկութիւն մը, որպէսզի գոնե գիտնանք թէ խնդիրը ուր հանգած է»:[69]

Եվ Ա.Գուլոյանը իսկապես որ դիմում է Մոսկվա. Հայաստանի կառավարությունը՝ որպես շահագրգիռ կողմ, ոչ պակաս չափով ցանկանում էր պարզել հարցի այդչափ երկար ժամանակ չլուծված մնալու պատճառը: 1937թ. օգոստոսի 19-ին նա Խորհրդային Միության Արտաքին գործերի ժողկոմիսար Մ.Լիտվինովին է հասցեագրում հետեւյալ գրությունը.

«Անցած տարվա մարտ ամսին... ձեր հեռագրական հարցումին՝ քաղ. Կյուլպենկյանից նվիրատվություն ընդունելու հնարավորության մասին, որը բաղկացած է Թուրքիայում գտնվող շինություններից եւ այլն, տվեցինք մեր սկզբունքային համաձայնությունը: Հարցի հետագա լուծումը մեզ հայտնի չէ:

«Վերջերս մեզ են հասել մի շարք նամակներ Փարիզի Հայկական Բարեգործական Միությունից, որոնցում նա տեղեկացնում է, որ Կյուլպենկյանի լիազորագիրը այդ գույքը ընդունելու եւ իրացնելու իրավունքի վերաբերյալ, փոխանցվել է Անկարայում ԽՍՀՄ նախկին Լիազոր Ներկայացուցիչ Կարախանին՝ Կյուլպենկյանի 1936թ. մարտի 18-ի նամակին կից: Հայկական Բարեգործական Միությունը 1937թ. հուլիսի 8-ի իր նամակում գրում է, որ ոչ ինքը եւ ոչ էլ Կյուլպենկյանը տեղյակ չեն գործի ընթացքի մասին, բայց իրենց ունեցած տվյալներով, Անկարայում ԽՍՀՄ Լիազոր Ներկայացուցչի կողմից իբր որեւէ քայլ չի ձեռնարկվել թուրքական իշխանությունների մոտ:

«Մեզ հասած փաստաթղթերից եւ, մասնավորապես, Կյուլպենկյանի կողմից Կարախանի անունով տված լիազորագրից, որը կից ուղարկում ենք, կարելի է տեսնել, որ գույքը պատկառելի գումար է կազմում, ուստի նպատակահարմար կհամարեի անհրաժեշտ քայլեր ձեռնարկել թուրքական իշխանությունների մոտ Կյուլպենկյանի գույքի ստացման եւ իրացման ուղղությամբ:

«Հայաստանի Ժողկոմխորհը խնդրում է Ձեզ համապատասխան կարգադրություններ տալ Անկարայում ԽՍՀՄ Լիազոր Ներկայացուցչին մեր լիազորագրի ընդունման եւ Հայաստանի Պետհամալսարանի համար Կյուլպենկյանի գույքի իրացման վերաբերյալ: Խնդրում եմ մեզ տեղյակ պահել Ձեր կարգադրությունների մասին»:[70]

Գ.Կյուլպենկյանի այս չկայացած նվիրատվության պատմությունը բազմաթիվ հարցեր է առաջացնում: Որքանո՞վ էր իրական, որ Խորհրդային Միության բարձրաստիճան պաշտոնյան՝ նրա դեսպանը Թուրքիայում, նույն այդ երկրի դատական եւ այլ մարմիններում անձնապես ներկայացներ անգլիահպատակ հայազգի միլիոնատիրոջ շահերը, կապված Թուրքիայի տարածքում նրա կալվածքների վաճառքի հետ, որից ստացված հասույթը պետք է տրամադրվեր Երեւանի համալսարանին: Հարցը էլ ավելի տեղին է դառնում, նկատի առնելով Գ.Կյուլպենկյանի՝ որպես «հակախորհրդային իմպերիալիստական ինտերվենցիայի» «անմիջական հովանավորողի» դատապարտումը դրանից ընդամենը 3-4 տարի առաջ: Խորհրդային Միության պատմությանը ծանոթ մեկի համար այդ հարցի պատասխանը պետք է որ բացասական լինի: Բայց այդ դեպքում, ի՞նչ նպատակ էր հետապնդում Խորհրդային Միության ղեկավարությունը, տալով դեսպան Լ.Կարախանին իր աննախադեպ համաձայնությունը՝ պաշտպանելու Գ.Կյուլպենկյանի շահերը: Միգուցե այստեղ արժե հիշել, որ Պետական-քաղաքական միացյալ վարչության (ՕԳՊՈՒ) նախկին բարձրաստիճան պաշտոնյա Գ.Աղաբեկովը, վերլուծելով ՕԳՊՈՒ-ի եւ Արտաքին գործերի ժողկոմիսարիատի փոխհարաբերությունները, դեռեւս 1931թ. գրում էր. «Անկասկած, ՕԳՊՈՒ-ի ոխերիմ թշնամին Լիտվինովն էր: Մյուս կողմից, այդ հայտնի լեյտենանտը, Կարախանը, որը, ի դեպ, անձնական պատճառներ ուներ պարտական լինելու Լիտվինովին, թաքուն համակրում էր ՕԳՊՈՒ-ին»:[71] Իսկ Գ.Կյուլպենկյանի անսահման վստահությունը Լ.Կարախանի հանդեպ չէ՞ր բացատրվում արդյոք նրա ցանկությամբ՝ ոչ միայն ապահովել նվիրատվության իրագործումը, այլեւ վերականգնել իր հարաբերությունները խորհրդային իշխանությունների հետ:

Ա.Գուլոյանի դիմումը Մ.Լիտվինովին մնաց անպատասխան. Կարախանը մինչ այդ արդեն ետ էր կանչվել Մոսկվա եւ մի շարք այլ անվանի դիվանագետների նման գնդակահարվեց 1938թ.:

Երկրորդ Աշխարհամարտի ավարտին, երբ հաղթանակած դաշնակիցները ձեռնամուխ էին եղել հետպատերազմյան աշխարհի վերաձեւմանը, Խորհրդային Միության նպատակներից էր վերադարձնել Առաջին Համաշխարհային պատերազմից հետո Թուրքիային անցած տարածքները: Այդ ուղղությամբ տարվող քաղաքականության բաղկացուցիչ տարրերն էին, օրինակ, Ի.Ստալինի աննախադեպ հանդիպումը Ամենայն Հայոց հայրապետության տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հետ 1945թ. ապրիլին, սփյուռքահայերի զանգվածային նոր ներգաղթի կազմակերպումը եւ այլն: Իր հերթին սփյուռքի հայության հիմնական զանգվածը, ոգեւորված Խորհրդային Միության նման քաղաքականության հեռանկարներով, փորձեց թե իր ուժերի՝ չափով օժանդակել այդ քաղաքականությանը եւ թե առավելագույնս օգտվել ստեղծված բարեն-

պաստ պայմաններից: Մասնավորապես, ՀԲԸ Միության ղեկավարությունը հարմար նկատեց վերստին վերադառնալ Գ.Կյուլպենկյանի նվիրատվության հարցին, ըստ երեւույթին, նկատի առնելով նաեւ նրա 16.000 դոլարով մասնակցությունը ներգաղթի հանգանակությանը: «Միութիւն» ամսագիրը, հիշեցնելով, որ տասը տարի առաջ Գ.Կյուլպենկյանը «Թուրքիոյ մէջ իր ունեցած մեծարժէք կալուածները (այսօրուան արժէքով 200.000 անգլ. ոսկի) Երեւանի Պետ. Համալսարանին տրամադրեց», այնուհետեւ տեղեկացնում էր. «Սոյն կարեւոր նուիրատուութիւնը իրագործելու համար նոր դիմումներ կատարուեցան ՀԲԸ Միութեան կողմէ, եւ այդ հարցը Սովետ դեսպան Կ.Նովիքօֆի միջոցաւ Մոսկուայի Կեդր. Կառավարութեան եւ Երեւանի Ժողկոմխորհի եւս նկատողութեան փոխանցելու համար՝ անձամբ Ուաշինկթընն գացին Միութեան փոխ-նախագահ Տ. Լեւոն Կերտան եւ վարիչ-պատուիրակ Տ.Վահան Մալէզեան, որ այդ առթիւ յիշատակագիր մը ներկայացնելով Ն.Վսեմութեան, Խ.Հայաստանի հետ ՀԲԸ Միութեան յարաբերութիւնները սերտացնելու եւ զարգացնելու խնդրանքը եւս ըրին»:[72] Եվ նորից անորոշ, բայց ըստ էության բացասական պատասխաններ, միայն թե այլ հեղինակությամբ: «Պ.Գալուստ Գյուլբենկյանի Թուրքիայի կալվածներին վերաբերող փաստաթղթերը նվիրատուին վերադարձնելու մասին,- Վ. Մալեզյանին 1947թ. դեկտեմբերին ուղղած իր նամակում գրում էր Հայաստանի Մինիստրների Խորհրդի գործերի կառավարիչ Ա.Ախշարումյանը,- ինչպես հայտնել ենք մեր այս տարվա ապրիլի 21-ի նամակում, ժամանակին համապատասխան հրահանգներ տրված են: Սակայն, քանի որ այդ փաստաթղթերը, ինչպես երեւում է Ձեր նամակից, դեռեւս չեն վերադարձված Պ.Գյուլբենկյանին, մենք կրկին անգամ հիշեցում ենք արել համապատասխան օրգաններին, խնդրելով արագացնել փաստաթղթերի առաքումը՝ ՀԲԸՄ կամ Պ.Գյուլբենկյանի Լիսբոնի հասցէով»:[73]

Այդ նամակում քննարկվող հիմնական նյութը, սակայն, այլ էր՝ Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման ֆինանսավորումը նույն Գ.Կյուլպենկյանի կողմից: ՀԲԸ Միության միջնորդությամբ մի կողմից Գ.Կյուլպենկյանի եւ մյուս կողմից՝ Հայաստանի կառավարության միջեւ ընթացող բանակցությունների համար փորձաքար հանդիսացավ Գ.Կյուլպենկյանի առաջարկությունը կառավարության հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ: Հայաստանի կառավարությունը մերժեց այն, բերելով հետեւյալ փաստարկը. «Տաճարի վերանորոգման համար կառավարության կողմից պայմանագիր ստորագրելը կնշանակեր Հայ Եկեղեցու սուվերեն իրավունքներու խախտում»:[74] Հարցի էությունը պարզ է դառնում Գ.Կյուլպենկյանի՝ կաթողիկոս Գեւորգ Զ-ին ուղղած նամակից, որում նա, հայտնելով իր երախտագիտությունը ստացած կոնդակի համար, գրում էր. «Ինքնաբուխ զգացումով մըն էր որ առաջադրեցի ստանձնել մեր նուիրական Մայր Տաճարի նորոգութեան ծախքը, առ այդ տրամադրելով 100.000 տոլարի գումար մը, պայման դնելով սակայն որ անունս չի յիշատակուի բնաւ ցորքան այդ ծրագիրը չէ գործադրուած: Յետոյ, տեսնելով որ այդ գումարը գուցէ անբաւական կը համարուի, սիրայօժար 50.000 տոլար եւս աւելցուցի, որպէսզի ճարտարապետներուն կողմէ նախատեսուած հիմնական բոլոր նորոգութիւնները ամբողջովին կատարուի, առանց յաւելուածական գումար պէտք ցոյց տալու յառաջիկային:

«Այսուհանդերձ, համոզում գոյացուցի որ այդ 150.000 տոլարը դնելով ուղղակի Ձեր վեհափառութեան տրամադրութեան ներքեւ, դարձեալ պիտի չի բաւէր ծրագրուած արմատական նորոգութեանց, եթէ Խ.Հայաստանի կառավարութիւնը իր թանկագին բարեացակամութեամբ ու պետական հեղինակութեամբը ինքն իսկ չի ստանձնէ այդ ծանրահոգ եւ բազմածախս ձեռնարկին գործնական ղեկավարութիւնը: Բարեբախտաբար, անցեալ տարուան ընթացքին, իր պաշտօնական հեռագրովը Երեւանի կառավարութիւնը հաղորդեց Նիւ Եորք թէ առաջադրած պայմաններս լիապէս ընդունուած են, որուն վրայ, բարեկամներուս տէարք Ա.Գարակէօզեանի (Արշակ Գարակյոզյան՝ ՀԲԸ Միության նախագահը 1942-1953թթ.-Էդ.Մ.) եւ Վ.Մալէզեանի հետ համախորհուրդ, ստորագրեցի Համաձայնագիր մը, ուր մի առ մի նշանակուած են այն կարեւոր կէտերը որոնց իր համամտութիւնը յայտնած էր բարեխնամ Կառավարութիւնը: Յետագային սակայն, այս վերջինը յարմար չի դատեց իր կարգին հաստատել գոյացած համաձայնութիւնը, որով խնդիրը մնաց առկախ: ...ինչպէս որ Ձեր Ս.Օծութիւնը եւս կը յայտարարէ, «ներկայ պայմաններում 150.000 տոլարը եւ ոչ մի դէպքում չի կարող համարուիլ բաւարար», եթէ, իմ տեսութեանս համաձայն, պետական միջոցներով գլուխ չի հանուի, այսինքն նպաստաւոր սակով չի փոխարինուին տոլարները»: Նամակի վերջում նշվում էր. «Կը խորհիմ նաեւ որ աշխարհիս ներկայ խոռվեալ վիճակը արդէն իսկ նպաստաւոր մթնոլորտ չի ստեղծեր, այդպիսի հսկայ գործի մը արդիւնաւոր յաջողութեան համար, եւ թերեւս խոհական պիտի ըլլար մի քիչ հետաձգել, սպասելով յարմարագոյն ժամանակի, երբ հաւանականօրէն հանգամանքները կը դառնան աւելի թոյլատու»:[75] Գ.Կյուլպենկյանի կանխատեսումները ճիշտ էին. արդեն իջնում էր «երկաթե վարագույրը»:

Բայց եւ այնպես, 1955թ., Գ.Կիւլպէնկեանի մահից հետո հայտնի դարձավ, որ Ս.Էջմիածնի Մայր Տաճարի վերանորոգման համար, նա կտակել էր ավելի քան 400.000 դոլար:[76]

6

ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԲԸՄ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1935թ. աշնանից Խորհրդային Հայաստանի եւ ՀԲԸ Միության փոխհարաբերություններում սկսվեց նոր փուլ, որը պայմանավորված էր Հայաստանում ընթացող ներքաղաքական, ներկուսակցական պայքարով:

Ա. Եսայանի գրությունները

1935թ. օգոստոսի 26-ին կայացավ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստը, որի օրակարգում էր նաեւ «Ներգաղթի կոմիտեի կազմի մասին» հարցը: Այդ, ըստ էության, մեծ կարեւորություն չունեցող հարցի (օրակարգում այն 22-րդն էր) քննարկման ժամանակ Ժողկոմխորհի նախագահ Ա.Գուլոյանի ղեկավարած Ներգաղթի կոմիտեի աշխատանքը խստորեն քննադատվեց Հայկոմկուսի Ախտայի շրջկոմի առաջին քարտուղար Արսեն Եսայանի կողմից, որն էլ այդ օրվանից դարձավ հետագա իրադարձությունների հիմնական դերակատարներից մեկը: Անակնկալի եկած բյուրոյի անդամները որոշում են. «Առաջարկել ընկ. Ա.Եսայանին ՀԿ/բ/Կ ԿԿ բյուրոյին գրավոր բացատրություն տալ Ներգաղթի կոմիտեի մասին ԿԿ բյուրոյում իր արած հայտարարության առիթով»:[1] Եղույթի բովանդակությունը պարզ է դառնում նամակից, որը Ա.Եսայանը մի քանի օր անց՝ սեպտեմբերի 2-ին ուղարկում է Հայաստանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Ստ.Ակոպովին եւ Համամիութենական Կոմկուսի Անդրկովկասյան երկրամասային կոմիտեի

(Անդրերկրկոմ, որը տեղակայված էր Թիֆլիսում) առաջին քարտուղար Լ.Բերիային:

Նամակում մասնավորապես ասվում էր. «Ներգաղթի կոմիտեն ստեղծվել է մոտ 3 տարի առաջ արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման աշխատանքները ղեկավարելու նպատակով, բայց իրականում կոմիտեն զբաղվել եւ զբաղվում է շատ քիչ՝ ներգաղթողների հարցերով... Ներգաղթի կոմիտեն սովորական մի առեւտրական կազմակերպություն է՝ Ժողկոմխորհի նախագահի ղեկավարությամբ: Կոմիտեն օգտագործում է ԽՍՀՄ-ի բարյացակամ վերաբերմունքը ներգաղթողների ընդունման եւ տեղավորման գործի նկատմամբ, նրանց համար պետական պլաններից դուրս, առանց ֆոնդերի ստանում է դեֆիցիտ եւ խիստ դեֆիցիտ ապրանքներ, մասնավորապես շինանյութեր, ներկրում է դրանք Հայաստան, վաճառում տարբեր կազմակերպությունների, իսկ ներգաղթողներին գրեթե ոչինչ չի հասնում: Նրանք միայն վարագույր են Կոմիտեի առեւտրական գործարքների համար: ...Կոմիտեն չի մտնում խորհրդային հիմնարկների որեւէ համակարգի մեջ: Կոմիտեի գործունեությունը եւ նրա բավական խոշոր (Հայաստանի պայմաններում) շրջանառությունը չի ընդգրկված Հայաստանի ժողովրդատնտեսական պլանում, Հայաստան ապրանքներ ներկրելու պլանում... Ներգաղթի կոմիտեի շուրջ 3-ամյա գործունեությունը ոչ մի անգամ չի ենթարկվել ստուգման: Կոմիտեն, բացի իր ղեկավարից, հաշվետու չի եւ ոչ մեկին... Կոմիտեի շահույթները, որոնք՝ շնորհիվ նրա սպեկուլյատիվ գործունեության, շատ զգալի են (1934թ. մոտ 3 մլն ռուբլի՝ 6 մլն-ոց շրջանառության դեպքում, մոտավորապես այդպիսի գումար նաեւ այս տարի), Ժողկոմխորհի կողմից ծախսվում են պետական պլանից եւ բյուջեից դուրս...»: Իր գրության վերջում Ա.Եսայանը անում է հետեւյալ եզրակացությունը. «Ներգաղթի կոմիտեն ակնհայտորեն սպեկուլյատիվ բնույթի առեւտրական կազմակերպություն է: Ներգաղթի կոմիտեն անտեսում եւ խախտում է խորհրդային բոլոր օրենքները, որոնք կարգավորում են խորհրդային տնտեսական կազմակերպությունների գործունեությունը: Նրա ողջ գործունեությունը հիմնված է խորհրդային օրենքների շրջանցման, խորհրդային պետությանը խաբեության վրա: Ներգաղթի կոմիտեի ղեկավարության (այստեղ խոսելով կոմիտեի մասին՝ ես նկատի չունեմ կոմիտեի աշխատակիցներից շատերին, որոնք երեւի նույնիսկ տեղյակ էլ չեն, թե ինչ է կատարվում այդ մարմնում) քաղաքականությունը մեր կուսակցության քաղաքականությունը չէ: Այդ քաղաքականությունը չի տանում դեպի սոցիալիստական պետության հիմքերի ամրապնդում, այն տանում է դեպի բուրժուական վերասերում»:[2]

Ա.Եսայանը, անկասկած, քաջ գիտակցում էր, թե ինչպիսի պատասխանատվություն էր վերցնում իր վրա՝ նման քաղաքական մեղադրանքներ ներկայացնելով ոչ միայն Հայաստանի վարչապետին, որպես Ներգաղթի կոմիտեի նախագահի, այլ դրանով իսկ նաեւ Հայկոմկուսի առաջնորդ Ա.Խանջյանին:

Ա.Եսայանի նման վարքագիծը՝ թե ելույթը եւ թե Լ.Բերիային ու Ստ.Ակոպովին նամակով դիմելը, հասկանալու առումով ուշադրության է արժանի հետեւյալ դրվագը Ա. Խանջյանի կնոջ՝ Ռ.Վինդգբերգի վկայություններից. «1933թ. վերջին Հայաստան աշխատանքի եկան (Թիֆլիսից) Ստ. Ակոպովը եւ Գեորգի Ծատուրովը, առաջինը որպես Կենտկոմի երկրորդ քարտուղար, երկրորդը՝ կազմբաժնի վարիչ... 1933թ. աշնանը (Ա.Խանջյանը) ծանր հիվանդացավ եւ մինչեւ 1934թ. հունիսը բուժվում էր թոքերի վիրահատությունից: Այդ ժամանակ, նրա բացակայությամբ, Ակոպովը, չհայտնելով Խանջյանին (համարյա նրա վերադարձից անմիջապես առաջ), լեռնային շրջանների դժվարությունների կապակցությամբ կատարեց գրեթե բոլոր կադրերի վերադասավորում: Բացի այդ, Հայաստան կուսակցական աշխատանքի վերցվեցին Արսեն Եսայանը, Մուշեղ Դանիելյանը եւ ուրիշներ: Երբ Խանջյանը վերադարձավ, ապա առանց թաքցնելու արտահայտեց իր դժգոհությունը, որ այդ ամենը կատարվել է առանց իր համաձայնության»:[3] Թիֆլիսում Ա.Եսայանը, որպես Անդրֆեդերացիայի ժողտնտխորհի նախագահի տեղակալ, աշխատել էր Լ.Բերիայի անմիջական ղեկավարությամբ եւ, ըստ ամենայնի, այդ ժամանակ դեռ որոշակի պատրանքներ էր տածում նրա հանդեպ: Մյուս կողմից, Ա.Եսայանին հայտնի էր, որ Ա.Խանջյանը դիմել էր Անդրերկրկոմ, անպատակահարմար համարելով իր՝ Ա.Եսայանի Երեւան տեղափոխելը:

Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Ա.Եսայանի այդ նամակը շատ հարմար առիթ էր, որպեսզի ոչ միայն Ներգաղթի կոմիտեն կամ ներգաղթի հետ կապված հարցերը, այլ սփյուռքի հետ Հայաստանի հարաբերությունները ընդհանրապես հայտնվեին Անդրերկրկոմի, նույն Լ.Բերիայի ուշադրության կենտրոնում:

Դեպքերը այդուհետ արագ զարգացան: Սեպտեմբերի 18-ին տեղի ունեցավ Հայկոմկուսի կենտկոմի նիստը, որին մասնակցում էր Թիֆլիսից ժամանած հանձնաժողովը՝ Անդրերկրկոմի քարտուղար Ս.Կուդրյավցեւի գլխավորությամբ: Նիստում քննարկվող միակ հարցը՝ Ար.Երզնկյանի եւ Ա.Եսայանի դիմումներն էին: Բանն այն էր, որ Ա.Եսայանի դիմումից առաջ, Ստալինին եւ Բերիային դիմել էր նաեւ Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի առաջին տեղակալ Ար.Երզնկյանը, որը, Ս.Կուդրյավցեւի խոսքերով, «...մի շարք ծանր մեղադրանքներ էր ներկայացրել Հայաս-

տանի Կոմկուսի կենտկոմի ղեկավարությանը՝ անձամբ Ա.Խանջյանին եւ Ա.Գուլոյանին»:[4] Նա հայտնեց նաեւ, որ Ա.Եսայանը, վերոնշած դիմումից զատ, մի հատուկ նամակ էր գրել Լ.Բերիային, որում նրա կողմից առաջ քաշված հարցերի շրջանակը ավելի լայն էր եւ վերաբերում էր ոչ միայն Ներգաղթի կոմիտեի աշխատանքներին: Հանձնաժողովը, ծանոթանալով այդ երկու դիմումների վերաբերյալ բյուրոյի անդամների խիստ բացասական կարծիքին եւ հարցը տեղում քննելուց հետո, վերադարձավ Թիֆլիս: Հինգ օր անց, Անդրերկրկոմի բյուրոն, լսելով Ս.Կուդրյավցեւի զեկուցումը, ընդունում է որոշում՝ «Հայաստանի կուսկազմակերպության աշխատանքի մասին»: Եվս հինգ օր անց՝ սեպտեմբերի 28-ին, Հայկոմկուսի կենտկոմը Անդրերկրկոմի ցուցումով Ար.Երզնկյանին ազատեց Ժողկոմխորհի նախագահի տեղակալի պաշտոնից, իսկ Ա.Եսայանին ...նշանակեց ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահ եւ համատեղության կարգով՝ Ներգաղթի կոմիտեի նախագահ:

Ար.Երզնկյանի եւ Ա.Եսայանի դիմումների առաջացրած իրարանցումը ավարտվեց հոկտեմբերի 4-5-ին կայացած Հայաստանի Կոմկուսի կենտկոմի եւ Երեւանի քաղաքային կոմիտեի միացյալ պլենումում: Պլենումի մասնակիցները, որոնք շարունակում էին մեծ եռանդով դատապարտել Ար.Երզնկյանին եւ իրենց հավատարմությունը արտահայտել Ա.Խանջյանին, անակնկալի եկան վերջինի առաջարկությունից՝ Ար.Երզնկյանին բյուրոյի անդամության թեկնածու ընտրելու վերաբերյալ: Պարզվեց, սակայն, որ դա ոչ թե Ա.Խանջյանի նախաձեռնությունն էր, այլ Լ.Բերիայի հերթական հնարքը՝ Ար.Երզնկյանին մշտապես հսկողության տակ պահելու նպատակով: «...Մենք ոչ միայն չենք վոնդի ձեզ Հայաստանից,- մեջբերում էր Ա.Խանջյանը Լ.Բերիայի խոսքերը,- այլեւ դուրս չենք հանի բյուրոյի կազմից՝ կթողնենք ձեզ եւ կստիպենք ձեզ կատարել Անդրերկրկոմի որոշումները, իսկ եթե չկատարեք, ապա ոչ միայն դուրս կհանենք բյուրոյից, այլեւ կվոնդենք կուսակցությունից: Իսկ այսօր մենք ձեզ բոլորովին ձեռք չենք տա»:[5]

Ա.Եսայանի պարագան, կարծես, այլ էր՝ հայտնի էր նրա նոր նշանակման մասին եւ, այնուամենայնիվ, նրա հասցեին նույնպես հնչեցին ամենատարբեր մեղադրանքներ: Ինքը՝ Ա.Եսայանը, իր վերջին ելույթում դատապարտեց Ար.Երզնկյանի դիմումը, հավաստիացրեց, որ կառաջնորդվի Լ.Բերիայի ցուցումներով, իսկ իր դիմումները որակեց որպես «քաղաքական վնասակար սխալ»: Այնուամենայնիվ, Ներգաղթածների հետ կապված հարցերը քննարկման առարկա չդարձան՝ ըստ երեւույթին, Ա.Եսայանի քննադատությունը տեղին էր եւ համոզիչ: Ա.Խանջյանը ստիպված էր նշելու. «Մեր սխալը կայանում էր նրանում, որ աշխատանքի այդ հատվածը մենք դիտում էինք որպես մեզ հետ, մեր կուսակցական գործերի հետ կապ չունեցող մի բան... Ներգաղթի գործին մենք չէինք նայում, ինչպես, օրինակ, մեր խորհրդային շինարարությանը, ինչպես կոլխոզներին... Ընկերներ, եկավ հանձնաժողովը, նրանք գնացին Ներգաղթածների ավանները եւ ի՞նչ տեսան: Որ մի շարք ավաններ շատ վատ տեսք ունեն... Բայց այդ ավաններում ապրում են մարդիկ, որոնք հետամնաց չեն՝ կուլտուրայի եւ այլ առումով: Մի շարք կուլտուրաներ, ինչպես, օրինակ, ծխախոտի կուլտուրան, Հայաստանում ներդրել են այդ մարդիկ: Համապատասխան մոտեցման, ճիշտ մոտեցման դեպքում այստեղ կարելի է հասնել այնպիսի վիճակի, երբ մեր ավանները կդառնան օրինակելի եւ մենք կհպարտանանք դրանցով, եւ մենք մեր բարեկամներին ու թշնամիներին կկարողանանք ցույց տալ, թե ինչ է անում Հայաստանը իմպերիալիստների եւ նրանց գործակալներ դաշնակների եւ ազգայնականների ստոր քաղաքականության զոհերի համար: Քիչ փող չենք ծախսել, եւ այնուամենայնիվ, դուրս եկավ, որ իրականում ցույց տալու բան չունենք...»:[6]

Խիստ ուշագրավ էր Ա.Խանջյանի ելույթի հետեւյալ հատվածը Ար.Երզնկյանի մասին. «Նա մտածում էր նյութել իսկական դավադրություն, դնել այլ դիմակ, հանդես գալով ազգայնականության դեմ պայքարող մարտիկի դերում, ազգայնականություն գտնել կենտկոմի աշխատանքում, որպեսզի կատարի մեր թշնամիների հիմնական սոցիալական պատվերը՝ դաշնակների սոցիալական պատվերը՝ վարկաբեկել Հայաստանի Կոմկուսի աշխատանքը, վարկաբեկել կուսակցության ղեկավարության աշխատանքը»:[7]

Այս եւ նման արտահայտություններն ու որակումները պարզորոշ վկայում էին, որ Հայաստանի ղեկավարության ներսում մինչ այդ առկա հակասությունները եւ տարաձայնությունները թեւակոխել էին քաղաքական, ներկուսակցական պայքարի փուլը՝ անկախ նրանից, թե ով կամ որ կողմն էր այդ պայքարը նախաձեռնողը: Ըստ էության, Երեւանում որոշ ուշացումով սկսվում էին այն գործընթացները, որոնք արդեն տեղի էին ունեցել եւ շարունակվում էին երկրի կենտրոնում՝ Մոսկվայում: Միգուցե, այն կարեւոր տարբերությամբ միայն, որ Հայաստանում (ինչպես եւ այլ հանրապետություններում) ծավալվող պայքարում հաղթողը ամեն դեպքում նրա մասնակիցներից չէր: Դրանք միութենական եւ անդրկովկասյան իշխանություններն էին՝ Մոսկվայում եւ Թիֆլիսում, իսկ բուն պայքարի մեջ մտնող անհատներին եւ ուժերին մնում էր միայն արագ կողմնորոշվել տվյալ պահին դեպի ուժեղը: Դա մի վարքագիծ էր, որը բումերանգի նման ի վերջո ուղղվելու էր իրենց դեմ: «Դավադրության», «դաշնակների պատվերների» մասին հայտարարող Ա.Խանջյանը շատ շուտով

ինքն էր մեղադրվելու դրանում, իսկ նրան դատապարտողներն էին դառնալու՝ այն էլ հետմահու, նրա «հավատարիմ զինակիցները», որոնք կարճ ժամանակ անց համալրելու էին ժողովրդի թշնամիների շարքերը: Քանի դեռ առաջնահերթ խնդիրը լենինյան գվարդիայի՝ Ս.Կասյանի, Ս.Տեր-Գաբրիելյանի, Ար.Երզնկյանի չեզոքացումն էր (առայժմ ոչ ֆիզիկական ոչնչացումը), Լ.Բերիան օգտագործում էր Ա.Խանջյանին եւ պաշտպանում նրան: Միեւնույն ժամանակ, ոչ միայն չպատժվեց, այլեւ նոր պաշտոն ստացավ Ա.Եսայանը, որը Լ.Բերիայի հաշվարկներով հարկավոր էր պայքարի հաջորդ փուլում՝ արդեն նույն Ա.Խանջյանի դեմ:

Սեպտեմբերի 28-ին Հայկոմկուսի ԿԿ բյուրոյի որոշումով ստեղծվեցին նաեւ երկու հատուկ հանձնաժողովներ, մեկը ՀՕԿ-ի եւ Ներգաղթի կոմիտեի հետագա գործունեության ծրագիր մշակելու, մյուսը՝ այդ կազմակերպությունների գործերը ընդունելու եւ հանձնելու նպատակով: Հոկտեմբերի 19-ին Կոմկուսի կենտկոմը, ելնելով հաստատված առաջարկություններից, կայացրեց որոշում ՀՕԿ-ի եւ Ներգաղթի կոմիտեի աշխատանքի մասին, որում հանձնարարականներ էին տրվում ներգաղթողների ընդունման եւ տեղավորման, նրանց համար կառուցվող ավանների շինարարության եւ այլ հարցերի վերաբերյալ: Հատուկ խոսվում էր Նուպարաշենի մասին: Ըստ այդ որոշման, նախատեսվում էր վերսկսել Նուպարաշեն-Երեւան ճանապարհի շինարարությունը, արագացնել էլեկտրականության անցկացումը մինչեւ Նուպարաշեն, բաղնիքի եւ կենցաղային այլ օբյեկտների կառուցումը, կազմակերպել հացի արտադրությունն ու վաճառքը ավանում: Ամենակարեւորն այն էր, որ նշելով ջրմուղի կառուցման ուշացումը, նպատակահարմար չէր համարվում մոտակա երկու տարվա ընթացքում նոր շինարարություն ծավալելը Նուպարաշենում: 1935-1936թթ. նախատեսվում էր, բացի վերը նշածից, նաեւ ավարտել բոլոր բնակելի շենքերի կառուցումը:[8]

Դրանից առաջ էլ կառավարությունը ժամանակ առ ժամանակ անդրադառնում էր Նուպարաշենի կառուցման խնդրին, բայց սա առաջին դեպքն էր, երբ իշխանությունները, թեկուզ ոչ հրապարակավ եւ անուղղակի ձեւով, այնուամենայնիվ փաստում էին ավանում կենսագործունեության համար անհրաժեշտ տարրական պայմանների բացակայությունը: Բայց սա միայն սկիզբն էր, քանի որ Ա. Եսայանը իր առջեւ նաեւ նպատակ էր դրել պարզել, թե որքան գումարներ են ստացվել սփյուռքահայ կազմակերպություններից ու անհատներից եւ թե ինչպես են ծախսվել: Այդ գործում նրան մեծապես օժանդակեց Հայաստանում ՀԲԸ Միության ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանը, տրամադրելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ կապված Հայաստանում Միության գործունեության, Նուպարաշենի եւ այլ կառույցների շինարարության եւ ֆինանսավորման հետ: Հարկ է նշել, որ ՀԲԸ Միության գործունեության, նրա ղեկավարության հետ Ա.Եսայանը ծանոթ էր դեռեւս 1928թ.: Այն ժամանակ, լինելով Հայաստանի ժողովրդական տնտեսական խորհրդի նախագահ եւ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ, նա գործուղվել էր Փարիզ, ուր եւ հանդիպումներ էր ունեցել Պողոս Նուպարի եւ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության անդամների հետ:[9]

1936թ. հունվարի 16-ին Ա.Եսայանը գրեց իր առաջին պաշտոնական նամակը Վ.Մալեզյանին, որում տեղեկացնում էր Նուպարաշենի շինարարության նոր՝ իր պատրաստած ծրագրի մասին, որը, ըստ նրա, պետք է որ էապես արագացներ ավանի եւ նրա ենթակառույցների շինարարության ընթացքը: Վ.Մալեզյանը, ըստ ամենայնի, արդեն հոգնած ու հուսահատ անվերջ եւ անպտուղ խոստումներից, իր պատասխան նամակում, Ա.Եսայանի ծրագրերի կապակցությամբ, սահմանափակվելով զգուշավոր լավատեսությամբ, անկեղծ ձեւով ներկայացրեց Միության կարծիքը այդ խնդրի վերաբերյալ: «Չենք գիտեր,- գրում էր նա,- թէ արդեօք ձեր աչքերուն առջեւ ունի՞ք Նուպարաշէնի վեց տարուան ամբողջական պատկերը, խճողուած՝ կնճիռներով որ ցոյց կուտան թէ մէկ օրէն միւսը ի՛նչ յեղաշրջումներու ենթարկուած է անոր կառուցումը, անցնող վեց տարիներու միջոցին, յատակագիծերու, նախահաշիւներու եւ ծրագիրներու անվերջ փոփոխութեանց, իրարու յաջորդող Շին. հանձնաժողովներու, ճարտարապետներու եւ վարիչներու հակասական գործունէութեանց հետեւանքով, այնպէս որ մեր թղթածրարներուն մէջ ամփոփուած տարտամ եւ տարբեր տեղեկութիւնները երբեք որոշ գաղափար մը չեն տար եւ ընդհակառակը մեզ շփոթութեան մատնած են մինչեւ այսօր:

«Անշուշտ գիտէք որ անիկա անկենսունակ աւան մը եղաւ եւ այդպէս պիտի մնայ ցորքան խճուղին չապահովեր դիւրին եւ արագ հաղորդակցութիւն մը Երեւանի հետ, ցորքան խմելու ջուրը բերուած չէ աւանին սիրտին մէջ իսկ, եւ մանաւանդ ցորքան ջրանցքը չոռոգէր իր ընդարձակ հողերը որ դատապարտուած են մնալու խոպան եւ ամուլ: Եթէ սկիզբը երաշխաւորուած չըլլար Ղուերու ջրանցքին օգտագործումը Նուպարաշէնի սահմաններուն մէջ, գործնական ոգիով անտարակոյս համամիտ պիտի չըլլայինք այդ հողամասին, որ թէեւ բարեբեր եւ գեղատեսիլ, բայց ջուրին պակասէն անմշակ մնալով բնակչութիւնը խղճալի վիճակի մէջ կը պահէ, անձկութեան մատնուած, քանի որ աշխատանքի եւ ապրուստի միջոցները կը պակսին ներկայ տխուր պայմաններուն մէջ»:

Անցնելով Ա.Եսայանի նամակում ակնարկված Նուպարաշենի շինարարության լրացուցիչ՝ արդեն տրամադրված 400.000 դոլարից զատ,

ֆինանսավորման հարցին, Վ.Մալեզյանը գրում էր. «Եթէ ցոյց տրուած ըլլար փութկոտութիւն եւ ճշդապահութիւն, Նուպարաշէնի հանգանակութիւնը կանգ չէր առներ, դժգոհներու, բողոքողներու նոյն իսկ սպառնալիքներու տեղատարափի մը տակ: ...Դժբախտաբար ժամանակը անցած է որ անոնց սիրտին խօսինք գեղեցիկ յուսադրումներով եւ հաւաստումներով, քանզի ծրագիրներու շրջանը անցած է թերահաւատներուն համար, անոնց պէտք է ցոյց տալ կատարուած գործերը... Այս պայմաններուն մէջ, թոյլ տուէք մեզի անկեղծօրէն ըսել թէ ուղիղ պիտի չըլլար նոր կառուցուելիք շէնքերուն համար մեզմէ ուզել դրամական յանձնառութիւններ, ինչ չափով ալ ըլլայ...»:[10]

Նույն հունվար ամսին Ա.Եսայանի անմիջական մասնակցությամբ պատրաստվեց երեք փաստաթուղթ: Առաջինի հեղինակն էր Կոմկուսի բյուրոյի հունվարի 7-ի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը, որի անդամներն էին, Ա.Գուլոյանից ու Ա.Եսայանից զատ, Ա.Հովսեփյանը՝ ՀԿԿ Կենտկոմին կից կուսխորհրդային վերահսկողության խմբակի ղեկավարը եւ Ա.Եղիազարյանը՝ Արվեստի գործերի վարչության պետ ու Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովի նախագահը: Մյուս երկու զեկուցագրերի հեղինակն էր անձամբ Ա.Եսայանը: Քանի որ այդ երեք զեկուցագրերի բովանդակությունը հիմնականում համընկնում է, ստորեւ բերեմ որոշ կրճատումներով դրանցից միայն մեկը, ուր հարցի էությունը ներկայացված է ամբողջական ձեւով:

«Գաղտնի-անձամբ
ՀԿ/Բ/Կ ԿԿ Քարտուղար ընկ. Ամատունուն

Զեկուցագիր

Ի լրացումն բանավոր մանրամասն զեկույցի՝ արտասահմանից ստացված տարադրամի ծախսման մասին հայտնում եմ հետեւյալը.

1. Վերջին տարիներին արտասահմանից տարբեր կազմակերպությունների, այն է՝ Հայաստանի Ժողկոմխորհի, ՀՕԿ-ի, առանձին հայրենակցական միությունների եւ այլն անունով, այս կամ հատուկ նպատակներով որպես նվիրատվություն ստացվել են տարադրամ եւ արտասահմանյան ապրանքներ: Պետք է նշել, որ այդ օգնությունը եւ ստացված միջոցները երբեք չեն կենտրոնացվել մեկ հիմնարկում, ճիշտ նույն ձեւով կենտրոնացված չի եղել նաեւ հաշվառումն ու հաշվետվությունը, ինչի հետեւանքով հիմա շատ դժվար է նշել արտասահմանից ստացված միջոցների ճշգրիտ չափը:

Իմ տրամադրության տակ եղած ոչ լրիվ նյութերից կարելի է եզրակացնել, որ վերջին 5 տարիների ընթացքում ստացվել է տարադրամ՝ ընդամենը մոտ 2.100.000 ռուբլի ոսկով, ընդ որում մեծ մասը՝ մոտ 1.500.000 անմիջաբար ստացվել է Հայաստանի Ժողկոմխորհի անունով:

Ֆինանսական տեսակետից այդ օգնությունը մեծ հետաքրքրություն չի ներկայացնում, առավել կարեւոր է նրա բարոյական-քաղաքական նշանակությունը, քանի որ այդ գումարները, բացառությամբ առանձին կապիտալիստներից ստացված մի քանի խոշոր գումարների, հավաքված են ժողովրդական լայն զանգվածների շրջանում, ինչը խորհրդային պետության հանդեպ նրանց համակրանքի դրսեւորումն է:

Գրեթե բոլոր հանգանակությունները ունեն նպատակային իմաստ, այն է՝ ներգաղթողների համար ավանների շինարարություն, այդ ավաններում եւ այլ շրջաններում հիվանդանոցների, դպրոցների, մանկապարտեզների եւ մանկամսուրների, թատրոնների, ակումբների եւ այլն կառուցում:

Որպես օրինակ բերեմ մի շարք նպատակներ, որոնց համար ստացվել են գումարներ. Նուպարաշենի կառուցման համար՝ 400 հազ. դոլար, Նոր Արաբկիրի կառուցման համար՝ 100 հազ. դոլար, Նոր Մալաթիայի կառուցման համար՝ 50 հազ. դոլար, «Խորհրդային Հայաստան» էսկադրիլիայի հիմնադրամին՝ 5.000 դոլար, Դարուհի Հակոբյան հիմնադրամով հիվանդանոցի կառուցման համար՝ 17 հազ. անգլ. ֆունտ, Մարի Նուպար հիմնադրամով ակնաբուժարանի կառուցման համար՝ 10 հազ. անգլ. ֆունտ, Զարեհ Նուպարի հիմնադրամով գիտաշխատողների տան կառուցման համար՝ 7 հազ. անգլ. ֆունտ, Թալինի շրջանում դպրոցի կառուցման համար՝ 4.500 անգլ. ֆունտ, Ռաֆայէլ Մարկոսյանի հիմնադրամով էլեկտրամեխանիկական տեխնիկումի կառուցման համար՝ 5.000 անգլ. ֆունտ, Մելգոնյան հիմնադրամով՝ 30 հազ. անգլ. ֆունտ եւ այլն:

2. Այդ գումարները, որպես կանոն, ստացվել են Բարեգործական Միության Կենտրոնական Վարչության եւ Հայաստանի Ժողկոմխորհի միջեւ նախնական բանակցություններից հետո եւ յուրաքանչյուր հանգանակության, կտակի դիմաց տրվել են գրավոր խոստումներ՝ Ժողկոմխորհի որոշման կամ նամակների տեսքով, համապատասխան աշխատանքներ կատարելու մասին, ընդ որում, յուրաքանչյուր օբյեկտի համար կազմվել եւ արտասահման են ուղարկվել նախագծեր:

Հայաստանի Ժողկոմխորհի կողմից Բարեգործական Միությանը կամ առանձին անհատներին եւ կազմակերպություններին տրված խոստումներից շատերը մինչեւ հիմա չեն կատարվել, այդ օբյեկտների շինարարությունը կամ չի սկսվել, կամ էլ դադարեցվել (կոնսերվացվել) է, օրինակ.

ա) Մինաս Չերազի հիմնադրամով Նուպարաշենում դպրոց-արհեստանոց կառուցելու համար ստացվել է 702 անգլ. ֆունտ, բ) Տիրայր Մարգարյանի հիմնադրամով Նուպարաշենում հիվանդանոց կառուցելու համար՝ 533 անգլ. ֆունտ, գ) Սամվելյանի հիմնադրամով Նուպարաշենում մանկապարտեզ կառուցելու համար՝ 390 անգլ. ֆունտ, դ) Սեւոյանի հիմնադրամով Նուպարաշենում մանկամսուր կառուցելու համար՝ 150 անգլ. ֆունտ, ե) Սարյանի հիմնադրամով Նոր Կեսարիա ավանում մանկապարտեզ կառուցելու համար՝ 560 անգլ. ֆունտ, զ) Մ.Պալյանի հիմնադրամով Նոր Սեբաստիա ավանում մանկամսուր կառուցելու համար՝ 460 անգլ. ֆունտ, է) Սարգսյանի հիմնադրամով Նուպարաշենում թատրոն կառուցելու համար՝ 2.000 անգլ. ֆունտ, ը) Տիգրանակերտցիների հայրենակցական միությունից (ԱՄՆ) Տիգրանակերտ ավանում դպրոցի կառուցման համար՝ 366 անգլ. ֆունտ, թ) Հակոբյան հիմնադրամով Մարտունիում դպրոց կառուցելու համար՝ 342 անգլ. ֆունտ, խ) եվդոկիացիներից Նոր Եվդոկիա ավանում մանկամսուր կառուցելու համար՝ 269 անգլ. ֆունտ, կ) խարբերդցիներից Նոր Խարբերդում դպրոց կառուցելու համար՝ 3.000 անգլ. ֆունտ:

Բոլոր թվարկած օբյեկտների վերաբերյալ տրվել են պաշտոնական խոստումներ, կազմվել են նախագծեր, ուղարկվել են արտասահման, փողերը ստացվել են: Թվարկած օբյեկտների շինարարությունը չի սկսվել, բացառությամբ Խարբերդի դպրոցի, որի շինարարությունը սկսվել է՝ կառուցվել է մեկ մասնաշենքի մի մասը, այնուհետեւ դադարեցվել, իսկ Հակոբյան հիմնադրամով Մարտունիում կառուցվել է դպրոցի շենքի առաջին հարկը՝ արտասահման ուղարկած երկհարկանի շենքի նախագծի դիմաց:

Այժմ Բարեգործական Միությունը իրեն տված խոստումների եւ նախագծերի համաձայն, պահանջում է կառուցվող օբյեկտների լուսանկարները, ինչը, հասկանալի պատճառներով, ես չեմ կարող կատարել: Բարեգործական Միությունը նույնիսկ իր օբյեկտների նկարահանման համար Երեւան էր ուղարկել 3.000 մ կինոժապավեն, որը ստացվել եւ օգտագործվել է այլ նպատակով:

3. Նուպարաշենի կառուցման համար ստացվել էր 400.000 դոլար: Հայաստանի Ժողկոմխորհի եւ Հայկական Բարեգործական Միության միջեւ կնքվել էր պայմանագիր, որի գրեթե բոլոր կետերը Բարեգործական Միության կողմից կատարված են, իսկ Հայաստանի Ժողկոմխորհը այդ պայմանագրով ստանձնած պարտավորությունների մեծ մասը չի կատարել: Այժմ Բարեգործական Միությունը իմ եւ իր ներկայացուցչի անունով գրած նամակում պահանջում է մի շարք կոնկրետ տվյալներ պայմանագրի եւ պարտավորությունների կատարման վերաբերյալ, որոնք մենք ի վիճակի չենք ներկայացնել:

Բոլոր վերոնշյալ եւ մի շարք այլ գումարներ Հայաստանի Ժողկոմխորհը ժամանակին ստացել է եւ ծախսել: Այնպես որ, Ժողկոմխորհից գործերը ընդունելիս իրականում կար ընդամենը 12.000 ռուբլի ոսկով:

Ծախսված գումարների վերաբերյալ Ժողկոմխորհում ամբողջական հաշվետվության բացակայության պատճառով, դժվար է ասել, թե ինչի վրա են նրանք ծախսվել...

Եթե այս տարի մենք չկատարենք արտասահմանյան կազմակերպություններին, մասնավորապես Բարեգործական Միությանը տված մեր խոստումները, գործը անխուսափելիորեն կվերջանա մեծ սկանդալով: Եթե նույնիսկ Բարեգործական Միությունը չցանկանա գործ բացել մեր դեմ, ապա առանձին անհատներ եւ կազմակերպություններ, որոնք իրենց փողերը վստահել էին Բարեգործական Միությանը, անկասկած չեն լռի եւ դատական գործ կսկսեն Բարեգործականի դեմ: Բարեգործական Միությունը իր մի նամակում արդեն հայտնում է, որ մի շարք հայրենակցական միություններ պահանջում են վերադարձնել իրենց փողերը, քանի որ Բարեգործական Միությունը չի կատարել ստանձնած պարտավորությունները:

Ինքնին հասկանալի է, որ այս ամենը արդեն իսկ հմտորեն մեր դեմ է օգտագործվում դաշնակցականների կողմից եւ հետագայում էլ՝ մեր տված խոստումներից հրաժարվելու ու Բարեգործական Միության հետ հարաբերությունների սրման դեպքում, դաշնակցականների եւ հակախորհրդային տարրերի համար այդ փաստերը առիթ կծառայեն մեր դեմ կատաղի կամպանիա ծավալելու եւ խորհրդային իշխանությունը վարկաբեկելու համար:

Չի բացառվում, որ ամենամոտ ժամանակ ինձանից վերջնական պատասխան ստանալուց հետո, Բարեգործական Միությունը դիմի Փարիզում մեր Դեսպանատանը:

Հնարավոր սկանդալից խուսափելու համար անհրաժեշտ եմ համարում ամբողջությամբ ընդունել Կենտկոմի Հանձնաժողովի՝ ընկ. Շախսուվարովի նախագահությամբ որոշման նախագիծը (նշված նպատակին տրամադրել) Ներգաղթի կոմիտեի բոլոր ոչ նպատակային ձեւով օգտագործված շահույթները եւ Հայաստանի Ժողկոմխորհի արտասահմանյան ապրանքների վաճառքից ստացումները, վերցնելով այդ գումարները Հայաստանի բյուջեից, կամ էլ այդ նպատակին տրամադրել Հայաստանի բյուջեի հավելյալ ստացումները: Հայաստանի բյուջեից այդ գումարների գանձման անհնարության եւ հավելյալ հատկացումների պակասու-

թյան դեպքում անհրաժեշտ է այդ հարցը դնել Անդրերկրկոմի առջեւ, քանի որ հասունացող սկանդալը վարկաբեկում է ոչ միայն Հայաստանի Ժողկոմխորհը, այլեւ խորհրդային իշխանությունը ընդհանրապես:

Հայաստանի Օգնության Կոմիտեի նախագահ Ա.Եսայան»:[11]

Այս փաստաթղթի կարեւորությունը դժվար է գնահատել: Տարիներ շարունակ Երեւանից տարբեր, այդ թվում ամենաբարձրաստիճան պաշտոնյաների ստորագրությամբ բազմաթիվ նամակներ էին հասնում Փարիզ, որոնցում ՀԲԸ Միությանը հավաստիքներ էին տրվում նշված բոլոր կառույցների հաջող ընթացող շինարարության մոտալուտ ավարտի մասին: Տարիներ շարունակ Հայաստանի կառավարությունն ու Կոմկուսը որոշումներ էին ընդունում նույն այդ շինարարությունների հետ կապված տարբեր հարցերի վերաբերյալ: Բայց առաջին անգամ էր, որ Երեւանում, այն էլ ՀՕԿ-ի նախագահի պատրաստած փաստաթղթում պարզ եւ հստակ ներկայացվում էր իրական պատկերը: Եվ բանն այն չէր, որ Փարիզում անտեղյակ էին ստեղծված իրավիճակին: Ինչպես վկայում է Վ.Մալեզյանի նամակը, ՀԲԸ Միության ղեկավարությունը եթե ոչ մանրամասներով, բայց եւ այնպես հասկանում էր, որ Հայաստանի իշխանությունների խոստումներն ու գործը շատ հեռու են իրարից: Վերջինների համար, առավել եւս, Ա.Եսայանի գրությունը որեւէ նոր բան չէր պարունակում: Սակայն առաջին անգամ էր, որ այն, ինչ որ գիտեին բոլորը, արձանագրվել եւ ձեւակերպվել էր որպես պաշտոնական փաստաթուղթ, որն անտեսելը գրեթե անկարելի էր:

Լ.Բերիայի ի հայտ գալը

Նշված երեք փաստաթղթերի բովանդակությունից հստակ երեւում է, որ դրանց ի հայտ գալը զգալի չափով պայմանավորված էր Լ.Բերիայի՝ սփյուռքի հետ Հայաստանի հարաբերություններին հատուկ ուշադրությամբ: Ճիշտ նույն այն օրերին, երբ պատրաստվում էին այդ փաստաթղթերը, Երեւանում ինքնուրույն ստուգումներ էր անցկացնում նաեւ Անդրժողկոմի ֆինանսների ժողկոմիսար Վ.Երեմյանը: Ստուգման արդյունքների մասին նրա 1936թ. հունվարի 13-ի թվակիր հատուկ գրությունը հասցեագրված էր Լ.Բերիային, Անդրժողկոմխորհի նախագահ Գ.Մուսաբեկովին, ինչպես նաեւ Ա.Խանջյանին: «Տեղեկություններ ստանալով, որ Հայաստանի ժողկոմխորհի Ներգաղթի կոմիտեի գործունեության մեջ տեղի են ունեցել օրենքների կոպիտ խախտումներ,- զեկուցում էր Վ.Երեմյանը,- ես, Անդրժողկոմխորհի համաձայնությամբ, անձամբ մեկնեցի

մանրազնին ստուգումներ կատարելու համար: ...Ստուգման նյութերը հաստատում են, որ Ներգաղթի կոմիտեն դեռեւս 1933թ. օգտվում էր Հայմատսպառի ապարատից առեւտրական գործարքներ իրականացնելու համար: Հայաստանի Ժողկոմխորհի որոշմամբ Ներգաղթի կոմիտեն 1934թ. հունվարի 1-ից գործում է լրիվ ինքնուրույն, թեեւ չի անցել ոչ պետական, ոչ էլ հարկային գրանցում եւ չունի կանոնադրություն: Նրա հաշվեկշիռները ներկայացվել են ուղղակի Ժողկոմխորհ եւ քննարկվել են հակառակ գործող կարգի: Համարում եմ լրիվ հաստատված, 1) որ Հայաստանի Ժողկոմխորհը Ներգաղթի կոմիտեի միջոցով վաճառել է անտառանյութ եւ շինանյութ չափազանց բարձր գներով, դրանով իսկ թանկացնելով շինարարության արժեքը Հայաստանում, չնայած նրան, որ կուսակցության եւ կառավարության դիրեկտիվները պահանջում էին շինարարության արժեքի իջեցում, 2) Հայաստանի Ժողկոմխորհը, Հայմատսպառի կողմից մատակարարվող անտառանյութի համար սահմանելով վաճառքի հատուկ գին, անօրինաբար ձեւով ստեղծել էր հսկայական կուտակումներ, որոնք տնօրինել է իր հայեցողությամբ, մինչդեռ նրանք իրենց բնույթով առեւտրական հավելագին են եւ ենթակա են հանձնման միութենական բյուջե: Խնդրում եմ Ձեզ քննարկել Խորհրդային օրենսդրության նշված խախտումների մեջ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցը եւ Հայաստանի Ժողկոմխորհին պարտավորեցնել անօրինաբար յուրացված գումարները 1936թ. մուտքագրել միութենական բյուջե՝ ի հաշիվ Հայաստանի բյուջեի»:[12]

Այսպիսով, թե Ա.Եսայանը եւ թե Վ.Երեմյանը «անօրինաբար ձեւով» առաջացած գումարները առաջարկում են հետ վերցնել Հայաստանի բյուջեից, սակայն, եթե Ա.Եսայանի կարծիքով, այդ գումարներով կառավարությունը պետք է կատարեր սփյուռքահայերի առաջ ստանձնած պարտավորությունները, ապա Վ.Երեմյանի կարծիքով, նշված գումարները պետք է մտցվեն միութենական բյուջե:

Ստեղծված իրավիճակում Հայաստանի ղեկավարությունը այլեւս զրկվել էր ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքից, եւ մնում էր միայն ենթարկվել վերադաս՝ անդրկովկասյան մարմիններին: Իսկ վերջինները գործում էին նախանձելի արագությամբ: Վ.Երեմյանի վերոնշված գրությունից ընդամենը երկու օր անց՝ հունվարի 15-ին տեղի է ունենում Անդրժողկոմխորհի նիստ Պ.Ագնիաշվիլու նախագահությամբ, որը, քննարկելով Հայաստանի Ժողկոմխորհին կից Ներգաղթի կոմիտեի ապօրինի գործողությունների հարցը, որոշում է մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հարցը փոխանցել Հայաստանի կառավարությանը:[13] Ի կատարումն այդ հանձնարարականի, 1936թ. փետրվարի 1-ի

որոշմամբ Հայաստանի Ժողկոմխորհը իր համաձայնությունը հայտնելով Վ.Երեմյանի նամակում բերված փաստերին եւ թվարկելով վարչական պատիժների ենթարկված պաշտոնյաներին, միաժամանակ հատուկ կետով նշում էր. «Հաշվի առնելով, որ Ներգաղթի կոմիտեում տարիների ընթացքում առաջացած կուտակումների մեծ մասը գործածվել է ներգաղթողների ընդունման, կուլտուրկենցաղային սպասարկման, շինարարության նպատակով, խնդրել Անդրժողկոմխորհին չթույլատրել Անդրֆինժողկոմին հանում կատարել Հայաստանի ՍԽՀ բյուջեից՝ Ներգաղթի կոմիտեի գործունեության կապակցությամբ»:[14]

Բայց մինչ Հայաստանի ղեկավարությունը փորձում էր մեղմացնել ֆինանսական պատժամիջոցները, Անդրերկրկոմի ղեկավարությունը Լ.Բերիայի գլխավորությամբ կիրառեց շատ ավելի լուրջ՝ քաղաքական բնույթի պատժամիջոց: 1936թ. ապրիլի 26-ին Անդրերկրկոմի բյուրոյի հերթական նիստում քննարկվեց Հայաստանի Կոմկուսի կենտկոմի հաղորդումը ՀՕԿ-ի մասին, որով հանդես եկավ Ա.Խանջյանը: Նկատի առնելով քննարկման մասնակիցների կազմը՝ Լ.Բերիա, Ֆ.Մախարաձե, Ռս.Ռախմանով, Գ.Հարությունով (Անդրերկրկոմի բյուրոյի անդամության թեկնածու, Հայաստանի Կոմկուսի ապագա առաջնորդը), Ա.Ամատունի եւ Ա.Եսայան, դժվար չէր գուշակել դրա արդյունքը: Լ.Բերիայի ստորագրությունը կրող որոշման առաջին կետով ՀՕԿ-ի հետագա գործունեության հարցը պետք է քննարկման մտցվեր Խորհրդային Միության Կոմկուսի կենտկոմ, իսկ երկրորդ կետով Հայաստանի Ժողկոմխորհին կից Ներգաղթի կոմիտեն լուծարվում էր եւ ներգաղթողների համար ավանների շինարարության, նրանց տեղավորման եւ սպասարկման ողջ աշխատանքը հանձնվում էր ՀՕԿ-ին:[15]

Լուծարելով Հայաստանի կառավարությանը կից Ներգաղթի կոմիտեն՝ Անդրֆեդերացիայի ղեկավարները կարծես անվստահություն էին հայտնում Հայաստանի թե պետական եւ թե կուսակցական ղեկավարությանը: Դրա հետ մեկտեղ, սփյուռքահայության եւ ներգաղթողների հետ տարվող ողջ աշխատանքը փոխանցելով կառավարության մաս չկազմող ՀՕԿ-ին, որի ապագա գոյությունը իր հերթին դառնում էր անորոշ, անդրկովկասյան իշխանությունները, ինչպես ցույց տվեցին դեպքերի զարգացումները, նախապատրաստում էին իրենց հետագա որոշումները:

Հայաստանի ղեկավարությունը, վերադառնալով Երեւան, համաձայն ընդունված կարգի, Հայկոմկուսի կենտկոմի բյուրոյի մայիսի 4-ի նիստում պարտադրաբար իր հավանությունը տվեց Անդրերկրկոմի վերոնշված որոշմանը: Սակայն, Թիֆլիսում, ըստ ամենայնի, քննարկվել եւ որոշումներ էին կայացվել եւ այլ, ֆինանսական հարցերի վերաբերյալ,

որոնց Հայաստանի ղեկավարությունը, այնուամենայնիվ, չէր կարող համաձայնել: Դրա մասին է վկայում Ա.Խանջյանի եւ Ա.Գուլոյանի մայիսի 26-ի նամակը Խորհրդային Միության Ժողկոմխորհի նախագահ Վ.Մոլոտովին: Իր հիմնական մասում նամակը յուրահատուկ ամփոփ մի տեղեկանք է ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի գործունեության մասին: Նամակի վերջում Հայաստանի ղեկավարները մեկ անգամ եւս շեշտելով ՀՕԿ-ի քաղաքական կարեւորությունը, շարադրում են իրենց խնդրանքը.

«1) թույլատրել Երեւանի Պետհամալսարանին, Թանգարանին, Լուսժողկոմատին, Առողջապահության Ժողկոմատին եւ Կարմիր Խաչին ՀՕԿ-ի միջոցով նվիրատվությունների եւ կտակային գումարների հաշվին դուրս գրել իրենց համար անհրաժեշտ արտասահմանյան գույք եւ սարքավորումներ առանց լիցենզիաների եւ մաքսատուրքի վճարման՝ պարտավորվածությամբ օգտագործել դրանք իրենց մոտ, առանց փոխանցման եւ իրացման իրավունքի,

2) նկատի առնելով, որ ներգաղթողների ընդունումն ու տեղավորումը, ավանների կառուցումը, նրանց հատկացված հողերի յուրացումն ու ոռոգումը չեն ֆինանսավորվել եւ չեն ֆինանսավորվում պետբյուջեից (!-Էդ.Մ.), այլ իրականացվում են արտասահմանյան հանգանակությունների շնորհիվ, թույլատրել ՀՕԿ-ին հանգանակած գումարներով դուրս գրել եւ ստանալ սարքավորումներ եւ այլ ապրանքներ, դրանք մասամբ իրացնել պետական կազմակերպություններում, պայմանով, որ ստացված գումարները ծախսվեն բացառապես ներգաղթողների համար շինարարության վրա»:[16]

Այս շատ հմուտ ձեւով կազմված նամակի նպատակը մեկն էր՝ պահպանել ներգաղթը շարունակելու համար եղած հնարավորությունները: Հենց դրանով է բացատրվում այն մեծ, գիտակցաբար չափազանցված կարեւորությունը, որ տրվում էր ՀՕԿ-ին, որը Ներգաղթի կոմիտեի լուծարումից հետո ստանձնել էր ներգաղթողների ընդունման եւ տեղավորման ողջ աշխատանքը եւ որի ապագա գոյության հեռանկարները պարզ չէին: Ամենաէականն ու անսպասելին այն է, որ Հայաստանի ղեկավարները, ըստ երեւույթին, առաջին եւ վերջին անգամ գրում են (թեկուզ եւ «գաղտնի» գրիֆը կրող նամակում), որ Խորհրդային Միության կենտրոնական կառավարությունը չի ֆինանսավորում հայերի ներգաղթը Հայաստան: Նամակի հեղինակները ամենայն հստակությամբ նշում են. սփյուռքահայերի նյութական օգնության շնորհիվ է, որ Հայաստանի կառավարությունը կարողացել է ընդունել եւ տեղավորել ներգաղթողներին: Այդ առումով խիստ հետաքրքրական է, որ հենց Ա.Խանջյանի եւ Ա.Գուլոյանի

խոսքերով, այդ միջոցները առաջացել էին սփյուռքահայերի նվիրատվություններից, «մասամբ էլ Խ. Հայաստանի մշակութային զարգացման նպատակով կտակած գումարների ամենամյա հատկացումներից»: Այլ կերպ ասած, Հայաստանի ղեկավարությունը ներգաղթի կազմակերպման եւ իրագործման վրա էր ծախսում այն գումարները (կամ նրանց մի մասը), որոնք սփյուռքահայերի կողմից տրամադրվել էին նույն այդ ներգաղթողների համար երկրում ավանների, սոցիալ-մշակութային եւ այլ բնույթի հաստատությունների կառուցման նպատակով: Տրամադրած միջոցների նման օգտագործման պայմաններում անխուսափելիորեն դանդաղում կամ ընդհանրապես չէր իրականացվում նախատեսված շինությունների կառուցումը, ինչը, իր հերթին, նոր բարդություններ էր առաջացնում իշխանությունների համար թե սփյուռքի համապատասխան կազմակերպությունների եւ թե ներգաղթածների հետ իրենց հարաբերություններում: Մյուս կողմից, կառավարությունը, նշված կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելիս, ըստ ամենայնի, տրամադրվող գումարների դիմաց ստանձնել էր պարտավորություններ, որոնք դժվար իրագործելի էին առկա ֆինանսատնտեսական պայմաններում: Այսպես, օրինակ, կառավարությունը դեռեւս 1934թ. ապրիլի 27-ի նիստում, քննարկելով Նուպարաշենի կառուցապատման հարցը, որոշում է. «Նկատի ունենալով, որ ՀԲԸՄ միջոցով հավաքված գումարը չի ապահովում վերոհիշյալ նախագծերով նախատեսված շենքերի կառուցման ավարտումը եւ ընդառաջելով նվիրատուներին, գտնել անհրաժեշտ Ժողկոմխորհի միջոցներից լրացուցիչ կերպով 541.000 ռուբլի հատկացնել այդ շենքերի կառուցման համար»:[17]

Պետական բյուջեով չնախատեսված ծրագրերի իրականացումը Հայաստանի ղեկավարության կողմից պարտադրաբար թելադրում էր գտնել ֆինանսական միջոցների նոր աղբյուրներ, եւ հենց դրանով կարելի է բացատրել Ներգաղթի կոմիտեի վերոնշված տնտեսական գործարքները, որոնք ցանկության դեպքում դժվար չէր ներկայացնել որպես «սպեկուլյատիվ» գործունեություն: Այդ առումով հատկանշական է, որ Հայաստանի ղեկավարությունը մի տեսակ հանգիստ վերաբերվեց Ներգաղթի կոմիտեի լուծարմանը, քանզի նրա գործառույթները, եւ առաջին հերթին տնտեսական գործառույթները, փոխանցվեցին ՀՕԿ-ին: Սակայն, երբ Անդրերկրկոմի ղեկավարությունը իր հաջորդ քայլով արգելեց վերջինի տնտեսական գործունեությունը եւ դրանով իսկ հարցականի տակ դրեց ներգաղթի հետ կապված բոլոր ծրագրերի իրագործումը, Հայաստանի առաջնորդները արդեն ստիպված էին դիմել Խորհրդային Միության կառավարության նախագահին:

Այսպիսով, 1936թ. ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Անդրերկրկոմը, անձամբ Լ.Բերիան իրենց անմիջական հսկողության տակ վերցնելով Հայաստանի հարաբերությունները հայ սփյուռքի հետ, հետեւողականորեն ձգտում էին մի կողմից վարկաբեկել եւ ուժեղացնել ճնշումը Հայաստանի ղեկավարության վրա, իսկ մյուս կողմից՝ իրենց ընդունած եւ Հայաստանի համար պարտադիր բնույթ ունեցող որոշումներով հարցականի տակ էին դնում նույն այդ հարաբերությունները ընդհանրապես: Հայաստանի ժողկոմխորհին կից Ներգաղթի կոմիտեի լուծարումը, ՀՕԿ-ի հետագա գոյության անհրաժեշտության քննարկումը, ֆինանսական պատժամիջոցների կիրառման առաջարկությունները, ղեկավար անձանց հասցեին հնչած մեղադրանքները եւ այլն՝ այդպիսին էին այդ քաղաքականության առավել շոշափելի արդյունքները: Զբաղվարարվելով այսքանով՝ Լ.Բերիան իր հեռուն գնացող նպատակների համար հետեւողականորեն շարունակում էր կուտակել նորանոր փաստեր:

Հուլիսի 2-ին Անդրժողկոմխորհի Ներքին գործերի ժողկոմիսար Ս.Գոգլիձեն Լ.Բերիային է ուղարկում հերթական հատուկ հաղորդումը Ֆրանսիայից Հայաստան ներգաղթածների մեջ տիրող տրամադրությունների մասին: «Առաջին հաղորդման մեջ նշած թերությունները (թանկություն, վատ սպասարկում, աշխատանքով չապահովում, անբավարար կենցաղային պայմաններ) մինչեւ հիմա վերացված չեն, -գրում էր նա,- եւ ներգաղթածների որոշ մասի մեջ դժգոհության պատճառ են հանդիսանում: Դրա պատճառով Նուպարաշեն ավանից մի քանի ընտանիք տեղափոխվել է Երեւան, իսկ 35 մարդ ավանի խորհրդի նախագահին են ներկայացրել հետեւյալ պահանջները. 1) կազմակերպել կանոնավոր ավտոբուսային հաղորդակցում Երեւանի եւ Նուպարաշենի միջեւ, 2)ավելացնել առեւտրական կետերի մատակարարումը առաջին անհրաժեշտության ապրանքներով եւ բանջարեղենով, 3) բարելավել ջրի մատակարարումը»: Նշելով, որ տեղացի եւ մինչ այդ ներգաղթած «հակախորհրդային տարրերը», օգտագործելով այդ թերությունները, վարում են «հակախորհրդային ագիտացիա եւ տարբեր պրովոկացիոն լուրեր են տարածում», Ս.Գոգլիձեն բերում է նման ագիտացիայի մի օրինակ. տեղաբնակներից մեկն ասել է. «Ներգաղթողները հիմար են: Մենք չգիտենք, թե ինչպես ազատվել այս իշխանությունից, իսկ սրանք իրենք են եկել այստեղ տանջվելու: Օրերս ես տեսնվեցի ու զրուցեցի ներգաղթածներից մի քանիսի հետ եւ այնպես տարա խոսակցությունը, որ նրանք հիմա զղջում են, որ եկել են այստեղ...»:[18]

Այս փաստաթուղթը ուշադրության է արժանի ոչ միայն բովանդակությամբ, այլեւ վրայի մակագրությամբ: Այսօր անհնար է պարզել՝ քն-

նարկե՞լ էր Լ.Բերիան այս փաստաթուղթը Ա.Խանջյանի հետ իր վերջին հանդիպման ժամանակ, թե՞ ոչ, բայց այդ ճակատագրական հանդիպումից երկու օր անց նա այն հասցեագրում է Ա.Ամատունուն եւ Ա.Գուլոյանին հետեւյալ մակագրությամբ. «Ուշադրություն դարձրեք, ստուգեք այս տեղեկությունները եւ ավանի իրական վիճակը: Քննարկեք բյուրոյում եւ ընդունեք բոլոր թերությունները վերացնող անհրաժեշտ միջոցներ եւ ընդհանրապես ստուգեք, թե ինչպես են տեղավորվել արտասահմանից եկած հայերը: Միշտ ունեցեք ձեր հսկողությունը: Ավաններին կցեք աշխատել իմացող լավ մարդկանց: Բերիա»:[19]

Բերիան այս դեպքում եւս հետեւում է իր հայրենակից ուսուցչի՝ Ի.Ստալինի օրինակին. գործնականում հարվածի տակ դնելով սփյուռքահայության, հատկապես ներգաղթողների հետ Հայաստանի աշխատանքը՝ նա հիրավի «հայրական» հոգատարություն է ցուցադրում նույն այդ ներգաղթածների հանդեպ: Խոսելով Լ.Բերիայի նման դիրքորոշման մասին՝ պետք է նկատի առնել մեկ հանգամանք եւս: Հարեւան հանրապետությունների, Խորհրդային Վրաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները հասկանալի նախանձով էին վերաբերվում Հայաստանի՝ Խորհրդային Միության պայմաններում աննախադեպ կապերին արտասահմանում բնակվող հայության հետ: Եվ որքան էլ այդ կապերը սահմանափակ լինեին, այնուամենայնիվ, դրանց դրական հետեւանքները ակնհայտ էին՝ հայ բնակչության մեխանիկական աճը, ֆինանսական օժանդակությունը Հայաստանի զարգացման ծրագրերին եւ այլն: Հայաստանի այդպիսի, թեեւ ոչ մեծ, բայց ամեն դեպքում չնախատեսված առավելությունը հաշտ աչքով չէր դիտվում վրացի եւ ադրբեջանցի ղեկավարների կողմից, առավել եւս նկատի առնելով երեք հանրապետությունների միջեւ եղած հին եւ նոր հակադրությունները ազգային-քաղաքական, հատկապես տարածքային հարցերում: Այդ առումով Լ.Բերիայի կողմից ղեկավարվող Անդրկովկասյան պետական եւ կուսակցական մարմինները շատ հարմար միջոց էին Հայաստանի այդ առավելությունը չեզոքացնելու համար:

Հայաստանի քաղաքական վերնախավում տիրող վիճակը՝ ներքին համախմբվածության բացակայությունը, տարբեր, այդ թվում նաեւ Լ.Բերիայի «թիֆլիսյան» կադրերից եւ տեղացիներից կազմված խմբավորումների միջեւ մշտական ընդհատակյա պայքարը (Ռ.Վինդզբերգի վկայությամբ այն կարծիքը կար, որ «...Խանջյանը չի ուզում համագործակցել Անդրերկրկոմի ուղարկած մարդկանց հետ, որ նրանց դուրս է մղում Հայաստանից»[20]) եւ այլ հանգամանքներ անհնար էին դարձնում միասնական գործունեությունը հանրապետության շահերը պաշտպանելու ու հետապնդելու նպատակով: Նման պայմաններում առանձին դեպքերում

միայն (նամակը Վ.Մոլոտովին) փորձ էր արվում մեղմել Թիֆլիսից եկած հրահանգների բացասական հետեւանքները: Այդ առումով ուշագրավ են Ռ.Վինդզբերգի խոսքերը Ա.Խանջյանի մասին. «...նա շատ ապրումներ էր ունենում եւ ասում էր՝ հավանաբար ինքը չի կարողանում ղեկավարել, եթե չի լինում գոնե մեկ տարի առանց ներքին պայքարի, որ հավանաբար պատճառն ինքն է եւ պետք է Հայաստանից գնա... որ իրեն մեկուսացած է զգում, որ ինքը չի կարող ոչ մի հարց անցկացնել, որ «Եոյակը» (Ամատունի, Ակոպով, Գուլոյան) ամեն ինչ նախապես որոշում է եւ իրեն կանգնեցնում կատարված փաստերի առաջ...»:[21]

Ի.Ստալինի եւ Վ.Մոլոտովի 1936թ. որոշումը

Այսպիսին էր իրավիճակը 1936թ. կեսերին, երբ տեղի ունեցավ մի իրադարձություն, որը, ըստ էության, հակասում էր դեպքերի զարգացման տրամաբանությանը: 1936թ. հուլիսի 21-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմը՝ ի դեմս առաջին քարտուղար Ի.Ստալինի եւ Խորհրդային Միության կառավարությունը՝ ի դեմս նրա նախագահ Վ.Մոլոտովի, ընդունում են նախադեպը չունեցող մի որոշում՝ «Հայ ներգաղթողներին Հայկական ԽՍՀ-ում տեղավորելու միջոցառումների մասին»: Փաստաթղթում հենց սկզբից «սխալ եւ անհանդուրժելի» է գնահատվում Հայաստանի կառավարության կողմից «արտասահմանյան հասարակական կազմակերպությունների եւ առանձին հայ նվիրատուների առջեւ ստանձնած պարտավորությունները չկատարելու հաստատված պրակտիկան»:[22] Այստեղ բավական մանրամասն թվարկված են այն միջոցառումները, որոնք՝ ըստ Խորհրդային Միության ղեկավարների, պետք է ուղղեին Հայաստանի կառավարության եւ Կոմկուսի «կոպիտ սխալները». շինարարական բոլոր աշխատանքների 50%-ը պետք է ավարտվեր 1937թ. հունվարի 1-ին, իսկ ամբողջությամբ՝ նույն տարվա հուլիսի 1-ին, միութենական եւ հանրապետական հիմնարկներին հստակ հաձնարարականներ էին տրվում ֆինանսավորելու եւ շինանյութերով ապահովելու համար, նախատեսվում էր ներգաղթողների արտադրական արտելները ապահովել անհրաժեշտ հումքով, գյուղաբնակ ներգաղթողները 3-4 տարով կամ ազատվում էին տարբեր տեսակի հարկերից, կամ էլ պետք է վճարեին կիսով չափ, վերջապես, սահմանվում էին արտասահմանի հայերից որպես նվիրատվություն տարբեր սարքավորումների եւ այլ ապրանքների ստացման եւ իրացման ձեւերը: Հատուկ նշվում էր ֆինանսավորման խնդիրը. սահմանվում էր բոլոր օբյեկտների շինարարության ընդհանուր արժեքը՝ 3.200

հազ. ռուբլի, որից 1936թ. ԽՍՀՄ Ֆինժողկոմատին հանձնարարվում էր հատկացնել 1,5 մլն ռուբլի՝ ի հաշիվ Հայաստանի բյուջեից միութենական բյուջե վերադարձման ենթակա գումարի, մնացած 1,7 մլն ռուբլին Հայաստանի Ժողկոմխորհը պետք է հատկացներ իր 1937թ. բյուջեից, իսկ ԽՍՀՄ Ֆինժողկոմատը պետք է հատուկ նախատեսեր այդ գումարը Հայաստանի 1937թ. կապիտալ շինարարության պլանում:

Որոշումը ուներ նաեւ հատուկ հավելված, ուր տրված էր այն 12 շինությունների ցանկը, որոնք պետք է կառուցվեին համաձայն Հայաստանի կառավարության ստանձնած պարտավորությունների եւ որոնցից 7-ը վերաբերում էին Նուպարաշենին:

Իր բովանդակությամբ եւ կարեւորությամբ սա իսկապես շատ տպավորիչ փաստաթուղթ էր, առավել եւս, նկատի առնելով Ի.Ստալինի եւ Վ.Մոլոտովի ստորագրությունները: Ըստ էության, առաջին անգամ էր, որ Խորհրդային Միության ղեկավարները նման որոշում էին կայացնում ներգաղթած հայերի վերաբերյալ, մինչդեռ շատ հայեր սկսել էին ներգաղթել Խորհրդային Հայաստան դեռեւս 1921թ.: Եվ ահա միայն 1936թ. երկրի ղեկավարությունը կայացնում էր որոշում, որով ստանձնում էր ներգաղթողների տեղավորման հետ կապված հարցերի լուծումը:

Համաձայն Խորհրդային Միությունում արմատացած ավանդույթի, նույնիսկ երկրի ղեկավարների կողմից ընդունված որոշումների իրագործումը կապված էր բազմաթիվ դժվարությունների, մասնավորապես կառավարման ավելի ստորին օղակներում դրանց յուրովի մեկնաբանության հետ: Նման բախտի արժանացավ նաեւ նշված որոշումը: Այսպես, արդեն նույն 1936թ. վերջին Հայաստանի ղեկավարությունը, ծանոթանալով Մոսկվայից ստացած հաջորդ տարվա ֆինանսավորման ծրագրին, ստիպված էր նորից դիմել Վ.Մոլոտովին:[23]

Ֆինանսավորումից բացի, ամենադժվար լուծվողը, ինչպես եւ նախորդ տարիներին, Նուպարաշենի ջրանցքի ու ջրմուղի խնդիրն էր: Դրանք պետք է շահագործման հանձնվեին 1937թ. հուլիսի 1-ին: Սակայն, Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոն հուլիսի 3-ի նիստում ստիպված էր արձանագրել. «Ջրմուղի շինարարությունը ժամանակին չի ավարտված: ...Ժողկոմխորհի նախագահին (Գուլոյան) միութենական մարմինների առաջ վերստին դնել խողովակները ոչ ժամանակին մատակարարելու հարցը»:[24] Բայց կար եւ հպարտանալու պատճառ. «...Նուպարաշենի 1937թ. շինարարության ծրագիրը հիմնականում ավարտված է: Լիովին ավարտված են դպրոցը, մանկամսուրը, մանկապարտեզը, թատրոնը, բաղնիքը եւ բնակելի շենքերը... Լրիվ չի ավարտվել միայն հիվանդանոցի շենքը»[25]: 1937թ. կեսերին Նուպարաշենի 100-ից ավելի բնակարաններում բնակվում էր շուրջ 1000 ներգաղթած հայ:

Չնայած այդ եւ ուրիշ այլ դժվարություններին ու թերություններին, այնուամենայնիվ, հարկ է հատուկ նշել, որ Խորհրդային Միության ղեկավարների հուլիսի 21-ի որոշումը խիստ կարեւոր նշանակություն ունեցավ, որի շնորհիվ Նուպարաշենում եւ ներգաղթողների համար կառուցվող այլ ավաններում շինարարական եւ բարեկարգման աշխատանքները ընթացան անհամեմատ ավելի արագ՝ դրանով իսկ նպաստելով բնակիչների կենսապայմանների որոշակի բարելավմանը:

Եթե փորձենք այս փաստաթուղթը բացատրել նախորդող դեպքերի պատճառահետեւանքային կապերով, ապա կարելի է հանգել հետեւյալ եզրակացություններին. ա) Խորհրդային Միության, Խորհրդային Հայաստանի իշխանությունները, կազմակերպելով հայերի ներգաղթը, միեւնույն ժամանակ ի վիճակի չէին ապահովել անհրաժեշտ պայմաններ նրանց աշխատանքի եւ ապրելու համար, բ) ինչպես հետեւում էր Ա.Խանջյանի եւ Ա.Գուլոյանի՝ Վ.Մոլոտովին հասցեագրած նամակից, այդ բոլոր տարիների ընթացքում ներգաղթի կազմակերպման եւ երկրում ներգաղթողների տեղավորման ողջ աշխատանքը միութենական կառավարության կողմից չէր ֆինանսավորվել, գ) անհրաժեշտ դրամական միջոցներ ձեռք բերելու համար իշխանությունները Ներգաղթի կոմիտեի միջոցով ձեռնարկել էին առեւտրական գործունեություն, որը հակասում էր գործող օրենքներին, դ) Հայաստանի իշխանությունները ներգաղթողների տեղավորման հետ կապված բազմապիսի հարցերի լուծմանն էին ծառայեցնում սփյուռքահայ կազմակերպություններից (հիմնականում ՀԲԸ Միությունից) ու անհատներից այլ նպատակներով ստացված միջոցները, որի հետեւանքով տարիներով չէին կատարում պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, նախ եւ առաջ Նուպարաշեն ավանի շինարարությունը, ե) ի հետեւանս դրա՝ թե ներգաղթողների մոտ եւ թե սփյուռքի համապատասխան կազմակերպություններում ձեւավորվել էր բացասական կարծիք երկրի իշխանությունների, ընդհանրապես խորհրդային հասարակարգի մասին: Եթե բավարարվենք այսքանով, ապա կարելի է ենթադրել, որ Խորհրդային Միության վերին ղեկավարությունը, գիտակցելով ստեղծված անցանկալի իրավիճակը արագ շտկելու անհրաժեշտությունը, կայացրեց այդ որոշումը: Սակայն մարդկային պատմության յուրահատկությունը եւ, միեւնույն ժամանակ, նաեւ բարդությունը հենց այն է, որ նման տրամաբանական եզրահանգումներում ու բացատրություններում միշտ չէ, որ հաշվի են առնվում պատմական երեւույթների ու իրադար-

ձությունների իրական պատկերը, ամենատարբեր գործոնների, ներառյալ՝ առանձին անհատների, դերը:

Այդ որոշումից մոտ տասն ամիս առաջ Ա.Եսայանը ՀԿԿ կենտկոմի բյուրոյում Հայաստանի ղեկավարությանը մեղադրեց ներգաղթողների համար նախատեսված ավանների, հատկապես Նուպարաշենի եւ այլ կառույցների շինարարությունը ձախողելու մեջ: Այն օրերին հույս չդնելով տեղի ղեկավարության վրա նա շտապեց դիմել Անդրերկրկոմ՝ Լ.Բերիային, որի գլխավորությամբ աշխատել էր Թիֆլիսում եւ որի մեջ տեսնում էր կամ ուզում էր տեսնել զուտ պետական շահերով առաջնորդվող գործչի: Սակայն ստանձնելով Ներգաղթի կոմիտեի եւ ՀՕԿ-ի գլխավոր վարչության նախագահի պաշտոնները՝ Ա.Եսայանը շատ շուտով գիտակցեց, որ Բերիան բնավ էլ մտահոգված չէ ներգաղթողների ընդունման եւ տեղավորման բազմաթիվ հարցերի լուծմամբ, որ նրա համար դրանք լոկ միջոց են Հայաստանի ղեկավարությանը վարկաբեկելու, նրա վրա ճնշումը ուժեղացնելու համար: Ժամանակակիցներից մեկի վկայությամբ՝ «...Եսայանն ասում էր, որ իր մտերիմների (ենթադրում եմ՝ Հակոբ Տարոնացու, Տիգրան Զավենի, Գարակյոզյանի՝ Հայաստանում Բարեգործականի ներկայացուցիչ, պրոֆ. Հակոբյանի՝ Մելգոնյան ֆոնդի ներկայացուցիչ) եւ Հայաստան եկող պատվիրակների ու առանձին, որպես զբոսաշրջիկ եկած ՀՕԿ-ի անդամների միջոցով հայկական արտասահմանյան գաղութներին դարձնում է այն ուղին, որ նրանք իրենց եւ Հայաստանի հարցերով անմիջական դիմեն Ստալինին, քանի որ արտասահմանյան գաղութների հարցերը կորչում են ՀամԿ/բ/Կ Անդրերկրկոմում...»:[26]

Ա.Եսայանը, հուսախաբ եղած Անդրերկրկոմից եւ Լ.Բերիայից, միեւնույն ժամանակ չփոխեց իր բացասական կարծիքը հայաստանցի գործընկերների, հատկապես Ա.Խանջյանի մասին, որը, ըստ Ա.Եսայանի, թույլ, պատրաստություն չունեցող, նույնիսկ վախկոտ աշխատող է, որը չի կարողանում պաշտպանել Հայաստանի շահերը Թիֆլիսում եւ Մոսկվայում:[27]

Եթե նա մտադրվել էր հետապնդել իր իսկ բարձրացրած եւ իր անմիջական պարտականությունների մեջ մտնող հարցի լուծումը, ապա մնում էր մեկ միջոց՝ դիմել Մոսկվայի կենտրոնական կառավարությանը: Բայց ինչպե՞ս: Համաձայն օրենքի ուժ ունեցող ենթակարգության, նա որեւէ հարցով պարտավոր էր դիմել նախ Հայաստանի, այնուհետեւ Անդրկովկասի երկրամասային իշխանություններին եւ ապա նոր միայն՝ այն էլ որոշակի պարագաներում, իրավունք էր ստանում դիմել Մոսկվա: Ակնհայտ էր, սակայն, որ այդ դեպքում նրա նպատակը դառնում էր անհասանելի: Հաշվի առնելով այս եւ ուրիշ այլ հանգամանքներ Ա.Եսայանը դիմում է անսովոր մի քայլի:

1937թ. հունվարի 11-ին Հայաստանի Ներքին գործերի ժողկոմիսարիատ է կանչվում՝ առայժմ միայն որպես վկա, Հայաստանում ՀԲԸ Միության ներկայացուցիչ Հայկազ Գարակյոզյանը (Կարագյոզյան): Նրա կենսագրությանն ու աշխատանքին վերաբերող մի շարք հարցերից հետո քննիչը տալիս է մի հարց, որը, ինչպես պարզ է դառնում հարցաքննության հետագա ընթացքից, ամենակարեւորն էր նրա համար: Ահա՝ որոշ կրճատումներով, համապատասխան հատվածը Հ.Գարակյոզյանի հարցաքննության արձանագրությունից.

«Հարց.- Ե՞րբ եք դուք վերջին անգամ եղել Մոսկվայում:

Պատասխան.- 1936թ. հունիս-հուլիսին: Ես մեկնեցի Մոսկվա ՀՕԿ-ի նախկին նախագահ Ա.Եսայանի առաջարկությամբ: Մոսկվա գնալու ձեւական պատճառն էր Հայաստան տեղափոխել Լենինգրադի մաքսատանը պահվող յոթ ավտոմեքենաները, որոնք Մելգոնյան ֆոնդի պատվերով առաքվել էին Ամերիկայից: Ավտոմեքենաները պատվիրվել էին նախկին Լուսժողկոմ Արտո Եղիազարյանի կողմից, ում համար՝ չգիտեմ...

Հարց.- Ա.Եսայանը ոչ մի կապ չուներ Մելգոնյան ֆոնդի հետ, ինչո՞ւ նա միջամտեց:

Պատասխան.- Իսկապես, Եսայանը կապ չուներ Մելգոնյան ֆոնդի հետ, բայց նրան խնդրել էր միջամտել Ա.Եղիազարյանը:

Հարց.- Զեզանից եւ Եսայանից բացի, էլ ո՞վ մեկնեց ձեզ հետ Մոսկվա ավտոմեքենաների հարցով:

Պատասխան.- Մեզ հետ մեկնեցին նաեւ պրոֆ. Հակոբյանը եւ Տիգրան Զավենը:

Հարց. - Ի՞նչ անհրաժեշտություն կար մեկ հարցով (ավտոմեքենաների) չորս հոգու Մոսկվա մեկնելու համար եւ ի՞նչ կապ ունեիք դուք, որպես Բարեգործականի ներկայացուցիչ, այդ հարցի հետ:

Պատասխան. - Ավտոմեքենաների հարցի հետ ես՝ Գարակյոզյանս, Տիգրան Զավենը եւ Ա.Եսայանը ոչ մի կապ չունեինք: Այդ հարցը հետաքրքրում էր միայն պրոֆ. Հակոբյանին: Եսայանը ինձ իր հետ վերցրեց, որպեսզի կշիռ տա պատվիրակությանը, քանի որ ես Բարեգործականի ներկայացուցիչն էի, եւ բացի այդ, ճանապարհին հայտնեց ինձ, որ Մոսկվայում, կենտրոնական մարմիններում դնելու է ներգաղթողների Նուպարաշեն ավանի կառուցման եւ բարեկարգման հարցը:

...Մոսկվա հասնելու երկրորդ օրը Եսայանը պատվիրակության քննարկմանը դրեց մի հարց՝ ի՞նչ ձեւով դիմել ԽՍՀՄ ժողկոմխորհ Նուպարաշեն ավանի խնդրով եւ ինքն էլ առաջարկեց պատրաստել դիմում ժողկոմխորհի նախագահի տեղակալ Մեժլաուկի անունով: Դիմումը ան-

գլերեն լեզվով գրեց պատվիրակության անդամ պրոֆ. Հակոբյանը: Դիմումի հիմնական հարցը, կարծեմ՝ միակը, Նուպարաշենի բարեկարգման հարցն էր: Համենայն դեպս, ինձ այդպես բացատրեցին, քանի որ, անգլերենին չտիրապետելով, ես դիմումը չէի կարդացել: Դիմումը ստորագրեցին Մելգոնյան ֆոնդի անունից պրոֆ. Հակոբյանը եւ Բարեգործականի անունից ես՝ Գարակյոզյանս:

Հարց.- Ինչո՞ւ էր դիմումը գրված անգլերեն լեզվով:

Պատասխան.- Մինչեւ դիմումը կազմելը մենք խորհրդակցում էինք ԽՍՀՄ Պետպլանի աշխատակից Գագիկ Պարզյանի հետ, որը եւ խորհուրդ տվեց գրել անգլերենով, քանի որ ընկ. Մեժլաուկը գիտի այդ լեզուն... Պրոֆ.Հակոբյանը անգլերեն լավ գիտի եւ որոշեց ինքն էլ գրի, քանի որ թարգմանելիս կարող էին աղավաղել մտքերը: ...Դիմումը ներկայացնելուց երկու օր անց Մեժլաուկը ընդունեց մեզ՝ ինձ, Հակոբյանին եւ Տիգրան Զավենին: Երբ մենք մտանք Մեժլաուկի առանձնասենյակը, այնտեղ արդեն նստած էին Ա.Եսայանը եւ Խորհրդային վերահսկողության անդամ Վեյնբաումը...

Հարց.- Պատվիրակության ուղեւորությունը Մոսկվա համաձայնեցվա՞ծ էր ՀԿ/բ/Կ Կենտկոմի հետ:

Պատասխան.- Ես ստույգ չգիտեմ այդ մասին: Բայց Հայաստանի Ժողկոմխորհից մեզ տվեցին վկայականներ՝ հյուրանոցում տեղ տրամադրելու համար...

Հարց.- Ինչպե՞ս էր բացատրում Եսայանը իր անմիջական դիմումը ԽՍՀՄ կենտրոնական մարմիններ ներգաղթողների ավանների հարցով՝ անդրկովկասյան կազմակերպությունների գլխի վրայով:

Պատասխան. - Որեւէ բացատրություն չտվեց: Այդ մասին հայտնեց Մոսկվայի ճանապարհին»:[28]

Մոսկվա մեկնած պատվիրակության մեկ այլ անդամ՝ Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Հովհաննես Հակոբյանը նույնպես՝ որպես վկա, հարցաքննվել էր դրանից տասնմեկ օր առաջ՝ 1936թ. դեկտեմբերի 31-ին: Այս անունը մեզ արդեն ծանոթ է: Նա էր, որ դեռեւս 1910թ. Կահիրեում՝ Միացյալ Ընկերության անունից բանակցեց Պողոս Նուպարի հետ՝ Արեւմտյան Հայաստանում ու Կիլիկիայում դպրոցներ հիմնելու վերաբերյալ: Պատերազմից հետո Հ.Հակոբյանը, լինելով Ռամկավար-Ազատական կուսակցության գործիչ, 1922-1927թթ. «Արեւ» թերթի (Կահիրե) խմբագիրն էր: 1927թ. ներգաղթելով Հայաստան նա զբաղվում էր գիտությամբ, դասավանդում անգլերեն եւ, ինչպես նշվեց, Մելգոնյան ֆոնդի պատասխանատուներից էր:

Այս դեպքում էլ քննիչի ուշադրության կենտրոնում էր հանդիպումը Վ.Մեժլաուկի հետ, մասնավորապես դիմումը անգլերեն լեզվով գրելու հանգամանքը.

«**Պատասխան.**- ...Եսայանը ինձ ասաց, որ պետք է դիմում պատրաստել ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Պետպլանի նախագահ ընկ. Մեժլաուկի հասցեով, խնդրելով օգնություն ցույց տալ Նուպարաշեն ավանի հարցում, նշելով դիմումի մեջ, որ դրա համար ստացված գումարները Հայաստանի կառավարությունը ծախսում է ոչ ուղղակի նպատակով: ...Եսայանը, Գարակյոզյանը, Տիգրան Զավենը գրեցին դիմումի հայերեն տեքստը... Ես թարգմանեցի եւ խմբագրեցի...

Հարց - Իսկ ինչո՞ւ հատկապես Խորհրդային կառավարության ղեկավար աշխատողին դուք դիմում էիք անգլերեն լեզվով:

Պատասխան.- Որպեսզի արտասահմանցիների տպավորություն գործենք, որպես արտասահմանյան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Հարց.- Ինչի՞ մասին էիք դուք խոսում Մեժլաուկի հետ ընդունելության ժամանակ:

Պատասխան.- Հուլիսի 8-ին ես, Գարակյոզյանը, Տիգրան Զավենը Մեժլաուկի մոտ ընդունելության էինք... Մեժլաուկի հետ ես խոսում էի անգլերենով, զրույցը վարում էի համաձայն Եսայանի ցուցումների, այսինքն՝ խնդրում էի Միութենական կառավարության օգնությունը Հայաստանի ներգաղթողների ավաններին, նշեցի, որ ներգաղթողների ավանների համար արտասահմանյան բարեգործական կազմակերպություններից ստացված միջոցները Հայաստանի կառավարությունը լրիվ չափով չի ծախսում ուղղակի նպատակով, ինչպես նաեւ դրեցի նոր ներգաղթի հարցը, նշելով, որ արտասահմանում կա 600-700.000 հայ, մեծ մասամբ բանվորներ, որոնք մեծ ցանկություն ունեն գալ Խորհրդային Հայաստան: Եսայանի ցուցումները Մեժլաուկի հետ զրույցի վերաբերյալ ես կատարեցի այն տարբերությամբ, որ նա մեր այցին եւ զրույցին բողոքի տոն էր տալիս... իսկ ես հարցը ներկայացրի ավելի լայն՝ կապելով այն հայերի արտագաղթի պատմության հետ՝ որպես իմպերիալիստական պատերազմի զոհեր, եւ խնդրեցի օժանդակել ներգաղթին Հայաստան»:[29]

Ինքը՝ Արսեն Եսայանը, ձերբակալվել էր դեռեւս 1936թ. նոյեմբերին, եւ հենց նրա գործի հետաքննության կապակցությամբ էլ Հ.Գարակյոզյանն ու Հ.Հակոբյանը կանչվել էին Ներքին գործերի Ժողկոմիսարիատ: Հարցաքննության ժամանակ Ա.Եսայանը Վ.Մեժլաուկին ներկայացրած դիմումի մասին ասել էր. «ԽՍՀՄ Ժողկոմխորհի համար կազմած դիմումի մեջ նշվում էր, որ ներգաղթողների Նուպարաշեն ավանը գտնվում է

ծանր վիճակում, առանց ջրի, քանի որ Հայաստանի ժողկոմխորհը չի կատարել Բարեգործականի առջեւ վերցրած պարտավորությունը՝ ջրանցք անցկացնելու վերաբերյալ: Դիմումի նպատակն էր հասնել նրան, որ միջոցներ հատկացվեն ջրանցքի կառուցման համար եւ որ այն մտցվի 1937թ. ստուգիչ թվերի մեջ (այլ կերպ ասած՝ կառուցումը ավարտվի 1937թ.-Էդ. Մ.)»: Այնուհետեւ, պատասխանելով քննիչի հարցին, ասել է. «Ես ինձ մեղավոր եմ ճանաչում նրանում, որ Հայաստանի ժողկոմխորհի վրա բողոքներով այդ դիմումը ես ներկայացրել եմ ՀԿ/բ/Կ Կենտկոմի գլխի վրայով եւ նրան հակառակ»:[30]

Այսպիսով, Ա.Եսայանի համար Ամերիկայից ուղարկված մեքենաների հարցը լոկ պատրվակ էր պատվիրակություն կազմելու եւ այդ պատվիրակության հետ Մոսկվա մեկնելու համար: Իսկ բուն նպատակը մեկն էր՝ Խորհրդային Միության կառավարությանը տեղյակ պահել ներգաղթողների համար նախատեսված ավանների եւ հատկապես Նուպարաշենի շինարարական աշխատանքների խիստ անբավարար վիճակի մասին, փորձել ձեռք բերել կենտրոնական կառավարության որոշումը ներգաղթողների հետ կապված բոլոր տեսակի հարցերի պարտադիր լուծման վերաբերյալ:

Բայց Ա.Եսայանի նախաձեռնությունը՝ անկախ նրա նպատակներից, երբ նա անցել էր Հայաստանի ու Անդրերկրկոմի կուսակցական եւ պետական ղեկավարության, քննիչի բառերով ասած՝ «գլխի վրայով», չէր կարող մնալ անպատիժ: Հայաստանի վերին ղեկավարության, հատկապես Ա.Խանջյանի եւ Ա.Գուլոյանի վերաբերմունքը Ա.Եսայանի հանդեպ, հատկապես 1935թ. աշնանից սկսած, հասկանալի պատճառներով, մեղմ ասած, հեռու էր բարյացակամ լինելուց: Այդ է վկայում, օրինակ, Ա.Եսայանի 1936թ. մարտի 15-ի նամակը Ա.Խանջյանին եւ Ա.Գուլոյանին. «...Համաձայն ԺԿԽ որոշման, ԺԿԽ-ին կից Նուպարաշենի շինարարության գրասենյակն իր ակտիվ-պասիվով հանձնված է Ներգաղթի կոմիտեին, որի «ակտիվը», ինչպես հայտնի է, ոչինչ իրենից չի ներկայացնում, իսկ պասիվի հաշվին, արդեն մեր ծրագրով չնախատեսված, մոտ 200.000 ռուբլի ծախս ենք կատարել՝ ծառայողներին եւ բանվորներին աշխատավարձի պարտքի եւ այլ վճարումների դիմաց:

«Միակ քիչ թե շատ արժեքավոր բանն էլ՝ մի փոքրիկ մարդատար մեքենան, որը ԺԿԽ-ի գործերի կառավարչության կարգադրությամբ, առանց մեր գիտության, վերցրել են եւ հետ չեն վերադարձնում: Նուպարաշենը երեք անգամ մեքենա է ստացել՝ երեքն էլ վերցրել են:

«Խնդրում եմ վերադարձնել մեքենան, որը վաճառվել է գյուտարարական կոմիտեին»:[31]

Մայիսի 25-26-ին կայացած Հայաստանի Կոմկուսի բյուրոյի նիստում սահմանվեց նոր կարգ, համաձայն որի ՀՕԿ-ը եւ Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովը իրենց դրամական միջոցները կարող էին ծախսել արտասահմանում բացառապես Կենտկոմի թույլտվությունը ստանալուց հետո միայն: Հուլիսի 5-ին, երբ Ա.Եսայանը արդեն Մոսկվայում էր, Հայկոմկուսի կենտկոմի բյուրոն կայացնում է մի որոշում, որը կարող էր ծանր հետեւանքներ ունենալ նրա համար: Համաձայն այդ որոշման, Կենտկոմին կից կուսակցական-խորհրդային վերահսկողության խմբակին հանձնարարվում էր ստուգել ՀՕԿ-ի Գլխավոր վարչության անդամների կողմից միջոցների ծախսման կարգը եւ ներկայացնել առաջարկություններ այդ գործը կարգավորելու համար: Հնարավոր է, որ դա Ա.Խանջյանի ստորագրած բյուրոյի վերջին որոշումներից էր, քանի որ երեք օր անց՝ հուլիսի 8-ին նա մեկնեց Թիֆլիս:

Ա.Խանջյանի մահը

1936թ. հուլիսի 9-ին Թիֆլիսում կայացած Անդերկրկոմի բյուրոյի նիստում Ա.Խանջյանը խստորեն քննադատվեց ազգայնամոլական, աջտրոցկիստական ուժերի դեմ չպայքարելու, նրանց եւ ամենից առաջ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի նախկին տնօրեն Ն.Ստեփանյանին հովանավորելու ու նման այլ հանցանքների համար եւ նույն օրն էլ սպանվեց:[32]

Ա.Խանջյանի հուղարկավորության օրը՝ հուլիսի 12-ին, Երեւանում կայացավ Հայաստանի կուսակցական ակտիվի ժողով, որը միահամուռ կերպով դատապարտեց «ինքնասպան» եղած Ա.Խանջյանին: «...Ում-ում, բայց այստեղ հավաքված ընկերներին դժվար չէ հասկանալ այն իրական պատճառները, որոնք Խանջյանին հասցրին այդ ամոթալի ակտին: Մի՞թե այսօր, այդ դավաճանական կրակոցի լույսի տակ, հասկանալի չէ, որ Խանջյանի բազմաթիվ սխալները, որոնց մասին գիտե Հայաստանի կուսակցական ակտիվը, պատահական չէին, որ դրանք արտացոլում էին թշնամական ազգայնամոլական տարրերի ազդեցությունը Խանջյանի վրա, որ նա երկերեսանություն էր անում կուսակցության հետ, չարաշահում էր նրա բարձր վստահությունը: Վերջիվերջո, խրվելով իր սխալների մեջ... Խանջյանը հասկացավ, որ ինքը պատասխան է տալու կուսակցությանը եւ պետք է բացահայտվի: Եվ նա մնաց իրեն հավատարիմ ու ինքնասպանություն գործեց, դրանով իսկ ձեռք մեկնելով մեր մոլի թշնամիներին»:[33]

Հայկոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Ա.Ամատունու կողմից հանգուցյալին ներկայացված այս մեղադրանքները ժողովում մեծ ոգեւորությամբ կրկնում էին բոլոր ելույթ ունեցողները: Միանման մերկացնող ելույթների շարքում, ինչպես եւ պետք էր սպասել, առանձնանում էր Անդրերկրկոմի քարտուղար Ս.Կուդրյավցեւինը, որը, ըստ երեւույթին, ձգտելով զարմացնել հայ կոմունիստներին իր գիտելիքներով, մասնավորապես արեց յուրօրինակ մի համեմատություն. «Չինացիների մեջ վրեժխնդրության այսպիսի հին ձեւ կա. չինացին հարակիրի է անում իրեն նեղացնողի տան շեմին: Խանջյանը, պատկերավոր ասած, հարակիրի արեց Անդրերկրկոմի բյուրոյի շեմին: Միայն թե հասկանալի չէ, ումից եւ ինչի համար էր վրեժխնդիր Խանջյանը»:[34] Իսկապես որ ցնցող համեմատություն է, հատկապես նկատի առնելով, որ հարակիրին ոչ թե չինացիների, այլ ճապոնացի սամուրայների ինքնասպանության ավանդական ձեւն էր:

Ինչ վերաբերում է ազգայնականությանը, ապա մեղադրել դրանում Հայաստանի ինչ-ինչ տարրերին եւ նույնիսկ ղեկավարությանը՝ նման էր քաղաքական ծաղրուծանակի: 1920թ. հետո անցած 15-16 տարիների ընթացքում, խորհրդային կարգերի օրոք, Անդրկովկասի երեք հանրապետություններից հենց Հայաստանն ու հայ ժողովուրդն էին, որ տուժել եւ շարունակում էին տուժել թե Մոսկվայի եւ թե Վրաստանի ու Ադրբեջանի իշխանությունների ազգայնական քաղաքականությունից: Այդ քաղաքականության ամենացայտուն, հայերի համար ճակատագրական արդյունքներից էր Ղարաբաղի եւ Նախիջեւանի հանձնումը Ադրբեջանի ԽՍՀ-ին: Այլ տեսակի էր Վրաստանի իշխանությունների ազգայնականությունը: 1936թ. սկզբներին ձերբակալված Ն.Ստեփանյանը, որին հովանավորելու մեջ էր մեղադրվում Ա.Խանջյանը, իր գրառումներում նշել էր.

«Վրաստանի Կոմկուսի նեխած կուսակցական ապարատը տենդորեն երկակի աշխատանք է անում. մի կողմից, ամրապնդում է ազգայնական դիրքերը, նույնիսկ պատմության խեղաթյուրման միջոցով, մյուս կողմից՝ զրկում է որեւէ հնարավորությունից ուսումնասիրություններ կատարել՝ հենվելով իրենց հանցավոր գործունեության փաստերի վրա: ...Մոտ ապագայում կսկսվի ոչինչով չքողարկված հարձակում հայերի, ռուսների եւ այլոց վրա, ազգային փոքրամասնությունները կխեղդվեն: Վրաստանի ազգայնականությունը իմպերիալիստական է, լկտի եւ զազրելի: ...Վրաստանի ազգային սխալ քաղաքականության հետեւանքով ամբողջ, այսպես կոչված սեւ աշխատանք (կատարող) արհեստավորները (դերձակներ, կոշկակարներ, մաշակարներ, հավաքարարներ) եւ արդյունաբերական պրոլետարիատի ամբողջ կեսը՝ ոչ վրացիներն են: Բյուրոկրատիան՝ վրացիներն են: Ինչպիսի՞ փաստարկներով կարելի է ապացուցել այդչափ հանցավոր քաղաքականության անհրաժեշտությունը: Ի՞նչ պատճառով ոչ վրացական պրոլետարիատը (վերցնենք նաեւ Տկվարչելին եւ Վրացնավթը) պահում է մշակույթով իրեն օտար ամբողջ այդ բյուրոկրատիային: ...Բոլոր հայերին դուրս են քշում Թիֆլիսից, հայերի ձեռքից առել են կառավարական պաշտոնները, հայերից թողնում են ամենագարշելի, ամենածախված տարրը»:[35]

Քաղաքական ծաղրուծանակն այն էր, որ Հայաստանից Ղարաբաղի ու Նախիջեւանի անջատման համահեղինակներից մեկը՝ Ստալինը, Վրաստանում հայերի հանդեպ ազգային խտրականության եւ ձուլման քաղաքականություն իրականացնող Լ.Բերիան, նույնպիսի քաղաքականություն իրագործող Ադրբեջանի իշխանությունները, այդ բոլորը միասին Հայաստանի ժողովրդին, նրա պետական-կուսակցական գործիչներին, մտավորականներին էին մեղադրում ազգայնականության մեջ, որի կետ նպատակն էր... իբր Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից:

Ա.Եսայանը բացակայում էր այդ ժողովին եւ մնում է միայն ենթադրել՝ արդյո՞ք նա նույնպես կհայտնվեր Ա.Խանջյանին որպես «ժողովրդի ինքնագնդակահարված թշնամի» ներկայացնողների շարքում: Այդ օրը, հավանաբար, ոմանք հիշեցին նրանց անհաշտ կեցվածքը միմյանց նկատմամբ, ինչը նոր իրավիճակում, կարծես թե, կարող էր դրական հետեւանքներ ունենալ Ա.Եսայանի համար: Լրիվ այլ էր Լ.Բերիայի կարծիքը:

Հայաստանից, Վրաստանից ու Ադրբեջանից կազմված Անդրֆեդերացիայի կուսակցական ղեկավար՝ Անդրերկրկոմի առաջին քարտուղար եղած տարիներին Լ.Բերիայի վարած քաղաքականությունը թե իր նպատակներով եւ թե կիրարկվող միջոցներով իսկական պատճենն էր այն քաղաքականության, որը Խորհրդային Միության ողջ տարածքում իրականացնում էր Ի.Ստալինը: Ձգտելով հաստատել միանձնյա, անսահման իշխանություն, նա, հետեւելով Մոսկվայի կենտրոնական իշխանությունների օրինակին, դիմեց բոլոր հնարքներին՝ Անդրկովկասի երեք հանրապետությունների իրեն ոչ հարմար պետական ու կուսակցական գործիչներին վարկաբեկելու եւ ֆիզիկապես ոչնչացնելու համար: Միաժամանակ, Հայաստանում իր ազդեցությունը ուժեղացնելու, տեղի ղեկավարության գործունեությունը մշտապես վերահսկելու, իր ցանկացած որոշումները պարտադրելու նպատակով Լ.Բերիան վարպետորեն օգտագործում էր Թիֆլիսում Անդրֆեդերացիայի տարբեր հիմնարկներում աշխատող եւ իր ձեռքի տակով անցած հայերին: Ինչպես արդեն նշվեց, ժամանակ առ ժամանակ նա նրանց փոքր խմբերով տեղափոխում էր Հայաստան, ուր իր վստահությունը վայելող այդ մարդիկ սկսում էին զբաղեցնել պետական եւ կուսակցական ամենաբարձր պաշտոններ: Բերիայի «թիֆլիսյան»

կադրերից հատկապես հայտնի դարձան ՀԿԿ քարտուղարներ Ա.Ամատունին եւ Ստ.Ակոպովը, Ներքին գործերի ժողկոմիսար Խ.Մուղդուսին, նրա տեղակալ Իվ.Գեւորկովը, Գ.Մատուրովը եւ այլք: Նույն այդ ձեւով 1934թ. Հայաստան էր վերադարձել նաեւ Ա.Եսայանը:

Մոսկվայում պետական եւ կուսակցական անվանի գործիչների դատապարտումները, որպես «ժողովրդի թշնամիների, հակահեղափոխականների, տրոցկիստների» եւ այլն, հանրապետություններում լրացվում էին տեղի ղեկավարության «ազգայնամոլական» հորջորջումով: Մասնավորապես, Հայաստանի պարագայում Բերիան մտադրվել էր օգտագործել նաեւ հարաբերությունները հայ սփյուռքի հետ, մի կողմից՝ իշխանությունների շփումներն ու համագործակցությունը «բուրժուական» եւ «իմպերիալիստական» երկրներում բնակվող սփյուռքահայերի հետ եւ մյուս կողմից՝ վերջինների առջեւ ստանձնած պարտավորությունների անտեսումը, ներգաղթողների դժգոհությունները եւ այլն: Հենց Ա.Եսայանն էլ՝ գիտակցաբար թե ոչ, պետք է դառնար Լ.Բերիայի այդ ծրագրի հիմնական կատարողներից մեկը:

Եվ կարծես, սկզբում նա էլ ուրիշների նման արդարացնում էր Լ.Բերիայի հույսերը՝ Ներգաղթի կոմիտեի հարցով նրա ելույթը Հայկոմկուսի կենտկոմի բյուրոյի նիստում, նրա դիմումը Բերիային, որին հետեւեցին նույն կոմիտեի եւ, ըստ էության, ընդհանրապես, Հայաստանի կառավարության գործունեության ստուգումները եւ այլն: Այսքանից հետո Ա.Եսայանի կտրուկ շրջադարձը, որի գագաթնակետը եղավ նրա անձնական հանդիպումը Վ.Մեժլաուկի հետ, իսկական մարտահրավեր էր Լ.Բերիային, որը չէր կարող մնալ անպատասխան:

Բայց մինչ այդ, հարկ է անդրադառնալ մի հարցի. հնարավո՞ր է, այնուամենայնիվ, հաստատել, որ Ա.Եսայանի պատվիրակության շնորհիվ միայն կայացվեց Խորհրդային Միության Կոմկուսի եւ կառավարության որոշումը Նուպարաշենի մասին: Չափազանցություն կլիներ այդ հարցին միանշանակ դրական պատասխան տալը: Երկրի վերին իշխանությունները ծանոթ էին ներգաղթի, ներգաղթածների տեղավորման հետ կապված հարցերին: Վերը արդեն խոսվեց Վ.Մոլոտովին հասցեագրած Ա.Խանջյանի եւ Ա.Գուլոյանի նամակի մասին, բայց գրեթե այդ նույն օրերին Մոսկվայում ստացվել էր մեկ այլ, իր տեսակի մեջ աննախադեպ նամակ:

ՀԲԸՄ գրությունները Մոսկվա

1936թ. մայիսի 21-ին ՀԲԸ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը եւ Գաղթականների կենտրոնական հանձնաժողովի նախագահ Ա.Զոպանյանը Ֆրանսիայից հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու կապակցությամբ հատուկ նամակով դիմեցին Ի.Ստալինին: Իրենց երախտագիտությունը հայտնելով Խորհրդային Միության կառավարությանը՝ 1.800 հայերի ներգաղթին ցույց տված աջակցության համար, նամակի հեղինակները տեղեկացնում էին, որ այն մեծ ոգեւորություն է առաջացրել հայ գաղթականների մեջ, որ մոտ 7.000 հայեր Ֆրանսիայում եւ ավելի քան 20.000 Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Սիրիայում եւ այլ երկրներում արդեն ցուցակագրվել են Հայաստան մեկնելու համար: «Խորհրդային Հայաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է,- գրում էին նամակի հեղինակները,- որ ինքը կցանկանար ընդունել ավելի մեծ թվով գաղթականներ եւ որ կարող էր աշխատանքով ապահովել այդ մարդկանց, որոնք օտար երկրներում տառապում են գործազրկությունից կամ էլ գտնվում են շատ անորոշ վիճակում, բայց դրան խոչընդոտում է անհրաժեշտ քանակությամբ բնակարանների բացակայությունը»: Ապա նամակում ներկայացվում էր անցած տասնհինգ տարիների ընթացքում «մեր հայրենիքի վերականգման աշխատանքներում սփյուռքահայ կազմակերպությունների բավական մեծ մասնակցությունը»՝ ՀԲԸ Միության կողմից 400.000 դոլարի տրամադրումը Նուպարաշենի կառուցման նպատակով, Նոր Եվդոկիա ավանի, Մարի Նուպար, Դարուհի Յակոբեան հիվանդանոցների, Ավետ Սարգիս պաստոյրյան կայանի, Բարեգործականի Տուն բնակելի շենքի, Մելգոնյան ֆոնդի հիմնադրումը եւ այլն: Նշվում էր նաեւ, որ հայրենակցական միությունների հանգանակած եւ Հայաստանի իշխանություններին ուղարկած գումարներով մի շարք ավաններ են կառուցվում ներգաղթողների համար: «Սակայն մենք հասկանում ենք,- գրում էին Վ.Մալեզյանը եւ Ա.Զոպանյանը, - որ այն, ինչ մենք արել ենք, շատ քիչ է՝ համեմատած նրա հետ, ինչը դեռ պետք է անել, եւ որ այդչափ մեծ մասշտաբի խնդիրը չի կարող ունենալ բավարար եւ արմատական լուծում այլ կերպ, քան պետական միջոցների շնորհիվ: Խորհրդային Միության Կենտրոնական կառավարությունը տասնհինգ տարիների ընթացքում մեծ եղբայրական օգնություն է ցույց տվել ու շարունակում է ցույց տալ Խորհրդային Հայաստանին... ողջ աշխարհի հայությունը երախտապարտ է մեր սիրելի հայրենիքի վերականգնման գործում այդ մեծ օգնության համար: Մենք կրկնակի երախտապարտ կլինենք, եթե նա ուշադրության առնի մեր կո-

չը եւ գործուն աջակցություն ցույց տա Երեւանի կառավարությանը բնակարանների շինարարության գործում... Ծատ ավելի երախտապարտ կլինեն նրան տարբեր երկրներում ապաստանած տասնյակ հազարավոր հայ գաղթականներն ու աշխատավորները, որոնք պատրաստ են ծառայելու իրենց հայրենիքին, բայց անգործ ու անիմաստ ապրում են օտարության մեջ, անհամբերությամբ սպասելով այն պահին, երբ կկարողանան իրենց ուժերը միավորել իրենց քույրերի ու եղբայրների ուժերի հետ հանուն այն մեծ գործի, որն իրագործվում է Խորհրդային Հայաստանում»:[36]

Նամակի հասցեատերերի հնարավոր անդրադարձի տեսակետից ուշագրավ է Ա.Եղիազարյանի վկայությունների հետեւյալ հատվածը, որ նա տվել էր 1954թ.՝ արդարացվելուց հետո. «Հիշում եմ, ինչպես մի անգամ ՀԿԿ կենտկոմի անդամների շրջանակում Ժողկոմխորհի նախկին նախագահ Ս.Տեր-Գաբրիելյանը, հայտնելով Մոսկվայի թույլտվությունը՝ «Բարեգործականի» միջոցով Երեւանի տրամվայի համար ռելսեր ստանալու վերաբերյալ, հաղորդեց Ի.Ստալինի խոսքերը, որոնք ուղղված էին նրանց դեմ, ովքեր կասկածի տակ էին դնում Խորհրդային Հայաստանին լոյալ վերաբերվող հայ բուրժուազիայից օգնություն ստանալու հնարավորությունը. «Եթե հայ կապիտալիստները հիմարություն են թույլ տալիս, օգնելով հայ կոմունիստներին կառուցել սոցիալիզմ, ապա Հայաստանի կոմունիստները թույլ կտան ավելի մեծ հիմարություն, եթե հրաժարվեն այդ օգնությունից»:[37]

Հարկ է նկատի առնել նաեւ այն ավանդական ակնածանքը արեւմտյանի՝ եվրոպականի հանդեպ, որը ներհատուկ էր Ռուսաստանի վերնախավին եւ որը՝ անկախ գաղափարաբանական բոլոր տարբերություններից, փոխանցվել էր նաեւ խորհրդային իշխանություններին: Ըստ ամենայնի, Ա.Եսայանը հաշվի էր առել այդ հանգամանքը, ինչը եւ բացատրելի է դարձնում նրա հնարամտությունը՝ արտասահմանյան կազմակերպությունների ներկայացուցիչներից պատվիրակություն կազմելը, անգլերենով գրած նամակը եւ անգլերենով զրույցը Վ.Մեժլաուկի հետ: Խորհրդային Միության պես երկրում նման գործելակերպը ամենալուրջ հարցերի լուծման արդյունավետ ձեւերից էր արդեն այդ եւ հատկապես հետագա տարիներին, ու հնարավոր է, որ Ա.Եսայանը դրա առաջին կիրառողներից էր: Անկասկած իր դերը խաղաց նաեւ սփյուռքահայության հետ համագործակցության քարոզչական նշանակությունն ու կարեւորությունը: Այսպիսով, կարելի է ասել, որ Մոսկվայում առկա էին որոշ բարենպաստ նախադրյալներ, եւ Ա.Եսայանի պատվիրակությունը խաղաց յուրատեսակ կատալիզատորի դեր, առանց որի եղած հնարավորությունները այդպես էլ կմնային չիրագործված:

ՀԲԸ Միության ղեկավարությունը առաջիններից մեկը իմացավ Խորհրդային Միության Կոմկուսի եւ կառավարության որոշման մասին: Ա.Եսայանը, որը Մոսկվայում սպասում էր Վ.Մեժլաուկի հետ հանդիպման արդյունքներին, որոշումը կայացնելուց չորս օր անց՝ հուլիսի 25-ին հատուկ հեռագիր հղեց Փարիզ, որը հրապարակվեց «Միութիւն» ամսագրում «Նուպարաշէնի մասին պետական կարգադրութիւններ: Մոսկուա լայնօրէն կ'օժանդակէ» վերտառությամբ: «Բարեբախտութիւնը ունիմ ձեզի հաղորդելու,- հեռագրում էր Ա.Եսայանը,- որ Կուսակցութեան Կեդր. Կոմիտէն եւ Խորհրդային Միութեան Կառավարութիւնը մանրակրկիտ կերպով քննեցին հայկական ներգաղթի հետ կապ ունեցող բոլոր խնդիրները, եւ ատոնց կարգին տակաւին չի լուծուած հարցերը որ Նուպարաշէնը կը շահագրգռեն: ...Ստացայ մեծաքանակ շինուածանիւթ եւ հարկ եղած վարկերը այդ աշխատութեանց իրագործումին համար... Կրնաք ապահով ըլլալ որ ձեռք առնուած են այն ամէն միջոցները որ պիտի ապահովեն տրուած որոշումներուն գործադրութիւնը, այնպէս որ 1937-ին Նուպարաշէնը օժտուած կ'ըլլայ ոռոգելի եւ ըմպելի ջուրերով, ընդունելով ներգաղթող հարիւր ընտանիք եւս»:[38]

Որոշ ժամանակ անց ՀԲԸ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը շնորհակալական նամակով դիմեց Վ.Մոլոտովին. «Երախտագիտական շատ խոր զգացումով է, որ տեղեկացանք օգնության եւ նպաստի այն բոլոր միջոցների մասին, որ Ձեր խորհուրդը ընծայում է Խորհրդային Հայաստան ներգաղթող հայ գաղթականներին, ինչպես նաեւ Երեւանի մերձակա Նուպարաշեն ավանին, որը հատկացված է ներգաղթող հայերի բնակության եւ որը կառուցված է մեր Միության կողմից կազմակերպված ազգային հանգանակության շնորհիվ:

Ձեր կառավարության վերջին եղբայրական ժեստը, Նուպարաշենի ջրմուղին հատկացնելով 3.200.000 ռուբլու մի գումար, մի նոր ապացույց է այն մեծ բարյացակամության, որ Դուք ցույց եք տալիս Խորհրդային Հայաստանին ընդհանրապես եւ մասնավորապես ներգաղթողներին»: Օգտվելով Խորհրդային Միության վարչապետին դիմելու այդ բացառիկ հնարավորությունից՝ Վ.Մալեզյանը հերթական անգամ բարձրացնում է ներգաղթը շարունակելու հարցը. «Խորհրդային Հայաստանը, շնորհիվ այն բարձր հոգատարության, որին արժանացել է Ձեր կողմից, մտել է բարեկեցության եւ բարգավաճման ճանապարհը, ինչ որ մեզ հույս է ներշնչում, որ առաջիկայում, շնորհիվ Ձեր վեհանձն օժանդակության, պետք է կարողանա ընդունել հետզհետե ավելի մեծ թվով հայ փախստականներ»:[39]

Բռնադատումները Հայաստանում

Խորհրդային Միության իշխանությունների ծրագրերը, սակայն, այլ էին: Ի.Ստալինի եւ Վ.Մոլոտովի նշված որոշումից մեկ շաբաթ անց՝ հուլիսի 28-ին ՀամԿ/բ/Կ Կենտկոմը հանրապետական եւ այլ խոշոր կուսակցական կազմակերպություններին ուղարկեց «Փակ նամակ տրոցկիստական-զինովեւական հակախորհրդային բլոկի տեռորիստական գործունեության մասին» վերնագրով փաստաթուղթը, որում այդ բլոկի «հանցագործությունները» թվարկելուց հետո, պահանջվում էր ուժեղացնել տեղերում պայքարը հակախորհրդային բոլոր տեսակի տարրերի դեմ, բացահայտել հատկապես պետական եւ կուսակցական մարմիններում դեռեւս թաքնված թշնամիներին:[40] Հայաստանի ղեկավարությունը պատասխանեց արագ: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի ղեկավար կուսակցական մարմինների բաժնի վարիչ Գ.Մալենկովին եւ Անդրերկրկոմի քարտուղար Ս.Կուդրյավցեւին հասցեագրած «Տեղեկատվական զեկուցագրում» մանրամասն նկարագրվում էր Հայաստանում տարվող աշխատանքը «ժողովրդի թշնամիներին» բացահայտելու ուղղությամբ, թվարկվում էին արդեն իսկ մերկացվածները եւ այլն:[41] Բայց զեկուցագիրը տպավորիչ չէր՝ ձերբակալված բարձրաստիճան պաշտոնյա թշնամիները ընդամենը երեքն էին. Ն.Ստեփանյանը (Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն), Դր.Տեր-Սիմոնյանը (ԺԿԽ-ին կից Արվեստի գործերի վարչության պետ) եւ Ա.Գալոյանը (ՀԿԿ կուսակցական վերահսկողության հանձնաժողովի քարտուղար), նշված էր նաեւ Ա.Ադոյանը, թեեւ նրա գործը դեռ նոր էր քննվում կուսակցական մարմիններում: Իսկ ամենակարեւոր թերությունն այն էր, որ Հայաստանում դեռ չէր հայտնաբերվել թշնամիներից կազմված որեւէ խումբ, բլոկ, կենտրոն կամ նման մի բան:

Եվ Հայաստանի իշխանությունները Անդրերկրկոմի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան այդպիսի մի միֆական կազմակերպության ստեղծմանը: Գործելով բավական խնայողաբար՝ նրանք նախ օգտագործեցին արդեն բանտարկվածներին, ստիպելով նրանց տալ վկայություններ գոյություն չունեցող խմբի գործունեության եւ անդամների մասին: Միաժամանակ, 1936թ. կեսերից սկսվեցին հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչների եւ հատկապես պետական ու կուսակցական գործիչների, մտավորականների համատարած բռնադատումները: Զդիմանալով ֆիզիկական դաժան բռնություններին՝ նրանք, իրենց համոզմունքներին ու կամքին հակառակ, անհրաժեշտ «ցուցմունքներ» էին տալիս ինչպես իրենց, այնպես·էլ այլոց «հակահեղափոխական, տրոցկիստական, ազգայնական, տեռորիստական, լրտեսական» եւ այլ գործունեության մասին: «Ժողովրդի թշնամիների» ինքնավերարտադրության նման մեխանիզմի շնորհիվ հնարավոր դարձավ բավական կարճ ժամկետներում ստեղծել «տրոցկիստական-ազգայնական» հատուկ մի խումբ, որի անդամներ հայտարարվեցին Ն.Ստեփանյանը, Ս.Տեր-Գաբրիելյանը, Ա.Երզնկյանը, Ա.Եսայանը, Դ.Շահվերդյանը, Ա.Եղիազարյանը եւ այլք: Այս մարդկանց ընտրությունը բնավ պատահական չէր: Նվիրյալ կոմունիստներ, պետական եւ կուսակցական հայտնի գործիչներ լինելով հանդերձ, նրանք միեւնույն ժամանակ, ոչ պակաս չափով պաշտպանն էին Հայաստանի, հայ ժողովրդի ազգային-պետական շահերի՝ յուրաքանչյուրը իրեն վերապահված ոլորտում եւ իր հնարավորությունների ու կարողությունների սահմաններում: Նման մտայնության եւ գործելակերպի տեր մարդկանց համար անընդունելի էին Ի.Ստալինի՝ Խորհրդային Միությունում, եւ Լ.Բերիայի՝ Անդրկովկասում իրականացվող քաղաքականության սկզբունքներն ու իրագործման միջոցները: Եվ բնական է, որ առաջին հերթին հենց նրանք պետք է դառնային կուսակցական ահաբեկչության հիմնական թիրախը:

Այս խմբի ձեւավորումն ու նրա անդամների ձերբակալումը կատարվեց աստիճանաբար: Առաջինը Ա.Եսայանն ու Ա.Եղիազարյանն էին: Լ.Բերիան եւ նրա դրածոները Երեւանում անմիջապես օգտվեցին ստեղծված հնարավորությունից՝ անհնազանդներին պատժելու համար: Հայաստանի Կոմկուսի բյուրոյի 1936թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ ՀՕԿ-ի Գլխավոր վարչության նախագահ Ա.Եսայանը եւ ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր Արվեստի գործերի վարչության պետ, Երեւանի Պետհամալսարանին կից ՀԲԸՄ Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովի նախագահ Ա.Եղիազարյանը, մեղադրվելով հակահեղափոխական, ազգայնական տրոցկիստական գործունեության մեջ, ազատվեցին իրենց պաշտոններից եւ նույն օրն էլ ձերբակալվեցին: Ա.Եսայանի դատաստանը պատրաստող մարդիկ ոչ պակաս հնարամիտ էին իրենց գործելակերպում. այդ օրերին նրան ուղարկել էին Ղամարլու բամբակահավաքը հսկելու համար, եւ հենց այնտեղ էլ նա ձերբակալվեց: Ընդամենը մեկ տարի եւ երկու ամիս էր անցել այն օրից, երբ Ա.Եսայանը գրեց իր հայտնի նամակը Բերիային, որից հետո էլ նշանակվեց ՀՕԿ-ի եւ Ներգաղթի կոմիտեի նախագահ: Ուշագրավ է, որ նա, ի տարբերություն այլոց, առաջին անգամ հարցաքննվեց յոթ ամիս անց միայն՝ 1937թ. հունիսին: Մինչեւ իր գնդակահարությունը, որը կատարվեց եւս ավելի քան մեկ տարի անց, նա այլեւս երբեք չհարցաքննվեց. կարծես, իր ճակատագիրը կանխորոշված էր ի սկզբանե: Բայց այդ ընթացքում տեղի էր ունենում այն, ինչը տարիներ անց հաստատվեց նրա արդարացման գործում. «Հայաստանի բան-

տարկված ղեկավար աշխատողները Ներքին գործերի ժողկոմատի աշխատակիցների կողմից ենթարկվում էին չլսված ծեծի եւ ներգործության այլ միջոցների, որի հետեւանքով բանտարկվածներից ոմանք մահանում էին կամ խեղանդամ դարձվում: Մասնավորապես, Աղեկյանի ցուցմունքներով, Արսեն Եսայանը ծեծերից խելագարվել էր»:[42]

Ա.Եսայանի եւ Ա.Եղիազարյանի ձերբակալությունից տասն օր անց, նույն ձեւակերպումներով բանտարկվեց նաեւ սփյուռքի հետ հարաբերությունների հիմնադիրներից մեկը՝ Ար.Երզնկյանը: ՆԳ ժողկոմատի նախկին պաշտոնյան վկայել էր, որ Ժողկոմիսար Մուղդուսու հրահանգով բանտում Ա.Երզնկյանի համար ստեղծվել էին այնպիսի պայմաններ, որ նա կենդանի չմնա. «Երզնկյանին տեղավորել էին ամենավատ կարցերում, այն դեպքում, երբ նա այն ժամանակ հիվանդ էր: Երզնկյանն այդ պայմանները չկարողացավ տանել եւ կարցերում տեղավորվելուց մի քանի օր անց մահացավ»:[43]

Հիրավի չարաղետ էր դարձել ՀՕԿ-ի նախագահի պաշտոնը: Ա.Եսայանից հետո նախագահ նշանակվեց անցած տարիների ներգաղթի անմիջական կազմակերպիչներից մեկը՝ Դ.Շահվերդյանը (Շահվերդով): Իշխանությունները, սակայն, շատ արագ ուղղեցին իրենց վրիպումը: ՀՕԿ-ի Գլխավոր վարչության պատասխանատու քարտուղար Վ.Տարախչյանը 1937թ. փետրվարին գրած մի բացատրագրում այսպես է նկարագրել տեղի ունեցածը. «Եսայանի բանտարկության հետ միաժամանակ, Դ.Շահվերդյանը նշանակվել էր ՀՕԿ-ի նախագահ: Այդ օրերին հրավիրվեց վարչության նիստ, ուր Եսայանը հանվեց նախագահությունից եւ վարչության կազմից, նախագահ նշանակվեց Դ.Շահվերդյանը: Սակայն նոյեմբերի 27-ին Կենտկոմից հետ վերցրին ՀՕԿ-ին ուղարկած Դ.Շահվերդյանի նշանակման մասին որոշումը: Նույն ժամին Դ.Շահվերդյանը Կենտկոմից եկավ եւ հաղորդեց, որ իրեն նախագահ նշանակելը չհրապարակենք (թեեւ արդեն բոլորը գիտեին, որ նա նշանակվել է նախագահ), այլ, որ նա ժամանակավոր է աշխատում ՀՕԿ-ում, որ Մոսկվայից քննություն է լինելու...»:[44] Կարճ ժամանակ անց, ձերբակալված Դ.Շահվերդյանին այդ պաշտոնում փոխարինեց Ա.Մանուչարյանը, որն էլ եղավ ՀՕԿ-ի Գլխավոր վարչության վերջին նախագահը:

ՀՕԿ-ի նախագահների ձերբակալությունները, ընդհանրապես համընդհանուր քաղաքական հալածանքի մթնոլորտը ամեն բանից զատ, կաթվածահար էին արել այդ կազմակերպության գործունեությունը: Նույնիսկ արտասահմանյան տարբեր երկրներում գործող ՀՕԿ-ի տեղական կազմակերպությունների հետ հարաբերություններ պահպանելը դարձել էր պարզապես վտանգավոր: 1937թ. ապրիլին եւ մայիսին Նյու

Յորքում Խորհրդային Միության Գլխավոր հյուպատոսությունը իր ծառայողական նամակներում, քաղաքական մեծ կարեւորություն տալով ԱՄՆ-ում ՀՕԿ-ի մասնաճյուղի գործունեությանը, միաժամանակ զարմանք էր հայտնում Հայաստանի ՀՕԿ-ի վերջին ամիսներին բռնած դիրքից: Հատուկ նշելով, որ Նյու Յորքի ՀՕԿ-ի հետ կապերի թուլացումը, նրա նամակներին ու հեռագրերին չպատասխանելը առաջացնում են մեծ դժգոհություն, հյուպատոսությունը նպատակահարմար էր համարում առաջարկել Հայաստանի ՀՕԿ-ին վերականգնել կապը մասնաճյուղի հետ, անմիջապես պատասխանել իրեն ուղղած բոլոր գործնական հարցերին:[45] Բայց իզուր էին այդ կոչերը՝ երկրի համապետական շահերը հերթական անգամ պետք է զոհաբերվեին Ստալինի միանձնյա իշխանության ամրապնդմանը:

Իսկ Հայաստանում «տրոցկիստական-ազգայնական» կենտրոնի/խմբի ձեւավորումը մոտենում էր ավարտին: Հայաստանում ապրող նրա բոլոր «անդամները» արդեն բանտում էին, սակայն, Մոսկվայում էր գտնվում ամենակարեւոր դեմքերից մեկը՝ Ս.Տեր-Գաբրիելյանը: 1937թ. հունիսին Ներքին գործերի ժողկոմ Խ.Մուղդուսին ՀԿ/բ/Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա.Ամատունուն հասցեագրած իր զեկուցագրում գրում էր. «Ս.Մ.Տեր-Գաբրիելյանը 1931թ. Երզնկյանի, Եսայանի, Տեր-Սիմոնյանի եւ ուրիշների հետ միասին կազմակերպել է հակախորհրդային հայկական նացիոնալիստական-տրոցկիստական կենտրոն: Կենտրոնի կազմի եւ ակտիվի ղեկավար բջջի կազմում էին 14 հոգի, որոնցից 10-ը՝ ՀԿ/բ/Կ Կենտկոմի նախկին կազմի անդամներ»: Ըստ Խ.Մուղդուսու, կենտրոնի հակախորհրդային գործունեության հիմնական ուղղություններն էին. «...հակախորհրդային, ազգայնական աշխատանք արտասահմանի հայ համայնքներում: Կապեր հայ կապիտալիստների, ռամկավարների ու դաշնակների բուրժուական կուսակցությունների հետ: Քաղաքական դիրքերի սիստեմատիկաբար հետեւողական զիջումների գնով նրանց միջոցով միջոցների հավաքում Հայաստանի համար, ինչը բերեց նրանց սերտացնելու՝ այդ կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Արտասահմանի հայ աշխատավորության ապակողմնորոշում, տեղի ազգային բուրժուազիայի դեմ նրանց պայքարի ճնշում: Ճնշելով դաշնակների դեմ պայքարը երկրի ներսում, ընդհանրապես դադարեցնելով պայքարը ռամկավարների դեմ այստեղ եւ արտասահմանում, նրանց՝ որպես հայ ժողովրդի բարեկամների հռչակում»:[46]

Երեւանում որոշել էին գործել Մոսկվայում ընթացող դատավարությունների սցենարով, երբ Խորհրդային Միության նախկին ղեկավարները մեղադրվում էին արտասահմանյան ինչ-ինչ երկրների եւ ուժերի հետ

համագործակցելու, նրանց առաջադրանքները կատարելու մեջ, այն տարբերությամբ միայն, որ հայկական տարբերակում արտասահմանյան պետությունները փոխարինվեցին սփյուռքահայ կազմակերպություններով՝ հայ քաղաքական կուսակցություններով: Եվ հենց այդ նպատակով էլ ՆԳ ժողկոմատում հորինվեց հաջորդ առասպելը, այս անգամ արտասահմանում գործող դաշնակցական-ռամկավարական կենտրոնի մասին, որի հետ իբր համագործակցում էր տրոցկիստական-ազգայնական հայաստանյան խումբը: Այսքանից հետո մնում էր միայն անհրաժեշտ վկայություններ ու խոստովանություններ կորզել ձերբակալվածներից: Այս վերջիններն էլ, չդիմանալով հարցաքննությունների ժամանակ կիրառվող ֆիզիկական բռնություններին, հոգեբանական ճնշումներին եւ նման այլ միջոցներին, նորանոր «փաստեր» էին հաղորդում այդ կենտրոնի, սփյուռքահայ տարբեր կազմակերպությունների հակախորհրդային գործունեության, նրանց անվանի գործիչների բուրժուական երկրների հատուկ ծառայությունների գործակալ լինելու, նրանց հետ խորհրդահայ մտավորականների, պետական եւ կուսակցական գործիչների համագործակցության եւ նման այլ «հանցագործությունների» մասին:

Մոսկովյան դատավարությունների ժամանակ, երբ Լենինի մտերիմներն ու տարիների հավատարիմ գործընկերները, 1917թ. բոլշեւիկյան հեղափոխության կազմակերպիչները մեղադրվեցին լրտեսության, դավաճանության, տնտեսության քայքայման եւ այլ հանցագործությունների մեջ՝ Խորհրդային Միությունում կապիտալիզմի վերականգնման նպատակով, Ստալինը կանգնեց դժվարին մի խնդրի առջեւ՝ ներկայացնել այդ բոլոր մեղադրանքները հաստատող փաստաթղթեր: Այսինքն, ներկայացնել այն, ինչը գոյություն չուներ: 1937թ. հունվարին կայացած հերթական դատավարության ժամանակ պետական մեղադրող, Խորհրդային Միության Գլխավոր դատախազ Ա.Վիշինսկին փորձեց փրկել դրությունը՝ հետեւյալ կերպ բացատրելով ապացույցների բացակայությունը. «Մեղադրյալներին վերագրվող գործողությունները իրենց կողմից կատարված են... Սակայն, իրավաբանական պահանջների առումով ինչպիսի՞ ապացույցներ կան մեր տրամադրության տակ... Մենք ունենք դավադրություն, մենք ունենք մեր առջեւ մարդկանց մի խումբ, որը մտադիր էր իրականացնել պետական հեղաշրջում, որը կազմակերպվել էր եւ մի շարք տարիների ընթացքում իրականացնում էր գործունեություն, որը պետք է ապահովեր այդ դավադրության հաջողությունը, դավադրություն՝ բավականին ճյուղավորված, դավադրություն, որը դավադիրներին կապեց ֆաշիստական ուժերի հետ: Այդ պայմաններում ինչպե՞ս կարելի է ապացույցների հարց դնել: ...Ես համարձակվում եմ պնդելու, որ քրեական դատավարության գիտության հիմնական պահանջների համաձայն, դավադրությանը վերաբերող գործերում նման պահանջներ ներկայացնել չի կարելի»:[47] Նման պահանջներ չէր կարելի ներկայացնել նաեւ Հայաստանում բացահայտված տրոցկիստական-ազգայնական խմբի ու նրա անդամների պարագային, երբ նրանց ճակատագիրը վճռված էր: Ճիշտ է, պատժից խուսափում էին դաշնակցական-ռամկավարական կենտրոնի անդամները, բայց փոխարենը Հայաստանում էին նրանց ներկայացուցիչները՝ կազմակերպություններ եւ անհատներ, եւ տրամաբանական է, որ նրանց գոյությունը պետք է հայտարարվեր օրենքից դուրս:

Բայց մինչ այդ, Ս.Տեր-Գաբրիելյանի գործը ունեցավ այնպիսի շարունակություն, որի հետեւանքների մասին նույն այդ սցենարի հեղինակները՝ Ա.Ամատունին, Խ.Մուղդուսին եւ նրանց թիֆլիսյան «կնքահայր» Լ.Բերիան չէին կարող նույնիսկ երեւակայել:

Մոսկվայում ձերբակալված եւ օգոստոսին Երեւան բերված Ս.Տեր-Գաբրիելյանը հարցաքննության ժամանակ դուրս նետվեց Ներքին գործերի ժողկոմատի երրորդ հարկից: Ինքնասպանությո՞ւն էր դա, թե սպանությո՞ւն, ամեն դեպքում, հետագա դեպքերի զարգացման առումով կարեւորն այն էր, որ Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը «որոշում է այդ մասին Մոսկվա տեղեկություն չուղարկել, սակայն Ստալինը շուտով իմանում է եղելության մասին եւ սեպտեմբերի 8-ին նամակ է ուղարկում ՀԿ/բ/Կ Կենտկոմի բյուրոյին, որը Հայաստան են բերում ՀամԿ/բ/Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Ա.Միկոյանը եւ Կենտկոմի ղեկավար կուսակցական օրգանների բաժնի վարիչ Գ.Մալենկովը»:[48] Իր նամակի սկզբում Ի.Ստալինը ամենախիստ գնահատականն էր տալիս Հայաստանի ղեկավարությանը. «ԽՍՀՄ կառավարությունը եւ ՀամԿ/բ/Կ Կենտկոմը գտնում են, որ Հայաստանում ինչպես տնտեսական, այնպես էլ կուսակցական եւ կուլտուրական գործը գտնվում է չափազանց վատ վիճակում»: Այնուհետեւ, նա իրեն հատուկ վարպետությամբ օգտագործում է Հայաստանի ղեկավարների հիրավի անհեթեթ վարքագիծը. «Տեր-Գաբրիելյանի «ինքնասպանության» հետ կապված վերջին դեպքերը ցայտուն կերպով արտացոլում են այն ամբողջ առավելագույն նեխումն ու քայքայումը, որոնք Հայաստանի կուսակցական եւ սովետական կազմակերպությունների դրության արդյունք են: ...ՀամԿ/բ/Կ Կենտկոմը եւ ԽՍՀՄ Ժողկոմխորհը չեն կարող թույլ տալ, որ հայ ժողովրդի թշնամիների հովանավորները ժողովրդից թաքցնեն ղեկավարության խոցերը եւ այդ խոցերը թաքցնելու համար ժողովրդի թշնամու սպանությունը, որը հանձն էր առել մերկացնել ժողովրդի ազատ մնացած թշնամիներին, ներկայացնեն որպես «ինքնասպանություն»:[49]

Դեպքի նման հնարամիտ մեկնության շնորհիվ ժողովրդի թշնամի էր հայտարարվում արդեն ոչ միայն Ս.Տեր-Գաբրիելյանը, այլեւ հանրապետության գործող ղեկավարությունը, որը պետք է պատժվեր: Առաջին երկու անունները տվեց հենց ինքը՝ Ստալինը, հայտնելով իր նամակում ներքին գործերի ժողկոմիսար Խ.Մուղդուսու եւ Ժողկոմխորհի նախագահ Ա.Գուլոյանի ձերբակալության մասին: Ա.Միկոյանի եւ Գ.Մալենկովի մասնակցությամբ Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի պլենումում Ստալինի նամակի քննարկումից հետո կուսակցությունից հեռացվեցին Կենտկոմի քարտուղարներ Ա.Ամատունին եւ Ստ.Ակոպովը, ինչպես նաեւ մի շարք կուսակցական եւ պետական գործիչներ, որոնք անմիջապես հայտնվեցին Ներքին գործերի ժողկոմատի բանտում:

Այդ օրերին «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթը Ա.Ամատունուն եւ Ստ.Ակոպովին՝ Հայաստանում Լ.Բերիայի դրածոներին ու ամենավստահված անձանց, ներկայացնում է արդեն որպես «հակահեղափոխական տրոցկիստների, ֆաշիստ դաշնակների» պատվերներ կատարողների, նույն Ստ.Ակոպովի մասին գրելով, որ նա «...իր նողկալի ավերիչ աշխատանքի համար առատորեն նվերներ էր ստանում արտասահմանից՝ դրանք բերում էր նրա համար հայտնի դաշնակ լրտես Շահվերդյանը»:[50]

1937թ. դեկտեմբերի որոշումը եւ ՀԲԸՄ արձագանքը

1937թ. հոկտեմբերի 7-ին Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոյի հերթական նիստում հատկապես այդ նպատակով ստեղծված հանձնաժողովին հանձնարարվեց «...տասն օրվա ժամկետում բազմակողմանիորեն ուսումնասիրել ՀՕԿ-ի գոյության անհրաժեշտության հարցը»:[51] Մինչ հանձնաժողովը կուսումնասիրեր հարցը, նրա երեք անդամներից մեկը՝ Կարախանյանը, հոկտեմբերի 21-ին իր հերթին մեղադրվեց հակահեղափոխական գործունեության մեջ: Նոյեմբերի 13-ին, հանձնաժողովի զեկուցումը քննարկելուց հետո, կայացվում է հետեւյալ որոշումը.

«ՀԿ/բ/Կ ԿԿ բյուրոն նշում է, որ Հայաստանի ժողկոմխորհի 1923թ. որոշումով «Հայաստանի սովյալ բնակչությանը օգնություն» (Հայաստանի ժողկոմխորհի որոշումից) ցույց տալու նպատակով ստեղծված Հայաստանի Օգնության Կոմիտե կազմակերպությունը ըստ էության հակահեղափոխական դաշնակցական պրովոկացիա է Խորհրդային իշխանության, Հայաստանի աշխատավորության նկատմամբ:

«Մերկացված ժողովրդի թշնամիներ Խանջյանը, Տեր-Գաբրիելյանը, Ամատունին եւ Գուլոյանը, գլխավորելով Հայաստանում կուսակցության եւ խորհրդային իշխանության ղեկավար մարմինները, ՀՕԿ-ին են փոխանցել հսկայական գումարներ, որոնք Միութենական կառավարությունը տրամադրում էր ներգաղթող հայերի տեղավորման համար... ՀՕԿ-ի անունից ներգաղթողների համար կառուցվում էին ավաններ, դպրոցներ, ջրմուղ եւ այլ կառույցներ եւ կոչվում էին հակահեղափոխական դաշնակցական առաջնորդների եւ հայ կապիտալիստների անուններով (Նուպար փաշա, Մելգոնյան, Կարապետ Սարյան եւ այլն):

«ՀՕԿ-ը եւ նրա արտասահմանյան մասնաճյուղերը դարձել են դաշնակների եւ ռամկավարների հակահեղափոխական կուսակցությունների կազմակերպություն, որի միջոցով իրականացվում էր կապը Խորհրդային Հայաստանի տարածքում գտնվող դաշնակների եւ այլ ազգայնական տարրերի հետ, եւ ՀՕԿ-ի ու հայրենակցականների ներկայացուցիչների պատրվակով Հայաստան էին ուղարկվում արտասահմանյան էմիսարներ ու գործակալներ քայքայիչ հակահեղափոխական աշխատանք վարելու համար:

«Ելնելով դրանից, ՀԿ/բ/Կ ԿԿ բյուրոն որոշում է.

1. ՀԽՍՀ ժողկոմխորհին առաջարկել լուծարել ՀՕԿ-ը եւ արտասահմանյան հայրենակցականների բոլոր ներկայացուցչությունները, ինչպես նաեւ «Բարեգործական» եւ «Մելգոնյան ֆոնդ» միությունները:

2. ՀԽՍՀ ԿԳԿ-ին (Կենտրոնական Գործադիր Կոմիտե-Էդ.Մ.) պարտավորեցնել վերանվանել ավանները, դպրոցները, հիվանդանոցները եւ այլ հաստատությունները, որոնք կրում են հակահեղափոխական կուսակցությունների առաջնորդների եւ հայ կապիտալիստների անունները:

3. ԽՍՀՄ ժողկոմխորհին խնդրել թույլատրել տեղացի բնակչությամբ բնակեցնել ազատ եւ դեռ կառուցվող բնակելի տները ներգաղթողների ավաններում:

4. ՀՕԿ-ի վարչության նախագահ Արամ Մանուչարյանին հեռացնել ՀամԿ/բ/Կ շարքերից եւ նրա հակահեղափոխական կապերի մասին նյութերը փոխանցել Հայաստանի ՆԳԺԿ:

5. ՀՕԿ-ի լուծարման մասին հարցը ներկայացնել ՀամԿ/բ/Կ ԿԿ-ի հաստատմանը»:[52]

Ուշագրավ է, որ փաստաթղթում բացակայում են քաղաքական եւ այլ տեսակի մեղադրանքներ ՀԲԸ Միության հասցեին: Միեւնույն ժամանակ ընդհանրապես չի հիշատակվում նաեւ նրա գործունեությունը Հայաստա-

նում, ավելի ստույգ՝ այն, ըստ էության, վերագրված է ՀՕԿ-ին: Դա բացատրվում էր նրանով, որ Ա.Եսայանին ՀՕԿ-ի նախագահ նշանակելուց եւ Ներգաղթի կոմիտեն լուծարելուց կարճ ժամանակ անց սփյուռքի հետ բոլոր տեսակի հարաբերությունները ղեկավարում էր ՀՕԿ-ի Գլխավոր վարչությունը, որին էլ ենթակա էին թե ՀԲԸ Միության ներկայացուցիչը Հայաստանում եւ թե Մելգոնյան ֆոնդի Գործադիր հանձնաժողովը: Բնականաբար, հենց նա էր պատասխանատու իշխանությունների առջեւ այդ երկու կազմակերպությունների գործունեության համար:

Դեպքերի հետագա ընթացքը դժվար չէր կռահել: ՀամԿ/բ/Կ Կենտկոմի համաձայնությունը ստանալուց հետո Հայաստանի Կոմկուսի կենտկոմի բյուրոյի դեկտեմբերի 3-ի որոշմամբ ստեղծվում է եւս մեկ հանձնաժողով, այս անգամ արդեն ՀՕԿ-ի լուծարման նպատակով: Այստեղ արժե հատուկ նշել, որ այս, ինչպես եւ նախորդ ու հետագա կուսակցական բոլոր որոշումները, տարբեր հանձնաժողովների եզրակացությունները երբեք չէին հրապարակվում, ուստի եւ հայ հասարակությունը Հայաստանում եւ հատկապես սփյուռքում լրիվ անտեղյակ էր մնում: Եվ կարելի է պատկերացնել, թե որքան անսպասելի էր շատ-շատերի համար «Խորհրդային Հայաստան» թերթի 1937թ. դեկտեմբերի 8-ի համարում կարդալ հետեւյալ կարճ պաշտոնական հաղորդագրությունը. «*Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը որոշեց լուծարքի ենթարկել Հայաստանի Օգնության Կոմիտեն (ՀՕԿ), Բարեգործական միությունը եւ Մելգոնյան ֆոնդը: Կազմակերպված է հատուկ կառավարական հանձնաժողով լուծարքի հետ կապված հարցերը լուծելու համար*»:

Բայց սա դեռ վերջը չէր: Նույն օրը իր աշխատանքներն է ավարտում հերթական՝ ՀՕԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգող հանձնաժողովը: Հայաստանի Կոմկուսի կենտկոմի նոր նշանակված առաջին քարտուղար Գ.Հարությունովի (Հարությունյան) անունով ներկայացրած զեկուցագրում հանձնաժողովը, որը, ի դեպ, գլխավորում էր ներքին գործերի ժողկոմատի ներկայացուցիչը, կրկնելով արդեն հայտնի մեղադրանքները ՀՕԿ-ի հասցեին, եզրակացնում էր. «Նշված գործողությունների համար Հանձնաժողովը անհրաժեշտ է գտնում քրեական պատասխանատվության ենթարկել հետեւյալ անձանց ՀՕԿ-ի ապարատից. Գրիգոր Վարդանյանին, Դանուշ Շահվերդյանին, Արսեն Եսայանին, Արամ Մանուչարյանին, Վարդուշ Տարախչյանին, Տիգրան Զավենին, Հայկազ Գարակյոզյանին, Ցոլակ Պարզյանին... Միաժամանակ հանձնաժողովը անհրաժեշտ է գտնում ծառայողական դիրքը չարաշահելու համար, ինչը դրսեւորվել է ՀՕԿ-ի պահեստներից մի շարք ներմուծված ապրանքներ ինքնակամ վերցնելու մեջ, քրեական պատասխանատվության ենթարկել Մուղդուսուն, Ամատունուն, Շախսուվարովին, Գուլոյանին, Գեւորկովին...»:[53]

Բոլոր այս մարդիկ արդեն բանտում էին, նույն բանտախցում էին հայտնվել Ա.Գուլոյանը եւ Ա.Եսայանը: Նրանք, որ երկար ամիսներ շարունակ հակառակորդներ էին, քաղաքական բնույթի մեղադրանքներ էին ներկայացնում միմյանց, այժմ՝ բանտում դարձել էին համախոհներ: Նույն բանտախցում նրանց հարեւաններից մեկը (ի դեպ, ՆԳ ժողկոմատի նախկին աշխատակից) հարցաքննության ժամանակ հայտնում էր, որ Ա.Գուլոյանը, Ա.Եսայանը եւ Ա.Շախսուվարյանը հակահեղափոխական ակտիվ աշխատանք են տանում բանտում, օրինակ՝ Ա.Եսայանը Լ.Բերիայի մասին ասում է, թե նա Վրաստանում բանտարկեց եւ ոչնչացրեց բոլոր իր ընկերներին եւ բոլշեւիկյան լավագույն կադրերին, որ Բաքվում մուսավաթիստների օրոք նա ծառայել է գաղտնի ոստիկանությունում, իսկ Ա.Գուլոյանը, իր հերթին, ասում է, որ Հայաստանում տրոցկիստական-ազգայնական կազմակերպությունը արհեստականորեն ստեղծվել էր Մոսկվայից ժամանած ՆԳ ժողկոմատի աշխատակիցների կողմից: Հարեւանի հարցին, թե ինչ կապ ունեն Մոսկվայից ժամանածները, «...երբ այդպիսի կազմակերպություն գոյություն ուներ ժողովրդի թշնամի Խանջյանի օրոք, որի մասին դուք, Գուլոյան, բազմիցս խոսել եք ազատության մեջ, վերջինս պատասխանեց բացասաբար եւ փորձեց համոզել, որ Հայաստանում եւ ոչ մի հակահեղափոխական կենտրոն չի եղել...»:[54] Նույնը կարող էին կրկնել երեկվա եւ մյուս մերկացնողները՝ Ա.Ամատունին, Խ.Մուղդուսին եւ այլք, բայց արդեն ուշ էր եւ անօգուտ:

Արտասահմանում խորհրդային իշխանությունների որոշման մասին հայտնի դառնալուն պես, Հայաստանի պաշտոնական տարբեր հիմնարկների հասցեով բազմաթիվ նամակներ սկսեցին ստացվել նախ եւ առաջ ՀՕԿ-ի տարբեր մասնաճյուղերից եւ նրա հետ համագործակցող հայրենակցական միություններից: Որոշումը հատկապես անարդար եւ անհասկանալի էր ՀՕԿ-ի անդամների համար, քանի որ նրանք տարիներ շարունակ, չնայած բազմաթիվ դժվարություններին ու խոչընդոտներին, Խորհրդային Միության սակավաթիվ եւ հավատարիմ բարեկամներն էին, նրա քաղաքականության ու գաղափարաբանության պաշտպաններն ու պրոպագանդիստները: Ինչպես եւ կարելի էր ենթադրել, Երեւանում ՀՕԿ-ի գլխավոր վարչության լուծարումից կարճ ժամանակ անց նրա բոլոր արտասահմանյան մասնաճյուղերը քայքայվեցին եւ դադարեցրին իրենց գոյությունը:

Իսկ 1938թ. մարտին Երեւանում ստացվեց ՀԲԸ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանի նամակը, որը հասցեագրված էր Հայաստանի ժողկոմխորհի նախագահին.

««Խորհրդային Հայաստանի» 8 դեկտեմբերի թիւին մէջ կարդացինք որ Ժողկոմխորհի որոշմամբ լուծարքի ենթարկուած են Հայաստանի Օգնութեան Կոմիտէին հետ, մեր Միութիւնը եւ Մելգոնեան ֆոնդը, եւ թէ յատուկ Յանձնախումբ մը կազմուած է լուծարքի գործերով զբաղուելու համար:

«Մինչեւ ցարդ այդ որոշման մասին մեզի պաշտօնական զեկուցում եղած չըլլալով, եւ խնդրոյն էութեան եւ հետեւանքներուն նկատմամբ զրկուած ըլլալով ոեւէ տեղեկութենէ, ներկայիս պատիւ ունինք խնդրելու որ հաճիք մեզի հաղորդել թէ լուծարքը ի՞նչ պայմաններու մէջ պիտի ունենայ եւ յառաջիկային համար կարգադրութիւններ տնօրինուա՞ծ են:

«Ամիսներէ ի վեր զանազան կարեւոր եւ ոմանք յոյժ ստիպողական հարցերու վերաբերմամբ մեր ուղղած բազմաթիւ նամակները Ժողկոմխորհի Նախագահին, Համալսարանի ռեքտորի տեղակալին, ՀՕԿ Գլխ. Վարչութեան եւ մասնաւորապէս մեր ներկայացուցիչ-գործակատար քաղ. Հ.Գարակէօզեանի, անպատասխան մնացած ըլլալով, ներկայիս կը խնդրենք հետեւանք տալ անոնց մէջ պարզուած խնդիրներուն, որ կապ ունին Միութեանս ձեռնարկներուն եւ վարկերուն հետ: Մեզ շնորհապարտ պիտի թողուք իմացնելով ո՞ր վարչութեան կամ պաշտօնատարին հետ կրնանք հարաբերուիլ Միութեանս վերաբերեալ հարցերու մասին»:[55]

Ստանալով պատասխան, Միությունը նոր նամակներ է հղում, ապրիլին՝ Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպանին, հունիսին՝ Հայաստանի Կոմկուսի կենտկոմի քարտուղարին, օգոստոսին՝ կրկին Ժողկոմխորհի նախագահին: Այդ վերջին նամակում, մասնավորապես, նշվում էր. «Վստահ ենք թէ, նկատի առնելով մեր պատասխանատուութիւնը, լիուլի պիտի ըմբռնէք մեր կրկնակի դիմումներուն նպատակը եւ պիտի բարեհաճիք հետեւանք տալ վերջապէս մեր խնդրանքներուն. հակառակ պարագային, մեր Կեդրոնական Վարչական Ժողովին պարտականութիւնը պիտի ըլլայ որոշել թէ ինչ նպատակայարմար միջոցներով պէտք է օգտագործէ, ի նպաստ արտասահման գտնուող բարենպատակ ձեռնարկներու եւ հիմնարկութեանց, առկախ մնացած Հայաստանի յատուկ զանազան վարկերը եւ ապսպրանքները»:[56] Բայց ապարդյուն՝ բոլոր նամակները մնացին անպատասխան:

Ստեղծված իրավիճակում Միության Կենտրոնական Վարչությունը երկար քննարկումներից հետո միաձայն ընդունում է մի փաստաթուղթ՝ «որոշմնագիր», որը գործադրվելու էր Հայաստանի Ժողկոմխորհին եւ Ֆրանսիայում Խորհրդային Միության դեսպանատանը այն ուղարկելուց

վաթսուն օր հետո միայն: Նշելով «...ցաւալի կացութիւնը որ աւելի քան մէկ տարիէ ի վեր ստեղծուած է՝ Խ.Հայաստանի հետ ամէն յարաբերութեանց խզումին հետեւանքով...» եւ թվարկելով Միության կողմից ուղարկված բոլոր անպատասխան մնացած նամակները, ինչպես նաեւ կնքված եւ իրագործվող պայմանագրերը, Կենտրոնական Վարչությունը գրում էր. «Նկատելով թէ Միութեանս կրկնակի խնդրանքներուն եւ ատոնց մասին Երեւանի կառավարութեան պահած լռութեան հետեւանքով, այս իրողութիւնը մերժումի համարժէք համարուելով, հաստատուած է թէ ըստ էութեան անտարակոյս խզում մը կայ պայմանադիր երկու կողմերուն միջեւ, անոր որ բարեմտօրէն կ'ընծայէ իր նուիրատուութիւնը վաւերաթուղթերու համաձայն, եւ անոր որ չընդունիր այդ նուիրատուութիւնները՝ ստորագրուած պայմանագրութեանց եւ փոխադարձաբար կնքուած յանձնառութեանց համաձայն»: Այնուհետեւ, ՀԲԸ Միությունը հայտնում է իր ընդունած որոշման մասին.

«Կեդր. Վարչ. Ժողովը, նախանձախնդիր իր պարտականութեան, որ է ոչ մէկ գինով դադրեցնել կտակարարներուն եւ նուիրատուներուն յայտնած կամքին գործադրութիւնը, միանգամայն գիտակից այն մեծ պատասխանատուութեանց որ իր վրայ կը ծանրանան այս ակամայ զանցառութեան հետեւանքով, ինքզինքը պարտաւոր կը զգայ հետեւեալ որոշումը տալու.–Կեդր. Վարչ. Ժողովը, միաձայնութեամբ, կ'որոշէ որ՝ Խ. Հայաստանի հաշուոյն Միութեանս ունեցած բոլոր տրամադրելի գումարները, ասոնց մէջ ըլլալով տարեկան յատկացումները, որոնց գործածութիւնը անցեալ տարիէն ի վեր անհնարին եղած է, Հայաստանի մեր ձեռնարկներուն լուծարքին եւ Երեւանի կառավարութեան հետ մեր յարաբերութեանց խզումին հետեւանքով, առժամապէս յատկացուին,–մինչեւ այն օրը որ Հայկական կառավարութիւնը տրամադիր ըլլայ վերստին ի զօրու դնելու հին պայմանագրութիւնները կամ անոնց տեղ նորեր կնքելու,– նմանօրինակ ձեռնարկներու՝ յօգուտ հայ գաղթականներուն որ օտար երկրներուն մէջ ցրուած են, պայմանաւ որ կարելի եղած չափով համաձայն ըլլան իրաքանչիւր հիմնադրամի սկզբնական նպատակին եւ անոնց յատկացումը կիրարկուի ըստ կարելւոյն հաւատարիմ մնալով նուիրատուներուն բաղձանքին»:[57] Այս գրությունը նույնպես մնաց անպատասխան:

ՀԲԸ Միությունը այլեւս չէր կարող առկախ թողնել Հայաստանի համար նախատեսած գումարները, հատկապես նկատի առնելով սփյուռքահայության բազմաթիվ կարիքները: Այսպիսով, 1939թ. ՀԲԸ Միությունը Խորհրդային Հայաստանի համար նախատեսված գումարները սկսեց ծառայեցնել սփյուռքում իր կողմից իրականացվող ծրագրերին: Առաջին տարում դա իրականացվեց հետեւյալ կերպ.

«1. Երեւանի Համալսարանի հաշւոյն առկախ մնացած գումարէն 1000 անգլ. ոսկի, ազգային, պատմական եւ գրական մեծարժէք երկերու տպագրութեան, Մելգոնեան Հրատարակութեան յորջորջումով: 2. Նոյն վարկէն 1103 անգլ. ոսկի, Նիկոսիոյ Մելգոնեան Վարժապետանոցին: 3. Նոյն վարկէն 125 անգլ. ոսկի Զարդարեան գրադարանի եւ Ցուշարանի հաւաքածոներու գնումին: 4. Երեւանի Համալս. Նուպարեան Մրցանակի վարկէն 800 անգլ. ոսկի, Նուպարեան Սաներու Հիմնարկութեան: 5. Նոյն վարկէն 150 անգլ. ոսկի, իբր մրցանակ արժանաւոր հեղինակներու եւ ուսանողներու: 6. Նոյն վարկէն 170 անգլ. ոսկի Հէլիոպոլիսի Նուպարեան վարժարանին: 7. Երեւանի Դարուհի Ցակոբեան Մայրանոցի հաշուոյն տրամադրելի վարկէն 800 անգլ. ոսկի, Պէյրութի մէջ աղջկանց ցերեկեայ բարձրագոյն նախակրթարանի մը հաստատման, որ պիտի կրէ «Դարուհի Ցակոբեան Կրթարան» անունը: 8. Նոյն գումարէն 400 անգլ. ոսկի, յօգուտ անոք որբուհիներու հոգատարութեան եւ օժտուած հայուհիներու դաստիարակութեան: 9. Զանազան հիմնադրամներու եկամուտներէն 868 անգլ. ոսկի Միութեան հովանաւորեալ վարժարաններուն եւ 350 ոսկի Միութեան հովանիին ներքեւ գործող երիտասարդական կազմակերպութեանց: 10. Կրթական տրամադրելի վարկերէն 50 անգլ. ոսկի Պէյրութի Մխիթարեան Վարժարանին եւ 100 ոսկի Կ. Պոլսի Ազգ. Պատրիարքարանին: 11. Նուպարաշէնի յատուկ տրամադրելի գումարներէն 3.000 անգլ. ոսկի, կէսը Աթէնքի եւ միւս կէսն ալ Պէյրութի եւ Հալէպի տնազուրկ չքաւոր գաղթականներու զետեղման: 12. Նոյն վարկէն 1.000 անգլ. ոսկի, Անտիոք-Սուէտիա շրջանին կամ Լիբանանի յարմարագոյն մէկ կեդրոնին մէջ հողագործական-գիւղատնտեսական ձեռնարկի մը հաստատման, այդ նպատակին փոխանցելով նաեւ Պատուոյ Անդամ ողբ. Մկրտիչ Պալեանի նուիրած 450 ոսկին: 13. Միեւնոյն վարկէն, 20.000 ֆրանք Կ. Պոլսի Ազգ. Պատրիարքարանին, գաւառներէն եկած գաղթականներու եւ որբերու պատսպարման, եւ 5.000 ֆրանք Թուրքիայէն Հալէպի շրջանակը գաղթած հողագործ համայնքին տեղաւորման պէտքերուն համար»:[58]

Այս երկար ցուցակը կարող է ընկալվել տարբեր կերպ. այն հստակ պատկերացում է տալիս, մի կողմից, թե հետագա երկար տարիների ընթացքում ինչից զրկվեց Հայաստանի ժողովուրդը խորհրդային իշխանությունների վարած քաղաքականության պատճառով, եւ մյուս կողմից, թե որքան կարեւոր ծրագրեր շարունակվեցին եւ սկսեցին իրագործվել նույն այդ գումարների շնորհիվ սփյուռքի տարբեր համայնքներում: Ամեն դեպքում, մխիթարականն այն էր, որ Միության միջոցները շարունակեցին ծառայել հայ ժողովրդին, թեկուզ եւ նրա միայն մեկ հատվածին՝ սփյուռքահայությանը:

Հ.Գարակյոզյան՝ քաղաքական խարդավանքների զոհը

Բայց Միությունը ունեցավ եւ այլ՝ մարդկային կորուստ: ՀՕԿ-ի ֆինանսատնտեսական գործունեությունը ստուգող հանձնաժողովի 1937թ. դեկտեմբերի 8-ի վերոնշված զեկուցագրում քրեական պատասխանատվության ենթակա անձանց թվում էր նաեւ Հայաստանում ՀԲԸ Միության ներկայացուցիչ Հայկազ Գարակյոզյանը: Այդ օրերին նա, ինչպես եւ մյուս բոլոր նշված անձինք, արդեն ամիսներ շարունակ գտնվում էր բանտում: Այդ տարիներին, երբ իրար հետեւից բանտարկվում, աքսորվում, գնդակահարվում էին հայտնի պետական ու կուսակցական գործիչներ, մտավորականներ, Հ.Գարակյոզյանի ճակատագիրը մի տեսակ դուրս մնաց ժամանակակիցների, առավել եւս հետագա սերունդների ուշադրությունից: Մինչդեռ, թե գործունեությամբ եւ թե մարդկային հատկանիշներով նա արժանի տեղ ունի ՀԲԸ Միության պատմության մեջ: Ճակատագրի հեգնանքով, Հ.Գարակյոզյանի կյանքի ու գործունեության պատմության համար հիմնական աղբյուրն է 1937թ. Ներքին գործերի ժողկոմիսարիատում նրա վերաբերյալ կազմված գործը:

Հ. Գարակյոզյանը ծնվել էր 1882թ. Տրապիզոնում, ունեւոր վաճառական Իգնատիոս Գարակյոզյանի ընտանիքում: Ապրելով հոր հետ՝ նա նույնպես զբաղվել է ծխախոտի առեւտրով: Դեռ Առաջին Աշխարհամարտից առաջ Հ. Գարակյոզյանը գործի բերումով հաստատվել էր Օդեսայում: 1917թ. նա ընտրվում է Օդեսայում ՀԲԸ Միության նորաստեղծ մասնաճյուղի վարչության անդամ: Այստեղ նա ծանոթացավ, ապա ամուսնացավ Երեւանից կրթություն ստանալու նպատակով եկած Սոֆյա Եղիազարյանի (Եղիազարովայի) հետ: 1923թ. Հ.Գարակյոզյանը կնոջ եւ երկու զավակների հետ Օդեսայից գալիս է Հայաստան: Տարիներ անց, պատասխանելով քննիչին, նա այսպես է բացատրել իր Հայաստան գալը. «լինել հայերի մեջ, իմ հայրենիքում... ես չգիտեի ռուսերեն եւ ինձ դժվար էր այնտեղ (Օդեսայում-Էդ.Մ.) պահպանել իմ գոյությունը»:[59] Իր իսկ խոսքերով, այդ բախտորոշ որոշումը կայացնելիս, կարեւոր դեր է խաղացել նաեւ կնոջ ցանկությունը՝ վերադառնալ Երեւան, իր ազգականների ու բարեկամների մոտ: 1926թ. նա հաճախակի հանդիպումներ է ունենում Երեւանում գտնվող ՀԲԸ Միության հայտնի գործիչ Ե.Կարիկյանի եւ դեռեւս Տրապիզոնից իրեն ծանոթ բժիշկ Խ.Հեքիմյանի հետ, որոնք էլ երկու տարի անց՝ 1928թ., երբ Միությունը անհրաժեշտ համարեց Հայաստանում ունենալ մշտական ներկայացուցիչ, առաջարկեցին Հ.Գարակյոզյանի թեկնածությունը: Նույն՝ 1928թ., Հ.Գարակյոզյանը ստանձնեց Հայաստանում ՀԲԸ Միության ներկայացուցչի պաշտոնը, որը

եւ վարեց երկրում Միության գործունեության ողջ ընթացքում: Որքանով եզակի եւ աննախադեպ էր Միության, որպես սփյուռքահայ կազմակերպության, գործունեությունը Խորհրդային Հայաստանում, այդչափ եզակի էր նաեւ Հ.Գարակյոզյանի պաշտոնը: Նկատի առնելով այն տարիներին բնորոշ մտայնություններն ու քաղաքական մթնոլորտը, դժվար չէ պատկերացնել, թե որքան աննախանձելի էր Հ.Գարակյոզյանի նման մարդու վիճակը. ծագումով արեւմտահայ, հարուստի ընտանիքից, զբաղմունքով առեւտրական, արտասահմանից միայն 1923թ. Երեւան եկած, անկուսակցական, եւ այսքանից հետո արտասահմանի հայկական «բուրժուական» կազմակերպության ներկայացուցիչ Խորհրդային Հայաստանում: Եվ նման՝ խորհրդային չափանիշներով կասկածելի կենսագրության տեր մարդու պարտականությունն էր, իր իսկ խոսքերով, «լինել միջնորդ նրա (ՀԲԸ Միության-Էդ.Մ.) եւ Հայաստանի կառավարական հիմնարկությունների միջեւ՝ Միության տնտեսական-շինարարական միջոցառումների հարցում: Բարեգործականի առաջարկությունները ես համաձայնեցնում էի Հայաստանի կառավարության հետ, ստանում եւ շինարարության համար փոխանցում էի դրամական միջոցներ, հսկում էի Միության միջոցառումների իրականացումը»:[60] Մեծ երեւակայություն պետք չէ պատկերացնելու, թե ինչ տարաբնույթ դժվարությունների հետ էր կապված նշված պարտականությունների կատարումը երկրում տիրող սոցիալ-քաղաքական եւ տնտեսական պայմաններում: Եվ չնայած բոլոր տեսակի դժվարություններին, նա, այնուամենայնիվ, պետք է ապահովեր իր առջեւ դրած խնդիրների լուծումը՝ այդպիսին էր ՀԲԸ Միության ղեկավարության պահանջը:

Հ.Գարակյոզյանը, իհարկե, գիտակցում էր, թե ինչ վտանգ է սպառնում իրեն՝ որպես արտասահմանյան կազմակերպության ներկայացուցչի՝ երկրում «ժողովրդի թշնամիների» դեմ օրեցօր ծավալվող պայքարում: Այդ կասկածները սկսեցին հաստատվել 1936թ. նոյեմբերին՝ Ա.Եսայանի եւ Ա.Եղիազարյանի բանտարկությունից հետո: Զանցած երկու ամիս, հերթը հասավ Հ.Գարակյոզյանին՝ 1937թ. հունվարի 11-ին նա կանչվեց Ներքին գործերի ժողկոմիսարիատ եւ հարցաքննվեց՝ առայժմ միայն որպես վկա: Վերը արդեն մեջբերվել էր հարցաքննության արձանագրության այն հատվածը, որը վերաբերում էր Ա.Եսայանի գլխավորած պատվիրակության, որի անդամներից էր նաեւ Հ.Գարակյոզյանը, Մոսկվա կատարած այցի մանրամասներին: Հ.Գարակյոզյանի՝ որպես անհատի համար խիստ հատկանշական էին նաեւ նրա պատասխանները ՀՕԿ-ի նախագահների մասին: Այսպես, Ար.Երզնկյանի մասին նա ասել է. «Արամայիս Երզնկյանի՝ որպես Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի

տեղակալի հետ ես կապված էի «Բարեգործականի» աշխատանքների գծով: Բացի այդ, բարեկամություն էինք անում որպես թղթախաղի ընկերներ: Ես հաճախ էի հանդիպում նրա հետ թղթախաղի սեղանի շուրջ՝ հիմնականում իր տանը, երբեմն էլ ինձ մոտ»: Ա.Եսայանի մասին. «Նրա հետ ես կապված էի միայն աշխատանքով, այն բանից հետո, երբ «Բարեգործականը» անցավ ՀՕԿ-ի տնօրինության տակ: Ա.Եսայանը շատ լավ էր վերաբերվում ինձ, աջակցում էր «Բարեգործականի» կողմից կառուցվող օբյեկտների շինարարությանը»:[61] Այս պատասխանները ըստ արժանվույն գնահատելու համար հարկ է վերստին նշել, որ թե Ար.Երզնկյանը եւ թե Ա.Եսայանը բանտարկված էին դեռեւս նախորդ՝ 1936թ. նոյեմբեր ամսին: Եվ այնուամենայնիվ, հարցաքննության համար Ներքին գործերի ժողկոմատ կանչված Հ.Գարակյոզյանը անկեղծորեն պատմում է նրանց հետ իր բարեկամական հարաբերությունների, իր նկատմամբ նրանց լավ վերաբերմունքի մասին: Ի՞նչ էր դա՝ անվախությո՞ւն, պարզամտությո՞ւն, թե՞ հավատ իշխանությունների արդարամտությանը:

Հունվարյան հարցաքննությունից հետո էլ Հ.Գարակյոզյանը շարունակեց աշխատել նույն եռանդով ու բարեխղճությամբ, կարծես անտեսելով իրեն սպառնացող վտանգը: Այդ առումով ուշագրավ է հետեւյալ դեպքը: Հարցաքննությունից ընդամենը երկու շաբաթ անց՝ 1937թ. հունվարի 25-ին նա մի գրություն է ուղարկում Հայկոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Ա.Ամատունուն, որում տեղեկացնում էր, որ «Փարիզի Հայկ. Բարեգործական Ընդհ. Միության Կեդր. Վարչությունը իր 9 նոյեմբեր 1936 թվակիր նամակով հայտնում է, որ նկատի առնելով Երեւան-Նուպարաշեն խճուղու մոտալուտ ավարտումը, Նուպարաշենի բնակիչների երթեւեկությունը դյուրացնելու համար որոշել է Միության կողմից բացառիկ մի նվիրատվություն անել (ոչ Հայաստանին տրամադրելի գումարներից), ուղարկելով 20-25 հոգինոց մի ավտոբուս»: Հ.Գարակյոզյանը, վկայակոչելով գործող օրենքներով նախատեսված սահմանափակումները, խնդրում էր Ա.Ամատունուն միջնորդել Խորհրդային Միության կառավարության առջեւ հատուկ արտոնություն ձեռք բերելու՝ ավտոբուսը ստանալու համար: Ա.Ամատունին դիմումը հասցեագրում է Ներքին գործերի ժողկոմ Խ.Մուղդուսուն. «Նստացնել եւ վռնդել հեղինակին»: Մուղդուսին իր հերթին, արդեն հայերենով մակագրում է. «Կառավարության որոշում (!-Էդ.Մ.) պետք է կատարել առանց վիճելու»: Այլ պատասխան չէր էլ կարող լինել. նույն Ամատունու եւ Մուղդուսու գլխավորությամբ Հայաստանում, ինչպես արդեն նշվել էր, սկսվել էր պետական ու կուսակցական գործիչների բռնադատումների նոր փուլ, ներկայացվող մեղադրանքներում կարեւոր տեղ էր վերապահված ազգայնական գործունեությանը,

արտասահմանի հայկական բուրժուական կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության հետ համագործակցությանը: Նման իրավիճակում առնվազն միամտություն կլիներ սպասել, որ Հայաստանի առաջին դեմքը այդպիսի մի կազմակերպության հարցով միջնորդեր Մոսկվայի կենտրոնական կառավարության առջեւ, առավել եւս որ խնդրագրի հեղինակի՝ Միության ներկայացուցչի անունը արդեն մտցված էր «ժողովրդի թշնամիների» հերթական ցուցակների մեջ:

1937թ. հունիսի 25-ին Պետանվտանգության կրտսեր լեյտենանտ Կիրակոզովը իր վերադասին՝ կապիտան Զիթունուն ներկայացնում է տեղեկանք Հ.Գարակյոզյանի մասին, որի վերջում գրված էր. «Գարակյոզյանը սիստեմատիկաբար տանում է հակահեղափոխական ագիտացիա եւ ենթակա է կանչվելու պատասխանատվության՝ համաձայն ՀԽՍՀ ՔՕ 67 հոդվածի»: Տեղեկանքը նույն օրը հաստատում է ՆԳ ժողկոմ, Պետանվտանգության ավագ մայոր Խ.Մուղդուսին, նույն օրը այդ երեք մարդկանց ստորագրություններով կայացվում է որոշում Հ.Գարակյոզյանին Ներքին գործերի ժողկոմատի ներքին բանտում կալանավորելու մասին, որով եւ սկսվեց Հայկազ Գարակյոզյանի կյանքի վերջին, ողբերգական շրջանը: Հաջորդ օրը նրա բնակարանում, որը գտնվում էր ՀԲԸ Միության կառուցած «Բարեգործականի Տուն» բնակելի շենքում, կատարվում է խուզարկություն, որի ընթացքում առգրավվում են նրա երկու գրամեքենաները, ռադիոն, ինքնահոս գրիչը, անձնական թղթակցությունը եւ այլն: Այստեղ հարկ է մեջբերել հետեւյալ հատվածը Հայաստանի ժողովրդական նկարիչ, քանդակագործ Արա Սարգսյանի 1955թ. սեպտեմբերի 8-ի թվակիր գրությունից, որն ուղղված էր ՀԽՍՀ Պետանվտանգության կոմիտեին. «Հ.Կարագյոզյանը ապրում էր շատ համեստ: Ես մի քանի անգամներ եղել եմ նրանց տանը եւ տեսել բնակարանի համեստ սարքն ու ընտանիքի պարզ ապրելակերպը: Այն ժամանակ Բարեգործականի ներկայացուցիչը, եթե նա ուղղամիտ եւ ազնիվ մարդ չլիներ, կարող էր լիաուատ կերպով օգտվել Բարեգործականի բարիքներից իր անձի եւ իր ընտանիքի համար: Մինչդեռ, Հ.Կարագյոզյանի մոտ հակառակն էր: Նրա ու նրա ընտանիքի նիստ ու կացը ապացույց էր Կարագյոզյանի պարզության, ուղղամտության եւ ազնվության»:[62]

Հ.Գարակյոզյանը հարցաքննվեց ընդամենը երկու անգամ՝ հունիսի 29-ին եւ հոկտեմբերի 13-ին, եւ այդ հարցաքննությունները խիստ տարբերվում էին իր՝ որպես վկայի հունվարյան հարցաքննությունից: Հունիսի 29-ին, այսինքն բանտարկվելուց երեք օր անց, Խ.Մուղդուսու անունով գրած իր դիմումի մեջ նա անում է հետեւյալ «խոստովանությունը». «Իմ ձերբակալվելուց հետո, երբ որ քննիչ ընկեր Կիրակոսյանը (նույն ինքը Կի-

րակոզով-Էդ.Մ.) հարց դրեց իմ՝ սովետական իշխանության հանդեպ ունեցած հանցանքների մասին, ես որոշեցի լինել անկեղծ եւ հայտնել ճշմարտությունը: Խոստովանում եմ, որ ես 1932 թվից եղել եմ ֆրանսիական հետախուզական մարմինների գործակալ եւ տարել եմ աշխատանք սովետական իշխանության հանդեպ»:[63] Թե ի՞նչ ձեւով եւ ինչպիսի՞ հարցեր էր դրել նրա առջեւ «քննիչ ընկեր Կիրակոսյանը», կարելի է ենթադրել, դատելով դիմումի եւ նրա՝ ազատության մեջ գրած գրությունների միջեւ եղած տարբերություններից: Հավանական է, որ Հ.Գարակյոզյանը գրել էր Կիրակոզով-Կիրակոսյանի թելադրությամբ (հետաքննության գործում այս դիմումը միակ փաստաթուղթն է, որ գրված է հայերենով, քանի որ Հ.Գարակյոզյանը չէր տիրապետում ռուսերենին): Նույն օրը տեղի ունեցած կարճ հարցաքննության ժամանակ (սկզբում դիմումն է գրվել թե հակառակը՝ ըստ էության այնքան էլ էական չէ) Հ.Գարակյոզյանը կրկնում է իր վերոնշած «խոստովանությունը», հայտնելով, որ իրեն որպես գործակալ հավաքագրել է կաթողիկոսի ընտրությունների առիթով Երեւան եկած Լ.Կյումուշկերտանը (ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության անդամ-Էդ.Մ.), որ ինքն այդ օրերին նրան եւ Ա.Զոպանյանին մանրամասն տեղեկություններ է տվել Հայաստանի տնտեսական եւ քաղաքական վիճակի մասին: Հ.Գարակյոզյանը միակ լրտեսը չէր, նա ուներ մի շարք անվանի գործընկերներ: Ներքին գործերի ժողկոմատի քննիչների գործադրած ուժային միջոցների հետեւանքով իրենց լրտես էին հայտարարել գրողներ Զ.Եսայանը եւ Վ.Թոթովենցը, թարգմանիչ եւ գրաքննադատ Պ.Մակինցյանը եւ այլք, իսկ նրանց հավաքագրողներն էին ֆրանսիական հետախուզության գործակալներ Հրաչ Երվանդը եւ Արշակ Զոպանյանը:[64]

Երկրորդ եւ վերջին հարցաքննությունը, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 19-ին, քննիչը սկսում է սպառնալիքով. «Ձեր գործի հետաքննության ողջ ընթացքում դուք համառորեն թաքցնում եք ձեր հակահեղափոխական գործունեությունը՝ որպես արտասահմանյան դաշնակցական-ռամկավարական կենտրոնի միսիոներ (ըստ երեւույթին, քննիչը միսիոները շփոթել է էմիսարի հետ-Էդ.Մ.) Հայաստանում: Առաջարկում ենք վերջ տալ չխոստովանելուն եւ սպառիչ ցուցմունքներ տալ ձեր հակահեղափոխական գործունեության մասին»:[65] Քննիչի այս խոսքերը խիստ ուշագրավ են, քանզի վկայում են, թե որ սցենարի համապատասխան էր սարքվում Հ.Գարակյոզյանի գործը եւ թե ինչ դեր էր հատկացվում նրան այդ սցենարում: Նախ, հարկ է նշել, որ ի տարբերություն հունվարյան հարցաքննության, քննիչին այլեւս բնավ չի հետաքրքրում Ա.Եսայանի գլխավորած պատվիրակության այցը Մոսկվա. ըստ ամենայնի, նույնիսկ մեծ ցանկության դեպքում այն չէր կարող հիմք ծառայել քաղաքական լուրջ

մեղադրանքների համար: Իսկ այդպիսի հնարավորություն էր տալիս Ներքին գործերի ժողկոմատի հերյուրանքը արտասահմանում դաշնակցական-ռամկավարական կենտրոնի եւ Հայաստանում տրոցկիստական-ազգայնական խմբի գոյության եւ նրանց համագործակցության մասին, որի նպատակն էր իբր խորհրդային իշխանության տապալումը, Հայաստանի անջատումը Խորհրդային Միությունից եւ այլն: Իր զբաղեցրած պաշտոնի բերումով Հ.Գարակյոզյանը, իհարկե, չէր կարող մտցվել այդ խմբի կազմի մեջ, նրա համար նախատեսված էր այլ, համեստ, բայց կարեւոր մի դեր, որը նույնպես մահաբեր եղավ:

Հետաքննության տրամաբանությունը պարզ էր եւ հստակ. քանի որ գոյություն ունեն երկու հակախորհրդային կենտրոններ՝ արտասահմանում եւ Հայաստանում, որոնք ունեն ընդհանուր նպատակներ եւ համագործակցում են, ապա մնում է պարզել, թե ով է ապահովում կապը նրանց միջեւ: Դժվար չէր կռահել, որ պատասխաններից մեկն էր՝ ՀԲԸ Միությունը եւ նրա ներկայացուցիչը Երեւանում՝ Հ.Գարակյոզյանը: Այնքանից հետո շատ դյուրին էր Հ.Գարակյոզյանին ու Միության գծով Հայաստան այցելած բոլոր մարդկանց՝ Մ.Պապաջանյանին, Ա.Զոպանյանին, Լ.Կյումուշկերտանին, Հրաչ Երվանդին, Մ.Միհրդատյանին եւ այլոց ներկայացնել որպես դաշնակցական-ռամկավարական կենտրոնի ներկայացուցիչների, Հ.Գարակյոզյանի օգնությամբ կազմակերպված նրանց հանդիպումները Ս.Տեր-Գաբրիելյանի, Ա.Խանջյանի, Ար.Երզնկյանի, Ա.Եսայանի հետ՝ որպես երկու կենտրոնների համագործակցություն, ՀԲԸ Միությունը՝ որպես քաղաքական կազմակերպություն, որը հիմնվել է ռամկավարների կողմից՝ արտասահմանի հայությանը հայկական բուրժուազիայի հանդեպ հավատարմության ոգով դաստիարակելու նպատակով, ՀԲԸ Միության կողմից Հայաստանում կառուցվող Նուպարաշենը, հիվանդանոցները եւ այլ շինությունները՝ որպես հայկական բուրժուազիայի ժողովրդականացման, նրա մասին հայ ժողովրդի մեջ դրական կարծիք ստեղծելու միջոց եւ այլն, եւ այլն: Իսկ որքանո՞վ էին օգտակար այս ամենի համար Հ.Գարակյոզյանի ցուցմունքները: Պետք է ընդունել, որ քննիչները այս դեպքում իրենց նպատակներին հասնելու համար վարպետորեն էին օգտագործել նրա բնավորության վերոնշված հատկանիշները: Ըստ ամենայնի, խոստումներ տալով Հ.Գարակյոզյանին ապագա դատավարության՝ նրա համար բարեհաջող ավարտի մասին, նրանք հենց սկզբից ձեռք բերեցին ամենակարեւորը՝ նրա ձեռքով հայերեն գրած խոստովանությունը ֆրանսիական հետախուզության գործակալ լինելու մասին: Հարցաքննությունների արձանագրությունները, ընդունված կարգի համաձայն, կազմվում էին ռուսերենով, բայց քանի որ Հ.Գարակյոզյանը չէր տիրապետում այդ

լեզվին, նրան պարզապես հայերենով շարադրում էին գրվածը, որից հետո նա ստորագրում էր արձանագրությունը (ռուսերեն չիմանալու պատճառով նույն կերպով էին ընթանում նաեւ գրող Զապել Եսայանի հարցաքննությունները): Նույնիսկ, եթե այդ պատասխանները չաղավաղվեին, ապա հեշտությամբ կարող էին ներկայացվել այլ, մինչեւ իսկ հակառակ ենթատեքստում: Այսպես, օրինակ, Հ.Գարակյոզյանը քննիչին պատմում է, որ Մ.Պապաջանյանի խոսքերով, Ս.Տեր-Գաբրիելյանը վերջինիս հետ հանդիպման ընթացքում խոստացել էր ամեն կերպ աջակցել Նուպարաշենի շինարարությանը, հատկապես պնդելով հայկական բուրժուազիայի կողմից Հայաստանին ավելի մեծ չափով դրամական միջոցներ հատկացնելու անհրաժեշտությունը, ասելով. «Հայկական բուրժուազիան պետք է հասկանա, որ իր հայրենիքը ոչ թե Սիրիան է, այլ Հայաստանը»: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի «հակախորհրդային» իմաստ կարելի էր հաղորդել Ս.Տեր-Գաբրիելյանի այդ խոսքերին, որքան դյուրին էր նրան ներկայացնել որպես հայկական բուրժուազիայի գործակալ:

Ամեն դեպքում, Հ.Գարակյոզյանը թե իր անձնային հատկանիշներով եւ թե ռուսերենի չիմացությամբ դյուրացրել էր քննիչի աշխատանքը եւ մնում է ենթադրել, որ դրա շնորհիվ նրա նկատմամբ ֆիզիկական ճնշման միջոցներ չեն կիրառվել: Անվանի ճարտարապետ Միքայել Մազմանյանը, որը նրա հետ նույն բանտախցում էր եղել չորս ամիս՝ 1937թ. սեպտեմբերի 27-ից մինչեւ 1938թ. հունվարի 20-ը, 1955թ. տված իր վկայություններում, համենայն դեպս, նման փաստեր չի հիշատակում: Մ. Մազմանյանը այսպես է նկարագրել Հ.Գարակյոզյանին. «Նա ընդհանուր գծերով պատմում էր ինձ իր գործի մասին, պատմում էր, որ քննիչը գիտի ողջ ճշմարտությունը, ամբողջությամբ ներթափանցում է իր ոգու մեջ եւ հասկանում է, որ ինքը լրիվ անմեղ մարդ է ...Նա պահում էր իրեն համեստ եւ համբերատար սպասում էր իր գործի բարեհաջող ավարտին, քանի որ համոզված էր, որ ոչ մի բանում մեղավոր չէ եւ պետք է դուրս գա»:[66]

Այդ օրերին Հ.Գարակյոզյանի գործի հետաքննությունը արդեն ավարտված էր՝ 1937թ. նոյեմբերի 20-ին քննիչ Կիրակոզովը ներկայացրել էր նրան լրացուցիչ մեղադրանքներ ՀԽՍՀ ՔՕ երեք հոդվածներով: Անցնում են ամիսներ, եւ միայն յոթ ամիս անց՝ 1938թ. հունիսի 17-ին Հայաստանի Ներքին գործերի ժողկոմի տեղակալ Կոնդակովը եւ Գլխավոր զինվորական դատախազի օգնական Շուլց-Աննը հաստատում են մեղադրական եզրակացությունը, որում, մասնավորապես, ասված էր.

«Դաշնակցական-ռամկավարական կենտրոնը եւ հայկական խոշոր բուրժուազիան իրենց աշխատանքը կատարում էին իրենց ներկայացուցիչների միջոցով, որոնք ուղարկվում էին Խորհրդային Հայաստան ՀՕԿ-

ի կամ «Բարեգործական» միության ներկայացուցիչների պատրվակով, որոնց ամբաստանյալ Գարակյոզյանը ապահովում էր լրտեսական տեղեկություններով եւ կապում էր Հայաստանի աջ-տրոցկիստական ազգայնական կազմակերպության անդամների հետ»:[67] Հ.Գարակյոզյանի գործը, հաշվի առնելով նրան ներկայացված մեղադրանքները, հանձնվում է Խորհրդային Միության Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիա: Մեկ ամիս անց՝ հուլիսի 17-ին տեղի է ունենում վերջինիս նախապատրաստական նիստը, որի որոշման երրորդ կետն էր. «Գործը լսել փակ դատական նիստում, առանց մեղադրող եւ պաշտպանող կողմերի մասնակցության եւ առանց վկաներ կանչելու՝ ԽՍՀՄ ԿԳԿ 1934թ. դեկտեմբերի 1-ի որոշման կիրառմամբ»:[68] Հաջորդ օրը՝ հուլիսի 18-ին Երեւանում կայացավ ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիայի արտագնա նստաշրջանի դատական փակ նիստը. նախագահ՝ դիվիզիոնական զինիրավաբան Օրլով, անդամներ՝ բրիգադային զինիրավաբաններ Կոլպակով եւ Ստելմախովիչ, քարտուղար՝ 3-րդ կարգի զինիրավաբան Կոզլով, մասնակցում էր Շուլց-Աննը:

«Նիստը բացվում է ժամը 17.25-ին... Նախագահողը պարզաբանեց ամբաստանյալին նրան ներկայացված մեղադրանքների էությունը եւ հարցրեց նրան, ճանաչում է նա արդյոք իրեն մեղավոր, ինչին դատապարտյալը պատասխանեց, որ նա իրեն մեղավոր է ճանաչում մասնակիորեն: Նա դաշնակցական կենտրոնի ներկայացուցիչ չի եղել: Ռուսաստան է եկել 1914թ.: Երզնկյանի հետ ծանոթացել է ԽՍՀՄ-ում: 1928թ. կապ է ունեցել Փոխօգնության կոմիտեի (?-ըստ երեւույթին, դատական նիստի ռուսազգի անդամները այսպես են թարգմանել «Բարեգործական Միություն»-ը -Էդ.Մ.) հետ եւ բանակցություններ է վարել Խորհրդային կառավարության հետ: Անգլիական հետախուզության գործակալ չի եղել: Դիմումը՝ թեեւ նա գրել է իր հանցավորության ճանաչման մասին, չի համապատասխանում իրականությանը: Տեր-Սիմոնյանին ինքը ճանաչում էր:

«Հրապարակվում է Տեր-Սիմոնյանի ցուցմունքը:

«Դատապարտյալ. քաղաքական թեմաներով Տեր-Սիմոնյանի հետ ինքը երբեք չի զրուցել, իսկ ինչու է նա ցուցմունք տալիս այդ մասին, ինքը չի կարող բացատրել: Ինքը ազգայնական հայացքներ ուներ, որովհետեւ դաստիարակվել է Թուրքիայում:

«Դատական հետաքննությունը ավարտված է:

«Իր վերջին խոսքում դատապարտյալը ներողամտություն է խնդրում դատարանից, քանի որ ինքը 10 տարի ազնիվ աշխատել է եւ իր մեղքն այն է, որ ազգայնական հայացքներ է ունեցել:

«Դատարանը հեռանում է խորհրդակցելու:

«Վերադառնալով խորհրդակցելուց, նախագահողը հրապարակում է դատավճիռը:

«Ժամը 17.45-ին նիստը փակվեց:

Դատավճիռ, 18 հուլիսի 1938թ.

«Նախնական եւ դատական հետաքննությամբ հաստատված է, որ Գարակյոզյանը 1928թ. արտասահմանյան հակահեղափոխական դաշնակցական-ռամկավարական կենտրոնի ներկայացուցիչն էր Հայաստանում եւ իրականացնում էր կապը հակահեղափոխական ազգայնական տեռորիստական կազմակերպության հետ, որը Հայաստանում գործում էր հակահեղափոխական աջ-տրոցկիստական տեռորիստական կազմակերպության հետ միասնաբար, որի նպատակն էր՝ Խորհրդային իշխանության զինված տապալումը, Հայաստանի անջատումը ԽՍՀՄ-ից եւ այսպես կոչված «անկախ» հայկական պետության ստեղծումը՝ կապիտալիստական մի երկրի պրոտեկտորատի տակ: Բացի այդ, Գարակյոզյանը զբաղվել է լրտեսական գործունեությամբ հօգուտ արտասահմանյան հետախուզություններից մեկի, վերջինիս փոխանցել է գաղտնի տեղեկություններ, որոնք իրենցից Խորհրդային Միության պետական գաղտնիք էին ներկայացնում:

«Այսպիսով ապացուցված է Գարակյոզյանի մեղավորությունը ՀԽՍՀ ՔՕ 59, 63, 65, 68 հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ:

«Ղեկավարվելով ՀԽՍՀ ՔԴՕ-ի 297 եւ 298 հոդվածներով, ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիան դատապարտեց Հայկազ Իգնատիոսի Գարակյոզյանին պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության, անձամբ իրեն պատկանող ողջ գույքի բռնագրավումով:

«Դատավճիռը վերջնական է եւ ԽՍՀՄ ԿԳԿ նախագահության 1934թ. դեկտեմբերի 1-ի որոշման հիման վրա ի կատար է ածվում անմիջապես»:[69]

Եվ վերջին փաստաթուղթը. «Տեղեկանք. Հայկազ Իգնատիոսի Գարակյոզյանի վերաբերյալ դատավճիռը գնդակահարության մասին ի կատար է ածվել ք. Երեւանում 1938թ. հուլիսի 18-ին»:[70]

Նույն օրը գնդակահարվեցին նաեւ Ա.Եսայանը եւ Հ.Հակոբյանը, հոկտեմբերի 4-ին՝ Մոսկվա մեկնած պատվիրակության վերջին անդամ Տիգրան Զավենը: 1938թ. ընթացքում գնդակահարվեցին այս գլխում հիշատակված գրեթե բոլոր պետական եւ կուսակցական գործիչները, այդ

թվում նաեւ Մոսկվայում Վ.Մեժլաուկը եւ Լ.Կարախանը: Նրանց մեջ ամենատարեցներն էին Ար.Երզնկյանն ու Դ.Շահվերդյանը՝ 59 տարեկան:

Անցնում են տարիներ, Ի.Ստալինի մահից եւ Լ.Բերիայի գնդակահարությունից հետո Խորհրդային Միությունը աստիճանաբար սկսում է ազատագրվել նախորդ տարիների մղձավանջից, որի ամենակարեւոր դրսեւորումներից էր տասնյակ հազարավոր բռնադատվածների արդարացումը: 1954թ. նոյեմբերին Հայկազ Գարակյոզյանի որդին՝ Լեւոնը (այդ ժամանակ արդեն Խորհրդային գրողների միության անդամ), դիմում է Հայաստանի Մինիստրների խորհրդին կից Պետանվտանգության կոմիտեի նախագահ Գ.Բադամյանցին, խնդրելով վերանայել իր հոր գործը:

Ստալինյան տարիներին դատապարտվածների արդարացումը երկարատեւ եւ մանրակրկիտ գործ էր, այն չէր կատարվում եւ չէր էլ կարող կատարվել մեկ հրամանի կամ մեկ որոշման հիման վրա, քանի որ թվով անհամեմատ ավելի անմեղ զոհերից բացի կային նաեւ իսկապես մեղավորներ: Ցուրաքանչյուրի վերաբերյալ, ըստ էության, կազմվում էր մի նոր գործ, ուր իրավաբանորեն համոզիչ ապացույցների հիման վրա պետք է հիմնավորվեր տվյալ անձի անմեղությունը: Բայց անցած տարիներին ոչնչացվել էին նաեւ նախկին վկաները, որոնք կարող էին հրաժարվել իրենց՝ բռնությունների ազդեցության տակ տված ցուցմունքներից, ոչնչացվել, թաքնվել էին բռնությունների կազմակերպիչներն ու իրագործողները, ավելին՝ նրանց մի մասը շարունակում էր զբաղեցնել պետական ու կուսակցական պաշտոններ եւ, ամենակարեւորը, Խորհրդային Միության նոր ղեկավարությունը դեռեւս հրապարակավ չէր դատապարտել Ստալինի վարչակարգի հանցագործ քաղաքականությունը սեփական ժողովրդի նկատմամբ, որ պետք է աներ Կոմկուսի նոր առաջնորդ Ն.Խրուշչովը իր պատմական ճառով 1956թ.՝ Խորհրդային Միության Կոմկուսի XX համագումարում:

Նման դժվարությունների հետ էր կապված նաեւ Հ.Գարակյոզյանի արդարացման գործը: Եվ այնուամենայնիվ, հետզհետե ապացուցվում էր, որ հանրապետության ղեկավարներից կազմված աջ-տրոցկիստական կազմակերպություն Հայաստանում գոյություն չի ունեցել, որ գոյություն չի ունեցել նաեւ դաշնակցական-ռամկավարական կենտրոն արտասահմանում, որ ՀԲԸ Միության գործիչներ Լ.Կյումուշկերտանը, Ա.Զոպանյանը, Մ.Պապաջանյանը, Հրաչ Երվանդը եւ այլք ոչ այդ կենտրոնի ներկայացուցիչներն էին եւ ոչ էլ տարբեր երկրների հետախուզության գործակալներ, եւ որ Հ.Գարակյոզյանի եւ ուրիշների «խոստովանությունները» արվել էին նրանց նկատմամբ կիրառված ֆիզիկական եւ հոգեբանական ճնշման պայմաններում: Հ.Գարակյոզյանի անմեղությունը հաստատեցին

աքսորավայրերից վերադարձած Ա.Եղիազարյանը, Հայաստանի ժողկոմխորհի գործերի նախկին կառավարիչ Ա.Թոքմաջյանը, Հայաստանի, ապա Անդրֆեդերացիայի Կենտգործկոմի նախկին նախագահ Ս.Մարտիկյանը, քանդակագործ Ա.Սարգսյանն ու ճարտարապետ Մ.Մազմանյանը: Ի վերջո, 1956թ. մարտի 7-ին Պետանվտանգության կապիտան Կոստանդյանը, ավարտելով Հ.Գարակյոզյանի արդարացման գործը, եզրակացնում է. «...Հայկազ Գարակյոզյանը 1937թ. ձերբակալվել եւ դատապարտվել է անհիմն կերպով»: Մի քանի ամիս անց Խորհրդային Միության Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիան որոշում է. «ԽՍՀՄ Գերագույն Դատարանի Զինվորական կոլեգիայի 1938թ. հուլիսի 18-ի դատավճիռը Գարակյոզյանի վերաբերյալ չեղյալ հայտարարել..., իսկ գործը հանցակազմի բացակայության պատճառով կարճել»:[71]

Բայց մինչ այդ, եղավ մի պահ, երբ թվաց, որ թե ՀԲԸ Միության եւ թե Հ.Գարակյոզյանի գործունեությունը Խորհրդային Հայաստանում ոչ այլ ինչ է, եթե ոչ պարզ միստիֆիկացիա: 1955թ. հուլիսին Հ.Գարակյոզյանի արդարացման առիթով, Պետանվտանգության կոմիտեի նախագահի տեղակալը դիմում է Մինիստրների խորհրդի գործերի կառավարչին, խնդրելով կառավարության արխիվի նյութերի հիման վրա հայտնել հետեւյալ տեղեկությունները ՀԲԸ Միության մասին. «1) Ե՞րբ է գոյություն ունեցել, ի՞նչ նպատակներ է հետապնդել եւ իրականում ինչպիսի՞ գործնական օգնություն է ցույց տվել, 2) Ինչպիսի՞ տեղեկություններ կան այդ Միության Հայաստանում ներկայացուցիչ Հ.Գարակյոզյանի վերաբերյալ, ե՞րբ եւ ո՞ւմ կողմից է նա նշանակվել այդ պաշտոնին, ինչպիսի՞ նպատակներով եւ ի՞նչ աշխատանք էր տանում նա»:[72] Մեկ ամիս անց Ներքին գործերի մինիստրության արխիվային բաժնի պետը Պետանվտանգության կոմիտեի քննչական բաժնի պետին է հասցեագրում Կենտրոնական պետական արխիվից ստացված տեղեկանքը... «Կովկասյան բարեգործական միության» մասին: Տեղեկանքում նշվում էր, որ այդ միությունը գործել է 1881-1924թթ. եւ որ «Միության անձնակազմում Հ.Գարակյոզյան չի հայտնաբերվել»:[73] Ստանալով նման ապշեցուցիչ տեղեկություններ՝ Պետանվտանգության աշխատակիցները, սակայն, բնավ չեն հուսալքվում եւ նորից են դիմում Ներքին գործերի մինիստրության արխիվային բաժնի պետին: Այս անգամ հարցը ձեւակերպվում է այլ կերպ. «Խնդրում ենք ցուցում տալ ստուգել եւ տեղեկացնել՝ ղեկավար ո՞ր մարմինների հրահանգների հիման վրա է թույլատրված եղել «Հայկական բարեգործական միության»՝ «Բարեգործականի» գործունեությունը Հայաստանում 1935-1937թթ.»: 1955թ. սեպտեմբերի 9-ին ստացվում է հետեւյալ պատասխանը. «ՀԽՍՀ ՆԳՄ արխիվային բաժինը տեղեկացնում

է, որ Հայաստանում խորհրդային իշխանության տարիներին «Հայկական բարեգործական միություն»՝ «Բարեգործական» գոյություն չի ունեցել: Նրա մասին վերջին տեղեկությունները վերաբերում են 1921թ. փետրվար-մարտ ամիսներին, այսինքն դաշնակցական ավանտյուրայի շրջանին»:[74]

Ակամա հիշում ես լորդ Բոլինգբրոկի խոսքերը. «Երկար էր մեր ճանապարհը մինչեւ ապականացման այս աստիճանը, իսկ չարի քրոնիկական արատներից հետ ընկրկումը, ինչպես հայտնի է, շատ ավելի դանդաղ է, քան դեպի այն տանող առաջընթաց շարժումը»:[75]

7

ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ: ՄԵԾ ՆԵՐԳԱՂԹԸ

1939թ. սեպտեմբերի 1-ին սկսվեց Երկրորդ Աշխարհամարտը: Հայ ժողովրդի համար այդ պատերազմը, Առաջին Աշխարհամարտի համեմատ ուներ որոշակի առանձնահատկություններ: Այս անգամ հայաբնակ հայկական տարածքներում՝ Խորհրդային Հայաստանում ռազմական գործողություններ չեղան: Թուրքիան, ակնհայտորեն համակրելով Գերմանիային, այդպես էլ չհամարձակվեց պատերազմել Խորհրդային Միության հետ: Պատերազմի հետեւանքով ոչ միայն հերթական անգամ չնվաճվեց Հայաստանի տարածքը, այլեւ հակառակը՝ պատերազմի ավարտին շատ հավանական էր թվում Թուրքիայի զավթած հայկական տարածքների մի մասի վերադարձը: Այս պատերազմում նույնպես հայ ժողովուրդը կրեց մարդկային մեծ կորուստներ՝ շուրջ 200 հազ. մարդ: Սակայն այդ մարդիկ այլեւս ցեղասպանության զոհեր չէին եւ նրանց մեջ չկային ծերեր, երեխաներ եւ կանայք: Դրանք հայ զինվորներն էին, որոնք Խորհրդային Կարմիր բանակի կազմում արիաբար կռվեցին եւ հաղթեցին նացիստական Գերմանիային եւ դրանով իսկ պաշտպանեցին իրենց հայրենիքը, հայ ժողովրդի խաղաղ ապագան:

ՀԲԸՄ-ը պատերազմող Ֆրանսիայում

Առաջիններից մեկը, որ իր վրա զգաց Երկրորդ Աշխարհամարտի արհավիրքները Եվրոպայի երկրներում, Ֆրանսիայում բնակվող հայությունն էր:

Այդ տարիներին Ֆրանսիան հայ սփյուռքի մշակութային եւ քաղաքական կենտրոնն էր, ինչպիսին հետագայում հաջորդաբար հանդես էին գալու Լիբանանն ու ԱՄՆ-ը: Փարիզում, Մարսելում, Լիոնում եւ այլ քաղաքներում ձեւավորվել էին հայկական համայնքներ, գործում էին մի շարք ազգային կազմակերպություններ, այդ թվում Փարիզում Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Արեւմտյան Եվրոպայի թեմի առաջնորդարանը եւ կենտրոնական մարմինները, ազգային կուսակցությունները, Գաղթականաց կենտրոնական հանձնաժողովը, Փարիզի Հայ տիկնանց միությունը, Հայ Բժշկական միությունը, Անի Հայ արվեստագետներու խմբակցությունը, Ֆրանսահայ Կապույտ Խաչը, Հայ Զափահաս որբերու միությունը, Ռուսահայ կանանց միությունը, հայրենակցական միություններ եւ այլն: Փարիզում՝ այդ տարիներին աշխարհի մշակութային կենտրոնում, ստեղծագործում էին նաեւ մեծ թվով հայ արվեստագետներ: Նրանց թվում էին նկարիչներ՝ Ֆրանսիայի ծովանկարիչների ընկերության հիմնադիր անդամ Արսեն Շապանյանը, Վարդան Մախոխյանը, Հովհաննես Ալխազյանը, Հովսեփ Փուշմանը, Էդգար Շահինը, քանդակագործ Հակոբ Գյուրջյանը, ճարտարապետ Լեոն Նաֆիլյանը, գրող եւ հրապարակախոս Արշակ Չոպանյանը եւ այլք: Ճանաչված դեմքերից էին նաեւ քարտեզագիր Զատիկ Խանզատյանը, որի պատրաստած Սիրիայի եւ Լիբանանի ատլասի առաջաբանի հեղինակն էր Ֆրանսիայի Ծովային նախարար Ժորժ Լեկը, Փարիզի լուսանկարչության ինստիտուտի պրոֆեսոր Աբել Մինասյանը, բժիշկներ, պրոֆեսորներ Կարապետ Աղաջանյանը, Հրանտ Հանչերը, Մկրտիչ Տեր-Կարապետյանը եւ այլք: Փարիզի մոտակայքում՝ Նեոյում էր գտնվում Աթանագինե Էգնայանի հիմնած ադամանդի հղկման գործարանը, որի արտադրանքը վաճառվում էր Եվրոպայի եւ Ամերիկայի հայտնի ոսկերչական խանութներում: Նրա որդին՝ Վահեն իր հոր բանավոր կտակի համաձայն, 1926թ. մեկ միլիոն ֆրանկ էր հանձնել Պողոս Նուպարին՝ ազգօգուտ որեւէ նպատակով գործածելու համար:

Ֆրանսահայերի ընդհանուր զանգվածը այդ երկրում հաստատվել էր հիմնականում Առաջին Համաշխարհային պատերազմից հետո: Անցած տարիների ընթացքում նրանք ոչ միայն կազմակերպեցին իրենց ազգային կյանքը, այլեւ աստիճանաբար սկսեցին ներգրավվել եւ ինքնհաստատվել երկրի սոցիալ-տնտեսական կյանքում: Հատկանշական է, որ

1939թ. հունվարի 24-ին Փարիզի «Ռադիո-30» կայանը հատուկ հաղորդում էր նվիրել Փարիզի հայ համայնքին: «Ասիկա եղաւ իսկապէս հայկական բրոբականտի հրապարակային գեղեցիկ արտայայտութիւն մը, մեր ցեղային ինքնյատկութեանց, նախաձեռնութեան ոգիին, հանրային գործունէութեան, ազգային, մշակութային եւ այլ պատուաբեր երեւոյթներուն մասին: Բարիզահայ կարեւորագոյն հաստատութիւնները իրարու յաջորդեցին այդ զուտ հայկական համասփիւռին մէջ, որուն տնօրէնութեան մասնաւոր հրաւէրին վրայ իր մասնակցութիւնը բերաւ նաեւ ՀԲԸ Միութիւնը...»:[1]

Ֆրանսիայում ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղերը՝ շնորհիվ Երվանդ Աղաթոնի ջանքերի, հիմնվել էին դեռեւս 1910թ.՝ Մարսելում եւ 1911թ.՝ Փարիզում, իսկ հետագայում նրանք գործում էին գրեթե բոլոր հայաբնակ քաղաքներում՝ Նիսում (1927թ.), Լիոնում (1928թ.), Սենտ-Էտյենում (1929թ.), Սեն-Շամոնում (1927թ.), Վյենում (1930թ.) եւ այլուր: Սակայն սոսկ մասնաճյուղերի գոյությամբ չէ, որ պայմանավորված էր Ֆրանսիայի, մասնավորապես Փարիզի առանձնահատուկ դերն ու նշանակությունը ՀԲԸ Միության կյանքում: Փարիզում էին կրթություն ստացել Միության բոլոր երեք նախագահները՝ Պողոս Նուպարը, Գալուստ Կյուլպենկյանը, Զարեհ Նուպարը, ինչպես եւ նրա մի շարք ականավոր գործիչներ: 1912թ., երբ Պողոս Նուպարը ստանձնեց Ազգային պատվիրակության ղեկավարումը, Փարիզը դարձավ նրա եւ իր ընտանիքի մշտական բնակության վայրը: Փարիզաբնակ Տիգրան Քելեկյանի, Ռաֆայել Մարկոսյանի, Աթանագինե Էգնայանի, Լեւոն Ակոբյանի, Նոյեմի Գափամաճյանի (Պողոս Նուպարի քույրը) եւ այլոց նյութական օժանդակության շնորհիվ էին իրականացվում Միության ծրագրերը Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում:

Փարիզի դերը հատկապես կարեւոր դարձավ, երբ 1921թ. Կահիրեից այստեղ փոխադրվեց ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը, որի անդամները դարձան փարիզաբնակներ Գաբրիել Նորատունկյանը, Գրիգոր Սինապյանը, Լեւոն Կյումուշկերտանը, Սերովբե Սվաճյանը, Տիգրան Կամսարականը եւ այլք: Փարիզում էին տեղակայված ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովի շենքը (որն այսօր ՀԲԸ Միության Ֆրանսիայի շրջանային հանձնաժողովի կենտրոնատեղին է), Նուպարեան Մատենադարանը, Մարի Նուպար Հայ ուսանողական տունը, նրա սեփականությունն էին նաեւ Տիգրան խան Քելեկյանի տրամադրած Դպրոցասեր տիկնանց վարժարանի շենքը, Նոյեմի Գափամաճյանի նվիրաբերած բնակարանները կարիքավոր գաղթականների համար եւ այլն:

1938թ. հոկտեմբերին Փարիզում՝ Նուպարեան Մատենադարանի սրահում Զարեհ Նուպարի նախագահությամբ հրավիրվեց ՀԲԸ Միության հերթական Ընդհանուր ժողովը, որից մի քանի ամիս անց Կենտրոնական Վարչությունը հայտարարեց հաջորդ ժողովի անցկացման ժամանակն ու վայրը՝ 1939թ. սեպտեմբեր, Լոզան: Սակայն 1939թ. սեպտեմբերին սկսված Համաշխարհային պատերազմը ոչ միայն անհնարին դարձրեց ժողովի գումարումը, այլեւ, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, արմատական փոփոխությունների ենթարկեց ՀԲԸ Միության ողջ գործունեությունը:

Ֆրանսիայի պատերազմի մեջ մտնելը անխուսափելիորեն տարբեր տեսակի զրկանքներ եւ սահմանափակումներ բերեց երկրի ողջ բնակչությանը: Սակայն շատ ավելի դժվարին վիճակում հայտնվեցին «օտարականները»՝ այլազգի գաղթականները: «Արդէն պատերազմից առաջ, ռուս եւ հայ գաղթականները, ֆրանսական օրէնքով 1928թ., պարտաւոր էին զինուորական ծառայութիւն կատարել տեղացիների պէս, առանց վայելելու սակայն երկրի քաղաքացիի իրաւունքները:»,- վերհիշում էր ժամանակակիցը,- «Պատերազմը հռչակուելուց յետոյ զինուորագրութեան ենթակայ «անհայրենիք» գաղթականների դիրքը ոչ թէ միայն չբարուքուեց, այլ նոր երեւոյթներ մէջտեղ եկան, կարծես հաստատելու համար, որ անպաշտպան օտարականները ռուս թէ հայ, միայն պարտականութիւններ ունին եւ արժանի չեն հաւասար իրաւունքների տեղացիների հետ, նոյն իսկ երբ վճարում են «արեան տուրքը»: Այսպէս, օրինակ, պարզուեց որ ճակատ ուղարկուող մեր եւ ռուս երիտասարդ զինուորների ինքնութեան տետրակների վրայ բացայայտ գրւում էր թէ «չունի ֆրանսական ազգութիւն», թէեւ ենթակաները հագած ունէին ֆրանսական համազգեստ եւ կրում էին ռազմական պայուսակ եւ հրացան, այս վերջինը երբեմն հինամնաց, մէկ փամփուշտաւոր: Թունաւոր գազերի դէմ պաշտպանուելու նպատակով տեղացիներին եւ դաշնակից օտարականներին վերապահեցին դիմակները, մերժելով գրեթէ ամենուրեք այդ կրաւորական պաշտպանութեան միջոցը ռուս եւ հայ տարագիրներին, թէեւ սրանց զաւակները ֆրանսացիների հետ միասին զինուորագրուեցին եւ իրենց արիւնը չխնայեցին երկրի պաշտպանութեան համար»: Օտարական հայերի նկատմամբ կիրառվող տարբեր տեսակի սահմանափակումները եւ արգելքները, խիստ գրաքննությունը, նրանց թերթերի դադարեցումը եւ նման այլ երեւույթներ, նույն հեղինակի խոսքերով՝ «...խտացրին անօգնականութեան եւ յուսահատութեան աստիճանը»:[2]

Ռուս գաղթականներից մեկը, իր հերթին, վերհիշելով այդ տարիները, գրում էր. «Պատերազմը սկսվեց, եւ մենք ճաշակեցինք արտասահմանցու վիճակի ողջ դառնությունը: Առաջացան հերթեր նույնիսկ քարտերով վաճառվող ապրանքների համար: Հերթերը հենց սկզբից բաժանվեցին՝ ֆրանսիացիների համար, որոնք սպասարկվում էին առաջին հերթին, եւ արտասահմանցիների համար, որոնք բավարարվում էին մնացուկներով: Երբեմն, մի քանի ժամ հերթում կանգնելուց հետո, գնում էինք դատարկ ձեռքերով: Չնայած փաստաթղթերով մենք անհպատակ էինք (ապատրիդ), բոլոր ռուս տղամարդիկ դարձան զինապարտ... Իսկ կանայք թիկունքում մնում էին իրավազուրկ արտասահմանցիներ: Ահա այսպես էին գործում ֆրանսիացիները պատերազմի տարիներին»:[3]

1939թ. վերջին իր մի հոդվածում Արշակ Չոպանյանը ուշադրություն էր հրավիրում պատերազմի հետեւանքով առաջացած մի խնդրի վրա. «Ֆրանսահայ գաղութի զինուորական տարիք ունեցող բոլոր անդամները, Ֆրանսա ապաստանած տարագիրներու պարտադրական զինուորագրութեան օրէնքին գործադրութեամբ, բանակի մաս կը կազմեն, արդէն իսկ ճակատը ղրկուած...Ատոնց մէջ կան՝ որ բարեկեցիկ են, բայց կան ալ, որ աղքատ են, օգնութեան կարօտ: Կան, որ ընտանիք ունին, կան ալ որ միանակ են, անոք, իրենց հոգածութիւն տուողի մը, թղթակցողի մը, նուէրներ ղրկողի մը պէտք ունին... կան հայ զինուորներ, որոնք ունին բազմանդամ ընտանիք մը որուն նեցուկն էին եւ որ այժմ նեղութեան մէջ է եւ պէտք ունի օգնութեան»:[4] Նման վիճակում հայտնված ֆրանսահայ զինվորներին եւ նրանց ընտանիքներին օժանդակելու նպատակով ՀԲԸ Միությունը, Հայ Գաղթականաց կենտրոնական հանձնաժողովը, Հայ տիկնանց միությունը, Հայ Կապոյտ Խաչը, Արեւմտյան Եվրոպայի թեմի առաջնորդարանը եւ այլ կազմակերպություններ Փարիզում հիմնեցին Ֆրանսական բանակի հայ զինուորներու օգնութեան յանձնախումբ: Տիրան վարդապետ Ներսոյանի նախագահությամբ: Հանձնախմբի ստեղծման ամենամեծ ջատագովներից մեկը՝ Միության փոխնախագահ Պողոս Էսմերյանը դարձավ նրա գանձապահը, իսկ ատենապետն էր՝ Նուպարեան Մատենադարանի գրադարանապետ Արամ Անտոնյանը:

ՀԲԸ Միությունը նորաստեղծ կազմակերպությանը տրամադրեց 500 ֆունտ ստեռլինգ՝ ամսական 5.000 ֆրանկի մասնավճարներով:[5] Բացի այդ, Միության Փարիզի մասնաժողովը դրամական օգնություն էր ցույց տալիս հատկապես փարիզահայ զինվորների կարիքավոր ընտանիքներին: Դրա հետ մեկտեղ, Միությունը իր պարտքը համարեց մասնակցել կառավարության կազմակեպած «Մեր զինվորների համար» հանգանակությանը, որի համար շնորհակալական նամակ ստացավ Ֆրանսիայի ֆինանսների նախարար Պոլ Ռեյնոյից:

Պատերազմական դրության պայմաններում երկրի իշխանությունները խիստ սահմանափակումների ենթարկեցին նաեւ տարբեր, ներառյալ ազգային փոքրամասնությունների համայնքային կազմակերպությունների գործունեությունը: Այսպես, 1939թ. ընդունված հատուկ օրենքի համաձայն, զինվորական իշխանությունները իրավունք էին ստանում արգելել ժողովներ, փակել թերթեր եւ ամսագրեր, կատարել խուզարկումներ, վտարել քաղաքացիություն եւ մշտական բնակություն չունեցող անձանց եւ այլն:

1939թ. սեպտեմբերի կեսին Միության Կենտրոնական Վարչությունը, նկատի առնելով Փարիզում ստեղծված անորոշ եւ շփոթ կացությունը, որոշում է Միության ընդհանուր տնօրինությունը եւ կենտրոնական գրասենյակը տեղափոխել ավելի ապահով վայր: Որպես այդպիսին ընտրվեց Պրըթյոյլ գյուղաքաղաքը, որը գտնվում էր Փարիզից մեկ ու կես ժամ հեռավորության վրա, շնորհիվ ինչի, տնօրինության աշխատակիցները, նախ եւ առաջ վարիչ-պատվիրակ Վահան Մալեզյանը հաճախ այցելում էին մայրաքաղաք եւ ապահովում մշտական կապը Կենտրոնական Վարչության հետ: Բայց յոթ ամիս անց՝ 1940թ. ապրիլի 15-ին, այսինքն՝ Փարիզի գրավումից մոտ երկու ամիս առաջ, Միության պաշտոնեությունը լրիվ կազմով վերադառնում է Փարիզ: Միության ղեկավարության նման, առաջին հայացքից տարօրինակ գործողությունները, բացատրվում են երկրում այդ օրերին կատարվող իրադարձություններով:

Մինչ այդ, 1940թ. մարտի 20-ին, Ֆրանսիայի վարչապետ դարձավ Պոլ Ռեյնոն, որը, ի տարբերություն իր նախորդի՝ Դալադյեի, հայտնի էր իր անգլո-ամերիկյան կողմնորոշմամբ եւ Գերմանիայի դեմ ակտիվ ռազմական գործողություններ վարելու վճռականությամբ: 1940թ. ապրիլի 14-ին Հյուսիսային Նորվեգիայում ափ հանվեցին անգլո-ֆրանսիական զորքերը, որոնք շուտով մարտի բռնվեցին գերմանական բանակի հետ: Գերմանական զորքերի ներխուժումը Սկանդինավիա՝ ոչ միայն չանհանգստացրեց ֆրանսիացիներին, այլեւ հակառակը՝ ըստ նրանց, այդ հարձակումը եւ հետագա երկարատեւ պատերազմը Նորվեգիայի, գուցե եւ Ծվեդիայի հետ պետք է քայքայեր գերմանական բանակը եւ ավարտվեր նրա արագ պարտությամբ: Անգլո-ֆրանսիական համատեղ ռազմական գործողությունները եւ իշխանությունների լավատեսական հայտարարությունները ֆրանսիական հասարակության մեջ ստեղծեցին պաշտպանվածության, պատերազմի հաղթական ավարտի տրամադրություններ, որոնք եւ պայմանավորեցին ՀԲԸ Միության ղեկավարության՝ Փարիզ վերադառնալու մասին որոշումը: Սակայն ֆրանսիական իշխանությունների հաշվարկները պարզապես անհեթեթ էին՝ արդեն մայիսի

10-ին Բելգիա, Հոլանդիա եւ Լյուքսեմբուրգ ներխուժած գերմանական զորքերը ջախջախիչ պարտության մատնեցին անգլո-ֆրանսիական զորքերին եւ ընդամենը հինգ օր անց անցան ֆրանսիական սահմանը: Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու.Չերչիլը իր գրքում բերում է Պ.Ռեյնոյի խոսքերը. «Մենք ջախջախված ենք, մենք տանուլ տվեցինք պատերազմը»:[6] Ֆրանսիացիների, ինչպես եւ ֆրանսահայերի համար անկարելի էր նույնիսկ երեւակայել, որ Ֆրանսիան՝ աշխարհի այդ ժամանակվա ամենազարգացած եւ ռազմական առումով ամենահզոր երկրներից մեկը, մտնելով Երկրորդ Համաշխարհային պատերազմի մեջ 1939թ. սեպտեմբերի 3-ին, արդեն 1940թ. ամռանը ջախջախիչ եւ անպատվաբեր պարտության կմատնվի նացիստական Գերմանիայի կողմից:

Ստեղծված իրավիճակում ՀԲԸ Միության ղեկավարությունը ստիպված էր նոր որոշում կայացնել տնօրինությունը Փարիզից տեղափոխելու մասին: Նկատի առնելով դեպի երկրի հարավը շարժվող մարդկանց մեծ բազմությունը, դա կապված էր բազմապիսի բարդությունների հետ: 1940թ. հունիսի 13-ին՝ գերմանական զորքերի Փարիզ մտնելուց երեք օր առաջ միայն Վ.Մալեզյանին հաջողվեց մեկնել մայրաքաղաքից, տանելով իր հետ Միության կարեւորագույն փաստաթղթերը: Մեկամսյա արկածներով լի ճամփորդությունից հետո նա հասավ Մարսել՝ տեղի Բարեգործականի Տան մեջ հաստատելով Միության առժամյա գրասենյակը:

Տագնապալի այդ օրերին, սակայն, Միության ղեկավարության հիմնական մտահոգությունը կապված էր նրա ֆինանսական միջոցների հետ, որոնց ապահովությունը՝ Եվրոպայի տարածքով մեկ ընթացող պատերազմի պայմաններում, այլեւս երաշխավորված չէր: Դեռեւս 1939թ. վերջերին Փարիզում ստացվեց Միության Նյու Յորքի Կենտրոնական Հանձնաժողովի առաջարկը՝ անհապաղ Լոնդոնի դրամատներից Նյու Յորք փոխադրել Միությանը պատկանող ամերիկյան բոլոր արժեթղթերը: Այդ առաջարկը, որին իր համաձայնությունն էր հայտնել այդ ժամանակ ԱՄՆ-ում գտնվող Միության նախագահ Զարեհ Նուպարը, պայմանավորված էր պատերազմող երկրներում ֆինանսական միջոցների օգտագործմանը վերաբերող նոր կարգն ընդունելու հետ: Այսպես, պատերազմի նախօրեին՝ 1939թ. օգոստոսի 29-ին անգլիական կառավարությունը ընդունել էր հատուկ մի օրենք, որի համաձայն, այլ երկրների արժեթղթերի հետ բոլոր գործառնությունները ենթարկվում էին որոշակի սահմանափակումների եւ արգելքների: Եվ թեեւ այդ օրենքը վերաբերում էր միայն անգլիահպատակներին, սպասելի էր, որ շարունակվող պատերազմի պայմաններում այն կտարածվի նաեւ այլոց վրա: Նկատի առնելով, որ Միության ֆինանսական միջոցների հիմնական մասը պահվում էր անգ-

լիական բանկերում, Կենտրոնական Վարչությունը հրահանգեց, որ նրանք անմիջապես Նյու Յորքի Նեշնըլ Սիթի Պենք փոխադրեն Միության բոլոր ամերիկյան արժեթղթերը: Դա, սակայն, հարցի միայն մասնակի լուծում էր, քանզի Միության տրամադրության տակ եղած հիմնական ֆինանսական միջոցները ձեւակերպված էին որպես «Թրասթ»-ներ (խնամակալության տակ գտնվող գույք կամ գումար) եւ որոնց փոխադրումը Նյու Յորք շարունակվեց հետպատերազմյան տարիներին: «Այդ ծրագրին իրագործումը,- նշվում էր Միության տեղեկագրում,- օրինական ծանր արգելքներու կը բախէր եւ այդ առթիւ կատարուած են երկար բանակցութիւններ եւ թղթակցութիւններ, մէկ կողմէն անեղծ պահելու համար Թրասթներու նպատակը եւ միւս կողմէն զգուշանալու համար անոնց ապահովութիւնը վտանգելու նուազագոյն հաւանականութենէն իսկ: Իրական կնճռոտ, բազմադիմի եւ անվերջանալի գործողութիւններ տեղի ունեցան, հաւասարապէս Լոնտոնի եւ Նիւ Եորքի դրամատուններուն եւ փաստաբաններու հետ, եւ ձեռնարկը իր յաջող վախճանին յանգելու վրայ էր, Նիւ Եորքի Զէյզ Նէշընըլ Պէնքի հետ համաձայնութեամբ, երբ Ֆրանսայի անսպասելիօրէն արագ պարտութեամբը ամէն հաղորդակցութիւն ընդհատուեցաւ... Ցաւալի է որ կարելի չեղաւ այդ ծրագիրը իրագործել, այսուհանդերձ այդ անյաջողութիւնը բարեբախտաբար տեղի չի տուաւ ոեւէ անդարմանելի վնասի»:[7]

Կենտրոնի տեղափոխումը Նյու Յորք

Գերմանական զորքերի Ֆրանսիա ներխուժումից հինգ օր անց՝ մայիսի 20-ին, Միության շահերը պաշտպանելու համար շտապ կերպով եւ վերջին անգամ Փարիզում հրավիրված իր նիստում Միության Կենտրոնական Վարչությունը պարտադրաբար ընդունեց հետեւյալ խիստ կարեւոր եւ պատասխանատու որոշումը.

«Կեդր. Վարչ. Ժողովը, երկարօրէն խորհրդակցելէ յետոյ տիրող կացութեան մասին զոր պատերազմի ցաւալի հետեւանքները աւելի ճնշող եւ ծանրակշիռ դարձուցած են: Նկատելով որ պատերազմական վիճակին բերումովը, թղթակցութիւնները, ինչպէս նաեւ դրամատանց հետ գործառնութիւնները կը կրեն վնասաբեր յապաղումներ: Նկատելով մանաւանդ որ Միութեան դրամագլուխներուն մատակարարութիւնը ներկայ հանգամանքներու մէջ կը պահանջէ կանխազգուշութեան եւ ապահովութեան միջոցներու շուտափոյթ կիրարկումը: Նկատելով հետեւաբար որ, անխուսափելի դժուարութեանց նախատեսութեամբը, հարկ է պատերազմի տեւողութեան միջոցին ապահովել ընկերակցութեան շահերը, բացառիկ եւ ժամանակաւոր իրաւասութիւններ փոխանցելով Ամերիկայի իր ամէնէն աւելի հեղինակաւոր ներկայացուցիչներուն: Կ'արտօնէ եւ կը փոխանորդէ փոխ-ատենապետ տ. Պ.Էմմէրեանը, փոխ-գանձապահ տ. Վահէ Ֆրէնկեանը եւ վարիչ-պատուիրակ տ. Վ.Մալէզեանը, Միացեալ Նահանգներու Բարիզի Ընդհ. Հիւպատոսարանին առջեւ անմիջապէս ստորագրելու փոխանորդագիր մը, որուն մասին արդէն առնուած էր ամերիկեան օրէնսգէտի մը կարծիքը, եւ որով լիազօրութիւն կը տրուի Նիւ Եորքի մէջ գործող ՀԲԸ Միութեան Կեդր. Ցանձնաժողովի անդամներուն եւ մասնաւորապէս Ատենապետ տ. Ա.Գարակէօզեանի եւ Գանձապետ տ. Յ.Կիլպէնկեանի»:[8]

Հաջորդ օրը այդ փոխանորդագիրը վավերացվեց Փարիզում ԱՄՆ-ի հյուպատոսարանում. «...եւ այս կերպով Կեդր. Վարչ. Ժողովը իմաստուն եւ հեռատես ոգիով մը լուծած էր իր խղճին ու պարտականութեան վրայ ծանրացող ամենալուրջ հարցը, Հիմնական Կանոնագրի բացորոշ տրամադրութեանց համաձայն Միութեան վարչական Կեդրոնատեղին Նիւ Եորք փոխադրելով եւ այդու փրկելով ՀԲԸ Միութեան գերագոյն շահերը»:[9] Դրանից չորս ամիս անց, Վիշի քաղաքում, ուր տեղակայվել էր Գերմանիայի հետ համագործակցող Պետենի գլխավորած կառավարությունը (Վիշիի կառավարություն), կայացավ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովի 355-րդ նիստը՝ Առաքել Նուպարի նախագահությամբ: Այն բավարարվեց 1941թ. համար առժամյա նախահաշվի քննարկմամբ, ինչպես նաեւ հավանություն տվեց Միության վարիչ-պատվիրակի, փոխ-նախագահի եւ գանձապետի «սահմանափակ եւ խորհրդապահ» գործունեությանը, ինչպես նաեւ նրանց օժանդակությանը Նյու Յորքի Կենտրոնական Հանձնաժողովին՝ Միության գործունեությունը ղեկավարելու գործում:

Եթե ՀԲԸ Միության պատմությունը պարբերացվի ըստ նրա կենտրոնի աշխարհագրական տեղակայման, ապա կարելի կլիներ ասել, որ այդ օրերին ավարտվեց Միության պատմության առաջին՝ «եգիպտականից» հետո երկրորդ՝ 1921թ. սկիզբ առած «ֆրանսիական» շրջանը: Այդուհետ, սկսվեց ՀԲԸ Միության երրորդ «ամերիկյան» շրջանը, որը շարունակվում է ցայսօր:

Միության կենտրոնի տեղափոխումը Փարիզից չէր նշանակում, որ դրանով դադարեցվում էր Ֆրանսիայում նրա մասնաճյուղերի գործունեությունը, որքան էլ դա դժվար լիներ ընթացող պատերազմի պայմաններում: Գերմանացիների կողմից Փարիզի գրավումից որոշ ժամանակ անց, Միության կենտրոնական գրասենյակը վերսկսեց իր գործունեությունը՝ զբաղվելով տարբեր տեսակի ընթացիկ հարցերով: Նույն այդ օրե-

րին Միությունը բնականաբար հայտնվեց գերմանական իշխանությունների ուշադրության կենտրոնում: Նրանց հետաքրքրում էր Միության «նպատակը, ներկայ եւ բացակայ Վարիչներուն անունները եւ հասցէները, անոնց հպատակութիւնը, զինուորական պարտականութիւններէ զերծ ըլլալը կամ ոչ, եւ մանաւանդ թէ Միութեան կեդրոնը միշտ Փարի՞զ կը գտնուէր եւ ո՞ւր պէտք էր դիմել կարեւոր խնդիրներու մասին, եւն.»:[10] Նկատի առնելով իշխանությունների նման չթուլացող հետաքրքրությունը, ինչպես նաեւ նրանց կողմից այն կազմակերպությունների գրասենյակների, ընդհանրապես տարածքների գրավումը, որոնց տերերը բացակայում էին Փարիզից, որոշվեց ստեղծել առժամյա մի մարմին՝ «Փարիզի Կեդրոնական Ժողով», որը պետք է, մի կողմից, հարաբերվեր իշխանությունների հետ եւ մյուս կողմից՝ ղեկավարեր ու վերահսկեր Միության տեղական մարմիններն ու հաստատությունները: Նշված Ժողովի նախագահը եղավ Պ. Քոլոյյանը, ինչը եւ առիթ է տվել հետագայում որոշ հրապարակումներում թյուրիմացաբար հիշատակել նրա անունը որպես ՀԲԸ Միության նախագահի 1940-1942թթ.:

Փարիզի Կենտրոնական Ժողովը գործեց 1940թ. նոյեմբերից մինչեւ 1944թ. վերջը եւ այդ դժվարին տարիներին հաջողությամբ ապահովեց Միության աշխատանքը Ֆրանսիայի տարածքում: Նրա անմիջական մասնակցությամբ ձեւավորված Փարիզի տեղական մասնաճյուղի նոր կազմի ջանքերով՝ Ս.Չիլինկիրյանի, ապա Ս.Սաղըրյանի գլխավորությամբ, վերսկսվեցին հայերենի թաղային դասընթացները, հաջողությամբ կազմակերպվեցին տարբեր բանախոսություններ, այդ թվում Ա. Չոպանյանի հայագիտական դասախոսությունները ուսանողության համար, եւ թատերական ներկայացումներ, վերակազմվեց եւ սկսեց գործել Միության Հայ Երիտասարդաց Ընկերակցությունը: Պատերազմական տարիներին Փարիզում Միությունը սկսեց Մելգոնեան մատենաշարի հրատարակումը՝ այդ թվում Արշակ Չոպանյանի «Հայրէններու բուրաստանը», Լեւոն Բաշալյանի «Նորավէպներ եւ պատմուածքներ», Նիկողայոս Ադոնցի «Histoire d'Armenien» եւ Ա.Սագըզյանի «Pages d'Art Armenien» աշխատությունները: Ուշագրավ է, որ գրեթե միաժամանակ, բայց արդեն Նյու Յորքում, Միությունը հրատարակեց մեկ այլ կարեւոր հայագիտական աշխատություն՝ Սիրարփի Տեր-Ներսեսյանի «Armenia and Byzantine Empire» մենագրությունը: Փարիզի Կենտրոնական ժողովը նաեւ վերսկսեց որոշ ժամանակ ընդհատված Միության անդամավճարների կանոնավոր գանձումը, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ նպաստներ տրամադրել կարիքավոր հայ մտավորականներին, չքավոր հիվանդներին եւ այլն: Հիշատակման արժանի է նաեւ Միության նախաձեռնությունը՝ հայ անվանի մտավորականների համար ապահովել ազգային դամբարան Փարիզի Բանյո թաղի գերեզմանատան մեջ: Նույնպես արդյունավետ էր Մարսելի մասնաճյուղի գործունեությունը, ուր հատկապես նկատելի էր Հայ երիտասարդաց ընկերակցությունը: Այս մասնաճյուղի գործունեությունը ժամանակավորապես ընդհատվեց 1944թ. մայիսին, երբ քաղաքի ռմբակոծումների ընթացքում հիմնահատակ ավերվեց Բարեգործականի Տան շենքը:

Նուպարեան Մատենադարանի կողոպուտը

Փարիզում մնացած Միության ղեկավարների առջեւ ծառացած դժվարին եւ ամենակարեւոր խնդիրն էր «...ամէն գինով պահպանել Միութիւնը եւ իր գոյքերը, գրասենեակն իր կոտակեալ արխիւներով, Մատենադարանը իր բազմահազար գիրքերով եւ ձեռագիրներով, տակաւին մաս մը ֆրանսական արժեթուղթեր, որ հակառակ պարագային իբր լքեալ գոյք անկասկած պիտի գրաւուէին, մանաւանդ բազմաթիվ արժէքաւոր կալուածները...: Անոնք յաջողած են,- եզրակացնում էր Միության տեղեկագիրը,- իրենց առաջադրած նպատակին մէջ եւ համերաշխ գործակցութեամբ մը ըրած են ինչ որ մարդկօրէն կարելի էր ընել պատերազմի դժնի պարագաներուն մէջ»:[11]

Սակայն չնայած իր «խոհական եւ հեռատես» գործելակերպի, Միությունը մեկ անգամ չէ, որ ենթարկվեց գերմանական օկուպացիոն իշխանությունների կամայականություններին: Դրանց շարքում, անկասկած, առանձնակի կարեւորություն եւ հնչեղություն ունեցավ Նուպարեան Մատենադարանի հավաքածոների մի մասի բռնագրավումը: Մատենադարանը հիմնադրել էր Պողոս Նուպարը, որն էլ անձնապես հոգացել էր նրա տարածքի, հատուկ կահավորման եւ մյուս բոլոր հարցերը: Պատերազմի նախօրեին այնտեղ հաշվվում էր տարբեր լեզուներով ավելի քան 20.000 գիրք, հիմնականում հայագիտական բնույթի, ինչպես նաեւ տարբեր պարբերականների հավաքածոներ, ձեռագրեր եւ այլ արժեքավոր նյութեր: Նուպարեան Մատենադարանի հիմքում նախ դրվեց Վիչ/գ/են Հոլասի Կ.Պոլսի մեծարժեք հավաքածոն, որը հետագա տարիներին համալրվեց Նուպար փաշայի, Պողոս Նուպարի, Միքայել Փորթուգալ փաշայի, Օրմանյան եւ Մանկունի սրբազանների, Ն.Ադոնցի, Վահրամ Թորգոմյանի եւ այլոց նվիրաբերած հավաքածոներով: Դրա շնորհիվ Նուպարեան Մատենադարանը իրավամբ համարվում էր երրորդը Եվրոպայում՝ Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարյան միաբանությունների հայագիտական հավաքածոներից հետո:

Գերմանական զինվորականների առաջին երկու այցելությունները Նուպարեան Մատենադարան տեղի ունեցան 1941թ. հունվարին. նրանց հետաքրքրել էին ընդհանուր տեղեկություններ՝ գրքերի քանակը, ինչ լեզվով եւ ինչ ճյուղի էին պատկանում դրանք եւ այլն: Գրադարանապետ Ա.Անտոնյանը իմանալով, որ նրանք մինչ այդ արդեն Բեռլին էին տեղափոխել Փարիզում առգրավված ռուսական, լեհական, հրեական եւ այլ գրադարաններն ու արխիվները, որոշում է թաքցնել Մատենադարանի ամենաարժեքավոր գրքերը, տեղափոխելով նրանց մի մասը նկուղ եւ Ատոկ Կեւրեկի հարկաբաժինը: Ուշագրավ է, որ այդ օրերին Մատենադարան են այցելում Բեռլինից եկած հայ երիտասարդներ, որոնցից մի քանիսը հայերենին բոլորովին անտեղյակ՝ հետաքրքրվում էին, մասնաւորաբար Հայաստանի պատմությանը եւ աշխարհագրությանը վերաբերող գրքերով: «...Ակներեւ էր,- գրում է Ա.Անտոնյանը,- որ իրենց դիմումը կապ ունէր գերմանացի պաշտօնատարներու կողմէ կատարուած ...այցելութեանց հետ, եւ թէ եկած էին պարզապէս քննութիւն մը կատարելու Մատենադարանին հայերէն գիրքերուն նկատմամբ»:[12]

Փետրվարի 10-ին գերմանական իշխանությունները Պ.Քոլոլյանին հայտնում են, որ Բեռլինից ստացված հրահանգի համաձայն, հաջորդ օրն իսկ պետք է սկսվի Նուպարեան Մատենադարանի փոխադրումը Բեռլին: Վերհիշում է Ա.Անտոնյանը. «Ես տեղեկութիւն չունէի այս ազդարարութենէն, այնպէս որ յաջորդ օրը յանկարծակիի եկայ, երբ առտու կանուխ, ժամը 7էն առաջ, երբ դեռ մութ էր, Մատենադարանին դուռը զարնուեցաւ կռուփի ուժգին հարուածներով: Երբ դուռը բացի, չորս գերմանացիներ ներս մտան, մէկը զինուորական համազգեստով եւ միւսները քաղաքային հագուստով: Իրենցմէ մէկը ֆրանսերէն լեզուով ըսաւ ինծի թէ «Այսօր Մատենադարանին բոլոր գիրքերը պիտի գրաւուին Պերլին փոխադրելու համար: Մեր խօսակցութեան միջոցին՝ մօտաւորապէս 25 ֆրանսացի բեռնակիրներ ներս կը փոխադրէին պարապ սնտուկներ, որոնցմով լեցուեցան նրբանցքներն ու սրահներէն մէկ քանին: Բեռնակիրներէն մաս մը սկսած էր արդէն Ա եւ Բ սրահներու գիրքերը վար առնել եւ լեցնել սնտուկներու մէջ: Այնքան արագութեամբ եւ այնքան վարժութեամբ կ'ընէին այս գործը որ կարծես ամբողջ կեանքերնին անով զբաղած էին: ...Այս գործողութիւնը շարունակուեցաւ մինչեւ փետրվար 13 հինգշաբթի օրը, եւ Մատենադարանին գիրքերը, պարբերականները, եւն. լեցուեցան 168 սնտուկներու մէջ, որոնցմէ հազիւ 50 հատը կրցան գամել այդ օրը: Հսկողը ինծի ծանոյց թէ յաջորդ առտու կանուխ պիտի գան միւս սնտուկները գամելու, եւ թէ փոխադրութիւնը տեղի պիտի ունենայ ցերեկէն վերջ,

որովհետեւ մասնաւոր կառախումբ մը պիտի գայ Փարիզ յատկապէս մեր գիրքերուն համար»:[13]

Գերմանացիները, սակայն, ոչ միայն հաջորդ օրը, այլեւ հետագա մեկ ամսվա ընթացքում այդպես էլ չեկան: Ա.Անտոնյանը օգտվելով որեւէ հսկողության բացակայությունից, 110 բաց մնացած սնտուկների մեջ եղած գրքերի մեծ մասը փոխարինում է «անպէտ գիրքերով ու թերթերով» եւ նույնիսկ կարողանում է արդեն գամված սնտուկներից հանել բոլոր արժեքավոր ձեռագիր վավերաթղթերը: «Այս թեթեւութիւնը զոր գերմանացիք տուին Նուպարեան Մատենադարանի գրաւման գործին մէջ,- նշում է Ա.Անտոնյանը,- երբեք չի համաձայնիր իրենց սովորական գրաւման խիստ մեթոտներուն զորս բրտօրէն կիրարկած էին ռուսական, բոլոնիական, եւն. Մատենադարաններու գրաւման միջոցին, նոյն իսկ առաջին օրէն ամէն մարդ դուրս նետելով եւ դուռները կնքելով»:

Ա.Անտոնյանի այս խոսքերը հաստատում է Փարիզում դեռեւս 1870-ականներին հիմնադրած եւ մեծանուն ռուս գրող Ի.Տուրգենեւի անունը կրող հայտնի Տուրգենեւյան գրադարանի բռնագրավման փաստը: «Ֆաշիստների կողմից Փարիզը գրավելուց անմիջապես հետո գրադարանում հայտնվեցին ինչ-որ անձեր, որոնք հետաքրքրվում էին նրա կարգավիճակով, ֆոնդերով, վարչության կազմով, նրա անդամների քաղաքական հայացքներով: Հատկապես եռանդով էր գործում ոմն դոկտոր Հելմուտ Վայսը, որը որոշ չափով տիրապետում էր ռուսերենին եւ կատարում էր նացիստների գաղափարախոս Ա.Ռոզենբերգի ցուցումները... Վայսը հայտնեց, որ գրադարանի գործունեությունը դադարեցվում է եւ պահանջեց բանալիները: Մի քանի օր անց, հիտլերականները փաթեթավորեցին գրքերը, ինչպես նաեւ գրադարանում պահվող նկարները, քանդակը, փաստաթղթերի մի մասը եւ ուղարկեցին Գերմանիա»:[14] 1988թ., երբ գրվել էին այս տողերը, բռնագրավված գրքերը եւ այլ իրերը այդպես էլ չէին հայտնաբերվել:

Գերմանացի զինվորականների անսովոր գործելակերպից Ա.Անտոնյանը անում էր այն հետեւությունը, որ «...Նուպարեան Մատենադարանի գրաւման գործը մասնաւոր թելադրութեան մը հետեւանքն էր պարզապէս, եւ ոչ թէ իրենց յղացումը, եւ անոր ձեռնարկած էին աւելի ուրիշներու քան իրենց հաշուին»: «Ուրիշներ» ասելով, Ա.Անտոնյանը նկատի ուներ որոշակի անձի՝ Բեռլինում բնակվող՝ Արտաշես Աբեղյանին: Այս մարդու անունը առաջին անգամ հնչեցվեց գերմանացիների կողմից, երբ՝ ի պատասխան Պ.Քոլոլյանի եւ ՀԲԸ Միության այլ ղեկավարների բողոքների, նրանք որոշեցին Բեռլին փոխադրել Նուպարեան Մատենադարանի ոչ բոլոր գրքերը, իսկ գրքերի ընտրությունը հանձնարարեցին նույն

Ա.Աբեղյանին:

Ա.Աբեղյանը 1922 թվականից ղեկավարում էր Բեռլինում Դաշնակցության տեղական կազմակերպությունը, Գերմանա-հայկական միության փոխնախագահն էր եւ Բեռլինի համալսարանում հայոց լեզվի ամբիոնի հիմնադրման նախաձեռնողներից մեկը: Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին նա, ինչպես եւ ՀՀ Դաշնակցության մի շարք հայտնի գործիչներ, համագործակցեց նացիստական Գերմանիայի իշխանությունների հետ:[15] Ա.Աբեղյանը, որը, ի դեպ, ծանոթ էր գրադարանապետ Ա.Անտոնյանին դեռեւս Կ.Պոլսից, մինչ պատերազմը Փարիզ այցի ընթացքում որոշ ժամանակ աշխատել էր Նուպարեան Մատենադարանում եւ նույնիսկ դրվատալից հոդված էր տպագրել նրա մասին: Բնական է, որ թե Ա.Անտոնյանն ու Միության ղեկավարները եւ թե Մատենադարանի ճակատագրով բոլոր հետաքրքրվողները հուսով էին, որ Ա.Աբեղյանի օգնությամբ առնվազն նվազագույնի կհասցվի առգրավվող գրքերի քանակը: Սակայն, տեղի ունեցավ հակառակը:

Պ.Քոլոլյանը իր «Նուպարեան Մատենադարանի կողոպուտը» հոդվածում գրում էր. «Ա. Աբեղեան եկաւ Փարիզ 1941 մարտ 14-ին... եկաւ, բայց առաջին տեսակցութեանն իսկ յայտարարեց,- Ես գերմանացի պաշտօնեայ եմ,- հասկցնելով թէ ինք իբրեւ հայ չէր ներկայանար, այլ որպէս գերմանացի զինուորական: Իր այդ խօսքովն ու համազգեստովը սարսափի մէջ պահեց մեզ: ...Երկու ժամ խօսեցայ իր հետ. ըսի թէ Փարիզ եւ շրջականները 25.000 հայեր կային, մեծ թիւ կը կազմեն մտաւորականները որ կ'այցելեն Մատենադարան կարդալու, աշխատելու, գրելու համար ...Մինչդեռ Պերլինի մէջ հայ մտաւորականութիւն չկայ. ինչո՞ւ համար կ'ուզէր այդ գիրքերը: -Ես գերմանացի պաշտօնեայ մըն եմ, մեծերուն հրամանը կը գործադրեմ, պատասխանեց: Այս հայը հոգիով ալ գերմանացի էր»:[16]

Մինչդեռ Ա.Աբեղյանի այս վերջին պատասխանը հակասում էր հենց գերմանացի զինվորականների կեցվածքին, երբ նրանց ներկայությամբ Ա.Աբեղյանի եւ գրադարանապետի ու Ա.Զոպանյանի միջեւ բուռն վեճեր էին ընթանում գրքերի ընտրության շուրջ: Թե Ա.Անտոնյանը եւ թե Պ.Քոլոլյանը հատուկ նշում էին, որ գերմանացի զինվորականները երբեք էլ չմիջամտեցին եւ որեւէ ձեւով չպաշտպանեցին իրենց գործընկերոջը. «Ամէն բան կախուած էր Պերլինէն յատկապէս հրահանգով հրաւիրուած եւ լիազորուած պ.Աբեղեանէն»,- եզրակացնում էր Պ.Քոլոլյանը:[17]

Ա.Անտոնյանի խոսքերով, գրքերի ընտրության հարցում իրենք Ա.Աբեղյանի հետ համաձայնության էին եկել, որ նա «...զուտ հայագիտական, առաւելապէս բանասիրական գործերէ զատ ուրիշ ոեւէ գիրք

չպիտի առնէր... չպիտի առնէր նաեւ այն գիրքերը զորս կարելի էր հրապարակի վրայ գտնել ու գնել... չպիտի առնէր Թուրքիոյ մէջ հրատարակուած հայերէն օրաթերթերու եւ պարբերականներու, ինչպէս «Արեւելք», «Մասիս», «Հայրենիք», «Բիւզանդիոն», «Արեւելեան Մամուլ», «Ծաղիկ», եւն. հաւաքածոները, որոնց համար Փարիզի Հայ Գրողներու Միութիւնը եւ Նահատակ Գրագէտներու Մատենաշարի հրատարակիչները, պ. Զօպանեանի թելադրութեամբ դիմում ըրած էին, յայտնելով թէ այդ թերթերուն տարուիլը բացարձակապէս անկարելի կը դարձներ իրենց գործունեութիւնը: Պ.Աբեղեան այս պայմաններուն ոչ մէկը յարգեց»: Այնուհետեւ, թվարկելով առգրավված ամենակարեւոր գրքերն ու մեծարժեք ձեռագրերը, Ա.Անտոնյանը ամփոփում է. «...Նուպարեան Մատենադարանէն Պերլին տարուեցան 18 սնտուկ գիրք ու պարբերականներ... այդ սնտուկներուն մէջ կը գտնուէին 1.343 հատոր գիրքեր, որոնց 917 հատորը հայերէն եւ 423 հատորը եվրոպական լեզուներով: Նաեւ 481 հատոր կամ ծրար պարբերականներ եւ 33 հայերէն հին ձեռագրեր»:[18]

Պատերազմի ավարտից անմիջապես հետո Միությունը ձեռնարկեց բոլոր հնարավոր միջոցները Նուպարեան Մատենադարանից բռնագրավված գրքերը վերադարձնելու նպատակով: Արդեն 1947թ. Ա.Անտոնյանի՝ Ֆրանսիայի պետական տարբեր մարմիններին հղած բազմաթիվ դիմումների արդյունքում գտնվեցին եւ իրենց տերերին հանձնվեցին 444 հատոր գիրք, հաջորդ տարի՝ եւս 209 հատոր: 1947թ. օգոստոսին Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունում կազմած մի տեղեկանքից պարզվում է, որ նույն տարվա հունվարին ՀԲԸ Միությունը Նուպարեան Մատենադարանի հարցով դիմել էր նաեւ Հայաստանի կառավարությանը, խնդրելով օժանդակել գրքերը որոնելու եւ վերադարձնելու գործում: Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունը 1947թ. ապրիլի 10-ին հատուկ գրություն է ուղարկում Խորհրդային Միության Արտաքին գործերի նախարարության Մերձավոր Արեւելքի բաժնի վարիչ Սամիլովսկուն՝ խնդրելով Բեռլինում խորհրդային վարչական իշխանությունների միջոցով պարզել Նուպարեան Մատենադարանի գրքերի գտնվելու վայրը՝ հետագայում դրանք Հայաստանի Արտգործնախարարության հասցեով ուղարկելու համար: Բայց, ինչպես գրված է այդ փաստաթղթում, «Մինչ օրս մենք չենք ստացել պատասխան մեր նամակին»:[19]

Ա.Գարակյոզյանը Միության նախագահ

Ինչպես նշվել է, Փարիզում 1940թ. մայիսի 20-ին կայացած պատմական նիստում Միության Կենտրոնական Վարչությունը, ելնելով պատերազմի պատճառով ստեղծված իրավիճակից, իր բոլոր իրավասությունները կամովին փոխանցեց Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովին: Վերջինս, գիտակցելով իր պատասխանատվությունը կազմակերպության ապագայի համար, նախ եւ առաջ շարունակեց փոխանցման, հատկապես տարբեր դրամատներում Միության միջոցների հետ կապված բազմաթիվ իրավական, գույքային եւ այլ հարցերի կարգավորման գործը: Սակայն այն հանգամանքը, որ նա գործում էր լոկ փոխանորդագրի հիման վրա եւ որ Միության վարչական կենտրոնատեղին շարունակում էր մնալ գերմանացիների գրաված Փարիզը, լուրջ բարդություններ էր առաջացնում նրա լիարժեք գործունեության համար: Ակնհայտ էր նաեւ, որ պատերազմը լինելու է երկարատեւ, ինչը նույնպես թելադրում էր համապատասխան կազմակերպական որոշումների կայացում: Եվ ահա, 1942թ. հոկտեմբերի 17-18-ին առաջին անգամ Նյու Յորքում՝ «Պենսիլվանիա» հյուրանոցում հրավիրվեց ՀԲԸ Միության հերթական 30-րդ Ընդհանուր պատգամավորական ժողովը: Հրավիրագրում հստակ նշվում էր ժողովի գումարման հիմնական պատճառը. «Բրիտանական կառավարութիւնը Լոնտոնի մեր թրըսթներու եւ դրամագլուխներու հասոյթներուն կէսը վար կը դնէ իբրեւ տուրք: Պատճառն այն է որ Միութիւնս, թէեւ Զուիցերիական կազմակերպութիւն, իր գործերը կը վարէր Բարիզէն, որ հիմա թշնամիէն գրաւուած է. ուստի Միութեանս Լոնտոնի արժեթուղթերուն եկամուտը կը նկատուի թշնամիի սեփականութիւն: Այդ օրէնքին համեմատ, միայն 1941-ին վճարուած տուրքի գումարը կը հասնի 43.500 տոլարի: Լոնտոնի մեր փաստաբանները խորհուրդ կուտան որ Միութեանս Բարիզի կեդրոնին նախորդ վարիչներուն պաշտօնէ դադարումը վճռուի Ընդհ. Ժողովին կողմէ: Այն ատեն կարելի պիտի ըլլայ Միութիւնը զերծ կացուցանել տուրքի վճարումէն եւ վճարուած գումարներն ալ ետ ստանալ»:

Ընդհանուր ժողովը ընտրեց Կենտրոնական Վարչության նոր կազմ, նախկին կազմից նրա անդամներ դարձան ԱՄՆ տեղափոխված Տիգրան խան Քելեկյանը՝ որպես փոխնախագահ եւ Լեւոն Կերտանը (Կյումուշկերտան): Զարեհ Նուպարը նույնպես ընտրվեց Վարչության անդամ, սակայն, հրաժարվեց, պատճառաբանելով, թե ինքը ժամանակավոր կերպով է գտնվում ԱՄՆ-ում: Եվ ամենակարեւորը՝ ՀԲԸ Միության նախագահ ընտրվեց Միության ամենանշանավոր եւ հայտնի գործիչներ՝

Գարակյոզյան եղբայրներից ավագը՝ Արշակ Գարակյոզյանը, որը տարիներ շարունակ գլխավորում էր Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովը:

Արշակ եւ Միհրան Գարակյոզյանները ծնվել էին Կ.Պոլսում, մեծահարուստ եւ հայտնի բարերար Կարապետ աղայի ընտանիքում: 1890-ական թթ. կեսերին նրանք մեկնում են Անգլիա՝ Մանչեսթր, ուր, շարունակելով ընտանեկան ավանդույթները, զբաղվում են կտորեղենի առեւտրով: Որոշ ժամանակ անց, գործնական կապեր հաստատելով տեղի արտադրողների հետ, Արշակ Գարակյոզյանը վերադառնում է Կ.Պոլիս, իսկ Միհրանը մեկնում է Նյու Յորք՝ գորգերի առեւտրով զբաղվելու նպատակով: Այստեղ նա բացում է արեւելյան եւ այլ գորգերի մեծ խանութ, ապա՝ 1896թ. հիմնում է գորգի ամենամեծ գործարանը (A & M Karagheusian, Inc.) Նյու Ջերսիում:[20] Առաջին Աշխարհամարտի տարիներին գործարանը ամերիկյան բանակի համար արտադրում է տարբեր տեսակի համազգեստ եւ նույնիսկ որոշ սարքավորումներ: Հետագայում Միհրանը՝ իրեն մինչ այդ միացած Արշակի հետ, արագ ընդլայնում է գործունեության ասպարեզը եւ ստանում համաշխարհային ճանաչում: Տարբեր երկրներում գործարաններ հիմնելու հետ մեկտեղ (այդ թվում նաեւ Չինաստանում), Գարակյոզյան եղբայրները սեփական խանութներ են բացում Եվրոպայի, Ասիայի եւ Աֆրիկայի մի շարք երկրների խոշոր քաղաքներում: Նրանց գործարանում պատրաստած գորգերը զարդարում էին հանրաճանաչ Radio City Music Hall-ը Նյու Յորքում եւ ԱՄՆ-ի Գերագույն Դատարանի շենքը Վաշինգտոնում:

Հայության համար, սակայն, առավել կարեւոր էր եղբայրների ազգային եւ բարեգործական գործունեությունը: Արդեն նշվեց (3-րդ գլխում), որ 1922թ. Գարակյոզյան եղբայրները ստանձնեցին Նահր էլ Օմարի 150 որբերի հոգը: Եվ եթե Միհրան Գարակյոզյանի ազգային գործունեության գագաթնակետը եղավ «Հաուրդ Գարակէօզեան Հիմնադրամ»-ի հիմնումը 1921թ.՝ ի հիշատակ իր վաղամեռիկ որդու, ինչի շնորհիվ էլ բազմաթիվ դարմանատներ ու հիվանդանոցներ կառուցվեցին տարբեր երկրներում (մեր օրերում նաեւ Հայաստանում), ապա Արշակ Գարակյոզյանի համար, որպես այդպիսին եղավ ՀԲԸ Միության նախագահի պաշտոնի ստանձնումը 1942թ. Միության Ընդհանուր ժողովում:

Ժողովն առաջին իսկ օրը ընդունեց հատուկ մի բանաձեւ, որում հաստատվում էին 1940թ. մայիսի 20-ին Փարիզում կայացած նախորդ ժողովի վերոհիշյալ որոշումները, ինչպես նաեւ նորընտիր Կենտրոնական Վարչական Ժողովի, որի նստավայրն էր Նյու Յորքը, բացարձակ եւ լիակատար իրավասությունները: Այդ որոշումը անմիջապես ուղարկվեց Լոնդոնի եւ Նյու Յորքի համապատասխան դրամատներին եւ բրիտանա-

կան կառավարությանը: Դրա շնորհիվ, «Կեդր. Ժողովը ...յաջողեցաւ դրամագլուխները զերծ կացուցանել տալ 50 առ հարիւր եկամուտի պատերազմի տուրքէն, հաստատելով թէ Միութիւնը չէզոք զուիցերիական ընկերութիւն մըն է, զուտ բարեսիրական մարմին մը, որուն կեդրոնատեղին 1940էն ի վեր կը գտնուի Միացեալ Նահանգներուն մէջ: Բրիտ. Կառավարութիւնը տրուած բացատրութիւնները արդարացի գտնելով ո՛չ միայն յետ այնու այդ տուրքէն զերծ հոչակեց մեր դրամագլուխներուն եկամուտները, այլ եւ վերադարձուց այն տուրքերը որ գանձուած էին Ֆրանսայի գրաւումէն ի վեր, ինչ որ կը ներկայացներ 80.000 տոլարի նշանակելի գումար մը»:[21]

Նյու Յորք թե Փարիզ

Թեեւ այս որոշման մեջ, որպես Միության վարչական կենտրոնատեղի, հայտարարված էր Նյու Յորքը, այնուամենայնիվ, հարցի վերջնական լուծումը, կարծես, հետաձգվում էր մինչեւ Համաշխարհային պատերազմի ավարտը: Դրա մասին է վկայում, մասնավորապես, այն, որ ՀԲԸ Միության տեղեկագրում 1942թ. նորընտիր Կենտրոնական Վարչական Ժողովը ներկայացված էր որպես «...առժամեայ ...երեք տարուան համար ...»: (Մնում է միայն զարմանալ պատերազմի ավարտի վերաբերյալ նման ճշգրիտ զուգադիպության համար:) Ընդհանուր ժողովի այսպիսի զգուշավոր դիրքորոշումը կարելի է բացատրել հարցի մեծ կարեւորությամբ, ընթացող պատերազմի պայմաններում նրա վերջնական լուծման աննպատակահարմարությամբ: Բայց ոչ միայն դրանով:

Արդեն հայտնի էր, որ Միության փարիզյան ղեկավարությունը համաձայն չէր, որպեսզի պատերազմից հետո նույնպես կազմակերպության կենտրոնը տեղակայվեր Նյու Յորքում: Նման տրամադրությունները առավել հստակ դրսեւորվեցին պատերազմից հետո, հատկապես, երբ 1945թ. վերջին նախատեսվում էր Ընդհանուր ժողովը գումարել Նյու Յորքում: Վ.Մալեզյանի նույն տարվա հունիսին Փարիզում գրած եւ Միության Կենտրոնական Վարչությանը հասցեագրած հուշագրերից մեկը ամբողջովին նվիրված էր այդ հարցին:

«Ամենակարեւոր հարցը որ այս պահուս Միութեան շրջանակներուն մէջ գրաւած է խոր ուշադրութիւն,- գրում էր Վ.Մալեզյանը,- այն է թէ Միութեան վարչական կեդրոնատեղին պէ՞տք է ընդմիշտ թողուլ Նիւ Եորք; թէ ոչ ըստ առաջնոյն Բարիզ փոխադրել, կամ Գահիրէ՝ ինչպէս ոմանք կը խորհին: Այս առթիւ պէտք կը տեսնեմ յուշագրել մեր յաւէտ ողբացեալ Հիմնադիր-Նախագահ Պողոս Նուպարի մէկ ցաւագին յանկերգը, զոր զանազան պատեհութիւններով, մանաւանդ ամէն անգամ որ Միութեանս ամերիկեան «ինքօրբօրէշրն»-ի խօսքը կ'ըլլար, կը կրկնէր իր մտերիմներուն, թէ «շատ կը վախնամ որ օրին մէկը մեր Ամերիկայի բարեկամները հոն ուզեն փոխադրել Միութիւնը»: Ինք եւ իրեն պէս խորհող հիմնադիրները եւ ղեկավարներ համամիտ չէին այդ բանին, շատ մը նկատումներով, որոնց գլխաւորներն էին Ամերիկայի տարապայման հեռակայութիւնը եւ ամերիկահայութեան լայնախոհ մտայնութիւնը, որ գուցէ դժուար կը հաշտուի ՀԲԸ Միութիւնը հիմնաւորող պահպանողական սկզբունքներուն, սակաւապետական դրութեան եւ նուիրագործեալ աւանդութեանց հետ»: Թվարկելով ուրիշ այլ փաստարկներ հօգուտ Փարիզի՝ որպես կենտրոնատեղիի (ԱՄՆ-ի հեռավորությունը Հայաստանից, Մերձավոր Արեւելքից եւ Եվրոպայից, Միության քառասուն տարվա արխիվների, ներառյալ ֆինանսական փաստաթղթերի, գտնվելը Փարիզում, այնտեղ փորձառու պաշտոնեության առկայությունը եւ այլն), Վ.Մալեզյանը բերում է եւ այսպիսի մեկը. «Այսօր մեծ բարեբախտութիւն մըն է որ Նիւ Եորքի մէջ Միութիւնը ունի թանկագին առաջնորդներ յանձին Գարակէօզեաններու, Կիլպէնկեաններու (Հարություն Կյուլպենկյան՝ Միության Ամերիկայի մասնաժողովի ղեկավարներից մեկը - Էդ.Մ.), Քիւրքճեաններու, եւն., բայց անոնք տարիքոտ վեթերաններ են եւ վաղը այդ շրջավայրին մէջ շատ դժուար պիտի ըլլայ անոնց արժանաւոր յաջորդներ գտնել, որ գիտնան նոյն նուիրումը ցոյց տալ եւ նոյն ալ հաւատարմութիւնը ՀԲԸ Միութեան ոգիին, նկարագրին, կանոններուն եւ աւանդութեանց հանդէպ»:[22] Գրելով այս, Վ.Մալեզյանը, կարծես, մի կողմից հրաժարվում էր Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերի հասցեին իր իսկ կողմից բազմիցս եւ հրապարակավ արված գովասանական խոսքերից, եւ մյուս կողմից՝ անտեսում էր իր եւ Փարիզի գործընկերների՝ նույնպես «տարիքոտ վեթերանների» շարքին պատկանելու հանգամանքը:

Երբ երեք տարի անց՝ 1945թ. դեկտեմբերին Նյու Յորքում կայացած հերթական Ընդհանուր ժողովում նախկին Կենտրոնական Վարչության վեց անդամների առաջարկով քննարկման դրվեց Միության կենտրոնատեղին Փարիզ փոխադրելու հարցը, Վ.Մալեզյանը արդեն ԱՄՆ-ում էր, ուր նա գլխավորեց Միության կենտրոնական գրասենյակը: Թե որքանով այդ հանգամանքը կանխորոշեց նրա տեսակետի փոփոխումը՝ մնում է միայն կռահել: Անկնայտ էր, սակայն, որ նրա ելույթը առավել իրատեսական էր եւ զուրկ իր իսկ հուշագրին բնորոշ հուզականությունից: «Մեր պատուական նախագահին եւ Կեդր. Վարչական Ժողովի յարգելի անդամներուն հետ խորհրդակցելով, այն եզրակացութեան յանգեցանք,-

ասում էր Վ. Մալեզյանը իր ելույթում,–որ ներկայ աննպաստ հանգամանքներուն մէջ գործնական չէ արմատական փոփոխութեան ենթարկել այն վարչական իրաւակարգը զոր բացառապէս հաստատեց 1942–ին Նիւ Եորք գումարուած Ընդհ. ժողովը: Արդարեւ նկատելի է որ համաշխարհային կացութիւնը այնքան պղտոր եւ կնճռալից է որ կարելի չէ յստակօրէն տեսնել ներկան եւ հանգամանօրէն նախատեսել ապագան: Քանզի, թէեւ պատերազմը վերջ գտած է Միացեալ Ազգերու փայլուն յաղթանակովը, բայց խաղաղութիւնը դեռ շատ հեռու է վերահաստատուելէ եւ պատերազմին ստեղծած դժուարութիւնները վերջ գտած չեն բնաւ, ընդհակառակը, աշխարհի ելեւմտական գործառնութիւնները եւ արտաքին հաղորդակցութիւնները կանոնաւորուած չեն, ու մասնաւորաբար Եվրոպան եւ Մերձաւոր Արեւելքը չեն վերագտած իրենց կարգն ու կանոնը»:[23]

Իր ելույթում Վ.Մալեզյանը այլեւս չանդրադարձավ նաեւ «արժանաւոր յաջորդների» հարցին: Պետք է ենթադրել, այն պատճառով, որ այդ երկու ամիսների ընթացքում նա համոզվել էր, որ նման մարդիկ արդեն իսկ ընդգրկված էին Միության ղեկավարության կազմում: Նրանցից էր 44–ամյա Ալեք Մանուկյանը, որը սկսած 1943թ. Կենտրոնական Վարչության անդամ էր եւ որն էլ 8 տարի անց ստանձնելու էր Միության նախագահի պաշտոնը:

Վարչական կենտրոնի տեղակայման մասին որոշումը տրամաբանական ավարտն էր այն գործընթացի, որ սկսվեց 1940թ. Փարիզի Ընդհանուր ժողովում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը ՀԲԸ Միության համար դարձավ նրա պատմության մեջ «ամերիկյան շրջանի» սկիզբը: Արդյոք դա տեղի կունենա՞ր անկախ պատերազմից, եւ եթե այո, ապա որքա՞ն ավելի ուշ՝ այս եւ նման այլ հարցերին կարելի է տարբեր կերպ պատասխանել: Ամեն դեպքում, ՀԲԸ Միության կենտրոնատեղին այդուհետ դարձավ ԱՄՆ–ը՝ աշխարհի առաջատար եւ ամենազարգացած պետությունը, որը շատ շուտով դառնալու էր ողջ հայ սփյուռքի կենտրոնը:

Վ.Մալեզյանի վերոհիշյալ նոր կեցվածքը, ըստ ամենայնի, պայմանավորված էր հետեւյալ հանգամանքով: Բանն այն է, որ նույն 1945թ. Միության Ամերիկայի շրջանակը «...իբրեւ առանձին ընկերակցութիւն կազմակերպուեցաւ Ամերիկեան օրէնքով (The Armenian General Benevolent Union of America, Inc.– Էդ.Մ.), այդ կերպով տուրքէ զերծ մնաց, եւ իր բարեսիրական նպատակներուն համար դրամ տուողները իրենց եկամուտի տուրքէն կարեւոր մասով մը իրենց տուածը իրաւունք ունէին զեղչելու»:[24] Իրավական այս նոր կարգավիճակը, բնականաբար, էլ

ավելի խթանեց նվիրատվություններ անելու ամերիկահայերի պատրաստակամությունը, որոնք մինչ այդ էլ ապահովում էին Միության ֆինանսական միջոցների առյուծի բաժինը: Հարկ է նշել, սակայն, որ ՀԲԸ Միության Կետրոնական Վարչությունը, որպես դեռեւս 1924թ. Ծվեյցարիայում գրանցված, այսինքն՝ արտասահմանյան կազմակերպություն, չէր կարող նման դյուրություն ընծայել իր նվիրատուներին: Ավելին՝ 1954թ. ԱՄՆ–ի կառավարությունը ընդունեց որոշում, համաձայն որի ամերիկյան ընկերություններին, տվյալ դեպքում՝ Միության Ամերիկայի մասնաժողովին, արգելվում էր դրամ փոխանցել արտասահմանյան կազմակերպություններին, այն է՝ թե Միության Կենտրոնական Վարչությանը եւ թե մյուս մասնաճյուղերին, միաժամանակ տուրքից զուրկ պահելով իրենց նվիրաբերած գումարները: ԱՄՆ–ի կառավարության որոշումը հարցականի տակ էր դնում ՀԲԸ Միության գործունեությունը ընդհանրապես: Ստեղծված կացության մեջ Միության հերթական Ընդհանուր ժողովը կայացրեց կարեւոր որոշում, ըստ որի կազմակերպությունը, որպես իրավաբանական անձ, պետք է վերագրանցվեր ԱՄՆ–ում: Որոշումը իրագործվեց 1955թ. մարտի 29–ին, ԱՄՆ–ի Դելավեր նահանգում: Հարկ է ընդգծել, որ ստանալով «ամերիկյան քաղաքացիություն», ՀԲԸ Միությունը որեւէ փոփոխության չենթարկեց թե իր անվանումն ու կազմակերպական կառուցվածքը եւ թե հիմնական նպատակները: Դրա հետ մեկտեղ, «...միանգամայն սահմանափակ ձեւով կը պահուէր նաեւ Զուիցերական Ընկերակցութիւնը՝ գլխավորաբար Միութեան արտասահմանի (ոչ ամերիկյան–Էդ.Մ.) կալուածներուն կապակցութեամբ եւ ապագայ զանազան հաւանականութեանց ի նախատեսութիւն...»:[25]

Բայց ահա, անցնում է հինգ տարի եւ Եվրոպայի Կենտրոնական Հանձնաժողովի ղեկավարությունը, համարելով այդ որոշումները անօրինական, հրաժարվում է ճանաչել Միության Կենտրոնական Վարչության իրավասությունները, ինքն իրեն հռչակում որպես ՀԲԸ Միության ժամանակավոր վերին մարմին, ձգտելով կենտրոնատեղին տեղափոխել Փարիզ: Ավելին. «...իրենց այս ծրագիրը իրականացնելու երազով, միմիայն ինքզինքնին ցոյց կուտան իբրեւ Բարեգործականի հաւատարիմ անդամներ: Ամերիկայի մեր բոլոր կազմակերպութիւնները եւ արտասահմանի մեր միւս բոլոր շրջանակները որոնք կարեւոր պատճառներով տեղական իրաւական անձնաւորութիւն եւ մասնաւոր կանոնագիր ունին, ՀԲԸ Միութեան ընտանիքէն դուրս կը ձգեն եւ զանոնք իբրեւ օտար ընկերութիւններ կը նկատեն: Այս կերպով կ'ուզեն քուէի իրաւունքէ զրկել Միութեան գրեթէ ամբողջ զանգուածը, նոյն իրաւունքը վերապահել միայն Ֆրանսայի

մէջ մատի վրայ համրուող իրենց հետեւորդներուն եւ այդ խաղով ալ իրենց մատակարարութեան տակ ունենալ Միութեան հարստութիւնը»:[26]

Միության մասնաճյուղերի եւ անդամների բացարձակ մեծամասնությունը դատապարտեց Եվրոպայի Հանձնաժողովի ղեկավարներից ոմանց նմանօրինակ գործողությունները, որոնք, սակայն, դիմեցին էլ ավելի աննախադեպ քայլի՝ դատ բացելով Լոզանում ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության դեմ: Սպասվածի պես, դատարանը, ի վերջո, անհիմն համարեց «փարիզյան խմբակի» բոլոր հավակնությունները: Այդպիսով, վերջ դրվեց, Ալ.Մանուկյանի խոսքերով՝ «ամօթալի» դրվագին Միության պատմության մեջ, որը կարող էր հանգեցնել նրա պառակտմանը:

Հետագայում՝ 1981թ. Ընդհանուր ժողովի որոշմամբ Միության ԱՄՆ-ի շրջանակի ընկերակցությունը (Armenian General Benevolent Union of America, Inc.) ձուլվեց մայր ընկերակցության՝ ՀԲԸ Միության մեջ: ԱՄՆ-ի Միության ընկերակցության գոյության de jure դադարեցման հետ մեկտեղ, հետագա մի քանի տարիներին՝ մինչեւ 1980-ականների վերջերը, պահպանվում էր նրա ողջ կազմակերպական կառույցը, շարունակում էին հրավիրվել ԱՄՆ-ի Կենտրոնական Հանձնաժողովի տարեկան ժողովները:

Օգնություն պատերազմի աղետյալներին: ՀԲԸՄ-ը եւ Հայկական Հանձնախումբը

Արդեն ասվեց, որ հայերի համար Երկրորդ Աշխարհամարտը ուներ այն յուրահատկությունը, որ բուն Հայաստանի տարածքում պատերազմական գործողություններ տեղի չունեցան եւ երկիրը չենթարկվեց անխուսափելի ավերածությունների: Մեկ այլ առանձնահատկությունն էլ այն էր, որ պատմական ճակատագրի բերումով միայն աննշան թվով հայեր էին ապրում նացիստական Գերմանիայում եւ նրա դաշնակից երկրներում՝ Իտալիայում եւ առավել եւս Ճապոնիայում եւ հակառակը՝ սփյուռքահայության բացարձակ մեծամասնությունը ապրում էր կամ ֆաշիզմի դեմ պատերազմող Խորհրդային Միությունում, Անգլիայում, ԱՄՆ-ում եւ այլն, կամ էլ չեզոքություն պահպանող երկրներում: Ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ նացիստների գրաված եվրոպական որոշ երկրներում (Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան եւ այլն) տեղի հայ բնակչությունը անխուսափելիորեն կրում էր բազմապիսի զրկանքներ ու դժվարություններ: Դեռեւս շարունակում էր ծանր մնալ հայերի վիճակը նաեւ

Արեւելքի երկրներում, հատկապես Սիրիայում եւ Լիբանանում: Ըստ էության, հայկական սփյուռքի համակարգում միայն ԱՄՆ-ի եւ որոշ չափով Կանադայի հայությունն էր, որ մի կողմից, ուղղակիորեն ներքաշված չէր պատերազմի մեջ եւ, մյուս կողմից, տնտեսապես ի վիճակի էր օգնության հասնել Արեւելքի եւ Եվրոպայի երկրներում հաստատված իր ազգակիցներին: Եվ բնական է, որ պատերազմի սկսվելուց քիչ անց, ողջ ամերիկահայությունը, բոլոր կազմակերպությունները՝ եկեղեցին, կուսակցությունները, հայրենակցական, բարեսիրական եւ այլ միությունները, յուրաքանչյուրը իր հնարավորությունների սահմաններում լայն գործունեություն ծավալեցին այդ նպատակով: Բայց քանի որ նրանցից եւ ոչ մեկի ֆինանսական միջոցները բավական չէին անհրաժեշտ չափերով օգնություն ցույց տալու համար, նրանք դիմեցին ողջ ամերիկահայությանը՝ կազմակերպելով տարբեր տեսակի հանգանակություններ:

Նույն խնդիրն էր ծառացել նաեւ ՀԲԸ Միության առջեւ: Անցած տարիներին ամերիկյան շրջանակները Միության ծրագրերի՝ սփյուռքում եւ Խորհրդային Հայաստանում, հիմնական ֆինանսավորողներն էին: Այժմ ամերիկահայերի դերակատարությունը ստանում էր առաջնակարգ կարեւորություն, թեեւ իրենք նույնպես, որպես պատերազմող երկրի քաղաքացիներ, պարտադրված էին դիմել որոշակի զոհողությունների եւ սահմանափակումների: Պատահական չէ, որ Միության ամերիկահայ հայտնի գործիչ Աշոտ Թիրյաքյանը իր «Օրուան մեծ պարտականութիւնը» հոդվածում գրում էր.

«Ինչպէս գիտենք՝ այս պատերազմը տասնապատիկ աւելի արգահատելի ըրած է մեր հայ բեկորներուն արդէն թշուառ վիճակը տարբեր վայրերու մէջ: Երէկի քիչ թէ շատ ինքնբաւ ֆրանսահայութիւնը՝ մէկ օրէն միւսը՝ թշուառութեան մատնուած՝ օրուան հացին կարօտ վիճակի մէջ է: Ա՛լ կրնանք երեւակայել Սուրիոյ, Յունաստանի հայութեան կացութիւնը: Ասոնց ամէնուն ալ հասնիլ պէտք է եթէ ոչ տասնով՝ գոնէ մէկով երկուքով:

«Այո՝ դրամի՛ խնդիր է սկիզբէն մինչեւ վերջը: Ձանձրացա՞ք տալէ: Բայց չէ՞ք կարծեր թէ անոնք ապրելէ իսկ ձանձրացած են՝ շարունակ նպաստով օրական չոր հացի կտորի մը սպասելով: Երէկ տուինք, այսօր նորէն պիտի տանք, վաղն ալ, եւ այսպէս շարունակաբար, քանի անոնք շունչ եւ այդ հացի կտորին պէտք ունին:

«Ես տարակոյս չունիմ թէ՝ մենք որ այս երկրին օրինութիւնները կը վայելենք՝ մեզմէ սպասուած փետուրի թեթեւութեամբ օգնութիւնը պիտի հասցնենք: Մեզի պակսածը կազմակերպական մեքենականութիւնն է, որպէսզի՝ ո՛չ թէ պատահական դրամահաւաքութեան ելնենք, հապա առնուազն հարիւր հազար ամերիկահայութիւն մը շաբաթէ շաբաթ օրա-

կան 5 հատիկ սէնթի հաշուով իր տեւական մասնակցութիւնը ապահովէ թշուառութեան մէջ ինկած մեր հարազատներուն օգնելու համար»:[27]

Արդեն 1940թ. Միությունը ձեռնարկեց Պատերազմի Հայ Աղէտեալներու Օգնութեան հանգանակությունը, որը շարունակվեց եւ հաջորդ տարվա ընթացքում: Ըստ արժանվույն գնահատելով Միության նման գործունեությունը՝ 1941թ. աշնանը ԱՄՆ-ի կառավարության որոշմամբ ՀԲԸ Միությունը ազատվեց «...բարեսիրական օտար կազմակերպութիւններու դէմ դրուած սեղմումներէն...»[28] եւ հնարավորություն ստացավ էլ ավելի ընդլայնել իր աշխատանքները այդ երկրում: Հետզհետե լայն չափեր ընդունող այս հանգանակությունն ընդհատվեց 1941թ. վերջին, երբ Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովը, ընդառաջելով Ամերիկայի Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդ Գարեգին արք. Հովսեփյանի կոչին եւ ցանկանալով աջակցել ամերիկահայության միասնական ջանքերին, համաձայնվեց մեկ շրջան (1941թ. նոյեմբեր - 1942թ. հունիս) մասնակցել ավելի ընդհանուր Համազգային հանգանակությանը, որը ղեկավարելու էր առաջնորդարանի կողմից ստեղծված Հայկական Հանձնախումբը (Armenian War Relief): Ըստ պայմանավորվածության, այդ հանգանակության ընթացքում գոյացած գումարի կեսը պետք է հատկացվեր «...Խորհրդային Միութեան բանակի կարիքներուն՝ իբր հայ ժողովուրդին համակրանքին արտայայտութիւն, իսկ միւս կէսը պիտի գործածուէր Հայաստանի եւ սփիւռքի պատերազմի աղէտեալներուն, ՀԲԸ Միութեան միջոցաւ»:[29]

1942թ. դեկտեմբերի 3-ին Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովը իր տեղական մասնաճյուղերին հղեց մի շրջաբերական՝ նվիրված Հայկական Հանձնախմբի հետ իր ապագա համագործակցությանը, ուր, մասնավորապես, ասվում էր. «Ներկայ տարուան ամառնային շրջանէն ետքը, Հայկական Ցանձնախումբի Նախագահ Առաջնորդ Հօր տեղեկացուցինք գործակցութեան պայմանաժամին լրանալը, եւ շարունակելու մասին յայտնուած փափագին վրայ ալ՝ ներկայացուցինք մեր նոր պայմանները: Սակայն, երբ տեղեկացանք թէ Հայկական Ցանձնախումբը որոշած է իբրեւ Նպաստահաւաք Մարմին արտօնագիր ստանալ, եւ՝ ցորչափ պատերազմը տեւէ՝ շարունակել իբրեւ ուրոյն կազմակերպութիւն, Կեդրոնով եւ Մասնաճիւղներով, Նախագահ Սրբազան Հօր ներկայացուցինք նոյեմբեր 27-ի մեր վերջին Բացառիկ Նիստին հետեւեալ որոշումը:

«Նկատելով որ ՀԲԸ Միութիւնը տարիէ մը ի վեր դադրեցուցած էր ի նպաստ Պատերազմէ Աղէտելոց իր ժողովրդական Հանգանակութիւնը, չի խաչաձեւելու համար Հայկական Ցանձնախումբին սկսելիք Հանգանակութիւնը:

«Նկատելով որ Առաջնորդ Սրբազան Հօր եւ Կեդրոնական Ցանձնաժողովիս միջեւ եղած այդ հասկացութիւնը մէկ տարուան համար էր միայն:

«Նաեւ նկատելով որ Հայկական Ցանձնախումբը այժմ որոշած է իր գործունէութիւնը շարունակել զատ արտօնագրով եւ ինքնուրոյն կազմակերպութեամբ:

«Կեդր. Ցանձնաժողովս կ'որոշէ վերսկսիլ Պատերազմէ Աղէտելոց Հանգանակութեան գործը»:[30]

Միության նման որոշումը անսպասելի չէր, եթե հաշվի առնենք, որ դեռեւս 1941թ. վերջին, երբ նոր էր սկսվում Հայկական Հանձնախմբի աշխատանքը, ըստ որոշ տեսակետների, հանգանակած միջոցները Ռուսական նպաստամատույցի (Russian War Relief) միջոցով պետք էր ամբողջությամբ հատկացնել Խորհրդային Միությանը: Այն ժամանակ, սակայն, հաղթեց՝ նաեւ Միության ջանքերի շնորհիվ, նախապես որդեգրած որոշումը, որի համաձայն, միջոցների կեսը պետք է հատկացվեր հայ աղետյալներին՝ Խորհրդային Հայաստանում եւ սփյուռքում: Այժմ, երբ Հայկական Հանձնախումբը դառնում էր ինքնուրույն, արտոնագրված կազմակերպություն, նրա հետ համագործակցելիս ՀԲԸ Միությունը հարկադրված կլիներ ենթարկվել նրա բոլոր որոշումներին: Նման հեռանկարը չէր կարող հրապուրել Միությանը, նկատի առնելով, մի կողմից, ինքնուրույնություն պահպանելու նրա մշտական ձգտումը, իսկ մյուս կողմից՝ նրա պարտավորությունները հայ աղետյալների հանդեպ: Որոշման ճշտությունը հաստատեց Հայկական Հանձնախմբի լուծարումը, որի պատճառը Երեւանից եկած ազդակներն էին:

Պատերազմի սկզբնական շրջանի ծանր պարտություններից հետո Ի.Ստալինը, ձգտելով էլ ավելի ուժեղացնել ժողովրդի, նախ եւ առաջ ռուս ժողովրդի հայրենասիրական զգացմունքները, դիմեց տարբեր միջոցների, այդ թվում նաեւ եկեղեցու օգնությանը: Գերմանիայի հետ պատերազմը սկսվելուց քիչ անց դադարեցվեցին հակակրոնական քարոզչությունը, աթեիստական հատուկ պարբերականների հրատարակումը եւ այլն: Այն բանից հետո, երբ Ռուս ուղղափառ եկեղեցուն թույլատրվեց հավատացյալների մեջ կազմակերպել հանգանակություններ՝ ի նպաստ Կարմիր բանակի, Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը Հայաստանի ղեկավարության համաձայնությամբ, 1943թ. հունվարի 20-ին հեռագիր է հղում Ստալինին. «Կատարելով իմ պարտքը հայրենիքի հանդեպ, աղոթում եմ Ամենաբարձրյալին՝ սովետական զենքի հաղթության համար, փառապանծ Կարմիր բանակի հզորությունն էլ ավելի ուժեղացնելու եւ թշնամու վերջնական ջախջախումն

արագացնելու համար: Էջմիածնի կաթողիկոսարանը «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու ֆոնդին հատկացնում է ադամանդներով զարդարված մի թանկարժեք պանակ եւ այլ թանկարժեք իրեր՝ պլատինից եւ ադամանդներից՝ ավելի քան 850 հազար ռուբլու արժողությամբ, 1000 անգլիական ֆունտ ստերլինգ եւ 50 հազար ռուբլի: Խնդրում եմ Ձեր կարգադրությունը ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բացելու մասին: Միաժամանակ, հատուկ կոնդակով դիմում եմ աշխարհիս բոլոր հավատացյալ հայերին, որ իրենց խնայողություններով մասնակցեն «Սասունցի Դավիթ»-ի անվան տանկային շարասյան կառուցմանը»:[31]

Ստալինը, ինչպես եւ սպասելի էր պատերազմող երկրի ղեկավարից, պատասխանեց շատ արագ՝ վեց օր անց. «Խնդրում եմ իմ ողջույնը եւ Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հոգեւորականությանը, որ միջոցներ է մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար: ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բանալու համար ցուցում է տրված: Ի.Ստալին»:[32]

1943թ. փետրվարի 2-ին, Գեւորգ արք. Չորեքչյանը դիմեց հայ հավատացյալ ժողովրդին՝ կոչ անելով մասնակցել նշված հանգանակությանը: Մասնավորապես, դիմելով սփյուռքահայությանը, նա գրում էր. «Առավել եւս դու՝ արտասահմանի հայություն, նամանավանդ Ամերիկայի հայեր, որ ազատ եք մնացել ահեղ պատերազմի արհավիրքներից եւ Մայր երկրի ձեր հարազատ եղբայրների ապրումներով եք տառապել ու նրա մղած ազատագրական պատերազմի հաջողության համար մինչեւ այժմ չեք խնայել նյութական ու բարոյական աջակցությունը Կարմիր բանակին եւ Մայր երկրի որբացյալ ընտանիքներին, վստահ եմ, որ այժմ էլ, ձեր առատ նվերներով կնպաստեք թշնամու շուտափույթ ջախջախմանն ու վտարմանը մեր երկրից»:[33]

Մոտ մեկ ամիս անց, Նյու Յորքում Գարեգին արք. Հովսեփյանի նախագահությամբ կազմավորվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան հանգանակության հանձնաժողովը, իսկ Համազգային հանգանակություն կազմակերպող Հայկական Հանձնախումբը լուծարվեց:

ՀԲԸ Միությունը, թեեւ մինչ այդ վերսկսել էր իր հանգանակությունը, այնուամենայնիվ, արձագանքեց նաեւ հայ եկեղեցու առաջնորդների կոչին: Այսպես, Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովի անդամ, ամերիկյան բանակի կապիտան Ջիմ Չանգալյանը արդեն մարտ ամսին հատուկ կոչով դիմեց Հայկական Լեգեոնի իր մարտական ընկերներին. «Եկած է ժամանակը որ անգամ մ'ալ սկսինք մեր յառաջխաղացումը, լրացնենք այն կռիւը որ մղեցինք Արարատի գագաթը, Կիլիկիոյ լեռներուն եւ Կովկասի բարձունքներուն վրայ: ...Թէեւ այսօր հազարաւոր մղոններ հեռու կը գտնուինք այդ նուիրական վայրերէն եւ չենք կրնար մասնակցիլ կռիւին անձամբ, սակայն հոն անոնց մօտ մեր եղբայրները կը շարունակեն մեր կռիւը եւ մեզմէ զէնք կը խնդրեն»: Այնուհետեւ, խոսելով «Սասունցի Դավիթ» հանգանակության կազմակերպման մասին, նա գրում էր. «Կոչ կ'ընեմ իմ բոլոր Լեգէոնական ընկերներուս որ իւրաքանչիւր տեղի մէջ իրարու քով գան եւ օգնեն այս Յանձնախումբերուն»:[34]

Բայց եւ այնպես, ՀԲԸ Միությունը, չնայած իր մշտական եւ իրական մասնակցությանը այդ բոլոր հանգանակություններին, ինչպես եւ անցյալում, այս դեպքում նույնպես քննադատության թիրախ էր դառնում տարբեր, նույնիսկ իրարամերժ հայ քաղաքական շրջանակների համար: Այդ առիթով Միության պաշտոնաթերթ «Յուշարար»-ը գրում էր. «...երբ ուզեցինք Կարմիր Բանակին հերոսական մարտնչումին հանդէպ մեր հիացումն ու սրտագին համակրութիւնը յայտնել մեր համեստ լուման մատուցանելով, ոմանք զայն որակեցին անհարկի ժէսթ եւ մխում ազազուն նիւթական ուժերու, իսկ ուրիշներ ուզեցին որ այդ յաւէտ բարոյական իմաստ ունեցող ժէսթը դառնար ազգային բովանդակ ու ծայրագոյն զոհաբերութեան արտայայտութիւն, կարծես Կարմիր Բանակի յաջողութիւնը եւ մեր ցեղին լինել չլինելու հարցին լուծումն ու ճակատագիրը կախուած ըլլային մեր զոհաբերութէնեն, որ (եթէ հնար իսկ ըլլար քամել բովանդակ ազգին նիւթական հարստութիւնը)՝ Կարմիր Բանակի օրուան մը կարիքը չէր կրնար հոգալ ...նոյն իսկ պակաս չեղան առաջնորդի պիտակը վրանին մարդիկ որ չի դատապարտէին ՀԲԸ Միութիւնը որովհետեւ ան իր ամբողջ գանձը չէր տրամադրեր Կարմիր Բանակի Հանգանակութեան... Միեւնոյն երեւոյթը կրկնուեցաւ Հրասայլի Հանգանակութեան առթիւ, անպատասխանատու եւ խելառ ամբաստանութիւններով եւ հակամբաստանութիւններով, մէկ խմբաւորում մը խծբծելով եւ քամահրելով այս ժէսթին բարոյական նշանակութիւնը (ինչպէս ըրած էին Կարմիր Բանակի Հանգանակութեան առթիւ), իսկ ուրիշ խմբակ մը՝ հագցնելով անոր ռազմական արժէք մը որ կրնար ծառայել միայն մեզ ծիծաղելի դարձնելու՝ մեր անսահման հաւակնութեան մէջ»:[35]

Թեեւ «Յուշարար»-ը չէր տալիս այդ քննադատների անունները, ակնհայտ է, սակայն, որ խոսքը հայ ազգային կուսակցությունների՝ մի կողմից Դաշնակցության, իսկ մյուս կողմից՝ Հնչակյան եւ Ռամկավար-Ազատական կուսակցությունների մասին էր: Նրանց միջեւ եղած տարաձայնությունների հիմքում դիրքորոշումն էր Հայաստանի խորհրդային իշխանությունների հանդեպ: Պատերազմի տարիներին, Դաշնակցությունը, իր բոլոր վերապահումներով հանդերձ, այնուամենայնիվ, ստիպված էր

որոշակիորեն խմբագրել եւ մեղմել իր քաղաքականությունը Խորհրդային Միության եւ Հայաստանի հանդեպ:

Իրենց կողմից, Հնչակյան եւ Ռամկավար-Ազատական կուսակցությունները, օգտվելով ԱՄՆ-ի եւ Խորհրդային Միության միջեւ դաշնակցային հարաբերությունների հաստատումից, առավել հստակ դրսեւորեցին իրենց աջակցությունը խորհրդահայ իշխանություններին: Նման դիրքորոշումը մեծապես պայմանավորված էր նաեւ նրանով, որ այդ շրջանում Մոսկվան ուղղակի եւ անուղղակի ձեւով սկսել էր արծարծել Թուրքիայի մաս կազմող՝ հայկական տարածքները վերադարձնելու հարցը: Քաղաքական նպատակների ընդհանրության հիմքի վրա այդ նույն տարիներին սկսվեց նշված երկու կուսակցությունների համագործակցությունը նաեւ Ամերիկահայ առաջադիմական միության (Պրոգրեսիվ լիգա)՝ տեղի հայ կոմունիստների կողմից ղեկավարվող խորհրդամետ կազմակերպության հետ, որի արդյունքում 1944թ. սկզբին ստեղծվեց Ամերիկահայ Ազգային Խորհուրդը: (Հենց այդ Խորհուրդն էլ երեք տարի անց Նյու Յորքում հրավիրեց Հայկական Համաշխարհային Կոնգրեսը, որի մասին կխոսվի ստորեւ):

Ազգային Խորհուրդը, չնայած Դաշնակցությունը հրաժարվեց նրան անդամակցելուց, հավակնում էր ներկայացնել ողջ ամերիկահայությունը, ինչը խիստ ցանկալի էր դարձնում ՀԲԸ Միության՝ ամենահեղինակավոր եւ գործունյա կազմակերպություններից մեկի մասնակցությունը: Միությունը, սակայն, հրաժարվեց անդամակցել Ազգային Խորհրդին եւ քանի որ իր այդ որոշումը կարող էր մեկնաբանվել տարբեր կերպ, անհրաժեշտ համարեց հանդես գալ հատուկ հայտարարությամբ: Հիշեցնելով, որ Միությունը՝ համաձայն իր կանոնագրի առաջին հոդվածի, մարդասիրական հաստատություն է եւ որեւէ քաղաքական հանգամանք չունի, Կենտրոնական Վարչությունը նշում էր. «Ազգային ժամանակաւոր Միութեան կամ Խորհուրդի կանխաւ ծրագրած չորս կէտերէն վերջին երկուքը իսկութեան մէջ քաղաքական են: Ահաւասիկ այդ կէտերը. «3. Պաշտպանել տարագիր հայերու իրաւունքները հարկ եղած բոլոր միջոցներով, եւ աշխատիլ ի խնդիր անոնց Հայկական հողի վրայ վերաբնակեցման»: Նաեւ «4. Նախաձեռնել ձեռնարկներ՝ որոնք ժամանակի ընթացքին անհրաժեշտ կրնան ըլլալ ներգաղթի շարժումի մը օգնելու համար»: Որչափ ալ մեր սիրտերուն մօտիկ ըլլան այդ նպատակները, սակայն, անոնց քաղաքական հանգամանքը մաս չկազմեր մեր ծրագրին, թէեւ նիւթական օժանդակութիւնը Միութիւնս ըրած է անցեալին մէջ եւ սիրով պիտի ընէ միշտ»: Կար մեկ պատճառ եւս. «Միութիւնս Անգլիոյ եւ Միացեալ Նահանգաց մէջ պաշտօնապէս ճանչցուած է իբր բացառիկ առանձնաշնորհներ վայելող մարդասիրական հաստատութիւն մը, եւ այս երկու երկիրներու մէջ տուրքէ զերծ կացուցուած է եւ Հանգանակութիւն ընելու լիազօրուած է: Հետեւաբար, ստիպուած է ամսէ ամիս մեր Կառավարութեան ներկայացնել իր նպաստամատոյց գործին աղբիւրներուն եւ յատկացումներուն մանրամասն հաշիւները: Միութեանս եւ անոր նպաստամատոյց կարեւոր գործին բարեկամները, վստահ ենք թէ, պիտի չփափագէին որ որեւէ պատճառաւ ան զրկուէր իր վայելած այդ առանձնաշնորհումներէն»:[36]

Հարաբերությունների վերահաստատումը Խորհրդային Միության հետ

ՀԲԸ Միության այդ տարիների դիրքորոշումը հասկանալու համար կարեւոր է նկատի ունենալ մի հանգամանք եւս: Պատերազմի տարիներին Խորհրդային Միության եւ ԱՄՆ-ի, Անգլիայի ու այլ երկրների միջեւ դաշնակցային հարաբերությունների հաստատումը, ամեն բանից զատ հայկական սփյուռքի, մանավանդ ամերիկահայության համար բացառիկ հնարավորություն էր Խորհրդային Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ իրենց համակրանքն ու օժանդակությունը դրսեւորելու համար: Երկու տասնամյակ զրկված լինելով Հայաստանի հետ հարաբերվելու իրավունքից, այժմ՝ իրենց անվերապահ աջակցությամբ խորհրդային բանակին եւ խաղաղ բնակչությանը, նրանք, կարծես, ցանկանում էին առիթ տալ Խորհրդային Միության իշխանություններին՝ վերանայել իրենց քաղաքականությունը սփյուռքահայության հանդեպ: Եթե այսպիսին էր ընդհանրապես սփյուռքի, ամենատարբեր կազմակերպությունների դիրքորոշումը, ապա ՀԲԸ Միության պարագայում այն ուներ որոշ առանձնահատկություններ: Նախ, Միությունը շարունակում էր իրագործել իր ծրագրերը գաղթականների բազմապիսի կարիքները հոգալու նպատակով, որոնք այնչափ հրատապ էին, որ նույնիսկ ընթացող պատերազմը անկարելի էր դարձնում նրանց գեթ ժամանակավոր դադարեցումը: Մյուս կողմից, Միության կարեւորագույն խնդիրն էր դառնում օգնությունը Խորհրդային Հայաստանի ժողովրդին եւ աղետալի վիճակում հայտնված հայությանը՝ գերմանացիների գրաված երկրներում: Այս ամենի հետ մեկտեղ, Միությունը՝ ի տարբերություն մնացած բոլոր սփյուռքահայ կազմակերպությունների, ցանկանում էր ոչ թե սոսկ հարաբերություններ հաստատել Խորհրդային Հայաստանի հետ, այլ հենց իսկ վերահաստատել իր շուրջ 14-ամյա հարաբերությունները, հնարավորություն ստանալ շարու-

նակել եւ զարգացնել հայաստանյան իր ծրագրերը: Թե Խորհրդային Հայաստանի հետ իր համագործակցության պատմությունը եւ թե սփյուռքում իր բարձր հեղինակությունն ու դիրքը, պարտավորեցնում էին նրան հանդես գալ ինքնուրույն եւ առավել շոշափելի նախաձեռնություններով:

1942թ. հոկտեմբերին Նյու Յորքում կայացած Միության 30-րդ Ընդհանուր ժողովում ընդունված որոշումներից մեկը ամբողջությամբ վերաբերում էր Խորհրդային Հայաստանին. «Ընդհ. Ժողովս իր սիրազեղ զգացումներն ու եղբայրական ողջոյնները կը մատուցանէ Հայաստանի Կառավարութեան եւ ժողովուրդին, որ հասարակաց թշնամիին դէմ հերոսական կռիւ կը մղեն, Խորհրդային Միութեան փառապանծ դրօշին ներքեւ: Ժողովս ջերմապէս կը մաղթէ ջախջախիչ յաղթանակ մը՝ որ վերջնականապէս ապահովէ գերեալ ազգերուն ազատութիւնը, եւ Հայաստանի ինչպէս եւ համայն աշխարհի տեւական խաղաղութիւնը: Սոյն իմաստով հեռագրել իրենց, նոյնպէս Ուաշինկթոնի Դեսպան Լիթվինօֆի, եւ առիթէն օգտուելով խնդրել որ նորընտիր Կեդրոնական Վարչութեան կողմէ Պատուիրակութիւն մը ընդունի՝ որպէսզի Խորհրդային Միութեան եւ Բարեգործականի յարաբերութեան խնդիրները վերահաստատուին»:[37]

ԱՄՆ-ում Խորհրդային Միության դեսպան Մ. Լիտվինովի հետ Միության պատվիրակության հանդիպումը կայացավ երկու ամիս անց, հաջորդ՝ 1943թ. հունվարի 4-ին: Հայաստանի կառավարության 1937թ. դեկտեմբերի 8-ի հայտնի որոշումից հետո սա Միության առաջին հանդիպումն էր խորհրդային իշխանությունների հետ, ուստի եւ Կենտրոնական Վարչության անդամներ Լեւոն Կերտանը եւ Մարտիք Պալիոզյանը նախ ներկայացրին դեսպանին Խորհրդային Հայաստանում ՀԲԸ Միության իրագործած ծրագրերը, որոնց ընդհանուր արժեքն էր շուրջ 1.200.000 դոլար: Այնուհետեւ պատվիրակները հայտնեցին իրենց փափագը՝ դրամական առաքումներով պարբերաբար օգնել Հայաստանի ժողովրդին եւ հաստատություններին: Հանդիպումից մի քանի օր անց Միությունը դեսպան Մ.Լիտվինովին տեղեկացրեց, որ պատրաստ է 25.000 դոլար տրամադրել Հայաստանին, հատկապես իր իսկ հիմնած հաստատություններին: Մեկ ամիս անց Միությունը ստացավ դեսպանի պաշտոնական նամակը.

«Ձեր Ցունուար 8 թուակիր նամակին եւ մեր նախապէս ունեցած տեսակցութեան համաձայն՝ հարկ եղած դիմումը ըրած ըլլալով՝ ի վիճակի եմ ձեզ հաղորդելու թէ իմ Կառավարութիւնս յօժարակամ է ընդունելու ձեր 25.000 տոլարը՝ Սովիէթ Հայաստանի այլեւայլ Հաստատութեանց յատկացուելու համար, ինչպէս նաեւ ուրիշ յատկացումներ՝ նոյն նպատակաւ: Կը զգամ թէ Սովիէթ Հայաստանի ժողովուրդը ջերմապէս պիտի

գնահատէ ձեր օժանդակութիւնը»:[38] Այս նամակը ստանալուց տասն օր անց Միությունը Մ.Լիտվինովին ուղարկեց 25.000 դոլարի չեք, խնդրելով այդ գումարից հատկացնել Երեւանի Պետհամալսարանին, Մարի Նուպար ակնաբուժարանին, Դարուհի Յակոբեան մայրանոցին եւ «կարօտեալներու ու ուսուցիչներու համար, Հայաստան»: Եվս երեք օր անց հետեւեց դեսպանի պատասխանը, որում հայտնվում էր, որ գումարը «...ուղարկած ենք Մոսկուա, փոխադրուելու համար Երեւան, եւ բաշխուելու ըստ ձեր փափագանաց»:[39]

Հետագա ամիսների ընթացքում Միությունը նույն նպատակների համար կատարեց եւս երկու դրամական առաքում Հայաստան՝ որոնցից վերջինը դեկտեմբերին՝ Խորհրդային Միության նոր դեսպան Անդրեյ Գրոմիկոյի (հետագայում՝ Խորհրդային Միության Արտաքին գործերի նախարար) միջոցով: Միությունը, քաջալերված Հայաստանի հետ իր կապերի վերահաստատումով, ձգտում էր ընդլայնել իր օժանդակությունը հայ ժողովրդին: 1944թ. նա Հայաստան է ուղարկում մեծ քանակությամբ զանազան հագուստեղեն (բրդյա ծածկոցներ, վերարկու, գուլպա եւ այլն), ինչպես նաեւ դեղորայք՝ մոտ 105.000 դոլար ընդհանուր արժեքով: Ընթացող պատերազմի այդ օրերին Հայաստանի հետ նամակագրական եւ որեւէ այլ կապի բացակայության պայմաններում Միությունը ի վիճակի չէր տեղեկանալու նշված գումարների եւ ապրանքների ստացման մասին եւ նրան մնում էր միայն բավարարվել դեսպանների հավաստիացումներով:

Քառորդ միլիոնի հանգանակությունը

1943թ. նոյեմբերի 20-ին Նյու Յորքում գումարված ՀԲԸ Միության հերթական 31-րդ Ընդհանուր ժողովը ընդունեց որոշում «Համազգային եւ Համաշխարհային» նոր հանգանակություն կազմակերպելու մասին, համաձայն որի, Հյուսիսային եւ Հարավային Ամերիկայի երկրներում Միության տեղական կազմակերպությունների կողմից պետք է հանգանակվեր 250 հազար դոլար, իսկ Եգիպտոսի Կենտրոնական Հանձնաժողովի շրջանակի երկրներում (Եգիպտոս, Իրաք, Իրան, Հնդկաստան, Սիրիա եւ Լիբանան, ինչպես նաեւ Անգլիա, Կիպրոս եւ այլն)՝ եւս 110 հազար դոլար: Ամերիկայում «Քառորդ միլիոն տոլարի հանգանակութեան» ընթացքում հավաքված գումարը նախատեսվում էր հատկացնել՝

«Խորհրդային Հայաստանին - Հանգանակութեան արդիւնքին կէսը՝ ի նպաստ պատերազմի աղէտելոց եւ բժշկական ու հիւանդանոցային հոգածութեան:

«Եվրոպա - Նպաստ պատերազմի աղէտելոց՝ Ցունաստան, Ֆրանսա, Պալքանեան երկիրներ:

«Սուրիա եւ Լիբանան - Նպաստ գաղթականաց, Տիւրոսի եւ Գարատուրանի տնազուրկներուն 100 տուներու, հակաջերմախտային արշաւի, 80 դպրոցներու օժանդակութեան, բժշկական դարմանատանց, որբանոցներու եւ կաթի ֆոնտի համար:

«Հիւանդանոցներու - նաեւ Այնճարի մէջ հիւանդանոցի մը կառուցման»:[40]

Սկզբից եւեթ փորձ էր արվում ներկայացնել հանգանակությունը ոչ թե որպես զուտ ՀԲԸ Միության, այլ ողջ ամերիկահայության ձեռնարկ: Դիմելով վերջինիս հայրենասիրությանն ու ազգային ինքնասիրությանը՝ «...հայը ուրիշներուն նպաստին սպասող ժողովուրդ չէ...», «...ցիրուցան հայութիւնն ալ կրնայ գործել միակամ եւ միանպատակ...», միեւնույն ժամանակ Միությունը, հիշեցնելով, որ Հայկական Հանձնախմբի եւ «Սասունցի Դավիթ» հանգանակությունների հաջողությանը նպաստելու համար ինքը դադարեցրել եւ չէր ձեռնարկել սեփական հանգանակություններ, բարոյական իրավունք էր վերապահում իրեն «...սպասել մեծ ու փոքր հայ կազմակերպութիւններէն որ նոյն լայն ոգիով նային այս համագաղութային ճիգին, որուն արդիւնքը անմիջական եւ վաղուան մեծ կարիքներուն պիտի հատկացուի ամբողջովին»:[41]

Հանգանակության հաջող ընթացքի համար կարեւոր եղավ Ամերիկահայ թեմի առաջնորդ Գարեգին արք. Հովսեփյանի անվերապահ աջակցությունը, որը Միությանը հղած իր նամակում, մասնավորապես, գրում էր. «Այս ձեռնարկութիւնը, ինչպէս եւ Բարեգործականի բոլոր ձեռնարկութիւններն ու գործունէութիւնը, մեր ամենուն սրտին մօտ է ազգային եւ քրիստոնէական տեսակէտներով...»:[42]

Առավել կարեւոր էր, սակայն, Միության ղեկավար գործիչների, ներառյալ Կենտրոնական Վարչական Ժողովի անդամների, ակտիվ մասնակցությունը ոչ միայն իրենց հանգանակած մեծաթիվ գումարներով, այլեւ իրենց անձնական մասնակցությամբ ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում կազմակերպվող ժողովներին ու հանդեսներին: Քարոզչության նման՝ ամերիկյան ձեւը, մեծապես նպաստեց թե հանգանակության հաջող ընթացքին եւ թե Միության հեղինակության բարձրացմանը ամերիկահայության մեջ: Միության գրեթե բոլոր մասնաճյուղերի աշխույժ գործունեության պայմաններում առանձին մասնաճյուղեր առանձնանում էին իրենց առավել արդյունավետ գործելակերպով:

Հատկանշական էր այդ առումով Դետրոյտի մասնաճյուղը: Այստեղ մասնաճյուղի ատենապետ Ալեք Մանուկյանի ջանքերով կազմվել էր

ներկայացուցչական հանձնախումբ, որի պատվո նախագահներն էին տեղի Հայ Առաքելական եւ Ավետարանական եկեղեցիների առաջնորդները եւ որին՝ ՀԲԸ Միության Արանց, Տիկնանց եւ Երիտասարդաց մասնաճյուղերից բացի, անդամակցում էին քաղաքի Հայ Առաքելական եկեղեցու Տիկնանց Եկեղեցասերը, Հայաստանյայց եկեղեցու Երիտասարդ Տիկնանց Միությունը, Հայ Ժողովրդական եկեղեցու Տիկնանց Օժանդակը, Եկեղեցաշինաց Միությունը եւ այլն, ինչպես նաեւ ողջ հայ բնակչությունը ներկայացնող մեծ թվով ճանաչված, հեղինակավոր անհատներ: Դետրոյտի հանձնախմբի աշխատանքը այնքան արդյունավետ էր, որ Միության պաշտոնաթերթը անհրաժեշտ համարեց ներկայացնել այն հատուկ հոդվածով. «Միութեանս ուրիշ Մասնաճիւղերուն եւ համայնքներու իբրեւ օրինակ՝ հարմար դատեցինք բացատրել Տիթրոյթի ժողովրդական Ցանձնախումբին կազմութիւնը, որ ներկայացուցչական է եւ համագաղութային»:[43]

Հանգանակության ճիշտ եւ հաջող կազմակերպման մասին էր վկայում նաեւ այն, որ ԱՄՆ-ի եւ Կանադայի մի շարք քաղաքներում մասնակիցների թվում էին նաեւ Դաշնակցության անդամները: Այսպես, Տորոնտոյում «...դաշնակցական անհատներ եւս ներկայ էին եւ մասնակցեցան Հանգանակութեան՝ երբ լսեցին ընդհանուր կոչը որ կ'ըլլար հայութեան, առանց դաւանանքի եւ կուսակցական խտրութեան»:[44]

1944թ. հոկտեմբերի 1-ին Նյու Յորքում տեղի ունեցավ ՀԲԸ Միության Քառորդ միլիոն դոլարի հանգանակության վերջին հրապարակային ժողովը: Ժողովի կազմակերպիչների (ատենապետությամբ հատուկ այդ նպատակով Դետրոյտից հրավիրված Ալեք Մանուկյանի) ջանքերով այն թե իր մասնակիցներով եւ թե բովանդակությամբ տեղի հայության կյանքում դարձավ տարվա ամենանշանավոր իրադարձությունը: Ամերիկահայ մշակույթի պատմության առումով հիշատակման արժանի է, որ հանդեսի գեղարվեստական բաժնի մասնակիցներից էր այն ժամանակ դեռ երիտասարդ, իսկ հետագայում աշխարհահռչակ երաժիշտ Ալան Հովհաննեսը՝ իր հեղինակած «Վարազ», «Մազերդ նման ոեհանի», «Արշալույս» եւ այլ ստեղծագործությունների կատարմամբ: Ժողովին առանձնահատուկ կարեւորություն էր հաղորդում Նյու Յորքում Խորհրդային Միության Գլխավոր հյուպատոս Եւգ.Կիսելյովի եւ փոխհյուպատոս Ս.Ապրեսյանի ներկայությունը: Բարձրաստիճան դիվանագետների ներկայությունը վկայությունն էր այն բանի, որ ՀԲԸ Միությունը վերստին վայելում էր Խորհրդային Միության հարգանքն ու վստահությունը եւ դիտվում որպես հուսալի գործընկեր, ինչը, իր հերթին, ճնարավոր էր դարձնում գործնական հարաբերությունների վերահաստատումը Հայաս-

տանի հետ: Ակնհայտ էր նաեւ, որ դրան նպաստող հանգամանքների շարքում կարեւոր դեր խաղաց հենց իսկ Քառորդ միլիոնի հանգանակության հաջող կազմակերպումը: «...Ջեռնարկին յաջողութիւնը,- գրում էր Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովի վարիչ-տնօրեն Երվանդ Մեսիայանը,- որոշ ճամբայ բացաւ ՀԲԸ Միութեան ղեկավարութեան առջեւ: Այս ճամբան ՀԲԸ Միութիւնը պիտի առաջնորդէ դէպի Խորհ. Հայաստան՝ եւ անհրաժեշտ պիտի դարձնէ որ ՀԲԸ Միութիւնն անքակտելի եւ զօրաւոր կապերով կապուի Խ. Հայաստանի կառավարութեան հետ, աստիճանաբար իրականացնելով այն հեռատես եւ հայրենասիրական քաղաքականութիւնն, որուն՝ Նուպարաշէնի հիմնարկութեամբ՝ առաջին գործնական արտայայտութիւնը տուաւ Պօղոս Նուպար Փաշա, երբ պետական գիտակցութեամբ անիկա իր քաղաքական իրատեսութիւնը հաստատեց սա հիմնական մտածումին վրայ՝ թէ հայկական պետութեան տակ եւ հայկական հայրենիքին մէջ միայն՝ ազգին կրած աղէտներէն վայրավատին դարձած հայ ժողովուրդին տառապող զանգուածներն իրենց տեւական ապահովութիւնն ու բարօրութիւնը պիտի գտնէին»:[45]

ՀԲԸ Միության այս ժողովը ուշադրության արժանի է նաեւ այնտեղ հնչած ելույթների առումով: Միության վետերան, Կենտրոնական Վարչության բազմամյա անդամ Լեւոն Կերտանը իր ելույթում Միության օրինակի վրա, դասակարգային պայքարի սկզբունքին հակադրեց դասակարգային համերաշխության եւ համագործակցության թեզը: «Հպարտ եմ մտածելով թէ ՀԲԸ Միութիւնն հիմնողներու, անոր համար զանազան Կեդր. Խորհուրդներու եւ Շրջանային ու տեղական Ցանցնաժողովներու մէջ աշխատողներու հսկայ մեծամասնութիւնը,- ասում էր նա,- օրինակելի Պուրժուաներ եղած են եւ են: Միշտ յուզումով պիտի յիշեմ որ այն պահուն երբ դրամատիրական ընկերութիւնը դէմ կանգնած էր Սովիէթներու, երբ տգէտ ու ստրուկ մամուլ մը կը ջանար խեղաթիւրել ինչ որ կը կատարուէր Ռուսական սահմաններէն ներս եւ արտասահմանի մէջ ալ կարգ մը հայեր կը շարունակէին մեզի դէմ պայքարիլ, Պօղոս Փաշա եւ իր գործակիցները, որոնց ամենակրտսերներէն մէկն էի ես, երբեք չտատամսեցան Խորհրդային Հայաստանի օգնելու եւ իրենց գործերով ու խօսքերով ապացուցանելու թէ գիտէին ճանչնալ Մոսկուայի կառավարութեան մեր հայրենակիցներուն մատուցած անհաշուելի ծառայութիւնները, մինչ միւս բոլոր պետութիւնները հայերն իրենց տխուր բախտին լքած էին: Ներկայիս, աշխարհ իր կարծիքը փոխած է Ռուսիոյ մասին, կոյրերու եւ թշնամի գործակալներու փոքրամասնութիւն մը միայն կը շարունակէ հակա-Խորհրդային բրօփականտը սնուցանել»:[46]

Լ.Կերտանի այս խոսքերը առավել մեծ իմաստ էին ստանում, հաշվի առնելով դասակարգային անհաշտ պայքարի սկզբունքը որդեգրած Խորհրդային Միության պաշտոնական ներկայացուցիչների ներկայությունը: Հիշեցնելով նախորդ տարիներին ՀԲԸ Միության դիրքորոշումը Խորհրդային Միության հանդեպ՝ Լ.Կերտանը, դրանով իսկ, երաշխավորում էր ՀԲԸ Միության «պուրժուա» ղեկավարների պատրաստակամությունը հետագայում նույնպես նպաստել Խորհրդային Հայաստանի զարգացմանը: «Որպէսզի ՀԲԸ Միութիւնը կարողանայ այս դերը շարունակել, եւ առաւելագոյն չափով Հայաստանին օգնել,- դիմելով հյուրերին, ասել էր Լ.Կերտանը,- անիկա պէտք ունի ձեր օժանդակութեան եւ քաջալերութեան: Ապագային, ոչ միայն պէտք է տառապողներու վէրքերը բուժել, այլ եւ մեր բոլոր ուժերովն օգնել՝ որպէսզի Հայաստան փոխադրենք այն բոլոր հայերն որոնք չկրցան վարժուիլ իրենց ապաստանած երկիրներու կեանքին: Հայկական տառապանքներու հարցը միայն Խորհրդային Միութիւնը կրնայ լուծել»: Այդ տարիներին, ըստ էության, առաջին անգամ էր, որ ՀԲԸ Միության ղեկավարներից մեկը հրապարակավ բարձրացնում էր նոր ներգաղթ կազմակերպելու հարցը եւ, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, ոչ անհիմն:

Ժողովում հնչած եւս մեկ՝ Ալեք Մանուկյանի ելույթը, ամեն բանից զատ, ուշադրության է արժանի թեկուզ միայն այն պատճառով, որ վկայությունն էր նրա՝ որպես ՀԲԸ Միության ապագա նախագահի, մոտեցումների ձեւավորման մասին: Դա, ըստ էության, ծրագրային ելույթ էր, որում ոչ միայն արժեւորվում էր Քառորդ միլիոնի հանգանակությունը, այլեւ հստակ խոսվում էր Միության հետագա տարիների գործունեության մասին: Նա նախ եւ առաջ նշեց Մերձավոր Արեւելքի եւ Բալկանյան երկրների հայության բազմաթիվ եւ բազմապիսի կարիքները հոգալու խնդիրը, հատկապես շեշտելով աճող սերնդի հայեցի կրթության՝ հայկական դպրոցներ հիմնելու անհրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ Ա.Մանուկյանը՝ Միության ղեկավարներից առաջիններից մեկը, եթե ոչ առաջինը, խոսեց ՀԲԸ Միության ազգապահպան գործունեության հրատապության մասին նաեւ ԱՄՆ-ում. «Ունինք հոս նոր սերունդի հայեցի դաստիարակութեան հարցը, որ ցարդ նուազագոյն լուծումն անգամ գտած չէ: Կան բազմատեսակ երիտասարդական կազմակերպութիւններ, որոնց անջատ գոյութիւնը առնուազն անիմաստ է: Պէտք է համախմբել զանոնք մէկ նպատակի շուրջ: Բարեգործականին կ'իյնայ այդ աշխատութիւնը իբր համազգային կազմակերպութիւն»: Ա.Մանուկյանի այս վերջին թեզը պատահական չէր, նա, կարծես, փորձ էր անում վերակենդանացնել Պողոս Նուպարի եւ Գալուստ Կյուլպենկյա-

նի գաղափարը ՀԲԸ Միության՝ որպես համահայկական կազմակերպության մասին: «Քանի մը հազարներու կազմակերպութիւն ըլլալու չէ անիկա,- ընդգծում էր նա,- հապա, կազմակերպութիւնը բոլորին անխտիր: Համապարփակ ըլլալու է Բարեգործականին դերը եւ անոր ծառայութիւնը տարածուելու է բոլոր այն մարզերուն մէջ, որոնք բնոյթով ազգային են: Մէկ խօսքով Բարեգործականն ըլլալու է գաղութահայութեան անվիճելի կազմակերպութիւնը, վայելելով բոլորին անվերապահ նուիրումն ու գործակցութիւնը: Բարեգործականն ըլլալու է նաեւ ամենազօրաւոր կապը Հայաստանի եւ գաղութահայութեան միջեւ եւ խողովակը երկուքի յարաբերութեան»:[47]

1944թ. հոկտեմբերին, երբ հանգանակությունը դեռ չէր ավարտվել, ԱՄՆ-ում հավաքված գումարը արդեն իսկ գերազանցում էր նախատեսած քառորդ միլիոնը, կազմելով մոտ 300 հազ. դոլար: Այդ գումարից մոտ 126 հազ. օգտագործվեց Խորհրդային Հայաստանի համար դեղորայք, հագուստեղեն եւ այլ ապրանքներ գնելու եւ Ռուսական նպաստամատույց կազմակերպության միջոցով ուղարկելու համար: Մնացած գումարը օգտագործվեց Լիբանան եւ Սիրիա, Հունաստան, Ֆրանսիա ապաստանած հայերի առողջապահական, կրթական եւ այլ կարիքները հոգալու նպատակով (Այնճարում մայրանոցի, Ալեքսանդրետի սանջակի գաղթականների համար տների կառուցում եւ այլն):

Կես միլիոնի հանգանակությունը

1945թ. ապրիլին, ՀԲԸ Միության նախագահ Արշակ Գարակյոզյանը պաշտոնապես հայտարարեց արդեն Կես միլիոն դոլարի հանգանակության մասին: Իր «Ընդհանուր հայ ժողովուրդին» վերնագիրը կրող կոչում Միության նախագահը գրում էր. «Պատերազմի հաւանական մօտալուտ վերջաւորութիւնը ՀԲԸ Միութիւնը պիտի դնէ ազգային ծովածաւալ պէտքերու եւ պահանջներու առջեւ: Այս պատճառաւ, բացարձակապէս ստիպողական եւ անհրաժեշտ նկատելով Կէս Միլիոն Տոլարի Հանգանակութիւնը, այս սրտաբուխ Կոչը կ'ուղղեմ ընդհանուր Հայութեան, խնդրելով որ ամէն հայ, իր ազգային պարտաւորութեան գիտակցութեամբ եւ իր վայելած ազատութեան բարիքներուն երախտագիտութենէն մղուած առատօրէն եւ ուրախութեամբ մասնակցի այս համազգային հանգանակութեան»:[48]

Դրան հետեւեց նոր հանգանակության Կենտրոնական Հանձնախմբի ատենապետ, Միության ամենահեղինակավոր գործիչներից մեկի, նախագահի եղբոր՝ Միհրան Գարակյոզյանի հայտարարությունը, որում, մասնավորապես, նշվում էր, որ նախատեսած գումարի հիմնական մասը՝ 350.000 դոլարը, ինչպես եւ նախորդ դեպքում, պետք է հավաքվեր Ամերիկայում: 1945թ. ապրիլին սկիզբ առած հանգանակությունը շարունակվեց նաեւ 1946թ. առաջին ամիսներին, հատկապես հաջող արդյունքներ արձանագրելով առանձին շրջաններում: Մասնավորապես, Միության նախագահ Ա.Գարակյոզյանի հատուկ շնորհակալական նամակին արժանացավ հանգանակության Կալիֆորնիայի Կենտրոնական Հանձնախումբը, որը գլխավորում էր Արամ Սարոյանը Ֆրեզնոյից (գրող Վիլյամ Սարոյանի ազգականը): Որոշ ժամանակ անց, Ա.Սարոյանը եւս մեկ շնորհակալական նամակ ստացավ՝ արդեն Մոսկվայից: Նամակի հեղինակներն էին ճարտարապետ, ակադեմիկոս Կարո Հալաբյանը եւ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանը, որոնք, մասնավորապես, գրում էին. «Ձեր տուած օգնութիւնը, բարեկամներ, օգտակար եղաւ հայրենասիրական մեծ պատերազմի օրերին, նաեւ օգտակար պիտի լինի այն պատերազմի հետեւանքների հեռացման օրերին: Ուստի, շարունակեցէք ձեր օգտակար մեծ գործը մեր հայրենիքի, Սովիէթական Հայաստանի ի նպաստ»:[49]

Ուշագրավ է, որ այս հանգանակությանը ակտիվ մասնակցություն ունեցավ նաեւ Միության Բուէնոս Այրեսի (Արգենտինա) մասնաճյուղը, որը պետք է ապահովեր 35 հազ. դոլար: Սակայն, տեղական հանձնախմբի, նախ եւ առաջ, նրա ատենապետ Արմեն Պերկամալիի ջանքերով հնարավոր եղավ հանգանակել Արգենտինայի հայերի համար նմանը չունեցող գումար՝ ավելի քան 40 հազ. դոլար:

ՀԲԸ Միության անընդմեջ երկու հանգանակությունները աննախադեպ էին սփյուռքի համար: Ալեք Մանուկյանը իր վերը նշած ելույթում նշում էր. «Զեմ յիշեր թուական մը Ամերիկահայ գաղութի կեանքին մէջ, երբ հայ կազմակերպութիւն մը վայելած ըլլայ այնքան համակրութիւն որ կարենայ միս մենակը, մի քանի ամիսներու ընթացքին ու մէկ քէմպէյնով գոյացնել աւելի քան քառորդ միլիոն տոլարի պատկառելի գումար մը, ի նպաստ Խորհրդային Հայաստանի եւ սփյուռքի կարօտ եւ աղէտահար հայութեան»:[50]

Այն, որ Միությունը վայելում էր ամերիկահայերի համակրանքը, վկայում էին հետեւյալ թվերը: 1941թ. ԱՄՆ-ում, Կանադայում եւ Հարավային Ամերիկայում գործում էին ՀԲԸ Միության 72 մասնաճյուղ, 16 Տիկնանց մասնաճյուղ եւ Օժանդակ մարմին, ինչպես նաեւ 22 Երիտասարդական մասնաճյուղ ու Կրտսերաց Լիգա, իսկ անդամների ընդհանուր թիվն էր 3.700: 1943թ. այդ բոլոր մասնաճյուղերի թիվը արդեն 121

էր եւ անդամներինը՝ 5.675: Միությունն էլ ավելի մեծ աճ ունեցավ 1944թ.՝ 176 մասնաճյուղ եւ շուրջ 8 հազար անդամ:[51]

Ամերիկահայերի ցուցաբերած օգնության չափերը, նրանց մասնակցությունը ՀԲԸ Միության եւ ազգային այլ կազմակերպությունների նմանօրինակ ձեռնարկներին՝ հարցեր էին, որոնք շատ-շատերի համար ձեռք էին բերել նաեւ ազգային արժանապատվության նշանակություն:

Պատերազմը սկսվելուն պես ԱՄՆ-ի բոլոր ազգային փոքրամասնությունները (ռուսները, հրեաները, հույները, լեհերը եւ այլք) նույնպես օգնության հասան Եվրոպայում բնակվող իրենց հայրենակիցներին՝ հանգանակություններ, անհրաժեշտ ապրանքների եւ իրերի առաքումներ եւ այլն: Ամերիկահայերն էլ իրենց օգնության ծավալը արժեւորելու համար, կամա թե ակամա, դիմում էին այդ փոքրամասնությունների հետ համեմատմանը: Եվ, որպես կանոն, նրանք ստիպված էին լինում ընդունել, որ այդ համեմատությունները հօգուտ իրենց չէին: «Ամերիկայի 500.000 յոյները,- նշվում էր «Յուշարար» ամսագրում,- երկու տարուան ընթացքին Նպաստամատոյց մը յառաջ բերին աւելի քան 1000 մասնաճիւղներով: Ամէն կողմէ անանկ մեծ ընդունելութիւն յառաջ եկաւ որ կարելի է ըսել՝ թէ ամէն մէկ յոյն այսօր քսակով ու սրտով անդամ ու մասնակից է այդ հսկայ ձեռնարկին: Այդ մարմինը մտքին մէջ ունի 30 միլիոն տոլարի քէմբէյն մը: Տասը միլիոնը արդէն հաւաքած է: Ասիկա կը նշանակէ որ իւրաքանչիւր յոյն 60 տոլարով պիտի մասնակցի այս ֆընտին»:[52] Ավելի քան մեկ տարի անց, երբ Կես Միլիոնի հանգանակությունը դեռ չէր ավարտվել, ամսագիրը վերստին անդրադարձավ այդ հարցին. «Այս երկիրը ապրող մեծագոյն ազգերու մասնիկները, ռուսներ, ֆրանսացիներ, յոյներ, լեհեր, հրեաներ, եւ բոլոր միւսները, կ'ընեն իրենց կարելին օգնութիւն հասցնելու համար իրենց ժողովուրդներուն: Հրեաները 34.000.000 ժողվեցին իրենց տարագիրներուն եւ հարստահարեալներուն համար: Իրաւ է թէ մենք անոնց բարգաւաճ վիճակը չունինք, բայց ի՞նչ է վերջապէս կէս միլիոնը, այսօրուան Ամերիկայի բարեկեցիկ հայութեան համար... Պիտի ուզէի՞նք մենք բացառութիւն կազմել միւս ժողովուրդներուն քով: Անոնց բնիկ երկրին մէջ կ'ապրին մեր տարագիր հայերը եւ արդէն առաջին օրէն, բեռ մը նկատուած են մերինները, այդ օտար կառավարութեանց աչքին»:[53]

Միության հանգանակությունների հաջող ընթացքը պայմանավորված էր նաեւ պատերազմական տարիներին ամերիկյան տնտեսության մեջ տեղի ունեցող որակական փոփոխություններով: Պատերազմի նախօրեին ամերիկյան տնտեսությունը դեռեւս կրում էր Մեծ ճգնաժամի բացասական արդյունքները, մասնավորապես, գործազուրկների քանակը երկրում հասել էր 10 միլիոն մարդու: Սակայն, պատերազմը սկսվելուն

պես, մեծ արագությամբ սկսեցին զարգանալ ինչպես ռազմական արդյունաբերությունը, այնպես էլ տնտեսության այլ ոլորտները: Արդեն 1942թ. ոչ միայն վերացվեց գործազրկությունը, այլ նույնիսկ առաջացավ աշխատուժի պահանջարկի խնդիրը: ԱՄՆ-ի համախառն արտադրանքը, որը 1940թ. կազմում էր 100.6 մլրդ դոլար, 1944թ. կազմեց 211.4 մլրդ: Երկրի ներսում եւ նրա սահմաններից դուրս գյուղատնտեսական ապրանքների մեծ պահանջարկի պայմաններում ամերիկյան ֆերմերների շահույթները 1945թ., 1940թ. համեմատ, աճեցին ավելի քան չորս անգամ: Երկրի ողջ տնտեսության նման բուռն զարգացմանը զուգընթաց աճում էր եւ ժողովրդի, այդ թվում նաեւ ամերիկահայերի, կենսամակարդակն ու բարեկեցությունը: ՀԲԸ Միության հանգանակություններին ամերիկահայերի գործոն մասնակցության համար մեծ խթան էր նաեւ, ինչպես նշվեց, Միության Ամերիկայի մասնաժողովի իրավաբանական նոր կարգավիճակը:

Նշված հանգանակություններին ամերիկահայերի մեծ մասնակցությունը ուներ եւ այլ՝ ազգային-քաղաքական բնույթի պատճառներ: Այն բանից հետո, երբ 1941թ. հունիսի 22-ին նացիստական Գերմանիան պատերազմ սկսեց Խորհրդային Միության դեմ, կտրուկ փոփոխություն կրեցին վերջինիս փոխհարաբերությունները Արեւմուտքի երկրների, նախ եւ առաջ ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի հետ: Նոր իրավիճակում նրանք մոռացության տվեցին Գերմանիայի հետ Խորհրդային Միության 1939թ. օգոստոսին կնքած հայտնի պայմանագիրը (Ռիբենտրոպ - Մոլոտով պակտը), որի հետեւանքով պատերազմի առաջին՝ մոտ երկու տարիների ընթացքում այդ երկու երկրների միջեւ ստեղծվել էին, ըստ էության, դաշնակցային հարաբերություններ: Արդեն հունիսի 23-ին, տեղեկանալով Գերմանիայի հարձակման մասին, ԱՄՆ-ի կառավարությունը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում, նշելով ԱՄՆ-ի համար «կոմունիստական դիկտատուրայի սկզբունքների եւ դոկտրինայի» անընդունելի լինելը, միաժամանակ ասվում էր. «Սակայն, ամերիկյան ժողովրդի առջեւ անմիջաբար կանգնած հարցն այն է, թե կարելի է, արդյոք, հաջողությամբ դիմակայել եւ խափանել աշխարհի նվաճման ծրագիրը... ծրագիր, որն այժմ Հիտլերը հանդգնաբար ջանում է իրագործել: Այդպիսին է իրական հարցը, որ այժմ կանգնած է Ամերիկայի առաջ... Մեր կառավարության կարծիքով, ցանկացած պաշտպանություն հիտլերիզմից, ինչպիսին էլ լիներ նրա ծագումը, կմոտեցնի ներկա գերմանական առաջնորդների տապալումը եւ դրանով իսկ կծառայի հօգուտ մեր սեփական պաշտպանության եւ անվտանգության»: Մեկ օր անց ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտը հաստատեց իր պատրաստակամությունը «...տրամադրել Ռուսաստանին

այն բոլոր օգնությունը, որը մենք կարող ենք»:[54] ԱՄՆ-ի, ինչպես եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարության նման դիրքորոշման հիմքում այն համոզմունքն էր, որ ողջ պատերազմի ճակատագիրը կախված է լինելու նրանից, թե կկարողանա, արդյոք, Խորհրդային Միությունը նախ դիմակայել, ապա նաեւ պարտության մատնել Գերմանիային: Երբ պատերազմի առաջին փուլի ընթացքում գերմանական զորքերի հաջողություններին հետեւեցին սովետական զորքերի հաղթանակները, Արեւմուտքի երկրների առաջնորդները էլ ավելի կարեւորեցին Խորհրդային Միության՝ որպես իրենց դաշնակցի, դերն ու նշանակությունը: 1943թ. փետրվարի 23-ին, Ստալինգրադի ճակատամարտից հետո, Ստալինին հղած իր ուղերձում Ռուզվելտը գրում էր. «Միացյալ Նահանգների ժողովրդի անունից ես ցանկանում եմ Կարմիր Բանակին՝ նրա 25-ամյակի առիթով, հայտնել մեր խոր հիացմունքը նրա հիանալի, պատմության մեջ անգերազանցելի հաղթանակներով... Միեւնույն ժամանակ, ես ցանկանում եմ պատշաճը մատուցել ռուս ժողովրդին, որից Կարմիր բանակն առնում է իր ակունքները եւ համալրվում մարդկանցով ու մատակարարվում: Ռուս ժողովուրդը նույնպես իր ողջ ուժերն է տալիս պատերազմին եւ կրում մեծագույն կորուստներ: Կարմիր բանակը եւ ռուս ժողովուրդն են, անկասկած, որ պարտադրեցին Հիտլերի զինված ուժերին՝ գնալ վերջնական պարտության ճանապարհով եւ մշտապես ձեռք բերեցին Միացյալ Նահանգների ժողովրդի հիացմունքը»:[55]

Խորհրդային Միության ժողովուրդների հերոսական եւ անձնազոհ պայքարը հանուն հայրենիքի ազատագրման, Կարմիր բանակի հաղթանակները էապես ազդեցին նաեւ ԱՄՆ-ի եւ հակահիտլերյան կոալիցիայի մյուս երկրներում հասարակական կարծիքի եւ դիրքորոշումների վրա. անվստահությունն ու կասկածամտությունը բավական արագ փոխարինվեցին հիացմունքով, աջակցության ամենատարբեր դրսեւորումներով: Այդ առումով հատկապես ուշագրավ էր պատերազմի ազդեցությունը ռուսական գաղթաշխարհի վրա: Ռուսական գաղթաշխարհի առաջացման պատճառներն, ինչպես հայտնի է, զուտ քաղաքական էին եւ պայմանավորված էին 1917թ. բոլշեւիկյան հեղափոխությունից հետո Ռուսաստանի նոր իշխանությունների քաղաքականությամբ, որի արդյունքում մեծ թվով ազնվականներ, հոգեւորականներ, զինվորականներ, մտավորականներ ու գիտնականներ ստիպված եղան գաղթել կամ էլ վտարվեցին հայրենիքից: Բնական է, որ նրանց դիրքորոշումը Խորհրդային Միության, այնտեղ հաստատված վարչակարգի հանդեպ անցած բոլոր տարիների ընթացքում միանշանակ թշնամական էր եւ անհանդուրժողական: Այդուամենայնիվ, նրանք նույնպես խորապես տպավորված էին իրենց

«դասակարգային թշնամիների» հաղթանակներով: Խիստ կարեւոր էր, այդ առումով, Ստալինգրադյան ճակատամարտը, որը «...սկիզբ դրեց ռուս-խորհրդային հայրենասիրությանը նրանց մեջ: Հատկապես մեծ էր հարգանքը Կարմիր բանակի հանդեպ, որը իր վրա էր կրում հիմնական հարվածը: Որքան մոտենում էր խորհրդային զենքի հաղթանակը, այնքան ամրանում եւ ընդլայնվում էին այդ հայրենասիրական զգացմունքները: Գաղթաշխարհի մի շարք ականավոր գործիչներ վերանայում էին իրենց վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի հանդեպ: Թշնամական վերաբերմունքը խորհրդային իշխանության հանդեպ փոխարինվում էր անկեղծ ակնածանքով՝ ժողովրդի ռազմական սխրագործության եւ երկրի զոհողության նկատմամբ: 1945թ. փետրվարի կեսերին ռուս գաղթականությանը պարզապես ցնցեց Վ.Ա. Մակլակովի խորհրդային դեսպանատուն այցի եւ խորհրդային դեսպան Ա.Ե. Բոգոմոլովի հետ նրա զրույցի մասին լուրը: ...Վասիլի Ալեքսեեւիչ Մակլակովը՝ կադետների կուսակցության առաջնորդներից մեկը, Պետական դումայի անդամ, 1917թ. Ռուսաստանի դեսպանն էր Ֆրանսիայում: Նրա մոտ մնացել էին խոշոր դրամական միջոցներ, եւ նա շատ բան էր արել գաղթականների կյանքը կազմակերպելու եւ կարիքավորներին օգնություն ցուցաբերելու համար: Նրա հեղինակությունը Ֆրանսիայի գաղթականների շրջանում չափազանց բարձր էր»:[56]

Եթե պատերազմը նման արմատական փոփոխություններ էր բերել ռուս գաղթաշխարհում, ապա առավել եւս բնական պետք է համարել նույն այդ տարիներին սփյուռքահայության բարյացակամ դիրքորոշումը Խորհրդային Միության հանդեպ: Արտասահմանի հայերի համար ո՛չ բոլշեւիկյան իշխանությունները եւ ո՛չ էլ Ռուսաստանն ընդհանրապես, չէին զուգորդվում Թուրքիայի սկսած 1915 թվականից իրականացրած ցեղասպանության եւ բռնագաղթի քաղաքականության հետ, որի արդյունքում նրանք ստիպված էին եղել հեռանալ իրենց հայրենիքից եւ ապաստանել աշխարհի տարբեր երկրներում: Ընդհակառակը, Ռուսաստանն այն երկիրն էր, ուր թե մինչեւ 1914թ. եւ թե Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին տասնյակ հազարավոր հայեր գտան իրենց փրկությունը եւ հենց այդ երկրի հետ էին կապված թուրքական տիրապետությունից ազատագրվելու նրանց հույսերը: Հետագայում, սակայն, հայերը, այդ թվում նաեւ սփյուռքի հայությունը, ստիպված եղան ընդունել, որ Խորհրդային Միության արտաքին քաղաքականությունը սկզբից եւեթ անտեսել է հայ ժողովրդի ազգային շահերը, նախ եւ առաջ ցարական Ռուսաստանին պատկանող Արեւելյան Հայաստանի տարածքները վերադարձնելու հարցում: Եվ, այնուամենայնիվ, նրանք, ինչպես վերը նշվել

էր Պողոս Նուպարի առիթով, քաջ գիտակցում էին, որ ստեղծված իրավիճակում հայկական տարածքներից հայաբնակ մնացած միակ հատվածը Խորհրդային Հայաստանն է, որի ապահով գոյությունը հնարավոր է միայն Խորհրդային Միության կազմում:

Սակայն գերմանական զորքերի հարձակումը Խորհրդային Միության վրա, վերջինիս պարտությունները պատերազմի սկզբնական շրջանում՝ հարցականի տակ էին դնում նաեւ նրա մաս կազմող Հայաստանի գոյությունն իսկ: Ակնհայտ էր, որ Գերմանիայի հաղթանակի դեպքում, նրան փաստացի կերպով օժանդակող Թուրքիան կձգտի վերսկսել իր ցեղասպան քաղաքականությունը, այս անգամ արդեն Խորհրդային Հայաստանի եւ ողջ Անդրկովկասի հայերի նկատմամբ: Ուստի եւ օրինաչափ էր արտասահմանի հայերի այդ տարիների դիրքորոշումը Խորհրդային Միության հանդեպ, նրանց պատրաստակամությունը՝ օգնության հասնել թե խաղաղ բնակչությանը եւ թե բանակին:

Ի.Ստալինի ծրագիրը եւ հայերը

Նման տրամադրությունները էլ ավելի ուժեղացան, երբ սկսած 1944 թվականից տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկությունները վկայում էին, որ Խորհրդային Միությունը մտադիր է վերանայել իր հարաբերությունները Թուրքիայի հետ՝ նպատակ ունենալով վերադարձնել Ռուսական կայսրության մաս կազմող հայկական տարածքները:

Ինչպես հայտնի է, 1917թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռուս բոլշեւիկները, իրենց իշխանությունը պահելու համար դիմեցին տարածքային մեծ զիջումների: Սակայն արդեն 1920-1921թթ. նրանք ձեռնամուխ եղան Ռուսական կայսրության տարածքային սահմանների վերականգնմանը, ինչը եւ հաջողությամբ ավարտեց Ստալինը Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո: Ստալինը մտադրվել էր այլ տարածքների հետ մեկտեղ վերադարձնել նաեւ Թուրքիային անցած Արեւելյան Հայաստանի տարածքը եւ այդ նպատակով Մոսկվայում մշակվել էր հատուկ մի ծրագիր, որում որոշակի դեր էր հատկացված սփյուռքահայությանը:[57]

«Ցուշարար» ամսագիրը 1944թ. մայիսի համարում արտատպել էր մի հոդված «Նյու Յորք թայմզ» օրաթերթից, որում, մասնավորապես, ասվում էր. «Խորհրդային կառավարությունը ծրագրած է Մերձաւոր Արեւելքի մէջ ընդարձակել իր դիւանագիտական յարաբերութիւններն եւ կապ հաստատել Հայաստանի Սովիէթ Հանրապետութեան եւ Սիւրիոյ ու Լիբանանի կառավարութեանց միջեւ: Այս տեսակ ծրագիր մը պիտի վերաբանայ ամբողջ Հայկական հարցը եւ ենթադրել պիտի տայ՝ որ ռուս դիւանագէտներ կ'ուզեն հոգ տանիլ այն հազարաւոր անտուն եւ ցրուած հայոց, որոնք չքաւորութեան ենթարկուած են Մերձաւոր Արեւելքի կարգ մը մասերուն մէջ»:[58] Եվ, իրոք, սկսած այդ ժամանակից՝ Մերձավոր Արեւելքի երկրներում աշխատող խորհրդային դիվանագետները, ի կատարումն Մոսկվայից ստացած հրահանգների, աշխուժացրեցին իրենց շփումները տեղի հայկական համայնքների հետ, նպատակ ունենալով ուսումնասիրել նրանց տրամադրություններն ու դիրքորոշումները, հատկապես Խորհրդային Հայաստան ներգաղթելու վերաբերյալ, ինչպես եւ էլ ավելի խթանել Խորհրդային Միության հետ կապված նրանց ազգային-քաղաքական սպասելիքները:

Դրա հետ մեկտեղ, նրանց կողմից պատրաստվում եւ Մոսկվա էին ուղարկվում տեղի հայ բնակչության պատմությանն ու արդի վիճակին վերաբերող մեծ թվով տարբեր բնույթի տեղեկանքներ եւ այլ նյութեր: 1944թ. աշնանը նույն այդ նպատակով այդ տարածաշրջանի երկրներ գործուղվեց նաեւ Երեւանի Պետհամալսարանի պրոֆեսոր, պատմաբան Աշոտ Աբրահամյանը: Մեծ աշխատանք էր տարվում նաեւ Երեւանում՝ Հայաստանի Արտաքին գործերի նախարարության փոքրաթիվ աշխատակազմը ձեռնամուխ էր եղել Հայկական հարցի վերաբերյալ տեղեկատուի (թղթածրարի) պատրաստմանը: Այս ամենը վկայում էր, որ Խորհրդային Միության ղեկավարությունը՝ Թուրքիային ներկայացնելիք իր տարածքային պահանջները ձգտում էր հիմնավորել անժխտելի փաստարկներով, հատկապես նկատի ունենալով իր իսկ դաշնակիցների հնարավոր հակազդեցությունը:

Խորհրդային Միության դիվանագետների գործունեությունը, բնական է, մնում էր անհայտ, սակայն, նույն այդ գործունեության ձեւերից էր նաեւ «տեղեկատվության արտահոսքը», որի արդյունքում թե Հայաստանում եւ թե սփյուռքում, հետզհետե ավելի հաճախակի եւ առավել վստահ սկսեցին խոսել հայկական տարածքների վերադարձման, նոր ներգաղթի մոտալուտ կազմակերպման մասին: Այդ տրամադրությունների տարածմանն ու ամրապնդմանը մեծապես նպաստեց նաեւ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի հանդիպումը Ստալինի հետ 1945թ. ապրիլի 19-ին: Այն տարբեր մեկնաբանությունների արժանացավ ինչպես ժամանակակիցների կողմից, այնպես էլ հետագայում, սակայն արդարացիորեն գնահատվեց որպես պատմական երեւույթ: Այստեղ նախ հարկ է նշել, որ մինչ այդ՝ 1943թ. սեպտեմբերի 4-ին, տեղի էր ունեցել Ստալինի եւ Մոլոտովի երկարատեւ

հանդիպումը Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդների հետ, որի ընթացքում մշակվել էին Ռուս եկեղեցու կանոնադրության ու գործունեության հետ կապված մի շարք կարեւոր հարցեր: «...Այն պահին՝ եկեղեցու դեմ տասնյակ տարիների ահաբեկություններից հետո, նոր կարգը, անկասկած, առաջադիմական քայլ էր, քանի որ ուղղափառ եկեղեցու համար նշանակում էր օրինական գոյության հնարավորություն»:[59] Նույնչափ պատմական էր նաեւ Ստալինի հանդիպումը Հայ եկեղեցու առաջնորդի հետ, որի արդյունքում ընդունվեցին վերջինիս գործունեության առումով կարեւոր որոշումներ, մասնավորապես, հոգեւոր ճեմարանի վերաբացումը, սեփական տպարան ունենալու, հոգեւոր գրականության, այդ թվում «Էջմիածին» ամսագիրը հրատարակելու իրավունքը, Հռիփսիմե, Գեղարդ եւ Խոր վիրապ վանքերը Ս.Էջմիածնին վերադարձնելը, արտասահմանի հայ հոգեւորականներին Հայաստան հրավիրելը եւ այլն:[60] Այս հանդիպումը հնչեղ արձագանք ունեցավ նաեւ սփյուռքում, ուր ընկալվեց որպես Խորհրդային Միության ղեկավարության կողմից իրագործվող նոր քաղաքականության եւս մեկ ապացույց:

1945թ. մայիսին Թավրիզում Խորհրդային Միության Գլխավոր հյուպատոսարանից ստացված տեղեկագրում հատուկ նշվում էր այն ոգեւորությունը, որ առաջացրել էր այդ հանդիպումը տեղի հայերի մեջ եւ բերվում էին նրանց կարծիքները. «...իբր, ընկ. Ստալինը իր մոտ է կանչել Զորեքչյանին եւ հանձնարարել է նրան Ազգային ժողովում հարց բարձրացնել Խորհրդային Հայաստանի տարածքների՝ ի հաշիվ Թուրքիայի, ընդլայնման եւ արտասահմանի հայերին Հայաստան մշտական բնակության տեղափոխվելու հնարավորություն տալու մասին...» եւ «...իբր, նախքան հայկական շրջանների վերադարձման հարցը բարձրացնելը եւ արտասահմանի հայերին Խորհրդային Հայաստան տեղափոխվել թույլ տալը, Ստալինը հարկ համարեց այդ հարցերի շուրջ խորհրդակցել Զորեքչյանի հետ...»:[61] Սփյուռքահայերի երեւակայական պատկերացումները այդ հանդիպման մասին, կարծես, հաստատվում էին նաեւ Հայաստանից ստացվող տեղեկություններով՝ Ս.Էջմիածնում Ազգային եկեղեցական ժողով գումարելու մասին, որը նույնպես Ստալինի հետ հանդիպման ամենակարեւոր արդյունքներից էր: Ինչպես նշվում էր վերոբերյալ տեղեկագրում. «...կաթողիկոսի ընտրության նպատակով, պատգամավորների Հայաստան առաջիկա ուղեւորության կապակցությամբ, թեմական խորհրդի նախաձեռնությամբ բոլոր հայերի անունից պատրաստվում է դիմում՝ Խորհրդային կառավարության հասցեով: Այդ դիմումը ստորագրում են բոլոր այն հայերը, որոնք ցանկանում են բնակություն հաստատել Խորհրդային Հայաստանում, եւ այն պատվիրակության կողմից ներկայացվելու է Էջմիածնում: Առ 1/06 1945թ. արդեն հավաքված է 2.000 ստորագրություն»:[62]

Ստալինը, իհարկե, բնավ էլ մտադիր չէր խորհրդակցել կաթողիկոսի տեղապահի հետ. այդ հանդիպումը պարզապես իր իսկ մշակած սցենարի հերթական դրվագներից էր եւ ոչ ավելին: Նույն այդ սցենարով նախատեսված Ազգային եկեղեցական ժողովը, իր հերթին, պետք է Ստալինին տար լրացուցիչ եւ համոզիչ փաստարկներ՝ հօգուտ Թուրքիային անցած տարածքների վերադարձման: Դա եզակի եւ իր նախադեպը չունեցող երեւույթ էր, երբ Ստալինի ծրագրերը համահունչ էին հայ ժողովրդի ազգային շահերի եւ նպատակների հետ: Ինքը՝ Ստալինը, անկասկած, հիանալի գիտակցում էր այդ եւ համոզված էր, որ հայերը, ներառյալ սփյուռքի հայությունը, կարդարացնեն իր հույսերը:

1945թ. հունիսի 16-ին Էջմիածնի հոգեւոր ճեմարանի շենքում իր աշխատանքները սկսեց Ազգային եկեղեցական ժողովը, որին մասնակցում էին 102 պատգամավորներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ Խորհրդային Միության եւ Խորհրդային Հայաստանի կառավարությունների ներկայացուցիչներ: Եկեղեցական ժողովի առաջին օրը կաթողիկոսի տեղապահ Գեւորգ արքեպիսկոպոս Զորեքչյանի առաջարկությամբ ողջույնի հեռագիր ուղարկվեց Ստալինին, որում, մասնավորապես, ասվում էր. «Ձեր շնորհիվ իրականացվում է հայ ժողովրդի ազատագրությունը եւ հայկական պետականության վերածնումը, եւ մենք հաստատ հավատացած ենք, որ Ձեր օժանդակությամբ կիրականանան ճնշման ու հալածանքների պատճառով տարագիր դարձած արտասահմանյան հայերի իղձերը, եւ նրանք կվերադառնան իրենց հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան»:[63]

Հունիսի 25-ին, ժողովի վերջին օրը նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոս Գեւորգ Զ-ի առաջարկությամբ որոշվեց եւս մեկ հեռագիր հղել Ստալինին, որում ժողովի մասնակիցները, իրենց երախտագիտությունը հայտնելուց զատ, վերստին հույս էին հայտնում, որ «...Խորհրդային Միության պետական եւ քաղաքագիտական իմաստությունը կգտնի նաեւ միջոց ու ճանապարհ՝ վերացնելու այն անարդարությունները, որին ենթարկվեց մեր ժողովուրդը Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում»:[64]

Դժվար չէ պատկերացնել ժողովականների ոգեւորությունը. ակնհայտ էր, որ նման բովանդակությամբ հեռագրերի հղումը Ստալինին հնարավոր էր միայն իր իսկ՝ Ստալինի համաձայնության եւ հավանության դեպքում, ինչը, իր հերթին, հաստատում էր Խորհրդային Միության մտադրությունը՝ վերադարձնել հայկական տարածքները եւ այնտեղ բնակեցնել արտա-

սահմանից ներգաղթած հայերին: Իսկ որ Խորհրդային Միությունը ի զորու էր իրագործել այդ մտադրությունը, սփյուռքի հայությանը համոզում էր հաղթանակով ավարտված պատերազմը, որի յուրահատուկ արդյունքների ականատեսը եղան նրանք հենց Երեւանում: Եկեղեցական ժողովի պատգամավորներից Պետրոս Թերզյանը ԱՄՆ ուղարկած իր մի հոդվածում գրում էր. «Ամէնէն սրտապարար եւ գոհունակութիւն պատճառող մէկ տեսարանն է հազարաւոր գերման գերի զինուորները, որ կ'աշխատին հայ զինուորին հսկողութեան տակ՝ շինելու Երեւանի փողոցները: Ինչեր, ինչեր կ'անցնին մեր մտքերէն եւ իրենց մտքերէն»:[65]

Ջ.Չաքըրը եւ Հ.Գավուկչյանը Երեւանում

Ժողովի մասնակիցների թվում էին նաեւ ՀԲԸ Միության նեկայացուցիչներ՝ Ջանիկ Չաքըրը եւ Հայկ Գավուկչյանը, որոնք ունեին եւ այլ պատճառներ նման ոգեւորության համար: Այդպիսիք էին նրանց հանդիպումները Խորհրդային Հայաստանի պետական պաշտոնյաների, նախ եւ առաջ, Ժողկոմխորհի նախագահի տեղակալ, Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Սահակ Կարապետյանի հետ, որոնց ընթացքում քննարկվեց երկու կողմերի միջեւ հարաբերությունների վերահաստատման հարցը:

Հատկանշական է, որ այդ հարցը Ս.Կարապետյանը նախապես քննարկեց Եկեղեցական ժողովի առիթով Երեւան ժամանած իրեն գաղափարակից կոմունիստների հետ: Հետաքրքրական է նաեւ, որ թե Ֆրանսիայի Հայ Ազգային Ճակատի ղեկավարներ Մեսրոպ Ասատուրյանն ու Անրի Մարմարյանը եւ թե ԱՄՆ-ում հրատարակվող խորհրդամետ «Լրաբեր» թերթի խմբագիր Պատրիկ Սելյանը, խոսելով ՀԲԸ Միության մասին, իրատեսորեն են գնահատում նրա դերն ու կարեւորությունը սփյուռքում եւ ընդհանրապես զերծ են մնում՝ ի տարբերություն իրենց իսկ ելույթների ու հրապարակումների, այն որպես «բուրժուական», «կապիտալիստական» կազմակերպություն որակելուց: Ավելին: Ահա մի հատված Ս.Կարապետյանի կազմած գրառումից. «Այնուհետեւ Սելյանը ասաց, որ Ամերիկայից եկած պատգամավորների թվում է ՀԲԸՄ փոխնախագահ Հայկ Գավուկչյանը (ռամկավար)՝ այդ կազմակերպության ամենաազդեցիկ դեմքերից մեկը, որը ՀԲԸՄ նախագահ Գարակյոզյանից հանձնարարություն ունի կապվել Հայաստանի ներկայացուցչական մարմինների հետ եւ պարզել Հայաստանի կառավարության վերաբերմունքը ՀԲԸՄ կողմից Խորհրդային Հայաստանին նյութական օգնություն ցույց տալու

նկատմամբ: Եվ ես խնդրում եմ Ձեզ, ասաց Սելյանը, ընդունել Գավուկչյանին, եթե Դուք, իհարկե, մտադիր եք օգտագործել ՀԲԸՄ միջոցները, եւ ես պետք է ասեմ, շարունակեց նա, որ այդ կազմակերպությունը շատ խոշոր՝ մի քանի տասնյակ միլիոններ հաշվվող միջոցների տեր է, եւ հնարավորություն ունի ստեղծել նոր ֆոնդեր, քանի որ նա ամենանճանաչվածն է այդ առումով եւ բացի այդ, լավ է տրամադրված Խորհրդային Հայաստանի հանդեպ: ...«Ես ասացի, որ կմտածեմ այդ մասին եւ հնարավոր է կընդունեմ նրան»:[66]

Կառավարության նախագահի տեղակալը խորամանկում էր. ՀԲԸՄ ներկայացուցիչների հետ հանդիպումը արդեն նշանակված էր հաջորդ օրվա համար, իսկ ինքը, իր իսկ խոսքերով, նույնիսկ հասցրել էր ծանոթանալ իրեն դեռեւս չհանձնված ՀԲԸ Միության նախագահ Արշակ Գարակյոզյանի նամակին: Եվ այսպես, 1945թ. հունիսի 23-ին Խորհրդային Հայաստանի կառավարության նախագահի տեղակալ Սահակ Կարապետյանը պաշտոնապես ընդունեց որպես Եկեղեցական ժողովի պատգամավորներ Երեւանում գտնվող ՀԲԸ Միության փոխնախագահ Հայկ Գավուկչյանին եւ Միության Եգիպտոսի Կենտրոնական Հանձնաժողովի փոխատենապետ Ջանիկ Չաքըրին: Համաձայն Ս.Կարապետյանի կազմած ծառայողական «խիստ գաղտնի» վերտառությամբ զեկուցագրի, զրույցը ընթացել էր երկու հիմնական հարցի շուրջ: Նախ՝ Հ.Գավուկչյանը ներկայացնելով ՀԲԸ Միության հիմնական նպատակներն ու գործունեության ոլորտները եւ հիշեցնելով նրա կողմից Խորհրդային Հայաստանում մինչեւ 1938թ. իրականացված ծրագրերը, դիմում է զրուցակցին. «Սակայն 1937թ. մեր կապը Հայաստանի կառավարության հետ ընդհատվեց եւ վերջինս մեզ համար անհայտ պատճառներով հրաժարվեց օգնություն ընդունել մեր կազմակերպությունից: Մեր Միության նախագահ պարոն Գարակյոզյանը հանձնարարել է ինձ պարզել, եթե դա հնարավոր է, այդ հրաժարման պատճառները եւ շփումների վերականգման կարելիությունները»:[67]

ՀԲԸ Միության ղեկավարությունը ութ տարիների ապարդյուն փորձերից հետո, ահա, վերջապես, ստանալու էր իր համար այդչափ կարեւոր հարցի պատասխանը: «Մինչ տված հարցին պատասխանելը,- գրում էր Ս.Կարապետյանը,- ես հարցրի՝ ինչպիսի՞ օգնություն է մտադիր ՀԲԸՄ ցույց տալ Խորհրդային Հայաստանին եւ ինչպիսի՞ն են նրա տրամադրության տակ եղած միջոցները»:

«Գավուկչյանը պատասխանեց. «Մենք կարող ենք օգնություն ցույց տալ ինչպես տարադրամով՝ ամերիկյան դոլարի ձեւով, այնպես էլ իրերով եւ սարքավորումներով, նայած ինչն է ավելի հարմար Հայաստանի

կառավարությանը: Այդ նպատակի համար Միության տրամադրության տակ այժմ կա 500.000 ամերիկյան դոլար, բայց այդ գումարը կարող է կրկնապատկվել եւ եռապատկվել: Իսկ Միության ընդհանուր ֆոնդերը կազմում են մի քանի միլիոն դոլար (ես զգացի, որ Գավուկչյանը խուսափում է նշել կոնկրետ թվեր)»:

Իր համար ցանկալի պատասխան ստանալուց հետո միայն Ս.Կարապետյանը վերջապես բացատրում է Խորհրդային Հայաստանում 1937թ. ՀԲԸ Միության գործունեությունը արգելելու պատճառները. «Հայաստանի կառավարության տրամադրության տակ եղած տվյալների համաձայն, ՀԲԸՄ կողմից, սկսած 1921թ., հատկացված գումարները հիմնականում օգտագործվել են ըստ նպատակի, Ձեր նշած շինությունները իսկապես կառուցվել են եւ գոյություն ունեն: Հատկացված միջոցների ընդունման ժամանակավոր դադարեցման պատճառն էր այդ գործում եղած չարաշահումները, որոնք թույլ էին տվել Հայաստանում ՀՕԿ-ի այն տարիների ղեկավարությունը եւ կառավարական մարմիններ սպրդած թշնամական տարրերը, որոնք խեղաթյուրում էին Խորհրդային Միության կառավարության քաղաքականությունը եւ չարաշահում էին այդ ազնիվ գործի վրա: Ահա թե ինչու Հայաստանի կառավարությունը անհրաժեշտ համարեց ժամանակավորապես դադարեցնել կապը ՀԲԸ Միության հետ, որպեսզի բացահայտի եւ կարգավորի թույլ տված շեղումները»:[68]

Խորհրդային իշխանությունները առաջին անգամ պաշտոնապես բացատրեցին 1937թ. Հայաստանում ՀԲԸ Միության լուծարման պատճառը: Ս. Կարապետյանի պատասխանը, մի կողմից, արդարացնում էր 1937թ. որոշումը, իսկ մյուս կողմից՝ չէր պարունակում որեւէ մեղադրանք ՀԲԸ Միության հասցեին: Հոգեբանորեն հաշվարկը կատարվել էր ճիշտ՝ նման պատասխանից հետո ՀԲԸ Միության համար այլեւս չկար ոչ մի լուրջ խոչընդոտ Խորհրդային Հայաստանի հետ իր համագործակցությունը վերսկսելու համար: Մնում էր միայն Հայաստանում ՀԲԸ Միության ներկայացուցիչ Հայկազ Գարակյոզյանի ճակատագրի հարցը: Ս.Կարապետյանի կազմած փաստաթղթում այդ հարցը չի հիշատակվում, սակայն, նույնիսկ քննարկման դեպքում դժվար չէ կռահել, որ Հ.Գարակյոզյան անհատին ՀՕԿ-ի ղեկավարների նման նույնպես կվերագրվեին ինչ-ինչ չարաշահումներ եւ այլ հանցանքներ: Ամեն դեպքում, խորհրդային իշխանությունները ի զորու էին տալ եւ տալիս էին իրենց համար ամենահարմար բացատրությունը:

Զրույցի ընթացքում քննարկված երկրորդ հարցի՝ Միության կողմից Խորհրդային Հայաստանին ցույց տրվելիք օգնության նախնական քննարկումից հետո որոշվեց, որ Հայաստանի կառավարության նախագահի տեղակալը անհրաժեշտ ապրանքների եւ սարքավորումների ամբողջական ցանկը կներկայացնի ՀԲԸՄ նախագահ Ա.Գարակյոզյանին ուղղած իր նամակում: Հատկանշական է, որ Միությունը, նկատի առնելով նախորդ շրջանում ՀՕԿ-ի հետ իր համագործակցության տխուր փորձը, այս անգամ սկզբից եւեթ հրաժարվեց շփվել կառավարության հետ այս կամ այն միջնորդների՝ ԱՕՔՍ-ի (Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի ընկերության), Կարմիր Խաչի եւ այլոց միջոցով:

Այս հանդիպումից յոթ օր անց՝ 1945թ. հունիսի 30-ին, Ս.Կարապետյանը ծավալուն մի նամակ է հղում ՀԲԸՄ նախագահին, որում, մասնավորապես, գրում էր. «Գոհունակությամբ նշելով, որ Սովետական Հայաստանն այժմ միանգամայն ի վիճակի է ինքնուրույն ապահովել իր երկրի ու ժողովրդի հետագա բարգավաճումը, Սովետական Հայաստանի կառավարությունը միեւնույն ժամանակ հնարավոր չի գտնում որեւէ կերպ արգելք հանդիսանալ Ձեր Միության եւ սփյուռքի մեր մյուս հայրենակիցների հայրենասիրական այն ձգտումներին, որոնց նպատակն է օգնություն ցույց տալ Սովետական Հայաստանին՝ նրա շինարարական, ստեղծագործական աշխատանքներում»:[69] Նամակի հիմնական մասը՝ վերոնշյալ սարքավորումների ցանկն էր, որպիսիք «ցանկալի կլիներ ստանալ առաջին հերթին»՝ ռադիոհաղորդիչ կայաններ, ավտոմատ հեռախոսակայաններ, վերամբարձ մեքենաներ, էքսկավատորներ ու շինարարական այլ մեքենաներ, հիվանդանոցային սարքավորումներ եւ այլն:

Հայաստանի իշխանությունների հետ հարաբերությունների ու համագործակցության վերսկսումը արդեն իսկ վկայում էր Միության հեղինակության եւ բարձր վարկանիշի մասին: Ավելին, հունիսի 26-ին Հայաստանի կառավարության շենքում Եկեղեցական ժողովի պատգամավորների համար կազմակերպված ընդունելության ժամանակ Ս.Կարապետյանը, խոսելով Հայաստանին օգնության հարցի շուրջ, ասել էր. «Մենք ոեւէ կարոտութիւն չունինք եւ չենք սպասեր, սակայն, երբ դուք եղբայրական օգնութիւն կ'ուզէք ընել՝ մանր բաներ մի ընէք, ըրէք խոշոր բաներ Բարեգործականին պէս եւ աւելի շիտակը ՀԲԸ Միութեան միջոցաւ: Մենք պետութիւն ենք, մեր պետական վարկին համապատասխան բաներ ըրէք»:[70]

Պատմությունը կրկնվում էր՝ խորհրդային իշխանությունները, որոշելով վերականգնել հարաբերությունները սփյուռքի հայության հետ, վերստին ստիպված էին որպես միակ հնարավոր եւ վստահելի գործընկեր ընտրել ՀԲԸ Միությունը: Սակայն, ինչպես եւ նախորդ շրջանում, նույն այդ պարտադրվածության հետեւանքով վստահությունը Միության նկատմամբ սահմանափակ էր: Այդ առումով հատկանշական է հետեւյալ դրվագը Ս.Կարապետյանի եւ ֆրանսահայ կոմունիստների միջեւ վերոհի-

շյալ զրույցից: Արձագանքելով վերջիններիս այն հաստատմանը, որ ՀԲԸՄ-ը միակ կազմակերպությունն է, որ լուրջ միջոցներ ունի, Ս.Կարապետյանը, իր իսկ խոսքերով՝ ասում է. «Ես անմիջապես պատասխանեցի, որ մեր տեսակետից հայկական գաղութներում կուտակված միջոցները նպատակահարմար է օգտագործել ուղղակի նպատակով՝ *օժանդակել հայերին նրանց Հայաստան տեղափոխվելու դեպքում* (ընդգծումը իմն է-Էդ.Մ.): Ցանկալի է, որ ձեր կազմակերպությունը, ասացի ես, սերտ շփման մեջ լինի նրա հետ, իսկ հնարավորության դեպքում իր ձեռքում կենտրոնացնի այդ կարեւոր գործը»:[71] Ի տարբերություն դրան, Ս.Կարապետյանը թե Միության ներկայացուցիչների հետ զրույցի ժամանակ եւ թե նրա նախագահ Ա.Գարակյոզյանին հասցեագրած նամակում, այդ հարցը ընդհանրապես չի հիշատակում: Տվյալ դեպքում նա խստորեն հետեւում էր օրենքի տառին՝ հայերի ներգաղթի մասին դեռեւս չէր եղել եւ ոչ մի պաշտոնական հայտարարություն:

Իր հերթին Միության նախագահը, կարծես, ընդունելով խաղի նման կանոնները, նույնպես շրջանցում է այդ հարցը եւ իր հրապարակած պաշտոնական զեկույցում՝ ի պատասխան Ս.Կարապետյանի նամակի, շեշտը դնում է Հայաստանի վերաշինությանը օժանդակելու կարեւորության վրա: Անդրադառնալով Հայաստանի կառավարության նախագահի տեղակալի կողմից ներկայացված անհրաժեշտ իրերի ցուցակին, նա նշում էր. «Մատնանշուած ապսպրանքները կարծուածէն աւելի բազմադիմի են, որոնց լրիւ գոհացում տալու համար վստահաբար աւելի քան մէկ միլիոն տոլար պէտք կ'ըլլայ ծախսել: Մինչդեռ այս տարուան Կէս Միլիոն Տոլարի Հանգանակութեան կէսովը հազիւ ուզուած մեքենաներուն, գործիքներուն եւ այլ իրեղէններուն մէկ մասը միայն կարելի է Հայաստան ղրկել, սկսելով ամէնէն աւելի ստիպողականներէն: Բայց, տարակոյս չունիմ թէ ամէն ազգասէր հայու սրտին կը խօսի այդ կոչը եւ յոյսն ունիմ որ պիտի գտնուին Հայրենակցական Միութիւններ եւ վեհոգի հայրենասէրներ որ պիտի փութան այս կամ այն մեքենային կամ սարքաւորումին ծախքը ստանձնել, սիրայօժար, յօրինակ այլոց»:[72]

Ի. Ստալինի համառությունը. 1945թ. որոշումը ներգաղթի մասին

Այդ ընթացքում Ստալինը իրեն հատուկ հետեւողականությամբ շարունակում էր հետապնդել Թուրքիային անցած տարածքների վերադարձման հարցը: 1945թ. մարտի 19-ին Թուրքիայի հետ 1921թ. բարեկամության մասին պայմանագիրը չեղյալ հայտարարելուց հետո, նույն տարվա հունիսի 22-ին Թուրքիայում Խորհրդային Միության դեսպան Ս.Վինոգրադովը թուրքական կառավարությանը հայտնեց, որ իր երկիրը պատրաստ է նոր պայմանագիր կնքել Թուրքիայի հետ այն դեպքում, եթե վերանայվի Մոնտրեի համաձայնագիրը նեղուցների մասին եւ եթե Կարսը, Արդահանը եւ Արդվինը վերադարձվեն Խորհրդային Միությանը՝ ի դեմս Խորհրդային Հայաստանի եւ Վրաստանի:[73] Դրանից մոտ մեկ ամիս անց՝ հուլիսի 17-ին Պոտսդամում հաղթանակած դաշնակիցների հերթական եւ վերջին կոնֆերանսում Արտաքին գործերի ժողկոմ Վ.Մոլոտովը ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի ղեկավարներին հայտնեց նույն այդ տարածքները վերադարձնելու մտադրության մասին: Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարար Է.Իդենի հետ տարածքների հարցը քննարկելիս, Մոլոտովը փաստարկեց այն շուրջ 1 մլն սփյուռքահայերի մեծ մասի Խորհրդային Հայաստան ներգաղթելու ցանկությամբ, որը անհրաժեշտաբար պահանջում է նրա տարածքի ընդարձակում՝ ի հաշիվ Թուրքիային անցած շրջանների:[74] Սակայն Արեւմուտքի երկրները, որոնք արդեն իսկ մտահոգված հետեւում էին Խորհրդային Միության ռազմաքաղաքական ազդեցության հաստատմանը Արեւելյան Եվրոպայում, բնավ էլ մտադիր չէին համաձայնվել նրա տարածմանը նաեւ դեպի հարավ: Մի բան, որը եվրոպական երկրների արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից էր ողջ XIX դ. ընթացքում:

ԱՄՆ-ի եւ Մեծ Բրիտանիայի նման դիրքորոշումը, սակայն, չազդեց Ստալինի վճռականության վրա. Թուրքիայի հետ սահմանամերձ շրջաններում սկսվեցին համապատասխան ռազմական պատրաստություններ, սկսեցին մշակվել նաեւ որոշակի ծրագրեր՝ կապված վերադարձվելիք տարածքների ղեկավարման հետ: Այդ իմաստով ուշագրավ է հետեւյալ փաստը:

1945թ. նոյեմբերի վերջին Գիտությունների ակադեմիայի հրավերով Մոսկվայից Երեւան է ժամանում հայտնի պատմաբան, գրականագետ եւ արվեստաբան պրոֆեսոր Ա.Ջիվիլեգովը: Եվրոպական երկրների պատմության խոշոր մասնագետ լինելով հանդերձ, նա դեռեւս մինչ 1917թ. բոլշեւիկյան հեղափոխությունը հրապարակել էր Արեւմտյան Հայաստանի քաղաքական պատմությանը նվիրված մի շարք աշխատություններ: Երկար ընդմիջումից հետո՝ 1945թ., Մոսկվայում նրան, հասկանալի պատճառներով, հանձնարարվում է պատրաստել հրապարակային դասախոսություն՝ «Հայաստանը եւ Թուրքիան» վերնագրով: Երեւանում Ա.Ջիվիլեգովը հանդիպում է նաեւ Արտաքին գործերի ժողկոմ Ս.Կարապետյանին, որին էլ պատմում է գնացքում Պաշտպանության ժողկոմի-

սարիատի բարձրաստիճան մի գեներալի հետ իր զրույցի մասին: «Գեներալ Չեսնիխը իր հետ կուպեում ուներ Անդրկովկասի մեծ մասշտաբի քարտեզ՝ խորհրդա-թուրքական սահմանից այն կողմի վրա արած տարբեր նշումներով: Իմանալով իմ ով լինելը, գեներալը մեծ վստահություն դրսևորեց իմ հանդեպ ...Չեսնիխը ասաց, որ գնում է Երեւան, ուր պետք է հանդիպի զինվորական եւ քաղաքացիական պատասխանատուների հետ՝ տարածքային պահանջների հարցով: Զրույցի ժամանակ գեներալը փոխանցեց ինձ քարտեզը եւ ասաց. «Ապա, գծեք, ինչպե՞ս կանցկացնեիք նոր սահմանը Խորհրդային Միության եւ Թուրքիայի միջեւ»: Ես դա ընդունեցի որպես կատակ եւ ասացի. «Իրազե՞կ եմ, արդյոք, ես այդ հարցում»: Չեսնիխը պատասխանեց. «Իսկ ինչու չասել անձնական կարծիքը, Դուք Հայկական հարցի լավ գիտակ եք...»: Իմ կարծիքով, ասացի ես, Սեւ ծովի ծովափում սահմանը պետք է անցնի Տրապիզոնի շրջանով: Գեներալը անմիջապես ընդհատեց ինձ եւ ասաց. «Իսկ ինչո՞ւ եք Դուք դուրս թողնում Տրապիզոնը, իմ կարծիքով, այն պետք է լինի սահմանից այս կողմ»: Ես պատասխանեցի դրան. «Այդ դեպում մտցրեք նաեւ Էրզրումը եւ Բայբուրտը»: Չեսնիխը ամենայն լրջությամբ պատասխանեց. «Իհարկե, իսկ ինչու ոչ»: Զթաքցնելով ուրախությունս՝ ես հարցրի, իսկ ինչպիսի՞ն կլինի սահմանը Վանա լճի շրջանում: Նա պատասխանեց, որ այն կանցնի լճից դեպի հյուսիս: Իմ այն բացականչությանը, որ նշանակում է, թե լիճը կմնա սահմանից այն կողմ, Չեսնիխը նկատեց. «Ըստ ամենայնի, այո, բայց փոխարենը Ալաշկերտի հարթավայրը, Բայազետը կմնան սահմանից այս կողմ»: ...Չեսնիխի հետ գնում էր բարձրաստիճան սպաների մի մեծ խումբ...»:[75]

Ստալինի մշակած ծրագրում, դիվանագիտական եւ ռազմական գործողություններից զատ, ինչպես նշվեց, հատուկ տեղ էր հատկացվում նաեւ արտասահմանի հայերի ներգաղթին: Եվ, ահա, 1945թ. նոյեմբերի 21-ին Խորհրդային Միության կառավարությունը ընդունեց հետեւյալ որոշումը:

«Ի նշանավորումն Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 25-ամյակի, ՍՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը որոշում է.

1. Նկատի առնելով արտասահմանում ապրող հայերի դիմումները հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու թույլտվության մասին եւ Հայաստանի ՍՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, թույլատրել ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդին կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող հայերի վերադարձը հայրենիք, որոնք այդ մասին ցանկություն են հայտնել:

2. Ընդունել Սովետական Հայաստանի կառավարության առաջարկությունը՝ Հայաստանի Ժողկոմխորհին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման Կոմիտե ստեղծելու մասին:

3. Հանձնարարել Սովետական Հայաստանի Ժողկոմխորհին արտասահմանից հայրենիք վերադարձող հայերի բնակարանային անհատական շինարարությունն ապահովել պետական վարկով՝ տան արժեքի 50% չափով:

4. Արտասահմանից ՍՍՀՄ վերադարձող հայ քաղաքացիներին ազատել մաքսային տուրքերից՝ իրենց պատկանող եւ բնակության նոր վայր տեղափոխվող գույքի համար:

ՍՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ
Ի.Ստալին»[76]

Եթե մինչեւ Ստալինի այս որոշումը, Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներն արվում էին միայն Խորհրդային Միության ամենաբարձր ղեկավարության կողմից, ապա այն հրապարակելուց հետո նմանատիպ հայտարարություններով հանդես գալու հնարավորություն, եթե ոչ պարտավորություն, ստացան նաեւ Հայաստանի իշխանությունները: Ճուրջ երկու ամիս անց՝ 1946թ. փետրվարի 3-ին «Սովետական Հայաստան» պաշտոնաթերթը հրապարակեց Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի ճառը, որի հիմնական մասը նվիրված էր այդ հարցերին: Խոսելով հայ ժողովրդի համար Խորհրդային Միության կառավարության որոշման պատմական նշանակության, արտասահմանի հայության կողմից այն խանդավառությամբ ընդունելու մասին՝ Գր.Հարությունյանը, նշում էր.

«...Մենք առաջիկա տարիներում Հայաստանի ներկայիս տերիտորիայում կարող ենք ընդունել մաքսիմում 350-400 հազար մարդ: Այնինչ, ցանկացողները ավելի շատ են: Մենք ինչպե՞ս պետք է վարվենք մնացածների հետ: Մնացած 500-600 հազար հայերին ընդունելու համար, մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը:

«Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին: Իսկ նրանց մերժելու մենք ոչ մի բարոյական իրավունք չունենք: Դա է ներկայումս Թուրքիայի ձեռքին գտնվող հայկական մարզերը Սովետական Հայաստանին վերադարձնելու հարցի այժմեականությունը: Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, նկատի առնելով նրա այժմեականությունը»:[77]

Դժվար է ասել, քե ինքը՝ Գ.Հարությունյանը, հավատում էր, արդյոք, իր բերած թվերին, քանզի ըստ դրանց, Խորհրդային Միության սահման-

երրորդ անընդմեջ հանգանակությունն էր, որ անցկացվելու էր ընդամենը երկու-երեք տարիների ընթացքում: Հանգանակվող գումարը՝ գրեթե ամբողջությամբ, այս դեպքում եւս պետք է ապահովեր ամերիկահայությունը, ինչը, նկատի առնելով նրա աննախադեպ չափը՝ մեկ միլիոն դոլար, հանգանակության հաջող իրականացումը դարձնում էր չափազանց բարդ մի խնդիր: Նման պայմաններում Միությունը իր հաջողության երաշխիքը համարեց համապատասխան միջոցառումների ծրագրավորումն ու նախապատրաստումը, աշխատանքի բաժանումը ըստ շրջանների եւ ոլորտների: Հանգանակությունը կազմակերպելու նպատակով ստեղծվեց Հանգանակիչ Կենտրոնական Հանձնախումբ, որը գլխավորեց Միության փոխնախագահ Լեւոն Կերտանը, իսկ գանձապահի պատասխանատու պաշտոնը ստանձնեց՝ հակառակ իր տկարության, անվերապահ վստահություն վայելող Միհրան Գարակյոզյանը: Նկատի առնելով քարոզչական աշխատանքի կարեւորությունը՝ ստեղծվեց նաեւ Բրոպականտի Ցանձնախումբ, որի գործունեության մասին «Յուշարար»-ը գրում էր. «Ամերիկահայ մամուլը, անխտիր, մասնաւոր թիւեր նուիրեց եւ էջեր տրամադրեց Միլիոն Տոլարի հանգանակութիւնը յաջողցնելու համար: Եօթանասուն հայ մտաւորականներ եւ ազգային առաջնորդներ ներշնչող յօդուածներ ստորագրեցին եւ հայրենասիրութեան եւ զոհաբերութեան ոգին արծարծեցին, ընդառաջ երթալով Բրոպականտի Ցանձնախումբին խնդրանքին: Ծանուցումներու, յայտարարութեանց մեծ ու փոքր թուցիկներու պատրաստութիւնը այս խումբը կատարեց»:[81] Ինչպես եւ նախորդ հանգանակությունների դեպքում, այս անգամ եւս հանգանակության հաջողությունը պայմանավորված էր Միության բոլոր մասնաճյուղերի աժխույժ եւ հետեւողական աշխատանքով: Այդ առումով ՀԲԸ Միության 1946թ. տարեգրքում հատկապես կարեւորելով որոշ՝ Կալիֆորնիայի, Նյու Յորքի, Նյու Ինգլընդի շրջանակային հանձնաժողովների աշխատանքը, հատուկ նշվում էր. «Մասնաճիւղերուն մէջ առաջին տեղը կը գրաւէ Տիթրոյթը իր 110.000 տոլարի մասնակցութեամբ»:[82] Այստեղ հանգանակիչ հանձնախմբի նախագահն էր նախորդ հանգանակություններից հայտնի, նույն Ալեք Մանուկյանը:

Ներգաղթի Մեկ Միլիոնի Հանգանակությունը, որը սկիզբ առավ 1946թ. ապրիլին եւ ավարտվեց 1947թ. հունիսին, պսակվեց արտակարգ, իսկ ոմանց համար անսպասելի մեծ հաջողությամբ: ԱՄՆ-ում, Կանադայում եւ Հարավային Ամերիկայի երկրներում հանգանակության արդյունքն էր 1.073.810 դոլար, իսկ այլ երկրներում (Ֆրանսիա, Եգիպտոս, Հունաստան, Անգլիա, Իտալիա եւ այլն)՝ 339.232 դոլար: Ինչպես նշվում էր Միության տեղեկագրում, այդ արդյունքը «...ոչ միայն պատիւ կը բերէ մեր ժողովուրդին ազգային գիտակցութեան, այլ եւ գոհունակութեամբ կը լեցնէ մեր Միութիւնը, որ զայն կազմակերպեց եւ ղեկավարեց, եւ մեզի իրենց թանկագին գործակցութիւնը բերող բոլոր հայ կազմակերպութիւններն ու մարմինները»:[83]

Ամերիկայի երկրներում հավաքած գումարը բաշխվել էր հետեւյալ կերպ. Հայաստան, Ներգաղթի կոմիտեին՝ վարձված շոգենավերի համար 700.000, վեց էքսկավատորների եւ հագուստեղենի համար՝ 92.642, տարբեր երկրների ներգաղթի հանձնախմբերին փոխադրության եւ հագուստեղենի համար, այդ թվում, Իրան՝ 110.041, Լիբանան՝ 91.486, Սիրիա՝ 33.750, Բուլղարիա՝ 14.358, Հունաստան՝ 10.039, Ռումինիա՝ 5.429, եւս մոտ 26.000 դոլար հին հագուստեղենի եւ կազմակերպական տարբեր տեսակի ծախսերի համար: 1946թ. նշված երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեցին 51.060 մարդ:[84]

1947թ. ապրիլին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը Հայաստանի Մինիստրների Սովետի (1946 թվականից այսպես էր կառավարության պաշտոնական անվանումը) նախագահի տեղակալ Ս.Կարապետյանից ստացավ հետեւյալ հեռագիրը. «Ստացուած տեղեկութիւնների եւ մամուլի հաղորդումների համաձայն, յաջողութեամբ աւարտել էք Ներգաղթի Մէկ Միլիոն Տոլարի հանգանակութիւնը: 1947 թուի ներգաղթի աշխատանքներն արդէն սկսուած են եւ այս տարի նախատեսնում է ներգաղթ կատարել նաեւ Ֆրանսիայից, Եգիպտոսից, Հարաւային եւ Հիւսիսային Ամերիկայից: Յունաստանից նախատեսնում է հիմնականում աւարտել այնտեղ մնացած հայութեան ներգաղթը:

Խնդրում ենք նաւերի փոխադրավարձն ապահովելու համար տեղափոխել Հայաստանի կառավարութեան թիւ 24001 ընթացիկ հաշուին Սովետական Միութեան Պետական պանքի Հայաստանի գրասենյակում 800.000 տոլար»:[85]

Միության Կենտրոնական Վարչությունը դեռ շարունակվող հանգանակության արդեն պատրաստի գումարից անմիջապես Մոսկվա փոխանցեց 400.000 դոլար: Սակայն, նկատելով նոր ներգաղթի հետ կապված ծախսերը, որոշվում է նաեւ նույն 1947թ. ձեռնարկել եւս մեկ, այս անգամ Կես միլիոն դոլարի հանգանակություն:

Հայկական Համաշխարհային Կոնգրեսը եւ նոր հանգանակությունը

Գրեթե այդ նույն օրերին՝ ապրիլի 30-ից մայիսի 4-ը, Նյու Յորքում կայացավ Հայկական Համաշխարհային Կոնգրեսը, որը դիմեց նորաստեղծ Միացյալ Ազգերի Կազմակերպությանը, խնդրելով «...հայոց հողային պահանջները դնել Միացյալ Ազգերու օրակարգին վրայ եւ արդար ու հաստատակամ վճիռով մը՝ ազատագրել տակաւին թրքական լուծին տակ գտնուող Ուիլսոնի սահմանագծած հայապատկան երկրամասը, եւ վերադարձնել զայն իր օրինաւոր տիրոջ՝ Հայկական Հանրապետութեան»:[86]

Կոնգրեսի ավարտից հետո նրա պատվիրակությունը հանդիպեց ԱՄՆ-ի Պետքարտուղարի տեղակալ Դին Էչիսոնի (1948թ. նախագահական ընտրություններից հետո նա գլխավորեց երկրի արտաքին քաղաքականության գերատեսչությունը) հետ: Նկատի առնելով ինչպես Կոնգրեսի, այնպես էլ այդ հանդիպման կարեւորությունը՝ Նյու Յորքում Խորհրդային Միության Գլխավոր հյուպատոս Յակով Լոմակինը՝ ՍՍՀՄ Արտաքին գործերի մինիստր Վ.Մոլոտովին հղեց հատուկ մի հաղորդագրություն, որում գրում էր. «Պատվիրակությունը Էչիսոնին ներկայացրեց Հայկական Համաշխարհային Կոնգրեսի հուշագիրը՝ տարածքային հարցի վերաբերյալ եւ իր դիմումը: Դիմումի մեջ պատվիրակությունը խնդրում էր պաշտպանել հայերի իրավացի պահանջը «Թուրքիայից հայկական հողերի ետ վերցնելու եւ հայ ժողովրդին հանձնելու մասին»: Էչիսոնը ...հարցրեց պատվիրակներին՝ ինչ են պատրաստվում անել հայերը այդ տարածքների հետ եւ չեն ցանկանում, արդյոք, նրանք ստեղծել ինքնուրույն հայկական պետություն՝ ՄԱԿ-ի հովանու ներքո: Ներսոյան եպիսկոպոսը պատասխանեց, որ հայերը ցանկանում են այդ տարածքները կցել Խորհրդային Հայաստանին: ...Էչիսոնը այդ պատասխանից շփոթվեց եւ տարակուսանքով հարցրեց՝ արդյոք բոլոր հայերը (այդ թվում նա, ըստ երեւույթին, նկատի ուներ նաեւ պատվիրակության անդամներին) կոմունիստներ չեն, որ նման պահանջ են առաջ քաշում եւ մտադիր են տեղափոխվել Խորհրդային Հայաստան: Այնուհետեւ Էչիսոնը հայտարարեց, որ Պետդեպարտամենտը չի կարող ընդունել նման պահանջը, քանի որ դա ինքնասպանություն կնշանակեր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության համար»:[87]

Այլ պատասխան չէր էլ կարող լինել արդեն սկսված սառը պատերազմի պայմաններում, որի նպատակն էր՝ ամերիկյան հայտնի հրապարակախոս Ուոլտեր Լիպմանի խոսքերով, «...կասեցնել Ռուսաստանի

կողմից իր ազդեցության ոլորտի ընդարձակումը ...իսկ այնուհետեւ, պարտադրել Ռուսաստանին սեղմել այդ ոլորտը»:[88] Դրա ապացույցն էր Հայկական Կոնգրեսի նախօրեին՝ 1947թ. մարտին ԱՄՆ-ի նախագահ Հերի Թրումենի հայտարարած «Վարդապետությունը» (Թրումենի դոկտրինը), որով երաշխավորում էր Թուրքիայի եւ Հունաստանի տարածքային ամբողջականությունը: Այնուամենայնիվ, կարելի էր հասկանալ նաեւ հայերին: Ստալինի քաղաքականությունը եզակի հնարավորություն էր ստեղծում իրենց հայրենի տարածքների գոնե մի մասը վերադարձնելու համար, եւ հանուն դրա իրագործման նրանք ոչ թե ի վիճակի չէին, այլ պարզապես չէին ցանկանում հաշտվել իրենց հույսերի վրա խաչ քաշող քաղաքական նոր իրողության հետ:

Հայկական Կոնգրեսի աշխատանքներին մասնակցեցին սփյուռքի բոլոր քաղաքական կազմակերպությունները, բացառությամբ Դաշնակցության, որը շատ արագ արձագանքեց «սառը պատերազմի» ազդակներին եւ վերստին՝ պատերազմյան տարիների ընդմիջումից հետո, որդեգրեց իր համար ավանդական կոշտ հակախորհրդային կեցվածքը: Ի տարբերություն Կոնգրեսի մասնակիցների, վերադարձված տարածքների վրա, ըստ Դաշնակցության, պետք էր ստեղծել Խորհրդային Միությունից անկախ հայկական պետություն: Եվ, կարծես, այդ տարբերակը ավելի շահեկան էր՝ հիշենք Դ.Էչիսոնի խոսքերը: Բայց դրանք լոկ պարապ խոսքեր էին, իսկ իրողությունը Հ.Թրումենի դոկտրինն էր, որն էլ ձախողեց Ստալինի մտադրությունները:

ՀԲԸ Միությունը նույնպես չմասնակցեց կոնգրեսի աշխատանքներին, բայց լրիվ այլ պատճառով: Պատասխանելով այդ առիթով հնչած քննադատությանը՝ Միության վարիչ-պատվիրակ Վ.Մալեզյանը հիշեցնում էր, որ «Հիմն. Կանոնագիրը ՀԲԸ Միութեան կ'արգիլէ քաղաքական ոեւէ գործունէութիւն եւ այդ հիման վրայ է որ հարկադրուած է գործել այս երկրին մէջ, հարկազերծ ըլլալ իր զուտ բարեսիրական հանգամանքին շնորհիւ: Այլապէս, Միութիւնը սիրայօժար փութկոտութեամբ պիտի ուզէր մասնակցիլ յառաջիկա... գումարուելիք Համագաղութային Քոնկրեսին, որուն օրակարգի կարեւորագոյն խնդիրը ամէն հայու սրտին կը խօսի գերադրապէս»: Բերելով այս ծանոթ փաստարկները՝ Վ.Մալեզյանը միեւնույն ժամանակ, կարծես, հասկացնել էր տալիս դրանց ձեւական լինելու հանգամանքը. «...Միութեան անդամները ազատ են Քոնկրեսի աշխատութեանց մասնակցելու սոսկ անհատական հանգամանքով»:[89] Օգտվելով, ահա, այս հնարավորությունից (եւ, անշուշտ, Միության ղեկավարության համաձայնությամբ), Մեկ Միլիոնի Հանգանակության նախագահ Լեւոն Կերտանը հանդես եկավ զեկուցումով՝ Կոնգրեսի մայիսի 1-ի նիս-

տին, որը նվիրված էր հայրենադարձության խնդիրներին: Հայկական Կոնգրեսի որոշմամբ, ներգաղթը իրականացնելու նպատակով մինչեւ 1950թ. պետք է հանգանակվեր եւս 5 մլն դոլար, այդ թվում 1 մլն՝ նույն 1947թ.: Արդյունքում՝ ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը, «ընդառաջ երթալով ժողովրդային խաւերու եւ մանաւանդ Համաշխարհային Հայկ. Քոնկրեսին կողմէ արտայայտուած բաղձանքներուն, որոշում կայացուց որ Կէս Միլիոն Տոլարի յաւելուածական հանգանակութիւնը բարձրացուի Մէկ Միլիոն Տոլարի, այն ակնկալութեամբ որ այդ գումարը մինչեւ տարեվերջ ապահովուի»:[90]

Նոր հանգանակության նախատեսած ժամկետները շատ հեռու էին իրատեսական լինելուց: Ամենից լավ դա հասկանում էին հենց իրենք՝ ՀԲԸ Միության ղեկավարները, քանզի դեռ չէր հայտարարվել Առաջին Մեկ Միլիոնի հանգանակության ավարտման մասին: Ակնհայտ էր, որ նոր՝ Երկրորդ Մեկ Միլիոնի Հանգանակությունը հնարավոր էր ձեռնարկել միայն 1947 աշնանը, ոչ շուտ: ՀԲԸ Միության նորանշանակ Ընդհանուր տնօրեն Գ.Կիրակոսյանը Ներգաղթի կոմիտեի նախագահ Բ.Աստվածատրյանին հասցեագրած իր նամակում գրում էր. «Ի մօտոյ պիտի ձեռնարկենք Երկրորդ Միլիոն Տոլարի հանգանակութեան, որուն բացումը քանի մը օրէն կը յայտարարուի մեր Նախագահին կոչով եւ որուն համար նախապատրաստական աշխատութիւնները յառաջ կը տարուին մեծ փութաջանութեամբ: Ժողովուրդին համար թէեւ քիչ մը ծանր է, 5-6 տարիէ ի վեր, առանց ընդմիջումի, հանգանակութեանց իր բաժինը բերել, մանաւանդ երկու վերջիններուն... բայց մեր Միութիւնը ամէն ջանք ի գործ պիտի դնէ որպէսզի դարձեալ յաջողի գոյացնել առաջադրուած Երկրորդ Միլիոն տոլարի գումարը»:[91]

Հանգանակությունը սկսվելուց մոտ մեկ տարի անց՝ 1948թ. հունիսին, Միությունը ամփոփեց նախնական, ոչ լրիվ արդյունքները, որոնց համաձայն ԱՄՆ-ում եւ Կանադայում հավաքված գումարը կազմում էր շուրջ 331.130 դոլար: Այդ գումարից 100.000, ինչպես նաեւ 6 էքսկավատոր (դրանց ընդհանուր քանակը կազմեց 11), մեծ քանակությամբ հագուստ, կոշիկ, կաթի փոշի եւ այլն, նույն տարում ուղարկվեց Հայաստան: Ակնհայտ էր, սակայն, որ լավագույն դեպքում վերջնական արդյունքը չէր գերազանցելու կես միլիոնը, ինչը հաստատում էր Միության իրատեսությունը, երբ նա սկզբնապես՝ մինչ Հայկական Կոնգրեսի որոշումը, նախատեսում էր հանգանակել հենց այդքան գումար:

Սառը պատերազմի դրսեւորումները

Եվ այնուամենայնիվ, կարելի՞ է, արդյոք, սփյուռքահայերի, առաջին հերթին, ամերիկահայերի նվազող մասնակցությունը բացատրել անընդմեջ հանգանակությունների փաստով միայն: Չժխտելով դրա կարեւորությունը՝ այդուհանդերձ, հարկ է նկատի առնել նաեւ այլ, արտաքին բնույթի եւ առավել ազդու գործոնների ազդեցությունը:

Սկսված սառը պատերազմի պայմաններում որոշ երկրների իշխանությունները խիստ բացասաբար էին վերաբերում իրենց քաղաքացիների արտագաղթին Խորհրդային Միություն, ինչը ունենում էր ամենատարբեր դրսեւորումներ: Այսպես, 1947թ. հոկտեմբերին մի խումբ բոստոնահայերի Հայաստան արտագաղթելու առիթով Հայ Առաջադիմական Լիգան որոշել էր ընդունելություն կազմակերպել տեղի հյուրանոցներից մեկում: Վերջին պահին, սակայն, հյուրանոցի տերը հրաժարվում է ընդունել հայերին՝ հայտարարելով, թե չի ցանկանում գործ ունենալ ամերիկյան քաղաքացիությունից հրաժարված մարդկանց հետ: Ավելին, նրա խնդրանքով տեղի ոստիկանապետը հայերի մուտքը հյուրանոց արգելելու նպատակով այնտեղ է ուղարկում մահակներով եւ արցունքաբեր նռնակներով զինված 150 ոստիկան: Միաժամանակ նույն նպատակով ցույց են կազմակերպում պատերազմի վետերանները, որոնք ԱՄՆ-ի նախագահին, պետքարտուղարին եւ Հետաքննության դաշնային բյուրոյի տնօրենին հղած իրենց հեռագրերում պահանջում էին երկրից անմիջապես արտաքսել, որպես դավաճանների, այն հայերին, որոնք Հայաստան արտագաղթելու կապակցությամբ պարտադրաբար հրաժարվել էին ամերիկյան հպատակությունից: Նույն պատճառաբանությամբ մի շարք ամերիկյան թերթեր թշնամական դիրք էին գրավել արտագաղթող հայերի հանդեպ եւ իրենց հոդվածներում կառավարությունից պահանջում էին ոչ միայն արտաքսել հայերին, այլեւ բռնագրավել նրանց պատկանող ողջ գույքը:[92] Նման վերաբերմունքի ամենածայրահեղ դրսեւորումներից էր Համբարձում Զոլակյանի գործը, որին իշխանությունները թույլ չտվեցին Հայաստան տանել իր երեք զավակներին:[93]

Արտագաղթող հայերի նկատմամբ անբարյացակամ վերաբերմունք էր դրսեւորվում նաեւ այլ երկրներում: Իրանի կառավարությունը, որը 1947թ. ապրիլին թույլատրել էր հայերի արտագաղթը Հայաստան, հետագա ամիսներին նախ արգելեց ընտանի կենդանիների արտահանումը, ինչը ուղղված էր իրանահայ գյուղացիության դեմ, իսկ այնուհետեւ, ընդհանրապես արգելեց հայերի ներգաղթը Հայաստան: Ստեղծված պայմաններում Իրանում Խորհրդային Միության դեսպանատունը ստիպված

էր հայտարարել 1947թ. ներգաղթի դադարեցման մասին: Մինչդեռ, Իրանի իշխանությունները, ձգտելով խախտել տեղի հայերի հավատը ներգաղթի հանդեպ, մի կողմից հայտարարեցին, թե ներգաղթը դադարեցվել է հենց իսկ Խորհրդային Միության կողմից, իսկ մյուս կողմից՝ այլեւայլ հալածանքների ենթարկեցին երկրի հյուսիսում՝ Իրանական Ադրբեջանում բնակվող հայերին: Այդ ամենի արդյունքում ներգաղթել ցանկացող շուրջ 15.000 իրանահայեր հայտնվեցին անելանելի վիճակում. «Թշուառութեան մատնուած են մանաւանդ մեծ քաղաքները հաւաքուած հազարաւոր երկրագործներ, որոնք պարսիկ հողատէրերու կալուածներուն վրայ կ'աշխատէին եւ չեն կրնար ետ վերադառնալ, իրենց գործերը պարսիկ գիւղացիներու յանձնուած ըլլալով»:[94] Տեղեկանալով այս ամենին՝ Բ.Աստվածատրյանը 1948թ. մարտի 1-ին ՀԲԸ Միությանը հղած իր հեռագրում խնդրում էր հավաքված միջոցներից որոշ գումար շտապ կերպով փոխադրել Իրան՝ այդ մարդկանց նյութական օգնություն ցույց տալու համար:[95]

ՀԲԸ Միությունը Թեհրանի իր մասնաճյուղի միջոցով մինչ այդ արդեն տեղյակ էր ստեղծված կացությանը եւ ուղարկել էր 46.000 դոլար: Հայտնելով այդ մասին Բ.Աստվածատրյանին՝ Միության փոխնախագահ Տիգրան Տիրատուրյանը գրում էր. «Մեր ստացած նորագոյն լուրերու համաձայն, այս օգնութեան շնորհիւ հնարաւոր եղած է ըստ բաւականին բարելաւել ներգաղթողներու վիճակը, ժամանակաւոր կերպով, պայմանաւ որ ի մօտոյ անոնք հնարաւորութիւն ունենան հայրենիք մեկնելու»:[96]

Ներգաղթի հանգանակությանը ամերիկահայերի մասնակցության վրա բացասաբար ազդեցին նաեւ դաշնակցական մամուլում հրապարակած հոդվածները, որոնցում ՀԲԸ Միությունը մեղադրվեց նրանում, որ հանգանակած գումարները իբր տրամադրել է ԱՄՆ-ում Խորհրդային Միության դեսպանատանը, որը, իր հերթին, օգտագործել է այն իր հակաամերիկյան գործունեության համար: Դաշնակցության կուսակցության նման գործելակերպը պատահական չէր: Երկրորդ Աշխարհամարտի տարիներին, երբ ֆաշիստական Գերմանիան հարձակվեց Խորհրդային Միության վրա, Դաշնակցության «Հայրենիք» պաշտոնաթերթը գրել էր. «Բարեբախտաբար, խորհրդային կառավարութիւնը ոչ այնքան զօրաւոր է, որ կարենայ ջախջախել Գերմանիան, ոչ ալ այնքան ներքնապէս զօրաւոր, որ երկարօրէն դիմանա Գերմանիոյ հարուածներուն»:[97] Քիչ անց, երբ Խորհրդային Միությունը ԱՄՆ-ի եւ Անգլիայի հետ միասին որպես դաշնակիցներ, պայքարեցին ֆաշիզմի դեմ, նա ստիպված էր հրաժարվել, ավելի ճիշտ, դադարեցնել իր հակախորհրդային քարոզչությունը: Սակայն սառը պատերազմը սկսվելուն պես նա անմիջապես վերսկսեց այն,

ինչի հետեւանքներից էր այդչափ ծանր քաղաքական մեղադրանքներ ներկայացնելը ՀԲԸ Միությանը: Բայց կար եւ մեկ այլ պատճառ: Արդեն նշվեց, որ պատերազմի տարիներին այդ կուսակցությունը, համենայն դեպս, նրա եվրոպական կառույցները, համագործակցեցին նացիստների հետ: Հետագայում Դաշնակցությունը ամեն կերպ ձգտում էր արդարացնել իր այդ գործելակերպը: Մասնավորապես, Թեհրանում հրատարակվող «Ալիք» թերթը «...Դրոյի ու նրա գործակիցների ֆաշիզմին մատուցած ծառայությունները որակեց իբրեւ գերմանական գայլին կուշտ պահելու ու հայ գառնուկին փրկելու քաղաքականություն»:[98] Այսօրինակ բացատրությունները, իհարկե, չէին կարող արդարացնել այդ կուսակցության վարքագիծը ֆաշիզմի դեմ պայքարած երկրների թե ժողովուրդների եւ թե ղեկավարների աչքերում: Վարկաբեկելով ՀԲԸ Միությունը եւ դրանով իսկ ընդհանրապես ներգաղթի գաղափարը՝ նա հույս ուներ ձեռք բերել հակախորհրդային կոշտ կեցվածք որդեգրած Թրումենի վարչակարգի վստահությունն ու բարեհաճությունը, իսկ մյուս կողմից՝ ընդմիշտ վարկաբեկել ՀԲԸ Միությունը՝ հաչս թե ԱՄՆ-ի եւ թե ամերիկահայերի:

Ստեղծված իրավիճակում «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ղեկավար դէմքեր եւ հայ եկեղեցական առաջնորդներ հարկադրուեցան երթալ Ուաշինկթըն, ուր մասնաւոր տեսակցութիւն ունեցան Պետական Բաժանմունքի (Դեպարտամենտի) գլխաւորներու հետ: Եվ վաւերական փաստերով համոզեցին զանոնց, որ հանգանակուած գումարներէն ոչ մէկ սենթ փոխանցուած է սովետ ռեէ պաշտօնեայի, այլ ամբողջը յատկացուած է ներգաղթողներու ճամբորդական կարիքներուն: Ուաշինկթընի հաւանութեամբ կատարուեցաւ 1947-ի հանգանակութիւնը: Բայց հայ հասարակութեան մէկ մասին մէջ, դաշնակցական վարիչներուն արձակած զրպարտչական արշաւը որոշ վախեր յարուցած էր: Եվ իբրեւ հետեւանք՝ շատեր վերապահ մնացին, ու նուիրահաւաքման արդիւնքը նշանակելի չափով նուազ եղաւ նախորդ տարուան գերակատարուած գումարէն»:[99]

Այդ հանդիպումից հետո է, որ ՀԲԸ Միության նախագահ Արշակ Գարակյոզյանը հանդես եկավ հատուկ հայտարարությամբ, որում, մասնավորապես, ասվում էր. «Միացեալ Նահանգներու Կառավարութիւնը միշտ մօտէն տեղեակ պահած ենք ՀԲԸ Միութեան ծրագրին եւ գործունէութեանց, որոնց հիմնական նպատակն է արտասահմանի մեր աստանդական եւ դժբախտ հայրենակիցներուն օգնութեան հասնիլ, անոնց նիւթական վիճակը բարելաւել եւ զօրավիգ ըլլալ անոնց ազգային ինքնութիւնը պահպանող բոլոր ազդակներուն, մինչեւ որ անոնք պատեհութիւնը ունենան երթալ իրենց Հայրենիքին մէջ հաստատուելու:

«Այդ ցանկալի պատեհութիւնը ներգաղթն է, որ ահա երկու տարիէ ի վեր կը կատարուի, Սով. Հայաստանի նախաձեռնութեամբ եւ ստանձնած զոհողութիւններով:

«Այս առթիւ կ'ուզենք մասնաւորապէս շեշտել թէ Ներգաղթի Հանգանակութեան մեր ձեռնարկին մասին Միացեալ Նահանգներու Կառավարութիւնը ոեւէ առարկութիւն չունի:

«Ներկայ Ցայտարարութիւնը հրատարակելով, մեր նպատակն է մի անգամ ընդմիշտ փարատել կարգ մը անտեղի մտավախութիւններ եւ ազատութեան ու բարգաւաճութեան այս մեծ երկրին բացառիկ բարիքները վայելող մեր ազգակիցներուն յիշեցնել, որ չմոռնան իրենց սրտի պարտականութիւնը մեր տարաբախտ բեկորներուն հանդէպ եւ Ներգաղթի Հանգանակութեան իրենց մասնակցութիւնը բերեն, անվարան եւ առատաձեռնօրէն»:[100]

Ներգաղթածների գոյավիճակը. 1949թ. արտաքսումը

Բայց կար հարցի եւ մյուս կողմը: Արդեն նշվեց, որ սփյուռքահայերի ներգաղթը Խորհրդային Միության ղեկավարության համար քաղաքական որոշակի նպատակների՝ Թուրքիային անցած տարածքների վերադարձմանն ուղղված ծրագրի իրագործման միջոցներից մեկն էր: Այն բանից հետո, երբ պարզ դարձավ այդ ծրագրի ձախողումը, անիմաստ դարձավ նաեւ ներգաղթը շարունակելը, ինչի մասին է վկայում ներգաղթողների քանակի կտրուկ նվազումը՝ 1946-ին՝ 51.060, 1947-ին՝ 35.438, 1948-ին՝ 3.092, իսկ 1949-ին՝ ընդամենը 162 մարդ:[101]

Իր կարեւոր դերը խաղաց նաեւ երկրի անպատրաստ լինելը այդ քանակությամբ ներգաղթողներ ընդունելու համար: Թեեւ Հայաստանի տարածքում պատերազմական գործողություններ չընթացան եւ նա չենթարկվեց անխուսափելի ավերածությունների, այնուամենայնիվ, հանրապետության, ինչպես եւ ողջ Խորհրդային Միության տնտեսությունը այդ բոլոր տարիներին ծառայեցվեց պատերազմական կարիքներին, եւ ժողովրդի ընդհանուր կենսամակարդակը առաջնթաց չունեցավ: Հակառակը՝ ամենուրեք առկա էր բնակարանների, սննդամթերքի, հագուստեղենի եւ առաջին անհրաժեշտության այլ ապրանքների պակաս:

Սկսած 1946թ. առաջին ամիսներից, Հայաստանի կառավարությունը բազմաթիվ որոշումներ էր ընդունում ներգաղթողներին հատկապես բնակարաններով ապահովելու նպատակով, որոնց կատարումը, սակայն, իրատեսական չէր եղած տնտեսական պայմաններում: Այսպես, կառավարության 1946թ. հունիսի 26-ի որոշման մեջ նշվում էր, որ Երեւանի չորս շրջաններում ներգաղթողների համար նախատեսված 1.500 սենյակներից (ոչ բնակարաններից) պատրաստ են միայն 274-ը: Էլ ավելի անմխիթար էր վիճակը գյուղական վայրերում, ուր նախատեսված 1.000 տներից 1946թ. օգոստոսի 10-ի դրությամբ ընթացքի մեջ էր միայն 462-ի շինարարությունը, եւ ոչ մի տան շինարարություն ընդհանրապես ավարտված չէր:[102] Նման իրավիճակում ներգաղթողները ստիպված էին բնակվել ամենազարհուրելի պայմաններում:[103]

Ինչպես Հայաստանի ղեկավարության, այնպես էլ նրա բնակչության մի մասի համար ներգաղթողների դժվարին կենսապայմանները արդարացվում էին այն հոգեբանությամբ, թե քանի որ ներգաղթողներին հնարավորություն է տրվել գալ Հայրենիք, ապա նրանք կարող են եւ պարտավոր են ապրել նույնպիսի պայմաններում, որոնցում ապրում է ժողովրդի հիմնական զանգվածը, ուստի եւ՝ «եթե մենք ապրում ենք, նրանք էլ կարող են»:

Նման մոտեցումը անհիմն չէր. պատմության մեջ՝ թե մինչ այդ եւ թե հետագայում, բազմաթիվ են դեպքերը, երբ ներգաղթողները, հաղթահարելով բոլոր տեսակի դժվարությունները, ստեղծել են պետություններ, մասնակցել են իրենց հայրենիքի վերաշինմանը: Եթե այդպիսին էր Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը, ապա առավել եւս նման ձեւով էր մտածում եւ գործում հայ սփյուռքը, ներառյալ ՀԲԸ Միությունը, որի արդյունքն էր տասնյակ հազարավոր հայերի ներգաղթը Հայաստան:

Եվ նրանք եկան ու ապրեցին իրենց հայրենիքում, որի առաջընթացին նպաստեցին իրենց ուժերի չափով: Ներգաղթողների ներդրումը հատկապես հայ մշակույթի, գիտության, բժշկության եւ այլ ոլորտներում հանրահայտ է եւ հազիվ թե կարիք ունի լրացուցիչ փաստարկների: Քիչ է գրված թվով ավելի շատ ներգաղթած հմուտ արհեստավորների, բարձրակարգ մասնագետների մասին, որոնց ավանդը երկրի զարգացման գործում նույնպես ակնհայտ է:

Այդ ամենը, սակայն, իրականության մի կողմն էր: Ներգաղթողները պարզապես չէին գիտակցում ու պատկերացնում այն սկզբունքային տարբերությունները, որ կային իրենց ապրած երկրների ու Խորհրդային Միության միջեւ: Բայց կանցնի որոշ ժամանակ, եւ նրանք կասեն. «Ներգաղթողը իր բնակութեան վայրը ընտրելու ազատ չէ. որոշուած բնակավայրը փոխելու ազատ չէ. իր նախաձեռնութեամբ գործելու ազատ չէ. ամէնից սարսափելին քով-քովի գալով հասարակութեան եւ ազգի յօգուտ մի բան ասելու կամ որոշելու ազատ չէ. մի խօսքով անհատը լիարժէք անհատականութիւն չէ, այլ խամաճիկ, կամազուրկ եւ զրկուած վսե-

մագոյն պարգեւ՝ ազատութիւնից...»:[104] Եվ այդ կյանքը, որը լի էր հիասթափությամբ, ափսոսանքով ու կորուստներով, ի վերջո, մի հայտնի չափով հանգեցրեց ներգաղթի, հայրենադարձության գաղափարի ու գործի վարկաբեկմանը:

Հիասթափությունն ու հուսալքումը ներգաղթողների մեջ այնչափ մեծ էր, որ նրանցից ոմանք դիմում էին նույնիսկ ծայրահեղ միջոցի՝ ապօրինի անցնելով պետական սահմանը, փորձում էին փախչել...Թուրքիա կամ Իրան: Իշխանությունների համար դեպքերի նման զարգացումը առավել անհանդուրժելի էր՝ նկատի առնելով հնարավոր ազդեցությունը Հայաստանի ողջ բնակչության տրամադրությունների վրա:

1949թ. հունիսի 13-ի լույս 14-ի գիշերը աքսորվեց եւ Հայաստանից դեպի Խորհրդային Միության հեռավոր շրջաններ արտաքսվեց 13.272 մարդ:[105] Բերելով այս թիվը՝ Արմենակ Մանուկյանը նշում է, որ դա այն իրական քանակն է, որն արտահայտված է Հայաստանի Ազգային անվտանգության եւ Ներքին գործերի նախարարությունների արխիվներում եղած անձնական գործերում: Որոշ հրապարակումներում այդ թիվը շատ ավելի մեծ է: Այսպես, Մ.Բազարյանը, որը այդ ժամանակ պետական պաշտոնյա էր, գրում էր. «Երէկ, Յունիս 13-14-ի լոյս գիշերը, երկու ժամուայ ընթացքում, 53 հազար մարդ, գուցէ աւելի, մեծամասնութեամբ ներգաղթողներ, տեղահան են արել եւ աքսորել Սիբիրի խորերը»:[106]

1949թ. հունիսին Խորհրդային Միության իշխանությունների կողմից իրականացված հայերի արտաքսումը Հայաստանից միայն վերջին տարիներին հայտնվեց ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում, եւ այդ պատճառով էլ նրա հետ կապված մի շարք հարցեր դեռեւս կարոտ են պարզաբանման: Այստեղ քննարկվող նյութի առնչությամբ անդրադառնամ միայն որոշ հանգամանքների:

Նախ հարկ է նշել, որ Խորհրդային Միությունում դեռեւս պատերազմի ժամանակ սկսվեց Կովկասի ժողովուրդների արտաքսումը՝ 1943թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին շուրջ 70 հազար կարաչայցիներ արտաքսվեցին Ղազախստան: Խորհրդային Միության Գերագույն Խորհրդի Նախագահության համապատասխան որոշման մեջ այդ գործողությունները հիմնավորվում էին հետեւյալ կերպ. «... գերմանա-ֆաշիստական զավթիչների կողմից Կարաչաեւի Ինքնավար մարզի տարածքի գրավման ընթացքում շատ կարաչաեւցիներ պահեցին իրենց որպես դավաճաններ, մտան խորհրդային իշխանության դեմ պայքարելու համար ստեղծված գերմանական ջոկատների շարքերը, մատնեցին գերմանացիներին ազնիվ խորհրդային քաղաքացիներին, ուղեկցում եւ ճանապարհներ էին ցույց տալիս գերմանական զորքերին, իսկ զավթիչներին քշելուց

հետո հակազդում են խորհրդային իշխանությունների կողմից անցկացվող միջոցառումներին, իշխանության մարմիններից թաքցնում են թշնամիներին ու գերմանացիների կողմից ուղարկված գործակալներին եւ ցույց են տալիս նրանց օգնություն...»:[107] Գրեթե նույն պատճառաբանությամբ արտաքսվեցին չեչենները, ինգուշները, բալկարները եւ Հյուսիսային Կովկասի որոշ այլ ժողովուրդներ:

Այլ հիմնավորում ունեցավ մարդկանց արտաքսումը Անդրկովկասից: Ինչպես վերը նշվել էր, 1943թ. շատ իրական էր դարձել թուրքական բանակի ներխուժումը Խորհրդային Միություն, ինչի մասին վկայում էր նրա 30 դիվիզիաների կենտրոնացումը խորհրդային սահմանի մոտ: Այդ պայմաններում, ինչպես գրում են Ն.Բուգայը եւ Ա.Գոնովը, Խորհրդային Միության իշխանություններին «...անհանգստացնում էին սահմանամերձ շրջանների մահմեդական բնակչության տրամադրությունները, որը, ինչպես նշվում էր փաստաթղթերում, «ստեղծված իրավիճակում կարող էր թեքվել Թուրքիայի կողմը»:[108] Նշված հեղինակները հենց դրանով են բացատրում այն, որ 1944թ. հուլիսին ԽՍՀՄ ներքին գործերի ժողկոմ Լ.Բերիան Ի.Ստալինին հղած նամակում առաջարկում էր վերաբնակեցնել Ախալցխայի, Ախալքալաքի, Բոգդանովկայի եւ Ադիգենի շրջաններում բնակվող թուրք մեսխեթցիներին, քրդերին եւ խեմշիններին,[109] ինչը եւ իրագործվեց նույն թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին:

Նման բացատրությունը, սակայն, դժվար է համարել բավարար: Բանն այն է, որ 1944թ. կեսերին թուրքական զորքերի ներխուժման մասին այլեւս խոսք չէր կարող լինել. պատերազմի ելքը արդեն վճռված էր, եւ Թուրքիան, հակառակը, պատրաստվում էր պատերազմ հայտարարել հենց Գերմանիային: Առավել հավանական է, որ նշված ժողովուրդների արտաքսումը պայմանավորված էր Ի.Ստալինի վերը հիշատակած ծրագրով՝ վերադարձնել Թուրքիային անցած Ռուսական կայսրության տարածքները: Այդ ծրագրի իրականացումը անխուսափելիորեն կհանգեցներ պատերազմական գործողությունների, որոնց հաջող ընթացքին կարող էր վտանգել մահմեդական հոծ բնակչության գոյությունը թիկունքում:

Եթե նշված երկու դեպքում իշխանությունները այդ մարդկանց արտաքսումը հիմնավորում էին պատերազմող երկրի արտաքին թշնամիների հետ նրանց իրական կամ սպասվող համագործակցությամբ, ապա այլ էր պատկերը 1949թ. արտաքսման պարագայում:

1949թ. մայիսի 17-ին Խորհրդային Միության Կոմկուսի Քաղբյուրոն կայացնում է որոշում «Սեւծովյան ափը, Վրացական եւ Ադրբեջանական ԽՍՀ քաղաքականապես անվստահելի տարրերից զտելու (մաքրելու) նպատակով» ընդմիշտ Ղազախական ԽՍՀ արտաքսել տեղի բոլոր հու-

նահպատակներին եւ խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին հունահպատակներին:[110] Իսկ արդեն մայիսի 29-ին ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի որոշմամբ թույլատրվում էր «...դաշնակցականների, թուրքական քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող թուրքերի եւ խորհրդային քաղաքացիություն ընդունած նախկին թուրքական քաղաքացիների, հունահպատակների, քաղաքացիություն չունեցող նախկին հունահպատակների եւ խորհրդային քաղաքացիություն ունեցող նախկին հունահպատակների»[111] արտաքսումը: Որպես բնակության նոր վայր «դաշնակցականների» համար նախատեսված էր Ալթայի երկրամասը:

Վերջին փաստաթուղթը ուշագրավ է հատկապես իր ձեւակերպումներով: Եթե 1943-1944թթ. արտաքսումների մասին որոշումներում նշվում էին այս կամ այն ժողովուրդները (բալկարներ, չեչեններ, թուրքեր եւ այլն), ապա այս դեպքում չափանիշներն են՝ «դաշնակցականներ, թրքահպատակներ, հունահպատակներ»: Ա.Մանուկյանը այդ առիթով նկատում է. «...հայերը որպես արտաքսվողներ չեն հիշատակվում: Սակայն հասկանալի է, որ իրական կամ ոչ իրական դաշնակցականներ կարող էին լինել միայն հայերը: Ավելին, պատերազմից հետո, զանգվածային ներգաղթի արդյունքում Հայաստանում, բնականաբար, մեծ թիվ էին կազմում Թուրքիայի եւ Հունաստանի նախկին քաղաքացիները, որոնք եւս ընդգրկվում էին արտաքսվողների ցուցակներում»:[112] Այս ճշմարիտ եզրակացությունից, իհարկե, չի հետեւում, որ նշված որոշումը ուղղված էր միայն ու միայն հայերի եւ հատկապես ներգաղթածների դեմ, քանի որ այդ դեպքում պետք է նշված լինեին նաեւ Իրանի, Եգիպտոսի, Ֆրանսիայի եւ այլ երկրների հպատակություն ունեցողները: Կարելի է ենթադրել, որ Թուրքիայի եւ Հունաստանի հետ կապ ունեցող մարդկանց (անկախ ժամանակից եւ ազգությունից) հիշատակումը բացատրվում է մինչ այդ՝ 1947թ. այդ երկրների ԱՄՆ-ի պաշտպանության տակ անցնելու փաստով: Սա սկիզբ առած սառը պատերազմի առաջին դրսեւորումներից էր:

Ա.Մանուկյանը, անդրադառնալով Հայաստանում 1949թ. աքսորվածներին ներկայացված մեղադրանքների հարցին, նշում է, որ դրանք գրեթե նույնությամբ կրկնվում էին. «...հիմնական մեղադրանքներն էին նախկինում Դաշնակցության կուսակցության անդամ լինելը եւ պատերազմի տարիներին գերեվարվելն ու «Հայկական լեգեոնում» ծառայելը»:[113] Ֆաշիստական Գերմանիայի բանակի կազմում գործող «Հայկական լեգեոնի» (եթե նման անվանման նպատակն էր այդ զորամիավորումները ներկայացնել որպես Առաջին Աշխարհամարտում թուրքերի դեմ կռվող «Հայկական լեգեոնի» ժառանգորդներ, ապա պետք է խոսել արտասովոր ցինիզմի մասին) կազմակերպիչներն ու ղեկավարները հիմնականում Դաշնակցության անդամներն էին: Ինչ վերաբերում է «Հայկական լեգեոնի» անձնակազմին, ապա այն հիմնականում համալրված էր գերի ընկած խորհրդային բանակի հայազգի զինվորականներով, իսկ համաձայն դեռեւս 1941թ. Ի.Ստալինի ստորագրած մի հրամանի՝ խորհրդային բոլոր ռազմագերիները հայտարարվել էին հայրենիքի թշնամիներ եւ ենթակա էին աքսորման:

Մեղադրանքների նման բնույթը բացատրելի է դարձնում Խորհրդային Միության կառավարության հետեւյալ որոշման մեջ «դաշնակցականներ» ձեւակերպումը: Առնվազն միամտություն կլիներ կարծել, թե Խորհրդային Միության իշխանությունները եւ անձամբ Ստալինը, կարող են անպատիժ թողնել մարդկանց, որոնք գերմանական բանակի կազմում ներխուժել էին երկիր եւ մարտական գործողություններ վարել Կարմիր բանակի դեմ: Դա այն գինն էր, որ վաղ թե ուշ պետք է վճարվեր Դաշնակցության վերոհիշյալ «գերմանական գայլի եւ հայ գառնուկի» քաղաքականության համար: Պատերազմից անմիջապես հետո իշխանությունների համար պահը հարմար չէր՝ իրականացվում էր հայերի ներգաղթը: Սակայն նույն այդ տարիներին Դաշնակցությունը դեմ դուրս եկավ թե հայրենադարձությանը եւ թե Թուրքիայից հայկական տարածքների վերադարձման դեպքում Խորհրդային Միությանը վերամիավորվելուն: Այսքանից հետո, ըստ Ստալինի, պետք է պատժվեին ներգաղթած հայերը՝ որպես Դաշնակցության իրական կամ կարծեցյալ անդամներ ու համակիրներ:

1949թ. հազարավոր մարդկանց բռնադատումը տեղի ունեցավ ներգաղթողների վերջին խմբի Երեւան հասնելուց ընդամենը երեք ամիս անց եւ դրանով իսկ, կարծես, խորհրդանշեց թե ներգաղթի վերջնական ավարտը եւ թե սփյուռքի հետ համագործակցության հերթական դադարը: Դա մի ծանր եւ անսպասելի հարված էր ողջ սփյուռքի համար, որը հուսով էր, եթե չասենք համոզված, Հայաստանի հետ որակապես նոր, ավելի սերտ, քան երբեւէ, հարաբերությունների հաստատման մեջ: Կատարվածը անսպասելի ու ցավալի էր նախ եւ առաջ սփյուռքի այն անհատ մարդկանց եւ կազմակերպությունների համար, որոնք անցած չորս տարիների ընթացքում անձնվեր ծառայել եւ օժանդակել էին այդ հարաբերությունների կայացման գործին: Ավելին՝ նրանք պատրաստ էին, տրամադրվել էին էլ ավելի մեծ չափով նպաստել Հայաստանի առաջընթացին: Դա առավելապես վերաբերում էր ՀԲԸ Միությանը:

Երկու տարբեր ճակատագրեր

Խորհրդային Հայաստանում 1923-1937թթ. ՀԲԸ Միության գործունեությանը նվիրված բաժնի վերջում անդրադարձ եղավ Երեւանում Միության ներկայացուցչի՝ Հայկազ Գարակյոզյանի ողբերգական ճակատագրին: Այս անգամ խոսքը Միության, այսպես ասած, չկայացած ներկայացուցիչների մասին է:

1947 հունվարին ԱՄՆ-ում Խորհրդային Միության դեսպանին հանձնած հուշագրում ՀԲԸ Միությունը, նշելով Հայաստանի իշխանությունների հետ ոչ կանոնավոր նամակագրական կապի հանգամանքը, առաջարկում էր. «...եթե դա չի հանդիպի Երեւանի կառավարության առարկությանը, ընտրել հատուկ լիազորված մի անձ, որը վարեր նամակագրությունը, ինչպես դա արվում էր առաջ: Մենք նկատի ունենք մեր նախկին ծառայողներից մեկին՝ Աթենքից ներգաղթած պարոն Մ.Բարթիկյանին, եթե դրան համաձայն կլինի Երեւանի կառավարությունը, եւ եթե նա չունի որեւէ այլ ավելի ընդունակ եւ վստահելի մեկը»:[114] Միքայել Բարթիկյանը հայտնի դեմք էր սփյուռքում. սկսած 1911թ. Կոնիայում, Զմյուռնիայում եւ Աթենքում տարբեր պարբերականների («Ծավիղ», «Ատրուշան», «Ամրոց» եւ այլն) եւ տպարան-հրատարակչությունների հիմնադիրն էր ու խմբագիրը: Պատերազմի տարիներին նա ՀԲԸ Միության Աթենքի մասնաճյուղի գործիչ-քարտուղարն էր եւ Հին Հունաստանի շրջանի Միության կողմից հովանավորվող դպրոցների կրթական քննիչը: Մ.Բարթիկյանը ընտանիքով Հայաստան էր ներգաղթել 1946թ.:

Միության հուշագիրը ուղարկելով Մոսկվա՝ Արտաքին գործերի նախարարություն, դեսպան Կ.Նովիկովը իր կից նամակում դժգոհում էր Հայաստանի համապատասխան հիմնարկներից, որոնք «...չգիտես ինչու չեն պատասխանում նամակներին ու հեռագրերին...»:[115] Այդ բոլոր փաստաթղթերը ուղարկվում են Երեւան, որը եւ պետք էր պատասխաներ հուշագրի հարցերին: Հայաստանի Արտաքին գործերի փոխնախարարը Կոմկուսի առաջին քարտուղար Գ.Հարությունյանին հղած իր գրության մեջ, մասնավորապես, գրում էր. «Հուշագրում նշված Բարեգործականի որոշ նամակներ եւ հեռագրեր ընդհանրապես չեն ստացվել Երեւանում եւ շատ հավանական է, որ նրանք կորցվել են, ինչի հետեւանքով էլ հուշագրում հիշատակած մի շարք հարցեր մնացել են անպատասխան: Ինչպես երեւում է, դա առիթ է հանդիսացել Բարեգործականի բողոքի համար ...Բացի այդ, Բարեգործականի ղեկավարությանը, ըստ երեւույթին, անհրաժեշտ էր դիմել նման փաստարկներին, որպեսզի հիմնավորի իր առաջարկությունը՝ Երեւանում իր ներկայացուցչությունը հիմնելու մասին»: Այնուհետեւ փոխնախարարը եզրակացնում էր. «Աննպատակահարմար եմ համարում այդ նպատակով Բարեգործականի հատուկ ներկայացուցիչ ունենալ Երեւանում...»:[116]

Միքայել Բարթիկյանի որդու՝ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս, պատմաբան Հրաչ Բարթիկյանի խոսքերով, իր հայրը ընդհանրապես տեղյակ չէր Միության կողմից իր թեկնածության առաջադրման մասին: Ինչեւէ, Մ.Բարթիկյանը հնարավորություն ստացավ Հայաստանում ապրել համեմատաբար հանգիստ կյանքով եւ աշխատեց իր նախընտրած մասնագիտությամբ Գրականության ինստիտուտում:

Այլ էր Միության հաջորդ թեկնածուի ճակատագիրը: Միությանը հղած իր հետագա գրություններում Երեւանը գերադասեց պարզապես շրջանցել ներկայացուցչություն հիմնելու հարցը: Դա յուրովի ընկալվեց Միության ղեկավարության կողմից: Ենթադրելով, որ Մ.Բարթիկյանի թեկնածությունը ինչ-ինչ պատճառներով հարմար չէ Հայաստանի իշխանություններին, նրանք առաջարկեցին մեկ այլ թեկնածություն: Նույն 1947թ. հունիսի 30-ին, Վ.Մալեզյանը Բ.Աստվածատրյանին հասցեագրած նամակում գրում էր. «Ներկայիս Ձեզի եւ Ձեր միջոցաւ Խ.Հայաստանի կառավարութեան եւ Պետ.Համալսարանի բարեացակամ ընդունելութեան կը յանձնարարենք ջերմօրէն վաստակաւոր մտաւորական մը, տիար Վ.Բագրեւանդեան, որ Սելանիկէն հայրենիք կը ներգաղթէ իր ընտանիքով...»: Այնուհետեւ, ներկայացնելով Վահրամ Բագրեւանդյանին՝ «...11 տարի ի վեր մեր Միութեան ծառայած է որպէս Նոր Յունաստանի շրջանին Կրթ. Քննիչ եւ Ընդհ. Գործիչ, ...հոգեւին աշխատած է ներգաղթի գործողութեանց առթիւ...», Վ.Մալեզյանը հայտնում էր. «Միութեան Կեդր. Վարչութիւնը տրամադիր է իրեն վստահիլ ներկայացուցիչի պաշտօն, որպէս գործակատար, եթէ կառավարութիւնը այդ կարգադրութեան մէջ անպատեհութիւն չի տեսնէր»:[117]

Հայաստանի իշխանությունները, սակայն, այլեւս ավելորդ էին համարում քննարկել Միության գրասենյակի հարցը: Մնում էր հուսալ, որ Միության կողմից երաշխավորված անձը կարժանանա նրանց «բարեացակամ ընդունելութեան», բայց կատարվեց լրիվ հակառակը: Մ.Բազարյանը, որը Վ.Բագրեւանդյանի մտերիմներից էր դեռ Հունաստանում, այսպես է նկարագրում նրա կյանքի պայմանները Երեւանում: «Երեւանում ընտանիքին տրամադրուեց մի կիսաւէր շէնքի ձեղնայարկը: 20 քառակուսի մէթր տարածութեամբ մի սենեակ առանց խոհանոցի եւ ջրի: Առաստաղը այնքան ցածր էր որ՝ մի քիչ օդ շնչելու, մի աղօտ արեւի շող որսալու համար, պէտք էր երկծալ մօտենայիր ձեղունի վրայ տեղադ-

ռուած ապակիի կտորին որը հազիւ թէ լուսամուտ կոչէիր: Այս բոլորին աւելանում էր ապրուստի մեծագոյն հոգսը: Լրագրութիւն չէր կարող անել լեզուի եւ ոճի խոշոր տարբերութեամբ, մանաւանդ որ կաղապարուած գաղափարների մունետիկ երբեք չէր կարող լինել: Վկայեալ էր Կ.Պոլիսի իրաւաբանական կաճառից, անուանի ճառախօս-դատապաշտպան. միակ մասնագիտութիւնը որ կարող էր գործադրել: Գերագոյն դատարանի իրաւաբան նշանակուեց: Չկարողացաւ դատ պաշտպանել: Մեղադրեալի դատավճռի յօդուածը՝ նախքան դատավարութեան, Չեկայից կամ պարտիական վերին օրգաններից որոշուած թղթածրարով էր գալիս. ինչպէ՞ս պաշտպանել: ...Ու այդպէս խանդավառ եւ հայրենաշունչ ճառախօսը լռակեաց դարձաւ, ինք իր մէջ կծկուեց, փոքրացաւ, մի բուռ մնաց»:[118]

Նոյնիսկ Մ.Բազարյանը Վ.Բագրեւանդյանի մահից տասը տարի անց միայն՝ 1963թ., իմացավ նրա ողբերգության բուն պատճառը: Հայաստանի հատուկ ծառայությունների համար Վ.Բագրեւանդյանը՝ ի տարբերություն ուրիշ շատ ներգաղթողների, առավել մեծ հետաքրքրություն էր ներկայացնում, քանի որ նախկինում Դաշնակցության անդամ էր: 1930 -ական թթ. սկզբին Վ.Բագրեւանդյանը, դուրս եկավ կուսակցության շարքերից: «Իր միջոցներով հրատարակվող «Արեւելքը»,- վկայում էր Մ.Բազարյանը,- երկար տարիներ հակադաշնակցական պայքարի դրօշակակիրը եղաւ՝ թերթը լայնօրէն տրամադրելով Սովետական Հայաստանի իրագործումներին»:[119] Հատուկ ծառայությունների նպատակն էլ հենց այն էր, որ նա Հայաստանում նույնպես շարունակի «հայրենիքի թշնամիների» բացահայտումը: Իր որդու պատմելով՝ «Երկու տարի գիշերցերեկ Չեկայի գազանատիպ աստիճանաւորները հօրս հետապնդում էին, որ իրենց գործակալը լինի եւ հակասովետ մարդկանց մասին մատերիալ (նյութ) տայ: Գիշերները տանում էին հարցաքննութեան, առաւօտները հելաք դարձած (ուժասպառ) տուն էր գալիս: Չէր ուտում, չէր խմում, տխուր ու յուսաբեկ մտածում, մտածում եւ ծխում ու ծխում էր: ...Նախ ուզեցին իր հայրենասիրութիւնը շահագործել: «Հայրենիքիդ անգնահատելի ծառայութիւն մատուցած կը լինես եթէ հայրենիքի թշնամիները չէզոքացնես»: Հայրս տեղի չտուեց. առաջարկեցին բարձր պաշտօններ, նիւթապէս կաշառելու նպատակով, նորից հայրս անդրդուելի մնաց. վերջը դիմեցին սարսափի: Սպառնացին. «քեզ բանտարկելու ենք եւ ընտանիքդ էլ Սիբիր ենք աքսորելու»: Հայրս վախից լեղաճաք եղաւ եւ մի քանի շաբաթ յետոյ հոգին աւանդեց»:[120]

* * *

Ամփոփելով ՀԲԸՄ դերը նախապատերազմյան (1920-1930-ական թթ.) եւ հետպատերազմյան (1946-1949թթ.) տարիների ցանգվածային ներգաղթերի կազմակերպման եւ իրականացման գործում՝ կարելի է նշել հետեւյալը:

Որպես ներգաղթի նախաձեռնող եւ իրագործող ՀԲԸ Միությունը հանդես եկավ 1924թ., երբ Հայաստան տեղափոխեց իր որբանոցների 250 չափահաս որբերին: Հետագայում՝ 1920-1930 եւ 1940-ական թթ. ներգաղթի ժամանակ Խորհրդային Միության - Խորհրդային Հայաստանի իշխանությունները ստիպված էին համագործակցել ՀԲԸ Միության հետ, քանի որ մյուս այլ՝ հեղինակավոր սփյուռքահայ կազմակերպությունների (եկեղեցի, կուսակցություններ) հետ դա համարեցին անհնարին՝ գաղափարաբանական եւ քաղաքական պատճառներով:

Բացի այդ, Խորհրդային Միությանը խիստ անհրաժեշտ էր համագործակցել ֆինանսապես հզոր կազմակերպության հետ: Հանուն դրա, կարելի էր անտեսել նույնիսկ այն, որ ընդամենը 7-8 տարի առաջ՝ 1937թ., նույն ՀԲԸ Միությանը արգելվել էր գործել Հայաստանում: Իր հերթին, Միությունը նույնպես անտեսեց այդ փաստը, բայց այլ պատճառով՝ հանուն հայ ժողովրդին ծառայելու իր մշտական եւ անփոփոխ ցանկության:

Այդ տարիների ընթացքում արմատապես փոխվել էր նաեւ Խորհրդային Միության դերն ու կշիռը աշխարհում, ինչը անխուսափելիորեն անդրադարձավ ՀԲԸ Միության հետ նրա համագործակցության չափերի ու ձեւերի վրա: Չնայած Միության ներկայացուցիչները առաջվա պես ընդգրկված էին ներգաղթի տեղական կոմիտեներում, իրականում, սակայն, կազմակերպական աշխատանքը ղեկավարում ու վերահսկում էին Խորհրդային Միության դեսպանատների եւ հյուպատոսարանների աշխատակիցները, ինչպես նաեւ հատուկ այդ նպատակով Հայաստանից գործուղված պաշտոնյաները, որոնց մեջ քիչ թիվ չէին կազմում հատուկ ծառայությունների ներկայացուցիչները:

Որքան հետեւողական էր Միությունը ներգաղթին օժանդակելու գործում, նույնչափ հետեւողական էին նաեւ նրա գաղափարական ընդդիմախոսները, մի կողմից, Դաշնակցությունը իր ավանդական հակախորհրդային կեցվածքով, իսկ մյուս կողմից՝ այսպես կոչված «առաջադիմականները»: 1940-ական թթ. ներգաղթի ժամանակ այդ վերջինները, ինչպես եւ տարիներ առաջ Հայ Օգնության կոմիտեն, ստիպված էին համակերպվել այն իրողության հետ, որ Խորհրդային Միության իշխանությունները ոչ միայն համագործակցում էին «բուրժուական», կապիտա-

լիստների կողմից ղեկավարվող ՀԲԸ Միության հետ, այլեւ հրապարակավ շեշտում նրա կարեւոր դերը ներգաղթի իրականացման գործում: Այդուհանդերձ, Հայաստանի իշխանություններին հղած իրենց գրություններում ի հայտ էր գալիս հին վերաբերմունքը. նրանք տարբեր միջոցներով փորձում էին նսեմացնել Միության գործունեությունը, հայտարարելով, որ վերջինիս ղեկավարությունը թշնամի է Խորհրդային Միությանը, որ ՀԲԸ Միությունը կարող է տրամադրել շատ ավելի մեծ միջոցներ, քան անում է, եւ որ նա հանգանակությունները օգտագործում է սփյուռքում իր հեղինակությունը բարձրացնելու համար եւ այլն:

Եթե այդչափ ընդհանրություն կար այդօրինակ կազմակերպությունների՝ Միության հանդեպ որդեգրած քաղաքականության մեջ, ապա անփոփոխ էր նաեւ Միության պատասխանն այդ ամենին: Պողոս Նուպարի ժամանակներից ի վեր այն՝ անտեսել է հակառակորդներին եւ անպտուղ ու քայքայիչ վեճերի փոխարեն գործել:

8

ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

1914–1918թթ. Առաջին Աշխարհամարտը իր անդառնալի եւ ճակատագրական հետեւանքներով կանխորոշեց հայ ժողովրդի պատմության հետագա ընթացքը, որի ամենակարեւոր բնութագրերից էր, այդուհետ, սփյուռքի գոյությունը: Սփյուռքյան գոյավիճակը էապես ազդեց ժողովրդի կենսագործունեության անխտիր բոլոր կողմերի վրա: Նոր պայմաններում որոշակի փոփոխություններ կրեցին նաեւ ազգային հաստատությունները, ինչպես նպատակների, այնպես էլ գործելակերպի առումով:

ՀԲԸ Միության հիմնադրման նպատակն էր նպաստել «հայրենաբնակ» հայ ժողովրդի զարգացմանը: Միայն թե «հայրենաբնակ» բառը ստացավ այլ իմաստ: Նախապես դրա տակ հասկացվում էր Արեւմտյան Հայաստանի եւ Կիլիկիայի հայությունը, սակայն 1922թ. հետո այդ տարածքներում հայեր այլեւս չկային: Գրեթե նույն այդ ժամանակ նշված նպատակը դարձավ հնարավոր եւ իրագործելի հայրենաբնակ մեկ այլ մասում՝ Խորհրդային Հայաստանում: Սակայն, որքան էլ կարեւոր եւ արդյունավետ չլիներ Միության գործունեությունը Հայաստանում, այն չէր կարող բավարարվել միայն դրանով: Առավել մեծ օգնության կարիք ուներ Արեւմտյան Հայաստանի ու Կիլիկիայի նախկինում հայրենաբնակ, իսկ այժմ բռնագաղթված հայությունը՝ սփյուռքահայությունը:

Առաջին Աշխարհամարտից անմիջապես հետո Միությունը զբաղվեց տարբեր երկրներում ապաստանած հայ որբերի ու գաղթականների բազմապիսի հարցերով: Դրա հետ մեկտեղ, Միությունը պետք է հստակեցներ սփյուռքում իր հետագա գործունեության հիմնական ուղղությու-

ՆԸ: Որպես այդպիսին եղավ սփյուռքահայության ազգային ինքնության պահպանումը:

Սկսած 1920-ական թթ. եւ այդուհետ, «ազգապահպանում» գաղափարը դառնում է սփյուռքահայության գիտակցության եւ գործունեության ամենակարեւոր գերակայությունը: Ամերիկահայ հրապարակագիր Անդրանիկ Անդրեասյանը գրում էր, որ այդ տարիներից «ազգապահպանում» կարգախոսը «...ամէնէն խոովիչ մարտահրաւէրը դարձաւ ու կը մնայ միշտ սփիւռքի հայ կուսակցութեանց, եկեղեցիներուն եւ հանրային առաջնորդներուն համար, որոնք զայն դիմագրաւելու անձկութեամբ կը նախաձեռնեն ամէն յուսատու միջոց, կը կանգնեն ամէն խոստմնալի պատուար»:[1]

Միության գործունեությունը ազգային ինքնության պահպանման նպատակով սկիզբ առավ Մերձավոր Արեւելքի երկրներում՝ իր իսկ հիմնած որբանոցներում, ուր, ինչպես նշվել է, երեխաները ազգային ուսում էին ստանում նախակրթարանի ծրագրով: Այս որբանոց-վարժարաններում էր, որ որբ երեխաներից շատ-շատերը առաջին անգամ սովորեցին գրել եւ կարդալ իրենց մայրենի լեզվով: Սակայն եթե որբանոցներում նրանք ապրում էին իրենց ազգակիցների շրջապատում եւ ստանում ազգային կրթություն ու դաստիարակություն, ապա հետագայում՝ ասպնջական երկրների միջավայրի եւ մշակույթի ուժեղ ազդեցությունը կարող էր բերել նրանց օտարմանը հայ մշակույթից ու ազգային արժեքներից, այդ արժեքները կրող ավագ սերնդից:

Գիտակցելով խնդրի կարեւորությունը՝ ՀԲԸ Միության ղեկավարությունը արդեն 1920-ական թթ. վերջերից ձեռնամուխ եղավ երիտասարդական հատուկ ծրագրերի մշակմանն ու իրագործմանը: Դրա առաջին եւ կարեւոր արդյունքներից էր Միության երիտասարդական կազմակերպությունների ստեղծումը ԱՄՆ-ում: Սակայն, պահպանելով շարադրանքի տրամաբանությունը, նախ անդրադառնամ Միության այդօրինակ գործունեությանը Արեւելքի երկրներում:

ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Հայ Երիտասարդաց Ընկերակցություն

Վերը խոսվեց Մերձավոր Արեւելքի Նպաստամատույց (Near East Relief) ամերիկյան բարեսիրական կազմակերպության մասին, որի Սիրիա-Լիբանանում, Թուրքիայում, Հունաստանում, Եգիպտոսում, ինչպես նաեւ Հայաստանի Առաջին եւ Երկրորդ (Խորհրդային) Հանրապետություններում ու այլ երկրներում հիմնած բազմաթիվ որբանոցներում ապաստանել էին տասնյակ հազարավոր որբեր, ներառյալ մեծ թվով հայ երեխաներ: Որոշ ժամանակ անց, երբ առաջին չափահաս որբերը հրաժեշտ տվեցին որբանոցներին, այս կազմակերպությունը նույնպես ստիպված եղավ ինչ-որ չափով զբաղվել նրանց ճակատագրով: Դրա պատճառները տարբեր էին՝ աշխատատեղերի եւ բնակարանների պակասը, ուսումը շարունակելու անկարելիությունը եւ նման այլ դժվարություններ, բայց ոչ միայն դա: Ամերիկյան Նպաստամատույցի նախագահ Ջեյմս Բարտընը նշում էր. «Որբանոցներում երեխաները ընկերություն էին անում եւ շփվում միայն այլ որբերի հետ: Երբ նրանք հեռացան որբանոցներից եւ ունեցան իրենց տունն ու աշխատանքը, նրանք, բնականաբար, ցանկացան պահպանել իրենց շփումներն ու ընկերակցությունները: Սակայն գոյություն չունեին ոչ համայնքային ակումբներ կամ նրանց համախմբելու համար կազմակերպված գործունեություն, ոչ երեկոյան դպրոցներ կամ սոցիալական կենտրոններ: Նման իրավիճակում կազմակերպությունը առաջարկեց հիմնել բոլոր նախկին սաների ընկերակցություն...»:[2] Նման կազմակերպություններ ստեղծվեցին տարբեր երկրներում, այդ թվում նաեւ 1924թ. Սիրիա-Լիբանանում, ուր այն կոչվեց Մերձավոր Արեւելքի Ընկերակցություն (Near East League): Նորաստեղծ կազմակերպության հիմնական նպատակներից էր նրա անդամների տնտեսական, սոցիալական եւ բարոյական փոխօգնությունը՝ անկախ իրենց ազգությունից, կրոնից, բնակության վայրից եւ զբաղեցրած դիրքից, նրա ամեն մի անդամի՝ որպես անհատականություն, կերտումն ու զարգացումը: Կարճ ժամանակում Սիրիա-Լիբանանի տարբեր վայրերում (Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում, Ալեքսանդրետում) Ընկերակցության մասնաճյուղերը ծավալեցին աշխույժ գործունեություն՝ երեկոյան դասընթացներ, մարզական խաղեր, տարբեր զվարճանքներ եւ այլն, ինչպես նաեւ «Star» («Աստղ») ամսաթերթի հրատարակում: Այս կազմակերպությանը անդամագրվածների մեջ մեծ թիվ էին կազմում ամերիկյան որբանոցների հատկապես հայազգի նախկին սաները:

Ամերիկյան արժեքների ոգով կրթված եւ դաստիարակված հայ պատանիներին ու երիտասարդներին բավական դժվար էր ընտելանալ ոչ միայն տեղի բնիկ մահմեդական ժողովուրդների ապրելակերպին, այլ նաեւ հարմարվել այդ տարիների գաղթահայ իրականությանը՝ որը լի էր թե զրկանքներով եւ թե ներքին հակասություններով ու հակամարտություններով: Նման պայմաններում նրանց համար ավելի դյուրին էր շփվել մյուս նախկին սաների հետ, որոնց հետ կենսական մի շարք հարցերի վերաբերյալ փոխըմբռնման եզրերը շատ ավելի էին: Մյուս կողմից, հայ գաղթականների ընդհանուր զանգվածի համար նույնչափ խորթ էր եւ անծանոթ նույն այդ Ընկերակցության՝ Լիգայի անդամների կեցվածքը եւ ապրելաոճը, հատկապես նրանց անմասն լինելը ազգային կյանքին: Այդ տարիներին հայ երիտասարդական շարժման հիմնադիրներից Խ.Գալուստյանը իր հոդվածներից մեկում նշում էր. «Լիկայի պատկանող մէկը, շատ հաճախ փաղաքշական ըլլալէ աւելի, վիրաւորական ձեւով «Լիկաճի» կը կոչուէր: Ուրեմն, Մերձաւոր Արեւելքի Ընկերակցութիւն (Լիկա) անունն ալ գոհացուցիչ չէր. որովհետեւ անգոյն մակդիր մըն էր անորոշ խորագրով. ան հայկականութիւն չէր բուրեր Սուրիոյ եւ Լիբանանի գաղթական հայերուն համար, որոնք սկսեր էին կազմակերպուիլ եւ հիմնել երիտասարդական շատ մը կազմակերպութիւններ՝ ՀԲԸՄ, Արարատ, Ուսումնասիրաց, Վասպուրական, ՀՄԸՄ եւ այլն»:[3]

Այդ տարիները հայ համայնքների կազմակերպական կառուցվածքի ձեւավորման շրջան էր: Առավել հեղինակություն վայելող հայ քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը, ձգտելով էլ ավելի ընդլայնել իր ազդեցության ոլորտը, ձեռնամուխ եղավ ազգային հաստատությունների սեփական ցանցի ստեղծմանը: Առկա լարված եւ քաղաքականացված մթնոլորտը անխուսափելիորեն իր ներգործությունը ունեցավ նաեւ ամերիկյան որբանոցների նախկին հայազգի սաների վրա, որոնք կանգնել էին յուրահատուկ երկընտրանքի առաջ. շարունակել իրենց անդամակցությունը Մերձավոր Արեւելքի Ընկերակցության – Լիգայի մեջ, թե հարել այս կամ այն ազգային խմբավորմանը: Թե ինչպիսին կլիներ նրանց ընտրությունը, կարելի է միայն ենթադրել, քանզի հարցը անսպասելի լուծում ստացավ:

1930թ. Ամերիկյան Նպաստամատույցը որոշում կայացրեց գործունեությունը դադարեցնելու մասին: Եթե նրան պատկանող որբանոցները պարզապես փակվում էին նոր որբերի բացակայության պատճառով, ապա այլ էր նախկին որբերի կազմակերպության պարագան: Ամերիկյան Նպաստամատույցը, գիտակցելով Լիգայի կարեւորությունը, առաջարկեց նրա ընդհանուր ղեկավարությունն ու խնամակալությունը հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը: 1931թ. հունիսի 1-ին Բաբկեն Ա կաթողիկոսի հրավերով կայացավ հատուկ ժողով՝ մասնակցությամբ «Լիկային Վարիչ Մր. Ճեսըփի եւ չորս պաշտօնեաներու, նաեւ Շահէ եւ Եղիշէ եպիսկոպոսներու, Հայր Պօղոս Արիսի, Վերպ. Ենովք Կէօքկեօզեանի, դոկտ. Յ.Թօփճեանի, Միհրան Տամատեանի եւ Լ.Զէնեանի: Ժողովը կ'որոշէ Լիկա անունը փոխել Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն կոչումի: Երկու Յանձնախումբեր կը կազմուին. մին կանոնագիրը վերամշակելու համար, միւսը՝ Նիր Իսթէն ստանալու համար նախկին Լիկայի գոյքերը: Ու փոխանցումը կը կատարուի նույն ամսուան վերջաւորութեամբ...»:[4]

Բեյրութում տեղակայված Հայ Երիտասարդաց Ընկերակցության (ՀԵԸ) վարչության մշակած կանոնադրությունը 1932թ. մարտին Բաբկեն Ա կաթողիկոսի կողմից վավերացվելուց հետո, այնուհետեւ, վավերացման ներկայացվեց տեղի իշխանություններին: Մինչ այդ, 1931թ. օգոստոսին Հալեպում կազմվեց Գործադիր մարմին՝ Սիրիայի տարածքում ՀԵԸ-ի մասնաճյուղերի գործունեությունը վարելու նպատակով:

Կիլիկիո կաթողիկոսությունը, ստանձնելով այս նորացված կազմակերպության ղեկավարությունն ու հատկապես խնամակալությունը, անշուշտ, գիտակցում էր դրա հետ կապված բազմաթիվ դժվարությունները: Սակայն նա, ըստ էության, չուներ այլընտրանք. հրաժարվելը կնշանակեր մեծ հարցականի տակ դնել տարիների պատմություն ունեցող երիտասարդական այդ կազմակերպության հետագա գոյությունն իսկ: Մյուս կողմից, նա, պետք է ենթադրել, ակնկալում էր հայության աջակցությունը հայկական անուն եւ դիմագիծ ստացած ՀԵ Ընկերակցության կայացման գործում:

Հարկ է նկատել, որ այդ տարիներին Լիբանանում եւ Սիրիայում գործող երիտասարդական միությունների շարքում առանձնանում էին՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միությունը (ՀՄԸՄ) եւ Հայ Մարմնամարզական Միությունը (ՀՄՄ), որոնք ղեկավարվում էին համապատասխանաբար՝ Դաշնակցություն եւ Հնչակյան կուսակցությունների կողմից: Նման պայմաններում անհիրատեսական էր օժանդակություն ակնկալել այդ վերջիններից կամ նրանց ենթակա հաստատություններից: Հակառակը՝ որեւէ ազգային հիմնարկություն ձգտում էր ունենալ հնարավորին չափ մեծ թվով անդամներ ու կողմնակիցներ: Ստեղծված իրավիճակը, կարծես, թելադրում կամ անխուսափելի էր դարձնում ՀԲԸ Միության եւ ՀԵ Ընկերակցության փոխշահագրգռվածությունը:

1930-ական թթ. սկիզբը հուզումնալից տարիներ էին ՀԲԸ Միության համար: Նրա հիմնադիր եւ առաջին նախագահ Պողոս Նուպարի մահից հետո՝ 1930թ., նրան այդ պաշտոնում հաջորդած Գալուստ Կյուլպենկյանը

իր հրաժարականը ներկայացրեց ընդամենը երկու տարի անց, որին հաջորդեց Զարեհ Նուպարը: Այդչափ կարճ ժամանակահատվածում կատարված փոփոխությունների պատճառով որոշ անորոշություն էր տիրում թե Միության արդեն որդեգրած ծրագրերի իրագործման եւ թե նրա հետագա գործունեության վերաբերյալ: Եթե նկատի առնվի նաեւ, որ այս ամենը զուգորդվում էր Միության լարված հարաբերություններով, մի կողմից՝ սփյուռքի որոշ ազգային-քաղաքական կազմակերպությունների, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունների հետ, ապա կարելի ասել, որ այդ տարիները ՀԲԸ Միության համար իսկական փորձության տարիներ էին: Միությունը, սակայն, հերթական անգամ ապացուցեց իր, որպես կազմակերպության կենսունակությունը եւ ոչ միայն հաղթահարեց առաջ եկած դժվարությունները, այլեւ էլ ավելի ընդարձակեց իր գործունեության ասպարեզը, ինչի համոզիչ ապացույցներից էին նրա՝ սփյուռքահայ երիտասարդությանը ուղված նոր ծրագրերը:

Հայ Երիտասարդաց Ընկերակցության պատմությունը լուսաբանող մի շարք հրապարակումներում նշվում է, որ ՀԲԸ Միությունը ստանձնել է այդ կազմակերպության ղեկավարումն ու խնամակալությունը 1933թ.: Այսպես, օրինակ, Բարունակ Թովմասյանը գրում էր. «Կիլիկիոյ Կաթողիկոսարանի հովանաւորութիւնը պահելով հանդերձ, 1933ին վարչական հսկողութիւնն ու անմիջական հոգածութիւնը փոխանցուեցան ՀԲԸ Միութեան»:[5] Ավելի վաղ նույն թվականն են նշել նաեւ Բյուզանդ Եղիայանը, Միքայել Նաթանյանը եւ այլք.: Մինչդեռ «Միութիւն» ամսագրի 1934թ. մարտ-ապրիլ համարում է խոսվում միայն նման մտադրության մասին. «Վերջերս փափագ յայտնուած լինելով Սուրիա գտնուող Մելգոնեան եւ Քէլէկեան նախկին սաներու միութիւն մը կազմել, առաջարկ բերուեցաւ Միութեանս սաները միացնել Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան, որ կազմուած է Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին հովանաւորութեամբ, եւ այդ ընկերութիւնը դնել Միութեանս պաշտպանութեան տակ: Հարցը տեղւոյն վրայ ուսումնասիրուելէ վերջ, որոշուեցաւ Սուրիոյ հայ երիտասարդներուն ընծայել Միութեան համակրանքն ու օժանդակութիւնը, եւ այդ նպատակով 250 Անգլ. ոսկի վարկ մը տրամադրուեցաւ, որպէսզի Հալէպի եւ Պէյրութի մէջ շէնքեր վարձուին՝ որպէս «Բարեգործականի Տուն», իբրեւ հաւաքատեղի ծառայելու համար, թէ ՀԵ Ընկերակցութեան, որ, ինչպէս Ամերիկայի մէջ, Կրտսերներու Լիկայի կը վերածուի այս կերպով, եւ թէ ՀԲԸ Միութեան երկսեռ անդամներուն...»:[6]

Կիլիկիո կաթողիկոսարանի կողմից հրատարակվող «Հասկ»-ի 1937թ. առաջին համարում բերվում են այլ մանրամասներ այս հարցի շուրջ. «1934 մայիս 17ին ...Բաբգէն Կաթողիկոսէ կը խնդրուի ներկայ ըլ-

լալ Կեդր. Վարչութեան ժողովին (խոսքը ՀԵԸ-ի մասին է-Էդ.Մ.) ...ժողովի օրակարգի նիւթն էր.- Բարեգործականի հետ գործակցութիւն: Այս գործակցութեան առաջարկը բերուած էր ՀԲԸ Միութեան Գահիրէի Շրջ. Ցանձնաժողովէն,- Ընկերակցութեան մէջ ընդունելու երիտասարդական ուրիշ խմբակցութիւններ ալ, անոնցմէ իւրաքանչիւրին խմբական նկարագիրը պահելու պայմանաւ-: Խորհրդակցութենէ ետքը ժողովը կ'որոշէ պատասխանել Բարեգործականի Շրջանակայինի, թէ «Այսպիսի գործակցութիւն մը անպատեհութիւններ ունի եւ անկարելի է. փափագողները պէտք է պարզապէս միանան ՀԵ Ընկերակցութեան: Յաջորդ բանակցութիւններով, Բարեգործականը կը յօժարի ՀԵԸ-ը Կիլիկիոյ Կաթողիկոսարանին հովանիին ներքեւ շարունակելով հանդերձ, անոր գործերը դիւրացնելու համար տարեկան յատկացում մը ընել, եւ 1934 սեպտեմբեր 8ին կը վճարէ իր առաջին յատկացումը, 250 Անգլ. ոսկի... Այդ առիթով է նաեւ, որ կը վարձուի ՀԵԸ-ի Պէյրութի կեդրոնին շէնքը, նախկին սրահ «Գեղարուեստասիրաց Միութեան»...»:[7]

Դեպքերի նման ընթացքը հաստատում է նաեւ ՀԲԸ Միության 1934թ. տարեգիրքը, որում առաջին անգամ հատուկ տեղ է հատկացված «Յետ-դպրոցական դաստիարակութիւն» հարցին: Նշելով, որ Միության նպատակներից է գաղութահայության ցանուցիր երիտասարդության կազմակերպումը Միության հովանու ներքեւ եւ որ Միության որբանոցներից եւ վարժարաններից դուրս եկած երիտասարդները նույն այդ խնդրով դիմում են Միությանը, տեղեկագիրը այնուհետեւ հայտնում է. «...Ընդ առաջ երթալով Եգիպտոսի Շրջանակային Ցանձնաժողովին առաջարկութեանց, նախ Սուրիոյ մէջ եւ յետոյ Եգիպտոսի, ձեռք առինք Երիտասարդական Միութեանց Կազմակերպումը, Բարեգործականի տուներու եւ Մարզարաններու հաստատմամբ: Առաջին շրջանին յատկացուցինք, իբրեւ նախափորձի ծախք, Ա/նգլ./. Ո/սկի/. 250, իսկ Գահիրէի ձեռնարկին համար Ա.Ո. 200»:[8] Դժվար չէ նկատել, որ 1934թ. տեղեկագրում Հայ Երիտասարդաց Ընկերակցությունը ընդհանրապես չի հիշատակվում նույնիսկ հատկացված գումարի առիթով: Բայց, ահա, հաջորդ՝ 1935թ. տեղեկագրում առաջին անգամ կարդում ենք. «...անմիջապէս Միութեանս հովանաւորութեան ներքեւ առնուեցան Հալէպի եւ Պէյրութի մէջ արդէն գոյութիւն ունեցող Երիտասարդական Ընկերակցութիւնները, որ նախապէս Նիր Իսթ Ֆաունտէյշընի կողմէ կը նպաստաւորուէին եւ կը գտնուէին Անթիլիասի Կաթողիկոսարանին հսկողութեան ներքեւ»:[9]

Միությունը, իր հովանավորության տակ վերցնելով ՀԵԸ, անփոփոխ թողեց նրա կանոնադրությունը եւ կազմակերպական կառուցվածքը եւ միայն 1936թ. նախաձեռնեց Բեյրութում գտնվող ՀԵԸ Կենտրոնական

Գործադիր Մարմնի նոր կազմի ընտրությունը, որի արդյունքում ատենապետի պաշտոնը վստահվեց Բյուզանդ Եղիայանին: 1930թ. սկսված «փոխանցման շրջանը», երբ երիտասարդական այս կազմակերպությունը գործեց նախ Ամերիկյան Նպաստամատույցի, ապա Կիլիկիո Կաթողիկոսարանի, իսկ 1934-ից՝ ՀԲԸ Միության հովանավորության ներքո, միանշանակ չընկալվեց կամ չընդունվեց նրա իսկ անդամների կողմից: Եղան ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ կորուստներ. «...անոր միացան կարգ մը կազմակերպութիւններ - Կրթասիրաց, Նուպարեան, իսկ անկէ հեռացան կարգ մը անհատներ՝ միանալով Դաշնակցութեան եւ Հնչակեաններուն, Ռամկավարներուն եւ Հայ Համայնավարներուն: Սակայն առանց նուազագոյն վարանումի, կարելի է ըսել թէ՝ 90% մնաց ՀԲԸ Միութեան ՀԵ Ընկերակցութենէն ներս: Թէեւ կարգ մը ներքին խլրտումներ վնասեցին Լիկային, սակայն եւ այնպէս, անկէ ներս տիրող մթնոլորտը, մաքուր մթնոլորտը, ոչ մէկ ուրիշ միութիւն կրցաւ ստեղծել. եւ ասիկա արտահայտութիւնն է հաւասարապէս՝ մնացողներուն, միացողներուն եւ միութենէն հեռացողներուն»:[10]

1936թ. ՀԵԸ-ի մասնաճյուղերը գործում էին Սիրիայի եւ Լիբանանի մի շարք քաղաքներում (Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում, Զահլեում, Թրիփոլիում, Հոմսում, Լաթաքիայում, Ալեքսանդրետում եւ այլուր), որոնց անդամների թիվն էր 826: Երկու տարի անց ՀԵԸ-ի մասնաճյուղերի թիվը հասավ 16-ի, իսկ անդամներինը՝ 1.800-ի: Նրա անդամներն էին հայ հասարակության գրեթե բոլոր խավերը՝ ուսանողներ, արհեստավորներ, մտավորականներ եւ այլք: ՀԲԸ Միության երիտասարդական կազմակերպության գործունեության երկու հիմնական ուղղություններն էին՝ մշակութայինը եւ մարզականը: Երեկոյան դասընթացներ (հայոց լեզու եւ պատմություն, օտար լեզուներ եւ այլն), գրադարան-ընթերցասրահներ, փողային եւ լարային նվագախմբեր, թատերական ներկայացումներ, պարահանդեսներ, այս ամենը ստեղծում էր որակապես նոր հոգեւոր մթնոլորտ թե երիտասարդության եւ թե մեծահասակների համար: Պատահական չէր, օրինակ, որ Բեյրութի ՀԸ Ընկերակցության Անդրանիկ եւ Զարեհ Նուպար ակումբների մշտական այցելուներից էր քաղաքի հայ մտավորականությունը:

Մարզական շարժում

Խոսելով Լիգայի եւ ՀԵԸ-ի միջեւ գործունեության շարունակականության մասին՝ նախ եւ առաջ պետք է նշել սպորտը: Սպասելի էր, որ

ՀԵԸ-ի, ինչպես եւ որեւէ այլ երիտասարդական կազմակերպության համար, սպորտը վաղ թե ուշ պետք է դառնար գործունեության հիմնական ուղղություններից մեկը: Տվյալ դեպքում, սակայն, պետք էր միայն պահպանել եւ զարգացնել արդեն իսկ Լիգայի օրոք ձեւավորված ավանդույթները: Հետեւելով Լիգայի օրինակին, որը հայտնի էր իր ուժեղ ֆուտբոլային թիմով, ՀԵԸ-ն սկզբից եւեթ նույնպես մեծ հաջողություններ գրանցեց այդ մարզաձեւում, որը ընդհանրապես մեծ տարածում ուներ հայ երիտասարդների մեջ, եւ ՀԲԸ Միության փակվող որբանոցների մարզիկները հաճախ համալրում էին ՀԵԸ-ի խմբերը:[11] Սկսած 1930-ականների վերջից ՀԵԸ-ի ֆուտբոլային թիմերը գրեթե մշտապես, թեեւ տարբեր հաջողությամբ մասնակցեցին Լիբանանի եւ Սիրիայի տարբեր կարգի մրցաշարերում: Այդ մարզաձեւի էլ ավելի տարածմանը մեծ չափով նպաստեցին Հայաստանից առաջին անգամ ժամանած Երեւանի «Սպարտակ» թիմի ելույթները 1959թ.:

Լիբանանում, ուր ՀԵԸ պետության կողմից ճանաչվում է «Անդրանիկ» անունով (Antranik Youth Association), նրա տղամարդկանց բասկետբոլի թիմը հիմնվեց 1948թ., եւ 1959-ից ի վեր այն դասվում է երկրի առաջնակարգ թիմերի շարքը: Բեյրութի ՀԵԸ-ի աղջիկների թիմը նույնպես երկրի ուժեղագույն թիմերից մեկն է, որը երեք տարի անընդմեջ (1998-2000թթ.) նվաճել է Լիբանանի չեմպիոնի կոչումը:

Սիրիայում՝ Հալեպի ՀԵԸ-ի մարզական կյանքը էլ ավելի է աշխուժանում 1950-ականին նոր ակումբ (Ազիզիէ թաղամաս) տեղափոխվելուց հետո: Ֆուտբոլային խմբից զատ կազմավորվում են բասկետբոլի եւ վոլեյբոլի երկսեռ թիմերը, որոնք նույնպես մասնակցեցին երկրի եւ քաղաքի մրցաշարերում: 1966թ. աղջիկների բասկետբոլի թիմը վեցերորդ անգամ անընդմեջ նվաճեց Սիրիայի չեմպիոնի կոչումը:

1955թ. ՀԵԸ-ի Կենտրոնական Վարչությունը Բեյրութում առաջին անգամ կազմակերպեց Նավասարդյան Խաղերը, որոնք հետագա տարիներին դառնալու էին ՀԲԸ Միության երիտասարդական շարժման ամենակարեւոր ավանդույթներից մեկը: Իսկ առաջին խաղերի մասին Միության տարեգրքում ասվում էր. «Երիտասարդաց Միութեանց գործունեութեանց փառապսակը կազմեց Նաւասարդեան Խաղերու նշանակալից դէպքը, Պէյրութի մէջ, ապրիլ 11ին: Քաղաքապետարանի դաշտին վրայ, Լիբանանեան բանակի Ընդհանուր Հրամանատարին հովանաւորութեամբ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Տեղապահ Բարձր. Կ. Խաղ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ տեղի ունեցաւ այս աննախընթաց տօնակատարութիւնը: Անոր մասնակցեցան 600 աշխոյժ եւ կորովի երիտասարդներ եւ պարմանուհիներ, Հայ Երիտ. Ընկերակցութեան

Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի կազմակերպութիւններէն, Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ (ի տարբերություն այլ երկրների, Եգիպտոսում ՀՄԸՄ-ը գործում է ՀԲԸ Միության հովանու ներքո-Էդ.Մ.) եւ Նուպար Միութենէն, Բարեգործականի Կիպրոսի Մելգոնեան Հաստատութենէն եւ Պէյրութի Յովակիմեան-Մանուկեան ու Դարուհի Յակոբեան Երկրորդական Վարժարաններէն»:[12]

Նոյն՝ 1955թ. ՀԵԸ-ի Մարզական բաժինը Սիրիայի պետական հատուկ արտոնագրով ճանաչվեց մարզական միություն՝ Նէտի Մաշ'ալ (Ջահ) անունով: 1972թ. երկրի իշխանությունները՝ մարզական կյանքը կանոնավորելու նպատակով սահմանափակեցին մարզական միությունների քանակը, խոշորացնելով դրանք: Այդ պայմաններում նպատակահարմար էր ՀԵԸ-ի միացումը իրեն ամենամոտ՝ Հայ Մարմնամարզական Միություն եւ Վասպուրական կազմակերպությունների հետ: Այս նոր միության պաշտոնական անվանումն էր Նէտի Ուրուպէ: Երեք տարի անց, նկատի առնելով, որ ՀՄՄ-ի մարզական կյանքը դադարել էր, Նէտի Ուրուպէ-ի կազմում մնացին ՀԵԸ-ն եւ Վասպուրականը:

Սիրիայի եւ Եգիպտոսի ՀԲԸ Միության մարզական կազմակերպությունների պատմության ուշագրավ էջերից է նրանց համագործակցությունը այդ երկու երկրների միացումով ստեղծված Արաբական Միացյալ Հանրապետության տարիներին (1958-1961թթ.): «Մարզական Վարչությունը,-կարդում ենք մի հոդվածում,-օգտուելով Սուրիա-Եգիպտոս միացումէն, ու մանաւանդ սերտացնելու համար Սուրիահայ ու Եգիպտահայ գաղութներու փոխ-յարաբերութիւնները, 1960ի Յուլիսին պասքէթ պոլի մանչերու խումբը...կ'ուղարկուէր 15 օրուան շրջապտոյտի մը համար Եգիպտոս, ուր ՀԵԸ Հալէպ, ՀԵԸ Պէյրութ, ՀՄԸՄ Աղեքսանդրիա, ՀՄԸՄ Նուպար՝ կ'ունենան երկու մարզական փառատօներ. առաջինը՝ Աղեքսանդրիոյ մէջ, երկրորդը՝ Գահիրէի: Նոյն տարուան Օգոստոս ամսուն, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Նուպարի պասքէթ պոլի մանչերու խումբը կ'այցելէ Սուրիա, եւ զանազան մրցումներ կ'ունենայ Հալէպի եւ Դամասկոսի մէջ: Կ'այցելեն նաեւ Քեսապ ու շրջակայ գիւղերը: Եվ քանի որ զոյգ այցելութիւնները մեծ խանդավառութիւն ստեղծած էին երկու գաղութներու մէջ ալ, յաջորդ տարին ...ՀԵԸ-ի պասքէթ պոլի մանչերու խումբը կրկին կը մեկնի Եգիպտոս...»:[13] Արաբական Միացյալ Հանրապետությունը կազմալուծվեց 1961թ., սակայն, նրա գոյության տարիներին սկիզբ առած՝ Սիրիայի եւ Եգիպտոսի ՀԵ Ընկերակցությունների բասկետբոլի թիմերի նման փոխադարձ այցելությունները շարունակվեցին հետագա տարիներին եւս, ինչպես, օրինակ, 1998-1999թթ.:

Դեռեւս պատերազմի տարիներին՝ 1944թ. ապրիլին կազմավորվեց Հալեպի ՀԵ Ընկերակցության սկաուտական շարժումը՝ Հարություն Գասպարյանի ղեկավարությամբ: Առաջին 42 սկաուտները բաժանվել էին տարիքային չորս խմբերում՝ «Առյուծ», «Արծիվ», «Գայլ» եւ «Աքլոր»: Չնայած իր համեմատաբար սակավաթվությանը, ՀԵ Ընկերակցության սկաուտական խումբը սկզբից եւեթ աչքի էր ընկնում իր կազմակերպվածությամբ եւ կարգապահությամբ, ինչպես նաեւ գեղեցիկ համազգեստով: Պատահական չէ, որ ՀԵ Ընկերակցության սկաուտները մշտապես հրավիրվում էին մասնակցելու տարբեր ձեռնարկների: Վարդան Սվաճյանը իր հոդվածում բերում է Բերիոյ թեմի առաջնորդ Զարեհ Ծ.Վարդապետ Փայասլյանի (հետագայում Կիլիկիո Աթոռի գահակալ) հետեւյալ նամակը, ուղղված ՀԵ Ընկերակցության վարչությանը. «Հանրապետութեան Նախագահ Նորին Վսեմութիւն Շիւքրի Պէյ Քուաթլի, վաղը, չորեքշաբթի, 7 Նոյեմբեր 1945, կէսօրէ առաջ ժամը 11ին պիտի հաճի այցելել Ազգային Առաջնորդարան: Կը փափագիմ որ ՀԵ Ընկերակցութեան արիներէն 50 հատ, վաղը առաւօտ ժամը 10ին, իրենց խմբապետին առաջնորդութեամբ ներկայ ըլլան Առաջնորդարանի բակը, ընդունելու համար Նորին Վսեմութիւնը»:[14]

Ջուտ քանակի առումով 1940-ականների վերջերին արձանագրվեց Երիտասարդաց Միությունների անդամների թվի որոշ նվազում: Այսպես, 1948թ. տվյալներով ՀԵԸ-ն այդ երկրներում ուներ 12 մասնաճյուղ եւ մոտ 1.100 անդամ: Դրա պատճառներից մեկը 1946-1948թթ. հայրենադարձությունն էր, երբ մեծ թվով հայեր, այդ թվում նաեւ ՀԵԸ տարբեր տարիքի անդամներ արտագաղթեցին Խորհրդային Հայաստան: Դա, սակայն, չանդրադարձավ այդ կազմակերպության կենսունակության վրա: 1947-1948թթ. ՀԵ Ընկերակցության Կենտրոնական Վարչության որոշումով Բաալբեքում տեղի ունեցան Հալեպի, Դամասկոսի եւ Բեյրութի սկաուտների առաջին եւ երկրորդ միջմասնաճյուղային բանակումները: Նման բանակումների կազմակերպումը Սիրիայի եւ Լիբանանի տարբեր վայրերում հետագա տարիներին դարձավ ՀԵ Ընկերակցության ավանդույթներից մեկը: ՀԵԸ-ի Սկաուտական շարժումը Լիբանանում 1970-ականների սկզբին համախմբում էր շուրջ 400 արիներ եւ արենուշներ: 1960-ական թթ. կեսերից սկիզբ է առնում նաեւ ՀԵ Ընկերակցության արենուշական շարժումը Հալեպում: 1993թ. Բեյրութում, երկար ընդմիջումից հետո, տեղի ունեցավ ՀԵԸ-ի սկաուտական 4-րդ հավաք-բանակումը, որին մասնակցեցին Ալեք Մանուկեան, Անդրանիկ-Անթիլիաս, Անդրանիկ-Սեւան եւ Անդրանիկ-Ջահլէ մասնաճյուղերի երիցական, սկաուտական, գայլիկային, արենուշական եւ արծվիկական խմբերը, ինչպես

նաեւ ՀԵԸ-ի Հալեպի մասնաճյուղի փողային նվագախումբը: Լիբանանի ՀԵ Ընկերակցության սկաուտական շարժման աշխուժացման մասին է վկայում նաեւ նրա անդամների թվի նկատելի աճը՝ 1998թ. շուրջ 800 էր:

Հայաստան-սփյուռք հարաբերությունների պատմության մեջ առանձնահատուկ կարեւորություն ունեցան 1999-2002թթ. Երեւանում կայացած Առաջին եւ Երկրորդ Համահայկական մարզական խաղերը: Խորհրդանշական է, որ այդ խաղերի գաղափարը ծնունդ առավ 1996թ. Փարիզում կայացած ՀԵ Ընկերակցության 14-րդ Նավասարդյան Խաղերի ժամանակ: Հետագա չորս տարիների ընթացքում Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեն՝ նախագահությամբ Հայաստանի Արտաքին գործերի նախարարության պատասխանատու աշխատակից դեսպան Աշոտ Մելիք-Շահնազարյանի, լուրջ աշխատանք կատարեց այդ գաղափարը իրականություն դարձնելու համար: Իր իսկ վկայությամբ «...մեր նախաձեռնող կոմիտեն ունեցաւ մեծ աջակցութիւն Բարեգործականի կողմէ. նիւթական եւ բարոյական գետնի վրայ: Ես շատ ուրախ եմ որ տարբեր երկրներու բոլոր քաղաքներէն Բարեգործականը պատրաստ էր գործակցելու ՀՄԸՄ-ի եւ ՀՄՄ-ի հետ որպէսզի դրական արդիւնքներու հասնինք: Շատ շնորհակալ եմ ՀԲԸ Միութենէն եւ բոլոր ներկայացուցիչներէն, որովհետեւ շատ դրական դեր խաղցան»:[15] Պատահական չէ, որ դեսպանը նշում էր համագործակցության պարագան, քանզի Երեւանում կայացած Խաղերին առաջին անգամ մասնակցում էին ոչ թե տարբեր միություններ, այլ առանձին քաղաքներ ներկայացնող հավաքական թիմեր, որոնցում ընդգրկված էին 1.750 մարզիկներ: Առաջին անգամ էր, որ, այսպես կոչված, «ավանդական» սփյուռքի երիտասարդությունը հանդիպում էր հետխորհրդային տարածքի երկրների (Ռուսաստան, Վրաստան եւ այլն) հայազգի հասակակիցների հետ: Նման բարեկամական միջհամայնքային, միջմիութենական շփումները եւ, միեւնույն ժամանակ, սփյուռքահայ երիտասարդների նորահաստատ բարեկամությունը իրենց հայաստանցի հասակակիցների հետ, աննախադեպ երեւույթ էին հայ իրականության համար:

Համահայկական Խաղերի կազմակերպական կոմիտեի կազմում ընդգրկված էին ՀԲԸ Միության Երիտասարդական հարցերի հանձնախմբի (Central Youth Committee) անդամներ Հրաչ Մանուկյանը, Հրանդ Պարտագճյանը, ինչպես նաեւ Լեւոն Հասըրճյանը եւ այլք: Վերջիններիս վկայությամբ, Խաղերի իրականացման գործում առավել նշանակալից էր Լոս Անջելըսի ՀԲԸՄ-ՀԵԸ-ի պատասխանատու անդամ Ալպեր Պոյաճյանի դերը: «Հոս կ'ուզեմ անդրադառնալ,-ասում էր Հրաչ Մանուկյանը,- ՀԲԸ Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովի անդամ պրն. Ալպէր

Պոյաճեանի նիւթական աջակցութեան, հակառակ անոր որ ինք համեստօրէն չ'ուզեր հրապարակել՝ աւ 50.000 $ տրամադրեց «Տինամօ» մարզադաշտի վերանորոգման, եւ նոյնպէս 65.000 $ օգտակար եղաւ Համահայկական Խաղերու պիտճէն հաւասարակշռելու»:[16] Ալպեր Պոյաճյանի նման գործելակերպը բնական է թվում, երբ կարդում ես հետեւյալ տողերը նրա հարցազրույցից. «Մենք մեր կեանքի ընթացքին եղած ենք եւ պիտի մնանք նեցուկ հայ երիտասարդութեան, հայ ազգին եւ մեր սիրելի Հայաստանին»: Եվ ապա՝ ՀԵ Ընկերակցության մասին. «Այնքան ատեն որ մենք կ'ապրինք պէտք է թիկունք կանգնինք այս երիտասարդներուն, եւ պէտք է շիտակ ճանապարհը ցոյց տանք անոնց: ՀԵԸ-ը շատ կարեւոր է: Առանց ՀԵԸ-ի Բարեգործական չըլլար, ինչպէս նաեւ առանց ՀԲԸՄ-ի ՀԵԸ չըլլար: ՀԵԸ-ը կը հասցնէ ծլարձակումի հատիկներ որպէսզի ՀԲԸՄ-ը մշտադալար մնայ: Անձնապէս եղած եմ ՀԵԸ-ական եւ մինչեւ հիմա կը մնամ ՀԵԸ-ական, բայց նաեւ Բարեգործականի գործունեայ անդամ: Եթե ես վաղ հասակէս չդաստիարակուէի ՀԲԸՄ-ՀԵԸ-ի գաղափարականով, այսօր ժողովուրդիս օգտակար ըլլալու պարտաւորութիւնը իմ կեանքիս գերագոյն նպատակներէն մին եղած պիտի չըլլար»:[17]

Մշակութային ծրագրեր

Նախքան ՀԵ Ընկերակցության մշակութային գործունեության մասին խոսելը, անհրաժեշտ է նշել հետեւյալը: Արդեն նշվել է, որ տարբեր պատճառներով անկարելի է հավասար չափով ներկայացնել ՀԲԸ Միության գործունեությունը թե ըստ տարբեր ոլորտների եւ թե ըստ տարբեր երկրների: Այդ իսկ պատճառով որոշ հարցերի քննարկումը կատարվում է առավելապես Միության այս կամ այն մասնաճյուղի օրինակով, ինչը, անշուշտ, որեւէ չափով չպետք է ընկալվի որպես մնացած մասնաճյուղերի գործունեության անտեսում կամ թերագնահատում:

Բեյրութը, լինելով այդ տարածաշրջանի ամենակարեւոր նավահանգիստ քաղաքը եւ առեւտրական ու ֆինանսական կենտրոններից մեկը, վաղուց ի վեր առանձնացել է տարբեր մշակույթների, տարբեր դավանանքների համագոյակցությամբ: Դրա շնորհիվ այս քաղաքին բնորոշ է եղել ուրույն՝ արաբական այլ քաղաքներից տարբեր կենսաձեւ եւ հոգեւոր մթնոլորտ, որը մեծապես դյուրացնում էր տեղի քրիստոնյա ժողովուրդների կենսագործունեությունը:

Այլ էր Հալեպի պարագան, որը ժամանակի ընթացքում կորցնելով իր, որպես արաբական աշխարհի կարեւոր կենտրոններից մեկի դերը, աս-

տիճանաբար վերածվեց գավառական մի քաղաքի՝ իր բոլոր առանձնահատկություններով հանդերձ: Հալեպին ներհատուկ մշակութային-հոգեւոր մթնոլորտում, հայերը իրենք էին հաճախ հանդես գալիս որպես ռահվիրաներ՝ առաջինը ներմուծելով եվրոպական մշակույթի եւ ճարտարվեստի այս կամ տարրերը, կամա թե ակամա, հաղորդակից դարձնելով դրանց տեղի արաբ ժողովրդին: Օրինակներից է Հալեպում ՀԵԸ-ի թատերական շարժումը, որը սկիզբ առավ դեռեւս 1933-1934թթ.: Հակոբ Միքայելյանը գրում է. «...այն օրերուն երեւի թատերախումբերը այսօրուան նման ինքնութիւն մը չեն ունեցած: Այս կամ այն միութիւններէն խմբուած տղաք խաղացած են թատերգութիւններ եւ ակամայ անոնք վերագրուած են այս կամ այն միութեան»:[18] Ըստ նույն հեղինակի, ՀԵԸ-ի թատերական շարժման պատմության մեջ նոր շրջան է սկսվում 1947թ., երբ Գրիգոր Մելքոնյանը իր ղեկավարած «Երեւան» թատերախմբով միանում է ՀԵ Ընկերակցությանը: «Գ.Մելքոնեան...կը հիմնէ ՀԵԸ-ի թատերական նոր կազմ մը, եւ ըստ իր հաստատումին, թատերախումբը կը կոչուի «Ադամեան» անունով: Մեզի համար,-ընդգծում է Հ.Միքայելյանը,-շատ հետաքրքրական նորութիւն մը եղաւ այս յայտնութիւնը, որովհետեւ ինչպէս բոլորին ծանօթ է, ՀԵԸ-ի թատերախումբը պաշտօնապէս «Ադամեան» կոչուեցաւ 1961ին»:[19] Ոգեւորված այս թատերախմբի հաջող գործունեությամբ, ՀԵԸ-ի որոշ անդամներ թատրոնը «...աւելի զօրացնելու եւ հաստատ հիմերու վրայ դնելու հեռանկարով ...կը ծրագրեն ու կը յաջողին թատերախումբին մաս կազմելու հրաւիրել հալէպահայ ծանօթ եւ վաստակաւոր դերասան Պետրոս Քելէշեանը, որուն գլխաւորութեամբ կը հիմնուի Ադամեան թատերախումբը, 1961»:

Հալեպում թատերական գործունեության այս նոր աշխուժացմանը մեծապես նպաստեցին Բեյրութից եկող ազդակները, ուր 1956-ին կազմավորվել էր ՀԵԸ-ի Երգի եւ պարի խումբը, իսկ քիչ անց՝ 1960-ին կազմավորվեց նաեւ ՀԵԸ-ի Վահրամ Փափազեան հանրաճանաչ թատերախումբը:

Հալեպի Ադամեան թատերախմբի առաջին ներկայացումն էր Մոլիերի «Երեւակայական հիվանդը» կատակերգությունը. «Պ.Քելէշեան՝ Մոլիէռով նոր ճաշակ մը եւ կատակերգական թատրոնի նոր հասկացողութիւն մը տուաւ հալէպահայութեան, որ ընդհանրապէս դիտած էր միմիայն թեթեւ զաւեշտներ, որպէս կատակերգութիւն, եւ ամենաբախտաւոր պարագային՝ Պարոնեան կամ Օտեան: Ուրեմն, «Երեւակայական հիւանդ»ով, Պետրոս Քելէշեան նոր շրջան մը սկսաւ Հալէպի եւ ՀԵԸ-ի մէջ»:[20] Որոշ ժամանակ անց Ադամյանին կից կազմակերպվում է նաեւ Աշակերտական թատերախումբը, որի առաջին ներկայացումը Հ. Պարոնյանի «Ծողոքորթը» պիեսն էր: 1970թ. Ադամյան թատերախումբը առաջին անգամ գլխավորում է պրոֆեսիոնալ բեմադրիչ Գրիգոր Քելէշեանը՝ Երեւանի Գեղարվեստաթատերական ինստիտուտի շրջանավարտ: Այդ ժամանակից ի վեր թատերախմբի գործունեությունը կրեց որակական փոփոխություններ եւ որոշ չափով գերազանցեց զուտ սիրողական թատրոնի մակարդակը: Ինչպես նշում է Հ.Միքայելյանը, «Ադամեանը առաջինը եղաւ Սուրիահայ պատմութեան մէջ (եւ ըստ արաբական թերթերու՝ Սուրիոյ պատմութեան մէջ), որ հիմնեց Մանկա-պատանեկան թատրոն, ...առաջինը եղաւ Հալէպահայ թատերախումբերու մէջ, որ ունեցաւ իր մնայուն տեքորիսթը, ...որ Հալէպի մէջ իրագործեց դարձող-բեմի գաղափարը...»:[21]

ՀԵ Ընկերակցությունը իր մշակութային գործունեության մեջ կարեւոր տեղ էր հատկացնում նաեւ երաժշտությանը ու դեռեւս 1933թ. ձեռնամուխ եղավ երգչախմբի եւ նվագախմբի կազմավորմանը: Այդ տարիներին երգի եւ պարի դասերը ընդգրկված էին ՀԵԸ-ի դասընթացների ցանկում եւ կարեւոր միջոցներից էին հայ պատանիներին ու երիտասարդներին հայ մշակույթին հաղորդակից դարձնելու համար: «Ընկերակցութեան պատասխանատուները կը դիմագրաւեն շատ մը դժուարութիւններ: Չկան հայերէն դասագրքեր, ձայնագրուած երգեր, բայց կայ ուսուցիչի եւ մանաւանդ՝ նիւթականի տագնապ: Բայց եւ այնպէս, հակառակ բոլոր տեսակի խոչընդոտներուն, յամառօրէն կը շարունակուին այդ դասերը, յաղթահարելով բոլոր դժուարութիւնները: Այսօր, տասնամեակներ ետք,-նշվում է այդ հարցին նվիրված մի հոդվածում,-արդար հպարտութեամբ պէտք է յայտարարուի, թէ ՀԵԸ իր մեծ ներդրումը ունեցաւ տարագրութենէ մազապուրծ սերունդին հոգիին ու մտքին մէջ հայ երգն ու բանը դրոշմելու»:[22] Այդ գործում հատկապես մեծ էր հայտնի կոմպոզիտոր եւ խմբավար Համբարձում Պերպերյանի ավանդը, որը 1935-1938թթ. Հալեպում վարում էր ՀԵԸ-ի քարտուղարի պաշտոնը: 1936թ. նա հիմնում է ՀԵԸ-ի մի նոր երգչախումբ, որը համերգներով հանդես է գալիս Հալեպում, Ալեքսանդրետում եւ այլուր: ՀԵԸ-ի եւ իր անձնական նախաձեռնությամբ նա ներկայացնում է «Անուշ», «Սայաթ Նովա», «Աշուղ Ղարիպ» եւ այլ օպերաներն ու օպերետները, որոնց մասնակցում էր նաեւ ՀԵԸ-ի երգչախումբը: 1940-ական թթ. սկզբին առաջին անգամ կազմավորվում է ՀԵԸ-ի սեփական նվագախումբը:

Հալեպահայության մշակութային կյանքի ամենանշանակալից դեպքերից էր ՀԵԸ-ի նորաստեղծ Սպենդիարեան երգչախմբի առաջին ելույթը՝ Ժիրայր Իսկենյանի խմբավարությամբ, 1953թ. դեկտեմբերի 23-ին: Ենորհիվ իր կատարողական բարձր արվեստի եւ հարուստ երգացանկի,

երգչախումբը կարճ ժամանակում մեծ ճանաչում ստացավ ոչ միայն հայ, այլեւ արաբ ունկնդիրների մոտ: «Հալէպի Արաբական Երաժշտանոցի Տնօրէն՝ Ուսթէզ Հաշէմ Ֆանսա, չի խնայեր իր աջակցութիւնն ու քաջալերանքը մեր երգչախումբին: Ինքն է, որ յաճախ արաբերէն երգացանկը ճոխացուցած է, մեզի տրամադրելով նպատակայարմար երգեր, հսկած անոնց ճգրիտ կատարման: Առաջաւորներէն ըլլալով արաբական աշխարհին, շատ մը արաբերէն երգեր դաշնաւորելով, քառաձայնի վերածած է, զանոնք Սպենդիարեանի միջոցաւ հրամցնելով սուրիական ժողովուրդին: Իր այս մեծ ծառայութիւնը՝ արաբերէն երգերու կատարումը նոր մեկնաբանութեամբ եւ մանաւանդ հայկական երգչախումբի միջոցաւ հրամցուած, արդեօք արգասիքը չէ՞ արաբ-հայ մշակոյթի գործակցութեան, եւ ճիշդ այդ պատճառաւ, հայրենի կառավարութիւնը չուշացաւ տալու իր գնահատականը՝ երբ Սպենդիարեան երգչախումբի հետ միասին Ուսթէզ Հաշէմ Ֆանսա եւս հրաւիրուեցաւ Հայաստան այցելութեան»:[23]

ՀԵԸ-ի Սպենդիարեան երգչախմբի ստեղծագործական կենսագրության կարեւոր էջերից էր նրա մասնակցությունը Երեւանում Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հանդիսություններին: Ավելի քան երկու շաբաթ տեւած այդ այցելության ընթացքում նրանց ելույթների շնորհիվ Հայաստանի ժողովուրդը եզակի հնարավորություն ստացավ ծանոթանալ սփյուռքի երգչախմբային արվեստի հետ:

1955թ. Հալեպում սկսեց գործել Ասլամազեան լարային քառեակը: Նրա առաջին կազմի անդամներից էր (երկրորդ ջութակ) ՀԲԸ Միության հայտնի գործիչ՝ ակնաբույժ Ռոպերտ Ճեպեճյանը, որը տարիներ անց գրում էր. «Ամաթէօրական (սիրողական-Էդ.Մ.) սոյն ձեռնարկին ներշնչումը կու գար Կոմիտասի անուան Հայկական Քառեակէն, որը այդ օրերուն կը գործէր Մոսկուայի մէջ. անոր արտակարգ յաջողութիւններու լուրերը մեզի հասած էին հայրենի մամուլէն, իսկ երաժշտութիւնը մեզ դիւթած էր Երեւանի ռատիոկայանէն: Այդպէս ալ, նորաստեղծ քառեակը Հալէպի մէջ կը մկրտուէր Սերկէյ Ասլամազեանի անունով, Կոմիտասի Քառեակի հիմնադիր, թաւ ջութակահար, անզուգական մշակողը Կոմիտասի երգերու լարային քառեակի համար»:[24] Խորհրդանշական էր, որ Ասլամազեան քառյակի առաջին համերգը կայացավ ՀԲԸ Միության նորահաստատ Լազար Նաճարեան դպրոցի դահլիճում, 1956թ., իսկ վերջինը՝ 1975թ. Մեծ Եղեռնի 60-ամյա տարեդարձի համազգային հանդիսության առիթով: Ռ.Ճեպեճյանի խոսքերով, «Մեծ հաւակնութիւններ չունէր Ասլամազեան Քառեակը. այսուհանդերձ, արուեստի քառուղիներէն հեռու այս գաղութի պայմաններում, ան ունեցաւ 20-ամեայ նշելի գործունէութիւն, հարստացնելով գաղութիս հաւաքոյթներուն ու հանդէսներուն գեղարուեստական յայտագրերը»:[25]

Երեւի թե անբնական կդիտվեր, եթե սփյուռքի երիտասարդ սերունդը բավարվեր լոկ ազգային կամ դասական երաժշտությամբ, որքան էլ զգար ու գիտակցեր նրանց կարեւորությունը: Երիտասարդները, որոնք ձգտում էին հնարավորին չափ հետեւել նաեւ արեւմտյան արդիական, այսպես կոչված, էստրադային երաժշտությանը, լինի ձայնասկավառակների կամ ռադիոյի միջոցով, վաղ թե ուշ պետք է փորձեին իրենց ուժերը նաեւ այդ ասպարեզում: ՀԵԸ-ի պարագայում դա տեղի ունեցավ 1963թ., երբ նրա մի քանի անդամների նախաձեռնությամբ կազմավորվեց «Տիր Եանկ Սթարզ» («Երիտասարդ աստղեր») էստրադային նվագախումբը: Սկզբնական շրջանում այս խումբը ելույթներ էր ունենում հիմնականում ՀԲԸ Միության եւ ՀԵԸ-ի կազմակերպած տարբեր հանդեսներում եւ համերգներում, սակայն ձեռք բերելով որոշ հմտություն եւ փորձառություն, նա սկսեց հանդես գալ հրապարակային համերգներով: Նվագախմբի համընդհանուր ճանաչմանը հատկապես նպաստեցին նրա համերգները Բեյրութում, ՀԲԸ Միության Ցովակիմեան-Մանուկեան վարժարանի սրահում, 1974թ.:

Երկրորդ Աշխարհամարտից հետո թե Բեյրութում եւ թե Հալեպում ՀԲԸ Միության եւ ՀԵ Ընկերակցության գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված էր Բարեգործական Տների կամ Ակումբների առկայությամբ: Դրա վկայությունն է Հալեպի Բարեգործական Տան կամ, ինչպես այն ընդունված էր կոչել՝ Բարեգործականի Ընտանեկան Ակումբի գործունեությունը:

Մինչեւ 1947թ. Հալեպի Հայ Երտասարդաց Ընկերակցության ակումբը տեղակայված էր քաղաքի հյուսիսային բնակելի թաղի ծայրամասում գտնվող շենքերից մեկում, որն ուներ ընդամենը չորս սենյակ (նրանցից մեկը տրամադրված էր ՀԲԸ Միությանը), մեկում՝ դաշնամուր: Շենքը ուներ ընդարձակ բակ, ուր թատերական ներկայացումների եւ այլ հանդեսների ժամանակ տեղավորվում էին հանդիսատեսները: Նման պայմաններում, բնականաբար, հնարավոր էր միայն սահմանափակ գործունեություն: Երկրորդ Աշխարհամարտի ավարտից հետո, երբ դաշնակիցների զորքերը մեկնեցին Հալեպից, ազատվեց նաեւ ֆրանսիացիների կողմից զբաղեցված շենքը՝ Ֆրանսիական ակումբը, որը գտնվում էր Մազլումյաններին պատկանող պատմական Օթել Պարոնի դիմաց: ՀԲԸ Միության երիտասարդ անդամների որոշումը՝ այդտեղ փոխադրել Միության գրասենյակը եւ ՀԵ Ընկերակցության ակումբը, արժանացավ Սիրիայի Շրջանային Հանձնաժողովի եւ Եգիպտոսի Կենտրոնական Հանձնա-

ժողովի հավանությանը, որոնց հատկացված դրամական միջոցներով էլ շենքը նորոգվեց եւ կահավորվեց: Այդ նոր շենքի անհամեմատ ավելի մեծ հարմարությունները (պարտեզ, ընդարձակ՝ 700 տեղանոց սրահ, 8 սենյակ եւ այլն) հնարավոր դարձրին ՀԵ Ընկերակցության բազմաբնույթ եւ աշխույժ գործունեությունը սկսած 1948թ.: ՀԵ Ընկերակցության այդ տարիների ղեկավարներից Լեւոն Պերողուտյանը վերհիշում էր. «Ակումբը օժտուած էր պիլյարտոյով մը. արտօնուած էին նարտի եւ թուղթի խաղերը. ազատութիւններ՝ որոնք օրին ոմանց խորթ թուեցան կենցաղային մեր վարք ու բարքին: Ձմռան շրջանին շէնքին մէջ, իսկ գարնան ալ պարտէզը, երկսեռ անդամներ կ'օգտուէին զովացուցիչներէ, խմիչքներէ եւ աղանդերներէ: Նորութիւն էր: Ակումբէն ներս, նորութիւն էր նուագախումբն ալ, որ հաճելի մթնոլորտ մը կը ստեղծէր երեկոյեան, հայերէն եւ օտար երգերու կատարումով: Մէկ մէկ, ելոյթ կ'ունենային անգամ եվրոպացի արուեստագէտներ»:[26] Այս «խորթ թվացող» նորամուծություններին զուգահեռ, Ակումբում սկսեցին գործել նաեւ կրթական, մշակութային, օրիորդաց, տիկնանց, սկաուտական եւ այլ հանձնաժողովներ ու մարմիններ:

Այդ տարիների Միության Հալեպի մասնաճյուղի անդամների հետաքրքրությունների ու մտավոր զարգացման մասին կարելի է դատել հենց միայն 1950թ. Ակումբում կազմակերպված «վիճաբանական» երեկոներից: Դրանցից առաջինը նվիրված է եղել Կոստան Զարյանի «Տատրագոմի հարսը» վեպին, մյուսը՝ «Վասակի դատավարութիւնը», ավարտվել է հինգ հոգուց բաղկացած դատական կազմի հետեւյալ վճիռով. «Վարդանանց ժողովրդային ապստամբութիւնը պատմական անհրաժեշտութիւն մըն էր եւ Վասակ դատապարտելի է Հայոց պատմութեան մէջ»:[27] Ուշագրավ է երրորդ երեկոյի ընթացքում քննարկված հարցը՝ «Էօթանազիա» (անդորր մահբերում երբ անխուսափելի է)», մի հարց, որը, խիստ այժմեական լինելով հանդերձ, չի ստացել իր միանշանակ լուծումը նաեւ այսօր՝ ավելի քան կես դար անց: Բացի այդ, մոտ մեկ ու կես տարվա ընթացքում (մայիս 1949-հունվար 1951) ՀԲԸ Միության ակումբում կազմակերպվել էր 14 դասախոսություն, նվիրված գրականության, ճարտարապետության, հայ ժողովրդի եւ եկեղեցու պատմության, երիտասարդության եւ այլ հարցերի: Զեկուցողների թվում էին Գարեգին Ա. կաթողիկոսը, պրոֆ. Գափլանը (Գափլանյան), Բյուզանդ Եղիայանը, Ամերիկահայ թեմի առաջնորդ Տիրան եպիսկոպոս Ներսոյանը, վերապատվելի Եղիա Քասունին, «Երիտասարդ հայուհի» ամսագրի խմբագիր Սիրան Սեզան եւ այլ հայտնի դեմքեր: Գրեթե նույն ժամանակահատվածում մեծ թվով ձեռնարկներ էին կազմակերպվել ՀԵ Ընկերակցության եւ նրա

տարբեր հանձնախմբերի կողմից. Գրիգոր Նարեկացու 1000-ամյակին նվիրված հանդիսություն, թատերական ներկայացումներ, կար ու ձեւի դասընթացներ, ամառային անվճար դասընթացներ աշակերտության համար եւ այլն:

1955թ. Հալեպի մասնաճյուղը հիմնեց մինչ օրս գործող Սարեան Ակադեմիան, որը հալեպահայ երիտասարդության համար դարձավ արվեստի յուրահատուկ մի տուն, ուր նրանք հնարավորություն են ստանում զարգացնել եւ կատարելագործել իրենց ընդունակությունները նկարչական, փորագրական, ճարտարապետական, գծագրության եւ այլ բաժիններում:

Հալեպի ՀԵ Ընկերակցության այդ տարիների գործունեության կարեւոր արդյունքներից էր Ուսանողական բաժնի ստեղծումը 1950թ.: Դեռեւս ձեւավորման շրջանում ՀԵԸ կազմում կային օտար բարձրագույն կրթական հաստատությունների ուսանողներ: Հայկական նման հաստատությունների չգոյության պատճառով նման հայ երիտասարդների քանակը քաղաքում տարեցտարի աճում էր: Զրկված լինելով իրենց հայազգի հասակակիցների հետ մշտական շփումներից, նրանք կամա թե ակամա ժամանակի ընթացքում օտարվում էին ազգային կյանքից: Նորաստեղծ Ուսանողական բաժնի հիմնական նպատակն էլ հենց այն էր, որ «...երիտասարդ-երիտասարդուհիները քով-քովի բերել, նոյն հարկի տակ եւ անոնց համար ստեղծել հայկական ջերմիկ մթնոլորտ մը: Ահ այդ կը խմբագրուի Ուսանողական յատուկ Ծրագիր-Կանոնագիր մը, Ընկերակցութեան սկզբունքներուն համաձայն»:[28] Երիտասարդությանը ազգային արժեքներին ծանոթացնելու հիմնական միջոցներն էին երաժշտական, գրական, պատմական եւ այլ դասախոսությունները եւ հանդեսները, որոնց իրականացման ձեւերը, բնականաբար, փոփոխվում, առավել արդյունավետ էին դառնում ժամանակի ընթացքում: Այսպես, 1960թ. ստեղծվեց Ուսանողականի թատերախումբը՝ կազմված մեծամասնությամբ Միության Լ.Նաճարեան-Գ.Կիլպէնկեան վարժարանի աշակերտներից: Ուսանողականը առաջին անգամ կազմակերպեց շախմատի մրցում, «առաջին անգամ ըլլալով կը կազմակերպէ ընդհանուր զարգացման մրցում մը, ուսանողներու եւ ոչ ուսանողներու միջեւ, ...«Ռէլլի Բէյբըր» (հանելուկ արշաւ), որ մեծ նորութիւն էր քաղաքիս համար»[29] եւ այլն:

Մինչեւ 1957-1958թթ. Ուսանողական Բաժնի վարչության անդամները օտար, ոչ հայկական երկրորդական վարժարաններից էին: Սակայն, երբ այդ տարի ՀԲԸ Միության Լ.Նաճարեան-Գ.Կիլպէնկեան վարժարանը ունեցավ իր երկրորդական բաժինը, վարչությունը համալրվեց վերջինի աշակերտներով նույնպես: Այդ տարիներին Ուսանողականի վարչու-

թյունը սկսեց կազմակերպել հավաքույթներ՝ հայկական նախակրթարանների շրջանավարտների մասնակցությամբ, նրանց իրենց գործունեությանը ծանոթացնելու նպատակով: Դրա շնորհիվ ապահովվում էր թե ՀԵԸ-ի եւ թե Ուսանողական բաժնի անդամության հավելումը եւ գործունեության ընդարձակումը: Ավելի ուշ՝ 1970-ականների վերջին Ուսանողական Բաժինը սկսեց համալրվել նաեւ երկրի տարբեր համալսարանների հայ ուսանողներով: Արդյունքում՝ հնարավոր դարձավ Ուսանողականի «Էրեբունի» խմորատիպ պարբերականի հրատարակումը, Քեսապի ՀԲԸ Միության Կազդուրման կայանում հավաք-բանակումների կազմակերպումը եւ այլն: 1956-ին Հայ համալսարանականներու (Ուսանողաց) միությունը իր ավելի քան 150 անդամներով սկսեց գործել նաեւ Բեյրութում:

«Խօսնակ», «Գեղարդ»

1957թ. ՀԲԸ Միության՝ նրա Արեւելքի երկրներում գործող մասնաճյուղերի պատմության ամենակարեւոր իրադարձություններից էր «Խօսնակ» ամսագրի հրատարակումը Բեյրութում: Պաշտոնաթերթ ունենալու գաղափարը, որը վաղուց էր հասունացել, հատկապես կարեւորվեց 1955-1956թթ. եկեղեցական տագնապի շրջանում, երբ անհրաժեշտ էր հստակ արտահայտել Միության բացասական դիրքորոշումը Կիլիկիո կաթողիկոսության որդեգրած քաղաքականության վերաբերյալ: ՀԲԸ Միության Վետերանների հանձնախմբի նախաձեռնությամբ ստեղծվեց հատուկ վարչություն՝ Պողոս Պեյ Թուրսարգիսյանի ատենապետությամբ, որն էլ իրականացրեց «Խօսնակ» ամսագրի հրատարակումը: Ամսագրի առաջին համարում այսպես էր բացատրվում նրա հիմնական նպատակը. «արտասահմանի ամէնէն հոծ հայութիւնը կը գտնուի Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, եւ այս շրջաններուն գործունէութեան մանրամասն հետապնդումին համար անհրաժեշտ էր ստեղծել անոր «Խօսնակը» ...համադրելու եւ զօրացնելու համար (ՀԲԸ Միության) բոլոր գործունէութիւնները, զանոնք սեփականութիւնը դարձնելու համար համայն հայ ժողովուրդին, անհրաժեշտ էր ունենալ օրկան մը, որ ծառայէր իբր հոգեկան ու բարոյական կապ Բարեգործականի բոլոր հաւատաւորներուն միջեւ»:[30]

Ամսագիրը, լինելով Լիբանանի ՀԲԸ Միության եւ ՀԵ Ընկերակցության պաշտոնաթերթը, միաժամանակ իր էջերը մշտապես տրամադրեց Սիրիայի քույր կազմակերպությունների գործունեության լուսաբանմանը: «Խօսնակի» պատմության մեջ առավել դժվարին եղան քաղաքացիական պատերազմի տարիները, որի գրեթե ողջ ընթացքում նրա գլխավոր

խմբագիրն էր Պարույր Աղպաշյանը: Յովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Յակոբեան վարժարանների տնօրեն Ժիրայր Դանիելյանի խոսքերով՝ «...Պարոյր Աղպաշեանի խմբագրութեան շրջանը եղաւ ամէնէն երկարը եւ ամէնէն փորձանաւոր ժամանակահատուածի մը՝ Լիբանանի 17-ամեայ պատերազմի շրջանին: Երբ բազմաթիւ թերթեր եւ հրատարակութիւններ շիջեցան այս պատճառով, «Խօսնակ»ը շարունակեց լոյսին գալ իր խմբագրին անձնուէր եւ հետեւողական աշխատանքին ու զոհողութիւններուն շնորհիւ: Վարչական փոփոխութիւններու ծիրին մէջ՝ «Խօսնակ» ժամանակաւորապէս դադրեցաւ 1989 սեպտեմբեր-դեկտեմբեր միացեալ թիւով»:[31] Բայց արդեն 1991թ. աշնանը այն վերստին հրատարակվեց նույն ծավալով եւ պարբերականությամբ: 1990-ականներին սկսեց հրատարակվել նաեւ ամսագրի «The Khosnag Supplement» հավելվածը՝ անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով:

Առաջին Աշխարհամարտից հետո Հալեպը սփյուռքի մշակութային կարեւոր կենտրոններից էր, ուր գործում էին մի շարք հայկական տպարաններ, հրատարակվում տարբեր պարբերականներ: Սակայն 1960-ական թթ. երկրի իշխանությունները որոշակիորեն սահմանափակեցին ազգային փոքրամասնությունների հրատարակչական գործունեությունը: Բայց, ահա, 1975թ. Հալեպի ՀԲԸ Միության մատենագիտական հանձնախումբը լույս ընծայեց «Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք»-ի առաջին հատորը՝ որի կազմողն ու խմբագիրն էր Հայկ Պարիկյանը: Սկսած երկրորդ հատորից նրան միացավ նաեւ Ռոբերտ Շեպեճյանը, որը մահից առաջ՝ 2000թ. հրատարակեց տարեգրքի վերջին Զ հատորը, ապա նաեւ արաբերեն տարբերակը: Իր տեսակի մեջ «Գեղարդ» տարեգիրքը եզակի հրատարակություն է. այն, ըստ էության, յուրահատուկ հանրագիտարան է, որը ներկայացնում է Սիրիայի հայության ողջ պատմությունը՝ իր գրեթե բոլոր մանրամասներով:

Գամիշլի, Դամասկոս

Սիրիայի հայաշատ քաղաքներից առանձնահատուկ է Գամիշլին, որը գտնվում է երկրի հյուսիս-արեւելքում՝ Տեր-Զորից մոտ 250 կմ հեռավորության վրա, Թուրքիայի եւ Իրաքի սահմանագծի մոտ: Պատմական Մծբինի մոտ գտնվող այս քաղաքի պատմությունը սկիզբ է առնում XX դ. 10-ականներից: Գամիշլիի Հայ Ավետարանական եկեղեցու 1960-ական թթ. առաջնորդ պատվելի Պարգեւ Օրջանյանը, անդրադառնալով հայերի այստեղ հաստատվելուն, գրել է. «Ա. Համաշխարհային պատերազմէն

վերջ, երբ դաշնակիցները տակաւին հաստատած չէին իրենց մշակած ծրագիրները եւ տեղի տալով Քեմալական ոյժերուն առջեւ կը նահանջէին թրքական հողերէն, ֆրանսացիները՝ հոս թէ Այնտիվարի մէջ հաստատած էին զօրանոցներ, կազմելով բանակ մը Ասորի Եագուպիկներէ, Հայերէ, Քիւրտերէ եւ Արաբներէ: Միջանկեալ պէտք է յիշենք թէ՝ հայերուն արգիլուած էր մաս կազմել բանակին: Ուստի, այն հայը, որ կը փափագէր զինուոր ըլլալ, պէտք էր իր ինքնութիւնը փոխէր եւ հայ ըլլալէ դադրէր: Այսպիսով, ապրուստի համար, խել մը հայեր իրենց ինքնութիւնը փոխելով բանակ մտած էին: Ֆրանսական բանակին ներկայութիւնը կը քաջալերէր Թուրքիոյ մէջ գտնուող սահմանամերձ քրիստոնեաներուն Սուրիա գաղթելը: Հետեւաբար հայեր, սուրիացիներ եւ քիւրտեր, հոծ բազմութիւններով կը գաղթեն այս նորակազմ գաղութը: Ֆրանսական իշխանութիւնն ալ այս պատեհութիւնը օգտագործելով կը սկսի հոս աքսորել Սուրիոյ այլ քաղաքներուն մէջ գտնուող անբաղձալիներն ու յանցագործները, եւ Գամիշլիին կը սկսի ծաղկել որպէս «արշակաւան»:[32]

Գամիշլի գաղթած հայերը ի սկզբանէ տարբեր էին իրենց ազգամշակութային նկարագրով, եւ նրանց որոշ մասը գտնվում էր մշակութափոխման տարբեր փուլերում. «...գաղթող քիւրտերու մէջ կային հայեր, որոնք թէեւ քրտախօս էին, սակայն պահած՝ իրենց ազգային հպարտութիւնն եւ հնաւանդ սովորութիւնները: Անոնք կու գային Թուրքիոյ Ծեզիրէթ Պոթանէն կամ Պշերի լեռներէն եւ իրենց անունը առած էին իրենց տեղանունէն՝ կոչուելով պշերիկցիներ»: Նշելով այս, Պ. Օրջանյանը հատուկ ընդգծում է, որ հարկ է «զանազանել զանոնք քրտացած հայերէն: Քանի որ Պոթանի մէջ կ'ապրին քիւրտեր, որոնք անցեալին եղած են հայեր, սակայն ժամանակի ընթացքին իրենց լեզուն եւ կրօնը փոխելով դադրած են հայութենէ»:[33] Այդ առումով ուշագրավ է, որ Գամիշլիի Հայ Ավետարանական եկեղեցու առաջին քարոզիչներից էին նաեւ քրդախոս եւ արաբախոս հայերը: Մի կողմից, տեղի հայերի ազգային նման նկարագիրը, մյուս կողմից՝ Գամիշլիի հեռավորությունը հայաբնակ Հալեպից ու Դամասկոսից, կարծես թե անխուսափելի էին դարձնում նրանց արագ եւ անդառնալի ձուլումը իրենց շրջապատող եւ թվով շատ ավելի մեծ այլազգիների մեջ: Սակայն տեղի ունեցավ հակառակը: Առաջին իսկ օրից այստեղ աշխույժ գործունեություն են ծավալում Հայ Առաքելական, Կաթոլիկ եւ Ավետարանական եկեղեցիները, որոնք էլ, սկսած 1930-ական թթ., հիմնում են հայկական վարժարաններ: «Գամիշլիի Հայ ավետարանական համայնքը ունի իր եկեղեցին եւ իր դպրոցը՝ 200 աշակերտով: Հայ կաթոլիկ համայնքը՝ իր եկեղեցին եւ դպրոցը 350 աշակերտով, իսկ Հայ առաքելական համայնքը՝ իր եկեղեցին եւ իր վարժարանը 1200 աշակերտով»: Հնչեցնելով այս թվերը 2000թ. դեկտեմբերին Բուենոս Այրեսում կայացած ՀԲԸ Միության հերթական Ընդհանուր ժողովում՝ Միության Կենտրոնական Վարչության անդամ, Սիրիայի ներկայացուցիչ Գառնիկ Յագուպյանը հատկանշական մի համեմատություն արեց. «Անցյալ օրը, Հարավային Ամերիկայի ՀԲԸ Միության Ատենապետների ժողովին ժամանակ, պրն. Խուան Նուրիխանը Գորտոպայից (Արգենտինա) նշեց, որ Գորտոպայում ապրում է 12.000 հայ: Նույն թվով հայեր կան նաեւ Գամիշլիում: Սակայն այնտեղի հայկական վարժարաններում կա միայն 300 աշակերտ, իսկ Գամիշլիում՝ 1.750: Աշակերտության այս մեծ թիվը վկայում է, թե որքան մեծ է Գամիշլիի հայության վճռականությունը պահպանել իրենց մշակույթը եւ ավանդույթները»:[34]

Սկսած 1947թ., երբ կազմավորվեց ՀԲԸ Միության Գամիշլիի մասնաճյուղը (1958թ. հիմնվեց նաեւ ՀԵ Ընկերակցությունը), նա իր կարեւոր բաժինն է բերել տեղի հայերի ազգային եւ մշակութային գործունեությանը: Սակայն սեփական եւ մնայուն կենտրոնի բացակայությունը մեծապես խոչընդոտում էր Միության աշխատանքների ընդարձակմանն ու արդյունավետությանը: 1971թ., երբ նախագահ Ալեք Մանուկյանը գտնվում էր Բեյրութում, այս հարցով նրան են դիմում Գամիշլիից ժամանած Միության մասնաճյուղի ներկայացուցիչները: Հանդիպման արդյունքը սպասել չտվեց. Ա.Մանուկյանի տրամադրած միջոցներով գնվում է 500 քմ հողատարածք, որի վրա էլ մասնաճյուղի անդամները իրենց ձեռքով կառուցում են Միության առաջին ակումբը: Որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ Միության գործունեության աշխուժացումը այս քաղաքում, հատկապես երիտասարդության շրջանում անհրաժեշտաբար պահանջում էր ավելի արդիական եւ հարմարավետ պայմաններ: Եվ ահա, 2001թ. ապրիլին Գամիշլիում մեծ հանդիսավորությամբ, ՀԲԸ Միության նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնի ներկայությամբ իր դռները բացեց Միության «Գառնիկ Եագուպեան կեդրոնը»: Գառնիկ եւ Անահիտ Յագուպյանների բարերարությամբ կառուցված նորակերտ ընդարձակ շենքը (1250 քմ) օժտված է բազմաթիվ գրասենյակներով, լսարաններով եւ 250 հոգանոց դահլիճով, ինչը հնարավորություն է տալիս կազմակերպել զանազան միջոցառումներ եւ ձեռնարկներ: Գ.Յագուպյանի խոսքերով ասած՝ «Թուրքիոյ սահմանէն 1 քիլոմեթր հարաւ, Եղերնէն 85 տարի վերջ, հայը իր շինիչ շունչով կը կառուցէ իր կեդրոնը եւ կը վերահաստատէ իր գոյութիւնը»:[35]

Սիրիայի ՀԲԸ Միության անդամների եւ ողջ սիրիահայության համար այդ տարիները աննախադեպ էին նորակառույցների քանակով: Գամիշլիի Միության կենտրոնի բացումից մեկ տարի առաջ նմանօրինակ

իրադարձություն տեղի ունեցավ երկրի մայրաքաղաք Դամասկոսում: Չնայած հայության համեմատաբար փոքր թվին, Դամասկոսում գործում են բազմաթիվ հայկական կազմակերպություններ, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության եւ ՀԵԸ-ի մասնաճյուղերը: Այստեղ նույնպես նրանց գործունեության ընդարձակմանը խոչընդոտում էր ժամանակի պահանջներին համապատասխանող ակումբի բացակայությունը: Ցագուպյան ընտանիքը, որի ներկայացուցիչները վաղուց ի վեր հայտնի էին իրենց ազգանվեր գործունեությամբ, այս դեպքում եւս ստանձնեց ՀԲԸ Միության նոր կենտրոնի շինարարությունը: Դամասկոսի ՀԲԸ Միության «Նազարեթ Եագուպեան կեդրոն-ակումբ»-ի բացումը կատարվեց 1999թ. մայիսին, եւ այդ օրվանից այն դարձավ թե երիտասարդների եւ թե տարեցների հիմնական հավաքատեղին:

Նպաստընկալ վարժարաններ

1931թ. ՀԲԸ Միության 25-ամյակի կապակցությամբ նախագահ Գալուստ Կյուլպենկյանի նախաձեռնությամբ պատրաստվեց կազմակերպության հետագա գործունեության նոր ծրագիրը: Այս կարեւոր փաստաթղթում մեծ տեղ էր հատկացված նաեւ ազգային կրթությանը եւ մշակույթին. «...անիկա գլխաւոր, եթէ ոչ միակ պատուարն է գաղութահայութիւնը հայ պահելու, թոյլ չտալով որ օտարութեան մէջ ուծանայ ազգային զգացումը: Հայերէն լեզուի, ազգային պատմութեան, հայ կեանքի ամենազգի արտայայտութիւններովն է որ պիտի կրնանք ազգային շունչ ներարկել եւ հայ ոգին պահպանել գաղութներուն մէջ, առաջքն առնելով անխուսափելի այլասերումին եւ ուծացումին, որ իրապէս կը սպառնան հայ բազմահոծ զանգուածներուն, ակնյայտնի ըլլալով որ առանց ուժգին հակազդեցութեան անոնք պիտի օտարանան 1-2 սերունդէ վերջ»:[36]

Կարեւորելով ազգային կրթության հարցը՝ Միությունը դեռեւս 1920-ականներին, քանի դեռ իր սահմանափակ ֆինանսական հնարավորությունների պատճառով ի վիճակի չէր հիմնել սեփական վարժարաններ, սկսեց դրամական նպաստներ հատկացնել տարբեր երկրներում տարբեր պատկանելության հայկական վարժարաններին: Արդեն 1924թ. Միությունը նպաստներ էր հատկացնում Խարբերդի, Ճյունիեյի, Ղազիրի, Տրիպոլիի, Լաթաքիայի, Զահլեի եւ այլ վարժարաններին, Մարաշի եւ Այնթապի կրթասիրաց միություններին, ինչպես նաեւ Բեյրութի համալսարանի երկու որբ ուսանողներին:[37] Հետագա տարիներին նման վարժարանների քանակը մշտապես աճում էր: 1929թ. Միությունը նպաստներ էր

հատկացրել Լիբանանում ու Սիրիայում, Հունաստանում, Բուլղարիայում եւ Պաղեստինում գործող 78, իսկ 1933-ին՝100 վարժարաններին:: «Այդ վարժարանները նիւթական միջոցներու անբաւականութեան պատճառաւ առանց Միութեան օժանդակութեան փակուելու պիտի դատապարտուէին եւ այդ պատճառաւ բնականաբար գաղթական երկրեր հայ մանուկներն ալ անուսում եւ թափառական կեանք մը պիտի վարէին, ենթակայ այլասերման եւ ապազգայնանալու վտանգներուն»:[38]

Միությունը ոչ միայն ավելացրեց նպաստընկալ վարժարանների քանակը, այլեւ ձեռնամուխ եղավ կրթական աշխատանքների բարելավմանը: Հարկ է նշել, որ Միությունը օժանդակում էր նախ եւ առաջ գյուղական վայրերում գտնվող վարժարաններին, որոնց վիճակը հատկապես մտահոգիչ էր: Միության ուսումնասիրությունները վկայում էին, որ «...նպաստընկալ վարժարաններէն ոմանք դպրոցական եւ առողջապահական անհրաժեշտ պայմանները չեն լրացներ, ընդհանրապէս ուսուցիչները բաւարարութիւն չեն տար իրենց կոչումին, պէտք եղած զարգացումը եւ ձեռնհասութիւնը չունենալով, շատերն ալ նիւթական զրկանքներով կը կատարեն իրենց պարտականութիւնը: Ցաճախ, դիպուածին թողուած են դասաւանդութիւնները եւ գործնական գիտելիքներուն լայն տեղ չի տրուիր, մանկավարժութեան արդիական սկզբունքները չեն կիրարկուիր, բարոյական դաստիարակութեան հոգ չի տարուիր»:[39]

Նման կացությունը շտկելու նպատակով Միության նախաձեռնությամբ պատրաստվեց միասնական կամ միօրինակ ուսումնական ծրագիր՝ «Ուսման ծրագիր գաղթական համայնքներու յատուկ նախակրթարաններու», որին իրենց մասնակցությունը բերեցին այնպիսի հեղինակավոր դեմքեր, ինչպես, օրինակ, դոկտոր Վ.Թորգոմյանը, Լեւոն Բաշալյանը, Արշակ Չոպանյանը, Դավիթ Բեկը, Վահան Թեքեյանը, Շավարշ Պերպերյանը, Ա.Ինճիճյանը, Արամ Անտոնյանը եւ այլ մասնագետներ: Ամեն բանից զատ, այն կարեւոր ներդրում էր հայ մանկավարժական մտքի զարգացման գործում:

Հայտնի է, սակայն, որ նույնիսկ կատարյալ ծրագրի իրական արժեքը նրա իրագործման մեջ է: Եվ հենց այս հարցում Միությունը հանդիպեց տարաբնույթ դժվարությունների: Բանն այն է, որ նշված վարժարանները ենթակա էին թաղային խորհուրդներին կամ հոգաբարձություններին, որոնք կազմավորվում ու գործում էին ազգային-քաղաքական տարբեր ուժերի մրցակցության ու հակամարտության պայմաններում: Հայ քաղաքական կուսակցություններից եւ այլ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար ինքնահաստատման ավանդական ձեւերից էր իրենց բոլոր ընդդիմախոսների վարկաբեկումը, նրանց «հակազգային» գործունեու-

թյան մերկացումն ու չեզոքացումը: Այս գործելակերպը կիրառվում էր նաեւ իրենց հսկողության տակ գտնվող դպրոցներում, նպատակ ունենալով դաստիարակել ապագա կուսակցականների կամ կողմնակիցների նոր սերունդներ, ընդլայնել սեփական ազդեցության ոլորտը:

Այս ամենի արդյունքներից էր, մասնավորապես, այն, որ, օրինակ, Դաշնակցության այս կամ այն չափով ազդեցության տակ գտնվող դպրոցներում նման վարկաբեկման թիրախ էր դառնում հաճախ նաեւ ՀԲԸ Միությունը եւ անգամ այն դպրոցներում, որոնք օգտվում էին վերջինիս տրամադրած նպաստներից: Կահիրեի «Արեւ» թերթը այդ առիթով գրում էր. «Սուրիոյ մէջ, Յունաստանի մէջ, Կիպրոսի մէջ բազմաթիւ դաշնակցական պաշտօնեաներ եւ ուսուցիչներ ընդունուեցան Բարեգործականի հաստատութիւններէն ներս: Ի՞նչ եղաւ անոնց վերաբերմունքը հանդէպ Բարեգործականին: Անոնք փոխանակ Բարեգործականի համար *ուղղամիտ* (ընդգծումները՝ ըստ բնագրի-Էդ.Մ.) վերաբերմունք տածելով, իրենց կուսակցութիւնը դուրս ձգելու այս հաստատութիւններէն ներս, ջանացին թունաւորել աշակերտութիւնը, Բարեգործականի դէմ լարեցին զանոնք եւ պատրաստեցին սերունդ մը, որ ըմբոստ եղաւ իր բարերարներուն դէմ եւ ապերախտ՝ զինքը արաբական անապատներէն փրկող, խնամող-դաստիարակողներուն դէմ»:[40]

Մյուս կողմից, ՀԲԸ Միությունը ստիպված էր դիմագրավել նաեւ Ռամկավար Ազատական կուսակցության ճնշման փորձերին: Կարլեն Դալլաքյանը, որը իր «Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն» գրքում առաջին անգամ բազմակողմանի վերլուծության է ենթարկել այդ երկու կազմակերպությունների փոխհարաբերությունները 1920-1930-ական թթ., գրում է. «ՌԱ կուսակցության հարաբերությունները ՀԲԸ Միության ղեկավարության հետ միշտ եղել են բավականին բարդ ու խճողված զանազան հակասություններով: Բարեգործականի Կենտրոնական Վարչական Ժողովը տարել է անկախ քաղաքականություն, թեպետ նրա գործադիր մարմնի ղեկավարը՝ վարիչ-պատվիրակը, եղել է կուսակցության երեւելի դեմքերից մեկը՝ Վահան Մալեզյանը: Այս հարաբերությունների շրջագծից դուրս գտնվողների տպավորությունը եղել է, ընդհակառակն, միանգամայն վարդագույն: Այն իմաստով, թե ՌԱԿ-ը տեր ու տիրական է Բարեգործականի նկատմամբ: ՀՀ Դաշնակցության մամուլը, օրինակ, հաճախ էր օգտագործում «Ռամկավար Բարեգործական» հասկացությունը»:[41] Մինչդեռ, նշում է Կ.Դալլաքյանը, «Բարեգործականի անկախ քաղաքականությունից դժգոհ էին նաեւ ՌԱ կուսակցության կենտրոնական եւ շրջանային ղեկավար մարմինները: Քննադատության առիթ հատկապես տալիս էր Բարեգործականի կադրային քաղաքականությունը, որի բերումով տեղերում ՀԲԸՄ-ի մականի տակ գործող կազմակերպություններում (օրինակ, դպրոցներում) աշխատանքի էին ընդունվում ուրիշ կուսակցությունների պատկանող եւ «ծայրայեղ ընկերային դաւանանք» ունեցող մարդիկ»:[42] Ուշագրավ է, որ ՌԱԿ-ի Ամերիկայի Շրջանային վարչությունը 1930թ. մարտին կուսակցության Կենտրոնական Վարչությանը ուղղած նամակում կոչ էր անում «...ազդեցութիւն բանեցնել անոր (ՀԲԸՄ-ի -Էդ.Մ.) Վարիչ մարմնոյն վրայ, իրենց դպրոցները մաքրագործելու Դաշնակցական տարրերէ»:[43] Մեկ այլ, արդեն ՌԱԿ-ի Դ. Ընդհանուր Պատգամավորական ժողովի (1929թ.) բանաձեւում ասվում էր. «...կը պահանջուի որ Բարեգործականի կրթական հաստատութեանց մէջ պաշտօնի կոչուին միայն ազգային ուղղութեան հաւատարիմ եւ աշակերտութիւնը հատուածական աղանդամոլութենէ զերծ պահող անհատներ»:[44] Ակնհայտ էր, որ տվյալ դեպքում Միությունից պահանջվող «ազգային ուղղությունը» պետք է նախ եւ առաջ համապատասխաներ հենց ՌԱԿ-ի գաղափարախոսությանը: Բայց այդ դեպքում արդեն ՌԱԿ-ի քաղաքական ընդդիմադիրները կամբաստանեին ՀԲԸ Միությունը «հատուածական աղանդամոլության» մեջ: Այդուհանդերձ, ՌԱ կուսակցությունն ու նրա մամուլը մշտապես պաշտպանել են ՀԲԸՄ-ի ազգային առաքելությունը: Այդ կուսակցության բազմաթիվ անդամներ եղել են ՀԲԸՄ-ի եւ ՀԵԸ-ի հայտնի գործիչներ, ղեկավար դեմքեր ու պաշտոնյաներ:

Նման, Կ.Դալլաքյանի բնութագրմամբ, «գաղութների անշնչելի մթնոլորտի պայմաններում», Միությունը հարցի լուծումը տեսնում էր սեփական դպրոցներ հիմնելու մեջ, ինչը, սակայն, առայժմ անիրագործելի էր, նախ եւ առաջ, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Ստեղծված իրավիճակում Միությունը կայացրեց մի որոշում, համաձայն որի նախ, իր նպաստները ստացող վարժարանները պետք է որդեգրեին վերոհիշյալ ուսումնական ծրագիրը, ապա նաեւ, Միության հսկողության տակ պետք է դրվեին նույն այդ վարժարանների բյուջեն եւ ուսուցիչների ընտրությունը: Եվ թեեւ մի շարք դպրոցներ մերժեցին այդ պայմանները, այնուամենայնիվ, թվով շատ ավելի դպրոցներ նախընտրեցին ընդունել դրանք եւ շարունակեցին գործել ՀԲԸ Միության մականի տակ:

Առավել բարդ էր ուսուցիչների հարցը: Ցեղասպանության տարիներին էլ ավելի էր նվազել որակյալ, մասնագիտական ուսում ստացած ուսուցիչների թիվը: Իսկ եղածների ճնշող մեծամասնությունը, ներգրավված լինելով ազգային-քաղաքական գործունեության մեջ, այս կամ այն կուսակցության, քաղաքական հոսանքի գաղափարների ոչ միայն կրողն էր, այլեւ քարոզիչը, այդ թվում նաեւ դպրոցներում: Նման պայմաններում,

ինչպես նշվեց, դպրոցը վերածվում էր միջկուսակցական հակամարտության յուրատեսակ մի դաշտի՝ իր բոլոր անցանկալի հետեւանքներով հանդերձ: Միությունը, չցանկանալով համակերպվել նման կացությանը՝ գոնե իր դպրոցներում, ձեռնամուխ եղավ ուսուցիչների նոր սերնդի պատրաստմանը, այդ նպատակին ծառայեցնելով 1926 թվականից գործող Մելգոնեան կրթական հաստատությունը:

Մելգոնեան կրթական հաստատություն

Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրների նվիրատվությունը, որը իր տեսակի մեջ աննախադեպ էր հայ իրականության մեջ, շրջադարձային եղավ ՀԲԸ Միության պատմության համար՝ ինչ-որ իմաստով կանխորոշելով սփյուռքում նրա ազգապահպան գործունեության հիմնական կերպը եւ էությունը:

Մելգոնեան եղբայրները ծնվել էին Կեսարիայում, սակայն իրենց առեւտրական գործունեությունը սկսել էին 1870թ. Ռումինիայի Ֆոքշան քաղաքում: Որոշ ժամանակ անց նրանք տեղափոխվում են Եգիպտոս եւ 1880-ական թթ. ծխախոտի եւ սիգարետների արտադրություն են հիմնում Զակազիկում, Ալեքսանդրիայում, Ֆեյումում ու Ասուանում: 1900թ. Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան առեւտրական տունը հաստատվում է արդեն մայրաքաղաք Կահիրեում: Եղբայրների աշխատասիրության եւ մասնագիտական հմտության շնորհիվ նրանց գործարանի արտադրանքը հայտնի է դառնում երկրի սահմաններից դուրս՝ Հեռավոր Արեւելքից մինչեւ Եվրոպա:

Մելգոնեան եղբայրների ազգասիրության ամենակարեւոր դրսեւորումն էլ եղավ այն, որ նրանցից ավագը՝ Գրիգորը (հենց նրան էլ պատկանում էր սեփականության հիմնական մասը), իր մահից առաջ (1920թ. փետրվարին) կրտսեր եղբորը՝ Կարապետ Մելգոնեանին եւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Զավեն Տեր-Եղիայանին ու Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանին բանավոր հայտնում է իր որոշումը՝ ողջ ունեցվածքը Հայաստանի կառավարությանը նվիրաբերելու մասին: Եղբոր մահից հետո Կարապետ Մելգոնեանը 1921թ. հուլիսի 25-ի հատուկ կարգադրությամբ ողջ ունեցվածքը նվիրաբերում է Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում՝ երեք արդիական դպրոցներ կառուցելու նպատակին՝ կտակակատար նշանակելով Կոստանդնուպոլսի Պատրիարքարանը: Սակայն հետագայում, նկատի առնելով Թուրքիայում քեմալականների իշխանության հաստատումը եւ նրանց հակահայկական քաղաքականությունը

Կ.Մելգոնեանը 1924թ. մայիսին մի նոր փաստաթղթով կտակակատարին իրավունք է տալիս դպրոցներ եւ որբանոցներ հիմնել հայաբնակ տարբեր երկրներում, որից հետո էլ Պատրիարքարանը ձեռնամուխ է լինում դպրոցական շենքերի կառուցմանը Կիպրոսում: Այդ ընթացքում, սակայն, պարզ է դառնում, որ Կ.Պոլսի Պատրիարքարանը ի վիճակի չէր բավարար չափով իրականացնել կտակակատարի դերը: Մի կողմից, որպես եկեղեցական հաստատություն, նա չուներ անհրաժեշտ փորձառություն նման խոշոր եւ մեծարժեք գույք տնօրինելու, այլ երկրում շինարարություն իրականացնելու համար, ինչն էլ անխուսափելիորեն հանգեցրեց գումարների ոչ ճիշտ օգտագործմանը: Մյուս կողմից, այն հանգամանքը, որ պատրիարքարանը, որպես իրավաբանական անձ, ենթարկվում էր Թուրքիայի օրենքներին, կարող էր վտանգել նվիրատվությունը ընդհանրապես: Ստեղծված իրավիճակում Կարապետ Մելգոնեանը բանակցություններ է սկսում Պողոս Նուպարի հետ: Արդյունքում նա իր ողջ ունեցվածքը նվիրաբերում է ՀԲԸ Միությանը, ինչն էլ պաշտոնապես հաստատվում է Ալեքսանդրիայի Խառն դատարանի 1925թ. դեկտեմբերի 28-ի եւ 1926թ. դեկտեմբերի 15-ի որոշումներով:

Կ.Մելգոնեանի այս վերջին որոշումը մեծ արձագանք ստացավ սփյուռքում: Նվիրատվության աննախադեպ չափը անտարբեր չէր թողել եւ ոչ մեկին: Եվ զարմանալի օրինաչափությամբ, Միության դեմ հերթական, բայց ոչ վերջին անգամ բուռն արշավ սկսեցին թե ՀՀ Դաշնակցությունը եւ թե Խորհրդային Հայաստանի իշխանությունները, որոնցից յուրաքանչյուրը ինքն էր ցանկանում դառնալ նվիրատվության հասցեատերը: Հատկապես ուշագրավ էր Խորհրդային Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը, որի արտահայտիչը սփյուռքում այս դեպքում էլ ՀՕԿ-ի մասնաճյուղերն էին: Անդրադառնալով այդ հարցին՝ Կ.Դալլաքյանը մեջբերում է ՀՕԿ-ի որոշումը, որում ասված էր. «...Նկատի առնելով, որ զանազան մեքենայութիւնների շնորհիւ Մելգոնեան կտակը խլուած է իր իսկական տիրոջից՝ Խորհրդային Հայաստանից, ՀՕԿ-ի ճիւղերին առաջարկել որոշումներ կայացնել, պահանջելով անմիջապէս յանձնել այդ գումարները իր իսկական տիրոջը՝ Խորհրդային Հայաստանում կիրառելու»:[45] Ուշագրավն այն է, որ Խորհրդային Հայաստանը իր գոյության առաջին իսկ օրերից սկզբունքորեն չցանկանալով ներկայանալ որպես Հայաստանի Առաջին Հանրապետության իրավահաջորդը, այս դեպքում, երբ խոսքը վերաբերում էր մեծագումար նվիրատվությանը, մեծ պատրաստակամությամբ հանդես էր գալիս որպես այդպիսին: Հետաքրքրական է նաեւ, որ խորհրդային իշխանությունների նման դիրքորոշումը մնաց անփոփոխ հետագայում նույնպես: Երկրորդ Աշխարհա-

մարտից հետո, ներգաղթի տարիներին, երբ, ինչպես նշվել է, որոշակի աշխուժացում էր նկատվում սփյուռքի հետ Հայաստանի հարաբերություններում, Մելգոնյան կտակի մասին Հայաստանի Արտաքին գործերի նախարարությունում պատրաստված հատուկ տեղեկագրում նույնպես նշվում էր, որ Կարապետ Մելգոնյանի որոշումը հակասում էր իր ավագ եղբոր կամքին եւ թելադրված էր ՀԲԸ Միության ազդեցությամբ:[46]

Մինչդեռ, դեռեւս 20-ական թթ. Կարապետ Մելգոնյանը տվել էր իր հստակ պատասխանը տարբեր տեսակի հավակնորդներին: «Գոյութիւն չունի Մելգոնեանի կտակ,- գրում էր Կ.Մելգոնեանը,- այլ գոյութիւն ունի Մելգոնեան նուիրատուութիւն մը: Եվ ան ուրիշ բան չէ, բայց եթէ նախախնամութեան անհասանելի կամքը դեռ այսօր ապրող եւ իր գիտակցութիւնն ու դատողութիւնը պահած մարդու մը կողմէ իր ամբողջ ունեցածին փոխանցումը երէկ Կ.Պոլսոյ Ազգային Պատրիարքարանին եւ այսօր այս վերջնոյս հաւանութեամբ՝ ՀԲԸ Միութեան, որպէսզի նպաստաւոր կերպով հաշուեյարդարութեան ենթարկուելէ ետք՝ գոյացած հինչուն դրամը ի պահ դրուի արտասահմանի ամէնէն ապահով պետական դրամատուներուն մէջ եւ միայն եկամուտը յատկացուի զանազան կանխորոշ ազգային նպատակներու, ոմանք արտասահմանի եւ ոմանք Հայաստանի մէջ»: Այնուհետեւ, Կ.Մելգոնյանը հայտնում է, որ նախապես ինքը որոշել էր Հայաստանի կառավարությանը հանձնել, բայց հետո փոխել էր մտադրությունը: ...«Միշտ է, որ ես ինքս նախ որոշած եմ նուէրընկալ ընել Հայաստանի կառավարութիւնը, բայց Հայաստանի մէջ պատահած դէպքերը պատճառ եղած են, որ ասկէ վեց տարի առաջ արդէն, այսինքն՝ 1920-ին եւ ոչ թէ այսօր, դիտաւորութիւնս փոխեմ եւ նուիրատուութիւնը միշտ յօգուտ հայ ժողովուրդին պահելով հանդերձ՝ նուէրընկալը ուրիշ հաստատութիւն մը ընեմ»: Վերջում հեղինակը բացականչում է. «Ազգը կրնար իմ նուէրս մերժել, բայց կարծեմ չէր կրնար ինձի պարտադրել նուիրատուութեանս այս կամ այն ձեւը»:[47]

Այս նվիրատվությունը խիստ կարեւոր եղավ ՀԲԸ Միության հետագա գործունեության համար, հատկապես կրթական բնագավառում: 1927թ. նոյեմբերին կայացած Միության հերթական Ընդհանուր ժողովին ներկայացրած իր զեկույցում Պողոս Նուպարը հատուկ անդրադարձել էր Կարապետ Մելգոնեանի «հոյակապ նուիրատուութեանը», «...որուն նմանը մինչեւ հիմայ ոչ մէկ հայրենակից կատարած էր, մարդասիրական եւ ազգասիրական բարձր զգացումներէ մղուած»:

«Նուիրատուութիւնը որքան ալ փառաւոր էր,- նշում էր Պողոս Նուպարը,- Միութիւնս, որ առեւտրական կամ ճարտարագործական ոեւէ ձեռնարկ շահագործելու համար հարկ եղած կազմակերպութիւնը չուներ

բնաւ, այն հաստատ որոշումով ընդունած էր միայն զայն որպէսզի առաջին պատեհութեան հաշուեյարդարի ենթարկէ: Անշուշտ դիւրին գործ չէր գնորդ մը գտնել ձեռնարկի մը համար որուն արժէքը 500.000 անգլ. ոսկիէն աւելի կը գնահատուէր: Հետեւաբար, մասնաւոր հաճութեամբ է որ կ'իմացնեմ ձեզ այսօր թէ, զանազան երկիրներու մէջ կատարուած բազմաթիւ փորձերէ եւ երկար ատեն ապարդիւն ջանքեր ընելէ յետոյ, վերջապէս կրցանք գործարանը ծախել Իսթըրն Ընկերութեան մօտ 564.480 անգլ. ոսկիի»:[48] ՀԲԸ Միության 1928թ. տեղեկագրում բերվում էին վաճառքի վերջնական արդյունքները, համաձայն որոնց, Մելգոնյանների գործատունը Իսթըրն Ընկերությանը վաճառվել էր 564.696 անգլ. ոսկիով, որն էլ երկու հավասար մասերով դրվել էր Լոնդոնի Միդլընդ բանկում եւ Նյու Յորքի Նէշընալ Սիթի բանկում, որպես անձեռնմխելի հիմնադրամներ:[49] Այդ գումարներից ստացվող տարեկան հասույթը, ըստ պայմանավորվածության, պետք է հատկացվեր որոշակի նպատակների, որոնցից ամենակարեւորներն էին.

«1. - Ցմահ տ. Կ.Մելգոնեանին վճարել, իբրեւ կենսաթոշակ, տարեկան 5.000 եգ. ոսկի (որուն 1.000 ոսկին իր յօժար կամքովը քանի մը տարի առաջ յատկացուց Կիլիկիոյ կաթողիկոսարանին, Անթիլիաս հաստատուելուն առթիւ):

2. - Նիկոսիոյ մէջ հիմնուած Մելգոնեան Կրթական Հաստատութեան բոլոր ծախքերը հոգալ, առաւելագոյն 500 երկսեռ որբերու եւ չքաւոր տղոց դաստիարակութիւնը ապահովելու համար:

3. - Տարեկան 1.000 եգ. ոսկի վճարել Երուսաղէմի Պատրիարքարանին, Ժառանգաւորաց վարժարանին մէջ Մելգոնեան սաներ պահելու համար:

4. - Տարեկան 1.500 եգ. ոսկի վճարել Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարանին, 500 ոսկիով Ազգ. Հիւանդանոցին մէջ Մելգոնեան եղբայրներու անունով անկողիններ պահելու համար:

5. - Տարեկան 3.000 եգ. ոսկի վճարել Երեւանի Պետական Համալսարանին, հայ լեզուի, հայ գրականութեան եւ հայոց պատմութեան ամպիոններու հաստատման, ուսումնասիրութեանց եւ հրատարակութեանց համար (ձեռնարկ որ կը մատակարարուի Մելգոնեան ֆոնտի Յանձնաժողովին միջոցաւ)»:[50]

Այս կետերից Միության համար ամենակարեւորն ու ամենապատասխանատուն, անշուշտ, Մելգոնեան կրթական հաստատությանը վերաբերող կետն էր: Նվիրատվությունը ՀԲԸ Միությանը փոխանցելու պահին Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայից շուրջ երկու կիլոմետր հեռավորությամբ արդեն կառուցվել էին երկու եռահարկ մեծ շենքեր, որպես

դպրոցներ՝ տղաների եւ աղջիկների համար: Բացի այդ, կառուցվել էին նաեւ առանձնատուն Կ.Մելգոնեանի համար, բնակարաններ դպրոցի պաշտոնյաների համար, հիվանդանոց, բաղնիք, էլեկտրակայան եւ այլ շինություններ, որոնք շրջապատված էին պուրակներով ու այգիներով: Ոչ միայն այդ տարիներին, այլեւ հետագայում հայկական եւ ոչ մի դպրոց՝ սփյուռքում թե Հայաստանում, օժտված չէր նման հարմարավետ պայմաններով: Մյուս կողմից, սակայն, ինչպես նշվում էր Միության տեղեկագրում, «սոյն մեծածախս շինութիւնները եւ այլազան ճիւղաւորումները, ընդարձակածաւալ սահմանի մը մէջ (186 666 քառ. մէթր) կը հարկադրեն անխուսափելիօրէն աչքի զարնող ծախքեր...»:[51]

1927–1928 ուսումնական տարում Մելգոնեան կրթական հաստատությունը ուներ 255 երկսեռ սաներ՝ հիմնականում որբեր, այդ թվում 101 աղջիկ, որոնք ուսանում էին նախակրթարանի ծրագրով: Հաստատության տնօրենն էր հայտնի մանկավարժ Գրիգոր Կիրակոսյանը, որը մինչ այդ տնօրենն էր Կահիրեի Գալուստեան վարժարանի, իսկ շուրջ 20 տարի անց փոխարինելու էր Վահան Մալեզյանին՝ ՀԲԸ Միության ընդհանուր տնօրենի պաշտոնում: Այս կրթական հաստատությունը նախատեսված էր հիմնականում որբ երեխաների համար, եւ այդ պատճառով ի սկզբանե գործեց որպես գիշերօթիկ դպրոց, ուր երեխաները մի քանի տարի պետք է ոչ միայն ուսանեին, այլեւ ապրեին: Նման պայմաններում դպրոցի ղեկավարությունը եւ դասախոսները պարտավորված էին զբաղվել նաեւ սաների առողջական վիճակով, նրանց բարոյահոգեբանական եւ ֆիզիկական դաստիարակությամբ: Այդ նպատակին էին ծառայում դպրոցի գոյության առաջին իսկ օրվանից գործող բազմաթիվ գեղարվեստական խմբակները, հատուկ դասընթացները, հաստատության մատուռում երեխաների կանոնավոր եւ մշտական մասնակցությունը եկեղեցական պաշտամունքներին: Մեծ կարեւորություն էր տրվում նաեւ նրանց աշխատանքային դաստիարակությանը: «Աշակերտները, վարժուելու համար անշահախնդիր գործունէութեան, հաճոյքով եւ արդիւնաւորապէս կատարած են նաեւ կարգ մը աշխատութիւններ: Մանչերը կարգով սպասարկած են սեղանատան մէջ, օգնած խոհանոցի աշխատութեանց, մաքրած են իրենց դասարաններուն եւ ննջարանին ապակիները, շաբաթներով ոչնչացուցած են անտառիկներուն մոլախոտները, պեղած են այգին, ջրած են բանջարանոցները, ամիսներով հող պեղած եւ փոխադրուած են մարգադաշտը: Աղջիկները կատարած են իրենց պատշաճող նոյն կարգի աշխատութիւններ, եւ բարձրագոյն դասարաններուն մէջ իրենք ձեւած եւ կարած են թէ՛ իրենց եւ թէ՛ փոքրիկներուն ամառնային հագուստները»:[52]

Հաջորդ տարի, երբ աշակերտների թիվը հասել էր 268-ի, որոշվեց որոշակի փոփոխությունների ենթարկել ուսումնական ծրագիրը. «1. Սաներու թիւը բարձրացնել տարուէ տարի, 25 նոր սաներ ընդունելով, նիւթական կարելիութեան սահմանին մէջ, 2. Բարեփոխել տարրական նախակրթութեան ծրագիրը, տակաւ առ տակաւ ջնջելով մանկապարտէզը եւ նախակրթարանի առաջին դասարանները, վարժարանին մակարդակը բարձրացնելով երկրորդական գործնական նախակրթութեան աստիճանին, 3. Ներմուծել յայտագրին մէջ գործնական դասընթացքներ եւ քանի մը օգտակար արհեստներ, ապահովելու համար շրջանաւարտ որբ եւ չքաւոր սաներուն ինքնաբաւութիւնը»:[53] Շատ շուտով հաստատությունում սկսեցին գործել նաեւ արհեստագիտական բաժիններ. մեքենագիտություն, կահագործություն եւ լուսանկարչություն՝ տղաների եւ ձեռագործություն՝ աղջիկների համար: Այս ամենի շնորհիվ, Մելգոնեան կրթական հաստատությունը 30-ական թթ. սկզբին «կուտայ ուսում մը որ համարժէք է ֆրանսական բարձրագոյն նախակրթարաններու եւ գրեթէ հաւասար գերմանական ռէալշուլէներու ուսման»:[54]

Ակնհայտ էր, սակայն, որ չնայած բոլոր առավելություններին, Մելգոնեան հաստատությունը իր գործունեության՝ սկզբնական փուլում, ըստ էության, քիչ էր տարբերվում այլ որբանոց-դպրոցներից կամ նախակրթական դպրոցներից: Լոկ նախակրթարանի համարժեք կրթություն ստացած նրա շրջանավարտների համար նույնպես շատ դժվար էր տնտեսապես ինքնահաստատվել Արեւելքի զարգացող երկրներում, եւ նրանք հաճախ ստիպված էին լինում սովորել նոր արհեստ՝ իրենց ապրուստը հայթայթելու համար: Մյուս կողմից, նույն երկրներում բնակություն հաստատած հայ երիտասարդությունը զուրկ էր լիարժեք երկրորդական կրթություն ստանալու հնարավորությունից, ինչը, բնականաբար, անհնարին էր դարձնում նաեւ հետագա ուսումը համալսարաններում: Անշուշտ, կային ոչ հայկական երկրորդական վարժարաններ, որոնք մի կողմից, վճարովի էին եւ այդ պատճառով էլ անմատչելի՝ իրենց մեծամասնության մեջ չքավոր հայ երեխաների համար, իսկ մյուս կողմից՝ պահանջում էին այս կամ այն օտար լեզվի տիրապետում, ինչից այդ տարիներին նույնպես զուրկ էր հայ երեխաների մեծ մասը: Նման իրավիճակի պահպանումը հղի էր անդառնալի բացասական հետեւանքներով թե այդ տարածաշրջանի եւ թե ողջ սփյուռքահայության համար: Այն անհնարին էր դարձնում մտավորականների ու մասնագետների նոր սերնդի ձեւավորումը, հետեւաբար՝ նաեւ ազգային մշակութային ավանդույթների պահպանումն ու զարգացումը, ինչը կանխորոշում էր սփյուռքահայության սոցիալ-տնտեսական ստորադաս կարգավիճակը ասպնջական հասարակություններում:

ՀԲԸ Միության ղեկավարությունը գիտակցելով հարցի հրատապությունն ու կարեւորությունը, ձեռնամուխ եղավ որոշակի գործնական քայլերի. Միության Կենտրոնական Վարչության որոշմամբ Մելգոնեան հաստատությունը վերածվեց երկրորդական վարժարանի, ուր պետք է ուսանեին հայ չքավոր ընտանիքների զավակները: «Բացի Մելգոնեանէն,- նշվում էր Միության 1936թ. տեղեկագրում,- չունինք առ այժմ արտասահմանի մէջ ուրիշ աշխարհիկ երկրորդական վարժարան մը, որ ի վիճակի ըլլայ հայ չքաւոր ուսումնատենչ սերունդին երկրորդական վարժարանի մը բազմակողմանի ուսուցումը աւանդել ձրիաբար, տարիներ շարունակ, գիշերօթիկ պահելով անոնք»:[55] Որոշվեց նաեւ 1936-1937 տարեշրջանից սկսած Մելգոնեան հաստատությունում մշտական հիմքերի վրա դնել Վարժապետանոցի եւ Արհեստանոցի գործունեությունը: «Այս կերպով, Ճեմարանէն շրջանաւարտ ելած ամէն սան ու սանուհի, բացի երկրորդական վարժարանի մը տուած ընդհանուր մտաւոր զարգացումէն, պիտի ունենայ նաեւ մասնագիտական որոշ պաշար մը, հմտութիւն մը, կեանքի պայքարին մէջ յաջողելու համար: Անոնք պիտի ըլլան կա՛մ արդիական մանկավարժական պահանջներու համաձայն ազգային նախակրթարաններու համար պատրաստուած ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ, կա՛մ առեւտրական ասպարէզի համար մարզուած պաշտօնեաներ, եւ կա՛մ գիտական ճիւղին հետեւողներ որ պիտի ստանան գիւղատնտեսական եւ այլ գործնական հմտութիւններ»:[56]

Միության այս որոշումները միշտ չէ, որ դրական ընկալվեցին հենց նրա անդամների ու կողմնակիցների մեջ: Այն դժգոհությունն էր արտահայտվում, որ նույնիսկ Միության նպաստընկալ գյուղական եւ աղքատիկ նախակրթարանների շրջանավարտները զրկվելու են այդ երկրորդական դպրոցում սովորելու հնարավորությունից, քանի որ նրանց գիտելիքները բավարար չէին ընդունելության պարտադիր քննությունները հանձնելու համար: Իրականում, Մելգոնեան հաստատության տնօրինությունը, քաջ գիտակցելով նույն այդ խնդրի նշանակությունը, ի սկզբանե նախատեսել էր նախապատրաստական երեք դասարանների գոյությունը, ինչի շնորհիվ «...ոչ միայն քաղաքի, այլ նաեւ գիւղական 4 դասարան (տարրական եւ միջին) ունեցող վարժարաններ կրնան թեկնածուներ ներկայացնել Մելգոնեան Հաստատութեան, բաւական է որ անոնք ընդունակ ըլլան եւ պատրաստուած ըլլան կարող ուսուցիչներէ»:[57]

Առավել ուշագրավ էր նորաստեղծ Վարժապետանոց ընդունվելու պայմանների հարցը: Ինչպես նշվեց, որպես այդպիսին դիտվում էր՝ ի թիվս այլոց, հավակնորդների ընտանիքների չքավոր լինելու հանգամանքը, համաձայն որի, առաջին մի քանի տարիներին նրանք պետք է ներկայացնեին հատուկ, այսպես կոչված, «չքավորության վկայական»: Այս պայմանի դեմ վճռականորեն հանդես եկավ Վարժապետանոցի առաջին տնօրեն, հայտնի բանաստեղծ Վահան Թեքեյանը, որը անթույլատրելի էր համարում նման խտրականությունը, ոչ չքավոր ընտանիքների զավակների նկատմամբ: «Չքավորություն» չափանիշի գերակայությունը, որը ժառանգություն էր մնացել որբախնամ գործունեության տարիներից, ոչ միայն չէր նպաստում, այլեւ հակառակը՝ հաճախ խոչընդոտում էր բարձրորակ կրթություն ապահովելու խնդրի իրագործմանը: Դա էր վկայում ոչ միայն Վարժապետանոցի, այլեւ երկրորդական դպրոցի առաջին տարիների փորձը, ինչը եւ անհրաժեշտ դարձրեց այդ պայմանի վերանայումը: Արդեն 1939թ. ՀԲԸ Միության տեղեկագրում հատուկ նշվում էր. «Հաստատութեան վերելքին առաջին պայմաններէն մէկը ուսանողութեան ընդունակութիւնն ու նախապատրաստութիւնն է: Այլեւս ամէն ոք պէտք է հաշտուի այն գաղափարին հետ թէ Մելգոնեան Հաստատութիւնը պատսպարան չէ եւ չքաւոր ըլլալը չբաւեր հոն ընդունուելու համար: Անընդունակ սաներն ու սանուհիները չեն կրնար բոլորել երկրորդական վարժարանի մը շրջանը: Թէ՛ իրենք ժամակորոյս կ՚ըլլան եւ թէ՛ հիմնարկութեան կը պատճառեն ի զուր վատնուած մեծ ծախքեր, որոնցմէ կրնան օգտուիլ ազգին ուրիշ աղքատ բայց ընդունակ եւ մտացի զաւակները»:[58] Չնայած դրան, Միության մասնաճյուղերը եւ տեղական ազգային իշխանությունները, երեխաների մեջ ընտրություն կատարելիս, այնուամենայնիվ, որոշ ժամանակ շարունակեցին առաջնորդվել հին չափանիշներով: ՀԲԸ Միության հերթական Ընդհանուր ժողովը ստիպված էր վերստին շեշտել, որ Մելգոնեան հաստատությունը «...պատսպարան չէ, ոչ ալ որբանոց մը, ուր ամէն գինով անոնք սաներ պէտք է տեղաւորել, ինչպէս ի սկզբանէ եղած է, որբութեան շրջանին, երբ ազգին որբերուն առջեւ լայն բացուեցան ՀԲԸ Միութեան բազմաթիւ հիմնարկութիւնները»:[59]

Արդեն այս առաջին որոշումները վկայություններն էին Միության հետեւողական եւ վճռական քայլերի՝ Մելգոնեան հաստատությունը կրթական ամենաբարձր չափանիշներին համապատասխանեցնելու համար: Դա հավասարապես վերաբերում էր թե հայագիտական եւ թե հանրակրթական առարկաների դասավանդմանը, մի բան, որը, ինչպես վկայում է սփյուռքահայ դպրոցների պատմությունը, միշտ չէ, որ պսակվել է հաջողությամբ:

Մելգոնեան հաստատության Վարժապետանոցում, որը սկսեց գործել 1934թ., դասընթացների տեւողությունը երկու տարի էր, իսկ ուսումնական ծրագիրը, համապատասխանելով երկրորդական վարժարանի աստիճանին, միեւնույն ժամանակ նախատեսում էր հայագիտական եւ

մանկավարժական առարկաների խորացված ուսուցում: Այս Վարժապետանոցը գործեց շուրջ 35 տարի եւ նրա շրջանավարտները շատ կարեւոր դեր խաղացին ՀԲԸ Միության եւ այլ դպրոցների եւ թե ազգային որոշ կառույցների կայացման գործում: Սակայն 1968թ. հայտարարվեց Վարժապետանոցի փակման մասին: Նրա առաջին շրջանավարտներից հայտնի մանկավարժ Հարություն Էսեկյուլյանը տարիներ անց, անդրադառնալով այդ հարցին, գրում էր. «Մեր զարմանքը մեծ կ'ըլլայ, երբ 1968-1969 տարեշրջանին, օր մըն ալ կ'իմանանք որ Վարժապետանոցի բաժինը վերջ գտեր է Մելգոնեանի մէջ: Տրուած բացատրութիւնները, - թէ բաւարար աշակերտութիւն չկար, եւ թէ Հաստատութիւնը դժուարութեան մէջ էր - մեզ չէին գոհացներ...: Վարժապետանոցը տոկացեր եւ իր գոյութիւնը պահպաներ էր նոյնիսկ Բ. Համաշխարհային Պատերազմի ընթացքին, ի գին արտակարգ զոհողութիւններու: Գուցէ կարելի էր գերագոյն ճիգով մը վերոյիշեալ դժուարութիւնները բառնալ, երբ մանաւանդ այս շրջանին հայ ուսուցիչի սով կար գաղթաշխարհի մէջ, ամենուրէք: Աւելին, ուսուցչութիւնը յարաբերաբար գնահատուած եւ լաւ վարձատրուող ասպարէզ մը դարձեր էր: Կար նաեւ ակնբախ հակասութիւն մը. Գիտական եւ Առեւտրական Բաժինները, ազգանուէր առաքելութիւն մը չունենալով հանդերձ, կը շարունակէին իրենց ընթացքը, մինչդեռ այդ ճիւղերուն կարելի էր հետեւիլ ուրիշ հայ երկրորդական վարժարաններու եւ բազմաթիւ օտար հաստատութիւններու մէջ ալ: Վարժապետանոցը մէկ հատիկ էր արտասահմանի մէջ եւ ՀԲԸ Միութեան պատիւ բերող, վարկը բարձրացնող կրթական բացառիկ ձեռնարկ մը կը ներկայացնէր»:[60]

Մելգոնեան կրթական հաստատությունում սաների համատեղ ապրելը, հայագիտական առարկաների (հայոց լեզու, ներառյալ գրաբար, հայոց պատմություն, հայ գրականություն ու մատենագիտություն) խոր ուսուցումը, որակյալ ուսուցիչները (որոնց թվում էին հայտնի գրողներ, մտավորականներ Վահան Թեքեյանը, Վահե Վահյանը, Հակոբ Օշականը եւ այլք), գեղարվեստական (երգչախմբային, թատերական, պարային) եւ մարզական խմբերի մշտական գոյությունը, ուսանողական պարբերականների («Այգ», «Ցոլք») հրատարակումը, հայ եկեղեցու եւ մշակույթի անվանի գործիչների հաճախակի այցելությունները, այս ամենը ստեղծում էր իր տեսակի մեջ եզակի եւ ուրույն ազգային մթնոլորտ, որում էլ տեղի էր ունենում յուրաքանչյուր սանի՝ որպես հայ մարդու, ձեւավորումը:

Դրա հետ մեկտեղ, մշտական շփումները տեղի օտարազգի իրենց հասակակիցների եւ դասախոսների հետ, օտար լեզուներով հանրակրթական առարկաների դասավանդումը, կրթական ամենաարդիական ծրագրերի կիրառումը, Լոնդոնի համալսարանի, Լոնդոնի Առեւտրական գրասենյակի (London Chamber of Commerce) եւ նման այլ հաստատությունների քննություններին մասնակցությունը բացառում էին սաների պարփակումը զուտ ազգային շրջանակներում, հնարավոր էին դարձնում նրանց արագ ինքնահաստատումը տարբեր ոլորտներում: Այս ամենի շնորհիվ, Մելգոնեան հաստատությունը առաջին իսկ օրից դարձավ սփյուռքահայ մտավորականության յուրահատուկ մի դարբնոց: Կիպրոսից, Հունաստանից, Լիբանանից ու Սիրիայից, Պաղեստինից, Հորդանանից, Ֆրանսիայից եւ այլ երկրներից եկած նրա սաները հետագայում կազմեցին սփյուռքահայության մտավոր եւ գործարար վերնախավի կարեւոր մեկ մասը:

Մելգոնեան հաստատության պատմության մեջ առանձնահատուկ կարեւորություն ունեցավ 1986թ. մայիսին, մեկշաբաթյա հանդիսություններով նրա գործունեության 60-րդ տարին նշելը: Այդ առիթով իրենց շնորհավորական ուղերձներն էին հղել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա., Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Գարեգին Բ., Կիպրոսի Հանրապետության նախագահ Սփիրոս Կիպրիանուն եւ այլք: Վազգեն Ա. կաթողիկոսը, արժեւորելով հաստատության գործունեությունը, մասնավորապես, գրում էր. «Մեր օրերին անհուն մխիթարութեամբ տեսնում ենք, թէ մելգոնեանցիները հայ կեանքում ներկայ են ազգանուէր առաքելութեան գրեթէ բոլոր ճամբաների վրայ, թէ՛ Հայաստանում, թէ՛ սփիւռքում, իբրեւ գրողներ եւ հրապարակագիրներ, իբրեւ հասարակական գործիչներ եւ գիտութեանց ծառայողներ, բոլորը որպէս եռանդապաշտ ժիր մատուակներ»:[61] Նրանցից էին Հայաստան ներգաղթած նկարիչ Հակոբ Հակոբյանը, գրող - թարգմանիչ Կարպիս Սուրենյանը, գրող-հրապարակագիրներ Գրիգոր Քեշիշյանը եւ Շաքե Վարսյանը, երաժշտագետ Նիկողայոս Թահմիզյանը եւ այլք: Բայց, իհարկե, մելգոնյանցիների հիմնական զանգվածը գործեց սփյուռքում. խմբագիրներ Գերսամ Ահարոնյանը («Զարթօնք»), Ազատ Յափուճյանը («Եփրատ»), Անդրանիկ Փոլադյանը («Յուշարար-Միութիւն»), Արա Գալայճյանը («The Armenian Mirror - Spactator»), հայկական դպրոցների ուսուցիչներ եւ տնօրեններ՝ Հարություն Էսեկյուլյանը, Օնանիկ Սարգիսյանը, Ագապի Նասիպյանը, Սոսի Պետիկյանը, Զարեհ Մելքոնյանը, Վարդգես Գուրուլյանը եւ այլք, զանազան ճյուղերի մասնագետներ Հայկաշեն Ուզունյանը, Թորոս Թորանյանը, Վարուժան Տյովլետյանը, Նուրել Պեյլերյանը, Կարո Արմուտյանը, Դանիել Ապտուլյանը եւ ուրիշ շատ - շատերը:

1986թ. հանդիսության մասնակիցների համար, սակայն, հատկապես կարեւոր էր Միության նախագահ Ալեք Մանուկյանի շնորհավորական ուղերձը, որը պետք է պարզեր Մելգոնեան հաստատության ապագան:

Բանն այն է, որ սկսած 1974թ., երբ Կիպրոս ներխուժած թուրքական զորքերը զավթեցին երկրի տարածքի մոտ 40%-ը եւ հայտարարեցին, այսպես կոչված, Հյուսիսային Կիպրոսի թուրքական պետության ստեղծման մասին, երկրում ստեղծվել էր անապահով եւ լարված վիճակ: Նման պայմաններում, բնականաբար, հարցականի տակ էր դրվում Մելգոնեան հաստատության հետագա գոյության նպատակահարմարությունն իսկ: ՀԲԸ Միության ղեկավարությունը, գիտակցելով հաստատության կենսական կարեւորությունը սփյուռքահայության եւ հատկապես Արեւելքի երկրների հայ երիտասարդության համար, որոշում կայացրեց հաստատության գործունեությունը շարունակելու մասին:

ՀԲԸ Միության 72-րդ Ընդհանուր ժողովում (1985թ.) նախագահ Ա.Մանուկյանը, հատուկ անդրադառնալով այդ հարցին, նշում էր. «Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը... իր աշխարհագրական դիրքով, գիշերօթիկ հանգամանքով, իւրահատուկ մթնոլորտով եւ ուսումնական մակարդակով բացառիկ կրթարան մըն է... Արտասովոր պատասխանատուութեամբ օժտուած այս Հաստատութենէն ժամանակը եկած է, որ օգտուին Ամերիկաներու եւ Եվրոպայի մեր գաղութները եւս, ինչպէս որ ըրին Միջին Արեւելքի հայ գաղութները անցնող տասնամեակներուն ...Այս առաջադրութեամբ՝ հաստատութիւնը նոր դպրոցաշէնքով եւ յարակից արդիական յարմարութիւններով օժտելու ծրագիրը, որուն իրականացումը կախեալ էր Մելգոնեան ընդարձակ եւ արժէքաւոր կալուածին զարգացման կարելիութիւններէն, մտած է գործնական փուլի մէջ...».[62] Ակնհայտ էր, սակայն, որ Հաստատության շենքային պայմանները արդեն ոչ միայն չէին համապատասխանում օրվա պահանջներին, այլեւ անհնարին էին դարձնում նրա արդյունավետ գործունեությունը ընդհանրապես: Եվ, ահա1986թ. նախագահ Ալեք Մանուկյանը հայտարարեց հաստատության զարգացման նոր ծրագրերի մասին. «Մելգոնեանի 60 - ամեակի տօնակատարութիւնը անցեալի վաստակի ոգեկոչում մը չէ միայն, այլ նախապատրաստութիւն մը՝ ապագայ մեծ իրագործումներու, դաստիարակութեան եւ ազգային առաքելութեան ճամբուն վրայ: Հաստատութեան համար ծրագրուող շինարարական նոր ծրագիրները պիտի գան մեր սերունդները իբրեւ արժանաւոր մարդ արարածներ, գիտակից ազգայիններ եւ Միութեան նուիրեալներ առաջնորդելու 21 դարու լուսաւոր սեմէն ներս»:[63]

1987թ. Կիպրոսի Հանրապետության նախագահի մասնակցությամբ կատարվեց Մելգոնեան կրթական հաստատության նոր համալիրի հիմնարկեքը: Հաստատությունը այժմ զբաղեցնում է մոտ 125.000 քառ. մետր տարածություն, որի վրա տեղակայված է տարբեր շինությունների մի ամբողջ համալիր՝ արդեն հիշատակված երկու եռահարկ ուսումնական շենքերը, որոնք ապահովված են ամենաարդիական սարքավորումներով ու միջոցներով, երկու նորակառույց հանրակացարան աղջիկների ու տղաների համար՝ իրենց բոլոր հարմարություններով, մարզահամալիր, տարբեր մարզադաշտեր, պաշտոնյաների բնակելի շենք եւ այլն: Մելգոնեան հաստատության հաջողությունը մեծապես պայմանավորված է նաեւ սովորելու եւ ապրելու համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայությամբ, եւ այդ առումով, այն նմանվում է ԱՄՆ-ի համալսարանական ավաններին (campus):

Այսպիսով, 1986թ. սկսվեց Մելգոնեան հաստատության պատմության մի նոր փուլ, որի արդյունքում այն դարձավ առաջատար կրթական հաստատությունը ողջ սփյուռքում: Այսօր Մելգոնեան կրթական հաստատությունը միակ գիշերօթիկ, երկրորդական, ամենօրյա դպրոցն է սփյուռքում: Այն նաեւ միակ միջազգային դպրոցն է, քանզի այստեղ ուսանում են 20-ից ավելի երկրներից եկած շուրջ 320 հայ երեխաներ: Սկսած 1990-ական թթ. կեսերից առաջին անգամ այստեղ ուսանում են նաեւ հայ երեխաներ Հայաստանից ու Ղարաբաղից, Ռուսաստանից եւ նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններից: Այս հանգամանքը նույնպես առանձնահատուկ է միայն Մելգոնեան հաստատությանը: Հաստատության հեղինակությունը պայմանավորված է կրթական բարձր մակարդակով, որը ապահովվում է արդիական ուսումնական ծրագրերի (հիմնականում հումանիտար, գիտական եւ առեւտրական ճյուղերով) եւ փորձառու ուսուցիչների շնորհիվ: Այդ ծրագրերով նախատեսվում է նաեւ սաների նախապատրաստումն ու մասնակցությունը միջազգային քննություններին (GCE Advanced Level subjects, TOEFL, SAT I, SAT II եւ այլն), ինչը հնարավոր է դարձնում նրանց հետագա ուսումը տարբեր երկրների առաջատար համալսարաններում: Նույն այդ նպատակով, բացի հիմնական երկու լեզուներից՝ հայերենից ու անգլերենից, դասավանդվում են նաեւ հունարեն, ֆրանսերեն, արաբերեն, ռուսերեն եւ բուլղարերեն լեզուները:[64]

Դ.Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան վարժարանները

Միության համար Մելգոնեան հաստատությունում Վարժապետանոցի հիմնումը, ինչպես նշվեց, կարեւոր նախապայմաններից էր սեփական վարժարանների ցանցի ստեղծման համար: Կար, սակայն, մեկ նախա-

պայման եւս՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթումը, ինչը՝ չնայած բոլոր ջանքերին, այդպես էլ չէր գտնում իր լուծումը: Թեեւ 1930-ական թթ. որբանոցները դադարեցրին իրենց գոյությունը, Միությունը շարունակում էր իր տարաբնույթ օգնությունը Արեւելքի երկրներում ապաստանած բազմահազար գաղթականներին, դրա հետ մեկտեղ ընդլայնելով իր գործունեությունը Խորհրդային Հայաստանում: Տարիներ շարունակ այս բոլոր ծրագրերի իրականացումը, բնականաբար, պահանջում էր դրամական մեծ միջոցներ: Այդ միջոցները հայթայթվում էին հիմնականում շնորհիվ Արեւմուտքի երկրներում, նախ եւ առաջ, ԱՄՆ-ում բնակվող Միության անդամների եւ բարեկամների նվիրատվությունների: Սակայն նրանց հնարավորությունները անսպառ չէին, հատկապես հաշվի առնելով նույն այդ տարիների համաշխարհային տնտեսական Մեծ ճգնաժամի ծանր հետեւանքները: Հարկ է նշել մեկ հանգամանք եւս: Սոցիալ-տնտեսական հաստատման այդ դժվարին տարիներին սփյուռքահայերը, գիտակցելով ազգային կրթության կարեւորությունը, այնուամենայնիվ, հասկանալի պատճառներով պարտադրված էին առաջնությունը տալ իրենց ֆիզիկական գոյության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը: Նման իրավիճակում Միության ղեկավարությունը պարտադրաբար ստիպված էր տարեցտարի հետաձգել իր իսկ որդեգրած կրթական ծրագրի իրագործումը, հատկապես սեփական դպրոցների հիմնումը:

Բայց ահա, 1939թ. այս հարցը անսպասելիորեն ստացավ իր դրական լուծումը, որը, սակայն, երկակի զգացումներ առաջացրեց ՀԲԸ Միության շարքերում, քանզի այն ուղղակիորեն կապված էր Հայաստանում ՀԲԸ Միության գործունեությունը արգելելու մասին Խորհրդային իշխանությունների՝ 1937թ. որոշման հետ: Այդ հարցը մանրամասն քննարկվեց գրքի 6-րդ գլխում, եւ այստեղ հիշեցնեմ միայն հետեւյալը: Երբ ՀԲԸ Միության ղեկավարության մի շարք դիմումները Հայաստանի իշխանություններին՝ վերոհիշյալ որոշման պատճառների պարզաբանման եւ Միության՝ Հայաստանում գործունեությունը վերսկսելու վերաբերյալ, մնացին անպատասխան, Միության Կենտրոնական Վարչական Ժողովը ստիպված եղավ Հայաստանի համար նախատեսված գումարները ծառայեցնել իր սփյուռքյան ծրագրերին: Համաձայն համապատասխան որոշման 7-րդ կետի, Երեւանի Դարուհի Ցակոբեան մայրանոցի համար տարեկան տրամադրելի 800 անգլ. ոսկի գումարով Բեյրութում պետք է հիմնվեր աղջիկների հատուկ դպրոց՝ Դարուհի Ցակոբեան Կրթարան անունով:

Բեյրութի Դարուհի Ցակոբեան վարժարանի բացումը տեղի ունեցավ 1939թ. հոկտեմբերին: Միության այդ նոր հաստատության նպատակն էր

«...կարօտ այլ աղջիկներուն ձրիաբար տալ բարձրագոյն նախակրթութիւն, վաղուան համար անոնցմէ պատրաստելու համար գիտակից մտաւորականներ եւ մայրեր»:[65] Վարժարանը սկսեց գործել որպես բարձրագույն նախակրթարան եւ առաջին տարում ուներ 50 աշակերտուհի: Առավել ընդունակ շրջանավարտները պետք է շարունակեին ուսուցումը Մելգոնեան հաստատությունում, իսկ համալսարան ընդունվողները կարող էին օգտվել Պողոս Նուպարի ուսանողական հիմնադրամից: 1943թ. Դարուհի Ցակոբեան վարժարանը տվեց իր առաջին շրջանավարտները, որոնցից ոմանք իբրեւ Կիլպէնկեան սաներ, շարունակեցին ուսումը, ոմանք ամուսնացան, իսկ ուրիշներն էլ աշխատեցին Միության նպաստընկալ վարժարաններում՝ որպես ուսուցչուհի: Իր գործունեության առաջին մի քանի տարիներից հետո վարժարանը դարձավ հեղինակավոր կրթական հաստատություններից մեկը եւ այդտեղ սովորող ցանկացողների թիվը միշտ էլ գերազանցում էր եղած հնարավորությունները: Այս հանգամանքը թույլ էր տալիս վարժարանի ղեկավարությանը նախնական մրցույթի արդյունքներով ընդունել առավել ընդունակ եւ պատրաստված աղջիկների: Դրա հետ մեկտեղ, վարժարանի տնօրինությունը ոչ պակաս խստապահանջ էր նաեւ ուսուցիչների հարցում եւ աշխատանքի էր հրավիրում բարձրակարգ մասնագետների: Այսպես, 1947-1948 ուսումնական տարում վարժարանի ուսուցիչներից էին Բյուզանդ Եղիայանը, Սարգիս Ապտալյանը (Վահե Վահյան), Սիմոն Սիմոնյանը, երաժշտագետ Համբարձում Պերպերյանը եւ այլք: 1952թ. վարժարանը՝ իր վեց դասարաններով (ներառյալ նախապատրաստականը), որտեղ ուսանում էր 101 աշակերտուհի վերածվեց լրիվ երկրորդական վարժարանի: Հետաքրքիր զուգադիպությամբ նույն տարին շրջանավարտների ընդհանուր թիվը նույնպես կազմել էր 101, որոնք էլ հիմնեցին Դարուհի Ցակոբեան Շրջանաւարտից Միութիւնը: Սկսած 1952թ., վարժարանում սկսեց գործել նաեւ ՀԲԸ Միության Դարուհի Ցակոբեան մասնաճյուղը, որը հատկապես աչքի էր ընկնում իր բազմապիսի մշակութային եւ գեղարվեստական միջոցառումներով: Այդ մասնաճյուղի գործունեության կարեւոր արդյունքներից էր 1955 թվականից «Հորիզոն» աշակերտական հանդեսի հրատարակումը՝ չորս լեզվով: Վարժարանի կրթական բարձր մակարդակի մասին էր վկայում հետեւյալ փաստը. «...Պէյրութի Ամերիկեան համալսարանի Տնօրէնութիւնը, գնահատելով Դարուհի Ցակոբեանի ուսման մէջ ունեցած փայլուն յաջողութիւնները, համաձայն գտնուած է որ անոնց շրջանավարտներուն հարիւրին 40ը համալսարան ընդունուին, առանց մուտքի քննութիւններ պահանջելու անոնցմէ»:[66] Բացի այդ, վարժարանի ավարտական դասարանի աշակերտուհիները տարեցտարի հա-

ջողությամբ մասնակցում էին Օքսվըրդի եւ Քեմբրիջի համալսարանների Ջենըրլ Սերթիֆիքեյթի քննություններին, իսկ 1960թ. «...սկսուած է արաբական պաքալորէայի դրութիւնը կիրարկուիլ վարժարանէն ներս»:[67]

Նույն 1960թ. վարժարանը վերջապես ունեցավ նորակառույց շենք Բեյրութի Հազմիե արվարձանում, ինչի կարիքը զգացվում էր վաղուց ի վեր: «Անոր կալուածին տարածութիւնն է 5.250 քառ. մեդր, իսկ դպրոցին ընդարձակ, գրաւիչ եոյարկանի շէնքը գոհացում կու տայ արդի մանկավարժութեան բոլոր պահանջներուն, իր բաժանումներով, սարքաւորումով եւ ճաշակաւոր կահաւորումով: Ունի լուսաւոր, օդասուն դասարաններ, 350 սաներուհիներու համար հանգստաւէտ ճաշարան մը, խոհանոց, գիտական աշխատանոցներ, պասքէթպոլի, վոլիպոլի եւ աթլեթիք մրցումներու յատուկ խաղավայրեր, եւն ...»:[68] Նմանօրինակ պայմանները հնարավոր դարձրին ինչպես դասավանդման որակական բարելավումը, այնպես էլ դպրոցի սաների քանակի աճը. 1964թ. Դարուհի Յակոբեան դպրոցում ուսանում էր 216, իսկ հաջորդ տարի՝ 237 աղջիկ:

Դարուհի Յակոբեան վարժարանը բացվեց այն օրերին, երբ Եվրոպայում արդեն սկիզբ էր առել Երկրորդ Աշխարհամարտը: Թեեւ հետագա շուրջ վեց տարիների ընթացքում Մերձավոր Արեւելքում ռազմական գործողություններ չընթացան, այնուամենայնիվ, պատերազմը անխուսափելիորեն իր կնիքն էր դրել նաեւ այստեղ ապրող մարդկանց կյանքի վրա: Պատերազմի ավարտը եւ դաշնակից պետությունների հաղթանակը, ինչպես արդեն նշվել է այլ առիթով, մեծ ոգեւորությամբ ընդունվեց նաեւ սփյուռքահայության կողմից: Խորհրդային Միության տարածքային պահանջները Թուրքիային, Հայաստան ներգաղթի կազմակերպումը, կարծես, նոր հեռանկարներ էին բացում ազգային իղձերի իրականացման համար: Դրա հետ մեկտեղ, պատերազմական տարիներից հետո որոշակի աշխուժացում էր նկատվում նաեւ սփյուռքի տարբեր համայնքների կյանքում: Սոցիալ-տնտեսական ինքնահաստատման շուրջ 30 ծանր եւ դաժան տարիներից հետո սփյուռքը՝ կազմակերպություններն ու անհատ մարդիկ, արդեն պատրաստ էին գործելու ոչ թե հանուն իրենց զուտ ֆիզիկական գոյության պահպանման, այլ հանուն իրենց ազգային դիմագծի՝ սփյուռքահայ մշակույթի կերտման: Այդ գործունեության կարեւոր ասպարեզներից էր, անշուշտ, նաեւ դպրոցաշինությունը, ինչը եւ եղավ սփյուռքի հետպատերազմյան պատմության ամենանշանակալի երեւույթներից մեկը: Դրա վառ վկայությունն է նաեւ ՀԲԸ Միության գործունեությունը:

Արդեն 1947թ. Բեյրութում սկսեց գործել Միության եւս մեկ կրթական հաստատություն՝ Մանչերու Բարձրագոյն վարժարան, որի առաջին

սաներն էին 45 տղաներ: Այդ դպրոցը սփյուռքի ամենահեղինակավոր դպրոցներից մեկն է, հայտնի՝ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարան անունով: Ուշագրավ է, որ այդ անունը, ի տարբերություն Միության մի շարք դպրոցների, կապված չէ Միության նախագահ Ալեք Մանուկյանի հետ: Ինչպես կարդում ենք Միության 1952թ. տեղեկագրում, Միության Բարերար անդամուհի տիկ. Մեհրյուպե Մանուկյանը, ծնյալ Հովակիմյան, «...բարեսիրական նպատակի մը յատկացուելու համար կտակով գումար մը թողած էր եւ անոր գործածութեան կերպը վստահած էր իր քրոջ՝ տիկ. Զարուհի Ն.Էսմէրեանի: Մեր կազմակերպութեան Պատուոյ Անդամուհի տիկ.Էսմէրեան յոյժ ազնուօրէն այդ գումարը ՀԲԸ Միութեան տրամադրեց եւ անով կառուցուեցաւ Պէյրութի մէջ Յովակիմեան-Մանուկեան Երկր. Վարժարանին հոյակապ շէնքը, որ իր նպատակին համար սկսաւ գործածուիլ 1952ին»:[69]

1953թ. Յովակիմեան-Մանուկեան դպրոցը վերածվեց լրիվ երկրորդական վարժարանի, եւ այստեղ նույնպես սովորել ցանկացողների քանակը գերազանցում էր առկա հնարավորությունները: Արդեն 1952թ. դպրոցի սաները սկսեցին հրատարակել «Նուիրում» հանդեսը: 1954-1955 տարեշրջանում դպրոցի ուսումնական ծրագիրը ենթարկվեց որոշակի փոփոխությունների, եւ սկսեց գործադրվել Լիբանանի պետական բակալորիայի ծրագիրը, իսկ շրջանավարտները իրավունք ստացան առանց ընդունելության քննությունների շարունակել ուսումը Բեյրութի Ամերիկյան համալսարանում: 1960թ. Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկության տրամադրած միջոցներով վարժարանում կառուցվեց համանուն նոր ընդարձակ հանդիսասրահ: Սկսած 1960-ական թթ., դպրոցի սաների թիվը մշտապես 200-ից ավելի էր, ինչի շնորհիվ հնարավոր դարձավ էլ ավելի աշխուժացնել ազգային-մշակութային կյանքը: Դրա օրինակներից էր վարժարանում Հայ Երիտասարդաց Ընկերակցության մասնաճյուղի հիմնումը՝ 1966թ.:

Լիլա Գարակյոզյանի հաշվետվությունը

Այսպիսով՝ 1940-ական թթ. վերջին ՀԲԸ Միությունը սփյուռքում ուներ երեք սեփական վարժարաններ՝ Մելգոնեան կրթական հաստատությունը Կիպրոսում, Դարուհի Յակոբեան աղջիկների եւ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանները Բեյրութում եւ բացի այդ, նա հովանավորում եւ աջակցում էր հիմնականում Մերձավոր Արեւելքի տարբեր երկրներում գործող մի քանի տասնյակ հայկական վարժարաններին:

Միության ղեկավարության համար, սակայն, ակնհայտ էր թե գործող դպրոցների քանակի, թե նրանց շենքային պայմանների եւ թե ուսման մակարդակի անբավարար լինելը: Հարցը պահանջում էր արագ եւ արմատական լուծում, հակառակ դեպքում այդչափ մեծ զոհողությունների գնով մահից փրկված տասնյակ հազարավոր հայ երեխաները դատապարտված էին մեծանալ՝ զրկված ազգային կրթությունից ու դաստիարակությունից, ինչի անդառնալի եւ բացասական հետեւանքները ազգի գոյատեւման առումով ակնհայտ էին: Գիտակցելով հարցի հրատապությունն ու կարեւորությունը՝ Նյու Յորքում տեղակայված Միության ղեկավարությունը որոշում է Մերձավոր Արեւելք գործուղել հատուկ պատվիրակություն՝ տիրող կացության մասին իրական պատկերացում կազմելու նպատակով: Պատվիրակության առաքելության կարեւորության մասին էր վկայում նրա կազմը. այն գլխավորեց Միության Կենտրոնական Վարչական Ժողովի անդամ, ականավոր գործիչ եւ մեծ բարերար Միհրան Գարակյոզյանի (նա իր մահկանացուն կնքեց 1948թ.) դուստր Լիլա Գարակյոզյանը, իսկ անդամներն էին Կենտրոնական Վարչական Ժողովի անդամներ Մաքրուհի Հովսեփյանը եւ Միության Ընդհանուր տնօրեն Գրիգոր Կիրակոսյանը: Պատվիրակությունը 1950թ. ավելի քան երկու ամիս եղավ Լիբանանում, Սիրիայում եւ Հունաստանում, ուր այցելեց գրեթե բոլոր հայաշատ վայրերը: Երկարամյա ընդմիջումից հետո ՀԲԸ Միութեան բարձրաստիճան պաշտոնյաները առաջին անգամ է, որ այցելում էին այս տարածաշրջանը եւ հնարավորություն էին ստանում ոչ միայն գնահատել իրենց գործունեության արդյունքները, այլեւ տեսնել եւ հասկանալ տեղի հայության կարիքներն ու սպասումները: Վերադառնալով Նյու Յորք՝ Լիլա Գարակյոզյանը ներկայացրեց մի հաշվետվություն, որի հրապարակումը հայերենով ու անգլերենով, թե առանձին գրքույկի ձեւով եւ թե «Միութիւն» եւ «Hoosharar» ամսագրերում մեծ դեր խաղաց Արեւելքի երկրներում ՀԲԸ Միության ազգապահպան գործունեության աշխուժացման գործում:

Այս հաշվետվությունը, ամեն բանից զատ, անաչառ կազմված մի փաստաթուղթ է, որը ներկայացնում է ոչ միայն ՀԲԸ Միության հաստատությունների գործունեությունը, այլեւ ընդհանրապես Լիբանանում եւ Սիրիայում ազգային կյանքի ու կրթության հետ կապված մի շարք կարեւոր հարցեր: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ համարեցի այսչափ ծավալուն մեջբերումներ անել նշված հաշվետվությունից:

«Սուրիա եւ Լիբանան երկու մեծ կեդրոններ են, առաջինը 100.000 եւ երկրորդը 75.000 հայ բնակչութեամբ: Բէյրութի մէջ, սքանչացայ եւ հրճուեցայ փողոցներուն մէջ այնքան շատ հայերէն խօսակցութիւն լսելով, բազմաթիւ հայերէն անուններ կարդալով խանութներուն վրայ, լաւագոյն խանութները յաճախ, Պէյրութի Ամերիկեան Համալսարանին հայ բրօֆէսէօրներուն տպաւորիչ եւ պատուաբեր անուանացանկը տեսնելով եւ նոյն Համալսարանին ուսանողներուն մէջ հանդիպելով այնքան շատ հայ անուններու, շատերը Պատուոյ տախտակներու վրայ: Նոյն այս դիտողութիւնները ճիշդ են Սուրիոյ համար ալ: Հայ գաղթականները, թէ՛ Սուրիոյ եւ թէ՛ Լիբանանի մէջ, այդ երկիրներուն բարգաւաճման ազդակ եղած են՝ ազատ ասպարէզներու մէջ, իրենց առեւտուրով, իրենց մշակոյթով եւ իրենց արուեստներով ու արհեստներով: Կարեւոր եւ յարգուած փոքրամասնութիւններ են անոնք, Խորհրդարաններու մէջ իրենց սեփական երեսփոխաններով: ...Մինչ հազարաւոր հայեր, Մերձաւոր Արեւելքի մէջ, իրենց աշխատութեամբ տարագիրներու քէմբերէն դուրս գալով կրցած են իրենց համար տուն եւ լաւ դիրք շինել, աւելի շատ հազարաւորներ դեռ կ'ապրին դրութեան մը մէջ որ ինծի զարհուրելի թուեցաւ»:

«...Սոսկումով ու ամօթով կը յիշեմ,- գրում էր Լ. Գարակյոզյանը,- Պէյրութի Մասլաք Քէմբը՝ ուր մէկ քանի հազար հայեր կ'ապրին, ու կը շնչեն մօտակայ աղբանոցէն, կաշիի գործարանէն, եւ սպանդանոցէն եկած նեխած օդը: Մղձաւանջի պէս բան մը էր տեսնել մեր հայ մանկիկները որ աղբիւսը եւ աղտեղութիւնը կը փորփրէին խոզերուն հետ: Քրչահաւաքներն ալ զբաղած էին, ժողովելով լաթի կտորներ, մետաղի մնացորդներ, ապակի, փետուր եւ ոսկոր, ծախելու համար: Այսպէս կ'ապրին մեր ժողովուրդէն ոմանք, եւ ասիկա ամօթ եւ նախատինք է մեզի համար: ...Կը յիշեմ նաեւ հաւասարապէս վատթար վիճակը Թիրոյի Քէմբին, Պէյրութի մէջ, որ արտաքնոց չունի, եւ Սանճաքի Քէմբը՝ որ կը գտնուի ուրիշ սպանդանոցի մը մօտ ...Ինծի ըսուեցաւ թէ բարեբախտ էի որ Քէմբը կ'այցելէի ամառը եւ ոչ անձրեւի շրջանին, երբ գետինը կը դառնայ ցեխի ծով մը, երբ հասարակաց կոյուղիները ջուրով լեցուելով դուրս կը վազեն, երբ տուներու հողէ գետիններն ալ պարզապէս ցեխի կը վերածուին:

Տխրութեամբ կը վերյիշեմ Հալեպի Տաւուտիէի խեղճ գաղթականը եւ Զէյթուն Խանի Քէմբը ուր շատ մը հայ ընտանիքներ կ'ապրին դեռ չլուացած շէնքի մը չորս պատերուն մէջ որ ոմբակոծուած ըլլալու տպաւորութիւնը կը թողու վրադ: Այս բոլոր հիւղակներուն եւ տուներուն մէջ ամբողջ ընտանիք մը կ'ապրի մէկ սենեակի մէջ. ստէպ եօթը կամ ութը հոգի ամէն տարիքէ եւ երկու սեռէ՝ կ'ապրին այսպէս խոնուած իրենց ծնունդէն մինչեւ մահը»:[70]

Այս բոլորից հետո առավել տպավորիչ է Լ. Գարակյոզյանի հետեւյալ միտքը. «Բայց ապրուստի այս վատ դրութենէն աւելի ամօթալի է այն

կատաղի եւ ծայրայեղ քաղաքական ատելութիւնը որ գոյութիւն ունի Մերձաւոր Արեւելքի հայութեան մէջ, ու այն կուսակցական պայքարը որ Հայուն բարի անունը կ'աղարտէ գարշելի սուտով ու խաբեպատիր բրոբականտով»:[71]

Անցնելով ՀԲԸ Միության Բեյրութի երկու դպրոցներին՝ Լ.Գարակյոզյանը անթաքույց հպարտությամբ գրում է. «Ասոնք պատուաբեր կերպով կրնան բաղդատուիլ այս երկրին բարձրագոյն վարժարաններուն հետ: Երկուքն ալ կը գտնուին վարձուած վիլլաներու մէջ, Պէյրութի կեդրոնը: Մանչերու վարժարանը ունի պզտիկ պարտէզ մը, թէնիսի եւ պասքէթպոլի խաղավայրեր: Այցելեցի երկու դպրոցներուն ալ օդասուն եւ պայծառ դասարանները, տեսայ աղջիկները, 109 հոգի, վայելուչ համազգեստներով եւ ճերմակ կօշիկներով: Տեսայ 99 պատանի ուսանողներ: Այս տղոց եւ աղջիկներուն ութսուն առ հարիւրը աղքատ թաղերէ են եւ դպրոց կը բերուին պըսերով: Դարուին Ցակոբեան վարժարանը հինգ դասարան ունի Աղջկանց Ճիւները գոլէճի մուտքի համար: Մանչերուն վարժարանը ունի եօթը դասարան Ամերիկեան համալսարանը ընդունուելու համար: Աշակերտները ընտրուած են 20 նախակրթարաններէ, ֆիզիքական եւ մուտքի քննութիւններէ յետոյ: ...Հաճոյքն ունեցայ այս երկու վարժարաններու մարզանքի միացեալ դաշտահանդէսին ներկայ ըլլալու: Հիանալի էր տեսնել մեր տղաքն ու աղջիկները որ կը կատարէին իրենց մարզանքը ճկունութեամբն ու համաչափութեամբը մեր Ամերիկեան ամենալաւ մարզիկներուն»:

Լրիվ այլ էր թաղային կամ համայնքային նախակրթական վարժարանների վիճակը, որոնց մի մասին, ինչպես նշվեց, Միությունը տարիներ շարունակ հատկացնում էր նպաստներ: «Սուրիոյ մէջ, – վկայում է Լիլա Գարակյոզյանը, – յիսուն թաղային վարժարաններ Միութենէն օգնութիւն կ'ստանան, ընդհանրապես մասնաւոր թուով աշակերտներու թոշակին վճարման ձեւով: 470 փոքրիկներ Հալէպի 17 վարժարաններուն մէջ հարիւր օր շարունակ կաթ ստացան: ...Հալէպի մէջ ուսուցիչներէն մին ինծի պատմեց թէ կաթի սպասարկութեան սկսելէ առաջ իր աշակերտներէն մի քանին անսուաղութենէ մարեցան դասի պահուն: Հազարաւորներ դպրոց կուգան առանց նախաճաշի: ՀԲԸ Միութիւնը այս տարի 9.514 տոլար ծախսած է փոշի կաթի համար, զոր ղրկած է Սուրիա, Լիբանան եւ Յունաստան»:

Նման իրավիճակը անխուսափելի հետեւանքն էր լիբանանահայերի մի զգալի մասի խիստ ծանր տնտեսական վիճակի: Լ.Գարակյոզյանի նկարագրությամբ այդ վարժարանները գրեթե չէին տարբերվում վերը հիշատակված հայաբնակ թաղերից.

«Ահա՝ ինչ որ տեսայ. դպրոցներ որ հիւղակներ էին, դպրոցներ՝ եկեղեցիներու մէջ պատսպարուած, դպրոցներ՝ որ կրթական յարկէ աւելի մարագներու կը նմանէին, որոնց պատերը ճեղքոտուած էին ու տանիքները լեցուն ծակերով՝ որոնց մէջէն երկինքը կրնայի տեսնել: Ցմոռան միջոցին այս բացուածքներէն անձրեւ կը տեղայ տղոց գլխուն: ...Պատուհաններէն շատերը ապակի չունին, եւ ձմեռը տախտակով կը գոցուին՝ դուրսի ցուրտէն պաշտպանուելու համար, դասարանները բոլորովին մութցնելով: Բոլոր դպրոցներն ալ սաստիկ խճողուած են ...ստէպ մէկէ աւելի կարգեր դաս կ'առնեն միեւնոյն սրահին մէջ, միեւնոյն պահուն: Հազարաւոր աշակերտներ գրասեղան չունին եւ ստիպուած են գրել գետնին վրայ նստած կամ ծունկի վրայ...

«Այս դպրոցներուն առողջապահական վիճակը վատ է: Ընդհանուր առմամբ մէկ արտաքնոց կայ հարիւր աշակերտի համար: Հալէպի մէջ դպրոցներ տեսայ ուր բնաւ արտաքնոց չկար. հետեւաբար փոքրիկները ստիպուած էին դաշտերը երթալ: Դարձեալ հոն աշակերտները կը խմէին պղտոր եւ հաւանաբար ապականեալ հորի մը ջուրը: Նման պատճառներով փոքրիկներուն հարիւրին ինհիսունը աղիքի ճիճուներով վարակուած են»: Եվ որպես եզրակացութիւն. «Ամերիկայի մէջ մենք բնաւ չպիտի հանդուրժէինք մեր զաւակները նման խղճալի դպրոցներ ղրկելու»:[72]

Լիլա Գարակյոզյանի հաշվետվությունը, ուր նա անդրադառնում էր մի շարք այլ հրատապ հարցերի եւս (ուսուցիչների պակասը, նրանց մասնագիտական ցածր մակարդակը, մեծ թվով հայ երեխաների դպրոց չհաճախելը եւ այլն), մեծ արձագանք ունեցավ Միության ղեկավարության եւ շարքային անդամների մեջ: Արդեն 1950թ. դեկտեմբերին Միության նախագահ Արշակ Գարակյոզյանը հանդես եկավ հատուկ կոչով, որով բացված հայտարարեց «Հանգանակութիւն Մերձաւոր Արեւելքի կարօտ համայնքներու վարժարանների համար», որի արդյունքում նախատեսվում էր հավաքել 300.000 դոլար: Հանգանակության նպատակներն էին՝ անհրաժեշտության դեպքում կառուցել նոր շենքեր Միության կողմից հովանավորվող դպրոցների համար կամ նորոգել դրանք, դպրոցները օժտել կահույքով, ուսումնական նյութերով, աղքատ ընտանիքների երեխաներին ապահովել սննդով եւ այլն:

Ալ.Մանուկյանը ՀԲԸՄ նախագահ

Այս հանգանակությունը Արշակ Գարակյոզյանի՝ որպես ՀԲԸ Միության նախագահի, կազմակերպած վերջինն էր: 1953թ. մայիսին բժիշկ-

ների թելադրանքով նա հարկադրված եղավ ներկայացնել իր հրաժարականը, որը եւ ընդունվեց հունիսի 1-ին:

Միության նոր նախագահի ընտրությունը կայացավ 1953թ., հերթական Ընդհանուր ժողովից անմիջապես հետո: ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովը, դեկտեմբերի 12-ի իր միաձայն որոշմամբ, ՀԲԸ Միության նախագահ ընտրեց Ալեք Մանուկյանին:[73]

Կասկածից վեր էր, որ Ա.Գարակյոզյանի՝ նախագահի պաշտոնում մնալու դեպքում, Միությունը հաջողությամբ շարունակելու էր իր բազմաբնույթ ծրագրերի իրականացումը. դրա երաշխիքն էր նախորդ տարիների նրա արդյունավետ գործունեությունը: Սակայն ակնհայտ էր, որ թե՛ հետպատերազմյան աշխարհաքաղաքական նոր պայմանները եւ թե՛ սփյուռքի զարգացման առանձնահատկությունները նոր խնդիրներներ էին դնում Միության առջեւ, որոնց լուծումը պահանջում էր համապատասխան նոր գործելակերպ: Այս իմաստով Ալեք Մանուկյանը իր տարիքով, խառնվածքով ու ազգային նկարագրով եւ փորձառությամբ նախագահի պաշտոնի առավել հարմար թեկնածուն էր: Այլ կերպ ասած՝ նոր ժամանակները պահանջում էին նոր առաջնորդներ: Ալեք Մանուկյանի՝ որպես Միության նախագահ, առաջին ելույթի հետեւյալ խոսքերը դարձան նրա հետագա գործունեության կարգախոսը. «Իմ երազն է Միութեան նիւթական միջոցները բազմացնել. որպէսզի շատ մը կենսական պէտքեր - որոնց մանրամասնութեան մէջ չեմ մտներ, բայց որոնց գլուխը կը գտնուի մեր մշակոյթը, հայ գիրն ու գրականութիւնը - չ'անտեսուին այլեւս»:[74]

Վարժարաններ Սիրիայում

Վերոհիշյալ հանգանակության իրական նախաձեռնող՝ օրիորդ Լիլա Գարակյոզյանը, ինչպես եւ սպասվում էր, հավատարիմ մնաց Միության եւ իր ընտանիքի ավանդույթներին եւ դարձավ առաջին նվիրատուներից մեկը՝ տրամադրելով 20.000 դոլար Լիբանանի ու Սիրիայի դպրոցների անմիջական կարիքները հոգալու համար: Այդ գումարով, մասնավորապես, Սիրիայում նորոգվեցին մի քանի դպրոցների շենքեր, ինչպես նաեւ 33 դպրոցների համար հայթայթվեցին 239 գրասեղան-նստարան, 560 մանկապարտեզի նստարան, 25 ուսուցչական սեղան եւ 49 գրատախտակ: 1951-1952թթ. դպրոցական տարեշրջանում հանգանակությամբ հավաքված գումարներից, մասնավորապես, վճարվեց Լիբանանի Ազգային, Հայ ավետարանական եւ կաթոլիկ վարժարանների 33 ուսուցիչների աշխատավարձը, Հալեպի տարբեր վարժարանների 746 աշակերտների ուսման վարձը եւ այլն:

Սակայն այդ հանգանակության ամենակարեւոր արդյունքներից էր Միության՝ Հալեպում առաջին երկրորդական վարժարանի հիմնումը: Դեռեւս մինչեւ Լ.Գարակյոզյանի պատվիրակության ժամանումը, Միության Սիրիայի Շրջանակային Հանձնաժողովը որոշում էր կայացրել նման դպրոցի կառուցման մասին եւ հարմար շենք էր գտել Հալեպի կենտրոնում՝ Ազիզիե թաղում: Պատվիրակությունը հավանություն տվեց այդ որոշումին եւ հեռագրեց Նյու Յորք, անհրաժեշտ գումարը՝ 33 հազ.դոլար, հատկացնելու մասին: «Գումարը գոյացաւ, ծերունազարդ բարերար Լազար Նաճարեանի նուիրած 20.000 տոլարին վրայ աւելցնելով, Միութեան Նիւ Եորքի Տիկնանց կեդր. Յանձնախումբի հաւաքած 13.000 տոլարը»:[75] Դպրոցի շենքը գնվեց 1952թ. վերջին, իսկ արդեն հաջորդ տարի սկսվեցին անհրաժեշտ վերակառուցումները: Լազար Նաճարեան վարժարանի բացումը կատարվեց 1954թ., առաջին տարեշրջանում այն ուներ ընդամենը 83 աշակերտ, բայց արդեն 1958թ. այդ թիվը կազմում էր 454: 1959թ., այն բանից հետո, երբ Գ. Կիլպէնկեան Հիմնարկությունը մեծ գումար հատկացրեց դպրոցի շենքի ընդարձակման համար, դպրոցը սկսեց կոչվել Լազար Նաճարեան-Գալուստ Կիլպէնկեան վարժարան: Նույն թվականին դպրոցը վերածվեց երկրորդական վարժարանի, իսկ աշակերտների թիվը հասավ 585-ի, ապա նաեւ՝ 1960-ին՝ 669-ի: 1970-ական թթ. կեսերին այստեղ անվճար սովորեցին Լիբանանից քաղաքացիական պատերազմի պատճառով արտագաղթած հայ երեխաները: Հետագա տարիներին նույնպես շարունակվեց աշակերտության թվի աճը, ինչի շնորհիվ այն դարձավ ՀԲԸ Միության ամենախոշոր դպրոցը սփյուռքում: Լ.Նաճարեան - Գ.Կիլպէնկեան վարժարանի տնօրեն Ալեքսան Աթթարյանի տվյալներով, 2001թ. դպրոցում ուսանում էր շուրջ 1.500 աշակերտ, «...մանկապարտէզը 1954էն մինչեւ 2001 ունեցած է 3.620 շրջանաւարտ: Նախակրթարանի շրջանաւարտներու ընդհանուր թիւն է 1954էն մինչեւ 2001ը 3.455 հոգի: Երկրորդականէն շրջանաւարտ՝ 1961էն մինչեւ 2001ը 2.159 հոգի»:[76]

1998թ. Սիրիայի Շրջանակային Հանձնաժողովը որոշեց Հալեպի Ազիզիե թաղամասում Միությանը պատկանող տարածքի վրա, ուր գտնվում է Լ.Նաճարեան - Գ.Կիլպէնկեան դպրոցի շենքը, կառուցել նաեւ մանկապարտեզ եւ ՀԲԸ Միության ու ՀԵ Ընկերակցության Կենտրոններ: Նոր համալիրի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2003թ. օգոստոսին:

Առաջին անգամ չէ, որ Գ.Կիլլպէնկեան Հիմնարկությունը կարեւորում էր Սիրիայում ՀԲԸ Միության հաստատությունները: Բավական է նշել, որ նախորդ տարիների ընթացքում նրա տրամադրած միջոցներով հնարավոր էր դարձել Միության վարժարանների վերանորոգումն ու կահավորումը, կետրոնական ջեռուցումն ու համակարգիչների ձեռքբերումը եւ այլն: Նման գործելակերպը, որը ընդհանրապես բնութագրական էր այդ Հիմնարկությանը, եւ ոչ միայն Սիրիայում, առավել ընդգծված ձեւ ստացավ նրա հայկական բաժնի նախագահ Միքայել Եսայանի եւ նույն բաժնի տնօրեն Զավեն Եկավյանի օրոք: Հալեպում Միության նոր կենտրոնի կառուցումը եղավ այդ գործելակերպի յուրահատուկ գագաթնակետը, նկատի առնելով, որ Գ.Կիլլպէնկեան Հիմնարկությունը ստանձնեց թե՛ ողջ համալիրի կառուցումը եւ թե՛ նրա կահավորումը եւ անհրաժեշտ սարքավորումներով ապահովումը:

Լ.Նաճարեան - Գ.Կիլլպէնկեան վարժարանի հիմնումից մեկ տարի անց՝ 1955-56թթ. Սիրիայի մայրաքաղաք Դամասկոսում դոները բացեց Կիլլլապի Կիլլպէնկեան վարժարանը: Վարժարանի եռահարկ շենքը գնվել էր Կիլլլապի Կիլլպէնկեան Հիմնարկության կողմից եւ հանձնվել ՀԲԸ Միության սեփականությանը: Միության տեղական մարմինը շենքը նորոգելուց եւ կահավորելուց հետո, այստեղ փոխադրվեց իր կողմից հովանավորվող նախկին Սահակեան վարժարանի նախակրթարանը՝ իր շուրջ 100 աշակերտներով: 1966թ. վարժարանի մանկապարտեզում եւ նախակրթարանի վեց դասարաններում աշակերտում էր արդեն 211 երեխա: 2000թ. Միության Կենտրոնական Վարչության եւ Ցագուպյանների ընտանիքի տրամադրած միջոցներով Կիլլլապի Կիլլպէնկեան նախակրթարանը օժտվեց Աւետիս Եագուպեան անունով ընդարձակ խաղավայր բակով: Անցնող տասնամյակների ընթացքում առանց ընդհատումների գործող Կիլլլապի Կիլլպէնկեան վարժարանը, այժմ ՀԲԸ Միության երկրորդ վարժարանն է Սիրիայի տարածքում, 2002թ. տվյալներով նա ուներ 150 աշակերտ:

Այս երկու վարժարաններից բացի, ՀԲԸ Միությունը տարբեր տարիներին ունեցել է այլ դպրոցներ եւս: Թեեւ նրանք այլեւայլ պատճառներով դադարել են գործել, այնուամենայնիվ, անուրանալի է նրանց դերը ազգային կրթության եւ դաստիարակության գործում: 1953թ. Միությունը ստանձնեց 1937 թվականից Հալեպի Աճուրլուք թաղում գործող Արմէնեան վարժարանի խնամակալությունը, երբ այն տարբեր հանգամանքների բերումով հայտնվել էր փակման վտանգի առջեւ: Դեռեւս 1954թ. Արմէնեան վարժարանի նոր շենքի կառուցման համար Միության կողմից հատկացված 10 հազ. դոլարը այդպես էլ չիրացվեց, քանի որ քաղաքապետարանը այդ թաղամասի հատակագծի մշակման պատրվակով, անորոշ ժամանակով արգելել էր որեւէ շինարարություն: Ի վերջո, Միությունը 1959թ. ստիպված եղավ փակել այդ վարժարանը, իսկ աշակերտներին (1955թ. նրանց թիվը շուրջ 170 էր) փոխադրել այլ դպրոցներ:

1953թ. Միության սեփականությունը դարձավ նույնպես 1937թ. Հալեպի Շեյխ Մաքսուտ արվարձանում գործող նույնանուն՝ Արմէնեան դպրոցը: Առաջին տարում այստեղ կար 122 աշակերտ, որոնցից 62-ը՝ նախակրթարանի հինգ դասարաններում, իսկ մնացածը՝ մանկապարտեզում: 1957թ. կառուցվեց վարժարանի նոր, սեփական շենքը, որից հետո էլ այն վերանվանվեց բարերար՝ Սեդրակ Մեսրոպեան վարժարան: Նույն տարում այս նախակրթարանում ուսանում էր 158, իսկ 1966թ.՝ 168 աշակերտ: Հետագա տարիներին հայերի Շեյխ Մաքսուտ արվարձանից դեպի քաղաք տեղափոխվելու հետեւանքով հայ աշակերտների թիվը դպրոցում սկսեց նվազել: 1978-1979 տարեշրջանի ավարտին, երբ 164 աշակերտից միայն 64-ն էին հայ երեխաներ, որոշվեց փակել Սեդրակ Մեսրոպեան նախակրթարանը:

1954թ. Միության սեփականությունը դարձավ նաեւ Տերպեսիեի (սիրիա-թուրքական սահմանի վրա, Հալեպից մոտ 35 կմ հեռավորությամբ) Կիլիկեան վարժարանը: Սկզբնական շրջանում այս նախակրթարանում նկատվում էր սաների քանակի մշտական աճ՝ 1955-ին՝ 88, իսկ 1963-ին՝ արդեն 143 աշակերտ: Ավելի ուշ, տեղի հայ բնակչության երկրի այլ շրջաններ արտագաղթելու հետեւանքով, աշակերտների թիվը սկսեց կտրուկ նվազել եւ 1966թ. Կիլիկեան վարժարանում ուսանում էին 82 երեխա, որոնց մեծ մասը՝ 47 աշակերտ, տեղացի արաբներ էին: Նման պայմաններում Միությունը աննպատակահարմար նկատեց այս դպրոցի հետագա գոյությունը եւ փակեց այն 1967թ.: «...Տէրպէսիէի մնացող մեր ազգայիններու 14 զաւակները 1966-1967 տարեշրջանին տեղւոյն կաթողիկէ վարժարանը պիտի դրուին եւ անոնց հայերէնի եւ հայոց պատմութեան դասերուն համար այցելու ուսուցչուհի մը նշանակուած է»:[77]

Սիրիայի հայաշատ կենտրոններից հեռու գտնվող Այն էլ Արաբ գյուղաքաղաքում գործող հայկական վարժարանը ՀԲԸ Միության սեփականությունը դարձավ 1956թ.: Արդեն 1958թ. այն կոչվեց ՀԲԸ Միության Կալիֆորնիայի շրջանի նախկին քարտուղար Գրիգոր Սարաֆյանի հանգուցյալ որդու անունով՝ Աւետիս Սարաֆեան նախակրթական վարժարան: Գ.Սարաֆյանը մեծագումար նվիրատվություն էր արել ի նպաստ այդ դպրոցի, որի մի մասով հիմնովին նորոգվեց վարժարանի շենքը, իսկ մնացած մասից ստացված հասույթները պետք է օգտագործվեին վարժարանի տարբեր կարիքների համար: Աւետիս Սարաֆեան վարժարանի

աշակերտության թիվը հասնում էր շուրջ 140-ի: Տեղաբնակ հայերի կյանքի ոչ բարեկեցիկ պայմանների մասին էր վկայում այն, որ վարժարանում կազմակերպվել էր «երեկոյեան սերտողութեան դրութիւնը, նկատի ունենալով կարգ մը տուներէ ներս դասերու պատրաստութեան անյարմարութիւնները»:[78] Ուշագրավ է նաեւ, որ վարժարանի մանկապարտեզի 91 սաներից 32-ը օտարներ էին, հիմնականում պետական պաշտոնյաների երեխաներ: Աւետիս Սարաֆեան վարժարանը փակվեց 1975թ.՝ հայազգի աշակերտության թվաքանակի խիստ նվազման պատճառով:

Սեփական վարժարաններից զատ, ՀԲԸ Միությունը Սիրիայում տարբեր տարիներին ուներ նաեւ մի շարք «հովանավորեալ» վարժարաններ, որոնք մատակարարվում էին նրա տեղական մարմինների կողմից, որոնց շենքերը հաճախ նրա սեփականությունն էին, իսկ պաշտոնական արտոնատերը տեղի Ազգային իշխանությունն էր կամ առանձին անհատներ: Այս նախակրթական դպրոցներից էին Ցագուպիեի Վերածնունդ վարժարանը եւ Գարատուրանի Մեսրոպեան վարժարանը, որը 1961թ. սկսեց կրել բարերար Վահան Պետրոսյանի անունը: Սակայն, այդ վայրերից հայերի անընդհատ արտագաղթի հետեւանքով տարեցտարի զգալիորեն նվազում էր նաեւ նշված երկու դպրոցների աշակերտության թիվը: Այսպես, 1964թ. Վերածնունդ նախակրթարանում ուսանում էին 47, իսկ Վահան Պետրոսեան նախակրթարանում՝ 18 երեխա: Դա չվրիպեց սիրիական իշխանությունների ուշադրությունից, որոնք նախ պահանջեցին միավորել այդ երկու դպրոցները, իսկ 1965թ. որոշում կայացրին նրանց փակման մասին: Նույն վիճակում էր նաեւ Վարդանեան վարժարանը Ճարապլուսում (Հալեպից 90 կմ դեպի հյուսիս, Եփրատ գետի եզերքին, թուրքական սահմանի մոտ): Տեղի երբեմնի բարգավաճող հայության Հալեպ եւ այլ վայրեր արտագաղթելու հետեւանքով, այս դպրոցը նույնպես փակվեց՝ 1960թ.: Մեկ տարի անց, նույն ճակատագիրն ունեցավ 1950-ականների կեսից գործող Քեսապի Ազգային վարժարանը, ուր աշակերտության թիվը իջել էր 13-ի:

Սիրիայի հայկական դպրոցների պատմության մեջ կարեւոր տարի էր 1967 թվականը: Մինչ այդ, հայկական դպրոցներում արաբերեն լեզվի ուսուցումը, ընդհանուր առմամբ, մատնված էր անուշադրության: Այսպես, մանկապարտեզում եւ նախակրթարանում առարկաների ճնշող մասը դասավանդվում էր հայերենով: Թեեւ պետությունը դեռեւս 1949թ. ընդունել էր օրենք՝ արաբերեն լեզվի պարտադիր կիրառման վերաբերյալ, այն ինչ-ինչ պատճառներով երկար ժամանակ չիրագործվեց: Սակայն 1967թ., արաբա-իսրայելական պատերազմի վաղորդայնին, Սիրիայի

կառավարությունը հրամանագիր հղեց բոլոր ոչ պետական դպրոցներին, համաձայն որի դասավանդումը պետք է կատարվեր միայն արաբերենով եւ տնօրենի պաշտոնում թեկնածուները պետք է հաստատվեին իշխանությունների կողմից: Կառավարության այդ քայլը, անշուշտ, բխում էր երկրի պետական շահերից եւ պատահական չէ, որ ՀԲԸ Միության ղեկավարությունը հրաժարվեց որակել այն որպես ազգայնականության դրսեւորում:[79] Ամեն դեպքում, տեղի հայ համայնքների ղեկավարությունից պահանջվում էր արագ կողմնորոշվել եւ գտնել հարցի լուծման ընդունելի մի տարբերակ: Ռոբերտ Ճեպեճյանը, որը այդ տարիներին ՀԲԸ Միության տեղական Հանձնախմբի ատենապետն էր, վերհիշում էր.

«Այդ օրերուն ոյժի մէջ էր Առաջադիմական Հայ Ճակատը: Պետութեան մօտ ալ ուներ վարկ ու կշիռ, ինչպէս նաեւ բարեկամներ: ՀԲԸ Միութեան մէջ, տեղական Ցանձնախումբի ատենապետի մեր հանգամանքով, կրնայինք ազդեցութիւն բանեցնել ու համոզել Ճակատի ղեկավարները: Արդ, ի մի բերելով Առաջադիմական տարբեր միութիւններու ազգային հոգսերով տարուած ղեկավարները, որոշեցինք Առաջադիմական Ճակատի անունով պատուիրակութիւն մը կազմել ու տիրող շփոթ կացութեան մէջ պետութեան ներկայանալ, որպէս իրեն կողմնակից տարր, համաձայն նոր օրէնքի գործադրութեան: ...Կը խնդրուէր պետութենէն, որ հայերէնը թոյլատրուի դասաւանդութեան որոշ առարկաներուն համար: Պետութիւնը, արդէն ըմբոստ միւս համայնքներէն յոյժ դժգոհ, բարեացակամօրէն նկատի առնելով Ճակատի խնդրանքը, համաձայնեցաւ ընթացք տալ ատոր: Լռելեայն համամտութիւն գոյացաւ, որ հայերէնը դասաւանդուի շաբաթը 4 պահ, իբր օտար լեզու, իսկ կրօնն ալ տրուի հայերէն, 2 պահ: ...Հայկական դպրոցները փրկուեցան, ինչ որ խոշորագոյն յաջողութիւն մըն էր Սուրիահայ գաղութի համար»:[80]

Ինչ վերաբերում է Հայ կաթոլիկ համայնքին, ապա այն չցանկացավ միանալ նշված համաձայնությանը, եւ նրան պատկանող հայկական վարժարանները՝ ազգային-կրոնական մյուս համայնքների դպրոցների նման, պետականացվեցին: Այդ դպրոցների աշակերտները ստիպված եղան իրենց ուսումը շարունակել հայկական այլ, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության դպրոցներում:

Հայ եկեղեցու պառակտումը

Այն, որ Լիլա Գարակյոզյանի գլխավորած պատվիրակության Սիրիա եւ Լիբանան կատարած այցի արդյունքում սկիզբ առած դպրոցաշի-

նության ծրագիրը նախ եւ առաջ սկսեց իրագործվել Սիրիայում, օրինաչափ էր: Այդ երկրում Միությունը չուներ մինչ այդ եւ ոչ մի մնայուն հայկական վարժարան, եւ այդ պակասը չէին կարող լրացնել նրա մյուս հաստատությունները, որքան էլ արդյունավետ լիներ նրանց գործունեությունը: Մինչդեռ, Լիբանանում, ինչպես ասվեց, մեծ հաջողությամբ տարիներ շարունակ գործում էին Միության երկու վարժարանները: Այնուամենայնիվ, այստեղ նույնպես ակնհայտ էր նոր վարժարանների անհրաժեշտությունը, եւ սկսած 1950-ական թթ. կեսերից ՀԲԸ Միությունը ձեռնամուխ եղավ դպրոցաշինության ծրագրի իրագործմանը նաեւ այդ երկրում: Մինչ այդ, սակայն, նույն Բեյրութում տեղի ունեցան դեպքեր, որոնք բախտորոշ եղան ողջ սփյուռքի համար եւ կանխորոշեցին նրա հետագա գոյակերպը ընդհանրապես: Խոսքը Հայ Առաքելական եկեղեցու պառակտման մասին է:

Այն բանից հետո, երբ Հայաստանում 1920թ. վերջին իշխանության եկան կոմունիստները եւ այն մաս կազմեց Խորհրդային Միության, սփյուռքահայությունը՝ ի դեմս նրա բոլոր քաղաքական եւ ոչ քաղաքական կազմակերպությունների, անհրաժեշտաբար կանգնեց Խորհրդային Հայաստանի հետ հարաբերվելու գլխավոր չափանիշի ընտրության առջեւ: Չափորոշիչ համարել Հայաստանի իշխանությունների գաղափարախոսությո՞ւնը, թե՞ հենց Հայաստանի՝ թեկուզ եւ Խորհրդային Միության կազմում, գոյության փաստը: Սփյուռքի մի մասը՝ «կոշտ» ընդդիմությունը, Դաշնակցության գլխավորությամբ, առաջնային համարեց գաղափարական չափանիշը եւ համապատասխան դրան խորհրդային սոցիալիզմի եւ արեւմտյան կապիտալիզմի հակամարտության մեջ անցավ վերջինի կողմը: Սփյուռքի մյուս մասը՝ Ռամկավար-Ազատական եւ Հնչակյան կուսակցությունների գլխավորությամբ, հայ ժողովրդի ազգային շահերի տեսակետից խորհրդային իշխանությունը համարելով չարյաց փոքրագույնը, բավարարվեց «մեղմ» ընդդիմության դերով՝ ձգտելով բարիդրացիական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: ՀԲԸ Միությունը սկզբից եւեթ որդեգրեց նման դիրքորոշում եւ, ինչպես տեսանք, շուրջ 14 տարի իր հնարավորությունների սահմաններում օժանդակեց հայաստանաբնակ հայ ժողովրդի առաջընթաց զարգացմանը:

Դաշնակցությունը, ձգտելով գերիշխող դիրք գրավել ողջ սփյուռքում, փորձեց իր հսկողության տակ վերցնել ամենահեղինակավոր ազգային հաստատության՝ Հայ Առաքելական եկեղեցու արտասահմանյան կամ սփյուռքյան թեմերը, անջատել դրանք Ս.Էջմիածնից: Այդ խնդրի լուծմանը Դաշնակցությունը ձեռնամուխ եղավ դեռեւս 1920-1930-ական թթ., հմտորեն օգտագործելով Հայաստանի իշխանությունների մարտնչող

աթեիզմի քաղաքականությունը (եկեղեցիների փակում եւ քանդում, հոգեւորականների հետապնդում եւ այլն), իսկ սկիզբը դրվեց 1933թ., երբ Նյու Յորքում նույն այդ կուսակցության անդամների կողմից եկեղեցում սպանվեց տեղի թեմի առաջնորդ Ղեւոնդ արք. Դուրյանը: Դրան հետեւեց (առայժմ՝ միայն ԱՄՆ-ում) Ս. Էջմիածնի հոգեւոր եւ վարչական իրավասությունը չճանաչող եկեղեցիների աստիճանական աճ: Դաշնակցության այդ քայլը, ինչպես եւ սպասելի էր, հանդիպեց ամերիկահայերի մեծամասնության ուժեղ դիմադրությանը եւ դատապարտվեց: Հոգեբանորեն դրան պատրաստ չէր նույն Դաշնակցության կողմնակիցների զգալի մասը, քանզի դրանով իսկ նրանք, կամա թե ակամա, օտարվում էին ազգային ամենակարեւոր արժեքներից մեկից՝ Ս. Էջմիածնից, եւ կտրում էին իրենց վերջին, թեկուզ եւ խորհրդանշական կապը Հայաստանի հետ:

Երկրորդ Աշխարհամարտից հետո սկիզբ առած սառը պատերազմը երկու գերտերությունների՝ Խորհրդային Միության եւ ԱՄՆ-ի միջեւ պարտադրեց սփյուռքահայությանը վերստին հաստատել իրենց քաղաքական կողմնորոշումները Հայաստանի հանդեպ: Եվ եթե «մեղմ» ընդդիմությունը ընդհանուր առմամբ հավատարիմ մնաց իր մինչ այդ որդեգրած քաղաքականությանը, ապա «կոշտ» ընդդիմությունը որոշեց մասնակցել սառը պատերազմին ԱՄՆ-ի կողմից (այդ են վկայում նրա 1951թ. 15-րդ եւ 1955թ. 16-րդ համագումարների որոշումները[81]), եւ առավելագույնս օգտվել ստեղծված իրավիճակից, նախ եւ առաջ, եկեղեցու հարցում: 1952թ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ի մահանալուց հետո, Դաշնակցությունը նպատակադրվեց ապահովել իր կողմից հովանավորվող թեկնածուի հաղթանակը, եւ, դրանով իսկ, հակադրել այդ կաթողիկոսությունը Ս.Էջմիածնին, որպես սփյուռքում Հայ Առաքելական եկեղեցու հոգեւոր եւ վարչական կենտրոնի:[82] Նրա ընդդիմադիրների (Հայաստանում եւ սփյուռքում) անկազմակերպ գործողությունների, բայց կարեւորը՝ Լիբանանի իշխանությունների անթաքույց ուժային աջակցության շնորհիվ Դաշնակցությունը 1956թ. հասավ իր նպատակին. Կիլիկիո կաթողիկոսության նոր ղեկավարությունը սկզբից եւեթ որդեգրեց Ս.Էջմիածնից լրիվ անջատվելու քաղաքականություն: Հայ եկեղեցու նման՝ քաղաքական պատճառներով պառակտումը, կարեւոր փուլ էր սփյուռքի պատմության մեջ, քանզի դրանով իսկ ավարտվեց երկու կուսակցական-եկեղեցական ներսփյուռքյան համակարգերի ձեւավորումը: Այդ համակարգերից առաջինի հիմնական տարրերն են՝ Դաշնակցությունը եւ Կիլիկիո կաթողիկոսության թեմերը, իսկ երկրորդինը՝ ՌԱԿ եւ Հնչակյան կուսակցությունները եւ Ս.Էջմիածնի թեմերը: Յուրաքանչյուր համակարգի մյուս տարրերն են համապատասխան մշակութային, երիտասարդական-

մարզական, բարեգործական եւ այլ միութիւնները, դպրոցները, կրթական հաստատութիւնները, մամուլը, զանգվածային լրատվության այլ միջոցները եւ այլն:

ՀԲԸ Միությունը տագնապով էր հետեւում Բեյրութում ընթացող դեպքերին եւ իր հնարավորությունների սահմաններում փորձում էր կանխել եկեղեցու պառակտումը՝ նկատելով այն որպես «ազգավնաս արկածախնդրութիւն»: 1959թ. դեկտեմբերին կայացած ՀԲԸ Միության 45-րդ Ընդհանուր ժողովում նախագահ Ալեք Մանուկյանը ամենայն հստակությամբ արտահայտեց Միության սկզբունքային դիրքորոշումը կատարվածի հանդեպ.

«Մեր եկեղեցւոյ պառակտումին ամբողջ ողբերգութիւնը ինձի համար ցաւագինօրէն բացատրելի դարձաւ, երբ տարի մը առաջ իր խնդրանքով տեսակցութիւն մը ունեցայ Կիլիկիոյ Աթոռին նուիրակ Եպիսկոպոսին հետ: Իր արտայայտութիւնը, հանդէպ ուխտապահ միաբանութեան, հայ եկեղեցւոյ միասնականութեան նախանձախնդիր ժողովուրդին, ուժգնօրէն ցնցեց ու խռովեց զիս: Իմ դէմս ունէի ո՛չ թէ սիրոյ, բարութեան եւ խաղաղութեան պաշտօնեան, այլ անկարեկիր, կարծրասիրտ իշխանաւոր մը՝ որ սոսկում պատճառող լեզուով մը ցարդ գործադրուած բռնական միջոցներու մասին իր չարախնդ գոհունակութիւնը կը յայտնէր եւ ա՛լ աւելի ծանր սպառնալիքներու հեռանկարը կը շողացնէր՝ ծրագրուած տիրակալութիւնը ամբողջական ընելու համար: Այդ օրէն, ինձի համար այլեւս բացայայտ էր թէ ի՛նչ մթնոլորտ, ձգտում եւ ոգի կը տիրէր Կիլիկեան Աթոռէն ներս»: Այնուհետեւ, անդրադառնալով Միության հասցեին հնչած մեղադրանքներին, Ա. Մանուկյանը ասաց. «Այդ Աթոռին պաշտօնաթերթը, «Հասկ», որ եկեղեցական պառակտումին պատմութիւնը կը շարահիւսէ իրողութեանց ըստ կամս մեկնաբանութեամբ, *անմարդկային* (ընդգծումները՝ ըստ բնագրի-Էդ.Մ.) կ'որակէ Բարեգործականի ընթացքը, Կաթողիկոսարանին ոեւէ գումար չտրամադրելուն համար: Իսկապէս *անմարդկային* եւ *հակազգային* շարժումի մը մեղսակիցը պիտի ըլլայինք, ընդհակառակը, այդ Աթոռին հետ գործակցելով: Երբ անձամբ տեսայ մեր խեղճ ազգն ու եկեղեցին բաժան բաժան ընող պայքարին պարագլուխը եւ անսահման տրտմութեամբ լսեցի իր անողորմ խօսքերը, այլեւս ո՛չ մէկ տարակուսանք ունէի թէ որո՞նց հետ էր մեր գործը եւ ի՛նչ պէտք էր ըլլար Բարեգործականին դիրքը»:[83]

Վարժարաններ Լիբանանում

Դեռեւս մինչ Ալ. Մանուկյանի հիշատակած հանդիպումը, Միությունը առիթ էր ունեցել տեսնել Կիլիկիո կաթողիկոսության նոր քաղաքականության հետեւանքները, երբ վերջինիս որոշմամբ փակվեց կաթողիկոսարանի տարածքում գործող նախակրթարանը, «որովհետեւ չէր ուզուէր որ դուրսէն աշակերտ կամ ծնողք ազատ մուտք ունենային վանքէն ներս: Փոքրիկները ամիսներով ուսումէ զուրկ մնացին եւ Լիբանանի Շրջ. Ցանձնաժողովին ջանքերուն շնորհիւ էր որ գիւղին մէջ կանոնաւոր նախակրթարան մը բացուեցաւ, ուր կը յաճախեն 120 մանուկներ, կը պաշտօնավարեն 8 ուսուցիչներ եւ որուն համար տարեկան 6.000 տոլարի բացառիկ ծախք մը ստանձնած ենք, պարզապէս անմեղ մանուկներ քմահաճ կարգադրութեան մը զոհ չդարձնելու համար»:[84] Սակայն 1964թ., այս դպրոցի աշակերտների քանակը կտրուկ նվազեց եւ կազմեց մոտ 80-85 մարդ: Դրա հիմնական պատճառը Միության անդամների եւ համակիրների մեծ մասի տեղափոխվելն էր այլ շրջան,[85] ինչն էլ, ի վերջո, հասցրեց վարժարանի փակմանը՝ 1974թ.:

Այս վարժարանին փոխարինելու եկավ նույնպես Անթիլիասում նույն տարվա հոկտեմբերին բացված Պօղոս Գ.Կարմիրեան նախակրթարանը, ուր առաջին իսկ տարում արձանագրվեց 225 աշակերտ: Այս նոր դպրոցը հաջողությամբ գործեց հետագա տարիներին եւ 1978-1979թթ. ուներ 411 սան: Չնայած քաղաքացիական պատերազմի ծանր հետեւանքներին, Պօղոս Կարմիրեան դպրոցը պահպանեց իր գոյությունը եւ 2002թ. ուներ 274 աշակերտ:

1957թ. հոկտեմբերին Բեյրութում բացվեց ՀԲԸ Միության եւս մեկ դպրոց՝ Երուանդ Տեմիրճեան վարժարանը եւ Տիկնանց տիպար մանկապարտեզը: Այս վարժարանը կառուցվեց Միության Լիբանանի Շրջանակային Հանձնաժողովի ատենապետ Երվանդ Տեմիրճյանի բարերարությամբ, իսկ մանկապարտեզը՝ Միության Նյու Յորքի Տիկնանց կենտրոնական եւ Դետրոյթի Տիկնանց հանձնախմբերի կողմից հատուկ այդ նպատակով հավաքված գումարներով: Եթե 1957թ. աշակերտների թիվը չէր գերազանցում 200-ը, ապա 1961թ. հասավ 338-ի: Նույն թվականին ավարտվեց վարժարանի նոր, չորսհարկանի շենքի շինարարությունը, որը կահավորվեց Գ.Կիլպէնկեան Հիմնարկության տրամադրած միջոցներով: Շենքային նոր պայմանները հնարավոր դարձրին սաների թվաքանակի բարձրացումը հետագա տարիներին՝ 1963-ին նրանց թիվը հասավ 481-ի, եւս չորս տարի անց վարժարանում ուսանում էր 511 աշակերտ: Տեմիրճեան վարժարանի այդչափ արդյունավետ գործունեությունը չունե-

ցավ իր շարունակությունը: 1970-ական թթ. երկրում ծագած քաղաքացիական պատերազմի պատճառով մեծ թվով լիբանանահայեր հեռացան երկրից եւ կամ տեղափոխվեցին Բեյրութի այլ, առավել ապահով շրջաններ: Այս ամենի պատճառով վարժարանի աշակերտության թվաքանակը խիստ նվազեց: ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչական Ժողովի անդամ Պերճ Սեդրակյանի (2000թ. փետրվարից՝ ՀԲԸ Միության նախագահ) խոսքերով՝ «Երբ հաստատութիւն մը տարիներ շարունակ 20-35 աշակերտով գոյատեւէ եւ երբ դասարան ըլլայ որ աշակերտ չունենայ, ո՞ր մանկավարժը կամ կրթական մշակը կրնայ պնդել թէ տուեալ հաստատութիւնը կրնայ կրթական մակարդակ ապահովել: Ահա այս եւ նիւթական պատճառներով մասնաճիւղը Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ ատենին դպրոցը փակելու որոշումը առած են»:[86]

1961թ. Բեյրութի Սին էլ Ֆին արվարձանում սկսեց գործել ՀԵԸ պատկանող մարզադաշտի մի մասում կառուցված Լեւոն Կ.Նազարեան վարժարանը: Այն ի հիշատակ ՀԲԸ Միության վետերան, հանգուցյալ Լ.Նազարյանի՝ կառուցեցին նրա այրին եւ զավակները: Մի քանի տարի անց, Սաթենիկ Նազարյանի նվիրատվության շնորհիվ կառուցվեց եւս մեկ հարկ, եւ վարժարանի սաների քանակը հասավ 590-ի: 1967թ. վարժարանում կային 650 աշակերտ, որոնցից 255-ը՝ մանկապարտեզում, իսկ 395-ը՝ նախակրթարանի վեց դասարաններում: 2002թ. Լեւոն Կ.Նազարեան վարժարանի սաների թիվը 260 էր:

1964թ. Բեյրութի Յովակիմեան - Մանուկեան վարժարանի հատուկ հարկաբաժնում, ՀԲԸ Միության փոխնախագահ Երվանդ Հյուսիսյանի մեկենասությամբ բացվեց Երուանդ Հիւսիսեան Հայագիտական Ուսմանց Հիմնարկը: Իր տեսակի մեջ եզակի այս հաստատությունը նախատեսված էր տեղի համալսարանների հայ ուսանողների, Միության եւ այլ դպրոցների ուսուցիչների, ինչպես նաեւ ընդհանրապես երիտասարդ մտավորականների համար, որտեղ կարդացվում էին դասախոսություններ հայ ժողովրդի պատմության եւ մշակույթին վերաբերող տարբեր թեմաներով: Հիմնարկի առաջին տեսուչն էր անվանի գրող Վահե Վահյանը: Կենտրոնում տարբեր տարիներին նրանից բացի դասավանդել են՝ Հայաստանից հրավիրված պատմաբան Մորուս Հասրաթյանը, հայտնի հասարակական գործիչ, պատմաբան Գերսամ Ահարոնյանը, երաժշտագետ Աշոտ Պատմագրյանը եւ այլք: 1993թ. հիմնարկը հրատարակեց «Հիւսիսեան հայագիտական հանդէս»-ի Ա. հատորը, որին աշխատակցեցին հայազգի մասնագետներ ինչպես Լիբանանից, այնպես էլ Հայաստանից, Սիրիայից եւ ԱՄՆ-ից: Այն եղավ Լիբանանում հրատարակվող երրորդ մասնագիտական հանդեսը՝ «Հասկ հայագիտական տարեգիրք» եւ «Հայկազեան հայագիտական հանդես»-ից հետո:

1980թ., թեպետ Լիբանանում շարունակում էր տիրել անկայուն, պայթյունավտանգ վիճակը, Միությունն իրագործեց իր վաղեմի ծրագիրը եւ Բեյրութում բացեց Առեւտրական վարժարանը: Վարժարանը տեղակայվեց Լեւոն Նազարեան դպրոցի շենքում: Առաջին տարում այն ուներ 31 աշակերտ: Այս երկու հաստատությունների կանոնավոր գործունեությունը նույնպես անկարելի դարձավ երկարամյա քաղաքացիական պատերազմի պատճառով, որի հետեւանքները ընդհանրապես աղետալի եղան Լիբանանի հայության համար:

ՀԲԸ Միության վերոնշյալ վարժարանների պատմությունը անբաժանելիորեն կապված է վաստակավոր մանկավարժ, լիբանանահայ համայնքի ամենահեղինակավոր դեմքերից մեկի՝ Արա Թոփճյանի անվան հետ: Փարիզում կրթություն ստանալուց հետո, նա 1940-ից աշխատում է Մելգոնեան կրթական հաստատությունում՝ որպես ֆրանսերենի եւ անգլերենի ուսուցիչ, ապա՝ վեց տարի անց հաստատվում Բեյրութում: 1946թ. նա ստանձնեց Յովակիմեան-Մանուկեան վարժարանի տնօրենի պաշտոնը: «Հիմը դրած եմ,- ասում է նա իր մի հարցազրույցում,- ՀԲԸՄ-ի զանազան վարժարաններու, եւ տնօրէն եղած եմ ՀԲԸՄ-ի Ե.Տեմիրճեան, Լ.Կ.Նազարեան, Դարուհի Յակոբեան վարժարաններու: Նաեւ հիմնած եմ ՀԲԸՄ-ի առեւտրական վարժարանը եւ համոզած Պրն. Երուանդ Հիւսիսեանը որ հայագիտական հիմնարկ հաստատէ Պրն. Սարգիս Ապտալեանի (Վահէ Վահեան) միջոցաւ»:[87] Նման կազմակերպական աշխատանքի հետ մեկտեղ, Արա Թոփճեանը մեծապես նպաստել է Միության վարժարանների կրթական մակարդակի բարձրացմանը՝ հմտորեն կիրառելով հայկական, ֆրանսիական եւ արաբական մանկավարժության ավանդույթները: «Ինքն էր որ 1960ական թուականներուն հայ վարժարանները հասցուցած էր կրթական կարեւոր անկիւնադարձի մը, կազմելով երկրորդական ուսման շատ մը ծրագիրներ ...Այսպէս՝ հայկական վարժարաններու մէջ ՀԲԸՄ-ի դպրոցները առաջին անգամ ըլլալով կարողացան մեծ յաջողութիւններ արձանագրել արաբական սերթիֆիքայի եւ պաքալորէայի պետական քննութիւններուն մէջ: Զուգահեռաբար, Պրն. Թօփճեան կազմած է նաեւ կրթական ծրագիր մը, յատուկ՝ ՀԲԸՄ-ի նախակրթարաններու եւ մանկապարտէզներու համար»:[88]

Քաղաքացիական պատերազմի հետեւանքները

1972թ. Բեյրութում դռները բացեց Միության նախագահի մեծագումար նվիրատվությամբ կառուցված ՀԵ Ընկերակցության Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնը: Կենտրոնի կառուցման հետ կապված տարբեր հարցերի արագ լուծմանը մեծապես նպաստեցին դեռեւս 1957թ. հիմնված ՀԵ Ընկերակցության Ասպետներու Խմբի անդամների փորձառությունն ու կարողությունները: ՀԵԸ-ի Մշակութային Կեդրոնը իր մեծ թվով սենյակներով, սրահներով եւ այլ հարմարություններով որակապես նոր հնարավորություններ էր ստեղծում թե՛ Միության մասնաճյուղի եւ թե՛ ՀԵԸ-ի աշխատանքները առավել արդյունավետ դարձնելու համար: Սակայն մինչ ՀԵԸ կազմում էր նոր ծրագրեր, մինչ պատրաստվում էր Բեյրութում կայանալիք ՀԲԸ Միության Երիտասարդական առաջին համագումարին եւ Նավասարդյան 9-րդ մարզական-մշակութային փառատոնին, իրավիճակը երկրում կտրուկ փոխվեց:

1975թ. սկսված քաղաքացիական պատերազմի հետեւանքով Լիբանանը հայտնվեց խոր եւ երկարամյա ռազմաքաղաքական եւ տնտեսական ճգնաժամի մեջ: Դա անդառնալի եւ բացասական հետեւանքներ ունեցավ նաեւ տեղի հայության կենսագործունեության անխտիր բոլոր ոլորտների վրա: Լիբանանում գործող հայ քաղաքական կազմակերպությունները (Դաշնակցություն, Հնչակյան, Ռամկավար Ազատական կուսակցությունները եւ Լիբանանի կոմունիստական կուսակցության մասնաճյուղը) հայերի անվտանգությունը ապահովելու նպատակով, սկզբից եւեթ որոշում կայացրին քաղաքացիական պատերազմին չմասնակցելու, հակամարտող քաղաքական ուժերից որեւէ մեկի հետ չհամագործակցելու վերաբերյալ եւ որդեգրեցին, այսպես կոչված, դրական չեզոքության քաղաքականությունը: Հայ համայնքի նման դիրքորոշումը կանխեց հայության պառակտումը, պայմանավորեց նրա համախմբված գործելը, եւ մի հայտնի չափով նվազագույնի հասցրեց անխուսափելի կորուստները:[89] Կորուստները, սակայն, մեծ էին՝ հարյուրավոր զոհվածներ, շատ ավելի վիրավորներ, քանդված եւ կողոպտված տներ, եկեղեցիներ ու դպրոցներ, գործարաններ ու խանութներ, համայնքային եւ անձնական այլ շինություններ ու հաստատություններ:

Այդ տարիներին ազգային բոլոր կազմակերպություններն ու հաստատությունները ստիպված եղան վերակազմավորել իրենց գործունեությունը, որի նպատակն էր դառնում հայության ֆիզիկական գոյության ապահովումը: ՀԲԸ Միության հերթական տարեգրքում այսպես էր ներկայացվում ՀԵ Ընկերակցության գործունեությունը այդ տարիներին.

«...ստեղծուած նոր պայմաններուն բերմամբ ժողովրդային զանգուածները պէտք ունէին բարոյական քաջալերանքի եւ կազմակերպեալ հոգածութեան: Այս բախտորոշ կացութեան դիմաց՝ ՀԵԸ-ի ղեկավարութիւնը յաջողեցաւ վերակազմակերպուիլ ծառայութեան նոր ուղեգիծով մը - իր մարզական եւ մշակութային կեդրոններն ու ակումբները վերածեց եղբայրական օգնութեան կայաններու, պաշտպանութեան դիրքերու եւ ներքին դպրոցներու: ՀԲԸ Միութեան պարենաւորումի եւ արձանագրութիւններու նախապատրաստական աշխատանքներն ու անոնց յաջորդող նպաստաբաշխումը այդ յարկերուն տակ կատարուեցան: Բազմաթիւ հայ ընտանիքներու համար ՀԵԸ-ի ակումբները բարոյական քաջալերանք ներշնչող կեդրոններ եղան, ուր անոնք դիմեցին երկրին վարչական կազմալուծման հետեւանքով ստեղծուած դժուարութեանց լուծում եւ օրինազանցութեանց դէմ պաշտպանութիւն գտնելու համար: ՀԵԸ-ի Անդրանիկ-Սեւան եւ Անթիլիասի ակումբներն ու Մանուկեան Մշակութային Կեդրոնը տագնապի ամբողջ տեւողութեան նախախնամական դեր կատարեցին: Վերջինը, մանաւանդ, շնորհիւ Պէյրութի արեւմտեան շրջանի իսլամ կազմակերպութեանց պատասխանատուներուն հետ մշակուած բարեկամական յարաբերութեանց, համակարգիչ կեդրոն մը դարձաւ: Երիտասարդացի հեռատես եւ նուիրեալ ղեկավարները յաջողեցան հարիւրաւոր հայերու երթեւեկը ապահովել շրջաններուն միջեւ, արգիլել հայ տուներու եւ հաստատութիւններու բռնագրաւումը, ինչպես նաեւ ստոյգ մահէ փրկել առեւանգումի եւ կողոպուտի ենթարկուած տասնեակ մը հայ երիտասարդներ»:[90]

ՀԵԸ-ի անդամները սեփական ուժերով կազմակերպեցին նաեւ բժշկական շտապ օգնության ծառայություն, վառելանյութի եւ հացի տագնապի շրջանում այդ ամենով ապահովում էին ժողովրդին՝ կապ հաստատելով տեղական նպաստաբաշխ կազմակերպությունների հետ: Այս եւ ուրիշ շատ գործերից զատ, ՀԵ Ընկերակցության անդամների համար պատվի հարց էր իրենց նորակառույց Կենտրոնի անվտանգությունը. նրանք «...գիշեր-ցերեկ պաշտպանեցին Մանուկեան կեդրոնը, որ կրնար զինուորական թէ ժողովրդային անսանձ տրամադրութեանց թիրախ ըլլալ եւ աւերակի վերածուիլ, եթէ իմաստուն վարիչները չշահէին կռուող կողմերու պատասխանատուներուն բարեկամութիւնը եւ զայն ճանչցուցած չըլլային իբրեւ յոյսի, օգնութեան եւ բարոյական քաջալերանքի յարգուած կեդրոն մը»:[91]

Լիբանանում ընթացող դեպքերը մեծ տագնապ առաջացրին թե՛ սփյուռքում եւ թե՛ Հայաստանում: Արդեն երկար տարիներ, եւ հատկապես Երկրորդ Աշխարհամարտից հետո, Լիբանանի հայ համայնքը իրավամբ դիտվում էր որպես արտասահմանի հայության մշակութային եւ քաղա-

քական կենտրոն: Լիբանանում է, որ հայերը հնարավորություն էին ստացել անկաշկանդ ծավալել լիարժեք ազգային գործունեություն, ինչի վկայությունն էին բազմաթիվ հայկական վարժարանները, պարբերականները, ակումբները եւ այլ հաստատությունները: Այստեղ էին տեղակայված համասփյուռքյան կազմակերպությունների՝ կուսակցությունների եւ նրանց հովանու տակ գործող կրթամշակութային միությունների կենտրոնները: Դրա հետ մեկտեղ, տարեցտարի՝ երկրի զարգացմանը զուգընթաց, բարելավվում էր լիբանանահայերի տնտեսական վիճակը, ինչը հնարավոր էր դարձնում առավել հաջողությամբ լուծել ազգային ինքնության պահպանման եւ զարգացման հետ կապված տարաբնույթ խնդիրները: Եվ բնավ պատահական չէր, որ Ալեք Մանուկյանը, խոսելով Լիբանանի եւ Սիրիայի հայ համայնքների մասին, բնութագրում էր դրանք, որպես «արտասահմանյան Հայաստաններ»: Այս ամենի գիտակցությամբ սփյուռքը՝ անհատներն ու կազմակերպությունները շտապեցին օգնության հասնել Լիբանանի իրենց հայրենակիցներին: Այդ օգնությունը, ամեն բանից զատ, հետապնդում էր մեկ հիմնական նպատակ՝ պահպանել այդ համայնքը, կանխել նրա հնարավոր կազմալուծումը, հատկապես, հայության արտագաղթը Լիբանանից:

1976թ. հունվարի 5-ին հրապարակվեց ՀԲԸ Միության եւ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի միացյալ կոչը, որը հրավիրում էր ամերիկահայությանը մասնակցել Լիբանանահայության Օգնության Հանգանակությանը: Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովի ատենապետ Էդուարդ Մարտիկյանի գլխավորած երկու հանգանակությունների ընթացքում գոյացավ ավելի քան 1.000.000 դոլար, որը հանձնվեց Նպաստաբաշխ Հանձնախմբին՝ Լիբանանի հարյուրավոր հայ ընտանիքների կարիքները հոգալու համար:

1976թ. հոկտեմբերին Նյու Յորքում կայացած ՀԲԸ Միության 63-րդ Ընդհանուր ժողովում, նախագահ Ալեք Մանուկյանը, տեղեկացնելով այդ գումարի առաջին մասնաբաժինը Լիբանան ուղարկելու մասին, հատուկ շեշտում էր. «Համայն հայութեան համար ամէնէն էական հարցը, սակայն, Լիբանանի կեդրոնական կարեւորութիւն ներկայացնող հայ գաղութին կազմալուծման ամէն գնով արգելք հանդիսանալն է»: Այնուհետեւ, ընդգծելով, որ արտագաղթից հետո էլ դեռ 150.000 հայ շարունակում է մնալ Լիբանանում, Ալ. Մանուկեանը անում էր ուշագրավ մի նախազգուշացում. «Այս պայմաններուն տակ հայկական բոլոր կազմակերպութեանց եւ բանիմաց ազգայիններու պարտականութիւնն է նախ խուսափիլ տարածելէ շշուկներ եւ զրոյցներ կամ փորձելէ քայլեր, որոնք հեռաւոր չափով նոյնիսկ կրնան աւետեաց երկիրներու խոստումը պարզել անտեղեակներու: Կեանքի ապահովութիւնը միայն մարմնի փրկութիւն չէ: Տարբեր է երբ անհատներ եւ ընտանիքներ կամովին, գիտակցաբար եւ քաջաբար կը հաստատուին նոր կայքեր, նոր կեանքի մը ի խնդիր, եւ հիմնովի՛ն տարբեր երբ զանգուածներ գաղթականի ցուպը ձեռք կ՚առնեն մղուած հեռուներէն թեկուզ մարդասիրաբար օրօրուած յոյսի աղօտ ճրագներէ»:[92]

Սակայն իրավիճակը Լիբանանում շարունակում էր մնալ լարված: Ավելին, 1978թ. հոկտեմբերին Բեյրութի հայահոծ թաղամասերը (Բուրջ Համուդ, Խալիլ Բադավի, Նոր Հաջը, Էշրեֆիյե եւ այլն) թիրախ դարձան ուժեղ ռմբակոծությունների եւ քրիստոնյա փաղանգավորների ու շամունականների մարտական ջոկատների հարձակման: Այդ ծանր օրերին ՀԲԸ Միության Լիբանանի Շրջանակային Ժողովը շարունակեց անմիջական օժանդակություն հասցնել տեղի հայությանը՝ դրամական եւ նյութական նպաստների ձեւով: Այն իր գործոն մասնակցությունը բերեց նույն այդ նպատակով 15 կազմակերպություններից կազմված Միջ-Բարեսիրական Միության, ինչպես նաեւ Տնտեսական Բարելավումի Հայկական Հիմնադրամի (AFED) աշխատանքներին: Բեյրութի Ալեք Մանուկեան Կեդրոնը եւ դարմանատունը, Անթիլիասի եւ Թրիփոլիի ակումբները, Զահլեի Ալեք Մանուկեան Մշակութային Տունը հարյուրավոր հայ ընտանիքների համար դարձան ապաստարան: Ստեղծված իրավիճակում ՀԲԸ Միությունը նորանոր դրամական նպաստներ էր հատկացնում առանց որեւէ խտրության թե՛ անհատ մարդկանց եւ թե՛ ազգային հաստատություններին՝ Ազգային առաջնորդարանին, Հայ Կաթոլիկ եկեղեցու պատրիարքարանին, Ավետարանական միությանը, ինչպես նաեւ Թէքէեան վարժարանին, Նշան Փալանճեան ճեմարանին եւ Սահակեան-Մկրտիչեան քոլեջին, մշակութային եւ բարեսիրական միություններին եւ այլն:

Բայց նույն այդ տարիներին՝ 1983-1984թթ., ՀԵ Ընկերակցության անդամները անզոր եղան պաշտպանելու իրենց Կեդրոնը, երբ այն դարձավ ռմբակոծությունների թիրախ: Նրանք, սակայն, շենքը զերծ պահեցին գրավումից եւ հետամուտ եղան նրա հնարավորին չափ արագ վերանորոգմանը: ՀԵԸ-ի ղեկավարությունը, այնուամենայնիվ, ստիպված էր հաշվի առնել նրա հետագա օգտագործման հետ կապված դժվարությունները. «Իբր հետեւանք Արեւմտեան Պէյրութէն դէպի Արեւելեան բաժին բնակչութեան տեղաշարժին, Արեւմտեան շրջանին մէջ գտնուող Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնը ներկայիս սովորականէն նուազ չափով կ՚օգտագործուի: Մասնաւոր յանձնախումբ մը կազմուած է

Արեւելեան Պէյրութի մէջ գտնելու յարմար վայր մը՝ ապագայ նոր Կեդրոնի մը համար»:[93]

Պատերազմի այդ ծանր օրերին մեծ վնասներ կրեցին նաեւ Միութեան Ալեյի մասնաճիւղի շենքը, Նահր շրջանի Անդրանիկ-Սեւան ակումբը եւ այլն: Չնայած այդ ամենին, ՀԵԸ-ն շարունակում էր գործել՝ օգտագործելով բոլոր հնարաւոր միջոցները: Այսպես, 1983թ. ամռանը ՀԵԸ-ի Անթիլիասի մասնաճիւղը կազմակերպեց 55 հոգիանոց սկաուտական խմբի բանակում-պտոյտը Հունաստանում եւ Կիպրոսում, ուր նրանք վայելեցին տեղի հայության հատուկ ուշադրությունը: Երկու տարի անց նրա մարզիկները մասնակցեցին Ժնեւում կայացած ՀԲԸ Միության 10-րդ Օլիմպիական Խաղերին: Նոյն 1985թ. Ալեք Մանուկեան Մշակութային հիմնադրամի օժանդակությամբ եւ Թէքէեան Մշակութային միության հետ գործակցաբար կազմավորվեց յոթանասուն հոգանոց երգի եւ պարի համույթ: Պատերազմի ողջ ընթացքում ՀԵԸ-ի որդեգրած գործելակերպը արդարացնում էր ՀԲԸ Միության Ընդհանուր ժողովի գնահատականը, համաձայն որի Ընկերակցությունը «...միայն խաղաղութեան շրջանի համար հիմնուած կազմակերպութիւն մը չէ, այլ՝ վտանգաւոր օրերուն իսկ պատրաստակամութիւն ու զոհաբերութեան ոգի ունեցող կազմակերպութիւն մը, որը չի զլանար իր նիւթաբարոյական աջակցութիւնը համայնքին»:[94]

Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ սկսվել էր 1975թ. ապրիլին, ավարտվեց 1991թ.: Նրա հետեւանքները աղետալի եղան երկրի եւ Լիբանանի ժողովրդի համար: 1991թ. հոկտեմբերին ՀԵԸ-ի Զապէլ Մովսիսեան Կեդրոնի սրահում կարդացած իր դասախոսության մեջ ՀԲԸ Միության Լիբանանի Շրջանակային Հաձնաժողովի ատենապետ, տնտեսագետ Հակոբ Ալթունյանը, անդրադառնալով այդ հարցին, բերում էր հետեւյալ թվերը. «Քաղաքացիական պատերազմի նախօրեակին, Լիբանանեան ճարտարարուեստը կը հաշուէր շուրջ 6.000 փոքր եւ միջակ գործատեղիներ, 150.000 գործաւորներով: 16 տարուան պատերազմը աղէտաբեր եղաւ երկրին ամբողջ տնտեսութեան, բայց ի մասնաւորի ճարտարարուեստին համար: Գործատուներուն կէսը, շուրջ 3.000, անյայտացան, որովհետեւ, կամ քանդուած էին, կամ կողոպտուած եւ այրած էին, եւ կամ լուծարքի ենթարկուած: Ատեն մը գործաւորներուն թիւը իջաւ մինչեւ 35.000-ի, բայց յետոյ կրկին բարձրացաւ մինչեւ 80.000-ի... շուրջ 500.000 լիբանանցիներ հեռացան իրենց երկրէն: Ընդհանրապէս երիտասարդ, աշխատելու եւ ստեղծագործելու ատակ, զարգացած ու ձեռներէց տարրն է որ մեկնեցաւ: Արաբական երկիրներ գացողները հոն արմատ չէին նետեր, այլ օր մը անպայման կը վերադառնան Լիբանան: Պարագան նոյնն է Եվրոպա, Աւստրալիա եւ կամ Ամերիկա ու Գանատա մեկնողներուն: Գացողներէն շատերը գացած են հոն հաստատուելու մտադրութեամբ»:[95] Բոլոր բերված թվերը ուղակիորեն վերաբերվում էին նաեւ լիբանանահայությանը, քանզի նրանց մի զգալի մասը ավանդաբար զբաղված էր հենց ճարտարարվեստի տարբեր ճյուղերում: Լիբանանի տնտեսության նման համատարած անկման արդյունքը եղավ մեծ թվով հայերի սնանկացումը, ընդհանրապես հայ համայնքի ֆինանսական ներուժի կրճատումը: Դա, իր հերթին, չէր կարող բացասաբար չանդրադառնալ լիբանանահայության, նրա տարբեր, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության եւ ՀԵԸ-ի գործունեության վրա:

Նույնն էր արտագաղթի պարագան: Նշված կես միլիոն արտագաղթած լիբանանցիների թվում էին նաեւ տասնյակ հազարավոր հայեր, որոնց զգալի մասը բնակություն հաստատեց ԱՄՆ-ում, Կանադայում եւ Արեւմուտքի այլ երկրներում: Զանգվածային նման արտահոսքի հետեւանքները հայ համայնքի, նրա անխտիր բոլոր կազմակերպությունների կենսունակության համար եղան խիստ բացասական:

Այս ամենի հետ մեկտեղ, պատերազմը ունեցավ եւ այլ բացասական հետեւանքներ ՀԲԸ Միության եւ նրա հաստատությունների գործունեության համար: Դա հայ բնակչության տեղաշարժերն էին հենց Բեյրութի ներսում: «Պատերազմէն առաջ, աւելի քան քառասուն հազար հայութիւն կար այսպէս բնորոշուած արեւմտեան Պէյրութի շրջաններուն մէջ: Այդ պատճառաւ, մեր գլխաւոր կրթական եւ երիտասարդական կառոյցները կը գտնուէին այդ շրջաններուն մէջ: Այժմ հայ զանգուածը տեղաւորուած է Նահր էլ Մօթէն մինչեւ Ծիւնի, եւ Անթիլիասէն մինչեւ Պէյթ Քոքոյի տարածութեան վրայ, ուր մենք շատ տկար ներկայութիւն ունինք»,- նշվում էր 1992թ. հոկտեմբերին Բեյրութում կայացած Լիբանանի ՀԲԸ Միության եւ ՀԵԸ վարչական մարմինների ընդհանուր ժողովում:[96]

Պատերազմի անդառնալի հետեւանքները հատկապես զգալի էին հայկական դպրոցների կյանքում: Այդ տարիներին շատ անգամներ անհնարին դարձավ նրանց գործունեությունը ընդհանրապես: Այսպես, 1975-1976 ուսումնական տարում Բեյրութում Միության դպրոցները բաց էին ընդամենը մոտ մեկ ամիս: Հաջորդ տարիներին Ցովակիմեան-Մանուկեան եւ Դարուհի Ցակոբեան վարժարանները ապահովության նկատառումով ստիպված էին իրենց աշխատանքը կազմակերպել Միության այլ դպրոցներում: Այս երկու վարժարանների քաղաքի արեւելյան մասում բնակվող աշակերտները հաստատվեցին Լեւոն Կ. Նազարեան դպրոցում, իսկ արեւմտյան մասում բնակվող աշակերտները՝ Ե. Տեմիրճեան դպրոցում եւ Զապէլ Մովսիսեան կենտրոնում: 1980թ. Միության Կենտրոնա-

կան Վարչությունը նույնիսկ ստիպված եղավ 125.000 դոլար տրամադրել՝ առավել ապահով վայրում գտնվող Անթիլիասի Կարմիրեան վարժարանի շենքի վրա լրացուցիչ 8 դասարաններ՝ Դ.Յակոբեան վարժարանի սանուհիների համար, կառուցելու: Այս տեղաշարժերը նպատակահարմար դարձրին նաեւ, որ նշված երկու երկրորդական վարժարանները, սկսած 1984թ., ունենան միացյալ ուսուցչական կազմ: Սակայն նույնիսկ այդ պայմաններում, դասերի հաճախակի ընդհատումները հարցականի տակ էին դնում հիմնական ուսումնական ծրագրի կատարումը: Այդ պատճառով մի շարք դեպքերում դպրոցների տնօրինությունը ստիպված էր լինում հրաժարվել որոշ առարկաների՝ գծագրության, կրոնի, երաժշտության, մարզանքի դասավանդումից: Չնայած թե՛ Միության տեղի մասնաճյուղի եւ թե՛ դպրոցների տնօրինության բոլոր ջանքերի՝ «Աղջկանց եւ տղոց միացեալ ուսումնառութիւնը բազմաթիւ դժուարութիւններ պատճառեց, որովհետեւ չկային բաւարար թիւով դաստիարակներ, ինչպես նաեւ դպրոցական տարածութիւն եւ սարքաւորում: Աշակերտութիւնը չափազանց ազդուած էր Լիբանանի մէջ տիրող եղծանիչ վարք ու բարքէն»:[97]

Ինչպես արդեն նշվեց, Լիբանանի հայության համար այդ տարիների ամենածանր հետեւանքներից էր նրա թվաքանակի կտրուկ նվազումը: Հայերի արտագաղթի արդյունքում, բնականաբար, նվազեց նաեւ Միության անդամների թիվը: Եթե մինչ պատերազմը Միության անդամների թիվը Լիբանանում աճում էր՝ 1973թ.՝ 4.271, 1975թ.՝ 4.750 անդամ, ապա արդեն 1979թ. այն կազմեց 3.757 անդամ: Այս թվերը ներառում են նաեւ Բեյրութի երկու երկրորդական վարժարանների սաներին, որոնք նույնպես Միության անդամներ էին: Ահավասիկ, քաղաքացիական պատերազմին նախորդած՝ 1974-1975 տարեշրջանում Յովակիմեան-Մանուկեան վարժարանում կար 351 եւ Դարուհի Յակոբեան վարժարանում՝ 347 աշակերտ, բայց արդեն 1978-1979 տարեշրջանում, համապատասխանաբար՝ 226 եւ 260 աշակերտ, 1984-1985թթ.՝ ընդամենը 195 եւ 209: Նույն տարիներին առավել մեծ չափով նվազեց աշակերտների թիվը Երուանդ Տեմիրճեան նախակրթարանում՝ 465-ից այն իջավ մինչեւ 126-ի: 1987թ. այս դպրոցի շենքը վաճառվեց, եւ դպրոցը հաստատվեց Ալեք Մանուկեան Կեդրոնում: Ամփոփելով այդ տարիներին լիբանանահայ դպրոցների քանակական կորուստների չափերը՝ Դարուհի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան միացյալ՝ Դարուհի-Յովակիմեան վարժարանի տնօրեն Ժիրայր Դանիելյանը գրում էր.

«1974-75 կրթական տարեշրջանին ...լիբանանահայ վարժարաններու թիւը կը գնահատուէր 51, ուր կ'ուսանէին շուրջ 21 հազար աշակերտներ: Եթէ այս թիւին վրայ աւելցնելու ըլլանք այդ ժամանակ գործող հայագիտական ուսմանց բարձրագոյն հաստատութիւնները, դպրեվանքերն ու արհեստագիտական կարգ մը վարժարաններ, կ'ունենանք շուրջ 60ի հասնող ընդհանուր թիւ մը: 1987-88 տարեշրջանին համար կատարուած վիճակագրական հետազոտութենէ մը կը պարզուի թէ լիբանանահայ վարժարաններու թիւը այդ տարի նուազած է եւ դարձած 44, իսկ կրթական հաստատութիւններու ընդհանուր թիւը եղած է՝ 54: Իսկ աշակերտութեան թիւը՝ 12.924...»: Այսինքն, վերջինների թիվը կրճատվել էր շուրջ 8 հազարով: Ծարունակելով համեմատությունները՝ Ժ.Դանիելյանը նշում է. «...1987-88 եւ 1990-91 տարեշրջաններուն միջեւ լիբանանահայ կրթական օջախներէն երկու ազգային վարժարաններ փակեր են իրենց դռները, իսկ նոյն ժամանակաշրջանին, աշակերտութեան ընդհանուր թիւը արձանագրեր է 985 աշակերտի նուազում, որ կը ներկայացնէ 7.62 առ հարիւրի համեմատութիւն մը»:[98]

Քաղաքացիական պատերազմի մեկ այլ բացասական հետեւանք էր նաեւ տեղական ոչ-հայկական վարժարաններ հաճախող հայ աշակերտների թվի աճը, ինչը, պայմանավորված էր նաեւ այլ պատճառներով: Այս երեւույթը նկատելի էր դեռեւս 1960-ական թթ., իսկ 1990-ականներին դարձավ արդեն մտահոգության առարկա: Վերլուծելով այս երեւույթը՝ Ժ.Դանիելյանը գրում է. «Հայութեան համախումբ ներկայութիւնը որոշ թաղամասերու եւ շրջաններու մէջ՝ ատենին կը ստեղծէր յարմար մթնոլորտ եւ միջավայր ի նպաստ թաղային հայկական վարժարաններու, որոնք գաղափարական, միութենական, հայրենակցական պատկանելիութեամբ եւ ուղղութեամբ՝ իրենց կը քաշէին գաղափարակից ու համակիր շրջանակներու ծնողներն ու հետեւաբար՝ աշակերտները:

16-ամեայ պատերազմէն առաջ ի՛սկ եւ անոր ընթացքի՛ն ալ հայկական թաղամասերու եւ շրջաններու դիմագիծն ու նկարագիրը զգալապէս յեղաշրջուեցան: Տնտեսական աւելի բարենպաստ պայմաններ, միացած աւելի ուշ ստեղծուած ապահովական եւ այլ ազդակներու, հայ համայնքի աշխարհագրա-ազգագրական կերպարանքը հիմնովին փոխեցին: Յատկապէս բարեկեցիկ կարգ մը շրջանակներու մօտ ստեղծուեցաւ մեծամտութեան եւ գերակայութեան բարդոյթ՝ իրենց զաւակները ուղարկելու ծանօթ եւ հռչակ վայելող օտար, ոչ-հայկական կրթական հաստատութիւններ: Ասոնց օրինակին հետեւեցան նաեւ տնտեսական նուազ կարողութեան տէր ընտանիքներ ալ»:[99]

Դրա հետ մեկտեղ, հեղինակը մատնանշում է նաեւ հետեւյալ կարեւոր գործոնը. «Վերջին տարիներուն, երբ լիբանանեան պետութիւնն ու երկրին մակարդակ ունեցող գլխաւոր համալսարանները դարձած են շատ

աւելի պահանջկոտ եւ խստապահանջ, բազմաթիւ հայ ծնողներ սկսած են մտածել, թէ հայկական վարժարաններուն ուսումնա-կրթական մակարդակը համապատասխան բարձրութեան վրայ չէ, եւ թէ հայերէն լեզուի, հայոց պատմութեան եւ ընդհանրապէս հայերէնով դասաւանդուող առարկաներու ուսուցումը անտեղիօրէն կը խճողէ հայ աշակերտին դասացուցակը, եւ հետեւաբար՝ պատճառ կը դառնայ որ ան պահանջուած եւ բաւարար կերպով չպատրաստուի պետական թէ համալսարանական հետզհետէ խստացող քննութիւններուն: ...Ինչ հարկ հայերէն լեզուի, հայոց պատմութեան եւ առ հասարակ հայերէն լեզուով դասաւանդուող առարկաներու ...մանաւանդ որ անոնք ոչ մէկ աղերս ունին պետական թէ համալսարանական քննութիւններուն եւ պահանջքներուն հետ: Այլ խօսքով,-եզրակացնում է Ժ.Դանիելեանը,-անոնք, կարգ մը ծնողներ, կը հանդիսանան ջատագովները այդ դասանիւթերուն հայկական վարժարաններու դասացուցակներէն ի սպառ վերացումին: Այլ խօսքով՝ անոնք կը մեղանչեն ու կը դաւադրեն, կամայ-ակամայ, գիտակցօրէն թէ անգիտակցօրէն, հայ դպրոցին հիմնական առաքելութեան եւ անգամ ֆիզիքական ողջ ոգեկան գոյութեան դէմ»:[100]

Դեպի վերածնունդ

Նման պայմաններում, երբ ՀԲԸ Միությունը Լիբանանում հայտնվել էր տարբեր մարտահրավերների առջեւ, խիստ կարեւոր էր դառնում նրա բոլոր անդամների հավատը հայ համայնքի ապագայի հանդեպ: Նրանք կարիք ունեին որոշակի խրախուսիչ ազդակների, աջակցության եւ դրանք ի հայտ եկան շատ արագ: Դեռեւս պատերազմի տարիներին Միությունը Անթիլիասի շրջանում Պօղոս Կարմիրեան վարժարանի հանդիպակաց կողմում գնել էր երկու հողատարածք՝ ապագայում այստեղ երիտասարդական նոր համալիր կառուցելու նպատակով: Պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակը, կարծես, հարցականի տակ էր դրել այդ ծրագրի իրագործումը ընդհանրապես: Բայց ահա, արդեն 1992թ. վերոհիշյալ ժողովում հայտարարվեց այդ նոր շինության մոտալուտ հիմնարկեքի մասին:

Այս գործի հաջողությունը մի նոր ապացույց էր Միության այն հին եւ մշտապես կենդանի ավանդույթի, երբ նրա անհատ անդամների եւ հատկապես առաջնորդների կարողությունները ի սպաս են դրվում Միության, ողջ ժողովրդի կարիքները հոգալու համար: Տվյալ դեպքում այդ դերում հանդես եկան Տեմիրճյան եւ Մանուկյան ընտանիքները: Արդեն նշվել էր, որ տարիներ առաջ Երվանդ Տեմիրճյանի միջոցներով հիմնադրվել էր իր

անունը կրող դպրոց Բեյրութում: Իսկ այժմ Երվանդ Տեմիրճյանի զավակներն էին 500.000 դոլար նվիրաբերում Միության նոր կենտրոնի կառուցման համար: Նույն նպատակին (այդ թվում հողատարածքի գնման համար) տրամադրվեց նաեւ Տեմիրճեան վարժարանի շենքի վաճառքից գոյացած եւս 500.000 դոլարը: Հարկ է նշել, որ մինչ այդ Տեմիրճյանի զավակներից Սարգիս Տեմիրճյանը իր կնոջ՝ Սեդայի հետ 1.500.000 դոլար էին նվիրաբերել Միությանը, որից 250.000-ը հատկացվեց Լիբանանում Միության դպրոցների կարիքավոր աշակերտներին օժանդակելու հիմնադրամին:

Խոսելով Տեմիրճյան ընտանիքի մասին՝ Միության Լիբանանի Շրջանակային Հանձնաժողովի ատենապետ Հակոբ Ալթունյանը հատուկ կարեւորեց նաեւ ՀԲԸ Միության նախագահ Լուիզ Մանուկյան-Սիմոնի վերաբերմունքը Լիբանանի հայության հանդեպ. «Անոնք վարակեցին գոնէ մէկ հոգի: Տկն. Լուիզ Մանուկեան-Սիմոնը: Անվիճելիօրէն տպաւորուած Տեմիրճեաններու հաւատքէն Լիբանանահայ գաղութին հանդէպ, մեր նախագահուհին իր կարգին ինքնաբուխօրէն Երիտասարդական Կեդրոնի ծրագրին նուիրեց 300.000 տոլար: Երբ լուրը ստացանք, մեզի համար բոլորովին անակնկալ մըն էր: Քաղաքականապէս տակաւին ոչ բոլորովին կայունացած Լիբանանի մէջ այս կարեւորութեամբ գումարի մը ներդրումը՝ անսպասելի էր: Երբ կը խորհրդածենք,-շարունակում էր Հ.Ալթունեանը,-կը յանգինք այն եզրակացութեան թէ մեր ղեկավարութեան դիրքին մէջ փոխուած բան չկայ: Անտարակոյս, ժեսթը կրկին արդիւնքն է հաստատ հաւատքին մեր Միութեան առաքելութեանը ու մեր ժողովրդի յաւերժականութեանը հանդէպ: Բայց այն արտայայտութիւնն է նաեւ վեհանձն հոգիի մը, որուն համար ամենամեծ զոհողութիւնները կը փոքրանան նպատակի մեծութեան առջեւ»:[101]

Արժեւորելով Տեմիրճյան ընտանիքի նվիրատվությունը՝ Անթիլիասի ՀԲԸ Միության նոր կենտրոնը անվանվեց Երուանդ Տեմիրճեան Կեդրոն:

Եվ հենց այս նորակառույց կենտրոնում էլ 1998թ. հոկտեմբեր ամսին գումարվեց ՀԲԸ Միության հերթական՝ 80-րդ Ընդհանուր ժողովը: Այդ ժողովը խորհրդանշական էր մի քանի առումներով: Նախ, այն վերջինն էր անցնող XX-րդ դարում, այն դարում, որի առաջին տարիներին ծնունդ առավ Միությունը եւ որի ողջ ընթացքում գործեց թե՛ Հայաստանում եւ թե՛ սփյուռքում: «Այս Ընդհանուր Ժողովին ընթացքին, չեմ կրնար մտահան ընել,-իր ճառում ասաց Միության նախագահ Լուիզ Մանուկյան-Սիմոնը,-թէ հոս հաւաքուած ենք 92 տարիներ ետք երբ նուիրեալներու փոքրաթիւ խումբ մը, առաջնորդութեամբ Պօղոս Նուպարի, հիմնեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը: Ցաճախ ինքզինքս հարց

կու տամ թէ արդեօք անոնք, իրենց ամենավառ տեսիլքով, կրնայի՞ն երեւակայել որ ՀԲԸ Միութիւնը, այսքան տարիներ ետք, պիտի մնար միացեալ, ուժական համաշխարհային կազմակերպութիւն մը, թէ ՀԲԸ Միութիւնը, 92 տարիներ ետք, կրկին անգամ պիտի ունենար ուրիշ սերունդ մը նուիրեալ ղեկավարներու եւ անդամներու, որոնք 22 երկիրներու մէջ պիտի շարունակէին իրականացնել իրենց երազը»:[102]

Այս ժողովը խորհրդանշական էր նաեւ այն առումով, որ առաջին անգամ՝ Միության Ընդհանուր ժողովը գումարվում էր Լիբանանում: Դրանով իսկ Միությունը, կարծես, իր հարգանքն էր արտահայտում այդչափ մեծ փորձություններին դիմագրաված իր տեղի մասնաճյուղին եւ միաժամանակ իր հավատն էր արտահայտում լիբանանահայության ապագայի, նրա կենսունակության հանդեպ: Այն, որ այդ հավատը անհիմն չէր, վկայում էին հենց իրենք՝ Միության տեղի անդամները: Ընդհանուր ժողովի օրերին Բեյրութում կազմակերպվեց ՀԲԸՄ-ՀԵԸ-ի Երիտասարդական Միավորների փառատոնը, որին մասնակցեցին Միության Լիբանանի բոլոր խմբերը՝ Դարուհի Յակոբեան եւ Յովակիմեան-Մանուկեան, Պօղոս Գ.Կարմիրեան եւ Լեւոն Կ.Նազարեան վարժարանի սաները, ՀԵ Ընկերակցության փողային նվագախումբը, համալսարանականների խումբը, «Անդրանիկ» բասկետբոլի տղաների եւ աղջիկների թիմերը, սկաուտների տարբեր տարիքային խմբերը եւ այլք:

Ընդհանուր ժողովի օրերին Բեյրութում տեղի ունեցավ նաեւ ՀԲԸ Միության Նուպար Նազարեան շենքի բացումը, որին ներկա էին Միության Կենտրոնական Վարչության անդամները, Լիբանանի արտաքին գործերի նախարարը, ՀՀ դեսպանը եւ պաշտոնական այլ անձինք: Այդ գեղակերտ շենքը կառուցվել էր բարերարությամբ հայտնի Նազարյան ընտանիքի, որի ներկայացուցիչները՝ Կարպիս եւ Նազար Նազարյանները, թե՛ Լիբանանում եւ թե՛ ԱՄՆ-ում Միության ղեկավարներներից են: Նազարյան ընտանիքը շենքը նվիրաբերել էր ՀԲԸ Միությանը, որն էլ այն տրամադրեց Հայաստանի Հանրապետությանը, որպես ՀՀ դեսպանության եւ հյուպատոսության պաշտոնատեղ եւ բնակավայր: Այս արարողությունը, որին մասնակցեցին նաեւ ազգային երեք կուսակցությունների, լիբանանահայ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները, ամենակարեւոր իրադարձությունը եղավ ոչ միայն ՀԲԸ Միության, այլեւ ողջ Լիբանանի հայության կյանքում:

Եգիպտոսում

«Եթէ վաղը երիտասարդներն են որ պիտի շարունակեն սկսուած գործը, ներկայ պահանջներուն համաձայն եւ արդիական ըմբռնումով, պէտք է անոնք կազմեն առողջ հաւաքականութիւն մը, գիտակից իրենց կոչումին... Այդ կանխահոգութեամբ է որ ճամբայ ելանք, ջանադիր ըլլալով հետզհետէ գաղութներու մէջ Միութեանս հովանու ներքեւ համախմբելու եւ կամ կազմակերպելու հայ երիտասարդները, եւ մանաւանդ երէկի որբերը, որ, օտար հողերու վրայ աստանդական, օտարացումի եւ այլասերումի ենթակայ ըլլալով ազգային տաք հոգատարութեան պէտք ունին առաւել քան երբեք»:[103] ՀԲԸ Միության 1936թ. տարեգրքում ձեւակերպված այս նպատակի իրագործումը, անշուշտ, չէր կարող սահմանափակվել լոկ Սիրիայով եւ Լիբանանով: Ուստի եւ բնական է, որ գրեթե միաժամանակ Միությունը այդօրինակ գործունեություն ծավալեց Արեւելքի այլ երկրներում եւս: 1930-ականների վերջին - 1940-ականների սկզբին Երիտասարդական Ընկերակցություններ հիմնվեցին Եգիպտոսում, Իրաքում (Բաղդադ), Իրանում (Թեհրան), Պաղեստինում (Երուսաղեմ, Հայֆա, Յաֆա), որոնք աշխույժ գործունեություն ծավալեցին մշակութային եւ սպորտի ասպարեզում:

1934թ. Միությունը ձեռնամուխ եղավ Եգիպտոսում երիտասարդական կազմակերպության ստեղծմանը: Նկատի առնելով, սակայն, Եգիպտոսի Շրջանակային Հանձնաժողովի կարծիքը, որ «...Գահիրէի մէջ չի բաւեր Բարեգործականի Տուն մը միայն հաստատել, այլ անհրաժեշտ է սեփական մարզադաշտ մը եւս ունենալ, տեղւոյն երիտասարդութիւնը Միութեանս հովանիին ներքեւ համախմբելու համար...»,[104] ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը որոշեց հատուկ միջոցներ տրամադրել նաեւ այդ նպատակով: Դրա արդյունքը եղավ Կահիրեում Նուպար Մարզական Միութեան կազմավորումը, որի նպատակն էր՝ ըստ կանոնագրի, «Գահիրէի հայ երիտասարդութեան մարզական, մարմնակրթական եւ մշակութային զարգացման սատարել: Նուպար Մարզական Միութիւնը քաղաքական եւ կուսակցական որեւէ հանգամանք չունի»:[105] 1936թ. նրա մարզական տարբեր խմբերում (ֆուտբոլ, բասկետբոլ, թենիս եւ այլն) ընդգրկված էին շուրջ 300 երիտասարդ աղջիկներ եւ տղաներ:

1951թ. Ալեքսանդրիայում Միության Բարերար անդամ Կարապետ Հեքիմյանի տրամադրած միջոցներով հիմնվեց Հէքիմեան Մարզարանը՝ թենիսի, բասկետբոլի եւ այլ մարզադաշտերով, ինչպես նաեւ հանրային գրադարան: Հոլ տարի անց քաղաքի Քան տը Սեզար հայաշատ թաղա-

մասում երիտասարդությունը ունեցավ նոր հավաքավայր-մարզարան, որի շնորհիվ զարկ տրվեց արիների եւ արենուշների շարժմանը նույնպես:

Սկսած 1950-ից Նուպար Մարզական Միությունը՝ իր 200-250 անդամներով, սերտորեն համագործակցեց Հելիոպոլիսի ՀՄԸՄ հետ: 1953թ. նրանց կողմից կազմակերպված Եգիպտահայ Օլիմպիական Տարին առաջին անգամ հնարավոր դարձրեց տեղի բոլոր հայկական մարզական միությունների համատեղ ելույթները: Նմանատիպ մի միջոցառում կազմակերպվեց նաեւ 1972-ին՝ բասկետբոլի մրցաշարք, որին մասնակցեցին տարբեր քաղաքների հայ մարզական միությունները: Ժամանակի ընթացքում Հելիոպոլիսի մարզադաշտը իր հայաշունչ մթնոլորտի շնորհիվ դարձավ համայնքի ազգային կյանքի կարեւոր կենտրոններից մեկը:

Թեեւ սպորտը շարունակում էր մնալ տեղի երիտասարդական միության գործունեության հիմնական ասպարեզը, Կահիրեի ՀԲԸ Միության մասնաժողովի նախաձեռնությամբ 1957թ. ստեղծվեց նաեւ Երիտասարդաց Մշակութային Մարմին: Այդ մարմնի առաջին ձեռնարկներից էր վեցամսյա հայագիտական դասընթացները, որը վարում էր հայտնի պատմաբան Արշակ Ալպոյաճյանը:

1980-ական թթ. Եգիպտոսի հայության թիվը շարունակվող արտագաղթի հետեւանքով զգալիորեն նվազեց: Եթե 1950-ականներին տեղի հայությունը հաշվվում էր շուրջ 45.000 մարդ, ապա երեք տասնամյակ անց կազմում էր շուրջ 10.000: Չնայած դրան, թե՛ Կահիրեի եւ Ալեքսանդրիայի հայ համայնքները եւ թե՛ այդ քաղաքների ՀԲԸ Միության մասնաճյուղերը եւ Նուպար երիտասարդական-մարզական կազմակերպությունները շարունակում էին իրենց աշխույժ գործունեությունը:

ՀԲԸ Միության Եգիպտոսի Շրջանակային Հանձնաժողովի գործունեությունը նկատելիորեն աշխուժացավ 1990-ականների կեսերից, ինչը պայմանավորված էր Սաթենիկ Զաքըրի նվիրատվությամբ: Սաթենիկ Զաքըրը՝ Միության ականավոր գործիչ Ջանիկ Զաքըրի (նրա մասին խոսվեց գրքի նախորդ գլուխներում) այրին, դեռեւս 1976թ. Միությանն էր նվիրաբերել իր մոտ 4 հազար մետր տարածքի վրա գտնվող առանձնատունը՝ Կահիրեի դեսպանատների թաղամասում, ուր ապրեց մինչեւ իր մահը: Նրա մահից հետո առանձնատան փոխանցումը Միությանը առաջացրեց որոշ իրավական բարդություններ, որոնք հաղթահարվեցին միայն 1996թ.: Միության տեղական եւ կենտրոնական մարմինների որոշմամբ նվիրաբերված տարածքի մի մասը, ուր գտնվում էր առանձնատունը, խորհրդանշական վարձով հատկացվեց Հայաստանի Հանրապետության դեսպանատանը: Ինչպես նշում էր Միության Եգիպտոսի Շրջանակային Հանձնաժողովի ատենապետ Պերճ Թերզյանը, «Կարծէք թէ նախախնամական

բան մը կար, որ նուիրատուութեան ձեւակերպումը այնքան ուշանար, որ համընկնէր Եգիպտոսի մէջ ՀՀ դեսպանատան հաստատումին հետ»:[106] Այս շենքը Եգիպտացի լրագրողների կարծիքով, որպես ճարտարապետական կոթող լավագույններից է Կահիրեում հաստատված արտասահմանյան դեսպանատների մեջ եւ իրավամբ կոչվում է «Կահիրեի գոհար»:

Նվիրաբերած տարածքի մյուս մասի վաճառքից գոյացած գումարով հիմնվեց Սաթենիկ Զաքըր հիմնադրամը, եւ հնարավոր դարձավ իրականացնել մի շարք նոր ծրագրեր: Կրթական ծրագրի շրջանակներում Միությունը մեծագումար կրթաթոշակներ է հատկացնում այդ երկրի տարբեր ուսումնական հաստատություններում սովորող հայ երիտասարդներին: Հատկապես կարեւոր է նրա օժանդակությունը մասնավոր համալսարանների ուսանողներին (շուրջ 40 հոգի), ուր ուսման վարձը շատ բարձր է: Պ.Թերզյանի խոսքերով «...կ'իրականացուի նաեւ կրթական համագործակցութիւն, մասամբ կը հոգանք Հայաստանի Համալսարանէն, Եգիպտոսի մէջ կատարելագործման շրջան մը անցնելու ժամանած ուսանողներուն ծախսերը, նաեւ... արդէն երեք տարիէ ի վեր կանոնաւոր կերպով Բարեգործականը յատկացումներ կը կատարէ Եգիպտոսի համալսարաններու կարիքաւոր ուսանողներու ֆոնտին, այդպիսով մեր մասնակցութիւնը կը բերենք մեզ հիւրանկալող երկրին իրագործումներուն»:[107]

Երկրորդ՝ մարդասիրական բնույթի ծրագիրը իրագործվում է այդ նպատակով ստեղծված ընկերային օժանդակության բաժնի միջոցով: Այդ ծրագրի շրջանակներում ամսական դրամական նպաստներ են հատկացվում համայնքի անապահով տարեց մարդկանց, որոնք անվճար ապահովվում են նաեւ դեղորայքով, բժշկական խնամքով եւ այլն: Ի տարբերություն այս երկուսի, Եգիպտոսի Շրջանակային Հանձնաժողովի հրատարակչական գործունեությունը ունի ոչ միայն տեղական, այլեւ համահայկական կարեւորություն: Այդ են վկայում արաբերենով հրատարակված հետեւյալ գրքերը. «Հայերը Եգիպտոսի մէջ 19րդ դարուն» մենագրությունը, Եգիպտոսի արդի գեղանկարչության հիմնադիրներից մեկի՝ Երվանդ Տեմիրճյանի եւ ականավոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի գործերի ալբոմները, «Հայ բանաստեղծութեան ծաղկաքաղ» ժողովածուն եւ այլ գրքեր: Հայ ժողովրդի արդի պատմության ուսումնասիրման առումով հատկապես կարեւորվում է 1915-1998թթ. լույս տեսած եգիպտահայ մամուլի ամբողջական հավաքածուների նկարահանումը մանրաժապավեններին (միկրոֆիլմեր), որոնց մեկական օրինակը ուղարկվեց Հայաստան եւ Փարիզ՝ Նուպարեան Մատենադարան: Դրանով իսկ ոչ միայն ապահովվեց եգիպտահայ մամուլի պահպանումը, այլեւ հնարավոր դարձավ դրանց մասնագիտական օգտագործումը:

Նույն՝ Սաթենիկ Զաքը հիմնադրամի մեկենասությամբ իրականացվում է նաեւ արաբ եւ հայ հեղինակների հայագիտական գործերի հրատարակությունը: Այդ ծրագրի շրջանակներում 1998թ. հունվարից Կահիրեի «Արեւ» օրաթերթը հրատարակում է արաբերեն լեզվով ամենամսյա «Ցաւելուած»: Նրա խմբագիր՝ պատմաբան Մոհամմատ Ռեֆաաթի խոսքերով՝ «...այս պարբերականը պիտի ծառայէ եգիպտացիներուն ներկայացնելու հայ համայնքի կենցաղը, համայնք մը որ կը պահէ իր ինքնութիւնն ու լեզուն, թէեւ հայերը շատ շուտով եւ յաջողապէս կը վարժուին զիրենք շրջապատող ժողովուրդներուն»:[108] Հազար օրինակով հրատարակվող այս «Ցաւելուած»-ը առաջին իսկ համարից «յատիշտակուած» է եգիպտացի մտավորականների կողմից եւ արժանացել է Եգիպտոսի Պատմական Ուսումնասիրությունների Միության բարձր գնահատանքին:

Իրաքում

Արեւելքի երկրներին այդչափ բնորոշ անկայուն ներքաղաքական իրավիճակը, նրանց մեծ մասում ամբողջատիրական վարչակարգերի հաստատումը անխուսափելիորեն բացասաբար հետեւանքներ են ունեցել տեղի հայ համայնքների կենսագործունեության վրա: Դրա ամենաթարմ օրինակներից է Իրաքը, որը մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը մտնում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ: Այստեղ՝ Բաղդադում ՀԲԸ Միության մասնաճյուղը հիմնվել էր դեռեւս 1911թ., սակայն պատերազմը սկսվելուն պես նրա ղեկավարները նահատակվեցին թուրքական իշխանությունների կողմից: Անգլիական զորքերի կողմից Բաղդադը գրավելուց հետո, ՀԲԸ Միության վերակազմավորված մասնաճյուղը ծավալում է աշխույժ գործունեություն: Հատկապես կարեւոր եղավ նրա օգնությունը այստեղ հայտնված հայ տարագիրներին, մասնավորաբար վերը հիշատակած Նահր էլ Օմարի որբանոց-մայրանոցը Պորտ Սայիթ տեղափոխելու գործում: Հետագայում եւ հատկապես Երկրորդ Աշխարհամարտից հետո, երկրի աստիճանաբար զարգացմանը զուգընթաց կայունացավ նաեւ տեղի հայ համայնքի կյանքը: Գործում էին տարբեր համայնքային կազմակերպություններ, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության մասնաճյուղը, մարզական ակումբը, Սայաթ-Նովա երգիպարի եւ Մասիս աշուղական խմբերը, Հակոբ Պարոնեան թատերախումբը, սկաուտական եւ մարզական տարբեր խմբեր եւ այլն: Սակայն, սկսած 1980թ., համայնքը մեծապես տուժեց երկրում տիրող իրավիճակից: Իրաք-իրանյան պատերազմը (1980-1988), 1990թ. Պարսից ծոցի պատերազմը, երկրում տիրող բռնատիրական կարգերն ու տնտեսական ծանր վիճակը, այս ամենը խթանեց իրաքահայերի արտագաղթը եւ սահմանափակումների ենթարկեց նրանց համայնքային գործունեությունը: Իսկ արդեն XXI դ. Իրաքի ողջ ժողովրդին սպասում էին նոր փորձություններ՝ կապված Սադամ Հուսեյնի բռնատիրությունը տապալելու պատրվակով՝ 2003թ. անգլո-ամերիկյան զինված ներխուժման հետ: Անցնող 13 տարիների ընթացքում ՀԲԸ Միության կենտրոնը առաջին անգամ հնարավորություն ստացավ անմիջական կապ հաստատել Բաղդադում իր մասնաճյուղի հետ եւ տեղեկանալ տեղի հայության վիճակին: «Կեանքը ինքնին դժուար էր արդէն անցնող տասնամեակներուն,- հայտնում էր իրաքահայ մի կին,- բայց, մենք մեզ կրցած էինք ձեւով մը հաշտեցնել տիրող պայմաններուն հետ: Անցնող ռեժիմը ցանկալի չէր, անկասկած: Իսկ այս օրերուն՝ մեր կեանքը տակնուվրայ եղած է: Անապահովութեան զգացումը ամէնէն տագնապալիցն է բոլորիս համար: ...Որքան որ ալ անգործութիւնը, ելեկտրականութեան եւ ջուրի պակասը, տեղական հեռախօսային ցանցի չգոյութիւնը իւրաքանչիւրը իր կարգին անպատեհութիւններ կը ստեղծէ, սակայն՝ վայրագութիւնն ու ռմբակոծումները մեր առօրեային գլխաւոր սարսափն են»:[109]

Ստեղծված պայմաններում Միության մասնաճյուղը՝ կենտրոնի նյութական օժանդակությամբ կազմակերպեց նպաստների բաշխումը հարյուրավոր, առավել կարիքավոր ընտանիքներին: Միության անդամների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ նրա գրասենյակը զերծ պահել կողոպուտից. ՀԲԸ Միության «...Կեդրոնը դարձած է կարեւոր հանդիպման վայր՝ գործէն ետք հաւաքուելու եւ իրարու վիճակէն տեղեակ մնալու»: Անտեսելով բոլոր տեսակի դժվարությունները՝ մասնաճյուղը կազմակերպեց Ուրբաթօրեայ Հայ Լեզուի դասընթացները, որին մասնակցեցին շուրջ 60 աշակերտներ, իսկ հոկտեմբեր ամսին՝ Մշակութային ամսվա առիթով նաեւ ավելի քան 300 հանդիսատեսներին ներկայացրեց հատուկ երաժշտական-գեղարվեստական հայտագիր: Ուշագրավ է, որ մեկնաբանելով թե՛ այս միջոցառումը եւ թե՛ Միության երիտասարդ համալսարանականների պատրաստած հումորով լի «հայոց- պատասխանի ֆիլմը», մասնաճյուղի պատասխանատուներից Մ.Շեհրանյանը գրում էր. «Կեանքը դժուար է այսօր Պաղտատի մէջ, մեր նպատակը մի քանի ժամուայ ինքնամոռաց խնդուքի պահեր ստեղծել է»: Բայց այս ամենի հետ մեկտեղ, Միության ՀԵ Ընկերակցության Օհան մարզական միության սկաուտական ավելի քան 150 հոգանոց խումբը նույն այդ ծանր եւ վտանգավոր օրերին մեկնեց Զաքո՝ տեղի Ս.Աստվածածին եկեղեցին բարեկարգելու նպատակով. «Այցելութիւնը մեծ ազդեցութիւն թողուց

երեխաներուն վրայ, առիթ տալով օգտակար դառնալու այդ շրջանի հայերուն, որոնք թէեւ մեծ մասամբ արդէն քրտախօս դարձած են, սակայն՝ հաւատացեալ հայ քրիստոնեայ ըլլալով զօրաւոր հաւատքով կապ կը պահեն հայ եկեղեցւոյ հետ»:[110]

Իրանում

Թեեւ 1950-ական թթ. Միության գործունեությունը ազգային կրթության ասպարեզում հիմնականում ընթացավ Լիբանանում եւ Սիրիայում, նրա աշխարհագրությունը, այդուհանդերձ, շատ ավելի լայն էր: Ավելին, Միության սեփական չորրորդ վարժարանը բացվեց 1952թ. վերջին, Իրանում:

Իրանի համայնքը, լինելով հնագույնը հայ գաղթաշխարհում, վերջնականապես ձեւավորվել է XVII դ.՝ հայերի հերթական բռնագաղթի հետեւանքով, երբ ստեղծվեցին Նոր Ջուղա կենտրոնով մնայուն թեմեր՝ իրենց ազգային եւ մշակութային կառույցներով: Պատմաբան Հովհաննես Փահլեւանյանը իրանահայերի պատմությանը նվիրված իր մենագրությունում գրում է. «Իրանահայությունը հոգու զարմանալի տոկունությամբ եւ համառությամբ կարողացել է գոյատեւել՝ պահպանելով իր մայրենի լեզուն, մշակույթը, ազգային սովորություններն ու ավանդույթները՝ մոտ 400 տարի անընդհատ պայքարելով իր նկատմամբ կիրառվող ձուլման քաղաքականության, ճնշումների ու կեղեքումների դեմ»:[111] Այդ պայքարում ամենաազդու միջոցներից էր դպրոցը՝ առաջինը հիմնվել էր Նոր Ջուղայում՝ 1833թ., իսկ 1835թ. Թավրիզում սկսեց գործել հայտնի Արամեան դպրոցը:

Իրանում ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղը հիմնվեց միայն 1932թ.՝ մայրաքաղաք Թեհրանում[112] (այնուհետեւ նաեւ Համադանում) եւ սկզբից եւեթ ձգտեց աշխույժ գործունեություն ծավալել ամենատարբեր եւ հատկապես կրթամշակութային ասպարեզներում: Հարկ է նշել, որ Իրանի հայության կարեւոր առանձնահատկություններից էր Դաշնակցություն կուսակցության եւ նրա տարբեր կառույցների գրեթե բացարձակ գերակայությունը ազգային կյանքում: Նման իրավիճակում, երբ բացակայում էին այլ գաղափարաբանություն, քաղաքական այլ կողմնորոշումներ ունեցող կազմակերպությունները, ՀԲԸ Միության գործունեությունը բնականաբար, կապված էր որոշակի դժվարությունների հետ: Այնուամենայնիվ, արդեն 1952թ. Թեհրանում Միության մասնաժողովին կից ստեղծվեց Երիտասարդական Ցանցնախումբ, որը հետզհետե իր շուրջն էր հա-

մախմբում տեղի հայ երիտասարդության մի որոշ մասը: 1968-ին այստեղ սկիզբ առավ սկաուտական շարժումը, որում ընդգրկված էին շուրջ 260 պատանիներ: Տարբեր միջոցառումների ու ձեռնարկների արդյունքում գոյացած գումարները ՀԲԸ Միության երիտասարդները հաճախ օգտագործում էին հայրենակիցներին օժանդակելու համար: Այսպես, 1975թ. մի երեկույթի հասույթով նրանք հնարավորություն ընձեռեցին Թեհրանի 40 չքավոր աշակերտներին տասը օր կազդուրվել «Հայկաշեն» ծովափնյա ամառային ճամբարում:

Դրա հետ մեկտեղ, Միության մասնաճյուղը որոշ քայլեր էր ձեռնարկում նաեւ կրթական ոլորտում: Մասնավորապես, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին, նկատելով հայերեն դասագրքերի պակասը եւ Հայաստանում ընդունված նոր ուղղագրության որդեգրման անհրաժեշտությունը, մասնաճյուղը հրատարակեց եւ ձրիաբար դպրոցներին տրամադրեց Հայաստանում հրատարակված դասագրքեր:[113] Սակայն մասնաճյուղի հիմնական նպատակն էր սեփական դպրոցի հիմնումը:

«Թէհրանի մասնաճիւղը,- կարդում ենք Միության 1953թ. տարեգրքում,- կենսական պէտք մը նկատած ըլլալով Միութեան անունով դպրոց մը բանալ, մասնաւորաբար ներգաղթէն ետո մնացած եւ Իրանի մայրաքաղաքին մէջ տեղաւորուած բազմաթիւ չքաւոր ընտանիքներու զաւակներուն յատուկ, հսկայ աշխատանք կատարած է այդ նպատակով նախ հիմնադրամ մը գոյացնելու, վարժարանի յարմար շէնք մը գտնելու եւ անոր բացման վերաբերմամբ կառավարական արտօնութիւն ձեռք բերելու համար»:[114] 1952թ. հիմնված դպրոցը Նուպար տղայոց դպրոցն էր, որը 1956թ, կոչվեց Նուպար տղայոց եւ աղջկանց դպրոց: Այդ տարիներին Թեհրանում բնակվում էր շուրջ 40.000 հայ, ինչն էլ պայմանավորեց դպրոցի աշակերտության թվի մշտական աճը: Եթե 1952-1953 ուսումնական տարում դպրոցը ուներ 87 աշակերտ, ապա հաջորդ երկու տարիների ընթացքում այդ թիվը հասավ 415-ի: Համաձայն երկրում գործող օրենքների, դպրոցը պարտադրաբար որդեգրել էր պետական կրթական ծրագիրը, «...դասավանդումը կատարվում էր պարսկերենով, իսկ մայրենի լեզվի ուսուցումը դուրս էր ծրագրից եւ հիմնական դասացուցակից»:[115] Նույն օրենքով, սակայն, շաբաթական 12 ժամ հատկացվում էր հայերենին, կրոնին եւ հայոց պատմությանը. «...եւ այս կերպով լիուլի գոհացում կը տրուի տոհմիկ դաստիարակութեան պահանջներուն»:[116] Հետագա տարիներին՝ այդ թաղամասի հայ բնակչության տեղափոխման հետեւանքով, աշակերտության թիվը աստիճանաբար սկսեց նվազել եւ 1977-1978թթ. կազմեց 54 հոգի, ինչն էլ պատճառ դարձավ այն փակելու համար (դպրոցի գույքը տեղափոխվեց Մարի Մանուկեան դպրոց):

1964թ. Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկությունը հայտնեց ՀԲԸ Միությանը, որ պատրաստ է տրամադրել 150.000 դոլար՝ Գ.Կյուլպենկյանի հանգուցյալ կնոջ՝ Նվարդ Կյուլպենկյանի անունով Թեհրանում դպրոց կառուցելու համար: Հիմնարկությունը տարեկան 15.000 դոլար պետք է հատկացներ դպրոցի այլեւայլ կարիքների համար, միայն թե հողատարածքը պետք է գնվեր Միության կողմից: 1967թ. Նուարդ Կիւլպէնկեան վարժարանի նորակառույց չորսհարկանի շենքը ընդունեց իր առաջին, թվով 226 աշակերտները՝ մեկ նախապատրաստական եւ նախակրթարանի չորս դասարաններում:[117]

Իսկ 1972թ. սեպտեմբերին Թեհրանում ավարտվեց Մարի Մանուկեան Ուղեցոյց Դպրոցի եւ Մշակութային Տան կառուցումը, որի ծախսերի կեսը հոգաց ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը՝ ի դեմս Ալեք Մանուկյանի, իսկ մյուս կեսը՝ տեղի մասնաճյուղը: Երեք տարի անց դպրոցը ունեցավ իր երկրորդական բաժինը, ինչին նպաստեց աշակերտների թվի աճը:

1979թ. իսլամական հեղափոխությունից հետո Իրանի նոր իշխանությունները արգելեցին աղջիկների եւ տղաների համատեղ ուսուցումը: Դրա հետեւանքով բոլոր հայ դպրոցները հայտնվեցին շատ ծանր կացության մեջ, քանզի եւս մեկ շենք ունենալը կապված էր շատ մեծ ծախսերի հետ: Ստեղծված պայմաններում Միության տեղական մասնաճյուղը վերակազմավորեց իր դպրոցները՝ Նուարդ Կիւլպէնկեան Մանչերու նախակրթարան (630 աշակերտ) եւ Մարի Մանուկեան Աղջկանց երկրորդական վարժարան (730 աշակերտ):

1983թ. հոկտեմբերին Իրանի կառավարության եւս մեկ որոշումով ազգային-կրոնական փոքրամասնություններին պատկանող դպրոցների գործունեությունը ենթարկվեց նոր սահմանափակումների: Մասնավորապես, Թեհրանի հայկական դպրոցներում արգելվեց հայերեն լեզվի ուսուցումը դասապահերին, եւ հայազգի տնօրենները փոխարինվեցին պարսիկներով: ՀԲԸ Միության տեղի մասնաճյուղը մեծ ջանքեր թափեց, որպեսզի Նուարդ Կիւլպէնկեան եւ Մարի Մանուկեան դպրոցներում ապահովվի հայեցի կրթություն. «Ուսումնական ծրագրին մէջ բաւարար չափով հայերէն չըլլալուն պատճառաւ, 5 հայ ուսուցիչներ պահացոյցէն ետք հայերէն լեզու, հայոց պատմութիւն եւ այլ հայկական գիտելիքներ դասաւանդեցին»:[118] 1998թ. Մարի Մանուկեան Աղջկանց երկրորդական վարժարանը ունեցավ 105 շրջանավարտ, որոնցից 50-ը դարձան տարբեր համալսարանների ուսանողներ: Նույն՝ 1998թ. 74 տղաներ ավարտեցին Նուարդ Կիւլպէնկեան վարժարանը:

ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ հայկական համայնքներ ձեւավորվել են Առաջին Աշխարհամարտից հետո, երբ այստեղ հաստատվեց բռնագաղթված հայերի մի մասը: Մինչեւ 1940-ական թթ. կեսերը այստեղ բնակվում էր շուրջ 6 հազ. հայ: Սակայն 1948թ. սկիզբ առած արաբա-իսրայելական պատերազմների պատճառով նրանց զգալի մասը արտագաղթեց այլ երկրներ, եւ ներկայումս մայրաքաղաք Ամմանում ապրում է մոտ 3 հազ. հայ: Այսօր Ամմանի փոքրաթիվ հայ համայնքի միակ կրթական հաստատությունն է ՀԲԸ Միության կողմից հովանավորվող Իւզպաշեան - Կիւլպէնկեան նախակրթական վարժարանը իր մանկապարտեզով եւ շուրջ 130 աշակերտներով:

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԵՐԿՐՆԵՐ

Առաջին Աշխարհամարտից հետո Սիրիա - Լիբանանում կուտակված հայության մի մասը նախընտրեց մեկնել այլ երկրներ: Նրանց հիմնական զանգվածը, բնականաբար, հաստատվեց աշխարհագրորեն առավել մոտ գտնվող Ֆրանսիայում, Բուլղարիայում, Հունաստանում, Եվրոպայի այլ երկրներում, իսկ մի մասն էլ՝ հեռավոր Ամերիկայում՝ ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում եւ այլուր: Հետագա տարիներին այդ բոլոր երկրներում հայությունը հետզհետե սկսեց ապրել աշխույժ եւ կազմակերպված համայնքային կյանքով: Եվ եթե Ֆրանսիան՝ ի դեմս Փարիզի, ինչպես նշվեց նախորդ գլխում, դարձավ սփյուռքի մշակութային եւ քաղաքական վերնախավի կենտրոնը, ապա նույն այդ տարիներին սփյուռքի ֆինանսական ներուժը կենտրոնացվեց ԱՄՆ-ում: Նույնն էր վիճակը եւ ՀԲԸ Միության պարագայում: Ինչպես նշում էր Պողոս Նուպարը իր վերջին՝ Միության Ամերիկայի անդամներին ուղղած պատգամում (1929 թ. օգոստոս), «Ճշմարտութիւն մը միայն յայտարարած պիտի ըլլամ, եթէ հոչակեմ թէ մեր Ընկերակցութիւնը մեծ մասամբ ձեր ջանքերուն կը պարտի իր բարգաւաճումը, որ թոյլ տուած է իրեն հասնիլ մեր աղէտեալներուն, տարագիրներուն, գաղթականներուն եւ որբերուն կարիքներուն, զարգացնել ազգային կրթութիւնը, օգնել գործաւորին եւ հողագործին, սատարել մեր հայրենիքին վերաշինութեան, Հայաստանի՝ որուն պէտք է յառին մեր յուսալից աչքերը»:[119]

ՀԲԸ Միության գործունեությունը Արեւմուտքի երկրների հայության ազգային նկարագրի պահպանման եւ զարգացման ուղղությամբ, բովանդակությամբ եւ իրագործման ձեւով էապես տարբեր էր Արեւելքի մահմեդական երկրներից: Այդ տարբերությունները բնական էին եւ անխուսափելի, քանզի նախ եւ առաջ պայմանավորված էին Արեւելքի ու Արեւմուտքի երկրների սկզբունքորեն տարբեր բնութագրերով:

Ի տարբերություն Արեւելքի երկրների, Արեւմուտքի երկրներում հաստատված հայերի համար XX դ. առաջին տասնամյակում ընդհանուր էր նրանց հստակ եւ ընդգծված ստորադաս կարգավիճակը: Թե մինչ Առաջին Աշխարհամարտը եւ թե դրան անմիջապես հաջորդած տարիներին Արեւմուտքի արագ զարգացող արդյունաբերական երկրների հայությունը, չունենալով անհրաժեշտ մասնագիտական հմտություններ, ստիպված էր հիմնականում կատարել որակավորում չպահանջող, ծանր ու ցածր վարձատրվող աշխատանք մետաղագործական, շինարարական եւ այլ ոլորտներում: Նրանք չունեին իրական պատկերացում տեղի ժողովուրդների ապրելակերպի, բարոյական եւ մշակութային նորմերի մասին, որոնք հաճախ խորթ եւ անընդունելի էին իրենց համար: Արեւմուտքի երկրների ժողովուրդները, իրենց հերթին, անծանոթ լինելով հայերին, ինքնաբերաբար նրանց վրա էին տարածում «ասիացիների» մասին ունեցած իրենց բացասական պատկերացումները:[120] Դրա ծայրահեղ դրսեւորումներից էր 1920-ական թթ. հայերի բնակության վայրի եւ աշխատանքի ընտրության, հասարակական փոխադրամիջոցներից օգտվելու եւ քաղաքացիական այլ իրավունքների խիստ սահմանափակումները ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգում:[121]

Նման պայմաններում հայերը եւ հատկապես նրանց առաջին սերունդները, ցանկանալով հնարավորին չափ արագ ներգրավվել ընդունող հասարակությունում, ձգտեցին առավելագույնս որդեգրել բնիկ՝ նույնպես քրիստոնյա ժողովուրդների կենսաոճն ու սոցիալ-մշակութային արժեքները: Հանուն դրա, նրանք, միաժամանակ, հարկադրված էին սահմանափակել իրենց ազգային, ավանդական մշակույթի դրսեւորումները:

Այդ առումով նշված երկրներում յուրահատուկ դեր էր վերապահված հայերի քրիստոնյա լինելու հանգամանքին: Այն զգալի չափով նպաստեց Արեւմուտքի՝ նույնպես քրիստոնյա ժողովուրդների կողմից հայերի մասին նպաստավոր կարծիքի ձեւավորմանը, իշխող միջավայրին հայերի արագ հարմարվելուն: Դրա հետ մեկտեղ, այն մեծ չափով դյուրացրեց նրանց ազգամշակութային ձուլումը, մասնավորապես, այլազգիների հետ հայերի ամուսնությունների շնորհիվ: Համաձայն որոշ ուսումնասիրությունների, Արեւմուտքի եւ Հարավային Ամերիկայի երկրների հայության մեջ նման ամուսնությունները 1980-ական թվականներին կազմում էին ընդհանուր քանակի շուրջ 60%-ը:[122]

Հայազգի ամերիկյան պատմաբան Ռոբերտ Միրաքի ամերիկահայերի պատմությանը նվիրված արժեքավոր գրքում բերվում են տվյալներ, որոնց համաձայն 1907-1910թթ. 37 քաղաքների (Բոստոն, Լին, Նյու Յորք, Ֆիլադելֆիա, Ուստր եւ այլն) պետական դպրոցներում հաշվվում էր 1.031 հայազգի աշակերտ, որոնք սովորում էին 1-9-րդ դասարաններում: Ռ.Միրաքը նշում է, որ կրթության նկատմամբ այդպիսի վերաբերմունքը բնորոշ էր ոչ բոլոր ազգային փոքրամասնություններին: Այսպես, Ֆրեզնոյում (Կալիֆորնիա) իտալացի, մեքսիկացի, պորտուգալացի երեխաները շատ հաճախ 2-3 տարի անց դադարեցնում էին իրենց ուսումը, որպեսզի աշխատեն եւ լրացուցիչ եկամուտ ապահովեն իրենց ընտանիքներին: Այդ տարիներին ամերիկահայերի տնտեսական վիճակը նույնպես բավական ծանր էր, սակայն նրանք, ղեկավարվելով «դպրոց գնա, որ մարդ ըլլաս» սկզբունքով, պատրաստ էին չընկրկել եւ զոհողությունների գնով առաջնությունը տալ կրթությանը: Պատահական չէ, որ նույն այդ տարի-

ներին Կալիֆորնիա նահանգի Ներգաղթողների գործերի հանձնախումբը հատուկ նշում էր, որ հայերը «...լիովին օգտագործում են պետական դպրոցների ընձեռած հնարավորությունները, եւ նրանց երեխաները սովորում են որքան հնարավոր է՝ երկար»:[123] Հետագայում, ամերիկահայերի տնտեսական վիճակի բարելավմանը զուգընթաց, նրանց երեխաները անպայման ստանում էին ոչ միայն լրիվ միջնակարգ, այլեւ հնարավորության դեպքում՝ նաեւ համալսարանական կրթություն: Այսպես, համաձայն «Գիր ու գիրք» ամսագրի տվյալների, 1970-ական թթ. կեսերին ԱՄՆ-ում հաշվվում էր մոտ 1.500 ամերիկահայ՝ գիտական աշխատողներ եւ համալսարանների դասախոսներ:[124] Հասկանալի է, որ մասնագետների նման քանակը հնարավոր էր միայն համալսարանավարտների մեծ թվի դեպքում:

Արեւմտյան հասարակություններում հնարավորին չափ արագ ինտեգրվելու հայերի մեծ ձգտումը, բնականաբար, չէր կարող չազդել ազգային կրթության ոլորտի վրա: Երկար տասնամյակների ընթացքում, մինչեւ XX դ. 60-ական թթ. կեսերը, այն սահմանափակվեց մեկօրյա հայկական վարժարաններով: Կալիֆորնիայում ՀԲԸ Միության գործունեությանը նվիրված մի գրքում կարդում ենք. «Գալիֆորնիոյ հայ նորահաս սերունդը կը ստանայ իր ուսումը ամերիկեան կառավարական դպրոցներու մէջ, եւ կը մեծնայ ամերիկեան իտէալով եւ ամերիկեան պայմաններու ներքեւ: Հայ եկեղեցիներ թէեւ ունին շաբաթը միայն մի քանի ժամ Շաբաթ օրուայ ազգային դպրոցներ՝ հայ մանուկներուն հայերէն լեզուն սորվեցնելու եւ զանոնք հայ արժէքներուն տեղեկացնելու համար, բայց անոնք հեռու են ծովածաւալ կարիքի մը գոհացում տալու հանգամանքէն: ... Բացի այս Շաբաթ օրուայ ազգային դպրոցներէ, կան նաեւ հայ եկեղեցիներու հովանաւորութեան ներքեւ կիրակնօրեայ դպրոցներ, ուր հայ նոր սերունդը կը ստանայ Կիրակի օրեր կրօնական ազգային դաստիարակութիւն մը, եկեղեցական պաշտամունքէն առաջ, մեծ տարիքին մէջ եղողներ ընդհանրապէս հայերէն, իսկ փոքրիկներ անգլիերէն լեզուով»:[125]

Գրեթե նույնն էր պատկերը թե ԱՄՆ-ի արեւելյան, նույնպես հայաշատ նահանգներում եւ թե Արեւմուտքի այլ երկրներում՝ Ֆրանսիայում, Կանադայում եւ այլուր: Հիրավի, տեղի էր ունենում պարադոքսալ մի երեւույթ: Իր իսկ աճող սերնդի ազգային կրթության մասին մի տեսակ անտարբեր ամերիկահայությունը միեւնույն ժամանակ իր նյութական եւ ֆինանսական կարողությունները տարիներ շարունակ առատորեն ուղղում էր դեպի Մերձավոր Արեւելքի երկրներ՝ այնտեղ ապաստանած բազմահազար հայ գաղթականների տարբեր կարիքները հոգալու համար:

Նման գործելակերպ էր որդեգրել նաեւ ՀԲԸ Միությունը, ինչի վկայությունն էին նրա որբախնամ, դպրոցաշինական եւ մի շարք այլ, ներառյալ Խորհրդային Հայաստանում իրագործվող ծրագրերը: ՀԲԸ Միության ականավոր գործիչներից Պետրոս Նորհադը 1966թ. հրատարակած իր գրքում բերում է ուշագրավ մի աղյուսակ, որից պարզ է դառնում ԱՄՆ-ի մասնաճյուղերի մասնաբաժինը՝ Միության կողմից տարբեր տարիներին կազմակերպված հանգանակություններում:[126]

Հանգանակություններ	Ընդհանուր գումարը	Ամերիկայում հանգանակված գումարը
Փրկության	$ 500.000	$ 500.000
Որբախնամ	$ 376.000	$ 376.000
Նուպարաշեն	$ 333.000	$ 333.000
Քառորդ միլիոն	$ 331.291	$ 308.858
Կես միլիոն	$ 462.527	$ 395.527
Ներգաղթի առաջին	$ 1.413.041	$ 1.073.809
Ներգաղթի երկրորդ	$ 519.604	$ 334.599
Դպրոցաշինություն	$ 247.129	$ 247.129
Ոսկե հոբելյան	$ 398.982	$ 333.986

Բայց բոլոր այդ տարիներին (մինչեւ 1970-ական թթ.) Միությունը ԱՄՆ-ում այդպես էլ չհիմնեց սեփական ամենօրյա վարժարան: Ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Արեւմուտքի այլ երկրներում որեւէ ազգային փոքրամասնության (այդ թվում նաեւ հայերի) կողմից ամենօրյա դպրոցի հիմնումը կապված էր մեծ բարդությունների հետ: Որպեսզի նման դպրոցը ճանաչվեր պետության կողմից (հակառակ պարագայում նրա գոյությունը դառնում էր անիմաստ), պետք է համապատասխաներ մի շարք պահանջների, սկսած շենքային պայմաններից եւ վերջացրած ուսուցիչների վարձատրության չափով եւ նրանց որակավորումով: Նշված երկրների ընդհանուր զարգացմանը զուգընթաց, մշտապես փոփոխվում էին նաեւ այդ պահանջները՝ դառնալով ավելի խիստ ու բազմատեսակ եւ, դրանով իսկ, գրեթե անլուծելի առանձին հայ համայնքների կամ կազմակերպությունների համար:

Չնայած այս եւ ուրիշ այլ դժվարություններին, ՀԲԸ Միությունը, այնուամենայնիվ, ի վիճակի էր հիմնել գոնե մեկ նման դպրոց: Բայց դա կնշանակեր, որ հանուն այդ գաղափարի, նա պարտավոր էր հրաժարվել Արեւելքի երկրներում իրականացվող իր որոշ ծրագրերից: Կշեռքի նժարի վրա էին դրված, մի կողմից, Արեւելքի երկրներում դժվարին պայմանն-

ում ապրող հայ երեխաների ֆիզիկական գոյությունը, նրանց ազգային դաստիարակության եւ կրթության ապահովումը մահմեդական միջավայրում, իսկ մյուս կողմից՝ Արեւմուտքի քրիստոնյա երկրներում համեմատաբար բարեկեցիկ կյանքով ապրող հայ երեխաների ազգային ինքնության պահպանումը: Երկուսն էլ կարեւոր էին, երկուսն էլ պահանջում էին իրենց անհապաղ լուծումը, բայց եղած սահմանափակ հնարավորությունները պարտադրում էին նախապատվությունը տալ դրանցից մեկին: Եվ այդ նախապատվությունը տրվեց Արեւելքի հայությանը:

Սակայն շուտով ակնհայտ դարձավ արեւմտյան քաղաքակրթության, նրա առանձին մշակույթների ուժեղ ազդեցությունը տեղի հայության ազգային նկարագրի վրա՝ դրանով իսկ իրական դարձնելով նրանց հնարավոր ուծացումը: Ստեղծված կացությունը ամենայն սրությամբ դրեց աճող սերնդի ազգամշակութային կողմնորոշման հարցը, եւ ՀԲԸ Միությունը առաջիններից էր, որ դիմեց գործնական քայլերի՝ երիտասարդ սերնդի ազգային ինքնության պահպանման նպատակով:

Կրտսերների Լիգա

Դեռեւս 1926թ. նոյեմբերին Նյու Յորքում հրատարակվող ՀԲԸ Միության «Յուշարար» ամսագիրը հրապարակեց մի կարճ հաղորդագրություն, որը ուշադրություն էր հրավիրում երիտասարդական միությունների՝ լիգաների կազմավորման կարեւորության վրա: Նման կազմակերպության հիմնումը դիտելով որպես ՀԲԸ Միության քսանամյա հոբելյանը նշելու լավագույն ձեւերից մեկը՝ հաղորդվում էր տարբեր քաղաքներում անդամագրական արշավի հաջող ընթացքի մասին: Դրանից մի քանի ամիս անց Երիտասարդաց Լիգայի մասնաճյուղերը արդեն գործում էին Նյու Յորքում, Պրովիդենսում, Կլիվլենդում, Ուոթերթաունում եւ այլ քաղաքներում: Եվս մի քանի ամիս անց հրապարակվեց հատուկ կոչ, որը պաշտոնապես հայտարարում էր Երիտասարդաց կամ Կրտսերների Լիգայի (Junior League) ստեղծման մասին: Այդ կոչում, պարզաբանելով նորաստեղծ կազմակերպության նպատակը, նշվում էր, «... այս շարժումին նպատակն է ամերիկահայ նոր սերունդին ճանչցնել ՀԲԸ Միութեան նպատակն ու գործը, եւ անոր սիրտին մէջ արծարծել ծառայութեան եւ զոհողութեան ոգին: Այդ կերպով միայն կարելի պիտի ըլլայ ՀԲԸ Միութեան գոյութիւնը պահպանել այս երկրին մէջ: Կրտսերներուն Լիկան պատեհութիւն պիտի ընծայէ նաեւ որ մեր երկու սեռէ երիտասարդները պարբերաբար խմբուին ազնիւ գաղափարներու շուրջը եւ իրարու ծանօթանան»:[127] Բայց ոչ միայն դա:

«Ոսկեմատեան ՀԲԸ Միութեան. 1906–1931» գրքում կարդում ենք. «Ջեռնարկը... նոյն ատեն կը ձգտէր նաեւ, Միութեան հայրենասիրական գործունէութեան եւ հանրօգուտ նպատակներուն ձգողութեան շնորհիւ, ըստ կարելւոյն ազգին կապել Ամերիկահայ երիտասարդ սերունդին այն մասը՝ որ իր միջավայրին, ստացած դաստիարակութեան, ընտանեկան պայմաններուն, զբաղմանց եւ յարաբերութեանց պատճառաւ, օր օրի կը հեռանար իր օրրանէն, կը խառնուէր Ամերիկեան կեանքին, կը կորսուէր ազգին համար»:[128]

Հանուն այդ նպատակի Միության Ամերիկայի Շրջանակային Հանձնաժողովը առաջին օրից իր հատուկ հոգածության տակ վերցրեց Կրտսերաց Լիգաները՝ խթանելով նրանց գործունեության տարածումը ԱՄՆ-ի տարբեր հայ համայնքներում:

Կրտսերների Լիգային կարող էին անդամակցել 16–25 տարեկան, բարոյական լավ նկարագիր ունեցող, երկսեռ բոլոր հայ երիտասարդները: 1931թ. տարբեր քաղաքներում գործում էին Լիգայի 37 մասնաճյուղ, որոնց անդամների թիվը մոտենում էր 1.000-ի: Այդ մասնաճյուղերը բաժանված էին չորս՝ Կալիֆորնիայի, Միջին Արեւմտյան նահանգների, Արեւելյան նահանգների եւ Մեծ Նյու Յորքի շրջանակների, որոնցից յուրաքանչյուրը ուներ իր Խորհրդակցական Համաժողովը: Կրտսերների Լիգայի գործունեությունը ղեկավարում էր ընդհանուր քարտուղարը, որը նշանակվում էր Միության Ամերիկայի Շրջանակային Հանձնաժողովի կողմից: Լիգաների կարեւորության եւ հեղինակության մասին էր վկայում այն, որ Միության Ամերիկայի տարեկան խորհրդակցական համաժողովին նրանք մասնակցում էին նույն իրավասությամբ եւ ձայների նույն համամասնությամբ, ինչպես եւ երեցները՝ «մայր» մասնաճյուղերը:

Նկատի առնելով, որ նրա անդամները հիմնականում անգլիախոս հայազգի երիտասարդներն էին, հատկապես կարեւոր եղավ 1927թ. նոյեմբերից «Յուշարար» ամսագրի անգլերեն հավելվածի թողարկումը: Հայոց պատմությանն ու մշակույթին, ՀԲԸ Միության գործունեությանը, Խորհրդային Հայաստանին եւ այլ հարցերին նվիրված նյութերից զատ, այստեղ մշտապես հրապարակվում էին նաեւ Կրտսերներու Լիգայի անդամների հոդվածները: Համագործակցաբար երեցների մասնաճյուղերի հետ՝ պարբերաբար կազմակերպվում էին դասախոսություններ, վիճաբանություններ, անգլերենով եւ հայերենով թատերախաղեր, ընկերային եւ մարզական հանդիպումներ եւ այլն: Հատկանշական է, որ որոշ մասնաճյուղեր հատուկ ուշադրություն էին դարձնում հայերենի ուսուցմանը:

«Սիրէքյուզի եւ Պրաքթընի Լիկաները հայերէն կը սորվին իրենց ժողովներուն մէջ, եւ Ռիվէյրի, Հարթֆըրտի, Լոուէլի, Ուէսթ Փոլմէնի Լիկաներու անդամները որոշ տուգանքի կ'ենթարկուին՝ եթէ իրենց ընկերական ժամանցի պահերուն հայերէնի տեղ օտար լեզուով խօսին»:[129]

Սակայն Երիտասարդաց Լիգաների ստեղծումից շուրջ տասը տարի անց պարզ դարձավ, որ նրանց անդամների որոշ մասը չի ցանկանում անդամագրվել երեցների մասնաճյուղերին: Ենթադրելով, որ ավագների շարքերը անցնելու երիտասարդների նման չկամությունը մեծապես պայմանավորված է նրանց միջեւ եղած լեզվի եւ, ինչպես իրենք էին գրում, «background»-ի տարբերություններով, Միության Ամերիկայի Հանձնաժողովը Ֆիլադելֆիայում կայացած իր տարեկան ժողովում ստեղծեց, այսպես կոչված, անգլիախոս մասնաճյուղեր, այն հույսով, որ Կրտսերների Լիգայի հասունացած անդամները եռանդով կտեղափոխեն իրենց անդամակցությունը այդ նոր ստեղծված ավագների խումբը, որը կազմված էր մարդկանցից, որոնց լեզուն եւ background-ը չէին տարբերվում իրենցից:

Նման մասնաճյուղերը հիմնվեցին Միության հիմնական մասնաճյուղերի կողքին՝ որպես ինքնուրույն միավորներ: Այսպես, 1946թ. ՀԲԸ Միության համակարգում գործում էին Կրտսերների Լիգայի 15 մասնաճյուղ՝ Նյու Յորքում, Ուստրում, Բոստոնում, Չիկագոյում, Ֆրեզնոյում, Օքլենտում եւ այլուր, ինչպես նաեւ 8 անգլիախոս մասնաճյուղ՝ Դետրոյթում, Նյու Յորքում, Նյուարք-Պետերսենում, Հեյվերհիլում եւ այլ քաղաքներում: Ի տարբերություն այլ երկրներում գործող Միության նմանատիպ երիտասարդական կազմակերպությունների, Կրտսերների Լիգան եւ անգլիախոս մասնաճյուղերը ոչ միայն ինքնաբավ էին, այլեւ ամեն տարի որոշակի գումար էին փոխանցում Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովին:

Սկզբնական շրջանում ԱՄՆ-ի մասնաճյուղերի ցուցակներում «անգլիախոս» մասնաճյուղերը, որպես բացառություն, նշվում էին առանձին տողով: Սակայն, ամերիկահայերի մեջ ուժեղ թափով ընթացող մշակույթի փոփոխությունը անիմաստ էր դարձնում մասնաճյուղերի լեզվական տարբերակումը, եւ արդեն 1948թ. նպատակահարմար համարվեց նույն վայրում գործող մասնաճյուղերի միավորումը: Այդ քայլին առաջինը դիմեցին Նյու Յորքի մասնաճյուղը եւ Նյու Յորքի կենտրոնական շրջանի՝ Մանհեթենի անգլիախոս մասնաճյուղը, որոնք միավորվեցին 1948թ.: Այդուհետ, լեզվական տարբերության դեպքում, որպես բացառություն, կարելի էր նշել հենց «հայախոս» մասնաճյուղերը:

1948թ. Վ.Մալեզյանը, անդրադառնալով ափյուռքահայ երիտասարդության ազգային եւ սոցիալական ընդհանուր վիճակին, գրում էր.

«...նոր սերունդին տրուած միակողմանի, ընդհանրապէս օտարոտի դաստիարակութիւնը մէկ կողմէն, եւ մասնաւորապէս գաղութահայ կեանքը յատկանշող տեղական ու հատուածական պառակտումները, անհատնում վէճերը, միւս կողմէ, իրենց դաժան հակազդեցութեամբը վհատեցուցած եւ հայ կեանքէն հեռացուցած են անոր ստուար մէկ մասը»:[130]

Այդ առումով հարկ է նկատի առնել նաեւ հատկապես ԱՄՆ-ում Երկրորդ Աշխարհամարտի տարիներին սկիզբ առած որոշ զարգացումները: Նացիստական Գերմանիայի գաղափարաբանությունն ու ագրեսիվ քաղաքականությունը վերստին խթանեցին ամերիկացիներին՝ անդրադառնալ սեփական արժեքների գնահատմանը, վերահիմնաստավորել ազատության, հավասարության եւ ամերիկյան ժողովրդավարության հիմնարար այլ սկզբունքները: Այս ամենը անխուսափելի էր դարձնում անդրադարձը նաեւ իրենց, որպես ամերիկացիների, ազգային ինքնությանը. հարց, որը միշտ էլ այժմեական է եղել ներգաղթողների այդ երկրի համար: Նույն այդ տարիներին The Common Council for American Unity (նախապես՝ Foreign Language Information Service) ամերիկյան հեղինակավոր եւ ազդեցիկ կազմակերպությունը ահա այսպես էր տեսնում իր հիմնական նպատակները.

«Օգնել ստեղծելու ամերիկյան ժողովրդի մեջ միասնություն եւ փոխադարձ հասկացողություն՝ շնորհիվ ընդհանուր քաղաքացիության, ընդհանուր հավատի, դեմոկրատիայի եւ ազատության գաղափարների հանդեպ, հասարակական բարիքի նախապատվությանը առանձին խմբերի շահերին, եւ բոլոր քաղաքացիների ընկալումը՝ թե գործնականում եւ թե օրենքով, որպես ամերիկյան հասարակությունում հավասար գործընկերների, անկախ նրանց ազգային կամ ռասայական պատկանելությունից»: Հայտարարությունը կոչ էր անում արժեւորել յուրաքանչյուր խմբի ներդրումը, հանդուրժողաբար վերաբերել բազմակերպությանը, դարձնել ամերիկյան մշակույթը «իրապես ներկայացուցչական» ողջ ժողովրդի համար, վերջ դնել ռասայական եւ էթնիկական նախապաշարումներին եւ օժանդակել ներգաղթողներին ու նրանց երեխաներին, որոնք դժվարությամբ են հարմարվում ամերիկյան կյանքին»:[131]

Նման, ըստ էության, պետական գաղափարախոսությունը, որը լրացնելու եկավ ԱՄՆ-ի եւ նրա դաշնակիցների հաղթանակը պատերազմում եւ ժողովրդի կենսամակարդակի աննախադեպ աճը հետպատերազմյան շրջանում, մեծ ոգեւորությամբ ընկալվեց ամերիկացիների կողմից եւ գերիշխող դարձավ նրանց հասարակական գիտակցության մեջ: Այն խիստ ոգեւորիչ էր նաեւ ազգային փոքրամասնությունների, ներառյալ ամերիկահայերի համար, որոնք այնքան կարոտ էին դառնալու

«Ամերիկյան երազանքի» իրականացման լիարժեք եւ իրավահավասար մասնակիցներից մեկը: Ամերիկահայերի պարագայում կարեւոր էր նաեւ այն հանգամանքը, որ 1940-ական թթ. վերջից կյանքի ասպարեզ էր մտնում նրանց այն սերունդը, որ մեծացել, կրթություն էր ստացել եւ, ընդհանրապես, որպես անհատ ձեւավորվել էր այդ երկրում եւ որի իղձն էր դառնալ «իսկական ամերիկացի»: Նման իրավիճակում բնական է, որ իրենց, որպես հայերի ինքնագիտակցությունը, հատկապես դրա իրական դրսեւորումներն ու արտահայտությունները պետք է նվազեին եւ ավելի հաճախ խորհրդանշական ձեւ ընդունեին: Ուստի եւ օրինաչափ է, որ ՀԲԸ Միության Կրտսերների Լիգա երիտասարդական կազմակերպության գործունեությունը աստիճանաբար սկսեց մարել:

Սփյուռքահայերի ավագ սերնդի համար այս ամենը որքան անցանկալի, նույնքան էլ անխուսափելի էր թվում: Շատերի, բայց ոչ բոլորի, ու նախ եւ առաջ Ալեք Մանուկյանի համար, որը, ինչպես նշվեց, ՀԲԸ Միության նախագահ էր ընտրվել 1953թ.:

Ալեք Մանուկյան

Ալեք Մանուկյանի դերը իր կարեւորությամբ ՀԲԸ Միության պատմության մեջ բացառիկ էր: Նա ղեկավարեց այդ կազմակերպությունը շուրջ 36 տարի, եւ այդ ընթացքում Միությունը ունեցավ այնպիսի արդյունավետ գործունեություն, որ իր նշանակությամբ համեմատելի էր հենց Միության հիմնադրման հետ: Ա.Մանուկյանը ծնվել էր 1901թ. Իզմիրի շրջանի Քասապա գյուղաքաղաքում՝ հացահատիկի առեւտրով զբաղվող, հայ համայնքի հարգված առաջնորդներից մեկի՝ Թագվոր Մանուկյանի ընտանիքում: 1920թ. նա հեռանում է Թուրքիայից եւ մեկնում ԱՄՆ՝ մի քանի տասնյակ դոլար գրպանում: Իր հետագա կյանքը այդ երկրում, կարծես, իրականացումն էր այն երազանքի, որը այդ երկիր էր բերում բազում մարդկանց: Սկսելով որպես բանվոր՝ նա 1924թ. վերջնականապես հաստատվում է Դետրոյթում եւ հինգ տարի աշխատում մեքենաշինական մի ընկերությունում: 1929թ., հակառակ երկրում տիրող տնտեսական խոր ճգնաժամին, Ա. Մանուկյանը հիմնում է ավտոմեքենաների բաղադրամասեր արտադրող «Մասքո» («Masco») ընկերությունը: Վերհիշելով այդ տարիները՝ նա ասում էր. «1936թ. վնասուց գործարանս, որն այնքան դժուարությամբ եւ զրկանքներով ոտքի էի կանգնեցրել, գործի անկում եղաւ, մրցակցութիւն սկսուց, շատ դժուար էր երկար ժամերով աշխատել: Երկու գործընկերներ ունէի, յետոյ նրանք հեռացան ...Որոշ ժամանակ անց ցանկացայ ընդարձակել գործս եւ մէկ միջոց ունէի՝ գործիս բաժնետոմսերը ծախել հանրութեան, եւ ես առաջին հայ արդիւնաբերողն եմ ԱՄՆ-ում, որ սակարանում (Detroit Stock Exchange) ծախեց մեծ քանակութեամբ արժեթղթեր: Տղաս ծնուեց, եւ ես այնքան էի գործով զբաղուած, որ նրան կարողացայ տեսնել շաբաթուայ վերջում, 6 օր անց: Ահա այդպիսի դաժան մրցակցութիւն էր շուրջս»:[132] Երկրորդ Աշխարհամարտի տարիներին, երբ «Մասքո»-ն նույնպես ծառայեց երկրի պաշտպանունակության ամրացմանը, նրա արտադրանքի վաճառքի ծավալները առաջին անգամ գերազանցեցին մեկ միլիոն դոլարը: Սակայն ձեռնարկության պատմության մեջ շրջադարձային եղավ 1954թ., երբ սկսվեց սկզբունքորեն նոր տեսակի «Դելտա» միաթեւ ծորակների (Single Handle Fauset) արտադրությունը, որոնց վաճառքը ԱՄՆ-ում եւ ուրիշ շատ երկրներում ընկերությանը բերեց հարյուրավոր միլիոն դոլարի շահույթ: «Մասքո» ընկերության գործունեության ծավալները էլ ավելի ընդլայնվեցին, երբ 1972թ. նրա գործադիր նախագահ դարձավ Ա. Մանուկյանի որդին՝ Ռիչարդ Մանուկյանը: Մեկ տարի անց «Մասքո» ընկերությունը ընդգրկվեց աշխարհի ամենախոշոր՝ Նյու Յորքի բորսայի ցանկում: Այսօր Ա.Մանուկյանի հիմնած ընկերությունը ընդգրկված է «Fortune 500» ԱՄՆ-ի ամենախոշոր ձեռնարկությունների ցուցակում, նրա մոտ 250 ձեռնարկությունները գործում են տարբեր երկրներում, որոնց արտադրանքի վաճառքը տարեկան կազմում է շուրջ 7 միլիարդ դոլար:

«Մասքո» ընկերությունը ինքնին ուշագրավ երեւույթ է սփյուռքի պատմության մեջ. այն հայի կողմից հիմնված առաջին արդյունաբերական ձեռնարկությունն էր, որը ստացավ համաշխարհային ճանաչում: Ամենակարեւորը, սակայն, այն է, որ ընկերության այդչափ մեծ հաջողություններն ու ստացած շահույթները հնարավորություն տվեցին նրա հիմնադրին՝ Ալեք Մանուկյանին, իրականացնել բազմապիսի հայանպաստ ծրագրեր: «Ինձի համար,-ասում էր նա,-ոեւէ անձնական յաջողութիւն կամ բարօրութիւն թունաւոր բան մը կ'ունենայ իր մէջ, երբ ազգը անկէ իր բաժինը չ'ստանայ»:[133] Դեռեւս 1954թ. նա հիմնեց Ալեք եւ Մարի Մանուկեան հիմնադրամը, իսկ 1968թ. Ալեք Մանուկեան Մշակութային հիմնադրամը, որոնց շնորհիվ աշխարհի տարբեր երկրներում հիմնվեցին մի քանի տասնյակ հայկական դպրոցներ, մշակութային եւ երիտասարդական կենտրոններ, եկեղեցիներ, թանգարաններ, հայագիտական ամբիոններ ու կենտրոններ եւ այլն:

Իր նմանօրինակ գործունեությամբ նա վարակեց բազմաթիվ սփյուռքահայերի, որոնք, հետեւելով իրեն, նույնպես հիմնեցին մնայուն հիմնադրամներ, որի շնորհիվ Միությունը ոչ միայն հաստատեց իր առաջատար

դիրքը սփյուռքում, այլեւ դասվեց ԱՄՆ-ի ամենախոշոր եւ արդյունավետ գործող բարեգործական կազմակերպությունների շարքը: Այդ են վկայում հետեւյալ թվերը: 1952թ., Ա.Մանուկյանի, որպես Միության նախագահ ընտրվելու նախօրեին, Միության հիմնադրամները թվով 95 էին՝ 7.400.000 դոլար ընդհանուր արժեքով: 1989թ., երբ նա հեռացավ իր պաշտոնից, հիմնադրամների թիվը արդեն 465 էր, իսկ նրանց արժեքը՝ 98. 500.000 դոլար: Նույն այդ տարիների ընթացքում ՀԲԸ Միության դրամագլուխը 8 միլիոնից աճեց մինչեւ ավելի քան 112 միլիոն, իսկ տարեկան բյուջեն՝ կես միլիոնից մինչեւ 17 միլիոն:[134]

Տասնյակ տարիներ ապրելով ԱՄՆ-ում, աշխատանքի բերումով մշտապես շրջապատված ամերիկացիներով, որդեգրած լինելով ամերիկյան կենսաձեւն ու հիմնարար արժեքները՝ Ա.Մանուկյանը, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ իրական հայ մարդ: Դրա ապացույցներն էին նրա ընդգծված ազգային ինքնագիտակցությունը, հայերենին ազատ տիրապետելը, հայ պատմության եւ մշակույթի իմացությունը, մեծագույն հարգանքը հայ եկեղեցու հանդեպ եւ ուրիշ շատ հատկանիշներ: Նման մարդու ու գործչի համար ցավալի էր տեսնել ամերիկահայերի եւ հատկապես երիտասարդության օտարումը ազգային արժեքներից, նրանց այդչափ արագ եւ անդառնալի թվացող ամերիկանացումը: Նրա՝ որպես Դետրոյթի մասնաճյուղի ատենապետի եւ Միության Կենտրոնական Վարչության անդամի փորձառությունը հուշում էր, որ ստեղծված անմխիթար վիճակում անհրաժեշտ է թե աշխուժացնել երիտասարդության հետ տարվող աշխատանքը եւ թե մշակել նոր գործելակերպ:

Արդեն 1957թ. ՀԲԸ Միության Ամերիկայի Պատգամավորական ժողովի որոշմամբ ստեղծվեց Երիտասարդական գործունեության հանձնախումբ, որը հիմնականում կազմված էր Միության երիտասարդ անդամներից: Հանձնախումբը՝ իր աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով, նախապես հատուկ հարցարան ուղարկեց Կրտսերների Լիգայի բոլոր մասնաճյուղերին, պարզելու առավել հետաքրքրություն ներկայացնող ձեռնարկները: Դրան հետեւեցին երկու խորհրդակցական ժողովներ՝ Նյու Յորքում եւ Բոստոնում, որոնց արդյունքում էլ հստակեցվեց հետագա գործունեության ծրագիրը: Այդ ծրագրի հիմնական կետերն էին. «ա) տասը թատերախաղեր բազմագրուելով ղրկուեցան Կրտսերներու մասնաճիւղերուն՝ իրենց գործածութեան համար, բ) կազմուեցաւ ծանօթ մտաւորականներէ տասը բանախօսներու ցանկ մը, որոնք արդէն սկսան Երիտ. խումբերու խօսիլ, գ) ծրագրուեցաւ երաժշտական մրցում մը, մեր նորահաս· տաղանդները քաջալերելու նպատակով, դ) հայերէն գրքոյկներու եւ երգապնակներու ծրագիր մը մշակուեցաւ, մեր մանուկնե-

րուն հայեցի կրթութեան համար, ե) օրակարգի վրայ է նաեւ անգլիերէն պարբերաթերթ մը հրատարակելու գաղափարը»:[135]

Շատերի, այդ թվում նաեւ Միության անդամների որոշ մասի կողմից այս ծրագիրը ընդունվեց թերահավատությամբ: Սակայն, Միության եւ նրա ամերիկյան մասնաճյուղերի ղեկավարության ջանքերի շնորհիվ այն շատ արագ սկսեց իրագործվել՝ մեծ աշխուժություն առաջացնելով երիտասարդության մեջ. «Ամերիկայի մէջ Միութեանս Կրտսերաց Լիկանները հետզհետէ աւելի կը զօրանան եւ իրենց ընկերային զանազան գործունէութեանց մէջ շատ աւելի հետաքրքրութիւն ցոյց կուտան ազգային կեանքի հանդէպ եւ կը ջանան մօտէն տեղեակ մնալ մեր պատմութեան եւ մշակոյթին, ի հարկին անգլիերէն լեզուով նման նիւթերու շուրջ դասախօսութիւններ կազմակերպելով»:[136] Երիտասարդական հանձնախմբի գործունեության շնորհիվ հայերեն հրատարակվեց մանկական երգերի «Բուրաստան» գրքույկը, անցկացվեց երաժշտական մրցույթ, Նյու Յորքի FM ռադիոկայաններից մեկով շաբաթը մեկ անգամ սկսեց հեռարձակվել 45 րոպե տեւողությամբ Միության Ռատիո-Ժամ հաղորդումը եւ, վերջապես, սկսվեց «Ararat» անգլիալեզու եռամսյա գրական հանդեսի հրատարակումը: «Ararat» հանդեսը, շնորհիվ հմուտ խմբագիրների եւ հատկապես Լեո Համալյանի, հրապարակած հոդվածների բազմազանության (արձակ եւ բանաստեղծություններ, հուշագրություններ, պատմական, արվեստագիտական, գրախոսական եւ այլ նյութեր) եւ հեղինակների վարպետության, շատ շուտով դարձավ իր տեսակի մեջ ամենակարդացվող եւ հեղինակավոր հրատարակությունը սփյուռքի անգլիախոս ստվար զանգվածի համար:

1966թ. Կրտսերների Լիգա կազմավորվեց նաեւ Նյու Յորքում, որի 120 անդամները բարձրագույն դպրոցի եւ քոլեջների ուսանողներ էին:[137] Ըստ Էության, վերջին անգամ էր, որ Միության տեղեկագրերում հիշատակվում էր Կրտսերների կամ Երիտասարդական Լիգա կազմակերպության մասին: Տարիներ անց ՀԲԸ Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովի 1975-1976թթ. տեղեկագրի անգլերեն տարբերակում, երիտասարդական գործունեությանը անդրադառնալիս, որպես այդպիսին նշվում է AGBU National Youth Association կազմակերպությունը: Իր հերթին, 1975թ. ընդհանուր տեղեկագրում, ԱՄՆ-ին նվիրված բաժնում, նույն այդ կազմակերպությունը կոչվում է «Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն (Էն. Ռայ. Էյ.)»: Անգլերեն հապավումից պարզ է դառնում, որ խոսքը նույն կազմակերպության մասին է, միայն թե անգլերեն տարբերակում «Հայ» բառը փոխարինվել էր «National» բառով:

Այն, որ անվանման փոփոխումը կատարվել էր տարիներ անց, իհարկե, չէր նշանակում, որ այդ ընթացքում Միության երիտասարդական զանազան միությունները դադարել էին գործելուց: Հակառակը, ամերիկահայ երիտասարդության գործունեությունը նույն այդ տարիներին դառնում է ավելի ու ավելի ծավալուն եւ տարաբնույթ: Հենց այդ ժամանակահատվածին են վերաբերում Ալեք Մանուկյանի հետեւյալ խոսքերը ԱՄՆ-ի հայության մասին. «Կարելի չէ չսքանչանալ երիտասարդ սերունդի խանդավառութեան վրայ: Հայ մնալու փափագը այդ սերունդին մէջ ակներեւ է. հիներուն կը մնայ քաջալերել զայն, տալով անոր իր ժառանգութիւնով հպարտ զգալու միջոցներն ու աղբիւրները»:[138]

Արեւելքից ներգաղթածների դերը

Հատկանշական է, որ Միության նախագահը այս խոսքերն ասաց 1963թ., Բեյրութում, Մերձավոր Արեւելքի երկրներ կատարած այցի ընթացքում: Ա.Մանուկյանին՝ ԱՄՆ-ում իր ծրագրերը իրականացնելու համար պետք էին ոչ միայն համախոհներ, այլեւ իրական գործընկերներ՝ կազմակերպիչներ, օգնականներ: Մարդիկ, որոնք ամերիկահայության մեջ ընթացող մշակութափոխման երեւույթների օրինաչափ բնույթը հասկանալով հանդերձ, այնուամենայնիվ, պատրաստ էին դիմակայել դրանց՝ յուրաքանչյուրը իր տեղում: Նման անհատներ, անշուշտ, կային նույն ԱՄՆ-ում: Ակնհայտ էր, սակայն, նաեւ այն, որ ազգային գործիչների՝ եկեղեցականների, մտավորականների, խմբագիրների, ուսուցիչների ճնշող մասը Արեւելքի երկրներից ներգաղթածներն էին: Եվ հենց նման մարդկանց հետ էր կապում իր հույսերը Ա.Մանուկյանը՝ ձգտելով նոր որակ հաղորդել Միության գործունեությանը ԱՄՆ-ում. «Ամերիկահայութիւնը իր ազգապահպանման գործը առաջ տանելու համար պէտք ունի Միջին Արեւելքի օգնութեան»:[139]

Որպես խնդրի արագ լուծման եղանակ, Ա.Մանուկյանը Միության պաշտոնեության շարքերը սկսեց աստիճանաբար համալրել Արեւելքի երկրներից ներգաղթած հայ երիտասարդներով, որոնցից ոմանք գալիս էին ԱՄՆ իր իսկ հրավերով: Դրան մեծապես նպաստեց 1965թ. ամերիկյան կառավարության ընդունած ներգաղթի մասին նոր օրենքը, որի համաձայն, մասնավորապես, այդ երկիր ներգաղթելու իրավունք էին ստանում այնպիսի հայաշատ երկրների քաղաքացիներ, ինչպես, օրինակ, Լիբանանը, Սիրիան, Եգիպտոսը, Հունաստանը: Դա սկիզբն էր այդ տարածաշրջանից դեպի ԱՄՆ ներգաղթի, որը առավել մեծ չափերի հասավ

1970-ական թթ.՝ որպես հետեւանք Լիբանանի քաղաքացիական պատերազմի, Իրանում իսլամական հեղափոխության եւ քաղաքական այլ դեպքերի:

Ներգաղթողների այս ալիքը սկզբունքորեն տարբերվում էր մինչ այդ ԱՄՆ եկած իրենց ազգակիցներից: Նրանք գալիս էին ոչ թե իրենց հայրենի երկրից, այլ ժամանակին իրենց ապաստան տված տարբեր երկրներից: Գալիս էին ոչ թե որպես ընչազուրկ գաղթականներ, այլ որպես որոշակի ունեցվածքի եւ մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք բավական արագ եւ հաջողությամբ էին հարմարվում սոցիալ-մշակութային նոր միջավայրին: Այնուամենայնիվ, նրանց մի մասը սկզբնական շրջանում կարիք ուներ օժանդակության, որը եւ ապահովեցին հայկական եւ ամերիկյան կազմակերպությունները: ՀԲԸ Միությունը 1970-ական թթ. այդ նպատակով հիմնեց հատուկ Սոցիալական (Ընկերային) ծառայության բաժանմունքներ երկրի այն քաղաքներում, ուր հաստատվել էր ներգաղթողների հիմնական զանգվածը՝ Նյու Յորքում, Ուոթերթաունում եւ Լոս Անջելեսում: Այս բաժանմունքների կամ կենտրոնների մատուցած հիմնական ծառայություններն էին՝ աշխատանքի եւ բնակարանի հայթայթում, անգլերենի ուսուցում, իրավաբանական խորհրդատվություն եւ բժշկական խնամք: Միության այս կենտրոնների, որոնք քաջալերվում եւ օժանդակվում էին նաեւ պետության կողմից (օրինակ, 1978թ. Լոս Անջելեսի կենտրոնին քաղաքի իշխանությունները հատկացրել էին 66 հազ. դոլար[140]), անհրաժեշտության մասին է վկայում նրանց դիմողների քանակը. 1984թ. միայն Նյու Յորքում ավելի քան 800 մարդ:[141]

Այս ամենի հետ մեկտեղ, կար մեկ կարեւոր հանգամանք եւս. ներգաղթողները, ընդհանուր առմամբ, անհամեմատելի էին «բնիկ» ամերիկահայերի հետ իրենց ազգային դիմագծով: Եվ դա գիտակցում էին իրենք՝ ամերիկահայերը: Վերապատվելի Կ.Զոպուրյանը ներգաղթած հայերին ուղղած իր «Բաց նամակում» գրում էր. «Շատ հավանական է, որ ամերիկահայերի մոտ դուք չեք գտնի այն ուժեղ հայրենասիրական վերաբերմունքը հայկական խնդիրների հանդեպ, որը ունեք դուք եւ կքննադատեք նրանց»:[142] Այս եւ նման կանխատեսումները արդարացվեցին լիովին: Սակայն, Արեւելքի երկրներից եկածները չբավարարվեցին զուտ քննադատությամբ, այլ սկզբից եւեթ աշխույժ գործունեություն ծավալեցին ազգային տարբեր կազմակերպություններում եւ անհրաժեշտության դեպքում ստեղծեցին նորերը:

Ներգաղթողների թվում էին, բնականաբար, նաեւ ՀԲԸ Միության անդամներ, որոնք, վերահաստատելով իրենց անդամակցությունը Միության ամերիկյան մասնաճյուղերում, մեծապես նպաստեցին նրա գործու-

նեության ծավալմանը: Ժամանակի ընթացքում նրանցից ոմանք աչքի ընկան մեծագումար նվիրատվություններով, իսկ ոմանք էլ դարձան Միության տարբեր մակարդակի ղեկավար մարմինների անդամներ: Որպես օրինակ, նշեմ մի քանիսին այդ ստվար զանգվածից. Միության ընդհանուր տնօրեններ՝ Գ.Կիրակոսյան եւ Միսակ Հայկենց, «Ցուշարար - Միութիւն» ամսագրի բազմամյա խմբագիր Անդրանիկ Փոլադյան, Կենտրոնական Վարչության անդամներ Նազար Նազարյան, Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի գործադիր տնօրեն Երվանդ Ազատյան, վերը հիշատակված Ալպեր Պոյաճյանը եւ շատ ուրիշներ:

Լիբանանում, Սիրիայում եւ Եգիպտոսում նրանք իրենց անմիջական մասնակցությունն էին բերել նաեւ Միության երիտասարդական շարժմանը: Ուստի, բնական է, որ ամերիկահայ երիտասարդության հետ միասնաբար նրանք վերակազմակերպեցին նաեւ եղած միավորների աշխատանքը եւ կոչեցին դրանք իրենց համար այդչափ հարազատ Հայ Երիտասարդաց Ընկերակցություն անունով:

Մարզական եւ մշակութային ծրագրեր

1978թ. Հայ Երիտասարդաց Ընկերակցությունը մասնաճյուղեր ուներ Նյու Յորքում, Նյու Ջերսիում, Ֆիլադելֆիայում, Ռիչմոնդում, Բոստոնում, Դետրոյթում, Չիկագոյում, Կալիֆորնիայում (դեռեւս 1969թ.)՝ Լոս Անջելեսում, Ֆրեզնոյում, Պասադինայում եւ Գլենդեյլում: Սկզբից եւեթ նրանք գործեցին տարբեր ուղղություններով. կազմակերպեցին հանգանակություն հօգուտ Լիբանանի հայության, օժանդակեցին Միության Ընկերային ծառայության բաժանմունքներին: Նյու Յորքում ՀԵԸ-ը, բացի շաբաթական հավաքույթներից, կազմակերպեց պարահանդեսներ, որոնցից յուրաքանչյուրին մասնակցեցին աւելի քան 600 երիտասարդներ,[143] իսկ Ֆրեզնոյում եւ Բոստոնում՝ հայկական արվեստների փառատոներ: Այդ տարիներին ՀԲԸ Միության Ընդհանուր ժողովներին առընթեր տեղի էին ունենում նաեւ ՀԵ Ընկերակցության համագումարները:[144]

Միության երիտասարդական կազմակերպությունների երկարատեւ աշխույժ գործունեությունը սպորտի բնագավառում հնարավոր դարձրեց Միության Հյուսիսային Ամերիկայի Առաջին Օլիմպիական խաղերի անցկացումը: Խաղերը, որոնց մասնակիցներն էին ԱՄՆ-ի եւ Կանադայի տարբեր քաղաքներից ժամանած 300 մարզիկ-մարզուհիներ, տեղի ունեցան 1982թ. հունիսին Տորոնտոյում Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովի 68-րդ պատգամավորական ժողովի օրերին: Առաջին Օլիմպիական խաղերի հաջողությունը այնչափ տպավորիչ էր, որ որոշվեց այն դարձնել ամենամյա: Հաջորդ տարիներին Միության Հյուսիսային Ամերիկայի Օլիմպիական խաղերը կազմակերպվեցին Դետրոյթում, Բոստոնում, Մոնրեալում, Լոս Անջելեսում, Տորոնտոյում, Մայամիում եւ այլուր: Այս խաղերի հաջողության մասին էր վկայում նրանց մասնակիցների թվի մշտական աճը: 1984թ. Բոստոնում կայացած Երրորդ խաղերին մասնակցեցին արդեն ավելի քան 600 երիտասարդներ, մեկ տարի անց՝ Մոնրեալում նրանց թիվը հասավ 750-ի: Այս թիվը գրեթե կրկնապատկվեց Հինգերորդ խաղերի ժամանակ (1986թ., Լոս Անջելես), որին մասնակցեցին ավելի քան 1.300 մարզիկներ ԱՄՆ-ից, Կանադայից, Լիբանանից, Գերմանիայից եւ Անգլիայից: Մարզիկների եւ շուրջ 10.000 հանդիսատեսների համար ոգեւորիչ պահերից էր փակման արարողությունը, երբ նրանց ողջույնի խոսքով դիմեցին Կալիֆորնիայի նահանգապետ Ջորջ Թյոքմենջյանը, Միության նախագահ Ալեք Մանուկյանը եւ Հայաստանից հրավիրված աշխարհահռչակ ծանրամարտիկ Յուրի Վարդանյանը: Դրա հետ մեկտեղ ԱՄՆ-ում եւ Եվրոպայի երկրներում (Ֆրանսիայում, Բելգիայում եւ այլուր) անցկացվեցին ավանդական դարձած Միության համասփյուռքյան եւ տարածաշրջանային Նավասարդյան մարզական խաղերը:

Ամերիկահայերի կրտսեր սերնդին հայ ազգային արժեքներին հաղորդակից դարձնելու առումով հատկապես հարկ է նշել 1964թ. գործող Քէմպ Նուպարը՝ ԱՄՆ-ում Միության առաջին աշակերտական ամառային ճամբարը, որ նախատեսված է 8-15 տարեկան երկսեռ երեխաների համար: 1967թ. այս ճամբարի համար գնվեց մեծ տարածք Անդերում (Քեցքիլ), Նյու Յորքից երեք ժամ հեռավորության վրա: Յուրաքանչյուր ամառ ճամբար հանգստի են գալիս ավելի քան 250 երեխաներ, որոնց համար դա եզակի հնարավորություն է շփվել ազգակից հասակակիցների հետ, ապրել հայաշունչ հավաքական կյանքով: Մեծի մասամբ ամերիկածին այս երեխաներից շատերը Քէմպ Նուպարում է, որ առաջին անգամ ծանոթանում են հայ գրին ու խոսքին, հայ երգին ու պարին: Այստեղ ստեղծված են բոլոր հարմարությունները տարբեր մարզախաղերի համար՝ բասկետբոլ, բեյսբոլ, ձիավարժություն, լող եւ այլն: 1985թ. ամռանը Քէմպ Նուպարում կազմակերպվեց ՀԲԸ Միության Հյուսիսային Ամերիկայի Սկաուտական առաջին բանակումը, որի մասնակիցներն էին տարբեր քաղաքներ ներկայացնող 150 արիներ եւ արենուշներ:

1997թ. ճամբարը հիմնովին վերանորոգվեց, եւ կառուցվեց Նազարեան Կեդրոնի երկհարկանի շենքը: Ճամբարի վերանորոգումը հնարավոր դարձավ հանգուցյալ Ալեք Մանուկյանի նախապես տրամադրած 400.000 դոլարով, իսկ այնուհետեւ՝ Միության Կենտրոնական Վարչա-

կան Ժողովի փոխնախագահ Նազար Նազարյանի նվիրաբերած 500.000 դոլարի շնորհիվ: Հարկ է նշել, որ Ն.Նազարյանի եւ իր եղբայրներ՝ Կարպիսի եւ Նուպարի բարերարությամբ «...վարժարան եւ կեդրոններ կառուցուեցան Պէյրութի, Պուէնոս Այրէսի, Սետել Բրուքի (Նիւ Ճըրզի) ու Գանոկա Փարքի մէջ, Գալիֆորնիա: ...Նազար եւ Արտեմիս Նազարեաններ $600.000 նուիրեցին Մայր Աթոռ Ս.Էջմիածնին, Երեւանի մէջ կառուցուող Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարի Տրդատայ Մատուռին կնքահայրութիւնը ստանձնելով»:[145]

1969թ. բացվեց Միության երկրորդ ամառային ճամբարը ԱՄՆ-ում՝ Ռէմպ Արարատը, Միչիգան նահանգում, ուր առաջին տարում իրենց ամառը անցկացրին 122 երեխա: Այս ճամբարը գործեց մինչեւ 1977թ.:

Ամերիկահայ երիտասարդության ազգային ինքնության պահպանման առումով կարեւոր էր գեղարվեստական զանազան խմբերի աշխույժ գործունեությունը: 1969թ. կազմավորվեցին Անդրանիկ (Նյու Յորք), Վահագն (Դետրոյթ), Արարատ (Ֆիլադելֆիա), իսկ մի քանի տարի անց՝ Տարոն (Բոստոն), Սարդարապատ (Լոս Անջելես), Սեւակ (Ռիչմենդ) երգիպարի երիտասարդական խմբեր: Այս, ինչպես նաեւ ԱՄՆ ներգաղթած հանրաճանաչ Համբարձում Պերպերյանի ղեկավարած Քնար (Ուոթերթաուն) եւ Հայաստան երգչախմբերի (Նյու Յորք) ելույթները ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում անցնում էին աննախադեպ հաջողությամբ եւ մեծ խանդավառություն էին առաջացնում ամերիկահայ տարբեր սերունդների մեջ: Այս առումով հատկապես մեծ արձագանք ունեցան Անդրանիկ պարախմբի (որը ուներ արդեն 100 անդամ) ելույթները Նյու Յորքի հանրաճանաչ Կարնեգի Հոլլ (1969թ.) եւ Լինքոլն Սենթեր (1980, 1990 եւ 1993թթ.) համերգասրահներում: Պարախմբի պատմության մեջ կարեւոր իրադարձություններից էին նաեւ նրա հյուրախաղերը Հայաստանում 1989 եւ 1990թթ.: 1970-ական թթ. կազմավորվեցին Բոստոնում՝ Ցակոբ Պարոնեան, Նյու Յորքում՝ Արտաշատ, Ֆրեզնոյում՝ Ադամեան, Լոս Անջելեսում՝ Արտավազդ, Ֆիլադելֆիայում՝ Ռիլլամ Սարոյեան, Նյու Յորք- Նյու Ջերզիում Արտաշատ եւ այլ թատերախմբերը:

Այդ տարիներին կազմակերպված բազմաթիվ մշակութային միջոցառումներից հիշատակության են արժանի նաեւ գեղանկարչական ցուցահանդեսները: 1978թ. փետրվարին Նյու Յորքում Միությունը կազմակերպեց առաջին մեծ ցուցահանդես-վաճառքը, որին ներկայացված էին 17 ամերիկահայ նկարիչների գործերը, Լեւոն Ժամկոչյանի նկարների, հնագույն ժամանակների հայկական մետաղային արվեստի Փոլ Պտուկյանի հավաքածոն եւ այլն: Աննախադեպ էր 1978թ. ՀԲԸ Միության եւ փարիզաբնակ հայտնի արվեստաբան Կարիկ Պասմաճյանի նախաձեռնությամբ կազմակերպված Խորհրդային Հայաստանի ժամանակակից նկարիչների գործերի ցուցահանդես-վաճառքը: Մեծ հաջողություն ունեցավ նաեւ Միության Սեղլ Բրուկի կենտրոնում կազմակերպած Art Expo' 82 ցուցահանդեսը, ուր ներկայացված էին Եվրոպայում եւ Կանադայում բնակվող հանրաճանաչ արվեստագետներ՝ Գառզուի, Ժանսեմի, Արտո Չաքմաքչյանի, Ռիշար Ժերանյանի, Ժան Գազազյանի եւ այլոց գործերը, որոնք մինչ այդ անծանոթ էին ամերիկահայերին: ԱՄՆ-ի արեւմտյան ափում՝ Ֆրեզնոյում 1978թ. սկսած տեղի ՀԵ Ընկերակցությունը կազմակերպում է Կենտրոնական Կալիֆորնիայի Հայ արվեստի փառատոներ, ուր ներկայացվում են ամերիկահայ հեղինակների նկարչական, երաժշտական, գրական, լուսանկարչական եւ այլ գործերը:

Նյու Յորքում ՀԲԸ Միության աշխատանքների աշխուժացմանը մեծ չափով նպաստեց Մանհեթենում հինգհարկանի շենքի գնումը, որի բացումը տեղի ունեցավ 1964թ. դեկտեմբերին: Այստեղ տեղափոխվեցին ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչությունը եւ ԱՄՆ-ի Կենտրոնական Հանձնաժողովի գրասենյակներն ու գրադարանը: Բացի այդ, շենքի հարմարությունները հնարավորություն տվեցին կազմակերպել զանազան դասախոսություններ, հավաքույթներ, ցուցահանդեսներ, հայոց լեզվի եւ պատմության դասընթացներ եւ այլն: Հենց այս շենքում 1968թ. Միությունը հյուրընկալեց ԱՄՆ առաջին անգամ ժամանած Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին եւ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին: 1973թ. ՀԲԸ Միության այդ զույգ կենտրոնները ժամանակավորապես տեղափոխվեցին Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան թեմի Առաջնորդարանի Նյու Յորքի համալիրի մաս կազմող Կիլլապի Կիլպէնկեան շենքը: 1980թ. Միությունը ընդարձակ կալվածք գնեց Նյու Յորքին շատ մոտ գտնվող Սեղլ Բրուկում (Նյու Ջերզի): Բացի գրասենյակներից, այն օժտված էր տարբեր այլ հարմարություններով (մեծ թվով սրահներ, բեմ, արդիական խոհանոց եւ այլն), ինչի շնորհիվ էլ դարձավ Նյու Յորք - Նյու Ջերզիի շրջանի հայության մշակութային եւ ընկերային կյանքի կարեւոր կենտրոններից մեկը: Սակայն 1992թ. ՀԲԸ Միության ղեկավարությունը նպատակահարմար համարեց հրաժարվել այդ կալվածքից եւ վերստին հաստատվեց Նյու Յորքում:

Կրթական ծրագրերը. ամերիկահայերի արձագանքը

Ա.Մանուկյանի գլխավոր նպատակն էր հատկապես ամենօրյա հայկական դպրոցների հիմնումը ԱՄՆ-ում: Միեւնույն ժամանակ, նա, երեւի

թե, առավել քան որեւէ մեկը, գիտակցում էր, որ ՀԲԸ Միությունը դեռ պատրաստ չէր դրան: Անհրաժեշտ էր մեծ եւ բարդ նախապատրաստական աշխատանք՝ միջոցների հայթայթում, որակյալ ուսուցչական կազմի ձեւավորում, բավարար թվով աշակերտների առկայություն, հայագիտական ծրագրերի ու դասագրքերի մշակում եւ այլն: Բայց այս ամենը ժամանակ էր պահանջում, իսկ մինչ այդ Միությունը 1954թ. սկսեց նպաստներ հատկացնել ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում արդեն գործող միօրյա հայկական վարժարաններին: Առաջին դրամական նպաստները հատկացվեցին Էզբերի Պարքի, Թրոյի, Բրոնքսի եւ այլ դպրոցներին: Հարկ է նշել, որ նույնիսկ նման, համեմատաբար ոչ մեծ գումարների հատկացումը կապված էր դժվարությունների հետ, քանզի այդ պահին Միությանը նվիրաբերած գումարները նախատեսված չէին ամերիկահայ դպրոցների համար: Որպես հարցի ժամանակավոր լուծում, որոշվեց միօրյա դպրոցներին հատկացնել «փոխան ծաղկեպսակի» ստացված գումարները:[146] Հետագա տարիներին հնարավոր դարձավ նպաստներ հատկացնել մի շարք քաղաքներում՝ Լինում, Ուստրում, Փրովիդենսում, Դետրոյթում, Լոս Անջելեսում, Բոստոնում եւ այլն գործող միօրյա եւ ամենօրյա ազգային դպրոցներին: Միությունը սահմանեց նաեւ դպրոցական մրցանակներ եւ հոգաց տկարակազմ աշակերտների օդափոխության ծախսերի որոշ մասը:

Բացի այդ, Միությունը որոշ քաղաքներում սկսեց հիմնել սեփական միօրյա վարժարաններ: Այսօր շաբաթօրյա դպրոցներ են գործում Կոսա Մեսայում (Կալիֆորնիա), Կլիվլենդում, ինչպես նաեւ Չիկագոյում Միության նորակառույց կենտրոնում հաստատված Սիսակ Վարժապետեան վարժարանը:

Ամերիկահայերի պատմության մեջ ամենակարեւոր տարեթվերից են 1964 եւ 1965 տարիները, երբ Մեծ Լոս Անջելեսում՝ Էնսինոյում եւ Մոնտեբելոյում բացվեցին առաջին հայկական ամենօրյա դպրոցները ԱՄՆ-ում՝ Ֆերահեան եւ Մեսրոպեան վարժարանները: Դրանով իսկ սկիզբ առավ որակապես նոր փուլը ամերիկահայերի ազգամշակութային գործունեության մեջ: Այդուհետ տարբեր ազգային կազմակերպություններ եւ անհատ մարդիկ, ավելի մեծ եռանդով եւ հաստատակամությամբ ձեռնամուխ եղան հայկական ամենօրյա դպրոցների հիմնադրմանը:

1967թ. դեկտեմբերին Նյու Յորքում գումարվեց ՀԲԸ Միության հերթական 54-րդ Ընդհանուր ժողովը, ուր նախագահ Ա.Մանուկյանը հանդես եկավ մի ելույթով, որը ծրագրային նշանակություն ունեցավ Միության հետագա ողջ գործունեության համար: «Ի՞նչ ապագայ կը սպասէ Ամերիկայի եւ Եվրոպայի վաղուան հայութեան: Մեծ եղեռնի վաղորդայնին այս

երկրամասերը ապաստան գտնող անձերուն հետզհետէ անհետացումէն վերջ, ապագային ի՞նչ դիմագիծ պիտի ներկայացնեն հոն մեր համայնքները»,- հարց էր տալիս նա եւ պարզաբանում. «Բնաշխարհի այդ մնացորդներուն զաւակները գիտենք թէ որոշ չափով իրենց ծնողներուն ազդեցութիւնը կը կրեն դեռ, եւ եթէ շատերը իրենց մայրենի լեզուն կ'անգիտանան, կը սիրեն հայ եկեղեցին եւ որոշ չափով կը պահեն իրենց ընտանեկան բարքերն ու աւանդութիւնները: Բայց անոնք իրենց կարգին ծնողքներ են արդէն եւ անջրպետը սահմոկեցուցիչ կերպով լայն բացուած է անոնց զաւակներուն ու թոռներուն եւ հայութեան ինքնութիւնը յատկանշող ու պահպանող տարրերուն միջեւ: Այս զոյգ երկրամասերուն մէջ ունինք կէս միլիոնի մօտ ազգակիցներ եւ եթէ անոնց համար հայ անունը աննշան բառ մը պիտի դառնայ օր մը, հաւատարիմ, պարտաճանաչ ամերիկացիներ, ֆրանսացիներ, իտալացիներ, եւն. ըլլալով մէկտեղ, հայութեան հայրենիքը անտարբեր պիտի թողու զիրենք, անոր գոյութեամբ ու վերելքով հպարտ պիտի չզգան իրենք զիրենք եւ ոչ մէկ ներշնչում պիտի կրեն անկէ, ազգին համար ամէնէն եղերական կորուստը պիտի ըլլայ ասիկա»:

Իրադրության նման սթափ եւ իրապաշտ գնահատումից հետո Ա.Մանուկյանը, իրեն հատուկ ոճով առաջարկում էր հարցի արմատական լուծումը. «Որքան ահեղ ալ ըլլայ միջավայրին, մթնոլորտին ճնշումը Ամերիկայի ու Եվրոպայի մէջ, հաստատ համոզումս է թէ պէտք է գործել... կը խորհիմ որ պէտք է Ամերիկայի մէջ ամէնօրեայ հայ դպրոցներ ունենանք: Արդէն կան մէկ երկու հատ եւ հարկ է զանոնք շատցնենք: ...Այս հանդիսաւոր պահուն կը յայտարարեմ որ մեր Միութիւնը սիրով պիտի գործակցի ազգային իշխանութեան, զանազան կազմակերպուած հիմնադրամներու վարչութեանց հետ՝ այդ նուիրական նպատակին իրագործման համար»:[147]

Կարելի էր ենթադրել, որ նախագահի նման հայտարարությանը անմիջապես կհետեւեն գործնական քայլեր, բայց անցնում է մեկ տարի եւ հաջորդ Ընդհանուր ժողովում նա նորից վերադառնում է այդ հարցին, մեկ անգամ եւս փաստարկելով ամենօրյա հայկական դպրոցի անհրաժեշտությունը: Անկասկած, Ա.Մանուկյանը ամենից լավ գիտեր, թե որքան դժվար է լինելու հաղթահարել ամերիկահայերի մի զգալի հատվածի մերժողական, բացասական վերաբերմունքը ազգային կրթության, ազգային դպրոցների հանդեպ ընդհանրապես:

Նման վերաբերմունքը հատուկ ուսումնասիրել է ամերիկահայ սոցիոլոգ Էնի Բակալյանը: Իր արժեքավոր գրքում, հենվելով «խորհրդանշական էթնիկության» (symbolic ethnicity) տեսության վրա, նա բացահայտում եւ վերլուծում է ամերիկահայերի ազգային ինքնագիտակցության

որոշակի առանձնահատկությունները:[148] Է.Բակալյանը նշում է, որ ի տարբերություն Արեւելքի երկրների, ԱՄՆ-ում ներգաղթողների ազգային պատկանելության եւ դրա արտահայտման կերպն ու ժամանակը՝ նրանցից յուրաքանչյուրի համար անձնական եւ կամավոր ընտրության հարց է: Եվ քանի որ այդ երկրում նրանց կյանքի գերակայող նպատակը, շարժիչ ուժը՝ սոցիալ-տնտեսական հաջողությունն է («ամերիկյան երազանքը»)՝ անհատապաշտության հետ մեկտեղ, ապա ազգայինը պահպանվում է այնքանով, որքանով չի հակասում նույն այդ նպատակին: Նման պայմաններում ազգայինը շատ հաճախ դուրս է մղվում նրանց առօրյա կյանքից եւ ընդունում է իրենց նախնիների, ազգային արմատների հանդեպ խորհրդանշական պարտավորության ձեւ: Դա նկատելի է ամենատարբեր ասպարեզներում, սակայն, առավել ցայտուն է դրսեւորվում հայերեն լեզվի, ազգային կրթության պարագայում: «Հայերեն սովորելը ծանր գործ է», «ազգային դպրոցները չափից ավելի ազգային են, սահմանափակ եւ մեկուսացված», «չեմ հավատում ջոկողությանը (սեգրեգացիա), նույնիսկ եթե դա արվում է հանուն բարի նպատակի՝ հայերեն լեզու սովորելու», «ցանկանում եմ, որ երեխաներս սովորելիս շփվեն տարբեր ազգության աշակերտների հետ»՝ ահա այսպիսին էր եւ է ամերիկահայերի ճնշող մասի վերաբերմունքը հայկական դպրոցների հարցում:[149]

Ազգամշակութային նման մթնոլորտում Միության նախագահից պահանջվում էր մեծ համառություն, վճռականություն իր գաղափարը իրականացնելու համար: Տիրող տրամադրությունները («...վճռած ենք հոսանքին դէմ իսկ թիավարելով դէպի մեր նպատակակէտը երթալ»), գիտակցելով հանդերձ, նա այնուամենայնիվ, ազգային ինքնության պահպանման երաշխիքը տեսնում էր հայոց լեզվի մեջ. «...կարելի՞ է կ'ըսեմ, նոյնիսկ հոս, որպէս ճշմարիտ ամերիկացի ապրելով եւ գործելով մեկտեղ, պահել մեր հայու հոգին, մեր աւանդութիւնները, ինքզինքնիս կապուած զգալ մեր ազգակիցներուն ովկիանոսներէն անդին, եւ հոգեկան սնունդ, ներշնչում ստանալ տոհմային կեանքի յաւերժական աղբիւրներէն. այսինքն մեր վերածնած հայրենիքէն, մեր եկեղեցիէն, մեր պատմութենէն, մեր մշակոյթէն: Այո, կարելի է, երբ ունինք այդ ամէնուն հրաշագործ ոսկի բանալին, հայ լեզուն: Սակայն, աւաղ, յայտնի իրողութիւն մըն է թէ այսօր ամերիկահայ նոր սերունդին մէջ իրենց մայրենի լեզուն նոյնիսկ շատ անկատար կերպով խօսողները մատի վրայ կը համրուին: Պարագան նոյնն է եվրոպական երկիրներու մէջ հասակ նետող երիտասարդութեան համար»:[150]

Սակայն նույնիսկ այն ծնողները, որ դեմ չէին իրենց զավակներին ուղարկել հայկական ամենօրյա դպրոց, մտավախություն ունեին դրանց

կրթական մակարդակի վերաբերյալ: Միության նախագահը վստահեցնում էր. «...մեր հաստատուելիք դպրոցները ամբողջութեամբ ու անթերի կերպով պիտի գործադրեն իրենց աստիճանին համապատասխան ամերիկեան վարժարաններու ծրագիրը, եւ հետեւաբար մեր տղաքը իրենց բնական շրջավայրէն զրկելու, երկրին կրթական դրութեան պահանջներէն շեղեցնելու կամ անոնց անգլիերէն լեզուին տիրապետումին խոչընդոտներ ստեղծելու խնդիր չկայ բնաւ: Ամերիկեան վարժարաններու ուսմանց առարկաներէն ոչ մէկը անտես պիտի առնուի եւ անոնց վրայ պիտի պատրաստուին հայերէնը, ազգային պատմութիւնը եւ անհրաժեշտ նկատուած տոհմային ուրիշ ուսումներ»:[151]

Բայց կար եւս մեկ, բոլորովին այլ բնույթի խնդիր՝ կապված դպրոցների հիմնադրման եւ գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների հետ: Այստեղ հարկ է հատուկ ընդգծել, որ Միության նախագահի ծրագրերը շատ ավելի ընդարձակ էին եւ մեծ գումարներ էին պահանջում: Եվ քանի որ տվյալ դեպքում խնդրո առարկա էր դարձել ամերիկահայ դպրոցը, ապա որոշվեց նյութական միջոցների հարցը հանձնարարել ՀԲԸ Միության Ամերիկայի Կենտրոնական Հանձնաժողովին: Հանձնաժողովը հարցը քննելուց հետո որոշում է ամենօրյա հայկական դպրոցներ հիմնել ոչ միայն ԱՄՆ-ում, այլեւ Կանադայում, եւ այդ նպատակով ձեռնարկում է հանգանակություն՝ երկու միլիոն դոլարի նշանակետով: Այս պատասխանատու եւ դժվարին գործի ղեկավարումը Ա.Մանուկյանի առաջարկությամբ հանձնարարվեց Միության ակտիվ գործիչ, հայտնի բարերար Էդուարդ Մարտիկյանին, որը մեկ տարի անց (1970) ընտրվեց ԱՄՆ-ի ՀԲԸ Միության Կենտրոնական Հանձնաժողովի նախագահ: Նրա նախագահության երկար շրջանը՝ շուրջ 15 տարի, նշանավորվեց ԱՄՆ-ի բոլոր մասնաճյուղերի արդյունավետ եւ աշխույժ գործունեությամբ:

Վարժարաններ ԱՄՆ-ում

1969թ. սեպտեմբերին, Դետրոյթի մոտակայքում՝ Սաութֆիլդում բացվեց ԱՄՆ-ում ՀԲԸ Միության առաջին ամենօրյա դպրոցը, որը մեկ տարի անց կոչվեց Ալեք Մանուկեան, իսկ ավելի ուշ՝ Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարան: Դետրոյթի ընտրությունը պատահական չէր. այն Ա.Մանուկյանի հարազատ քաղաքն էր, ուր նա ընտանիքով ապրում եւ աշխատում էր արդեն երկար տարիներ: Դպրոցի հիմնումը այդ քաղաքում պետք է երաշխավորեր Միության նախագահի մշտական հոգածությունը նրա կարիքների մասին, առավել վստահություն ներշնչեր նրա ապագա-

յի վերաբերյալ: Առաջին տարում վարժարանը ուներ միայն մանկապարտեզ՝ 10 աշակերտներով եւ 2 վկայյալ ուսուցչուհիներ: Բայց ընդամենը չորս տարի անց՝ 1973-74 ուսումնական տարում աշակերտների թիվը հասավ 153-ի եւ դպրոցը ունեցավ երկրորդական բաժնի առաջին դասարանը: Դպրոցի շենքը, որը կառուցվել էր Ա.Մանուկյանի նվիրատվությամբ, օժտված էր անհրաժեշտ բոլոր պայմաններով, եւ յուրաքանչյուր 15-16 աշակերտի դիմաց կար մեկ ուսուցիչ: Դպրոցում գործում էին երգչախումբ, պարախումբ, նվագախումբ, հրատարակվում էին «Էրեբունի» ամսաթերթը եւ «Vision» («Տեսիլք») տարեգիրքը: Ինչպես եւ ԱՄՆ-ի բոլոր այլ ազգային դպրոցները, այստեղ նույնպես կիրառվում էին նահանգի կողմից վավերացված կրթական ծրագրերը, որոնց զուգահեռ դասավանդվում էին նաեւ հայագիտական առարկաներ (հայոց լեզու, պատմություն եւ կրոն): Այս ամենի շնորհիվ Ալեք Մանուկեան երկրորդական վարժարանը պաշտոնապես ճանաչվեց Միչիգան նահանգի Կրթական բաժանմունքի, Անկախ դպրոցների ընկերակցության եւ ամերիկյան այլ մասնագիտացված կազմակերպությունների կողմից: 1978թ. դպրոցը տվեց առաջին՝ թվով 10 շրջանավարտները, որոնք շարունակեցին իրենց ուսումը տարբեր համալսարաններում: Նույն 1978թ. դպրոցը դարձավ լրիվ երկրորդական՝ մանկապարտեզից մինչեւ 12-րդ դասարան, որոնցում աշակերտում էին 200 երեխա:[152] Շնորհիվ վարժարանի կրթական բարձր մակարդակի (դրա վկայությունն են նրա սաների մեծ հաջողությունները նահանգային եւ համաամերիկյան դպրոցական մրցույթներին) նկատվում է աշակերտների մշտական աճ՝ 2003թ. սաների թիվն էր 375:

Ուշագրավ է, ի դեպ, որ Ալեք եւ Մարի Մանուկեան վարժարանը մաս է կազմում Սաութֆիլդում տեղակայված լայնատարած կենտրոնի, որը ընդգրկում է նաեւ Ս.Հովհաննես եկեղեցին, Մանուկեան Հանգստեան Տունը եւ Ալեք եւ Մարի Մանուկեան թանգարանը: Այս կենտրոնի սեփականատերն է Դետրոյթի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ընկերակցութիւնը, որի նախագահն է՝ հետեւելով իր հոր օրինակին՝ Ռիչարդ Մանուկյանը:

Ալեք Մանուկեան դպրոցի հետ գրեթե միաժամանակ ՀԲԸ Միությունը վարժարան հիմնեց նաեւ Բոստոնի մերձակա Ուոթերթաուն հայաշատ քաղաքում: Այս քաղաքը ԱՄՆ-ի արեւելյան ափի հայկական ամենակարեւոր կենտրոններից է, ուր տեղակայված են տարբեր՝ կուսակցական, մշակութային, եկեղեցական եւ մի շարք այլ ազգային հիմնարկություններ: Սկզբնական շրջանում Ուոթերթաունի դպրոցը նույնպես կազմված էր մանկամսուր-մանկապարտեզից, իսկ 1973-1974 տարեշրջանում ունեցավ նախակրթարանի առաջին դասարանը: Ուշագրավ է, որ 1976-ին նրա աշակերտների թվում էին նաեւ իռլանդացի, իտալացի, իսպանացի երեխաներ, որոնք հայազգի աշակերտների նման ուսանում էին հայերեն լեզու ու պատմություն: Հետագայում նման դեպքեր գրանցվել են ԱՄՆ-ի եւ Կանադայի հայկական որոշ այլ դպրոցներում եւս, ինչը պայմանավորված էր նրանց կրթական եւ կարգապահական բարձր մակարդակով: Եվ այնուամենայնիվ, անցնում էին տարիներ, բայց աշակերտների թվաքանակը Ուոթերթաունի դպրոցում գրեթե չէր աճում, ինչն էլ հարցականի տակ էր դնում նրա գոյության անհրաժեշտությունը: Ի վերջո, ՀԲԸ Միության Ուոթերթաունի ամենօրյա վարժարանը 1994թ. փակվեց:

Բնական է, որ որեւէ հայկական դպրոցի փակումը սփյուռքում միշտ էլ դիտվել է որպես խիստ անցանկալի երեւույթ: Այս դեպքում, սակայն, հարցը ուներ նաեւ անձնային երանգ, քանի որ Ուոթերթաունի դպրոցի փակումը տեղի ունեցավ Լուիզ Մանուկյան Սիմոնի՝ որպես ՀԲԸ Միության նախագահ ընտրվելուց մոտ երեք տարի անց: Նույնիսկ Միության շրջանակներում ոմանք այն կարծիքն էին հայտնում, որ նոր ղեկավարությունը դավաճանում է ազգային կրթության հարցում Միության ավանդական քաղաքականությանը ընդհանրապես: Դրանով իսկ հարցը ստանում էր սկզբունքային նշանակություն, ինչն էլ անհրաժեշտ դարձրեց նրա պարզաբանումը Միության ղեկավարների կողմից:

Նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը այս հարցին անդրադարձավ 1993թ. օգոստոսին, Նյու Յորքում կայացած Միության ԱՄՆ-ի մասնաճյուղերի ատենապետների համաժողովում: «Երեք հայկական դպրոցներ կը գործէին Պոսթոնի շրջանին մէջ,- նշում էր նա- եւ ոչ մէկը ունէր առաւել քան 125 աշակերտ, եւ քաղաքական ու կրօնական պատճառներով կարելիութիւն չկար համատեղելու անոնց միջոցներն ու ճիգերը: Մենք, նախ կը մրցէինք հանրային դպրոցներուն հիանալի համակարգի մը հետ, որ անշուշտ ձրիավարժ էր: Մեր պիտճէին բացը 5 տարուան ընթացքին $100.000-էն բարձրացաւ 200.000 տոլար: Գրեթէ չկար համայնքին կողմէ որեւէ նիւթական նեցուկ: Կրթաթոշակներէն (ուսման վարձ-Էդ.Մ.) մուտքը շատ քիչ էր, եւ դպրոցը կը գտնուէր Ուոթերթաունի Ս. Յակոբ եկեղեցւոյ գետնայարկը: Եկեղեցին մեզմէ կ'առնէր տարեկան 65.000 տոլար վարձք: Ամէն տարուան յաւելումով շաբաթավերջուն ի՛նք կը գործածէր մեր դպրոցին դիւրութիւնները, հետզհետէ նուազեցնելով մեր խաղավայրն ու տարածքը: Մենք առաջարկեցինք եկեղեցիին որ ինք ստանձնէ դպրոցը, որու վարձքին փոխարէն ՀԲԸՄ-ը տարեկան յատկացում մը կատարէր: Բայց՝ հետաքրքրուած չէին: Մենք սկսանք մտածել նոր դպրոցի մը մասին, բարձրագոյն աշխատավարձով պաշտօնի կոչելու համար աւելի որակաւոր ուսուցիչներ, ընդլայնելով անհրաժեշտ դասանիւթեր, ձեռք ձգելու աւելի բարձր մակարդակ. սակայն յանգեցանք այն եզրակացու-

թեան որ մօտիկ ապագային պիտի ունենայինք կէս միլիոն տոլարի բաց մը 125 աշակերտի համար, որոնց 45% մանկամսուրի եւ մանկապարտէզի մէջ պիտի ըլլային»:[153]

Իր հերթին, Միության Կենտրոնական Վարչական Ժողովի փոխնախագահ Պերճ Սեդրակյանը Բեյրութի «Զարթօնք» թերթին տված հարցազրույցում ասում էր. «Հարցը հետեւեալն է. ի գիր բոլոր մակարդակներու զիջումի մենք պիտի շարունակէի՞նք դպրոցը պահել, միայն թէ ըստի որ հայկական դպրոցը կանգուն կը պահենք, եւ արդեօք այդ դպրոցին աշակերտները հայկական կրթական հաստատութիւն յաճախած ըլլալու գոհունակութիւնը պիտի ունենայի՞ն: Կրթական Ցանձնախումբին եւ մասնագէտներուն հետ խորհրդակցելէ ետք Կեդրոնական Վարչական Ժողովի որոշումով դպրոցը փակեցինք: Այս բոլորին մէջ Լուիզ Սիմոն պարզ անդամի մը դերը կատարեց եւ երբ որոշումը կ'առնէինք, ան կատակով ըսաւ որ վաղը պիտի ըսեն թէ հօրը տեղը առաւ, բայց սկսաւ դպրոցներ փակել»:[154]

Հարցը, սակայն, ինչպես նշվեց, չէր սահմանափակվում Ռոթերթաունի դպրոցով. Միության ղեկավարությունը ուղղակի կամ անուղակի ձեւով քննադատվում էր ազգային կրթության հանդեպ իր որդեգրած կեցվածքի համար: Պատասխանելով նման մեղադրանքներին՝ Պ.Սեդրակյանը նշում էր. «Ռոթերթաունի դպրոցի փակումը ողբալով Միութեան կրթական ընդհանուր քաղաքականութիւնը կը դատեն եւ չեն ուզեր տեսնել նոյն շրջանին եւ նոյն ղեկավարութեան կողմէ Լոս Անճելեսի մէջ կրթական նպատակներով ՀԲԸՄ-ի հինգ միլիոն տոլարէ աւելի ներդրումը...»:[155] Խոսքը ԱՄՆ-ի արեւմտյան ափում Կալիֆորնիայում Միության առաջին դպրոցի մասին էր, որը հիմնվել էր դեռեւս 1976թ.:

Այս դպրոցի հիմնադրումը սպասելի էր եւ պայմանավորված էր այն փոփոխություններով, որ սկսեց կրել նույն այդ նահանգում ապրող հայությունը սկսած 1960-ական թթ.: Արեւելքի երկրներից հայերի չդադարող ներգաղթը ոչ միայն զգալիորեն ստվարացրեց տեղի հայության թվաքանակը, այլեւ բերեց որոշակի որակական փոփոխությունների: Նախ՝ հարկ է նշել, որ ներգաղթողները, կամա թե ակամա, բերել էին իրենց հետ նաեւ եկեղեցական-կուսակցական հատվածականությունն ու առճակատումը, որը տարիների ընթացքում դարձել էր նրանց ազգային ինքնագիտակցության բաղկացուցիչ մասը: Դրա հետեւանքները շատ շուտով նկատվեցին տարբեր, այդ թվում նաեւ ազգային կրթության ոլորտում: Ինչպես եւ Արեւելքի երկրներում, ԱՄՆ-ում նույնպես եկեղեցական-կուսակցական երկու խմբավորումներին պատկանող հայերի համար անընդունելի էր, որ իրենց երեխաները հաճախեն ընդդիմադիր շրջանակին պատկանող դպրոցները:

Նման պայմաններում նշված երկու խմբավորումներից յուրաքանչյուրը հարկադրված էր ձեռնամուխ լինել սեփական դպրոցների հիմնադրման գործին: Խնդիրը պահանջում էր արագ լուծում, քանզի համապատասխան դպրոցների բացակայությունը էլ ավելի էր խթանում երեխաներին պետական անվճար դպրոցներ ուղարկելու ձգտումը:

Այսքանից հետո հասկանալի է դառնում այն հանգամանքը, որ ՀԲԸ Միության դպրոցը նախապես տեղավորվեց ոչ թե հատուկ այդ նպատակով գնված կամ վարձակալած շենքում, ինչը շատ ժամանակ էր պահանջում, այլ տեղի Ս.Պետրոս եկեղեցու տարածքում տեղադրված մեծ ավտոտնակներում (trailers): Դպրոցը տարեցտարի արձանագրում էր աշակերտների թվաքանակի զգալի աճ: Եթե առաջին տարում աշակերտների թիվը 19-ն էր, ապա 1979թ. այն կազմեց 135: 1980թ. Ս. Պետրոս ՀԲԸ Միութեան ամենօրյա դպրոցը (այսպես էր այն կոչվում սկզբնական շրջանում) հաստատվեց Վեն Նայսում, իսկ 1984թ.՝ Կանոգա Պարքում վարձակալած պետական դպրոցի շենքում:[156] Բայց հարցի լուծման նման տարբերակը հղի էր անսպասելի բարդություններով, ուստի եւ անհրաժեշտ էր դպրոցը ապահովել սեփական շենքով: 1986թ. նույն Կանոգա Պարքում գտնվեց վաճառքի հանված հարմարավետ դպրոցաշենք: Տեղեկանալով այդ մասին՝ Միության նախագահ Ա.Մանուկյանը խոստացավ իր օժանդակությունը, պայմանով, որ ապահովվի նաեւ տեղի համայնքի մասնակցությունը: Կարճ ժամանակում անհրաժեշտ գումարը հանգանակվեց, եւ վարժարանը 1986-1987 տարեշրջանը սկսեց նոր շենքում, ունենալով 415 աշակերտ՝ 40%-ով ավելի, քան նախորդ տարում: Մի քանի ամիս անց՝ 1987թ. փետրվարին դպրոցը պաշտոնապես կոչվեց ՀԲԸՄ Մարի Մանուկեան վարժարան, ի պատիվ Միության նախագահի կնոջ, որը նույնպես հայեցի կրթության քաջալերողներից էր: 1989թ. սկսվեցին դպրոցի ընդարձակման աշխատանքները: Այդ պահին դպրոցի աշակերտների թիվը կտրուկ աճել էր, եւ տնօրինությունը ստիպված էր դիմել արդեն փորձված միջոցի. «Իր 600 աշակերտներով եւ սպասողական ցանկի վրայ գտնուողներով՝ այս դպրոցը գնեց շարժական դասարաններ, կարենալ տեղ տալու աճող աշակերտութեան:»[157] Շենքի ընդարձակման աշխատանքների ընդհանուր արժեքն էր 5 մլն դոլար, որից 1.250.000-ը նվիրաբերեցին տեր եւ տիկին Սարգիս Տեմիրճյանները, որոնց անունով էլ որոշվեց կոչել բարձրագույն դպրոցը: Իսկ Նազարյան եղբայրների նվիրատվության շնորհիվ կառուցվեց Նազարեան կենտրոնը՝ իր մարզասրահով եւ այլ հարմարություններով: Հալեպի Նաճարեան-Կիլպէնկեան դպրոցից հետո Կանոգա Պարքի ՀԲԸ Միության

Մանուկեան-Տեմիրճեան դպրոցը՝ իր շուրջ 1.000 սաներով այսօր ամենախոշորն է:

Դպրոցի հոգաբարձութեան ատենապետ Սինան Սինանյանի խոսքերով, «Տնօրէնութիւն եւ ուսուցչական կազմ ամէն ճիգ ի գործ կը դնեն... աշակերտներուն լրջօրէն պատրաստելու համար AP «Advanced Placement» դասապահերուն, որոնց մէջ յաջողած աշակերտները կը ստանան համալսարանական ուսմանց համապատասխան վարկանիշ: Ուրախ ենք որ մեր աշակերտներու յաջողութեան արդիւնքները զանազան մարզերու մէջ, շատ աւելի բարձր են քան Ամերիկայի ընդհանուր մակարդակը»:[158] Այս ամենի հետ մեկտեղ, դպրոցում մեծ ուշադրություն է դարձվում հայագիտական առարկաների դասավանդմանը. «Վերջապէս, վարժարանին գոյութեան իմաստը՝ ամերիկեան բարձրորակ ուսման կողքին, նոյն մակարդակով հայերէն լեզու, գրականութիւն, ազգային պատմութիւն ու մանաւանդ հայկական ոգի ջամբել է հայ աշակերտին»,- նշում էր Ս.Սինանյանը: Դրա վկայություններից են Մանուկեան-Տեմիրճեան դպրոցի աշակերտների կողմից տարիներ շարունակ հրատարակվող «Hye Times» եւ «Ողջոյն» անգլիալեզու եւ հայալեզու ամսաթերթերը:

Վերը արդեն նշվել էր, թե որքան ծախսատար գործ է անհրաժեշտ չափանիշներին համատասխանող հայկական դպրոցի գոյությունը ԱՄՆ-ում: Մանուկեան-Տեմիրճեան դպրոցը դրա վառ ապացույցն է. նրա տարեկան բյուջեն կազմում է մոտ 4,2 միլիոն դոլար, որի գրեթե 80%-ը հատկացվում է ուսուցիչների եւ պաշտոնյաների (նրանց ընդհանուր թիվը հասնում է 100-ի) աշխատավարձին: Այս գումարի մեջ չեն մտնում «կառուցային հիմնական կարիքները (Capital Improvements)», որոնք հոգում է Միության Կենտրոնական Վարչությունը: 1996թ. դպրոցի շարունակական բարելավման նպատակով եւ Մանուկյան ընտանիքի նվիրաբերած 100 հազ. դոլարով ստեղծվեց Մնայուն հիմնադրամ, որը մեկ տարի անց արդեն եռապատկվել էր: Բյուջեի հավասարակշռման եւս մեկ աղբյուր է ուսման վարձը, որը կազմում է միջին հաշվով 3.800 դոլար: Այս գումարը, իհարկե, շատ ավելի է, քան ափյուռքի որեւէ այլ հայկական դպրոցում: Սակայն աշակերտության թվի մշտական աճը վկայությունն է նրա, որ ծնողները պատրաստ են վճարել այն, հավատացած լինելով, որ դրա դիմաց իրենց երեխաները ստանում են բարձրորակ ամերիկյան եւ հայեցի կրթություն: Դպրոցը, սակայն, հավատարիմ է նաեւ այն սկզբունքին, որ «...որեւէ հայ աշակերտ, որ տէր է իմացական կարողութեան, բայց զուրկ է նիւթական բաւարար միջոցներէ, պէտք է պատեհութիւնը ունենայ հայ-ամերիկեան լաւագոյն ուսումը ստանալու: Այս ուղղութեամբ,- ընդգծում

էր դպրոցի տնօրենը,- մեր վարժարանը տարին 300.000 տոլար կը յատկացնէ նման ուսանողներու»:[159]

Լոս Անջելեսը (ներառում է Գլենդեյլը, Պասադինան եւ շրջակա այլ փոքր քաղաքները) իր ավելի քան 400.000 հայ բնակչությամբ պարտավորեցնում է ամերիկահայ տարբեր կազմակերպություններին ընդարձակել իրենց գործունեությունը այստեղ: Բացառություն չեղավ նաեւ ՀԲԸ Միությունը, որը Մանուկեան-Տեմիրճեան դպրոցից զատ 1990-ական թթ. սկզբին ձեռնամուխ եղավ Միության կենտրոնի հիմնադրմանը Պասադինայում: Կենտրոնի շենքի ձեռքբերման գումարի (4 միլիոն դոլար) հիմնական մասը ապահովվեց Ալեք Մանուկյանի եւ Միության Կենտրոնական Վարչության անդամ Սուրեն Ֆեսճյանի նվիրատվությունների շնորհիվ: Մնացած մասը պետք է հանգանակվեր տեղում, ինչը ընթացավ մեծ դժվարությամբ: Միության նախագահը, ընդունելով, որ Հարավային Կալիֆորնիայում ԱՄՆ-ի այլ շրջանների համեմատ, տնտեսական պայմանները «աւելի վատ են», այնուամենայնիվ, նշում էր. «սակայն, հարիւրաւոր մարդիկ որոնք պահանջեցին այս կեդրոնը, վերջաւորութեան չաշխատեցան անոր նիւթականը ապահովելու: Ասիկա փորձառութիւն մըն է որ յաճախ կ'ունենանք եւ հիմա որոշած ենք որ ՀԲԸՄ-ի ոչ մէկ կեդրոն կրնայ գնուիլ առանց տեղական միջոցներով գումարին մեծամասնութիւնը գոյացնելու պայմանին»:[160] Շենքի հարմարությունները հնարավորություն էր տալիս զանազան միջոցառումներ եւ ձեռնարկներ կազմակերպելուն: Կարճ ժամանակում սկսեցին գործել սիմֆոնիկ նվագախումբը եւ երգչախումբը, մեծի մասամբ կազմված նախկինում Հայաստանի հայտնի երաժշտական խմբերի անդամներից:

Ֆրանսիայում

Եվրոպական երկրների շարքում ազգային ինքնության եւ ժառանգության պահպանման խնդրի լուծումը, նույն այդ տարիներին, առավել մեծ բարդությունների հետ էր կապված ամենաստվար հայազգի բնակչություն ունեցող Ֆրանսիայում: Դրա հիմնական պատճառներից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, այդ երկրի ավանդական քաղաքականությունն է՝ սեփական՝ հարուստ եւ բազմադարյա ֆրանսիական մշակույթը պահպանելու, այլ մշակույթների ներազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով եւ այդ նպատակին ծառայող գրված եւ չգրված օրենքների մի ամբողջ համակարգի գոյությունը: Այդուհանդերձ, այստեղ գործող հայկական կազմակերպություններից յուրաքանչյուրը նույնպես ձգտում էր՝ իր հնա-

րավորությունների չափով եւ միջավայրին առավել համապատասխանող միջոցներով դիմակայել միջավայրի ուժեղ եւ մշտական ճնշմանը:

Դեռեւս 1935թ. ՀԲԸ Միությունը Փարիզում արդեն գործող իր վերոհիշյալ հաստատությունների կողքին կազմավորեց նաեւ Հայ Երիտասարդաց Միությունը, որը սերտորեն համագործակցեց Հայ Օրիորդաց Միության հետ: ՀԲԸ Միության այս երկու նոր կազմակերպությունների աշխույժ գործունեությանը մեծապես նպաստեց Բարեգործականի Տան հիմնումը, որտեղ եւ անց էին կացվում նրանց տարբեր միջոցառումները: Մասնավորապես, այստեղ պարբերաբար կազմակերպվող դասախոսությունները կարեւոր իրադարձություններ էին Փարիզի ողջ հայության կյանքում, քանզի զեկուցողները հաճախ այնպիսի հայտնի դեմքեր էին, ինչպես, օրինակ, ՀԲԸ Միության վարիչ-պատվիրակ Վահան Մալեզյանը, որը միաժամանակ հայտնի բանաստեղծ էր, Հրաչ Զարդարյանը, Արա Պարթեւյանը, Արշակ Չոպանյանը, Ա.Շահխաթունին եւ այլք: Որոշ ժամանակ անց ՀԵ Ընկերակցություն՝ իր ակումբ - գրադարանով, կազմավորվեց նաեւ Ֆրանսիայի մեկ այլ հայաշատ քաղաքում՝ Մարսելում:[161]

Եվրոպական ժողովուրդների համար Երկրորդ Աշխարհամարտի արհավիրքներով լի տարիները փոխարինվեցին, ինչպես հայտնի է, սոցիալ-տնտեսական եւ քաղաքական անկայուն, մինչեւ իսկ ճգնաժամային իրավիճակով: Տեղի հայության ազգային գոյավիճակի առումով հարկ է նկատի ունենալ նաեւ, որ պատերազմի հինգ տարիների ընթացքում հայ, ինչպես եւ այլ ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների գործունեությունը պարտադրաբար սառեցվել էր: Մեծ թվով հայ պատանիներ եւ երիտասարդներ, որ նոր պետք է անդամագրվեին երիտասարդական միություններին, զրկված մնացին համախմբվելու, ազգամշակութային միասնական գործունեություն ծավալելու հնարավորությունից: Մյուս կողմից, նույն այդ միությունների անդամների մի մասը պատերազմի ավարտից հետո հեռացավ նրանցից՝ իրենց տարիքին համապատասխան նոր հետաքրքրությունների ու նպատակների պատճառով: Այդպիսով, խախտվեց սփյուռքահայ երիտասարդության կազմակերպված գործունեության շարունակականությունը:

Պատերազմի ավարտից անմիջապես հետո ՀԲԸ Միությունը աստիճանաբար վերսկսեց իր գործունեությունը, նախ եւ առաջ երիտասարդության մեջ: 1950թ. Միությունը Բարեգործականի Տուն հաստատեց Մարսելում, ուր մինչ այդ գործող կենտրոնը, ինչպես նշվել է, ավերվել էր պատերազմի ընթացքում՝ ռմբակոծության հետեւանքով: Ավելի ուշ՝ 1967-1968թթ. Փարիզում՝ Միության կենտրոնատեղիում իր աշխատանքները սկսեց նորաստեղծ Երիտասարդական Ակումբը՝ կազմակերպելով հայերեն լեզվի եւ պատմության գիշերային դասընթացներ, դասախոսություններ, ինչպես նաեւ հավաքույթներ ու հանդեսներ: Սակայն Միության ջանքերը՝ երիտասարդական կայուն կազմակերպություն ստեղծելու ուղղությամբ, ընթանում էին մեծ դժվարությամբ եւ 1968թ. տեղեկագրում զգուշավորությամբ նշվում էր. «Ֆրանսայի միւս մասնաճիւղերուն կողքին երիտասարդական ակումբներ ստեղծելու ջանքեր եղան»:[162] Այնուամենայնիվ, այդ ջանքերը, կարծես, տալիս էին իրենց արդյունքը: Մի քանի տարի անց հերթական անգամ իր գործունեությունը աշխուժացրեց Մարսելի Երիտասարդական Ակումբը, իսկ Վալանսում առաջին անգամ կազմավորվեց Երիտասարդական Մարմինը: Փարիզի Ակումբի նոր եւ կարեւոր ձեռնարկներից էր՝ սկսած 1972թ., իր անդամների այցելությունները Հայաստան: Ի տարբերություն այլ երկրների, Ֆրանսիայում Միության երիտասարդական կազմակերպությունները իրենց գործունեության մեջ նախապատվությունը միշտ էլ տալիս էին մշակութային եւ նման այլ ձեռնարկներին: Այդօրինակ գործունեության աշխուժացմանը մեծապես նպաստեց Ալեք Մանուկեան Մշակութային Կեդրոնի բացումը Փարիզում, ապա նաեւ 1985թ. նույնպես Միության նախագահի մեկ միլիոն ֆրանկի նվիրատվության շնորհիվ Միության Կեդրոնի ձեռքբերումը Լիոնում:

Անդրադառնալով Միության կենտրոնների գործունեությանը՝ նախագահ Լուիզ Մանուկյան Սիմոնը մի առիթով նկատել է. «Միայն դրամը չէ կարեւորը երբ հարցը կու գայ կեդրոնի մը սեփականացման, այլ՝ թէ ինչպէ՞ս ան պիտի գործածուի: Եթէ տարիէ տարի նոյն անձերը պիտի վայելեն կեդրոնին ընծայած հնարաւորութիւնները այն ատեն ան կը վերածուի անհատական ակումբի մը եւ ոչ համայնքապատկան կեդրոնի մը: Եթէ չկազմակերպուին զանազան տեսակի որակաւոր ծրագիրներ որոնք կը հրապուրեն ընդարձակ խաւ մը համայնքէն, այն ատեն կեդրոնը կը վերածուի լճացած հաստատութեան մը՝ ափ մը վերապրողներու համար»: «Տարիներով նման կացութիւն մը ունէինք Փարիզի մէջ,- շարունակում էր նա,- մինչեւ որ գործունեայ ատենապետ մը ընդարձակեց կեդրոնին տարողութիւնը տարբեր համայնքներու ղեկավարները հրաւիրելով զանազան ընդունելութիւններու եւ բարձրորակ յայտագիրներու: Կեդրոնը, որ որոշ չափով փոքր է, այսօր դարձած է հանդիպման կէտը Փարիզի: Հարիւր վաթսուն աշակերտներ, 10-60 տարեկան, արձանագրուած են շաբաթօրեայ լեզուի, պատմութեան եւ պարի դասերու. ամէն ականաւոր քաղաքական մարդ Ֆրանսայի մէջ ոչ միայն կ'ընդունուի կեդրոնին մէջ, այլ կը դիմէ ՀԲԸՄ-ի երբ կը հետաքրքրուի հայկական հարցերով. ամէն քաղաքական մարդ Հայաստանէն իր գլխաւոր ընդունելութիւնը կամ դասախօսութիւնը կ'ունենայ կեդրոնին մէջ»:[163]

Դեռեւս 1920-ական թթ., ՀԲԸ Միութեան փոխնախագահ Տիգրան Քելեկյանը Միությանն էր նվիրաբերել ընդարձակ մի շենք Փարիզի արվարձաններից մեկում՝ Լե Ռեյնսիում: 1928թ. այդ շենքը տրամադրվեց Դպրոցասէր տիկնանց վարժարանին, որը հիմնվել էր 1879թ.՝ Կ.Պոլսում: Այդ օրվանից ՀԲԸ Միությունը դարձավ վարժարանի հիմնական հովանավորողը: 1985թ. Միության տրամադրած 350.000 ֆր. ֆրանկի շնորհիվ վարժարանը կարողացավ դուրս գալ խիստ ծանր ֆինանսական ճգնաժամից, որը հարցականի տակ էր դրել նրա գոյությունը: Դպրոցասէր տիկնանց վարժարանը, որը մինչեւ 1960-ական թթ. իգական միակ գիշերօթիկ վարժարանն էր սփյուռքում (ներկայումս՝ երկսեռ), 1995թ. ուներ 220 աշակերտ:[164] Դրա հետ մեկտեղ Միությունը Մարսելում, Վալանսում եւ այլ քաղաքներում շարունակեց ֆինանսավորել հայերեն լեզվի շաբաթական դասընթացները: Փարիզում շարունակում է գործել Նուպարեան Մատենադարանը, որի հարուստ, մշտապես համալրվող հավաքածոներից օգտվում են հատկապես տեղի եւ այլ երկրների հայագի ու օտար հայագետները:

1980-ական թթ. վերջից եվրոպական տարբեր քաղաքներում անցկացվում են ՀԲԸ Միության Եվրոպայի Երիտասարդական Մարզախաղերը: Այսպես, 1997 եւ 1998 թթ. դրանք հաջորդաբար տեղի ունեցան Գրենոբլում եւ Լիոնում, որոնց մասնակցեցին Անգլիայի, Գերմանիայի, Հոլանդիայի, Շվեյցարիայի, Բելգիայի եւ Ֆրանսիայի տարբեր քաղաքներից ժամանած հարյուրավոր երիտասարդներ:

Ինչպես արդեն նշվել էր, Երկրորդ Աշխարհամարտի տարիներին դադարեց Միության անդրանիկ պաշտոնաթերթի՝ «Միութիւն» ամսագրի հրատարակումը Փարիզում: Պատերազմից հետո այդ բացը լրացնելու եկան Փարիզում հրատարակվող ՀԲԸ Միության Եվրոպայի շրջանակի «Շինարար» եւ ապա «Նոր Շինարար» ամսագրերը (1950 թվականից լույս է տեսել «Տեղեկատու» անունով): Նկատի առնելով ֆրանսահայերի եւ հատկապես երիտասարդության մեծամասնության ֆրանսախոս լինելու փաստը, շատ կարեւոր եղավ նախ «La Lettre de l'UGAB», ապա՝ 1993 թվականից ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության անդամ, Ֆրանսիայի շրջանակի ղեկավար անդամներից Լեւոն Քեպապճյանի նախաձեռնությամբ ու տնօրինությամբ «UGAB Magazine» ամսագրերի հրատարակումը:

Հունաստանում

Հունաստանում ՀԲԸ Միությունը 1950-ական թթ. սկզբից սկսեց նյութապես աջակցել գործող որոշ երիտասարդական կազմակերպություններին, հատկապես Աթենքի Արարատ մշակութային եւ մարզական միությանը: Միության հովանավորությամբ գործելով՝ այն ուներ իր սեփական ակումբն ու գրադարանը, մարզական, սկաուտական եւ թատերական խմբերը եւ ծառայում էր ոչ միայն իր անդամներին, այլեւ Գոքինիայի թաղամասի ողջ հայությանը: «Արարատ Միությունը,- նշվում էր Միության տարեգրքում,- որ ունի 250 գործոն եւ համակիր անդամներ, աւելի սերտօրէն կապուած է Բարեգործականին եւ իր ծառայութեան բաժինը կը բերէ անոր ազգապահպանման նպատակներուն իրագործման համար»:[165] 1998թ. Աթենքում բացվեց ՀԲԸ Միության Արարատ մշակութային-մարզական միության նոր կենտրոնը, որն օժտված է արդիական հարմարություններով:

1965թ. Աթենքում սկսեց գործել նաեւ ՀԲԸ Միության Հայ Երիտասարդաց Միությունը (Ընկերակցությունը կամ Ակումբը): Նրա անդամներն էին մեծ մասամբ Մելգոնեան Կրթական հաստատության եւ Գալփաքեան վարժարանի հին եւ նոր սաները, որոնք էլ մարզական տարբեր խմբերից զատ, կազմեցին նաեւ նվագախումբ: 1957թ. Սալոնիկում հիմնվեց Թատերական եւ Մշակութային միություն՝ շուրջ 80 անդամներով: Մինչ այդ (1947թ. սաների թվի նվազելու պատճառով փակվել էր երկար տարիներ գործող Աղաթօն կրթարանը:

ՀԲԸ Միությունը տարիներ շարունակ նյութապես հովանավորում էր նաեւ Աթենքի գլխավոր թաղամասերում՝ Ֆիքս-Տուրղութիում եւ Գոքինիայում գտնվող Ազգային եւ հայ ավետարանական վարժարանները: Սակայն, 1958թ., որպես հետեւանք Հայ Առաքելական եկեղեցու պառակտման, Հունաստանի թեմը հրաժարվեց ընդունել Մայր Աթոռ Ս.Էջմիածնի գերագույն հոգեւոր եւ վարչական իշխանությունը եւ անցավ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության ենթակայության տակ: Հունահայ համայնքի մի մասը չհամաձայնվեց նման որոշման հետ եւ հայտարարեց առանձին Էջմիածնական թեմական խորհուրդ ստեղծելու որոշման մասին: Եվ քանի որ Հունաստանի թեմը վերահսկում էր նշված ազգային դպրոցները, ապա եկեղեցական-քաղաքական հակամարտությունը դրսեւորվեց նաեւ կրթական ոլորտում:

Անդրադառնալով համայնքում ստեղծված իրավիճակին՝ Միության 1958թ. տեղեկագրում նշվում էր. «Աթէնքի մեր մասնաճիւղը ամէն ջանք ըրաւ որպէսզի կրթական գործը զերծ պահուի եկեղեցական պայքարնե-

րու ազդեցութենէն: Ծրագրեց դպրոցներու վերահսկողութիւնը յանձնել համայնքին ազգ. մարմիններէն անկախ հոգաբարձութեան մը եւ Կեդր. Վարչութիւնը լիովին համաձայն գտնուեցաւ այս կարգադրութեան: Դժբախտաբար, այս բարի նպատակով կատարուած երկար բանակցութիւնները բաղձալի արդիւնքը չունեցան, Ազգ. Առաջնորդարանը իրենց ձեռքը ունեցողներուն անզիջող կեցուածքին հետեւանքով: Անոնք առանց այլեւայլի կը պնդէին որ դպրոցներու յատկացումին 8.000 տոլարի գումարը իրենց պէտք է յանձնուի եւ հոգաբարձութիւնը իրենք միայն պետք է անուանեն»:[166] Մեծ թվով ծնողներ հրաժարվեցին իրենց երեխաներին ուղարկել այս երկու դպրոցներ, որոնք վերահսկվում էին Ս.Էջմիածնից անջատված թեմի կողմից: Ստեղծված իրավիճակում ՀԲԸ Միությունը պարտավորված եղավ սեփական դպրոցը բացել Աթենքում, «որպէսզի հարիւրէ աւելի անմեղ մանուկներ ուսումէ չզրկուին»: Դպրոցի համար, որը կոչվեց ՀԲԸ Միութեան Աթենքի վարժարան, քաղաքի գեղեցիկ արվարձաններից մեկում Ամարուսիում վարձվեց հատուկ շենք, ուր եւ 1958թ. սեպտեմբերին սկսեցին ուսանել 124 աշակերտներ: Տարիներ անց բարերար Արթաքի Գալփաքյանը Միությանը նվիրաբերեց հողատարածքներ, որպեսզի նրանց վաճառքից գոյացած գումարով կառուցվի նոր դպրոց: 1967թ. Աթենքի Ամֆիթեա (Ֆալիրո) թաղամասում սկսեց գործել նորակառույց Արթաքի Գալփաքեան նախակրթարանը, ուր եւ փոխադրվեցին Միության վարժարանի բոլոր աշակերտները: Այս վարժարանի կյանքից ուշագրավ մի փաստ. «Գալփաքեան վարժարանի մէջ կան գաւառներէն եկած 16 գիշերօթիկ աշակերտներ: Ասոնք պատսպարելու համար մասնաժողովը կրցաւ Աթէնքէն դուրս գտնուող Ջուիցերական Քրիստոնէական հաստատութեան հետ կարգադրութիւն մը ընել եւ անցեալ տարուան նման՝ այս տարի եւս փոքրիկները գիշերները հոն անցուցին եւ ցերեկները դպրոց յաճախեցին»:[167] 2002թ. Արթաքի Գալփաքեան վարժարանը ուներ 69 աշակերտ:

Բուլղարիայում

Երկրորդ Աշխարհամարտը եւ դրան հաջորդած տարիները առավել ծանր հետեւանքներ ունեցան Ռումինիայի եւ Բուլղարիայի հայության համար, որոնք դասվում էին Եվրոպայի ամենախոշոր եւ ամենագործունյա համայնքների շարքը: Բուլղարիայում, ուր 1930-ական թթ. բնակվում էր շուրջ 27 հազ. հայ, ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղերը կազմավորվել են դեռեւս 1910թ.՝ Սոֆիայում, Ֆիլիպեում (Պլովդիվ) եւ Ռուսճուքում,

իսկ հետագայում նաեւ որոշ այլ քաղաքներում: Սկսած 1935թ. Միության տեղական մասնաճյուղերի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ համախմբել հայ երիտասարդությունը: Վառնայի Աղաթօն, Խասքովոյի Պօղոս Նուպար եւ Արարատ Կրտսերաց Լիկայում, Ցամբոլի Նաւասարտ Կրտսերաց Լիկայում, Ստարա-Զագորայի, Բուրգասի, Թաթար-Պազարճիգի, Պլովդիվի, Սլիվենի եւ այլ քաղաքների նմանատիպ միություններում ընդգրկված էին հարյուրավոր հայազգի երիտասարդներ: «Այս բոլոր ընկերակցութիւնները, որ ՀԲԸ Միութեան նոր եւ կենսունակ մէկ մարզը կը կազմեն, ընդհանուր համակրանքի առարկայ դարձած, կը հետապնդեն տոհմային դաստիարակութեան եւ ազգային ծառայութեան գործը վարժարաններէն դուրս»:[168] Սակայն Երկրորդ Աշխարհամարտից հետո Ռումինիայում եւ Բուլղարիայում կոմունիստական վարչակարգի հաստատումը ոչ միայն կանխորոշեց տեղի հայերի մի զգալի մասի արտագաղթը երկրից, այլեւ անհնարին դարձրեց ազգային փոքրամասնությունների բնականոն ազգամշակութային գործունեությունը ընդհանրապես: Մասնավորապես, Բուլղարիայում արգելվեց գրեթե բոլոր հայ կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության եւ նրա վերոնշած երիտասարդական տարբեր միությունների գործունեությունը:

Միայն տասնյակ տարիներ անց, 1990-ական թթ. սկզբին, երկրում ժողովրդավարական կարգերի հաստատումից հետո, վերստին հնարավոր դարձավ ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաեւ հայերի, անկաշկանդ այգային-մշակութային գործունեությունը: ՀԲԸ Միության գործիչ Վաչէ Ղազարյանի ջանքերի շնորհիվ մասնաճյուղեր հիմնվեցին նախ՝ 1990թ. մարտին Սոֆիայում, իսկ որոշ ժամանակ անց՝ նաեւ Պլովդիվում եւ Վառնայում: Սոֆիայի մասնաճյուղի հիմնադիրներից Սեւդա Սեւանը իր հարցազրույցներից մեկում ասում էր. «Բարեգործականը միակ (հայկական) միութիւնն է Սոֆիայի մէջ, որ ունի ծրագրուած ու կազմակերպուած ժամանակացոյց: Ամէն ամիս համերգ, ամէն ամիս ցուցահանդէս, դասախօսութիւններու շարք՝ աւելի հայկական մթնոլորտի համար ու մէկ նիւթի շուրջ: Մեր գաղութը իր արմատները մոռցած է ու կը փորձենք վերադառնալ հոն: Նաեւ կը քննարկենք հայ-պուլկար ժողովուրդին մշակութային եւ ազգային-ազատագրական պայքարին կապերը: Մեր բոլոր դասախօսութիւններուն ներկայ կ'ըլլան պուլկարներ եւ այդ տեղի կ'ունանայ պուլկարերէնով: Մեր նոր սերունդը հայերէն մոռցած է եւ քանի մը տարի պէտք է, որպէսզի կարենանք հայերէնով բոլորին հասկնալի դասախօսութիւններու ձեռնարկել...»:[169]

Բուլղարիայում Միության նորաստեղծ մասնաճյուղերի կարեւոր նպատակներից էր հայկական դպրոցների հիմնադրամի ստեղծումը, որի

իրականացումը, սակայն, մեծ դժվարությունների հետ էր կապված. «Դարձեալ օգնութեան հասան ՀԲԸ Միութեան մասնաճիւղերը՝ Հալէպի եւ Կիպրոսի մէջ: Բարեգործականի կեդրոնը մեզի օգնութեան հասաւ 10.000 տոլարով, ուրիշ մըն ալ 3.000 տոլարով: Իսկ մնացեալը տուաւ մեր ժողովուրդը ու կը շարունակէ տալ: Մեր գաղութը աղքատ գաղութ է, ժողովուրդը, միութիւնները, եկեղեցիները նիւթապէս հազիւ-հազ իրենք-զիրենք կը հոգան...»:[170] Այսօր Միության շաբաթական դպրոցներ գործում են Ցամբոլում, Հասքովոյում, Ալիվենում, Պլովդիվում եւ այլուր, իսկ Բուրգասում նաեւ ամառային ճամբար: Բուլղարիայի մասնաճյուղերի կազմակերպական մեծ կարողությունների մասին է վկայում արդեն 2002թ. Սոֆիայում XI Եվրոպական մարզական խաղերի անցկացման փաստը: Եվս երկու տարի անց՝ 2004թ. ծովափնյա Ալբինա քաղաքում կայացան Միության XVII Համահայկական մարզական խաղերը, որոնց մասնակիցներն էին Ամերիկայի, Եվրոպայի եւ Միջին Արեւելքի 12 երկրների երիտասարդներ: Ուշագրավ է, որ չնայած իր փոքր թվին (շուրջ 30 հազ.), տեղի հայությունը հաջողությամբ ներգրավվում է երկրի քաղաքական կյանքում: Այդ առումով ՀԲԸ Միության համար հատուկ կարեւորություն ստացավ Սոֆիայի մասնաճյուղի վարչության անդամ՝ 25-ամյա իրավաբան օրիորդ Կատար Հ/Խ/աչիկյանի երկրի խորհրդարանի անդամ ընտրվելու փաստը:[171]

Կանադայում

Վերը արդեն նշվել է Միության հիմնադիրներից Երվանդ Աղաթոնի մեծ դերը Արեւմուտքի երկրներում եւ հատկապես Ֆրանսիայում Միության մասնաճյուղերի կազմավորման գործում: Նրա ձգտումը՝ նորանոր մասնաճյուղեր հաստատել յուրաքանչյուր հայաբնակ քաղաքում, կարծես, ի զորու էր հաղթահարել բոլոր տեսակի սահմանները: Դրա վկայություններից էր հետեւյալ կարճ հաղորդագրությունը «Միութիւն» ամսագրի 1925թ. համարներից մեկում. «Թորոնթոյի մասնաճիւղ (Գանատա), կազմուած Տ. Ե.Աղաթօն Պէյի ջանքերով եւ տեղւոյն յայտնի ազգայիններէն Տ.Լեւոն Պապայեանի նախաձեռնութեամբ»:[172]

Ինքը՝ Երվանդ Աղաթոնը, թե՛ այդ ժամանակ եւ թե՛ հետագայում երբեք էլ չեղավ Կանադայում, եւ նրա հանդիպումը Լեւոն Պապայանի հետ տեղի էր ունեցել Ֆրանսիայում: Լեւոն Պապայանը Կանադա էր եկել Թուրքիայի Պրուսա քաղաքից: Ժամանակի ընթացքում դառնալով այդ երկրի ամենախոշոր գործարարներից մեկը՝ նա այդ գործունեությունը

դիտեց որպես միջոց՝ հայ ժողովրդին ծառայելու համար: Մասնավորապես, նրա նախաձեռնության եւ նվիրատվության շնորհիվ Սենտ Կեթրինզ քաղաքում 1930թ. կառուցվեց Կանադայում առաջին Հայ Առաքելական Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին:[173] Առաջին Աշխարհամարտից հետո նրա նախաձեռնությամբ Կանադայի Հայկական Նպաստամատույց (Armenian Relief Association of Canada) բարեսիրական կազմակերպությունը, սկսած 1923թ., այդ երկիր տեղափոխեց շուրջ հարյուր հայ որբեր, որոնք տեղավորվեցին Տորոնտոյի մերձակա Ջորջթաուն ագարակում: «Ճորճթաունի տղոց» պատմությանը նվիրված են գրքեր եւ հոդվածներ,[174] իսկ այստեղ նշեմ միայն մի դրվագ՝ կապված որբերի ազգային դաստիարակության հետ: Լեւոն Պապայանը, գիտակցելով գյուղական պայմաններում նրանց սպառնացող արագ ապազգայնացումը, կազմակերպեց հատուկ միջոցառումներ, այդ թվում նաեւ հայերենի դասընթացներ: «Բայց այս հսկողութիւնը դիւր չէր գար Գանատայի Հայկական Նպաստամատոյցին, որ միշտ աշխատեցաւ խոչընդոտներ յարուցանել, որուն վրայ, Միութեան ողբացեալ Հիմնադիրը, Պօղոս Նուպար փաշա, քանիցս դիմումներ կատարեց Գանատայի թէ՛ նախարարապետին եւ թէ՛ ուրիշ պաշտօնական անձերու, որպէսզի Տ.Պապայեան կարենայ իր հսկողութիւնը կատարել անարգել, մանաւանդ որ ժամանակին այդ պայմանով միայն, եւ Թօրօնթօ փոխադրուած որբերը իբր հայ մեծցնելու բացարձակ խոստման մը վրայ, որբերը յանձնուած էին վերոյիշեալ Գանատական կազմակերպութեան»:[175]

Պողոս Նուպարի եւ նրա գործընկերների հետ Լեւոն Պապայանը ծանոթացել էր Ֆրանսիայում եղած ժամանակ եւ մեծապես ներշնչվել էր նրանց ազգային գաղափարներից ու գործունեությունից: Վերադառնալով Տորոնտո՝ Լ.Պապայանը ձեռնամուխ եղավ Կանադայում ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղի կազմավորմանը: Հասկանալու համար նրան սպասող դժվարությունները, հարկ է նշել, որ այդ տարիներին դեռ շատ փոքր թվով հայեր էին հաստատվել Կանադայում, նախ եւ առաջ երկրի ներգաղթային խիստ օրենքների պատճառով: Կանադահայ պատմաբան Ջասպել Կապրիելյան-Չերչիլի տվյալներով, մինչեւ 1914թ. նրանց թիվը շուրջ 2.000 էր, եւս մոտ 1.300 հայ ներգաղթել էին Կանադա 1920-ական թթ.:[176] Այս մարդկանց ճնշող մեծամասնությունը բնակվում էր ոչ թե Տորոնտոյում կամ Մոնրեալում, այլ Օնտարիոյի հարավում՝ Համիլտոն, Սենտ Կեթրինզ, Բրենթֆորդ քաղաքներում, ուր աշխատուժի մեծ պահանջարկ կար: Ինչ վերաբերում է Տորոնտոյին, ապա այստեղ, ըստ «Ցուշարար» ամսագրի, նույնիսկ 1940-ական թթ. 40 տուն հայություն կար:[177] Եվ, այնուամենայնիվ, Լ.Պապայանի համառ ջանքերի շնորհիվ 1925թ.

օգոստոսին կազմավորվեց ՀԲԸ Միության Տորոնտոյի մասնաճյուղը՝ իր իսկ ատենապետությամբ: Այդ տարիներին Տորոնտոյում գործող Կանադայի Հայ Միության (Armenian Union of Canada) հիմնադիրներից Օգսեն Դեղձունյանը վերհիշում էր. «1930-1940-ական թթ. ՀԲԸ Միությունը աստիճանաբար փոխարինեց Կանադայի Հայ Միությանը՝ օժանդակելով համայնքի մշակութային եւ բարեսիրական շատ ձեռնարկներ: 1920-ական թթ. վերջերից մինչեւ 1940-ականների կեսերը Տորոնտոյի ՀԲԸ Միությունը հանգանակեց ավելի քան $ 37.000 ի նպաստ հայկական որբանոցներին, դպրոցներին եւ Կովկասի ու Միջին Արեւելքի փախստականներին»:[178] Իսկ Լ. Պապայանը «... ոչ միայն դրամապէս անդադար մեծագումար նուէրներ ըրած է հայ որբանոցներու, եկեղեցիներու, հիւանդանոցներու, Հայաստանի մէջ թէ արտասահման, այլ նաեւ մինչեւ այսօր իր եօթանասուներորդ տարին ան առանց բացակայելու կ'երթայ Նիւ Եորք ամէն ամիս, մօտաւորապէս 550 մղոն ճամբայ, Կեդրոնական Վարչութեան ժողովներուն իր ներկայութիւնը ու աջակցութիւնը բերելու»:[179]

Կանադայի հայության պատմության մեջ նոր փուլ սկսվեց 1960-ական թթ. սկզբին՝ Մերձավոր Արեւելքի երկրների հայության ներգաղթի հետեւանքով: Վերը արդեն նշվեց, թե որքան մեծ էր «արեւելյան» այդ ներգաղթի ազդեցությունը ԱՄՆ-ի հայության ազգային կյանքում: Ընդհանուր առմամբ նույն պատկերն էր Կանադայում, որոշ առանձնահատկություններով: Այստեղ նորեկների ազդեցությունը առավել շոշափելի էր եւ ուժեղ, նկատի առնելով «հին» կանադահայերի համեմատաբար փոքր թվաքանակը եւ նրանց ցրված լինելը: Մինչդեռ, նորեկ հայերի ճնշող մասը բնակություն հաստատեց Կանադայի երկու ամենախոշոր քաղաքներում՝ Տորոնտոյում եւ Մոնրեալում, ուր մինչ այդ հայերի քանակը առավել աննշան էր՝ հարավային Օնտարիոյի վերոհիշյալ քաղաքների համեմատ: 1962թ. տվյալներով, կանադահայերի մոտ 75%-ը բնակվում էր Օնտարիո եւ մոտ 25%-ը Կվեբեկ նահանգներում: 1986թ. մարդահամարի տվյալներով, Օնտարիոն շարունակում էր դեռ քանակապես գերակշռել, բայց 1991թ. արդեն զիջում էր Կվեբեկին: Նույն 1991թ. Կվեբեկի հայության 98%-ը բնակվում էր Մոնրեալում, իսկ Օնտարիոյի հայության 73%-ը՝ Տորոնտոյում:[180] Դրանով իսկ հին եւ նոր կանադահայերի միջեւ հակասությունները, որոնց հիմքում ապրելաձեւի եւ ազգային գործելակերպի առանձնահատկություններն էին, հասցվեցին նվազագույնի: Այն իմաստով, որ քանակապես գերակշռող նորեկները հնարավորություն էին ստանում կազմակերպել ազգային կյանքը՝ համաձայն Արեւելքի երկրներում ձեւավորված ավանդույթների եւ կենսափորձի:

Դրան նպաստող կարեւոր հանգամանք էր նաեւ այն, որ նորեկ հայերը ընդհանուր առմամբ կրթված, տեղական լեզուներին տիրապետող, ֆինանսապես ապահովված եւ տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ էին, ինչի շնորհիվ նրանք, մի կողմից, արագ հարմարվում էին ընդունող երկրի պայմաններին, իսկ մյուս կողմից՝ ի վիճակի էին իրագործել իրենց ազգամշակութային ծրագրերը:

Այդ առումով հատկապես կարեւոր էր համախմբված բնակվելու նրանց ձգտումը՝ Հալեպի կամ Բեյրութի օրինակով, ինչի բազում առավելությունները իրենց քաջ հայտնի էին: Դրա իրականացումը, սակայն, այն էլ Տորոնտոյի եւ Մոնրեալի նման խոշոր քաղաքների դեպքում, կապված էր մեծ, առաջին հայացքից անհաղթահարելի դժվարությունների հետ: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այն ինչ որ չափով իրագործվեց: Խիստ հատկանշական է, որ այս ձգտումը զուգորդվում էր ներհամայնքային քաղաքական-եկեղեցական բաժանումներով: Զապել Կապրիելյան Զերչիլը նշում էր. «1979թ. ...դաշնակցականների խմբավորումը Տորոնտոյում հիմնեց կենտրոն Հայուել 401 եւ Դոն Վելի Պարկուելի մոտակայքում ...Նոր շենքը հրապուրեց նորաբնակներին, որոնք հետագայում, նույն տարածքում կառուցեցին դպրոց (1982) եւ եկեղեցի (1990): Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը իր համալիրը կառուցեց հարեւանությամբ»:[181]

Տորոնտոյում ՀԲԸ Միության համալիրի կառուցումը արդյունք էր տեղի մասնաճյուղի գործունեության ակնհայտ աշխուժացման, որը հնարավոր դարձավ նույն նորեկ հայերի շնորհիվ: Կարճ ժամանակում նրանց ջանքերով կազմավորվեցին Միության երիտասարդական, սկաուտական, մարզական եւ գեղարվեստական խմբեր: Այդ կազմակերպությունների արդյունավետությունը մեծապես պայմանավորված էր նաեւ նրանով, որ Տորոնտոյի հայության, ներառյալ Միության մասնաճյուղի անդամների մեծամասնությունը, կազմում էին 45 տարեկանից ցածր մարդիկ: Արդեն 1967թ. ՀԲԸ Միության Տորոնտոյի մասնաճյուղը պաշտոնապես ճանաչվեց կանադական իշխանությունների կողմից Արմեն-Օնտարիո անունով:

Տորոնտոյի մասնաճյուղի գործունեությունը ընդարձակելու նպատակով ՀԲԸ Միության նախագահ Ա.Մանուկյանի եւ մասնաճյուղի հիմնադիր Լ.Պապայանի այրի՝ Փիրուզ Պապայանի նվիրատվության շնորհիվ գնվեց հողամաս սեփական կենտրոնի կառուցման նպատակով: Հետագա մի քանի տարիների ընթացքում Միության անդամները իրենց հերթին նվիրաբերեցին կենտրոնի շինարարության համար անհրաժեշտ գումարը: 1981թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Միության կենտրոնի շենքի պաշտոնական բացումը, որի կառուցման գործում նշանակալից էր մասնաճյուղի ատենապետ Պետրոս Չիլինկիրյանի դերը: Բոլոր հարմարություն-

ներով օժտված այս կենտրոնի առկայությունը, ինչպես եւ ակնկալվում էր, նոր որակ հաղորդեց մասնաճյուղի երիտասարդ անդամների գործունեությանը: Արանց, կանանց եւ երիտասարդական բաժինների ջանքերով կազմավորվեցին Հրաչեայ Ներսէսեան թատերախումբը, Կոունկ պարախումբը, Անի երգչախումբը, սկաուտական եւ մարզական խմբերը: Մասնաճյուղը սկսեց հրատարակել «Խօսնակ Թորոնթոյի», որին փոխարինելու եկավ «Տեսիլք» պարբերականը եւ ունեցավ իր հեռուստաժամը, շնորհիվ ինչի էլ ավելի ընդլայնվեց նրա անդամների ու համակիրների շարքերը (1987-ին նրանց թիվը 500-ից ավելի էր):

1985թ. Միության կենտրոնում սկսեց գործել նաեւ ամենօրյա վարժարանը՝ 7 աշակերտով: Աշակերտների թվի մշտական աճը (1986-1987 տարեշրջանում նրանց թիվը արդեն 50 էր) անհրաժեշտաբար թելադրում էր հատուկ շենքի կառուցում: Այս դեպքում բարերարի դերում հանդես եկան Դանիել եւ Ալիս Ջարուկյանները, որոնց նվիրատվությամբ կենտրոնի անմիջական հարեւանությամբ կառուցվեց իրենց անունը կրող Միության ամենօրյա վարժարանի շենքը: Դ. եւ Ա. Ջարուկեան դպրոցի տարբեր բաժիններում 2003թ. սովորում էր շուրջ 150 աշակերտ: Նկատի առնելով, որ այդ նույն տարածքում գործում է նաեւ հայ եկեղեցին, կարելի է ասել, որ Տորոնտոյի ՀԲԸ Միության համալիրը ներկայանում է որպես համայնքային կենտրոններից մեկը:

Մոնրեալում, ուր հայերի թիվը աննշան էր նույնիսկ Տորոնտոյի համեմատ, Միության մասնաճյուղը հիմնվեց շատ ավելի ուշ՝ 1957թ.: Մասնաճյուղի կայացման գործում շատ կարեւոր դեր էր վերապահված Քերովբե Պտուկյանին, որը ատենապետեց շուրջ 13 տարի՝ 1958-1970թթ. եւ որի գործատեղի սենյակներից մեկը տարիներ շարունակ ծառայեց որպես մասնաճյուղի գրասենյակ: Այդ շրջանում մասնաճյուղի գործունեության հիմնական ասպարեզը օգնությունն էր Արեւելքի երկրներից ներգաղթած հայերին՝ աշխատանքի եւ բնակարանի որոնում եւ այլն: Ինչպես եւ Տորոնտոյում, այստեղ նույնպես նորեկ հայերի, այդ թվում նախապես Միության անդամների թվի մշտական աճը կանխորոշեց Մոնրեալի մասնաճյուղի գործունեության աշխուժացումը: Մարզական եւ սկաուտական խմբերի կողքին, 1971թ. հիմնվեց Նուպար պարախումբը, տիկնանց, երիտասարդական եւ այլ հանձնախմբեր: Ուշագրավ էր Ոսկեայ Տարիքի հանձնախմբի հիմնումը 1974թ., որի նպատակն էր նյութական եւ բարոյական օգնությունը համայնքի տարեցներին:

«Մկրտիչ Մալխասեանին ատենապետութեան շրջանին,- նշվում էր ՀԲԸՄ Միության հերթական տարեգրքում,- կը նախաձեռնուի սեփական կեդրոնի շինութեան, շնորհիւ դրամատնային փոխառութեան եւ Նախագահ Ալեք Մանուկեանին նուիրատուութեան»:[182] Մոնրեալի Միության Ալեք Մանուկեան Կեդրոնը, որը առաջինն էր Կանադայում, դուռները բացեց 1977թ.: Նույն այդ տարին նշանավորվեց եւս մեկ կարեւոր իրադարձությամբ, այն է՝ ՀԲԸ Միության Արմէն Քեպէք - Ալեք Մանուկեան ամենօրյա վարժարանի նոր շենքի հիմնարկեքը: Վարժարանը, որը առաջինն էր Կանադայում, հիմնվել էր դեռեւս 1970թ., եւ, սակայն, սեփական շենքի բացակայության պատճառով մեծ թվով երեխաներ տարեցտարի զրկված էին այնտեղ սովորելու հնարավորությունից: Այս անգամ եւս օգնության ձեռք մեկնեց Ալեք Մանուկյանը, որը ստանձնեց շենքի կառուցման բոլոր ծախսերը: 2003թ. դպրոցի տարբեր բաժիններում սովորում էին շուրջ 600 աշակերտ: Միության Ալեք Մանուկեան Կեդրոնի շենքում է տեղակայված նաեւ Միության մասնաճյուղի «Նոր Հայք» պաշտոնաթերթի խմբագրությունը, որը հրատարակվում է 1978 թվականից:

Կարեւոր է նշել, որ Միության այս երկու հաստատությունները (նաեւ Թեքեյան մշակութային միության շենքը) տեղակայված են մի փողոցի վրա, որը Սան Լորանի քաղաքապետարանի որոշմամբ կոչվել է Ալեք Մանուկեան փողոց՝ ի գնահատանք նրա բարերարության: Ալեք Մանուկեան փողոցը, իր հերթին, գտնվում է Մեծ Մոնրեալի ամենահայաշատ մի տարածքում, որը կանադահայ սոցիոլոգ Կարո Զիչեկյանը պատկերավոր ձեւով անվանել է «Հայկական միջանցք»:[183] Այս տարածքում է տեղակայված նաեւ՝ նույն հեղինակի խոսքերով ասած, «դաշնակցական-անթիլիասական» կենտրոնը, որի բաղկացուցիչ մասերն են Ս.Հակոբ եկեղեցին, Համազգային մշակութային միությունը, Հայ Կեդրոնը, հայկական վարժարանը: Դժվար չէ նկատել, որ թե Տորոնտոյում եւ թե Մոնրեալում հաստատված հայերին որոշակի չափով հաջողվել է իրականացնել համախումբ բնակվելու իրենց ձգտումը, ինչը մեծապես պայմանավորել է նրանց աշխույժ ազգային գործունեությունը:

Կանադայում ՀԲԸ Միության երրորդ մասնաճյուղը հիմնվեց 1970թ. Ատլանտյան օվկիանոսի ափին՝ Վանկուվեր քաղաքում: Այս քաղաքում հայության թիվը 1980-ական թթ. շուրջ երկու հազար էր, որոնցից մոտ 40-ը Միության մասնաճյուղի անդամ էր: Որպես կենտրոն նրանց համար ծառայում էր Ս. Վարդան եկեղեցու Արարատ սրահը, ուր եւ կազմակերպվում են տարբեր ձեռնարկներ: Նույն սրահում է գործում նաեւ 1974թ. հիմնված Միության շաբաթօրյա հայկական դպրոցը: Չնայած փոքրաթվությանը՝ մասնաճյուղի անդամների ջանքերով կազմավորվել էր նաեւ Սեւան պարախումբը:

Արգենտինայում

Լատինական Ամերիկայում ՀԲԸ Միության առաջին մասնաճյուղը հիմնվեց Արգենտինայում: XX դ. սկզբին, մինչեւ Առաջին Աշխարհամարտը այս երկրի մայրաքաղաք Բուենոս Այրեսում կար շուրջ 200 հայ[184], որոնք եկել էին Կիլիկիայի տարբեր վայրերից, 1909թ. Ադանայում թուրքական իշխանությունների կողմից կազմակերպված հայերի զանգվածային սպանություններից հետո: Բացառությամբ մեծաքանակ առեւտրով մի քանի զբաղվողների, թե նրանք եւ թե հետագա տարիներին ներգաղթողները հիմնականում մանր առեւտրականներ, խանութպաններ էին: Երկրի զարգացման ցածր աստիճանը, նորեկ հայերի անծանոթ լինելը տեղի ժողովրդին, նրա մշակույթին, լեզվին եւ ուրիշ այլ հանգամանքներ դժվարացնում էին հայերի արագ ինքնահաստատումը ինչպես տնտեսական, այնպես էլ այլ ասպարեզներում: Պատահական չէ, որ միայն 1938թ. հնարավոր դարձավ առաջին հայկական եկեղեցու կառուցումը Բուենոս Այրեսում: Առաջին տարիներին հայերի համար որպես հավաքավայր էր ծառայում մի սրճարան, որի տերը Զմյուռնիայից եկած հրեա էր եւ որի հասցեով էլ նրանք նամակներ էին ստանում հայրենիքից:

ՀԲԸ Միության մասնաճյուղը Բուենոս Այրեսում հիմնվեց 1911թ. մայիսին եւ, ինչպես նշում է արգենտինահայ պատմաբան Նարսիսո Բինայան Կարմոնան, այն եղավ առաջին հայկական կազմակերպությունը այդ երկրում:[185] Հիմնադրման նախաձեռնողներն էին Հմայակ Հակոբյանը (նա էլ դարձավ մասնաճյուղի առաջին ատենապետը), Մ.Մեծատուրյանը եւ Ա.Բաչաճյանը, որոնց գործընկերներն էին Հայկ Մոսկոֆյանը, Ց.Պարգեւյանը եւ այլք: 1911թ. մայիսի 7-ին հիմնված կազմակերպությունը նախապես կոչվել է «Հայ գաղութի բարեգործական եւ լսարանական Միութիւն: ...Նորակազմ Միութեան հետապնդած նպատակը պիտի ըլլար՝ նոր ժամանող հայրենակիցներուն օժանդակել ապահովելու իրենց ապրուստը, կապ ստեղծել գաղթական հայերու միջեւ ու վառ պահել անոնց մէջ ազգային զգացումները: Կը կազմուի ծրագիր-կանոնագիր մը, որուն 6-րդ յօդուածին մէջ ըսուած է.- «Եթէ ընկերութիւնը կազմալուծուելու հարկին տակ գտնուի, իր բոլոր գոյքերը վաճառելով՝ իր ունեցած գումարին հետ միասին պիտի ղրկէ ՀԲԸ Միութեան կեդրոնատեղին»:[186]

Արգենտինահայ մեկ այլ պատմաբան՝ Վարդան Մատթեոսյանը (այժմ բնակվում է ԱՄՆ-ում) իր անտիպ աշխատության մեջ օգտագործելով նշված կազմակերպության 1911թ. արխիվային փաստաթղթերը, որոնք վերնագրված են «Տետր արձանագրութեանց Հայ Բարեգործական Ընկերութեան Արժէնթինի Հայոց (ՀԲԸՄ)», իր հերթին նույն կերպ է անվանում այն:[187] Նույն կերպ էր որակում այդ կազմակերպությունը նրա հիմնադիրներից Հ.Մոսկոֆյանը իր 1933թ. հրապարակած հոդվածում:[188] Կազմակերպության երիտասարդ հիմնադիրները, նպատակ ունենալով ստեղծել ՀԲԸ Միության մասնաճյուղ, այնուամենայնիվ, իրենց իրավունք չեն վերապահել առաջին իսկ օրից օգտագործել «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն» անվանումը: Դա անկարելի էր անել առանց ՀԲԸ Միության համաձայնության, որը ստանալու համար պետք է փաստարկվեին նորաստեղծ կազմակերպության կայացումն ու կենսունակությունը: Եվ փաստարկները չուշացան. «...ամէն կիրակի տեղի կ'ունենան վիճաբանական ժողովներ, գիշերային դասախօսութիւններ, ընկերական հաւաքոյթներ, հայկական նուագ ու երգ, ինչպէս նաեւ ունեցանք մեր համեստ Գրադարան-ընթերցարանը»:[189] 1912թ. մարտ ամսից կազմակերպությունը կապ է հաստատում ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության հետ, իսկ եւս մեկ տարի անց՝ 1913թ. ապրիլին իր անդամական ժողովում որոշում է վերանվանվել որպես ՀԲԸ Միության մասնաճյուղ: «58 անդամներու ստորագրութեամբ դիմումնագիր կը ղրկուի ՀԲԸ Միութեան կեդրոնին, որով կը խոստանան հաւատարիմ մնալ Բարեգործականի ծրագրին եւ հպատակիլ կեդրոնական մարմիններու բոլոր հրահանգներուն»:[190]

Միության մասնաճյուղը, լինելով միակ գործող կազմակերպությունը Բուենոս Այրեսում, կամա թե ակամա, պատասխանատվություն էր ստանձնում համայնքային կյանքի, նրա առանձին կառույցների ձեւավորման գործում: Դա առավել նկատելի եղավ տեղի հայության կրոնական կյանքի կազմակերպման ասպարեզում:

Դեռ վաղ ժամանակներից այս կամ այն երկիր գաղթած հայերի համար առաջնային խնդիրներից է եղել եկեղեցու, որպես, Մաղաքյա արք. Օրմանյանի բառերով ասած, «դադարեալ Հայրենիքի մարմնավորման», կառուցումը: Դա մի բարդ խնդիր էր, որի լուծումը պահանջում էր ժամանակ: Եվ բարդությունը ոչ միայն եւ ոչ այնքան սեփական եկեղեցի ունենալն էր, որքան հոգեւորականների բացակայությունը: Բուենոս Այրեսում հաստատված հայերը զուրկ էին թե՛ մեկից եւ թե՛ մյուսից, ուստի եւ իրենց կրոնական պետքերը բավարարելու համար հարկադրաբար դիմեցին ոչ սովորական միջոցների: Անհրաժեշտության դեպքում նրանք վարձում էին անգլիկան մի եկեղեցի, ուր անգլիացի հոգեւորականների քարոզները հայ հավատացյալների համար թարգմանում էր Հայկ Մոսկոֆյանը, իսկ Հովհաննես Պարգեւյանը երգում էր շարականներ: Կիմ Հեքիմյանի արտահայտությամբ՝ նման «հիբրիդ» ծառայությունը, որը ինչ-որ չափով պետք է լրացներ սեփական եկեղեցու բացը, այնուամենայնիվ առաջացրեց հա-

յերի դժգոհությունը: Նման անորոշ իրավիճակում է, որ քաղաքում հայտնվում է Հովհաննես քահանա Պարասադանյանը: Հայրենիքից՝ Արաբկիրից նա իր որդիների հետ անձնական պատճառներով արտագաղթել էր, նպատակ ունենալով հաստատվել ԱՄՆ-ում, սակայն, ստիպված էր եղել գալ Արգենտինա: Նրա հայտնվելը մեծ անակնկալ էր Բուենոս Այրեսի հայերի համար, նկատի առնելով, որ տեր հայրը չուներ եւ ոչ մի պաշտոնական հանգամանք: Առավել անակնկալ էր Բարեգործական Ընկերության համար, երբ 1912թ. հունվարին տեր հայրը դիմեց նրան՝ առաջարկելով իր՝ որպես հոգեւորականի, ծառայությունները: Բարեգործական Ընկերությունը, որպես այդպիսին, իրավասու չէր զբաղվել նման հարցով, եւ, սակայն, պարտավոր էր անել դա, լինելով այդ ժամանակ միակ հայկական կազմակերպությունը քաղաքում: Քահանայի ժամանումից մոտ երկու շաբաթ անց Ընկերությունը կազմակերպեց հատուկ մի հավաքույթ, որի ընթացքում հանգանակած գումարը հանձնեց նրան: Այս դեպքերը առիթ հանդիսացան, որպեսզի Բարեգործական Ընկերությունը նախաձեռնի «Արգենտինայի հայ եկեղեցասիրաց միության» հիմնումը: Եվ ձգտելով խթանել նորաստեղծ միության գործունեությունը՝ տրամադրեց իր սրահը՝ ժողովներ գումարելու համար, նշելով միաժամանակ, որ «...եկեղեցական արարողութիւն կատարելը արգիլուած է, քանզի հոս գրադարան եւ լսարան մ'է եւ եկեղեցական արարողութիւն կատարել՝ ըստ եկեղեցական կանոնի աններելի է»:[191] Նույն տարվա ապրիլի 19-ին՝ Ս.Զատկի օրը իր տանը տեր հայրը մատուցեց առաջին պատարագը Արգենտինայում, որին ներկա էին 85 հայ հավատացյալներ: Պատարագից հետո Եկեղեցասիրաց միության ժողովը ընտրեց իր վարչությունը, որն էլ այդուհետ պետք է զբաղվեր եկեղեցական կյանքի կազմակերպմամբ, այդ թվում նաեւ սեփական եկեղեցու կառուցման հարցերով:[192]

Բարեգործական Ընկերությունը ձգտում էր զբաղվել իր կանոնագրով նախատեսված հարցերով: Այսպես, նշված դեպքերին զուգընթաց նա կազմեց մի հատուկ հանձնախումբ՝ գործազուրկներին աշխատանք հայթայթելու նպատակով: Որոշ ժամանակ անց Ընկերությունը բացեց նաեւ գիշերային դասընթացներ՝ իսպաներեն սովորելու համար, ինչը մեծապես կարեւորվեց տեղի հայության կողմից:

Երբ Բուենոս Այրեսում հայտնի դարձան Արեւմտյան Հայաստանում տեղի ունեցած հայկական ջարդերի մասին, Ընկերությունը՝ Եկեղեցասիրաց միության եւ երկու այլ նորաստեղծ կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպեց հանրահավաք-ցույց, որի ընթացքում հանգանակած գումարը ուղարկվեց Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան: Քաղաքական բնույթի նման ձեռնարկի պարագայում Բարեգործական Ընկերության նախաձեռնողի եւ կազմակերպչի դերում հանդես գալը նույնպես թելադրված էր այդ պահին ազգային այլ կազմակերպությունների, նախ եւ առաջ ազգային կուսակցությունների չգոյությամբ (Դաշնակցություն եւ Հնչակյան կուսակցությունների տեղական միավորները ստեղծվեցին միայն 1914թ.):[193]

Բարեգործական Ընկերության հեղինակության վկայություններից էր նաեւ այն, որ նշված հանրահավաք-ցույցի մասնակիցները փափագ էին հայտնել, որ այն միավորվի եկեղեցական վարչությունների (բացի Եկեղեցասիրացից կազմվել էր նաեւ Հայ Քրիստոնեական միությունը) հետ: Նման գաղափարը, ըստ ամենայնի, թելադրված էր քաղաքի փոքրաթիվ հայությանը գոնե եկեղեցու պարագայում համախմբելու եւ միասնական հանդես գալու ցանկությամբ: Իսկ Բարեգործականը, որպես արդեն կայացած կազմակերպություն, պետք է ապահովեր այդ համախմբումը եւ որոշ իմաստով ղեկավարեր այն, գոնե սկզբնական շրջանում: Առաջարկը անշուշտ պատվաբեր էր Բարեգործականի համար, սակայն այն չգայթակղվեց եւ սթափ գնահատեց դրա հետեւանքները: Ամենակարեւորն այն էր, որ միավորումը վաղ թե ուշ վտանգելու էր կազմակերպության ինքնուրույնությունը: Այդ իսկ պատճառով էլ Բարեգործականը համաձայնվեց երեք կազմակերպությունների միավորման գաղափարին, այն պայմանով, սակայն, որ «...իւրաքանչիւր ընկերութիւն իւր զատ վարչական ժողովը եւ հաշուեկշիռը ունենայ»:[194] Հետագա դեպքերը հաստատեցին նման դիրքորոշման արդարացի լինելը: Դաշնակցության եւ Հնչակյան կուսակցությունների գործունեության աշխուժացումը Բուենոս Այրեսում, ինչպես եւ ամենուրեք, վերածվեց իշխանության պայքարի, այդ թվում նաեւ եկեղեցու հարցում: Բարեգործական Ընկերությունը, որը, ինչպես արդեն նշվեց, 1913թ. ապրիլից վերանվանվել էր ՀԲԸ Միության տեղական մասնաճյուղի, ոչ միայն հեռու մնաց այդ պայքարից, այլեւ նույն եկեղեցական վարչության խնդրանքով փորձեց օժանդակել ծագած տարաձայնությունների հարթեցմանը:[195]

Հետագա տարիներին նույնպես Միության մասնաճյուղը շարունակեց իր գործոն մասնակցությունը բերել համայնքի ազգային կյանքում: Այսպես, օրինակ, 1918թ. այն կարեւոր դեր խաղաց Ազգային Միության հիմնադրման գործում, որը միավորում էր տեղի ազգային կազմակերպությունները: Սակայն քաղաքական կազմակերպությունների իրարամերժ կեցվածքը, նրանց մենատիրական ձգտումները թելադրեցին Միության մասնաճյուղին էլ ավելի հավատարիմ մնալ իր՝ որպես ոչ քաղաքական կազմակերպության կարգավիճակին եւ դրանից բխող գործելակերպին:

Բուենոս Այրեսի ՀԲԸ Միության մասնաճյուղը դեռ նոր էր սկսել

գործել որպես այդպիսին, երբ 1915թ. առաջին լուրերը հասան Թուրքիայում սկիզբ առած հայերի ցեղասպանության մասին: Մասնաճյուղի համար առանձնակի կարեւորություն ուներ ՀԲԸ Միության նախագահ Պողոս Նուպարի նամակը, որում նա, տեղեկացնելով կատարվածի մասին, դիմում էր ի նպաստ արեւմտահայության հանգանակություն կազմակերպելու առաջարկով: Արդեն մայիսին մասնաճյուղը կազմակերպեց առաջին սգահանդեսը, իսկ որոշ ժամանակ անց նաեւ երկրորդը, որին մասնակցեց քաղաքի ողջ հայությունը: Մասնաճյուղը սգահանդեսներ կազմակերպեց նաեւ Արգենտինայի եւ Ուրուգվայի այլ հայաբնակ քաղաքներում: «Հուլիսին, հանգանակությունների արդյունքում,- նշում է Կիմ Հեքիմյանը,- հավաքվել էր ավելի քան 1311 պեսո, ինչպես Բուենոս Այրեսում, այնպես էլ Կորդոբայում, Բահիյա Բլանկայում, Մենդոզայում, Պունտա Ալտայում եւ Ուրուգվայում՝ Մոնտեվիդեոյում ապրող հայերի շնորհիվ»:[196] Ուշագրավ է, որ Միության մասնաճյուղը «նոյն նպատակով եւ յատուկ յանձնախումբերու միջոցով հանգանակութիւն կատարած է արաբական շրջանակներու մէջ»:[197]

Պատերազմի տարիներին այս հեռավոր երկրում նույնպես կազմվեցին կամավորական խմբեր (մոտ 150 հոգի), որոնք մեկնում էին Ֆրանսիա՝ համալրելու Արեւելյան (Հայկական) լեգեոնի շարքերը եւ որոնք դաշնակիցների զորքերի հետ պետք է տոնեին Արարայի հաղթանակը: Այդ խմբերի մեջ էին նաեւ Միության երիտասարդ անդամները, որոնց մեկնումը տեղի էր ունենում շատ հանդիսավոր պայմաններում: Այսպես, Միության մասնաճյուղը «կազմակերպած է ողջերթի հանդէս մը ի պատիւ Բարեգործականի գործօն անդամներէն՝ օդաչու Միհրան Խայեանի, որ իր ընկերներով որպէս կամաւոր Ֆրանսա մեկնած է»:[198]

Առաջին Աշխարհամարտը մի նոր եւ անսպասելի խնդիր առաջացրեց արգենտինահայերի համար: Քանի որ Արգենտինան Անտանտի երկրների դաշնակիցն էր, տեղի հայերը, լինելով Թուրքիայի քաղաքացիներ, սկսեցին դիտվել որպես թշնամի երկրի ներկայացուցիչներ: Այդ հանգամանքը, հայերի համար խիստ վիրավորական լինելուց զատ, ուներ եւ այլ անցանկալի հետեւանքներ: Արգենտինայում մեծ գործազրկության պայմաններում հայերի թրքահպատակ լինելը թե՛ էլ ավելի էր դժվարացնում աշխատանք գտնելը եւ թե՛ հարմար առիթ էր նրանց աշխատանքից ազատելու համար: Ստեղծված իրավիճակում մեծ թվով հայեր դիմեցին Միության մասնաճյուղին, որպեսզի իշխանությունների մոտ երաշխավորի իրենց ազգությամբ հայ, այլ ոչ թե արաբ կամ թուրք լինելը: Երկրի իշխանությունների հետ Միության մասնաճյուղի եւ Եկեղեցական հոգաբարձության բանակցությունների, նրանց խնդրանքով տարբեր երկրների

դեսպանատների միջնորդությունների արդյունքում տեղի հայերին տրվեցին նոր՝ նրանց հայ լինելը հաստատող փաստաթղթեր:[199]

1920թ. սկիզբ առավ հայերի հետեղեռնյան շրջանի ներգաղթը Արգենտինա եւ Հարավային Ամերիկայի այլ երկրներ: Տեղի գործող հայկական կազմակերպությունների, այդ թվում նաեւ ՀԲԸ Միության մասնաճյուղի գործունեության հիմնական նպատակն է դառնում նրանց աշխատանքով եւ բնակարանով ապահովումը: Դրա հետ մեկտեղ զգալի աշխուժանում է ազգային-մշակութային գործունեությունը. Միության մասնաճյուղը կազմակերպում է թատերական հանդեսներ, կազմավորում է կանանց երգչախումբ եւ այլ ձեռնարկներ: 1920-ական թթ. սկզբին նման հանդեսներից գոյացած գումարները հատկացվում էին ի նպաստ հայ որբերին՝ որպես Ոսկեղեն Կիրակիի հանգանակություն: 1922թ. նույնպես, տեղեկանալով Զմյուռնիայի հայերի ողբերգության մասին, մասնաճյուղը կազմակերպեց հատուկ հանգանակություն:

Երիտասարդական Լիգան

1927թ., երբ Արգենտինայի Հայ Պատանեկան Միությունը կազմալուծվեց, իր գումարներն ու գույքը հանձնեց ՀԲԸ Միության մասնաճյուղին, որն էլ ստանձնեց նաեւ նրա գործառույթները: Բինայան-Կարմոնայի կարծիքով, դրանով իսկ սկիզբ դրվեց Միության երիտասարդական կազմակերպությանը, որը տարիներ անց՝ 1940 թ. կոչվեց Երիտասարդական Լիգա:[200] Այնուամենայնիվ, ավանդաբար համարվում է, որ Բուենոս Այրեսի Միության Երիտասարդական Լիգան հիմնվել է հենց 1940թ. նոյեմբերին: Կազմակերպության հիմնական նպատակներն էին.

«Մշակել հայ երիտասարդութեան ցեղային եւ ազգային գիտակցութիւնը եւ անոնց ընկերային համերաշխութիւնը,

Ցարգել Արխենթինեան պետութիւնը եւ հպատակել իր օրէնքներուն,

Սատարել իր անդամներու բարոյական, մտաւորական եւ ֆիզիքական ինքնազարգացման, գլխաւորաբար գրական, գեղարուեստական եւ այլն մարզերու մէջ,

Ծանօթացնել մեր հայրենիքը, ազգային պատմութիւնը, գրականութիւնը եւ առհասարակ հայ տաղանդը անցեալին եւ ներկային մէջ,

Զարգացնել նոր սերունդին մէջ ինքնագիտակցութեան, կարգապահութեան, ձեռներէցութեան, զոհողութեան եւ համագործակցութեան ոգին,

Հետապնդել ՀԲԸ Միութեան խողովակով անոր ծրագրած բարձր նպատակները»:[201]

Լիգային կարող էին անդամակցել 12-35 տարեկան երկսեռ երիտասարդներ, որոնք պարտավոր էին ստորագրել հատուկ խոստումնագիր: Այդ խոստումնագրում ուշագրավ են հետեւյալ տողերը. «Կ'երդնում հոգեւին ծառայել ազգիս եւ հայրենիքիս, անկեղծօրէն սիրել ՀԲԸ Միութիւնը, վարքով եւ գործքով անձնաւորել անոր ուղղութիւնը, լիուլի յարգել Երիտ. Լիկայի ծրագիրը, միշտ բարձր պահել հայ երիտասարդութեան եւ Երիտ. Լիկայի վարկը, իսպառ հրաժարիլ կուսակցական հակամարտ վէճերէ ...»:[202] Այս վերջին կետը խիստ այժմեական էր, քանզի այս երկրում նույնպես ազգային կուսակցությունների հակամարտությունը ընդունել էր այնպիսի չափեր, որ Միության մասնաճյուղը այլեւս ի վիճակի չէր ստանձնել հաշտարարի դերը:

Հիմնադրման առաջին իսկ օրից Լիգան, նրա ենթահանձնախմբերը («Հայթայթիչ եւ պրոպագանդայի, հանդէսի, գեղարուեստի, մշակութային եւ ուսանողական») ծավալեցին աշխույժ գործունեություն՝ դասախոսություններ, հանդես-պարահանդեսներ, խմբակային զբոսանքներ եւ այլն: Շնորհիվ այդ ամենի Լիգայի կազմավորումից երկու տարի անց նրա անդամների թիվը հասավ 421-ի, այդ թվում նաեւ 25 համալսարանական ուսանող:

1942թ. հուլիսին Բուենոս Այրեսում բացվեց Բարեգործական Տունը: Նման կենտրոն ունենալու անհրաժեշտությունը զգացվում էր վաղուց, իսկ Երիտասարդական Լիգայի կազմավորումը դարձրեց այն անհետաձգելի: Բոլոր հարմարություններով օժտված երկհարկանի շենքը (այն գնել եւ նպաստավոր պայմաններով Միության մասնաճյուղին վարձով էր տվել նրա վարչության ատենապետ Հայկազ Սարին) գտնվում էր Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու եւ Հայ Կեդրոնի հարեւանությամբ, ինչը մեծապես նպաստեց նրա արդյունավետ օգտագործմանը: Արդեն մի քանի ամիս անց, Բարեգործականի Տան մեջ սկսեց գործել Երիտասարդական Լիգայի գրադարան-ընթերցասրահը: Առավել արդյունավետ ընթացան հայերենի երեկոյան դասընթացները, որոնցից ձրիաբար օգտվում էին թե նրա անդամները եւ թե բոլոր ցանկացողները:[203] Համահամայնքային նշանակություն ունեին նաեւ դասախոսությունները, որոնցով հանդես էին գալիս հայտնի մտավորականները, ինչպես, օրինակ, պատմաբաններ՝ Կորդովայի Միության մասնաճյուղի ատենապետ դոկտոր Հարություն Աստուրյանը եւ պրոֆ. Նարսիսո Բինայանը:

Բուենոս Այրեսի Երիտասարդական Լիգայի կարեւոր ձեռնարկումներից էր հարեւան երկրների իրենց գործընկերների հետ հարաբերությունների հաստատումը: Այն սկիզբ առավ 1946թ., երբ նրանց պատվիրակությունը Մոնտեվիդեոյում մասնակցեց տեղի ունեցած Երիտասարդական Լիգայի առաջին հանդեսին:[204]

Կորդովայում

Արգենտինայում Միության երկրորդ մասնաճյուղը հիմնվեց ամենախոշոր քաղաքներից մեկում՝ Կորդովայում (Կորդոբայում): Այդ տարիներին Կորդովայում ապրում էր շուրջ 100 հայ՝ ծնունդով նույնպես Հայկական Կիլիկիայից: Կորդովայում, ինչպես եւ Բուենոս Այրեսում Միության մասնաճյուղը եղավ հայկական առաջին եւ որոշ ժամանակ՝ միակ կազմակերպությունը, որն իր շուրջն էր համախմբել տեղի բոլոր հայերին: Ըստ «Ոսկեմատեան»-ի, Կորդոբայի մասնաճյուղը «...հաստատուած է 1913ին, բայց մինչեւ 1918 նշանակելի գործունէութիւն մը չէ ունեցած»:[205] Ըստ երեւույթին, այդ «անգործունէութեան» պատճառով էլ «Տարեցոյց»-ը որպես հիմնադրման տարի, նշում է հենց 1918թ.:[206] Այդ թվականին մասնաճյուղը ուներ ընդամենը 43 անդամ եւ չնայած դրան՝ հաջողությամբ կազմակերպում է մի շարք հանգանակություններ՝ ի նպաստ հայ կամավորների, որբերի, Հայաստանի ներգաղթի եւ այլն: Մասնաճյուղի կարեւոր իրագործումներից էր Կորդովայի Գաղութային Միության կազմավորումը, որում միավորվեցին քաղաքի բոլոր անհատ հայերը եւ ազգային միությունները: Այստեղ նույնպես մեծ խանդավառություն առաջացրին Առաջին Աշխարհամարտի ավարտը եւ Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնումը: «Զինադադարի առիթով,- գրում էր «Տարեցոյց»-ը,- երբ տեղական կառավարութիւնը ի պաշտօնէ կը հրաւիրէր գորտոպաբնակ մեծ եւ փոքր յաղթական ժողովուրդները բերելու ազգային սեփական դրօշակներով իրենց մասնակցութիւնը կազմակերպուելիք տոնանցքին, հայերն ալ՝ հովանաւորութեամբ ՀԲԸ Միութեան Տեղական մասնաճիւղի, հանդիսաւոր թափօր կազմած կը հետեւէին շքեղազարդ բաց կարգի մը՝ ուր Մայր Հայաստան կը ներկայանար շղթայազերծ, ծաղիկներով թաթաւուն եւ Եռագոյն ի ձեռին»:[207]

Կորդովայի հայությունը՝ իր մեծամասնության մեջ արհեստավորներ եւ վաճառականներ, այդ տարիներին հասկանալի պատճառներով, չէր կարող պարծենալ մտավորականների առկայությամբ: Եվ եթե հայտնվում էին այդպիսիները, ապա հայտնի օրինաչափությամբ նրանք դառնում էին ՀԲԸ Միության հավատարիմ անդամներ: Դրա օրինակներից էր դոկտոր Հարություն Աստուրյանը: Նախնական ուսումը Մարաշում ստանալուց հետո, նա հետագայում շարունակեց այն Վենետիկում եւ Մյուն-

խենի համալսարանում (1912թ. նա հրատարակեց «Հայաստան եւ Հոռոմ» մեծածավալ մենագրությունը)։ 1923թ. Հ.Աստուրյանը տեղափոխվում է Կորդովա, ուր հրավիրված էր տեղական դպրոցներից մեկում դասավանդելու ֆրանսերեն եւ լատիներեն։ 1924թ. նա ընտրվեց ՀԲԸ Միության մասնաճյուղի ատենապետ եւ վերստին ստանձնեց այդ պաշտոնը 1940-ական թթ սկզբին։

Ուրուգվայ

Բուենոս Այրեսից հետո Մոնտեվիդեոն իր հայազգի բնակչությամբ եղել ու մնում է Հարավային Ամերիկայի երկրորդ քաղաքը։ 1911-1915թթ. Ուրուգվայ ներգաղթել էր ընդամենը շուրջ 80 հայ, որոնք, ինչպես եւ Արգենտինայի դեպքում, հիմնականում Կիլիկիայից էին (մարաշցիներ, այնթապցիներ, քեսապցիներ եւ այլք)։ Նման թվաքանակը, իր հերթին, պայմանավորեց ազգային կյանքի կազմակերպման դանդաղ եւ դժվարին ընթացքը։ Դրա վկայություններից է ՀԲԸ Միության Մոնտեվիդեոյի մասնաճյուղի հիմնադրման պատմությունը։ Համաձայն «Ոսկեմատեան ՀԲԸ Միութեան. 1906-1931»-ի, դա տեղի էր ունեցել 1924թ. օգոստոսին։ «Դժբախտաբար, 1926-ին գաղութին մէջ գոյութիւն առած պառակտումներու հետեւանքով, Մասնաժողովը կը կազմալուծուի եւ այլ եւս գործունէութեան ոեւէ նշան ցոյց չի տար, հակառակ յետագային Կեդրոնին կողմէ եղած դիմումներուն»։[208]

Ըստ ամենայնի, նման կարճատեւ գոյության պատճառով մասնաճյուղի գործունեությունը եղել է այնքան աննշան, որ նույնիսկ 1943թ. հրատարակած «Տարեցոյց Հարաւային Ամերիկահայոց»-ում այն ընդհանրապես չի հիշատակվում։ Համաձայն այս վերջինի, Միության մասնաճյուղը Մոնտեվիդեոյում հիմնվել է 1938թ.։

Պարզվում է, սակայն, որ դա դեռ ամբողջը չէ։ Վարդան Մատթեոսյանը իր աշխատության մեջ, հենվելով մի շարք աղբյուրների վրա, բերում է նոր մանրամասներ։ Նա գրում է. «Մայիս 28-ին 1915թ. Մոնթէվիտէոյի «Լա Ռասոն» օրաթերթը կը գրէր. «Այս առաւօտ մեզի այցելեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատուիրակութիւն մը, որ հոս ժամանած է իրենց ազգակիցներուն եւ այդ ժողովուրդին հետ համակրող անձերու միջեւ Կովկասի գաղթականներուն օգնութեան տրամադրելու լումաները հաւաքելու համար։ ...Նուիրատուութիւնները տեղական Ցանձնախումբին կրնան առաքուիլ՝ փողոց Ինկլաթերա 401...»։ Վ.Մատթեոսյանը, ենթադրելով, որ նշված պատվիրակությունը ժամանել էր Բուենոս Այրեսից, այն կարծիքն է հայտնում, որ «տեղական Ցանձնախումբին» ակնարկությունը ՀԲԸ Միության մասնաճյուղի մը (Մոնտեվիդեոյում-Էդ.Մ.) մասին չի թուիր ըլլալ, այլ դրամահաւաքի նպատակով կազմակերպուած խումբի մը»։ «Սակայն,- շարունակում է նա,- գոյութիւն ունէր ուրիշ խումբ մը, որ ըստ երեւոյթին կազմակերպական կառոյց մը ստեղծած էր»։ Այդ կազմակերպությունը՝ «Հայ բնակիչներու կեդրոնը» Հարություն Չիլինկիրյանի գլխավորությամբ, նույն՝ 1915թ. հոկտեմբերին Բուենոս Այրեսի ՀԲԸՄ մասնաճյուղին հայտնում է իր կազմավորման մասին եւ խնդրում ճանաչել Մոնտեվիդեոյի մասնաճյուղ։ Բուենոս Այրեսի մասնաճյուղը պատասխան նամակում, արժեվորելով Հ.Չիլինկիրյանի «ազգասիրական ձեռնարկը», այդուհանդերձ, ձեռնպահ է մնում ճանաչման հարցում, քանզի դա ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության իրավասությունն էր։[209] Հ.Չիլինկիրյանի ջանքերը, այնուամենայնիվ, ապարդյուն չեղան. հենց նա էլ եղավ 1924թ. հիմնած Մոնտեվիդեոյի ՀԲԸ Միության մասնաճյուղի առաջին ատենապետը։[210]

Այսպիսով, դեպքերի այլ ընթացքի դեպքում Մոնտեվիդեոյում նույնպես ՀԲԸ Միությունը կարող էր դառնալ առաջին ազգային կազմակերպությունը։ Միության մասնաճյուղը կազմավորվեց 1924թ., սակայն, վերջնական հաջողությունը եկավ, ինչպես նշվեց, 1938թ., երբ ներգաղթի նոր ալիքի արդյունքում հայության թիվը Մոնտեվիդեոյում հասավ 5000-ի եւ երբ գիտակցվեց ՀԲԸ Միության՝ որպես հատվածականությանը այլընտրանքային ուժի կարեւորությունը։

1946թ. կազմավորվեց Միության Մոնտեվիդեոյի մասնաճյուղի երիտասարդական բաժինը՝ Լիգան, որը հետագա տասնամյակներին հաջող գործունեություն ծավալեց մշակութային եւ մարզական ոլորտներում։

Բրազիլիայում

Թեեւ Բրազիլիայի հայությունը իր թվաքանակով ի սկզբանե զիջել է Արգենտինային եւ Ուրուգվային, նրա զարգացումն ընթացել է գրեթե նույն ուղիով, միայն թե որոշ ուշացումով։ Տեղի հայության պատմության սկզբնական շրջանը ներկայացված է Եզնիկ քահանա Վարդանյանի՝ 1948թ. հրատարակած ստվարածավալ եւ արժեքավոր գրքում։ Ե.Վարդանյանը հատուկ շեշտում է, որ դեռեւս 1917թ. Սան Պաուլոյում գործում էր Հայ Բարեգործական Միություն կազմակերպությունը, որը «...զուտ տեղական հանգամանք ունէր իր ուրոյն ծրագրով, եւ կազմուած էր պատերազմի առթիւ թշուառութեան մատնուած իր հայրենակիցներուն օգ-

նութեան հասնելու գնահատելի գաղափարներով, թէեւ հանգանակուած բոլոր գումարներն ալ ուղղակի հանգուցեալ Պօղոս Նուպար փաշային ղրկուած են իր նպատակին ծառայեցնելու համար, բայց ան բնաւ ՀԲԸ Միութեան պաշտօնական մասնաճիւղի հանգամանք չստացաւ»:[211]

Ինչ վերաբերում է ՀԲԸ Միության մասնաճյուղի հիմնադրմանը, ապա ըստ Ե.Վարդանյանի, այն տեղի է ունեցել հետեւյալ հանգամանքներում: 1931թ. այս երկրամաս կատարած ուղեւորությունից հետո Փարիզ վերադարձած մի վերապատվելի, ՀԲԸ Միության Ընդհանուր տնօրեն Վահան Մալեզյանին պատմում է Սան Պաուլոյում Գյուտ Մխիթարյանի հետ իր հանդիպման մասին: Վ.Մալեզյանը նախածանոթ էր վերջինին նրա եպիսկոպոսության եւ Սսում գտնվելու ժամանակից՝ ՀԲԸ Միությանը օժանդակելու առիթով: 1931թ. հուլիսի նամակով Վ.Մալեզյանը խնդրում է Գ.Մխիթարյանին, որ նա ստանձնի Սան Պաուլոյում Միության մասնաճյուղ հիմնելու նախաձեռնությունը: Պատասխան նամակում Գ.Մխիթարյանը, հայտնելով իր համաձայնությունը, բերում էր նաեւ ուշագրավ տեղեկություններ Սան Պաուլոյի հայության մասին: «Մօտաւորապէս 2500-3000 բնակչութիւն ունեցող գաղութիս մէջ ոչինչ կայ մխիթարական,- գրում էր նա եւ շարունակում,- «տնտեսական տագնապի մասին գաղափար մը տալու համար պէտք է ըսել, որ Անգլիական ոսկին 40 միլ ռէյսէն (ներկայիս քրուզէյրօ) 79 միլ ռէյսի բարձրացած է, տոլարն ալ 8 միլ ռէյսէն 16 միլ ռէյսի. կրնաք երեւակայել ուրեմն, որ հասարակ արհեստաւորներ կամ գործաւորներ ի՛նչ դժուարութեամբ կրնան ապահովել իրենց ապրուստը: Այսպէս ըլլալով մէկտեղ, հպարտութեամբ պէտք է ըսեմ, որ մէկ հատ իսկ հայ մուրացիկ չունինք, մինչդեռ ուրիշ ազգերէ հազարաւորներ կան»:[212]

Գ.Մխիթարյանի եւ Վ.Մալեզյանի նամակներից ակնհայտ է, որ նրանք երկուսն էլ մեծ հույսեր էին կապում Լեւոն Մոստիչյանի հետ: Լ.Մոստիչյանը 1924թ. Փարիզից ընտանիքով փոխադրվել էր Սան Պաուլո, սակայն, որպես արեւելյան գորգերի վաճառական, հաճախ էր լինում Փարիզում, ուր եւ սերտ հարաբերություններ էր հաստատել Միության ղեկավարության հետ: Հենց նա էլ ստանձնեց մասնաճյուղի հիմնադրման աշխատանքները: 1932թ. փետրվարի 26-ին Սան Պաուլոյի հայ եկեղեցում կայացած ժողովը միաձայն որոշում է կազմավորել Միության մասնաճյուղ, որի առաջին նախագահ է ընտրվում Վահրամ Քեռթենճյանը, իսկ ատենապետ՝ Գյուտ Մխիթարյանը: Սկզբնական շրջանում մասնաճյուղը աչքի էր ընկնում աշխույժ գործունեությամբ՝ արձանագրվում են նոր անդամներ, կազմակերպվում են ժողովներ, անդամավճարներից գոյացած գումարը ուղարկվում է Միության կենտրոն՝ Փարիզ եւ այլն: Որոշ

ժամանակ անց, սակայն, «Միութիւնը դէպի անկում կ՚երթայ, առանց ոսկեդար մը ունենալու: Վահրամ Քէօթէնէճեան կը հրաժարի ու կը քաշուի Միութենէն առանց իր այդ քայլը արդարացնող պատճառ մը ունենալու: Գիւտ Մխիթարեան իր հիւանդութիւնը պատրուակելով, գործօն մասնակցութենէ կը դադրի: Միւս անդամներն ալ, ասոնց օրինակին հետեւելով, կը դադրեցնեն իրենց ամսավճարները եւ ժողովներուն ներկայ չեն գտնուիր. Լեւոն Մոստիչեան եւ Ղազար Նազարեան կ՚ստիպուին դռնէ դուռ պտըտիլ, խնդրել որ կրկին քով քովի գան եւ Միութեան մասնաճիւղը քայքայումէ փրկեն, բայց անօգուտ կ՚ըլլայ»:[213] Մի քանի տարի անց՝ 1937թ. նույն Լ.Մոստիչյանի ջանքերով կազմավորվում է մի նոր մասնաճյուղ Սան Պաուլոյի Սանտա Աննա արվարձանում, տեղի հայերի շրջանում, որը, սակայն, էլ ավելի կարճ կյանք ունեցավ:

Բրազիլիայում ՀԲԸ Միության գործունեության նոր շրջանը սկիզբ առավ Երկրորդ Աշխարհամարտից հետո միայն: Հատկանշական է, որ նոր մասնաճյուղի հիմնումը այս անգամ հետեւանք էր ՀԲԸ Միության կազմակերպած ներգաղթի հանգանակության: Այդ նպատակով Բրազիլիա ժամանած Հարավային Ամերիկայի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արք. Խաչատուրյանը 1946թ. սեպտեմբերին հրապարակային մեկ հավաքույթի ընթացքում հիմնում է Միության մասնաճյուղ, որին անդամակցում են 89 մարդ եւ որն էլ պետք է կազմակերպեր հանգանակությունը: Եզնիկ Վարդանյանը գրում էր. «Բարեգործականի նորընտիր վարչութիւնը մինչեւ 1946 դեկտ. 31-ը տակաւին հանգանակութեան գործը վերջացուցած չըլլալուն, Միութեան կազմը զօրացնելու աշխատանքին ձեռնարկած չէր, ժամանակի չգոյութեան պատճառաւ, բայց իր ձեռներէցութիւնն ու ցուցահանած եռանդը յոյս կը ներշնչէին թէ, Պրազիլը այլեւս ՀԲԸ Միութեան տեւական մասնաճիւղը պիտի ունենայ»:[214] Հետագա դեպքերը արդարացրին այդ հույսերը:

Զարթոնքի տարիներ

Ինչպես եւ այլ երկրներում, Լատինական Ամերիկայի երկրներում նույնպես հայերի ազգամշակութային կյանքում նոր շրջան սկսվեց 1960-ական թթ.: ՀԲԸ Միության մասնաճյուղերի պարագայում դրան նպաստեց նաեւ 1968թ. նախագահ Ա.Մանուկյանի տարածաշրջան կատարած այցը: Շուրջ չորս շաբաթ նա եղավ բոլոր հայաշատ քաղաքներում, մանրամասն ծանոթացավ հայ համայնքների կյանքին՝ ուշադրության կենտրոնում ունենալով, իհարկե, Միության մասնաճյուղերի գործունեությունը:

Արդեն Նյու Յորքում նրա նախաձեռնությամբ Միության Կենտրոնական Վարչությունը որոշեց այդուհետ առավել մեծ չափով օժանդակել Արգենտինայի, Ուրուգվայի եւ Բրազիլիայի՝ մինչ այդ մի տեսակ անտեսված մասնաճյուղերին: Շնորհիվ դրա տեղի մասնաճյուղերը էլ ավելի աշխուժացրին իրենց գործունեությունը նախ եւ առաջ կրթական եւ մշակութային ասպարեզում: Այդ իմաստով հատկապես նշանակալից եղան 1970-ական թթ.:

1972թ. Բուենոս Այրեսում տեղի ունեցավ Հարավային Ամերիկայի երկրների ՀԲԸ Միության Առաջին Պատգամավորական համագումարը, որին մասնակցեցին Կորդովայի, Մոնտեվիդեոյի, Սան Պաուլոյի եւ Բուենոս Այրեսի մասնաճյուղերի ներկայացուցիչները, ինչպես նաեւ Միության Ընդհանուր տնօրեն Մ.Հայկենցը: Ժողովը մեծ դեր խաղաց երեք երկրների Միության մասնաճյուղերի միջեւ փորձի փոխանակման, համագործակցություն հաստատելու, համատեղ միջոցառումներ անցկացնելու գործում: Այսպես, համագումարի որոշմամբ Բուենոս Այրեսի մասնաճյուղի «Լուսաբաց» պարբերականը այդուհետ պետք է դառնար Միության տարածաշրջանային ամսագիր եւ ունենար նաեւ հատուկ բաժիններ՝ իսպաներեն եւ պորտուգալերեն լեզուներով: Շուրջ երկու տասնամյակ անց նրան փոխարինելու եկավ Բուենոս Այրեսի երիտասարդ համալսարանավարտ մասնագետների կողմից հրատարակվող «Generacion 3» իսպանալեզու ամսագիրը, որը այսօր ամենակարդացվող պարբերականներից է եւ տպագրվում է 4.000 օրինակով:

1989թ. օգոստոսին Բուենոս Այրեսում առաջին անգամ տեղի ունեցան ՀԲԸ Միության 12-րդ Նավասարդյան Խաղերը, որոնց մասնակցեցին շուրջ 400 երիտասարդներ Հալեպից, Բեյրութից, Լոնդոնից, Լոս Անջելեսից, Սան Պաուլոյից, Մոնտեվիդեոյից եւ Կորդովայից: Խաղերը կայացան հատուկ այդ առիթով քաղաք ժամանած Ալեք Մանուկյանի նախագահությամբ եւ Բուենոս Այրեսի քաղաքապետի ներկայությամբ: Այդ առումով առավել կարեւոր եղավ 2000թ., երբ հերթական Նավասարդյան Խաղերից զատ, Բուենոս Այրեսում հրավիրվեց ՀԲԸ Միության 81-րդ Ընդհանուր ժողովը: Իսկ մինչ այդ՝ 1997թ. հունիսին Բուենոս Այրեսում ՀԲԸՄ-ի Ալեք Մանուկեան կեդրոնում կայացավ Միության Հարավային Ամերիկայի մասնաճյուղերի երգչախմբերի երրորդ փառատոնը, մասնակցությամբ Միության Բուենոս Այրեսի Շնորհալի երգչախմբի, Մարի Մանուկեան Կրթական հաստատության Մանկական երգչախմբի եւ Մոնտեվիդեոյի Կոունկ երգչախմբի ու Արմենիա պարախմբի: Ինչ վերաբերում է Կորդովային, ապա տեղի հայության կյանքում կարեւոր նշանակություն ունեցավ ՀԲԸ

Միության նորակառույց Կեդրոնի բացումը 1987թ., որի շնորհիվ հնարավոր դարձավ բազմապիսի միջոցառումների անցկացումը:

Խոսելով Մոնտեվիդեոյի Միության երիտասարդների մասին՝ ՀԲԸ Միության 1972թ. տարեգիրքը նշում էր. «Լիկան ...վերակազմեց 64 հոգինոց երկսեռ երգչախումբը, փառաշուք կերպով տօնեց իր հիմնադրութեան 25ամեակը, սարքեց 8 շատ յաջող պարահանդէսներ, կազմակերպեց մարզանքի շաբաթական դասեր, ազգային ու պատանեկան հարցերու վերաբերեալ ամսական դասախօսութիւններ, երկու տօնավաճառ՝ որոնց հասոյթով շինեց վոլէյպոլի եւ պէյպի ֆութպոլի դաշտը եւ մասնակցեցաւ Գորտոպայի մէջ կայացած միջ-մասնաճիւղային ողիմպիականին...»:[215] Մոնտեվիդեոյում շարունակում էր գործել նաեւ սկաուտական կազմակերպությունը իր ավելի քան 200 անդամներով, որը սերտ կապերի մեջ էր տեղի նույնանման միությունների հետ: Հիշատակության արժանի է հետեւյալ փաստը. «Ամանորի առթիւ իրենց նիւթական միջոցներով անոնք գնեցին աւելի քան հինգ հարիւր կտոր խաղալիք զորս նուիրեցին պետական հիւանդանոցի խեղանդամ մանուկներուն ու երգերով, զանազան խաղերով եւ զաւեշտով մը զուարճացուցին փոքրիկները»:[216] 1990թ. հուլիսին Մոնտեվիդեոյում կայացան Հարավային Ամերիկայի Միության մասնաճյուղերի Երիտասարդական Լիգաների 18-րդ Ողիմպիական խաղերը, որոնց մասնակիցներն էին ավելի քան 200 երկսեռ մարզիկներ Արգենտինայի, Ուրուգվայի եւ Բրազիլիայի տարբեր քաղաքներից: 1995թ. Մոնտեվիդեոյում որոշ ընդմիջումից հետո գործունեությունը վերսկսեց Միության «Բարեգործականի Ձայն» կիրակնօրյա ռադիոժամը, որը պատրաստում եւ վարում էին հայազգի երիտասարդները:

Սան Պաուլոյում գործող Երիտասարդական Լիգան, որը կրում էր «Արմենիկ» անունը, չնայած իր փոքրաթիվ լինելուն, նույնպես աչքի էր ընկնում մշակութային եւ մարզական միջոցառումներով: 1975թ. նա մեծ հաջողությամբ կազմակերպեց ՀԲԸ Միության Հարավային Ամերիկայի հերթական Օլիմպիական խաղերը, որոնք աննախադեպ իրադարձություն էին Սան Պաուլոյի ողջ հայության կյանքում: Երիտասարդական Լիգայի գործունեության ծավալմանը մեծապես նպաստեց ՀԲԸ Միության Կեդրոն-համալիրի կառուցումը 1985թ., որը ընդարձակվեց (մարզասրահ, գրադարան եւ այլն) հետագա տարիներին:

Այս եւ նման այլ ծրագրեր իրագործելով հանդերձ, Հարավային Ամերիկայի Միության մասնաճյուղերի գերխնդիրն էր, սակայն, սեփական ազգային դպրոցների հիմնումը: Հարկ է նշել, որ ի տարբերություն ԱՄՆ-ի եւ Եվրոպայի երկրների, Արգենտինայում՝ սկսած 1920-ական թթ., գործում էին մի շարք հայկական ամենօրյա վարժարաններ: Այսպես,

1960-ական թթ. Բուենոս Այրեսում արդեն կային երկրորդական եւ միջնակարգ ամենօրյա յոթ դպրոցներ (Արծրունի ազգային վարժարան, Խրիմեան կրթական հիմնարկություն, Վիսենտե Լոպեսի ազգային վարժարան եւ այլն), որոնք գործում են ցայսօր: Այլ էր պատկերը Ուրուգվայում եւ հատկապես Բրազիլիայում: Դեռեւս 1940-ական թթ. Ուրուգվայում կային վեց հայկական դպրոց՝ 430 աշակերտով, որոնք, սակայն, հետագա տարիներին աստիճանաբար դադարեցրին իրենց գոյությունը: Էլ ավելի անմխիթար էր վիճակը Բրազիլիայում:[217]

Նման իրավիճակում հասկանալի է դառնում այն մեծ ոգեւորությունը, որ տիրում էր Մոնտեվիդեոյում 1972թ. հուլիսի 22-ին, երբ կատարվեց ՀԲԸ Միության Նուպարեան ազգային վարժարանի հիմնարկեքը: Նուպարեան նախակրթական վարժարանը, որը կառուցվեց Միսաք եւ Արփի Գույումճյանների բարերարությամբ, եղավ Միության առաջին հայկական դպրոցը Հարավային Ամերիկայում, որում ընդամենը երկու տարի անց կար արդեն 306 երկսեռ աշակերտ: Նման հաջողությունը ոգեւորիչ եղավ Միության համար, եւ 1974թ. նույն Մոնտեվիդեոյում, այս անգամ շնորհիվ Միության նախագահի նվիրատվության, դռները բացեց Ալեք Մանուկեան երկրորդական վարժարանը: Որոշ ժամանակ անց այս երկու դպրոցները միացվեցին, եւ կրթական հաստատությունը սկսեց կոչվել Նուպարեան-Ալեք Մանուկեան երկրորդական վարժարան: Այսօր այդ վարժարանը՝ մանկապարտեզի, նախակրթարանի եւ երկրորդական բաժիններով, Ուրուգվայում գործող երկու հայկական դպրոցներից ամենախոշորն է, ուր սովորում է շուրջ 300 աշակերտ: 1975թ. վարժարանը տեղափոխվեց նորակառույց շենք, որը Միսաք Գույումճեան Մարզարանի եւ Երիտասարդական կենտրոնի հետ ամբողջացնում է Մոնտեվիդեոյի Բարեգործականի Կեդրոնը:

1974 թվականը Հարավային Ամերիկայի Միության մասնաճյուղերի պատմության մեջ, հիրավի, դպրոցաշինության տարի էր: Մոնտեվիդեոյի դպրոցի հետ գրեթե միաժամանակ առաջին աշակերտներին ընդունեց Մարի Մանուկեան երկրորդական վարժարանը Բուենոս Այրեսում: Հետագայում վարժարանը տեղակայվեց ՀԲԸ Միության նորակառույց Ալեք Մանուկեան յոթհարկանի կենտրոն-համալիրի մեջ, որը օժտված է նաեւ մարզասրահով, հանդիսասրահով եւ այլ հարմարություններով: Ալեք Մանուկեան Համալիրի արդյունավետ գործունեությանը մեծապես նպաստում է նաեւ տեղը՝ մայրաքաղաքի Արմենիա փողոցում, ուր նա շրջապատված է համայնքի այլ կազմակերպություններով, եկեղեցիներով ու խմբագրություններով:

Շատ ավելի մեծ ժամանակ եւ ջանք պահանջեց հայկական դպրոցի հիմնումը Սան Պաուլոյում, ուր ազգամշակութային ուծացումը տեղի հայերի մեջ առավել նկատելի է: Այնուամենայնիվ, 1984թ. Միության մասնաճյուղի ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ հիմնել Բրազիլիայում թվով երկրորդ եւ իր առաջին սեփական դպրոցը, որն ի պատիվ բարերարների կոչվեց Փառեն եւ Ռեճինա Պազարեան վարժարան: Ամենօրյա այս վարժարանը կազմված է մանկապարտեզից, նախարթական ու երկրորդական բաժիններից եւ 2002թ. ուներ շուրջ 100 աշակերտ:

Ավստրալիայում

Արդեն նշվել էր, որ Միջին Արեւելքի երկրներում ընթացող քաղաքական դեպքերը հանգեցրին տեղի հայության մի մասի արտագաղթին այլ երկրներ: Վերջինների թվում էր նաեւ Ավստրալիան, որը, չնայած հեռավորությանը, մեծ հեռանկարներ էր խոստանում ներգաղթողներին: 1980-ական թթ. այս երկիր ներգաղթած հայերի թիվը կազմում էր շուրջ 16.000 մարդ, որոնց բացարձակ մեծամասնությունը հաստատվել էր Սիդնեյում: Նույն տարիներին տեղի Միության մասնաճյուղը ուներ 200-ից ավելի անդամ, որոնց ջանքերով սկիզբ առավ Հայ Երիտասարդաց Ընկերակցություն սկաուտական շարժումը: Ալեք Մանուկյան կենտրոնի բացումից հետո այստեղ նույնպես զգալիորեն աշխուժացավ ազգային-մշակութային կյանքը՝ սկսեցին գործել Ցակոբ Պարոնեան թատերախումբը, Անդրանիկ պարախումբը, Երեւան նվագախումբը, Գ.Կիլպէնկեան գրադարանը եւ այլն: Այս ամենի հետ մեկտեղ մասնաճյուղը 1987թ. սկսեց հրատարակել «Միութիւն» անգլերեն-հայերեն ամսաթերթը, ապա նաեւ Էրեբունի ռադիոժամը:

Միությունը հիմնեց նաեւ երկու շաբաթօրյա հայկական վարժարան, սակայն, ակնհայտ էր ամենօրյա դպրոցի անհրաժեշտությունը: 1989թ. նախապատրաստական աշխատանքներից հետո սկսվեց հայկական դպրոցի շենքի կառուցումը, որի հովանավորներն էին նախագահ Ա.Մանուկյանը եւ համայնքի բարերարներից Ալեքսանդր ամուսինները: Սիդնեյի ՀԲԸ Միության Ալեքսանդր ամենօրյա նախակրթարանի բացումը տեղի ունեցավ 1990թ.: Ուշագրավ է, որ վարժարանի աշակերտությունը պաշտոնապես մասնակցեց 2000թ. Սիդնեյի Համաշխարհային Օլիմպիական խաղերի բացման արարողությանը՝ որպես հյուրընկալ Հայաստանի Հանրապետության մարզական թիմին: Ալեքսանդր վարժարանից բացի Սիդնեյում շարունակում է գործել նաեւ Ալեք Մանուկեան շաբաթօրյա դպրոցը:

Ավստրալիայի հայության ազգային կյանքի կարեւոր ավանդույթներից է ՀԲԸ Միության Նավասարդյան Խաղերի մրցաշարքը, որը փոխն ի փոխ կազմակերպում են Սիդնեյի եւ Մելբուրնի Երիտասարդաց եւ Մարզական հանձնախմբերը: Իսկ 1998թ. Սիդնեյում կայացան ՀԲԸ Միության 15-րդ Համաշխարհային Նավասարդյան Խաղերը:

Ուսանողական ծրագրեր

Երկրորդ Աշխարհամարտից հետո ՀԲԸ Միության ամենախոշոր եւ ամենակարեւոր ծրագրերից է կրթաթոշակների հատկացումը սփյուռքահայ ուսանողությանը: Եթե դպրոցական ծրագրի հիմնական նպատակն է հայազգի երեխաներին տալ ազգային դաստիարակություն, հաղորդակից դարձնել նրանց հայերենին, հայ պատմությանն ու մշակութային ավանդույթներին՝ իրենց հասակակիցների հետ մշտական շփման պայմաններում, ապա այլ է ուսանողության պարագան: Այս դեպքում առաջնահերթ նպատակն է՝ օժանդակել սփյուռքի մտավոր, ինտելեկտուալ ներուժի ձեւավորմանն ու զարգացմանը, եւ դրանով իսկ ապահովել սփյուռքահայերի կարեւոր դերն ու նշանակությունը իրենց ապրած երկրներում:

Արդեն ասվեց, որ դեպքերի բերումով ազգային կրթության ծրագրի իրականացումը ընդհատվեց Առաջին Աշխարհամարտի տարիներին, բայց վերսկսվելուց հետո էլ այն ընթացավ մեծ դժվարություններով եւ սահմանափակ չափերով, քանզի ամենակարեւոր հարցը՝ տասնյակ հազարավոր հայ որբ երեխաների ու գաղթականների փրկությունն ու խնամքն էր: Նման պայմաններում անիրատեսական էր խոսել հայ ուսանողության, նրա կարիքների մասին: Եվ այնուամենայնիվ, Միության ղեկավարները եւ անձամբ Պողոս Նուպարը քաջ գիտակցում էին, որ ազգի ապագան՝ Հայաստանում թե սփյուռքում, մեծապես կախում ունի նույն այդ հարցի արագ, թեկուզ եւ ոչ ամբողջական լուծումից: Ինչպես եւ պետք էր սպասել, նա գտավ հարցի այնպիսի մի լուծում, որը, ըստ երեւույթին, միակն էր ստեղծված իրավիճակում:

1924թ. Բելգիայի մայրաքաղաք՝ Բրյուսելի համալսարանական հաստատության մեջ (Foundation Universitaire) Պողոս Նուպարը հիմնեց հատուկ Ուսանողական հիմնադրամ (Oeuvre des Boursiers Armeniens), որը հայերենով հայտնի էր որպես Հիմնարկութիւն Նուպարեան Սաներու: Հիմնարկությունը մաս չէր կազմում ՀԲԸ Միության ծրագրերի եւ չէր ֆինանսավորվում Միության կողմից: Սակայն համաձայն կանոնագրի՝ Հիմնարկության վարչական մարմնի կազմում՝ Բրյուսելի համալսարանի եւ հիմնադրի ընտանիքի ներկայացուցիչների հետ մեկտեղ՝ ընդգրկված էին

նաեւ Միության երկու ներկայացուցիչներ: Ավելին, վարչական մարմինը՝ սաներին ընտրելիս, նկատի էր առնում ՀԲԸ Միության հանձնարարականները: Նուպարեան սաները ուսանեցին Բրյուսելի, Փարիզի, Լուվենի համալսարաններում, Բրյուսելի գեղարվեստի ակադեմիայում, Փարիզի հանրային շինությունների ինստիտուտում, Բեռլինի Տեխնիկական ակադեմիայում եւ կրթական այլ հաստատություններում:

Հարկ է հատուկ նշել, որ ըստ Պողոս Նուպարի պայմանի, նախապատվությունը տրվում էր այն թեկնածուներին, որոնք հանձն էին առնում ուսումը ավարտելուց հետո մեկնել Հայաստան եւ աշխատել այնտեղ իրենց մասնագիտությամբ: Սակայն, շրջանավարտներն, ընդհանրապես, հրաժարվում էին մեկնել Հայաստան, չունենալով հստակ պատկերացում այնտեղ տիրող կացության եւ իրենց ապագա աշխատանքի մասին: Բայց շատ դեպքերում, նույնիսկ մեկնել ցանկացողները, երկար ժամանակ չստանալով Խորհրդային Հայաստան մուտք գործելու թույլտվություն, ցրվում էին տարբեր երկրներ: Այդուհանդերձ, 1927թ. տարեգրքում նշվում էր, որ երեք շրջանավարտներ՝ «...տեարք Ջրբաշեան, հանքաբան, Թէրզեան եւ Մակարեան, ելեքտրագէտ, արդէն մեկնած են Հայաստան եւ կոչուած են իրենց մասնագիտութեան համապատասխան կարեւոր պաշտօններու, առաջինը իբրեւ ուսուցիչ Պետ. Համալսարանի»:[218] Սորբոնի համալսարանի շրջանավարտ Տիգրան Ջրբաշյանը ոչ միայն մեծապես նպաստեց երկրաբանության զարգացմանը Հայաստանում, այլեւ հիմնեց եւ ղեկավարեց աշխարհագրական-երկրաբանական ֆակուլտետը Երեւանի համալսարանում: Բայց 1937թ. պրոֆեսոր Տ.Ջրբաշյանը, չնայած իր բոլոր ծառայություններին նույնպես բռնադատվեց խորհրդային իշխանությունների կողմից՝ «ժողովրդի թշնամի», «ֆրանսիական լրտես» կեղծ մեղադրանքներով եւ մահացավ բանտում նույն 1937թ.:

Նուպարեան Սաների քանակը միշտ էլ պայմանավորված է եղել, մի կողմից, տրամադրելի միջոցների, իսկ մյուս կողմից՝ եվրոպական համալսարաններում ուսման վարձի չափերով: Երկրորդ Աշխարհամարտի տարիներին հիմնարկությունը, ընդհանրապես, ստիպված էր դադարեցնել իր գործունեությունը եւ վերսկսեց այն միայն 1947թ.՝ թոշակներ տրամադրելով 5 ուսանողների, այդ թվում նաեւ Անթիլիասի Դպրեվանքից Շահե վարդապետ Աճեմյանին, որը հետագայում դարձավ Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներից մեկը: Շուրջ կես դար անց նա Երեւանի համալսարանում հիմնադրեց աստվածաբանական ֆակուլտետը՝ դրանով իսկ, կարծես, ամբողջովին կատարելով իր պարտքը Նուպարեան Սաների Հիմնարկության, ինչպես նաեւ Պողոս Նուպարի առջեւ:

Հետպատերազմյան տարիներին փոփոխություն կրեցին նաեւ կրթաթոշակ հատկացնելու պայմանները. թեկնածուները պետք է ունենան մագիստրոսի կոչում եւ պատրաստեն դոկտորական ավարտաճառ Եվրոպայի համալսարաններից մեկում: 1994-1995 տարեշրջանում հիմնարկությունը հատկացրել էր երկու կրթաթոշակ, յուրաքանչյուրը մոտ 2 հազ. դոլար:

Պողոս Նուպարի այս նախաձեռնությունը անարձագանք չմնաց, եւ արդեն 1930թ. Միությանը նվիրաբերած գումարների մի մասը նախատեսված էր որպես կրթաթոշակ հայ ուսանողների համար (Ալլահվերդի, Գազազյան, Մարկոսյան սաներ): Սկսած 1940-ական թթ. վերջից կրթաթոշակների քանակը մշտապես աճում է: Այսպես, Վահրամ Ցուգբաշյանի սահմանած կրթաթոշակների շնորհիվ 1950-ական թթ. համալսարանական ուսում ստացան այնպիսի՝ հետագայում հանրաճանաչ դեմքեր, ինչպես, օրինակ Անդրանիկ Փոլադյանը, Սոսի Պոյաճյանը, Մեսրոպ Գերմանիկյանը, Հարություն Սաղրյանը, Սեպուհ Աբգարյանը եւ այլք:

Հետագա տարիներին եւ հատկապես 1980թ. Միության կողմից կրթաթոշակներին հատկացվող գումարները սկսեցին կտրուկ աճել: Եթե 1956թ. դրանք կազմում էին 43.908 դոլար, ապա 1984-1985 կրթական տարեշրջանում Միությունը հատկացրեց արդեն 405.000 դոլար: 2002-2003թ. 30 երկրներից 1.119 ուսանողներին հատկացված կրթական նպաստը կազմեց մոտ մեկ միլիոն դոլար:

Նուպարեան Սաներու Հիմնարկության հիմնադրումից մի քանի տարի անց Պողոս Նուպարը տրամաբանական ավարտին է հասցնում իր «ուսանողական» ծրագիրը: ՀԲԸ Միության Եվրոպայի Կենտրոնական հանձնաժողովի ատենապետ Սարգիս Սաղրյանի պատմելով՝ «1928թ., երբ օր մը Փաշան կը գտնուէր Սքուար Ալպօնի, ՀԲԸ Միութեան կեդրոնատեղին, ժողովականներէն ... Լեւոն Կերտան, գովասանքով կը խօսի զանազան ազգերու կողմէ հիմնուած ուսանողական տուներու մասին: Փաշան չափազանց խանդավառուած, եւ իրեն յատուկ վճռական շեշտով մը կ'ըսէ.- Բայց մենք, հայերս, մե՛նք ալ կրնանք ունենալ մեր Ուսանողական Տունը: Եվ ահա, խօսքէն գործի անցնելով, եւ այսօրուան (1950թ.- Էդ.Մ.) շանժով մօտաւորապէս 120 միլիոն ֆրանքի պատկառելի գումար մը տրամադրելով, կ'իրականացնէ իր փափագը»:[219] Չորս տարի անց, 1930թ. Փարիզի, այսպես կոչված, Համալսարանական համալիրում (Cite Universitaire) տեղի ունեցավ Մարի Նուպար Ուսանողական Տան հանդիսավոր բացումը՝ երկրի Կրթության նախարարի մասնակցությամբ: Չորսհարկանի գեղեցիկ շենքի (ճարտարապետ Լ.Նաֆիլյան) 70 կահավորված սենյակների մեծ մասը նախատեսված էր Փարիզում ուսանող հայազգի ուսանողների եւ մասնագետների համար: Հետագայում՝ 1980-ական թթ.

Մարի Նուպար Ուսանողական Տունը հանձնվեց Փարիզի քաղաքապետարանի տնօրինությանը, որը ընդունում է տարբեր ազգերի ներկայացուցիչների, անհրաժեշտության դեպքում առաջնությունը տալով հայազգի ուսանողներին: 1988-1989 ուսումնական տարում այստեղ բնակվում էին 70 ուսանող տարբեր երկրներից:

Թե ուսման տարիներին եւ թե հետագայում, ապրելով եւ աշխատելով ընտանիքներից հեռու, տարբեր քաղաքներում, զուտ ամերիկյան, ֆրանսիական եւ այլ միջավայրում, համալսարանական երիտասարդները առավել արագ եւ ուժեղ չափով են օտարվում իրենց ազգային արմատներից: Այս դեպքում ազգային ինքնության պահպանման ավանդական միջոցների կիրառումը, որպես կանոն, անարդյունավետ է, եթե ոչ անհնար: Եվ ահա, սկսած 1980-ական թթ. ՀԲԸ Միությունը ձեռնամուխ եղավ իրենց տեսակի մեջ աննախադեպ ծրագրերի իրականացմանը: Դրանցից առաջինի նախաձեռնողը Նախագահական Ակումբն էր:

ՀԲԸ Միության Նախագահական Ակումբը ստեղծվել է դեռեւս 1977թ.՝ Միության հայտնի գործիչներ Վարդգես եւ Ռիտա Պալյան ամուսինների ջանքերով: Ակումբը միավորում է այն անդամներին, որոնք տարեկան 1.000 կամ ավելի դոլար են նվիրաբերում՝ հայ երիտասարդների ուսումնական, մշակութային եւ մասնագիտական առաջադիմությունը հովանավորելու համար: Սկսած 1987թ. Նյու Յորքում, ապա նաեւ Լոս Անջելեսում եւ Փարիզում, Նախագահական Ակումբը իրականացնում է ամենամյա Ամառնային Փորձառական (Վարժողական) Ծրագիրը, որի ընթացքում ԱՄՆ-ի եւ այլ երկրների տարբեր համալսարանների հայազգի ուսանողներ 6-8 շաբաթների ընթացքում աշխատանքային փորձառություն են ձեռք բերում ամերիկյան հայտնի հաստատություններում՝ ըստ իրենց մասնագիտությունների: Այս ծրագրի առանձնահատկություններից է այն, որ զուտ մասնագիտական պարապմունքներից զատ, երիտասարդների համար կարդացվում են հատուկ դասախոսություններ հայոց պատմության եւ մշակույթի վերաբերյալ, կազմակերպվում են հանդիպումներ տեղի հայ համայնքների հետ, եւ այս ամենը՝ իրենց իսկ մշտական եւ անմիջական շփումների պայմաններում:

Որոշ ժամանակ անց՝ 1990-ական թթ. վերջից, նախ Լոս Անջելեսում, իսկ հետագայում նաեւ Նյու Յորքում, Սան Ֆրանցիսկոյում, Ֆիլադելֆիայում, Մոնրեալում, Բեյրութում եւ Ժնեւում, կազմավորվեցին «Երիտասարդ պրոֆեսիոնալների» (կամ, այսպես կոչված, «արհեստավարժների») կազմակերպությունները, որոնց անդամներն են 25-35 տարեկան համալսարանավարտ մասնագետներ: «Անոնք կազմակերպած են,- նշում էր Լուիզ Մանուկյան Սիմոնը,- բարձր որակով համերգներ, դասախօսու-

թիւններ, հաւաքներ, գիրքի ընթերցումներ, արուեստի ցուցադրութիւններ եւ դրամահաւաքի ձեռնարկներ Հայաստանի մեր ծրագիրներուն համար: ...Անոնք պիտի ըլլան մեր ապագայի գործիչներն ու ղեկավարները»:[220]

Նախագահական Ակումբը իր երկրորդ ծրագիրը նախաձեռնեց՝ Ալեք եւ Մարի Մանուկեան Հիմնարկության հետ: Նախ հարկ է նշել, որ թե հիշյալ հիմնարկությունը եւ թե Ալեք Մանուկեան Մշակութային հիմնադրամը (այս վերջինը լուծարվեց 1990-ականների կեսերին՝ Ա.Մանուկյանի մահից հետո) տարիներ շարունակ դրամական հատկացումներ են արել ԱՄՆ-ի տարբեր համալսարաններում եւ տարբեր տարիներին գործող հայագիտական ամբիոններին: Իսկ արդեն 1980թ., Միության նախագահի մեծագումար նվիրատվության շնորհիվ Միչիգանի համալսարանում (Էնն Արբոր) հիմնադրվեց նոր՝ իր անունը կրող Հայոց Արդի Պատմության ամբիոնը, որի առաջին վարիչը դարձավ պրոֆեսոր Ռոնալդ Սյունին: Յոթը տարի անց, նույն համալսարանում հիմնվեց նաեւ Մարի Մանուկեան Հայոց Լեզվի եւ Գրականության ամբիոն: Այն այսօր էլ գլխավորում է պրոֆեսոր Գեւորգ Պարտագճյանը, որը նաեւ նույն համալսարանի Հայագիտական Ծրագրերի խորհրդի նախագահն է: Այս ամբիոնները՝ Կալիֆորնիայի Լոս Անջելեսի համալսարանի նմանօրինակ ամբիոնների հետ մեկտեղ, այսօր ամենահեղինակավոր եւ ճանաչված հայագիտական կենտրոններն են ԱՄՆ-ում: 1989թ. Նախագահական Ակումբը գործակցաբար Ալեք եւ Մարի Մանուկեան Հիմնարկության հետ հիմնեց Միչիգանի համալսարանի Հայոց լեզվի Ամառնային Ինստիտուտը Երեւանում, որի տնօրենը նույնպես Գ.Պարտագճյանն է: Այս ծրագրի մասնակիցներն են վերոհիշյալ երկու ամբիոնների եւ այլ համալսարանների հայազգի եւ ոչ հայ ուսանողներն ու մասնագետները, որոնք Երեւանում 8 շաբաթվա ընթացքում ուսանում են արեւմտահայերեն եւ արեւելահայերեն, ինչպես նաեւ հանդիպումներ ունենում իրենց գործընկերների հետ, անմիջականորեն ծանոթանում հայ իրականությանը:

Միության վերջին նախաձեռնություններից է ՀԲԸՄ FOCUS-ը, որը համախմբում է երիտասարդական տարբեր ծրագրերի մասնակիցներին: «Վերջին հաւաքը 2003 թուականին հիւրընկալեց Մոնթրէալ, ուր հայկական կամաւոր աշխատանքներու մասին քննարկում տեղի ունեցաւ...»:[221]

Լուիզ Մանուկյան Սիմոնի՝ որպես ՀԲԸ Միության նախագահի, առաջին ձեռնարկումներից էր «AGBU News Magazine» պարբերականի ստեղծումը, որի առաջին համարը լույս տեսավ 1991-ի հունիսին: Մինչ այդ Միությունը, «Յուշարար - Միութիւն» ամսագրից զատ, հրատարակում էր նաեւ անգլիալեզու «Hoosharar» ամսագիրը, որը մանրամասն լուսաբանում էր ամերիկյան մասնաճյուղերի գործունեությունը: Անդրադառնալով նոր ամսագրի հրատարակման պատճառներին՝ Լուիզ Մանուկյան Սիմոնը գրում էր. «Հայաստանի երկրաշարժից մեկ տարի անց ուզեցինք հրապարակավ շնորհակալություն հայտնել մեզ միացած բոլոր 35.000 անհատ նվիրատուներին, ...որոնք արձագանքեցին այդ աղետին, ինչպես նաեւ ցանկացանք տեղեկացնել նվիրատուներին մեր մարդասիրական ծրագրերի մասին: Այդ տխուր եւ հեքոտ շրջանում մշտապես լուրեր կստանայինք աշխարհատարած մեր անդամներից, որոնք տեղեկացնում էին իրենց բնակավայրի ժողովրդի կամ կառավարության կատարած նվերահավաքի կամ մարդասիրական օժանդակության մասին... Հանկարծ անդրադարձանք,- շարունակում էր Միության նախագահը,- որ որպես աշխարհատարած կազմակերպություն եզակի հնարավորություն ունենք առօրյա կապի մեջ մտնել աշխարհատարած հայության հետ: Թերեւս պատմություն ունեինք պատմելու, ու թերեւս իրենք, որ (ազգային) պատկանելության կապը կորցնելու վրա էին, պետք է ուրախ լինեին իրենց տանը, հարմարավետ պայմաններում կարդալ մի հրատարակություն հայերի մասին...»:[222] «AGBU News Magazine»-ը այսօր առաքվում է շուրջ 80 հազար հասցեներով, ինչը աննախադեպ է սփյուռքահայ իրականության մեջ:

Նշված ծրագրերի՝ անկախ նրանց առանձնահատկությունների, հասցեատերը սփյուռքահայ երիտասարդության առավել ուսյալ հատվածն է, որը, որպես կանոն, անմասն է հայ ազգային-համայնքային կյանքին: Նրանց պարբերական հանդիպումները, մասնագիտական եւ այլ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումը, շփումները ամերիկահայության՝ հիմնարկությունների եւ անհատ մարդկանց հետ, ուղեւորությունները Հայաստան որոշակիորեն նպաստում են նրանց մեջ ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը:

ՎԵՐՋԱԲԱՆ

ՀԲԸ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գրքի շարադրման տրամաբանությունը, կարծես, ենթադրում էր, որ հերթական գլուխը պետք է նվիրված լինի Միության գործունեությանը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում վերջին տասնհինգ տարիներին: Այդ տրամաբանությունը, սակայն, հակասում է պատմության՝ որպես գիտության, ճանաչողության ժամանակագրական սահմանափակումներին:

«Պատմություն է այն ամենը, ինչը կատարվել է նույնիսկ մեկ րոպե առաջ»: Այս ճշմարիտ մտքի հետ պատմաբանին, այնուամենայնիվ, դժվար է համաձայնվել:

Անշուշտ, պատմաբանի նպատակն է վերականգնել անցյալը, սակայն, նույն այդ անցյալը՝ երեւույթներն ու իրադարձությունները նախ պետք ներկայանան իրենց ավարտուն տեսքով, պետք է, պատկերավոր ասած, «նստվածք» տան: Միայն դրանից հետո է, որ պատմաբանը կարող է սկսել նույն այդ երեւույթներն ու իրադարձությունները վերականգնելու եւ արժեւորելու իր անվերջանալի փորձերը:

Պատմաբանը, անշուշտ, կարող է, իսկ երբեմն նույնիսկ պարտավոր է անդրադառնալ ընթացիկ երեւույթներին ու դեպքերին: Բայց այդ պարագայում նա կամ մեկնաբանում է դրանք եւ կամ ճգնում կանխատեսել դեպքերի հետագա ընթացքն ու հետեւանքները՝ հենվելով պատմությունից իրեն ծանոթ նախադեպերի վրա: Սակայն, թե ընթացող իրադարձությունների անկանխատեսելիությունը, թե նրա, որպես ժամանակակցի, հնարավոր է՝ նաեւ մասնակցի կարգավիճակը, ուստի եւ՝ անձնավորված ընկա-

լումներն ու գնահատականները, ըստ էության, անհնարին են դարձնում երեւույթների ամբողջական պատմագիտական ուսումնասիրությունը:

Տեսական բնույթի այս դրույթների հիմնավորվածության մեջ կարելի է համոզվել նաեւ ՀԲԸ Միության ժամանակակից գործունեությունը ներկայացնելու դեպքում: Այսպես, 2004 թ. գարնանը Միության Կենտրոնական Վարչությունը հայտարարեց, որ մտադիր է փակել Մելգոնեան Կրթական Հաստատությունը եւ փոխարենը՝ որոշ այլ երկրներում իրականացնել որակապես նոր կրթական ծրագրեր:[1] Անշուշտ, գայթակղիչ է միանալ այդ որոշման կողմնակիցներին կամ հակառակորդներին, առավել եւս, որ երկու կողմերն էլ բերում են համոզիչ փաստարկներ: Ակնհայտ է, սակայն, որ պատմաբանի տեսակետից, նշված որոշման, նրա իրականացման ձեւերի ու հետեւանքների իրապես հիմնավորված վերլուծությունը ապագայի հարց է:

Նույնն է Հայաստանի Հանրապետությունում Միության գործունեության պարագան, առավել եւս նկատի առնելով երկրում մինչ այժմ տիրող հակասական իրավիճակը գրեթե բոլոր ոլորտներում: Վերոբերյալ պատճառներով այդ գործունեության ուսումնասիրումը նույնպես պատմաբանների ապագայի գործն է, իսկ այստեղ հարկ է սահմանափակվել դրա առավել կարեւոր արդյունքների արձանագրումով:

1989 թ. օգոստոսի նամակով ՀԲԸ Միության 5-րդ նախագահ Ալեք Մանուկյանը Կենտրոնական Վարչությանը հայտնեց, որ տարիքի բերումով «...իր ուժերը չէին թոյլատրեր 21-րդ դարու պարտաւորութիւնները դիմագրաւելու ոստումը կատարելու»:[2] Արդեն նշվեց Ալ. Մանուկյանի բացառիկ դերը Միության պատմության մեջ: Նրա գլխավորությամբ Միությունը դարձավ սփյուռքի ամենահեղինակավոր կազմակերպությունը, դասվեց աշխարհի խոշոր բարեսիրական հաստատությունների շարքը, ձեռք բերեց տարբեր երկրների իշխանությունների հարգանքը եւ աջակցությունը: Գիտակցելով ՀԲԸ Միության ֆինանսական հզորության առաջին անհրաժեշտությունը, Ալ. Մանուկյանը այդ նպատակին տրամադրեց իր անձնական միջոցները եւ, դրանով իսկ, օրինակ ծառայեց բազմաթիվ սփյուռքահայերի: Իր նախագահության 36 տարիների ընթացքում Միության դրամագլուխը ունեցավ աննախադեպ աճ՝ 8 միլիոնից հասնելով 112 միլիոնի, ինչի շնորհիվ էլ հնարավոր դարձավ բազմաթիվ հայանպաստ ծրագրերի իրագործումը աշխարհի տարբեր երկրներում: Կենտրոնական Վարչությունը, ընդունելով Ալ.Մանուկյանի հրաժարականը, նույն նիստում ՀԲԸ Միության 6-րդ նախագահ ընտրեց նրա դուստր Լուիզ Մանուկյան - Սիմոնին: Նա նոր մարդ չէր Միության ղեկավարության մեջ՝ 1981 թ. ընտրվել էր Կենտրոնական Վարչության անդամ, իսկ 1987-ին՝ փոխնախագահ: Շուրջ 13 տարի անց՝ 2002 թ. փետրվար ամսին, հրաժարական ներկայացրած Լ.Մանուկյան - Սիմոնին հաջորդեց նախկին փոխնախագահ Պերճ Սեդրակյանը: Լ.Մանուկյան - Սիմոնը պահպանեց, սակայն, իր ղեկավար դիրքը, ընտրվելով Միության գործադիր վերին մարմնի՝ Կենտրոնական Վարչության ատենապետ:

1989 թ. ընտրությունները խորհրդանշական իմաստ ունեին. առաջին անգամ Միության ղեկավար էր ընտրվում հետեղեռնյան, արդեն սփյուռքում ծնված եւ մեծացած սերնդի ներկայացուցիչը: Եւ որպես այդպիսիք, թե Լ.Մանուկյան - Սիմոնը եւ թե Պ.Սեդրակյանը, բնականաբար, բնութագրվում են ոչ միայն այլ կենսափորձով, այլ կենսափիլիսոփայությամբ, այլեւ ազգային ինքնագիտակցության ու դրանից բխող գործելակերպի որոշակի առանձնահատկություններով:

Ինչպես եւ մի շարք այլ արտասահմանյան կազմակերպություններ, ՀԲԸ Միությունը մուտք գործեց Հայաստան դեռ խորհրդային կարգերի օրոք՝ 1988 թ. դեկտեմբերի երկրաշարժից տուժած տասնյակ հազարավոր մարդկանց օժանդակելու նպատակով: Երկրաշարժից անմիջապես հետո Միությունը կազմակերպեց պարենի, հագուստեղենի, դեղորայքի եւ կենսական այլ անհրաժեշտ ապրանքների տեղափոխումը աղետյալ շրջաններ: Արդեն 1989 թ. մայիսին տուժածներից 49 հոգի տեղափոխվեցին ԱՄՆ՝ անհրաժեշտ բուժում ստանալու համար:

1937 թ. հետո ավելի քան 50 տարի անց՝ 1990-ին, Միությունը վերաբացեց իր գրասենյակը Երեւանում, որը վերջին ավելի քան 10 տարիներին գլխավորում է Աշոտ Ղազարյանը: Հատուկ կարեւորություն տալով իր գործունեությանը Հայաստանում, ՀԲԸ Միությունը հերթական՝ 79- եւ 83-րդ Ընդհանուր ժողովները հրավիրեց Երեւանում՝ 1994 եւ 2004 թվականներին:

Վերսկսելով իր գործունեությունը Հայաստանում, ՀԲԸ Միությունը նախապատվությունը տալիս է ոչ թե զուտ մարդասիրական օգնությանը, այլ երկրի զարգացմանը նպաստող ծրագրերին, նախ եւ առաջ, մշակույթի, առողջապահության, կրթության ոլորտներում: Նրա առաջին խոշոր իրագործումներից էր 10 հզ. տոննանոց սառցամթերանոցի կառուցումը Գյումրիում:

Նույն՝ 1992 թ. Երեւանում Միությունը հիմնեց /ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության եւ Հ. Գարակէօզեան Հաստատության սկզբնական օժանդակությամբ/ Պլաստիկ Վերականգնողական Վիրաբուժության Կենտրոնը, ուր բուժում է ստացել մոտ 6000 մարդ: Շարունակելով այս ծրագիրը, Միությունը 2001 թ. գնեց 120 մահճակալանոց նախկին Պրոկտոլոգիայի ինստիտուտի շենքը, որը վերանորոգումից հետո

վերանվանվեց Ս. Ներսես հիվանդանոց եւ փոխանցվեց Ս.Էջմիածնին: Պենսիլվանիայի Թոմաս Ջեֆերսընի բժշկական համալսարանի օժանդակությամբ իրագործվեց Միության եւս մեկ առողջապահական ծրագիր՝ Գերձայնային Ախտորոշման բաժնի հիմնումը Էրեբունի հիվանդանոցում, ապա՝ Գերձայնային Ուսուցողական կենտրոնի ստեղծումը Երեւանի Բժշկական համալսարանում:

Կրթության բնագավառում Միության ամենախոշոր ծրագիրը՝ 1991-ին Հայաստանի Ամերիկյան Համալսարանի հիմնումն էր: Համալսարանի ութ բաժիններում տարեկան ուսանում է շուրջ 350 ուսանող, իսկ շրջանավարտների թիվը 1000-ից ավելի է: 1999 թ.՝ ԱՄՆ-ի կառավարության օժանդակությամբ Երեւանի Ալեք Մանուկյան փողոցում կառուցվեց նույն համալսարանի բիզնես-կենտրոնի շենքը: Գյումրիում ՀԲԸ Միությունը ֆինանսավորել է Արվեստի Ակադեմիայի շենքի նորոգումը, ուր գործում են Երեւանի Կոնսերվատորիայի, Գեղարվեստի ակադեմիայի եւ Թատերական ինստիտուտի մասնաճյուղերը: Բացի այդ, Միությունը

ֆինանսապես օժանդակում է Մատենադարանին, ԳԱԱ-ին, ԵՊՀ-ին, Բժշկական եւ Ճարտարագիտական համալսարաններին եւ որոշ այլ կրթական հաստատությունների: Երեւանի Մալաթիա, Արաբկիր եւ Նորք շրջաններում Միությունը հիմնել է Հայորդաց Տներ, որոնց շուրջ 3,5 հզ. սաների համար կազմակերպվել են արվեստի, երաժշտության, մարզական եւ այլ խմբակներ:

Մշակույթի ասպարեզում Միության առաջին եւ ամենակարեւոր իրագործումը եղավ Հայաստանի Ֆիլհարմոնիկ Նվագախմբի ֆինանսավորումը՝ սկսած 1992 թ.: Դրա շնորհիվ նվագախումբը, որի առաջին ղեկավարն էր Լորիս Ճկնավորյանը, հնարավորություն ստացավ թե հանդես գալ շաբաթական համերգներով Երեւանում եւ թե հյուրախաղերի մեկնել Եվրոպայի, Ամերիկայի եւ Միջին Արեւելքի երկրներ:

Դեռեւս խորհրդային տարիներին Ալ. Մանուկյանը մեծապես օժանդակում էր Ս.Էջմիածնին. դրա վառ ապացույցներից էր 1982 թ. կառուցված Ալեք եւ Մարի Մանուկեան Գանձատունը: Տարիներ անց՝ ընդառաջելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի առաջարկին, նա հանձն առավ նվիրաբերել ավելի քան 5 միլիոն դոլար՝ Երեւանում Մայր եկեղեցու կառուցման համար: Ալ.Մանուկյանի մահից հետո այդ գաղափարի իրականացնողները եղան Ռիչարդ եւ Լուիզ Մանուկյանները. Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին իր դռները բացեց արդեն 2001 թ.՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակի օրերին:

Բացի այդ, Միության օժանդակության շնորհիվ կառուցվել են այլ եկեղեցիներ՝ Ս.Երրորդության՝ Երեւանում, Ս.Հակոբ՝ Գյումրիում, Ս.Գրիգոր Նարեկացի՝ Վանաձորում, Բացօթյա Խորանը Ս.Էջմիածնում, ինչպես նաեւ Սեւանի Վազգենյան Հոգեւոր Դպրանոցը՝ իր 100-տեղանոց հանրակացարանով, գրադարանով ու մատուռով: Մայր Աթոռ Ս.Էջմիածնի հետ համագործակցաբար, Միությունը Երեւանում, Սեւանում, Հրազդանում եւ Էջմիածնում ծերերի եւ ծնողազուրկ երեխաների համար բացել է նաեւ բարեգործական վեց ճաշարաններ:

ՀԲԸ Միությունը մի շարք ծրագրեր է իրականացնում նաեւ Ղարաբաղում՝ վերակառուցում է 29 տուն Նորաշեն գյուղում եւ մեկ դպրոցի շենք՝ Ստեփանակերտում, կառուցում է բնակելի շենք պատերազմի վետերանների ու այրիների համար, հովանավորում է Ղարաբաղի նորաստեղծ կամերային նվագախումբը եւ այլն:

Անցած տարիների ընթացքում ՀԲԸ Միությունը Հայաստանում եւ Ղարաբաղում իրականացված ծրագրերին տրամադրել է շուրջ 60 միլիոն դոլար, ավելին, քան որեւէ այլ սփյուռքահայ կազմակերպություն: Նույն այդ տարիներին՝ 1991-2003 թթ., ՀԲԸ Միության դրամագլուխը հասավ 246 միլիոն դոլարի:

* * *

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմությունը, ըստ էության, հայ ժողովրդի XX դարի պատմությունն է. մինչեւ Առաջին Աշխարհամարտը նա գործեց Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում, 1915 թվականից մինչեւ 1930-ական թթ. կեսերը տարբեր երկրներում պահեց որբանոցներ եւ գաղթատներ, նույն այդ տարիներին՝ 1923-1937 թթ, գործեց Խորհրդային Հայաստանում, եւ սփյուռքի գոյատման պահից եւեթ միշտ ձգտեց «պահպանել եւ տարածել հայ լեզուն, ինքնութիւնը եւ ժառանգութիւնը՝ կրթական, մշակութային եւ բարեսիրական ծրագրերով»: Եթե մի պահ փորձենք պատկերացնել հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմությունը առանց ՀԲԸ Միության, ապա կհամոզվենք, թե որքան ավելի զրկանքներ ու կորուստներ կունենար սփյուռքի հայությունը, որքան ավելի մեծ չափեր կընդուներ ուծացումը նրա մեջ, որքան ավելի ծանր կլիներ Հայաստանի ժողովրդի վիճակը ինչպես խորհրդային կարգերի օրոք, այնպես էլ այսօր: Հիրավի, ՀԲԸ Միության դերն ու նշանակությունը այնչափ մեծ էր եւ է, որ առանց նրա անկարելի է պատկերացնել հայ ժողովրդի XX դարի պատմությունը:

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հապավումներ

ՆՊ ԿՊԱ	ՀՀ Նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվ:
ՀՔԿՓ ԿՊԱ	ՀՀ Հասարակական եւ քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվ:
ԱԱՆԱ ԿԳՖ	ՀՀ Ազգային անվտանգության նախարարության արխիվ, կարճված գործերի ֆոնդ:
ՀԲԸՄ ԿՎԱ	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական Վարչության արխիվ (Նյու Յորք, ԱՄՆ):
ՀԲԸՄ- (տարեթիվ)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն: Տեղեկագիր եւ հաշվեկշիռ (համապատասխան տարեշրջանի):
Ոսկեմատեան. 1906-1913	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ոսկեմատեանը, 1906-1913: Գահիրե, 1913:
Ոսկեմատեան. 1906-1931	Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Արծաթեայ Յոբելեան, 1906-1931: Բարիզ, 1935:

1. Հիմնադիրները եւ նպատակները

[1] Дэвид Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2. М., 1957, с. 205-206.

[2] Ա.Հ. Գարտաշեան. Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Գ. հատոր: Վենետիկ - Ս.Ղազար, 1987, էջ 176-187: Երուանդ Օտեան. Պօղոս փաշա Նուպար: Կ.Պոլիս, 1913: Զերտուշտ. Նուպար փաշա: 1920: Ա. Թերզիպաշեան. Նուպար: Բարիզ, 1939:

[3] Վ.Մալէզեան. Բարեգործականի նախագահները (անձնական տպավորութիւններ եւ պատմական դրուագներ), (ձեռագիր, ՀԲԸՄ ԿՎԱ):

[4] Վ. Մալէզեան. Խորհրդապահական յուշագրութիւն նախագահ Գալուստ Կիւլպէնկեանի մասին (ձեռագիր, ՀԲԸՄ ԿՎԱ):

[5] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 27:

[6] Վահան Զարդարեան. Յիշատակարան (1812-1933), Գ. հատոր: Գահիրէ, 1934, էջ 26-64:

[7] Թեոդիկ. Ամէնուն տարեցոյցը, 1929: Բարիզ, 1929, էջ 308:

[8] Տիգրան Գէորգեան. Նուպար փաշա. Պետական մարդը եւ արդարութեան ռահվիրան: - «Արեւ», Գահիրէ, 1976, 5 ապրիլ:

[9] Վահան Զարդարեան. Յիշատակարան, էջ 21-61:

[10] Ոսկեմատեան. 1906 - 1931, էջ 14:

[11] ՀԲԸՄ- 1907, էջ 11:

[12] Նոյն տեղում, էջ 15:

[13] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 10:

[14] Վ.Մալէզեան. Ճամբուս ծայրը, Ա. հատոր: Բարիզ, 1954, էջ 304:

[15] Ա.Հ. Գարտաշեան. Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Բ. հատոր: Վենետիկ - Ս.Ղազար, 1986, էջ 244:

[16] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 41:

[17] Նոյն տեղում:

[18] Վ.Մալէզեան. Ճամբուս ծայրը, էջ 307:

[19] Ե.Գ. Աղաթօն. Գաղափարի նշխարներ: Մարսէյլ, 1934, էջ 297-298:

[20] 75-րդ տարեդարձ Երուանդ պէյ Աղաթօնի (1860-1934): Բարիզ,1934, էջ 3:

[21] Վ.Մալէզեան, Ճամբուս ծայրը, էջ 308:

[22] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 72

[23] Վահան Զարդարեան. Յիշատակարան, էջ 16-36,17-37:

[24] Վահան Քիւրքճեան. Գրիգոր Եղիայեան, Եգիպտահայ կտակարարը: - «Կոչնակ», Նյու Յորք, 1911, օգոստոս 12, էջ 770:

[25] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 65:

[26] Նոյն տեղում, էջ 55:

[27] Նոյն տեղում:

[28] Նոյն տեղում, էջ 92:

[29] Ա.Հ. Գարտաշեան. Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Բ. հատոր, էջ 253:

[30] Երուանդ Օտեան. Տասներկու տարի Պոլսէն դուրս, 1896-1908 (Անձնական յիշատակներ): Կ.Պոլիս, 1914, էջ 245-247:

[31] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 451:

[32] «Զարթօնք» բացառիկ, նուիրուած ՌԱԿ 40-ամեակին եւ «Զարթօնք» օրաթերթի 25-ամեակին: Պէյրութ,1962, էջ 237:

[33] «Ապագայ», Բարիզ, 12 նոյեմբեր, 1927:

[34] Ե.Գ. Աղաթօն. Գաղափարի նշխարներ, էջ 166-167:

[35] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 10:

[36] Краткая Еврейская Энциклопедия. Иерусалим, т.1, с. 103; А.И. Солженицын. Двести лет вместе (1795 - 1995). Москва, Русский путь, 2004, с. 178 - 180.

[37] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 45:

[38] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 25:

[39] Նոյն տեղում, էջ 18:

[40] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 45:

[41] Լեւոն Մկրտիչեան. Պատրաստ դրամ: - «Միութիւն», 1915, № 45, էջ 170:

2. Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում

[1] Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն. 75-ամեակ՝ 1906-1981: Բարիզ, 1981, էջ 22:

[2] «Յուշարար», 1941, № 220, էջ 161:

[3] «Միութիւն», 1914, № 35, էջ 165:

[4] Ոսկեմատեան. 1906-1913, էջ 69:

[5] Նոյն տեղում, էջ 64:

[6] Նոյն տեղում, էջ 65:

[7] Մինաս Խապրիկ. Եթէ Չորք - Մարզպանը ինծի հետ խօսէր: Պէյրութ, 1983, էջ 36:

[8] ՀԲԸՄ - 1911, էջ 25-26:

[9] ՀԲԸՄ - 1912-1913, էջ 43:

[10] Ե. Գ. Աղաթօն. Գաղափարի նշխարներ: Մարսէյլ, 1934, էջ 59

[11] Նոյն տեղում, էջ 60:

[12] Նոյն տեղում, էջ 66:

[13] Նոյն տեղում, էջ 68:

[14] «Միութիւն», 1914, № 35, էջ 167:

[15] «Միութիւն», 1912, № 1, էջ 5:

[16] ՀԲԸՄ - 1906-1909, էջ 8:

[17] ՀԲԸՄ - 1910, էջ 173:

[18] «Միութիւն», 1913, № 16, էջ 60:

[19] ՀԲԸՄ - 1912-1913, էջ 26:

[20] Միք.Նաթանեան. Գաւառի ցաւերէն. Միւս աղէտը: - «Միութիւն», 1913, № 17, էջ 108:

[21] Նույն տեղում:

[22] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 91:

[23] «Միութիւն», 1914, № 32, էջ 114:

[24] ՀԲԸՄ - 1914-1915, էջ 20:

[25] Լեւոն Չորմիսեան. Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Գ. հատոր: Պէյրութ, 1975, էջ 12:

[26] Մաղ. արք. Օրմանեան. Ազգապատում, 3118 (Դարձեալ Ատանա):

[27] Վահան Մալէզեան. Ճամբուս ծայրը, Բ. հատոր: Բարիզ, 1955, էջ 22:

[28] ՀԲԸՄ - 1906-1909, էջ 89:

[29] ՀԲԸՄ Կեդր. Վարչ. Ժողով. ԺԱ շրջաբերական (Միութիւնը կուսակցութիւն մը չէ): - «Միութիւն», 1913, № 20, էջ 117:

[30] «Միութիւն», 1928, № 122, էջ 21:

[31] ՀԲԸՄ - 1920-1921, էջ 34:

[32] «Միութիւն», 1928, № 122, էջ 22-23:

[33] Վահան Մալէզեան. Ճամբուս ծայրը. Բ. հատոր: էջ 55:

[34] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 441:

[35] Յովհաննէս Յակոբեան. Միութիւնն եւ Միացեալը: - «Միութիւն», 1926, № 109-111, էջ 51:

[36] Նույն տեղում:

[37] Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն. Տեղեկագիր 5-րդ շրջանի: Կ.Պոլիս (առանց տարեթվի), էջ 34:

[38] Նույն տեղում, էջ 36-37:

[39] Միք. Նաթանեան. Գաւառի ցաւերէն: - «Միութիւն», 1912, № 10, էջ 157:

[40] Միք.Նաթանեան. Գաւառի ցաւերէն: - «Միութիւն», 1912, № 11, էջ 172:

[41] Միք.Կիւրճեան. Բարոյական դաստիարակութիւն: - «Միութիւն», 1913, № 21, էջ 131:

[42] Նույն տեղում, էջ 132:

[43] Լեւոն Մկրտիչեան. Հայկական վերածնունդը եւ ՀԲԸ Միութեան վերապահուած դերը: - «Միութիւն», 1914, № 25, էջ 3-4:

[44] Նույն տեղում, էջ 3:

[45] ՀԲԸՄ - 1911, էջ 29-30:

[46] «Միութիւն», 1912, № 11, էջ 178:

[47] Միք. Կիւրճեան. Ինչ որ ունինք եւ ինչ որ կը պակսի մեզի: - «Միութիւն», 1912, № 7, էջ 102:

[48] ՀԲԸՄ Կեդր. Վարչ. Ժողով. ԺԱ շրջաբերական:- «Միութիւն», 1913, 20, էջ 117:

[49] Մաղաքիա արք. Օրմանեան. Հայոց Եկեղեցին: Պէյրութ, 1960, էջ 194:

[50] Նույն տեղում, էջ 82, 83:

[51] Ե. Աղաթօն. Երկու խօսք մեր այլադաւան եղբայրներուն: - «Միութիւն», 1912, № 5, էջ 66:

[52] ՀԲԸՄ - 1912-1913, էջ 28, 32:

[53] Ե.Աղաթօն. Երկու խոսք մեր այլադաւան եղբայրներուն, էջ 66-67:

[54] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 66:

[55] Պօղոս Նուպար. «Միութիւնը»: - «Միութիւն», 1912, № 1, էջ 2:

[56] Միութիւնը հայ մտաւորականութեան հետ եւ ժողովուրդին համար: - «Միութիւն», 1912, № 1, էջ 3:

[57] Պօղոս Նուպար. Նշվ. աշխ.:

[58] ՀԲԸՄ - 1914-1915, էջ 27:

[59] Լեւոն Չորմիսեան. Նշված աշխ., էջ 161-162:

[60] Երուանդ Օտեան. Պօղոս փաշա Նուպար: Կ.Պոլիս, 1913, էջ 53:

[61] Լեւոն Չորմիսեան, Նշվ. աշխ., էջ 171:

[62] Զոն Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը: Երեւան, 1965, էջ 123:

[63] «Միութիւն», 1914, № 28, էջ 50:

[64] «Միութիւն», 1914, № 29, էջ 69:

[65] «Միութիւն», 1914, № 28, էջ 50-51:

3. Որբախնամ եւ գաղթախնամ գործունեությունը

[1] Իս.Տէրտէրեան. Հայկական գոյամարտը, հ.VI: Թեհրան,1957, էջ 223, 225:

[2] «Միութիւն», 1915, № 37, էջ 4:

[3] «Միութիւն», 1914, № 36, էջ 179:

[4] Նույն տեղում:

[5] ՀԲԸՄ -1914-1915, էջ 23:

[6] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 450:

[7] Նույն տեղում, էջ 67:

[8] Միութիւն, 1915, № 39, էջ 35:

[9] Միութիւն, 1915, № 38, էջ, 23:

[10] Նույն տեղում:

[11] Ջոն Կիրակոսյան. Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը: Երեւան, 1967, էջ 122:

[12] Սանուկ Գ.Ճիզմէճեան. Պատմութիւն ամերիկահայ քաղաքական կուսակցութեանց (1890-1925): Ֆրէզնօ, 1930, էջ 198-202:

[13] Ջոն Կիրակոսյան. Նշվ. աշխ., էջ 183:

[14] «Միութիւն», 1920, № 75, էջ 44:

[15] «Միութիւն», 1913, № 15, էջ 45:

[16] «Միութիւն», 1915, № 39, էջ 35, 36:

[17] ՊԿՊԱ, ֆ. 446, g. 2, գ. 53, թ. 2:

[18] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 88:

[19] Ն.Թոգաթլեան. Սուէտացիներու Բօր-Սայիտ ժամանումը: - Տօքթ. Ա.Սալբի. Ալեակներ եւ խլեակներ. Հայ վրանաքաղաքին տարեգիրքը: Աղեքսանդրիա, 1919, էջ 22:

[20] Նույն տեղում, էջ 23:

[21] Լեւոն Արիզեան. Սիսուան վարժարանը: -Տօքթ.Ա.Սալբի. Ալեակներ եւ խլեակներ, էջ 182:

[22] «Միութիւն», 1920, № 73, էջ 13:

[23] Լեւոն Արիզեան.Նշվ. աշխ., էջ 189:

[24] «Միութիւն», 1918, № 65, էջ 73:

[25] Տիգրան Յ.Պօյաճեան. Հայկական Լեգէոնը. Պատմական յուշագրութիւն: Ուօքըրթաուն, Մես., 1965, էջ 23:

[26] Նույն տեղում, էջ 20:

[27] Տօքթ. Ա.Սալբի. Ալեակներ եւ խլեակներ, էջ 280-281:

[28] Նույն տեղում, էջ 212:

[29] «Միութիւն», 1918, № 66, էջ 90:

[30] Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան գործապատումը. Գահիրէ, 1919, էջ 31:

[31] «Միութիւն», 1918, № 65, էջ 74:

[32] 900 տարագրեալներ եւս ազատուած Թաֆիլէի մէջ: - «Միութիւն», 1918, № 61, էջ 5:

[33] ՊԿՊԱ, ֆ. 446, g.2, գ. 53, թ. 4:

[34] ՀԲԸՄ - 1916-1919, էջ 52:

[35] Լեւոն Չորմիսեան. Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան. Գ. հատոր, էջ 527:

[36] Հ.Թոփուզյան. Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946): Երեւան, 1986, էջ 115:

[37] Լիպարիտ Ազատեան. Հայ որբերը մեծ եղեռնի. Ա հատոր: Լոս Անճելըս, 1995, էջ 140-146: Տես նաեւ Բ (1999թ.) եւ Գ (2002թ.) հատորները:

[38] Յ.Պօղոսեան. Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ: Պոստոն, 1919, էջ 135:

[39] Լեւոն Չորմիսեան. Նշվ. աշխ., էջ 527:

[40] ՀԲԸՄ - 1916-1919, էջ 119:

[41] Հ.Թոփուզյան. Նշվ. աշխ., էջ 159:

[42] ՀԲԸՄ - 1920-1921, էջ 119:

[43] Նույն տեղում, էջ 120:

[44] «Միութիւն», 1919, № 70, էջ 59:

[45] Հ.Թոփուզյան.Նշվ. աշխ., էջ 162:

[46] Ոսկեմատեան.1906-1931, էջ 127:

[47] «Միութիւն», 1921, № 83, էջ 74:

[48] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 161:

[49] Մինաս Խապրիկ. Եթէ Չորք-Մարզպանը ինձի հետ խօսէր: Պէյրութ, 1983, էջ 117:

[50] «Միութիւն», 1920, № 76, էջ 57:

[51] Մինաս Խապրիկ. Նշվ. աշխ., էջ 130:

[52] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 141:

[53] Дэвид Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. 2. Москва, 1957, с. 416.

[54] Հմայեակ Գրանեան. Սիսուան որբանոցը: - «Յուշարար-Միութիւն», 1976, № 8, էջ 12:

[55] ՊԿՊԱ, ֆ. 430, g.1, գ. 332, թ. 6:

[56] Կիլիկիոյ պարպումը եւ Հայկ. Բարեգ. Ընդ. Միութեան որբանոցները: - «Միութիւն», № 84, էջ 93:

[57] Հմայեակ Գրանեան. Սիսուան որբանոցը, էջ 13:

[58] «Միութիւն», 1921, № 83, էջ 76:

[59] ՀԲԸՄ - 1924, էջ 43:

[60] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 167:

[61] Նույն տեղում, էջ 49:

[62] «Միութիւն», 1928, № 123, էջ 33:

[63] «Միութիւն», 1929, № 135, էջ 238:

[64] Զեկոյց Ընդհ. տնօրէնութեան Կեսարիոյ որբերուն մասին: - «Միութիւն», 1929, № 131, էջ 168:

[65] Նույն տեղում:

[66] «Միութիւն», 1930, № 145, էջ 402; 1931, № 150, էջ 116:

[67] Յ.Պօղոսեան. Հայ ցեղը եւ հալածանքները հոգեբանութեան լոյսին տակ, էջ 87:

[68] «Յուշարար», 1923, № 79/84, էջ 793:

[69] «Միութիւն», 1930, № 137, էջ 265:

[70] ՀԲԸՄ -1932, էջ 71:

[71] Հ.Թոփուզյան. նշվ. աշխ., էջ 111:

[72] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 154-155:

[73] Նույն տեղում, էջ 155:

[74] Նույն տեղում, էջ 154:

[75] «Միութիւն», 1918, Nº 66, էջ 88:

[76] ՀԲԸՄ - 1931, էջ 90:

[77] James L. Barton. Story of Near East Relief. New York, The Macmillan Co. 1930, p. 263.

[78] Նահր էլ Օմարի գաղթականի մասին տես՝ Եղիշէ Վարդանեան. Անապատէ անապատ: Ս.Ղազար - Վենետիկ, 1923: Հ.Մելիքսեթյան. Հայրենիք-Սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը (1920-1980): Երեւան, 1985, էջ 74-86:

[79] «Խորհրդային Հայաստան», 1921, 16 հոկտեմբեր:

[80] Եղիշէ Վարդանեան. նշվ. աշխ., էջ 477:

[81] ՀԲԸ Միութիւն, Կեդր. Վարչ. Ժողով, շրջաբերական թիւ 146, Փարիզ, 8 նոյեմբեր, 1921: - ՀԲԸՄ ԿՎԱ:

[82] «Միութիւն», 1921, Nº 84, էջ 88:

[83] «Միութիւն», 1921, Nº 82, էջ 52:

[84] Եղիշէ Վարդանեան. նշվ. աշխ., էջ 482:

[85] Միջագետքի 816 որբերը ՀԲԸ Միութեան հովանիին տակ Երուսաղէմի մէջ: - «Միութիւն», 1922, Nº 85, էջ 6:

[86] Նույն տեղում, էջ 8-9:

[87] Նոյեմզար Վարդանյանի հուշագրությունները, ձեռագիր, էջ 12: Շնորհակալություն եմ հայտնում Մոնրեալում բնակվող Սկրտիչ Մալխասյանին, որը սիրահոժար տրամադրեց հորաքրոջ՝ Նոյեմզար Մալխասյան-Վարդանյանի եւ հոր՝ Հովհաննես Մալխասյանի հուշագրությունների պատճենները:

[88] Միջագետքի 816 որբերը ՀԲԸ Միութեան հովանիին տակ Երուսաղէմի մէջ, էջ 7:

[89] Միութեան Երուսաղէմի Արարատեան որբանոցը: - «Միութիւն», 1922, Nº 86, էջ 20:

[90] Նոյեմզար Վարդանյանի հուշագրությունները, էջ 13:

[91] «Միութիւն», 1923, Nº 94, էջ 52:

[92] «Յուշարար», 1923, Nº 81/86, էջ. 851:

[93] Նոյեմզար Վարդանյանի հուշագրությունները, էջ 13-14:

[94] Հովհաննես Մալխասյանի հուշագրությունները, էջ 12-13:

[95] «Միութիւն», 1924, Nº 101, էջ 78:

[96] Հովհաննես Մալխասյանի հուշագրությունները, էջ 14:

[97] «Միութիւն», 1925, 103, էջ 3:

[98] ՀԲԸՄ - 1926, էջ 60:

[99] ՀԲԸՄ - 1925, 32-33:

[100] «Միութիւն», 1923, Nº 95, էջ 75:

[101] ՆՊ ԿՊԱ, ֆ. 122, g.1, գ.333, թ.44; Գէորգ Մեսրոպ. Հայերը եւ Հայաստանը. 1923 յունուար 1 - 1924 յուլիս 31: - Ամերիկահայոց տարեգիրք - 1925, կազմ. Յ. Խաշմանեան: Բոստոն, 1925, էջ 43-45:

[102] «Միութիւն», 1923, Nº 93, էջ 34:

[103] ՀԲԸՄ - 1925, էջ 28:

[104] «Միութիւն», 1923, Nº 95, էջ 76

[105] Պ. Կոկինոս. Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927): Ե., 1965, էջ 43:

[106] «Միութիւն», 1924, Nº 97, էջ 35

[107] «Միութիւն», 1925, Nº 105, էջ 35

[108] Նույն տեղում:

[109] ՀԲԸՄ - 1930, էջ 70:

[110] «Արեւ», 1923, 23 փետրվարի:

[111] ՀԲԸՄ - 1924, էջ 31-32:

[112] «Յուշարար», 1923, Nº 85/90, էջ 928:

[113] Նոյեմզար Վարդանյանի հուշագրությունները, էջ 15:

[114] «Յուշարար», 1923, Nº 81/91, էջ 850:

[115] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 229:

[116] «Հայաստանի Կոչնակ», 1925, Nº 2, էջ 54:

[117] Պ. Կոկինոս. նշվ. աշխ., էջ 29:

[118] Մ.Աղասեան, Պտոյտ մը Ֆիքսի գաղթականին մէջ: - «Միութիւն», 1925, Nº 107, էջ 73-74:

[119] ՊԿՊԱ, ֆ. 430, g.1, գ. 896, թ.36-37:

[120] Մ. Աղասեան, նշվ. աշխ., էջ 74:

[121] ՊԿՊԱ, ֆ. 430, g.1, գ. 896, թ. 43:

[122] ՀԲԸՄ - 1923, էջ 37:

[123] Լիպարիտ Ազատեան. Հայ որբերը մեծ եղեռնի, Ա գիրք, էջ 107:

[124] Պ. Կոկինոս. Հունահայ գաղութի պատմությունից, էջ 46:

[125] ՊԿՊԱ, ֆ. 430, g.1, գ. 241, թ. 9-11:

[126] Դարձեալ Նիյր Իսք Ռիլիֆը եւ մենք: - «Հայաստանի կոչնակ», 1925, Nº 14, էջ 419:

[127] ՀԲԸՄ - 1935, էջ 56:

[128] ՀԲԸՄ - 1928, էջ 39-40; «Միութիւն», 1929, Nº 132, էջ 178:

[129] James L. Barton. Story of Near East Relief, p. 306.

[130] Նույն տեղում, էջ. 305-306:

[131] ՀԲԸՄ - 1928, էջ 35:

[132] Պ.Բարսեղեան. Հայ որբերը Ֆրանսայի մէջ: - Ֆրանսահայ տարեգիրք, 1927: Բարիզ, էջ 214:

[133] Ամերիկեան Նպաստամատոյցը եւ մեր որբերը: - Նույն տեղում, էջ 210:

[134] James L. Barton. Story of Near East Relief, p. 4.

[135] Նույն տեղում:

[136] «Միութիւն», 1923, 11/12, էջ 91:

[137] Նույն տեղում:

[138] «Միութիւն», 1926, № 9/10, էջ 98:

[139] «Միութիւն», 1927, № 8/9, էջ 66:

[140] ՀԲԸՄ - 1927, էջ 41:

[141] «Յուշարար», 1945, № 6, էջ 166:

[142] ՀԲԸՄ - 1930, էջ 56:

[143] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 268:

[144] Robert Mirak. Torn between two Lands. Armenians in Ameriaca, 1890 to World War I. Harvard Univ. Press, Cambridge, Mass., 1983, pp. 150-180.

[145] «Հայրենիք», Բոստոն, 1912, 23 հուլիս:

[146] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 269:

[147] Նույն տեղում:

[148] Գործապատում ՀԲԸ Միութեան Գալիֆորնիոյ շրջանակի (1910-1953). Պատրաստեց Գրիգոր Ա. Սարաֆեան: Ֆրէզնո, 1954, էջ 7:

[149] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 274:

[150] Կ.Դալլաքյան. Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության: Երեւան, 1994, էջ 3-38:

[151] Նույն տեղում, էջ 39-45:

[152] Д. Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, с. 465.

[153] Նույն տեղում, էջ, 461:

[154] Նույն տեղում, էջ, 462:

[155] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 279:

[156] Historical Statitistics of the United States. Colonial Times to 1970. Wash., 1975, p. 135.

[157] Գործապատում ՀԲԸ Միութեան Գալիֆորնիոյ շրջանակի (1910-1953), էջ 5:

[158] Նույն տեղում, էջ 208:

[159] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 275:

[160] ՊԿՊԱ, ֆ. 446, g. 2, գ, 53, թ. 6-7:

[161] «Միութիւն», 1933, № 160, էջ 27:

[162] Հ. Թոփուզյան. Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 172:

[163] Թ. Կրինշիլտս. Հայ գաղթականներու տեղաւորումը Հալէպի մէջ (1920-1939): - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք. Բ. գիրք: Հալէպ, 1978, էջ 263:

[164] Հ. Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 174; տես նաեւ՝ «Եփրատ» (Հալէպ), 1933, 3 փետրվարի:

[165] Ռ.Ճեպեճեան. Կիւրինցիներու քէմբը - Հալէպ: - «Արարատ» (Բեյրութ), 1989, 24 հոկտեմբերի:

[166] Հ.Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 175:

[167] «Միութիւն», 1930, № 145, էջ 402:

[168] ՀԲԸՄ - 1932, էջ 87:

[169] ՀԲԸՄ - 1931, էջ 85:

[170] ՀԲԸՄ - 1938, էջ 58:

[171] «Միութիւն», 1927, № 117, էջ 33:

[172] Նույն տեղում, էջ 34:

[173] Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք. Ե. գիրք. Պատ. խմբ. Ռոպերտ Ճեպեճեան: Հալէպ, 1996, էջ 161:

[174] Պարգեւ Նազարեանի յուշերը Սանճակի տարածքին տեղաւորուած հայութեան մասին. - նույն տեղում, էջ 118:

[175] «Եփրատ», 1931, 19 օգոստոսի:

[176] Հ.Թոփուզյան, նշվ. աշխ., էջ 174-175:

[177] «Եփրատ», 1932, 15 հուլիսի:

[178] Հ. Թոփուզյան. նշվ. աշխ., էջ 238:

[179] Canon C.T. Bridgeman. The new Armenian Trek. Exodus from Hatay. - "Hoosharar", 1940, № 3, p. 54.

[180] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 74:

[181] Նույն տեղում, էջ 73:

[182] D.A. Berberian. Report of Malaria Control Work in the Armenian Refugee Settlements in the Lebanon, in 1943. - "Hoosharar", 1944, № 10, p. 192.

[183] «Ձարթօնք», 1940, 24 հոկտեմբերի:

[184] ՀԲԸՄ- 1920-1921, էջ 56:

[185] Նույն տեղում, էջ 57:

[186] Նույն տեղում, էջ 58:

4. Խորհրդային Հայաստանում

[1] Տե՛ս Կ.Դալլաքյան. Ակնարկներ սփյուռքահայ հասարակական մտքի պատմության: Երեւան, «Գիտություն», 1994, «Սփյուռքահայ հանրային մտքի ձեւավորման ակունքներում» ակնարկը:

[2] ՀԲԸՄ - 1920-1921, էջ 95:

[3] Նույն տեղում:

[4] «Միութիւն», 1922, № 86, էջ 17:

[5] Ա.Թէրզիպաշեան. Նուպար: Փարիզ, 1939, էջ 360-361:

[6] ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g. 43, գ. 150, թ. 111:
[7] Նույն տեղում, թ. 56:
[8] Նույն տեղում, թ. 57:
[9] Ս.Լուկաշին (Սրապիոնյան). Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր: Երեւան, «Հայաստան», 1986, էջ 163-164:
[10] ՀԲԸՄ - 1922, էջ 26-27:
[11] «Միութիւն», 1924, Nº 98, էջ 24:
[12] Նույն տեղում, էջ 23:
[13] ՀԲԸՄ - 1922, էջ 27-28:
[14] ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g. 43, գ. 150, թ. 60:
[15] Նույն տեղում, թ. 87:
[16] Նույն տեղում, թ. 86:
[17] ՆՊ ԿՊԱ, ֆ. 122, g.1, գ. 333, թ. 44:
[18] Նույն տեղում, թ. 104:
[19] Նույն տեղում, թ. 44:
[20] ՀԲԸՄ - 1923, էջ 26:
[21] ՀԲԸՄ - 1924, էջ 28:
[22] «Միութիւն», 1924, Nº 101, էջ 66:
[23] «Միութիւն», 1923, Nº 94, էջ 52-53:
[24] ՆՊ ԿՊԱ, ֆ.122, g. 1, գ. 333, թ.98:
[25] «Միութիւն», 1925, Nº 103, էջ 11-12:
[26] «Միութիւն», 1929, Nº 132, էջ 178:
[27] «Միութիւն», 1934, Nº 170, էջ 83:
[28] «Միութիւն», 1934, Nº 168, էջ 59:
[29] «Միութիւն», 1937, Nº 185, էջ 35:
[30] «Միութիւն», 1925, Nº 103, էջ 10-11:
[31] «Միութիւն», 1933, Nº 162, էջ 59:
[32] «Միութիւն», 1929, Nº 135, էջ 232:
[33] ՀԲԸՄ - 1930, էջ 77:
[34] ՀԲԸՄ - 1931, էջ 59:
[35] «Միութիւն», 1933, Nº 163, էջ 67:
[36] ՀԲԸՄ ԿՎԱ:
[37] Նույն տեղում:
[38] Նույն տեղում:
[39] Նույն տեղում:
[40] Ա.Չոպանեան. Հայաստանի Համալսարանը: - «Միութիւն»,1928, Nº 121, էջ 9:
[41] «Միութիւն», 1929, Nº 128, էջ 118:
[42] «Միութիւն», 1928, Nº 122, էջ 26:

[43] ՀԲԸՄ - 1936, էջ 57:
[44] Նույն տեղում:
[45] ՆՊԿՊԱ, ֆ.113, g. 3, գ.1698, թ. 3, 27:
[46] «Միութիւն», 1927, Nº 119, էջ 78:
[47] «Միութիւն», 1930, Nº 140, էջ 312:
[48] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 9, էջ 569-570:
[49] ՆՊ ԿՊԱ, ֆ. 40/113, g. 3, գ. 1745, թ. 15:
[50] Նույն տեղում, թ. 11:
[51] Նույն տեղում, թ. 9:
[52] «Միութիւն», 1928, Nº 124, էջ 56: ՀԲԸՄ-1930, էջ 78:
[53] Ե.Աղաթօն. Ի՞նչ կը խորհին Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան հիմնադիրները: Փարիզ, 1925, էջ 7:
[54] «Միութիւն», 1932, Nº 154, էջ 26:
[55] Հայաստանի Կոչնակ, 1925 թ., Nº 15, էջ 467-468:
[56] «Միութիւն», 1928, Nº 122, էջ 19:
[57] «Միութիւն», 1929, Nº 131, էջ 166:
[58] Վ.Համազասպեան, Աւանը վերստացաւ իր նախկին անունը Նուպարաշէն: - «Յուշարար-Միութիւն», 1991, Nº 4, էջ 20:
[59] Ա. Թէրզիպաշեան. Նուպար, էջ 371:
[60] ՆՊ ԿՊԱ, ֆ.178, g.1, գ. 534, թ.7-8:
[61] ՀԲԸՄ - 1930, էջ 74:
[62] ՀԲԸՄ - 1931, էջ 54:

5. 1920-1930թթ. Ներգաղթը: Գ.Կյուլպենկյանի հրաժարականը

[1] Հայաստանի կոչնակ, 1924, Nº 5, էջ 151:
[2] Հայաստանի կոչնակ, 1925,, Nº 8, էջ 232:
[3] Նույն տեղում:
[4] Հայաստանի կոչնակ, 1924, Nº 5, էջ 151:
[5] ՀԲԸՄ - 1926, էջ 16:
[6] ՀԲԸՄ - 1925, էջ 12:
[7] ՀԲԸՄ - 1926, էջ 17:
[8] ՀԲԸՄ - 1927, էջ 34:
[9] «Խորհրդային Հայաստան», 20 օգոստոս, 1931թ.:
[10] «Խորհրդային Հայաստան», 2 հուլիս, 1931թ.:
[11] «Խորհրդային Հայաստան», 26 սեպտեմբեր 1931թ.:
[12] «Միութիւն», 1931թ., Nº 152, էջ 164:

[13] ՀԲԸՄ - 1932, էջ 55:

[14] «Միութիւն», 1932, № 154, էջ 21-22:

[15] «Միութիւն», 1932, № 155, էջ 39-40:

[16] ՀԲԸՄ - 1932, էջ 55-56:

[17] «Միութիւն», 1933, № 159, էջ 3:

[18] ՀԲԸՄ - 1932, էջ 56:

[19] ՀԲԸՄ - 1933, էջ 53:

[20] «Միութիւն», 1933, № 161, էջ 41:

[21] «Միութիւն», 1932, № 155, էջ 40:

[22] «Միութիւն», 1933, № 164, էջ 84:

[23] Հ.Մելիքսեթյան. Հայրենիք-սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը, (1920-1980թթ.): Երեւան, 1985, էջ 118:

[24] ՀԲԸՄ - 1934, էջ 44:

[25] ՀԲԸՄ ԿՎԱ:

[26] ՀԲԸՄ - 1936, էջ 45-47:

[27] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 16, գ. 77, թ. 43:

[28] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g.16, գ. 71, թ. 39:

[29] «Միութիւն», 1927, № 120, էջ 84:

[30] Հ. Մելիքսեթյան. Հայրենիք - սփյուռք առնչությունները, էջ 160 - 161:

[31] ՀԲԸՄ ԿՎԱ:

[32] Նույն տեղում:

[33] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ. 10:

[34] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 17, գ. 76, թ. 22:

[35] ՀԲԸՄ ԿՎԱ:

[36] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g. 1, գ. 580, թ. 46:

[37] ՀԲԸՄ ԿՎԱ:

[38] Նույն տեղում:

[39] «Խորհրդային Հայաստան», 16 հոկտեմբեր 1931թ.:

[40] ՀԲԸՄ ԿՎԱ:

[41] Նույն տեղում:

[42] «Միութիւն», 1932, № 156, էջ 49-50:

[43] Նույն տեղում, էջ 51-52:

[44] Նույն տեղում, էջ 54:

[45] Նույն տեղում:

[46] Nubar Gulbenkian. Portrait in Oil. Simon and Schuster, New York,1965, p. 12.

[47] Ralph Hewins. Mr Five Per Cent. The Story of Calouste Gulbenkian. Rinehart & Company, 1957, pp. 52-53.

[48] Նույն տեղում, էջ 53.

[49] Տե՛ս Կ.Դալլաքյան. ՀԲԸ Միության նախագահ Գ. Կյուլպենկյանի հրաժարականի հարցի շուրջ: Երեւան, 1996, էջ 78-79:

[50] Նույն տեղում, էջ 83:

[51] Նույն տեղում, էջ 87:

[52] «Միութիւն», 1932, № 156, էջ 58; 1931, № 151, էջ 148:

[53] Կ.Դալլաքյան, նշվ. աշխ. էջ 85:

[54] «Միութիւն», 1932, № 156, էջ 58-59:

[55] Նույն տեղում, էջ 58:

[56] Վ.Մալէզեան. Գալուստ Կիւլպէնկեանի Բարեգործականի նախագահութեան շրջանը եւ հրաժարման պատճառները: - Արեւ, 20 հունվար, 1960:

[57] ԱԱՆԱ ԿԳՖ, գործ 5407, հ.1, թ. 31:

[58] Մեջբերումը ըստ՝ Ա.Ամրիկյան. Անմեկնելի են Աստծո ճանապարհները: Երեւան, 1998, էջ 184, 186: Ա.Ամրիկյան՝ պատմաբան Ա. Մանուկյանի գրական անունն է, որի այս գրքի հիմքում դրված են արխիվային փաստաթղթեր: Այդ տարիների Հայաստանի ներքաղաքական իրավիճակի մասին տե՛ս Mary Kilbourne Matossian. The Impact of Soviet Policies in Armenia. Leiden, E.J.Brill, 1962; Այս գիրքը այսօր էլ ամենահիմնավոր գիտական աշխատությունն է՝ Խորհրդային Հայաստանի 1920-1940թթ. պատմության մասին:

[59] Талейран. Мемуары. М., 1959, стр. 140.

[60] Mary Kilbourne Matossian. The Impact of Soviet Policies in Armenia, p.119

[61] ՀԲԸՄ ԿՎԱ:

[62] Նույն տեղում:

[63] «Միութիւն», 1930, № 145, էջ 404:

[64] «Միութիւն», 1930, № 144, էջ 391:

[65] ՀԲԸՄ ԿՎԱ:

[66] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g. 1, գ. 518, թ. 5-6: Արխիվում պահպանվել է նամակի Երեւանում կատարված ռուսերեն պաշտոնական թարգմանությունը: Տե՛ս նաեւ Ս.Ստեփանյանց. Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Երեւան, 1994, էջ 201-202:

[67] ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g.3, գ. 1759, թ.44: Արխիվում պահպանվել է նամակի Փարիզում կատարված ռուսերեն ոչ այնքան հաջող թարգմանության պատճենը, որը ավելի ուշ Վ.Մալեզյանը ուղարկել էր Երեւան:

[68] Նույն տեղում, թ. 43:

[69] Նույն տեղում, թ. 42:

[70] Նույն տեղում, թ. 38:

[71] Georges Agabekov. OGPU. The Russian Secret Terror. Brentano's, New York, 1931, p. 269:

[72] «Միութիւն», 1947, № 204, էջ 17:

[73] ՀԲԸՄ ԿՎԱ:

[74] Նույն տեղում:

[75] Նույն տեղում:

[76] Nubar Gulbenkian. Portrait in Oil, p. 314.

6. Ներքաղաքական պայքարը եւ ՀԲԸՄ լուծարումը Հայաստանում

[1] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g.15, գ.11, թ.104:

[2] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g. 1, գ.535, թ. 32-35:

[3] Մեջբերումը՝ ըստ Ա. Ամրիկյան. Անմեկնելի են Աստծո ճանապարհները, էջ185-186:

[4] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 15, գ. 3, թ. 25:

[5] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 15, գ. 4, թ. 62:

[6] Նույն տեղում, թ. 44:

[7] Նույն տեղում, թ. 17:

[8] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g.15, գ. 12, թ. 44:

[9] «Միութիւն», 1929, Nº 127, էջ 99-100:

[10] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 16, գ. 77, թ. 7-10:

[11] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g.1, գ. 284, թ. 7-12:

[12] ՆՊ ԿՊԱ, ֆ.113, g. 3, գ. 1672, թ.8:

[13] Նույն տեղում, թ. 7:

[14] Նույն տեղում, թ.3:

[15] ՆՊ ԿՊԱ, ֆ.178, g.1, գ.254, թ. 31:

[16] ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g. 3, գ. 1672, թ. 11-13:

[17] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g.16, գ. 77, թ. 11:

[18] ՆՊ ԿՊԱ, ֆ.113, գ. 3, գ. 1672, թ. 33:

[19] Նույն տեղում, թ. 32:

[20] Ա.Ամրիկյան, նշվ. աշխ., էջ 186:

[21] Նույն տեղում:

[22] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g.1, գ. 263, թ.1:

[23] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g.16, գ.70, թ.72:

[24] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 17, գ. 46, թ. 110 ա:

[25] ՆՊ ԿՊԱ, ֆ.178, g.1, գ. 653, թ. 4:

[26] Ա. Մանուկյան. Գնդակահարված է երեսնականներին. ՀՕԿ-ի նախագահ Արսեն Եսայան: - «Ազգ», 9 մարտի 1996:

[27] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ. 125:

[28] Նույն տեղում, թ.11-13:

[29] Նույն տեղում, թ. 43-44:

[30] Նույն տեղում, թ. 50, 51:

[31] ՆՊ ԿՊԱ, ֆ.178, g.1, գ.254, թ.21:

[32] Ա. Վիրաբյան. Սպանությո՞ւն, թե՞ ինքնասպանություն: - «Երեկոյան Երեւան», 19 մայիս 1988:

[33] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 16, գ. 60, թ. 3:

[34] Նույն տեղում, թ. 10:

[35] Նույն տեղում, թ. 5:

[36] ՀԲԸՄ ԿՎԱ (թարգմ. ֆրանսերենից):

[37] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ. 87:

[38] «Միութիւն», 1936, Nº 180, էջ 53:

[39] ՆՊ ԿՊԱ, ֆ. 178, g. 1, գ. 580, թ.1:

[40] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 16, գ. 68, թ. 1-7:

[41] Նույն տեղում, թ. 9:

[42] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ. 128:

[43] Ա.Մանուկյան. ՀՕԿ-ի առաջին նախագահ Արամայիս Երզնկյանը զոհ 1937թ. հալածանքների: - «Ազգ», 5 մարտ 1996:

[44] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, g. 17, գ. 76, թ. 14:

[45] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g.17, գ. 76, թ. 32:

[46] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g.17, գ. 83, թ. 1, 2:

[47] Процесс антисоветского троцкистского центра (23-30 января 1937 г.). Москва, Юридическое изд-во, 1937, стр. 210-211.

[48] Յու.Մռավյան, Ա.Վիրաբյան. Հայաստան, 1937: - «Երեկոյան Երեւան», 9 սեպտեմբերի 1988:

[49] Նույն տեղում: Ю.Мравян. Зловещее письмо отца народов,- "Голос Армении", 9 октября1991:

[50] «Խորհրդային Հայաստան», 26, 29 սեպտեմբերի 1937:

[51] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 17, գ. 53, թ. 21:

[52] Նույն տեղում, թ. 89-90:

[53] ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, g. 17, գ. 76, թ. 131:

[54] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 4029, թ.140:

[55] ՆՊ ԿՊԱ, ֆ. 113, g. 3, գ.1808, թ. 35:

[56] ՀԲԸՄ - 1938, էջ 39:

[57] Նույն տեղում, էջ 40-41:

[58] ՀԲԸՄ - 1939, էջ 16-17:

[59] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ. 9:

[60] Նույն տեղում, թ. 10:

[61] Նույն տեղում:

[62] Նույն տեղում, թ. 203:

[63] Նույն տեղում, թ. 20:

[64] Դ.Գասպարյան. Փակ դռների գաղտնիքը: Երեւան, «Ապոլոն», 1994, էջ 84, 90, 106, 107, 129:

[65] ԱԱՆԱ ԿԳՖ, գ. 3058, թ.23:

[66] Նույն տեղում, թ. 200:

[67] Նույն տեղում, թ.61:

[68] Նույն տեղում, թ.64:

[69] Նույն տեղում, թ. 66-67:

[70] Նույն տեղում, թ. 68:

[71] Նույն տեղում, թ. 251:

[72] Նույն տեղում, թ. 172:

[73] Նույն տեղում, թ.176:

[74] Նույն տեղում, թ. 177-178:

[75] Болингброк. Письма об изучении и пользе истории. Москва, Наука, 1978, стр. 199.

7. Երկրորդ Աշխարհամարտի տարիներին: Մեծ ներգաղթը

[1] ՀԲԸՄ - 1939, էջ 13-14:

[2] Ռաթо (Ռուբէն Թադէոսեան): Ֆրանսահայ գաղութը պատերազմի ընթացքում: - «Հայրենիք», Պոստոն, 1946, № 5, էջ 53:

[3] Ксения Худзинская. Этапы эмигрантской жизни. - "Культура русской диаспоры: саморефлексия и самоидентификация". Тарту, 1997, с. 412-413.

[4] Ա.Չօպանեան. Հրամայական պարտականութիւն: - «Միութիւն», 1939, № 11/12, 200, էջ 96:

[5] «Միութիւն», 1939, № 9-10, էջ 67:

[6] W. Churchill. The Second World War, vol. II. Their finest hour. Boston, 1949, p. 42.

[7] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 11-12:

[8] Նույն տեղում, էջ 9-10:

[9] Նույն տեղում, էջ 10:

[10] Նույն տեղում, էջ 35:

[11] Նույն տեղում, էջ 43:

[12] Ա. Անտոնեան. ՀԲԸ Միութեան Բարիզի Նուպարեան Մատենադարանի գերման թալանը: - «Միութիւն», 1947, մայիս, էջ 72:

[13] Նույն տեղում:

[14] Ю. Коваленко. Москва - Париж. Очерки о русской эмиграции. М., 1991, с. 129.

[15] Նացիստական Գերմանիայի հետ ՀՅ Դաշնակցության համագործակցության մասին տես՝ Ռ.Մարտիրոսյան. Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին: Երեւան, 1986; Эдуард Оганесян. Век борьбы. Очерк 100-летней истории дашнакской партии и национально-освободительной борьбы армянского народа. В 2-х т. Москва, 1991, т.2, стр. 394-404.

[16] Պ Քօլօլեան. Նուպարեան Մատենադարանի կողոպուտը: - «Միութիւն», 1948, հուլիս 1, էջ 300:

[17] Նույն տեղում:

[18] Ա.Անտոնեան, նշվ. աշխ., էջ 74:

[19] ՀՅ ՆՊԿՊԱ, ֆ. 326, ց. 1, գ. 186, թ.3:

[20] Gary A. Kulhanjian. The Historical and Sociological Aspects of Armenian Immigration to the United States 1890 to 1930. San Francisco, R and E Research Associates, 1975, p. 60-61.

[21] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 15:

[22] ՀԲԸՄ ԿՎԱ:

[23] ՀԲԸՄ, 1940-1945, էջ 105:

[24] ՀԲԸ Միութեան խօսքը Փարիզի պառակտիչ շարժումին մասին: Նիւ Եորք, 1963, էջ 7:

[25] Նույն տեղում, էջ 74: Restated Certificate of Incorporation of Armenian General Benevolent Union (A Non-Stock Membership Corporation), p.4.

[26] Նույն տեղում, էջ 76-77:

[27] Ա.Թիրեաքեան. Օրուան մեծ պարտականութիւնը: - «Յուշարար», 1941, ապրիլ, էջ 51:

[28] «Յուշարար», 1941, նոյեմբեր, էջ 137:

[29] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 24:

[30] «Յուշարար», 1942, դեկտեմբեր, էջ 218:

[31] «Էջմիածին», 1944, № 1, էջ 4:

[32] Նույն տեղում, էջ 5:

[33] Նույն տեղում, էջ 10:

[34] «Յուշարար», 1943, ապրիլ 1, էջ 16:

[35] «Յուշարար», 1944, մարտ 1, էջ 73:

[36] «Յուշարար», 1944, փետրվար 15, էջ 51:

[37] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 91:

[38] «Յուշարար», 1943, փետրվար, էջ17-18:

[39] «Յուշարար», 1943, մարտ, էջ 34:

[40] «Յուշարար», 1943, դեկտեմբեր 18, էջ 275:

[41] «Յուշարար», 1944, հունվար 2, էջ 19:

[42] «Յուշարար», 1944, փետրվար 4, էջ 50:

[43] «Յուշարար», 1944, մարտ 15, էջ 83:

[44] «Յուշարար», 1944, մարտ 1, էջ 75:

[45] Ե.Մեսիաեան. ՀԲԸ Միութիւնը գլիրինկ հաուզ: - «Յուշարար», 1944, օգոստոս 12, էջ 227:

[46] «Յուշարար», 1944, նոյեմբեր 15, էջ 331:

[47] Նույն տեղում, էջ 332-333:

[48] «Յուշարար», 1945, մայիս 1, էջ 131:

[49] «Յուշարար», 1946, ապրիլ 1, էջ 117:

[50] «Յուշարար», 1944, նոյեմբեր 15, էջ 332-333:

[51] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 23:

[52] «Յուշարար», 1944, հունվար 1, էջ 7-8:

[53] «Յուշարար», 1945, մայիս 1, էջ 139:

[54] История США. В 4-х т. М., "Наука", 1985, т. 3, с. 334-335.

[55] Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941-1945 гг. В 2-х т. М., 1957, т. 2, с. 56-57.

[56] В.Костиков, Не будем проклинать изгнанье... Пути и судьбы русской эмиграции. М., 1990, с. 298-299.

[57] Эд. Мелконян. Между двумя мирами. Пути политической адаптации армянской диаспоры. - " Вертикали истории" (Тбилиси), 2003, №2, с. 78-80.

[58] «Յուշարար», 1944, մայիս 1, էջ 144:

[59] Р.Медведев. Они окружали Сталина. М., Изд-во политической литературы, 1990, с. 49.

[60] Ս.Ստեփանյանց. Հայ Առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք: Երեւան, 1994, էջ 161-162:

[61] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ.16, թ. 6:

[62] Նույն տեղում, թ. 8:

[63] «Էջմիածին», 1945, № 6-7, էջ 7:

[64] Նույն տեղում, էջ 8:

[65] «Յուշարար», 1945, սեպտեմբեր 1, էջ 262:

[66] Նույն տեղում: ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 57, թ. 13:

[67] Նույն տեղում, թ. 27:

[68] Նույն տեղում, թ. 28 - 29:

[69] «Յուշարար», 1945, նոյեմբեր 1, էջ 326:

[70] Նույն տեղում, էջ 332-333:

[71] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 57, թ. 6:

[72] «Յուշարար», 1945, նոյեմբեր 1, էջ 324:

[73] Մըսրլեան Ջաւէն. Արեւմտահայ բռնագրաւուած հողերու հարցը 1921-1971թթ.- «Հայկազեան հայագիտական հանդէս», խմբ. եր. Քասունի: Պէյրութ, 1971, էջ 32:

[74] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны (1941-1945 гг.), сб. документов, т. 6. М., 1980.

[75] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 57, թ. 35-36:

[76] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 74, թ. 1:

[77] «Սովետական Հայաստան», 1946, 3 փետրվարի:

[78] «Յուշարար», 1946, մարտ 1, էջ 67-68: Տես նաեւ՝ ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 2, գ. 30, թ. 2:

[79] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 2, գ. 30, թ. 14:

[80] «Յուշարար», 1946, մարտ 15, էջ 100:

[81] «Յուշարար», 1946, հոկտեմբեր 15, էջ 231:

[82] ՀԲԸՄ - 1946-1949, էջ 46:

[83] Նույն տեղում, էջ 110:

[84] Հ. Մելիքսեթյան. Հայրենիք - սփյուռք առնչությունները եւ հայրենադարձությունը, էջ 241:

[85] «Միութիւն», 1947, ապրիլ, էջ 63:

[86] Գ.Սհարոնեան, Մեծ երազի ճամբուն վրայ: Պէյրութ, 1964, էջ 199:

[87] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 156, թ. 74-75:

[88] W. Lippman. The Cold War. New York, 1947, p. 28.

[89] «Միութիւն», 1947, ապրիլ, էջ 63-64:

[90] «Միութիւն», 1947, հունիս, էջ 94:

[91] ՀՀ ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 2, գ. 29, թ. 72:

[92] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 326, g.1, գ.213, թ. 1-2:

[93] Charles A. Vertanes. The Case of the Cholakian Family. N.Y., 1950.

[94] «Միութիւն», 1947, դեկտեմբեր 1, էջ 255:

[95] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 362, g. 2, գ. 43, թ. 28:

[96] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 362, g. 2, գ. 43, թ. 35:

[97] «Հայրենիք», 23 հուլիսի, 1941:

[98] Ռ.Մարտիրոսյան, նշվ. աշխ., էջ 7-8:

[99] «Զարթօնք», 30 նոյեմբերի 1983:

[100] «Միութիւն», 1948, փետրվարի 1, էջ 64:

[101] Հ.Մելիքսեթյան. նշվ. աշխ., էջ 241:

[102] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 362, g. 1, գ.8, թ. 21, 61:

[103] Մովսես Բազարյան. Նամակներ սովետական «դրախտից»: Երեւան, 1996, էջ 64-65:

[104] Նույն տեղում, էջ 54:

[105] Արմենակ Մանուկյան. Քաղաքական բռնադատումները Հայաստանում 1920-1953 թթ.: Երեւան, 1999, էջ 231:

[106] Մովսես Բազարյան, նշվ. աշխ., էջ 48:

[107] Н. Ф. Бугай, А.М. Гонов. Кавказ: народы в эшелонах (20-60-е годы). Москва, 1998, с. 127-128.

[108] Նույն տեղում, p. 211:

[109] Նույն տեղում, p. 213:

[110] Նույն տեղում, p. 221-222:

[111] Ա.Մանուկյան, նշվ. աշխ., էջ 230; Н. Ф. Бугай, А.М. Гонов, указ. соч., с. 222.

[112] Ա.Մանուկյան, նշվ. աշխ., էջ 230:

[113] Նույն տեղում, էջ 238:

[114] ՆՊ ԿՊԱ, ֆ. 326, g. 1, գ. 156, թ. 23:

[115] Նույն տեղում, թ. 18:

[116] Նույն տեղում, թ. 19:

[117] ՀՀ ՆՊԿՊԱ, ֆ. 362, g. 2, գ. 29, թ.38:

[118] Մովսես Բազարյան, նշվ. աշխ., էջ 129:

[119] Նույն տեղում:

[120] Նույն տեղում, էջ 259:

8. Հայ ինքնության պահպանումը սփյուռքում

[1] Antranig Antreassian. The AGBU: A Mission in Service to the Armenian People. 1981, p. 25:

Արեւելքի երկրներ

[2] James L. Barton. Story of Near East Relief (1915-1930). An Interpretation. New York, The Macmillan Company, p.292.

[3] Խ. Գալուստեան. ՀԲԸ Միութեան ՀԵ Ընկերակցութեան հիմնարկութեան 50-ամեակին առթիւ: - ՀԲԸ Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն. Ոսկեմատեան: Հալէպ, 1982, էջ 22:

[4] Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն: - Նույն տեղում, էջ 132:

[5] Բարունակ Թովմասեան. Հայկական Ընդհանուր Միութիւն: - Նույն տեղում, էջ 128:

[6] «Միութիւն», 1934, № 3-4, էջ 19:

[7] Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն: - էջ 132:

[8] ՀԲԸՄ - 1934, էջ 66-67:

[9] ՀԲԸՄ - 1935, էջ 63:

[10] Խաչեր Գալուստեան. Լիկայի պատմականը - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, խմբ. Հայկ Պարիկեան: Հալէպ, 1985, էջ 418:

[11] ՀԵԸ եւ մարզական շարժումը: - ՀԲԸ Միութեան Հայ Երտասարդաց Ընկերակցութիւն. Ոսկեմատեան, էջ 90:

[12] ՀԲԸՄ - 1955,1956 եւ 1957, էջ 75:

[13] ՀԵԸ եւ մարզական շարժումը: - ՀԲԸ Միութեան Հայ Երտասարդաց Ընկերակցութիւն. Ոսկեմատեան, էջ 92:

[14] Վարդան Սվաճեան. Պատմութիւն Հալէպի ՀԵԸ-ի սկաուտական շարժման: - Նույն տեղում, էջ 67-68:

[15] «Խօսնակ», Պէյրութ, սեպտեմբեր-հոկտեմբեր 1999, էջ 24:

[16] Նույն տեղում, էջ 23:

[17] Նույն տեղում, էջ 25:

[18] Յակոբ Միքայէլեան. ՀԵԸ-ի թատերական շարժման պատմութիւնը: - ՀԲԸ Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն. Ոսկեմատեան, էջ 53:

[19] Նույն տեղում, էջ 55:

[20] Նույն տեղում, էջ 56:

[21] Նույն տեղում, էջ 58:

[22] Վ.Ս. ՀԵԸ եւ նրա երաժշտական գործունէութիւնը: - Նույն տեղում, էջ 81:

[23] Նույն տեղում, էջ 82:

[24] Ռոպեր Ճեպեճեան. Պատմութիւն Հալէպի Ասլամազեան Քառեակի: - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, խմբ. Ռ.Ճեպեճեան: Հալէպ, 1996, էջ 329:

[25] Նույն տեղում:

[26] Լեւոն Պերդուտեան. ՀԲԸ Միութեան Ընտանեկան ակումբը.-Նույն տեղում, էջ 337:

[27] Նույն տեղում, էջ 338:

[28] Կ.Ճուհարեան, Զ. Գուշեան. ՀԵԸ-ի ուսանողական շարժման համառօտ պատմութիւն: - ՀԲԸ Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն. Ոսկեմատեան, էջ 105:

[29] Նույն տեղում, էջ 107:

[30] Ատրունի Մատուռեան. Ինչո՞ւ, ե՞րբ եւ ի՞նչպէս ծնունդ առաւ «Խօսնակ»ը: - «Խօսնակ», սեպտեմբեր-հոկտեմբեր 1991, էջ 13:

[31] «Խօսնակ», հունվար 1994, էջ 12:

[32] Պարգեւ Յ. Օրջանեան. Հայ աւետարանական համայնքը Գամիշլիի մէջ: - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք, Բ. գիրք, խմբ. Հայկ Պարիկեան, Հալեպ: 1979, էջ 370-371:

[33] Նույն տեղում, էջ 371:

[34] AGBU Magazine, New York, March 2001, p 37.

[35] «Յուշարար-Միութիւն», 2001, № 3-4, էջ 12:

[36] Կեղդ. Վարչ. Ժողովի յառաջիկայ ուղեգիծը. Ծրագիր ՀԲԸ Միութեան: Բարիզ, 1931, էջ 24-25:
[37] ՀԲԸՄ - 1924, էջ 83:
[38] ՀԲԸՄ - 1926, էջ 66:
[39] ՀԲԸՄ - 1931, էջ 74:
[40] Յովհ. Պօղոսեան. Պայքարը ՀԲԸ Միութեան դէմ: Գահիրէ, 1934, էջ 15:
[41] Կարլեն Դալլաքյան. Ռամկավար Ազատական կուսակցության պատմություն, (1921-1940): Երեւան, 1999, էջ 183:
[42] Նույն տեղում:
[43] Նույն տեղում, էջ 186:
[44] Նույն տեղում, էջ 166:
[45] Նույն տեղում, էջ 138-139:
[46] ՀՀ ՆՊԱ, ֆ. 326, ց. 1, գ. 167, թ. 6:
[47] Կ.Դալլաքյան. Նշվ. աշխ., էջ 139:
[48] ՀԲԸՄ - 1926, էջ 12:
[49] ՀԲԸՄ - 1928, էջ 23:
[50] «Միութիւն», 1934, Nº.138, էջ 56:
[51] ՀԲԸՄ - 1927, էջ 47:
[52] ՀԲԸՄ - 1928, էջ 49:
[53] ՀԲԸՄ - 1928, էջ 48:
[54] ՀԲԸՄ - 1931, էջ 67:
[55] ՀԲԸՄ - 1936, էջ 61:
[56] Նույն տեղում:
[57] «Միութիւն», 1939, Nº. 198, էջ 59:
[58] ՀԲԸՄ - 1938, էջ 42:
[59] ՀԲԸՄ - 1939, էջ 25:
[60] Տոքթ. Յ.Էսեկիլեան. ՀԲԸ Միութեան Վարժապետանոցը: - «Յուշարար-Միութիւն», 1987, Nº 4-5, էջ 55:
[61] «Յուշարար-Միութիւն», 1986, Nº. 10, էջ 8:
[62] ՀԲԸՄ - 1985 (Ատենագրութիւն 72րդ Ընդհանուր ժողովի), էջ 6-7:
[63] «Յուշարար-Միութիւն», 1986, Nº. 10, էջ 10:
[64] AGBU Melkonian Educational Institute. Prospectus. Nicosia - Cyprus. 1999, p. 11.
[65] ՀԲԸՄ - 1940-1945, էջ 60:
[66] ՀԲԸՄ - 1958, 1959 եւ 1960, էջ 174:
[67] ՀԲԸՄ - 1961, 1962 եւ 1963, էջ 65:
[68] Նույն տեղում, էջ 66:
[69] ՀԲԸՄ - 1952, էջ 25-26:

[70] ՀԲԸ Միութիւնը Մերձաւոր Արեւելքի մէջ. Գնահատական ակնարկ: The AGBU in the Middle East. An Apprecation. By Miss Leila Karagheusian. New York, 1951, էջ 5-7:
[71] Նույն տեղում, էջ 7-8:
[72] Նույն տեղում, էջ 15-16:
[73] Միութիւն, 1955, մարտ, էջ 23:
[74] Նույն տեղում, էջ 23-24:
[75] Լեւոն Պերդուտեան. ՀԲԸ Միութեան Լազար Նաճարեան - Գալուստ Կիւլպէնկեան կեդրոնական երկսեռ վարժարան: - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, էջ 386:
[76] «Խօսնակ», 2001, յուլ.-օգստ.-սեպտ., էջ 38:
[77] ՀԲԸՄ - 1966, էջ 241; AGBU. Annual Report of the Central Board of Directors for the year 1967, p. 27.
[78] ՀԲԸՄ - 1958, 1959, 1960, էջ 78:
[79] AGBU - 1967, p. 11:
[80] Ռ.Ճեպեճեան. Նախաձեռնութիւն հայկական դպրոցներու գոյատեւման օգտին: - Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, էջ 405:
[81] Эдуард Оганесян. Век борьбы. т. 2. М., 1991, с. 407, 446.
[82] The Torch was passed. The Centennial History of the Armenian Church of America. Ed. by Christopher Hagop Zakian. New York, St. Vartan Press, 1998, p. 74-76.
[83] «Յուշարար», 1959, հունվար 15, էջ 26:
[84] «Ջահակիր» (Գահիրէ), 1959, 31 հուլիս:
[85] ՀԲԸՄ - 1964, էջ 61:
[86] «Ջարթօնք», 30 նոյեմբեր, 1993:
[87] «Խօսնակ», մայիս-հունիս 2001, էջ 21:
[88] Նույն տեղում:
[89] Տես՝ Ն.Հովհաննիսյան. Լիբանանյան ճգնաժամը - Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը: Եր., 1982: Ն.Չալըմյան. Լիբանանի հայ համայնքը երկրի սոցիալ-տնտեսական-քաղաքական կյանքում: Եր., 2002, էջ 53-61: Ռ.Կարապետյան. Արաբական երկրների նոր եւ նորագույն պատմություն: Եր., 2003, էջ 206-215:
[90] ՀԲԸՄ - 1976, էջ 42-43:
[91] Նույն տեղում:
[92] «Յուշարար - Միութիւն», 1976, Nº 18, էջ 9-10:
[93] ՀԲԸՄ - 1985, էջ 50:
[94] ՀԲԸՄ - 1978, էջ 51:
[95] Յակոբ Ալթունեան. Լիբանանի ճարտարարուեստի ներկայ գոյավիճակը եւ հեռանկարները. - «Խօսնակ», նոյեմբեր-դեկտեմբեր 1991, էջ 35-36:
[96] «Խօսնակ», հոկտեմբեր 1992, էջ 9:

[97] ՀԲԸՄ - 1977, էջ 38:

[98] Ժիրայր Դանիէլեան. Լիբանանահայ դպրոցը-1991. Թիւեր եւ մտորումներ: - «Խօսնակ», նոյեմբեր-դեկտեմբեր 1991, էջ 15, 18:

[99] Ժիրայր Դանիէլեան. Լիբանանահայ դպրոցը լուրջ մարտահրաւէրի դէմ յանդիման: - «Խօսնակ», դեկտեմբեր 1993, էջ 12:

[100] Նույն տեղում, էջ 13:

[101] Նույն տեղում, էջ 10-11:

[102] «Յուշարար-Միութիւն», 1998, դեկտեմբեր, էջ 6:

[103] ՀԲԸՄ - 1936, էջ 75:

[104] «Միութիւն», 1934, Nº 167, էջ 58:

[105] Կանոնագիր «Նուպար» Մարզական Միութեան: Գահիրէ, 1936, էջ 3:

[106] «Խօսնակ», յունիս, 2000, էջ 17:

[107] Նույն տեղում, էջ 19:

[108] «Յուշարար-Միութիւն»,1998, Nº 2, էջ 14:

[109] «Յուշարար-Միութիւն», 2004, Nº 1, էջ 46:

[110] Նույն տեղում:

[111] Հ.Լ.Փահլեւանյան. Իրանահայ համայնքը (1941-1979թթ.): Երեւան, 1989, էջ 17:

[112] ՀԲԸՄ - 1932, էջ 29: Հ.Լ.Փահլեւանյանի գրքում (էջ 140) որպես հիմնադրման տարի նշված է 1936թ:

[113] Տեղեկագիրներ ՀԲԸ Միութեան Թեհրանի մասնաճիւղի վարչութեան: - «Հուշարար», 1945, փետրվար 2, էջ 38:

[114] ՀԲԸՄ - 1953 եւ1954, էջ 52:

[115] Տես՝ Հ.Լ.Փահլեւանյան, նշվ. աշխ., էջ 191: Հ.Հախնազարյան, Հայագիտությունը Թեհրանի եւ Իսպահանի պետական համալսարանում: - «Պատմա-բանասիրական հանդես», 1969, Nº 3, էջ 262-263:

[116] ՀԲԸՄ - 1955, էջ 59:

[117] AGBU - 1967, p. 55.

[118] ՀԲԸՄ - 1983, էջ 43:

Արեւմուտքի երկրներ

[119] Ոսկեմատեան 1906-1931, էջ 278:

[120] Հայերը ամերիկացիներու ակնոցով դիտուած: - Մուշեղ եպիսկոպոս. Ամերիկահայ տարեցոյցը, Ա. տարի: Պոստոն, 1912, էջ 185-188:

[121] Mirak, Robert. Torn between two Lands. Armenians in America, 1890 to World War I. Harvard University Press, Cambridge, Mass., 1983, pp. 144-147, 272-283; Bakalian, Anny. Armenian-Americans. From Being to Feeling Armenian. Transaction Publishers, New Brunswick, London, 1993, p. 20-21.

[122] Boudjikanian- Keuroghlian, Aida. Les Arméniens dans la Région Rhone-Alpes. Audin-Lyon, 1978, pp. 109-113; Bakalian, Anny. Op. cit., pp. 396 - 418; Мелконян Эд. Армянская семья в условиях диаспоры. - "Советская этнография", М., 1988, Nº 6.

[123] Mirak, Robert. Torn between two Lands. Armenians in America, 1890 to World War I, p.271- 272.

[124] «Գիր ու գիրք», 1976, Nº 21.

[125] Գործապատում ՀԲԸ Միութեան Գալիֆորնիոյ շրջանակի (1910-1953): Ֆրէզնօ, 1954, էջ 5:

[126] Norehad, Bedros. The Armenian General Benevolent Union, its History and Purpose. USA, Lydian Press, 1966, p. 57.

[127] ՀԲԸ Միութեան Ամերիկայի Շրջ. Յանձնաժողովի տարեկան տեղեկագիրը ներկայացուած Ժե. Խորհրդ. համաժողովին: Պոսթօն, 29-30 մայիս,1927-ին: ՀԲԸՄ ԿՎԱ

[128] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 428:

[129] Նույն տեղում, էջ 430:

[130] «Միութիւն», 1948, հունիս, էջ 253:

[131] Philip Gleason. American Identity and Americanization. - "Harvard Encyclopedia of American Ethnic Groups". Stephan Thernstrom, editor. Harvard Univ. Press, Cambridge (Mass.), London, 1981, p. 48.

[132] «Նոր օր» (Լոս Անջելես), 1994, դեկտեմբեր 31, էջ 20:

[133] «Միութիւն», 1955, մարտ, էջ 23:

[134] «Յուշարար - Միութիւն», 2001, հունիս, էջ 8:

[135] ՀԲԸՄ - 1958, 1959 եւ 1960, էջ 40:

[136] ՀԲԸՄ - 1955-1957, էջ 285:

[137] ՀԲԸՄ - 1966, էջ 210:

[138] «Յուշարար - Միութիւն», 1963, նոյեմբեր 15, էջ 27:

[139] Նույն տեղում:

[140] AGBU of America, Inc. Annual Report 1978/1979, p. 10.

[141] Armenian General Benevolent Union. Central Committee of America. Annual Report 1984, p. 21.

[142] G. H. Chopourian. "An Open Letter to newly arrived Armenian Immigrants" - "American Missionary Association of America News", November 1976, p 4.

[143] ՀԲԸՄ - 1976, էջ 45:

[144] «Զարթօնք», 19 մարտ, 1978:

[145] «Յուշարար - Միութիւն», սեպտեմբեր 1997, էջ 7:

[146] ՀԲԸՄ - 1953 եւ 1954, էջ 109-110:

[147] «Յուշարար - Միութիւն», 1968, փետրվար, էջ 11-12:

[148] Bakalian Anny. Armenian-Americans. From Being to Feeling Armenian, pp. 431-438.

[149] Ibid., pp. 274-275.

[150] «Յուշարար - Միութիւն», փետրվար 1969, էջ 11 - 12:

[151] Նույն տեղում, էջ13:

[152] Armenian General Benevolent Union of America, Inc. Annual Report 1977-1978, p. 1.

[153] «Խօսնակ», հոկտեմբեր 1993, էջ 8:

[154] «Զարթօնք», 30 նոյեմբեր 1993:

[155] Նույն տեղում:

[156] Armenian General Benevolent Union. Central Committee of America. Annual Report 1983, p. 1.

[157] Armenian General Benevolent Union. 1988-1989 Annual Reports, p. 56.

[158] «Յուշարար - Միութիւն», դեկտեմբեր 1997, էջ 22:

[159] Նույն տեղում, էջ 24:

[160] «Խօսնակ», հոկտեմբեր 1993, էջ 8:

[161] ՀԲԸՄ - 1937, էջ 79:

[162] ՀԲԸՄ - 1968, էջ 69:

[163] «Խօսնակ», հոկտեմբեր 1993, էջ 9:

[164] Հայ սփյուռք. Հանրագիտարան: Եր., 2003, էջ 638:

[165] ՀԲԸՄ - 1953 եւ 1954, էջ 63:

[166] ՀԲԸՄ - 1958, 1959 եւ 1960, էջ 32:

[167] ՀԲԸՄ - 1968, էջ 60:

[168] ՀԲԸՄ - 1936, էջ 78:

[169] «Խօսնակ», դեկտեմբեր 1993, էջ 38:

[170] Նույն տեղում, էջ 39:

[171] AGBU Magazine, march 2003, p. 21.

[172] «Միութիւն», հուլիս-օգոստոս, 1925, էջ 50:

[173] St. Gregory Armenian Apostolic Church, Golden Jubilee 1930-1980. St. Catharines, Ontario, 1980, p. 13.

[174] J. Apramian. The Georgetown Boys. The Printing House, Hamilton, 1976.

[175] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 405:

[176] Izabel Kaprielian - Churchill. Armenians. - "Encyclopedia of Canada's Peoples", Paul Robert Magocsi, editor. University of Toronto Press, Toronto-Buffulo-London, 1999, p. 217.

[177] «Յուշարար», մարտ 1947, էջ 40:

[178] Oksen Teghtsoonian. Armenians in Toronto: the Early Years. - "Polyphony. The Bulletin of the Multicultural History Society of Ontario", 1982, vol. 4, no. 2, p.100.

[179] «Յուշարար», մարտ 1945, էջ 78:

[180] Izabel Kaprielian - Churchill. Armenians, p. 217.

[181] Ibidem, p. 219.

[182] ՀԲԸՄ - 1987, էջ 73:

[183] Garo Chichekian. The Armenian Community of Quebec. Montreal, 1989, p.58.

[184] Kim Hekimian. Armenians Immigration to Argentina: 1909-1938. - "Armenian Review", Watertown, Mass.,1990, vol. 43, no. 1/169, p. 88.

[185] Narciso Binayan Carmona. Entre el pasado y el futuro: Los Armenios en la Argentina. Buenos Aires, 1996, p. 76.

[186] Տարեցոյց Հար. Ամերիկահայոց. Պուէնոս Այրէս, 1943, էջ 72:

[187] Վարդան Մատթէոսեան, ձեռագիր, էջ 3:

[188] Հ. Մօսկօֆեան. Պուէնոս Այրէսի գաղութին նախապատմականը - «Հայ Կեդրոն», հունվար 1933, № 3, էջ 6: Հոդվածի պատճենը հեղինակին տրամադրել է Վարդան Մատթեոսյանը:

[189] Նույն տեղում:

[190] Նույն տեղում: Տե՛ս նաեւ՝ Ոսկեմատեան. 1906-1931, էջ 407:

[191] Վարդան Մատթէոսեան, ձեռագիր, էջ 3:

[192] Kim Hekimian. Armenians Immigration to Argentina: 1909-1938, p.97; Տարեցոյց Հար. Ամերիկահայոց. Պուէնոս Այրէս, 1943, էջ 13:

[193] Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, էջ 15:

[194] Վարդան Մատթէոսեան, ձեռագիր, էջ 4-5:

[195] Kim Hekimian. Armenians Immigration to Argentina: 1909-1938, p.98.

[196] Ibid., p. 99.

[197] Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, էջ 75:

[198] Նույն տեղում:

[199] Kim Hekimian. Armenians Immigration to Argentina: 1909-1938, p. 98; Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, էջ 14:

[200] Narciso Binayan Carmona. Entre el pasado y el futuro: Los Armenios en la Argentina, p.235.

[201] Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, էջ 98:

[202] Նույն տեղում, էջ 99-100:

[203] Յուշարար, 1943 սեպտեմբեր, էջ 187:

[204] Յուշարար, 1947, դեկտեմբեր էջ 247:

[205] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 409:

[206] Տարեցոյց Հար. Ամերիկահայոց, էջ 317:

[207] Նույն տեղում, էջ 310:

[208] Ոսկեմատեան,. 1906-1931, էջ 410:

[209] Վարդան Մատթէոսեան, ձեռագիր, էջ 115-117:

[210] Ոսկեմատեան. 1906-1931, էջ 410

[211] Եզնիկ քահանայ Վարդանեան. Պրազիլիոյ հայ գաղութը: Պուէնոս Այրէս, 1948, էջ 291:

[212] Նույն տեղում, էջ 292:

[213] Նույն տեղում, էջ 294:

[214] Նույն տեղում, էջ 295:

[215] ՀԲԸՄ - 1972, էջ 40:

[216] Նույն տեղում:

[217] Հայ սփյուռք. Հանրագիտարան: էջ 121, 615:

[218] ՀԲԸՄ - 1927, էջ 49:

[219] ՀԲԸ Միութիւն. Տեղեկատու Եվրոպայի Կեդր. Յանձնաժողովի: Բարիզ, 1950, №1, էջ 2:

[220] «Յուշարար - Միութիւն», դեկտեմբեր 2000 - մարտ 2001, էջ 9:

[221] ՀԲԸՄ - 2002-2003:

[222] AGBU Magazine, june 1997, p. 2.

Վերջաբան. ՀԲԸ Միությունը Հայաստանի Երրորդ Հանրապետությունում

[1] Մելգոնեան Կրթական Հաստատությունը փակվելու է 2005-ի հունիսին: - «Առավոտ» (Երեւան), 19 մարտի, 2004:

[2] Տես, օրինակ, Հայկաշեն Ուզունեան. Պիտի փակուի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը. «Յետ դարձ չկայ»: - «Ազգ», 5 մարտի, 2005: Հ. Ուզունյանը, որը տարիներ շարունակ /մինչեւ 1995թ.) եղել է ՀԲԸ Միության Կենտրոնական Վարչության անդամ եւ փոխնախագահ, իր մեկ այլ հոդվածում գրում է. «Կեդրոնական Վարչութեան կազմէն ոչ ոք լաւ գիտէ Մելգոնեանի կարեւորութիւնը Միջին Արեւելքի, Սուրիա-Լիբանանի, Ծոցի երկիրներու, Պարսկաստանի, Արեւելեան Եւրոպայի, Պալքանեան երկիրներու մեր հայրենակիցներուն համար: Մելգոնեանը այս երկիրներուն համար չափազանց այժմէական է ազգապահպանման իմաստով եւ ամէն գնահատումէ վեր: ... Կեդրոնական Վարչութեան կողմէ առնուած սխալ քայլ մը Հաստատութիւնը փակելու, ՀԲԸ Միութեան ամենադժբախտ ու ամենաազգավնաս քայլը պիտի ըլլայ ...»: - «Ազգ», 13 մարտի, 2004:

[3] «Յուշարար-Միութիւն», հոկտեմբեր 2002, էջ 17:

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Ա

Ադանա՝ կոտորածը, 58

Ադիս Աբեբա, 50,

եւ ֆանֆառի խումբը, 125 -126

Ազգային պատվիրակություն, 77, 137, 152,

եւ Ազգային հանգան., 88,

եւ ՀԲԸՄ, 88, 110, 117, 135, 138,

Պ.Նուպարը՝ նախագահ, 77- 80. 86, 88, 89, 165

Ազգանվեր հայուհյաց ընկերություն, 76

Ազգերի Լիգա -ՀԲԸՄ, 157, 159 -160, 215, 231,

Նանսենյան գրասենյակ, 158 -159, 209 - 210, 216, 231, 233 - 234

Ալեքսանդրետից՝ գաղթականները (1939), 161,

Այնճարում, 163,

արտագաղթ, 162,

Բեյրութում, 163,

Համազգային հանգան., 162,

Նպաստից Կենտ. հանձն., 163,

Ռաս էլ Այնում, 163,

ֆրանս-թուրք. համաձայնագիր,161-162

Ալիանս Իսրայելիթ, 34 - 37, 65

Ամերիկահայ Ազգային խորհուրդ եւ ՀԲԸՄ, 336 - 337

Ամերիկահայ Առաջադիմական միություն, 336, 369

Ամերիկյան Նպաստամատույց, 101, 135, 142 -143,159, 207, 385 - 386,

եւ ապազգային կրթությունը, 137-138,

եւ ՀԲԸՄ, 110, 120, 144-147,169,

եւ որբանոցները, 127, 137, որբերի արձակում, 129 -131, 141,

Որբերի կիրակի, 143 -147:

Տես նաեւ՝ Որբեր, Որբանոցներ, Գաղթատներ

ԱՄՆ-ում՝ ՀԲԸՄ, 86, 147-149, 328 - 330, 345 - 346, 462 - 465,

«ամերիկյան երազանք», 469 - 470,

անգլիախոս մասնաճյուղեր, 468 - 469,

«Անդրանիկ» պարախումբ, 478,

Ամառնային Փորձառական Ծրագիր, 521,

«Արարատ» քեմպ, 478,

երիտասարդական հանձն., 472,

երիտասարդ պրոֆեսիոնալներ, 521,

Լիբանանահայության օգնության հանգան., 444,

Կեդրոն (Պասադինա), 489,

Կրկնապատիկի կոչ, 150-151,

Կրտսերների լիգա, 345, 388, 466 - 467, 473,

«Հայ», 150,

Հայ երիտասարդաց ընկերակցություն, 473, 476,

Հայագիտական ամբիոններ, 522 - 523,

Հայոց լեզվի ամառնային ինստիտուտ, 522,

հանգան., 151, 465,

Մեծ ճգնաժամ, 153 -154,

միօրյա վարժ., 464 - 465, 480,

մշակութային, 478-479,

մշակութափոխում, 463, 482 - 483,

«Յուշարար», 150,

Նախագահական ակումբ, 521,

ներգաղթ Արեւելքից, 474 - 476, 486 - 487,

«Նուպար» քեմպ, 477- 478,

սոցիալական կենտրոններ, 475,

տիկնանց մասնաճյուղեր, 345, 431, 439,

«Hoosharar», 522, Focus, 522:

Տես նաեւ՝ Երկրորդ Աշխարհամարտ, Մարզախաղեր, Վարժարաններ

Անգլիական հայանպաստ կոմիտե, 159

Անդրֆեդերացիա, 251 - 252, 279,

եւ Խորհրդային Հայաստան, 238, 253 - 254, 262 - 264, 267 - 269, 272, 277 - 280, 284 - 285

Անի Հայ արվեստագետների խմբակցություն, 310

Առաջադիմական Հայ ճակատ (Սիրիա), 435

Ավստրալիայում՝ ՀԲԸՄ, 517,

Անդրանիկ պարախումբ, 517,

Երեւան նվագախումբ, 517,

երիտ. հանձնաժողով, 518,

էրեբունի ռադիոժամ, 517,

Գ. Կիլպենկեան գրադարան, 517,

մարզ. հանձնաժողով, 518,
Ա.Մանուկեան կենտրոն, 517,
Ա.Մանուկեան միօրյա վարժարան, 517:
«Միութիւն» 517,
Յ. Պարոնեան թատերախումբ 517:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Մարզախաղեր
Արգենտինայում՝ ՀԲԸՄ, 502,
եւ Ազգային միությունը, 505,
եւ Արգենտինայի հայ եկեղեցասիրաց Միությունը, 504,
Բարեգործականի տուն, 508,
եւ Գաղութային միությունը (Կորդովա), 509,
Երիտասարդական լիգա, 507- 509,
«Լուսաբաց», 514,
Կեդրոն (Կորդովա), 515,
Կորդովայում, 405, 509,
եւ կուսակցությունները, 506-507,
Հայ գաղութի բարեգործական եւ լսարանական միություն, 502,
եւ Հայ պատանեկան միություն, 507,
հանգանակություններ, 506 - 507,
եւ Հայ քրիստոնեական միությունը, 505,
Հար. Ամերիկայի պատգամավորական ժողով, 514,
Հար.Ամերիկայի երգչախմբերի փառատոն, 514,
Ա. Մանուկեան կեդրոն (Բուենոս Այրես), 514, 516,
մասնաճյուղերը, 345, 502 - 504,
«Generacion 3», 514:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Մարզախաղեր
Արեւելյան (Հայկական) Լեգեոն, 93-94, 334-335
Արեւելյան Հայաստանում՝ ՀԲԸՄ, 14,
գաղթականներ, 81-82,
Ընդհանուր Հանգանակություն, 83, 85, 89,
եւ կամավորական ջոկատները, 85-86,
մասնաճյուղի հարցը, 83-85,
նպաստ Կովկասի հայության, 51,
Ստիպողական Կոչ ..., 82-83
Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում՝ ՀԲԸՄ (1906-1914), 37- 39,
«Արտագաղթի դեմ», 54 - 55,
դպրոցներ, 62, 64 - 67, 76,
մասնաճյուղեր, 51, 58,
նպաստներ, 50 - 53, 76,
Վանի վարժապետանոցը, 66 - 68,
Քէլէկեան որբանոցը, 47- 48:
Տես նաեւ՝ Թուրքիայում՝ հայերը
Արծրունի վարժ. (Բուենոս Այրես), 516

Բ

Բաքվի Հայոց մարդասիրական ընկերություն, 14, 83
Բեյրութի Ամերիկյան համալսարան, 164, 423, 425, 427
Բրազիլիայում՝ ՀԲԸՄ, 511 - 513,
Արմենիկ, 515,
Կեդրոն-համալիր, 515:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Մարզախաղեր
Բեռլինի վեհաժողով, 13,
եւ Նուպար փաշա, 18-20
Բուլղարիայում՝ ՀԲԸՄ, 494 - 495,
Կրտսերների Լիկա, 495,
վերահիմնում, 495,
միօրյա դպրոցներ, 496,
ամառային ճամբար, 496:
Տես նաեւ՝ Մարզախաղեր

Գ

Գաղթատներ սփյուռքում՝ ՀԲԸՄ, 102, 113,
Աղջկանց Կայան (Ալեքսանդրիա), 139,
Աղջկանց Կայան (Կահիրե), 139,
Աշխատանոց (Աթենք), 135-136,
Աշխատավոր սաներու կայան (Հալեպ), 130-131,
Աշխատանոց (Սալոնիկ), 136,
Ապաստարան (Բեյրութ), 158,
Գաղթատուն (Հալեպ), 114,
Ինքնօգնության հանգանակություն, 129 -130,
կանանց ազատագրում, 98 -100,
Կանանց Ապաստարան (Հալեպ), 100-101,
Հայ աղետյալներու հիմնադրամ, 114,
Մանչերու կայան (Հալեպ), 131,
Պատսպարան - աշխատանոց (Բեյրութ), 130 -132:
Տես նաեւ՝ Որբանոցներ, Կիլիկիայում՝ ՀԲԸՄ (1918-1921), Պորտ Սայիդ

Դ

Դպրոցասեր Տիկնանց Ընկերություն, 76

Ե

Եգիպտահայ Նպաստամատույցի Հանձնաժողով, 96
Եգիպտոսի Հայ Կարմիր Խաչ, 91
Եգիպտոսում՝ ՀԲԸՄ, 15-16, 453-454,
Գնմանց եւ Առաքմանց Հանձնախումբ, 96, 121,
Երիտասարդական մշակութային մարմին, 454,
Հանդերձարանի տիկնանց հանձնախումբ, 95 - 96, 121,
Հէքիմեան մարզարան, 453, ՀՄԸՄ, 392, 454,
Մշակույթի կիրակի, 147,
Նուպար միություն, 392, 453,
Ս. Չաքըր հիմնադրամ, 454 - 456,
Օլիմպիական տարին, 454:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Գաղթատներ, Մարզախաղեր, Պորտ Սայիդ
Երկրորդ Աշխարհամարտ, 309, 314 - 315, 347- 348,
եւ կուսակցությունները, 335 - 336,
եւ Համազգային հանգան., 332 - 333,
եւ սփյուռքը, 312 - 313, 314, 330 - 331, 349 - 350,
եւ Հայկական հանձնախումբը, 332,
եւ ռուս գաղթաշխարհը, 312 - 313, 321, 348 - 349,
եւ Ռուսական նպաստամատույցը, 333,
Սասունցի Դավիթ հանգան., 334-335
Երկրորդ Աշխարհամարտ՝ ՀԲԸՄ, 314, 315, 331 - 332, 334 - 335, 336 - 337,
արժեքների փոխադրումը, 315 - 316,
կենտրոնի փոխադրումը, 317,
Կես միլիոնի հանգան., 344 - 346,
«Մեր զինվորների համար», 313,
Պատերազմի հայ աղետյալներու օգնության հանգան., 332,
Քառորդ միլիոնի հանգան., 339 -344,
Ֆրանսիական բանակի հայ զինվորների օգնության հանգան., 313
Երուսաղեմի Հայոց Պատրահիրքարան, 120 -124, 413:
Տես նաեւ՝ Որբանոցներ

Թ

Թաֆիլեի վերապրողները, 96
Թէքէեան մշակութային միութիւն, 446, 501
Թէքէեան վարժարան (Բեյրութ), 445
Թիֆլիսի Կենտրոնական Նպաստից Հանձնաժողով, 82
Թոկատի կրթ. ընկերակցություն, 182
Թուրքիա, 12-14, 61- 62
Թուրքիայում հայերը, 2-14, 61- 62,
արտագաղթը, 53-54,
եւ Բարենորոգումները, 77- 80,
եւ երիտթուրքերը, 56-57,
հայկական դպրոցները, 62,
«միլլեթ», 71,
մշակութափոխումը, 65-66, 403-404,
եւ 1908-ի սահմանադրությունը, 57-59,
1894 - 96-ի ցեղասպանությունը, 13,
1915-ի ցեղասպանությունը, 80-82, 89-90, 96, 105-106, 134:
Տես նաեւ՝ Արեւմտյան Հայաստանում եւ Կիլիկիայում՝ ՀԲԸՄ (1906-1915)

Ժ

Ժնեւ՝ Երիտասարդ պրոֆեսիոնալներ, 521

Ի

Իրանում՝ ՀԲԸՄ, 458,
Երիտասարդական հանձն, 458-459,
սահմանափակումները, 460,
սկաուտները, 459:
Տես նաեւ՝ Վարժարաններ
Իրաքում՝ ՀԲԸՄ, 456 - 457,
հայ լեզվի դասընթացներ, 457,
մշակութային, 456 - 458,
Օհան մարզական միություն, 457:
Տես նաեւ՝ Նահր էլ Օմար

Լ

Լիբանան՝ հայ համայնքը, 443 - 444,
գաղթականները, 108-109, 296, 427,
քէմպերը, 146, 156 -157, 209, 233 - 234, 427
Լիբանան՝ քաղաքացիական պատերազմը, 442- 446,
արտագաղթը, 444 - 457,
եւ դպրոցները, 447- 450,

հետեւանքները, 446 - 448,
Միջ-բարեսիրական միութիւն, 445,
Տնտեսական Բարելավումի Հայկական Հիմնադրամ (AFED), 445
Լիբանանում՝ ՀԲԸՄ, 108-109,
Ալ. Մանուկեան Կեդրոն, 442, 445-446, 448,
Ալ. Մանուկեան մշակութային տուն (Զահլե), 445,
Բարեշեն, 158,
Երիտասարդ պրոֆեսիոնալներ, 521,
Զ. Մովսիսեան Կեդրոն, 446, 447,
«Խօսնակ», 402 - 403,
Կիւլլապաշեն, 158,
Հայ երիտասարդաց Ընկերակցություն, 390 - 391, 393 - 394, 425, 446, 452,
«Հիւսիսեան Հայագիտական Հանդէս», 440,
ՀԵԸ Ասպետներու խումբ, 442,
Մամլթեյնի սանաթորիում, 158,
մշակութային, 396, 446,
Ն. Նազարեան Շենք, 452,
Եր. Տեմիրճեան Կեդրոն, 450-451,
Ուսանողաց միություն, 402, 442,
Վ. Փափազեան թատերախումբ, 396,
«The Khosnag Supplement», 403:
Տես նաեւ՝ Գաղթատներ, Մարզախաղեր, Որբանոցներ, Վարժարաններ
Լիբանանի կոմկուսի մասնաճյուղ, 442
Լոզանի խորհրդաժողով, 152,153

Խ

Խորհրդային Հայաստան, 167-168,
եւ «ազգ. օջախը», 223, 230 - 232, 234 - 235,
եւ «դաշնակցական - ռամկավարական կենտրոն», 287-288, 302-305,
եւ Կյուլպենկյանի նվիրատվությունները, 247 - 249,
ներքաղաքական պայքարը, 236 - 238, 253 - 256,
որբանոցները, 172, 176 -177,
եւ սփյուռքը, 168, 172, 204 - 205, 436 - 437,
1937 թ. բռնադատումները, 284 - 290:
Տես նաեւ՝ Խորհրդային Հայաստանում՝ ՀԲԸՄ, Ներգաղթ
Խորհրդային Հայաստանում՝ ՀԲԸՄ, 168 - 169, 172, 174, 258 - 262,
Բարեգործականի Տուն, 186 -189, 259,
Հ.Գարակյոզյանը, 297- 307,
Գյուղ. ծրագրեր, 175,
գործելու արտոնությունը, 171-172,
Դպրոցներ, 194, 259, 260,
Երկրագործական բանկ, 196,
Երկրաշարժ (1926), 206,
Երկրաշարժ (1988), 527,
լուծարման արձագանքը, 294 -296, 356,
լուծարումը, 291- 292,
կապերի վերականգնում, 338 - 339,
Կյուլպենկյանի հրաժարականը, 223 - 228, 231 - 237, 239 - 242,
Հանրային գրադարան, 190-191,
Մելգոնյան ֆոնդ, 190-192, 259, 274, 277, 291 - 292, 413,
մեղադրանքները, 195 - 197,
Դ. Յակոբեան Մայրանոց, 26, 182-184, 186, 259, 296, 339,
Նոր Եվդոկիա, 180 - 182, 218,
Մ.Նուպար Ակնաբուժարան, 184 -185, 218, 259, 339,
Նուպարաշեն, 197- 201, 256 - 257, 259 - 260, 266 - 267, 269 - 270, 273 -276, 283,
Նուպարեան մրցանակ, 192-193, 296,
որբերի տեղափոխումը, 170, 172 -173, 176 -180,
Չաքըրի եւ Գավուկչյանի այցը, 354-358,
համալսարան, 189 -191, 193, 243, 296, 339, 413,
Ա.Սարգիս կայան, 185 -186:
Տես նաեւ՝ Խորհրդային Հայաստան, Ներգաղթ
Խորհրդային Միություն, 167-168, 349,
բռնադատումները, 287 - 289, 304 - 306,
Ա.Եսայանը Մոսկվայում, 272 - 276,
եւ Կյուլպենյանը, 242 - 247,
եւ ՀԲԸՄ-ի նամակները, 281 - 283,
Ստալինի եւ Մոլոտովի որոշումը, 269-271, 291 - 292
Խորհրդային Վրաստանում՝ հայերը, 278 - 279

Խրիմեան կրթարան (Բուենոս Այրես), 516

Կ

Կալկաթայի երիտասարդաց միություն, 50
Կանադայում՝ ՀԲԸՄ, 496 - 497,
Ալ.Մանուկեան կեդրոն, 500,
Ալ.Մանուկեան փողոց, 501,
Արմեն-Օնտարիո, 499,
Երիտասարդ պրոֆեսիոնալներ, 521,
«Խօսնակ», 500,
մշակութային, 500,
Մոնրեալում, 498, 500,
Ներգաղթ Արեւելքից, 498 - 499, 501,
«Նոր Հայք», 501, «Տեսիլք», 500,
Տորոնտոյում, 498-500:
Տես նաեւ՝ Մարզախաղեր, Վարժարաններ
Կանադայի Հայ Միութիւն, 498
Կանադայի Հայկական Նպաստամատույց՝ «Ճորճթաունի տղաքը», 497
Կենտրոնական վարչություն՝ ՀԲԸՄ, 29-30,
անձեռնմխելի ֆոնդ, 39-41, 196 - 197, 472, 526, 529,
Երդումնագիր, 44, 195,
կանոնագիր, 37,
մասնաճյուղեր, 43, 73-74, 76,
«Միութիւն», 69-70, 74-75, 492,
«Յուշարար - Միութիւն», 522,
նպատակները, 37-39,
ոչ քաղաքական, 41, 59 - 61, 87,
պառակտման վտանգը, 329-330,
«AGBU News», 522-523
Կենտրոնատեղի՝ Կահիրե, 15, 22,
Փարիզ, 311,
Նյու Յորք, 316 - 317, 324, 326, 479,
Սեղ Բրուկ - 479
Կիլիկիայում՝ ՀԲԸՄ (1918-1921), 97- 98, 102,
այրիանոց (Ադանա), 101,
դարմանատուն (Ալեքսանդրետ), 103 - 104,
դարմանատուն (Տյորթ Յոլ), 104,
դպրոց (Մերսին), 103,
հիվանդանոց (Հաճըն), 105,
հիվանդանոց (Մերսին), 102,
հիվանդանոց (Տյորթ Յոլ), 104,
մանկապարտեզ (Մերսին), 103,
Նուպարեան վարժարան (Ալեքսանդրետ), 103,
որբանոց (Հաճըն), 105,
որբանոց (Մերսին), 103, 128,
Սիսուան որբանոց (Տյորթ Յոլ), 104, 106 -108,
Սիսուան վարժարաններ (Սուեդիա), 103,
վերջին ելքը, 106-108,
Քէլէկեան որբանոց (Տյորթ Յոլ), 104, 107-108
Կիւլպէնկեան Գալուստ Հիմնարկութիւն, 431, 432, 439, 460
Կիւլպէնկեան Կիւլլապի Հիմնարկութիւն, 432, 158
Կոմիտասի աճյունի փոխադրումը, 216 - 217
Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերություն, 14, 83
Կ.Պոլսի Հայոց Պատրիարքարան, 296, 410 - 413, 505

Հ

Հաճըն՝ կոտորածը, 105-106
Հայ Առաքելական Եկեղեցի, 20, 70, 352, 404,
Ազգային եկեղեցական ժողով (1945), 352 - 354, 357,
Արեւմուտքի երկրներում, 310, 313, 332, 341, 444, 463, 497,
եւ ՀԲԸՄ, 22-23, 72-73, 112,148 -149, 162, 248 - 249, 341, 438, 445, 528 - 529,
Կիլիկիո կաթողիկոսություն, 162, 387-389, 437, 439,
Պառակտումը (1956 թ.), 436 - 438, 493
Հայ Ավետարանական եկեղեցի, 70-71, 73, 403, 404, 463,
եւ ՀԲԸՄ, 71-72, 148-149, 341, 430, 445
Հայ բժշկական միություն (Փարիզ), 310
Հայ Գաղթականաց կենտրոնական հանձնաժողով, 310, 313
Հայ գրողներու միություն (Փարիզ), 323
Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն (ՀԵԸ), 386-387,
եւ ՀԲԸՄ, 388 - 390:

Տես նաեւ՝ Մերձավոր Արեւելքի Ընկերակցություն
Հայ Կաթոլիկ եկեղեցի, 70 -71, 73, 404, 435, 469,
եւ ՀԲԸՄ, 71-72, 162, 430, 445,
Վենետիկի Մխիթարյան միաբանություն, 319,
Վիեննայի Մխիթարյան միաբանություն, 319
Հայ կեդրոն (Մոնրեալ), 501
ՀՀ Դաշնակցություն, 58-59, 86, 89, 387, 442, 458,
եւ Խորհրդային Հայաստան, 204, 223 - 225, 230, 291, 336, 367, 370 - 371, 436 - 437,
եւ ՀԲԸՄ, 86, 89, 148, 168, 220, 223-225, 240-241,
եւ նացիստական Գերմանիա, 321-323, 371, 376 - 377
Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միություն, 387, 394
Հայ Մարմնամարզական Միություն, 387, 392, 394
Հայ Նպաստի Հանձնախումբ (ԱՄՆ)
Հայաստանի Երկրորդ Հանրապետություն, տես՝ Խորհրդային Հայաստանում՝ ՀԲԸՄ
Հայաստանի Երրորդ Հանրապետությունում եւ Ղարաբաղում՝ ՀԲԸՄ, 527-529
Հայաստանի Օգնության Կոմիտե (ՀՕԿ), 171, 217, 381,
Հայաստանում, 187, 216, 256, 258, 264-265, 272, 277, 286,
արտասահմանում, 217-218, 220, 287, 293,
եւ ՀԲԸՄ, 174, 188, 218 - 223,
Ներգաղթի ֆոնդի կենտրոնական մարմին, 219 - 220,
լուծարումը, 290 - 293
Հայկական Համաշխարհային Կոնգրես, 366-368,
եւ ՀԲԸՄ, 367- 368, եւ ԱՄՆ, 366-367,
եւ կուսակցությունները, 367
Հայկական հարց, 13, 351, 358-360
Հայրենակցական միությունները եւ ՀԲԸՄ, 200, 259-260
Հաուարդ Գարակյոզյան հիմնարկություն, 164, 325, 527
Հորդանանում՝ ՀԲԸՄ, 461
Հունաստանում՝ ՀԲԸՄ, 133-134,
Արարատ միություն (Աթենք), 493,
գաղթականներ, 134-135,
Դարմանատներ, 137,
Թատերական եւ Մշակութային միություն (Սալոնիկ), 493,
Հայ երիտասարդաց միություն - 493,
Տիկնանց հանձնախումբ (Աթենք), 136,
Տես նաեւ՝ Գաղթատներ, Վարժարաններ

Ճ

Ճապոնիա, 49

Մ

Մանուկեան Ալեք եւ Մարի, թանգարան, 484
Մանուկեան հանգստեան տուն, 484
Մանուկեան Ալեք եւ Մարի, հիմնադրամ, 471, 521 - 522
Մանուկեան Ալեք, Մշակութային հիմնադրամ, 446, 471, 522
«Մասքո», 470 - 471
Մարաշ՝ կոտորածը, 105
Մարզախաղեր՝ ՀԲԸՄ, Եվրոպայի, 492, 496,
Ամերիկայի, 476 - 477, 515,
Նավասարդյան, 391, 394, 446, 477, 496, 514, 517-518,
Համահայկական, 394-395
Մելգոնեան եղբայրների նվիրատվությունը, 189, 410, 413,
փոխանցումը ՀԲԸՄ, 411-413,
եւ ՀՕԿ-ը, 411-412:
Տես նաեւ՝ Մելգոնեան կրթական հաստատություն
Մելգոնեան կրթ. հաստատութիւն, 126, 296, 413, 441,
հիմնումը, 413-414,
կրթական ծրագրերը, 414-416, 418-419,
Վարժապետանոցը, 416-418,
«չքավորության» չափանիշը, 417,
շրջանավարտները, 388, 419, 493,
ընդլայնումը, 420 - 421
փակելու որոշումը, 526

Մեսրոպեան վարժարան (Լոս Անջելես), 480
Մերձավոր Արեւելքի Ընկերակցութիւն, 385 - 387, 391:
Տես նաեւ Հայ Երիտասարդաց Ընկերակցություն
Մերձավոր Արեւելքի հիմնադրամ, 164, 389
Միացյալ Ազգերի Կազմակերպություն, 366
Միացյալ Ընկերություն (Կ.Պոլիս), 62 - 65, 76, 274
Մխիթարեան վարժարան (Բեյրութ), 296
Միջագետքի տարագրելոց նպաստամատոյց, 121
Միջազգային Կարմիր Խաչ, 210 - 211
Մուսա լեռ՝ ինքնապաշտպանություն, 90, 162:
Տես նաեւ՝ Պորտ Սայիդ

Ն

Նահատակ գրողներու մատենաշար (Փարիզ), 323
Նաիր էլ Օմար, գաղթական, 116 -118,
եւ Ամերիկյան նպաստամատույցը, 120,
եւ ՀԲԸՄ-ի շրջաբերականը, 118 -120,
եւ որբերի տեղափոխումը, 118, 121-122
Ներգաղթ Հայաստան (1920-30), 206-207, 210-211, 215 - 217, 255 - 256,
եւ Ա.Եսայանի զեկուցագրերը, 252, 258 - 262,
եւ իշխանությունները, 203 -205, 207-208, 212,
Դեպի Հայաստան ներգաղթի հանգան., 206,
եւ Կյուլպենկյանի կոչը, 209,
եւ ՀԲԸՄ, 206 - 210, 212 - 216,
Ներգաղթածների վիճակը, 213 - 214, 216, 255, 267:
Տես նաեւ՝ Խորհրդային Հայաստան, ՀՕԿ
Ներգաղթ Հայաստան (1946-49), 231, 360-361, 365, 372, 381-382,
եւ ԱՄՆ, 366-367, 369, 371-372,
Երկրորդ միլիոնի հանգան., 365 - 366,
եւ Իրանը, 369-370,
Մեկ միլիոնի հանգան., 362,
ներգաղթի կոմիտե, 362-363, 365,
ներգաղթածների վիճակը, 372-374,
եւ Ստալինի ծրագիրը, 350-354, 358-360,
1949թ. արտաքսումը, 374-377:
Տես նաեւ, Խորհրդային Հայաստան
Նշան Փալանճեան ճեմարան, 445
Նոր Գվինեա, 50
Նուպարեան սաներու հիմնարկություն (Բրյուսել), 193, 296, 518

Ո

Որբախնամ (Միացյալ) ընկերություն (Կահիրե), 76,110
Որբեր, 97- 98, 127-128,
ազատագրում, 99,
Ազատագրումի հիմնադրամ, 99 - 100,
ազգ.-հոգեբանական նկարագիրը, 111, 115-116, 140-141,
թրքացում, 98, քանակը, 127:
Տես նաեւ՝ Գաղթատներ, Ամերիկյան նպաստամատույց, Որբանոցներ
Որբանոցներ սփյուռքում՝ ՀԲԸՄ, Արարատեան (Երուսաղեմ), 110, 122-123, 126-128, 132, 178,
Արհեստանոցներ, 131-132,
Կեսարիայի որբերը, 110 -111,
Կիլիկեան Արհեստանոց-որբանոց (Հալեպ), 128-129, 178,
Ղընիեյի որբերը, 54,
Ճունիեյի որբերը, 110-111,
Որբ ընդ Որբուհի, 133,
Որբանոց (Մոսուլ), 121,
Որբանոց (Սալոնիկ), 136-137,
Որբանոց - կայաններ (Գավալա), 137,
Վասպուրական (Երուսաղեմ), 110, 123-124, 126-128, 133,
ուսուցումը ու դաստիարակումը, 92, 112-115, 123, 127-129, 131-133,
Քէլէկեան - Սիսուան (Բեյրութ), 109-113, 126-128, 132-133, 137,157, 178:
Տես նաեւ՝ Ադիս Աբեբա, Ամերիկյան Նպաստամատույց, Գաղթատներ, Որբեր, Պորտ Սայիդ
Որբերի պաշտպանության կոմիտե (Փարիզ), 141

Պ

Պոտսդամի կոնֆերանս, 359
Պորտ Սայիդ, 90 - 91, 95,
այրիանոց, 95,
պոյ-սքաուտ, 93,
որբանոց, 94-95,

Ս

Սիսուան վարժարան, 91- 92, 94,
վրանավան, 91

Ռ

Ռամկավար Ազատական կուսակցություն, եւ Խորհրդային Հայաստան, 336, 436, 437,
եւ ՀԲԸՄ, 168, 274, 335, 408 - 409,
Սահմանադրական Ռամկավար, 86, 89, 240
Ռուս ուղղափառ եկեղեցի, 333
Ռուսահայ կանանց միություն, 310
Ռուսաստան, 12, 14, 349

Ս

Սահակեան-Մկրտիչեան կոլեջ, 445
Սիրիայում՝ ՀԲԸՄ, 113-114, 405 - 406,
Ադամեան թատերախումբ, 396 - 397,
Ասլամազեան քառյակ, 398,
գաղթականներ, 113, 296, 427,
Գամիշլի, 160, 403-405,
«Գեղարդ. Սուրիահայ տարեգիրք», 403,
Գ. Եագուպեան կեդրոն (Քամիշլի), 405,
Ն. Եագուպեան կեդրոն (Դամասկոս), 406,
Ընտանեկան Ակումբ, 399 - 401,
թատերական, 396,
Կազդուրման կայան (Քեսապ), 402,
Հայ Օրիորդաց միություն, 100-101,
Հայաշեն, 159 -160,
ՀԲԸՄ -ՀԵԸ կեդրոն, 431,
ՀԵԸ, 390 - 393,
մարզական, 390 - 392,
Մեսրոպաշեն, 160,
մշակութային, 397, 400,
Նորաշեն, 159-160,
«Ջահ», 392,
Սահակաշեն, 160,
Սարեան Ակադեմիա, 401,
սկաուտական, 393 - 394,
Սպենդիարեան երգչախումբ, 397-398,
վերաբնակեցումը, 157,
Տիը Եանկ Սթարզ, 399,
Ուսանողական բաժին, 401- 402,
քէմպերը, 146, 156, 209, 233 - 234, 427:
Տես նաեւ՝ Որբանոցներ, Վարժարաններ, Գաղթատներ, Մարզախաղեր
Ս.Դ. Հնչակյան կուսակցություն, 387, 442,
եւ Խորհրդային Հայաստանը, 336, 436 - 437,
եւ ՀԲԸՄ, 148, 335,
Վերակազմյալ Հնչակյան, 86-87
Սուեդիա, 54, 90

Վ

Վասպուրական մարզական միություն, 392
Վարժարաններ Արեւելքում (ամենօրյա)՝ ՀԲԸՄ, 434 - 435,
Առեւտրական (Բեյրութ), 441,
Արմենեան (Հալեպ, Աճուրլուք), 432-433,
Լ. Գարակյոզանի զեկույցը, 425 - 429, 431,
Դարուհի - Յովակիմեան (Բեյրութ), 448, 452,
Կարմիրեան (Անթիլիաս), 439, 448, 450, 452,
Կիլիկեան (Տերպեսիե), 433,
Կ.Կիւլպէնկեան (Դամասկոս), 432,
Ն. Կիւլպէնկեան (Թեհրան), 460,
Հանգան. Մերձավոր Արեւելքի վարժարանների համար, 429-430,
Յուսիսեան Հայագիտական Հիմնարկ (Բեյրութ), 440,
Մ. Մանուկեան (Թեհրան), 460,
Մեսրոպեան (Հալեպ, Շեյխ Մաքսուտ), 433,
Յովակիմեան - Մանուկեան (Բեյրութ), 392, 424-425, 428, 441, 447-448,
Նազարեան (Բեյրութ), 440 - 441, 447, 452,
Նախակրթարան (Անթիլիաս), 439,
Նաճարեան -Կիւլպէնկեան (Հալեպ), 398, 401, 431- 432,
Նուպար (Թեհրան), 459,

Նուպարեան վարժարան (Հելիոպոլիս), 296,
Սարաֆեան Ա. (Այն էլ Արաբ) 433-434,
Տեմիրճեան (Բեյրութ), 439 - 441, 447-448, 451:
Տես նաեւ՝ Մելգոնեան կրթական հաստատութիւն, Պորտ Սայիդ
Վարժարաններ Արեւելքում (նպաստընկալ), 406 - 410, 428 - 429, 432,
Իւզպաշեան - Կիւլպէնկեան (Ամման), 461,
Յագուպիեի Վերածնունդ, 434,
Վ. Պետրոսեան (Մեսրոպեան) Գարատուրան, 434,
Վարդանեան (Ճարապլուս), 434, Քեսապի ազգային, 434
Վարժարաններ Արեւմուտքում (ամենօրյա)՝ ՀԲԸՄ, 463, 465 - 466, 480 - 483,
Ալեքսանդր (Սիդնեյ), 517,
Աղաթօն (Սալոնիկ), 493,
Արմեն-Քեպէք - Մանուկեան (Մոնրեալ), 501,
Գալփաքեան (Աթենք), 493 - 494,
Դպրոցասեր Տիկնանց (Ռեյնսի), 76, 311, 492,
Զարուկեան (Տորոնտո), 500,
Մանուկեան (Սաութֆիլդ), 483-484,
Մանուկեան (Մոնտեվիդեո), 516,
Մանուկեան (Բուենոս Այրես), 516,
Մանուկեան - Տեմիրճեան (Կանոկա Պարք), 486 - 489,
Նուպարեան (Մոնտեվիդեո), 516,
Պազարեան (Սան Պաուլո), 517,
Ուոթըրթաունի, 484 - 486
Վիսենտե Լոպեսի վարժարան, 76

Տ

Տյորթ Յոլ, 104 - 105,
ինքնապաշտպանությունը, 47
Տուրգենեւյան գրադարան (Փարիզ), 321
Ուսանողական կրթաթոշակներ՝ ՀԲԸՄ, 520
Ուրուգվայում՝ ՀԲԸՄ, 510,
Բարեգործականի կեդրոն, 516,
Բարեգործականի Ջայն, 515,
Գույումճեան մարզարան, 516,
Երիտասարդական Լիգա, 509, 511, 515,
եւ Հայ բնակիչներու կեդրոն, 511,
սկաուտներ, 515:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Մարզախաղեր

Փ

Փարիզի Հայ տիկնանց միություն, 310, 313
Փարիզի ուսումնասիրաց ընկերություն, 76
Փարիզում՝ ՀԲԸՄ, 310 - 311, 462 - 463, 490,
Ամառնային ծրագրեր, 521,
Բարեգործականի Տուն, 490,
գերեզմանատուն, 319,
Երիտասարդական Ակումբ, 490,
ՀԵԸ, 318,
Հայ Օրիորդաց միություն, 490,
Մանուկեան կեդրոն, 491,
Մելգոնեան մատենաշար, 318,
«Նոր Շինարար», 492,
Մ.Նուպար Ուսանողական տուն, 311, 520,
Նուպարեան մատենադարան, 311, 455, 492,
եւ նրա կողոպուտը, 319-324,
«Շինարար», 492,
«Տեղեկատու», 492,
Փարիզի Կեդրոնական ժողով, 317-319,
«La lettre de l'UGAB», 492,
«l'UGAB Magazine», 492:
Տես նաեւ՝ Վարժարաններ, Մարզախաղեր, Ֆրանսիայում՝ ՀԲԸՄ
Փրկության հանգանակություն, 151

Ֆ

Ֆերահեան վարժարան (Լոս Անջելես), 480
Ֆրանսահայ Կապույտ խաչ, 310 - 313
Ֆրանսիայում՝ ՀԲԸՄ, 311- 312, 462 - 463, 490,
Բարեգործականի Տուն (Մարսել), 315, 490,
գաղթականներ, 310-311,
Երիտասարդական Ակումբ (Մարսել), 490-491,
Երիտասարդական Մարմին (Վալանս), 491,
Կեդրոն (Լիոն), 491,
ՀԵԸ (Մարսել), 319,

Հայ Երիտասարդաց Միություն, 490,
Միօրյա վարժարաններ, 492, 464 - 465,
չափահաս որբեր, 141-142:
Տես նաեւ՝ Փարիզում՝ ՀԲԸՄ
Ֆրանսիայի Հայ Ազգային ճակատ, 354
Ֆրանսիան՝ Կիլիկիայում, 105 -107, 161-162

Ա

Աբբաս փաշա, 16
Աբգարյան, Սեպուհ, 520
Աբդուլ Համիդ, 56
Աբեղյան, Արտաշես, 321-323
Աբեղյան, Մանուկ, 190
Աբրահամյան, Աշոտ, 351
Ագնիաշվիլի, Պ., 263
Ադոնց, Նիկողայոս, 138, 318, 319
Ադոյան, Ադո, 284
Ազատյան, Երվանդ, 476
Աթաթուրք, Քեմալ, 105,106
Աթթարյան, Ալեքսան, 431
Ալեքսանդր ամուսիններ, 517
Ալթունյան, Հակոբ, 446-447, 451
Ալխազյան, Հովհաննես, 310
Ալպոյաճյան, Արշակ, 454
Ախշարումյան, Ալեքսանդր, 248
Ակոբյան, Երանուհի, 182
Ակոբյան, Թագվոր, 182
Ակոբյան, Լեւոն, 182, 311
Ակոպով, Աթանես, 236
Ակոպով, Ստեփան, 251-253, 269, 280, 290
Ահարոնյան, Աշոտ, 184
Ահարոնյան, Ավետիս, 152, 240
Ահարոնյան, Գերսամ, 419, 440
Աղաբեկով, Գեորգի, 247
Աղաթոն, Գեւորգ, 25
Աղաթոն, Երվանդ, 22, 25-27, 32-34, 49, 64, 72, 146, 171, 182, 195, 311,496
Աղաջանյան, Կարապետ,310
Աղասյան, Մ., 134
Աղեկյան, Մարտիրոս, 286
Աղպաշյան, Պարույր, 403
Աճառյան, Հրաչյա, 190
Ամատունի, Ամատուն, 216, 236, 258, 264, 268-269, 278, 280, 287-291, 293, 299
Անդրանիկ, զորավ., 101, 151
Անդրանիկյան, Մկրտիչ, 22, 29-30, 32, 34-35, 64
Անդրեասյան, Անդրանիկ, 384
Անժուր (Չեբոտարյան), Հարություն, 191
Անտոնյան, Արամ, 313, 320-323, 407
Ապտուլյան, Դանիել, 419
Ապրեսյան, Ստեփան, 341
Առաքելյան, Համբարձում, 84
Առաքելյան, Սեդրակ, 188
Ասատուր, Գ., 171, 179
Ասատուրյան, Մեսրոպ, 354
Աստվածատրյան, Բաբկեն, 363, 368, 370, 379
Աստուրյան, Հարություն, 508, 510
Արեշյան, Գրիգոր, 184
Արմուտյան, Կարո, 419
Արփիարյան, Արփիար, 33

Բ

Բաբկեն Ա., Կիլիկիո կաթողիկոս, 59, 87, 112, 149-150, 387-388
Բագրեւանդյան, Վահան, 379-380
Բադամյանց, Գեորգի, 306
Բազարյան, Մովսես, 374, 379-380
Բալֆուր, Արտուր Ջեյմս, 13
Բակալյան, Էնի, 481-482
Բանայան, Հովհաննես, 236
Բաշալյան, Լեւոն, 146, 171, 210, 318
Բաչաճյան, Ա., 502
Բարթիկյան, Հրաչ, 379
Բարթիկյան, Միքայել, 378-379
Բարսեղյան, Պ., 141-142
Բարտը, Ջեյմս, 115, 140-142, 385
Բեկզադյան, Տ., 138
Բերիա, Լավրենտի, 217, 238-239, 252-254, 256, 262, 264, 267-268, 272, 279-280, 285, 289-290, 293, 375
Բերինգ, Իվլին, 229
Բիյերսը, գնդ., 91
Բինայան Կարմոնա, Նարսիսիո, 502, 507-508
Բիսմարկ, Օտտո ֆոն, 19
Բիքնար, 216

Բոգոմոլով, Ալեքսանդր, 349
Բոթեմքին (Պոտյոմկին), Վլադիմիր, 211
Բոլինքբրոկ, լորդ, 308
Բրիջմը, Քենը, 162
Բուգայ, Նիկոլայ, 375

Գ

Գազազյան, ժան, 478
Գալայճյան, Արա, 419
Գալճյան, Հ., 220
Գալոյան, Աղասի, 284
Գալուստյան, Խաչեր, 386
Գալփաքյան, Արթաքի, 494
Գառզու, 479
Գասպարյան, Հարություն, 393
Գավուկչյան, Հայկ, 354-358
Գարակյոզյան, Արշակ, 44, 119, 149, 162, 249, 317, 325-327, 344, 354-355, 357, 362-363, 371, 429-430
Գարակյոզյան (Կարագյոզյան), Լեւոն, 306
Գարակյոզյան, Լիլա, 425-431
Գարակյոզյան, Հայկազ, 183, 188, 194, 219, 221-222, 224, 244-245, 256, 272-275, 292, 297-307
Գարակյոզյան, Միհրան, 44, 119, 146, 149, 162, 198, 325-327, 345, 364, 426
Գարդաշյան, Մկրտիչ, 183, 211
Գարեգին Ա., Կիլիկիո կաթողիկոս, 332, 334, 340, 400, 437
Գարեգին Բ., Կիլիկիո կաթողիկոս, 419
Գարեգին արքեպիսկոպոս, Խաչատրյան, 513
Գափամաճյան, Նոյեմի, 119, 162, 311
Գափամաճյան, Պետրոս, 68
Գափլան, Զարեհ, 400
Գերմանիկյան, Մեսրոպ, 520
Գեւորգ Ե., Ամենայն Հայոց կաթողիկոս, 77, 84
Գեւորգ Զ., Ամենայն Հայոց կաթողիկոս, 247-248, 333-334, 351-353
Գեւորկով, Իվան, 280, 293
Գըլըճյան, Յովհաննես, 99
Գյուրջյան, Հակոբ, 310
Գոգլիձե, Ս., 267
Գոնով, Ասկարբի, 375
Գրանյան, Հմայեակ, 106-108
Գրինշիլդս, Թոմը, 157
Գրոմիկո, Անդրեյ, 339
Գուլոյան, Աբրահամ, 192-193, 215, 242-243, 245-247, 251, 254, 258, 265, 268-269, 276, 290-291, 293
Գումեդին (Մելիք-Դադայան), Գուրգեն, 178
Գույումճյան, Մարտիրոս, 121
Գույումճյան, Միսաք, 516
Գուրուլյան, Վարդգես, 419

Դ

Դալադյե, Էդուարդ, 314
Դալլաքյան, Կարլեն, 230-231, 233, 237, 408-409
Դանիելյան, Ժիրայր, 403, 448-450
Դանիելյան, Մուշեղ, 253
Դաջ, Բայարդ, 164
Դաջ, Քլիվլընտ, 142
Դավիթ Բեկ (Սարգիս Սարգիսյան), 138, 407
Դեղձունյան, Օգսեն, 498
Դրամբյան, Ռուբեն, 188
Դրո (Դրաստամատ Կանայան), 371
Դուայթ, Ադելաիդա, 110

Ե

Եզնիկ, քահանա, Վարդանյան, 511, 513
Եկավյան, Զավեն, 432
Եղիազարյան, Արտավազդ, 187, 258, 272-273, 282, 285, 298, 307
Եղիայան, Բյուզանդ, 387, 400, 423
Եղիայան, Գրիգոր, 22, 27-28
Եղիշե Դուրյան, պատրիարք Հայոց Երուսաղեմի, 121-122, 124
Եղիշե եպիսկոպոս, Կարոյան, 387
Ենիգոմշյան, Հ., 164
Եսայան, Արսեն, 216, 222, 245, 251-254, 256-258, 262-264, 272-277, 279-280, 282-283, 285-287, 292-293, 298-299, 301-302, 305
Եսայան, Զապել, 107, 188, 301, 303
Եսայան, Միքայել, 432
Յոթնեղբայրյան (Եօթնեղբայրեան), Լեւոն, 99
Երեմյան, Վահան, 262-263
Երզնկյան, Արամայիս, 171, 175, 180, 185, 204-205, 207, 235, 238, 245, 253-256, 285-287, 298, 302, 304, 306

Զ

Զավեն Տեր-Եղիայան, պատրիարք Հայոց Կ.Պոլսի, 410
Զարդարյան, Հրաչ, 490
Զարեհ ծ.վարդապետ, Փայասլյան, 393
Զարուկյաններ, 500
Զենյան Լեւոն, 387
Զինովեւ, Գրիգորի, 238
Զորյան, Ստեփան, 181

Է

Էգնյան, Աթագինե, 310, 311
Էգնյան, Վահե, 310
Էյիսը, Դին, 366-367
Էսեկյուլյան, Հարություն, 418-419
Էսմերյան, Զարուհի, 425
Էսմերյան, Պողոս, 200, 313, 317

Թ

Թադեոսյան, Օննիկ, 210, 211
Թալեաթ փաշա, 98
Թալեյրան, Շառլ Մորիս, դուքս, 237
Թահմիզյան, Նիկողայոս, 220, 235, 419
Թամանյան, Ալեքսանդր, 183, 191
Թերզիպաշյան, Ավետիս, 170, 199
Թերզյան, Պերճ, 454-455
Թերզյան, 519
Թերլեմեզյան, Փանոս, 188
Թենեքեճյան, Նիկողայոս, 72
Թեքեյան, Վահան, 137, 407, 417-418
Թիրյաքյան, Աշոտ, 331
Թյոքմեճյան, Զորջ, 477
Թոթովենց, Վահան, 188, 301
Թովմասյան, Բարունակ, 387
Թորամանյան, Թորոս, 190
Թորանյան, Թորոս, 419
Թորգոմ Գուշակյան, պատրիարք Հայոց Երուսաղեմի, 118,119 242
Թորգոմյան, Վահրամ, 319, 407
Թոփճյան, Արա, 441
Թոփճյան, Հակոբ, 138, 387
Թոփուզյան, Հովհաննես, 100, 113, 160
Թոքմաջյան, Արմենակ, 307
Թրումբն, Հերի, 367
Թուրսարգիսյան, Պողոս, 402

Ժ

Ժամկոչյան, Լեւոն, 478
Ժամկոչյան, Մ., 94
Ժանսեմ, 479
Ժերանյան, Ռիշար, 479

Ի

Իբրահիմ Հիլմի, 24
Իդեն, Էնտոնի, 359
Իզվոլսկի, Ալեքսանդր, 86
Ինճիճյան, Արամ, 407
Իսահակյան, Ավետիք, 220, 235
Իսկենյան, Ժիրայր, 397
Իսմայիլ փաշա, 24

Լ

Լալայան, Երվանդ, 190
Լեկ, Ժորժ, 310
Լիտվինով, Մակսիմ, 246-247, 338-339
Լիմոնճելլի, Կատարինե, 119
Լիպման, Ուոլթը, 366
Լլոյդ Զորջ, Դեյվիդ, 101, 106, 152
Լոթի, Պյեր, 78
Լոմակին, Յակով, 366
Լոմինաձե, Վիսարիոն, 236
Լորիս-Մելիքով, Միքայել, 19
Լուկաշին (Սրապիոնյան), Սարգիս, 172

Խ

Խաղ արք., 391
Խազոյան, Հ., 149
Խանջյան, Աղասի, 217, 223, 230, 232-239, 245, 253-256, 262, 264-265, 268, 272, 276-279, 302
Խայան, Միհրան, 506
Խանզատյան, Զատիկ, 310
Խանոյան, Սարգիս, 200
Խաչատրյան, Արամ, 345, 479
Խաչիկյան, Մարտիրոս, 220
Խապրիկ, Մինաս, 104
Խառատյան, Ալբերտ, 71
Խատիսյան, Ալեքսանդր, 240
Խրուշչով, Նիկոլայ, 306

Ծ

Ծատուրով, Գեորգի, 253, 280

Կ

Կամենեւ, Լեւ, 238
Կամսարական, Սպանդարատ, 187

Կամսարական, Տիգրան, 311
Կապրիելյան, Զապել, 497, 499
Կասյան, Սարգիս, 236, 238, 256
Կասսել, Էռնստ, 229
Կարախան, Լեոն, 242-244, 246-247, 306
Կարախանյան, 290
Կարապետյան, Սահակ, 354-359, 365
Կարիկյան, Եսայի, 171, 175-176, 196, 297
Կերտան (Կլումուշկերտան), Լեւոն, 119, 180, 187, 200, 220, 248, 301-302, 306,311, 324, 338, 342-343, 364, 367, 520
Կեոքկյոզյան (Կէօքկեօզեան), Ենովք, 387
Կեւրեկ, Ատոկ, 320
Կիպրիանու, Սպիրոս, 419
Կիսելյով, Եւգենի, 341
Կիրակոզով, 300-301, 303
Կիրակոսյան, Գրիգոր, 414, 426, 476
Կիրով, Սերգեյ, 238
Կլեմանսո, Ժորժ, 78
Կյուլպենկյան, Գալուստ, 17-18, 44, 111, 158, 187, 208, 223-232, 234-237, 239-249, 311, 406, 460
Կյուլպենկյան, Կիւլլապի, 158
Կյուլպենկյան, Հարություն, 317, 327
Կյուպենկյան, Նվարդ, 229, 244, 460
Կյուլպենկյան, Նուպար, 44, 229
Կյուլպենկյան, Պատրիկ, 11, 198
Կյունցլեր Յակոբ Կոնրադ
Կյուրի, Մարիա, 191
Կյուրճյան, Միքայել, 67, 69
Կոզլով, 304
Կոլպակով, 304
Կոմիտաս, 216
Կոնդակով, 303
Կոստանդյան, 307
Կոստանյան, Հայկազ, 236
Կրաֆտ-Բոննար, Էնտընի, 112
Կուդրյավցեւ, Սերգեյ, 253, 278, 284

Հ

Հալաբյան, Կարո, 344
Հակոբյան, Երվանդ, 48-50
Հակոբյան, Հակոբ, 419
Հակոբյան, Հմայակ, 502
Հակոբյան, Հովհաննես (հիմնադ.անդամ), 22, 31
Հակոբյան, Հովհաննես, 63, 272-275, 305
Համազասպյան, Վարդգես, 199
Համալյան, Լեո, 473
Հայլե Սելասիյե, 125-126
Հայկենց, Միսաք, 476, 514
Հանչեր, Հրանտ, 310
Հանսոն, 216
Հ/Խ/աչիկյան, Կատար, 496
Հասրճյան, Լեւոն, 394
Հասրաթյան, Էզրաս, 192
Հասրաթյան, Մորուս, 440
Հարությունյան, Գրիգոր, 264, 292, 361-362, 378
Հարությունյան, Հմայակ, 190
Հեքիմյան, Խոսրով, 297
Հեքիմյան, Կարապետ, 453
Հեքիմյան, Կիմ, 504, 506
Հեքիմյան, Մկրտիչ, 199-200
Հերյան, Ռուբեն, 100
Հիտլեր, Ադոլֆ, 348
Հյուինս, Ռալֆ, 229
Հյուսիսյան, Երվանդ, 441
Հյուրմյուզ, Արտաշես, 72
Հոլաս, Վիչեն, 319
Հովհաննես, Ալան, 341
Հովհաննիսյան, Աբգար, 192
Հովհաննիսյան, Հակոբ, 189
Հովսեփյան, Արմենակ, 258
Հովսեփյան, Մաքրուհի, 426
Հրաչ Երվանդ, 301-302, 306
Հուայթ, 138
Հուսեյն Ա., 17
Հուսեյն իբն Ալի, 100

Ղ

Ղազարյան, Աշոտ, 527
Ղազարյան, Վաչե, 495
Ղափանցյան, Գրիգոր, 188
Ղեւոնդ արքեպիսկոպոս, Դուրյան, 437

Ճ

Ճեպեճյան, Ռոպերտ, 398, 403, 435
Ճեսըփ, Ստյուըրթ, 387
Ճգնավորյան, Լորիս, 528

Մ

Մազլումյան, Արմեն, 113-114
Մազլումյան Օննիկ, 109, 113-114

Մազմանյան, Միքայել, 188, 303, 307
Մաթոսյան Կիլբիրն, Մերի, 238
Մալեզյան, Վահան, 17, 27, 107, 120, 159, 187-189, 193, 199-200, 210, 218-224, 234, 240-245, 248-249, 257-258, 281-283, 294, 314-315, 317, 326, 363, 367, 379, 408, 468, 490, 512
Մալենկով, Գեորգի, 284, 289-290
Մալինով, Ալեքսանդր, 210
Մալխասյան, Հովհաննես, 125
Մալխասյան, Մկրտիչ, 501
Մախարածե, Ֆիլիպ, 264
Մախոխյան, Վարդան, 310
Մակարյան, 519
Մակինցյան, Պետրոս, 301
Մակլակով, Վասիլի, 349
Մաղաքիա արքեպիսկոպոս, Օրմանյան, 70, 71, 319, 503
Մամբրե վարդապետ, Սիրունյան, 94
Մանանդյան, Հակոբ, 190
Մանդալյան, Թադեւոս, 236
Մանթաշյան, Ալեքսանդր, 83
Մանուկյան, Ալեք, 44, 328, 330, 340-341, 343-344, 364, 405, 419-420, 429-430, 438-439, 444, 460, 470-472, 474, 477, 479-481, 483, 487-489, 491, 499, 501, 513-514, 522, 526, 528
Մանուկյան, Արմենակ, 376
Մանուկյան Թագվոր, 470
Մանուկյան, Հրաչ, 394
Մանուկյան, Մեհրյուպե, 425
Մանուկյան, Ռիչարդ, 471, 484, 528
Մանուկյան-Սիմոն, Լուիզ, 44, 405, 451-452, 485, 491, 521, 522-523, 526-528
Մանուչարյան, Արամ, 286, 291-292
Մատթեոսյան, Վահան, 72
Մատթեոսյան, Վարդան, 502, 510-511
Մարգարյան, Պարթեւ, 184
Մարկոսյան, Ռաֆայել, 259, 311
Մարկոսոֆ, Մկրտիչ, 22, 31, 48
Մարմարյան, Անրի, 354
Մարտիկյան, Էդուարդ, 444, 483
Մարտիկյան, Սերգո, 307
Մեժլաուկ, Վլադիմիր, 273-275, 282-283, 306
Մելգոնյան, Գրիգոր, 189, 291, 410
Մելգոնեան, Կարապետ, 189, 291, 410-413
Մելիք-Ազարյան, Ալեքսանդր, 83
Մելիք-Մուսյան, Բաբկեն, 185
Մելիք-Շահնազարյան, Աշոտ, 394
Մելիքյան, Սպիրիդոն, 190
Մելիքսեթ-Բեկ, Լեւոն, 190
Մելիքսեթյան, Հովիկ, 213, 218
Մելքոնյան, Գրիգոր, 396
Մելքոնյան, Զարեհ, 419
Մեծատուրյան, Մեծատուր, 502
Մենեվիշյան, վարդապետ, 72
Մեոթեմետյան, Գրիգոր, 180
Մեսիայան, Երվանդ, 342
Միկոյան, Անաստաս, 289-290
Միհրդատյան, Մակսուդ, 302
Մինասյան, Աբել, 310
Միրաք, Ռոբերտ, 463
Միրզախ, ժիրայր, 174
Միքայելյան, Կարեն, 187
Միքայելյան, Հակոբ, 396-397
Մխիթարյան, Գյուտ, 512-513
Մկրյան, Մկրտիչ, 190
Մկրտիչ Ա., Ամենայն Հայոց կաթողիկոս, 19, 22
Մկրտիչյան, Լեւոն, 34, 40
Մյասնիկյան, Ալեքսանդր, 203
Մոլոտով, Վյաչեսլավ, 265, 269, 283, 359, 366
Մոստիչյան, Լեւոն, 512-513
Մորգենթաու, Հենրի, 142
Մոսկոֆյան, Հայկ, 502-504
Մռավյան, Ասկանազ, 171, 175, 183, 238
Մուհամեդ Ալի, 15
Մուհամմատ Ռեֆաաթի, 456
Մուղդուսի, Խաչիկ, 280, 287, 289-290, 293, 298, 300
Մուշեղ եպիսկոպոս, Սերոբյան, 149, 410
Մուսաբեկով, Գազանֆար, 262

Յ

Յագուպ (Եագուպ) Արթին, 22-25, 34, 44, 71-72, 78, 97
Յագուպյան, Գառնիկ, 405-406
Յափուճյան, Ազատ, 419
Յուսուֆյան, Պողոս, 16

Ն

Նազարյան, Լեւոն, 440
Նազարյան, Կարպիս, 452, 487
Նազարյան, Ղազար, 513
Նազարյան, Նազար, 452, 476, 477, 487
Նազարյան, Նուպար, 452
Նազարյան Սաթենիկ, 440
Նաթանյան, Միքայել, 53, 65-66, 107, 137, 387
Նաճարյան, Լազար, 431
Նանսեն, Ֆրիտյոֆ, 198
Նասիպյան, Ագապի, 419
Նաֆիլյան, Լեոն, 310
Ներսես Վարժապետյան, պատրիարք Հայոց Կ.Պոլսի, 19, 21
Նետուրյան, Մաքրուհի, 94
Նեւզիգ Առաքել Նուպար, 95
Նշկյան Գայանե
Նովիկով, Կիրիլ, 248, 378
Նորատունկյան, Գաբրիել, 152, 227, 311
Նորհադ, Պետրոս, 465
Նուպար, Առաքել, 22, 31, 44, 117, 119-120, 162, 227, 317
Նուպար, Զարեհ, 44, 187-188, 215, 220, 227, 311-312, 315, 324
Նուպար, Մարի, 184
Նուպար, Պողոս, 16-18, 21-22, 25-26, 33-36, 63, 77-80, 84-89, 100-101, 107, 111, 118-119, 144-145, 164-165, 168, 170, 173-174, 177, 180, 184, 187, 192, 196-197, 199, 206, 225, 229, 239, 241, 257, 274, 291, 311, 319, 327, 342, 411-413, 462, 497, 506, 518-520
Նուպար, Վահրամ, 162
Նուպար փաշա, 16, 18-21, 229, 319
Նուրիխան, Խուան, 405

Շ

Շախսուվարյան, Ալեքսանդր, 261, 293
Շահազիզ, Երվանդ, 190
Շահե ծ.վրդ, Աճեմյան, 519
Շահե եպս., Գասպարյան, 387
Շահին, Էդգար, 310
Շահխաթունի, Արշավիր, 490
Շահվերդյան, Դանուշ, 206, 210-211, 215, 217, 221-222, 245, 285-286, 290, 292, 306
Շահվերտյան, պատվելի, 72
Շապանյան, Արսեն, 310
Շեհրանյան, Մ., 457
Շերիտճյան, Կարապետ, 22, 28, 34, 48
Շմավոնյան, դոկտ., 72
Շուլց-Անն, 303
Շյուքրի բեյ Քուաթլի, 393

Չ

Չալյան, Մուշեղ, 236
Չաքմաքչյան, Արթո, 479
Չանգալեան, Ջիմ, 334
Չաքր, Սաթենիկ, 454
Չաքր, Ջանիկ, 354-358, 454
Չեսնիխ, 360
Չերազ, Մինաս, 19-20, 260
Չերչիլ, Ուինստըն, 315
Չիթունի, Վահրամ, 300
Չիլինկիրյան, Հարություն, 511
Չիլինկիրյան, Պետրոս, 500
Չիլինկիրյան Ս., 318
Չիչեկյան, Կարո, 501
Չոլակյան, Համբարձում, 369
Չոպանյան, Արշակ, 21, 33, 87, 141-142, 189, 281-282, 301-302, 306, 312, 318, 322-323, 407, 490
Չորմիսյան, Լեւոն, 77, 98
Չոպուրյան, Կիրակոս, 475
Չրաքյան, Արթին, 23

Պ

Պալյան, Մկրտիչ, 260, 296
Պալյան, Ռիտա, 521
Պալյան, Վարդգես, 521
Պալիոզյան, Մարտիք, 338
Պաղտիկյան, Գ., 105
Պապայան, Լեւոն, 198, 496-499
Պապայան, Փիրուզ, 499
Պապաջանյան, Միքայել, 302-303, 306
Պասմաճյան, Կարիկ, 478
Պատմագրյան, Աշոտ, 440
Պարասադանյան, Հովհաննես, 504
Պարգեւյան, Հովհաննես, 502, 504
Պարզյան, Գագիկ, 274
Պարզյան, Ցոլակ, 292
Պարթեւյան, Արա, 490
Պարթեւյեան, Սուրեն, 71
Պարիկյան, Հայկ, 403
Պարտագճյան, Գեւորգ, 522

Պարտագճյան, Հրանդ, 394
Պեյլերյան, Նուրել, 419
Պեռառ, Վիքթոռ, 78
Պետեն, Հանրի Ֆիլիպ, 317
Պետիկյան, Սոսի, 419
Պետրոս եպիսկոպոս, Սարաճյան, 105
Պերկամալի, Արմեն, 345
Պերդուտյան, Լեւոն, 400
Պերպերյան, Համբարձում, 397, 423, 478
Պերպերյան, Շավարշ, 407
Պերպերյան, Տ., 164
Պիրալով Ա., 170
Պիքընսֆիլդ (Բիքոնսֆիլդ), լորդ, 19
Պյուռ, Գաբրիյել, 162
Պողոս Արիս հայր, 387
Պողոսյան Հ., 111
Պողոսյան, Սերոբ, 190
Պոյաճյան, Ալպեր, 394-395, 476
Պոյաճյան, Սոսի, 520
Պտուկյան, Պոլ, 478
Պտուկյան, Քերովբե, 500
Պուանկարե, Ռայմոն, 78

Ջ

Ջամալյան, Արշակ, 240
Ջավախիշվիլի, Իվան, 190
Ջիվիլեգով, Ալեքսեյ, 359
Ջրբաշյան, Տիգրան, 519

Ռ

Ռախմանով, Ուս., 264
Ռեյնո, Պոլ, 313-315
Ռոզենբերգ, Ալֆրեդ, 321
Ռոտշիլդ, 229
Ռուզվելտ, Ֆրանկլին Դելանո, 347-348

Ս

Սագըզյան, Ա., 318
Սադդամ Հուսեյն, 457
Սալբի, Մ., 94
Սալըզպըրի (Սոլզբերի), լորդ, 19
Սաղըրյան, Սարգիս, 318, 520
Սաղըրյան, Հարություն, 520
Սամվելյան, Խաչիկ, 190
Սամվելյան, Միքայել, 260
Սարաֆյան, Գրիգոր, 433
Սարգիս, Ավետ, 185
Սարգիս, Վերգինե, 185
Սարգիսյան, Օննիկ, 419
Սարգսյան, Արա, 300, 307
Սարգսյան, Գեւորգ, 260
Սարի, Հայկազ, 508
Սարյան, Կարապետ, 260, 291
Սարրո, Ալբեր, 216
Սարոյան, Արամ, 345
Սարուխան, Ալեքսանդր, 455
Սաֆարյան, Սամվել, 186
Սեդրակյան, Պերճ, 486
Սեւոյան, Մարտիրոս, 260
Սեզա, Սիրան, 400
Սեւան, Սեւդա, 495
Սելյան, Պատրիկ, 354-355
Սիմոնյան, Սիմոն, 423
Սինանյան, Սինան, 488-489
Սինապյան, Գրիգոր, 118, 180
Սյունի, Ռոնալդ, 522
Սվաճյան, Վարդան, 393
Սվաճյան, Սերովբե, 311
Ստալին, Իոսիֆ, 238, 247, 253, 268-269, 272, 279, 281-282, 285, 288-289, 333-334, 348, 350-353, 358, 361, 367, 375, 377
Ստելմախովիչ, 304
Ստեփանյան, Հարո, 188
Ստեփանյան, Ներսիկ, 277-278, 284-285
Սունդուկյան, Գաբրիել, 83
Սուրենյան, Կարպիս, 419

Վ

Վազգեն Ա., Ամենայն Հայոց կաթողիկոս, 419, 479, 528
Վահե Վահյան, 418, 423, 440, 441
Վահրամ եպիսկոպոս, Մանկունի, 319
Վայս, Հելմուտ, 321
Վարդանյան, Գրիգոր, 219-220, 292
Վարդանյան, Յուրի, 477
Վարդանյան, Նոյեմզար, 122-124, 133
Վարսյան, Շաքե, 419
Վեյնբաում, 274
Վենիզելոս, Ելեֆտերիոս, 210
Վիլսոն, Վուդրո, 152, 366
Վինդբերգ, Ռոզա, 235, 238, 253, 268
Վինոգրադով, Սերգեյ, 359
Վիշինսկի, Անդրեյ, 288-289
Վիքրի, Չարլզ, 123-124, 143, 146, 179
Վորոնցով-Դաշկով, կոմս, 77, 84

Տ

Տաղավարյան, Նազարեթ, 22, 30-33, 58, 84, 90
Տամատյան, Միհրան, 387
Տարախչյան, Վարդուշ, 286, 292
Տարոնցի, Հակոբ, 272
Տաֆա, Հ., 179
Տեմիրճյան, Երվանդ, 455
Տեմիրճյան, Երվանդ (բարերար), 439, 451
Տեմիրճյան, Սարգիս, 451, 487
Տեր-Գաբրիելյան, Սահակ, 207-209, 213-214, 223-227, 232-238, 245, 256, 282, 285, 287-291, 302-303
Տեր-Կարապետյան, Մկրտիչ, 310
Տեր-Ներսիսյան, Միրարփի, 318
Տեր-Սիմոնյան, Դրաստամատ, 284, 287, 304
Տերտերյան, Արսեն, 188
Տերտերյան, Իսահակ, 81
Տիգրան Ջավեն (Չուգասզյան), 272-275, 292, 305
Տիրայր ծ.վարդապետ, Մարգարյան, 260
Տիրան եպիսկոպոս, Ներսոյեան, 313, 366, 400
Տիրատուրյան, Տիգրան, 370
Տյուվլետյան, Վարուժան, 419
Տոպաճյան քույրեր, 121
Տրոցկի, Լեւ, 238

Ուր

Ուզունյան, Հայկաշեն, 458
Ուսթէզ Հաշէմ Ֆանսա, 398
Ուրախյան, Լ., 179

Փ

Փահլեւանյան, Հովհաննես, 458
Փափազյան, Լեւոն, 105
Փափազյան, Ստեփան, 121
Փիլիպոսյան, Տիգրան, 72
Փիրումյան, Սիմոնիկ, 206
Փոլադյան, Անդրանիկ, 419, 476, 520
Փորթուգալ, Միքայել, 319
Փուշման, Հովսեփ, 310

Քաղաքացիներ

Քալաշյան, Գուրգեն, 236
Քասունի, Եղիա, 400
Քելեկյան, Տիգրան, 44, 46-48, 111, 119, 136, 198, 227, 311, 324, 492
Քելեշյան, Պետրոս, 396
Քելեշյան, Գրիգոր, 397
Քեշիշյան, Գրիգոր, 419
Քեոթենեճյան, Վահրամ, 512-513
Քեչեկ, Համբարձում, 188
Քեպապճյան, Լեւոն, 492
Քերյան, Սեդրակ, 135-136
Քրքյաշարյան, Հակոբ, 105
Քյուրքճյան, Վահան, 28, 33, 89, 146-147
Քոլոլյան, Պողոս, 318, 320, 322
Քոթելնիկոֆ, Մ., 210
Քոչար, Գեւորգ, 188

Օ

Օշական, Հակոբ, 418
Օտյան, Երվանդ, 33
Օրլով, 304
Օրջանյան, Պարգեւ, 403

Ֆ

Ֆեյսալ, էմիր, 100
Ֆեսճյան, Սուրեն, 489
Ֆրենկյան, Վահե, 317
Ֆուաղ Ա., 16, 24

Edward L. Melkonian

The History of the Armenian General Benevolent Union

Yerevan, "Moughni" Publishers, 2005

Summary

The volume presents the results of the first attempt ever made to study the history of the Armenian General Benevolent Union (AGBU) since its establishment in 1906.
The largest Armenian charity organization ever, the AGBU was founded in Cairo by prominent Armenian activist Poghos Nubar with the aim to support cultural, spiritual and economic development of Armenians. Before World War 1, the AGBU was active on the territory of the Ottoman Empire – in Western Armenia and Cilicia – where it founded over 40 Armenian village schools and provided villagers with supplies and funds. In 1912, it began to publish the Miutyun (Unity) magazine.

After the 1915 Armenian Genocide in the Ottoman Empire, the AGBU focused its activities on helping Armenian refugees. It built orphanages, schools, retirement homes for widows, clinics and similar facilities in Syria, Lebanon, Palestine, Greece, Egypt and other countries that hosted the refugees.

The AGBU was the only organization of the Armenian Diaspora that got the permission to be active in Soviet Armenia in 1923-1937. In those years, amongst other things, it founded the Nubarashen village, built hospitals, a five-storey residence for university professors and village schools. The Melkonian Fund, which was part of the AGBU structure, sponsored the publication of Armenian studies, awarded scholarships to students of the Yerevan State University. AGBU aided the repatriation of over 40 thousand ethnic Armenians to Soviet Armenia. In 1937, the AGBU was banned from the USSR on a false charge of "anti-Soviet activities"; the Union's representative in Soviet Armenia was sentenced to death and shot.

During World War 2, the AGBU could no longer implement its activities in European countries occupied by Germany, and had to move its headquarters to New York. From its new base, the Union sent aid to Soviet Armenia and the Red Army. Immediately after the war, the AGBU sponsored the repatriation of over 90 thousand Armenians from Europe and the Middle East to Soviet Armenia.

Starting in the 1930s, the main goal pursued by the AGBU has been the preservation of the ethnic and cultural identity of Diaspora Armenians. In over 70 cities in Europe, Middle East, the Americas and Australia, there are numerous Armenian youth organizations, around 20 Armenian primary and secondary schools, and over 30 culture, sports and leisure centers founded by the AGBU. The Union conducts regional and worldwide Armenian Diaspora sports competitions, awards scholarships, and publishes books and periodicals in many languages. The Union spends over 25 million US dollars a year on its activities.

The AGBU resumed its activities in Armenia after it became independent in 1991. The Union founded the American University of Armenia, built hospitals, churches, children's cultural centers, charity refectories etc. It supports the Armenian Philharmonic Orchestra and other organizations.

In the present volume, the history of the AGBU is told against the background of the history of Armenia and the Armenian Diaspora. The study relies on a large number of sources, including newly discovered material from Armenian archives and AGBU files.

Prefase
1. The Founders and the Purposes
2. AGBU in Western Armenia and Cilicia
3. Orphan and Refugee Care Activity
4. Programs in Soviet Armenia. 1923-1937
5. The Repatriation of 1920-1930's. Calouste Gulbenkian's Resignation
6. Domestic Political Struggle in Armenia and Prohibition of the AGBU
7. The Years of the Second World War. The Repatriation of 1946-1949
8. Preserving of Armenian Identity in Diaspora
   In Eastern Countries
   In Western Countries
Conclusion: AGBU in the Third Republic of Armenia
References
Index

Эдуард Л. Мелконян

История Армянского Всеобщего Благотворительного Союза

Ереван, "Мугни", 2005

Резюме

В книге впервые предпринята попытка целостного изучения истории деятельности Армянского Всеобщего Благотворительного Союза (АВБС) - крупнейшей армянской филантропической организации.

АВБС был основан в 1906 г. в Каире известным национальным деятелем Погосом Нубаром в целях содействия культурному, духовному и экономическому развитию армянского народа. В период до Первой Мировой войны в Западной Армении и Киликии, входящих в состав Османской империи, АВБС основал свыше 40 армянских сельских школ, оказывал материальную и финансовую помощь крестьянам. В 1912 г. начал издаваться журнал "Миутюн" ("Союз").

После геноцида армян в Османской империи в 1915 г. основной сферой деятельности АВБС становится оказание помощи изгнанным со своей родины армянам - создание приютов-школ для сирот, домов призрения для вдов, больниц и поликлиник в Сирии, Ливане, Палестине, Греции, Египте и в других странах.

АВБС - единственная организация диаспоры, которой было разрешено действовать в Советской Армении в 1923-1937 гг. В эти годы был основан поселок Нубарашен, построены больницы, жилой дом для профессуры, сельские школы и др. Фонд Мелконян финансировал издание научных трудов по арменоведению, выделял стипендии студентам Ереванского университета, а также содействовал репатриации более 40 тыс. армян в Советскую Армению. В 1937 г. деятельность АВБС была запрещена по ложному обвинению в "антисоветской деятельности", а его представитель - расстрелян.

В годы Второй Мировой войны деятельность АВБС в оккупированных нацистами странах Европы была сведена на нет, и его Центральное Правление было переведено в Нью-Йорк. Именно отсюда направлялась помощь народу Советской Армении и Красной Армии. Сразу после войны АВБС фи-

нансировал репатриацию более 90 тыс. армян из стран Европы и Среднего Востока в Советскую Армению.

Начиная с 1930-х гг. главной целью АВБС является сохранение этнокультурной идентичности армян диаспоры. Сегодня в более чем 70 городах различных стран Европы, Среднего Востока, Америки, Австралии действуют основанные им молодежные организации, около 20 армянских средних и начальных школ, более 30 культурных и спортивно-оздоровительных центров, проводятся региональные и пандиаспоральные спортивные олимпиады, предоставляются стипендии студентам, на разных языках издаются журналы, книги и др. На все эти программы ежегодно выделяется более 25 млн долларов.

После обретения Арменией независимости в 1991 г. АВБС возобновил свою деятельность в стране - основание Американского университета, больниц, церквей, детских культурных центров, благотворительных столовых, финансирование Филармонического оркестра и др.

Изложение истории АВБС проводится на фоне истории армянской диаспоры и Армении, с привлечением большого числа разных источников, в том числе раннее неизвестных материалов из архивов Армении и АВБС.

Содержание

Предисловие
1. Основатели и цели
2. АВБС в Западной Армении и Киликии
3. Защита сирот и беженцев
4. АВБС в Советской Армении в 1923-1937 гг.
5. Репатриация 1920-1930 гг. Отставка Г. Гюльбенкяна
6. Внутриполитическая борьба в Армении и запрет АВБС
7. В годы Второй Мировой войны. Репатриация 1946-1949 гг.
8. Сохранение армянской идентичности в диаспоре
   В странах Востока
   В странах Запада
Заключение: АВБС в Третьей Республике Армения
Примечания
Указатель

ԷԴՈՒԱՐԴ Լ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՂՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀԵՎԱԿՈՐՈՒՄԸ՝ Վ.ՂԱԼԼԱՔՅԱՆԻ • ՏՊԱԳՐՎԱԾ Է ԳԱՍՊԱՐԻՆՑ ՏՊԱԳՐԱՏԱՆԸ
ԵՐԵՎԱՆ • 2005